

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԿՅԱՆՔԻ ԵՎ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ
(1915-1919)**

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2019**

ՀՏԴ 01:821.19.0
ԳՄԴ 91.9:83.3(5Հ)
Հ 853

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և Հայագիտական
ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական
հիմնադրամի աջակցությամբ**

Պատասխանատու խմբագիր՝ Վլ. Ա. Կիրակոսյան

**Հատորը կազմել են՝ Զ. Աբեղյան, Ե. Մնացականյան (1915, 1917, 1919),
Ի. Վարժապետյան, Վլ. Կիրակոսյան (1916), Ն. Մկրտչյան (1918):**
Անվանացանկը կազմել է Ե. Մնացականյանը

**Հ 853 Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարե-
գրություն (1915-1919). – Եր.: «Գիտություն» հրատ., 2019. 867 էջ:**

Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության երրորդ գիրքն ընդգրկում է 1915-1919 թվականները՝ ծանր մի ժամանակաշրջան ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ բանաստեղծի անձնական ու հասարակական կյանքում: Պատերազմում զոհվեցին նրա Արտաշես եղբայրը և Արտավազդ որդին, երկու անգամ լինելով ռազմաճակատում ճանաչեց պատերազմի անմարդկային դեմքը, կռահեց նրա ահավոր հետևանքները իր ժողովրդի համար, ապրեց Մեծ եղեռնի ցավը, էջմիածնում իր ուսերին ու հոգում կրեց հազարավոր հայ որբերի թշվառության բեռն ու ծերացավ ժամանակից շուտ: Այս ամենով հանդերձ՝ աշխատում էր կենդանի պահել ժողովրդի ոգին՝ շարունակելով Հայ գրողների ընկերության աշխատանքները, ջանքեր գործադրելով գլուխ բերելու Հայկազյան ընկերության ստեղծման նվիրական գործը... Այդ տարիներին է, որ նա իրավունք նվաճեց կրելու Ամենայն հայոց բանաստեղծ պատվանունը:

Հասցեագրվում է ընթերցող լայն հանրությանը:

Գիրքը նվիրվում է Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին:

ISBN 978-5-8080-1361-2

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2019 թ.

© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2019 թ.

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԵՑ

Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության երրորդ գիրքն ընդգրկում է 1915-1919 թվականների շրջանը:

Այդ տարիները հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ պիտի մնային անկրկնելի, արագորեն իրար հաջորդող ճակատագրական իրադարձություններով, որոնց հորձանուտում ականա հայտնված անօգնական ժողովրդին վիճակված էր միայնակ մաքառել արևի տակ իր գոյության իրավունքի համար՝ պահպանելու և աշխարհին ցույց տալու հոգևոր արժանապատվության իր վկայականը՝ դարերից ժառանգությունն ստացած բարձր մշակույթը:

Թումանյանը այդ անօրինակ մաքառումի անձնուրաց նվիրյալներից էր, առաջին ոգևորողն ու ոգեշնչողը. նա իրեն ու իր ողջ ընտանիքը առանց երկմտելու դրել էր այդ բախտորոշ մաքառումի գոհասեղանին: Ահա թե ինչպես է արձագանքում Ջորավար Անդրանիկի՝ հայ ժողովրդին և հասարակական բոլոր կազմակերպություններին ուղղած կոչին օրհասական այն օրերին, երբ ռուսական բանակի հեռանալուց հետո կովկասյան ճակատը բաց էր մնացել թուրքերի առջև: «Սիրելի՛ Անդրանիկ,- գրում է նա իր բաց նամակում,- ահավոր մոմենտի առջև ամեն մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ որ ունի և կարող է՝ թե վերահաս վտանգը կանխելու, և թե բաղձալի խաղաղությանը հասնելու համար:

Ես չորս տղա ունեմ, չորսն էլ երկրի կառավարության, Ազգային խորհրդի և քո տրամադրության տակ եմ, իսկ չորս աղջիկս էլ պատրաստական գնում եմ թիկունքի աշխատանքներին, ինչին որ ընդունակ կլինեն:

Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետևաբար ոչինչ չեմ խնայել, միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների և ազգասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունը: Ես անսասան հավատարիմ քո՝ շատ փոթորիկների մեջ ձեռք բերած փորձառությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը, այլև բնական մարդասիրությանն ու զինվորական բարձր տաղանդին, և պատրաստ՝ գալու, երբ, ուր կկոչի քո եղբայրական ձայնը՝ համբուրում եմ հերոսական ճակատդ» (1917, դեկտեմբերի 23):

Սրանք հավուր պատշաճի ասված խոսքեր չէին. բոլորանվեր այդ զոհաբերումից ամենևին անմասն չմնաց թումանյանի ընտանիքը: Պատերազմի առաջին ամիսներին դավադիրների զոհ էր դարձել նրա ավագ եղբայրը՝ Ռոստոմը, հետո ռազմաճակատում պիտի զոհվեր մյուս եղբայրը՝ Արտաշեսը, իսկ ամենածանրը դեռ առջևում էր. պատերազմի վերջին օրերին՝ Վանի մեծ գաղթի ժամանակ, պիտի զոհվեր նաև սիրելի զավակը՝ Արտավազը, որ ամենախոր վերքը պիտի բանար արդեն շատ դառնություններ տեսած բանաստեղծի սրտում: Այսպես նա ազգի փրկության զոհասեղանին պիտի դներ այն, ինչ իր համար իրոք ամենաթանկն էր:

Բայց թումանյանը Աստծու այն եզակի ընտրյալներից էր, որոնք ծնվում են անձնականից շատ ավելի մեծ ու համապարփակ կյանքով ապրելու համար: Բանաստեղծ թումանյանի ստեղծագործությունը միանգամայն այսաշխարհային ու միաժամանակ վերաշխարհային այդ մեծ կյանքի ուրիշ հորիզոններ է չափում, որ դեռ սպասում է իր բանիմաց հետազոտողին: Տարեգրության այս հատորը բաց է ամում գործիչ թումանյանի անանձնական կյանքի այլ տարածություններ, որոնք պարտադրված էին ժամանակի ու հանգամանքների բերումով: Չնայած դրան՝ բանաստեղծը անվարան մտնում էր նաև այդ տարածությունները, որոնք եթե ինչ-ինչ դեպքերում խորթ էլ էին ի վերուստ սահմանված իր կոչմանը, բայց անխուսափելի էին պարտքի անհրաժեշտությամբ:

Պատերազմի առաջին ամիսներին թումանյանը ոգևորված էր. նա համաշխարհային այդ արհավիրքը դիտում էր որպես լուսավորյալ աշխարհի կռիվ խավարի, բռնության ու չարիքի դեմ: Նա հավատում էր օսմանյան բռնատիրության շուտափույթ անկմանը և իր ժողովրդի ազատագրմանը դարավոր լծից: Այդ մասին են վկայում նրա՝ պատերազմական թեմայով գրված մի շարք հոդվածներ, Վանում գրած ոգեշունչ բանաստեղծությունները:

Բայց ռազմաճակատ իր երկու այցելությունների ժամանակ, մոտիկից ականատես լինելով պատերազմի իրական սարսափներին, մանավանդ ռուս զինվորականության որոշ մասի անբարյացական վերաբերմունքին հայ կամավորական ջոկատների հանդեպ, այդ հավատը ճաք է տալիս: Մոտեցող վտանգի մի աղոտ կանխագագուստ սկսում է անհանգստացնել նրան: Ռազմաճակատ առաջին այցելության անմիջական տպավորության տակ Փ. Վարդազարյանին գրում է. «Անկարելի է նամակով պատմել տեսածներս ու լսած-

ներս... Ընդհանրապես շատ տխուր են տպավորություններս և շատ հեշտ կարող ենք աղետալի դեպքերի հանդիպել, էնքան խախտւո է մեր վիճակը (1914, դեկտեմբերի 10)»:

Նախագագացումը չէր խաբում բանաստեղծին. վրա է հասնում 1915 թ. աղետալի ապրիլը, և գործիչ թումանյանի համար բացվում է «մեծ կյանքով» ապրելու մի նոր տխուր ասպարեզ՝ գաղթականների ու որբերի աշխարհը: Մոռանալով տուն ու ընտանիք, մոռանալով ինքն իրեն՝ Ամենայն հայոց բանաստեղծը դատեր հետ մեկնում է էջմիածին՝ տիրություն անելու ամենայն հայոց գաղթականներին և հայրություն՝ ամենայն հայոց որբերին: Այդ անմնացորդ անձնուրացությունը մի պահ անգամ հարուցում է մենակ մնացած կնոջ սրտմտանքը. «Քո երեխաներին թողել ես, ուրիշի երեխաներին ես պահպանում» (1915, օգոստոսի 7): Եվ ահա թե ինչ է պատասխանում բանաստեղծը. «Երեխանե՛ր, երեխանե՛ր, երեխանե՛ր... անտեր, սոված, հիվանդ: Բոլորը, սկսած նրանից, որ շատ ժամանակ չի ինչ ոտն է ելել ու ման է գալիս, բոլորը փախել եկել են 3-500 վերստ սարսափած, սոված: Այժմ էլ ինձ է վիճակվել էդ երեխաների խնամատարության գործը, դրանց ապաստարանը: ...Էս ցավի ծովի մեջ մարդ ինքն իրեն էլ է մոռանում» (1915, օգոստոսի 8, 9): Թե այդ ցավի ծովում ինչ կյանքով էին ապրում բանաստեղծ թումանյանը և գործիչ թումանյանը, ցույց են տալիս էջմիածնի օրագրային գրառումները:

Այդ գրառումներն արված են հապճեպ, ոտքի վրա, հաճախ թերասություններով: Բայց դրանց խորքում հստակ ճանաչելի է դառնում մի ուրիշ թումանյան, շատ տարբեր այն թումանյանից, որի հետ ընթերցողը շփվում է հասարակական լսարանի համար գրված նրա հոդվածներում: Ռազմաճակատային օրագրերում պատերազմական կենցաղի քստմնելի տեսարանների հոգեսպան միջավայրում՝ մարդ արարածի հանդեպ հավատն ու հարգանքը կորցրած բանաստեղծի մորմոքուն մտորումների կողքին, ստեպ-ստեպ հայտնվում է այդ ամենին անհաղորդ արև աշխարհի, հայրենի բնության տրոփուն գեղեցկություններով ապրող բանաստեղծը: Այս վերջինն է, որ բոլոր փորձությունների մեջ անմեռ է պահում նահատակվող ժողովրդի վերածնության հույսը. բարբարոս ցեղերի խավար շրջապատում բարձր քաղաքակրթության ջահակիր ժողովուրդը չի կարող մահանալ:

Պատերազմական չորս տարիների ընթացքում Թումանյանի հասարակական գործունեությունը անընդհատ փոխում է իր բնույթն ու ուղղվածությունը, ամեն անգամ նա հայտնվում էր այնտեղ, որտեղ այդ պահին ժողովրդի կողքին լինելու անհրաժեշտություն էր ծագում: 1915 թ. ամռանը նա Վանում էր և ոգեշունչ բանաստեղծություններով մասնակցում էր մոտալուտ հաղթանակի հավատով թևավորված ժողովրդի ցնծությանը: Նոր էր վերադարձել Վանից, երբ սկսվում է կոտորածներից մազապուրծ գաղթականության հոսքը Էջմիածին, և Թումանյանն անմիջապես հայտնվում է այնտեղ: Ավելի քան երկու ամիս շարունակ նա գիշեր ու ցերեկ, հոգեկան ու ֆիզիկական գերագույն լարումներով փորձում էր սովի ու համաճարակի ճիրաններից փրկել ճակատագրի կամքին հանձնված արևմտահայության բեկորները: Այդ օրերին Էջմիածնում կատարված օրագրային գրառումները երևակայական դժոխքի իրական պատկերն են ներկայացնում:

Որքան պատերազմը մոտենում էր ավարտին, այնքան իրական էր դառնում հայության գլխին կախված բնաջնջման վտանգը: Գրավելով երգումն ու Կարսը՝ թուրքական կանոնավոր բանակը ներխուժում է Արևելյան Հայաստան: Սկսվում են նաև ազգամիջյան վտանգավոր ընդհարումները քրիստոնյա և մահմեդական ազգաբնակչության միջև: Անհրաժեշտ է դառնում հայկական գավառներում կազմակերպել ինքնապաշտպանության գործը, դադարեցնել ազգամիջյան բախումները: Թումանյանը դարձյալ առաջին շարքերում է: Նրա նախաձեռնությամբ միավորվում են այդ նպատակով առանձին-առանձին ստեղծված հայրենակցական միությունները: Ընտրվելով այդ միավորյալ միության նախագահ՝ նրան հաջողվում է կարճ միջոցում համաժողովրդական ճանաչում բերել այդ կազմակերպությանը, որի հետ սկսում են հաշվի նստել նաև պետական կառույցները: Միության գործունեության ծավալի և ուղղությունների մասին պերճախոս պատկերացում են տալիս նիստերի ու ժողովների պահպանված արձանագրությունները: Լայն արձագանք է գտնում հատկապես միության անունից Թումանյանի կոչը հայ ժողովրդին՝ հավաստի տվյալներ ներկայացնել պատերազմի հետևանքով հայության կրած կորուստների մասին: Հայաստանի ազգային արխիվի՝ Հայրենակցական միությունների միության ֆոնդերում պահվում են հարյուրների հասնող նամակներ՝ գրված միության հասցեով կամ անձամբ նախագահին, որոնց հեղինակները մանրա-

մասն ներկայացնում են իրենց կրած վնասները: Այդ տվյալների հիման վրա զեկույց պիտի ներկայացվեր խաղաղության վեհաժողովին՝ հատուցում ստանալու ակնկալիքով: Բայց ինչպես միշտ, այս դեպքում էլ նախաձեռնողներին սպասում էր խոր հիասթափություն...

Տեղացի հայ և թուրք ազգաբնակչության շրջանում թումանյանի խաղաղարար առաքելության հանդեպ մեծ վստահություն ուներ նաև անդրկովկասյան կառավարությունը: 1918 թ. գարնանը, կառավարության կողմից պաշտոնական վկայականով լիազորված, նա այդ նպատակով մեկնում է Բորչալուի, Ղազախ-Շամշադինի, Լոռու, Փամբակի շրջաններ: Ինչպես հայ, այնպես էլ թուրք բնակչության շրջանում իր մեծ հեղինակությամբ նրան հաջողվում է կանխել շատ արյունահեղություններ:

Պատերազմն իր հակամարդկային հետևանքներով, ամենից առաջ հայրենի աշխարհին ու մայր ժողովրդին պատուհասած աղետներով թումանյանին, առհասարակ հայ ստեղծագործող մտավորականությանը առժամանակ մոռանալ է տալիս հոգևոր-մշակութային կյանքի վերակառուցման այն ծրագրերը, որ կանխագծվել էին դեռևս 1912 թվականին՝ Հայ գրողների կովկասյան ընկերության հիմնադրումով: Ընկերությունն իր երկամյա գործունեությամբ արդեն սկսում էր բեղմնավոր արմատներ նետել ժողովրդական գիտակցության մեջ, երբ պայթում է պատերազմը: Ընկերությունն ստիպված էր անորոշ ժամանակով դադարեցնել իր գործունեությունը, որովհետև, ինչպես արձանագրում է թումանյանը ընկերության՝ 1914-1916 թթ. գործունեության մասին իր հաշվետվության մեջ, «վարչությունը, ինչպես և ընկերության անդամներից շատ շատերը, տարվեցին հայ ժողովրդի աղետի հետ կապված գործերով» (տե՛ս 1917, ապրիլի 27):

Որքան էլ աննպաստ էր ժամանակը, տագնապալի սպասումներով հղի, այնուամենայնիվ ընկերության փայփայած իդեալները կենդանի էին նվիրյալ նախաձեռնողների գիտակցության մեջ: Դրանցից առաջինը դարձյալ թումանյանն էր:

Ընկերությունն իր կանոնավոր գործունեությունը վերսկսում է 1916 թ. սեպտեմբերից: Շարունակվում է գրական երեկույթների շարքը, որտեղ պատշաճ տեղ է տրվում նաև արևմտահայ նահատակ գրողներին, որոնց մասին բանախոսությամբ հանդես են գալիս նրանցից վերապրածները. այդ բանախոսություններից մի քանիսը

նաև տպագրվում են: Նորից հրապարակ է բերվում «Դիվան հայոց գրականության» ժողովածուների հրատարակության, հայ գրականության և հայագիտության դասընթացների խնդիրը: Այս երկու նախաձեռնություններն էլ իրականություն չեն դառնում՝ միջոցների բացակայության և քաղաքական վերահաս իրադարձությունների պատճառով: Այնուամենայնիվ Թումանյանի ջանքերով հնարավոր է լինում տարբեր տեղերից գումարներ հայթայթել՝ արևմտահայ գաղթական և ընդհանրապես հայ կարիքավոր գրողներին օգնելու համար:

Մշակութային այս բոլոր նախաձեռնությունների ընթացքում Ամենայն հայոց բանաստեղծին ոչ մի վայրկյան հանգիստ չէր տալիս մի միտք, որ ծագել էր դեռևս պետերբուրգյան հայտնի դատավարությունից հետո՝ Ռուսաստանի երկու մայրաքաղաքներում հայ և ռուս մտավորականության հետ լայն շփումների ժամանակ. կենսական անհրաժեշտություն է ինքնուրույն պետականությունից զրկված հայ ժողովրդի համար լուսավոր ազգերի ընտանիքում հոգևոր ինքնահաստատման ու ինքնավարության ամուր հիմք ստեղծել:

Այդ գաղափարի իրականացումը կենսական հրատապության է հասնում պատերազմի ընթացքում, երբ գնալով ավելի ու ավելի տեսանելի էր դառնում, որ հայ ժողովուրդը իրադարձությունների փոփոխական հորձապտույտներում աստիճանաբար կորցնում է գոյության առարկայական արտաքին բոլոր հենարանները: Տարակույսը վերջնականապես փարատվում է բոլշևիկյան հեղափոխությամբ և ռուսական բանակի խուճապային նահանջով կովկասյան ճակատից... Մնում էր ապավինել սեփական ուժերին. Անդրանիկը ժողովրդի բուն գոյությանն սպառնացող վտանգները չեզոքացնելու համար փորձում է ստեղծել միասնական հայ զորաբանակ, որի կայացմանը, ինչպես տեսանք, բանաստեղծը պատրաստակամ էր ի սպաս դնելու իր անձը և իր զավակներին: Ինքն էլ իր հերթին փորձում էր ստեղծել փրկության մի ուրիշ խարիսխ՝ բարձրագույն չափանիշներով կազմակերպել ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքը: Այդ գաղափարի իրականացման էր ծառայելու Հայկազյան ընկերությունը: Նպատակն էր ստեղծել հայկական Ակադեմիա՝ համախմբելով աշխարհի բոլոր ծագերում ապրող ու գործող հայ գիտնականներին, գրողներին, արվեստագետներին, հիմնադրել հայկական համալսարան՝ մայրենի լեզվով բարձրագույն կրթություն տալու հայ երիտասարդներին: Թումանյանն իր անձնական հեղինակությամբ ու

հմայքով, իր գործնական բանիմաց եռանդով այդ գաղափարի շուրջն էր համախմբել ոչ միայն հայ մտավորականությանը, այլև ունևոր խավի շատ ներկայացուցիչների, որոնք համծն էին առել հոգալու ընկերության նյութական պետքերը: Ընկերությունն արդեն կայանում էր, ստեղծվել էին կառավարող օղակները, ծրագիրը, որ մեկ-երկու վերամայումից հետո արժանացել էր կառավարության վավերացմանը...

Սակայն ո՛չ Անդրանիկի երազած հայկական գորաքանակը, ո՛չ Հայկազյան ընկերությունը քաղաքական նոր անակնկալների հետևանքով իրենց ժամանակին իրականություն չդարձան: Բայց գաղափարը կենդանի մնաց: 1918 թ. ստեղծված հայկական Առաջին հանրապետության առաջին գործը պիտի լիներ համալսարանի հիմնումը, որ իր գոյությունը շարունակում է մինչև այսօր: Արդեն իրականություն է Անդրանիկի երազած հայոց ազգային բանակը, որ հաղթական հաստատականությամբ չեզոքացնում է նույն այն վտանգները, որ սպառնում էին հայությանը Անդրանիկի ժամանակ...

Տարեգրության այս դրվագներում ընթերցողն ականատես է առավելապես գործիչ Թումանյանի տեսանելի կյանքի անցուդարձերին: Բայց դրանց խորքում, այլև դրանցից այնկողմ բանաստեղծն ապրում էր մի ուրիշ կյանքով, որ տեսանելի ու զգալի էր միայն իրեն, և այդ անտեսանելի կյանքում բանաստեղծի ապրած դրաման շատ ավելի խորն էր ու ցավագին: Թումանյանի մասին բոլոր ուսումնասիրությունների հեղինակները այս կամ այն առիթով, այս կամ այն չափով ակնարկել են այդ դրամայի մասին: Հիշում են հատկապես «Ձինվորագրվել են» անավարտ հոդվածը (տե՛ս 1918, <սեպտեմբեր>), որտեղ բանաստեղծը խոստովանում է, որ իր բազմաբնույթ ու բազմածավալ հասարակական գործունեության ընթացքում, եթե անհրաժեշտ է եղել, գործակցել է ազգային, հասարակական, քաղաքական բոլոր կազմակերպությունների ու կուսակցությունների հետ, բայց երբեք չի «զինվորագրվել» դրանց, որովհետև ինքը և իր նմանները ոչ մի տեղ, ոչ մի միջավայրում չեն գտնում իրենց տեղը, որ կոչվում է գեղեցիկի աշխարհ: Թումանյանը դա «ծանր դրամա» է համարում իր նմանների համար: Այդ դրաման սովորաբար բացատրվում է այն իմաստով, թե հայ ստեղծագործողին կյանքի պայմանները հնարավորություն չեն տվել ամբողջապես նվիրվելու իր կոչումին: Այս մեկնաբանությունը, իհարկե, ճիշտ է, բայց Թումանյանի վերաբերմամբ միակողմանի է: Նրա և նրա նման-

ների դրաման ավելի համապարփակ բովանդակություն ունի. նրանք երազում են գեղեցիկի իրենց իդեալը իրականացած տեսնել իրական աշխարհում, ինչպիսին այն եղել է արարչության պահին: Այդ իդեալի իրականացման համար նրանք կռվում են ամենուրեք, նույնիսկ այնտեղ, երբ զգում են, որ դա իրենց տեղը չէ: Եվ շատերը այդ կռվում զոհաբերում են իրենց կյանքը: Դրանցից է Զովհաննես Թումանյանը: Նա կռվում էր, որ աշխարհը կատարյալ ու գեղեցիկ լինի ոչ միայն իր մայր ժողովրդի, այլև ամբողջ մարդկության համար, և դրաման ծագում էր այն տխուր գիտակցությունից, որ իր նմանները դեռ անգոր են աշխարհը վերափոխելու, որովհետև դեռ հեռու է մարդու ճանապարհի «մինչև Մարդը», որովհետև՝ «Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա»...

Թումանյանը, այնուամենայնիվ, թեկուզ «ոտքի վրա, իմիջիայլոց», շարունակում էր ստեղծագործել: Այդ տարիներին են ստեղծվել նրա քնարերգության այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Հայրենիքիս հետ», «Հոգեհանգիստ», «Բարձրից» (1915), «Քոշաքարում ես վազել եմ» (1917), «Իմ երգը», «Պատրանք», «Ս. Նունեի պատկերի առաջ» (1918), քնարական այլ երգեր, ավելի քան երեք տասնյակ քառյակներ (1916-1919), «Թագավորն ու Չարչին» բալլադը (1917) և այլն: Հայ բանաստեղծը շարունակում էր գրել, որովհետև չէր կարդանում չգրել, որովհետև այն անտեսանելի աշխարհը, որի բնակիչներն էին ինքը և իր նմանները, արարչության սահմանած իր տուրքն էր պահանջում.

Ամեն անգամ Քո տըվածից երբ մի բան ես Դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ի՞նչքան է դեռ մընում –
Չարմանում եմ, թե՛ ո՛վ Շըռայլ, ի՛նչքան շատ ես տըվել ինձ,
Ի՛նչքան շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից:

Տարեգրության այս գիրքը կազմված է նույն սկզբունքներով, որ շարադրված են առաջին գրքի խմբագրական խոսքում: Աշխատել ենք հնարավորինս ամբողջապես ներկայացնել ձեռքի տակ եղած նյութը: Ծավալուն նյութերը վերաշարադրանքով ներկայացնելիս աշխատել ենք պահպանել օբյեկտիվությունը՝ առհասարակ բացառելով կամ առանձին անհրաժեշտության դեպքերում նվազագույնի հասցնելով վերաշարադրողի միջամտությունը: Նյութերի մեծ մասը, հատկապես Թումանյանի ստացած շատ նամակներ, Գրողների ըն-

կերության, Հայրենակցական միությունների միության, Հայկազյան ընկերության արձանագրությունները, նիստերի ժամանակ թունամանյանի շատ ելույթներ տպագրվում են առաջին անգամ:

Խմբագրությունը կրկնում է առաջին և երկրորդ գրքերում ընթերցողներին ուղղված դիմումը՝ իրենց նկատած բացթողումները, վրիպումները կամ անճշտությունները գրավոր ներկայացնեն Խմբագրությանը՝ վերջին գրքի հավելվածում անհրաժեշտ ուղղումներ կատարելու համար:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԳԱԹ** - Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան
- ԴԴ ԵԺ** - Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, տասնչորս հատորով, հ. XIV, Ե.
- ԵԼԺ** – Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, տասը հատորով, Ե., 1988-1999
- ԹԶ ԱՐՏ** – Թումանյանի զավակները. Արտավազդ Թումանյան. նամակներ, գիրք Ա, Ե., 2013
- ԹԹ ԳԳ** - Թումանյանի թանգարան, գլխավոր գույքամատյան
- ԹԸԱ** - Թումանյանի ընտանեկան արխիվ
- ԹՏ** – Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908), 2010, (1909-1914), 2016
- ԹԺՀ** – Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969
- ԹՖ** – Թումանյանի ֆոնդ
- ԻՍ** – Թումանյանի ընտանիքի նամականին, կազմեց և ծանոթագրեց Ի. Սաֆրազբեկյանը, Ե., 2002
- ԼԿ** – Լ. Կարապետյան, Հովհ. Թումանյանի հասարակական գործունեությունը, Ե., 2002
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ
- ՆԹ ՀԶ** - Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Ե., 1969, 1987
- ՊԱ** - Պետական արխիվ
- ՀԳԿԸՖ** – Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ
- ՈՒՀ** – Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 1-5, Ե., 1964-1969
- ՎՏ ԵԺ** – Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1-4, Ե., 1972-1979

Հունվարի 1 - «Խաթաբալա» երգիծաթերթում «Շնորհավոր կաղանդ հայերիդ և ներքո գրված ջոջերին» խորագրի տակ շնորհավորական կատակ-ուղերծ թումանյանին.

«Հովհաննես թումանյան

Օհան ապեր, էրնեկ քեզ, թե էն անիս

Հոգուդ խաթրի՝ մարմնավոր ումբըդ կես անիդ.

Թե գուզիս վուր դատաստանը չըտեսնիս՝

Վանք սիրե, զենք սիրե, հայ սիրե ու Գասպարին էլ հիշե»:

«Խաթաբալա», 1915, թիվ 1:

Հունվարի 6 - «Խաթաբալա» երգիծաթերթում «Հայտնի և անհայտ անձնավորությունների «դարդերը և մտքերը»» խորագրի տակ կատակ-երկտող.

«Հովհաննես թումանյան

Ես միայն զնում եմ, զնում եմ այնտեղ... որտե՞ղ գործ կա»:

«Խաթաբալա», 1915, թիվ 2:

Հունվարի 16 - Պողոս Մակինցյանի նամակը Թիֆլիս՝ թումանյանին՝ Էջմիածնից:

Տեղեկություններ է հաղորդում Ճեմարանում Համլիկ թումանյանի գործի մասին. «Հիմա էլ, սիրելի՛ Իվան Ֆադեյիչ, պատմեմ, թե ինչպես է կաթողիկոսը բացատրում իր մերժումը:

Նախ, քանի որ թումանյանը խոստացել է վճարել, թող իր խոստումը կատարի (այդ բանը իրան հայտնի է Մալխասյանից), երկրորդը – Համլիկը երկու տարի էլ ունի, երրորդը – ընդհանուր քյասիբությունը վանքի: Մեկ էլ, որ Համլիկը չի կատարում իր աշակերտական պարտականությունները և մինչև օրս չի վերադարձել Էջմիածին»:

Հույս է հայտնում, որ արդեն ամեն հարց կարգավորվել է:

ԳԱԹ ԹՖ, 1637 (384 լր.):

Հունվարի 19 - Համբարձում Մելիքյանի նամակը թումանյանին՝ Թիֆլիսից:

Տեղեկացնում է, որ «Հորիզոնի» խմբագրության հասցեով 100 ռ. ավանս է ուղարկում բանաստեղծին՝ ի հաշիվ 1915 թվականի հոնորարի: Հայտնում է հետագա վարձատրության պայմանները՝ չա-

փածո գործերի (բանաստեղծություն, պոեմ) յուրաքանչյուր տողի համար՝ 20 կոպեկ, արձակ գործերի (պատմվածք, ճանփորդական նոթեր, հոդված) տողավարձը՝ 3 կոպեկ:

ԳԱԹ ԹՖ, 1719 (1235 III):

Հունվարի 21 - Հաղորդագրություն՝ «Հ. Առաքելյանի, Ս. Սահակյանի և Ա. Երզնկյանի դատը» խորագրով:

Տեղեկացվում է, որ ամսի 20-ին նահանգական դատարանի երկրորդ բաժանմունքում նշանակված դատին, որ հարուցել էր «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանը՝ ընդդեմ «Հորիզոնի» խմբագիր Ս. Սահակյանի և Ա. Երզնկյանի, երկու կողմից հրավիրված էին 30 վկաներ: Բացակայում էին երդվյալ հավատարմատար Սամսոն Հարությունյանը, Լեոն, Հովհ. Թումանյանը:

«Հորիզոն», 1915, թիվ 15:

Հունվարի 23 - «День печати» մեկօրյա թերթի խմբագրության դիմումը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից:

Օրագրել են հավաքել և տպագրել պատերազմի հանդեպ հասարակական գործիչների, գիտության ու գրականության ներկայացուցիչների վերաբերմունքի մասին անկետային տվյալներ: Խնդրում են բանաստեղծին ուղարկել իր գրավոր կարծիքը՝ 30-40 տպագրական տողի սահմաններում:

ԳԱԹ ԹՖ, 1143 (156 III g.):

Հունվարի 25 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 19) սերբական ժողովրդական էպոսի մի հատվածի թարգմանությունը՝ «Թե ինչ ուղարկեց թուրքի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն» վերնագրով և «Սերբական ժողովրդական վիպերգ» ենթավերնագրով:*

*) Թարգմանությունը կատարված է Ա. Ն. Մայկովի ռուսերեն թարգմանությունից՝ «Как отдалил турецкий султан московского царя» («Поэзия славян», 1871, стр. 84-85):

ԵԼԺ 4, 179-183, 610-611:

Հունվարի 28 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Քարտուղար՝ Գյուլտ ա. ք. Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Լեո, Մ. Բերբերյան, Դ. Դեմիրճյան, Ա. Ղազարյան:

Քննվում է երկու հարց:

ՀԳԿԸ անդամ Վ. Ահարոնյանը նախագահի միջոցով ընկերության ֆոնդից 200 ռուբլի փոխատվություն է խնդրել: Խնդրանքը մերժում են, քանի որ Ահարոնյանը ֆոնդին պարտք ունի, ընկերությունն էլ համապատասխան հնարավորություն չունի: Որոշվում է տալ 50 ռ. նպաստ՝ հանելով անդամավճարը:

Վրացի գրող Ակակի Ծերեթելիի թաղման արարողություններին մասնակցելու հարցը: Հանձնարարվում է թումանյանին և Բերբերյանին գրողների ընկերության կողմից պատգամավոր լինել հանգուցյալի հոգեհանգստյան և թաղման հանդեսներին:

Որոշվում է մոտ ապագայում կազմակերպել մի երեկույթ-դասախոսություն՝ առանց վիճաբանությունների, երաժշտական և գրական մասով:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 44/1:

Հունվարի 30 - Մուշեղ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ ընտանիքին Երևանից.

«Սիրելիք,

Ես հիմա նստած եմ վագոնում՝ Երևանի կայարանում, և Լևոնի* հետ միասին գնում ենք Իգդիր:

Հուսով եմք, որ մյուս ուսանողների պես չենք փախչի, կմնանք մինչև վերջը: Մեր գործը, ինչպես ձեզ բացատրեցի, պարզ է և շատ պատասխանատու և անվտանգ է, դուք կարող եք բոլորովին հանգիստ լինել... Այնինչ ընկերներիս մեծ մասը զանգատվում է, մեկը՝ հազում, մյուսը՝ դողացնում... Շարունակ զանգատվում են, որ շատ անհարմար պայմաններ են... Ես էլ կաշխատեմ գործերը կարգի բերել, երբ կարիք լինի, իսկ հիմա դրա ժամանակը չի: Ինչ վերաբերում է բաբոյին, ասեք հանգիստ թող մնա... դրա համար Դիադինում մի լավ տուն կշինեն, մի լավ այգի էլ կգնեն, տուն տեղ կսարքեն, թող քեֆը լավ պահի...

Համբույրներով՝ Մուշեղ»:

*) Լևոն Լիսիցյանն է, Ստ. Լիսիցյանի որդին:

ԻՍ, 63:

Հունվարի 31 - Մամուլում հայտարարություն, որ «Գուլտենբերգ» գրախանութում վաճառվում են «Հայ գրողներ» քրեստոմատիայի Ա և Բ գրքերը:

«Խաթաբալա», 1915, թիվ 6:

Հունվար - Գրում է «Հայրենիքիս հետ» («Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 269-270, 629:

Հունվար - Մամուլում հայտարարություն նոր տպագրված գրքերի մասին:

Հիշվում է նաև հ. Ս. Երենյանի «Գրագետ հայեր» գրքի Ը հատորը, որտեղ ուսումնասիրություն կա նաև Հովհ. Թումանյանի մասին:

«Բազմավեպ», 1915, հունվար:

<Հունվար - փետրվար>, Թիֆլիս - Նամակ Մոսկվա՝ Կարապետ Կուսիկյանին և Ալեքսանդր Ծատուրյանին.

«Հարգելի՛ պարոններ

Կ. Կուսիկյան և Ալ. Ծատուրյան,

Կարևոր համարեցի անցյալները ձեզ գրած նամակիս* ավելացնել հետևյալ բացատրությունը: Գրական գործեր ասելով պիտի հասկանալ միմիայն «Լուսաբերի» մեջ դրած կտորները, և արգելքը հենց էդ կտորներին է վերաբերում, որով և կապված եմ իմ ընկերների հետ: Բայց միևնույն գրական գործի – օրինակ – պոեմի, մի ուրիշ կտորից կարող եք օգտվել:**

Հարգանքով՝ **Հովհ. Թումանյան**»:

*) Այդ նամակն անհայտ է:

**) Խոսքը վերաբերում է հասցեատերերի կազմած «Հատիկներ» ընթերցանության ձեռնարկի համար Թումանյանի ստեղծագործություններից կատարվելիք ընտրությանը: Այդ ձեռնարկում տպագրվել են «Շունն ու Կատուն», «Չարի վերջը», «Գառնիկ ախպերը», «Արծիվն ու Կաղնին», «Անբախտ վաճառականները»:

ԵԼԺ 10, 221:

Փետրվարի 1 - Մուշեղ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ Նվարդ Թումանյանին՝ Իգդիրից:

Մտահոգված է արևմտահայության, հատկապես երեխաների վիճակով. «Նոր եկավ մի հայ զինվոր և հայտնեց, որ 4 փոքրիկ երեխաներ են բերել, որ տեղավորենք»:

Մինչև սրա մասին մի բան որոշեցին, եկան հայտնեցին, որ այդ երեխաներին իրար մեջ են բաժանել: Մեկին վերցնում է մի ինչ-որ պողպուլկովնիկ, իսկ մնացածներին՝ կազակները, որոնք երեխա-

ներին որդեգրում են և ռուսացնում, մի խոսքով, դարձնում են իրենց սեփականությունը:

Դիմում ենք, չեն տալի, ասում են՝ մենք մահից ազատել ենք, սրանք մերն են, և ո՞վ է իմանում ուղարկելիս ո՞ր անկյունն են տանելու – Կրա, Տոբոլսկ, Северный Кавказ.

Իսկ դուք, հայ օրիորդներդ, նստած այդտեղ՝ կամավորների և վիրավոր զինվորների մասին եք նստած, թողեք էդ տրամադրությունը: Զինվորների մասին ավելի շատ ու լավ մտածողներ կան, իսկ խեղճ *ժողովուրդը*, որի անունն են շարունակ խոնարհում, սրան արհամարհում են, սովի ու աղետի մեջ թողնում: Գյուղերը ավերված, տղամարդիկ սպանված, կանայք ու աղջիկները գերված ու բռնաբարված, մնացել են ծերերը ու երեխաները, և բանից դուրս է գալիս, որ հայ ազգը ուրիշ տեսակ զոհաբերության առաջ է կանգնած, մի նոր տեսակի թալանի առաջ է կանգնած, *երեխաների թալան*»:

ԻՍ, 63-64:

Փետրվարի 7 - Մամուլը տեղեկացնում է, որ «Հորիզոնի» գրական-գեղարվեստական պատկերազարդ հավելվածի՝ փետրվարի 8-ի թիվ 12-ում տպագրվելու է Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը:

«Հորիզոն», 1915, թիվ 29:

Փետրվարի 8 - Տպագրում է («Հորիզոն», գրական-գեղարվեստական պատկերազարդ հավելված, թիվ 12) «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 269-270, 629:

Փետրվարի 8 - Պետերբուրգի քաղաքային դումայի դահլիճում զեկուցումներ են կարդացվում Կովկասի, նրա և Ռուսաստանի հարաբերությունների մասին:

«Հայ փախստականները» թեմայով զեկուցմամբ հանդես է գալիս Միլունկովը: Նկատում է, որ, «չնայած անթիվ ու ահեղ արհավիրքներին, կոտորածներին ու աղետներին, հայ ժողովրդի սրտում կենդանի է մնացել փրկության պայծառ հավատը»: Իբրև առհավատչյա վկայակոչում է Լուսավորչի կանթեղի մասին լեգենդը. «Կա մի լեգենդ, որ հավերժացրել է հայ պոետ Թումանյանը. ըստ այդ լեգենդի՝ Արագածի վրա վառվում է մի անշեջ կանթեղ՝ «Լուսավորչի կանթեղը», որ պահապան է ու փրկության փարոս հայ ժո-

ղովրդի համար»: Կարդում է Թումանյանի բալլադի ռուսերեն թարգմանությունը և ավելացնում. «Եվ ամեն անգամ հայ ժողովրդի աչքը պարզված է այդ պայծառ փարոսին, այդ լուսեղեն կանթեղին, որ վառվում է Արագածի վրա»:

Վերջում զեկուցողը կոչ է անում օգնել հայ ժողովրդին:*

*) Ձեկուցումների մասին ընդարձակ հաղորդումը՝ «Ռուսաստան և Կովկաս» վերնագրով, ստորագրել է Վահան Տերյանը:

«Մշակ», 1915, թիվ 37:

Փետրվարի 10 - Թիֆլիսի Կայսերական երաժշտական դպրոցում տեղի է ունենում գրական-երաժշտական երեկույթ:

«Հայոց հարցի» մասին բանախոսությամբ հանդես է գալիս Ս. Թորոսյանը:

Գեղարվեստական բաժնում դպրոցի երգեցիկ խումբը կատարում է «Հայ եղբայրներ», «Հայոց վիշտը», «Երթանք սարը» և այլ երգեր: Գրական մասում կարդացվում են Շ. Կուրդիմյանի «Բանվորի երգը» և «Կալանավորի երգը» բանաստեղծությունները: Արմենուհի Տիգրանյանը արտասանում է Թումանյանի նոր գրած «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը:

«Մշակ», 1915, թիվ 31: ԼԿ, 133:

Փետրվարի 12 - Հաղորդագրություն մամուլում Կայսերական երաժշտական դպրոցում տեղի ունեցած երեկույթի (տե՛ս փետրվարի 10) մասին, որտեղ կարդացվում է նաև Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը:

«Մշակ», 1915, թիվ 31:

Փետրվարի 12 - Մուշեղ Թումանյանի մամակը Թիֆլիս՝ ընտանիքին՝ Դիադինից.

«Սիրելիք,

Հենց նոր եկան հայտնեցին, որ 80 գաղթական են եկել, որոնցից մի քանիսը հիվանդ են, մի տարեկան երեխան վախճանվել է, պետք է կարգադրել թաղել: Իմ ապրուստի, առողջության և տրամադրության մասին հանգիստ եղեք... Ըստ երևույթին զինվորները ինձ օֆիցերի տեղ են դնում, շարունակ պատիվ (учетъ) են տալիս և Ба-ше Благополудие ավելացնում:

Էս մի քանի օրը մերոնք բավական թուրք են ջարդել և երկու թնդանոթ են վերցրել:

Խնդրում եմ ինձ շուտ-շուտ նամակ գրեք. շատ ժամանակ է տեղեկություն չունեմ, ով ինչպես է, և ինչ բանի է Արտիկը, ի՞նչ եղավ...

Իմ հասցեն՝ Игдурь, Шмат II арм. дружины.

Դե, առայժմ ցե»:

ԻՍ, 65:

Փետրվարի 17 - Միքայել Աստվածատրյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին:

Խնդրում է բանաստեղծին, որ օգնի զինծառայությունից ազատելու ծխական դպրոցի մի նախկին ուսուցչի: Նա ընտանիքի միակ կերակրողն է: Նրա փոխարեն ծառայության կարող է գնալ եղբայրը: Հնարավոր է համարում, որ կաթողիկոսի միջնորդությամբ հարցը լուծվի փոխարքայի միջոցով:

ԳԱԹ ԹՖ, 952 (405 լր.):

Փետրվարի 18 - Սուրեն Նազանյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

Անցյալ տարի պաշտոնավարել է Ալեքսանդրապոլի քաղաքային դռնայում: Այժմ ինչ-ինչ հանգամանքների բերումով մնացել է անգործ և ընտանիքը պահելու հնարավորություն չունի: Խնդրում է բանաստեղծի օգնությունը՝ նոր բացվելիք քաղաքային հիվանդանոցում որևէ աշխատանքի տեղավորվելու:

ԳԱԹ ԹՖ, 1797 (924):

Փետրվարի 20-22 - Հայ կուսակցությունների նախաձեռնությամբ տեղի է ունենում «ազգային համագումար»:

Համագումարն ընտրում է Ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեի նոր կազմ: Պատվավոր նախագահ է ընտրվում Մեսրոպ Եպիսկոպոսը. փոխնախագահներ՝ Ալեքսանդր Խատիսյան և Հովսեփ Ամիրխանյան, անդամներ՝ Հովի. Թումանյանը, Լեոն, Գևորգ Խատիսյանը, Ստեփան Լիսիցյանը և ուրիշներ:

ԼԿ, 136:

Փետրվարի 22 - «Նվեր մանուկներին» ընկերությունը ծանուցում է, որ բացված է «Հասկեր» մանկական պատկերազարդ ամսագրի 1915 թվականի բաժանորդագրությունը՝ մշտական աշխա-

տակցությամբ Յովհ. Թումանյանի և Աթ. Խնկոյանի: 1915 թ. լույս է տեսնելու վեց համար և վեց հավելված:*

*) Հայտարարությունը կրկնվում է «Հորիզոնի» թիվ 46-ում:

«Հորիզոն», 1915, թիվ 41:

Փետրվարի 27 - Մուշեղ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ ընտանիքին՝ Դիադինից.

«Սիրելիք... Իմ մասին կարող եմ ասել միայն, որ ես լավ եմ, բավական առողջ, չնայած տիֆը տարածվում է: Ես ինձ լավ եմ պահում, շուտով ինձ օգնության ընկերներ կուղարկեն, ես, երևի, մի շաբաթով կգամ, բայց դա հարցական է, մոտ մի ամիս է չեմ լողացել (հանքային ջրերում չեմ լողանում. մրսելուց եմ վախենում): Պատերազմական նորություններ չկան, 2 թնդանոթ էին վերցրել... Գլըջ-Գյադոկը առնելիս, ես տեսա, 10-12 հոգի էլ գերի են վերցրել...»

Գրեք, ինչ նորություններ կան, եթե էնքան բարի լինեք թերթ ուղարկեք, ձեր լավությունը էլ չեմ կարող մոռանալ:

Համբույրներով՝ Մուշեղ:

ԻԱ, 65:

Փետրվարի 28 -«Հասկեր» ամսագրի 1915 թ. բաժանորդագրությունն սկսվելու մասին հայտարարության մեջ մամուլը հատուկ ընդգծում է, որ հանդեսի մշտական աշխատակիցներն են Յովհ. Թումանյանը և Աթ. Խնկոյանը:

«Հորիզոն», 1915, թիվ 46:

Մարտի 1 - Պետրոս Տեր-Մանվելյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Դսեղից:

Մարտի 10-ից ուսումնարանը 6 ամսով փակվում է: Ինքը կմնա անգործ և չի կարողանա հոգալ ընտանիքի և հարազատների կարիքները: Ալեքսանդրապոլի մորաբաց հիվանդանոցում կան ազատ պաշտոններ: Ինքը այդ պաշտոններից մեկը ստանալու համար դիմել է պ. Կամսարականին (Արդվինի նախկին գավառապետ) և պատասխան չի ստացել: Խնդրում է բանաստեղծի միջամտությունը, նաև Ավ. Իսահակյանի օգնությունը, որպեսզի Կամսարականը բավարարի իր խնդրանքը:

ԳԱԹ ԹՖ, 2232 (470 լր.):

Մարտի 1 - «Արևի» թիվ 47-ում տպագրվում է Ազատ Վշտունու «Վեր կա՛ց, աշուղ...» բանաստեղծությունը՝ նվիրված Հովհ. Թումանյանին:

-Վեր կա՛ց, աշո՛ւղ, գրկիր սագդ խանդավառ,
Եվ ինձ ասա՛ մի երգ քնքուշ սիրաբույր.
Սիրտս անբիծ բաբախում է քեզ համար,
Եվ տենչում է ծծել հաճույք, հրապույր.
Սերն է միայն հավերժ և սուրբ անմար,
Գրկի՛ր սագդ, դե՛հ, մի՛ լինիր միշտ համառ:
Երգի՛ր մեղմիկ ինչպես կարկաչ առվակի,
Թող գլգլա սրտիս թավիշ-մարգերեն.
Քեզ եմ բերել շրթունքիս թարմ վարդերեն.
Սրբի՛ր ճակտեղ կնճիռները տանջանքի.
Կյանքը կարճ է, աշո՛ւղ, եզր է արդեն,
Որ այսօր կա, վաղը հանկարծ կըհանգի:

-Շրթունքդ բոսոր

Համբույրի կարոտ,

Առվակը քեզի հեքիաթ է հյուսում,

Ժպտուն դաշտ ու ձոր

Կապել են նարոտ.

Համայն բնություն սեր է փսփսում,

Ափսո~ս, իմ սրտեն արում է հոսում...

-Մայիսը վառ ծաղկունքներով գունագեղ,

Բախտավորի ժպիտը լույս երեսին.

Արի՛, գնանք զով անտառը միասին,

Ուր հնչում է ծիլ-բնության նուշ-գեղգեղ,

Լճակումը մերկ լողում է շող-լուսին.

Երգի՛ր, աշո՛ւղ, վարդ-ալպուլին հետ մեկտեղ:

-Սազս փոշոտած

Լքել եմ արդեն.

Վաղուց եմ մոռցել սիրերգը գարնան.

Լարերը պրկված

Բյուրածալ դարդեն,

Գարուններ եկան, գարուններ անցա~ն,

Բայց սազս չերգեց, հեծկտաց անձայն...

-Աշո՛ւղ, հանդարտի՛ր, մի՛ տնքար այդպես,

Տխուր հուշերդ տուր մոռացության.

Ներշնչի՛ր լույս, հույս շվար մարդկության.
Տե՛ս, սիրող զույգեր դեպի մեզ կըգան.
Աշո՛ւղ, բա՛ց սիրտդ, էլ մի՛ տանջիր քեզ:

Կյանքիդ արևը մի՛ ծածկիր սևով,
Արցունքդ պահիր ձմրան տխրադեմ.
Դժոխք մի՛ կարծիր բուրալից եդեմ.
Տե՛ս, շողշողում է աստղը երկնաթով...
Ծունկի եմ չոքում, աշո՛ւղ, ես քու դեմ,
Հարբեցուր հոգիս մի խանդոտ երգով...
 -Ծովը փոթորկոտ,
 Քամին է հեծում.
 Լեռ-հորձանքներում
 Անթիվ դիակներ...
 Տժգույն ու մրոտ

Դեմքեր անհատնում,
Քամուց դալկացած նորաբաց վարդեր,
Ո՞վ է հառաչում դրսումը, անտեր...
Եկավ ու անցավ
Ինչպես մի երազ.
Որպես մի անհաս
Տեմչանքի ստվեր,
Ցողեց խոկ ու ցավ
Եվ արցունք վրաս.
Խամրեց հասմիկը, թռչնան ալ վարդեր,
Սազս փոթորկվեց մենա~կ, անընկեր...
Լո~ւռ սպասումի ժամերն են ներկա...
Հայացքս հեքոտ ճամփին արնաներկ
Դաշտերին անհերկ.
Լռության մեջ երկունք-իրիկվա
 Սպասում եմ ես
 Գալուստին իր վես...
Օ~, այն ժամանակ, սազս նոր հարբած
 Խանդոտ և անլաց,
Պի՛տ հորդե~, հորդե~, պի՛տ երգե և քեզ,
Եվ հուր-օրհներգով պի՛տ թրջե ուղին,
Որտեղից կըգա իմ Լույս Թագուհին...

«Արև» թիվ 47, Բաքու, 1915:

Մարտի 3 - Վարսենիկ Գևորգյանց-Տեր-Դավթյանի* նամակը Թիֆլիսի Թումանյանին՝ Երևանից:

Խնդրում է Սրբազանի միջոցով օգնել, որպեսզի իր մտերիմ օձնեցի Արմենակ Տեր-Դավթյանը ձեռնադրվի քահանա: Երանուքյանը է հիշում բանաստեղծի հետ անցկացրած «վաղ տարիները»:

*) Տիգրան Տեր-Դավթյանի դուստրն է, որի հետ պատանի Թումանյանը չորս տարի սովորել է Զալալօղլիում՝ նրա հոր դպրոցում:

ԳԱԹ ԹՖ, 1113 (465 լր.):

Մարտի 12 - Տպագրվում է Լեոյի բաց նամակը:

Բողոքում է, որ ոտնահարվել է իր հեղինակային իրավունքը. իր «Մելիքի աղջիկը» պատմական վեպը առանց իր համաձայնության և աղավաղումներով փոխադրել են դրամայի և ցուցադրել Բաքվում՝ դերասան և ռեժիսոր Արմենյանի կողմից, որ Թիֆլիսում ևս ներկայացնել: Մասնավորապես գրում է. «Ես սրտիս ամբողջ կորովով բողոքում եմ հասարակության և խնդրում եմ, որ նա ինձ պաշտպանե այս զգվելի բռնությունից: Հայ գրողների իրավունքների պաշտպանությունը վաղեմի ցավոտ հարցն է մեր իրականության մեջ: Գլխավորապես այս նպատակով էր, որ մենք՝ գրողներս, հիմնեցինք Հայ գրողների ընկերություն, որ անցյալ տարի հերթի դրավ հեղինակների իրավունքների հարցը, բայց տարաբախտաբար չկարողացավ մի շոշափելի գործ կատարել: Ժամանակը չէ՞, որ Գրողների ընկերության վարչությունը վերահասություն անե այս տգեղ գործի մեջ և իր ձայնը բարձրացնե: Դիմում եմ Գրողների ընկերության, դիմում եմ և ընկեր-գրողներին»:

*) Թերթը նույն համարում «Իրավացի բողոք» խմբագրականով պաշտպանում է Լեոյին. «Հայ գրողների ընկերության վրա այս տեսակետից լուրջ պարտականություն կա ծանրացած. նա պարտավոր է խորհրդակցության նյութ դարձնել և սահմանել հայ հեղինակի գրական երկերի իրավունքը, որպեսզի նման շահատակություններ այլևս տեղի չունենան»:

«Հորիզոն», 1915, թիվ 56:

Մարտի 14 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Անդամ քարտուղար՝ Գյուտ ա. ք. Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Ա. Ղազարյան, Մ. Բերբերյան, Դ. Դեմիրճյան, Ա. Աբովյան:

Նախագահողը հայտնում է, որ «Մեղու» ընկերությունը առաջարկում է մի երեկույթ կազմակերպել՝ հասույթի կեսը հատկացնելով կամավորների ընտանիքներին:

Տեղեկացնում է նաև, որ մի կողմից Լեոն, մյուս կողմից դերասան Արմենյանը իր միջոցով դիմում են ժողովին և խնդրում, որ ժողովը, լսելով իրենց միջև շարունակվող վեճը «Մելիքի աղջիկը» պիեսի շուրջ, երևան հանի արդարությունը և պաշտպանի զրկվածին ու հարստահարվածին:

Որոշում են հայտնել «Մեղու» ընկերությանը, որ վարչությունը այդպիսի մտադրություն վաղուց ունի: Հանձնարարել նախագահին հաջորդ նիստին զեկուցել, թե ինչ տեսակ երեկույթ կարելի է պատրաստել և իրականացնել ներկա պայմաններում:

Լեոյի և Արմենյանի դիմումի մասին երկար քննարկումներից հետո ժողովը որոշում է այդ դատը վերցնել իր վրա, հրավիրել պ.պ. Լեոյին և Արմենյանին, առաջարկել՝ գրավոր ստորագրություն տան առ այն, որ նրանց համար պարտավորական է վարչության որոշումը, և այդ որոշումից հետո նրանք պիտի դադարեցնեն իրենց քաղաքացիական դատը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 44/2:

Մարտի 17 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Անդամ քարտուղար՝ Գյուտ ա. ք. Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Մ. Բերբերյան. Ն. Աղբալյան, Դ. Դեմիրճյան, Լեո:

Նախորդ նիստի որոշման համաձայն՝ ժողովին ներկայանում է վարչության անդամ Լեոն: Նա ասում է, որ իր դատը հանձնել է վարչությանը, և հույս ունի, որ վերջինս կվերականգնի իր հարստահարված իրավունքը, ուստի անպայման կենթարկվի վարչության որոշմանը:

Արմենյանը չի ներկայացել ժողովին: Եվ քանի որ գործի քննությունը բավական ժամանակ է պահանջում, իսկ Արմենյանը հայտարարել է, թե ամսի 23-ին ներկայացնելու է «Մելիքի աղջիկը», վարչությունը որոշում է, որ երկու կողմն էլ դադարեցնեն իրենց գործողությունները, մեկը՝ քաղաքացիական դատը, մյուսը՝ ներկայացումը: Լեոն ընդունում է այս պայմանը, ուստի ժողովը որոշում է նախագահի միջոցով առաջարկել Արմենյանին, որ հետաձգի ներկա-

յացումը մինչև գործի քննության վերջանալը: Որոշման մասին հայտարարություն տալ մամուլում:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 44/3:

Մարտի 18 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Անդամ քարտուղար՝ Գյուտ ա. ք. Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Լեո, Ա. Ղազարյան, Մ. Բերբերյան, Դ. Դեմիրճյան, Ն. Աղբալյան:

Արմենյանը, իր գործընկեր Ջարիֆյանի հետ ներկայանալով ժողովին, հայտնում է, որ ինքը կհետաձգի ներկայացումը միայն մի պայմանով, որ վարչությունը իր արդարացման դեպքում երաշխավորի այն վնասների հատուցումը, որոնց պիտի ենթարկվի, քանի որ արքունի թատրոնը վարձել է 2000 ռուբլով և գլխավորապես «Մելիքի աղջիկը» պիեսի հաջողության հույսով: Լեոն հայտնում է վարչությանը, որ ինքը նկատի չունի գործի նյութական կողմը, այլ միայն բարոյականը՝ «Մելիքի աղջիկը» վեպի աղավաղումն ու իր անվան արատավորումը:

Ժողովը երկար խորհրդակցություններից հետո հայտարարում է, որ վարչությունը ոչ մի հնարավորություն չունի հատուցելու վնասները, իրավունք էլ չունի խառնվելու նյութական հաշիվներին: Ուստի որոշում է հայտնել երկու կողմին էլ, որ վարչությունը գործը քննելիս նկատի կունենա միայն բարոյական կողմը և իր վճիռը կհայտարարի մամուլի միջոցով: Ընտրում են մի հանձնաժողով՝ Թումանյան, Դեմիրճյան, Բերբերյան, Ղազարյան և ուրիշներ, և հանձնարարում քննել գործը և զեկուցել վարչությանը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 44/4:

Մարտի 19 - Մամուլը ծանուցում է, որ «Մանուկ» ընկերության հրատարակությամբ լույս են տեսել Թումանյանի կազմած խաղերի հետևյալ գրքերը՝

1. Հայոց գետերը - Հայրենագիտական խաղ հայոց 69 գետերի խաղաթղթերով, բացատրական գրքույկով և հայոց գետերի քարտեզով:

2. Թանկագին քարեր - Քարերի խաղ՝ բացատրական գրքույկով:

3. Սրամիտ նախրապանը - Տառերի խաղ:

4. Դդում - Գույների խաղ:

Ստանալու համար պետք է դիմել հայ գրավաճառներին: Որոշ քանակով ցանկացողները կարող են դիմել Туфлусь, Вознесенская, 18, օր. Նվարդ Թումանյանին:

«Հորիզոն», 1915, թիվ 62:

<Մարտի 19> - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ քրոջ՝ Նվարդին Մոսկվայից.

«Սիրելի Նվարդ !

Ստացա նամակդ: Շնորհավորում եմ Ձատիկներդ: Ասա Տեր հորը, որ մեր նշխարքը պահի, ոչ ովի չտա և աղոթք անի, որ աշնանը վերադառնանք տուն: Մերոնք ամենքիդ բարևում են: Ես չհասկացա - լոռո եք շինո՞ւմ: Ի՞նչ լոռո:* Ո՞ւր է Նիկոլը: Էդքան մարդու հարցնում եմ, ոչ ոք չի պատասխանում: Դերենիկը էլի գալի՞ս է Ձեզ մոտ, ես չեմ կարողանում առանց ծիծաղելու հիշել նրան:

Ցտեսություն:

Արտիկ»:

*) Խոսքը Թումանյանի և նրա զավակների կազմած խաղերի մասին է (տե՛ս նախորդ ծանուցումը):

ԹԶ ԱՐՏ, 140:

Մարտի 19 - Պետրոս Տեր-Մանվելյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Դսեղից (տե՛ս նաև մարտի 1):

Մամուլից տեղեկացել է. «Արդահանից Մկրտիչ քահանան հեռագրում է Մեսրոպը եպիսկոպոսին, որ Օքրոպակերտ գյուղն անվնաս է մնացել: Կարիք կա մեծ օգնության»: Արդահան ուղարկելու «էքսպեդիցիա» է կազմակերպվում՝ նպաստ բաժանելու և վնասները արձանագրելու: Խնդրում է բանաստեղծի միջնորդությունը սրբազանին կամ բարեգործական ընկերությանը, որպեսզի իրեն ներառեն այդ «էքսպեդիցիայի» կազմում՝ «հիարկե, անվճար»:

ԳԱԹ ԹՖ, 2233 (476 լր.):

Մարտի <երկրորդ տասնօրյակ>, Թիֆլիս - Նամակ Մոսկվա՝ Վարդագարյաններին:

Գրում է պատերազմի ընթացքի վերաբերյալ Թիֆլիսում տիրող հուզումնալից տրամադրությունների մասին. «Այժմ օրեցօր սպասում ենք Պոլսի առումին, որով անշուշտ ամեն բան պիտի վերջանա»:* Համառոտ ներկայացնում է պատերազմական վայրերում հայության ծանր, տազնապալի վիճակը: Բայց և այնպես կյանքը

գնում է «իր սովորական ճանապարհով, ներկայացումներն էլ են անպակաս, ուրախություններն էլ, զանազան ձեռնարկություններն ու գործերն էլ: Ինքն, օրինակ, ձեռնամուխ է եղել մի գործի. «Նկատելով, որ մեր աշխարհքից, մեր հայրենիքից կատարելապես անգետ ու անտեղյակ ենք առհասարակ, թե մեծերս, թե փոքրերը, և էն ժամանակ, երբ մենք դուրսը մեծ բաներ ենք խոսում՝ գալիս ենք տեսնում ներսը մեր երեխեքը խորթանում են ավելի ևս ամեն հայկականից, մտածեցի ձեռնարկել, կազմել ու հրատարակել մի շարք հայրենագիտական և այլ տեսակի խաղեր, թե երեխաների, թե պատանիների և թե նույնիսկ մեծերի համար»:

Տեղեկացնում է, որ արդեն հրատարակել է չորս այդպիսի խաղ (տես մարտի 19): Շատ ուրախ կլինի, եթե «հետաքրքրական մի երկու խաղ ուղարկեն, միայն թե գրական բնավորությունով, որ համ զվարճալի, հաճելի լինի, համ էլ բան սովորեցնի»:

Հետգրության մեջ. «Մտքումս դրել եմ էնպես ամեն, որ մի երկու տարումը բոլոր հայ երեխաներին սովորցնեմ հայոց գետերի, քաղաքների, լեռների, լճերի և այլն - զոնե անունները»:

*) Բանաստեղծի լավատեսության հիմքը մամուլի այն հաղորդագրություններն էին, թե Պոլսում թուրքերը խուճապի մեջ են, նույնիսկ կառավարությունը տեղափոխվել է ուրիշ քաղաք, և հավատացնում էին, թե օսմանյան մայրաքաղաքի գրավումը օրերի հարց է:

ԵԼԺ 10, 221-223, 598:

Մարտի 20 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Անդամ քարտուղար՝ Գյուտ ա. ք. Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Ն. Աղբալյան, Դ. Դեմիրճյան:

Լսում են վարչության անդամ Լեոյի՝ նախորդ օրը վարչությանը հանձնած երկու գրությունները. «Սրանով ես ձեզ արգելում եմ զբաղվել իմ «Մեկիքի աղջիկը» վեպի գործով» և «Անհնարին համարելով մնալ ընկերության մեջ՝ ես հրաժարվում եմ թե՛ վարչության և թե՛ ընկերության անդամությունից»:

Ընթերցվում է Լեոյի և Արմենյանի վեճը քննող հանձնաժողովի (տես մարտի 18) նիստի արձանագրությունը: Տեղեկացվում է, որ մարտի 19-ին տեղի է ունեցել հանձնաժողովի առաջին նիստը՝ քննելու Լեոյի և Արմենյանի միջև ծագած վեճը «Մեկիքի աղջիկը» պիեսի ներկայացումների առիթով: Նիստին հրավիրված են եղել նաև իրա-

վաբաններ Գ. Խատիսյանը և Պապովյանը: Հանձնաժողովի նախագահ Թումանյանը զեկուցել է, որ դերասանական խմբակցությունը, ընդառաջ գնալով հանձնաժողովի ցանկությանը, դադարեցրել է «Մեկիքի աղջիկը» պիեսի ներկայացումները՝ չնայելով, որ Լեոն արդեն դիմել է նահանգական դատարանին: Տեղեկացրել է նաև, որ վարչությունը Լեոյից ստացել է մի նամակ, որով նա արգելում է հանձնաժողովին զբաղվել իր և Արմենյանի վեճով:

Լսելով նախագահի զեկույցը՝ հանձնաժողովը, համաձայն Լեոյի նամակի, դադարեցնում է նրա և Արմենյանի վեճի քննությունը՝ այդ մասին տեղյակ պահելով վարչությանը:

Արձանագրությունն ստորագրել են Թումանյանը, Ա. Ղազարյանը, Դ. Դեմիրճյանը, Գ. Խատիսյանը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 30/3, 30/4:

Մարտի 21 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 110) «Ձգաստություն» հոդվածը:

Ողջունում է Հայոց ազգային բյուրոյի ստեղծումը (տե՛ս փետրվարի 20-22). «Ազգային բյուրոն բերում էր համերաշխությունն ու միությունը մեր մեջ, որ անհրաժեշտ էր շատ խորհրդավոր ու ծանր ժամանակին: <...> Եթե մենք մի ժողովուրդ ենք, որ արժանի ենք ավելի լավ օրերի ու ապագայի, պետք է սնունդ ու ծավալ չառնեն անմիաբանության վատ ջանքերը մեր մեջ մեր սրբազան ձգտումի վայրկենին, պետք է համախմբվենք, մեր բոլոր ուժերը միացնենք ու տանենք օժանդակելու Ռուսաստանի ու Եռյակ համաձայնության հաղթանակին, որ՝ ինչպես բոլոր դաշնակից պետությունների ու ժողովուրդների՝ էնպես էլ մեր հաղթանակն է և պահանջում է անկասկած ու կուռ միություն մեծ պատերազմի հանդեպ՝ մեծ ապագա ստեղծելու համար»:

*) Հոդվածն այստեղ ընդհատվում է: Լրագրում հաջորդ սյունակը բաց է: Շարունակությունը հավանաբար վերջին պահին գրաքննությունն արգելել է:

ԵԼԺ 7, 163:

Մարտի 31 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 68) «Մեր սրբազան հովիտները» հոդվածը:

Գրության առիթը ռուսական զորքի նոր առաջխաղացումն է դեպի Ալաշկերտ՝ Եփրատի հովիտը: Եվ ժողովուրդը, որ զորքի նահանջի հետ թողել էր իր բնակավայրը, զորքի հետ նորից վերադառնում է: Այդպես եղել է միշտ. «Էսպիսով է կարողացել և էսօր էլ

Էսպիսով է կարողանում մեր ջախջախված, ցաք ու ցրիվ եղած ժողովուրդը հանգիստ նստելու տեղ գտնի իր հայրենիքում: Էսպիսով էր, որ Արարատյան դաշտում, Արաքսի հովտում, որ ռուսներից առաջ համարյա ամբողջովին պարսկաբնակ էր, առաջ եկավ, ստեղծվեց և էսօր նստած է մի հոծ հայ զանգված»:

Արաքսի և Եփրատի հովիտները մեր սրբազան հովիտներն են: Այսօր էլ «թուրք բանակն ու քրդական ալայները», որ ռուս զորքի նահանջի ժամանակ արյուն ու ավեր էին տարածում Ալաշկերտի հովտում, հիմա հետ են քաշվել, «հառել են իրենց արյունակալած աչքերը» Եփրատի հովտի վրա. «...Էն հովտի վրա, ուր հեթանոս հայը Վարդավառ ու Ծաղկազարդ պաշտել է իր Անահիտն ու Աստղիկը, իր Արամազդն ու Վահագնը: Էն հովտի վրա, ուր հայ ժողովուրդը իր Մեծ Տրդատի հետ միասին մկրտվել է Արածանու սուրբ ջրերում, քրիստոնեություն է ընդունել ու իր մկրտության տեղը տաճար է կանգնել, ճակատին դրոշմել. Ով կընկնի էս վեմի վրա՝ կջախջախվի, իսկ ում վրա սա կընկնի՝ կհոսի ջրի պես: Էն հովտի վրա, ուր հայ ժողովուրդը դարերով ճակատ ճակատի է զարկել հին Պարսկաստանի ու Արևելքի բոլոր աշխարհակալների հետ: Էն հովտի վրա, ուր փռված է Ձիրավի դաշտը, որի վրա էնքան ու էնքան հաղթանակներով խոյացել են Արշակունիները, Բագրատունիները, Մամիկոնյաններն ու Արծրունիները: Էն հովտի վրա, որին շրջապատել են Ծաղկանց լեռները, Բարթոլի շղթան, Նպատն ու Սուկավետը, որի վրա, իր ալևոր գլուխը մինչև երկինք բարձրացրած, հսկում է Ազատ Մասիսը: <....> Անդիմադրելի դեպի Էն հովիտն են ձգտում մեր սրտերը, մեր մտքերը, մեր հոգիները: Էնտեղ են մեզ համար էն ամենը, ինչ որ մի ժողովրդի դարձնում են մեծ ու գեղեցիկ, էն ամենը, ինչ որ մի ժողովրդի կյանք ու ոգի են տալիս:

Դեպի Մայր Արաքսի ու սրբազան Եփրատի նվիրական հովիտները:

ԵԼԺ 7, 164-166:

Մարտ - Գրում է «Ձեռաց» («Արգո պարոններ, հայրեր սրբազան...») բանաստեղծությունը:*

*) Գրված է Թիֆլիսում մի խնջույքի ժամանակ: Բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել:

ԵԼԺ 1, 629:

Ապրիլի 2 - Տպագրվում է ՀԳԿԸ վարչության բաց նամակը՝

Լեոյի «Մելիքի աղջիկը» վեպի շուրջ նրա և Ա. Արմենյանի միջև ծագած վեճի մասին:

«Վարչության անդամ պ. Լեոն և Ընկերության անդամ պ. Արմենյանը դիմեցին վարչության՝ պաշտպանելու իրենց իրավունքը «Մելիքի աղջիկը» պիեսի գործի վերաբերությամբ և երևան հանել արդարությունը:

Վարչությունը իր սեպուհ պարտքը համարեց գործի քննությունը վերցնել իր վրա և առաջարկեց երկու կողմին էլ պարտավորական համարել իրենց համար Վարչության որոշումը և առաջարկեց պ. Լեոյին հետ վերցնել իր բողոքները քաղաքացիական ատյաններից, իսկ պ. Արմենյանին՝ դադարեցնել «Մելիքի աղջիկը» ներկայացումը: Պ. Լեոն ընդունեց վարչության առաջարկը, իսկ պ. Արմենյանը առաջարկեց թույլ տալ իրեն ներկայացնել «Մելիքի աղջիկը» այն պայմանով, որ ինքը ներկայացումից գոյացած ամբողջ եկամուտը հանձնի Վարչության՝ իրավունք տալով այդ գումարը վերջը հանձնել արդարացած կողմին. կամ թե երաշխավորել ներկայացումը դադարեցնելուց առաջացած վնասների հատուցումը, եթե ինքը արդարանա:

Պ. Լեոն հայտնելով, որ իր համար առաջնակարգ գշանակություն ունի այն, որ իր աղճատված վեպի ներկայացնելը հոգեկան հուզմունք պիտի պատճառե իրեն, պնդում է, որ պիեսը չներկայացվի:

Այնուհետև Վարչությունս, կողմերի հավանությամբ, վերցրեց իր վրա միմիայն գործի բարոյական կողմի քննությունը՝ աչքի առաջ ունենալով, որ ինքը չի կարող երաշխավորել նյութական վնասների հատուցումը: Նույն նիստում՝ ամսիս 18-ին, Վարչությունս ընտրեց մի մասնաժողով վարչության 4 անդամից և 2 կողմնակի իրավաբաններից ու հանձնարարեց երկու օրվա ընթացքում ավարտել գործի քննությունը և զեկուցանել Վարչության:

Այս նիստից հետո պ. Արմենյան և Ընկ. հայտնում են վարչության նախագահին իրենց համաձայնությունը պիեսի ներկայացումը դադարեցնելու վերաբերությամբ:

Բայց մասնաժողովը դեռ իր գործը չսկսած, ամսիս 19-ին պ. Լեոն մի գրությամբ արգելեց վարչության զբաղվել «Մելիքի աղջիկը» պիեսի գործի քննությամբ:

Վարչությունն ստիպված եղավ լուծել քննիչ մասնաժողովը, դադարեցնել գործի քննությունը և այս մասին հայտնել պ. Արմենյանին:

Վարչություն հայ գրողների կովկասյան ընկերության»:

«Արեգ», Բաքու, 1915, թիվ 9:

Ապրիլի 4 - Տպագրվում է Լեոյի «Իմ պատասխանը» վերնագրով բացատրություն-հոդվածը՝ ի պատասխան ՅԳԿԸ վարչության բաց նամակի (տե՛ս ապրիլի 2):

Հանգամանորեն շարադրելով իր և Արմենյանի միջև ծագած վեճի էությունն ու մանրամասները՝ հոդվածի վերջում Լեոն գրում է. «Մնում է Գրողների ընկերության բռնած դիրքի հարցը: Սա էլ մի շատ հետաքրքրական պատկեր է: Բայց ես առայժմ նրա մասին չեմ խոսի: Ինձ հարկավոր է մի երկու օր՝ մի կարևոր հանգամանք պարզելու համար»:

«Արեգ», Բաքու, 1915, թիվ 11:

Ապրիլի 4 - Տեղի է ունենում ՅԳԿԸ վարչության հերթական նիստը՝ Թումանյանի նախագահությամբ:

Անդամ քարտուղար՝ Գյուտ ա. ք. Աղանյան:

Վարչության անդամներից ներկա է Ն. Աղբալյանը:

Նախագահողը տեղեկացնում է, որ հեռագրեր են ստացվել Վանից, Էրզրումից և այլ բնակավայրերից. այնտեղի, ինչպես նաև Կիլիկիայի հայությունը կողոպտվում և կոտորվում է: Առաջարկում է ընկերության կողմից դիմումներ անել զանազան երկրների թերթերին և ազդեցիկ գործիչներին՝ խնդրելով, որ նրանք բողոքեն կատարվող անիրավությունների դեմ և միջամտեն, որ դադարեցվի հայերի հալածանքը:

Հայտնում է նաև, որ Տ. Նազարյանը հրավերով դիմել է վարչությանը ներկայացուցիչ ուղարկել «Շաղկապ» ընկերության հիմնադիր ժողովին:

Առաջին հարցի վերաբերյալ որոշվում է ընդունել նախագահի առաջարկը՝ հայերենով, ռուսերենով, ֆրանսերենով խմբագրել դիմումը և ուղարկել բոլոր երկրների ազդեցիկ թերթերին ու գործիչներին, խնդրել նախագահին, որ դիմի Ազգային բյուրոյին ծախսը վերցնել իր վրա:

Երկրորդ հարցի վերաբերյալ որոշվում է. քանի որ պ. Նազարյանը հրապարակավ հայտարարել է, որ չի ծանաչում Հայ գրող-

ների ընկերությունը, ուստի վարչությունը չի ընդունում նրա հրավերը:

Արձանագրությունն ստորագրել են՝ Զ. Թումանյան, Ա. Աբովյան, Դ. Դեմիրճյան, Գ. Աղանյան:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 44/5:

Ապրիլի 4, Թիֆլիս - ՀԳԿԸ վարչության անունից գրություն վարչության անդամ Լեոյին:

Գրում է. «Վարչությունս ստացավ Ձեր նամակը, որով հրաժարվում եք վարչությանս և միանգամայն ընկերությանս անդամակցությունից, և որոշեց խնդրել Ձեզ, որ բարեհաճեք բացատրել վարչությանս, թե ինչ դրդապատճառներից ստիպված հրաժարվում եք վարչությանս անդամակցությունից»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 81/ 1:

Ապրիլի 9 - Մուշեղ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ ընտանիքին Դիադինից:

Սարսափելի մանրամասնություններ է հաղորդում պատերազմական վայրերում հայության վիճակի, հատկապես Վանի պաշարման և կոտորածների մասին. «...Չորս կողմը թալան, կոտորած, ավեր, իսկ մերոնք իրենց համար հանգիստ այնտեղ Երևանում սպասում են: <....> Մեր ժողովրդով լի երկիրն ավերվում է, իսկ էնտեղ գործը իր համար հանգիստ նստել է»:

ԻՍ, 66-67:

Ապրիլի 9 - Մարգար Ավետիսյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Օլթիից:

Խնդրում է դիմել Հայկական բյուրոյին և Կովկասյան ֆրոնտի գլխավոր շտաբին, որպեսզի իրեն տեղափոխեն «հայկական դրոժինաներ»։ «Ճիշտ է, նպատակը և գործը մեկ է, բայց այս շրջանում և այս հանգամանքներում չի կարելի անել այն, ինչ որ ես կարող էի անել հայ շրջանում <....>, որտեղ ինձ համար գործունեության ահագին ասպարեզ կա <....> իբրև սովորեցնող, կազմակերպող, գործին ընթացք տվող՝ հայ շրջանում տասնապատիկ ավելի գործ կարելի է կատարել, քան թե մի որևէ անկյունում, անհարազատ շրջանում մի կողքի ընկնելով»:

Օգտակար է համարում «նվիրված, ազնիվ ու հասկացող» քահանաների այցելությունը բանակ՝ «հայ զինվորին հոգևոր մխիթա-

րություն և ոգևորություն բերելու»:

*) Մարգար Ավետիսյանը գործող բանակում պրապորշչիկ էր:

ԳԱԹ ԹՖ, 964 (257 լր.):

Ապրիլի 9 - Տպագրվում է Լեոյի «Իմ պատասխանը» հոդվածի (տե՛ս ապրիլի 4) շարունակությունը:

ՀԳԿԸ վարչության՝ «Արեգ»-ում տպագրված պաշտոնական նամակը «միտումնավոր» է համարում: Դա հիմնավորելու համար ծավալուն շարադրանքով ներկայացնում է իր փաստարկները: Հիմնական դժգոհությունն այն է, թե ՀԳԿԸ վարչությունը իր հետ պայմանավորվածությունները չի կատարում, առանց իրեն տեղյակ պահելու՝ վիճելի հարցերի շուրջ պայմանավորվածություններ է ձեռք բերում իր հակառակորդի հետ կամ դրանց մասին իրեն տեղյակ է պահում ուշացումով: Այստեղից եզրակացնում է, թե վարչությունը կողմնակալ մոտեցումով պաշտպանում է իր հակառակորդին: Այդ պատճառով էլ իր դատը հետ է վերցնում Գրողների միության տնօրինությունից: Եվ վերջում. «Այսպիսի՞ իրավաբաններով և անկողնապահության ու կորրեկտության այսպիսի՞ պաշարով պիտի գրողների ընկերության վարչությունը կարողանար կատարել մի դեր, որ բավարար լիներ արդարության տեսակետից: Նրա արարքների թագն ու պսակը հանդիսացավ իր միտումնավոր նամակը, որ տպագրեց լրագիրներում, իբրև թե ինձ դատապարտելու համար, բայց իրապես դատապարտեց ինքն իրան:

Այս մղձավանջային պատմությունը, որ ինձ խեղդում է ահա մի ամսից ավել, բաց արավ շատ հանգամանքներ, որոնք, անշուշտ, մեր ժամանակի բարքերի տեսակետից արժեքավոր նյութեր կլինեն»:

«Արեգ», Բաքու, 1915, թիվ 14:

Ապրիլի 9 - «Փայլակ» շաբաթաթերթը, արտատպելով Հայ գրողների ընկերության՝ «Արև»-ում տպագրված նամակը (տե՛ս ապրիլի 2), անհասկանալի է համարում Լեոյի դիրքորոշումը. «Մի՞թե նա հավատ չէ ընծայում և չէ վստահում այն ընկերության, որի սյուններից- վարչության անդամներից մեկն էլ ինքն է: Մի՞թե ավելի հարմար դատավոր կարող է լինել երկու միևնույն ընկերության պատկանող անդամների համար, քան մույն այդ ընկերությունը: Եթե յուր այդ քայլն արդարացնող հարգելի և ծանրակշիռ պատճառ հրապարակ չբերե Լեոն, նշանակում է նա մեծ վիրավորանք է հասցնում դրանով

թե՛ Դայ գրողների ընկերությանը և թե՛ իրեն, որ այդ ընկերության վարչության անդամ լինելու պատիվն ունի: Պետք է վերջ տալ. ժամանակը չէ այդպիսի մանր խնդիրներով զբաղեցնել հասարակությանը...»:

«Փայլակ», Շուշի, 1915, թիվ 9:

Ապրիլի 10 - Զաղորդագրություն մամուլում.

«Տաճկահայաստանում սկսված հայկական ջարդերի առիթով Դայ գրողների ընկերությունը մի ընդհանուր կոչով դիմում է անում բոլոր լուսավոր ազգերի ակադեմիաներին, գրական ընկերություններին, մեծ թերթերին ու նշանավոր գրողներին, որ նրանք բարձրացնեն իրենց ձայնը հայ ժողովրդի պաշտպանության համար»:

«Արեգ», Բաքու, 1915, թիվ 15:

Ապրիլի 14 - «Հասկերի» 1915 թ. բաժանորդագրության բացվելու մասին հայտարարության մեջ մամուլը հատուկ ուշադրություն է հրավիրում հանդեսին Զովի. Թումանյանի և Աթ. Խնկոյանի մշտական աշխատակցության վրա:

«Արեգ», Բաքու, 1915, թիվ 18 (նույնը նաև հմ. հմ. 19, 21, 22-ում):

Ապրիլի 15 - Գյուտ քահանա Աղանյանի նամակը Թումանյանին Թիֆլիսից:

Հայտնում է, որ դժվարությամբ, բայց տպվել է ֆրանսերեն հեռագիրը: Ավարտվել է նաև խաղի տպագրությունը: Եվ հետո. «Ամսի 18-ին նշանակված է մեր տպարանի մի մասի աճուրդ, բարի կլինեք փող գտնել, որ մի քիչ էլա տալով՝ դադարեցնեն տորգը»:

ԳԱԹ ԹՖ, 841 (485):

Ապրիլի 17 - Տպագրվում է «Հեղինակի իրավունքի թյուր ըմբռնումը» վերնագրով առաջնորդողը: Անդրադառնալով «Մելիքի աղջկա» շուրջ ստեղծված հակասությանը՝ թերթը հիշեցնում է, որ Լեոյի նամակի ազդեցությամբ տպագրված «Իրավացի բողոք» առաջնորդողում խիստ դատապարտել է Բաքվի դերասանական ընկերության վարմունքը (տե՛ս մարտի 12): Բայց ծանոթանալով գործի մանրամասներին՝ թերթը խոստովանում է, որ արդարացի չի եղել Բաքվի դերասանական ընկերության նկատմամբ: «Խնդիրն այսպիսով հեղինակի իրավունքի մասին չէ, այլ եթե կուզեք, պ. Լեոյի

սխալմունքի մասին, որ առանց ստուգելու, թե օր. եղոյանը որքան հարազատորեն է տվել «Մելիքի աղջկա» վիպական դեմքերը, «հավատացել է պ. Արմենյանի ճաշակին» և Բաքվի դերասանական ընկերությանը ծախքերի տակ ձգել»:

«Հորիզոն», 1915, թիվ 82:

Ապրիլի 18 - Գյուտ Աղանյանի գրությունը Թումանյանին.

«Սիրելի Հովհաննես,

Երեկ 1 ժամին տվի հետևյալ հեռագիրները՝

1. Հռոմ, Tribuna-ի խմբագրության, վճարեցի 34 ռ. 8 կոպ:

2. Միլան, Coriera de la sera, վճարեցի 34 ռ. 56 կոպ.:

3. Սոֆիա, Mipro-ի խմբագրությանը, վճարեցի 19 ռ. 17 կոպ:

4. Բուխարեստ, Viktorue-ի խմբագրության, վճարեցի 17 ռ. 40

կոպ.:

104 ռ. 83 կոպ.:

Որոնց կվիտանցիաները պահվում են ինձ մոտ:

Երեկ ուզել էիք թղթի հաշիվը. այդ հաշիվը կազմելու համար մեզ անհրաժեշտ է իմանալ, թե ինչքան թուղթ եք մեզ ուղարկել, խնդրեն հասցնեք, որ (ցուցակը) հաշիվը պատրաստե տպագրիչը:

Ձեր Գյուտ, ք. Աղանյան»:

ԹԹ, 3554:

<Ապրիլի 19> - Նամակ Մոսկվա՝ Փիլիպոս Վարդազարյանին՝ Թիֆլիսից:

Գրում է, որ «ծանր դրություն ու տրամադրություն է տիրում» քաղաքում: Ինքն էլ «արտաքին ու ներքին հանգամանքների տխուր համերաշխության պատճառով» չի կարող ասել, թե շատ լավ է. «Բայց ես ժամանակին էլ ով է խոսում ներքին հանգամանքներից, երբ որ աչքներիս առաջին աշխարհքներ են շուռ գալիս: Երեկ էլ նոր հեռագիր ստացանք,* թե լայնածավալ կոտորածներ են սկսել Տաճկահայաստանում: Էն, ինչ որ ամենքս էլ սպասում էինք շարունակ ու ինչի մասին որ սարսափից չէինք խոսում: Այո՛, էսպես, թուրքը վերջին անգամ լողում է էս դժբախտ ժողովրդի արյան մեջ:

Ես համոզված եմ, որ սա վերջին ոճրագործությունը պետք է լինի էս համաշխարհային ճիվաղի, բայց թե մեզ համար էլ սոսկալի հարված կարող է լինել»:

իրենք աշխատում են միջոցներ գտնել արևմտահայությանը օգնելու համար՝ հաղորդագրություններ, ժողովներ, արտակարգ կարգադրություններ. «Սպասում են մի մասնաժողովի, որ գալու է մոտս խմբագրենք գրողների ընկերության կոչը (տե՛ս «Հորիզոն», 1915, թիվ 85) – հեռագրով դիմումը աշխարհի գրեթե բոլոր ազգերի գրական ընկերություններին, մեծ թերթերին ու նշանավոր գրող-ներին»:

Ուզում են իրեն ուղարկել Ռուսաստան՝ «շրջագայելու, խոսելու և նաև հանգանակության մասին հոգալու»: Բայց իր «անձնական մեղքերը»** թույլ չեն տալիս տանից հեռանալու:

Տեղեկացնում է, որ զբաղված է՝ հայրենագիտական և «ուրիշ տեսակի» խաղեր (տե՛ս մարտի 19) կազմելով. «Ասում են, զոնե դրանով էլ մեր մանուկներին մի բանով օգնած լինենք – հայանալու և մարդանալու»:

*) Նկատի ունի Ներսես եպիսկոպոսի ստորագրությամբ Պարսկաստանի Մակու քաղաքից ուղարկված հեռագիրը՝ Վանում, Բերկրիում, Աբադայի դաշտում և այլուր սկսված կոտորածների, ինչպես նաև Պոլսում կատարված ձերբակալությունների մասին (տե՛ս «Հորիզոն», 1915, թիվ 84):

**) Նկատի ունի իր առողջական վիճակը:

ԵԼԺ 10, 223-224, 598-599:

Ապրիլի 21 - Տպագրվում է («Հորիզոն», 1915, թիվ 85) «Հայ գրողների ընկերության կոչը».*

«Հայ հնագույն ժողովուրդը առաջին զոհերից մեկն է եղած թուրքական մեծ արշավանքի: Նրանց երևալու օրից մեր պատմությունն ու գրականությունը շաղախված են արյունով ու արտասուքով, խանգարվել է մեր ազգային ստեղծագործությունը, և մեր անունն էլ լսվում է միայն անլուր կոտորածների ու սարսափների հետ: Մեր դրությունը ծանրացավ մանավանդ այն օրվանից, երբ մենք բողոքեցինք մեր ազգովին ոչնչացման դեմ և խոսեցինք մարդկային տարրական իրավունքների մասին: Եվ ահա այսօր էլ համաշխարհային իրարանցումի մեջ, շրջափակված ու մեն-մենակ իր դարավոր զոհի հետ, թուրք կառավարությունը վեր է կացել գերազանցելու իր մինչև օրս կատարած ոճիրները, կոտորածով մի անգամ ընդմիջտ վերջ դնելու հայ ժողովրդի բողոքին ու դատին: Սկսել է կոտորած էրզրումից մինչև Կիլիկիա, Սև ծովից մինչև Միջագետք:

Հայոց գրողների ընկերությունը, այս ահավոր ճգնաժամին, դիմում է ազգերի խղճմտանքին ի դեմս նրանց լուսավոր հաստա-

տությունների և լավագույն զավակների, խնդրում է բարձրացնելու իրենց ազդու ծայնը այս անօրինակ ոճրի հանդեպ հանուն մարդասիրության, քրիստոնեության և կուլտուրայի:

Կովկասի Հայոց գրողների ընկերություն»:

*) Կոչը գրված է Թումանյանի ձեռքով (տես ԳԱԹ ԹՖ, 212): Ուղղված է Ամերիկայի, Իտալիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և այլ պետությունների մշակութային հաստատություններին ու գործիչներին:

ԵԼԺ 7, 166, 617:

Ապրիլի 22 - Տպագրվում է հոդված՝ «Հայոց գրականության դատը և «Հորիզոնը»» վերնագրով, Ս. Հ. ստորագրությամբ:*

Քննադատում է «Հորիզոնի» երկդիմի պահվածքը Լեոյի «Մելիքի աղջիկը» վեպի շուրջ ծագած բանավեճի ժամանակ. մի խմբագրականով պաշտպանում է հեղինակին՝ մյուսով՝ քննադատում: Այս առիթով մասնավորապես գրում է. «Ի՞նչ անմիտ, դատապարտելի բան է կատարում մեր ժողովրդական թերթը: Երեկ նա պաշտպանում էր մեր առաջնակարգ բանաստեղծ Հովհ. Թումանյանին թշնամիների դավերից: Եվ լավ էր անում: Բայց այսօր նա ծաղրական չափերտների մեջ է առնում մյուս առաջնակարգ գրողի ծերության օրերը: Ինչ կեղծավորություն է սա: Մի՞թե այսպիսի տարբեր չափերով և տարբեր տրամադրություններով կկարողանանք հարգել տալ մի գրականություն, որ մեր կյանքում խոշոր դեր ունի կատարելու»:

*) Հավանաբար Սիմոն Հակոբյանն է:

«Արեգ», Բաքու, 1915, թիվ 25:

Ապրիլի 26 - Հայտարարություն մամուլում, որ Գուտտենբերգ գրախանութում վաճառվում են մշանավոր հայերի դիմանկարներ, որոնք կարող են «ամեն մի հայ տան զարդը համարվել»:

Դրանց շարքում հիշվում է նաև Թումանյանի անունը:

«Խաթաբալա», 1915, թիվ 18, էջ 10:

Ապրիլի 27 - Իր լուսանկարն է նվիրում «ազնիվ բարեկամներին՝ Ե. և Տ. Գյուլգալյաններին»:

*) Երանյակ և Տիգրան Գյուլգալյաններ: Բանաստեղծի մտերիմներից:

ՈՒՀ 4, 254:

Ապրիլի 30 - Տպագրվում է հաղորդում Լեո-Արմենյան վեճի վերաբերյալ «Հորիզոնի» և «Արեգի» արձագանքների մասին:

Մասնավորապես, ««Արեգը» առանձին նշանակություն չի տալիս Լեոյի պայմանի խախտելուն, իսկ «Մելիքի աղջիկը» պիեսայի թույլտվությունը, առանց նախօրոք ծանոթ լինելու պիեսայի հարազատության ու գեղարվեստական արժանիքներին, վերագրում է նրա թուլության: Սակայն եթե հաշվի չառնենք «Հորիզոնի» նախկին առաջնորդողն (տե՛ս մարտի 12) և ի նկատի ունենալով միայն երկրորդը (տե՛ս ապրիլի 17), պետք է ասենք, որ նա ավելի օբյեկտիվ կերպով է վերաբերվում խնդրին. և իզուր «Արեգը» նրա վերաբերմունքը կեղծավորություն է համարում (տե՛ս ապրիլի 22), երբ նա մի դեպքում պաշտպանում է Հովի. Թումանյանցին, մի ուրիշ դեպքում դատապարտում է Լեոյի վարմունքը: Յուրաքանչյուր երևույթ պետք է ունենա իր արժանի գնահատումը՝ անկախ գրողի անձնավորությունից ու նրա գործունեությունից»:

«Փայլակ», Շուշի, 1915, թիվ 15:

<Ապրիլ> - Գրություն-երկտող Գարեգին Լևոնյանին.

«Հարգելի պ. Լևոնյան

Ուղարկում եմ Գրիմի ռուսերենները՝ «Красная шапочка»-ն և «Замарашка»-ն, կլիշեները շինելու, բոլորը: «Замарашка»-ն պետք է թողնել «Մոխրոտը», ինչպես սկզբում եղել է: «Կարմրիկի» մեջ էլ մի երկու տող պիտի ավելացնեն:

Հարգանքներով՝

Հովի. Թումանյան»:

*) Խոսքը հեքիաթների երրորդ պրակի տպագրության մասին է: Գրությունն ուղղված է Գ. Լևոնյանին՝ որպես ՀԳԿԸ վարչության անդամ քարտուղարի:

ԵԼԺ 10, 224:

Ապրիլ - Գրում է «Վերջին օրը» («Եփրատի ափին դեմուղեն եկած...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 272-274, 630:

Մայիսի 2 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 94) «Վերջին օրը» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 272-274, 630:

Մայիսի 5 - «Արեգ» շաբաթաթերթում վերատպվում է «Վերջին օրը» բանաստեղծությունը:

Ընդարձակ ծանոթագրության մեջ ասվում է. «Գրված է Դիլմանի հայտնի ճակատամարտից հետո, երբ թուրքական զորաբանակի հրամանատար Խալիլ-բեյը իր սպայակույտի հետ հազիվ կարողացել է գերի ընկնելուց ազատվել՝ պատերազմի դաշտում թողնելով մեծ քանակությամբ սպանվածներ, գերիներ, ռազմամթերք»։ Այնուհետև վերաշարադրվում է բանաստեղծության բովանդակությունը։ Եվ վերջում. «Սկսած պատերազմի առաջին օրերից բանաստեղծին ստեղծագործական սխրանքների էր մղում նրա լավատեսությունը, որով նա իր ժողովրդին կոչ էր անում հավատալ, համոզվել, որ իսկապես մոտ է օրը ազատության, իսկ Դիլմանի հաղթանակը նրան հավատացրեց, որ եկել է *վերջին օրը*»։

«Արեգ», Բաքու, 1915, թիվ 35:

Սայխի 6 - «Լույս» ընկերության պաշտոնական գրությունը Թումանյանին:

Հայտնում են, որ եթե մինչև հուլիսի 1-ը դրամարկդին չմուծի անցյալ տարվանից մնացած պարտքը, կգրկվի փայատիրությունից: ԳԱԹ ԹՖ, 1362 (53 լր.):

Սայխի 8 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Անդամ քարտուղար՝ Գյուտ ա. ք. Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Մինաս Բերբերյան, Արշակ Ղազարյան, Դեր. Դեմիրճյան, Նիկ. Աղբալյան:

Նախագահողը զեկուցում է ժողովին, որ վարչության կողմից հեռագրեր են ուղարկվել չեզոք պետություններին՝ հայցելով նրանց պաշտպանությունը հալածանքների ու կոտորածի ենթարկվող արևմտահայությանը:

Ժողովն ի գիտություն է ընդունում նախագահի հաղորդումը:

Տեղեկացնում է՝ քանի որ Լեոն հրաժարվել է վարչության անդամությունից (տե՛ս մարտի 20), պաշտոնապես նրան հարցում է արվել հրաժարման դրդապատճառների մասին, բայց պատասխան չի ստացվել:

Որոշվում է միառժամանակ սպասել պ. Լեոյի պատասխանին և եթե դարձյալ չստացվի, ընդունել հրաժարականը:

Թումանյանը ներկայացնում է ժողովին «Արեգ» թերթի մի համար, ուր Լեոն հոդված ունի վարչության դեմ (տե՛ս ապրիլի 9):

Կարդացվում է հոդվածը և կետ առ կետ քննարկվում: Հարց է առաջանում՝ պատասխանել, թե՞ ոչ:

Ժողովը անտեղի է համարում ժողովրդի համար ստեղծված ծանր իրավիճակում բանակռիվ մղել և դրանով զբաղեցնել հրապարակը, որի ամբողջ ուշադրությունը բեռնված է ռազմաճակատում տեղի ունեցող իրադարձությունների: Ուստի որոշվում է առայժմ չպատասխանել վարչության դեմ ուղղված որևէ քննադատության:

Արձանագրությունն ստորագրել են՝ Հ. Թումանյան, Դ. Դեմիրճյան:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 44/6:

Մայիսի 9 - Մարգար Ավետիսյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Օլթիից:

Մեծ հարգանքով գրում է Բեկյուլայան քահանայի մասին, որ ռազմաճակատ էր գործուղվել՝ մխիթարելու հայ զինվորներին.* «Դուք չեք կարող երևակայել, թե մեր շրջանում և մեր պայմաններում որքան անհրաժեշտ է նման մխիթարությունը: <...> Այսպիսի ժամանակներումն է, որ դու, հանկարծ կարծես կոշմարից արթնացած, իրականության գիրկն ես ընկնում, երբ մտնում ես մի հին մատուռ կամ կիսավեր եկեղեցի, առաջդ կանգնած է մի հայ քահանա և գյուղական տիրացու ու կողքին էլ պլպլացող մոմը, բուրվառից բարձրացող ծուխը ու հնածանոթ Տիրամոր պատկերը <...>, «հոգևոր մխիթարություն» միայն զինվորականը կզգա»:

Բեկյուլայանի ժամանումը իրեն «հոգևոր մխիթարություն» բերելուց բացի, արթնացրել է «հին, վաղեմի հիշողություններ, թանկ հիշողություններ»:

Նորից խնդրում է, որ բանաստեղծը խոսի Բյուրոյի հետ և դնի իր թեկնածությունը՝ հայկական դրուժինաներ տեղափոխելու համար (տես նաև ապրիլի 9):

*)Բանակում «անկեղծ, ազնիվ ու հասկացող» քահանաների անհրաժեշտության մասին Մ. Ավետիսյանը Թումանյանին գրել էր իր ապրիլի 9-ի նամակում:

ԳԱԹ ԹՖ, 964 (257լր.):

Մայիսի 10 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 101) «Վան ու Երևան» հոդվածը:

Հիշում է մոտ մեկ դար առաջ Երևանի բերդի գրավումը ռուսական բանակի կողմից, հայ կամավորների մասնակցությունը այդ կռիվներին, պատմական այդ իրադարձության նշանակությունը

արևելահայության հետագա ճակատագրի համար: Ձուգահեռ է անցկացնում այդ դեպքերի ու Վանի գրավման միջև: Ինչպես այն ժամանակ, հիմա էլ հայ կամավորները ռուսական բանակի հետ են: Հայության կողմնորոշումը դեպի Ռուսաստան այդ հարյուր տարվա ընթացքում չի փոխվել, քանի որ չեն փոխվել նաև պատմական համագամանքները, միայն այս անգամ հայ կամավորները ավելի կազմակերպված են հանդես գալիս: Վանի գրավումը նույն նշանակությունը պիտի ունենա ամբողջ հայության կյանքում, ինչ նշանակություն ունեցավ Երևանի բերդի գրավումը արևելահայության համար: Համոզված է. «Ինչ որ հաջող ու բախտավոր սկսեց Երևանի պատերազմը՝ պետք է լրացնի, վերջացնի ու պսակի Վանի պատերազմը. Վան և Երևան՝ կնշանակի հայություն, մի հայություն, որ դարեր առաջ, իր բարձր կուլտուրայով ու իր ճոխ գրականությունով ընկավ իր աշխարհի փլատակների տակ և միայն այժմ է դուրս գալիս՝ երկար դարերից հետո, անթիվ կյանքերի ու նրանց ջանքերի շնորհիվ»: Փառք է տալիս «ռուսաց մեծ ազգին ու իր հաղթական բանակին», «մեր քաջարի կամավորներին» ու շարունակում. «Սրանով միանգամ ընդմիշտ ջնջվում է *կյանքի, գույքի ու պատվի* անպատվաբեր ու թշվառ խնդիրը: Առասպել են դառնում անվերջ կոտորածներն ու սարսափները, կանգ են առնում գաղթականների ու պանդուխտների ողորմելի շարանները ու նրանց օգտին հանգանակությունները: Քանդված ու քայքայված հայ ժողովուրդը նորից դառնում է մի ժողովուրդ, որ, իր ամոթն իր երեսին, սպասում է իր կյանքով և իր ամբողջ ուժն ու եռանդը գործ է դնում իր կուլտուրական, բարոյական, տնտեսական վերաշինության ու զարգացման վրա»:

Նոր կյանքի հետ «գալիս է և նոր գրականություն, որ հոգևոր գերությունից է ազատագրելու հայ հոգին, մաքրելու է նրան շատ ստացական արատներից, հանդես է բերելու մի ինքնուրույն, նոր ու հզոր հոգի և մեծ աշխարհից, մեծ կյանքից ու նրանց գեղեցկություններից է խոսելու հայի հետ: Կզան և նոր գրողներ, որոնց սրտերը կոտրած չեն լինիլ, որոնք կտեսնեն իրենց թիկունքին կանգնած մի ազատ, առողջ ու ամբողջ ժողովուրդ և նրա մաքուր ու կենդանի շնչով զորացած, բարձր ու զվարթ կիսոսեն աշխարհի առջև, ազգերի առջև և էլ մաղծ չի լինիլ նրանց խոսքերում, էլ թշնամություն չի լինիլ նրանց երգերում»:

ԵԼԺ 7, 167-169:

Մայիսի 10 - Տպագրվում է հաղորդագրություն՝ «Հայ կամավորների օգտին – Թիֆլիսը ամսավճարով»:

Հանգանակությանը մասնակցածների շարքում առաջինը հիշվում է Թումանյանի անունը՝ 25 ռուբլի:

«Հորիզոն», 1915, թիվ 101:

Մայիսի 10 - Ծանուցում, որ շուտով լույս կտեսնի Գրիմ եղբայրների հեքիաթների երրորդ տետրակը՝ Հովի. Թումանյանի թարգմանությամբ:

«Հորիզոն», 1915, թիվ 101:

Մայիսի 12 - Հաղորդագրություն, որ Կովկասի հայոց հրատարակչական ընկերության հրատարակությամբ շուտով լույս կտեսնի Գրիմ եղբայրների հեքիաթների երրորդ տետրակը՝ Հովի. Թումանյանի թարգմանությամբ:

Նաև. «Հրատարակվելու են պատանեկան ընթերցանության համար Ավ. Ահարոնյանի մանր պատմվածքները և Հովի. Թումանյանի թարգմանական հեքիաթների ժողովածուն»:

«Մշակ», 1915, թիվ 99:

Մայիսի 12 - Մամուլում տեղեկատվություն, որ Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը իր վերջին հերթական նիստում որոշել է հրատարակել Ավ. Ահարոնյանի մի քանի մանր պատմվածքները, ինչպես նաև Հովի. Թումանյանի օտար հեքիաթների ժողովածուն: Երկուսն էլ մանկական և պատանեկան ընթերցանության համար:

«Հորիզոն», 1915, թիվ 102:

Մայիսի 12 - Կարեն Միքայելյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից:

Գրում է. «Ռուս հասարակությանը մեր՝ հայերիս հոգևոր հարևանության և ստեղծագործական մտքի հետ ծանոթացնելու նպատակով այստեղ մտադիր ենք հրատարակել մի կամ երկու խոշոր հատոր, ուր տեղ պիտի գտնեն մեր գրականության փայլուն ներկայացուցիչները»:

Գրքերի վաճառքից գոյացած հասույթը տրամադրվելու է պատերազմի զոհերի ընտանիքներին:

Թարգմանությունները և խմբագրումը վստահված են ռուսական ամենալավ գրական ուժերին (Վենելովսկի, Ծատուրյան, աջակցողներ՝ Վահան Տերյան, Պ. Մակինցյան): Տպագրությունը լինելու է շքեղ:

Տեղեկացնում է թումանյանին. «Բացի մի շարք բանաստեղծություններից ու լեգենդներից, Ձեր գրվածքներից մտադիր ենք թարգմանել «Սասունցի Դավիթը», «Գիքորը»: Սրանցից առաջինը՝ Դավիթը, որոշել ենք տալ թարգմանելու Բալմոնտին կամ Բոյուտովին»:

Խնդրում է բանաստեղծի թույլտվությունը՝ գրվածքներից ազատ ընտրություն կատարելու: Ուրախությամբ պատրաստ են լսելու նրա յուրաքանչյուր ցուցմունք ու ցանկություն:

*) Խոսքը «Поэзия Армении» № «Сборник армянской литературы» ժողովածուների մասին է:

ԳԱԹ ԹՖ, 1764 (911):

Սայիսի 13 - Մուշեղ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ ընտանիքին էջմիածնից:

Ըստ գաղթականներից լսած պատմությունների՝ տեղեկություններ է հաղորդում ռազմաճակատում տիրող իրավիճակի, հայերի դրության մասին. «Սրանք պատմում են, որ ռուս զենքերալ Աբացիկը* հայերի հետ շատ վատ է վարվել, թույլ չի տալի մտնել Մանազկերտ քաղաքը, մի խոսքով, էնտեղ, ուր զորքն է մատած, հայերի ծառայությունները արհամարհվում են: Հայերի տները խուզարկվում են և հայերին զինաթափ անում, հայերի եղածը տանում են: Մի խոսքով, քաջարի զորքը իր մեծ գործի վրա է, հայերին ոչ մի միջոց և հնար չեն տալի մի կողմ շարժվելու, այնինչ քրդերը ազատ, զենքերը ձեռքին թափառում են սար ու ձոր, իսկ չերքեզները և օսեթները, որոնք նախկին պատերազմների միջոցին գաղթել են էս կողմերը և հիմա էլ նրանց կամավորական զնդերը կռվում են ռուս զինվորների դեմ, այժմ հայտնում են իրենց հավատարմությունը զեն. Աբացիկին և բոլորը զինված թափառում են աջ ու ձախ...»:

*) Աբացիկը (Աբացև) ռուսական բանակի հայախոյաց զենքերալ էր, ծագումով մահմեդական (տե՛ս նաև Հովհ. Թումանյան, Պատերազմի տարիների գրառումներ, ԵԼԺ 8, 350-351):

ԻՍ, 67-69:

Սայիսի 15 - Մամուլում հաղորդագրություն Կովկասի հայոց

հրատարակչական ընկերության հրատարակելիք գրքերի մասին: Հիշվում են նաև Գրիմ եղբայրների հեքիաթները՝ Հովհ. Թումանյանի թարգմանությամբ:

«Бакы», 1915, թիվ 105:

Մայիսի 16 - Ռուսերեն թարգմանությամբ տպագրվում է մի հատված Թումանյանի «Վան ու Երևան» հոդվածից (տե՛ս մայիսի 10):

«Кавказское слово», 1915, թիվ 109:

Մայիսի 18, Վան - «Մի խումբ ընկերներ» Ավետարանական ժողովարանում, ի պատիվ հայ կամավորների, կազմակերպում են գրական-երաժշտական երեկույթ:

«Արտասանություններ» բաժնում ընթերցվում է Թումանյանի «Վերջին օրը» բանաստեղծությունը:

«Հորիզոն», 1915, թիվ 138:

Մայիսի 20 - Մամուլը հաղորդում է.

«Ստացանք Կ. Հ. Հրատարակչական ընկերության հրատարակած Գրիմ եղբայրների «Հեքիաթները» (III պրակ), թարգմ. Հովհ. Թումանյանի»:

«Մշակ», 1915, թիվ 115:

Մայիսի 23 - Տիգրան Հովհաննիսյանի բացիկը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից:

Տեղեկացնում է, որ ամսի 28-ին նշանակված է Հայ գրասերների ընկերության առաջին ընդհանուր ժողովը:

Հայտնում է, որ Գրողների ընկերության գրասենյակի հասցեով կուղարկի պաշտոնական նամակ և կանոնադրության մի օրինակ:

ԳԱԹ ԹՖ, 1523 (789):

Մայիսի 24 - Տպագրվում է գրախոսական հոդված Թումանյանի և զավակների կազմած «Հայոց գետերը» խաղերի մասին՝ Հ. Էլիբեկյան ստորագրությամբ.

««Մամուլ» ընկերությունը կարճ ժամանակվա ընթացքում լույս է ընծայել մի քանի մանկական խաղեր, որոնցից ըստ կարգի առաջինն է «Հայոց գետերը» (տե՛ս մարտի 19): Ընդունելով, որ խաղը երեխայի կազմակերպման առաջին շրջանում էական դեր է կա-

տարում և այն ամենը, ինչ որ խաղով է տրվում, հեշտ էլ յուրացվում է, «Մանուկ» ընկերությունը նպատակ է դրել կրթական խաղերի, քարտեզների և բացատրական գրքույկների միջոցով ծանոթացնել երեխաներին մեր հայրենիքի լեռների, կենդանիների, բույսերի և բնական հարստությունների հետ: Նա որոշել է տալ նաև այնպիսի խաղեր, որ երեխաները տառեր, բառեր և նույնիսկ ոճեր սովորեն:

Առաջին գործը իր բովանդակությամբ, շքեղությամբ և ճոխությամբ ցույց է տալիս, որ նրա մյուս ձեռնարկություններն էլ լինելու են հետաքրքիր և չափազանց շահեկան:

Մեր երեխաները չունեն զբաղվելու հետաքրքրություն, հետաքրքիր նյութեր. Գ., Դ. պատրաստականի աշակերտն անգամ չի կարողանում պոկվել փողոցից և զբաղվել որևէ օգտակար բանով. դրա պատճառներն, իհարկե, բազմաթիվ են: Եվ այսօր, երբ հրապարակի վրա երևան են գալիս այնպիսի խելացի խաղեր, ինչպես «Հայոց գետերն» է, պիտի աշխատել, որ նման խաղերը մուտք գործեն հայ ընտանիքները:

«Հայոց գետերը» հետաքրքիր կլինեն մանավանդ մեր ծխական դպրոցների Գ. պատրաստականի աշակերտների համար, որոնք, անցնելով հայրենագիտություն, ձեռքի տակ չունին ոչ հայերեն քարտեզ և ոչ էլ որևէ հայրենագիտական գրքույկ:

Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում գետերի քարտեզը, որը տպված է մի գույնով, բայց շատ խնամքով: Միայն ցավալի է, որ լեռները բացակայում են. առանց լեռների անկարելի է հասկանալ գետերի ուղղությունը և կամ ամբողջացնել որևէ ավազան, մանավանդ այդ կարելի է ասել Հայաստանի գետերի նկատմամբ: Եթե թանկության պատճառով այդ անհնար էր, գոնե կարելի էր տալ գլխավոր շղթաները: Երկրորդական անանուն վտակները ավելորդ է նկարել. առանց նրանց քարտեզն էլ ավելի պարզ և ոլորներմբռնելի կլինե՞ր երեխաների համար:

Ողջունում ենք «Մանուկ» ընկերության հրապարակ գալը և ցանկանում նրան կատարյալ հաջողություն:

«Հորիզոն», 1915, թիվ 111:

Մայիսի 24 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 113) «Դեպի մեծ կյանքը» հոդվածը՝ «Հայ օպտիմիստի խորհրդածությունները մեծ պատերազմի ու հայկական խնդրի առիթով» ենթավերնագրով:

Մեկնելով հայտնի վարկածից, թե «բնությունը կենդանի է ստեղծել – մարդը հասարակության արդյունք է»՝ մտովի հետևում է մարդկության անցած ճանապարհին: Հիմնական միտքն այն է, թե մարդկությունը անընդհատ առաջադիմում է. «... Մարդը այսօր ոչ թե մարդակեր չի, այլև մարդասպանությունն էլ նրա կյանքում արդեն համարվում է մի դժբախտ դեպք, որի վերացման համար նա մեծ մտահոգություն ունի՝ բարոյական պատվերներով, պետական օրենքներով, գեղարվեստական և ուրիշ հազար ու մի արտահայտություններով»: Առաջադիմության ճանապարհին կարևոր քայլ է համարում մարդու մեջ ակտիվիզմի՝ այլասիրության գաղափարի զարգացումը, ինչպես նաև «կենդանասիրության խոր ու վսեմ զգացմունքը, որ տանում է դեպի տիեզերական մեծ կյանքը»: Ճիշտ է՝ «մենք շատ ենք հեռու էն լավ մարդուց ու լավ կյանքից, որ երազում են լավագույն երազողները, բայց ակներև հառաջադիմությունը դեպի նրանց է տանում»:

Առաջադիմությունը «մի աստվածային աշխատանք է, որ կատարում են բարձր անհատներն ու ազգերը՝ լավ մարդն ու լավ կյանքը ստեղծելու համար»: Բայց առաջադիմության քայլեր կատարելու համար ազգերը պետք է ունենան համապատասխան պայմաններ. «Մի ժողովուրդ, որ կլանված լինի իր գլխապահության հասարակ խնդրով, ինչպես մեր ժողովուրդն է եղել կլանված ասիական բռնակալությունների տակ «կյանքի, գույքի ու պատվի» մշտական բռնաբարումի խնդիրներով, էլ նա ի՞նչպես կարող է մասնակից լինել մարդկության ընդհանուր հառաջադիմության գործին»: Այդպիսի պայմաններում «մեր լավագույն մարդիկն էլ չեն կարողացել դուրս գան մեր իրականության անձուկ ու արյունոտ շրջանակից, հեռու նայեն ու մասնակից լինեն համաշխարհային մեծ խնդիրների մշակման՝ գրական լինի, գիտական, թե հասարակական»:

Հույսեր է կապում պատերազմի հետ, որ աշխարհում շատ բան պիտի փոխի. «Մեծ պետությունները իրենց սրերը մերկացրել են նաև հանում ճնշված ազգերի ազատության: Սրանով նրանք գալիս են վերացնելու էն անվերջ ու արդար խռովությունը, որ հարուցանում են հալածված ազգերը իրենց վիճակի հանգամանքով և էդպիսով էլ խռովարարների փոխարեն նրանք՝ մեծ պետությունները, ստեղծում են իրենց համար բարեկամներ ու դաշնակիցներ խաղաղ հառաջադիմության ասպարեզում»:

Այդ փոքր ժողովուրդներից են նաև հայերը, որոնց համար պատերազմը համաշխարհային առաջադիմությանը մասնակցելու լայն հնարավորություններ է բացում. «Տաճկական բռնակալության անկումով և հայկական հարցի բարեհաջող լուծումով մեր առջև էլ նոր հորիզոններ են բացվում: Հնարավորություն ենք ստանում ապրելու շատ ավելի գեղեցիկ ու խոր զգացմունքներով, զբաղվելու մեծ խնդիրներով, մտնելու հառաջադեմ ազգերի եղբայրության մեջ ու նրանց հետ միասին երազելու, նրանց հետ միասին մասնակից լինելու համաշխարհային մեծ խնդիրների մշակույթի ազնիվ գործին ու նրանց հետ միասին գնալու դեպի մեծ կյանքը:

Եվ մեր բախտավորությունն էն է, որ մենք միանգամայն ընդունակ ենք դրան, ու էստեղ է, որ կարող ենք ասել՝ փոքր ժողովուրդ չենք մենք...

Եվ սրանով է թանկ մեր հարցը, սրանով է իմաստալի մեր կռիվը, սրա մեջն է մեր իրավունքի ամբողջ վսեմությունը»:

ԵԼԺ 7, 170-172:

Սայիսի 27 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Վարչության անդամներից ներկա են՝ Նիկ. Աղբալյան, Մինաս Բերբերյան, Դ. Դեմիրճյան, անդամ քարտուղար Գյուլտ ա. ք. Աղանյան:

Նախագահողը տեղեկացնում է՝

ա. Ամերիկա ուղարկված 19 հասցեներով հեռագիրը բռնվել է: Որոշվում է հանձնարարել նախագահին միջամտել, որպեսզի հեռագրի համար վճարված գումարը վերադարձվի:

բ. Ստացվել են Հովհ. Կոստանյանի և Գար. Ենգիբարյանի անդամավճարները: Որոշվում է դրանք հանձնել գանձապահին:

գ. Արմենյանից նամակ է ստացվել. խնդրում է քննել իր վեճը Լեոյի հետ: Հանձնարարվում է նախագահին հայտնել նրան, որ արդեն որոշվել է այլևս չզբաղվել այդ գործով (տե՛ս մարտի 29) մինչև ներկա ճգնաժամի անցնելը:

դ. Բաքվում հիմնվում է Հայ գրասերների ընկերություն, և հրավեր է ստացվել մասնակցելու հիմնադիր ժողովին (տե՛ս մայիսի 23): Որոշվում է ուղարկել ողջույնի հեռագիր:

ե. Լեոն երկու ամիս շարունակ անպատասխան է թողել վարչության անդամությունից հրաժարվելու պատճառի մասին հար-

ցումը (տե՛ս մայիսի 8): Որոշվում է ընդունել նրա հրաժարականը:
Արձանագրությունն ստորագրել է Թումանյանը:
ԳԱԹ ՀԳԿԸՖ, 44/9:

<Մայիսի 28-29>, Թիֆլիս - Ողջույնի հեռագիր Բաքու՝ Տիգրան Հովհաննիսյանին՝ Հայ գրասերների ընկերության հիմնադիր ժողովի առթիվ:

«Ողջունելով Բաքվի հայ գրասերների ընկերության ծնունդը, Կովկասի հայ գրողների ընկերության վարչությունը խնդրում է Ձեզ՝ նրա ուրախալի զգացմունքների ու բարի ցանկությունների արտահայտիչը լինել: Կեցցե՛ Բաքվի հայ ինտելիգենցիայի գաղափարային նոր ձեռնարկությունը:

Հայ գրողների ընկերության նախագահ՝

Հովհ. Թումանյան»:

ԵԼԺ 10, 225:

Մայիսի 30 - Մամուլը տեղեկացնում է.

«Ստացանք Կ. Հ. Հրատարակչական Ընկ. հրատարակած Գրին եղբայրների «Հեթաթները» (III պրակ), թարգմ. Հովհ. Թումանյանի»:

«Մշակ», 1915, թիվ 115:

Մայիսի 30 - Մամուլում հաղորդագրություն՝ Բաքվի հայ գրասերների ընկերության հիմնադիր ժողովի մասին*:

Բերվում է Թումանյանի ողջույնի խոսքը (տե՛ս <մայիսի 28-29>):

*) Հիմնադիր անդամներն էին՝ Տ. Բահաթուր, Ս. Սադյան, Հ. Հովհաննիսյան, Տ. Հովհաննիսյան, Ե. Թադիանոսյան, Մ. Տեր-Անդրեասյան, Ա. Վաչյան:

«Արեգ», 1915, թիվ 56:

<Մայիս> - Տպագրում է («Արարատ», 1915, ապրիլ-մայիս միացյալ համար, էջ 50-53) «Վերջին օրը» («Եփրատի ափին՝ դեմուդեմ կանգնած...») բանաստեղծությունը (տե՛ս նաև մայիսի 2):

ԵԼԺ 1, 272-274:

<Հունիսի սկիզբ>, Թիֆլիս - Այցելում է հիվանդ Վաթա Փշավելային:

Նվարդ Թումանյանը հիշում է. «Կարծեն հունիսի սկզբներին

էր. մի երեկո հայրիկը տուն եկավ խաղաղ, լավ տրամադրությամբ. այցելության էր գնացել Վաթա Փշավելային, որ այդ ժամանակ հիվանդ պառկած էր Վերայի կողմերը, իր բնակարանում: Գոհ էր այցելությունից. դեպի Փշավելան լցված էր ինչ-որ հարազատի, մոտ մարդու զգացմունքով: Հավանել էր նրա պարզ ու հասարակ կենցաղավարությունը. «Սենյակն առանց արդ ու զարդի էր. իրեն թախտն էր, մի սեղան ու աթոռ, ինքն իր չուխով...»:

Փշավելայի եղբայրը՝ Ա. Ռազիկաշվիլին հիշում է, որ թունամյանը, իմանալով բանաստեղծի հիվանդության մասին, գալիս է իր ծառայության վայրը և ներկայանալով խնդրում նրա հասցեն. «Ես էլ, իհարկե, ասացի իմ ով լինելը: Նա ժպտաց և ասաց՝ ես Հովհաննես թունամյանն եմ, լսել եմ Վաթա Փշավելայի հիվանդության, ինչպես նաև այն մասին, որ նա ձեր բնակարանում է գտնվում: Ցանկանում եմ նրան տեսնել. ե՞րբ է կարելի: Ես նրան բացատրեցի իմ հասցեն և խնդրեցի, որ հետևյալ օրն այցելի: Երբ տուն վերադարձա, Վաթային ասացի այդ մասին: Նա շատ անհանգստացավ և ասաց թող գա, ա՛յ մարդ, տեսնեմ ինչպիսին է նա:

Հետևյալ օրը Հովհաննես թունամյանը իսկապես եկավ: Նրա գալուց առաջ Վաթան անկողնուց ելավ, հագնվեց, և երբ Հովհաննեսը ներս մտավ, նրանց ծանոթացրի միմյանց: Հովհաննեսը ներողություն խնդրեց, որ դժբախտաբար վրացերենին չի տիրապետում: Այդ պատճառով նրանք սկսեցին խոսել ռուսերեն: Միմյանց ողջունելուց հետո խոսք բացեցին այն ժամանակի պատերազմի, նրա հետևանքների մասին, նաև այն մասին, թե ինչ բերեց այս պատերազմը փոքր ազգերին: Այնուհետև Հովհաննես թունամյանը սկսեց խոսել հայ-վրացական այն ժամանակի փոխհարաբերությունների մասին, որովհետև այդ օրերին մամուլում մեծ վիճաբանություն էր բացվել տերիտորիաների վերաբերյալ: Այդ երկու երգիչների զրույցը շատ անկեղծ էր»:

ՆԹ ՀԶ, 124: ՈՒՀ 1, էջ 243-244:

<Հունիսի 3> - Կարապետ Հովհաննիսյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Արտավազդ թունամյանին՝ Երևանից:

Ուշացումով ստացել է Արտավազդի նամակը,* որտեղ հավանաբար խոսք է եղել «խաղերի (տե՛ս մարտի 19) տարածման մասին: Նամակագիրը հայտնում է իր պատրաստակամությունը. «Գրածո՞

խաղերից կարող ես ուղարկել, ես կաշխատեմ տարածել Երևանում և Էջմիածնում և ուրիշ վայրերում»:

*) Այդ նամակն անհայտ է:

ԹՁ ԱՐՏ, Գիրք Ա, 2013, էջ 140:

Հունիսի 6 - Վան մեկնելուց առաջ, վճարելով 30 ռ., անդամագրվում է «Փոխադարձ վարկային ընկերությանը» («Общество взаимного кредита»):

ԼԿ, 140:

Հունիսի 6 - Ազգային բյուրոյի հանձնարարությամբ երկրորդ անգամ մեկնում է Վան:^{*}

*) Մեկնողների խմբում էին նաև Ներսիսյան դպրոցի վերատեսուչ, Ազգային բյուրոյի անդամ Զ. Խունունցը և փիլիսոփայության դոկտոր Երվանդ Ֆրանգյանը: Հետո խմբին միանում է նաև Ռոստոմը (Ստեփան Ջորյան):

ԵԼԺ 8, 635:

Հունիսի 7 - Արամ Բեգզադյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից:

Խնդրում է բանաստեղծի օգնությունը՝ տեղավորվելու որևէ հարմար աշխատանքի:

ԳԱԹ ԹՖ, 1047 (273 լր.):

Հունիսի 7 - Հասնում է Իգդիր:

ԵԼԺ 8, 391: ԼԿ, 140:

Հունիսի 8, Իգդիր - Հանդիպում է ռուս գորավար Օգանովսկուն:^{*}

*) Ծագումով հայ, որ համակրանք ուներ դեպի հայերը և հայ կամավորականները: Բայց այդ հանդիպման ժամանակ դժգոհություն է հայտնում կամավորներից. «Փանփուշտ շատ են փչացնում»:

ԵԼԺ 8, 400: ԼԿ, 141:

Հունիսի 8 - Տպագրում է («Խարիսխ», միօրյա թերթ, 1915, թիվ 1) «Կինն ու մահմեդական պետությունների անկումը» հոդվածը:

Համեմատում է կնոջ դերը քրիստոնյա և մահմեդական ազգերի կյանքում. «Հայը կամ վրացին, իրեն կրոնի ոգով ու դարավոր տրադիցիաներով, տղամարդուն ու կնոջը մի մարմին, մի բարոյական ամբողջություն ընդունելով, և կնոջը ճանաչելով իր գոյության

կեսը, դրել է նրան իր օջախի գլուխը, ուր և կենտրոնացրել է կյանքի վայելքներն ու երջանկությունը:

Մահմեդականն ընդհակառակը՝ կնոջն էլ նկատել է իբրև կյանքի վայելքներից մինը, փակել է հարեմում ու պահապաններ է դրել վրեն հսկելու: Եվ աշխատել է՝ ինչքան կարելի է շատ ձեռք բերի եղև վայելքից, քանի որ իր կրոնն ու սրբազան ադաթն է թելադրում, թե կարող ես չորս օրինավոր կին պահես, իսկ հարճ՝ ինչքան կամենաս կամ միջոցդ կների»:

Այս տարբերությունից առաջ են գալիս բազմաթիվ հետևանքներ, որոնք աղետալի են ոչ միայն քրիստոնյա հարևանների, այլև հենց իրենց՝ մահմեդական ազգերի համար: Հարեմներ պահելու համար մահմեդականը պետք է թալանի ու կողոպտի իր հարևաններին, հարեմները համալրելու համար պետք է առևանգի գեղեցիկ կանանց ու աղջիկների: Դա մեծ չարիք է հատկապես քրիստոնյա հարևանների համար: Հարեմական սովորույթը կործանարար կարող է լինել նաև մահմեդական պետությունների համար. «Ինքը՝ մահմեդական աշխարհքը, նրա ամեն մի ազգն ու պետությունը, եթե ուզում է ապրի, պետք է հրաժարվի ոչ թե հարեմից արտաքուստ, այլ հարեմական հայացքից ներքուստ: Անտանելի բան է և՛ հարեմ պահել, և՛ առողջ պետություն, անկարելի բան է և՛ հարեմ ունենալ, և՛ հառաջադիմել ու մտնել հառաջադեմ ազգերի շարքը: Մի հանգամանք, որ արդեն զգում է մահմեդական աշխարհքի առողջամիտ մասը և ձգտում է կանգնել նոր ճանապարհի: Եվ, անշուշտ, նրանից հետո նոր ճանապարհին հետզհետե հարթվելու, մոռացվելու են անցյալի բոլոր դառնություններն ու դժբախտ դեպքերը, և ստեղծվելու է իրար հետ, կողք կողքի եղբայրորեն ապրելու հնարավորություն»:

ԵԼԺ 7, 172-176:

Հունիսի 9, Իզդիիր - Վաղ առավոտյան նորից հանդիպում է գեներալ Օգանովսկու հետ:

ԼԿ, 143:

Հունիսի 10 - Ցուլակ Խանգադյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Սիրելի բանաստեղծ!

Պռոշյանը հանձնեց Ձեր որդու ուղարկած մանկական խաղալիքները:՝ Շնորհակալություն այդ ուշադրության համար: Հոգված կգրվի, բայց գրողը ես չեմ: Ձեզ համար մեկ է, չէ՞: Ներողամիտ կլի-

ներք, կարծում եմ: Գիտեք գուցե, որ այլևս չեմ գրում: Չկարծեք, թե կռիվ է պատահել, ո՛չ. հոգեկան այժմյա չկարծրացած ապրումներս լռություն են պահանջում, երկարատև և ժանրախոհ լռություն: Ե՞րբ ձեռն կհանեմ, Ալլահը գիտե: Էս խաղալիքները հավանեցի, բայց գրել չեմ ուզում, ավելի շուտ, *չի գրվում*: Ընդունեցեք ամենալավ ցանկություններս:

Ցուլակ խանգադյան:

*) Խոսքը վերաբերում է երեխաների համար թունամյանի և զավակների կազմած հայրենագիտական խաղերին:

ԳԱԹ ԹՖ, 1362 (53 լր.): ՑԽՅԺ (Ցուլակ խանգադյան, Հոդվածների ժողովածու, ՀԱՍՅ ԳԱ հրատարակչություն), 1963, էջ 253:

Հունիսի 10 - Վաղ առավոտյան խմբի հետ դուրս է գալիս Իգդիրից՝ ուղևորվելով Վան:

«Արև», Բաքու, 1915, թիվ 83:

Հունիսի 10 - Անցնելով Կիզիլ-Դիզա, Ղարաքյանը, Թոփարիզ, Սոուդսու բնակավայրերը՝ խումբը դուրս է գալիս Աբաղայի դաշտը, որտեղով կես օրվա ճանապարհ անցնելով՝ երեկոյան հասնում է Աբաղայի կենտրոնական գյուղը՝ Բայազեդ, որտեղ էլ գիշերում է:

«Արև», Բաքու, 1915, թիվ 83:

Հունիսի 10 - Խ. ստորագրությամբ տպագրվում է գրախոսական թունամյանի՝ «Մանուկ» ընկերության հրատարակությամբ լույս տեսած «Խաղերի» մասին:

Բարձր գնահատելով «Խաղերի»* ուսուցողական և դաստիարակչական նշանակությունը և ծանուցելով, որ հեղինակը դրանք հանձնարարում է դպրոցներին և ընտանիքներին՝ գրախոսը մասնավորապես գրում է. «Ճշմարիտ է, հրատարակության այս հինգ համարները (1.Հայոց գետերը, 2.Թանկագին քարեր, 3.Սրամիտ հովիվը, 4.Դիւմ, 5.Հայոց լճերը) չունեն ներքին ուժեղ կապ և ընդհանուր պատկեր, բայց և այնպես նրանցից յուրաքանչյուրն առանձնապես իր գաղափարը ըմբռնելի է դարձնում մանուկների համար»:

*) Տես մարտի 19, մարտի «երկրորդ տասնօրյակ»:

«Արև», Բաքու, 1915, թիվ 68:

Հունիսի 10 - Տպագրվում է հոդված «Գ. Բաշինջադյանի ցուցահանդեսում (տպավորություններ)» վերնագրով և Ս. Ջ.,* ստորագրությամբ:

Հոդվածագիրը Բաշինջաղյանի բնապատկերներից ստացած իր տպավորությունները հաճախ ներկայացնում է բանաստեղծների պատկերավոր խոսքերով՝ առանց անունները տալու: Մասնավորապես «Սանահինի կիրճը» կտավը ներկայացնում է Թումանյանի «Լոռեցի Սաքուն» պոեմից քաղված պատկերավոր արտահայտություններով. «Նայելով այս պատկերին, դուք փոխադրվում եք Լոռու ձորերը, ուր «հանդիպակաց ժայռերը խորունկ նոթերը կիտած նայում են իրար համառ ու հանդարտ հայացքով անթարթ», ուր գիծ գետերը շառաչում են անընդհատ և ձայնակցում անտառի խշշոցին...»:

*) Հավանաբար Ստեփան Ջորյանն է:

«Մշակ», 1915, թիվ 124:

Հունիսի 11, Բայազեդ աղա - Նամակ Թիֆլիս՝ ընտանիքին.

«Սիրելիք.

Նոր ենք վեր կացել, ամսի 11-ն է: Աբաղայի դաշտումն ենք, Բայազեդ աղա գյուղում, ավելի ճիշտ կողքին, որովհետև գյուղն ավերված է: Վաղը կհասնենք Վան: Իհարկե, շատ հետաքրքրական են թե՛ երկիրը, թե՛ ամեն բան, ինչ որ կատարվում է: Ոչ մի կենդանի գյուղ չկա - իրար կոտորում են ու կոտորել են քուրդ ու հայ:

Բուսական ճոխության մասին մի գաղափար տալու համար ուղարկում են Կովկասի թերթերից ծրարիս մեջ: Իսկ թե տեսնեք ինչ մեծության հիրիկներ ու հակինթներ կան, կգարմանաք, վայրենի, իհարկե:

Համբույրներ ամենքիդ

հայրիկից»:

ԵԼԺ 10, 225:

Հունիսի 12 - Հասնում է Վան:

Սողոմե Ջրբաշյանը հիշում է. «Թումանյանը Վան եկավ 1915 թ. ապրիլյան ապստամբությունից հետո, երբ Վանի մարտիկներին օգնության էին հասնում կովկասյան կամավորների խմբերը: Ահա կամավորների մի այդպիսի խմբի հետ քաղաք մտավ Թումանյանը: Ամբողջ քաղաքը համակված էր այդ երջանիկ հանդիպման բերկրանքով սիրելի բանաստեղծի հետ, որի գործերը շատ տարածված էին Վանի երիտասարդության մեջ, բայց որին տեսնելու բախտը առաջին անգամ էր վիճակվում: Երիտասարդական կազմակերպությունները խրճով ծաղիկներ սփռեցին նրա ճանապարհին: Չտեսնը-

ված բերկրալի ու խանդավառ հանդիպում էր դա: <...> Նա Վանում մոտիկից ծանոթացավ տեղի բնակչությանը, եղավ դպրոցներում (Կենտրոնական և Արամյան արական, Սանդխտյան իգական դպրոցներում): Նա հիանում էր այդ հերոսաբար մարտնչող ու լույսի ձգտող մի բուռ ժողովրդով, հուզվում էր, քաջալերում, գովում, զարմանում նրա առաջադիմական ձգտումների ու կատարած գործերի վրա»:

ԼԿ, 147: ԹԺՅ, 678-679:

Հունիսի 13, Վան - Մամուլը հաղորդում է.

«Երեկ Կովկասեն տեղս ժամանեցին պ. պ. Հովհ. Թումանյան՝ Կովկասահայ ծանոթ բանաստեղծ, Հ. Խունուկ՝ Ներսիսյան դպրանոցի վերատեսուչ և անդամ Ազգային բյուրոյի և Երվանդ Ֆրանգյան՝ դոկտոր փիլիսոփայության:

Այսօր տեղ հասավ նաև պ. Ռոստոմ»:

«Աշխատանք», 1915, թիվ 24:

Հունիսի 14, Վան - Գրում է «Շուռ է գալիս ծանր քարը...» բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 275:

Հունիսի 16, Վան - Գրում է «Աղթամարի կղզում» («Սըրտիս խորերեն...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 277-278:

Հունիսի 17, Վան - Հեռագիր Թիֆլիս՝ Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին.

«Ամբողջովին ազատված են կոտորածից Շատախը, Խիզանը, Սպարկերտը, Մոկսը, Մամրտանքը: Աննշան կորուստներ* են տվել Հայոց-ծորը և Թիմարը: Ամբողջովին կոտորված է Ալջևազի, Արճեշի, Բերկրիի, Աղբակի, Նորդուզի բնակչությունը: Վանը և շրջակայքը լիքն են փախստականներով: Ծայրահեղ կարիք կա ամեն բանի:

Ռոստոմ, Հովհ. Թումանյան»:

*) ԵԼԺ-ում, սխալ ընթերցմամբ՝ կոտորածներ:

«Հորիզոն», 1915, թիվ 138: ԵԼԺ 10, 226:

Հունիսի 18, Վան - Տեղի երիտասարդ մտավորականները կազմակերպում են հանդիպման երեկույթ Թումանյանի պատվին:

Սողոմե Ջրբաշյանը հիշում է. «Վանի երիտասարդ մտավո-

րականների հետ հանդիպումը տեղի ունեցավ իմ մոր՝ Սաֆրաստյանների մեծ ու գեղեցիկ այգում: Երեկոյի կազմակերպիչը ես էի: Հիշում եմ, թե ինչպես մի խումբ կանանց հետ ամբողջ օրը պատրաստություն տեսանք, խմորեղեններ, անուշեղեններ պատրաստեցինք, իսկ երիտասարդների խումբը այգին զարդարեց: Մեծ տպավորություն էին թողել մոգական լապտերները, որոնք զարդարում էին ծառերը և լուսավորում այգին: Հսկայական սեղաններ բացվեցին այգում, ամբողջ գիշեր շարունակվեց երգն ու երաժշտությունը: Թումանյանի հետ հանդիպման այդ գիշերը դարձավ կարծես ժողովրդական մեծ տոն:

Արաքսյա Սաֆրաստյանը՝ այն ժամանակ երիտասարդ մի ուսուցչուհի և Թումանյան բանաստեղծի երկրպագու, արտասանեց «Հայոց լեռներում» բանաստեղծությունը, որը Թումանյանի վրա շատ մեծ տպավորություն գործեց: Շատ լավ տպավորություն թողեց նաև Զարուհի Սաֆրաստյանի գեղեցիկ ու բարձր ձայնով երգած «Քելեր-ցուլերը»: Թումանյանը այդ երեկո շատ հուզված էր: Այդ երեկո լսածի ու տեսածի ազդեցության տակ նա գտավ ընդմիջման մի քանի թույլեր, առանձնացավ ու գրեց երեք տնից բաղկացած մի ոտանավոր* և կարդաց նույն երեկոյին: Հիշում եմ այդ ոտանավորի մի տունը, որը այսպես էր.

Հե՛յ, ջան տղերք, ուս տվեք, ո՛ւս,

Միահամուռ, միաբան,

Հե՛յ, ջան տղերք, ուժ տվեք, ո՛ւժ,

Քարը մոտ է գլորման»:**

*) Խոսքը «Շուռ է գալիս ծանր քարը...» բանաստեղծության մասին է, որ Թումանյանը գրել է Վանում 1915 թ. հունիսի 16-ին: Պետք է ենթադրել, որ բանաստեղծը «առանձնացել է» ոչ թե ոտանավորը գրելու, այլ չորս օր առաջ գրածը մորից աչքի անցկացնելու համար (ԵԼԺ 1, 631):

**) Երեկույթի կազմակերպիչներից է եղել է նաև գրող, մանկավարժ Արսեն Հացագործյանը, որ հիշում է. «Թումանյանին հանդիպեցի Վանում, 1915 թ. հունիսին, երբ ապրիլյան հերոսամարտից հետո Վանը, ազատ կյանքի մոր շունչ առած, լավագույն ապագայի երազներով էր ապրում:

Վանի երիտասարդներս այգիներից մեկում գիշերային խնջույք կազմակերպեցինք ի պատիվ Թումանյանի:

Վանի աստղազարդ, պայծառ գիշերներից մեկն էր: Ծովակից փչում էր մեղմ գեփյուղը: Այգու կանաչ ծառերից կախված բազմաթիվ լապտերները բնության այդ գեղեցկությանը ավելի կախարդիչ տեսք էին տալիս:

Գիտեինք, որ Թումանյանը հայտնի թամադա էր: Վերցրինք բաժակները և նրա կենացն առաջարկելով՝ խնդրեցինք ղեկավարել սեղանը: Թումանյանն իր մշտական քաղցր ժպիտով շնորհակալությամբ հայտնեց իրեն արված պատվի համար, բայց առարկեց, թե անծանոթ տեղում դժվար կլինի իր թամադայությունը: Նրան երկու օգնական տրվեց, և խնդիրը դրանով լուծվեց:

Խնջույքն անջնջելի տպավորություն թողեց մեզ վրա: Բավական էր, որ մեզ հետ էր «Ախթամարի», «Ամուշի», «Սասունցի Դավթի» հեղինակը: Իր բաժակաճառում Թումանյանը դրվատեց Վանի երիտասարդության ակտիվությունը, նրա սերը դեպի գրականությունը և մշեց Հայաստանի երկու հատվածների փոխադարձ կապի անհրաժեշտությունը» (ԹԺՀ, 584):

ԹԺՀ, 679: ԵԼԺ 1, 631:

Հունիսի 19 - Տեղի է ունենում Կովկասի հայոց բարեգործական ընկերության ընդհանուր ժողովը:

Թումանյանը վերընտրվում է Պողոսյան հրատարակչական ֆոնդի մասնաժողովի անդամ:

ԳԱԹ ԹՖ, 1436 (133 III g.):

<Մինչև հունիսի 20>, Վան - Հանդիպում է նկարիչ Փանոս Թերլեմեզյանին, հյուրընկալվում նրանց տանը:

Թերլեմեզյանը հիշում է. «1915-ին, Վանի ինքնապաշտպանությունից հետո, երբ ռուսական բանակը արդեն այնտեղ էր, մի օր տեսա Հովհաննեսին:

Երբ մեր տան քյոշը նստած, առատ սեղանի շուրջը կատակում էինք, այդ սրտաբուխ զվարճության թույններին անգամ Հովհաննեսն անկշտում կերպով դիտում էր Այգեստանի ընդարձակ այգիները, որոնց զանազան պտղատու ծառաստաններն ու թփերը տարբեր տարածություններով ու ֆանտաստիկ ձևերով իրար մեջ ագուցված էին: Սուրբ-խաչի կանաչ-կապտավուն և գույնզգույն ծաղկադաշտերով ծածկված լեռները, Արտամետի հոտավետ այգիների պարը ծովի ծփացող ալիքների հետ, նրան երազների էին մղում: Հավանաբար Հովհաննեսի երևակայությանը ներկայացավ այդ պահին XIV դարի պարսկական մի զարդ, չինական արվեստի ազդեցության տակ գործված, որի վրա վիշապներ, եղնիկներ, ծաղկած մշենիներ, կարկաչող աղբյուրներ, կանաչ ձիերի վրա նստած որսորդներ և ալ կարմիր ծաղիկներով մռնենիների տակ անհոգորեն ընկողմանած

սիրազեղ աղջիկներ իրար էին խառնվում... Նա սեղանակիցներին դառնալով ասաց. «Ա՛յ տղա, էս ո՞նց է, որ մինչև հիմա էս անճաման երկիրը չէինք տեսել»:

Հաջորդ օրը գնացինք ման գալու: Ի միջի այլոց, տեսանք Միերի դուռը, հիացանք այդ հնագույն դարերի պատմության կոթողի վրա: Հետո գնացինք, բարձրացանք Վանի ուրարտական անառիկ բերդը, որտեղից թուրքերը փախչելիս թողել էին մի մեծ թնդանոթ... Հովհաննեսը պատանու պես թնդանոթի վրա բարձրացավ և ապշած մնաց:

Շրջապատի այդ չնաշխարհիկ տեսարանը, ուր կարծես աստվածներ ու դրախտներ իրար էին խառնվել, քար լռության մատնեց նրան: Հարավից Արտոսն ու Եղերովի լեռնաշղթան էին տեսնվում, որոնք թեքված արևից խլելով մի խուրձ ճառագայթներ, իրենց կողերից ու գանգերից շամփրված հսկաների էին նման: Արևելքից Վարազա ջուխտակ լեռները, հակառակ մյուս բոլոր լեռների, որոնք արևմուտքից դեպի արևելք էին երկարում, ձգվում էին հարավից դեպի հյուսիս, մի գույգ մանիշակագույն քղամիդ հագած վիշապների նման: Հյուսիսից, ծերությունից սապատը դուրս ցցած, Ջըմփ-Ջըմփ մաղարեն իր ուրարտական բերդաքաղաքով ու ջրամբարով, հսկա գլուխն առաջ ծռած, Հանկույս ծորի անտառներն ու այգիներն էր հովանավորում:

Արևը սկսել էր թեքվել Նեմրութի ետև, և ծովն իր դեղնավուն ու արծաթյա ալիքներով փայլվում էր:

Ձմայլված Հովհաննեսին ու Խունունցին ուշքի բերի և, մի քանի ձևերով նրանց լուսանկարելուց հետո, բերդից վայր իջանք, ու մեր կառքը սլացավ դեպի Այգեստան:

Երկու օր հետո նրանք պատրաստվում էին մեկնել: Նույն օրը ես լուսանկարները տարա, հանձնեցի: Առաջարկեցին միասին գնալ Կովկաս: Չհամաձայնեցի: Հետո միայն զղջացի, որովհետև իմ 76 էտյուդներն ու նկարները դաժան գաղթի ժամանակ կորան»:

ԹԺՀ, 566-567:

Հունիսի 20, Վան - Վանի մամուլը ծանուցում է.

««Աշխատանքի» հաջորդ թվով պիտի տպենք կովկասահայ հայտնի բանաստեղծ Պրն. Հովհ. Թումանյանի երկու բանաստեղծությունները, որ գրեց հոս և կարդաց ամսույս 18-ին հայ դաշնակցական երիտասարդներու տված թեյասեղանի վրա:

Հաջորդ թվով նաև մի քանի հոդվածներ իր մասին»:
«Աշխատանք» շաբաթաթերթ, 1915, թիվ 26:

Հունիսի 20, Վան - «Աշխատանք» շաբաթաթերթը «Հայ կյանք» բաժնուն «Ի պատիվ կովկասահայերուն» խորագրով տպագրում է «մի քանի փոքրիկ նյութեր»:

Մասնավորապես տեղեկացվում է. «Անցյալ երկուշաբթի իրիկուն խումբ մը դաշնակցական երիտասարդներու և օրիորդներու կողմէ թեյասեղան մը տրվեցաւ ի պատիվ կովկասահայ հյուրերուն: Հրավիրված էին պ.պ. Ռոստոմ Ձորյան, Հովհ. Թումանյան, Հովսէփ Խունունց, Երվանդ Ֆրանգյան և Ռուբեն քահ. Բեկյուզյան, որոնք քանի մը օր առաջ Վան ժամանած էին: Երեկոյթին Պրն. Հովհ. Թումանյան ոգևորված ճառով մը գնահատեց վանեցիներու հերոսական պայքարը, հայ ժողովրդի մեծությունը, որ նա ունի այնպիսի անհատներ, որոնք գիտեն կռվի ժամանակ զենքը ձեռքին պայքարել թշնամու դէմ, իսկ լավ օրերուն դպրոցով, գրականությամբ մեծ ազդերու կողքին տեղ բռնել ու առաջադիմել: Հայտնեց նույնպես, որ Վանը եղած էր մեր հույսերու և ակնկալիքներու կենտրոն, եթէ Վանը իյնար, ժողովուրդը կոտորվեր, մենք պիտի կանգնեինք և ի դերս պիտի ելնեին մեր բոլոր ծրագրերն ու իղձերը: Ի վերջո կարդաց իր նոր գրած երկու բանաստեղծությունները,* որոնք խոստացաւ տալ «Աշխատանքին»: Վանի սկսնակ գրողներու և օրիորդներու կողմից ծաղիկներ նվիրվեցան Թումանյանին: Երեկոյթը վերջացաւ՝ լավ տպավորություն թողնելով մասնակիցներու վրա»:

*) Խոսքը «Շուռ է գալիս ծանր քարը...» և «Աղթամարի կղզուն» բանաստեղծությունների մասին է:

«Աշխատանք» շաբաթաթերթ, 1915, թիվ 36:

Հունիսի 20 - Մեկնում է Վանից:*

*) Ըստ ԵԼԺ 10-ի ծանոթագրության (էջ 601)՝ Թումանյանը Վանից մեկնել է հունիսի 24-ին կամ 25-ին: Ստույգը Վանի մամուլի ծանուցումն է. «Վանեն մեկնեցին Պրն. Հովհ. Թումանյան և Պրն. Հովսէփ Խունունց»:

«Աշխատանք», 1915, հունիսի 20, թիվ 26:

Հունիսի 23 - Մամուլը տեղեկացնում է, որ Վանում «մայիսի 18-ին Ավետարանական ժողովարանում մի խումբ ընկերներ ի պատիվ հայ կանավորների տվին մի գրական-երաժշտական երեկոյթ (տես հունիսի 18): Արտասանության բաժնուն արտասանեցին Հովհ. Թումանյանի «Վերջին օրը»:

«Հորիզոն», 1915, թիվ 138:

Հունիսի 23 - Տպագրվում է Վանից Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին Թումանյանի ուղարկած հեռագիրը (տե՛ս հունիսի 17):

«Հորիզոն», 1915, թիվ 138:

Հունիսի 24, Վան - Առաջին անգամ տպագրվում են («Աշխատանք», 1915, թիվ 27) Թումանյանի «Շուռ է գալիս ծանր քարը...» և «Աղթամարի կղզուն» բանաստեղծությունները (տե՛ս հունիսի 16, 20):*

*) Ծանուցվում է. «Թումանյանի մասին մեր խոստացած (տե՛ս հունիսի 20) հոդվածները նյութերու շատության պատճառով հետաձգեցինք հաջորդ թվին»:

ԵԼԺ 1, 275-276, 277-278:

Հունիսի 25 - Տպագրվում է Վանից Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին Թումանյանի ուղարկած հեռագիրը (տե՛ս հունիսի 17):

«Արեգ», Բաքու, 1915, թիվ 81:

Հունիսի 25 կամ 26 - Վանից վերադառնում է Իգդիր:

ԼԿ, 153:

Հունիսի 27, Վան - Տպագրվում է Հովհ. Մխիթարյան ստորագրությամբ հոդված (տե՛ս հունիսի 20) «Բանաստեղծը մեզ հետ» խորագրով:

Մտորումներ են Թումանյանի հետ հանդիպումների տպավորության տակ: Գրում է. «Դարերու երազ էր մեր ժողովրդի համար տեսնել սահմանը ճեղքած հայ կամավորին սուրով, պատնեշները քանդված մեր միջև, Կովկասը մեզ հետ շրթունք շրթունքի և հայը այլևս ոչ թե թուրքահայ կամ ռուսահայ - այլ հայ...»

Երջանկաբեր վայրկյան էր նաև մեզի համար այս պահը, երբ երիտասարդության տարիներու դաստիարակներն ու մարզարեւները, մեր պայքարի առաքյալներն ու ազատության գուշակները մեզ թիկունք թիկունքի են, մեր մտքի ռահվիրաներն ու կյանքի գեղեցկության վիուկները՝ մեզ սեղանակից...

Բանաստեղծն էր երեկ մեր սեղանի վրա՝ Հովհ. Թումանյանը, այն ամուր շքեղությունը, որուն ապահով կռքնած է հայ գրականության գեղեցիկ, հոյակապ շենքը»:

Հիշում է, թե դպրոցական տարիներին ինչպիսի պատանեկան ռզկորությամբ է կարդացել «Սասունցի Դավիթը» «1904 թվին էր ատ, և իմ մանուկ երևակայությունը չէր սխալվել այդօր... գոտեմարտը ահեղ ու անհավասար սկսած էր կրկին Սասունի բարձունքներու վրա:

«Սասունցի Դավիթ» իմ երևակայած անփորձ ու մանուկ թռուներն ու որդիները վերցուցեր էին իրենց գուրգերը և կռվի հանդես էին եկած...արմատիւն թշնամիի դեմ, որը կուգար տանելու Սասունեն

Հազար հազար կին...»:

Հիշում է նաև, թե ինչպես իրենց գրականության ուսուցիչը դպրոցի ավարտական հանդեսին իր հրաժեշտի օրհնանքը տվել էր թուևանյանի հայտնի խոսքերով`

Ապրեք, երեխեք, բայց մեզ պես չապրեք...

Ու թեև նրանց էլ վիճակված էր ապրել պապերի ծանր կյանքը, բայց կարդում, հիանում էին «Անուշով», երգում «Աղջի բախտավոր, էրնեկ քո սերին...», աշակերտներին սովորեցնում «Շունն ու Կատուն», «Պողոս – Պետրոսը», «Գիքորը»:

Իսկ պաշարված քաղաքում, պայքարի, գոտեմարտի օրերին, նրանց հետ էր թուևանյանը. «...Ցուրտ խրամի մը մեջ կեցած մեր ընկերները կմրմնջային.

Հայի գիշեր, անհուն գիշեր,

Խավար մի ծով ահագին...

Ապա հուսահատ հայացքնիս ականա կսևեռվեր դեպի հայոց լեռներն ու անոնց վրա իշխող անհուն կապույտը, որ մեզ կիուսադրեր թուևանյանի հետ`

Ու մեր աչքերը նայում են կարոտ`

Հեռու աստղերին, երկնքի ծերին,

Թե ե՞րբ կբացվի պայծառ առավոտ

Հայոց լեռներում,

Կանաչ լեռներում...

Երեկ երիտասարդներու սեղանին վրա էր ահա հոյակապ կոթողը մեր գրականության, ցեղի արգանդեն ծնած հանճարը: Մեզ հետ էր, ի՞նչ բախտ, թուևանյանը, քիչ մը ծերացած, բայց պայծառ աչքերով` կենդանությամբ, շարժունությամբ լի, զվարթ ու մեղմ, մանուկ հոգիով, հոգիով սուրբ...

Մեզ հետ էր ու կրկին հայացքը դեպի երիտասարդությունը

հառած կգուշակեր բախտը իր ցեղին ավելի երջանիկ ու բախտավոր...

Շուռ է գալիս ծանր քարը

Մեր մոր կրծքից տեմչավառ...

Ու հիացումի իր խոսքերեն վերջ կորոտար կրկին եղբայրական ու մարտական կոչը բանաստեղծին.

Հե՛յ ջան, տղերք, ուս տվեք, ո՛ւս

Միահամուռ, միաբան,

Հե՛յ ջան, տղերք, ուժ տվեք, ո՛ւժ,

Քարը մոտ է գլորման...»:

«Աշխատանք», 1915, թիվ 28:

Հունիսի 27, Վան - Տպագրվում է Հովհ. Ավագյան ստորագրությամբ հոդված՝ «Բանաստեղծը՝ որ մեկնեցավ» խորագրով:

Կամավորների խմբի հետ բանաստեղծի՝ Վան ժամանելու լուրը ուրախալի անակնկալ է եղել հոդվածի հեղինակի համար. «Ուրեմն շուտով կարելի պիտի ըլլա տեսնել ան, որ իր բանաստեղծություններով տարած է մեր հոգին դեպի լեռներն ամպամած, ուր հաճախ իր իղձերն են թևածած, ան, որ տարիներ իսկ առաջ, հայրենիքի կանչին ականջալուր, հոն է դիմած լալու համար իր հառաչներն ու ավաղները, ան, որ հողագործին պես ու թերևս անկեալ ավելի գիտցած է գուրգուրալ խոփին ու գութանին վրա, ու անոնց եղբայրանալով դիմառնած է զանոնք՝ շունչ ու հոգի տալով անոնց երկաթե ու փայտե անկենդան մասերուն...»: Ու այսպես յուրովի իմաստավորելով բանաստեղծի ստեղծագործությունը՝ շարունակում է. «...Ու ինչ սիրուն անակնկալ քու մեջդ, երբ անիկա ոտքի կկանգնի ու կարճ speech*-ի մը ձևին տակ քեզի կը ներկայացնե խանդով ու եռանդով լեցուն, իմաստով կուռ, լեզվով ճոխ ու բովանդակությամբ հյութեղ ուղերձ մը, որ ամեն բանե առաջ, իրավ որ, հայ կբուրե ծայրեծայր, չափահասի իր տարիքին մեջ, վաղվան հայության նկատմամբ, ինչ ուժեղ հավատք է, որ կթրթռա անոր հոգիին խորքը, ի՛նչ ջինջ առոգանություն, ի՛նչ հստակություն, զգացումներու ինչ հորդություն, ու կզգաս, որ... բանաստեղծը կենդանի է դեռ թունամյանի մեջ ավելի քան երբեք, ու իր երզը այս անգամ չէ ալ այն, որով անիկա՝ անցյալին մեջ՝ երանի կկարդար հայուն փրկության ոսկի երազներով օրորվող գովված երգիչներուն՝ որոնք գալիք օրերու հրճվանքներովը լեցուն՝ իրենց հայրենիքն են երգած,

ո՛չ, իր երգը այս անգամ ավելի ուժեղ է, ավելի կայտառ, ավելի ուրախ, ավելի առողջ և ավելի լեցուն հավատքով, քան երբեք: Ղազարի հարության պայծառ այգն է, որ կշողա ահա, Նազովրեցիի մի գոյությունը բավական է, որպեսզի շարժի քարը ու անոր տակ թաղված դարերու աճյուններեն փյունիկի պես զարթնի մինչև այժմ անկենդան համարված հայությունը:

Կամավորներու քաջարի գունդը կգլորե ճնշող քարը, որուն տակ հեծող գերեզմանի խորերեն դուրս կսահի դիցուհին նազելի փառքով:

Պճնված կուսության ճերմակ պսակով,
Վառվելով իր սուրբ շողերի միջին:

Ելնում է շռայլ իր փառքից շիկնած.
Ցոլուն աչքերը գետին խոնարհած,
Թեև նրանց մեջ երկնքից ծագած
Ամենից պայծառ ճաճանչն է բերում:

Թռչում են երգեր նրան ընդառաջ,
Ցնորքներս աշխույժ պարում են իր շուրջ,
Թռչում են և ես իմ բախտից հարբած
Ու կյանքը թեթև թվում է անուրջ»:

*) Խոսք:

«Աշխատանք», 1915, թիվ 28:

Յունիսի <30> - Դեպի Վան երկրորդ առաքելությունից հետո վերադառնում է Թիֆլիս:^{*}

*) Թումանյանը, իրոք, Թիֆլիս պետք է վերադարձած լինի հունիսի 30-ից ոչ շուտ, քանի որ Ճամփորդության ընթացքում կատարած օրագրային վերջին գրառումները կատարված են հունիսի 29-ին Իգդիրում (տե՛ս ԵԼԺ 8, 400): Ընդհանրապես 1915-ին բանաստեղծը Իգդիրում եղել է երեք անգամ՝ Վան մեկնելիս, Վանից վերադառնալիս և գաղթականների հարցով Էջմիածին մեկնելիս (տե՛ս ԵԼԺ 8, 391, 400, 401):

Յունիսի 8-29 - Օրագրային գրառումներ^{*}

«Յունիսի 8, Իգդիր

Սահակը. վերաբերմունքը դեպի մեզ շատ է վատ: Կարգադրություն է եղած կանգնեցնել հայ կամավորականների գործը (մեզ հայտնի հեռագիրը^{**}): Ասում են հայերը և կամավորները թալանով են զբաղված. ռուս զինվորների վրա հրացան են արձակել: Էդ էլ

էսպէս է եղել: Մի խումբ քրդեր, մոտ 200 հոգի, անձնատուր են եղել, 4 կոզակի հետ գալու ժամանակ Արամի*** (Վանի) չետնիկները կոզակներին չեն նկատել, դիրք են մտել ու կրակ են բաց արել: Երբ կոզակներին նկատել են, դուրս են եկել ու դադարեցրել են կրակը: Դրանց բռնել են, ուզում են զինվորական դաշտային դատարանով պատժեն: Ոմանք էլ ասում են՝ մեջտեղը նախանձի խնդիր կա, որ մերոնք շատ են աչքի ընկնում ու մենք էլ շատ ենք խոսում: Ոմանք էլ ասում են՝ վերևից է կարգադրություն եկած և հատկապէս ծերունուց:**** Շահխաթունին պատմում էր, թե Օգանովսկին, երբ իր ներկայությամբ մի ուրիշ զինվորի հետ խոսում էր, զարմանք հայտնեց, թե ինչու էսպէս հանկարծ վերևից վերաբերմունքը դեպի հայերը փոխվեց»:

«Մուրթուզ Ղուլիխան պատմեց Մակուի թշնամի և գերմանասեր խանի վերադարձի լուրը:

Աքսորել էին, որովհետև նա 20 000 գերմանական հրացանով զինել էր ռուսների դեմ քրդերին, որոնք դեռ կռվում են: Սարսափով են սպասում նրա վերադարձին: Ընկճված է ռուսասերների, ինչպէս և ամբողջ ժողովրդի տրամադրությունը: Մյուս քուրդ խանը, որ Մակի խանի թշնամին է և դրա համար է ռուսասեր, զգուշացրել է հայերին և հայտնել, որ նրա վերադարձի դեպքում սպասվում է մեծ վտանգ»:

«Օգանովսկին հեռվից հեռու շոշափելի դժգոհությամբ շոշափել է խնդիրը և հաստատել, որ վատ են վերաբերվում: Ինքն էլ բավական փոխված է: Եվ մեծ թշնամություն կա իր դեմ, որ արտահայտվում է զանազան կարգադրություններով – իր սիրած ծառայողներից Օզուլին ոչ միայն իր մոտից, այլև իր շրջապատից հեռացրին, որ շատ հայասեր էր: Աբացն ավելի ուժեղացավ: Այժմ էլ բացարձակ ցույց է տալիս իր հայատյացությունը և ինչպէս կռվի գնաց Մանազկերտից ու ետ եկավ հայերին կոտորել տվեց, նրանց օգնությունն էլ մերժեց, այժմ էլ խլաթ է գնացել ու ետ եկել - այժմ էլ նրանց է մատնել կոտորածի: Կարգադրություն էր արել, որ հայերի գյուղերն իրար հետ հարաբերություն չունենան, մի տեղից ցորեն չտանեն մյուս տեղը և այլն, և էս բոլորը առանց Օգանովսկու գիտության:

Այժմ ասում են Օգանովսկին ուզում է շտաբը փոխադրել Արճեշ, որ նրա՝ Աբացի զորամասն էլ իր տրամադրության և իր իրա-

վունքի տակ անցնի ու զորքերը համախմբելով, թիկունքից զարկի էրգրումին: Սրա էս կողմի առաջխաղացումը շատերի (իր մեծավորներից ու ընկերներից) նախանձն է շարժել»:

«Զորքերը դարձյալ առաջվա նման զբաղված են կողոպուտով զարհուրելի չափով: Օֆիցերներ կան, որ ասում են՝ ուղղակի ամաչում ենք: Տեղական ամբողջ ազգաբնակչությունը կարոտով է հիշում 1877-8-ի պատերազմի զորքն ու գեներալներին: Մի անգամ մի կոզակ մի քուրդ թե թուրք կնոջից բան էր խլել – Տեր-Ղուկասովը կախաղան հանեց:

Դ. Խ. Զավրիկը***** հաստատում է կոզակների վրա կրակ բանալու դեպքը նույնպես անգիտությամբ: 5 հոգի են եղել: Բանտարկված են: Կոմիսիա է կազմված զինվորական դաշտային դատարանի մի Դոլուխանովի նախագահությամբ, կարծում են, որ կխփեն, որովհետև կոզակների ավագը խիստ է պնդում: Զորքը գնալու ժամանակ (Վան) նկատել են, որ շատ անասուն կա անտեր ցրված դաշտերում – փախած քրդերի ու թուրքերի թողած:

Այժմ կարգադրել են էդ բոլորը հավաքեն ինտենդանտսովոյի համար, բայց որ չեն գտնում – մեղադրում են, թե հայերն են բոլորը տարել, և այժմ հավաքում են հայերից, հայերինն էլ հետը»:

«Եկավ Շահխաթունին (առավոտյան ժամը 9-ին), ասում է՝ Խլաթից նահանջ չի եղել, սուտ է:

Այժմ էլ մեր ձեռքին է:

Ասում է՝ նոր եկավ Մանազկերտից զինվորական բժիշկը. պատմեց Օգանովսկին, թե Մանազկերտ շատ գաղթական հայ կա: Հիվանդություն, սև ծաղիկ: Հոգացինք, հազցրինք, զինվորների շորեր տվինք, նրանց պաշարից տվինք: Օգանովսկին բարկացած նկատողություն արավ, թե ահա թե ինչ. ինձ հավատացրին, Խորեն եպիսկոպոսն էլ եկավ նույնը պնդեց, ես էլ առանց ստուգելու էնպես խիստ հեռագիր տվի Աբացկին»:

«Հեռագիր եկավ Դևոյանից, թե քրդերը վեր են կենում թուրքերի դեմ: Եվ որովհետև նրան օֆիցեր են շինել, այժմ հավատում են և ասում են – այժմ քրդերը մեզ հետ են»:

«Գեներալ Նիկոլասի հեռագիրը, թե հայ դրուժինիկները

կրակ են բացել կողակների վրա - պետք է լինեն Օգանովսկու միջոցով, բայց էդպես չի եղել. այլ անմիջապես և ունի գրգռիչ (պրովոկացիոն) բնավորություն:

Էդ հեռագրից առաջ, ասում է, և էդ կարգադրությունից առաջ՝ թե կանգնեցնել հայ կամավորական կազմակերպությունը - էստեղ հեռագիր եկավ, թե նորից 7 հայ կամավորական գունդ կազմեն (Նիկոլայ Նիկոլաևիչից): Վերև չգիտեն ներքև չգիտեն: Վարանցովիցն է: Եվ Թիֆլիսի ազգային բյուրոն Քաջագնունուց***** հեռագիր էր ստացել, թե գեներալ Բելյակի ասելով հանձն են առել մեզ գեներտալու և կազմակերպելու, և հեռագիրն էլ առանց շիֆրի»:

«Փանչի (գյուղ) պրապորշչիկը պարզ հայտարարել է, որ հայ կամավորներին չի ճանաչում:

Ժամը 9-ին եղանք Օգանովսկու մոտ:

Գունիբի գնդի հրամանատարը (командир) տեղեկություն է տվել Նիկոլաևին, թե հայերը կողոպտում և կոտորում են հանգիստ թուրքերին: Թալանով վերադառնալիս Բանդունսկի գնդի վրա 150 քայլի վրա կրակ են բաց արել կամուրջի ռուս պահակի վրա և մի քանի անգամ էլ ուրիշ տեղեր նույնպիսի դեպքեր են պատահել: Պահանջում է շուտով դատել ու պատժել հայերին, որ անկարելի կլինի նրանց զսպել: Հեռագրի մեջ չկա կամավոր խոսքը:

Նիկոլաևն էլ նույնը Օգանովսկուն:

Հեռվից քրդերին (200) տանող կողակների վրա կրակողների գործը համարում է միանգամայն թյուրիմացություն. մնացածը դեռ մութը և չպարզված, թե ովքեր են եղել: Իսկ կանգնեցնելու կարգադրությունը (կողքից ասավ) միայն մահանա է ծառայել:

Պատմեց, թե Աբացը, որ Մանագկերտը չի թողել հայերին, պատճառը եղել է սև ծաղիկը, բայց նրանց ամեն օգնություն տվել են, ինչպես բժիշկն է հայտնում նոր եկած:

Պատահած դեպքերը ինքը համարում է պատերազմի ժամանակ անխուսափելի առանձնակի դեպքեր»:

«Կողբա մոտ դեպք է եղել, որ կողակ օֆիցերը թուրքերի մոտ գտել է մեծ քանակությամբ հրացան ու փամփուշտ ու բռնել:

Օգանովսկին նրան շքանշանի է առաջարկել, իսկ Տիգենհաուզենը (Երևանի նահանգապետը) առաջարկել է պատժեն»:

«Ձավրիկը և մյուսները:

Գունիքի գնդի կոմանդիրը իբր անտեր անասունները հավաքում է ու մեծ քանակությամբ ծախում իր օգտին: Երբ մի անգամ բռնվում է, բացատրում է, թե հավաքում է հանձնում ինտենդանտ-սովոյին: Եվ հայերին համարում է իրեն կոնկուրենտը:

Օսեփը շեշտեց, որ <դանոսների> մեջ անհամգստացնում են կամավորների մասին եղած աննպաստ տեղեկությունները և դրան հետևող կարգադրությունները: Մենք ուզում ենք էդ ստուգել և հույս ունենք, որ նրանք չեն լինելու:

Գեներալը ասում է, թե նրանց մեջ էլ մարդիկ կան, որ փախչում են, հեռանում են, ետ են մնում և զբաղվում էդ բաներով. բայց կարող է լինել, որ էս միայն սովորական մորադիրներ լինեն:

Բայց որ հայերը, որ շատ են թալանում, դա խոսեցինք վերև:

Երբ ես ակնարկեցի, որ երևի էդքան չէին թալանիլ, եթե մեր զորքերը չթալանեին - ասում է, որ էդ թալանողները, շակալները - զորքի ետևից են գնում»:

«Բերկրի հասնելուց հետո Դրոյի և Համազասպի ընդհարումը, թե որն է առաջ հասել: Անախորժություն, թե ինձ ուրիշ կողմ դիտմամբ եք ուղարկում, որ ես Վան չմտնեմ: Փամփուշտների համար, թե ինձ չեք տալիս - նրան տալիս եք (մինչդեռ ինքը կարիք չի ունեցել)»:

Ձ. Կորբի (սուրբից հետո) մահանջը - ասում են, թե 500 կանոնավոր զորք և քրդեր, 2 թնդանոթով, 6 հոգի են սպանել: 30 վերստ առաջին օրն են մահանջել - 60՝ մյուս օրը: Փախածներից ոմանք 500 հասցրել են 5-ից մինչև 8 հազարի: Նահանջը բացատրել են նրանով, թե նրանք օգնություն են ստանալու:

Չեն կարողացել զորամասն ու զենքի, թնդանոթի տեսակը որոշել կամ դեպքին ու տեղին հարմար կարգադրություններ անել:

Անդրանիկն էլ առաջին անգամ, երբ հասել էր Հասան դալա (Վանի մոտ), մի քուրդ եկել էր հայտնել, թե մի ամբողջ կորպուս է գալիս: Նրան պահել էին - մյուս քրդին բռնել, մա էլ նույնն էր ասել, և տեղեկացրել ու հավատացրել էին զորամասի (օտրյա-ի) գլխավոր Ավլեցյանին ու ետ էին մահանջել ամբողջը - մինչդեռ էդ տեսակ բան չէր եղել»:

«Իգդիրում, Արարատյան դաշտում ես հասկացա, թե ինչու համար են արևելքի և հարավի թագավորների ու թագուհիների գլխին բռնած հովհարները, որ հաճախ ձիու պոչի ձև ունեն. ոչ միայն հով անելու, այլ ավելի շատ ճանձն քշելու»:

«Թուրքերը իրար անիծելիս ասում են Էոլումյա գաղթական գիդասըն»:*****

Վան. Օխիկ - Օհաննես...»:

«Առաջնորդարանը ոչ մի միջոց չունի: Խոսել Կաթողիկոսի հետ:

Կամավորներին կառավարությունը ինչ որ տալիս է, պետք է տա առանց մանրամասն հաշիվ ուզելու, ինչպես Անդրանիկին է, որովհետև մենք ծախսում ենք հաճախ ոչ նույն բաների վրա, ինչ որ նախահաշվի մեջ նշանակում են իրենք»:

«Կամավորները նահանջի ժամանակ իրենց շինելները տվել են գաղթականներին և մինչև օրս չեն ստացել, թեև դիմել են - զինվորական մարմին – որովհետև զինվորական մարմինը չի բերել Բյուրո: (Նույնպես թողել են վրաններ, որովհետև վազ գործողության ժամանակ չեն կարողացել հետները բարձրացնել)»:

«Դուքախում թուրքերին ցորեն էին բաժանում, իսկ հայերին չէին թողնում փողոցներում երևան»:

«Ասում են ինչպես իրենց մոտ է - հին կոշիկը բերեն ցույց տան, վկայություն ստանան, որ նոր կոշիկ առնեն: Բայց իրենց բանակի հետ է իրենց վարչությունը – իսկ մերում չկա: Պետք է դիրքից քաղաք գա»:

«Մայիսի սկզբներին, երբ Վանը դեռ չէր վերցրած, հրաման դուրս եկավ հայերին գծից եւ կողմը չթողնել, այլ քշել դեպի Վան: Եվ շատերը ետ էին դառնում ու ընկնում քրդերի ու թուրքերի սրի բերանը»:

«Սրանից հետո հրամայվեց Ալաշկերտի կողմի հայերին թույլ տալ բնակվել Ալաշկերտի գյուղերում – իսկ մյուս հայերին քշել դեպի Վան:

Նույնը և Պոնտոսի կողմի հայերին: Հայերը լաց էին լինում - ապրանք ունեինք - բոլորը տարան, մենք էլ հիվանդ, ինչպե՞ս գնանք: Սրա ետևից նոր հրաման եկավ - էդ տեղերը մաքրել»:

«Դուքայտում 20 տուն հայից մի քանի տուն էր մնացել: Նաչալ-նիկ զարնիզոնի էր պողպալկովնիկ Բաբանով, լեզգի և բատարեյնի կոմանդիր պրինց Մահմեդ - երկուսն էլ մահմեդական: Հայերը չէին կարող փողոց դուրս գալ. հայիոյում էին, ասում էին ձեր քոքը պետք է կտրել:

Հետո երբ էնտեղ նշանակեցին ռուս գեներալ Ամասիիսկուն, հայերը շունչ քաշեցին»:

«Մի հայի - Արփիար Նալբանդյան – Ղարաքիլիսա կախեցին իբրև լրտեսի: 60 տարեկան մի վաճառական մարդ, որ փախել էր ռուսների մոտ: Թարգմանը դատին եղել էր թուրք:

Աղջավազը, որ տիրեցին, էն հրամանի հիման վրա, թե քշեն հայերին Վան, սկսեցին ժողովրդին առանց մի օր-երկու օր ժամանակ տալու հայիարայ քշել դուրս, և էն փախած տղամարդիկ էլ որ վերադարձան, խնդրում էին իրենց ներս թողնել՝ իրենց ընտանիքները վերցնելու կամ իրենց ցորենը՝ չարին, քշեցին: Կոմենդանտը նշանակված էր Скворцов, իսկ գլխավորը Гафаловсуч - կոմանդիր Լարինովսկու գնդի»:

«Կոզակները գնացել էին Վան. ջաղացը բանելու ժամանակ կամավորների գլխին քանդել, գերանները տարել են վառելու»:

«Փախստական հայերը ոչ մի տեղ պատսպարան չունեն, որտեղ գնում են, էնտեղից քշում են»:

«Մի կամավոր արձակուրդով գնում էր իր գյուղը – Չլկանի:

Ներկայացավ Աբացկին, թույլ տա գնալ Գյոլ գյուղը իր եղբորը, նրա որդոցը և մի եզն ունեն, վերցնի: Էնպես գնա Չլկանի: Թույլ չտվեց:

Փանջի կոմենդանտը՝ պրոպորչիկը զինաթափ է անում հայերին: Երբ հայերը ներկայացնում են Արամ - նահանգապետի վկայականը, վրեն գրում է, թույլ է տված, այնուամենայնիվ զինաթափ է անում»:

«Սնջանում հրամայում էր հայերին չթողնել գծից անցնեն: Եվ իրենք՝ կոզակները գնում էին նրանց ապրանքը քշում բերում, իսկ հայերին թույլ չէին տալիս գծից անցնեն գանգատվեն: Կոմենդանտները ուղղակի կողոպտում են գրեթե ամեն տեղ»:

«Մեր ուսանողների ու միջնակարգ դպրոցների աշակերտների դերը թե՛ պունկտերում և թե՛ ամեն տեղ...»:

«Խմբապետների անկարողության մասին վկայում են ամենքը: Նույնիսկ իրենք սկզբում, երբ լսում էին, որ 20-ից ավել մարդ են կառավարելու, հայտնում էին իրենց անպատրաստությունը և անկարողությունը»:

«Օգանովսկին դժգոհություն հայտնեց խմբերից, ի միջի այլոց, որ շատ փամփուշտ են փչացնում: Մինչև այժմ՝ 29 հունիսի 2 միլիոն փամփուշտ են փչացրել: Ուրախությամբ համաձայնեց գաղթականությանը դրկելու Թափարիշից էն կողմի շրջանները. մանավանդ Սուրմալվից, որ ասում է՝ հողը սակավ է»:

«Անտառների պակասը: Ծառ միայն հայ գյուղերում: Մասիսի թիկունքի և Աբաղայի ծաղիկները – կակաչ մեծ, հիրիկ (սрск Ё касатук) - մեծ, թափարիզի հակինթը (гуацухм), գետափի, լճափի, գյուղերի ու անտառների լեշերի հոտը: Արտուտների ճռվողյունը դրանց վրա:

Հայ ու քրդերի դիակները միասին – ծովափին»:

*) Գրառումները առանց ամսաթվերի են. նշված են միայն առաջինի և վերջինի ամսաթվերը՝ համապատասխանաբար հունիսի 8 և հունիսի 29 (եւժ 8, 391, 400):

**) Խոսքը գեներալ Նիկոլակի՝ Թիֆլիս՝ փոխարքային ուղարկած հեռագրի մասին է, որտեղ զանազան հորինովի մեղադրանքներով փորձ էր արվում վարկաբեկել հայ կամավորներին: «Մեզ» ասելով՝ Թունմանյանը նկատի ունի Ազգային բյուրոն, որին հեռագիրն արդեն հայտնի էր:

***) Արամ Մանուկյանն է, որ այդ ժամանակ Վանի նահանգապետն էր:

****) Նկատի ունի Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին:

****) Դավիթ Քրիստափորի Չավրիկը հետագայում եղել է Երևանի պետական համալսարանի ռեկտոր (1921-1922), մասնագիտությամբ քիմիկոս, պրոֆեսոր:
*****) Քաջագունի (Տեր-Յովհաննիսյան, 1868-1938) - Թումանյանի մտերիմներից, հետագայում Հայաստանի Առաջին հանրապետության վարչապետ:
*****) Չմեռնես, գաղթական դառնաս:

ԵԼԺ 8, 391-401:

Հունիսի 30 - Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհրդի գրությունը Թումանյանին:

Հայտնում են, որ ընկերության խորհրդի ժողովում վերընտրված է Պողոսյան-հրատարակչական ֆոնդի մասնաժողովի անդամ (տե՛ս հունիսի 19):

ԳՍԹ ԹՖ, 1436 (133 III g.):

Հունիս - Վահան Տերյանի նամակը Թիֆլիս՝ Նվարդ Թումանյանին՝ Պետերբուրգից:

Տեղեկացնում է, որ Մաքսիմ Գորկին իրեն առաջարկել է կազմել հայ գրականության ժողովածու:^{*} Գրում է. «... Պառլոն (Պողոս Մակինցյանը) բերել է իր հետ «Գիքորի» թարգմանությունը, բայց տվեց «Современный мир»-ին տպելու և չգիտեմ տպված բան կընդունի Մ. Գորկին, թե ոչ: Ես ուզում եմ, որ «Գիքորը» լինի, թեև մի քիչ կարծիքս տարբեր է Պառլոնի կարծիքից և գտնում եմ թերություններ: Բայց, համենայն դեպս, մեր գրականության մեջ եթե կան էլ (որ կասկածելի է), շատ քիչ են այդպիսի սրտաշարժ գրվածքներ: Իվան Ֆադեյիչի «պոեզներից» պիտի տամ թարգմանելու «Աղավաղված վանքը» (որ ինձ թվում է ռուս ընթերցողին դուր կգա), «Վայրէջքը» և այլն: (Ի դեպ, եթե ունեք «Փարվանա»-ի թարգմանությունը՝ Քափանակյանի կամ գուցե և ուրիշ՝ մի ծուլանաք ուղարկելու):»:

Շնորհակալություն է հայտնում «Մանուկ» ընկերության հրատարակած խաղերի համար, որ իրեն շատ դուր են եկել: Անդրադառնալով բանաստեղծի՝ Վան մեկնելուն՝ ավստոսում է. որ Թիֆլիսում չի եղել՝ նրան ընկերակցելու համար:

Հանձնարարում է Նվարդին արտագրել «Վայրէջքը» և ուղարկել իրեն: Հանդգված է, որ նրա համար էլ Թումանյանը «նույնքան սիրելի պոետ է», որքան իրեն:

*) Խոսքը 1916 թ. Մ. Գորկու խմբագրությամբ Պետերբուրգում լույս տեսած «Сборник армянской литературы» ժողովածուի մասին է, որի պատրաստմանը գործում մասնակցություն է ունեցել Վ. Տերյանը (տե՛ս նաև մայիսի 12, Կարեն Միքայելյանի նամակը Թումանյանին):

Չունիս - Գրում է «Ավերակների ու դիակների աշխարհում» հոդվածը:

Ներկայացնում է պատերազմի վայրերում իր անմիջականորեն տեսածը՝ հավելելով. «Եվ տեսնելով կարելի է հասկանալ, լսելով բան չի դառնալ»:

Քրդի ու թուրքի չեն տեսել, քանի որ նրանք հեռացել են իրենց նահանջող բանակի հետ: Տեսել են միայն նրանց թողած հետքը. «Եվ ինչ է իրենց հետքը՝ հրդեհված գյուղեր, ավերակներ, ամայություն, սով ու դիակներ ու դիակներ... քրդի ու թուրքի հետք»:

Նկարագրում է նրանց կենցաղը, բնակության պայմանները, ապրելակերպը. «Տեսանք նրանց հռչակավոր բեկերի՝ հայ ժողովրդի մշտական սարսափների որջերը, մի-մի ցեխից ծեփած խղճուկ օթախներ, ետևները կամ կողքներին էլ կուչ եկած իրենցից ավելի խղճուկ օթախ, նեղլիկ ու վանդակապատ լուսածակերով: Մի՞նը Ալի բեկի ամարաթն է, մյուսը Վալի բեկի, երրորդը Ահմադ բեկի, չորրորդը Մահմուդ բեկի, Հասան բեկի կամ Հուսեյն բեկի... Կողքներին էլ իրենց կանանցը: Եվ ինչ են դրանք, էդ բեկերը, մի-մի կեղտոտ, կիսավայրենի, թշվառական, որոնց բոլոր ուժը նրա մեջն է կայանում, որ արտոնություն ունեն ամեն լրբություն անելու... <....> Դեպք եղավ, տեսանք և էդ մարդկանցից, տաճկական հովանավորությունից դուրս, իր սանձարձակությունից դուրս, անձնատուր եղած, զինաթափ եղած. անճարակ ու խեղճ մի խուժան...»:

Բայց ովքեր հասցրել են նահանջող բանակի հետ հեռանալ, իրենց հետևից թողել են զարհուրելի տեսարաններ. «Հայի գյուղերն են ավերել. մյուս կողմից հայը՝ նրանցը: Իհարկե, ավելի հայերն են տուժել, որովհետև նրանք՝ թուրդն ու թուրքը, իրենց զորքի հետ, քանդելով ու ջարդելով, ետ են գնացել և որտեղ հասցրել են՝ կոտորել են հայերին, գլխավորապես տղամարդկանց, ու հետները տարել գեղեցիկ կանանց, և եթե ժամանակ են ունեցել, ռուսական բանակի ու հայ կամավորների սարսափը շատ չի մոտ եղել, բարբարոսական զվարճություններ են հորինել: Երեխաների ճակատներին մեխ են զարկել. խաչել են, կենդանի մարդկանց մարմնի զանազան մասեր կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել, մինչև կեսը դրել են պղինձն ու կեսից ներքև եփել, որ մյուս մասը կենդանի լինի ու զգա, շիկացած երկաթով էրել են մարմնի զանա-

զան տեղերը և կրակի վրա խորովել են: Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին:

Էսպեսով գազանության են հասցրել նաև շատ հայերի ու կործանել են մեր ցեղը ոչ միայն ֆիզիկապես, այլև բարոյապես: Ասում են, իբրև թե թուրք ու քուրդ ժողովուրդը համաձայն չի եղել հայերին կոտորելու, թուրք կառավարությունն է սարքել: Մի, և կարծեմ միակ, հայտնի քուրդ ինտելիգենտն ասել է՝ քրդերին պետք է ներել էդ բոլոր չարությունները, նրանք ջահել ժողովուրդ են, ջահելություն են անում...

Մի բարեհոգի անձնավորություն էլ էն կարծիքին է, որ մեղքը քրդերն են...»:

Այսպիսի շատ աղետներ կանխելու և շատ բան փրկելու համար իբրև գլխավոր միջոց առաջարկում է ուժեղացնել գործիչների բանակը, իրատեսորեն կազմակերպել տուժածների օգնության և բանակին սատարելու գործը:

ԵԼԺ 7, 439-42, 668:

Հուլիսի 1, Վան - Տպագրվում է Վեսպերի «Օրինություն» բանաստեղծությունը՝ «Հովի. Թումանյան բանաստեղծ հյուրին» ընծալականով:

«Աշխատանք», Վան, 1915, թիվ 29:

Հուլիսի 3 - Հայտարարություն մամուլում.

««Գուտտենբերգ» գրավաճառանոցում վաճառվում են հետևյալ դասագրքերը.

Հայ գրողներ, կազմեցին Աղայան, Ահարոնյան, Թումանյան, մաս Ա, 2 ռ., մաս Բ, 2 ռ.»*:

*) Հայտարարությունը կրկնվում է՝ «Մշակ», 1915, հուլիսի 7, թիվ 145:

«Հորիզոն», 1915, թիվ 146:

Հուլիսի 9 - Հակոբ Այվազյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս Թումանյանին՝ Մանազկերտից:

Մանրամասներ է հաղորդում Մանազկերտի և Մշո դաշտի գյուղերի կոտորածի ու տեղահանության մասին. «...Շրջակա բոլոր գյուղերի մեջ մի հայ մարդ չի մնացել, բոլորին հավաքել են թուրք զորքերը և քրդերը Լիզի մոտ և սպանել են, կանայք ու երեխաները սարսափից փախել են սարերը: Հենց որ մեզ տեսան, չորս կողմից թափվեցին եկան, լացն ու ողբը երկինք բարձրացավ, մնացել են միայն

մերկ, անոթի երեխաներ ու կանայք, թուրքերը ամեն ինչ տարել են, ամեն ինչ, մի եզ, մի սայլ, մի հորթ չեն թողել, տարել են և սիրուն կանանց, աղջիկներին, մնացել են այդ թշվառների հետ շները և կատուները: Ման եկա Լիզի բոլորտիքը... և տեսա անթիվ, անհամար դիակներ՝ հոշոտված թափված արևի տակ, ի՞նչ երկարացնեմ, այդտեղ թուրքերը սպանել են հազարից ավելի հայերի, կեսը ծածկել են հողում, մնացած դիակները մինչև հիմա էլ թափված են քաղցած շների առջև... Այս բոլորը Ձեզ գրում եմ, որ մի օգնություն անեք մնացած որբերին ու մերկ ու քաղցած կանանց: Ինձ իմ ընկեր սպաները ասում են՝ բա ի՞նչ են անում ձեր հայերը, ինչո՞ւ չեն օգնում այս թշվառներին...»:

Նամակում հիշատակվում է նաև բանաստեղծի որդու՝ Մուշեղի անունը, որ սովյալներին օգնող խմբում էր:

ԳԱԹ ԹՖ, 882 (241 լր.):

Հուլիսի <11>*, Թիֆլիս - Ցավակցական հեռագիր՝ Վաժա Փշավելայի մահվան առթիվ.

«Այս ողբերգական դրոշմ** էլ խորապես զգաց աշխատավոր ժողովուրդը՝ լավ մարդու, տաղանդավորագույն և անմեղ բանաստեղծի — Վաժա Փշավելայի կորուստը: Անկեղծորեն ցավակցում եմ եղբայրական վրաց ժողովրդին»:

*) ԵԼԺ 10-ում հեռագիրը թվագրված է հուլիսի կեսեր: Փշավելան վախճանվել է հուլիսի 10-ին, հետևաբար հեռագիրը կարող էր լինել ամենաուշը հաջորդ օրը:

**) Այս բառը տվյալ կապակցության մեջ անհասկանալի է. հավանաբար վրացերեն բնագրից ճիշտ չի թարգմանված:

ԵԼԺ 10, 226 ՈՒՅ 1, էջ 244:

Հուլիսի 17 - Տպագրվում է հոդված՝ «Ճի՞շտ է արդյոք» վերնագրով:

Խոսքը մի միջադեպի մասին է, որտեղ շոշափվում է նաև Թումանյանի անունը: Վանեցի երկու պատանիներ այցելում են Ներսիսյան դպրոց՝ ընդունելության պայմաններին ծանոթանալու: Նրանց պատասխանում են, որ ռուսերենին վատ տիրապետելու պատճառով ընդունվելը գրեթե անհնար է: Բայց եթե դաշնակցական լինեին կամ որևէ դաշնակցականի ճանաչեին, գուցե հնարավոր լիներ նրա միջնորդությամբ անուղղակի ճանապարհով ընդունվել: Պարզվում է, որ պատանիները անկուսակցական են և ճանաչում են միայն Թումանյանին: Դպրոցի ներկայացուցիչը զարմանում է. «Նա դեռ Վա-

նուն դաշնակցակա՞ն է համարվում. նա դաշնակցական չէ, բայց, իհարկե, կարող է որոշ դեր խաղալ: Ձեզ օգնելու համար նա բավական չէ. բայց այ «....»* թերթի խմբագրությունը կարող է ձեզ հեշտորեն ընդունել»: Պատանիներն ասում են, թե երկրին անծանոթ են և ուրիշ որևէ մեկին չեն ճանաչում: Դպրոցի ներկայացուցիչը հավելում է. «Քանի ուրիշին չեք ճանաչում, դիմեցեք էլի Յովի. Թումանյանին, նա կգնա, տեսչի հետ կխոսի և ձեզ կասի հետևանքի մասին»:

Հոդվածագիրը զարմացած է նման ընդունելությունից և եզրափակում է իր խոսքը. «Տալով մերկ ու անպաճույճ իրողությունը՝ ընթերցող հասարակությանն ենք թողնում բոլոր եզրակացություններն ու դատաստանը»:

*) Նկատի ունի «Հորիզոնը»:

«Մշակ», 1915, թիվ 154:

Հուլիսի 19 - Հանլիկ Թումանյանի դիմումը Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանի տեսչին:

Խնդրում է իրեն համարել ճեմարանի աշակերտ՝ զորակոչից ազատվելու համար:*

*) Դիմումի վրա մակագրված է. «Բաց նամակով հայտնված է տեսչի՝ Էջմիածնում չլինելու մասին»:

ԹԹ, 340: ՊԱ, ֆ. 312, քղթ. 24, գ. 61, ք. 14:

Հուլիսի 19 - Տպագրվում է Վ. Մենակի «Война и грядущее армянской литературы» հոդվածը, որտեղ հեղինակը, պատմական էքսկուրս կատարելով և խոսելով հայ ժողովրդին բաժին հասած դաժան ճակատագրի մասին՝ նկատում է, որ հատկապես վերջին շրջանում հայ գրողների հետաքրքրության թեման դարձել է արևմտահայերի ազատագրության հարցը: Նույնիսկ այն գրողները, որոնք հեռու են նացիոնալիստական միտվածությունից, դարձյալ անտարբեր չեն անցնում հայության ողբերգական իրադարձությունների կողքով՝ իրենց տարբեր ստեղծագործություններով տուրք տալով ժամանակի պահանջներին: Որպես օրինակ հիշում է Յովի. Թումանյանին և նկատում, որ հայ գրականությունը առաջիկայում ևս սերտորեն կապված է լինելու պատերազմի և Հայկական հարցի հետ: Բայց կարծում է, որ հայ գրականության շրջադարձային փոփոխությունները հեռու չեն: Վերջին 10 տարիներին հրապարակում շարունակում են իշխել ծանոթ աստղերը՝ Հ. Թումանյան, Ա. Ահարոնյան, Շիրվանզադե, Նար-Դոս, Փափագյան, Ավ. Իսահակյան, Երիտասարդ-

ներից՝ Վահան Տերյան: «В их произведениях страдания, мечты и стремленья армянина, уступили место переживаниям, мечтам и исканиям культурного человека во обще... Ведь должен же этот мировой потоп крови и слез смыть все прошлые несправедливости и избавить от нас кошмарного наследия веков- турецко-армянского вопроса и открыть новую эру в истории культурного развития армянского народа. И тогда сбудутся слова поэта-армянина:

«И поэты, не осквернившие своих уст проклятьем,
Воспоют новыми словами новую жизнь твою,
О, новая родина,
Могучая родина!».
«Кавказское слово», 1915, рիվ 163:

<Հուլիսի կեսերից մինչև 24-ը> - Հանգստանում է Թիֆլիսի մերձակա Տաբախմեխ ամառանոցում:

Նվարդ Թումանյանը հիշում է. «Նոր էր վերադարձել Տաճկահայաստանից, եղել էր Ալաշկերտի հովտում, Աբաղայի դաշտում, ապա Վան, տեսել էր նահանջը, գաղթը, Սարիղամիշի խուճապը... Այդ դեպքերի ճնշող տպավորության տակ էր և չէր կարողանում հանգստանալ: Հիասթափված էր, վրդովված, հոգնած, կես հիվանդ:

Օր օրի ավելի ընկճվեց, առողջական դրությունը վատանում էր և ծանրանում: Այլևս առաջվա ժպտադեմ, զվարթ, ուշադիր մարդը չէր:

Կարիք ուներ բուժվելու, տևական հանգստի:

Բժիշկները խորհուրդ էին տվել գնալ Հանքային Ջրեր՝ Կիսլուվոդսկ, բայց չհաջողվեց: Որոշվեց ընտանիքով գնալ Թիֆլիսի մոտակա ամառանոցներից մեկը՝ Տաբախմեխ. դա ավելի շուտ գյուղանման մի վայր էր, որտեղ հարմարություն չկար: Աշոտ Աթանասյանը մի տուն գտավ և տրամադրեց մեզ:

ԼԿ, 154: ՆԹՀԶ, 122, 1987:

<Հուլիսի երկրորդ տասնօրյակ>, Տաբախմեխ - Անակնկալ հանդիպում Թումանյանի հետ:

«1915 թ. ամառային մի կիրակի», Միքայել Մանվելյանը և Լևոն Քալանթարը Տաբախմեխյում Աշոտ Աթանասյանի ամառանոցը փնտրելիս պատահմամբ ընկնում են Թումանյանի ամառանոցը: Անակնկալ հանդիպումը մեծ ուրախություն է պատճառում բանաս-

տեղծին: Միքայել Մանվելյանը հիշում է. «...Մեր առաջ կանգնած էր Թումանյանը, պայծառ ժպիտը դեմքին: Չայնի մեջ այնպիսի ուրախություն էր զգացվում, որ կարծես ավելի լավ, ցանկալի հյուրեր չէր կարող սպասել»:

Թեյի սեղանի շուրջ ծայր է առնում թումանյանական գրույցը. «Ա՛յ տղա, շատ լավ տեղ է ես մեր Տաթախմելան, կասես ըսկի ես աշխարհումը չենք, կասես ըսկի կռիվ էլ չկա: Մեկ-մեկ չենք էլ հավատում էդ լրագրերի գրածին: Էսպես անդորր, խաղաղ վայր դժվար է ուրիշը գտնել: Աշոտի գյուտն է:

Թումանյանը թեև ասում էր, թե ծանծրացել ու հոգնել է քաղաքից,- շարունակում է հուշագիրը,- բայց, ինչպես երևում էր, կարոտել էր: Ամեն բանից հարց ու փորձ էր անում, տեղեկություն էր հարցնում. տպավորությունն այնպես էր, որ կարծես վաղուց մարդ չի տեսել ու հագիվ ձեռքը մարդ է ընկել»:

Հետո դուրս են գալիս բանաստեղծի դուստրերի ուղեկցությամբ, հանդիպում են Աշոտ Աթանասյանին և Ռոմանոս Մելիքյանին և խմբով, ուրախ կատակելով, դիմում են Նիկոլ Մատինյանի ամառանոց, որտեղ էլ շարունակվում է խնջույքը: «Մեր խրախճանքը տևեց մինչև լուսաբաց,- հիշում է Մ. Մանվելյանը:- Երգ, պար, ծիծաղ, ճառեր, Թումանյանի թամադայությունը... Վիշտ, հոգս, պատերազմ, ամեն ինչ մոռացված էր, խենթ քեֆ էր: Թումանյանը երեխայի նման ուրախ էր: Ամեն բան սիրելի էր նրան, ամեն բան դուր էր գալիս նրան: Նույնիսկ իմ երգած ժողովրդական երգը ոգևորում էր»:

ԹԺՀ, 687-693:

Յուլիսի 24* - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 166) «Հանգիստ ու լիքը հավատով» հոդվածը:

Հիշեցնում է, որ կոտորածներն ու տեղահանությունները նորություն չեն մեր ժողովրդի համար. «Մեծ է փորձությունը և աղետն ահռելի: Բայց մենք երեկ-մեկելօրվա ժողովուրդը չենք, առաջին անգամը չենք տեսնում էս տեսակ աղետ, և ինչ որ տեսնում ենք, անօրինակ չէ մեզ համար»:

Սակայն «եսօր շատ ավելի բարեհաջող են պայմանները»: Աղետից փրկվածները ապաստան ունեն Արևելյան Հայաստանում, ռուսական բանակի ու պետության հովանավորությամբ, Ռուսաստանից մինչև Ամերիկա օգնության ձեռք են մեկնում աղետյալների. «Էս ամենը լավ պետք է իմանա ամեն մի հայ ու միշտ հիշե, ոչ ոք

հուսահատի ու վհատի խոսք չպետք է անի, որ հատուկ է ձախորդ վայրկենին, փորձությունը, ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմավորելու մեր վատթար թշնամիներին և դարման անենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը՝ մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով»:

*) ԵԼԺ 7-ում տպագրության ամսաթիվը նշված է հուլիսի 26:

ԵԼԺ 7, 176-177, 618:

Հուլիսի 25 - Տաբախմե՛լայի ամառանոցից վերադառնում է Թիֆլիս:

Նվարդ Թումանյանը հիշում է. «Նոր էինք տեղավորվել ամառանոցում: <...> Ժողովրդի նահանջի և գաղթի լուրը հասավ ամառանոց. նրա մտքերը նորից փոթորկվեցին և նույն երեկոյան որոշեց գնալ Էջմիածին՝ գաղթականությանն առաջին օգնություն հասցնելու»:

ԼԿ, 154: ՆԹՅԶ, 122-123, 1987:

Հուլիսի 25, Թիֆլիս - Հեռագիր Էջմիածին՝ Գարեգին Հովսեփյանին.*

«Прошу немедленно выслать удостоверение, что сын мой Амлик состоит учеником Академии.

Ованес Туманян»:

*) Տե՛ս նաև հուլիսի 19:

ԵԼԺ 10, 226:

Հուլիսի 25 - Վրացական «Սախալխո գազետի» թերթի խմբագրության պաշտոնական գրությունը Թումանյանին.

«Г-ну председателю Кавк. Общ. Писателей армян

В 1186 и 1187 номерах нашею газеты 1914 года печаталось объявление Вашего Общества и досих пор нам никто не заплатил следуемые. В редакции «Оризон» дали Ваш адрес и обращаюсь просбою уплатить нам, так как уже больше года».*

*) Գրության ներքևում՝ Թումանյանի մակագրությունը. «Ստուգել և վճարել: Նախ . Հ. Թումանյան»:

ԹԹ, 3561:

Հուլիսի 28 - Թիֆլիսից մեկնում է Էջմիածին՝ գաղթականներին օգնություն կազմակերպելու նպատակով:*

*) Ջորավար Անդրանիկը հիշում է. «1915-ին, երբ Վասպուրականը գրավվեցավ ռուսներեն, թումանյան Վան եկավ տեսնելու իր ժողովուրդն ու հայրենիքը ավելի մոտեն: Ի՞նչ տպավորություններով վերադարձավ՝ չեմ գիտեր, բայց երբ 1915-ին Մեծ գաղթը եղավ ռուսներու կեղծ նահանջով, բանաստեղծը իր տունը, իր ընտանիքի վայելքները թողած, եկավ իր երկու չափահաս աղջիկներուն հետ Էջմիածինի, Իգդիրի և Երևանի փողոցներուն և վանքի պատերուն տակ խռմված գաղթականներուն օգնելու: Վարցավեն, երբ ամեն օր հարյուրավորներ կմեռնեին, այդ փոքրիկ ձեռքերը գիշեր ու ցերեկ իրենց կյանքին զնով կգործեին կյանք մը փրկելու վարցավի ճիրաններեն: Թումանյան կրնար անփույթ ու անտարբեր իր ցեղի ցավին երջանիկ կյանք մը ապրիլ: Կրնար կեղծ բառերով և փուռ արցունքներով, նստած և ընկողմանած ճոխություններու մեջ՝ հայրենիքի վիշտը երգել թուղթի վրա... Կրնար ամառանոցներու և հանքային ջուրերու հեշտանքը վայելել: Կրնար հարստանալ և փառքերու տիրանալ, բայց այս բոլորը արհամարհեց իր ցեղին բեկորներու համար ու տքնեցավ անոնց հետ, անոնց ցավն ու վիշտը բաժնելով: Իր արենակիցներուն դառն վիճակը և չարչարանքները խլեցին իր խնդում ճակատեն ու աչքերեն ժպիտն ու ծիծաղը, անթղելով իր սրտի մեջ իր ցեղին ցավը: Այդ ցավը մաշեցուց, հատցուց զինք, միմչև որ մահը վերջ դրավ իր խոցող խորհուրդներուն, ա՛լ չի զգալու, ա՛լ չի տառապելու ու չի վիճաբանելու կեղծ և ոչ հարազատ ազգասերներուն հետ...» (ԹԺՅ, 551-552):

ԵԼԺ 8, 635:

Յուլիսի 29 - Լինում է Իգդիրում: Հանդիպում է Էջմիածին դիմող փախստականների խմբերին: Նրանց պատմածից գրառումներ է կատարում ծոցատետրում:

Քաղվածքներ ծոցատետրային գրառումներից.

«Թուրքերն ու քրդերը հայ գյուղերում կոտորելիս ամեն մի տեղ մի ձև են մտածել – մի տեղ խաչել են ու եփել կամ խորովել – ինչպես Գործոթ ու Տիրամերիկ, մի տեղ փորերը ճղել են ու աղիքներով զանազան խաղեր հորինել – վզերով, ոտներով փաթաթել են – մի տեղ մորթոտել են, մի այլ տեղ գետն են ածել կապած (Աբաղա, Բերկրու կամուրջը), մի այլ տեղ (Խնձորկեն) (100 տնից ավելի) բռլորին՝ երեխաներին ու կանանց կախել են իրենց տներում օջորքների գերաններից (տղամարդկանց ծորումն էին կոտորել)»:

«Վանի նահանջի ժամանակ, երբ բոլոր ժողովուրդը գնաց, պառավները մնացին իրենց դռներին նստած:

Վանեցիներից շատերը իրենց տները կրակում են - էնպես հեռանում. ոմանք էլ բանալիները տալիս են կամավորներին – թե դուք կրակեցեք մեր գնալուց հետո:

Մուշի դաշտից նահանջելիս (Անդրանիկի) կամավորական հա-
յերը անցնում են Արճեշ և գյուղերն՝ իրենց տները տեսնելու - գնում
են տեսնում բոլոր իրենց ընտանիքները, բոլորը մորթոտած թափած:
Իրենք էլ հրացանները դնում են գոգներին ու իրենց կտուրներին
նստում: Թե դուք գնացեք, մենք պետք է մնանք, էլ չենք գալու:
Պետք է սպասենք, մինչև քուրդը ու թուրքը գան – մենք նրանց սպա-
նենք - նրանք մեզ - վերջանա: Ու մնում են կտուրներին նստած»:

Կարեի (Ղարա) կոմենդանտը չի թողնում ջուր խմեն գաղթա-
կանները աղբյուրից, թե կվարակեն - իսկ իրենք զինվորները բերում
են բաժակը 5-20 կոպեկով ծախում: Քրդերն էլ ձյուն են բերում ամեն
մի գունդը, բուռը 5 կոպեկով: Կոմենդանտը խլում էր փախչողների
զենքերը»:

«Վանից փախչելիս առանց красных красот-ը վանեցիների
դաշնամուրը և թալանը բարձում են կառքերին ու փախցնում – 125
հիվանդ ռուս տեղում են թողնում: Խալիները բարձած ուղտերին ու
կառքերին: Մնացին և մեծ քանակությամբ ռումբեր ու պահրա:

Բիթլիս 7 տարեկանից վեր բոլոր արուներին հավաքել են կա-
զարմաները ու ամեն օր 200-ական հանել քաղաքից դուրս, իրենց
մեծ փոսերը և փորել տալիս ու կոտորում ածում մեջը: Իսկ կանանց
քշում են ներսերը: Դատվան և շրջակայքում ցորենի հորերը դա-
տարկել են, ժողովրդին ածել մեջը, ծածկել»:

«Փախուստի ժամանակ մի կոզակ չկար, որ թուրքից խալի
չունենար քաշած»:

«Հայերից խլած զենքերից, ասում էր Անդրանիկը, ես ինքս եմ
գոռով գնացել հանել զինվորների սայլերից»:

«Շատախեցիք գաղթելուց առաջ կոտորել են իրենց ծերունի
հայրերին ու մայրերին ու հիվանդներին – իրենց ձեռքով թաղել -
էնպես եկել»:

«Կային այլ տեղերից, շալակած ոտով բերում էին իրենց պա-
ռավ ծնողներին»:

«Փոքրիկ 10-12 տարեկան երեխաները շալակած իրենց փոքր եղբայրներին ու քույրերին: 4-5 տարեկան երեխաները օրական 30 վերստ ճամփա են եկել»:

ԵԼԺ 8, 401-404:

Յուլիսի 29 - Թիֆլիսի քաղաքային զինվորական ատյանի նախագահ Կանանովի հեռագիրը Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանի վարչությանը:

Ուզում են ճշտել, թե արդյոք Համլիկ Թումանյանը ճեմարանի աշակերտ է:*

*) Հեռագրի վրա ճեմարանի վարչության կողմից մակագրված է. «Амлик Туманян не состоит»:

ՀԱԱ, ֆ. 312, թղթ. 24, թ. 16:

Յուլիսի 29, ուշ երեկոյան - Հասնում է Էջմիածին:

ԼԿ, 156:

Յուլիսի 29, ուշ երեկոյան, Էջմիածին - Այցելում է Գևորգ V կաթողիկոսին: Խոսում են բանաստեղծի որդուն՝ Համլիկին որպես ճեմարանի սան վերականգնելու մասին (տես հուլիսի 25):

ԼԿ, 159: ԵԼԺ 8, 405:

Յուլիսի 30, Էջմիածին - Հեռագիր Թիֆլիս՝ Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին:

Համառոտ ներկայացնում է փախստականների՝ «Իգդիրի վրայով Էջմիածին» ձգվող անվերջանալի հոսքը, նրանց, հատկապես երեխաների, օրհասական կացությունը և ավելացնում.

«Իգդիրում և Էջմիածնում առայժմ հավաքված է այդպիսի 500 երեխա մոտավորապես: Էջմիածնի կոմիտեն նրանց տեղավորել է ճեմարանի շենքում: Նրանք բնակարան ու կերակուր ունեն, սակայն չկա կանացի հոգատար մի ձեռք, որ սրտագին ջերմությամբ կարկառված լինի դեպի այդ փոքրահասակ դժբախտ զոհերը:

Թող այս երեխաների մանկական աղերսը լսեն մեր սրտացավ տիկնայք, օրհորդները և հայ կանանց հասարակական կազմակերպությունները: Ցանկալի է, որ նրանք անհապաղ և ամեն տեղ կազմակերպեն մի առանձին կոմիտե և ուղարկեն Էջմիածին՝ վարելու համար այստեղ մանկական ապաստարանը, մինչև որ վերջնականապես որոշվեին այս երեխանց հետագա վիճակը»:

Հեռագիրն ստորագրել են Սամսոն Հարությունյանը և Հովհ. Թումանյանը:

*) Շուտով մամուլը հաղորդում է (տե՛ս «Հորիզոն», 1915, թիվ 178, 182), որ փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեն արդեն կազմակերպել է խմբեր, որոնք պետք է գործեին Իգդիրում, Էջմիածնում, Ղիլիջանում:

ԵԼԺ 10, 227, 603:

Հուլիսի 30-ից մինչև օգոստոսի 4, Էջմիածին - Գրառումներ ծոցատետրում.

«Երեկ իրիկուն եկանք - գիշերը: Ամբողջ ճամփի շուրջը լիքն էին. կամ քնած, կամ կրակների առջև նստած: Լուռ, տեղ-տեղ տնքում են, տեղ-տեղ լաց են լինում.

-Ո՞րն է Էջմիածնի ճամփեն:

Ջուր չկա: Շատախցի երեխան ու ընտանիքը: Էջմիածին – լիքը:

Առավոտը – լիքը ամեն տեղ:

Ժխոր, լաց, խնդիր, հառաչանք, սուգ -

Ծով –

Մեջտեղը դողանջում են Էջմիածնի զանգերը – լայնածավալ հառաչանքի նման - ես երբեք էսքան տխուր չեմ լսել Էջմիածնի զանգերի ձայնը - ո՛ւր, մինչև ո՛ւր են հասնում արդյոք էս հառաչանքն ու կոծը:

Մեռածները թափված առավոտները: Գիշերվա սուգը - գերեզմանը կորուկ... մայրերը՝ ծնկներին մեռած երեխաները – մարդը ծեծում է կնոջը, թե երեխաները որտե՞ղ կորցրիր: Երեխաները անտեր լաց են լինում ճամփեքին գիշերը մթնում –

Պատմում են, թե ինչպես կոտորեցին իրենց ծնողներին, քրոջը տարան, հարսին տարան – քեռուն կտրեցին, քեռակնոջը տարան – տանից քանիսն են սպանվել – քանիսն են մեռել, մնացել... երկար-խառն ու աղքատ, սոված ծարավ շուրջը – վերջ չունի - արևի տակ, փոշու ամպի մեջ – լուռ ու հնազանդ իր ճակատագրին, ոմանք գոհ են, որ ապահով են արդեն - երեխաներ էլ կան, որ ուրախանում են էս հսկայական ուխտագնացության թե զբոսանքի համար...

Կինը անցնում է կողքներս, նայում կառքի մեջ – Սրանք հաց կունենան - բայց չեն տալ... Ինտելիգենտ դեմքեր... տանջված, հոգ-նած, լուռ...

Ծերեր...

Գեղեցիկներ...

Ծօծի երեխաներ...

Անվե՛րջ, անվե՛րջ. մի ծանր ու անվերջ հառաչանքով էջմիած-
նից ձգված են մինչև Վան... իջնում են Զինգիլի բարձրությունից,
Մասիսի թիկունքից անցնում են Արաքսի կամուրջով...

Ես աշխատում էի չնայել Արաքսին ու Մասիսին... Բայց այնու-
ամենայնիվ նայեցի մի անհասկանալի երկյուղով... -

Մասիսի գլուխը ծածկված էր ամպերի տակ -

Արաքսը ձեն չէր հանում - չէր որոտում -

Ծանր ու խոր թշուրմ էր...

Իգդիր - մեր շատ համակրելի Վարդանը հոգնած մրափի մեջ
էր -

Անդրանիկը - դուրսը իր խմբի մնացորդը - ինքը ներսը խոր-
տակված ու հուսահատված...»:

«Էնքան է մեծ եղել տագնապը, որ բոլորն իրենց կորցրել են -
խմբեր, խմբապետներ ու կարգադրիչներ - և մի 20 քրդի հրացանա-
ծգությամբ Բերկրի կամուրջի մոտ, ձորում առաջ է բերել ահագին
խուճապ, իսկ ռուսական զորքը - շատերը հրացանները ձգել են,
փախել - շատերն էլ միայն թալանով են եղել զբաղված: Վանից դեռ
դուրս չեկած զինվորները, կոզակները տներ են մտնում թալանելու,
նույնիսկ Արամի»:

«Մանազկերտ թողել են 30 հազար փութ ցորեն: Վիրավոր
օֆիցերին գցել են կամուրջից գետը: Թուրքերը հանել են - վերքերը
կապել, դրկել ռուսներին ու տեղեկացրել, թե ռուս զինվորները գցե-
ցին գետը»:

«Ղարայի կոմենդանտը, որ շարունակ զինաթափ էր անում
հայերին և խլել է 200-ից ավելի զենք (ծախել քրդերին), մեկինն էլ
խլելիս երբ տեսնում է ընդդիմանում է, սպառնում է՝ թե կասեն զին-
վորի վրա հրացան ես արձակել, գնդակահար անել կտամ:

Ռուսների խուճապը էնքան մեծ է լինում և գլխակորույս, որ մի
ռոտայի 4 թնդանոթ չեն իմացնում - մնում են (Փանչ)»:

«Մշու դաշտի գյուղերում տում են արել ու կրակել ամբող-
ջովին ընտանիքները»:

ԵԼԺ 8, 405-407:

Չուլիսի 30 - Տպագրվում է Յ. Սոլովյանի «Մի թռուցիկ նկատողություն» հոդվածը:

Առիթը «Русское слово»-ի թիվ 163-ում Մենակի այն հոդվածն է, որտեղ հեղինակը, ընդհանուր ակնարկով ներկայացնելով Աբովյանի, Նալբանդյանի, Պատկանյանի, Շահագիրի, այնուհետև՝ Թումանյանի, Ծատուրյանի և Փափազյանի ստեղծագործությունը, կարծիք է հայտնում, թե վերջին 10 տարիների ընթացքում հայ գրականության մեջ ոչ մի նշանակալից արժեք չի ստեղծվել՝ բացի Տերյանից: Առարկելով հոդվածագրին՝ Յ. Սոլովյանը նկատում է, որ հոդվածում ոչ մի խոսք չկա, թե իր նշած տարիներին ինչ են ստեղծել, օրինակ, Ահարոնյանը, Փափազյանը, Թումանյանը: Առհասարակ ռուս ընթերցողի առջև այդպիսի մակերեսային հրապարակումով հանդես գալը լուրջ չի համարում:

«Մշակ», 1915, թիվ 165:

Չուլիսի 31, Էջմիածին - Նվարդ Թումանյանի նամակը Տաբախմեալ՝ եղբորը՝ Արտիկին:

Մասնավորապես գրում է. «Հայրիկն ու ես պատրաստվում ենք, հիմա գնալու ենք Երևան: Որբանոցի երեխաներից 125 հոգի պիտի փոխադրել Երևան, 43 ծովեր երեխա կա՝ պահող չկա:

Մեր գնալը անորոշ է: Գաղթականները արդեն ցրվում են, որբերը նորից շատացել են:

Երևան գալուց նորից կգրեն: Եթե հաջողվի եկած որբերին ենտեղ տեղավորել, շուտ կգանք:

Ես նոր գործ եմ սկսել. վանեցիներին ու շատախցիներին շաքար եմ բաժանում: Մենք լավ ենք:

Սարյանը էստեղ է, Ադոնցը եկավ:

Ճեմարանը հիվանդանոց են դարձրել: Հայրիկը շատ գոհ է, որ մերոնք Թիֆլիս դեռ չեն եկել: Ինքը շատ է ուզում գալ, հոգնել է, բայց գործը կիսատ թողնել չի կարող»:

ԻՍ, 70:

Չուլիսի 31 - Համլիկ Թումանյանի խնդրագիրը Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանի վարչությանը:

Հայտնում է, որ համաձայն կաթողիկոսի կարգադրության (տե՛ս հուլիսի 29, ուշ երեկոյան)՝ իրավունք ունի վերստին համարվելու ճեմարանի սան:

ԹԹ 336: ՊԱ, թղթ, 24, գ. 61, թ. 16:

Հուլիս, էջմիածին - Հանդիպում է Արսեն Հացագործյանին:

Հացագործյանը հիշում է. «Թումանյանի հետ նախավերջին հանդիպումը եղավ էջմիածնում, 1915 թ. հուլիսին: Վաճառում նրա պատվին կազմակերպված խնջույքից հազիվ մի ամիս անց «հուլիսի ու լույսի հայրենիքը» վերածվել էր արդեն «ողբի ու որբի հայրենիքի»: Եվ այդ որբացած ժողովուրդն անհույս ու անճար թափվել էր էջմիածնի պատերի տակ՝ սպասելով իր մահվան... Եվ մահը չէր ուշանում:

Թումանյանն շտապել էր էջմիածին՝ հնարավորության սահմաններում օգնություն կազմակերպելու գաղթականության համար: Նա աշխատում էր այնտեղ գիշեր ու ցերեկ՝ մեղմացնելու գաղթականության վիշտն ու տառապանքը:

Այդ օրերին ես հանդիպեցի Թումանյանին:

- Ի՞նչ ես անում ես մահաստանում, ինչո՞ւ, ինչո՞ւ չես հեռանում էստեղից, ոչ մի րոպե ուշանալու խորհուրդ չեմ տա. հենց էսօր եթե ճանապարհ ընկիր ընտանիքիդ հետ, և որքան հեռու, էնքան լավ:

Բանաստեղծի խոսքերն այնքան վճռական էին և այնքան ազդող, որ իրոք նույն օրն եթե ընտանիքիս հետ հեռացա էջմիածնից դեպի Թիֆլիս, այնտեղից էլ ուսուցչական պաշտոնով դեպի հեռու Ջաքարալայի շրջան:

Բանաստեղծն իր խորհրդի հետ չմոռացավ նաև մինչև Թիֆլիս երկաթուղու տոմսի փողը տրամադրել՝ մտածելով, որ հավանաբար ես դրանի նեղություն կունենամ»:

ԹԺՀ, 584-585:

Հուլիս - Վահան Տերյանի նամակը Թիֆլիս՝ Նվարդ Թումանյանին Պետերբուրգից:

Տեղեկացնում է, որ «Сборник армянскоу литературы» ժողովածուի համար Թումանյանից ընտրել է հետևյալ գործերը՝ 1. «Փարվանա», 2. «Աղավնու վանքը», 3. «Պողոս-Պետրոս», 4. «Տրտմության սաղմոսներից» առաջինը, 5. «Վայրենք», 6. «Հայոց վիշտը», 7. «Ախթամար» և հավանաբար «Գիքորը»:

ՎՏ ԵԺ III, 387:

Օգոստոսի 1 - Գրություն թումանյանին՝ որբանոցի գրասենյակից.

«Պարոն կառավարչին

խնդրում ենք այս երկու նորեկ որբերին ևս ընդունեք:

Գրասենյակ»:

ԹԹ ԳԳ, 1079, 31/4-1:

Օգոստոսի 2 - Գրություն որբանոցի վարչությանը.

«Խնդրում ենք այս երեք որբերին ևս ընդունեք:

Գրասենյակ»:

ԹԹ ԳԳ, 1079, 31/4-2:

Օգոստոսի 2 - Գրություն որբանոցի վարչությանը.

«Այս չորս երեխաները մայրակոորույս են, խնդրում ենք ընդունեք:

Գրասենյակ»:

ԹԹ ԳԳ, 1079, 31/4-2:

Օգոստոսի 2 - Սահակ վարդապետից երկտող-խնդրագիր թումանյանին.

«Սիրելի Զովհաննես թումանյան,

Այս երեխան, որի համար խնդրեցի ընդունել որբերի կազմում, գրաբերս է, խնդրեմ չմերժել խնդիրս: Մոտ մի շաբաթ է, որ դռանս նստած լաց են լինում յուր փոքրիկ քրոջ հետ հացի համար»:

ԹԹ ԳԳ, 1079, 31/4-3:

Օգոստոսի 3 - Բժիշկ Օ. Գ. ստորագրությամբ խնդրագիր մանկանոցի տեսչությանը.

«Խնդրեմ սույն փոքր երեխան, սրա մայրը հիվանդ պառկել է մեր հիվանդանոցում. ընդունեք ձեր մանկանոցում:

ԲԺ. Օ. Գ.»:

ԹԹ ԳԳ, 1079, 31/4-3:

Օգոստոսի 4 - Տպագրվում է («Հորիզոն», 1915, թիվ 173) թումանյանի հեռագիրը (տե՛ս հուլիսի 30) Թիֆլիս՝ Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին՝ Էջմիածնից:

ԵԼԺ 10, 127:

Օգոստոսի 4-ից մինչև 19-ը, Էջմիածին - Գրառումներ ծոցատետրում.

«Շատախ 4503
Վան և շրջանները 4630
Գյավաշ 4510
Հայոց ձոր 5570
Կարկառ 2730
Կարճկան 760
Մոկս 4600
Ոզմ 1036
Աղջավազ 4500
Թիմար 4750
Խլաթ-Բիթլիս և այլ 8196

45. 785

որբեր 2000, հիվանդներ և գյուղի տներում բնակվող...»:

«Արտ. Աբեղյանն ու Բաբկեն վարդապետը խոսում են, թե ինչու ես շատ ընդունում – թե մայրեր ունեն շատերը, բերում են ներս գցում և այլն:

Մայրերը, հիրավի, բերում են, հավատացնում են, որ որբ են, գտել են, հայր ու մայր չունեն, ու աղաչում են ներս ընդունել կիսանվաղ երեխաներին. երեխան հաճախ կպչում է կնոջը – մանի կամ մարե ճչալով ու մատնելով մոր խաբեությունը:

Ոմանք դնում են մանկանոցի դռանն ու իրենք հեռանում, կորչում:

Երբ մի մանուկ - հիվանդ, մի իրիկուն տեսա դռան առջև ընկած և ասին՝ տե՛ս ինչ անգութ գազաններ են – ձգել են գնացել – մտածեցի, որ մայրը մոտիկ պիտի լինի – նայեցի չորս կողմը – ծառերից մեկի տակ թաքնված նայում էր մայրը:

Համո՞ն* ու ընկ. իբր խաբեության օրինակ առաջ էին բերում, թե մի վանեցի հայ վաճառական, որ ինքը ճանաչում է անձամբ, բերեց իր երեխան ներս ձգեց թաքուն ու հեռացավ»:

*) Հավանաբար բժիշկ, հասարակական գործիչ Օհանջանյանն է՝ 1920 թ. Հայաստանի Հանրապետության վարչապետ (ԵԼԺ 8, 639):

«Երեխաներից ոմանք չեն մնում, ծղրտում են՝ մարե՛ - դուրս են վազում –

Մեկն ինչպես էր դողալով աղաչում – Հալա՛վս ալ կհանեն ձեզ կուտամ, թողեք մայրիկիս երթամ (մեր տվածն էր հալավը):

Կան էնպիսիներն էլ, որ բերում են տալիս խուզենք, լողաց-նենք, շոր հագցնենք, ուտեցնենք – ու գալիս են տանում, թե կորցրել ենք»:

«Երեխաներից ոմանք էնպես են սովորել, որ ճաշելուց հետո էլ փեշերս բռնում են (թեև հագնված են, պատսպարված և կերա-կրված) - հայրիկ, ես որք եմ, խեղճ եմ, նա հեր ունեն, նա մեր:

Որ ասում էի՝ նոր շորեր պիտի կարենք ձեզ համար – ինչպես էստեղից, էնտեղից գլուխ էին բարձրացնում – Հայրիկ, ինձ համար կարմիր հալավ կարեցեք...»:

«Մինը հանկարծ լաց է լինում, մի մասն էլ սկսում են նրան հե-տևել, մի քանիսը հանդարտ մայում են նրանց, իրենց չորս կողմը ու շարունակում ուտել – ոմանք էլ փիլիսոփայորեն մտածում են լուռ ու լռում»:

«Առհասարակ շատ են ուզում ներս ընկնել և ուղղակի ներս են ընկնում – իրենք - երեխաներն են աղաչում»:

«Վանեցի մի աղջիկ չորեքթաթի տալով է հասել Էջմիածին: Շատ են և կույրերն ու այլ հաշմանդամները»:

«Խուզելու ժամանակ աղջիկ երեխաներից ոմանք ահագին աղաղակ են բարձրացնում ծամերի համար:- Ես կերթամ, հալավս ալ կթողնեն, ծամերս ի չեմ տար...»:

«Երկու երեխա - մեկը գլուխը դրել է մյուսի վրա ու քնել: Վեր կացրի - գլուխը վեր քաշեց – որք ենք – հարներս Բերկրի զարմվեց – մարներս մեռավ – մենք որք ենք, նա հեր ունենք, նա մեր... էս քու ախպե՞րն է - ուզեցինք վեր կացնել մեռած էր – կանչեց, կանչեց – իրեն հեռացրինք: Մնաց, մնաց – ծո խաչո, խաչո:

Կգա, կգա, նրան էլ կբերենք:

Գիշերները – համատարած տնքոց, հառաչանք, տեղ-տեղ լաց, ամենքը թափված - զետնատարած - երբեմն-երբեմն սև ստվերներ: Հաց են բաժանում վարդապետները կամ եպիսկոպոսները կանանց ու թույլերին»:

«Մշեցիք (555) 750 հոգի, հաշիվ չեն մտցրել – իրենք էլ չեն աղմկել:

Ծամերը երեխան չէր թողնում կտրեն, մերն էլ էր խնդրում: Վերջը փախավ – ու գտանք մոր հետ մեռած»:

Հաց բաժանելիս վանեցիք մի շրջան իրենց թիվը ցույց էին տվել 1900. ստուգելուց հետո դուրս եկավ, որ մի զրո ավելացրել են – ոչ թե 1900 են, այլ 190»:

ԵԼԺ 8, 407-410:

Օգոստոսի 4 - «Մեղու» աշխատանքի տան Թիֆլիսի հայ կանանց վարչության նամակը էջմիածին՝ Թումանյանին:

Կարդացել են բանաստեղծի հեռագիրը Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին (տե՛ս հուլիսի 30), ուր շարադրված են աղեկտուր մանրամասներ գաղթականների կյանքի, 500-ից ավելի որբ երեխաների առողջական վիճակի մասին և կոչ է արվում կազմակերպել հայ կանանց օգնական խմբեր:

Տեղեկացնում են, որ աշխատանքի տան վարչությունը ուղարկում է իր ներկայացուցիչներին՝ կատարվելիք աշխատանքներին մոտիկից ծանոթանալու համար: Որքան հնարավոր է շուտ թող վերադառնան՝ անմիջապես գործի անցնելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1728 (190 III g.):

Օգոստոսի 5 - Շատախցի հինգ ուսուցիչների ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ էջմիածնից:

Հայտնում են, որ իրենց ժողովուրդը էջմիածնից գնում է: Որբամոցում իրենց վիճակն անորոշ է: Եթե որևէ աշխատանքային հանձնարարություն կա, իրենք կմնան, հակառակ դեպքում մյուսների հետ կգնան: Սպասում են բանաստեղծի կարգադրությանը:

ԳԱԹ ԹՖ, 1897 (175 III g.):

Օգոստոսի 5 - Բժիշկ Պյուլպյուլյան ստորագրությամբ երկտող-խնդրագիր Թումանյանին.

«Հարգելի պրն. Թումանյան,
Սույն երեխայի մայրը մեր հիվանդանոցի մեջ մահացավ: Կա-
րելի՞ է, որ ընդունվեր որբանոց:
Հարգանք՝ բժիշկ Պյուլպյուլյան»:
ԹԹ ԳԳ, 1079, 31/6:

Օգոստոսի 6 - Մուշեղ Թումանյանի նամակը Էջմիածին՝ հորը՝
Իգդիրից:

Գրում է, որ իր զինվորի երեխան, որ մոր հետ հիվանդանոցում
էր, վախճանվել է: Դրա համար զինվորին «մի ամսով և ավելի» ար-
ձակել է՝ «իր գործերը կարգի բերելու»:

Խնդրում է հորը, որ եթե զինվորի կնոջը հիվանդանոցում տե-
ղավորելու խնդիր լինի, «մի քիչ աջակցի», օժանդակի, որ նրան էլ
նյութական օգնություն ստացողների մեջ նախատեսի:

ԻՍ, 70:

Օգոստոսի 6 - Մատթեոս եպիսկոպոսի երկտողը Թումանյա-
նին՝ Էջմիածնից:

Խնդրում է որբանոց ընդունել մի անտեր, անխնամ որբ երե-
խայի:

ԳԱԹ ԹՖ, 1674 (491/2):

Օգոստոսի 6 - Ղևոնդ ստորագրությամբ խնդրագիր-նամակ
Թումանյանին՝ Էջմիածնից.

«Պ. Թումանյան,

Մենք տեսնում ենք, որ բոլոր անոնք, որոնք օրը աշխատում են
քանի ժամ միայն, գնում են ճաշարան, օրը երեք անգամ ճաշում են
առողջ ու փառաք: Տեսնում ենք նաև ուրիշ շինությանց մեջ աշխատող
մեր գործակիցներ էլի նույնպես ճաշում են ճաշարանում, ստանում
են հագուստ և այլն, և այլն: Մենք և մերինները զուրկ ենք այս բոլո-
րից: Մինչև այսօր մեր կերածն է եղել որբերի կերածից և մեր խմածը
նույն թեյից, և երբեմն էլ անմաս ենք մնացել: Վերջապես մինչև այ-
սօր մեզ տրվել է օրվա համար 15-20 աշխատավորի բաժին միայն
կես վեդրո սուր: Այս կյանքը չենք կարող տանել: Խնդրում ենք այս
մասին պետք եղած կարգադրության իրագործումը:

Ձեզ հարգող ճ.ն.-* կառավարիչ Ղևոնդ»:

*) ճ.ն.- հավանաբար՝ ճաշարանի ներսի:

ԹԹ ԳԳ, 1079, 31/7:

Օգոստոսի 7 - Օլգա Թումանյանի նամակը Էջմիածին՝ ամուսնուն՝ Թիֆլիսից:

Խնդրում է զբաղվել որդու զինվորագրության հարցով: Հանդիմանաճքով գրում է. «Քո երեխաներին թողել ես անտեր, ուրիշի երեխաներին ես պահպանում, դրանք 4-5 տարեկան են, իսկ քոնը 18-19 տարեկան, ով որ իմանում է ծանոթներից, ծիծաղում է մեզ վրա»:

ԹԹ ՓԲ, 2745:

Օգոստոսի <8-9>, Էջմիածին - Նամակ Թիֆլիս՝ ընտանիքին:

Պատասխանելով կնոջ հանդիմանաճքին (տե՛ս օգոստոսի 7)՝ գրում է. «Անկարելի է նկարագրել, թե ինչ զարհուրելի աղետ է, որին ակամատես եմ ես: Բոլոր ծանապարհները, բոլոր շինությունները, բոլոր բնակությունների շուրջը, հանդերը լիքն են մերկերով, քաղցածներով, հիվանդներով, լացողներով, տնքացողներով, մեռնողներով: Երեխանե՛ր, երեխանե՛ր, երեխանե՛ր... անտեր, սոված, հիվանդ: Բոլորը, սկսած մրանից, որ շատ ժամանակ չէ ինչ ուտել ելել ու ման է գալիս, բոլորը փախել եկել են 3-500 վերստ սարսափած, սոված: Այժմ էլ ինձ է վիճակվել էդ երեխաների խնամատարության գործը, դրանց ապաստարանը»:

Որդու զինվորագրության գործի մասին տեղեկացնում է. «Համլիկի գործը վատ եղավ: Կաթողիկոսն առաջին օրը խոստացավ ու հրամայեց հեռագրեն, որ Համլիկը ճեմարանի աշակերտ է: Շնորհակալություն արի, զրույց արինք ու դուրս եկանք (տե՛ս հուլիսի 29, ուշ երեկոյան, հուլիսի 31): Մյուս առավոտ իմացա, որ իրիկունը թղթերը բերել է տվել, տեսել է աշակերտ չի համարվում, հրամայել է հեռագրեն, թե աշակերտ չի (տե՛ս հուլիսի 29) մինչև հասա - արդեն հեռագիրը գնացել էր»:

Սպասում է, որ Թիֆլիսից կանայք, աղջիկներ կգան, մասն իր դուստր Նվարդը՝ որբ երեխաներին խնամելու, գաղթականներին օգնելու համար:

ԵԼԺ 10, 228:

Օգոստոսի 9 - Մամուլում հաղորդագրություն՝ պատերազմից վնասվածներին օգնող հայ կենտրոնական կոմիտեի նախաձեռնության մասին.

«Հայկական կենտրոնական Կոմիտեն Էջմիածին ուղարկեց օր. օր. Ն. Թումանյանին, Ա. Դանիելյանին, Հ. Ջորյանին և Կ. Լանոյա-

նին, որոնք սիրահոժար և ինքնական հանձն են առել առանց վարձատրության գործել փախստականների կարիքներն հոգալու համար» (տե՛ս հուլիսի 30, օգոստոսի <8-9>):

«Հորիզոն», 1915, թիվ 178:

Օգոստոսի 9, Էջմիածին - Տեղի է ունենում գաղթականության գործով զբաղվող, փախստականներին օգնող գլխավոր հանձնաժողովի նիստը: Որբանոցի վիճակի մասին զեկույց է տալիս Թումանյանը: Մամուլը ներկայացնում է զեկույցի համառոտ շարադրանքը:

«Հովի. Թումանյանը, որ այդ գործի կազմակերպիչն է, տեղեկություններ է տալիս այդ առթիվ: Ճեմարանի շինության մեջ ներկայումս գտնվում են 3000-ից ավելի երեխաներ, որոնցից 100-ը հիվանդ են և կարոտ անմիջական առանձնացման: Երեխաներին խնամում են մոտ հարյուր հոգի: Չափազանց աչքի է ընկնում փախստականներից վերցրած աշխատողների անտարբեր վերաբերումը, և ընդհակառակը, եռանդուն, կատարյալ անձնվեր գործունեություն են ցույց տալիս մի շարք ինտելիգենտ տիկիներ և օրիորդներ: Երեխաների կուտակումը մի շինության մեջ անհնարին է դարձնում նրանց կանոնավոր խնամումը: Օդը ապականված է, թեև աշխատում են մաքրություն պահպանել: Որբանոցում գտնվող երեխաների մեծ մասը անտեր են, իսկ որոշ մասը ունեն ծնողներ, որոնք իրենք են թողել ժամանակավորապես կամ ընդմիշտ:

Հ. Թումանյանը, վերջացնելով իր զեկույցը, առաջարկում է ժողովին խորհել այդ առթիվ ու միջոցներ գտնել այդ դրությունից դուրս գալու համար: Առաջարկում է դիմել Կովկասի բոլոր հայաբնակ քաղաքները՝ կոչ անելով, որ վերցնեն խնամելու որոշ քանակությամբ երեխաների և այլն:

Ժողովը վճռեց հանձնարարել Բաբկեն վարդապետին և պ. Թումանյանին տիկիներից ու օրիորդներից, որոնք աշխատում են հիվանդանոցում, կազմել մի մասնաժողով և մշակել որբանոցին վերաբերող բոլոր կարիքներն ու պահանջները և ներկայացնել գլխավոր հանձնաժողովի հետևյալ նիստին»:

«Հորիզոն», 1915, թիվ 187:

Օգոստոսի 9 - Մկրտիչ Եղիազարյան ստորագրությամբ նամակ Թումանյանին Էջմիածնից:

Գրում է, որ ինքը Վանա գերմանական գիշերօթիկ դպրոցի սաներից է, աշխատանք չունի: Խնդրում է իր համար մի հարմար աշխատանք գտնել:

ԳԱԹ ԹՖ, 1151 (314 լր.):

Օգոստոսի 10, էջմիածին - Խնդրագիր «Ա. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի բարձրապատիվ տեսչին՝ Գարեգին վարդապետին».

«Իմ որդի Յամլիկը ուսումնական տարվույս կեսից դադարել է հաճախել ճեմարան թոշակն իր ժամանակին չվճարելու պատճառով, որ առաջացել է իմ ամիսներով տանից բացակայելուց: Այժմ խոնարհաբար խնդրում եմ չվճարված թոշակի խնդիրը ներկայացնել Նորին Վեհափառության բարեհաճ տնօրինությանը, թույլ տալով շարունակել նրան իր ուսումը, որ ընդհատված է վերև հիշած պատճառով:

*Յովհ. Թումանյան».**

*) Գարեգին վարդապետը անհրաժեշտ հայտարարությունը ներկայացնում է Գևորգ V կաթողիկոսին: Նաև իր կողմից միջամտում է բավարարել խնդիրը՝ «ի հարգանս պ. Թումանյանի զրական և հասարակական գործունեության»: Կաթողիկոսն այնուամենայնիվ մերժում է:

ԵԼԺ 10, 229, 604:

Օգոստոսի 14, էջմիածին - Յեռագիր Թիֆլիս՝ Յայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին.

«Ընդհանուր աղետի մեջ առանձնապես սոսկալի է ձգված և որբացած երեխաների վիճակը: Ճեմարանի ամբողջ շենքը բռնել է որբանոցը. ընդունվածների թիվը անցել է երեք հազարից և նոր որբանոց է բացվում՝ բաց օդում: Թիֆլիսից և Ալեքսանդրապոլից եկած խմբերը լրացրին աշխատավորների կազմը բավարար չափով: Անհրաժեշտ է, որ քաղաքները պատրաստվեն ընդունելու երեխաներին մոտիկ օրերս:

Յովհ. Թումանյան»:

ԵԼԺ 10, 229:

Օգոստոսի 16 - Տպագրվում է Թումանյանի՝ օգոստոսի 14-ի հեռագիրը Յայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին:

«Յորիզոն», 1915, թիվ 184:

Օգոստոսի 16 - Մամուլը հաղորդում է.

«Ինչպես երևում է Թիֆլիսից ուղարկված լուրերեն, Չայկ. ԿԿ կազմակերպել է փախստականներին օգնող 3 խումբ. 1 խումբը, որ գործելու է Իգդիրում, բաղկացած է 6 հոգուց՝ կազմված հայ օրիորդների խմբերի ներկայացուցիչներից, ղեկավարությամբ օր. Ն. Թումանյանի»:

«Արև», Բաքու, 1915, թիվ 125:

Օգոստոսի 17 - Չակոբ Մուստոյան ստորագրությամբ նամակ Թումանյանին էջմիածնից:

Վանի գաղթականներից է: 15 տարի աշխատել է Վանի գավառի ազգային վարժարանում՝ կատարելով հսկողության աշխատանք: Գրում է. «Իսկ այսօր անգործությամբ կթափառիմ այս տեղերու մեջ և հաճախ կսոսկամ, երբ մերթ ընդ մերթ կխորհեմ ընտանյացս ապագա սովալլուկ վիճակին վրա»:

Խնդրում է բանաստեղծի օգնությունը՝ մի հարմար աշխատանք գտնելու, որպեսզի ընտանիքը սովի չմատնվի, և կարողանա հոգալ երեք զավակների կրթության գործը:

ԳԱԹ ԹՖ, 1782 (174 III g.):

Օգոստոսի 18 - Մեսրոպ Եպիսկոպոսի նամակը էջմիածին՝ Թումանյանին Թիֆլիսից.

«Սիրելի Յովհաննես,

Վերջապես թույլտվություն ստացանք որբերին հատուկ գնացքներով տեղափոխելու Թիֆլիս և այլուր: Անմիջապես գրիր՝ խորհրդակցելով կոմիտեի հետ, թե ինչ ձևով կկամենայիք փոխադրել երեխաներին, քանի հոգի <....>, ովքեր պիտի ուղեկցեն, կին և մարդ ուղարկենք, թե սպասենք գուցե <....>, այսինքն այդտեղի աշխատակիցների հետ տեղափոխեք: Որոշումները հաղորդիր հեռագրով, եթե հատուկ եկող չլինի: Այսօրվանից կսկսենք պատրաստել ընդունելու <....> և տեղավորման անհրաժեշտ կարիքները:

Ձերն ողջույններով՝ Մեսրոպ Եպիսկոպոս»:

ԹԹ ԳԳ, 1079, 31/5:

Օգոստոսի 19 -ից մինչև սեպտեմբերի առաջին տասնօրյակ* - Գրառումներ ծոցատետրում,

«19-ի գիշերը օգոստոսի՝ մթնեց, սկսեց փայլատակել ու որոտալ և կաթկթել անձրևը: (Գրիգորն ու Վարդգեսն եկան իմացրին), գնացինք Բագրատի, Խորենի, Մաթևոսի մոտ - Արսենն էլ էնտեղ էր -

որ բոլոր շինությունների դռները բացեն գաղթականներին ներս թողնելու: Մայր տաճարը դժվարացան - Գայանեն ու նոր Վեհարանը թողին:

Ժողովրդին ձեն տվի – տարա - ուսանողները: Սոսկալի խռնում. երեխաները, ունեցած չունեցած շալակած, մինչև անգամ մեռելները».*

«Ախիկյանի*** պատմելով տիֆ, դիզինտերիա և այլ մի քանի հիվանդություններ վանեցիք հետները բերին, նրա համար էլ գաղթի հենց առաջին օրից կային եղ հիվանդությունները: Բժիշկները Վան էին որոշել: Միայն խոլերան չկար»:

«23-ից էջմիածին 70 մեռել մնաց անթաղ, առաջին օրից էլ մի քանի տասնյակ կային, 24-ից ավելի շատ մնացին: Գետինը պինդ է, և բանվորներ չեն գտնում: Երեք օր առաջվա դիակները արևի տակ ուռան-պատռվեցին և գարշահոտություն տարածեցին: Երեխաների մեջ հիվանդության դեպքեր պատահում են գրեթե բացառապես նրանց մեջ, որոնք հեր ու մեր ունեն - գնում են գալիս. <մյուս> որբերի մեջ ոչ մի հիվանդություն չկա»:

«Լեռնական – սառն աղբյուրների սովոր ժողովուրդները – Իգ-դիրի ջրերը: Բոլոր հիվանդները տաքության մեջ աղբյուրներ են զանազանում: - Օխե՛ր, օխե՛ր»:

«Ի՞նչ է, Պայծառ: - Մեր կաթնաղբյուրին ընկած կիսմեի – շատ խմեցի, կշտացա, նորեն ծարավից կպապակիմ»:

«Տրախոմա իր բոլոր հետևանքներով»:

«Թանգիկ,**** Ազգուլ, Ջեյրան, Ռիու, Ադրինե, Շամրիկ, Ղում-րիկ, Խուշուշ, Սիրվարդ, Ֆստուլ, Ցողիկ, Փայլուն, Պայծառ, Սինամ, Ֆրֆուռ, Գուլիկ, Արման, Մասիս, Վանուհի, Քարմիլե, Ջեփյուռ, Ասմին, Կաքավ, Եզնիկ:

Գաղթականներից ոմանք չէին կամենում բաժանվել իրենց երեխաներից (ինձ հարց էին տալիս - Դու կբաժանվե՞ս քո երեխաներից), ոմանք խրտնում էին *որքանոց* անունից (փրոտարան), ոմանք վախենում էին հեռու տանելուց – Իլլիջա - քաղաքն են

տարել - հարցրել էին ռուսահայերին էլ – նրանք էլ չէին իմացել, թե որտեղ է գտնվում Իլլիջա քաղաքը - և սարսափել էին: Դուրս եկավ, որ Դիլիջանն է Իլլիջան»:

Այլևս վրա հասավ խոլերան ու սկսեցին ցրվել, Գանձակի տոմսակներ տվին»:

«Կամավորները (Երևանում գանգատվում են) անվերջ գողանում են ու ծախում իրենց հասած իրերը»:

«Խզմալյան (Երևանի թեմական տեսուչ) ամեն տեղ քահանաներն են փակել տալիս մեր դպրոցները, որ պետական բացի և իրենք իրենց դասերի համար 80-ական ռուբլի ստանան»:

«Նահանջի ժամանակ (Վանից) ռուս զինվորները մինչև անգամ վրացիք հայ երեխաներին վերցնում են հետները ձրի (ֆուրգոններին կամ ձիերին)»:

«Հուլիսի 28-ից մինչև սեպտեմբեր մեռել են 7 հազար, որից 3 հազարը՝ երեխաներ»:

«Ցուրտ գիշերներ, տաք ցերեկ:

Դիզիստերիա, տիֆ և միս (մեծ մասամբ իծի), արևի տակ խաշած: Վարակված ջրեր, ցեխ ու կանաչած հաց»:

«Իգդիր - Էջմիածին - Երևան՝ գերեզման դարձան լեռնական ժողովուրդների: - Մեր սարեր, մեր պաղ աղբյուրներ, մեր...»:

«Կերն ու կուբերը եկան ժողովրդի գնալուց հետո: Էն էլ կուբերը մնում են անվառել, տարել մի մասն էլ դրել էին պահեստ թե՛ չեն տալիս մեզ»:

«Տելեֆոն անել*****

Дежурный врач նոր է մտնում

Пуща շրջել գիշերը (ցերե֊կը)

Экстренные меры собрать больных в холерный барак.

Գլխավորը՝ չթողնել դուրսը, մանավանդ այսուհետև ցուրտ գիշերներ են անելու և անձրևներ կգան:

99 երեխա այսօր գերեզման ենք դնում (իրենք են ասում):

«7 հազար մարդ է մեռել:

7 հազար մարդ են թաղել դիզենտերիայով ու դիֆտերիայով և այլն.- այժմ նոր են (բժ. Բաբայան) հարց հարուցում, թե միսը վատ է դրանց համար: Իրենք կարծիք են հայտնում, թե չի կարելի հիվանդներին և որբերին միասին - և իրենք են բերում հիվանդներին որբերի մոտ լցնում, հիվանդանոց չինում:

Կուրբերն ինչո՞ւ չեն վառում գոնե այժմ - փետ չկա:*****

Եվ կուրբերը կամ վառած չեն, կամ տարել են սկլադում դրել: Կերակրի համար ամենից առաջ ամաններ են հարկավոր: Էդ էլ հոգևորականների ձեռին չի: Սթերանոցը գտնվում է հիվանդանոցին կից. բժիշկները միշտ էնտեղ են - էնտեղ էլ լիքն են ամանեղեն, և գդալներ - այնինչ հիվանդներն էլ, առողջներն էլ մեծ մասամբ վաքսի ամաններ կամ կոնսերվների ժեստյանկաներով են կերակուր տանում (ով որ առնում է) և մատով լպստում կամ փետի կտոր են կոխում մեջն ու լիզում:

«Ո՞ւր և ինչպե՞ս տեղավորել

Գանձակի նահանգ - 250 հազար

Թիֆլիսի նահանգ - 140 հազար

Երևանի նահանգ - 600 հազար

Երևան - 130 հազար

Գանձակ - 50 հազար

Թիֆլիս - 20 հազար

+ 60 հազար առաջուց

Մնումը - Ալյուր բերել տալ մի 50-60 վագոն: Օրական հարկավոր 1. Էջմիածին հազար փութ (ունի 500 փութ, երբեմն էլ չի ունենում):

Կերակուր չկա:

Ջուր չկա: Ճահիճներից են խմում և կամ լճից, որի մեջ ամեն բան լվանում են: Վարակվել:

Սաջ, վառելիք, կուրբեր: Սարդինկի կարոբկով են գալիս կերակուր տանելու ոմանք: Գդալ չունեն - փայտի կտորով են ուտում շատերը կամ բան չեն գտնում: Յուվայից 10-15 հազար քրեղան:

Բաշխումը հացի, թեյի և կերակրի: Դասավորել ըստ գավառների - իրենց տալ բաժանելու հաց, ալյուր և այլն: Դժար:

Ուղեկիցներ տալ էտապից էտապ, որ չխաբեն ու չկեղեքեն, ինչպես թափվել էին ալեքսուլցիք, իգդիրցիք, թուրքերն ու մինչև անգամ հրեաները»:

Բժշկական կազմ և սանիտարական:

Ընդունող, ՃԱՄՓՈՂ և մատակարարող (թեյ, հաց, կերակուր):

Շոր կարող կոմիտե:

Որբերի խնդիրը:

Շրջիկ լիազորներ, որ չկեղեքեն ու չհարստահարեն գյուղերում:

7 հազար եզդիներին և 5 հազար ասորիներին ընդունում ենք մեր պունկտերում ու օգնում անցնելու միայն:

Օրական 500 փութ:

Հացը քիչ է - մի ֆունտ հոգուն:

Բաշխումն անկանոն – մինը շատ է ստանում, մյուսը ոչինչ:

Հարցնել – ո՞վ կարող է ալյուր տանել և թխել - կթեթևացնի գործը:

Ջրի գործը:

Բժշկական օգնության կարիքը մեծ է - տեղի, ձեռքերի և մանավանդ դեղի:

Սնունդ, բժշկական օգնություն, որբերին պահել և գաղթականներին ճանապարհ դնել:

Դեպի Երևան՝ 20 հազար:

10 հազար դեպի Ալեքսանդրապոլ:

Լեռնցիներին – լեռները:

Վանեցիներին – քաղաք - արվեստ, նիստուկաց:

30 հուլիսի. Ալեքսանդրապոլ. 10 հազարը Աշտարակով արդեն լրացած է: Պետք է ուղղել դեպի Երևան գեթ մի հազար:

Փող կա՞:

Ալյուր կամ ցորեն կա՞, թե՞ չէ, և կամ կլինի՞. փոներ:

Մարդիկ կա՞ն բավականաչափ:

Որբանոց

Բժշկական կազմ

Երևան պատրա՞ստ են ընդունելու:

Ամեն ժողովի խնդիր է լինում, թե ջրերը վարակված են. եռացրած ջուրը պիտի տալ և կուբերը չկան ու չկան:

Չացը խմոր է - նպաստում է դիզինտերիային և մնում է միշտ խմոր:

Հապա Իգդիրի ջուրը...

Խնդիրները քննվում են ժողովներում, երբ արդեն գաղթականները ցրվել էին և մասամբ վերադարձել»:

*) Այսինքն՝ մինչև Թիֆլիս վերադառնալը՝ սեպտեմբերի երկրորդ տասնօրյակի սկզբին (տե՛ս ԼԿ, 171-172):

**) Ն. Թումանյանը հիշում է.

«Հայրիկը սև թիկնոցով, կեպին գլխին շտապ դուրս եկավ իր սենյակից՝ գաղթականությանը շենքերում պատսպարելու: Առաջին հերթին նկատի ուներ վեհարանի նոր, կիսավարտ շենքը, որ կաթողիկոսը մերժել էր գաղթականությանը հատկացնել: Հայրիկը զայրացած էր: Հակառակ կաթողիկոսի արգելքին, նա գաղթականությանը տարավ դեպի նոր վեհարանի շենքը:

Ուսանողները՝ Լևոն Լիսիցյանը, Լյալյա Աճեմյանը, Ալեքսանդր Բարխուդարյանը ջահերով (երկար փայտե ձողերի ծայրին աթար էին ամրացրել, վրան նավթ էին ածել ու վառել) հայրիկի երկու կողմից գնալով լուսավորում էին նրա ճանապարհը:

Հայրիկը, թիկնոցի մեջ փաթաթված, տեղատարափ անձրևի տակ առաջ էր գնում, նրան հետևում էր հազարավոր գաղթականությունը իրենց կապոցներով, երեխաներով, նույնիսկ հարազատների դիակներով... Սարսափելի տեսարան էր...

Այդ միջոցին հայրիկը հիշեցնում էր «Աղավնու վանքի» հայր Օհանին:

Ամենայն հայոց կաթողիկոսին դուր չէր եկել, որ հայրիկը կառուցվող վեհարանը դարձրել էր գաղթականների ապաստան: Հետևյալ օրը հայրիկին կանչում է իր մոտ բացատրության այդ ինքնակամ արարքի համար. չէ՞ որ ինքն արգելել էր: Հայրիկի բացատրությունը չի գոհացնում կաթողիկոսին, և նա զայրացած հիշեցնում է՝ «Դուք գիտե՞ք, որ ես Ամենայն Հայոց կաթողիկոսն եմ», հայրիկն էլ պատասխանում է՝ «Գիտե՞ք, որ ես էլ Ամենայն Հայոց բանաստեղծն եմ»:

Միջադեպը իր ««Հովհաննես Թումանյան. մարդը և բանաստեղծը, Փարիզ, 1936» գրքում այլ կերպ է ներկայացնում (էջ 183-185) Վարդգես Ահարոնյանը, որ ներկա է եղել անցուդարձին: Ըստ նրա վկայության՝ Թումանյանը, նկատելով մռայլվող երկինքը, կանչում է մի երիտասարդի և պատվիրում.

«-Վազիր Վեհարան և ասա կաթողիկոսին, որ ես խնդրում եմ անմիջապես բացել տալ բոլոր եկեղեցիների, վանքերի և ազատ

շենքերի դռները և գաղթականությանը այս գիշեր պատուսպարել այնտեղ»:

Վերադառնալով երիտասարդը հայտնում է, որ կաթողիկոսը «հրամայել է բաց անել Գայանեի, Շողակաթի և Յոնիսիմեի վանքերը, բայց Վեհարանի նոր շենքին պատվիրել է ձեռք չտալ և փակ պահել... Ի՞նչ,- ցասումից դողացող ձայնով բացականչեց Յովի. Թուճանյանը.- Ամփոփապես վերադարձիր Վեհարան և ասա Ամենայն հայոց կաթողիկոսին, որ Ամենայն հայոց բանաստեղծը պահանջում է բաց անել նաև նոր Վեհարանի դռները և պատուսպարել գաղթականությանը:

Երբեք, ո՛չ դրանից առաջ, ո՛ր դրանից հետո Յովի. Թուճանյանին այդպես զայրացած չէի տեսել:

Մի քանի րոպե հետո լուր եկավ, որ նոր Վեհարանի շենքը ևս տրամադրված է գաղթականությանը»:

***)) Նկարիչ Վրթանես Ախիկյան:

****)) Այս կնոջ մասին Նվարդ Թուճանյանը հիշում է. «Չեմ կարողանում մոռանալ շատախցի բարձրահասակ ու նրբակազմ գեղեցիկ Թանգիկին: Ըստ երևույթին, նա մի ունևորի, հարուստ տան աղջիկ էր կամ հարս. հագին ուներ մանուշակագույն թավշե շոր՝ ոսկեգույն արդուզարդով, բայց արդեն մաշված, խամրած, ցնցոտի դարձած...

Թանգիկը իր նազելի հասակով ու գեղեցկությամբ գրավել էր մեզ մոտ աշխատող ուսանողների (Ա. Բարխուդարյան, Լ. Աճեմյան, Լ. Լիսիցյան) ուշադրությունը:

Մեր տղաները հիացած էին նրանով, իսկ նա անտառի եղնիկի մման փախչում էր դեպի ծառերի խորքը, խուսափում տղամարդկանցից: Օրերով որոնում էին ու չէին գտնում նրան: Ով գիտի ում հարսն էր եղել Թանգիկը, ում էր փնտրում: Լևոն Լիսիցյանը որոշել էր ինչ գնով էլ լինի գտնել Թանգիկին, համոզել, իր հետ տանել Թիֆլիս, բայց նրան այնպես էլ չգտանք...

Գաղթական որբերի մեջ գեղեցիկ անուններ շատ կային, ես իմ օրագրի մեջ գրում էի աղջիկների անունները՝ Սիրվարդ, Ավարդ, Քարմիլե, Թանգիկ: Երբ Թիֆլիս վերադարձա և ցանկը մի օր կարդացի Դեմիրճյանին, նա ամենից շատ հավանեց Թանգիկ անունը և այդպես էլ կոչեց իր նոր դրամայի («Դատաստան») հերոսուհիներից մեկին» (ՆԹ ՀԶ, 1987, էջ 124-125):

*****)) Այս գրառումները թվագրված են 7 սեպտ. 1915:

*****)) Այստեղ Թուճանյանի ծանոթագրությունը. «Ասում են կաթողիկոսն է կանգնեցրել շուկայի գործը – մինչդեռ մեծ մասը դատարկ են խանութների և միշտ կարող էին տեղավորել»:

ԵԼԺ 8, 410-413: ՈՒՅ 2, 376-382:

Օգոստոսի 21 - Տպագրվում է հաղորդագրություն՝ գաղթականության գործով զբաղվող, փախստականներին օգնող գլխավոր հանձնաժողովի նիստի (տե՛ս օգոստոսի 9) մասին, որտեղ զեկույցով հանդես է եկել Յովհ. Թումանյանը:

«Յորիզոն», 1915, թիվ 187:

Օգոստոսի 22 - Գևորգ Բաշինջաղյանի երկտողը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Խնդրում է նամակաբեր վարպետին վճարել Սայաթ-Նովայի մահարձանի եզրավանդակը պատրաստելուց մնացած գումարը:

ԳԱԹ ԹՖ, 1026 (561):

Օգոստոսի 22 - Արտատպվում է «Յորիզոնի» հաղորդագրությունը (տե՛ս օգոստոսի 9) գաղթականության գործով զբաղվող, փախստականներին խնամող գլխավոր հանձնաժողովի նիստի մասին, որտեղ հանձնարարվել է Բաբկեն եպիսկոպոսին և Թումանյանին՝ հրավիրել հայ կանանց և օրիորդների խորհրդակցություն և ծրագրեր մշակել՝ որբերին խնամելու գործը կազմակերպելու համար:

«Եօկ», 1915, թիվ 189:

Օգոստոսի 23 - Յայտարարություն մամուլում, որ Գուտտենբերգ գրախանութում վաճառվում են Աղայանի, Ահարոնյանի, Թումանյանի կազմած «Յայ գրողներ» քրեստոմատիայի Ա և Բ գրքերը:

«Խաթաբալա», 1915, թիվ 32, էջ 10:

Օգոստոսի 26 - Ռուբեն Յովհաննջանյանի նամակ-երկտողը՝ Թումանյանին.

«Պ. Յովհաննես: Այս ի՞նչ խայտառակություն է: Սրբազանը առանց մեր գիտության հարյուրից ավելի որբ երեխաներ է ուղարկել կայարան (տե՛ս օգոստոսի 18), մի՞թե չի մտածել, որ նրանց նահատակել կնշանակեր, ի՞նչ անուն տալ նման վերաբերմունքին:

Ռուբեն Յովհաննջանյան: Աշխատակից «Արև» և «Եօկ» օրաթերթերի»:

ԹԹ ԳԳ, 1079, 31/13:

Օգոստոսի 27 - Հակոբ Մուստոյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Վաղարշապատից (տե՛ս նաև օգոստոսի 17):

Գաղթական է: Նկարագրում է ընտանիքի ծանր վիճակը. բոլորը հիվանդ են. «Մեր եկած օրեն մինչև երկու օր առաջ դաշտին մեջ կբնակեինք պաղ գետնին վրա, օդի հոսանքին տակ, այժմ տան մը մեջ կբնակինք, չոր տախտակամածին վրա կքնանանք մեծ և փոքր, կուզեն մահանալ և չտեսնել, որ հիվանդ տղաներն չոր գետնին վրա կպառնին առանց անկողնու...»:

Խնդրում է բանաստեղծի օժանդակությունը՝ մի հարմար աշխատանք գտնելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1783 (174 III g.):

Օգոստոսի 30, Քաբու - Հայոց մարդասիրական ընկերության դահլիճում տեղի է ունենում բազմամարդ ժողով՝ տեղի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի նախագահությամբ:

Էջմիածնում փախստականներին օգնելու գործի կազմակերպման ընթացքի մասին զեկուցում է Ռ. Օհանջանյանը (Հովհանջանյան):

Մասնավորապես տեղեկացնում է, որ անապաստան և որբ երեխաներին խնամելու գործը գլխավորում է բանաստեղծ Թումանյանը, որ իր օգնականների՝ տիկ. Ա. Պոպովյանի (Ռոստով), Ե. Լիտնոցյանի և Մեծբայանի (Թիֆլիս) հետ գերմարդկային ճիգերով երեխաների վիճակը նշանակալի չափով լավացրել է:

«Եօկ», 1915, թիվ 194:

Օգոստոսի 30 - Խնդրագիր Թումանյանին՝ Էջմիածնից.

«Հարգելի պ. Հ. Թումանյան,

Այստեղ հիվանդությունները մեծ ծավալ են ստացել. այնպես որ այս միջավայրի մեջ գործելը կասկածելի է և միանգամայն վնասակար, որովհետև մեր առողջությունն էլ կարող ենք վրա տալ:

Մենք վաղվանից իսկ Երևան մեկնելու միտք ունենք: Ուստի սույն երկտողով խնդրում ենք Ձեզանից, որ բարեհաճեք հանձնարարական մը շնորհել մեզ, որպեսզի Երևանում մեզ գործ տային: Կհուսանք մեր այս խնդիրը չեք մերժելու:

Հարգանքներով Շատախցի ուսուցիչներ՝ Սահակ Մարտիրոսյան, Մարգար Մովսեսյան»:

ԹԹ ԳԳ 1079, 31/10: ԼԿ, 170:

Օգոստոսի 30 - Գաղթական ուսուցիչների անունից խնդրագիր
Թումանյանին՝ Վաղարշապատից:

Գրում են. «Վսեմաշուք փրոֆ. Հովհաննես Թումանյան,

Սիրելի բարերար, Ձեր թույլատրության համաձայն, ահա
կներկայացնենք Ձեզի հոս գաղթած բոլոր ուսուցիչների ցանկը՝
իրենց ընտանյաց հետ և ստորև պիտի հասկնաք անոնց անհրա-
ժեշտ պետքերը»:

Թվում են այն բնակավայրերը, որտեղից գաղթել են՝ Շատախ,
Մոկս, Խիզան, Հայոց ձոր, Գավառ, Վան և շրջակայքը: Ներկայաց-
նում են ուսուցիչների ցուցակը՝ անուն-ազգանուններով և ընտա-
նիքի անդամներով:

Այնուհետև՝

«Սիրելի փրոֆեսոր,

Մեր անհրաժեշտ պետքերու առաջինն է անկողին, երկրորդ՝
զգեստ, երրորդ՝ կոշիկ և գուլպա, իսկ դրամական օգնության պետքը
ամենեն կարևորն է: Մենք վստահելով Ձեր բարեկամության, համար-
ձակություն ունեցանք սույն պետքերը ներկայացնել Ձեզի, իսկ մեզ
օգնելու խնդիրը բոլորովին Ձեզի կը թողունք՝ հույս ունենալով, որ
կարելին չպիտի խնայեք:

Հարգանքներով ի դիմաց Վանա գաղթական ուսուցիչներուն և
օգնականներուն՝ Սահակ Մարտիրոսյան, Տիգրան Հովհաննիսյան,
Հակոբ Մադոյան»:

Վերջում՝ յուրաքանչյուր ընտանիքի անհրաժեշտ կենցաղային
պիտույքների երկար ցուցակը:

ԹԹ ԳԳ, 1079, 35/2:

Օգոստոսի 31 - Արճեշցի Արշակ և Տիգրան Աբրահամյան ստո-
րագրությամբ խնդրագիր Թումանյանին:

Ներկայացնում են իրենց անհրաժեշտ կենցաղային իրերի
ցուցակը՝ հագուստ, կոշիկեղեն, անկողնի և հագնելիք սպիտակեղեն,
զլխարկ, վերարկու և այլն:

ԹԹ ԳԳ, 1079 35/6, 35/7:

Օգոստոսի 31, Էջմիածին - Դստեր՝ Նվարդի հետ մեկնում է
Երևան:

Նույն օրը եղբորն ուղղված նամակում Նվարդը գրում է. «Հայ-
րիկն ու ես պատրաստվում ենք, հիմա գնալու ենք Երևան: Որբա-

նոցի երեխաներից 125 հոգի պիտի փոխադրել Երևան, 43 ծովեր երեխա կա՝ պահող չկա»:

ԻՍ, 70:

Օգոստոսի 31 - Երևանի ճանապարհին կանգ են առնում Փարաքար գյուղի մոտ:

Նվարդ Թումանյանը հիշում է. «Փարաքար գյուղի մոտ կանգ առանք՝ ձիերին հանգիստ տալու: Այգիներից մեկի դռան առաջ կանգնած էր մի կին երեխաների հետ: Նա մեզ հրավիրեց այգի՝ խաղողով հյուրասիրելու: Մեր ուղեկիցը, ցանկանալով երեխաներին հայրիկի հետ ծանոթացնել, ասաց. «Գիտե՞ք ով է. լսե՛լ եք «Շունն ու Կատուն», նրա հեղինակն է»: Երեխաները թե՛ գիտենք, գիտենք, և «Շունն ու Կատուն» արտասանեցին: Հայրիկը ժպտալով լսում էր. հետո երեխային համբուրեց, ձեռքը մի բան դրեց, և մենք կառք նստեցինք ու շարունակեցինք մեր ճանապարհը: Գնապարհին հայրիկն ասաց, որ ինքը երբեք էդպիսի բարձր գնահատական չի ստացել.

- Էսպես բա՞ն կլինի, ինձ ժողովրդականացնողը էս «Շունն ու Կատուն» է դարձել. որ մի տեղ էլ հյուր են գնում կամ փողոցով անց են կենում, երեխաները կանգնում են թե՛ ա՛յ, Շունն ու Կատուն...

Մի տարի Ախալցխա են. հետս բժիշկ Բուդաղյանն էր, երկի ճանաչում ես. մի օր կառքով Ախալցխայից գնում ենք Ծուղրուտ գյուղը՝ իր ծննդավայրը: Ճամփին գրվածքներիցս էր խոսում.- Գիտե՞ս, Օհանես, քո գրվածքներից մեր երեխաները ամենից շատ սիրում են «Շունն ու Կատուն». որ երեխային էլ որ բռնես, նույնիսկ առաջին պատահածին, անգիր կասի: Ես առարկում էի, նա պնդում էր, վերջը հետս գրագ եկավ, կառքը կանգնեցրեց ու հենց առաջին պատահած երեխային բռնեց թե՛ «Շունն ու Կատուն» անգիր ասա: Էս երեխան վախեցած ու զարմացած մեզ էր նայում: Բժիշկը որ շատ ստիպեց և մի բան խոստացավ, երեխան «Շունն ու Կատուն» մինչև վերջ անսխալ արտասանեց: Իրար երեսի նայեցինք և երկուսս էլ ծիծաղեցինք: Ես տարվեցի...»:

ՆԹ 32, 132:

Օգոստոսի 31 - Մուշեղ Թումանյանի նամակը էջմիածին՝ քրոջը՝ Նվարդին՝ Դիադինից:

Գրում է բանակային իր առօրյայից. ընդհանրապես գոհ է, միայն մենակություն է զգում: Հարցնում է հոր որպիսությունը էջ-

միաձուլում, հետաքրքրվում է քրոջ որբախնամ գործունեությամբ. «Հայրիկի քեֆը ինչպե՞ս է, եղ մանկանոցը ի՞նչ դրության մեջ է, ինձ չորս կողմից են հարցնում՝ ճենարանի մանկանոցի անկարգության և կեղտոտության մասին, բա ձեր օրիորդաց ընկերությունը չի կարող մի բանով օգնել: Էստեղ զորամասում հատուկ մի հեռագիր կարդացին, որտեղ գրված էր, որ Թիֆլիսի օրիորդաց ընկերության կողմից Էջմիածին են գնացել մի խումբ հայ օրիորդներ, որ Նվարդ Թումանյանի ղեկավարությամբ է գործելու, չգիտեմ ճի՞շտ է, բայց զինվորները 45 անգամ «ուռա» էին գոռում»:

ԻՍ, 71-72:

Օգոստոսի 31 - Խնդրագիր Թումանյանին՝ «Ի դեմս Մոկսի մի քանի գյուղերի հասարակության».

«Ամենահարգելի պ. Հովհաննես Թումանյան,

Մեր գավառի համար մինչև հիմա շոր տրված չլինելով այժմ արդեն մեզի դրկում են Գանձակի նահանգ, բայց ժողովուրդն իր մերկության պատճառով քիչ դժվարանում է երթալ, հետևապես կը խնդրենք մի կարգադրություն ունենաք մեզի շոր տալու»:

ԹԹ ԳԳ, 1079, 32/8:

Օգոստոս - Տպագրվում է («Նոր հոսանք», Թիֆլիս, 1915, թիվ 1, էջ 2) Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը: ԵԼԺ 1, 269:

Օգոստոս, Էջմիածին - Հանդիպում է փախստականների հետ Վանից վերադարձած բանաստեղծ Հովհաննես Կոստանյանին:

Կոստանյանը հիշում է.

«Թումանյանին տեսա ծերացած, նրա գլուխը ծյունամած էր և հոգին վիատ: Այն ժամանակվա պատկերները վերհիշելը դառն է և թունալի, և ցասման շնչով լի:

Հիվանդներ, հիվանդներ, հիվանդներ... վերջին հառաչանքներ... դիակներ, դիակներ, դիակներ...

Թումանյանն ապրում էր վանքում, Ղլտճյան վարդապետի ընդարձակ բնակարանում, որը բաղկացած էր մի մեծ և մի փոքր սենյակից: Մենք հաճախ պատահում էինք: Մեկ անգամ երեկոյան, երբ ներս մտա, Թումանյանի մոտ բավականաչափ այցելուներ կային: Սենյակը լիքն էր անչափ, անհամար ճանճերով: Հյուրերի նյարդերն սկսել էին բողբոջել: Ինձ մոտ մի թունավոր բաղադրություն կար

միջատների համար, որ հետո ման էի ածում. ցանեցի և ճանճերի «ահարկու բանակը» տապալվեց մի վայրկյանում, ոչ մի ճանճի չունչ չմնաց:

- Ա՛յ մարդ, դու ո՞րտեղ էիր մինչև հիմա, ո՞ր քամին քեզ բերեց, մեզ ազատեցիր էլի՛...:

- Իսկ Ամիում մեր ազատվելն ինչպե՞ս էր,- հարցրի ես:

- Էդ ուրիշ բան էր:

Եվ սկսեց շատ համով, իրեն հատուկ կենսուրախ ոճով և ժպիտով այցելուներին ոգևորված պատմել Ամիում մահից ազատվելու մեր միջադեպը:*

Այս մեր վերջին տեսակցությունն էր»:

*) Այդ մասին տես ԹՏ (1869-1908), 2010, էջ 393-394: ԹԺՅ, 465-466:

<Օգոստոս> - Սահակ վարդապետի երկտողը Թումանյանին՝ Էջմիածնից.

«Սիրելի Յովհաննես,

Այս երեխան, որի համար խնդրեցի ընդունել որբերի կարգում, գրաբերս է. խնդրեմ չմերժել խնդիրս: Մոտ մի շաբաթ է, որ դռանս նստած լաց են լինում յուր փոքրիկ քրոջ հետ՝ հացի համար:

Ձեզ հարգող Սահակ վարդապետ»:

ԹԹ ԳԳ, 1079, 33:

<Օգոստոս> - Գ. Պապյան ստորագրությամբ երկտող Թումանյանին.

«Տոմսակաբեր երիտասարդը կարող է ձեր որբանոցում օգտակար լինել, եթե պաշտոն ունեք և հարմար եք գտնում, եղեք բարի պաշտոն տալու:

Հարգան. Գ. Պապյան»:

ԹԹ ԳԳ, 1079, 35/12:

Օգոստոս - Տպագրվում է («Նոր հոսանք», Թիֆլիս, 1915, թիվ 1) սերբական ժողովրդական էպոսից մի հատված Թումանյանի թարգմանությամբ՝ «Թե ինչ ուղարկեց թուրքի սուլթանը Մոսկվայի ցարի ընծաների փոխարեն» խորագրով և «Սերբական ժողովրդական վեպ» ենթավերնագրով:

ԵԼԺ 4, 179- 183:

<Ամառ> - Պողոս Մակինցյանի նամակը Թիֆլիս՝ Թուրման-
յանին Մոսկվայից:

Գրում է «Поэзия Армения» ժողովածուի նախապատրաստա-
կան աշխատանքների մասին: Հայտնում է խմբագրական կազմը՝ Ալ.
Ծատուրյան, Կ. Միքայելյան, Յու. Վեսելովսկի, Կ. Կուսիկյան: Ցան-
կալի է համարում նյութերի ընտրության և առհասարակ ժողովածուի
պատրաստման աշխատանքներին Թուրմանյանի մասնակցությունը:

Տեղեկացնում է. «Սկսեցինք նրանից, որ դիմեցինք Վ. Բրյուսո-
վին, որ հանձն առնի խմբագիր լինելը: Համաձայնեց, բայց ասաց,
որ առանց լեզու իմանալու չի կարող խմբագրել մի ժողովածու, որ
ամբողջապես թարգմանված է լինելու: Ահա ես նրան սկսեցի հա-
յերեն դասեր տալ, և մեր պարապմունքը առաջ է գնում:

Բացի այդ, ես նրան ներկայացնում եմ այն ամենը, ինչ գրված
է հայերի, հայոց գրականության և պատմության մասին ռուսերեն,
ֆրանսերեն և գերմաներեն: Զարմանալի աշխատասեր մարդ է և հի-
մա գրեթե բոլորը, ինչ կա այդ լեզուներով, կարդացել պոծել է, նույ-
նիսկ Մովսես Խորենացու պատմությունը էմինի թարգմանությամբ»:

Այնուհետև. «Իմացած լինեք, որ այստեղ շատ դժվար է գործ
բռնելը: Հազիվ եմ կարողացել համոզել մերոնց, որ մեր ժողովրդա-
կան երգերին և աշուղներին տեղ տան և Բրյուսովը ծանոթանալով
ֆրանսերեն լեզվով՝ հիացած է, ասում է՝ սա կլինի մեր ժողովածուի
մեխը:

<....> Եթե իմ ձեռքում լիներ գործը, ես կտայեի՝ ժող. երգեր,
միջնադարյան լիրիկա, աշուղներ և ապա ռուսահայ բանաստեղ-
ծությունը հովի. հովհաննիսյանից սկսած (թողնե՞րով Պատկանյան,
Շահագիզ, Ծատուրյան, մանավանդ որ սրանք շատ են թարգման-
վել) և վերջապես տաճկահայ բանաստեղծությունը»:

Հայտնում է, որ Թուրմանյանի ստեղծագործություններից
թարգմանել են՝ Բրյուսովը («Հայոց վիշտը»), Վյաչեսլավ Իվանովը
(«Աղջկա սիրտը», «Աղավնու վանքը», «Գութանի երգը», «Վայր-
եջք»), Բալմոնտը («Համերգ», «Ախթամար»):

Թարգմանվելու է նաև «Սասունցի Դավիթը» Բրյուսով ամու-
սիմների կողմից, որ խնդրում են բանաստեղծին ուղարկել պոեմի
տեքստում իր կատարած ուղղումները:

Շատ է անհանգիստ ռուսական բանակի կողմից Վանը թող-
նելու լուրերից: Չի արդարացնում ռուսների այդ քայլը, դժգոհ է
հատկապես Վորոնցովից: Մտահոգ է տաճկահայերին սպասող մեծ

փորձությունների համար: Սխալ է համարում ազգովին բնաջնջվելու գնով ինքնավարություն ձեռք բերելու քաղաքականությունը: Հայտնում է իր մտորումներն այդ կապակցությամբ:

ԳԱԹ ԹՖ, 1638 (384 լր.):

Ամառ, էջմիածին - Հանդիպում է Եգիպյան քույրերին:

Հետագայում դերասան և լրագրող Նվարդ Եգիպյան-Բաղդասարյանը հիշում է.

«1915 թվականի ամռանն էր: <...> Մենք՝ երեք ընթերցասեր քույրեր, որ սովորում էինք Երևանում և արձակուրդներին վերադարձել էինք մեր տուն՝ Էջմիածին, լսեցինք, որ Հովհաննես Թումանյանը Էջմիածնում է: Ասում էին, որ նա եկել և աշխատում է գաղթականներին օգնող կոմիտեում: Շտապեցինք գնալ վանքի բակը, փնտրել, գտնել Թումանյանին, տեսնել ու խոսել նրա հետ և առիթ ստեղծել հայտնելու մեր խոր հիացմունքը նրա անմահ գործերի, առանձնապես «Ամուշի» մասին, որի մեծ մասն անգիր գիտեինք: Շատ չանցած մենք արդեն վանքի բակում էինք: <...> Ամսոռանալի ծանր տպավորության տակ, ասես վերացած իրականությունից, մխրճվել էինք թշվառության ծովը... Այդ մղձավանջը մի պահ ասես ցրվեց, երբ հայացքս հանդիպեց ծանոթ զրքերից այնքան ծանոթ ու հարազատ մի դեմքի, որ կանգնած էր Էջմիածնի տաճարի գլխավոր մուտքի դռանը. այդ նա էր, այո՛, նա էր՝ Թումանյանը, որ միշտ մեղմ ժպտացել էր լուսանկարներից: Իսկ այդ պահին նա լուրջ ու մտախոհ զրուցում էր մի քանի անձանց հետ: Գյուտ արած մարդու պես, մի պահ մոռացած թշվառության այս ֆոնը, սթափեցրի քույրերիս, ցույց տվի Թումանյանին և շշմալով ասացի. «Մոտենանք, ծանոթանանք»: Մեր հարցական-հետաքրքիր հայացքներից, թե՞ անհրաժեշտությունից, չգիտեմ, բայց անսպասելիորեն արագ, մեկ էլ Թումանյանը նայեց մեզ, ու առաջինը ինքը մոտեցավ:

- Բարև ձեզ, աղջիկներ,- դիմեց նա այնպես պարզ ու հասարակ, ասես վաղեմի ծանոթների էր հանդիպել:- Երևի տեղացիներ եք, - հարցրեց:

Որպես ավագն ու համարձակը քույրերիս մեջ, ես սիրտ առա և պատասխանեցի:

Այո՛, տեղացիներ ենք, սովորում ենք Երևանում, իսկ այժմ այստեղ ենք և *ազատ* ենք,- կռահելով նրա միտքը, շտապեցի շեշտել *ազատ* բառը:- Մենք ճանաչում ենք ձեզ:

Լա՛վ, շա՛տ լավ, քանի որ այժմ ազատ եք և տեսնում եք այս թշվառների վիճակը, որ ծվարել են բաց երկնքի տակ,- ասաց ու հայացքով ցույց տվեց գաղթականներին,- թույլ տվեք հարցնել, թե չե՞ք ցանկանա օգտակար լինել սրանց, որ կարոտ են օգնության ու կարեկցանքի:

Ինչպես չէ, մեծ սիրով,- վրա տվինք մենք միաբերան,- միայն... ո՞ւմ դիմել, ինչպե՞ս, չգիտենք:

Գմանք,- ասաց նա վճռական եղանակով և մեզ առաջնորդեց դեպի ճեմարանի բակը, ուր կազմակերպված էր հիվանդանոց, ճաշարան, որբանոց, բուժօգնության կետ՝ կյանքում գրեթե ամեն ինչ կորցրած մարդկանց համար:

<....> Հաջորդ օրվա վաղ առավոտից երկու քույրերս, ի վիրավորանք փոքրի, որ 12-13 տարեկան էր, սկսեցինք աշխատել որպես գթության քույրեր: Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր մեզ մոռացած աշխատում էինք...

<....> Մի առավոտ, երբ շտապում էի աշխատանքի, տեսա մի սայլ, որի վրա բարձում էին մեռելների դիակներ՝ ոտքերից և ուսերից բռնած... Օ՛, ահավոր ու անմոռանալի տեսարան... Այդտեղ մի հոգևորականի հետ կանգնած էր թումանյանը՝ հուզված ու գլխիկոր:

<....> Կուտակված արցունքը, որ զսպում էի ուժերիս ամբողջական լարումով, քանդեց զսպող պատմեշը, և անգուսպ հեկեկանքը հորդեց...

Ուսիս զգացի մի հաճելի ծանրություն. նա քնքշությամբ շոյեց գլուխս և հայրական գուրգուրանքով ու արցունքներով երերվող ծայրով ասաց.

- Մի լար, աղջիկս, լավ որ այստեղ են մեռնում և հայրենի հողում են գերեզման գտնում, հապա... այն անգերեզման թշվառները... որ գիշատիչների ճարակ են դառնում... Գմա՛, գմա, աղջիկս, գմա՛ աշխատանքիդ. սրանց օգնել անկարելի է այլևս:- Ասաց ու ձախ ձեռքի բութ մատով հեռացրեց արցունքի շիթերն իր ակնակալներից, ապա դրականորեն շարժելով գլուխը՝ ավելացրեց.

- Աշխատենք, որ սրանց թիվը քիչ լինի:

<....> Մեծ բանաստեղծի հետ ունեցած հանդիպումները իրենց անջնջելի տպավորություններով ասես հետապնդում էին ինձ, և ես աշխատում էի առանց հոգնություն զգալու: Ականջիս հնչում էին մեծ բանաստեղծի խոսքերը. «Աշխատենք, որ սրանց թիվը քիչ լինի»:

ԹԺՀ, 683-685:

Սեպտեմբերի 1 - Դստեր հետ Երևանից վերադառնում է Էջմիածին:*

*) Սեպտեմբերի 2-ին Նվարդ Թումանյանը Էջմիածնից գրում է քրոջը՝ Աշխենին. «Երեկ եկանք Երևանից»:

ԻՄ, 72:

Սեպտեմբերի 1, Էջմիածին - Հեռագիր Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին.

«Մոտ երկու հազար փախստական ծնողներ ետ տարան իրենց զավակները: Այսօր երեկոյան ժամը 7-ին Թիֆլիս ուղարկվեց 600 հոգի: Սպասվում է Վանից նորից վերադարձող փախստականների մի հոսանք՝ բաղկացած մոտ 25000 հոգուց:

Հովհ. Թումանյան»:

ԵԼԺ 10, 230:

Սեպտեմբերի 2 - Սկսում է տպագրվել Ռ. Հովհաննյանի «Բաքվից Էջմիածին (Սարսափի վայրերում)» հոդվածը:

Բաքվի գաղթականական կոմիտեի հանձնարարությամբ չորս հոգով ուղևորվել են Էջմիածին՝ որք երեխաների մի խումբ տեղափոխելու Բաքու: Նկարագրում է ճանապարհի դժվարությունները: Էջմիածնում հանդիպում է Մատթեոս Եպիսկոպոսի և Թումանյանի հետ, նրանցից իմանում է, որ որոշվել է որք երեխաներին Թիֆլիսից հեռու չուղարկել: Հայտնում է իր դժգոհությունը, քանի որ Բաքվում ամեն ինչ պատրաստված է եղել՝ երեխաներին ընդունելու համար: Որպես բժիշկ՝ ներկայացնում է անտեր մնացած և «ճանճերի մման կոտորվող» որբերի վիճակը՝ զարմանալով, որ իրենց իրավունք չեն տալիս հոգալու նրանց մասին: Ներկա է լինում գաղթականության գործով զբաղվող, փախստականներին օգնող հանձնաժողովի նիստին, որտեղ Թումանյանը՝ որպես գործի կազմակերպիչ, զեկույց է տալիս որք երեխաների վիճակի մասին (տե՛ս օգոստոսի 9):

Սարսափելի մանրամասներով է ներկայացնում հատկապես ճեմարանի բակում և ներսում ապաստանած 1-2 տարեկանից մինչև 10-12 տարեկան որք երեխաների վիճակը և հավելում. «Երեխաների մեծագույն մասը արժանանում է խնամքի այն չափով, ինչ չափով որ դա համապատասխանում է պ. Թումանյանի մի քանի օգնականների գերագույն ուժերին: Մեր այնտեղ եղած ժամանակ նրա օգնականներն էին օր. Մեծբայան, որը գլխավորապես դրսի երեխաների հրա-

մանատարն էր և օր. Կ. Լիսիցյան (Թիֆլիսից) և տիկ. Ա. Պոպովյան, որոնք այսպես ասած ընդհանուր հրամանատարներ էին: <....> Նրանք մի 9-10 օր է, ինչ ստանձնել էին իրենց պաշտոնները և ապա՝ շեղվել է, թե ինչպես նրանք տիրապետել էին իրենց դերերին, ինչպես հաջող կերպով ընդունել էին իրենց բազմակողմանի պարտականությունների բարդ, դժվարին և վերին աստիճանի հոգնեցուցիչ կողմերը»:

«Արև», Բաքու, 1915, թիվ 138 (շարունակությունը՝ 139, 141):

Սեպտեմբերի 2 - Հակոբ* ստորագրությամբ մամակ էջմիածին՝ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Տեղեկացնում է, որ Թեհրանից էջմիածին է գալիս բժիշկ Տեր-Ստեփանյանը: Անգլիական և ռուսական դեսպանատների հանձնարարականով նպատակ ունի մեկնել Հնդկաստան՝ հայ գաղթականների օգտին հանգանակություն կազմակերպելու: Խնդրում է Թումանյանին՝ միջնորդել, որ կաթողիկոսը օգնի իրեն հատուկ կոնդակով և ուղեկից տա մի կարող, ազդեցիկ հոգևորականի, որպեսզի հանգանակությունը ավելի արդյունավետ լինի:

*) Հավանաբար Հայոց ազգային բյուրոյի քարտուղար Հակոբ Քոչարյանն է (տե՛ս ԼԿ, 171):

ԳԱԹ ԹՖ, 1454 (368 լր.):

Սեպտեմբերի 3 - Տպագրվում է Թումանյանի հեռագիրը Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին՝ էջմիածնից (տե՛ս սեպտեմբերի 1):

«Հորիզոն», 1915, թիվ 198:

Սեպտեմբերի 4 - Տպագրվում է Ռ. Հովհաննիսյանի «Երկու խոսք» հոդվածը:

Առիթը դժգոհություններն են իր նախորդ հոդվածից (տե՛ս սեպտեմբերի 2), թե ինքը խտացված գույներով է ներկայացրել գաղթականների վիճակը էջմիածնում: Հաստատելով, որ ինքը ներկայացրել է գաղթականության իրական վիճակը՝ նկատում է, որ Թումանյանը և իր 1-2 օգնականները կարիք ունեն նոր ուժերի՝ ավելի կանոնավոր կերպով կազմակերպելու որք երեխաներին խնամելու գործը:

«Արև», Բաքու, 1915, թիվ 140:

Սեպտեմբերի 4 - Ժիրայր Պալասանյան ստորագրությամբ խնդրագիր-մամակ թուժանյանին՝ Էջմիածնից.

«Մեծահարգ պրոֆ. Յ. Թումանյան,

Ներեցեք, որ հարկադրված եմ մի անգամ ալ դիմում ընել Ձեզ: Գիշտը որ միջոց մը գաղթականաց նպաստի բաժանման գործին աշխատեցա, սակայն ստացածն օրավարձը հազիվ նահատակ եղբորս ընտանիքին օրապահիկ մը կ'լլար: Այժմ ալ պարագաներու բերմամբ ստիպվեցա գործեն հեռանալ, վասնզի կուզեմ եղբորս ընտանիքը ուրիշ տեղ փոխադրել: Սակայն վերջին առած վարձքս ամբողջովին եղած է 4 1/2 ռուպլի, այնպես որ չգիտեմ, թե այդքանով ինչպես հոգամ եղբորս ընտանիքի հոգսերը, մինչև որ մի տեղ կ'հասնիմ, և գործ մը կը ճարեմ: Ուսուցիչներուն բաժանելու համար Ձեր տված գումարից ոչինչ չեմ ստացեր, չնայած որ մեր ընկերներից մեկնողները իրենց բաժինը ստացան: Ուստի, պ. Թումանյան, իմ հոգսերու հարկադրությամբ կ'դիմեմ խնդրելու, որ եթե կարելի է, ինձ ալ փոքրիկ օգնություն մը ընելու բարիքն ընեք, որով կ'մնամ շնորհակալ և երախտապարտ Ձեզ ժիրայր Պալասանյան»:

ԹԹ ԳԳ, 1079, 31/10:

Սեպտեմբերի 5 - Բարդուղիմեոս Եպիսկոպոսի խնդրագիրը թուժանյանին՝ Էջմիածնից.

«Մեծապատիվ պ. Յովհ. Թումանյանց

Վանեցի Մարկոս անուն գրաբերիս կ'իմը մեռավ երեկ, երկու փոքրիկները մնացին անխնամ: Ինքը աղքատ է՝ բառիս իսկական նշանակությամբ: Խնդրում եմ սորա փոքրիկները ընդունել Ձեր կառավարած որբանոցը: Ինքը ծառայում է ինձ մոտ»:

ԹԹ ԳԳ, 1079/33:

Սեպտեմբերի 8 - Էջմիածնի մատենադարանում տեղի է ունենում «Բժշկական կոմիտեի» երկրորդ նիստը՝ բժիշկ Յամո Օհանջանյանի նախագահությամբ: Մասնակցում են 18 բժիշկներ, «Եղբայրական կոմիտեի» ներկայացուցիչ Բաբկեն վարդապետ Վարդազարյանը և «որբանոցի ներկայացուցիչ» Յովհ. Թումանյանը:

Ելույթ է ունենում նաև Թումանյանը: Թերթի հաղորդման համաձայն՝ բանաստեղծին հուզել են այն մույն խնդիրները, որոնց մասին նա ահագանգել էր Թիֆլիս ուղարկած իր հեռագրերում (տե՛ս օգոստոսի 14, սեպտեմբերի 1). «Յովհ. Թումանյանը առաջարկում է շուտափույթ ժողովել բաց երկնքի տակ գտնվող գաղթականներին,

որովհետև շուտով կսկսվեն ցրտերը, և եթե կան գաղթականության մեջ փոքրիշատե առողջներ, դրանք էլ կհիվանդանան: Բժիշկ Լ. Մյասնիկովը միանում է պ. Թումանյանի առաջարկին: Հայր Բաբկենը նպատակահարմար է գտնում գաղթականներին պատսպարել վեհարանի նոր շենքի մեջ»:

«Հորիզոն», 1915, թիվ 215:

Սեպտեմբերի <10-11> - Էջմիածնից դստեր հետ վերադառնում է Թիֆլիս:

ԼԿ, 172: ԵԼԺ 10, 605:

Սեպտեմբերի 12 - Թումանյանի եղբոր՝ Ռոստոմի նամակը Թիֆլիս՝ Օլգա Թումանյանին՝ Դսեղից:

Բանակում ծառայող իրենց Արտաշես եղբորից հեռագիր է ստացել, որ հիվանդացել է, բուժվել է հոսպիտալում և հիմա արդեն լավ է:

Օհանեսը իրեն հեռագրել է, որ գա Թիֆլիս: Ուզում է իմանալ՝ ինչ կա, ետը ինչ բերի:

«Մի ուրախ բան» է ուզում իմանալ Համլիկից:*

*) Խոսքը Թումանյանի որդու՝ Համլիկի ճեմարանական գործերի մասին է (տես հունվարի 16):

ԹԹ ԳԳ 952/8:

Սեպտեմբերի 15 - Խաչատուր Լևոնյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից:

Ներկայանում է որպես «գրչակից եղբայր»: Ցավում է, որ բանաստեղծի՝ Վանում եղած օրերին չի կարողացել հանդիպել նրան տկարության պատճառով: Հիմա Երևանում է: Հիվանդանոցից նոր է դուրս եկել և բնակվում է գաղթականների հետ ողորմելի վիճակում: Մեծագույն խնդրանքով դիմում է բանաստեղծին օգնություն ցույց տալ իրեն և իր բազմանդամ ընտանիքին:

ԳԱԹ ԹՖ, 1352 (152 III g.):

Սեպտեմբերի 16 - Սպանվում է բանաստեղծի ավագ եղբայրը՝ Ռոստոմ Թումանյանը:*

*) Ռոստոմ Թումանյանը Լոռու Մարց, Շամուտ, Աթան, Քարինջ գյուղերի վանքապատկան հողերի կառավարիչն էր: Գործի բերումով հաճախ հակասություններ էին ծագում նրա և գյուղացիների միջև: Հակասությունները սրվում են հատկապես այն պատճառով, որ Էջմիածնի հոգևոր ղեկավարության

հանձնարարությամբ նա գյուղացիներից պահանջում է եկեղեցական հարկը բնամթերքի փոխարեն վճարել դրամով: Օգտվելով առիթից՝ բանաստեղծի հակառակորդները, հատկապես «Մշակը» սկսում են կառավարչի դեմ տպագրել հոդվածներ, անգամ գյուղացիների անունից կեղծ նամակներ, որոնք հաճախ խեղաթյուրված էին ներկայացնում իրողությունները (տե՛ս «Մշակ», 1914, թիվ 11, 28, 46, 52) փորձելով վարկաբեկել նաև բանաստեղծին: Պատասխան հոդվածներով հանդես է գալիս «Հորիզոնը» (տե՛ս 1914, թիվ 51, 52, 124): Բանաստեղծին վարկաբեկելու փորձերի դեմ Մոսկվայից բողոքում են Վ. Տերյանը, Յ. Խանգադյանը, Պ. Մակինյանը (տե՛ս «Հորիզոն», 1914, թիվ 19):

Հավանաբար կառավարիչը, այնուամենայնիվ, ավելորդ խստություններ է գործադրել գյուղացիների նկատմամբ: Դրանից օգտվում են տեղի հարուստ հողատերերը, որոնք կալվածային վեճեր ունեին թուևանյանների հետ: Այս ամենը վերջիվերջո հանգեցնում է նրան, որ Ռոստոմ թուևանյանը դառնում է դավադիր գնդակի զոհ՝ մեծ վիշտ պատճառելով առանց այն էլ այդ օրերին հոգեպես ու ֆիզիկապես ընկճված բանաստեղծին:

ԵԼԺ 10, 230, 606:

Սեպտեմբերի 16 - Շ. Եվանգուլյան ստորագրությամբ նամակ թիֆլիս՝ թուևանյանին՝ <Էջմիածնից>:

Ներկայացնում է Էջմիածնի որբերի վիճակը: Խնդրում է բանաստեղծի օգնությունը՝ գումար հայթաթելու նրանց կարիքները հոգալու համար:

ԳԱԹ ԹՖ, 1159 (319 լր.):

Սեպտեմբերի 17 - Ալեքսանդր Պապովյանի նամակը թուևանյանին թիֆլիսից:

Վշտակցում է բանաստեղծին եղբոր սպանության կապակցությամբ: Հավատում է, որ նա իր հոգու մեծությամբ կհաղթահարի այս, ինչպես նաև համազգային աղետի վիշտը: Մաղթում է առողջություն և արիություն:

ԳԱԹ ԹՖ, 1936 (177 III g.):

Սեպտեմբերի 17 - Լսելով եղբոր սպանության բոթը՝ մեկնում է Դսեղ:

ԼԿ, 171:

Սեպտեմբերի 19 - Սամսոն Հարությունյանի նամակը՝ թուևանյանին՝ Դիլիջանից.

«Սիրելի Հովհաննես.

Ահա ուղարկում են երեք հոգի, որ այդտեղից 200 որբեր բերեն Դիլիջան, գուցե այստեղ հետո թիվը շատացնենք – օդը լավ ու կաթը շատ: Դիլիջանից հետո կը կազմենք որբանոցների Ղարաքիլիսա, Ջալալօղլի ու լեռնային տեղերում Լոռու: Այս մասին ես գրեցի մամակ Բագրատ Սրբազանին, որո մասին մա անշուշտ կասի քեզ:՝ Գրեցի Սրբազանին, մույն և քեզ են գրում, որ մենք, ինչպես այդտեղ պարզեցինք, իբր սկզբունք, այդ որբերին չպետք է ցրենք, այլ պետք է համախմբված պահենք, որ մույն ամբողջությամբ վերադարձնենք երկիր:՝ Զեզ էլ խնդրում են, որ մեր ուղարկած մարդկանց այդտեղ շատ չի պահեք, ուղարկեցեք երեխաների ցուցակ, վագոններ պահանջեք ու ուղարկեք: Մեր այստեղի տիկիները գտնում են, որ նպատակահարմար է կաթնակեր մանուկներից ուղարկեք մինչև 50 հոգի, որովհետև այստեղ, բացի օդի լավ լինելուց, կաթի առատություն է: Քո այդտեղ մնացող երեխաների համար շատ լավ բան եղավ:

Ջերմ բարևներս: Քո Սամսոն»:

*) Նամակն ուղարկված է Էջմիածնի հասցեով. նամակագրին հայտնի չէր, որ բանաստեղծն արդեն Թիֆլիսում է:

**) Դեռ հույս ունեին, որ գաղթականները վերադառնալու են իրենց տեղերը:

ԹԹ ԳԳ, 1079, 31/12:

Սեպտեմբերի 23 - Արամ Առաքելյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին Բաքվից:

«Արևի» 153 համարում «Դրուբյունը Վանում» թղթակցության վերջին մասը անուշադրության հետևանքով չի տպագրվել: Ինքը չի նայել, գրաքննիչն էլ չի նկատել, և այդ մասը մի այլ հոդվածի փոխարեն է տպագրվել: Եթե Թիֆլիսի գրաքննիչը նկատի, աղմուկ կբարձրանա: Դիմում է բանաստեղծին. «Խնդրում են քեզ, առանց մարդու բան ասելու, հետևես, որ եթե բան է ուշադրություն գրավեց այդ ցանցառ թղթակցությունը, իսկույն ևեթ բոլոր հնարավոր միջոցները գործ դնես փակելու խնդիրը: Եթե բան է հարկ լինի դրա համար Թիֆլիս գալ, անմիջապես կհեռագրես»:

ԳԱԹ ԹՖ, 928 (527):

<Սեպտեմբեր> - Վահան Տերյանի նամակը Թիֆլիս՝ Նվարդ Թումանյանին Մոսկվայից:

Տեղեկացնում է, որ «Поэзия Армении» ժողովածուով զբաղվում է հիմնականում Պ. Մակինցյանը, թեև կա խմբագրական հանձ-

նաժողով: Թումանյանից արդեն թարգմանված են «Անուշը», «Աղավ-
նու վանքը», «Աղջկա սիրտը»: «Շատ լավ է թարգմանված, կար-
դացի – Վյաչեսլավ Իվանովն է թարգմանել Իվան Ֆադեյիչի
գրվածքների մեծ մասը: Եվ նա շատ է հավանում Իվան Ֆադեյիչին»:

Գրում է, որ Մոսկվայի ժողովածուն («Поэзия Армении») ավե-
լի հետաքրքրական կլինի քան Պետերբուրգինը («Сборник Армян-
ского литературного общества»): Դրա պատճառը համարում է այն, որ հայ պոե-
զիան ավելի բարձր է, քան արձակը:

Հայտնում է, որ իրենից անկախ պատճառներով «Գիքորը»
չհաջողվեց մտցնել ժողովածուի մեջ (տես Յուլիս):

ՎՏ ԵԺ, III, 404:

Վաղ աշուն կամ սեպտեմբերի երկրորդ կես Թիֆլիս -
Մասնակցում է «Պատանի» ալմանախի խմբագրության կազմակեր-
պած ցերեկույթին:

Բանաստեղծ և դերասան Պահարեն (Հայկ Պետրոսյան) հի-
շում է. «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ էր,
1915 թ. ամռանը,* «Պատանի» ալմանախի խմբագրությունը հայ
գաղթականների օգտին Թիֆլիսի «Ստելլա» ամառային այգում
կազմակերպել էր ճոխ «զբոսանք-ցերեկույթ»: Ես Թումանյանի աղ-
ջիկներից մեկի՝ Անուշի հետ «Ֆլիրտի» հայերեն թերթիկներ էինք
վաճառում բարձրացրած գներով, իսկ վերջում բեմի վրա հանդես
եկա իմ բանաստեղծություններից երկուսի արտասանությամբ՝
««Արյան օրեր» շարքից» խորագրով:

Նոր էի վերջացրել և իջել այգի՝ ուրիշ աշխատանքով զբաղ-
վելու, երբ մեկ էլ Թումանյանը, թողնելով իր խոսակից ընկերներին,
մոտեցավ ինձ, առանց որևէ կողմնակի առիթի ձեռքս թոթվեցավ:

- Լավ էր: Ես ծանոթ էի քո բանաստեղծական շնորհքին, բայց
ոչ արտասանությանդ: Շարունակիր:

Ուրախությանս և հոգեկան իմ բավականությանը սահման
չկար ոչ այն պատճառով, որ արժանացել էի մեծ արվեստագետի գո-
վասանքին, այլ բաղձալի ծանոթության, սրտառուչ, պարզ ու ան-
կեղծ վերաբերմունքի:

*) Հուլիսից շփոթում է. մինչև 1915-ի սեպտեմբերի 10-11-ը Թումանյանը դեռ
էջմիածնում էր: Այդ հանդիպումը հավանաբար տեղի է ունեցել սեպտեմբերի
երկրորդ կեսին, երբ բանաստեղծն արդեն Թիֆլիսում էր և շարունակում էր
զբաղվել գաղթականներին օգնելու գործով:

ԹԺՀ, 670:

Հոկտեմբերի 1 - Արտավազդ Թումանյանի նամակը Մոսկվա՝ Պողոս Մակինցյանին՝ Թիֆլիսից:

Գրում է. «Արդեն աշնանային օրեր են սկսվել, մեր տանը ավելի վատ:

Ռոստոմին (հորեղբորս) սպանեցին Դսեղում... Պոետի հալը հալ չի: Նվարդի հետ վերադարձավ Էջմիածնից շատ տկար, և չանցած հինգ օր Ռոստոմի սպանության դեպքը պատահեց:

<...> Հայրիկի վրա շատ ծանր տպավորություն է թողել Ռոստոմի սպանությունը, և երկար ժամանակ նա չի պարապի:

Իվան Ֆադեյիչի ծանր օրերն են»:

Հետաքրքրվում է. «Հա. խաղերը* տարար Բագու, բայց մինչև հիմա ոչ մի խաբար. չհասկացա, թե ինչ եղավ»:

*) Խոսքը Թումանյանի կազմած խաղերի մասին է (տե՛ս մարտի <երկրորդ տասնօրյակ>, <ապրիլի 19>):

ԹԶ ԱՐՆ, գիրք Ա, 143-144:

Հոկտեմբերի 4 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 224) «Թանկ մարդու հիշատակին» հոդվածը:

Գրված է օր. Սաթեմիկ Օհանջանյանի մահվան առիթով: Օր. Սաթեմիկը այն նվիրյալներից էր, որ իրենց անձը մոռացած՝ Էջմիածնի որբանոցում խնամում էին եղեռնից փրկված հազարավոր հիվանդ ու անօգնական երեխաների: Բանաստեղծը նկարագրում է այն աննախադեպ դժվարությունները, որ ստիպված էին հաղթահարել անձնուրաց հայ կանայք ու օրիորդները: Շատերը նրանցից վարակվեցին մահաբեր հիվանդությամբ ու զոհաբերեցին իրենց՝ հանուն մարդասիրական առաքելության: Դրանցից էր օր. Սաթեմիկը: «Բայց ինչո՞վ էր նա նշանավոր, ինչո՞վ էր նա թանկ, ինչո՞վ է ինձ հուզում նրա մահը.- ամփոփելով խոսքը՝ հարցնում է բանաստեղծը և պատասխանում:- Նա թանկ էր, որովհետև էն հազարավոր անձնավորություններից մեկն էր, որոնք ավելի շատ ուրիշների համար են ապրում:

Չէ՞ որ աշխարհքում մարդիկ կան, որ ապրում են միայն իրենց համար, մարդիկ կան, որ ապրում են ուրիշներին տանջելու համար, մարդիկ էլ կան, որ ապրում են տանջվողներին օգնելու համար:

Եվ, ավա՛ղ, ամենից քիչը հենց սրանք են աշխարհքում: Սրանցից՝ էս քչերից, էս թանկերից մեկն էր մեր օրիորդ Սաթոն»:

ԵԼԺ 7, 178-179:

Հոկտեմբերի 4 - Վարդան Դարբինյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Վաղարշապատից:

Հիշեցնում է, որ Բաքու ուղարկված 500 որբերի մեջ եղել են նաև իր երկու որդիները, որոնք տեղ չեն հասել: Խնդրում է օգնել՝ գտնելու նրանց տեղը: Ինքը դեղագործ է և աշխատանք չունի, խնդրում է և հույս ունի, որ բանաստեղծը կօգնի իրեն՝ աշխատանք գտնելու Թիֆլիսում:

ԳԱԹ ԹՖ, 1125 (308 լր.):

Հոկտեմբերի 9 - Արամ Առաքելյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին Բաքվից:

Տեղեկացնում է, որ ինքը՝ որպես «Արև» թերթի խմբագիր, ենթարկվել է տուգանքի: Չվճարելու դեպքում իրեն սպասում է բանտարկություն: Դիմել է Խատիսյանին, որ խոստացել է օգնել՝ տուգանքը համելու կամ գոնե չափը նվազեցնելու: Բայց այնպես էլ պատասխան չի ստացել:

Խնդրում է բանաստեղծին, որ նորից հիշեցնի Խատիսյանին և իր կողմից էլ միջամտի, որ գործը հաջող ավարտ ունենա:

ԳԱԹ ԹՖ, 929 (528):

Հոկտեմբերի 10 - Նամակ գործող բանակ՝ եղբորը՝ Վահանին՝ Թիֆլիսից:

Գրում է. «Սիրելի Վահան, հենց որ դուք ցրվեցիք, Ռոստոմն էլ մնաց թշնամիներով շրջապատված, ես էլ հազար ու մի հոգսերով ու ցավերով խեղդված՝ ահով ու դողով շարունակ սպասում էի մի փորձանքի, մանավանդ Ռոստոմի կողմից: Դու էլ հո միշտ գրում էիր, զգուշացնում էիր, ես էլ ամեն անգամ, շարունակ կռվում էի, որ ձեռք վեր ունի զանազան դալմադալներից ու իրան պահի: Գյուղերի ժողովրդի հետ հաշտվեց, վերջացավ, բոլոր պրատակուները ներել տվի, հիմի էլ մեջտեղը հայտնվեցին դարձյալ էն հին շայկան՝ Պետրոս, Վարդան իրենց ընկերներով և, մանավանդ, Փանոսի տղերքը: Փանոսի տղերքը հո իրանք ոչ մի առաջարկության, ոչ մի ձևի չհամաձայնվեցին, ավելի ու ավելի կռիվը բորբոքեցին, մյուս կողմից էլ հողերը տվել էր մեր փեսա Մեխակին ու իր հորը. իրանք էլ էնտեղից դալմադալը թեժացրին իրենց սարսաղությունով: Ինչքան խնդրեցի, կռվեցի, ասեցի, որ ձեռք վեր ունի էդ ձևից, թողնի ինչ ուզում են անեն միառժամանակ, հո դրանով չենք ապրում, կամ վերջապես

փոխի Իգատակի հողերի հետ, մղարթեցիք աղաչանք են անում, թող գնան նրանց հետ ինչ ուզում են անեն, նրանք էլ մարդիկ ասում են – տվեք մեզ, մենք դրանց հախիցը կգանք, չէլավ, չէլավ, չէլավ:

Գնաց, եկավ, ձգձգեց, ձգձգեց, մյուս կողմից՝ կրակը թեժացրին ու թեժացրին, մինչև որ տվին, տուններս քանդեցին, և ինչից որ վախում ու դողում էինք – կատարվեց»:^{*}

Այնուհետև գրում է եղբոր սպանության հանգամանքների, փախուստի փորձի ժամանակ մարդասպաններից երկուսի սպանվելու, Փանոսի տղային բռնելու, մյուս հանցակիցներին որոնելու, ընտանեկան գործերը մյուս եղբոր՝ Արտաշի հետ կարգավորելու մասին:

Հորդորում է եղբորը, որ տոկում լինի, կարողանա դիմանալ ծանր հարվածին. «Հիմի մնում է, որ դու խելք հավաքես, քեզ պահես, որ կարողանանք ուղղել, ինչ որ կարող ենք ուղղել, իսկ ինչ որ չենք կարող՝ մենք ինչ անենք: Քո աչքի առաջին էլ, իմ աչքի առաջին էլ օրական հազարավորները գնում են: Ո՞ւմ ձեռիցն է ինչ գալիս: Էլի խելոքությունը, իմաստությունն ու համբերությունն են ամեն բանի հաղթում:

Քեզ պահի, ամենքի հույսն էլ քեզ վրա է, որ թշնամու ոտի տակ չընկնենք, մեր տունը կանգուն մնա ու ոչ թե ընկնենք, այլ ավելի ու ավելի զորանանք, ավելի ու ավելի առաջ գնանք: Վաղն էլ մեկս կամ մյուսը կարող ենք մեռնել կամ սպանվել, դրանից էլ հեշտ. տեսնում ես, աշխարհքումը բան չկա, մանավանդ էս անիծված ժամանակը, բայց էլի ապրողները պետք է իրանց կարգին ապրեն:

<...> Եսպես, Վահան ջան, տղամարդու նման ընդունիր էս վիշտը. ինչպես երևում է, սիրտդ էլ արդեն իմացել է: Ես էլ էս վշտերից ու նեղություններից համարյա ծերացել եմ, սպասում եմ, որ դուք մի հավաքվեք, երեխեքն էլ իրանց ճամփին զորանան, որ զոնե դրա մեջ մի մխիթարություն տեսնեն: Ամենքն էլ սպասում են, որ երբ որ դու կգաս - ամեն բան իր կարգը կընկնի: Հիմի եղ հոգսի վրա եմ»:

Եվ վերջում. «Ուն վրա որ էդքան հոգի մտիկ են անում, նա սարի նման պետք է լինի»:

^{*}) Բանաստեղծի այդ մտահոգությունների մասին Դ. Դեմիրճյանը հիշում է.

«Զեն կարող մշտազբաղ Թումանյանի այս տարիների հիշողություններիցս հեռացնել մի տխուր գիծ նրա կենսագրության մեջ: Դա նրա մեծ եղբոր՝ Ռոստոմի մասին պատմություններն էին: Ռոստոմը Մարցի կալվածների կառավարիչ էր՝ նշանակված Էջմիածնի վանական կառավարության կողմից: Նա այնտեղ խստություններ էր

գործադրում գյուղացիների դեմ: Վերջը նրան սպանեցին գյուղացիները: Ճիշտ է, սպանության անմիջական դրդողը ինքը ևս կալվածական վեճ ուներ թուևանյանների, ճիշտը՝ Ռոստոմի հետ, բայց որ գյուղացիները գրգռված էին Ռոստոմի դեմ - դա ճիշտ է: Ռոստոմը կարողանում էր իր դիրքերում մնալ թուևանյանի շնորհիվ: Չեմ կարող որոշակի ասել, թե թուևանյանն ի՞նքն էր աջակցում, որ իր եղբայրը մնա այդ պաշտոնում, թե՞ եղբայրը մնում էր պաշտոնում, որովհետև էջմիածնի կառավարությունը թուևանյանի անվան համար պահում էր այդ կառավարչին: Միաժամանակ չեմ կարող ասել, թե որ աստիճան ճիշտ են Ռոստոմի խստությունների մասին պատմածները, որովհետև ինձ հայտնի են բազմաթիվ նկարագրություններ, թե ինչպես էին Լոռում ոչնչացնում անտառները: Բայց շատ բաներ էին ասում, և թուևանյանը լսում էր» (տե՛ս ԹԺՅ, 40):

ԵԼԺ 10, 230-232:

Յոկտեմբերի 21 - Տպագրում է («Լուևա», մեկօրյա թերթ,* Թիֆլիս, 1915, թիվ 1) «Յիշողություններ էջմիածնի որբանոցից» հոդվածը:

Գրված է հուլիսի վերջերից մինչև սեպտեմբերի կեսերը էջմիածնի գաղթականության, հատկապես որբ երեխաների կացության մասին օրագրային գրառումների հիման վրա: Բերում է հիշողության մեջ առանձնապես տպավորված մի քանի դրվագներ.

«Ես էլ նրանցից մեկն եմ, որ էս երեխաների մեջն էի, բայց երբ էսօր նստում եմ ու աշխատում եմ վերհիշել, կարծես թե նրանց՝ երեխաներին չեմ տեսել: Չեմ տեսել, չեմ ճանաչել առանձին-առանձին: Սաստիկ, սաստիկ ծանր էր նրանց հետ խոսելն ու խոսեցնելը... Եթե խոսել ու խոսեցրել եմ, էն էլ շատ քիչ, պատահումներով...

Սակայն շարունակ աչքիս առաջն է նրանց բազմությունը, նրանց վտիտ, քաղցած ու մերկ բազմությունը, որ անտառում կանգնած սպասում էր մինչև ճեմարանը դատարկեն...

Դատարկ է արդեն...

Եվ նշան առնելուն պես, միջօրեական թեժ արևի տակ, փոշու ամպեր բարձրացնելով, ագահությամբ հոսանք առավ դեպի ճեմարան...

Այնուհետև ճեմարանի մուտքի առջև...

Ահա հազարավոր մայրերի ոսկրացած բազուկների ու ձեռների անտառը, որ, ասես թե մի հսկայական փոթորկից կռացած,

համատարած խուլ աղմուկի ու իրարանցումի մեջ, ամեն կողմից առաջ են հրում անթիվ, անհամար մանկական կմախքներ, կմախքներ, որ դեռ շնչում էին...:

<....> Հիշում եմ և էն լավ օրը, երբ առաջին անգամ վերահսկողները գանգատվեցին, թե արդեն չարածի են դարձել, դժվարացել է կառավարելը, երբ առաջին անգամ տեսանք, թե ինչպես էին նախասենյակներում կուտակած աշակերտական նստարանների արանքները լցվել կամ վրաները բարձրացել ու ոմանք զվարթ երգում են խմբով, ոմանք, նստարաններին հեծած, ծի են խաղում, ոմանք էլ կատակներ են անում, ուրախ-ուրախ ճչում, կրկնում...

Ու ամենքիս աչքերն էլ լցվեցին ուրախության արցունքներով...

Հիշում եմ՝ ինչպես էին այնուհետև կարգով, երկար սյունակներով ձգված, միամիտ երգելով, իրենց հին վարժուհիների ու վարժապետների հետ, ճեմում ճեմարանի ծառուղիներում, մինչդեռ մեռելատար սելերը «մեռե՛լ... մեռե՛լ...» ոռնալով, հավաքում էին նրանց սովամահ եղած մայրերի չորացած դիակները, որ գալիս ուժասպառ կուչ էին գալիս իրենց երեխաներից մոտիկ՝ որբանոցի պատերի տակ կամ հնձած խոտի նման խմբովին թափվում էին ծառաստանի ծառերի տակին...:

<....> Եվ, ո՞վ գիտի, այժմ էլ էն զանազան քաղաքներում երբ հարցնում են թե՛ մայր ունե՞ք, պատասխանում են՝ այո, և դեռ գրել են տալիս իրենց մայրերի անունները, առանց իմանալու, թե նույնիսկ էնքան թաղողներ չէին գտնվում էջմիածին, որ վրա հասնեին, թաղեին իրենց շատերի մայրերին...»:

*) Այդ հատուկ թերթի մասին մամուլը տեղեկացնում է, որ հայ եկեղեցական և հոգաբարձական կոմիտեի նախաձեռնությամբ լույս է տեսել ու հայ գաղթական որբերի օգտին վաճառվել «Լուսնա» անունով միօրյա մի թերթ՝ հայերեն, ռուսերեն բաժիններով: Հայերեն բաժնում տպագրվել են թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսի կոչը, Մ. Վարանդյանի, Հովհ. Թումանյանի, Ա. Ջամալյանի և ուրիշների հոդվածները (Հորիզոն», 1915, թիվ 237):

ԵԼԺ 7, 179-181:

Հոկտեմբերի 22 - Հաղորդագրություն մամուլում, որ Մոսկվայում տեղի է ունեցել հայ պոեզիային նվիրված երեկո՝ Ազատ էսթետների նախաձեռնությամբ:

Վ. Բրյուսովը համդես է գալիս դասախոսությամբ հայոց բանաստեղծության մասին՝ սկզբից մինչև նորագույն ժամանակները:

Ապա ընթերցվում են հայ բանաստեղծներից ռուսերեն թարգմանություններ:

«Кавказское слово», 1915, թիվ 233:

Հոկտեմբերի 23 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 238)
«Մի երկու վկայություն» հոդվածը:

Առիթը «Кавказская речь» թերթի խմբագիր Կ. Պ. Տումանովի (Կ. Տումանյանի) «Նամակներ» խորագրով հոդվածաշարն է, որ հեղինակը տպագրում էր «Грузин» ստորագրությամբ: Հոդվածաշարն այն թեզն է պաշտպանում, թե Կովկասի բնիկները վրացիները և թուրքերն են, հայերը եկվոր են, Կովկաս են եկել ռուսների հետ, իսկ արևմտահայ գաղթականության հոսքը Կովկաս համարում է նպատակային քաղաքականություն, թե իբր հայերի երկիրը բուսազուրկ, կենդանազուրկ, անբերրի տարածք է, դրա համար էլ նրանք գալիս են հաստատվելու Կովկասում:

Այս անհեթեթ պնդումների շուրջ բարձրացած աղմուկը Թումանյանն համարում է «տգետ ու տգեղ»: Հատկապես վրացական, պարսկական և այլ օտար աղբյուրներից քաղված փաստական վկայակոչումներով ցույց է տալիս այդ պնդումների սնանկությունը: Եվ վերջում. «Հայերն ու վրացիները, Կովկասի բնիկ եղբայր ժողովուրդները, որ միշտ միասին էնքան տառապել են քաղաքակրթության ու քրիստոնեության համար, անցյալներումն էլ են ունեցել անմիտ ու դատապարտելի վեճեր, մեծ մասամբ դավանաբանական: Վիճել են, օրինակ, նրա համար, թե Քրիստոսը ե՞րբ հարություն առավ, կեսգիշերին, թե լուսադեմին, և էս տեսակ վեճերի համար նույնիսկ իրար գլուխ են ջարդել, բայց էս անմիտ ու սխալաստիկ վեճերից էլ հազար անգամ ավելի ծանր է ու անոթալի էս վեճը, որ վարում ենք էսօր, ապացուցանելու, թե հայերը նոր, երրորդ ժողովուրդ չեն Կովկասում, թե տաճկահայերը ետին մտքով չի, ոչ էլ իրենց հայրենիքի բնության դաժանությունից ու աղքատությունից է, որ Տաճկաստանից փախչում, գալիս են Կովկասում դռնեդուռ ընկնում ու կոտորվում, և, վերջապես, թե Հայաստանի դատարկվելը դեմ է հայերի ցանկությամբ, դա մի գաղտնի քաղաքական դավադրություն չի հայերի կողմից...»:

ԵԼԺ 7, 181-187:

Հոկտեմբերի 25 - Տպագրվում է «Ռուս բանաստեղծները և հայ գրականությունը» խորագրով հաղորդում Մոսկվայից՝ Ս. Ոսկերչյան ստորագրությամբ:

Տեղեկացվում է «Свободная эстетика» ընկերության առաջին նիստի մասին, որ ամբողջապես նվիրված է եղել հայոց բանաստեղծությանը: Ընթերցվել են նաև հայ բանաստեղծներից ռուսերեն թարգմանություններ: Դրանց մասին հոդվածում նշվում է. «Որքան հնարավոր է դատել առաջին տպավորությունից, պետք է ասենք, որ թարգմանություններն ընդհանուր առմամբ հարազատ էին, բայց ոչ միշտ հաջող: Օրինակ՝ Թումանյանի, Իսահակյանի և Դուրյանի բանաստեղծություններից մի քանիսը կորցրել էին այն քաղցրությունը և գեղեցկությունը, որ հնարավորություն ունի վայելելու հայ ընթերցողը»:

«Մշակ», 1915, թիվ 236:

Հոկտեմբերի 28 - Տպագրվում է Թումանյանի «Մի երկու վկայություն» հոդվածի ռուսերեն թարգմանությունը:

«Кавказское слово», 1915, թիվ 238:

Հոկտեմբերի 29 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 243) «Հին կռիվը» պոեմի առաջին երգը՝ «Տանը» վերնագրով և «Անտիպ պոեմից» նշումով:*

*) Թերթի նույն համարում բանաստեղծը հատուկ խնդրանքով դիմում է ընթերցողներին. «Առիթից օգտվում են մի խնդիր անելու նրանց, որոնք 1910-11 թվականներին իրենցից տարած թղթերը ետ են ստացել Թիֆլիսի ժամդարմական վարչությունից:

Էդ ժամանակ, երբ իմ ձեռագիրներն ու թղթերն էլ ետ վերադարձրին կապոցներով, կապոցների թիվը ճիշտ էր, բայց հիմա կապոցն իմը չէր, շփոթված էին ուրիշի (Կոլմանյանի) թղթերի հետ և ես իսկույն վերադարձրի (տե՛ս 1911, հունվարի 27, 28): Սակայն իմ 5 կապոց ձեռագիրները, որ ըստ երևույթին սխալմամբ տրված են ուրիշին, ինչքան էլ հետևեցի, մինչև օրս չգտա: Եվ ում մոտ էլ լինեն, դժար կիմանա, թե ում ձեռագիրներն են, որովհետև ոչ մեկի վրա անուն-ազգանուն չկա: Ահա դրանցից մի քանիսը:

Մի՞նը ես պոեմն է՝ վերնագիրը գրած «Լևոնի կռիվը» և ջնջած: Հինգ տետրով հետևյալ հիմա երգերը.

Տանը (որ տպվում է «Հորիզոնի» էս համարում: Սրա մշակված ձևը: Էս սևագրությունն է, որ աղջիկս է գտել):

ճամփին (որի նախերգանքը՝ «Հայոց լեռներում», տպվել է):
Երկրում (որ 1907 թ. տպագրված է «Ժամանակ» թերթում և Բաքվում տպված իմ գրքի մեջ):

Հրդեհը:

Ժողովրդի մեջ և մնացած խառը նյութեր:

Մյուսը «Հազարան բյուրյուլ» հեքիաթ-պոեմի սկիզբն է և մի-ջից մի քանի թղթեր:

Երրորդը մի պոեմ, որ էս տողերով է սկսվում.

«Ես վայր եմ իջնում հայոց լեռներից.

Գալիս եմ ինձ հետ հովիվն ու հոտեր,

Ես ձայն եմ տալիս հայոց դաշտերից,

Լալիս եմ ինձ հետ գեղջուկն, իր ցավեր...»:

Եվ այլն: Եվ ուրիշ նյութեր ու չավարտած ձեռագիրներ: Խընդ-րում եմ՝ եթե մեկն ու մեկի մոտ եմ ընկած էս թղթերը՝ ինձ հանձնի:

Հասցեն՝ Туфлус, Вознесенская, 18, կամ ուղղակի «Հորիզո-նի» խմբագրություն:

Հովհաննես Թումանյան»:

Բանաստեղծի այս դիմումը այնպես էլ մնում է անարձագանք:

ԵԼԺ 4, 59-70:

Հոկտեմբերի 29 - «Նամակներ Մոսկվայից» խորագրով, Ա. Մ. ստորագրությամբ տպագրվում է ընդարձակ հաղորդագրություն «Ազատ էսթետների ընկերության» կազմակերպած երեկույթի և Վ. Բրյուսովի՝ հայոց բանաստեղծությանը նվիրված զեկուցման մասին.

«Ժամանակին հայտնել էի «Հորիզոնին», որ Մոսկվայի Հայկա-կան կոմիտեն ձեռնարկել է մի գեղեցիկ գործ՝ հրատարակել ռուսե-րեն լեզվով մեր հին ու նոր գրականությունից մի հավաքածու:

Այժմ այդ գործը վերջանալու վրա է: Պատրաստ է արդեն հա-վաքածուի առաջին գիրքը, ուր տեղ է բռնել հայկական բանաստեղ-ծությունը:

Ի նկատի առնելով այդ ձեռնարկության լրջությունը՝ ուրախու-թյամբ պետք է շեշտել, որ գործը պսակվել է մեծ հաջողությամբ:

Եվ շուտով ռուս հասարակության առաջ կդրվի հայկական բա-նաստեղծության մի գեղեցիկ թարգմանություն, որ կատարել են այն-պիսի հմուտ և հեղինակավոր անձնավորություններ, որպիսիներն են՝ Բալմոնտ, Բրյուսով, Վյաչեսլավ Իվանով, Սոլլոգուբ, Գորկի, Վե-սելովսկի, Բալտրուշայտիս և ուրիշներ:

Հայկական պոեզիան չափազանց ուժեղ տպավորություն է թողել վերը հիշված հեղինակների վրա:

Եվ անշուշտ, դրա հետևանքը պետք է համարել այն, որ «Ազատ էսթետների ընկերությունը», որի ղեկավարներն են հիշած անձնավորությունները, իր առաջի ժողովը նվիրեց հայկական պոեզիային:

-Вечер армянской поэзии,- այդպես էին անվանել այդ ժողովը:

Բացելով ժողովը՝ նախագահ Վալերի Բրյուսովը կարդաց մի կարճառոտ զեկուցում հայկական հին ու նոր բանաստեղծության մասին:

Մի համառոտ ակնարկ ձգելով հայկական պոեզիայի զարգացման ընթացքի վրա՝ նա շեշտեց, որ չնայած հայ բանաստեղծությունը ենթարկվել է պարսկական, հունական, հռոմեական և այլ բանաստեղծությունների ազդեցությանը, այնուամենայնիվ նա պահպանել է իր մեջ իր ինքնուրույն գույնը:

Ապա գալով ռուսահայ և տաճկահայ բանաստեղծներին՝ Բրյուսովը նկատեց, որ տաճկահայ բանաստեղծությունը, ենթարկվելով եվրոպական բանաստեղծների ազդեցության, կորցրել է կարծես իր ֆիզիանոմիան: Մինչդեռ ընդհակառակը, ռուսահայ բանաստեղծությունը կրում է իր մեջ հայկական ոգին, իր ինքնուրույն պատկերը:

Ի վերջո Բրյուսովը իր կողմից նկատեց՝

-Մի քանի ամիս է, որ ես զբաղվում եմ հայկական պոեզիայով,- առաջ ես գաղափար չունեի նրա մասին, եթե չհաշվենք այն կրցկտուր փոքրիկ թարգմանությունները Գամառ-Քաթիպայից և ուրիշներից, որոնք ընդհանուր գեղարվեստական տպավորություն չէին կարող թողնել: Բայց այժմ, երբ ես ծանոթացա Նարեկացու, Աղթամարցու, Քուչակ Նահապետի, Սայաթ-Նովայի, Թումանյանի, Իսահակյանի, Ծատուրյանի, Հովհաննիսյանի, Տերյանի և այլ հայ բանաստեղծների հետ, ես այժմ հասկացա, թե ինչ գոհար է թաքնված եղել, և ռուս հասարակությունը գաղափար չունեի այդ մասին: Ինձ թվում է, որ մեր առաջ փակված էր մի դուռ, որը տանում է դեպի մի սքանչելի դրախտ, և որի գոյության մասին մենք տեղյակ չէինք:

Երեկույթի երկրորդ մասը նվիրված էր մեր բանաստեղծների ընթերցանության: Կարդում էին իրենք՝ թարգմանիչները: Բրյուսովը

կարդաց Քուչակից, Սայաթ-Նովայից, Ջիվանիից, Նարեկացուց և Աղթամարցուց:

Վյաչեսլավ Իվանովը՝ Թումանյանից, Իսահակյանից:

Բալտրուշայտիսը՝ Ծատուրյանից:

Բալմոնտը՝ Վահան Տերյանից, Սիպիլից: Կարդացվեց նաև Հովհաննիսյանից, Պեշիկթաշյանից և ուրիշներից:

Բոլոր թարգմանությունները կատարված են մեծ խնամքով և ահագին տպավորություն թողեցին ներկա եղող հասարակության վրա:

Վերջը տեղի ունեցավ ընթրիք, ուր արտասանվեցին մի քանի ճառեր:

Պ. Տոտոմյան, շեշտելով այն գործի ահագին նշանակությունը, որ իրենց վրա են վերցրել ներկա եղող պատկառելի բանաստեղծները, շնորհակալություն հայտնեց իրենց աշխատանքի համար: Պատասխանեց Վալերի Բրյուսովը՝ կրկնելով համարյա այն, ինչ ասել էր իր զեկուցման վերջը, և նկատեց, որ իրենք՝ ռուս բանաստեղծները, խոսք չեն գտնում շնորհակալ լինելու Մոսկվայի Հայկական կոմիտեին, որ սկզբնապատճառ եղավ ծանոթանալու մի այդպիսի հարուստ բանաստեղծության հետ:

Ապա խոսեց Վյաչեսլավ Իվանովը. «Ինձ հանձնված էր թարգմանել Հովհաննես Թումանյանից, Իսահակյանից և Հովհաննիսյանից: Ես ինձ իրավունք չեմ համարում այն երեքի արժեքը մեկը մյուսից գերադասել, որովհետև ես գուցե հարկ եղած չափով չեմ ուսումնասիրել նրանց, բայց չեմ կարող թաքցնել իմ անկեղծ և ջերմ համակրությունս Հովհաննես Թումանյանին և Իսահակյանին, մանավանդ Թումանյանին: Ես կատարյալ հիացած եմ նրա վառ գույներով, նրա ավյունով, նրա ծաղիկներով, նրա ճկուն լեզվով: Եվ ես կուզեի, շատ կցանկանայի, որ այս իմ խոսքերը հասնեին հայ բանաստեղծին: Ասեք նրան, որ ես նրան շատ եմ սիրում, ամբողջ սրտով հիացնումնքս եմ հայտնում նրան: Ջերմ ողջույններս պատկառելի հայ բանաստեղծին», - վերջացրեց Իվանովը ոգևորված:*

Խոսք է խնդրում Բալմոնտը:

-Ռուսները և լեհացիք մի տեսակ թշնամաբար են վերաբերվել իրար.- ասաց նա,- բայց ես միշտ սիրել եմ լեհերին: Ես թարգմանում եմ վրաց հայտնի բանաստեղծ Ռուսթավելու «Ընծենավորը»: Ռուսթավելին ինձ սիրել տվեց Վրաստանը: Չքնաղ Կովկասում երկու մեծ լեռան ձյունապատ գագաթներ իրար են նայում, իրար ողջունում:

Բայց այդ չքնաղ երկրում ապրող երկու մեծ ժողովուրդներ իրար հետ հաշտ չեն: Եվ ես կարծում եմ, այն ժողովուրդները, որոնք ունին այնպիսի մեծ բանաստեղծներ, որոնք այնպես վառ երգել գիտեն վարդն ու սերը- թշնամական զգացմունք չեն ունենա: Ես կցանկանայի, որ Կովկասի այդ երկու մեծ ժողովուրդը, հայերը ու վրացիք, սիրեին իրար...

Ապա Բալմոնտը կարդաց իր նոր բանաստեղծությունը՝ նվիրված Վրաստանին:

Վերջը խոսեց Ստեփան Մամիկոնյանը: Շեշտելով, որ ռուս հասարակությունը համարյա անծանոթ է հայկական կյանքին, մի համառոտ պատմական հայացք ձգեց հայ-ռուսական հարաբերությունների վրա՝ սկսած Եկատերինա թագուհուց, և ընդգծեց այն համակրությունը, որ տածել է միշտ հայ ժողովուրդը դեպի Ռուսաստանը և որի պատճառով էլ տաճկահայ ժողովուրդը ենթարկվել է թուրքական կոտորածների և համարյա բնաջնջման...»:

*) Մի առանձին հաճույքով հայտնում եմ սիրելի Յովի. Թումանյանին ռուս բանաստեղծի ասածները:

Ա. Մ.

«Յորիգոն», 1915, թիվ 243:

Հոկտեմբերի 29 - Տպագրվում է «Ռուս քերթողները և հայ բանաստեղծությունը» խորագրով հաղորդում Մոսկվայից՝ Մ. Ազյան ստորագրությամբ:

Հաղորդումը վերաբերում է «Свободная эстетика» ընկերության առաջին նիստին (տե՛ս նաև հոկտեմբերի 25):

Հանգամանորեն ներկայացնում է հատկապես Վ. Բրյուսովի ելույթը հայոց բանաստեղծության մասին: Բրյուսովը մասնավորապես ասել է. «Մենք այսօր մի մեծ և անգին գանձ ենք գտել, մի գանձ, որի նմանը մինչև օրս չի իմացել մարդկային մտքի պատմությունը, այդ պարտեզը իր աննման արժեքներով, հայկական պոեզիան է»: Այնուհետև. «Հայկական նորագույն բանաստեղծությունն ունի այնպիսի պատկառելի անձնավորություններ, որպիսիք են Ռ. Պատկանյանը, Պ. Դուրյանը, Ավ. Իսահակյանը, Յովի. Թումանյանը, Վ. Տերյանը, Հ. Հովհաննիսյանը, Ավ. Ծատուրյանը...»:

Հաղորդվում է նաև, որ ընթերցվում են Իսահակյանից և Թումանյանից Վյաչեսլավ Իվանովի կատարած թարգմանությունները: Եվ վերջում. «Խոսում է Վյաչեսլավ Իվանովը, որ հիանում է նամանավանդ Յովի. Թումանյանով»:

«Մշակ», 1915, թիվ 239:

<Հոկտեմբեր> - Վահան Տերյանի նամակը Թիֆլիս՝ Նվարդ Թումանյանին Պետրոգրադից:

Տեղեկություններ է տալիս «Сборник армянского литературного» ժողովածուի պատրաստման ընթացքի մասին: Հայտնում է, որ արդեն հրատարակչին է հանձնված Թումանյանի «Պողոս-Պետրոսը»՝ Վյաչեսլավ Իվանովի թարգմանությամբ, ժողովածուի մեջ կլինեն նաև «Գիքորը» (տե՛ս <սեպտեմբեր>)՝ Պողոս Մակինցյանի թարգմանությամբ, և «Լուսավորչի կանթեղը»՝ Բալմոնտի նոր թարգմանությամբ:

Անդրադառնալով «Հատվածին»^{*} գրում է. «Ամբողջն անմշակ է (ինչպես և նախազգուշացրել է հեղինակը), մի քանի կտորներ ազդու են և լավ: Այդ մասին շատ երկար պետք է խոսել – նամակով գրելու բան չէ, համենայն դեպս Թումանյանի գրած ամեն մի տողը ինձ համար հետաքրքրող է և նշանակալից, թեև իբրև պոետ ես ինձ միանգամայն *օտար* եմ զգում նրան, այսինքն նրա պաֆոսը իմ պաֆոսը չէ. ես նրան երկրպագում եմ և սիրում եմ, բայց նրա աշխարհն իմ աշխարհը չէ (հուսով եմ, սխալ չեք ըմբռնի ինձ – սրանով ես չեմ ուզում ժխտել նրա մեծությունն ու նշանակությունը, հասկանում եք ինձ, նույնը կարող էի ասել. օրինակ, մի Շեքսպիրի մասին). ինչևէ, սա երկար բան է...»:

^{*})Թումանյանագիտության մեջ ընդունված է, որ խոսքը «Հին կռիվը» պոեմի հինգ մասերից մեկի՝ «Տանը» գլխի մասին է՝ տպագրված «Հորիզոն», 1915, թիվ, 243 (տե՛ս հոկտեմբերի 29):

ՎՏ ԵԺ, III, 405-406:

Նոյեմբերի 1 - Տպագրվում է հոդված՝ «եղբայրության ուղին» վերնագրով, Ս. Զ. ստորագրությամբ:^{*}

Դեպի ազգերի եղբայրություն տանող միակ ուղին համարում է գրականությունը: Ազգերը միմյանց ճանաչում են գրականությամբ. մենք չենք ճանաչում անգլիացի լորդերին, բայց գիտենք Դիկենսին, Բայրոնին... Գրականությունը հայրենիք չունի:

Այս մտորումների առիթը Մոսկվայում կայացած նիստն է՝ նվիրված հայոց բանաստեղծությանը (տե՛ս հոկտեմբերի 25, 29): Մասնավորապես գրում է. «Եվ այսօր ռուսների առաջ մեր քաղաքակրթության վկայականներ են հանդիսանալու և հայերի երեսը պարզելու... ովքե՞ր: Ոչ թե Գոլովինսկի պրոսպեկտի հայ վաճառական-

ները, այլ Նահապետ Քուչակը, աշուղ Ջիվանին, Հովհ. Հովհաննիսյանը, Հովհ. Թումանյանը և Վ. Տերյանը»:

*) Հավանաբար Ստեփան Ջորյանն է:

«Մշակ», 1915, թիվ 242:

Նոյեմբերի 1 - Տպագրվում է «Երկու ժողովածու» խորագրով թղթակցություն՝ ուղարկված Պետերբուրգից հոկտեմբերի 20-ին, խաչենց ստորագրությամբ:

Հաղորդում է, որ Պետերբուրգում և Մոսկվայում պատրաստվում են հայ գրականության երկու թարգմանական ժողովածուներ՝ Մ. Գորկու և Վ. Բրյուսովի ղեկավարությամբ և համապատասխանաբար Վ. Տերյանի և Պ. Մակինցյանի աշխատակցությամբ:*

Թումանյանի մասին գրում է. «Հովհ. Թումանյանի «Անուշը» պոեման թարգմանել է Վյաչեսլավ Իվանովը, որ շատ է հավանել այդ պոեմը: Նույնպիսի հաջողությամբ թարգմանել են «Աղավնու վանքը», մանավանդ «Աղջկա սիրտը» և ուրիշներ»:

Տեղեկացնում է, որ մյուս ժողովածուի համար արդեն թարգմանված պատրաստ է «Գիքորը»:

*) Խոսքը «Сборник армянской литературы» և «Поэзия Армении» ժողովածուների մասին է:

«Հորիզոն», 1915, թիվ 246:

Նոյեմբերի 1 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 246) «Աղետ է, ոչ թե քաղաքականություն» հոդվածը:

«Մի երկու վկայություն» (տե՛ս հոկտեմբերի 23) հոդվածի շարունակությունն է: Ուղղված է «Закавказская речь» թերթում «Грузин» և «Скальпель» ստորագրությամբ այն հրապարակումների դեմ, որտեղ ասվում է, թե արևմտահայ գաղթականության հոսքը դեպի Կովկաս Ռուսաստանի կողմից հովանավորվող քաղաքականություն է, որի նպատակն է զավթել բնիկների, այսինքն՝ վրացիների ու թուրքերի երկիրը: Պատմական փաստերի վկայակոչումով Թումանյանը ցույց է տալիս, որ դարերի ընթացքում շատ է պատահել, որ հայերը ստիպված են եղել թողնել իրենց երկիրը և ապաստան որոնել ուրիշ երկրներում, բայց նրանց երազանքը միշտ էլ եղել է վերադառնալ իրենց հայրենիքը: Վիրավորական է համարում նման պահվածքը հայ ժողովրդի մեծ ողբերգության հանդեպ. «Առանց մեզ ու մեր իղծերին, մեր ձգտումներին ու տառապանքներին ծանոթ լինե-

լու, ինչո՞ւ եք էդքան կոշտ ու կոպիտ դիպչում մեր էսքան թարմ ու խոր վերքերին՝ էդքան մոտիկ ու հարազատ ձեռքով...»:

Եվ վերջում. «Ես շատ ավելի բարձր կարծիքի եմ վրացի մարդու և վրացի ժողովրդի վերաբերությամբ, դրա համար էլ խոսքս վերջացնում եմ նրանով, ինչով սկսեցի, և մնում եմ միշտ էն կարծիքին, որ էս ամենը արդյունք են ոչ թե չարության, այլ կատարյալ անտեղյակության ու ցավալի թյուրիմացության: Եթե մեզ մոտիկից ճանաչեին ու վերահասու լինեին ամեն անց ու դարձի, ես հավատացած եմ, որ ոչ մի ինտելիգենտ վրացի գրիչ չէր առնելու իր ձեռքը ու էս տեսակ հողվածներ չէր գրելու:

Պարզ կտեսնեին, որ հայ գաղթականությունը մի ծանր աղետ է, ոչ թե հովանավորված քաղաքականություն»:

ԵԼԺ 7, 188-193:

Նոյեմբերի 4 - «Парус» գրահրատարակչության նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Պետերբուրգից:

Հայտնում են, որ հրատարակության է պատրաստվում հայ գրողների ստեղծագործությունների ռուսերեն ժողովածու:^{*} Խնդրում են բանաստեղծի թույլտվությունը՝ նրա ստեղծագործություններից մի քանիսը ժողովածուում զետեղելու համար:

*) Խոսքը «Сборник армянской литературы» ժողովածուի մասին է:

ԳԱԹ ԹՖ, 1941 (1246 ա):

Նոյեմբերի 7 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 251) «Նոր «Դիվանի» առիթով» հոդվածը:

Գյուտ ա. ք. Աղանյանի «Դիվան հայոց պատմության» գրքի տասներեքերորդ հատորի* գրախոսականն է: Հատորում բերված են Տաճկահայաստանում 1801-1888 թթ. ընթացքում կատարված հարևանահարությունների վավերագրերը: Կարևորելով այդ վավերագրերի, ընդհանրապես Աղանյանի բազմահատոր գրքի պատմագիտական նշանակությունը՝ Թումանյանը մասնավորապես գրում է.

«Դիվանի էս վերջին գիրքը արցունքոտ աղերսագրերով ու արյունոտ հաշվեցուցակներով ցույց է տալիս, որ Տաճկաստանում սիստեմատիկ բռնություն, թալան, առևանգում, սպանություն, կրոնափոխություն չեն դադարած, և հայի համար Տաճկաստանը եղել է ոչ թե մի պետություն, այլ սպանդանոց, ուր միմը միշտ մորթվել է ու հոշոտվել, իսկ մյուսն սպասել է իր հերթին, հաստատ իմանալով ու շարունակ հիշելով, որ էդ հերթը պիտի գա մի օր:

Դիվանի էս գիրքը հուսահատական դիմումներով, բարձրագույն բողոքով ու ընթուստ ծրագիրներով, ցույց է տալիս, թե սխալ են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են, թե էս ամենը կարող էր անցնել առանց ծայրահեղ դժգոհության բռնկումի, առանց հեղափոխության: Այլև սխալ են նրանք, որոնք կարծում են, թե հեղափոխությունը դրսեցիները՝ ռուսահայերն են սկսել Տաճկաստանում: <....> Եվ բոլոր, բոլոր վավերագրերը միայն մի բան են վկայում, թե ի՛նչքան է տանջված ու հուսահատված ժողովուրդը և ինչպես է աշխատում ու ճգնում ազատվելու տաճկական կառավարությունից, Տաճկաստան դժոխքից ինչ ձևով ուզում է լինի, ուր ուզում է լինի: <....> Եվ քանի հարատևում ու աճում են կեղեքումները, էնքան ավելի ծավալվում, հաստատվում ու զորանում է ձգտումը դեպի Ռուսաստան»:

Եվ եզրակացությունը. «Դիվանի էս գիրքը գալիս է իբրև մի նոր վկայություն. մի ամբողջ դարի վկայություն, զգացնելու, թե Տաճկաստանի վերջին հայկական կոտորածը մի անմախքնաբան դժբախտ անակնկալ չի, այլ շարունակվող, սիստեմատիկ հայաջնջումի մի նոր ու ահռելի գործողություն, որ հնարավոր դարձավ համաշխարհային պատերազմի մեջ, և կատարվեց ամեն արտաքին հանգամանքներից անկախ»:

*) Դիվան Հայոց պատմության, գիրք ԺԳ, Հարստահարություններ Տաճկաստանում (վավերագրեր 1801-1888), հավելվածներով և բառգրքով հրատարակեց Գյուտ Աղանյանց ա. քահ., Թիֆլիս, 1915:

ԵԼԺ 7, 193-197:

Նոյեմբերի 13 - Մամուլում հայտարարություն «Հորիզոնի» 1916 թ. բաժանորդագրության մասին:

Թերթի հիմնական աշխատակիցների թվում հիշվում է նաև Թումանյանի անունը:

«Հորիզոն», 1915, թիվ 256:

Նոյեմբերի 15 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 258) «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը:

*) Թերթի հաջորդ համարում տպագրված է ուղղում. «Պ. Հովհ. Թումանյանի բանաստեղծության մեջ սպորդել է հետևյալ սխալը. տպված է՝ «Հանգիստ կարկաչով»... (9-րդ տող ներքևից) պետք է լիներ «Հանգիստ կարդալով»: (Այս բառակապակցության վերջնական տարբերակն է՝ «Սաղմոս կարդալով»,- խմբ.)

ԵԼԺ 1, 279-280:

Նոյեմբերի 19 - Մամուլը հաղորդում է, որ լույս է տեսել Ա. Մանուկյանի «Փնջիկ մանկական երգերի» ժողովածուի Ա մասը:

Մասնավորապես տեղեկացվում է. «Փնջիկները պարունակում են 23 երգ, որոնց մեջ աչքի են ընկնում Ղ. Աղայանի, Ռ. Պատկանյանի, Հովհ. Թումանյանի երգերի մեղեդիները՝ դաշնամուրի համար գրված ակոմպանիմենտի հետ միասին»:

«Մշակ», 1915, թիվ 257:

Նոյեմբերի 20 - Մամուլում տեղեկատվություն՝ «Կողմնակի հաղորդում» վերտառությամբ.

«Միօրյա հանգանակության հաջողությանը առանձնապես նպաստել է թեմի սրբազան առաջնորդը և հետևյալ անձինք. թերթին* սիրահոժար աշխատակցեցին՝ պ.պ. Գ. Չալխուշյան, Ա. Բարյան, Մ. Վարանդյան, Հովհ. Թումանյան»:

*) Խոսքը «Լումա» մեկօրյա թերթի մասին է (տե՛ս հոկտեմբերի 21):

«Մշակ», 1915, թիվ 258:

Նոյեմբերի 21 - Մամուլում կրկնվում է նույն տեղեկատվությունը՝ լրացուցիչ ծանոթագրությամբ.

«Թիֆլիսի Հայ Եկեղ. Միաբ. և Հոգաբարձուների հանձնաժողովը որբանոցի միջոցները ավելացնելու համար անցյալ հոկտեմբերի 21-ին քաղաքում կազմակերպեց կնքված տուփերով միօրյա հանգանակություն «Լումա» թերթի վաճառումով» (տե՛ս հոկտեմբերի 21):

«Հորիզոն», 1915, թիվ 263:

Նոյեմբերի 26 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 266) «Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առիթով» հոդվածը:

Խոսքը Վ. Բրյուսովի թարգմանությունների մասին է, որ տպագրվել էին «Русская мысль» ամսագրի 1915 թ. սեպտեմբերյան համարում՝ «Песни ашугов перевод с армянского» վերնագրով և թարգմանչի առաջաբանով:

Հոդվածի սկզբում թարգմանաբար քաղվածք է անում Բրյուսովի առաջաբանից. «Ժամանակակից պատերազմը նորից հերթի հանեց էն ժողովրդի վիճակի հարցը, որ զրեթե երկու հազար տարի Եվրոպայի առաջապահն է եղել Ասիայում: Իհարկե, ոչ ոք չի երկ-

բայում, որ հայերը արժանի են կարեկցության են անպատմելի տառապանքների համար, որ արդեն մի քանի դար է քաշում են թուրքական լծի տակ: Բայց հայ ազգը ուշադրության առնվելու բարձրագույն իրավունքն ունի, և դա բարձր-կուլտուրական ժողովրդի իրավունքն է՝ խոսքի ամենալավ իմաստով:

Հայոց գրականությունը, որ իր գոյությունը հազար հինգ հարյուր տարու է հասցնում, սրա ամենալավ ապացույցն է: Հայոց բանաստեղծությունը, Ֆեոփի խոսքերով ասենք, հայ ժողովրդի ազնվականության վկայականն է*...»:

Վերաշարադրանքով բերում է նաև Բրյուսովի միտքը հատկապես Քուչակի և Սայաթ-Նովայի մասին. «Հենց միայն էս երկուսը հերիք են, որ նրանց ծնող ժողովուրդը միանգամ ընդմիշտ մտնի էն կուլտուրական ժողովուրդների շարքը, որոնք միասնաբար մասնակից են մարդկության ստեղծագործությանը»:

Ըստ արժանվույն գնահատելով կատարված թարգմանությունները՝ անում է բազմաթիվ դիտողություններ ինչպես թարգմանական անճշտությունների, այնպես էլ հայերեն բնագրի սխալ ընթերցումների վերաբերյալ, և եզրակացնում. «Իհարկե, սրանք իմ կարծիքն ու բացատրությունն են և կարող են նույնպես սխալ դուրս գալ, սակայն եթե ոչ բոլորը, գոնե էս կամ էն նկատողությունը կարող են ճշմարիտ լինել, և դարձյալ ես հասած կլինեմ իմ առաջադրած նպատակին, որ է՝ թե՛ Քուչակ Նահապետի, թե՛ Սայաթ-Նովայի և թե՛ նրանց նմանների բառացի թարգմանությունը ռուս բանաստեղծներին տալիս, տալ շատ զգուշավոր ու ստուգված, քանի որ հարգելի թարգմանիչները իսկի ժամանակակից հայերեն լեզուն չգիտեն, ուր մնաց նրա միջնադարյան բարբառները և կամ գրաբարը: Եվ մանավանդ որ էսքան մեծ արժեք ու նշանակություն ունին էդ երկերը թե՛ մեզ համար, թե՛ օտարների աչքում, և գործի գլուխ էլ կանգնած է հայտնի գործիչներից ընտրված մի հասարակական մարմին՝ Մոսկվայի Հայկական կոմիտեն»:

Հիշեցնում է, որ հատկապես Սայաթ-Նովայից նախկինում էլ կատարվել են ռուսերեն թարգմանություններ: Բայց՝ «առաջին անգամն է, որ պ. Բրյուսովը թարգմանում է վարպետի ձեռքով աշխատելով հաղթել գրեթե անհաղթելի արգելքների և, ինչպես Սայաթ-Նովայի, այնպես էլ Նահապետ Քուչակի երգերը տալ ռուսերեն, խորապես ճանաչելով նրանց մեծությունը և ինքնուրույն շունչն ու

երանգը, և նրանց գործերը անվանելով հայ ժողովրդի ազնվականության վկայական»:

Եվ վերջում. «Այո՛, ճշմարիտ է, գեղեցիկ գրականությունը, իբրև հոգու պարզ ու կատարյալ արտահայտություն, ժողովուրդների անխարդախ վկայականն է, և ինչքան բարձր է գրականությունը, էնքան բարձր վկայական է մի ժողովրդի կուլտուրականության, բայց միաժամանակ նաև բարձր հոգեկան կապ է ժողովուրդների միջև:

Մենք ունեցել ենք էդ բարձր վկայականը, բայց էդ վկայականը մնացել է մեր գրպանում, կարդացող չի եղել, դրա համար էլ չունենք էն մեծ փոխադարձ շաղկապը ուրիշ ժողովուրդների հետ: Մենք ենք միայն օտարների հանճարները ճանաչել, սիրել ու սրանով կապվել նրանց հետ, իսկ մեր ցեղի հանճարը ոչ ոք չի ճանաչել, դրա համար էլ մեզ ոչ ոք չի գնահատել, չի սիրել ու հոգեպես չի կապվել մեզ հետ:

Խոսքիս ամենապերճախոս ապացույցը ռուս ամսագրի էս համարն է, որի մեջ ռուս բանաստեղծը հրճվանքով է նկատում, որ մեր երգիչներն էլ են սավառնում էն «եթերային բարձունքներում», ուր Յաֆիզն է սավառնում: Իսկ «եթերային բարձունքը» էն երջանիկ աշխարհքն է, որ բոլոր հայրենիքներն ու կրոնները միացնում է գեղեցկության, ճշմարտության ու արդարության մեջ, ուր այլևս խտրություն չկա և ամենքից հավասար սիրվում է ամեն մեկը, ով էնտեղ կհասնի:

Վերջապես ժամանակն է, թող իմանան մեր ռուս եղբայրները, էնպես էլ ավելի հեռուները թող իմանան, որ «եթերային բարձունքները» երբեք խորթ ու անմատչելի չեն եղած հայի հոգուն, որ հայի հանճարն էլ է միշտ սավառնել էն վսեմ, էն սուրբ ու նուրբ ոլորտներում, թեև նա ինքը՝ հայը, միշտ լողացել է արյան ծովի մեջ, ահա ճիշտ էնպես, ինչպես մի Սայաթ-Նովա»:

*) Նկատի ունի Ա. Ա. Ֆետի «На книжке стихотворений Тютчева» բանաստեղծության առաջին տողը. «Вот наш патент на благородство» (տե՛ս Фет Афанасий Афанасьевич, Стихотворения, Москва, 1970, էջ 397):

ԵԼԺ 7, 197-204:

Նոյեմբերի 26 -Մամուլում հայտարարություն, որ «հրապարակախոս-գրող և գեղարվեստական քննադատ Կարա-Դարվիշը (Վ. Նուրյան)» երաժշտական դպրոցի դահլիճում դասախոսություն

կկարդա «Գալիք օրերը և ապագա գեղարվեստը կամ քաղաքը և գրականությունը» թեմայով:*

Տեղեկացվում է, որ դասախոսը կանդրադառնա «քաղաքի և գյուղի հայ բանաստեղծներ-երգիչներ» խ. Աբովյանին, Պ. Պռոշյանին, Յովհ. Թումանյանին և ուրիշներին:

*) Ըստ «Մշակի» հայտարարության (տե՛ս 1915, թիվ 263)՝ դասախոսությունը տեղի է ունենալու նոյեմբերի 29-ին (հավանաբար գրաշարի սխալն է. 6-ի փոխարեն 9 է շարվել...-հսմբ.):

«Յոթիզուն», 1915, թիվ 266:

Նոյեմբերի 28 - Տպագրվում է հոդված «Տասը տարեկան «Հասկերը» (1905-1915)» վերնագրով՝ Նեկ-Տար ստորագրությամբ:

Գնահատելով ամսագրի ծառայությունները մանկական գրականության զարգացման բնագավառում՝ անդրադառնում է նաև գլխավոր աշխատակիցների վաստակին: Թումանյանի մասին գրում է. «Նայեցե՛ք մեր մանկախոս Թումանյանին, նա իր գեղահնչյուն քնարն է նվագել նրա համար, տասը տարի շարունակ իր մարգարտահյուս երգերն ու ոտանավորներն է նվիրել նրան, որ նա ազնվա՜նա, անարատ սիրտ ու ազնիվ ոգի ստանա»:

«Յոթիզուն», 1915, թիվ 268:

Նոյեմբերի 28 - Մամուլը հաղորդում է.

«Յովհ. Թումանյանը երկու ամիս է, որ հիվանդ պառկած է Էջմիածնից վերադառնալուց հետո, ուր մեկնել էր այնտեղ որբանոցի գործերը ղեկավարելու: Բժիշկների խորհրդով նա շուտով պիտի մեկնի հանքային ջրեր բուժվելու»:

*) Մեկնումը ձգձգվում է մինչև 1916-ի ամառ, երբ բանաստեղծը մեկնում է Բորժոմ (տե՛ս ԼԿ, 172):

«Յոթիզուն», 1915, թիվ 268:

<Նոյեմբեր> - Առաջին անգամ հանդիպում է գաղթի տանջալի ճանապարհներով Թիֆլիս հասած Զապել Եսայանի հետ:

Եսայանը հիշում է. «Առաջին անգամ ծանոթացա Յովհաննես Թումանյանի հետ 1915 թ. աշնան: Որոշակի չեմ հիշեր ճիշտ օրը և հանգամանքները մեր ծանոթության: Այդ անտարակույս հետևանք է այն բանին, որ այդ ժամանակաշրջանին ես ինքս կը գտնվեի բարոյական և հոգեկան վերին աստիճանի ճնշված վիճակի մեջ: Ատով պետք է բացատրել հիշողությանս մեջ այդ բացը, քանի որ վաղուց

ծանոթ էի Յովհ. Թումանյանի բանաստեղծություններուն և կը սիրեի անոնք:

<....> Մոտ երեք ամիս ենթարկված ըլլալով հոգեկան ծանր տառապանքներու, որու միջոցին գրեթէ անտարբեր և անզգա դարձեր էի իմ շրջապատիս, անտարակույս, ընդունել էի ուրիշ շատ մը մարդոց շարքին նաև Յովհաննես Թումանյանի այցելությունը, առանց կարենալ անդրադառնալու այդ բացառիկ մարդու անձնավորությանը:

Տեսակ մը մշուշի մեջ կը հիշեմ անոր դեմքը. մեր ծանոթության առաջին շաբաթներուն, երբ այնքան սրտագին զգացումով, այնքան խոր մարդկայնությամբ անհկա կը հետաքրքրվել և կը զբաղել գործնականապես՝ պատերազմի զոհերուն կյանքով և վիճակով:

Ես հասեր էի Թիֆլիս 1915 թ. նոյեմբերի մեկին, բայց վերևը հիշած հանգամանքներու հետևանքով իմ գիտակցական հարաբերությունները Թումանյանի հետ սկսած կը համարեմ 1916-ի փետրվարից»:

ԹԺՅ, 150-151:

Դեկտեմբերի 2. Թիֆլիս - Երկտող Գյուտ Աղանյանին.

«Սիրելի տեր Գյուտ հայր,

Խնդրում եմ մեր գրողների ընկերության կողմից ներկայացուցիչ լինեք հանգուցյալ Ս. Մանդինյանի թաղմանը:

Շաբաթ օրն էլ, ժամը 5-8-ը, եթե կարող եք, վարչության նիստ ունենք, եթե չեք կարող՝ իմացրեք:

Մյուսները մոտ էին, գիտեմ:

Ձեր Յովհ. Թումանյան»:

ԵԼԺ 10, 233:

Դեկտեմբերի 2 - Հաղորդագրություն մամուլում, որ Յովհ. Թումանյանը հիվանդացել է և արդեն երկու ամիս է՝ զանված է անկողնուն: Բժիշկների խորհրդով օրերս կմեկնի Հանքային ջրեր:

«Кавказское слово», 1915, թիվ 267:

Դեկտեմբերի 3 - Մամուլը հաղորդում է, որ լույս է տեսել Կարապետ Ափինյանի 1916 թ. «Շիրակ» պատկերազարդ օրացույցը:

Տեղեկացվում է, որ օրացույցում տպագրված է Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը:

«Հորիզոն», 1915, թիվ 271:

Դեկտեմբերի 4 - Կարեն Միքայելյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից:

Խնդրում է «Поэзия Армения» ժողովածուի համար ուղարկել իր և Խսահակյանի լուսանկարները:

Հայտնում է, որ գիրքը պատրաստ է և հունվարի 2-ին հանձնվելու է տպագրության: Թարգմանված պատրաստ են «Գութանի երգը», «Հայոց վիշտը», «Աղավնու վանքը», «Աղջկա սիրտը», թարգմանվում է «Անուշը» լրիվ:

Գրում է. «Ձեր նկատողությունները Քուչակի և Սայաթ-Նովայի թարգմանությունների նկատմամբ (տե՛ս նոյեմբերի 26.- խմբ.) այսօր թռուցիկ կերպով հայտնեցի Բոյուսովին: Այս երկու օրս թերթը կտանեն և մոտը կկարդամ: Ուրախությամբ հանձն է առնում ամեն մի ուղղում և նկատողություն լսելու:՝ Նրա բարեխղճությանը դեպի սկսած գործը չափ չկա: Բայց ցավոք սրտի պիտի հայտնեն, որ մի շարք պակասություններ թերևս ունենա մեր ժողովածու, որովհետև շատ շտապ ենք գործը առաջ տանում, ցանկանալով գրքի տպագրությունը ավարտել *ներկա* մոմենտում: Գրքի ծավալը Բոյուսովի ընդարձակ առաջաբանով 300 մեծադիր երեսից ավել կլինի»:

*) Ժողովածուում տպագրված բոյուսովյան թարգմանությունների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ թարգմանիչը Թումանյանի դիտողությունները հաշվի է առել:

ԳԱԹ ԹՖ, 1765 (912):

Դեկտեմբերի 5 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Վարչության անդամներից ներկա են՝ Բերբերյան Մինաս, Աբովյան Անուշավան, Դեմիրճյան Դերենիկ, անդամ քարտուղար Գյուտ ա. ք. Աղանյան:

Նախագահողը տեղեկացնում է՝

1. Կարսի փոխադարձ խնայողական գանձարանի վարչությունից Գ. Աղանյանի միջոցով ստացվել է նպաստ ընկերությանը՝ հարյուր երկու ռուբլի: Որոշվում է գումարը հանձնել գանձապահին, շնորհակալություն հայտնել նվիրատուին:

2. Առաջացել է ընկերությանը պատկանող տոկոսաբեր թղթերի ապահով պահպանության խնդիր: Որոշվում է մի արկղ վերցնել փոխադարձ վարկի ընկերության մեջ, որի մի բանալին պահել նախագահի, մյուսը՝ գանձապահի մոտ:

3. Ստացվել են Մինաս, Ռուբեն Բերբերյանների և Մարիամ Պոպոլյանի անդամավճարները: Որոշվում է դրամը հանձնել գանձապահին:

Արձանագրությունն ստորագրել է թումանյանը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 44/8:

Դեկտեմբերի 6 - Տպագրում է («Հորիզոն», 1915, թիվ 274) «Սա ճանապարհ չի» հոդվածը:

Առիթը հետևյալն է: Թիֆլիսի «Кавказское слово» (1915, թիվ 262) թերթում Բ. Ар-в ստորագրությամբ տպագրվում է «Из-за от-мемку» վերնագրով հոդված, որտեղ ասվում է, թե տեսուչը կարգադրում է ուսուցչին գնահատական նշանակել մի աշակերտի, որին նա ոչ մի անգամ դաս չի հարցրել: Ուսուցիչը հրաժարվում է և տեսչի հրամանով հեռացվում աշխատանքից: Դրան նույն թերթում հետևում է Թիֆլիսի երրորդ գիմնազիայի ուսուցիչ Իվան Պայլմովի բաց նամակը («Открытое письмо г. редактору «Кавказского слова»») թերթի խմբագրին (1915, թիվ 267), որտեղ առաջարկում է նրան տպագրվող հոդվածները ուշադիր ստուգել, քանի որ այդպիսի բան չի կարող պատահել, թյուրիմացություն է, իր արժանապատվությունը՝ որպես ուսուցչի, վիրավորված է: Թերթի նույն համարում խմբագիր Սեմյոնովը պատասխանում է «Открытое письмо г. Пальмову» հոդվածով. «Դեպքը նշավակելով հանդերձ, վկայում է, թե տեսուչը ամենալավ տեսուչներից միմե է, որ կա, ուսուցիչն էլ լավագույն մանկավարժ...,- նկատում է թումանյանը՝ հավելելով: - Եվ մտածում եք՝ եթե ամենալավ տեսուչն էլ էսպես է վարվում լավագույն ուսուցչի հետ, էլ տեղն ի՞նչ է մնում»:

Բերում է մի անեկդոտ, թե ինչպես մի գյուղացի ունեցած-չունեցածը ծախում և ծի է առնում: Ձիու վրա կողովներով ձու է բարձում և տանում ծախելու: Կիրճով անցնող նեղլիկ կածանից ծին սայթաքում և գլորվում է ձորը: Ձին էլ է կորչում, ձվերն էլ: Եվ վտանգավոր ճանապարհով գնացող գյուղացին կորցնում է ամեն ինչ:

Եվ եզրակացությունը. «Ես տեսակ ճանապարհով անցնող ամեն մեկը ահ ու դողով պետք է անցնի միշտ, և ամեն րոպե կարող է կորցնել ամեն բան, ինչ որ թանկ է իրեն համար:

Ուսումնարանն էլ մի ճանապարհ է, որով մանկավարժ մարդը սերունդներ է առաջնորդում դեպի վեր, եթե էդ ճանապարհին էլ նա շարունակ պետք է դողա, կամ կորցնի իր մարդկային արժանա-

պատվությունն ու ինքնավստահությունը, էլ նրանից ի՞նչ է մնում, էլ ինչո՞վ կարող է նա վեր հանել իրեն հետևող հոգիները և նրանց ներշնչել են ազնիվ համարձակությունն ու անկաշառ շիտակությունը, առանց որոնց մարդիկ լոկ հացի ճիճու են, ուրիշ ոչինչ»:

ԵԼԺ 7, 204-206:

Դեկտեմբերի 17 - Տպագրվում է «Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առիթով» հոդված՝ Ս. Իսրայելյան ստորագրությամբ:

Խոսքը Թումանյանի համաձայն հոդվածի մասին է (տե՛ս նոյեմբերի 26): Հոդվածագիրը համաձայն չէ *փար* բառի՝ բանաստեղծի բացատրության հետ: Բերելով այդ բացատրությունը*՝ առարկում է, թե *փար* նշանակում է առաջն առնել, երեսը բռնել: Թուրքերենի մեջ էլ այն թարգմանվում է *փարդա* (վարագույր նշանակությամբ): Հայերն էլ հաճախ ասում են գինու, կաթի երեսը փար է բռնել: Եվ հետևություն է անում. «Այստեղից կարելի է եզրակացնել, որ *փար*-ի ամենաուղիղ թարգմանությունը կը լինի վարագույր: Իսկ ինչ վերաբերում է այն համեմատության, թե *փար*-ից առաջ են եկել *փարա* և *փերի* խոսքերը, այդ արդեն տարակուսելի է, որովհետև *փարա* ասում են և փողին»:

*) Թումանյանն իր հոդվածում գրում է.

«Շուխկո աշխարհս բռնիլ է՝ արեգակի դեմըն փար իս...

Թարգմանված է.

Ты блеском озаряешь мир, ты сохлцу – щит сред синевы!

Ախվերդյանն էլ է բացատրության մեջ փար՝ նշանակել վահան, բայց փար իսկապես կնշանակի լույս, փարեղեն՝ լուսեղեն, որտեղից էլ փարի, փերի: Ինչպես մի ուրիշ տեղ էլ գործ է ածում Սայաթ-Նովեն ավելի պարզ.

Արեգակի նըման՝ փարա իս, գոգալ:

Եվ Ախվերդյանն էլ թեև ասում է բառի միտքը չի իմացվում, այնուամենայնիվ նշանակում է, թե՝ պարսկերեն փեր, փերթեվ նշանակում է լույս, ճառագայթ: Էսպեսով էլ Սայաթ-Նովայի միտքն են չի, թե արեգակի դեմը վահան է իր սիրուհին կամ արեգակի վահան, այլ թե՝ արեգակի դեմը նույնիսկ՝ լուսավոր ու լուսեղեն է, իբրև մի այլ արեգակ»:

«Հորիզոն», 1915, թիվ 283:

Ղեկտենքերի 17 - Տիգրան Ռաշնաճյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

Քաղաքի Ոստեցական միության վարչությունը և «Գավառի ձայն» թերթի խմբագրությունը մտադիր են ամսի 6-ին կազմակերպել մամուլի աշխատողների հանդիպում գաղթականական դպրոցի երեխաների հետ: Խնդրում են թերթի՝ այդ հանդիպմանը նվիրված հատուկ թողարկման համար մինչև ամսի 24-ը ուղարկել մի բանաստեղծություն:

ԳԱԹ ԹՖ, 1955 (186 III g.):

Մինչև ղեկտենքերի 20 - Համաձայնություն է տալիս աշխատակցելու «Համբավաբեր» շաբաթաթերթին:

«Համբավաբեր», 1915, թիվ 1:

Ղեկտենքերի 20 - Տպագրվում է Թումանյանի «Համերգ» բանաստեղծությունը՝ Ս. Մ. Գորոդեցկու ռուսերեն թարգմանությամբ՝ «Концерт» վերնագրով:

«Понедельник», 1915, թիվ 1:

Ղեկտենքերի 20 - Լույս է տեսնում «Համբավաբեր» շաբաթաթերթի առաջին համարը:

Մշտական աշխատակիցների թվում հիշվում է նաև Հովհ. Թումանյանի անունը:

«Համբավաբեր», 1915, թիվ 1:

Ղեկտենքերի 20 - Առաջին անգամ տպագրում է* («Համբավաբեր», շաբաթաթերթ, Թիֆլիս, 1915, թիվ 1) «Բարձրից» («Իմ բարի սրբոտի էն մեծ խոհերից...») բանաստեղծությունը:

*) Գրության թվականն ստույգ հայտնի չէ: ԵԼԺ-ում գետեղված է 1915 թվականով՝ հիմք ընդունելով առաջին տպագրության ժամանակը:

ԵԼԺ 1, 281-282, 631:

Ղեկտենքերի 20 - Մամուլում հայտարարություն, որ վաճառվում են Թումանյանի հետևյալ ստեղծագործությունների առանձին հրատարակությունները՝ «Շունն ու Կատուն», «Ամբախտ վաճառականներ», «Գառնիկ ախպեր», «Անհաղթ աքլորը», «Ծիտը», «Ուլիկը», «Աղվեսը», «Տերն ու ծառան», «Խոսող ձուկը», «Գիքորը», «Մի կաթիլ մեղրը», «Քաջ Նազարը», «Փոքրիկ ձկնորսը», «Լեզուն

կտրած ծիտիկը», «Գրիմ եղբայրների հեքիաթները» (I, II, III պրակներ):

«Համբավաբեր», 1915, թիվ 1:

Դեկտեմբերի 22 - Սամսոն Հարությունյանի երկտողը թոււմանյանին՝ թիֆլիսից:

Հրավիրում է «Համբավաբեր» շաբաթաթերթի հիմնադրման առթիվ կազմակերպված ընկերական հանդիպմանը:

ԳԱԹ ԹՖ, 1502 (375 լր.):

<Դեկտեմբերի 23> - Շնորհավորական բացիկ Ջուլֆա՝ Արտավազդ Թումանյանին՝ ընտանիքից.

«Շնորհավոր Նոր տարի: Թե հասել ես, ետ արի...

Համբուրում ենք՝ Նվարդ, Հայրիկ, Մայրիկ, Արեգ, Աշխեն, Սեդա, Թամար, Համլիկ, Մուշեղ, Արփիկ, Բոբիկ,* Սաթիկ,** Վարսիկ, Անուշ, Գիգա...»:**

*) Աշխենի որդին՝ Հովհաննեսը:

**) Թումանյանի եղբոր՝ Ռոստոմի դուստրը:

***) Բոլորն իրենց անունները գրել են սեփական ձեռագրով:

ԹԶ ԱՐՏ, գիրք Ա, էջ 145:

Դեկտեմբերի 24 - Տպագրվում է հոդված՝ «Մանկական և պատանեկան գրքերի տարածման գործը» խորագրով, Աբկար Ջարյան ստորագրությամբ:

Ասում է, որ հայ մանուկների նոր տարվա լավագույն նվերներից պետք է լինեն նաև նրա սրտին մոտ ու հասկանալի մանկական գրքույկները: Մասնավորապես. «Ահա ձեր առաջն են մեր քանքարավոր մանկական գրող Հովհ. Թումանյանի գեղեցիկ և պատկերազարդ գրքույկները՝ «Անբախտ վաճառականները», «Գառնիկ ախպեր», «Մի կաթիլ մեղրը», «Գիքորը», «Քաջ Նազար», «Ոսկի քաղաքը»... (տե՛ս դեկտեմբերի 20):

Հիշում է նաև մի քանի ուրիշ հայ մանկագիրների անուններ: Եվ վերջում. «Ինչո՞ւ այլազգի մանկական գրքերը պիտի տարածվեն տասնյակ ու հարյուրյակ հրատարակություններով, իսկ մեր հեղինակավոր մանկական գրողների գրքերը պիտի մնան պահարաններում տասնյակ տարիներով անվաճառ»:

«Հորիզոն», 1915, թիվ 289:

Դեկտեմբերի 25 - Մամուլը ողջունում է «Համբավաբեր» շա-

բաթաթերթի առաջին համարը, որտեղ բանաստեղծությամբ հանդես է եկել Թումանյանը (տես ղեկտեմբերի 20):

«Հորիզոն», 1915, թիվ 290:

Ղեկտեմբերի 26 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ քրոջը՝ Նվարդին Ջուլֆայից:

Իր և գործերի մասին տեղեկացնելուց հետո հարցնում է. «Երեկ մի ընկերոջ ձեռքով նամակ ուղարկեցի հայրիկին, ստացա՞վ, թե ոչ»:*

*) Արտավազդ Թումանյանի այդ նամակն անհայտ է:

ԹԶ ԱՐՏ, գիրք Ա, էջ 145:

Ղեկտեմբերի 27 - Տպագրվում է Գ. Լևոնյանի գրախոսությունը Իվ. Գնունու «Очерки армянской литературы I. Мотивы армянского поэзии» գրքի մասին:

Գրախոսը նկատում է, որ գրքի հեղինակը Թումանյանի մասին գրում է, թե բազումք են կոչյալները, սակավ՝ ընտրյալները, և Թումանյանը այդ ընտրյալների մեջ է: Բայց բուն ստեղծագործություններին անդրադառնալիս կորցնում է քննադատի օբյեկտիվությունը: Գրախոսը անտրամաբանական է համարում, որ գրքում Շահազիզին հատկացված է 20 էջ, իսկ Թումանյանին՝ ընդամենը 2,5:

Գնունին վկայակոչում է բանաստեղծի մասին հայտնի կարծիքը. «Թումանյանի ստեղծագործության մեկնողներից մի քանիսը գրում են, որ նա ամենից առաջ գրեթե բացառիկ խոշոր վիպերգական տաղանդ է»: Գրախոսը մեկնաբանում է. «Ուրեմն Գնունին ինքը չի ընդունում, որ «Անուշի» հեղինակը տաղանդ է: Աստված իր հետ, բայց երբ նա քիչ հետո ասում է, թե «նրա պոեմները մշակված չեն, չափազանց ձգձգված են, տեղ-տեղ ծիծաղելի լինելու չափ միամիտ են», այստեղ արդեն Գնունու ճաշակը մեզ համար դառնում է պայմանական: Հեղինակը գրում է, որ Թումանյանի «Մերժված օրենքը» Լերմոնտովի «Մծիրի» պոեմի մեծ ազդեցությունն է կրում, իսկ «Երկու ամպը» կամ «Համերգը» Բարատինսկիի՝ Գյոթեի մահվան մասին գրած ոտանավորին է նման: Բայց ինչու ռուս բանաստեղծը կարող է բնության հետ մի կյանքով ապրել, իսկ հայը՝ ոչ: Փալով «Մծիրիին»՝ Թումանյանը այդ գործը հավանել է ու թարգմանել հայերեն, ուրեմն նրա ազդեցությամբ ուրիշ շատ բան կարող էր գրել՝ մտցնելով իր ոգին»:

Գնունին գրում է. «Թումանյանի պոեմները հետաքրքիր են

միայն արտաքին կողմով և առանձին պատկերներով, բայց նրանց մեջ բացակայում է ռեալ մարդը»։ Գրախոսը հարցնում է, թե ինչպես է Գնունին ռեալ մարդիկ պահանջում ժողովրդական էպոսի, էպիկ պոեմի մեջ։ Սասունցի Դավիթը, Ձենով Օհանը նույնքան կարող են ռեալ լինել, որքան Իլյա Մուրոմեցը կամ Գնունու հիշատակած Մծիրին։

«Մշակ», 1915, թիվ 288:

1915 - Ավարտում է Գրիմ եղբայրների հեքիաթներից իր կատարած թարգմանությունների երեք պրակների հրատարակությունը (Գրիմ եղբայրների հեքիաթները, թարգմ. Զովի. Թումանյան, պր. 1-3, Թիֆլիս, Կովկասի հայոց հրատարակչական ընկերության հրատարակություն, 1914-15):

Պր. 1. Լուսերեսն ու Վարդերեսը, Սագարած աղջիկը, Ջարմանալի աշուղը:

Պր. 2. Գորտը, Անտառի տնակը, Զենգելն ու Գրետելը:

Պր. 3. Կարմրիկը, Մոխրոտը, Ճերմակ օձը):*

*) ԿՀՀԸ վարչության կողմից Գրիմ եղբայրների հեքիաթների թարգմանության պաշտոնական պատվեր Թումանյանն ստացել էր 1913 թ. վերջերին (տե՛ս 1913, դեկտեմբերի 10): Թարգմանել է միայն այս 9 հեքիաթը: 1913 թ. նոյեմբերի 16-ին հրատարակչական ընկերության նախագահ Արիստակես Ջարգարյանին ուղղված նամակում (ԵԼԺ 10, 193) գրում է. «Ես ամբողջը չեմ թարգմանիլ: Կթարգմանեմ միայն էն հեքիաթները, որ ես հավանում եմ և կամ կարևոր եմ համարում:

Իհարկե, եթե փողի տեսակետից մայեինք, ինձ համար ձեռընտու կլինե՞ր ամբողջը թարգմանել. բայց քեզ պետք է ասեմ, որ ես առաջինը՝ ցավում եմ, որ թարգմանությունով եմ զբաղվելու, երկրորդն էլ՝ հո փողով ամեն բան էլ չեմ թարգմանիլ, ինչ որ ուզեման կամ առաջարկեն ինձ»:

ԵԼԺ 5, 798:

<1915> - Թարգմանում է Ն. Բարաթաշվիլու «Մտորմունք Քռի մասին» («Գնացի գետափ, որ ցրեմ մաշող իմ մտքերն աննինջ») բանաստեղծության առաջին 10 տողը:

*) Առաջին անգամ տպագրվել է «Հայոց գետերը» խաղերի ժողովածուում (Թիֆլիս, 1915, էջ 28):

ԵԼԺ 2, 280:

1915 - Ավարտում է խաղերի հրատարակությունը (տե՛ս մար-

տի 19):*

*) Նախատեսված էր հրատարակել 11 խաղ: Հրատարակվում են 9-ը՝ «Հայոց գետերը», «Թանկագին քարեր», «Սրամիտ նախրապանը», «Դդում (գույների խաղ)», «Հայոց գետերը (փոքրը)», «Հայկական հանելուկներ», «Հայկական առածներ (լոտո)», «Աստղերի խաղ», «Հայկական առածներ (երկրորդ խաղ)»:

Խաղերը տպագրվում են առանձին պրակներով՝ բանաստեղծի և իր զավակների հիմնադրած «Մանուկ» ընկերության հրատարակությամբ: Յուրաքանչյուր պրակ ունի խաղի ուղեցույց-բացատրություն: Առաջին պրակն ունի նաև հատուկ «Ազդ», որտեղ հանգամանորեն բացատրվում է խաղերի նպատակը (տե՛ս նաև մարտի <երկրորդ տասնօրյակ>), ցույց է տրվում խաղի դերը մարդու կյանքում:

Մասնավորապես. «Մենք անծանոթ ենք մեր հայրենիքին, նրա բնությանը, նրա կյանքին, նրա անցյալին ու ներկային: Սա մի շատ ցավալի երևույթ է, որ բացատրվում ու արդարանում է միայն մեր կյանքի ծանր ու ձախորդ պայմաններով:

<....> Սակայն դա ծանր հարվածներից առաջացած մի ժամանակավոր թուլություն էր մեր ազգային կյանքում, մի անցողակի տխուր վիճակ, որից հետո մենք մտնում ենք վերածնության, վերանորոգման, կազդուրման ու կազմակերպման նոր, կենդանի, աշխույժ, առողջ ու ոգևորիչ շրջանը: Արդեն զգում ենք նրա թարմ, կազդուրիչ շունչը և մեր՝ դարերով թմրության մատնված ու կաշկանդված ուժերը խաղս են լինում: Եսպես է բնության սքանչելի օրերը. կյանքն ու կենսականությունը, ուժեղ հոգին ու առողջ սիրտը *խաղով* են արտահայտվում: Պետք է վերանորոգենք մեր հին լավ խաղերը և ուրիշներից օրինակ առնելով միշտ լրացնենք:

<...> Կենդանի, առողջ մարդը <...> ոչ միայն խաղի պահանջն է զգում, այլև պարզ տեսնում ու նկատում է, որ էն ժամանակ, երբ մենք ծանր նստած մեծ-մեծ բաներ ենք խոսում, խաղն ու նրա նման փոքրիկ համարված բաները իրենց վճռական գործն են տեսնում, կյանք, հոգի, լեզու՝ մարդ են ստեղծում:

<....> Մարդ ասելով էստեղ հասկանում ենք ամեն հասակի մարդ, բայց խաղը առանձնապես անհրաժեշտ պահանջ է երեխաների ու պատանիների համար, էն դալար հասակի համար, որ մեր լեզուն որոշում է մի բառով՝ *մանկություն*:

Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ:

<....> Մեր խոսքը մասնավորապես տնային, մանկավարժական, կրթական խաղերի վրա է: Եղ խաղերի մեջ առանձին ուշադրություն ենք դարձնելու մեր հայրենագիտության վրա և տալու ենք հայրենագիտական խաղերի մի շարք...

<....> Իրար հետևից կաշխատենք զանազան խաղերով ու բացատրական գրքույկներով, քարտեզներով ու նկարներով ծանոթություն տալ թե՛ Հայաստանի, թե՛ Կովկասի ջրերից, լեռներից, լճերից, կենդանական ու բուսական աշխարհից և բնական հարստություններից, որ մեր երեխաներն ու պատանիները ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը: Արդեն ոչ թե կույր ազգասերի սիրով, այլ գիտակից, ինտելիգենտ մարդու սիրով, որ սերն ազնիվ լինի, առողջ ու բովանդակալի:

Հայրենագիտական խաղերի հետ միաժամանակ կտանք և ուրիշ են տեսակ խաղեր, որոնցով կարողանան տառեր, բառեր, անուններ ու ոճեր սովորեն և կամ իրերի ու երևույթների հետ սկզբնական ծանոթությունը ձեռք բերեն կենդանի մայրենի լեզվով»:

ԵԼԺ 7, 206-216:

1915 - Գրում է «Պատերազմի տպավորություններից» հոդվածը:

Հավանաբար նախնական գրառումներն են ինչ-որ գեղարվեստական գործի, որտեղ բանաստեղծը պատերազմի սարսափները, հակամարդկային բնույթն ու ողջ անհեթեթությունը ցուցադրելու էր իրական դեպքերի, առաջին գծում հայտնված հասարակ զինվորի կենդանի կերպարի միջոցով:

Ահա գերմանացիները կրակի կարկուտ են թափում Անդլերպենի վրա: Փրկության դուռ որոնող խուճապահար ժողովրդի մեջ հայտնվում է նաև թագուհին, որ զարհուրած հարցնում է, թե ով է այդ ամենի հեղինակը: Նրան պատասխանում են. «Ձեր եղբայրը, Բավարիայի Ռուպրեխտ իշխանը...»: Սակայն օրհասական իրարանցումի մեջ այնպես էլ ոչ ոք չի իմանում, թե ինչ պատահեց հետո թագուհու հետ... Բայց՝ «լսում են, լսում են ամենքը, որ չեն խլացել թնդանոթների որոտից, տեսնում են ամենքը, որոնց աչքերը չեն կուրացել հայրենի հողից բարձրացած փոշուց... Եվ նայում են դեպի ետ, ետ դեպի հեռուն ու տեսնում են զարմանքով, թե դեռ որքան է հեռու մարդը, որ գազանական կատաղությամբ ու օրհասական տազմա-

պով գալիս է՝ իր աղմուկից ու իր բարձրացրած փոշուց կուրացած...որքան է հեռու տակավին...»:

Ահա և խրամատում կուչ եկած հասարակ զինվորը, որ հանկարծ հիշողության արահետով հետ է դառնում իր երբեմնի ապրած խաղաղ կյանքը. «եկա՛ն, շարքով առաջը եկան ու անցան անցած օրերը, անցած դեպքերը, սիրելի դեմքերը...»

Ու էնպես անշար էր նրա հոգին, էնպես բարի ու անփույթ, որ պատրաստ էր գրկելու նույնիսկ իրեն՝ զնդակ արծակող թշնամուն..., որ զարմանում էր, թե ինչպե՞ս են իր վրա հրացան արծակում և կամ ինքը...

Եվ նա երբեք էն չէր երագել առաջ էլ, որ ուրիշներին կոտորի: Նա ուրիշ երազներ ուներ՝ պայծառ, բարի, ազնիվ...»:

Բայց ուղիղ ճակատին դիպած զնդակը մեկընդմիշտ ընդհատում է այդ երազները... Ուրիշ սպանվածների հետ նրա դիակն էլ ամփոփում են ընդհանուր մի փոսում. «Երկու բանակներն էլ մնացել էին իրենց դիրքերում, և ընդհանուր հրամանատարը էդ օրվա մասին հեռագրեց.

- Ամեն ինչ ամփոփոխ է արևելյան դիրքերում»: **

Ահա և մի ուրիշ հասարակ զինվոր, «որ պատերազմի մեջ ընկավ ամենաեռուն տեղը»: Ընդհանուր խառնաշփոթի մեջ՝ «նա էլ գրեթե մեքենայորեն սկսեց գործել, թե ինչ արավ, ինքն էլ չիմացավ, բայց հանկարծ դեմն ելավ, հենց ուղղակի աչք աչքի եկավ մի դեմք, աչքերն արյունոտ ու կատաղի, լիքն ատելությամբ, ու զենքը փայլատակեց, գրեթե միաժամանակ «նրա» մեջ փայլատակեց, փայլատակեց, «... ո՞վ է սա... ինձանից ի՞նչ է ուզում...»:

Ծանր վիրավորված զինվորը հիվանդանոցում զառանցանքի մեջ անընդհատ կրկնում է այդ բառերը, որ շրջապատողների համար անհասկանալի է մնում, և ամեն անգամ անտարբերությամբ պատասխանում են. «Ոչինչ, ոչինչ, մի վախենար, բժիշկն է, վերքդ է փաթաթում, քեզանից ոչինչ չի ուզում...»:

*) Այս գաղափարը հետագայում խտանում է «Բերանն արնոտ մարդակերը էն ամբան...» քառյակում:

**) Հիշեցնում է Ռեմարկի «Արևմտյան ռազմաճակատում ամփոփոխ է» վեպը:

ԵԼԺ 7, 442-446, 668-669:

1915 - Հանդիպում է Մովսես Արագուն: Որպես հին ծանոթներ՝ խոսում են «Հազարան բլբուլի» մասին:

Արագին հիշում է. «1915 թվականին հարցրեցի Թումանյանին գրո՞ւմ է արդյոք «Հագարան բլբուլի» շարունակությունը: Առաջներում նա ասում էր, թե պիտի քաշվի գյուղը, նույնիսկ պիտի ապրի գյուղից դուրս գտնվող մի խրճիթի մեջ և մի ամբողջ տարի զբաղվի միայն այդ պոեմը գրելով:

Իմ հարցի վրա Թումանյանն ասաց ժպտալով.

-Երեսունհինգ տարի է, միշտ ասում եմ՝ մի նստեմ պարապեմ...

Հետո բացատրելով իր ասածը, շարունակեց.

-Կյանքս էնպես է դասավորվել, որ հնարավորություն չեմ ունեցել երկար նստելու, գրականությամբ զբաղվելու, միշտ գրել եմ «ոտի վրա», ինչպես պատահել է»:

ԹԺՀ, 525:

Հունվարի 1 - Մամուլը տեղեկացնում է.

«Ստացանք «Մամուլ» ընկերության ծախքով հրատարակված մանկական հետևյալ շահեկան ու զվարճալի խաղերը: 1) Հայկական առածների լոտո, 2) Դըդում, գույների խաղ, 3) Սրամիտ հովիվ, տառերի խաղ, 4) Թանկագին քարեր, խաղ, 5) Հայոց գետերը, հայրենագիտական խաղ (փոքրը): Այս խաղերի նպատակն է հայ մանուկներին ծանոթացնել մեր հայրենիքի հետ»:

«Հորիզոն», 1916, թիվ 1:

Հունվարի 1 - «Տոնական նվեր» հանձնարարականով ազդագիր մամուլում.

«Լույս տեսավ «Մամուլ» ընկ. հրատ. No 8 Մանկական պատկ. խաղը *Հայկական առածների Լոտո* – Մայր Հայաստանի, Մասիսի, Էջմիածնի, Անիի և Ս. Հռիփսիմեի տաճարների, Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և Խ. Աբովյանի պատկերներով: Գինը մեկ ռուբլի: Դիմել գրավաճառներին»:

«Հորիզոն», 1916, թիվ 1:

Հունվարի 2 - Հայտարարություն մամուլում.

«Վաճառվում են Հովհ. Թումանյանի հետևյալ գրվածքները՝ 1. «Շունն ու Կատուն», 2. «Ամբախտ վաճառականները», 3. «Գառնիկ ախպեր», 4. «Անհաղթ աքլոր», 5. «Ծիտը», 6. «Ուլիկը», 7. «Աղվեսը», 8. «Տերն ու ծառան», 9. «Խոսող ձուկը», 10. «Գիքորը», 11. «Մի կաթիլ մեղրը», 12. «Քաջ Նազարը», 13. «Փոքրիկ ձկնորսը», 14. «Լեզուն կտրած ծիտը», 15. «Ոսկի քաղաքը», 16. «Թմկաբերդի առունը», 17. Գրին եղբայրների հեքիաթները, I – III պրակներ»:

*) Հայտարարությունը կրկնվում է շաբաթաթերթի 9, 11, 12 համարներում:

«Համբավաբեր», 1916, թիվ 2:

Հունվարի 3 - Մամուլը տեղեկացնում է, որ լույս է տեսել և վաճառվում է Թումանյանի և զավակների կազմած «Հայկական առածների լոտո» խաղը:

«Համբավաբեր», 1916, թիվ 2:

Հունվարի 3 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահիում է թումանյանը:

Վարչության անդամներից ներկա են՝ Մինաս Բերբերյան, Նիկ. Աղբալյան, Դ. Դեմիրճյան:

Նախագահողը տեղեկացնում է, որ Բաքվի հայ գրասերների ընկերությունը հրավիրել է Վ. Բրյուսովին՝ դասախոսություն կարդալու հայ գրականության մասին: Առաջարկում են, որ ՀԳԿԸ վարչությունն էլ հրավիրի Թիֆլիս նույն նպատակով՝ վճարելով 500 ռուբլի:

Ժողովը Բրյուսովին Թիֆլիս հրավիրելը շատ տեսակետներից կարևոր է համարում մեր ժողովրդի ու գրականության համար, ուստի որոշում է հեռագրել Հովհաննիսյանին* բանակցելու Բրյուսովի հետ: Նախատեսվում է նաև դասախոսությունից հետո, ի պատիվ դասախոսի, կազմակերպել ճաշ նվագածությամբ: Հանձնարարվում է Դեմիրճյանին բանակցել մի քանի դերասանների ու նվագողների հետ, ապահովել հյուրասիրության գեղարվեստական մասը:

Որոշվում է Հովհաննիսյանին* հեռագիր ուղարկել հետևյալ բովանդակությամբ. «Ձեր պայմաններին համաձայն ենք, դիմում արեք Բրյուսովին և հայտնեք, թե երբ կարող է դասախոսել մեզ մոտ»:

*) «Արև» թերթի խմբագիր Տիգրան Հովհաննիսյանն է:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, թիվ 45/1:

Հունվարի 3 - Տպագրվում է Իվ. Գնունու «Мотивы армянской поэзии» (Սարատով, 1915) գրքույկի մասին Մ. Մատենճյանի գրախոսությունը:

Խրախոսում է հեղինակի՝ նաև «մեր թատերգության, վեպի, ինչպես և տաճկահայ գրականության մասին» հետզհետե «նման գրքույկներ» հրատարակելու մտադրությունը: Սակայն բոլորովին անընդունելի է համարում, որ գրքույկի ծավալի գերակշիռ մասը նվիրված է այնպիսի հեղինակների (Լեռնեց, Լ. Մանվելյան, Լևոն Գրիգորյան), որոնք «ոչ ինքնին որևէ արժեք ունին և ոչ էլ հայոց գրականության ընթացքի վրա են ազդել», կամ որ միայն Շահագիզին նվիրված է 17 էջ, իսկ Հ. Հովհաննիսյանին և Հ. Թումանյանին միասին՝ ընդամենը 9:

«Սա մի աններելի անհամաչափություն է, ինչ տեսակետից էլ որ հարցը քննելու լինենք,- եզրակացնում է քննադատը:- <....> Բայց որ գլխավորն է, պ. Գնունին չէ կարողանում պայծառ կերպով ցուցադրել ռուսահայ քնարերգության զարգացման ընթացքը, ոչ էլ

միշտ ճշտիվ բնորոշում է յուրաքանչյուր բանաստեղծի հատկանիշները»:

«Համբավաբեր», Թիֆլիս 1916, թիվ 2, էջ 59-60:

Հունվարի 4 - Օլգա Թումանյանի նամակը Ջուլֆա՝ Արտավազդ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Ընտանեկան տեղեկություններ է հաղորդում: Մասնավորապես. «Ես ջախելներն էլ ամեն օր քեֆ են անում <....>: Լուսիկը* ասում է, որ ամսույս 20-ին Սարյանը** գալու է, երևի շուտով հարսանիքը կլինի:*** Այս չորս օր է Ահարոնյանը Բաքու է, երևի շուտով կգա»:

*) Ղ. Աղայանի դուստրն է:

**) Մարտիրոս Սարյանն է:

***) Լուսիկ Աղայանը և Մարտիրոս Սարյանը ամուսնացել են 1916 թ. ապրիլի 17-ին:

ԹԶ ԱՐՏ, 148:

Հունվարի 7 - Վ. Բրյուսովի հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Благодарю за приглашение. Могу прочесть лекцию в понедельник или вторник. Адрес: Баку, Мемрополь, Валериус Брюсов».

ԳԱԹ ԹՖ, 1055 (579):

Հունվարի 8 - Բաքվի Հայ գրասերների ընկերության հրավերով Մայիլյանների թատրոնում տեղի է ունենում Վ. Բրյուսովի դասախոսությունը հայ բանաստեղծության մասին:

Դասախոսությունից առաջ ողջույնի խոսք է ասում Հ. Հովհաննիսյանը՝ կարդալով Բրյուսովին ձոնված իր բանաստեղծությունը:

Դասախոսությունից հետո, ի պատիվ հյուրի, տրվում է մեծ ճաշկերույթ:

«Մշակ», 1916, թիվ 7:

Հունվարի 9 - Հաղորդագրություն մամուլում:

Տեղեկացվում է, որ Հայոց գրողների ընկերության հրավերով Վ. Բրյուսովը կգա Թիֆլիս՝ կրկնելու Բաքվում կարդացած իր դասախոսությունը՝ «Հայոց բանաստեղծությունը» թեմայով: Բովանդակությունը՝ այն ազդեցությունները, որոնց ներքո մշակվել է հայոց գրականության ինքնուրույնությունը, հնագույն ժողովրդական, միջ-

նադարյան և նոր բանաստեղծությունը, տաճկահայ և ռուսահայ բանաստեղծության տարբերությունը, հայոց բանաստեղծության նշանակությունը եվրոպական գրականությունների համար:

Դասախոսությունը նշանակված է Արտիստական թատրոնի դահլիճում, ամսի 13-ին, չորեքշաբթի գիշերը:

«Հորիզոն», 1913, թիվ 4:

Հունվարի 10 - Ստանուն է «Армянский вестник» ամսագրի պաշտոնական գրությունը՝ ուղղված ՀԳԿԸ վարչությանը՝ Մոսկվայից:

Առաջարկում է համագործակցություն: Խնդրում է խմբագրությանն ուղարկել Ընկերության կանոնադրությունը, հաշվետվությունները, առհասարակ ամեն տեսակ տպագրելիք նյութեր, ինչպես նաև Ընկերության գործունեությանը վերաբերող տեղեկություններ՝ ամսագրում զետեղելու համար:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, թիվ 118:

Հունվարի 10 - Տ. Հովհաննիսյանի հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից՝ «передать Брюсову» հանձնարարականով.

«Желательно повторение лекции первого февраля, театре или раньше клубе. Прошу поговорить мною телефоном. Привет. Оаннисянц»:

*) ՀԳԿԸ վարչության հեռագրի (տե՛ս հունվարի 3) պատասխանն է:

ԳԱԹ ԹՖ, 1526 (785ա):

Հունվարի 11 - Տ. Հովհաննիսյանի հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Брюсов едет понедельник, вечером, 11 часов. Встречайте. Закажите номер. Оаннисянц».

ԳԱԹ ԹՖ 1527 (785):

Հունվարի 11 - Օլգա Թումանյանի նամակը Ջուլֆա՝ Արտավազ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է տան անցուդարձից, եղանակներից, հատկապես Բրյուսովի դասախոսությունների նախապատրաստության մասին. «Երևի թերթերում կարդացած կլինես դասախոսության համար (տե՛ս հունվարի 7): Բրյուսովը վաղը գալու է, ավստո այստեղ չես, շատ ենք ավստում, դասախոսության վերջը բանկետ է լինելու:

Դեռ երկու օր ժամանակ կա, բայց տոմսակները վերջացել են»:

ԹՁ ԱՐՏ, 150:

Չունվարի 12 - Գեղամ Արմեն ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

«Ալազյազի զավակունք»* ընկերության անունից խնդրում է բանաստեղծի միջամտությունը, որպեսզի Բրյուսովը ընդունի իրենց հրավերը՝ Ալեքսանդրապոլում կրկնելու «Հայ բանաստեղծության մասին» իր գեկուցումը:

*) Գրական խմբակ Ալեքսանդրապոլում, որ ստեղծվել էր 10-ական թվականների սկզբին և հայտնի էր նաև «Ալազյազի տղերք» անունով: Հիմնադիրներն էին՝ Գևորգ Աֆրիկյան, Իսահակ Իսահակյան, Արտաշես Տեր-Մարտիրոսյան և ուրիշներ (տես ՀՆԳՊ 5, էջ 603):

ԳԱԹ ԹՖ, 1086 (292 լր.)

Չունվարի 12 - Ուշ երեկոյան իր բնակարանում հյուրընկալում է Վ. Բրյուսովին և նրա տիկնոջը:

Ներկա են եղել հայ և վրաց գրողներ, մտավորականության ներկայացուցիչներ: Բրյուսովը կարդացել է մի հատված «Անուշից»՝ Վ. Իվանովի թարգմանությամբ, որ «շատ գեղեցիկ» տպավորություն է թողել:

«Հորիզոն», 1916, թիվ 8:

Չունվարի 13 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 7) «Ողջունում ենք» հոդվածը:

Գրված է Վ. Բրյուսովի՝ Բաքվում կարդացած և նույն օրը Թիֆլիսում կրկնվելիք «Հայոց բանաստեղծությունը»* դասախոսության առթիվ:

Ողջունելով ռուս ականավոր բանաստեղծի նախածեռնությունը՝ գրում է. «Առաջին անգամն է, որ անվանի ռուս գրողները հայ ու վրացի** գրականությունները դարձնում են լուրջ ուսումնասիրության առարկա, առաջին հարգանքի խոսքն են արտասանում և էնքան հաջող ու էնքան մեծ ծավալով թարգմանում:

Հանում են, թեև փոքր, բայց հիմ, կուլտուրական ժողովուրդների հոգևոր գանձերը, հիացմունքով ցուցադրում՝ սեր ու հարգանք առաջ բերելով ոչ միայն ռուս հասարակության մեջ, այլ հենց էլ

փոքր ժողովուրդների միջև միջնորդ հանդիսանալով, իրար հետ ծանոթացնում ու կապում փոխադարձ սիրո կապերով:

Եվ անկասկած մեծապես շոյում է մեր ժողովրդի ազգային ինքնասիրությունը և մխիթարում է նրա վշտացած սիրտը էս հարգանքով ու սիրով լիքը վերաբերմունքը՝ մեծ գրականության կողմից»:

*) Դասախոսությունը Բաքվում կարդացվել է հունվարի 8-ին, Թիֆլիսում՝ 13-ին (տե՛ս հունվարի 9):

**) Ռուս գրողներից վրաց գրականությունն ուսումնասիրելու փորձեր արել են Բալմոնտը, Բլոկը, Վ. Իվանովը և ուրիշներ:

ԵԼԺ 7, 217-218, 623:

Հունվարի 13 - Հաղորդագրություն մամուլում:

Տեղեկացվում է, որ գիշերվա ժամը 12-ին Բաքվից Թիֆլիս է ժամանել ռուս հայտնի բանաստեղծ Վ. Բրյուսովը: Կայարանում նրան դիմավորել են գրողներ, մամուլի ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ:

Ամսի 13-ին՝ երեկոյան ժամը 8-ին, Արտիստական թատրոնի դահլիճում Բրյուսովը դասախոսություն կկարդա հայոց գրականության մասին (տե՛ս նաև հունվարի 9): Դասախոսությունից հետո կտրվի ճաշկերույթ՝ ի պատիվ Բրյուսովի:

«Հորիզոն», 1916, թիվ 1:

Հունվարի 13 - Ողջույնի խոսք Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում՝ Վ. Բրյուսովի «Հայոց բանաստեղծությունը» դասախոսության առթիվ:

Բարձր է գնահատում ռուս բանաստեղծի նախաձեռնությունը, որ բարոյական մեծ օժանդակություն է հայ ժողովրդին 1915-ի աղետից հետո: Հիշելով Բրյուսովի խոսքը, թե «հայոց բանաստեղծությունը հայ ազգի ազնվության վկայականն է», ավելացնում է. «Այո, հիրավի, հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենամավիրական ու ամենաքնքուշ զգացմունքների հետ և կարողացել է հասնել մինչև Նարեկացին, որ ապաշխարողի կերպարանքով իր գլուխը բարձրացրել է մինչև երկինք ու գրույց է արել աստծո իրեն հետ երես առ երես:

Եվ նույնիսկ էսօր էլ, թեպետև իր հայրենիքի մի ծայրից մյուսը հոշոտված ու արյունաթաթախ, միայն խորապես խոցված ու ծանր

վշտացած է հայը և ոչ թե խորտակված ու հուսահատ, և չի դադարել ստեղծագործության ոչ մի ասպարեզում»:

Դիմում է Բրյուսովին. «Այո՛, մեր թանկագին հյուր և ազնիվ բարեկամ, մենք միշտ ունեցել ենք էդ բարձր վկայականը: Բայց էդ վկայականը էն վկայականներից չի, որոնց վրա դրված է մարդկային իշխանության կնիքը, էդ էն վկայականներից է, որոնց վրա բնությունն ու աստված են դրել իրենց կնիքը և դրա համար էլ ինչքան դժվար է դրա ունենալը, էնքան էլ դժվար է կարդալը: Սա էն գիրն է, որի մասին մեր Սայաթ-Նովեն ասում է.

- Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրն ուրիշ գրեն է...

Դուք եղաք էն հազվագյուտ մարդկանցից մինը, որ կարողացաք կարդալ էս կախարդական գիրը ամբողջ աշխարհի առջև: Մեզ էս կողմից քիչ են ճանաչում լուսավոր աշխարհքում, և մանավանդ Ռուսաստանում: Ռուսական նշանավոր գրողներից առաջինն եք դուք, որ հռչակավոր ընկերների հետ միասին մեր և մեր եղբայրակից ժողովուրդների ստեղծագործական կարողությունն ու գեղարվեստական գործերը հիացումով հանում եք լայն հրապարակ և փոխադարձ հարգանքի ու սիրո կապերով ժողովուրդները շաղկապում իրար հետ»:

Եվ վերջում. «Աստված տա՝ դուք միակը չլինեք, որ ռուս բարձր մտավորականության կողմից գալիս եք մեզ մոտ սիրո և հարգանքի խոսքերով»:

ԵԼԺ 7, 219-221, 624:

Հունվարի 14 - Հաղորդագրություն մամուլում.

«Ամսույս 12-ին Թիֆլիս ժամանեց ռուս նշանավոր բանաստեղծ Վալերի Բրյուսովը հայոց բանաստեղծության մասին դասախոսություն կարդալու: Կայարանում բանաստեղծին դիմավորեց Հայոց գրողների ընկերության վարչությունը, որը թարմ ծաղիկներից շքեղ ծաղկեփունջ նվիրեց բանաստեղծի տիկնոջը: Պ. Վ. Բրյուսովը իրիկունն անցկացրեց բանաստեղծ Հովհ. Թումանյանի մոտ՝ հայ և վրացի գրական մարդկանց և ինտելիգենցիայի շրջանում, ուր և կարդաց կտորներ Վ. Իվանովի թարգմանած «Անուշ» պոեմից, որ շատ գեղեցիկ տպավորություն թողեց»:

«Հորիզոն», 1916, թիվ 8:

Հունվարի 15 - Հաղորդագրություն մամուլում՝ Վ. Բրյուսովի՝ Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում կայացած դասա-

խոսության մասին:

Նկարագրվում է դահլիճը, դասախոսի մուտքը՝ Հ. Թումանյանի ուղեկցությամբ, վերջինիս ողջույնի խոսքը առանց մանրամասների, դասախոսության մի քանի կարևոր դրույթներ: Մասնավորապես. «Բրյուսովը առանձին հիացմունքով կանգ առավ միջնադարյան բանաստեղծների վրա, իսկ նորագույններից խոսեց Հ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Դեմիրճյանի, Ալ. Ծատուրյանի մասին: Նա կարդաց այս բանաստեղծների կտորներից մի շարք աջող թարգմանություններ....»:

«Մշակ», 1916, թիվ 8:

Հունվարի 15 - ՀԳԿԸ վարչության անդամ-գանձապահ Ա. Աբովյանի դիմումը վարչության նախագահ Թումանյանին.

«Միանգամայն անհարմար գտնելով այն հանգամանքը, որ ես՝ ոչ-գրող մարդս, կովկասյան Հայ գրողների ընկերության վարչության անդամ եմ, սրանով պատիվ ունեմ խնդրելու, ազատ կացուցանել ինձ վարչության անդամությունից և, հետևապես, գանձապահի պաշտոնից, թողնելով միայն իբրև սոսկ անդամ:

Ամենայն հարգանք՝ Ա. Աբովյան»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 111/2:

Հունվարի 15 - Վ. Բրյուսովի ստացականը՝ իր դասախոսության հոնարարը ստանալու մասին.

«От Кавказского Общества Писателей Армении в Туфлисе пятьсот (500) рублей гонарар за лекцию «Поэзия Армении», прочитанную 13 января 1916 года, получил 15 января 1916. Валериус Брюсов».

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 232:

Հունվարի 15 - Տպագրվում է «Հայկական բանաստեղծություն» խորագրով հոդված՝ Թիֆլիսում Բրյուսովի կարդացած դասախոսության մասին (տե՛ս հունվարի 13):

Հանգամանորեն ներկայացվում է դասախոսության բովանդակությունը: Թումանյանին վերաբերող հատվածը վերաշարադրվում է այսպես. «Նրա երգերի մեջ լսվում է ժողովրդական ձայնը: Թումանյանը մի ամբողջ վեպ է, ազգային էպոպեա: Հայ ժողովրդի ոգին, բովանդակ ներքին կյանքը ոչ թե բազմահատոր գրքերի միջով է հրապարակ գալիս, այլ այնպիսի փայլուն բանաստեղծություններ

րով, որ ստեղծագործել է Թումանյան: Հաճախ մի քանի տողի մեջ նա կարողանում է պատկերացնել մի ամբողջ լուսավոր աշխարհ»: Եվ դիտողություն. «Տարաբախտաբար, կովկասահայ առաջնակարգ բանաստեղծի երկերից հաջող ընտրություն չէր արել դասախոսը: Նրանից կարդաց միայն մի փոքրիկ բանաստեղծություն՝ «Հայի վիշտը», որ ոչ բնորոշ է Հովհաննես Թումանյանի համար, ոչ էլ հարազատ թարգմանված էր...»:

«Արև», Բաքու, 1916, թիվ 8:

Հունվարի 16 - Ա. Աբովյանի դիմումը ՀԳԿԸ վարչությանը (տե՛ս նաև հունվարի 15):

Ինքը՝ Գ. Աղանյանի և Մ. Բերբերյանի հետ իբրև Բոյուսովի դասախոսության կարգադրիչ հանձնախմբի անդամ, դասախոսությունից առաջ պետք է լիներ Արտիստական թատրոնում՝ որպես գանձապահ հետևելու տոմսակների վաճառքին, մինչդեռ առանց իրեն սկսել էր վաճառել «պատանի Համլիկ Թումանյանը»: Բերբերյանը անտեսել է իրեն, թե ինքը և Աղանյանը մենակ կարող են ամեն բան կարգադրել: Վիրավորվել է դրանից և պահանջում է նախագահից պատասխանել երկու հարցի. «1. Արդյոք իրավունք ունի՞՞ պ. Բերբերյանը ինձ գանձապահ չուզել: 2. Գանձապահ լինելով արդյոք ընկերությանս վերաբերյալ գանձերի ստանալն ու ծախսելը իմ պարտականությունը չէ՞»: Եվ վերջում. «Ահա վերոհիշյալ երկու կետերի խանգարումն տեսնելով պ. Բերբերյանի կողմից՝ բողոքում եմ այդ կատարված իրողության դեմ և խնդրում եմ հարգելի վարչությանդ պարզաբանել այս հանգամանքը»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, թիվ 111/3:

Հունվարի 16 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 10) «Բացատրություն» հոդվածը:

«Հորիզոնի» խմբագիր Մ. Վարանդյանը իր թերթում «ամոթալի երևույթ» է համարել (տե՛ս «Հորիզոն», 1916, թիվ 9), որ Բոյուսովի դասախոսությանը վրացիներ և ռուսներ քիչ են եղել, սակավաթիվ վրացիներն էլ, իբր, հատուկ հրավերով են եկել: Թումանյանը դա թյուրիմացություն է համարում՝ բացատրելով, որ ներկա վրացիներին ոչ մի հատուկ հրավեր չի ուղարկվել, նրանցից շատերը նույնիսկ նախապես են խնդրած եղել, որ տոմսակներ ուղարկելիս իրենց չմոռանան: Իսկ ռուսների սակավությունը բացատրում է նրանով, որ ռուսերեն հայտարարությունը ուշացումով է տպագրել: Շատ

ռուսներ անգամ նեղացել են, որ ներկա չեն եղել դասախոսությանը, խնդրում են թե՛ Բրյուսովին, թե՛ հայ գրողների ընկերությանը, որ դասախոսությունը կրկնվի:*

*) Բրյուսովը հունվարի 22-ին Թիֆլիսում կարդում է երկրորդ դասախոսությունը՝ «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» թեմայով:

ԵԼԺ 7, 218-219, 623-624:

Հունվարի 16 - Նվարդ Թումանյանի մամակը Ջուլֆա՝ Արտավազդ Թումանյանին:

Գրում է Բրյուսովի դասախոսությունների հաջողության մասին: Տեղեկացնում է. «Էսօր երեկոյան Պաուլոյի* հետ գնում են Երևան, որտեղ նույն դասախոսությունը կրկնելու է Երկուշաբթի օրը»: Բանկետի երեկոյի մասին. «Հետաքրքիրը բանկետն էր, թամադան Ալեքսանդր Իվանովիչն** էր, շատ ոգևորված էր ու լավ տարավ: Հայրիկն ու Բրյուսովը բավական բարեկամացան էդ երեկո, մի քանի անգամ համբուրվեցին ու իրար գլուխ խոնարհեցին: Ասում էր՝ «Ես գլուխ եմ խոնարհում հայոց մեծ բանաստեղծի առաջ»:

*) Պողոս Մակինցյանն է:

**) Ալեքսանդր Խատիսյանն է:

ԹԶ ԱՐՏ, 151:

Հունվարի 17 - Տպագրվում է հաղորդագրություն՝ «Վալերի Բրյուսովի դասախոսությունը» վերնագրով, Զ. ստորագրությամբ:

Տեղեկացվում է, որ հայտնի ռուս բանաստեղծ Վ. Բրյուսովի դասախոսությունը «Հայկական պոեզիայի մասին» «ահագին ժողովուրդ էր հավաքել»: Դասախոսը հասարակությանը ծանոթացրել է հայ պոեզիայից կատարած իր թարգմանություններին: Շատ բարձր գնահատականի է արժանացրել Նարեկացուն և Քուչակին: Նոր և նորագույն շրջանի բանաստեղծներից առանձնապես կանգ է առել Թումանյանի և Խսահակյանի վրա:

Դասախոսության սկզբում Թումանյանը Հայ գրողների ընկերության կողմից ողջունել է Բրյուսովին և շնորհակալություն հայտնել նրա կատարած աշխատանքի համար (տե՛ս հունվարի 13):

Թումանյանն իր ողջույնի խոսքն ասել է հայերեն, դրա համար էլ դահլիճում ներկա ռուսները, վրացիները և թուրքերը ոչինչ չեն հասկացել:

«Պայքար» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, թիվ 3:

Հունվարի 17 - Հաղորդագրությունն Բրյուսովի դասախոսության մասին՝ *Ունկնդիր* ստորագրությամբ:

Տեղեկացվում է. «Վ. Բրյուսովի դասախոսությունից հետո, Հայ գրողների ընկերության նախաձեռնությամբ, հենց դասախոսությունից հետո, նույն դահլիճում, կայացավ բանկետ՝ ի պատիվ պ. Բրյուսովի, որի հետ էր նաև տիկ. Բրյուսովը:

Բանկետին մասնակից էին Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանը, վրաց ինտելիգենցիայից հրապարակախոս Դիասամիձեն, Նակաշիձեն, Կանչելին, Իմեդաշվիլին և ուրիշներ, հայ հասարակական հաստատությունների, ընկերությունների, մամուլի և ուսուցչության բազմաթիվ ներկայացուցիչներ, թվով մոտ 150 հոգի»:

Բերվում է Թումանյանի ողջույնի խոսքի (տե՛ս հունվարի 13) շարադրանքը:

Բանկետը տևել է մոտ 3 ժամ:

Ճառերով հանդես են եկել նաև Ալ. Խատիսյանը, Դիասամիձեն, Կանչելին և Նակաշիձեն՝ շեշտելով ազգերի համերաշխության անհրաժեշտությունը:

«Պայքար» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, թիվ 3:

Հունվարի 17 - Տպագրվում է Թումանյանի ողջույնի խոսքը (տե՛ս հունվարի 13)՝ Վ. Բրյուսովի «Հայոց բանաստեղծությունը» դասախոսության առթիվ:

«Հորիզոն», 1916, թիվ 11:

Հունվարի 17 - Հաղորդագրությունն Վ. Բրյուսովի դասախոսության մասին.

«Բրյուսով հայտնի ռուս բանաստեղծը ամսիս 13-ին Արտիստական թատրոնի դահլիճում կարդաց մի դասախոսություն Հայոց բանաստեղծության մասին՝ սկսյալ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Այս շահեկան և շատ կողմերից հետաքրքիր դասախոսությունը գրավել էր Թիֆլիսի ոչ միայն հայերին, այլև վրացի և ռուս բազմաթիվ ունկնդիրների: Մեծանուն բանաստեղծը մյուս օրը մեկնեց Էջմիածին և Երևան՝ յուր դասախոսությունը կրկնելու»:

«Համբավաբեր», շաբաթաթերթ, 1916, թիվ 4, էջ 125:

Հունվարի 17 - Տպագրվում է Դ. Անանունի՝ Հայ գրողների կովկասյան ընկ. խորհրդին ուղղված «Բաց նամակը» (Բաքու, 13 հունվարի), որտեղ դժգոհություն է հայտնում, թե ինչու Բրյուսովի դասախոսության մասին հայտարարությունը նաև «Մշակում» չի տպագրվել:

Նամակին անմիջապես հաջորդում է «Մշակի» բացատրությունը. «Հայ գրողների վարչությունը ոչ միայն հայտարարություն չէ ուղարկել «Մշակին» տպելու, այլ նույնիսկ դասախոսության օրը մուտքի տոմսակ չէ ուղարկել «Մշակին», մինչ ուղարկել է այլ լրագիրներին: Մեր կարծիքով, նա իր այդ քայլերով կամեցել է միայն հաստատել մեր մեղադրանքը, որ նա ոչ թե հայ գրողների, այլ կուսակցական գրողների ընկերություն է: Հետևաբար, մեր հարգելի աշխատակցին միամտացնել կարող ենք, որ մենք եթե հայտարարություն ստացած լինեինք, կտպեինք»:

«Մշակ», 1916, թիվ 10:

Հունվարի 17 - Տպագրվում է «Լինենք և քննադատող» հոդվածը՝ Գրադատ ստորագրությամբ:

Հեղինակը, ողջունելով և գնահատելով հանդերձ Բրյուսովի դասախոսությունը, այնտեղ նկատում է «դեֆեկտներ, թերություններ և որոշ միակողմանիություն»՝ դրանք վերագրելով ոչ թե դասախոսին, այլ «այն անձանց, որոնք շրջապատել են նրան դասախոսությունների ժամանակ»:

Մասնավորապես գրում է. «Միանգամայն անուշադրության է մատնել հայկական բանաստեղծության այնպիսի մի հսկայական դեմք, այնպիսի մի կորիֆեյ, ինչպես Ղևոնդ Ալիշանը, որի առաջ նրա հանդես բերած բանաստեղծները՝ Հ. Թումանյան, Դեմիրճյան, Վարուժան, Սիամանթո, թզուկներ են հսկայի առաջ»: Այնուհետև. «Ռուս բանաստեղծն ընկնում է չափազանցությունների և նույնիսկ սխալների մեջ: Մինչև այսօր հայկական և նույնիսկ ռուսական քննադատությունը այն կարծիքն է արտահայտել, որ մեր առաջնակարգ բանաստեղծներ պետք է համարել Մ. Պեշկոպաշյան, Պ. Դուրյան, Հ. Հովհաննիսյան, Ալ. Ծատուրյան, Ա. Չոպանյան, բայց, ինչպես երևում է, Բրյուսովը դրանցից բարձր է համարում Հ. Թումանյանին, որին հայկական քննադատները դեռ այդ պատվին չեն արժանացրել: Մենք, իհարկե, համամիտ չենք և Լեոյի հետ, որ Հ. Թումանյանի մեջ բանաստեղծական տաղանդ չէ տեսնում, բայց համամիտ չենք և

ռուս բանաստեղծի հետ, որ նրան համարում է առաջնակարգ բանաստեղծ: Նույնպես սխալ է Դեմիրճյանին դնել թեկուզ Զ. Թումանյանի կողքին, իսկ բանաստեղծ համարել Լեյլիներին՝ այդ արդեն ավելի քան սխալ է: Լեյլի, Արմենուհի Տիգրանյան և նմանները գուցե լավ ոտանավոր թխողներ են, բայց դեռ շատ հեռու են բանաստեղծ անունն ստանալուց»:

Եվ վերջում. «Զմոռանանք, որ բանաստեղծ Բրյուսովը սիմվոլիստ դպրոցին է պատկանում, հետևաբար որոշ միակողմանիությունը նրա մեջ կարելի է վերագրել այդ ուղղության: Տալով արժանավոր հարկը նրա դասախոսության, մենք հարկ համարեցինք նույնիսկ մեր ինքնաքննադատության համար մատնանիշ անել որոշ թերությունների վրա՝ լիահույս ենք, որ տաղանդավոր ռուս դասախոսը և բանաստեղծը ապագայում կհարթե այդ անհարթությունները»:

«Մշակ», 1916, թիվ 10:

Հունվար 18 - Վ. Բրյուսովի հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Расхворался. Если возможно, умоляю лекции* отменить или перенести. Подробности письмом. Крайне извиняюсь. Приветствую всех. Валериус Брюсов».

*) Խոսքը հավանաբար հունվարի 22-ին Թիֆլիսում կարդացվելիք «Հայաստանի պատմական շրջանները և բանաստեղծության զարգացումը» դասախոսության մասին է:

ԳԱԹ ԹՖ, 1056 (578):

Հունվարի 18 - Օլգա Թումանյանի նամակը Ջուլֆա՝ Արտավազդ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Հետաքրքրվում է որդու գործերով: Տեղեկություններ է հաղորդում իրենց ընտանեկան առօրյայից, մասնավորապես. «Լավ կանես, եթե ռոճիկդ ստանաս, մեզ էլ փայ դրկի, էս Բրյուսովի համար ավելորդ ծախսեր շատ արինք»: Բրյուսովի դասախոսությունների մասին գրում է. «Հենց հիմա մեզ մոտ ժողով կա, հայ և վրացի մարդիկ են հավաքվել, պետք է երկրորդ անգամ ուրբաթ օրը դասախոսի, գնացել է Երևան (տե՛ս հունվարի 16), Պառլոյի հետ էլի գալու են»:

ԹԶ ԱՐՏ, 152:

Հունվարի 18 - Գրիգորյանց ստորագրությամբ հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաթումից.

«Попечительство Армянских школ и местная интеллигенция просит многоуважаемого соотечественника Валерия Брюсова не отказать принять их приглашение приехать в Батум для прочтения лекции по армянской литературе, вас же лично погостить у нас вместе с лектором. Григорянц».

ԳԱԹ ԹՖ, 1109 (596):

Հունվարի 18 - Ցուլակ Խանգադյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաթվից:

Իր դժգոհությունն է հայտնում *Գրադատ* ստորագրությամբ մի հոդվածից (տե՛ս հունվարի 17), որտեղ հեղինակը չափազանցված ու չտեսության հետևանք է համարում դասախոսությունից հետո Բոյուսովի մեծարումը *հանճար*, *տիտան* և նման հորջորջումներով. «Ես մեծ հիացմունքով եմ լսել Բոյուսովի իսկապես գեղեցիկ դասախոսությունը, բայց չափը ոտնահարվեց...»:

Այս կապակցությամբ անդրադառնում է առհասարակ «Մշակուն» տպվող հոդվածներին, որոնք խոսքի ազատության անվան տակ դուրս են տալիս ամեն տեսակի անհեթեթություն. «Ես ի՞նչ լեզվով խոսեմ այն մարդու հետ, որ կանդի, թե մեր հայազգի Ամիրջանը բարձր է Շալապիին: <...> Այո, բացարձակ սուտ էլ կա այդ հոդվածում (և խմբագիրը չի ամաչում – տպում է): Լեոյի դեմ շատ բան կարելի է ասել, բայց օրը ցերեկով վերագրել նրան այն կարծիքը, թե իբր նա Հովի. Թումանյանի մեջ «տաղանդ չի տեսնում», – սա ի՞նչ անհեթեթություն է!: <...> Հովի. Թումանյանը, ես կարծում եմ, ոչ մի կարիք չունի պաշտպանության: Միայն կույրերը չեն տեսնում, խուլերը չեն լսում պատմության դատավճիռը:

Մի խոսքով, միայն Բոյուսովի ասած *мрехзведное*-ն - մեր դրոշակն է, այսօրվա և գեղեցիկ ապագայի գրավականը... և այդ «եռաստեղության» մեջ ամենապայծառը Հովի. Թումանյանը:

Գրական «լակոտ-լուկոտները» միայն վարկաբեկել կարող են, չնայած որ հանդգնորեն «հայ քննադատության» անունից են խոսում:

Հետգրության մեջ. «Քիչ էր մնում գլխավորը մոռանա՛մ: Նեղություն կրեք խնդրեմ պարզելու մի հանգամանք. նյութեր հավաքելիս չարհամարիեցի նաև Շուլավերի Բելինսկու հոդվածները «Հանդես

ամսօրյայի»** մեջ (զարմանալի տգետ մարդ է եղ տնավեր Գր. Բալասանյանը!): Եվ էսպիսի բան ռաստ եկա: Իբր թե Լեոն իր մի դասախոսության մեջ Ձեզ հռչակել է «ամենալավագույն ներկայացուցիչը բանաստեղծական գրականության մեջ»: Մի՞թե ճիշտ է: Դասախոսությունը կրել է այս վերնագիրը՝ «Գլխավոր հոսանքները հայկական գրականության մեջ»: Ո՞ր տարին է եղել այս դասախոսությունը. արդյոք չի՞ կարելի լրագրական հաշվետվություն գտնել այդ մասին: Եթե դա ճիշտ է, մեծ պատիվ Լեոյին, որ իր գրածը այդպես խելոք կերպով և համարձակ շեշտով ջրել է մի փոքրիկ նախադասությամբ»:

*) Գրադատ ստորագրությամբ հողվածում նման արտահայտություն չկա:

**) Նկատի ունի Գր. Բալասանյանի «Ռուսահայոց նորագույն բանաստեղծները. Զովհաննես Թումանյան» հողվածը (1910, «Հանդես ամսօրեա» թիվ 1 և 3):

ԳԱԹ ԹՖ, 1363 (54):

Հունվարի 19 - Վ. Բրյուսովի հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից.

«Благодарю. Здоров. Тронут любезным письмом.* Предпочитаю, если можно, ехать двадцать третьего, субботу. Брюсов».

*) Թումանյանի այդ նամակը հայտնի չէ:

ԳԱԹ ԹՖ, 1057 (577):

Հունվարի 20 - Մխիթար Տեր-Անդրեասյանի բացիկը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Սիրելիդ իմ Զովհաննես!

Մի ամբողջ տարի փնտրում եմ «Սայաթ-Նովա»-ի նոր հրատարակությունը (Հայ գրող. ընկ. Թիֆլիզ, 1914) ու միշտ նույն պատասխանն եմ ստանում մեր գրավաճառներից, թե չուտով ստանալու են... Կնոջս պատվիրել էի Թիֆլիզ գնել – նույնպես չի գտել: Հեռախոսով պատվիրեցի, որ քո օգնությամբ դիմի: Խոսել է. քո բնակարանից ասել են, թե տանը չես! Խնդրել է, որ ինքդ զանգ տաս, անուշադիր ես թողել: Այժմ խնդրում եմ, որ այդ 25 կոպ. գրքից մի օրինակ բանդիրողով ուղարկես ինձ կամ պատվիրես գրավաճառին, որ վերադիր վճարով ուղարկի»:

ԳԱԹ ԹՖ, 2169 (1133):

Հունվարի 20 - Տպագրվում է Շիրվանզադեի «Իմ տպավորություններ» հոդվածը:

Խոսքը Բրյուսովի դասախոսության մասին է:

Անհիմն չի համարում, որ ռուս բանաստեղծը հիացած է մեր հին և միջնադարյան բանաստեղծությամբ, ժողովրդական երգերով, և մենք իրավունք ունենք հպարտանալու դրանով: Բայց ժամանակակից բանաստեղծության մեջ նախնիներին արժանի քիչ բան է տեսնում, և իր տպավորությամբ՝ դա զգացվել է նաև դասախոսության մեջ: «Բայց չափի մոռանալ,- բացատրում է հոդվածագիրը,- որ խոսողը հայ չէր, այլ մի մեծ ազգի շատ նուրբ և շատ խստապահանջ գեղարվեստագետ, որ խորապես զգում է մեծությունների և փոքրությունների մեջ եղած տարբերությունը: Եվ միայն նուրբ լսելիքներին էր ուղղված նրա առաջաբանը՝ «Ես չեմ քննադատում, այլ իմ տպավորություններն եմ հաղորդում» մեր ժամանակակից բանաստեղծների մասին խոսելիս: Այդ բառերը մի անգամ ևս շեշտեցին նրա ճաշակի նրբությունը և հոգու անկեղծությունը»:

Այնուամենայնիվ նկատում է, որ՝ «հարգելի դասախոսը կարող էր և մեր ժամանակակից բանաստեղծներից բերել ավելի գեղեցիկ կտորներ, քան այն ոչ այնքան հաջող կտորները, որ բերեց և որոնք, դժբախտաբար, մի տեսակ հիասթափում առաջացրին մեր այժմյան բանաստեղծության անծանոթ ունկնդիրների մեջ: Եվ այդպիսի կտորներ, ես համոզված եմ, նա կգտներ մեկից ավելի թե՛ ռուսահայ և թե՛ մանավանդ թուրքահայ բանաստեղծների մեջ, եթե, հարկավ, ժամանակ ունենար որոնելու»:

«Մշակ», 1916, թիվ 12:

Հունվարի 21 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 14) «Հայոց պատմությունը» հոդվածը:

Գրված է Վ. Բրյուսովի՝ Թիֆլիսում կարդացած «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» դասախոսության նախօրյակին: Կարևոր նշանակություն է տալիս այն փաստին, որ ռուս գրողներն ու առհասարակ մտավորականությունը սկսել են լրջորեն հետաքրքրվել հայ մշակույթով ու պատմությամբ: Այդ առիթով պատկերավոր դիտողություններ է անում հայ ժողովրդի պատմական ճակատագրի մասին: Այդ ճակատագրի խորհրդանիշն է համարում պարսկական արշավանքների ժամանակ Թիֆլիսում զոհված Սայաթ-Նովային՝ «հանճարի կնիքը ճակատին,

քրիստոնեության խաչը ձեռքին, դաշույնը խրած իր ազնիվ ու մեծ սրտի մեջ»:

Այնուհետև. «Եվ ինչո՞ւ չի կարելի Սայաթ-Նովային նկատել որպես մեր ժողովրդի կյանքի ու տանջանքի խորհրդանշանը՝ նրա պատմությունը:

Հանճարի կնիքը ճակատին, քրիստոնեության խաչը ձեռքին, դաշույնը սրտի մեջ...

Եվ երբեք չցամաքեց էդ արյունոտ դաշույնը, ո՛չ նրանից առաջ, ո՛չ էլ նրանից հետո, մինչև էսօր...

Հայոց պատմությունը դարերի անվերջ մաքառում եղավ, որ կարողանար ետ մղել էդ սպանիչ դաշույնը իր սրտից, և իր լավագույն զավակներին էլ կռվի մեջ մաշեց ու սպառեց: Էսօր էլ իր զավակները, միացած ռուսական մեծ բանակին ու լավագույն ժողովուրդների, ասես թե հազար-հազար ձեռքերով ձգտում են ու ճգնում են հանեն էդ դաշույնը մեծ Սայաթ-Նովայի սրտից:

Բայց պետք է ճանաչել Սայաթ-Նովային ու ծանոթացնել աշխարհքին, թե չի կարելի հավիտյան թողնել էդ դաշույնը նրա սրտում...»:

ԵԼԺ 7, 221-222, 624-625:

Հունվարի 21 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ Աշխեն Թումանյանին՝ Ջուլֆայից:

Տեղեկություններ են իր ծառայողական առօրյայի մասին: Գրում է. «Հենց նոր «Մշակ» առա և կարդացի Շիրվանի «տպավորությունը» (տե՛ս հունվարի 20) Բրյուսովի դասախոսությունից. շատ վատ տպավորություն թողեց և իրեն ամբողջ տգիտությունը երևան հանեց...»:

ԹՁ ԱՐՏ, 153:

Հունվարի 22 - Մամուլում տպագրվում է «Amiko» ստորագրությամբ թղթակցություն:

Տեղեկացվում է, որ Բաթումի հայ-լուսավորչական և հայ կաթոլիկաց ծխական դպրոցների հոգաբարձությունների և տեղի հայ ինտելիգենցիայի կողմից հեռագիր է ուղարկվել Թիֆլիս՝ Հովհ. Թումանյանին՝ միջամտելու, որպեսզի Վ. Բրյուսովը հանձն առնի հայոց բանաստեղծության մասին իր դասախոսությունը կարդալ նաև Բաթումում (տե՛ս նաև հունվարի 18):

«Հորիզոն», 1916, թիվ 15:

Հունվարի 22 - Հուսիկ արքեպիսկոպոսի ցավակցական նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ս. Էջմիածնից.

««Кавказское слово»-ում կարդացի Ձեր եղբոր մահը պատերազմի դաշտում:

Հայտնում եմ խորին և սրտազին ցավակցություն, աղոթելով, որ Աստված տա Ձեզ արիություն՝ տանելու Ձեզ՝ միմյանց ետևից հասած դժբախտությունը Ձեր եղբայրների վաղաժամ մահվամբ:

Ողջույնս սիրո և վշտակցության աղոթաբար՝

Հուսիկ Արքեպիսկոպոս»:

ԳԱԹ ԹՖ, 1548 (502 լր.):

Հունվար 23 - Արտավազդ Թումանյանի բացիկը Թիֆլիս՝ հորը՝ Ջուլֆայից.

«Հայրիկ ջան,

Ուղարկում եմ իմ առաջին աշխատանքս: Քեֆ արեք, եթե կարող եք, իմացած ըլեք, որ շատ չեմ աշխատում և որ ավել չեմ կարող ուղարկել... (տես հունվարի 18):

ԹԶ ԱՐՏ, 155:

Հունվարի 23 - Արխավերի (Բաթումի մոտ) ճակատամարտում թուրքերի դեմ կռվելիս զոհվում է Թումանյանի եղբայրը՝ Արտաշեսը:

«Հորիզոն», 1916, թիվ 19, 29:

Հունվարի 24 - Թիֆլիսից Մոսկվա է մեկնում Վ. Բրյուսովը:

«Հորիզոն», 1916, թիվ 18:

Հունվարի 24 - Արփենիկ Թումանյանի նամակը Ջուլֆա՝ Արտավազդ Թումանյանին:

Գրում է Բրյուսովի դասախոսությունների մասին. «Մենք այս քանի օրը զբաղված էինք Վ. Բրյուսովին ճանապարհի դնելով կամ դիմավորելով. երևի առաջին դասախոսության մասին մերոնք գրած կլինեն (տես հունվարի 11, 16, 18), իսկ երկրորդի մասին ես կգրեմ: Խոսեց Հայոց պատմության մասին: Համեմատած I-ի հետ ավելի ձանձրալի էր, տոմսակներ բոլորովին չկար. 2 օր առաջ սպառել էր: Դասախոսությունից հետո մի քանի հոգի մնացին ընթրիքի: Մյուս օրն էլ հրավիրված էին Լիսիցյանների մոտ և շատ լավ ժամանակ եմ

անցկացրել: 3-4 անգամ էլ մեզ մոտ եկան, իսկ այսօր գնացինք ճանապարհ դնելու. էլ ինչ ուռնաներով, դալմադալով»:

ԹՁ ԱՐՏ, 155:

Հունվարի 24 - Սկսում է տպագրվել ընդարձակ հոդված՝ «Հանդես հայոց բանաստեղծության. Բրյուսովի դասախոսությունը» վերնագրով, Սկայ ստորագրությամբ*:

Ամբողջությամբ բերվում է նաև Թումանյանի ողջույնի խոսքը (տե՛ս հունվարի 13):

*) Շարունակությունը՝ թիվ 7:

«Համբավաբեր», 1916, թիվ 5, էջ 140-142:

Հունվարի 24 - Տպագրվում է գրախոսություն Թումանյանի կազմած խաղերի մասին՝ Խաչենց ստորագրությամբ:

Հոդվածի սկզբում գրախոսը նկատում է. ««Մանուկ» ընկերության ձեռնարկած ու հրապարակ համած խաղերի այս շարքը, որ շարունակելի է, իր մեջ գեղեցիկ կերպով համախմբել է մանկավարժական մի շարք առողջ տարրեր, որոնցից զատ ունի և դաստիարակչական, կրթական, գրական, բարոյական ու հայրենագիտական նշանակություն»:

Գրախոսության մնացած մասն ամբողջապես նվիրված է մանուկների կրթության ու դաստիարակության, այդ գործընթացում խաղի նշանակության մասին հեղինակի մանկավարժական հայացքների շարադրանքին:

Վերջում տեղեկացվում է, որ բուն «խաղերի» մասին խոսք կլինի հոդվածի շարունակության մեջ:

«Հորիզոն», 1916, թիվ 17:

Հունվարի 26 - Հաղորդագրություն Բրյուսովի՝ Երևանում կարդացած դասախոսության մասին՝ Ա-Դօ ստորագրությամբ:

Մտահոգություն է հայտնում, որ Բրյուսովի դասախոսություններին վրացիներ, թուրքեր և ռուսներ չեն հաճախում: Վրացիների և թուրքերի պասիվության պատճառը, ըստ հաղորդագրության հեղինակի, Կովկասում ազգամիջյան հարաբերություններում առկա չլուծված խնդիրներն են: Ինչ վերաբերում է ռուսներին, այստեղ անելիքներ ունեն առաջին հերթին հայ նախաձեռնողները. այդպիսի դասախոսություններ անհրաժեշտ է կազմակերպել նաև Մոսկվայում և Պետերբուրգում. «Մեզնով հետաքրքրություն առաջ բերելու հա-

մար մեր բոլոր աշխատանքը պիտի կատարվի Ռուսաստանի երկու մայրաքաղաքներում. այդ երկու կենտրոնների մամուլին և հասարակությանը պիտի բացենք մեր գանձերը. երբ այդ կենտրոնները հետաքրքրվեն մեզով, կհետաքրքրվի և ամբողջ Ռուսաստանը: <....> Արդյոք նպատակահարմար չէ՞ր, որ հայ շրջանները իրենց աշխատանքը գործ դնեին մայրաքաղաքներում. և Բրյուսովի պես տաղանդների բերանով նախ և առաջ դուրս գային մայրաքաղաքների ռուս հասարակության առաջ»:

«Յորիզոն», 1916, թիվ 18:

Հունվարի 27 - Մարիամ Թումանյանի գրությունը Յովի. Թումանյանին՝ Թիֆլիսից.

««Համբավաբեր» շաբաթաթերթի խմբագրությունը խնդրում է Ձեզ շնորհի բերել խմբագրությանս գրասենյակը շաբաթ ամսույս 30-ին ցերեկվա ժամը 12-3-ը ստանալու համար (հոնարար):

Իշխ. Մ. Թումանյան»:

ԳԱԹ ԹՖ, 1214 (678):

Հունվարի 27 - Ստեփան Մամիկոնյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին Մոսկվայից:

Գրում է. «Կոմիտեիս* նախաձեռնությամբ հրատարակվելիք հայ բանաստեղծության թարգմանական ժողովածուն ունի մի թերություն,- նորա մեջ չեն ներկայացված բավարար չափով՝ Պատկանյանը, Շահագիզը, Ալիշանը և նրանց շրջանի բանաստեղծները, նմանապես և տաճկահայ բանաստեղծությունը:

Դիմելով Ձեզ, իբրև ձեռնհաս անձնավորության, խոնարհաբար խնդրում եմ նշանակել հիշած բանաստեղծներից ինչ կտոր հարմար կհամարեք թարգմանելու:

Որովհետև մյուս թարգմանությունները մեծ մասամբ արդեն պատրաստ են, ուստի բարեհաճեք շուտով պատասխանելու, որով մեծապես կպարտավորեք»:

*) Նամակը գրված է Մոսկվայի Հայոց հանձնաժողովի ձևաթղթի վրա:

ԳԱԹ ԹՖ, 1777 (384 լր.):

Հունվարի 27 - Մամուլը տեղեկացնում է.

«Թիֆլիսում հեռագիր է ստացվել (տե՛ս հունվարի 23), որ բանաստեղծ Յովի. Թումանյանի եղբայրը՝ պոդպորուչիկ Ա. Թուման-

յանը, հունվարի 23-ին, ճորոխի շրջանում թուրքերի դեմ կռվելիս ընկել է հերոսաբար»:

«Հորիզոն», 1916, թիվ 19:

Հունվարի 31 - Մամուլը հաղորդում է, որ հունվարի 8-ին Վ. Բրյուսովը Բաքվում դասախոսություն է կարդացել հայ պոեզիայի մասին: Ապա հրավիրվել է Թիֆլիս՝ կրկնելու նույն դասախոսությունը, որից հետո նրա պատվին տրվել է ճաշկերույթ:

Մասնավորապես տեղեկացվում է. «Накануне В. Брюсов посетил поэта Ованеса Туманяна, у которого кроме армянских общественных деятелей и литераторов, собрались и грузины, журналисты. Поэт прочел отрывки из поэмы Туманяна «Ануш» в музыкальном переводе Вячеслава Иванова».

Վերջում տեղեկացվում է, որ Բրյուսովը այնուհետև մեկնում է Երևան, իսկ հունվարի 22-ին դարձյալ Թիֆլիսում հանդես է գալիս դասախոսությամբ,* որ ունենում է նույն հաջողությունը:

*) Խոսքը «Հասպատանի պատմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» դասախոսության մասին է:

«Армянский вестник», Москва, 1916, No 1:

Հունվարի 31 - Տպագրվում է Արշակ Զոպանյանի «Պակաս մը» հոդվածը.

Բարձր է գնահատում Մոսկվայի Հայկական կոմիտեի նախաձեռնությամբ իրականացվելիք «Поэзия Арменуса» և «Сборник армянской литературы» ժողովածուների մշակութային, բարոյական և քաղաքական նշանակությունը հայ ժողովրդի կյանքում՝ նրա համար ծանրագույն փորձությունների պահին. «Ասիկա մեծ ու լուսավոր դեպք մըն է՝ մեր ներկա մռայլ ճգնաժամային օրերուն մեջ, և այդ գեղեցիկ հաջողության համար մենք ամենքս երախտապարտ ենք Մոսկվայի հայկական կոմիտեին»:

Ասկայն հոդվածի հիմնական նպատակն է հիշեցնել ժողովածուների ծրագրում տեղ գտած բացթողումների մասին. «Բայց կոմիտեին գծած ծրագրին մեջ կա պակաս մը, զոր անհրաժեշտ է լրացնել: Արձակ և ոտանավոր հատընտիր գործերու այդ երկու հավաքածուները չեն ներկայանար անշուշտ իբր ամբողջական պատկեր մը հայ հին ու նոր գրականության, և ընտրված գրագետներուն ու բանաստեղծներուն մեջ այս կամ այն նշանավոր դեմքին չգտնվիլը ոչ մեկ կարևորություն ունի: Ծրագիրը կազմողները ընտրած են շարք

մի կարևոր դեմքեր, և ընտրությունը լավ է՝ լրագրաց տված տեղեկություններեն դատելով: Ապագային, ուրիշ հատորներով կարող են տալ թարգմանություններ ուրիշ գրողներու: Սակայն, նկատելով, որ այդ առաջին երկու հատորները լույս պիտի տեսնեն հայկական ողբերգության ամենեն մռայլ շրջանին, թուրքահայ մարտիրոսագրության ամենեն քստմնելի օրերուն, ավելի նպատակահարմար ու վայելուչ պիտի չըլլա՞ր միթե, թրքահայ գրողներու և բանաստեղծներու ավելի լայն տեղ մը տալ հոն, քան ինչ որ տրված է, մանավանդ թրքահայ այն գրողներուն, որ հայկական դռամը արտահայտած կամ երգած են. լրագրաց հրատարակած ցուցակին մեջ ես տեսա միմիայն Պեշկեպաշյանի և Դուրյանի անունը. ինչպե՞ս կըլլա, որ Ալիշան, Խրիմյան, Սրվանձտյանց, Ամիրջանյան հոն չեն երևար, ինչպես մանավանդ հոն չեն երևար, և է՛ն առաջ, հայկական դռամին թրքահայ երկու մեծ դյուցազներգակները՝ Ատոմ Յարճանյան և Դանիել Վարուժան, երկուքն ալ մեծագույն դեմքերեն հայ հին ու նոր քնարերգության, ու երկուքն ալ, ըստ մեզի հասած տեղեկությանց (որ երանի թե սխալ ըլլային), Հայոց դատի իբր նահատակ թուրքին ձեռքով խողխողված... Ըստ իս՝ այն բոլոր երևելի գրողները, որ նահատակվեցան այս վերջին հսկա եղեռնի օրերուն, պետք էր որ իրենց գեթ մեկ էջն ունենային այդ ի մոտո լույս տեսնելիք երկու հատորներուն մեջ, մասնավորապես Գրիգոր Ջոհրապը, թրքահայ ամենեն հզոր ուղեղը, հայության ամենեն ջղուտ ու ինքնատիպ արձակագիրներեն մին և Թլկատինցին, Քուչակին, Աբովյանին ու Հովհ. Թումանյանին հետ՝ մին ամենեն «հայ» գրողներեն որ ունեցած ենք, և Ռուբեն Ջարդարյանը, որ իր զմայլելի արձակին մեջ այնքան մաքուր ու հարուստ բանաստեղծություն շողացուց, և հ. Կարապետ Տեր-Սահակյան, տաղանդավոր Մխիթարյանը, Տրապիզոնի մեջ դյուցազնի պես ինկած, և որուն քերթվածներեն ոմանց մեջ վսեմ շունչ մը կանցնի:

Անհրաժեշտ է լրացնել այս պակասը, զոր ես նույնիսկ ծանր թերացում մը կնկատեմ այն նվիրական պարտականության, զոր մենք ազգովին ունինք այդ կրկնագին սիրելի անուններուն մեր բոլորանվեր հարգանքը մատուցանելու»:^{*}

^{*}) Զոպանյանի այս դիտողությունները խմբագրությունը մասամբ հաշվի է առել: «Հորիզոն», 1916, թիվ 23:

Հունվարի 31 - Տպագրվում է «Ցինիզմ» խորագրով հոդված՝ Վ.* ստորագրությամբ:

Առիթը վրացական ազնվականության թերթում է. Սուլթանով ստորագրությամբ մի հոդված է, որտեղ թուրք մտավորականության զայրույթն է արտահայտվում, թե ինչու Բրյուսովն իր դասախոսության մեջ փառաբանում է հայոց բանաստեղծությունը, իսկ թուրքական գրականության մեջ ուշադրության արժանի ոչինչ չի տեսնում. թուրք հոդվածագրի հետ համամիտ է մաս վրացական թերթը, որ մինչ այդ ինքն էլ էր այդ առթիվ բողոք հայտնել:

Վ.-ի հոդվածում երկու քաղվածք է արվում է. Սուլթանովի հոդվածից, որ բավարար պատկերացում է տալիս թուրք մտավորականի իրոք որ ցինիկական պահվածքի մասին. «Մինչև օրս մենք ոչ մի արտակարգ բան չգիտեինք այդ փոքրիկ ժողովրդի մասին, բացի նրա ապրած հարատև ողբերգություններից... Բայց տեսեք, թե որպիսի փաստաբան են գտել հայերը ռուս հռչակավոր բանաստեղծի մեջ», և հետո. «Մեզ պետք չեն ներբողներ մեր ազգային սխրագործությունների և մեր բարձր իմացական կուլտուրականության մասին: Մենք երբեք չեկանք արել մեզ համար և չենք էլ անելու...»:

«Որքա՞ն համեստություն ու անմեղություն...,- դառն հեզմանքով գրում է հայ հոդվածագիրը:- Թուրք ինտելիգենտը չի հասկանում, սակայն, որ հենց այդ հոդվածի մեջ անում է մի մեծ, աղադակող ռեկլամ: Նա հեզմանքով ու արգահատանքով է խոսում հայ կոտորվող «հարատև ողբերգության» առթիվ և պարծանքով ռեկլամ է անում այն ուժի համար, որը դարերով հոշոտել է հայ ժողովուրդը: Թուրք ինտելիգենտը դեռ չի եկել այն հասկացողության, որ այդպիսի ուժով չեն պարծենում, որովհետև դա ուժն է *վայրենության...*»:

Եվ վերջում. «Այսքան կիրք ու ցինիզմ մի անմեղ, գիտական դասախոսության առթիվ: Եվ հայ «դասիստները» զայրանում ու ռմբակոծում են մեզ, երբ հայտարարում ենք մի հանրաժանոթ ճշմարտություն, այն՝ որ օսմանցիք չեն հանդիսանում կուլտուրական ցեղ: Հայ դասիստները դեռ շարունակում են հին ֆոռմուլաները, հին նեյնիմները: Հավիտենական մանկություն...»:

*) Հավանաբար թերթի խմբագիր Միքայել Վարանդյանն է:

«Հորիզոն», 1916, թիվ 23:

Հունվարի 31 - Տպագրվում է «Վ. Բրյուսովը Կովկասում. առաջին դասախոսությունը Թիֆլիսում» *Հանդիսական* ստորագրությամբ

հողվածաշարի վերջին մասը:^{*} Ներկայացվում են դասախոսի դիտարկումները առավելապես նոր շրջանի հայոց բանաստեղծության վերաբերյալ:

Մասնավորապես թումանյանի մասին դասախոսի կարծիքը ներկայացվում է այսպես. «Հովհաննես թումանյանը այն կախարդն է, այն Այվազովսկին, որ վրձինը ձեռքին գոչում է տարերքին և հնազանդեցնում իրեն («Այվազովսկու նկարի առջև» Հ. Թումանյանի): Ժողովրդի ձայնը կրկին լսվում և երևում է նրա ստեղծության մեջ: Նրա փայլուն բանաստեղծության մեջ հանդես է գալիս ինքը՝ հայ ժողովուրդը՝ իր հույզերով ու իմաստությամբ: Թումանյանը մի վեպ է, ազգային էպոպե»:

Եվ վերջում. «Դասախոսությունը տևեց ավելի քան երեք ժամ, և թեև ունկնդիրները լսում էին հետաքրքրությամբ, բայց դասախոսը արդեն շտապում էր:

<....> Դասախոսությունը, ընթերցումները առարկա դարձան խանդավառ ծափահարության: Մեծանուն դասախոսի և թումանյանի ողջագուրումները ցնծությամբ ընդունվեց դահլիճում, որով դասախոսությունը տոնական կերպարանք էր առնում:

Այնուհետև տեղի ունեցավ բանկետ՝ ի պատիվ Բրյուսովի, որին մասնակցեց մոտ 200 հոգի: Շատ հաջող էր բանկետը նախ կարգի և ապա բովանդակության և ոգևորության կողմից:

Թամադան էր քաղաքագլուխը՝ պ. Ա. Խատիսյան, որ կառավարեց առանձին շնորհքով և հումորով:

Մի շարք ճառեր արտասանեցին Հովհ. Թումանյան, Ալ. Խատիսյան, Մինաս Բերբերյան, Մ. Մատենճյան, Իշխան Գր. Դիասամիձե, Գր. Ռոբակիձե, դերասան Աբելյան, Ի. Նակաչիձե, Մակինցյան և ուրիշները: Պ. Բրյուսովը պատասխանեց մի քանի ճառով... »:

^{*}) Նախորդ մասերը տպագրվել են «Հորիզոնի» թիվ 15, 18, 20 համարներում:

«Հորիզոն», 1916, թիվ 23:

Հունվարի 31 - Տպագրվում է Թումանյանի կազմած խաղերի մասին *խաչենց* ստորագրությամբ գրախոսության շարունակությունը:^{*}

Սկզբում գրախոսը շարունակում է տեսական դատողությունները մանկական մանկավարժության վերաբերյալ և այդ գործընթացում խաղի գործնական կիրառման ձևերի ու եղանակների մասին:

Անցնելով իր գրախոսության բուն առարկային՝ հանգամանորեն բացատրում է, թե հրատարակված խաղերը որքանով են բավարարում առաջադրված պահանջները. ««Մանուկ» ընկերությունը, ինչպես տեսանք նախորդ անգամ, անտես չէ արել այդ հիմունքները: Նա իր այդ խաղերով նպատակ է դրել հեշտացնել հայ մանուկի համար տանն ու դպրոցում հայ կյանքից նրան անհրաժեշտ մի քանի շրջաններ, որոնք դժբախտաբար այն ուշադրությամբ չեն արժանացած, ինչպես պետք է: Առողջ, գիտակից ու ազնիվ հայրենասեր լինելը պատիվ է ամեն մի անհատի. սրա համար անհրաժեշտ է ծանոթ լինել իր հայրենիքին ու հայրերին, նրանց գանձերին ու թողած ավանդին: Այս նպատակն ունի և ամեն մի ազգի պատմություն. ով ազգասեր է առանց այդ ազգի արժեքներին ծանոթ լինելու, նա կեղծ է ու սուտ նրա սերը:

Մինչև այժմ հրատարակված խաղերի նպատակն է սովորեցնել Հայաստանի գետերը (ինչպես խոստանում է «Մանուկ»-ը, նույն ձևով պետք է լինեն քաղաքների, լեռների, բույսերի և այլ անունները), թանկագին քարերի անունները, գույները, հայկական առածները և տառերը: Խաղերի սկզբունքը մի նորություն չէ ու ինքնուրույն, բայց գովելի է ու սրամիտ այդ սկզբունքը ծառայեցնել հայրենագիտական նպատակներին: Ես կանգ չեմ առնիլ մանր ու մունր պակասությունների վրա, որոնք ուղղելի են հետևյալ տպագրությունների ժամանակ: Բայց չեմ կարող չհիշել խաղերի այն առավելությունը, որ ունին մեր մանուկների համար: Մանուկներից դուրս այդ խաղերից մեծ մասը հանձնարարելի է և շատ հասակավորների, որոնք իրենց մանուկ ժամանակը սովորած չլինելով օրինակ հայոց գետերի անունները, հիմա հաճույքով կյուրացնեն պարապ ընկերներին իրենց մանուկների հետ:

Խաղի հետ արված է իբրև հավելված և մի գրքույկ «Հայոց գետերը»: Այս գրքույկը, առաջինը լինելով մեր մեջ, իր սխտեմով արժե առանձին ուշադրության: Նյութի շրջանակը, եթե թույլ տար, ես կանգ կառնեի այս ձևի դասագրքեր կազմելու կողմնակիցների մանկավարժական հիմնավորումների վրա: Նրանք արդարացվում են մանկավարժական և հոգեբանության օրենքներով: Այս գրքույկի մեջ խոսում են ու պատմում հայ մանուկին հայոց գետերի մասին հայ վիպագիրը, պատմագիրը, ազգագրագետը, ճանապարհորդն ու բանաստեղծը: Այս բազմաթիվ անձանց բազմաձև պատմածները միատեսակ գետերի մասին մտապատկերների մի ամուր ու երկար

շղթա են ստեղծում մանուկի համար, մտապատկերներ, որոնք եթե ոչ ընդմիջտ, գոնե երկար ժամանակ չեն ջնջվի նրա մտքից:

Մյուս կողմից այս գրքույկը, ծառայելով աշխարհագրություն սովորեցնելու նպատակին, հասնում է և մի քանի այլ նպատակների. նախ մանուկը, փոխանակ հաճախ մի անշնորհք և չոր ու ցամաք դասագիրք կազմողի լեզուն կարդալու, կարդում է մեր շնորհալի գրողների լեզվի նմուշները. ծանոթանում է նրանց գեղեցիկ ոճաբանությանը և բանաստեղծական նկարագրությունները ավելի պատկերավոր են դարձնում նրա համար նյութը: Աշխարհագրության հետ նա սովորում է մասամբ լեզու, մասամբ գրականություն, մասամբ պատմություն և այլն:

Հայաստանի աշխարհագրության ուսուցիչներին մասնավորապես, և հայ մանուկներին ընդհանրապես մեծ ծառայություն կարող է անել այս գրքույկով «Մանուկ» ընկերությունը:

«Դիում» խաղը ծանոթացնում է մանկանց 12 գույնի. և այն գույներին, որոնք հաճախ մեծերն են խառնում. մի քանի ժամ խաղալուց հետո այնպես են վարժվում մանուկները, որ տեսնելուն պես ճանաչում են: Գույների վերևը դրված է թվանշան, ներքևը գույնի անունը: Որովհետև սրանք ժամանակավոր արժեք ունին, մինչև նրանց լավ ճանաչելն ու չփոթելը, սրա համար էլ, կարծում ենք, ավելի շուտ պետք է մանր տառերով ու թվանշաններով տպված լինին այդ օժանդակող մասերը. լավ կլիներ՝ գույները տպված լինեին և ոչ թե կպցրած, որ չպոկոտվեին: Սովորաբար դրանք ավելի հաստ ու անհարմար է մյուս խաղերի թղթերից:

«Սրամիտ հովիվը» մի գեղեցիկ ու զբաղեցնող խաղ է: Նա կգարգացնե մանկանը զանազան կոմբինացիաներ սարքելու ընդունակությունը և կվարժեցնե հիշողությունը: Թե մեկը և թե մյուսը նրա ապագա ստեղծագործական ընդունակության և մտքի շարժունության գլխավոր պայմաններն են: Խաղի տախտակը այդ ձևով ծավալած անհարմար է և շուտով կարող է կոտրվել: Լավ կլիներ երկու ջուկ-ջուկ կտոր սովորաբար իրար կպցրած կերպով:

«Թանկագին քարեր»-ը նպատակ ունին սովորեցնել քարերի անուններն ու նրանց խմբերի տեսակները: Լոկ անունները, որոնք մեր մեջ ասոցիացեաներ չեն առաջացնում, շուտ անհետանում են, որովհետև մեզ համար անբովանդակ խոսքերը կորչում են, ինչպես անսնունդ սերմերը: Պ. Հ. Թ.-ի հավելված գրքույկը գալիս է այդ բառերը (քարերի անունները) բովանդակելի դարձնելու: Գրքույկը

հետաքրքրությամբ կարդացվում է և ճիշտ էլ պարզաբանում դրված հարցերը, բայց մեզ թվում է, թե դարձյալ շատերի համար խառն ու անորոշ բովանդակություն կմնան այն քարերը, որոնք նկարագրությամբ նման են, անունով՝ նույնպես: Մենք զգում ենք, որ հեշտ չէ այդ դժվար պահանջին բավարարել, երբ մանավանդ հարցը վերաբերում է թանկագին քարերին, որոնցից շատերը ոչ թե միայն մենք չենք տեսել, այլև չենք էլ կարող տեսնել: Մեր միակ խորհուրդը, որ կուզենայինք տալ, այդ այն է, որ այս խաղերին կցված լինել մի տախտակ՝ բնորոշ քարերի գունավոր պատկերներով: Սա որքան և թերություններ ունենար, մեծ առավելություն կունենար մանուկների համար նրանց ըմբռնման և յուրացման գործում: Լավ կլիներ, որ սույն նկատառումով նույնը արվեր ապագա խաղերի համար, օրինակ՝ ծաղիկների և այլ բույսերի:

Գները մատչելի են: Մնում է սպասել, թե հայ ծնողները, դաստիարակներն ու ուսուցիչները որքան են սիրում իրենց մանուկներին ու սաներին, որքան հետաքրքրվում նրանց ուժերի հեշտ զարգացման միջոցներով ու ինչպես խրախուսում իրենց մանուկների բարեկամ «Մանուկ»-ին:

*) Սկիզբը տես հունվարի 24:

«Հորիզոն», 1916, թիվ 23:

Հունվար - Տպագրվում է խմբային լուսանկար՝ Թումանյանը էջմիածնի որբերի հետ:

Լուսանկարի տակ մակագրություն՝ «Ս. էջմիածնա ճեմարանում որբանոց: Մեջտեղը հ. Բաբգեն վարդապետը և բանաստեղծ Թումանյանը»:

«Տարազ», 1916, թիվ 1, էջ 16:

Հունվար - «Նոր հրատարակություններ» բաժնում մամուլը տեղեկացնում է.*

«*Հայոց գետերը*. - Հայոց 69 գետերը խաղաթղթերով, բացատրական գրքույկով, հրատ. *Մանուկ* ընկ. No 1, խաղի հավելված առանց գրքույկ, 71 երես, գինը 1 ռ. 50 կ. Ընտիր ընծա հայ երեխաների համար, որ կազմել են բանաստեղծ Հովհ. Թումանյանի գավակները:

Թանկագին Քարեր, քարերի խաղ, բացատր. գրքույկով, հրատ. *Մանուկ* ընկ. No 2

Սրամիտ Նախրապանը, տառերի խաղ, բացատր. գրքույկով, հրատ. *Մանուկ* ընկ. No 3

Դդում, գույների խաղ, հրատ. *Մանուկ* ընկ. No 4;

Բոլոր այս հրատարակություններն էլ արժանի են գովեստի և հայ մանուկների արժանի ձեռնարկներ են»:**

*) Այս հրատարակությունների մասին հայտարարություն տե՛ս նաև հունվարի 1:

**) Այս խաղերի մասին ընդարձակ գրախոսություն տե՛ս հունվարի 24 և 31:

«Տարազ», 1916, թիվ 1 (շապիկի հակառակ երեսին):

<Հունվար> - Գրում է «Մեզ մոտ եք եկել ձյունի աշխարհից...» սկսվածքով բանաստեղծությունը՝ նվիրված Վալերի Բրյուսովին:
ԵԼԺ 1, 283:

<Փետրվարի սկիզբ> - «Армянский вестник» շաբաթաթերթի խմբագրության նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից:

Խնդրում են բանաստեղծի մասնակցությունը նորաստեղծ հանդեսին՝ իբրև «ամենամոտիկ աշխատակից»: Տեղեկացնում են, որ հանդեսին աշխատակցելու համաձայնություն արդեն տվել են Վ. Բրյուսովը, Յու. Վեսելովսկին, Ս. Գ. Կարա-Մուրզան և ուրիշներ:

ԳԱԹ ԹՖ, 994 (315):

Փետրվարի 2 - Կարապետ Քեոսեյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է. «Հարգելի գրագետ և պատվական ցեղակից պարոն Հովհաննես Թումանյան, Թիֆլիս,

Ձեր երկու եղբայրներու մահվան և Ձեր սուգին առթիվ խնդրեմ ընդունեք խորին ցավակցությունս...

Կը զարմանամ, որ Ձեր ճնշված դրության մեջ դարձյալ եռանդ և ժամանակ կգտնեք ցեղին օգտակար դառնալու և ժողովրդին ծառայելու: Ցեղին ֆիզիկականին հետ չեք մոռնար նաև անոր հոգեկան – ոգին և պատիվը բարձրացնել:

Մեծ հիացմունքով լսեցի և կարդացի Ձեր ըրած գործերը 1915 տարվան մեջ. մանավանդ Էջմիածինի մեջ Ձեր ցույց տված մեծ-եղբայրությունը թշվառ հայրենակիցներուն...

Bravo! Ձեզի»:

«Հորիզոնում» «մեծ հաճույքով» կարդացել է բանաստեղծի և նրա մասին գրածները:

Եվ վերջում. «Հոգիիս ամբողջ թափովը Ձեզի ֆիզիկական և մտավորական ավելի ուժ և ավելի եռանդ կմաղթեմ: Այս խոսքերը բերանացի հայտնել քիչ մը դժվար է և լավ սեպեցի նամակով Ձեզ հայտնել:

Հարգանքներով՝ Կարապետ Քեոսեյան»:
ԳԱԹ ԹՖ, 2342 (483):

Փետրվարի 3 - Մամուլը տեղեկացնում է.

«Վալերի Բոյունովը Թիֆլիսից մեկնելիս հրաժեշտի ժամանակ Հովհաննես Թումանյանին հանձնել է հետևյալ բանաստեղծությունը.

К армянам

Да! Вы поставлены на грани
Двух разных, спорящих миров.
И в глубин родных преданий
Вам слышны отзвуки веков.

Все бури, все волнения мира,
Летя, касались вас крылом,-
И гром глухой походов Кира
И Александра бранный гром.

Вы низили, в смятеньи стана,
При Каррах, римские значки;
Вы за мечом Юстиниана
Вели на бой свои полки.

Нередко вас клонили бури,
Как вихри – нежный цвет весны,-
При Чингиз-Хан, Ленгтимур,
При мрачном торжестве Луны.

Но,- воин стойкий,- под ударом
Ваш дух не уступал Судьбе,-
Два мира вокруг него не даром
Кипели, сметаны в борьбе.

Гранился он, как твердь алмаза,
В себе все отсветы шраня:
И краски нежных роз хираза,
И блеск Гомерого огня.

И уцелел ваш край Наирский
В крушеньях царств, меж мук земли;
Вы за оградой монастырской
Свои святыни берегли.

Там, откровенья скрыв глубоко,
Таила скорбная мечта
Мысль Запада и мысль Востока,
Агурамазды и Христа.

И,- ключ божественной улады,
Нетленный в переменах лет,-
На светлом пламени Эллады
Зажженный – ваших песнь свет.

И ныне, в этом мире новом,
В толпе мятущихся племен,
Вы встали обликом суровым
Для нас таинственных времен.

Но то, что было вечно живо
В былом – награда и урок,
Носить вы вправе горделиво
Свой многовековый венок.

А мы, великому наследью
Дивясь, обеты слышим в мен...
Так! Прошлого тяжелой медью
Гудит над каждым новым днем:

И верится, народ Тиграна!
Бурю вновь преодолев,

Звездоу ты выйдешь из тумана,
Для новых подвигов созрев,

Что вновь твоя живая лира,
Над камнями устлевших плит,
Два чуждых, два враждебных мира
В напев высшем соединит.
Валерий Брюсов

23 янв. 1916, Կոփլուս

«Հորիզոն», 1916, թիվ 25:

Փետրվարի 3 - Տպագրվում է Մարտ. Հարությունյանի հաղորդագրությունը Բրյուսովի՝ Երևանում կարդացած դասախոսության և դրա հետ կապված մանրամասների վերաբերյալ:

Մասնավորապես գրում է. «Երկու օր շարունակ բոլոր Երևանցիք բանաստեղծ էին դարձել. սքանչելի թարգմանությունները շատերին սիրել տվին մայրենի գրականությունը, շատերի կորացած գլուխը բարձրացավ, շատերը մի հպարտությամբ լցվեցին: Հնարավոր չեղավ բանաստեղծին երկրորդ դասախոսության համաձայնեցնել. նա շտապում էր Մոսկվա, ուր սկսվում է ժողովածուի տպագրությունը: Կարծես Բրյուսովին վիճակված է յուրաքանչյուր քաղաքում մեր մի բանաստեղծի հետ ողջագուրվել. բաքվում նա իր եղբայրությունը հավաստեց Հովհաննիսյանին, Թիֆլիսում Թումանյանին, այստեղ Վահան Տերյանին էր վիճակված այդ դերը: Դասախոսը կարդաց նրա մի կտորի թարգմանությունը, խոնարհվելով ողջունեց բեմի վրա նստած հայ բանաստեղծին և համբուրվեց նրա հետ, իսկ դահլիճի հասարակությունը վավերացրեց այդ եղբայրությունը իր բոլոր ծափահարությունների տարափով»:

«Հորիզոն», 1916, թիվ 25:

Փետրվարի 6 - Վ. Բրյուսովի հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից.

«Присоединяемся общему радости.* Приветствуем наших друзей. Брюсов».

*) Խոսքը հավանաբար Հայկական համալսարան և ակադեմիա հիմնելու մտադրության մասին է, որ Թումանյանը կարող էր հայտնած լինել Բրյուսովին նրա՝ Թիֆլիսում եղած ժամանակ կամ նամակով:

ԳԱԹ ԹՖ, 1058 (582ա):

Փետրվարի 6 - Մամուլում հաղորդագրություն, որ Գորու «Հայ գրասերների խմբակը» իր հերթական երեկույթը նվիրել է Զովհ. Թումանյանին:

Ըստ հաղորդագրության՝ երեկույթի սկզբում խոսվեց «Ձիթենու»,* Բյուլետփի դասախոսությունների և դրանց հասարակական արժեքի, «Հասկերի» տասնամյակի՝ «իբրև մեր մեջ մի խրախուսելի երևույթի» մասին: Դրվատվեց հատկապես «Հասկերի» կատարած դերը, հիշվեցին նրա աչքի ընկնող աշխատակիցների անունները: Որոշվեց շնորհավորական հեռագիր ուղարկել խմբագրությանը:

Կարճ նվագածությունից հետո տեղի ունեցավ դասախոսություն Զովհ. Թումանյանի մասին, որ տևեց երկու ժամ: Մեջընդմեջ արտասանվեցին սիրելի բանաստեղծի քնարական և ժողովրդական երգերը՝ «Հին օրհնություն», «Գութանի երգը», հատվածներ «Փարվանայից», «Պոետն ու Մուսայից», «Դեպի Անհունից» և այլն:

Դասախոսությունից հետո բեմ հանվեց «Անուշ» օպերայից վիճակահանության տեսարանը՝ համապատասխան դեկորացիայով, որն անցավ սահուն և հաճելի տպավորություն թողեց: Ապա տեղի ունեցավ վիճաբանություն և մտքերի փոխանակություն, որից հետո բոլորը ուրախ տպավորության տակ թողեցին դպրոցը:

*) Պատկերազարդ կիրակնօրյա մանկական թերթ: Լույս է տեսել Ռուշուկում, 1903-1904 թթ.:

«Յորիզոն», 1916, թիվ 28:

Փետրվարի 7 - Տպագրվում է Մ. Վարանդյանի «Բարքեր և տպավորություններ» հոդվածը:

Մասնավորապես գրում է. «...«Յորիզոնը» վրդովմունքով երես կդարձնե և այն մարդկանցից, որոնք թեթևամտորեն, առանց չափի զգացման, սոսկ նախընկալ մի գաղափարի թելադրությամբ կոչընչացնեն, խաչ կդնեն՝ այսօր մի Ալիշանի, մի Ահարոնյանի, մի Սիամանթոյի, վաղը մի Զովհաննես Թումանյանի, մի Լեոյի կամ մի Շիրվանզադեի վրա:

Մենք տակավին ըսելիք ունինք»:

«Յորիզոն», 1916, թիվ 29:

Փետրվարի 7 - Տեղի է ունենում ԶԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Վարչության անդամներից ներկա են՝ Մինաս Բերբերյան, Անուշավան Աբովյան, Դերենիկ Դեմիրճյան:

1. Նախագահողը տեղեկացնում է, որ Ազգային բյուրոն իր առաջարկությամբ համաձայնել է հրատարակել մի ժողովածու, եթե վարչությունը հանձն առնի կազմել այդ ժողովածուն և տարածել՝ հօգուտ կամավորների ընտանիքների կամ մահան մի այլ նպատակի:

Հանձնարարվում է վարչության նախագահին այդ մասին բանակցել Բյուրոյի հետ և վերջնական որոշումը հայտնել ժողովին:

2. Որովհետև հարկ կլինի մոտիկ ապագայում ընդհանուր ժողով գումարել, ուստի առաջարկել բյուրոյին նյութեր պատրաստել ժողովի համար:

3. Քննարկվում է նաև մի ընթացիկ հարց: Դավիթ Անանունը «Մշակի» մեջ հարց է բարձրացրել, թե պատճառն ի՞նչ է, որ Բյուրոյի դասախոսության մասին հայտարարությունը տպված է «Հորիզոնում», իսկ «Մշակում» ոչ: Որոշվում է հայտնել, որ վարչությունը «Հորիզոնի» այդ համարում տալիս է պատճառաբանված բացատրություն: Հրավիրում են պ. Անանունին կարդալ այդ բացատրությունը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45:

Փետրվարի 7 - Տպագրվում է Թումանյանի շնորհակալական նամակը՝ ռազմաճակատում զոհված եղբոր մարմինը Թիֆլիս տեղափոխելուն օժանդակողներին, բոլոր իրենց ցավակցողներին:

«Իմ և մեր գերդաստանի կողմից սրտագին շնորհակալություն են հայտնում հունվարի 23-ին Արխավերի հերոսական կռվում սպանված եղբորս՝ պողպորուչիկ Արտաշես Թումանյանի գնդի հրամանատարին ու իր զինակից ընկեր օֆիցերներին և Բաթումի իմ բարեկամներին ու հայ հասարակությանը՝ էն ամեն հոգածության, շուքի ու հարգանքի համար, որ ցույց են տվել վաղամեռիկ եղբորս մարմինը Թիֆլիս փոխադրելիս, ուր հասավ անակնկալ ու անժամանակ և անկարող եղանք հայտարարել ի գիտություն մեր բարեկամների: Շնորհակալություն են հայտնում և մեր բոլոր բարեկամներին ու ընկերներին, որ հեռվից ու մոտիկից ցավակից եղան մեզ:

Հովի. Թումանյան»:^{*}

^{*}) Նամակը բանաստեղծի երկերի ակադեմիական լիակատար տասնհատորյակում տեղ չի գտել:

«Հորիզոն», 1916, թիվ 29:

Փետրվարի 8 - Կարապետ Շիրինյան ստորագրությամբ գրություն թումանյանին՝ թիֆլիսից:

Հրավիրում է մարտի 11-ին կայանալիք ինչ-որ խորհրդակցության. «Հրավիրեք Ձեզ հետ ում որ հարմար գտնեք և պետք համարեք»:

ԳԱԹ ԹՖ, 1899 (946):

Փետրվարի 14 - Տպագրվում է Հայ գրողների կովկասյան ընկերության վարչության հայտարարությունը՝ ի պատասխան Դ. Անանունի հարցապնդման (տե՛ս հունվարի 17):

Մասնավորապես ասվում է. «Մեծարգո պարոն, Դուք, ինչպես Կովկասյան Հայ գրողների ընկերության անդամ, «Մշակ» թերթի մեջ Վարչության հարցապնդում եք ուղղել, թե Բոյունովի դասախոսության ժամանակ ինչու է սա միայն «Հորիզոն»-ին տվել հայտարարություն ու զանց է արել «Մշակը»: Ձեր հարցապնդումին ի պատասխան Վարչությունն հայտնում է, որ այդ մասին վարչական որոշում է եղած՝ կտրել ամեն հարաբերություն «Մշակ» թերթի հետ և այդ որոշումը իր պատճառաբանությունով տալված է «Հորիզոնի» 1914 թ. No 40-ի մեջ»:

«Հորիզոն», 1916, թիվ 35:

Փետրվարի 16 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 38) «Համաշխարհային գրական տոնը» հոդվածը:

Խոսքը վերաբերում է Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակին, որ լրանալու էր ապրիլի 23-ին. «...Երկու գրական հսկա, որ ոգեպես հարություն առնելով ու բարձրանալով համաշխարհային գրականության հորիզոնի վրա կանգնեն ու մնան ընդմիշտ, այլ մեծերի շարքում՝ երկու պայծառ արեգակ կամ բանաստեղծության ամենատես աչքերը՝ հավիտյան բացված մարդկային կյանքի ու բնության վրա»:

Դա այնպիսի տոն է, գրում է այնուհետև թումանյանը, որ, չնայած «աղետալի պատերազմին» ու դրա ողբերգական հետևանքներին, պետք է նշեն բոլոր երկրներում, բոլոր ժողովուրդները, տոն՝ «որ վրա է հասնում սգավոր մարդկությանը, որպես մի համաշխարհային միություն»:

Բնութագրում է երկու մեծերի դերը համաշխարհային մշակութային պատմության մեջ. «Նրանք էին, որ, հունական ֆատալիզմից ու միջնադարյան միստիկայից, այլև Իսրայելի Եհովայի ահավորություն-

նից, ազատագրեցին մարդկային միտքը, պալատներից ու վանքերից դուրս բերին գեղարվեստն ու գրականությունը էս լեն ու արձակ արև աշխարհքը և տիրողներին բերին, ցիփ մերկացրին ժողովուրդների առջև ու ցույց տվին մարդը՝ մինը իր բարձր հումորով, մյուսը կյանքի ամենակողմանի ու համաճարեղ վերարտադրումով, և իրական կյանքի վրա դրին համաշխարհային նոր գրականության սկիզբը: Էսպիսով՝ նոր գրականությունը դարձավ էն թարմ, առողջ օդը, որ վերածնության շրջանից սկսած շնչում է մարդկությունը, և, միշտ նոր ուժ առնելով, իրար ետևից նորանոր հորիզոններ է նվաճում՝ անդադար ընդարձակելով իր կյանքի ու աշխարհայացքի սահմանները»:

«Էդ մեծ տոնը» նաև հայ ժողովրդի տոնն է, եզրափակում է իր խոսքը բանաստեղծը:

ԵԼԺ 7, 223-224:

Փետրվարի 16 - Նամակ Մոսկվա՝ Կարեն Միքայելյանին՝ Թիֆլիսից:

Գործնական նամակ է: Տեղեկացնում է, որ հասցեատիրոջ խնդրած իր լուսանկարը՝ «Поэзия Армении» ժողովածուի համար (տե՛ս 1915, դեկտեմբերի 4), ինքը արդեն հանձնել է Բրյուսովին:

Հայտնում է փոքր եղբոր՝ ռազմաճակատում զոհվելու լուրը:

Ճշտումներ է անում Սայաթ-Նովայի երգերի՝ Բրյուսովի թարգմանությունների մասին իր նախկին դիտողություններում:

ԵԼԺ 10, 233, 607-608:

Փետրվարի 17 - Գորու «Հայ գրասերների խմբակի» ի պատիվ Վարդանանց տոնի կազմակերպած երեկույթում կարդացվում է Թումանյանի նոր տպագրված «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը:

«Սրտառուչ էր «Հորիզոնում» տպագրված Հովհ. Թումանյանի «Հոգեհանգիստը»,- ընդգծում է երեկույթի մասին հաղորդման հեղինակը:

«Հորիզոն», 1916. թիվ 42:

Փետրվարի 17 - Տպագրվում է «Ցեղին ճիգը» խորագրով հոդված՝ Հ. Բագրունի ստորագրությամբ:

Հոդվածն սկսվում է յուրօրինակ բնաբան-խոսքով. «-Հե՛յ ջան, տղեք, ուս տվեք, ո՛ւս, Միահամուռ, միաբան, Հե՛յ ջան, տղեք, ուժ տվեք, ուժ, Քարը մոտ է գլորման... * Աշխատանքի ու Ռազմի երգը

տենչավաճ՝ զորս հնչեց հերոսական Վանի ու պանծալի Այգեստանի հովասուն ծառերուն ներքև եղբայրական հավաքույթի մը պահուն՝ Մայիսյան հաղթանակի օրերուն մեջ՝ տակավին չէ մարած մեր շուրթերուն վրա: Հայ բանաստեղծը մեզ հետ էր ու մեզ մոտ այդ իրիկուն»:

Այնուհետև գրում է այդ օրերին հաջորդած տեղահանության ու կոտորածի մասին: Ցավով արձանագրում է, թե ինչպես պանդուխտ դարձած վանեցիներին հյուրընկալած հայերը անվանում են ծույլ հացկատակներ, թեև տունը կորցրած վանեցիները այստեղ էլ դժվարին պայմաններում իրենց մի կտոր հացը շտապում են վաստակել տքնաջան աշխատանքով. «Ու վերջապես տեսեք, ամեն կեսօրին դեպի նորաբաց թուրքահայ դպրոցները շտապող հայ մանկիկը ցնցոտիապատ, զորս ոտաբոբիկ ու գլուխ բաց, ապագա օրերու Արշալույսին կ'պատրաստվի...

Եվ ուրեմն, մոռցե՛ք այդ կանչերը խորթ ու այդ ամբաստանությունները ձրի, քանի որ պիտի ապրի բնաշխարհի հայ ցեղը բարձրագլուխ, քանի որ հաստատուն է իր մեջ սրբազան Աշխատանքի և կենդանի ոգևորության կայծը անշիջանելի»:

*) Թումանյանի «Շուռ է գալիս ծանր քարը...» բանաստեղծության երկրորդ քառատողն է:

«Հորիզոն», 1916, թիվ 37:

Փետրվարի 19 - Հեղինե Մելիք-Հայկազյանի (Բեգզադյան) նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է երկար ընդհատված մամակագրությունից հետո: Շանթից իմացել է բանաստեղծի եղբայրների մահվան մասին. «Շատ ինձ վրա ազդեց, մանավանդ, երբ ինձ պատկերացրի քո մորդ վիշտը: Գիտես, միայն մի անգամ եմ տեսել նրան: Դա շատ տխուր ժամանակ էր. դու բանտումն ես եղել. ապագան շատ մութ էր և անորոշ: Այն ժամանակ տեսա մորդ և բնավ չեմ կարող մոռանալ. ինձ վրա շատ խոր տպավորություն արավ»:

Հետաքրքրվում է բանաստեղծի որպիսությամբ: Շնորհավորում է Նվարդին. «...ին սիրտս ուրախանում է, երբ կարդում եմ նրա հիմնած օրիորդների կոմիտեի գործունեության մասին»:

Տեղեկություններ է հաղորդում իրենց ընտանեկան առօրյայից: ԳԱԹ ԹՖ, 1706 (394 լր.):

Փետրվարի 21 - Հավաքարի ակումբի դահլիճում Հ. Սոլովյանը դասախոսություն է կարդում «Հայ նորագույն բանաստեղծության հիմնական մոտիվները» թեմայով:

Ըստ մամուլի հաղորդագրության՝ դասախոսը կանգ է առնում միայն Հ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի և Լ. Մանվելյանի վրա, մինչդեռ դասախոսությունը պետք է ավելի ամբողջական լիներ: Նշվում է նաև, որ ոչ թե խոսում, այլ հատվածներ էր կարդում իր «Քննական տեսություններ» գրքից:

«Հորիզոն», 1916, թիվ 40:

Փետրվարի 23 - «Армянский вестник» շաբաթաթերթի խմբագրության նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից:

Շնորհակալություն են հայտնում, որ բանաստեղծը համաձայնել է աշխատակցել հանդեսին (տե՛ս <փետրվարի սկիզբ>): Խընդրում են նյութեր ուղարկել մոտակա թվերի համար:

ԳԱԹ ԹՖ, 995 (265):

Փետրվարի 24 - Գիսակ* ստորագրությամբ հաղորդագրություն Գորու «Հայ գրասերների խմբակի»՝ ի պատիվ Վարդանանց տոնի կազմակերպած երեկույթի (տե՛ս փետրվարի 17) մասին, ուր կարդացվել է Թումանյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը:

*) Գաբրիել Հովհաննիսյան (1896-1949, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, մանկավարժ): Աշխատակցել է «Հասկեր», «Կարմիր ծիլեր» մանկական ամսագրերին: Թումանյանի «Գիթորը» առաջին անգամ նա է վերածել պիեսի, որ արժանացել է հեղինակի հավանությանը:

«Հորիզոն», 1916, թիվ 42:

Փետրվարի 25 - Մամուլում տեղեկատվություն.

«Մոսկվայի «Армянский вестник»-ը հաղորդում է, որ այս օրերս գրողների մի շրջանում ռուս բանաստեղծ Վալերի Բրյուսովը կարդացել է Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմը իր թարգմանությամբ: Պոեմը ուժեղ տպավորություն է թողել: Կոմպոզիտոր Գրեչանինովը պատրաստվում է «Անուշի» նյութի վրա հայկական օպերա գրել: Նա գնում է Հայաստան հայկական մոտիվներ ուսումնասիրելու համար»:

«Հորիզոն», 1916, թիվ 43:

Փետրվարի 28 - Հակոբ Նևշեհիրյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Մաժակից:

Նպաստ է խնդրում «թուրքահայ մի ուսուցչի համար, որը հանգամանքներու դժբախտ բերմամբ, բազմաթիվ ռոմանահայ գաղթականներու հետ միասին, հասած է Օդեսա, անշուշտ անօգնական և կարոտ»: Ներփակ ուղարկում է այդ ուսուցչի «խնդրագիր նամակը», որ ստացել է Օդեսայից:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/3:

Փետրվարի 28 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 46) «Դժոխքի հանդես» («Հո՛ւշ, հասավ օրը՝ վերջի՛ն, ահավո՛ր...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 284:

Փետրվար - Տպագրվում է բանաստեղծի եղբոր՝ պատերազմում զոհված Արտաշես Թումանյանի լուսանկարը և հակիրճ կենսագրական տեղեկություն.

«Պոդպորուշիկ Արտաշես Թումանյան

Ծնվել է 1892 թ. մայիսի 7-ին Դսեղ: Սպանվել է 1916 թ. հունվարի 23-ին Արխավի կռվում և պսակվել հաղթական մահով, ցույց տալով անվեհեր, ասպետին հատուկ քաջագործություններ: Պարգևատրված է եղել շքանշաններով»:

«Տարազ», 1916, թիվ 2:

<Փետրվար> - Գրում է «Մենք ու մերոնք» հոդվածը:*

Առիթը Մ. Վարանդյանի և Դ. Դեմիրճյանի միջև ծագած բանավեճն է:** Այն կարծիքին է, որ տեղին է Վարանդյանի դիտողությունը, թե Մոսկվայում պատրաստվող հայոց բանաստեղծության ժողովածուից*** դուրս են մնացել այնպիսի անուններ, ինչպիսին են Ալիշանը, Պեչիկթաշյանը, Սիամանթոն և ուրիշներ: Բայց դիտում է նաև, թե դա չպետք է արվեր նորերի հասցեին անտեղի վիրավորանքներով:

Կանգ է առնում հատկապես քննադատության մեջ երբեմնի տիրող բարքերի վրա, երբ յուրաքանչյուր թերթ կամ հանդես համակրանքով էր խոսում միայն իր շուրջը հավաքված գրողների մասին, իսկ մյուսներին կամ անտեսում էր, կամ վարկաբեկում: Հիմա էլ, ինչպես նկատում է բանաստեղծը, այդ հին ավանդույթի հետքերը ժամանակ առ ժամանակ երևան են գալիս, բայց, բարեբախտաբար, գրական կյանքին տոն է տալիս ավելի անաչառ ու բանիմաց քննադատությունը. «Մի խոսքով՝ օբյեկտիվ վերաբերմունքը դեպի գրողն

ու գրականությունը նոր բան է մեր կյանքում և արդի քննադատության մեջ նոր սերնդի գործն է»:

Հանգամանորեն խոսում է հատկապես Վարանդյանի երկու դիտողության մասին:

Առաջինը՝ թե նոր սերունդը «Սայաթ-Նովայի, Րաֆֆիի կամ Սուևուկյանի կուլտուրական մակարդակի» վրա չմնալու համար ունի բավական «ինտուիտիվ ուժ», բայց տառապում է մտավոր սահմանափակությամբ և «չի էլ ձգտում ձեռք բերել չունեցածը»: Բանաստեղծը նկատում է, թե՝ «բավական անզգույշ և անարդար ձևով շոշափված է մի շատ խոշոր խնդիր»: Եթե զարգացում ասելով հասկանալի է համալսարանական կրթությունը, ժամանակակից գրողները, քիչ բացառությամբ, ունեն այդպիսի կրթություն: Բայց «զարգացումը մի էն տեսակ ապրանք չի, որ միայն արտասահման կամ համալսարանում լինի ծախվելիս»: Գրականության պատմությանը հայտնի են անուններ, որոնք նույնիսկ առանց միջնակարգ կրթության համառ ինքնազարգացմամբ հասել են համաշխարհային մեծության: Իրավացի չէ քննադատի մաս այն պնդումը, թե չեն ուզում չունեցածը ձեռք բերել. «... Ես անուն-անուն մեջտեղ կբերեմ մեր բանաստեղծներին և կզարմացնեմ նրանց համառ ձգտումի ապացույցներով»:

Երկրորդը՝ թե ինչ է հասկանում ինքը՝ Վարանդյանը՝ զարգացում ասելով, «ինչպես է երևում զարգացումը բանաստեղծի գրվածքի մեջ առհասարակ և ինչի՞ցն է երևում, որ պակասում է հայ բանաստեղծի երգերում մասնավորապես»:

Հիշում է, թե ինչպես մի ժամանակ «զուտ գիտությունները չափի տակ էին դնում ու ոտանավորներ գրում թվաբանությունից, երկրաչափությունից, աշխարհագրությունից և այլն»: Բայց, անկասկած, զարգացում ասելով՝ սա նկատի չունի Վարանդյանը: Բանաստեղծներին հետաքրքրել են մասնագիտական, քաղաքական, փիլիսոփայական, գիտական շատ խնդիրներ, և այդ թեմաներով գրված բանաստեղծությունները «շատ ընթերցողների հիացմունքն են շարժում»։ «Արդ, ինչպե՞ս է երևում հայ գրողի զարգացման պակասությունը: Ես կարծում եմ, որ դժվար չէ տված հարցը: Ուրիշ բան էր, թե ասեր՝ բանաստեղծությունն է պակասում, ինտուիտիվ ուժն է պակասում, դժվար կլիներ դրա մասին խոսելն ու ապացուցանելը, բայց գիտությունը պայմանավորվում է մարդկային իմացական կարողություններով ու բովանդակությունների պարզորոշ արգասիքներով,

փորձնական կամ փիլիսոփայական գույներով»: Այսինքն՝ Վարանդյանի հարցադրումը մակերեսային է և չի վերաբերում ստեղծագործական աշխատանքի բուն էությանը: Չխորանալով այդ էության մեջ՝ բանաստեղծն ամփոփում է իր ասելիքը. «Ես համոզված եմ, որ շատ դժվար դրության մեջ կլինի պ. Վարանդյանը էս հարցի հանդեպ. իսկի երուդիցիայի կամ զարգացման պակասությունը չի, ոչ էլ մանավանդ ձգտումը, որ սպանում է հայ գրողին ու գրականությանը, այլ էն կացությունը, որ, նույնիսկ, բուռն ձգտումն ու ամեն զարգացում դարձնում է ապարդյուն, էն, որ հայ գրողը չի կարողանում գրականությանը նվիրվի, գրականությամբ պարապի: Եվ ձգտում, և զարգացում նա պետք է քարշ տա փողոցից փողոց կամ քաղաքից քաղաք, որ ապրի ու իր ընտանիքին ապրեցնի, որովհետև նա՝ հայ բանաստեղծը, ժողովուրդ չունի իր թիկունքին, չեն ասում Բրյուսովի ու իր ընկերների նման 150 միլիոն ժողովուրդ և միլիոնավոր ընթերցող, այլ էնքան ընթերցող, որ...

Բայց էս մասին հետո...»:

*) Հոդվածը սևագիր է, իր ժամանակին չի տպագրվել: Այդ է պատճառը, որ հետագայում Դեմիրճյանը դժգոհում էր իր և Վարանդյանի բանավեճին բանաստեղծի չմիջամտելուց (տե՛ս <հունիս>):

**) Վարանդյանի հոդվածը՝ «Շտկելու է» վերնագրով, տե՛ս «Հորիզոն», 1916, թիվ 24, Դեմիրճյանինը՝ «Շտկենք, բայց չվիրավորենք», «Հորիզոն», 1913, թիվ 29:

***) Սկստի ունի Բրյուսովի «Поэзия Армения» ժողովածուն:

ԵԼԺ 7, 447-452:

Մարտի 2 - Նամակ Բաքու՝ Հեղինե Մելիք-Հայկազյանին՝ Թիֆլիսից:

Ներկայացնում է իր հոգեկան ու ֆիզիկական ծանր կացությունը, որի պատճառները բազմազան էին: Իգդիր-Վան, հետո Էջմիածին ճամփորդություն, երբ ականատես է լինում հայ կամավորական ջոկատների հանդեպ ռուս հրամանատարության անբարյացակամ վերաբերմունքին: Ապա մեկը մյուսին հաջորդած ընտանեկան դժբախտություններ. «...Մի եղբորս սպանությունը, ապա մյուսի սպանությունը, տունը կատարյալ անտեր – միայն շփոթված սգավոր կանայք ու երեխաներ, մյուս եղբայրներս հեռավոր ֆրոնտներում կամ հիվանդանոցներում, տղերքս դես-դեն ցրված ու վտանգի տակ, տանը խմբերով հիվանդ են, էն էլ ամիսներով, վերջապես հետն էլ

ենպես պատմություններ, որ իսկի գրելու բան չեն – մի խոսքով էս վերջին ամիսները գնան ու ետ չգան»:

Շատ է անհանգիստ հատկապես մոր համար, որից թաքցրել էին փոքր եղբոր՝ Արտաշեսի սպանությունը ռազմաճակատում. «Բայց նա մի հատկություն ունի, որ նրանից բան թաքցնել չի լինում: Նախազգացում ասեն, նախատեսություն, թե պարզատեսություն. իր մոտիկներից որի հետ մի բան պատահի, որտեղ ուզում է լինի, նա արդեն վաղօրոք գիտի: Երազի ձևով լինի, թե նախազգացումի - գիտի: Ես էլ զուրկ չեմ եղ ընդունակությունից և վերջին մեզ հասած դժբախտությունները ոչ միայն օր առաջ գիտեի, այլև մերոնց ասել էի, թե էսպես բան պետք է պատահի. մինչև անգամ որոշ կարգադրություններ էի արել:» Այժմ մայրս էլ հենց սպանելու օրից գիտի, որ Արտաշեսն սպանված է, շարունակ պնդում է, ապացույցներ է պահանջում, որ ցույց տանք, թե կենդանի է, շատ դժվար է լինում խաբելը: <....> Ես էլ թեև կյանքին ու աշխարհքին շատ փիլիսոփայաբար եմ վերաբերվում և մի հաստատված խաղաղ վերաբերմունք ունեմ դեպի մահն էլ, բայց, այսուամենայնիվ, էս ամենը վրես շատ է ազդել»:

Տեղեկացնում է, որ ուղարկում է Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի և Սայաթ-Նովայի մասին իր հոդվածի (տե՛ս 1911, ապրիլի 30) առանձին «բրոշյուրով» հրատարակությունը և խաղերի (տե՛ս <1915>, մարտ, «Երկրորդ տասնօրյակ») հերթական գրքույկը՝ «Հայոց առածների խաղը», և հավելում. «Էսպես վշտի ժամանակ մարդիկ կան, որ իրենց գինուն են տալիս, մարդիկ կան՝ թղթախաղի կամ զանազան ուրիշ առաքինությունների - Ես էլ էս բաներովն եմ զբաղվում պարապ ժամանակս»:

*) Թունանյանի ինքնակենսագրական նոթերում պահպանվել է անթվակիր մի գրառում՝ «Երազը իմ կյանքում» նշումով, որ անմիջականորեն վերաբերում է այս խոստովանությանը. «Չեմ սխալվիլ, եթե ասեմ՝ իմ կյանքում որևէ դեպք չի պատահած, որ առաջուց նախազգացած կամ նախատեսած չլինեմ: Նախատեսած ու նախազգացած էլ որ ասում եմ, ասում եմ ոչ միայն արթուն ժամանակ, այլև քնած ժամանակ, երազում, այլաբանորեն, խորհրդանշաններով:

Բայց մենք տակավին ենք կոշտ ու կոպիտ, էնքան ենք անկատարյալ, որ լավ չենք հասկանում մեր նախազգացումներն ու երազները: Նրանցից քչերն են մնում մեր մտքում և մնացածներից էլ հազարից մեկն ենք հասկանում, էն էլ մոտավորապես:

Սովորաբար արհամարհում են էս պարզ ու իմաստուն երևույթները և ծիծաղում են տգիտորեն: Համարում են սուտ ու անկարելի:

Այնինչ էս ամենը շատ պարզ ու հասարակ երևույթներ են: Էնքան պարզ ու հասարակ, ինչպես աչքով տեսնելն ու ականջով լսելը: Եվ հենց աչքով տեսնելն էլ որ ասում ենք, հո միշտ չենք նկատում, որովհետև տեսնել ու նկատել միևնույն բանը չի, և էդ պատճառով էլ շատ բան ենք լսում, բայց քիչ բան ենք հասկանում:

Հաճախ մեր աչքերը նման են պարզ լուսամուտի. ետևը մարդ չկա, տեսնողը չկա կամ թե չէ կա, երբեմն էլ կա՝ թմրած է, աչքը վրեն չի, կամ ուղղակի քնած է և եթե կուզեք՝ ամենից ավելի հաճախ կույր է:

Երազը էնքան վառ ու կենդանի է եղել ինձ համար, որ այժմ երբ ետ եմ մայում իմ անցած կյանքին, երազն ու իրականությունը էնքան ուժեղ են իրար հյուսված, որ մեկը մյուսից ես չեմ կարող ջուկել: Եվ էնքան իմաստուն, շքեղ ու թանկ երազներ եմ ունեցել, որ ամեն միըն ինձ համար մի գեղեցիկ կյանք արժե:

Իմ հերն ու մերն էլ նախազգացումի, պայծառատեսության և երազի զարմանալի ընդունակություն ունեին, ինչպես ունեն շատ մարդիկ: Հերս մի հին երազահան ուներ: Թե նրանով, թե իր ունեցած փորձով երազներ էր մեկնում: Եվ միշտ առավոտները էս կամ էն գյուղացին, կին թե տղամարդ, կգային՝ տերտեր ջան, էս գիշեր մի էս տեսակ երազ եմ տեսել, մի երազահանիդ մտիկ արա, տես ինչ ասում:

Իսկ մերս մինչև օրս էլ ինձ զարմացնում է իր նախազգացումներով, իր պայծառատեսությամբ ու իր երազներով (ԵԼԺ 8, 429-430)»:

ԵԼԺ 10, 234-236, 607-608:

Մարտի 2 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ Նվարդ Թումանյանին՝ Խոյից:

Գրում է Ջուլֆայից Վան ուղևորության տպավորությունների մասին: Խնդրում է քոջը. «Նվարդ ջան, եթե կարողանաս խաղերից (տե՛ս բանաստեղծի նույն օրվա նամակը Հ. Մելիք-Հայկազյանին) մի քիչ ուղարկես, մանավանդ «Փոքր գետերը» և «Ֆլիրտը», շատ լավ կանես»:

ԹՁ ԱՐՏ, 160:

Մարտի 3 - Աշխեն Թումանյանի նամակը Վան՝ Արտավազդ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Տեղեկացնում է. «Շուտով գիրքս* լույս կտեսնի: Ես իբրև հրատարակչուհի շատ եմ մտածում տարածելու մասին. գուցե դու էլ կարող ես էլ տեղ գաղթականների վրա ծախել (չէ, հաճաք եմ անում): Բայց լավ տպագրություն չի լինի երևի. տպում ենք «Մամուլ» տպարանում, շատ եմ ձգձգում: Շապիկը Գ. Երիցյանին** է՝ հայկական օրնամենտ: Ամենալավը ձևն ա, որ իմն ա: 56 երես կլինի, անունը «Հայրենիքիս հետ»՝ բոլորը հայրենասիրական երգեր են»:

*) Խոսքը բանաստեղծի «Հայրենիքիս հետ» ժողովածուի մասին է, որի տպագրության գործով զբաղվում էր դուստրը՝ Աշխենը:

**) Նկարիչ լրագրող, որ ձևավորում-նկարագրում էր թումանյանի գրքերը:

ԹԶ ԱՐՏ, 160:

Մարտի 4 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Վարչության անդամներից ներկա են՝ Անուշավան Աբովյան, Նիկոլ Աղբալյան, Մինաս Բերբերյան, Դերենիկ Դեմիրճյան:

Նախագահողը տեղեկացնում է, որ ապրիլի 23-ին նշվելու է Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակը: Առաջարկում է մույն օրը նրանց նվիրված երեկույթ կազմակերպել, դասախոսներ հրավիրել, հեռագիր ուղարկել անգլիական գրողների կաճառին և իսպանական ակադեմիային:

Որոշում են ընդունել նախագահի առաջարկը և կիրակի օրը գրականության հմուտ մարդկանց մի ժողով հրավիրել՝ երեկույթը կազմակերպելու համար:

«Մշակում» տպագրվել է Դավիթ Անանունի մի հրապարակումը, որտեղ նա, դժգոհելով իր հարցումի (տե՛ս փետրվարի 7) վերաբերյալ ՀԳԿԸ վարչության բացատրությունից, հայտարարում է, թե վերջինիս և նրա նախագահի՝ «Մշակի» հանդեպ «թշնամության պատճառով» խզում է հարաբերությունը «իր թերթի», այսինքն՝ «Հորիզոնի» հետ: Այդ առթիվ վերստին բացատրվում է, որ ՀԳԿԸ վարչության «կարգադրության»* պատճառը ոչ թե որևէ թշնամություն է, այլ թերթի բռնած դիրքն է, ընկերությանն ու վարչությանն հայտարարությունների և գրությունների մերժումը»: Հանձնարարվում է նախագահին «պատասխանել պ. Անանունին և ցույց տալ նրան վարչությանն որոշման իսկական պատճառը»:

*) Վարչությունը որոշել էր Բոյունովի դասախոսության մասին հայտարարությունը «Մշակում» չտպագրել:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/3:

Մարտի 5 - Տպագրվում է Ն. Աղբալյանի գրախոսականը Թումանյանի «Նաղաշ Հովնաթան և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը» գրքույկի մասին:*

Գրում է. «Ա. Չոպանյանը 1910 թ. Փարիզում հրատարակեց Նաղաշ Հովնաթանի տաղերը: Հետևյալ տարին Հովհ. Թումանյանը այդ գրքի առիթով գրեց մի գրադատական, որ այժմ լույս է ընծայում առանձին տետրակով: Հիմա, որ Վ. Բրյուսովի դասախոսության հետևանքով մի լայն հետաքրքրություն արթնացավ մեզանում դեպի մեր միջնադարյան երգիչները, շատ ժամանակին է լույս տեսնում այս հոդվածաշարը:

Այստեղ՝ ցուցադրելով իբր ֆոն արևելքի մտայնության մի քանի բնորոշ կողմերը, որոնց անմասն չենք նաև հայերս, այդ ֆոնի վրա՝ իր «խոսքերով պատմելու փոխարեն»՝ հեղինակը «իրենց խոսքերով, իրենց ոճով ու շնչով, իրենց հանգով ու երանգով իրար կողքի է դնում մեր հին բանաստեղծներից երեքի սերը»: Իրար բերելով հմտությամբ ընտրած տողեր ու տներ նրանց երկերից՝ Հովհ. Թումանյանը մեզ նկարում է նրանց սիրուհիներին և վերապրել տալիս մեծ երգիչների զգացումը: Գրքույկի մեջ շողում է բանաստեղծի տաղանդը՝ գրավիչ նյութին տալով հաճելի կերպարանք և որոշակի առաջադրելով երեք երգիչների տարբեր վիճակն ու վերաբերումը սիրած կանանց նկատմամբ:

Ամեն հայ, որ հավակնություն ունի մտավորական հաշվելու իրեն՝ պարտավոր է առնվազն այնքան բան գիտենալ մեր երեք նշանավոր երգիչների մասին, որքան տալիս է Հովհ. Թումանյանն իր փոքրիկ տետրակով: Վստահ ենք, որ այս գրքույկը լայնորեն կտարածվի մեր ընթերցող շրջանակներում:

Վ. Բրյուսովի դասախոսության առիթով ամեն տեղից վեր կացող գրեց ու հրատարակեց, թե մենք չենք ճանաչում մեր բանաստեղծությունը, չենք գնահատում նրա արժեքը: Բայց ո՞վ են «մենք»: Չխոսելով Հ. Ղ. Ալիշանի և Ա. Չոպանյանի մասին՝ ահա մեր մեծանուն բանաստեղծը, որ սրանից հինգ տարի առաջ գրում էր. «Ամեն մի ժողովուրդ պետք է սիրի ու պարծենա Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի նման բանաստեղծներով» (հիշյալ գրքույկը, էջ 26): Բայց... «Ասողին լսող պիտի» և հետո՝ «Տանու տերտերին «Օրինյա՛ տեր» չկա»... Մեր մտքի անզորությունը, որ ազգային տրորված արժանապատվության հետևանք է, պետք է տեսն այսպես, մինչև մե-

զանում ևս առաջ գա հասարակություն, որի խելքն ի՛ր գլխումը լինի և ընդունակ անկախ մտածության ու դատաստանի...

Օգտվում ենք առիթից երկու դիտողություն անելու: Նախ՝ Սայաթ-Նովան երկու երգ ունի (ԺԱ և ԺԹ), որ գրված են սիրուհու բերանից: Շատերը, որոնց հետ նաև Գ. Հախվերդյանն ու Հովհ. Թումանյանն այդ հանգամանքը նկատի չառնելով, Սայաթ-Նովայի բերանն են դնում այն խոսքերը, որ սիրուհու ասածը պիտի նկատվին: Այդպես է Գ. Հախվերդյանի մեջբերած տողը.

Թեկուզ անմահություն ուզիս՝ սիրով կուճարիմ քիզ ամա (էջ ք).

Եվ Հով. Թումանյանի բերածը.

Թաք ես մորես չէի ծնի. վայ էն օրին՝ ես քիզ տեհա (էջ 23):

Երկրորդ՝ Քուչակ Նահապետը մի քառյակ ունի (ԺԴ. էջ 45):**

Սուրաթ ու ճրագ դրիր, գիս ի քո լուսըդ ձենեցիր.

Ձեդ ի քո ծովուդ եկի, լոք զարկիր ճրագն անցուցիր.

Ա՛տ էր քո ամեն ումետն, ա՛յ հոգեկ, որ ինձ կուտայիր.

ճրագդ, ա՛մ, ա՛լ ի՞նչ վառած՝ երբ բազկիս ուժն հատուցիր:

Այս քառյակն ակնարկ է անում Աղթամարի ավանդությանը, որ այնքան տաղանդով վերստեղծել է Հովհ. Թումանյանը: Երգիչն իր ապրումը հասկանալի դարձնելու համար գոհանում է՝ հարմարեցնելով ավանդությունն իր վիճակին, որ նշանակում է թե Աղթամարի զրույցը դեռ XVI դարում հանրածանոթ էր շինականին, ինչպես այսօր Ոստանի քրդերին: Մեր դիտողությունը կարող է պետք գալ մեր լեզվագետները հետազոտողին, ինչպես նաև Քուչակ Նահապետի հայրենիքը որոշողներին՝ Վաճ, թե՞ Ակն»:

*) Թումանյանի այս հոդվածը առանձին գրքույկով հրատարակել էր «Մամուլ» հրատարակչությունը, Թիֆլիս, 1916, 32 էջ:

**) Աղբալյանը ծանոթագրել է. «Նահապետ Քուչակի դիվանը, քննական ուսումնասիրությամբ մը հրատարակեց Արշակ Չոպանյան, Փարիզ, տպ. Անահիտ, 1902»:

«Հորիզոն», 1916, թիվ 51:

Մարտի 17 - Հ. Տեր-Դավթյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Թիֆլիսի Հայոց երաժշտական ընկերության անունից հայտնում է, որ՝ ամսի 27-ին կայանալու է Ալ. Սպենդիարյանի սիմֆոնիկ համերգը, որից հետո կտրվի բանկետ: Հրավիրում է բանաստեղծին՝ մասնակցելու այդ առթիվ ամսի 13-ին՝ ժամը 7-ին, Ընկերության հրավիրած խորհրդակցությանը:

ԳԱԹ ԹՖ, 2204 (192 III g.):

Մարտի 20 - Կարապետ Շիրինյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից (տե՛ս նաև փետրվարի 8):

Մտադիր է հիմնել մի ընկերություն, որի նպատակը պիտի լինի ստեղծել «ժողովրդական-գրադարան-ընթերցարաններ»: Արդեն կազմել է ապագա ընկերության ծրագիրը. «Եթե համակրում եք այս ձեռնարկությանը, կխնդրեի շնորհ բերեք ինձ մոտ կարդալու և քննելու վերև հիշված ծրագիրը և առհասարակ այս գործի շուրջը գործնական քայլեր անելու վերաբերմամբ:

Հրավիրել եմ նաև պ. Ներսես Աբեյանին, որը միանգամայն կողմնակից է այսպիսի մի ընկերություն հիմնելու»:

ԳԱԹ ԹՖ, 1900 (506/8 լր.):

Մարտի 20 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Ա. Աբեյան, Ս. Թորոսյան, Գևորգյան, Ա. Հարությունյան:

Նախագահողը տեղեկացնում է, որ մարտի 31-ին լրանում է Միքայել Նալբանդյանի մահվան 50-ամյակը: Ժողովը՝ դպրոցների գրականության ուսուցիչների մասնակցությամբ, հրավիրվել է նրա հիշատակին մի երեկույթ կազմակերպելու մասին խորհրդակցելու նպատակով. դա առիթ կլինի նաև երեկույթների նոր շրջանի հանդիսավոր բացման համար: Ներկաներից Ա. Աբեյանը հանձն է առնում խոսել «Նալբանդյանի հայացքները հայ ժողովրդի լուսավորության վրա», Թորոսյանը՝ «Նալբանդյանի բանաստեղծական գործերը» թեմաներով:

Որոշում են՝

1) Խնդրել նախագահին ամեն կարգադրություններն անել երեկույթի հաջողության համար:

2) Հանձնարարել Գյուտ Աղանյանին պատրաստել տալ Նալբանդյանի մեծադիր պատկերը և ի ցույց դնել դահլիճում:

3) Չալխուշյանին հեռագրով խնդրել ուղարկել Նալբանդյանի երկերից 100 օրինակ՝ տարածելու համար:

4) Նալբանդյանի կյանքն ու գործը բնորոշել հետևյալ տեսություններով՝ հասարակական գործունեությունը, հրապարակախոսությունը, կրթական հայացքները, բանաստեղծությունը, որպես հասարակագիր:

Մարտի 21 - Արամ Նազարեթյան ստորագրությամբ գրություն թուճանյանին՝ <Թիֆլիսից>.

«Մեծարգո Հովհաննես,

Այսօր իմացա, որ ժողովարանի կառավարիչը սխալմամբ մարտի 31-ի օրը տվել է դասախոսության համար, մինչդեռ դրամատիկական ընկերության խորհուրդը առաջուց վերցրած ունեւորներ իր ներկայացման համար: Այժմ խնդրում եմ, որ դասախոսության համար ուրիշ օր վերցնեք:

Ժողովարանի կառավարիչը հայտնեց, որ սխալվել է և ասաց, որ դիմեմ քեզ:

Հարգանքով ամենայն՝ Ա. Նազարեթյան»:

ԳԱԹ ԹՖ, 1802 (930):

Մարտի 25 - Բորիսով Միխայիլ Իվանովիչ ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թուճանյանին՝ Եկատերինբուրգից:

Իր գրելիք հոդվածի վերաբերյալ նյութեր է խնդրում հայկական մշակույթի վերաբերյալ:

ԳԱԹ ԹՖ, 1064 (283 լր.):

Մարտի 26 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 69) «Ողջունում եմք» հոդվածը:

Հաջորդ օրը՝ մարտի 27-ին, Թիֆլիսում կայանալու էր Ալ. Սպենդիարյանի սիմֆոնիկ համերգը: Դա Թուճանյանը համարում է կարևոր մշակութային իրադարձություն, որ շատ ուրիշ նման միջոցառումների հետ վկայում է «մեծ աղետից»* հետո, նույնիսկ աղետի օրերին հայ ժողովրդի առասպելական կենսունակության մասին. «Ձարմանալի է մեր ազգի կենսունակությունը. ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատքով: Կենսունակություն էլ որ ասում եմ, ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկությունը: Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող է կրկնել Վարդանանց խոսքը, թե՛ դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա ոգու հե՞տ ինչ ես անելու... Իսկ էդ ոգի ասած բանը անշունչ քարերից էլ կարող է Աբրահամու զավակներ հարուցանել և դաշտերում ցրված ոսկորներից՝ կենդանի ժողովուրդ»:

Ողջունում է Սպենդիարյանի սպասվող համերգը, նրա՝ «օտար երկրից դեպի հայրենի մթնոլորտը, արևմտյան երաժշտությունից դեպի արևելյան երաժշտությունը» ուղղված «մեծ ու գեղեցիկ ծրագրերը»: Դատողություններ է անում երաժշտության մասին. «...Երաժշտությունը ամենակարևորն է արվեստների մեջ: <...> Երաժշտությունը արվեստների մեջ էն կարող ուժն է, որ անմարմին արտահայտություններով կարողանում է անմիջականորեն ու միանգամայն տիրել մարդու բովանդակ էությանը, նրա մարմնին ու հոգուն, և տիրաբար տանել, ուր որ կամենա: Էսպիսով էլ նա, արվեստների մեջ ամենազգայականն ու ամենավերացականը, միաժամանակ հանդիսանում է ամենաուժեղ արտահայտությունը ժողովուրդների ոգեկան կյանքի և, բարձրագույն հաճույքներ տալով հանդերձ, դառնում է բարձրագույն կրթության միջոց»:

*) Նկատի ունի 1915 թ. Մեծ եղեռնը:

ԵԼԺ 7, 224-226, 625:

Մարտի 26 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ հորը՝ Վանից:

Գրում է գեներալ Սուլեյրակիյնի* հետ հանդիպման ու ծանոթության մասին. «Մի ուրախ և պատկառելի պարզ մարդ ա»: Կարդացել է Թումանյանի «Ախթամարի» իր թարգմանությունը: Թարգմանել է նաև «Միերի դուռը». «Իրոք շատ հաջող կտորներ կան և նմանություններ քո «Դավթին»: Բայց մարդը ասում ա. «Չեմ կարդացել»»: Գրի է առել նաև հայկական ավանդություններ: Կարդացել է նաև իր ինքնուրույն բանաստեղծություններից:

Տեղեկացնում է, որ Անդրանիկի** հետ ուղարկում է 40 ռ., նաև որ «Փանոսի*** նկարները, ասում են. գտնվել են»:

*) Ռուսական բանակի հրամանատարներից է: Բանաստեղծություններ է գրել Վանի մասին «Смарын Ван», «Губель Вана» և այլն: Թարգմանություններ է կատարել հայկական, վրացական, պարսկական պոեզիայից: Մոտիկ հարաբերություններ է ունեցել Թումանյանի և նրա ընտանիքի հետ:

**) Չորավար Անդրանիկ Օզանյանն է:

***) Նկարիչ Փանոս Թերլեմեզյանն է: Իր կորած նկարների մասին հետագայում նա գրում է Թումանյանի մասին հուշերում. «Իմ 70 էտյուդներն ու նկարները դաժան գաղթի ժամանակ կորան» (ԹԺՀ, 567):

ԹԶ ԱՐՏ, 164:

Մարտի 26 - Միքայել Թումանյանի նամակը Թիֆլիս՝ Յովհ. Թումանյանին:

Շնորհակալությամբ ստացել է բանաստեղծի ուղարկած փողը: Նրա առաջարկած ժողովրդական գրադարանների* գործին ուրախությամբ կմասնակցեն «թե՛ Լիզան և թե՛ ինքը»: Տեղեկացնում է. «Նախանցյալ տարի մտադրություն ունեի այդ տեսակ մի փոքրիկ ընկերություն հիմնելու և նույնիսկ կանոնադրությունն էլ էի կազմել: Այդ կանոնադրությունն ուղարկում եմ Ձեզ, գուցե պետք գա»:

*) «Ժողովրդական գրադարանի» մասին տես նաև մարտի 20, Կարապետ Շիրինյանի նամակը:

ԳԱԹ ԹՖ, 1270 (684):

Մարտի 28 - Ցավակցական հեռագիր Մոսկվա՝ Ռուս գրի ու գրականության սիրողների ընկերությանը, և Պետերբուրգ՝ «Вестник Европы» ամսագրի խմբագրությանը՝ հրատարակիչ Մ. Կովալսկու մահվան կապակցությամբ.

«Общество армянских писателей выражает свое глубокое соболезнование по поводу кончины маститого ученого земли русской Максима Максимовича Ковалевского.

Да осуществляются на благо всех народов, населяющих Россию, заветные слова покои́нодо: свобода, равенство и прогресс.

Председатель *Ов. Туманян*»

ԵԼԺ 10, 236:

Մարտի 30 - Գրիգոր քահանա Նժդեհյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Կարսից:

Մի «մտացածին հանդեսի», որ այնպես էլ լույս աշխարհ չի եկել, խմբագրի առաջարկով բանահյուսական նյութեր է ուղարկել նրան, որոնք տարբեր պատճառներով մերժվել են: Վերջում պահանջել են ոչ թե «հուն» նյութեր, այլ դրանց չափածո գեղարվեստական մշակումներ: Այս անգամ էլ «անհաջող» են համարել նրա ուղարկած մշակումների լեզուն: Դա խիստ վիրավորել է հեղինակին. «Այդ պատճառով, զոնե միամտելու համար, ես որոշեցի այդ աշխատության համար դիմել Ձեր հեղինակավոր կարծիքին, հուսալով, թե բարի կլինեք աչքի անցնել այն և ասել Ձեր խոսքը: Եթե իսկապես անաջող և անպետք բան է դուրս եկել, պետք է ոչնչացնեմ և հանգստանամ, իսկ եթե մի բանի նման է, թույլ տալ, որ Ձեր գրավոր կարծիքը մի օր, երբ տպելու լինեմ այդ, սկզբում դնել առաջաբանի փոխաբեն, ի պատասխան այն պարոնների վճռին»:

Ներողություն է խնդրում անհանգստացնելու համար:
ԳԱԹ ԹՖ, 1824 (417):

Մարտի 30 - Մամուլում հաղորդագրություն «Вестник Европы» ամսագրի խմբագիր-հրատարակիչ Մաքսիմ Կովալևսկու մահվան առիթով ՀԳԿԸ վարչության ցավակցական հեռագրի մասին (տե՛ս մարտի 28):

«Հորիզոն», 1916, թիվ 71:

Մարտի 31 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 72) «Մ. Նալբանդյանի հիշատակին» հոդվածը:

Գրված է Նալբանդյանի մահվան 50-ամյակի առիթով: Հիշում է, թե ինչպես Թիֆլիսի հայոց Կոնսիստորիայում գրագիր աշխատելու օրերին իր կարդացած հատ ու կենտ գրքերից մեկն էլ եղել է «Հյուսիսսփայլը». «Շատ սիրեցի եղ բաց կապույտ, շողարձակ տետրակները և պատանեկան ոգևորությամբ կարդում էի: Առանձնապես դուր էին եկել Կոմս Էմանուելի հիշատակարանն ու մյուս գրվածքները, Մ. Նալբանդյանի խորհրդածություններն ու թարգմանությունները և Մ. Սաղաթյանի թարգմանած Լերմոնտովի «Դևը»»: Խոստովանում է, որ իր առաջին բանաստեղծությունների վրա նկատելի է «Հյուսիսսփայլի» լեզվի ազդեցությունը. «Չէ՞ որ ամեն մի գրող ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ իրենից առաջ եղածների ազդեցությունների համագումար՝ մեկից շատ, մյուսից քիչ, որ ընդունում, հալում է իր ոգևորության հնոցի մեջ ու ձուլում, ձևակերպում է իր ճաշակով»:

Ինքն այն ժամանակ պատանեկան ոգևորության մեջ չի նկատել «Հյուսիսսփայլի» պակասությունները, նրանից վերցրել է, «ինչ որ լավն է ու պայծառ, ճիշտ երեխայի կամ լավ ընթերցողի նման»: Եվ ապա. «Եվ էսօր օրհնում եմ եղ երջանիկ միամտությունը ու մազաչափ անգամ իմ սերն ու հարգանքը չի պակասում թե՛ դեպի ամբողջ «Հյուսիսսփայլը» առհասարակ, թե՛ դեպի Մ. Նալբանդյանը առանձնապես: Ինչ որ պակասություններ են, եղել են իրեն ժամանակինն ու պայմաններինը և շատերը նույնիսկ շատ հեշտ բացատրելի ու հասկանալի են, իսկ միշտ կենդանի, միշտ վառվռում ու միշտ որոնող հոգին ու ազատ շունչը իր անկապտելի էությունն է եղել: Եվ, վերջապես, ինչի՞նչ են պետք նրա մանր-մունր անցավոր պակասությունները, որ նրանից հազար անգամ ավելի շատ կյանքում ունի ամեն մի մարդ, ամեն օր, ամեն քայլափոխի վրա, ինձ

եսօր նրա հավերժական լավությունն է զբաղեցնում, որ միլիոնավորներից մեկը չի ունենում»:

Գրում է նաև ամեն տեղ ու ամեն ժամանակ նրան ուղեկցող հալածանքների մասին, որ չեն ընկճել նրա աննկուն ոգին. «Հալածանքի մեջ էլ վերացել է մեր կյանքի անձուկ ու վատ մթնոլորտից դեպի էն հավերժական բարձրությունը, որտեղից դենը էլ տեղ չկա լավ հոգիների համար, և ընդմիշտ հավերժացել է Հայոց գրականության համաստեղության մեջ ու դարձել նրա ամենավառ, ամենապայծառ աստղերից մինը»:

ԵԼԺ 7, 126-128:

Մարտի 31 - Հայտարարություն մամուլում:

Տեղեկացվում է, որ Հայ գրողների ընկերությունը մարտի 31-ին Թիֆլիսի ժողովարանում կազմակերպում է երեկույթ՝ նվիրված Մ. Նալբանդյանի հիշատակին (տես մարտի 20):

Երեկույթը բաց կանի Հովհ. Թումանյանը: Նալբանդյանի կյանքի և հասարակական գործունեության մասին կբանախոսի Մ. Բերբերյանը, բանաստեղծությունների մասին՝ Ս. Թորոսյանը, հայ ժողովրդի լուսավորության մասին հայացքները կներկայացնի Ա. Աբելյանը, տնտեսական հայացքները՝ Ա. Հարությունյանը:

Նալբանդյանի գրվածքներից կկարդան Գ. Իփեկյանը և Ռ. Ջաղարյանը: Երաժշտական համարները կկատարի Ներսիսյան դպրոցի երգչախումբը:

«Հորիզոն», 1916, թիվ 73:

Մարտի 31 - Մինաս Բերբերյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Տեղեկացնում է, որ զեկուցումը պատրաստ է, բայց նախատեսված երեկույթին չի կարողանա կարդալ. հիվանդ է, կոկորդը ցավում է:

ԳԱԹ ԹՖ, 1052 (575):

Ապրիլի սկիզբ, Թիֆլիս - Առաջին անգամ հանդիպում է ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկուն:

Այդ օրը Թումանյանի բնակարանում անցկացրած երեկոյի մասին Ս. Գորոդեցկին հիշում է. «...Եվ նա, ելնելով բազկաթռից, քայլեց սենյակով՝ գրապահարանից դեպի պատշգամբը, որից այն կողմ հարավի վաղ գիշերն էր արդեն վառվում աստղերով, և սկսեց

պատմել, որ ահից ու մահից հալածված, բայց ապրել ցանկացող ժողովուրդը փախչում է հարազատ վայրերից: Նա հավաստում էր հայ ժողովրդի ապրելու՝ ոչնչով չկոտրվող կամքը, նա խոսում էր ռուս ժողովրդի օգնության մասին հայերի հավատից, և հանկարծ, բացելով պատշգամբ տանող դուռը, նա բռնեց իմ ձեռքը, տարավ պատշգամբ և, եռանդուն շարժումով ցույց տալով ներքև, որտեղ լապտերներից վերև սևին էր տալիս փոխաբայական պալատի տանիքը, բացականչեց.

- Ցարերին պետք է Հայաստանն առանց հայերի: Նրանց, բայց ոչ ռուս ժողովրդին...

Գրկելով ինձ՝ հուզված պոետ-տրիբունն ինձ տարավ դեպի լուսավոր մեծ լամպի տակ դրված սեղանը, մտքրեց իր համերաշխ ընտանիքի հարմարավետ գիրկը և դարձավ գեղեցկառատ սեղանի զվարթ ու հյուրընկալ տերը: Նրա առաջին կենացը Հայաստանի և Ռուսաստանի բարեկամությունն էր:

1916 թվականի ապրիլի սկիզբն էր դա:

Այդ երեկոյից ես դուրս եկա ցնցված և թևավորված. իմ ճամփան պարզ դարձավ ինձ համար»:

ԹԺՀ, 873:

Ապրիլի 2 - Տպագրվում է ծավալուն հաղորդագրություն մարտի 31-ին Մ. Նալբանդյանին նվիրված երեկույթի մասին՝ «Ազատության երգչի տոնը» վերնագրով, Մ. Վ.* ստորագրությամբ:

Տեղեկացվում է. «Երեկույթը բաց արեց մի քանի խոսքով Հովհաննես Թումանյանը: Նրա առաջարկով դահլիճը հոտնկայս և ծափերով պատվեց ներկայությունը հայ նշանավոր կոմպոզիտոր Սպենդիարյանի և թուրքահայ բազմաթիվ հյուրերի:

<....> Երեկոյի երկրորդ կեսին դահլիճ մտավ Անրի Բարբի, ֆրանսիական հայտնի թղթակիցը, որի առաքելության մասին գրել էինք «Հորիզոնի» մեջ:»

Հովհ. Թումանյանը մի քանի խոսքով ներկայացրեց նրան, սրահը թնդաց կեցցեներից և ծափերից: Բարբին, խորապես հուզված, ողջունում էր, և հանկարծ ողջ բազմությունը ոտքի ելավ և միաբերան աղաղակեց. «Կեցցե Ֆրանսիան, Viva la France!»:

Երեկույթը վերջանալուց հետո տեղի է ունեցել համեստ բանկետ՝ ի պատիվ ֆրանսիացի հյուրի, եղել են ճառախոսություններ, ելույթ է ունեցել ֆրանսիացի գրողը՝ հավաստելով իր հայրենիքի

վաղեմի համակրանքը դեպի բոլոր ճնշվածների դատը և մասնավորապես հայկական դատը: Ճաշկերույթը տևել է մինչև գիշերվա ժամը 3-ը:

*) Հավանաբար «Հորիզոնի» խմբագիր Միքայել Վարանդյանն է:

**) «Հորիզոնի» թիվ 69-ում կա հաղորդում այն մասին, որ մարտի 24-ին թերթի խմբագրություն է այցելել փարիզյան հայտնի «Le Journal» թերթի պատերազմական թղթակից Անրի Բարբին, որ երեք տարուց ի վեր գտնվում է Բալկաններում, հետևել է Բալկանյան բոլոր արշավներին... «Le Journal»-ի խմբագրության պատվերով նա եկել է՝ հետևելու հայկական ճակատի անցքերին և գրելու մի շարք թղթակցություններ հայ ժողովրդի ողբերգության մասին:

«Հորիզոն», 1916, թիվ 74:

Ապրիլի 4 - Նամակ երկտող Մարիամ Թումանյանին:

Գրում եմ, թե իշխանուհին իր ազգօգուտ գործերից ոչ մեկով այնքան չի անհանգստացրել հայ «հանգիստ սիրող տիկիներին», որքան դիֆտերիտով հիվանդանալով. «Ասում են նա քանի՞ տարեկան է, որ դիֆտերիտով հիվանդանում է»: «Ի՞նչպես գիտեք Դուք նրանց միշտ վրդովել», - ավելացնում է բանաստեղծը:

Ցավում եմ, որ դարձյալ չեն կարող հանդիպել, հիմա էլ իր երեխաներն են ջրծաղիկով հիվանդ:

ԵԼԺ 10, 236-237:

Ապրիլի 10 - Տպագրում է («Համբավաբեր», 1916, թիվ 16) «Գերության մեջ» («Բաբելոնի գետեգերքին նստել էին նրանք գերի...») բանաստեղծությունը՝ «Նմանություն»* ենթավերնագրով:

*) Նմանություն է Բայրոնի անվերնագիր (հայերեն թարգմանությամբ՝ «Գերության մեջ») մի բանաստեղծության՝ «Հրեական մեղեդիներ» շարքից: Երկու բանաստեղծների համար էլ հիմք է ծառայել Դավթի ՃԼԶ սաղմոսը՝ «Հին Կտակարանից»:

ԵԼԺ 1, 285:

Ապրիլի 12 - Հեռագիր Մոսկվա՝ Վալերի Բրյուսովին՝ Թիֆլիսից.

«Получили!* Тронуты. Всегда с восторгом вспоминаем наших дорогих друзей. Приветствуем, целуем.

Туманян».

*) Թումանյանները ծանրոցով Բրյուսովից քաղցրավենիք էին ստացել:

ԵԼԺ 10, 237, 611:

Ապրիլի 13, Թիֆլիս - Սերգեյ Գորոդեցկին գրում ու թուճամ-
յանին է տանում «Հայաստան» բանաստեղծությունը.*

Ինչպես անհայտ ու անծանոթ կնոջ դիմաց,
Կանգնած եմ ես հուզումնալից թրթռոցով:
Խոսքն առաջին վախենում է պոկվել հիմա,
Աչքս է շաղվում այս առաջին իմ վառ հայցով:

Քեզ ճանաչե՛լ: Քեզ ըմբռնե՛լ: Գրկե՛լ սիրով:
Եվ բաց անել իրար հանդեպ դռներ ոսկե:
Ո՛վ Հայաստան, որ զնգում ես արյա՛նք, հրո՛վ.
Ո՛վ Հայաստան, ցանկանում եմ սիրել ես քեզ:

Ես գլուխս խոնարհում եմ դարդերիդ դեմ,
Գեղեցկության քո բերանին հավում կրկին:
Ո՞նց է եղել, որ տակավին քեզ չգիտեմ,
Երկիր-կայծքա՛ր, երկիր-ալմա՛ստ, երա՛զ-երկիր:

Քե՛զ եմ գալիս: Քեզ ջերմ ողջո՛ւյն: Իմ աչքն է սուր:
Իմ սիրտն է տաք: Պսակներիդ եմ ցուլանք տալիս՝
Քո մարգարտե, ադամանդե լեռները սուրբ -
Դեպի նրանց և քո ծայրերն եմ ես գալիս:

Քեզ ճանաչե՛լ: Քեզ ըմբռնե՛լ: Գրկե՛լ սիրով:
Լսել, թե ոնց հարությունն է վրադ թևում:
Ո՛վ Հայաստան, որ զնգում ես արյա՛նք, հրո՛վ,
Ո՛վ Հայաստան, որ չար բախտից չես պարտվում»:

(Թարգմ. Պարույր Սևակ)

*) Գրված է Թումանյանի հետ առաջին ծանոթության տպավորության տակ (տե՛ս
ապրիլի սկիզբ):

ԹԺՀ, 873-874, 978:

Ապրիլի 13 - Օլգա Թումանյանի նամակը Վան՝ Արտավազդ
Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է ընտանեկան անցուդարձերից: Տեղեկացնում է, որ
Ահարոնյանը իրենց մոտ է. «Հայրիկը, ըստ սովորության, պետք է
տոներին պառկած լինի: Ջատկի օրը բավական մարդիկ կային մեզ

մոտ, Նվարդանց որբանոցը եկավ խմբով երգելով ու պարելով: Զետո եկավ Անդրանիկը. և նրանք էլ սկսեցին նրա երգերից երգել:

Հայրիկը քիչ մըսել է, բայց վաղը վեր կկենա»:

Տեղեկացնում է, որ իրենց մոտ «վիզիտով» եղել է Սերգեյ Գորոդեցկին. «Հայրիկն էլ խնդրեց վաղը ճաշին գալ»: Ճաշին լինելու են նաև Լուսիկը և Մարտիրոսը. Գորոդեցկուն մոտիկ ծանոթ են:

Փանոս Թերլեմեզյանը հետաքրքրվում է իր գտնված նկարներով (տե՛ս մարտի 2), խնդրում է ավելի ստույգ տեղեկություններ հաղորդել:

ԹԶ ԱՐՏ, 167-168:

Ապրիլի 13 - Վ. Բրյուսովի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից:

Ներողություն է խնդրում, որ ավելի վաղ չի գրել և շնորհակալություն չի հայտնել՝ բանաստեղծի և նրա ընտանիքի կողմից Թիֆլիսում ջերմ ընդունելության արժանանալու համար: Բայց հոգով միշտ եղել է «մեծ բանաստեղծի» հետ, ոգևորվել է նրա պոեզիայով, թարգմանել է նրա բանաստեղծությունները:

Գրում է պատրաստվող «Поэзия Армении» ժողովածուի մասին: Տեղեկացնում է, որ Վ. Միքայելյանը արդեն բանաստեղծին ուղարկած պիտի լինի «Մի կաթիլ մեղրի» թարգմանությունը: Գրում է նաև «Անուշի» թարգմանության մասին:

ԳԱԹ ԹՖ, 1059 (580):

Ապրիլի 16 - Մխիթար Տեր-Անդրեասյանի բացիկը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Շնորհակալությամբ ստացա Մանուչարի հետ ուղարկած նվերդ* և ծախու գրքերը, որոնց գինը ուղարկում եմ ներփակյալ: Այս գումարը ոչ մի առնչություն չունի գրասերների ընկերության հետ, իսկ փոխադրությունը նրանց անունով եմ արել, որովհետև ես ընթացիկ հաշիվ չունեմ Թիֆլիզի բանկում, իսկ ընկերությունը, որի գանձապահը ես եմ, ունի:

Ամսագիրը, որ այստեղ մտադիր էի հրատարակել - առայժմ մնաց, որովհետև թուղթ չկա:

Քեզ միշտ սիրող Մխիթար»:

*) Հավանաբար խոսքը Սայաթ-Նովայի հատորի մասին է (տե՛ս հունվարի 20):

ԳԱԹ ԹՖ, 2170 (1131):

Ապրիլի 18 - <Բարի երթի խոսք>.*

Դիմում է մարդասիրական նպատակներով Արևմտյան Հայաստան մեկնող անգլիացի բժիշկներին. «Դուք գնում եք Հայաստան, որպես բժիշկներ, բուժելու համար նրա վերքերը:

Բարի՜ ճանապարհ, գնացե՛ք. Հայաստանը շատ բժիշկների կարիք ունի, որովհետև շատ են նրա վերքերը: Եվ կարիք ունի ամեն տեսակ բժիշկների, որովհետև բազմատեսակ են նրա վերքերը»:

Շնորհակալություն է հայտնում աղետյալ Հայաստանին տարբեր կողմերից, հատկապես Ամերիկայից ու Անգլիայից հասնող օգնության համար:

Զգուշացնում է, որ Հայաստան մեկնողներին շատ դժվարություններ, նեղություններ ու դառնություններ են սպասում: Բայց ինչպես հայկական հեքիաթի հերոսը նպատակին հասնելու համար ճանապարհին հանդիպած «լեղի հոսող» գետի ջուրը պետք է խմի՝ իբրև «անուշ ու անմահական», անապատի փուշը պիտի քաղի՝ իբրև «անուշահոտ ծաղիկ», այսինքն՝ չպիտի զգա «ոչ ջրի դառնությունը, ոչ տատասկի դաժանությունը», եթե զգաց, չի հասնի իր նպատակին՝ «եղպես էլ դուք, որ գնում եք Հայաստան, նրան օգնելու համար, իմացեք, որ էնտեղ ցուրտ կա, սով կա, և շատ ուրիշ նեղություններ: Եթե դուք եղ դժարությունները, դառնությունները զգացիք, չեք հասնելու ձեր նպատակին և չեք փրկելու նրան: Պետք է եղ դառնությունները չզգաք ու դրանցից չհաղթվեք, միայն էն ժամանակ դուք կհաղթեք: Այո՛, սա հերոսի համար է ասված: Բայց չէ՞ որ դուք էլ արդեն գնում եք հերոսանալու»:

Թող Հայաստանի վերքերը բուժելու գնացողները իմանան, որ նա մի ինչ-որ աղետյալ չէ, «այլ մի բարձր աղետյալ, որ առողջանալով շատ բան ունի տալու մարդկությանն ու աշխարհքին»: Ուստի հայ ժողովրդին արված բարերարությունը ծառայություն է «քաղաքակրթությանն ու մարդկությանը»:

Եվ վերջում. «Բարի ճանապարհ, կամ ավելի ճիշտը, բարի գալուստ, որովհետև ես, իբրև Հայաստանի բանաստեղծ, ինձ միշտ ենտեղ եմ զգում: Եկե՛ք: Մենք միայն ցավեր չունենք: Եկեք տեսեք: Եթե գեղեցիկ է Բոսֆորը, նրան դժվար թե զիջանի Արարատյան ծովածավալ դաշտի և երկնահաս Արարատի ու Արագածի բիրելիական վեհությունը: Եվ իզուր չի մեր երկիրը՝ Հայաստանի բարձրավանդակը, էնքան մոտիկ երկնքին: Նա մի մեծ խորհուրդ ունի: Նա իր վերջին տանջանքներն է անցկացնում: Օգնեցեք, որ ազատվի եղ վերջին

տանջանքներից էլ, և մենք կունենանք մի հայրենիք, որտեղից ուրիշները չեն հեռանալ և դուք էլ չեք վերադառնալ»:

*) Սևագիր է, իր ժամանակին չի տպագրվել: Ըստ ԵԼԺ 7-ի ծանոթագրության. «Եթե բարի երթի այս խոսքը թուժանյանն ասել է, ապա, ըստ երևույթին, 1916 թ. ապրիլի 18-ին, Կովկասի հայոց բարեգործական ընկերության արտակարգ նիստում՝ ի պատիվ Հայաստան մեկնելու և հայ փախստականներին օգնելու նպատակով եպիսկոպոս Հարություն Բըքստոնի գլխավորությամբ թիֆլիս ժամանած անգլիական նպաստաբաշխ-բժշկական պատվիրակության կազմի մեջ մտնող բժիշկների» (էջ 670):

ԵԼԺ 7, 452-454:

Ապրիլի 20 - Լրատվություն մամուլում.

«Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակի առիթով Հայ գրողների ընկերությունը ամսիս 23-ին*, շաբաթ երեկոյան, գրական երեկույթ է կազմակերպում թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Երեկույթին կերգի Գայանյան դպրոցի օրիորդական խումբը»:

*) Երեկույթը տեղի է ունեցել ապրիլի 28-ին:

«Հորիզոն», 1916, թիվ 85:

Ապրիլի 21 - Վահան Տեր-Պետրոսյան ստորագրությամբ երկտող թուժանյանին՝ թիֆլիսից.

«Ցավելով պետք է հայտնեմ, որ Ձեր առաջարկը ընդունել և շաբաթ օրը Շեքսպիրի մասին խոսել չեմ կարող ինձնից անկախ պատճառներով»:

ԳԱԹ ԹՖ, 2181 (501/11):

Ապրիլի 22 - Լրատվություն մամուլում.

«Շաբաթ, ապրիլի 23-ին, Հայ գրողների ընկերության նախաձեռնությամբ կայանալիք երեկույթին, որ նվիրված է Շեքսպիրին, բացի դասախոսներից հարգանքի խոսք կասեն մեր անվանի գրողներ՝ Յովհ. Թուժանյան, Ա. Ահարոնյան և Շիրվանզադե» (տե՛ս նաև ապրիլի 20):

«Հորիզոն», 1916, թիվ 87:

Ապրիլի 22 - Հայ արվեստագետների միության նամակը Թուժանյանին՝ ստորագրությամբ հիմնադիր անդամների՝ Եղիշե Թադևոսյան, Փանոս Թերլեմեզյան, Գարեգին Լևոնյան, Մարտիրոս Սարյան, Վարդգես Սուրենյան, Սարգիս Խաչատուրյան, Լևոն Հազարապետյան, Գրիգոր Շարբաբջյան, Դավիթ Չիսլյան:

Հրավիրում են մասնակցելու նորաստեղծ ընկերության առաջին ընդհանուր ժողովին՝ տեղեկացնելով. «Նպատակն է հիմք դնել Ձեր սրտին այնքան մոտ հայ գեղարվեստին նվիրված մի ընկերության»:

Առաջին ընդհանուր ժողովը կայանալու է կիրակի, մայիսի 1-ին, ցերեկ. ժամը 11-ին Արտիստական ընկերության դահլիճում: Խնդրում ենք Ձեր ներկայությամբ արարել այդ ժողովը»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 213/7:

<Ապրիլի> 22 - Серге́н Мхитаров ստորագրությամբ հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին՝ Արմավիրից.

«Переговорите Брюсовым Валериум, когда может обратном прочесть лекцию. Случае согласия сообщите тему, условия. Выслать конспект, чтобы получить разрешение – Серге́н Мхитаров».*

*) Հեռագիրն ուղարկված է Бергеров-ի անունով՝ Թումանյանին հանձնելու համար: Նրա միջոցով էլ պետք է ուղարկվեր պատասխանը: Հեռագրի վրա կա Բերգերովի հայերեն երկտողը Թումանյանին.

«Սիրելի Հովհաննես,

խնդրեմ այս հեռագրին պատասխանիր: Թե որ որոշել էիք ճաշկերույթ սարքել – ինչո՞ւ ինձ իմաց չտվիք: Մի՞թե գաղտնիք էր»:

ԳԱԹ ԹՖ, 1771 (1685):

Ապրիլի 23 - Մամուլը տեղեկացնում է.

«Հայ գրողների երեկույթը, որ տեղի պիտի ունենար այսօր՝ ապրիլի 23-ին, մի քանի դասախոսների դեռ քաղաքս չգալու պատճառով հետաձգվում է առաջիկա հինգշաբթի՝ ապրիլի 28-ին»:

«Հորիզոն», 1916, թիվ 88:

Ապրիլի 24 - Սերգեյ Գորոդեցկու նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ջուլֆայից:

Հիացած է «հեքիաթային, շքեղ» Պարսկաստանով: Հոգում նոր երգ ունի, որի սկիզբը դրվել էր Թիֆլիսում՝ բանաստեղծի «հյուրընկալ» ընտանիքում:

Բանաստեղծին դիմում է «Дорого́у мо́ю и прекра́сны́й друг» արտահայտությամբ:

ԳԱԹ ԹՖ, 1095 (599):

Ապրիլի 24 - Մամուլում հաղորդագրություն «Армянский вестник»-ի տոնական համարի մասին:

Մասնավորապես տեղեկացվում է. «Ստացանք ապրիլի 10-ին լույս տեսած 11-րդ համարը, որին տոնական բնույթ է տված: Յուրի Վեսելովսկին մի տեսություն է նվիրել նորագույն հայ գրականության զատկական մոտիվներին: Կան բազմաթիվ թարգմանություններ հայ գեղեցիկ գրականությունից: Վ. Իվանովը թարգմանել է Յ. Թումանյանի «Աղավնու վանքը», Ե. Սիբելչեկովան թարգմանել է Ծատուրյանից և Տերյանից...»:

«Արև», 1916, թիվ 87:

Ապրիլի 25 - Տեղի է ունենում ՅԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Նիկոլ Աղբալյան, Դերենիկ Դեմիրճյան:

Նախագահը հրապարակում է Մոսկվայի կոմիտեի հեռագիրը, որով խնդրում են 3 ներկայացուցիչ ուղարկել Պետերբուրգ՝ ներկա լինելու գաղթականության և զանազան ազգային խնդիրների նվիրված համագումարին:

Տեղեկացվում է նաև, որ այս առթիվ Առաջնորդարանում կայացած ժողովում, ուր ներկա է եղել նաև վարչության նախագահը, որոշվել է Բաքվից հրավիրել Պետական դումայի պատգամավոր Բաբաջանյանին և հայտնել, որ ոչ մի ազգային հաստատություն պատրաստ չէ մայիսի 12-ին կայանալիք այդ համագումարին ներկա լինելու, ուստի և խնդրել, որ համագումարը հետաձգվի:

Ստորերի փոխանակությունից հետո նախագահը առաջարկում է Առաջնորդարանում տեղի ունեցող ժողովներում հայտարարել, որ ամենից առաջ պետք է հրավիրվի այն ժողովուրդը՝ տաճկահայը, որի համար էլ կայանալու է համագումարը:

Որոշում են սպասել, թե ինչ եզրակացության կհանգի Առաջնորդարանի ժողովը, նոր միայն վարչության նիստ գումարել և որոշում կայացնել:

ԳԱԹ ՅԳԿԸՖ, 45/5:

Ապրիլի 26 - ՅԳԿԸ վարչության հայտարարությունը.

«Հինգշաբթի, ապրիլի 28-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակի առիթով տեղի կունենա գրական երեկույթ:

Հարգանքի խոսք կարտասանեն՝ Հովհ. Թումանյան, Ա. Ահարոնյան, Շիրվանզադե, կղասախոսեն Ն. Աղբալյան, Գ. Իփեկյան և Վահան Թոթովենց»:

«Հորիզոն», 1916, թիվ 90:

Ապրիլի 28 - Հայտարարություն մամուլում.

«Այսօր Թիֆլիսի ժողովարանի դահլիճում կկայանա Հայ գրողների ընկերության գրական երեկույթը Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակի առիթով: Երեկույթը կսկսվի ուղիղ ժամը 8 1/2-ին: Երեկույթին ներկա են լինելու նորերս Թիֆլիս եկած մեր բարեկամ անգլիացի և ամերիկացի հյուրերը»:

«Հորիզոն», 1916, թիվ 92:

Ապրիլի 28 - Տեղի է ունենում ՀԳԿԸ երեկույթ՝ նվիրված Շեքսպիրի ու Սերվանտեսի մահվան 300-ամյակին (տե՛ս ապրիլի 20):

Բացման խոսք է ասում ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը: Խոսքի սկզբում բանաստեղծը հիշում է Թոմաս Քարլեյլի* միտքը, թե՛ «այլևս ոչ մի թագավոր չի կարող իր գայիտոնի տակ ամփոփել անգլիական ցեղը: Միակ թագավորը, որ կարողանում է իր իշխանությունը տարածել համատարած անգլիական ցեղի վրա ու ամեն տեղ պահպանել նրա ազգային ամբողջությունը, դա Շեքսպիրն է»:

Իր կողմից հավելում է. «Սակայն միայն անգլիական ցեղը չէ, որ շաղկապում ու համերաշխության մեջ է պահում Շեքսպիրը: Նա միաժամանակ բոլոր ժողովուրդներին է մոտեցնում՝ ինչպես անգլիական ազգին, էնպես էլ իրար: Եվ արդեն սրա մեջն է բանաստեղծության ու առհասարակ գեղարվեստի կախարդական ուժը՝ ամեն մեկի բույրն ու հրապույրը պահպանելով հանդերձ, ամենքին ի մի բերել և բազմազանությունից ստեղծել ներդաշնակ ամբողջություն»:

Կարևոր դեր է վերապահում Անգլիային աշխարհի քաղաքական կյանքում, ինչպես նաև շարունակվող համաշխարհային պատերազմում հաղթանակի մեջ:

Հանդեսին ներկա են եղել հայ փախստականներին օգնելու նպատակով անգլիական նպաստաբաշխ-բժշկական հանձնախմբի երեք անդամներ Հարոլդ Բըքստոնը, Ալֆրեդ Բաքհաուզը, Ջորջ Հաճքին:

*)Շոտլանդացի հայտնի պատմաբան, էսսեիստ. «Հերոսների, հերոսության պաշտամունքի և պատմության մեջ հերոսության մասին» աշխատությունում

ընդգրկված «Յերոսը որպես պոետ. Դանթե, Շեքսպիր» խորագրով դասախոսության մեջ Զարլեյը բարձր կարծիք է հայտնում երկու «ոսկե պոետների մասին»: Այստեղ Շեքսպիրը ներկայացվում է իբրև անգլիական ազգային պոետ՝ բարձրացվելով հերոսի պատվանդանին:

ԵԼԺ 7, 626-627:

Ապրիլի 29 - Նամակ-երկտող Գյուտ Աղանյանին.

«Սիրելի տեր Գյուտ հայր,

Մեր վարչության կողմից հեռագիր կազմեցինք երեկվան ասածի մտքով և թարգմանել տվի անգլերեն: Ուղարկում եմ Ձեզ, խընդրում եմ հեռագրատունը ղրկեք ընկերության հաշվով հեռագրելու:՝* Երևի մի գումար կբռնի:

Ձեր Դ. Թումանյան»:

*) Հեռագիրը (չի պահպանվել) ուղարկվելու էր Մադրիդ՝ Սերվանտեսի մահվան տարելիցի կապակցությամբ:

ԵԼԺ 10, 237, 612:

Ապրիլի 29 - ԶԳԿԸ անունից հեռագիր Լոնդոն՝ Ջորջ Ալեքսանդրին.*

«Հայ գրողների ընկերության վարչությունը և խումբ բազմությունը՝ Շեքսպիրի մահվան 300-ամյակի հանդեսին հավաքված՝ իրենց հիացմունքն ու հարգանքն են ուղարկում, տեր նախագահ, Ձեր միջոցով անգլիական մեծ ազգին, նրա հոյակապ գրականությանը, և խորին երախտագիտության զգացմունքներով խոնարհվում են նրա հանճարեղ զավակի անմահ հիշատակի առջև»:

*) Շեքսպիրյան կոմիտեի նախագահ:

ԵԼԺ 10, 238, 612:

Ապրիլի 30 - Մամուլը տեղեկացնում է.

«Հայ գրողների ընկերության վարչությունը Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակի հարգանքի երեկույթից հետո հեռագիր ուղարկեց Լոնդոն՝ պառլամենտի անդամ և Լորդերի Հայկական ֆոնդի նախագահ Վիլիամսի միջոցով Շեքսպիրյան կոմիտեի նախագահ տեր Ջորջ Ալեքսանդրին»:

Բերվում է հեռագրի տեքստը (տե՛ս ապրիլի 29): Տեղեկացվում է նաև, որ Սերվանտեսի համար վարչությունը հեռագրել է Իսպանիա՝ Մադրիդ, իսպանական հյուպատոսի միջոցով:

«Հորիզոն», 1916, թիվ 94:

<Ասորի> - գրում է <«Շեքսպիրի մասին»> հոդվածը:*

Շարադրում է Շեքսպիրի կյանքը՝ ընդգծելով հատկապես նրա հասարակ ծագումը, այն դժվարությունները, որ ստիպված է եղել հաղթահարել նա՝ հարթելու համար հանճարի իր ճանապարհը. «Սակայն միշտ անմահ է մարդկային ամբոխամտությունը, որ աստ-ծու որդիներին հրեղեն կառքով ու զորքով, շաշունով ու շառաշունով է սպասում, մինչդեռ նրանք հաճախ հասարակ փարախներում են ծնվում, և հաճախ հովիվների աղքատիկ փալասների մեջ են բարուրում»:

Շեքսպիրին բնութագրում է որպես «մի մարդ, որ ուրիշներին շատ բարձր հաճույքներ է տվել, իսկ ուրիշներն իրեն շատ վիշտ»։ Եվ ավելացնում է. «էդպես է արդեն հանճարի ճակատագիրը, որ միշտ բարձր հաճույքներ տա ուրիշներին՝ սերնդեսերունդ ուրիշներին, անվերջ ուրիշներին... Իսկ ինքը երջանիկ է արդեն նրանով, որ ինչքան էլ տանջվի ու տառապի էս անցավոր կյանքում, իր ամբողջ էությանը անանցի հետ է կապված, հավերժականի մասն է անմահ»:

Վերջում գրում է, որ ինքը պիտի փորձի «վերականգնել մեր առջև Շեքսպիրի հոգևոր պատկերը, էնպես, ինչպես որ նա հանդես է գալիս իր ստեղծագործությունների ուսումնասիրությունից հետո»:**

*) Հոդվածը սևագիր է։ Որոշ հատվածներ բառացի նույնությամբ բանաստեղծը կարդացել է Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակին նվիրված երեկույթում (տես մայիսի 3):

**) Հոդվածն այստեղ ընդհատվում է:

ԵԼԺ 7, 454-459:

Մայիսի 1 - Տպագրվում է («Հորիզոն», 1916, թիվ 95) Թումանյանի բացման խոսքը* Շեքսպիրի ու Սերվանտեսի մահվան 300-ամյակին նվիրված երեկույթում:

Համաշխարհային գրականության պատմության ամենանշանակալից թվականներից է համարում 1603-ը, երբ Անգլիայում լույս տեսավ Շեքսպիրի «Համլետը», Իսպանիայում՝ Սերվանտեսի «Դոն Կիխոտը»՝ «Մտածող ու տառապող մոր ինտելիգենտի ողբերգությունը և համաշխարհային ազնիվ խենթի արկածների պատմությունը»:

Բնութագրում է Համլետի և Դոն Կիխոտի կերպարները. «Երկուսն էլ, թե՛ Համլետը, թե՛ Դոն Զիխոտը գիտեն ու տեսնում են, որ աշխարհքը դուրս է եկել իր ճանապարհից, և մարդը տառապում է, երկուսն էլ զգում են, որ իրենց է վիճակվել մորից աշխարհքը ուղիղ

ճամփի վրա դնելու մեծ գործը»: Սակայն մեկը դժգոհ է իրեն բաժին ընկած ճակատագրից, մյուսը «գոհ է իր բարձր առաքելությունից», մեկը մշտապես տատանվում ու կասկածում է անգամ իր թշնամուն պարզ տեսնելու պահին, մյուսը վճռական է ու անվարան, «լոկ երևույթը նկատելուն պես մերկացնում է սուրն ու հարվածը իջեցնում»։ «Սակայն երկուսն էլ տառապում ու կռվում են իրեն ճամփից դուրս եկած աշխարհքը կարգի դնելու համար՝ մարդուն երջանկացնելու համար»:

Նշանավոր է համարում նաև 1616 թ. ապրիլի 23-ը, երբ վախճանվեցին Շեքսպիրն ու Սերվանտեսը, «համաշխարհային գրականության հորիզոնի վրա միաժամանակ մեր մտան երկու հսկայական արեգակ»:

Սակայն «գերազանց է բրիտանական հանճարի փայլը, որ իր ճաճանչները մի կողմից զարկում է մինչև Եսքիլեսի և Սոֆոկլեսի ժամանակները, մյուս կողմից դեպի գրականության ապագան»: Հիշում է Գյոթեի խոսքերը. «Ահով ու դողով եմ մոտենում գրական էն հսկա կաղնուն, որի մոտ միանում են և որից բաժանվում են գրականության բոլոր ճանապարհները...»:

Ամբողջ մարդկությունը պիտի նշի բրիտանական և իսպանական հանճարների տոնը, իսկ հայ ժողովրդի կողմից «Շեքսպիրի գերեզմանի վրա արդեն կանգնած է հայկական Համլետը՝ հոգիացած Ադամյանը, իբրև հայության ներկայացուցիչ»:

*) Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակության մեջ տպագրված է <«Շեքսպիր և Սերվանտես»> պայմանական խորագրով:

ԵԼԺ 7, 229-231:

Մայիսի 1 - ՀԳԿԸ վարչության անունից ողջույնի խոսք է ասում Հայ արվեստագետների միության հիմնադիր ժողովում (տե՛ս ապրիլի 22):

Ժողովը նախագահում է Շիրվանզադեն, քարտուղար՝ Գ. Լևոնյան:

Շիրվանզադեն նշում է, որ «գեղարվեստը անպայման հայրենիք ունի և այն ազգերը կամ ժողովուրդները, որոնք չունին գրականություն կամ գեղարվեստ, ինչքան էլ զորեղ և իշխող լինեն, այնուամենայնիվ կորած են»:

Միության ծնունդը շնորհավորում են Հ. Թումանյանը, Եր. Լալայանը, Ջարգարյանը և այլք («Հորիզոն», թիվ 96):

Թումանյանն իր խոսքում* առարկում Գ. Բաշինջադյանի այն մտքին, թե «գեղարվեստը հայրենիք չունի»; Շուռ է տալիս արտահայտությունը հարցականով. «Հայրենիքը գեղարվեստ ունի՞»։ Եվ շարունակում է. «Իհարկե, ամեն հայրենիք ունի իր ուրույն արվեստը և չի կարող չունենալ, ինչպես որ ամեն ժողովուրդ ունի իր գրականությունը, իր ֆոլկլորը։ Յուրաքանչյուր ազգի և ժողովրդի մեջ ուրույն կերպով է զարգանում և ծավալվում գեղարվեստի այս կամ այն ճյուղը, և դա է, որ որոշում է նրա կուլտուրայի աստիճանը և կենցաղի առանձնահատկությունը»։

Հայ արվեստագետների միության հիմնադրման փաստի մեջ այդ «դառը օրերին» տեսնում է «մի տեսակ ինքնաճանաչում, ինքնահաստատում, սթափություն, և այդ շատ մեծ երևույթ է մեր կենսունակության համար»։ Հատկապես նշանակալից է համարում, որ նորակազմ միության հիմնադիր անդամների մեջ կան նաև «այսպես ասած, «գաղթական» նկարիչներ»։ «Ուրեմն՝ ողջունելով մեր ժողովրդի կենսունակությունը, ողջունում եմ այս նոր ընկերության երևան գալը, որը մեծ աշխատանք ունի կատարելու մեր հայրենիքի գեղարվեստի զարգացմանը նպաստելու գործում։

Գեղարվեստը հայրենիք ունի»։

*) Ելույթի բովանդակությունը հիշողությամբ մեջ է բերել Գ. Լևոնյանը «Հայրենիքի գեղարվեստը և Հովհաննես Թումանյանը» հոդվածում («Խորհրդային Հայաստան», 1939, ապրիլի 36, թիվ 92)։

ԵԼԺ 7, 549, 688։

Սայիսի 1 - Մամուլը տեղեկացնում է՝ Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակին նվիրված երեկույթը (տե՛ս ապրիլի 28) բացել է Հովհ. Թումանյանը։

«Հորիզոն», 1916, թիվ 95։

Սայիսի 1 - Մամուլը տեղեկացնում է, որ լույս են տեսել Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուն (գինը՝ 50 կոպեկ) և «Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակի ու Սայաթ-Նովայի ՍԵՐԸ» գրքույկը (գինը՝ 30 կոպեկ)։ Դիմել գրավաճառանոցներին։

«Համբավաբեր», 1916, թիվ 18։

Սայիսի 3 - Տպագրվում է հաղորդագրություն Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակին նվիրված երեկույթի մասին։

Հաղորդագրության մեջ բերվում է Թումանյանի խոսքի շարահրանքը (տե՛ս ապրիլի 28):

«Հորիզոն», 1916, թիվ 96:

Սայիսի 5 - Սկսում է տպագրվել Պողոս Մակինցյանի «Գրական մանրութներ» հոդվածը (շարունակությունը՝ մայիսի 6):

Խոսքը վերաբերում է Քուչակի և Սայաթ-Նովայի՝ «Русская Мысль» ամսագրի սեպտեմբերյան համարում տպագրված ռուսերեն թարգմանությունների վերաբերյալ Թումանյանի դիտողություններին, ինչպես նաև այն նկատառումներին, որոնց նպատակն է մյուս հեղինակների ապագա թարգմանիչներին զերծ պահել հնարավոր սխալներից ու թյուրիմացություններից (տե՛ս 1915, նոյեմբերի 26):

Հայերեն բնագրի և ռուսերեն թարգմանության զուգահեռ քննության բազմաթիվ օրինակներով փորձում է վերանայել Թումանյանի գրեթե բոլոր դիտարկումները՝ դրանց փոխարեն առաջադրելով սեփական նկատառումները:

Եվ վերջում. «Այս մի քանի նկատողությունները անելուս նպատակն այն չէր, որ քայլ առ քայլ հետևենք մեր սիրելի պոետի լեզվագիտական հետազոտություններին: Նորերս պ. Ն. Աղբալյանն էլ է մի շարք հետաքրքրական դիտողություններ հաղորդում նույն Սայաթ-Նովայի երգերի առիթով: Ակներև է, որ հարգելի քննադատի ասած՝ մեր ամենախոշոր աշուղը կարոտ է մի մոր գիտական հրատարակության:

Մենք Սայաթ-Նովային ավելի ենք սիրում, քան ճանաչում. և Հովհ. Թումանյանը թող օրինակ լինի: Նա, որ այնքան կարդացել, երգել ու լսել է աշուղի երգերը, որ այնքան հմուտ է մեր ժողովրդական բարբառներին, նույնիսկ նա, եթե դեպքի բերմամբ նրան վիճակվեր թարգմանել սիրած աշուղի սիրված երգերը, փուշը բողոճ էր դարձնելու, էշը՝ բողոճ, անարգը՝ բողոճ, և այդ տեսակ թարգմանությունից վախենում եմ, որ Սայաթ-Նովան էլ բողոճ դառնար...»:

«Մշակ», 1916, թիվ 98:

Սայիսի 6 - Սկսում է տպագրել («Հորիզոն», 1916, թիվ 99*) «Գրականությանը ազգային պաշտպանություն է պետք» հոդվածը:

Առիթը Գր. Չալիսուշյանի «Հայ իրականությունը» հոդվածն** է, որտեղ հայտնվում է այն միտքը, թե գրականությունը զարգացնելու համար պետք է սահմանափակել օժանդակությունը համալսարա-

նական ուսանողությանը և զարկ տալ տարրական ուսումին, կրթել ազգը:

Թումանյանը համամիտ է հողվածագրի հետ, թե մեր գրականությունը իրոք աղքատիկ է, և հասկանում է նրա «ազնիվ վիշտը»: Բայց չի ընդունում դրությունը շտկելու նրա առաջարկած միջոցը: Ինքը ցույց է տալիս երևույթի իրական պատճառները և առաջարկում վիճակը բարելավելու իր ուղիները:

Պատճառներից առաջինն այն է, որ ազգի համար գրականությունն ու գիտությունը հաց ու ջրի պես անհրաժեշտ չեն. «Իսկ էնտեղ, որտեղ առանց գրքի ու առանց գիտության կարող են ապրել, էնտեղ գրողն ու գիտնականը չեն կարող ապրել, ավելորդ մարդիկ են, և ուզեն-չուզեն պետք է իրենց ճամփից շեղվեն, իրենց գործը թողնեն, ուրիշ գործով զբաղվեն, որ իրենք էլ ապրեն, իրենց տունն էլ պահեն: Կամ շա՛տ, շա՛տ միաժամանակ երկուսն էլ անեն՝ ծառայեն և՛ աստծուն, և՛ մամոնային: Բայց մենք արդեն լավ գիտենք, որ չի կարելի միաժամանակ և՛ աստծուն ծառայել, և՛ մամոնային: Դրանից լավ բան չի դուրս գալ»:

Գրողներին ու գիտնականներին հարկավոր է հասարակական, համաժողովրդական օժանդակություն, որ, բանաստեղծի համոզմամբ, կարելի է իրականացնել բազմաթիվ գործող կազմակերպությունների միջոցով: Բաքվի մարդասիրական ընկերությունը, Պետերբուրգի Եկեղեցական խորհուրդը, Նոր Նախիջևանի եկեղեցական հոգաբարձությունը, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Բաքվի հայոց կուլտուրական միությունը և այլն. «Հարկավոր է միայն գործի կարևորության գիտակցությունն ու բարի կամքը»:

Հասարակական հովանավորչությունը տարբեր ժամանակներում տարբեր է եղել. «Մի ժամանակ, երբ մեկենասներն էին պահում գրականությունը, և մեկենասներն էլ մեծ մասով թագավորներ ու իշխաններ էին, գրողներն էլ, սրանցից բարերարված, նրանց մթնոլորտում շնչելով, նրանց էին փառաբանում, թագավորներին ու իշխաններին էին հերոս առնում, և պալատական կյանքն էին երգում առհասարակ»:

Հետզհետե ժամանակի ընթացքում ժողովուրդները կազմակերպվեցին, տեր հանդիսացան ինչպես շատ բաների, էնպես էլ իրենց միջից դուրս եկած տաղանդներին ու պահեցին, պաշտպանեցին: Գրողներն ու գեղարվեստագետներն էլ մնացին ժողովրդի մեջ, ժողովրդի հետ, նրա ցավերը երգեցին, նրա տենչերով ոգևոր-

վեցին, նրանից առան իրենց հերոսները, և արքայական ծիրանու փոխարեն մեջտեղ եկան սովորական մարդու ամենօրյա զգեստները, պալատական դրապիրովկի ու պուրակների փոխարեն տարածվեց ազատ բնությունը, ու փքուն, ճռճռաճ ֆրագների փոխարեն սկսեց տիրել ժողովրդական լեզուն՝ իր կենդանի երանգներով, իր կուռ, գեղեցիկ ոճով ու վճիտ պարզությունով»:

«Հայ ժողովուրդն էլ պետք է պարզ հասկանա ու տեր հանդիսանա իր ամենամիլիոնական ստացվածքին, իր ազգային հանճարին, պետք է ապահովի ու կազմակերպի իր ազգային ոգու արտահայտության ու հզորացման գործը, իսկ թե ո՞րտեղ կամ ի՞նչպես, էդ ամենից հեշտն է: Ամենից դժվարը հասկանալն ու կամավորելը, ցանկանալն է»: Հիշում է Նորայր Բյուզանդի, Կոմիտասի, Պետրոս Ադամյանի, Գամառ-Քաթիպայի, Պարոնյանի անունները, և թե ի՞նչպես է մարդկային անտարբերությունը անդրադարձել նրանց ճակատագրի վրա:

Ազգը պետք է գիտակցի, որ գրողի կամ գիտնականի վրա արված ծախսը հետո բազմապատիկ վերադարձվում է ազգին. «Բայց նրանք, որ Շեքսպիրներ ու Գյոթեներ են ուզում, պատրաստի երբեք չեն ունենալ, ինչպես Շեքսպիրն ու Գյոթեն էլ պատրաստի Համլետն ու Ֆաուստ չեն գտել փողոցում:

Գրականություն ունենալու համար ժողովուրդները պետք է ոչինչ չխնայեն, և նույնիսկ, պաշտպանելու դեպքում էլ լավ իմանան, որ իրենց պահածներից ու պաշտպանածներից տասնից մինն է միջակ գրող դուրս գալու, հարյուրից մինը տաղանդավոր, և հազարից մինը հանճար:

Այո՛, կարելի է տաղանդներ ու հանճարներ ունենալ, բայց ունենալու համար պետք է գնահատել ու պաշտպանել, իսկ գնահատել ու պաշտպանել, արդեն վաղուց ասված է, կնշանակի՝ ստեղծել»:

*) Շարունակությունը թերթի 101, 102, 104 համարներում:

**) Չախուշյանի հոդվածը, որի առիթը «Кавказскому листку»-ի տեղեկագիրն էր 1915 թ. Ռուսաստանում լույս տեսած գրքերի մասին, տպագրվել էր «Հորիզոնի»՝ 1916 թ. ապրիլի 24-ի և 26-ի համարներում:

ԵԼԺ 7, 231-245:

Մայիսի 7 - ճուղուրյան Բարդուղիմեոս ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ս. Էջմիածնից:

Կարդացել է Պ. Մակինցյանի «Գրական մանրութներ» հոդվածը («Մշակ», 1916, թիվ 97, 98), որտեղ Սայաթ-Նովայի գործածած մի շարք բառերի սխալ բացատրություններ կան, նաև դիտողություն, թե Սայաթ-Նովա անվան թունանյանի ստուգաբանությունը՝ երգի իշխան, հիմնավորված չէ: Նամակագիրը ուզում է զգուշացնել բանաստեղծին, որ նա չտարվի Մակինցյանի բացատրություններով. «Վախենալով, թե գուցե տեղի պիտի տաք Մակինցյանի սխալ բացատրությանց ընդունվելուն, շտապում եմ Ձեզ օգնության»:^{*}

Մի շարք բառերի իր բացատրություններից հետո նկատում է. «Քուչակի և Սայաթ-Նովայի երգերը ուղիղ խմբագրելու համար պետք է բանագետ մարդկանց *միասին* աշխատակցություն. առանձին անհատների դիտողությունները միշտ էլ կմնան սրբագրության կարոտ»:

Եվ վերջում. «Այժմ վարդի բացվելու ժամանակ է, հեշտությամբ կարող եք *խարը* գտնել և մի հատ ուղարկել Մակինցյանին»:^{**}

^{*}) Թունանյանի «Գրական նկատողություններ» հոդվածը, որտեղ նա հանգամանորեն ցույց է տալիս Մակինցյանի սխալները, դեռ լույս չէր տեսել (տես՝ մայիսի 17):

^{**}) Մակինցյանը Սայաթ-Նովայի «*Ես բլբուլ եմ, վարդըս մընաց խարումըն*» տողի վերջին բառը կարդացել է *խարում*, որ նշանակում է *իշին*, այսինքն թե՛ *ես բլբուլ եմ, վարդս մնաց իշին*: Իրականում նամակագրի, ինչպես նաև թունանյանի ստուգաբանությամբ *խար* նշանակում է վարդի կոկոնը ուստի բողոք, բզեզ:

ԳԱԹ ԹՖ, 1589 (808):

Մայիսի 8 - Հաղորդագրություն մամուլում Հայ գեղարվեստագետների միության հիմնադիր ժողովի (տես՝ մայիսի 1) մասին:

«Համբավաբեր», 1916, թիվ 19:

Մայիսի 8 - Տպագրվում է «Մի փոքրիկ դիտողություն» խորագրով հոդված Պ. Մակինցյանի «Գրական մանրութներ» հոդվածի (տես՝ մայիսի 5) մասին Մ. ստորագրությամբ.

««Մշակ»-ի 97 համարում «Գրական մանրութներ» վերնագրի տակ պ. Պ. Մակինցյան խոսելով Քուչակից արված Բոյուսովի (իմա. Պ. Մակինցյանի) թարգմանությունների և դրանց առթիվ բանաստեղծ Հ. Թունանյանի կողմից եղած երկու ուղղումների մասին, հասնում է հետևյալ եզրակացության.

«Այսպիսով մեր սիրելի պոետի արած երկու ուղղումներից մեկը՝ ըստ իս՝ սխալ է, իսկ մյուսը՝ թարգմանչի համար անօգուտ»:

Կարդալով թե հայերենը և թե ռուսերեն թարգմանությունը, ոչ մի կասկած չէ մնում, որ թարգմանությունը երկու կտորների մեջ էլ սխալ է:

Առաջին կետին կարելի է առարկել, որ Քուչակի պես տաղանդավոր բանաստեղծը ներշնչման նյութ չէր ընդունի այն, թե լուսինը խավարեցրել է աստղերի լույսը:

Դա շատ բանալ նյութ է մնան ոգևորումի համար. իսկ եթե լուսնի տեղ դրվում է (քնած գեղեցկուհիների) ծծերի շառավիղը, իսկապես պատկերը բանաստեղծական է դառնում և համապատասխան նյութի ճոխության:

Արդեն հայերեն լեզվի վերլուծումը ինքնին ուրիշ կերպ հասկանալ թույլ չի տալիս:

Ահա այդ քառյակը.

-Իմ եար բարձրագնայ լուսին, յո՞ւր կ'երթաս գիշերդ անհուն,
Շատ յերդիք 'ի վար հայիս, կու տեսնես շատ կիւզել 'ի քուն,
Եւ զկոճկեկս ալ արծակ արեր, լոյս դիպեր 'ի մէջ ծոծերու,
Շառաւիղ յերկինս տըւեր, խաւարեր լոյսն աստղերուն:

Այդ քառյակի մեջ լուսինը միայն մի մասումն է ենթակա. մյուս մասում, որ ավելի կարևորն է, ենթական քնած գեղեցկուհու կուրծքն է:

Քուչակը սկզբում լուսնի մասին է խոսում, այդ էլ միայն նրա լույսի ազդեցությամբ քնած գեղեցկուհիների բաց կուրծքը տեսնելու և ցույց տալու համար:

Երկրորդ կետի բացատրությունը պ. Մակինցյանի կողմից երբեք բավարար չէ. թարգմանիչը բացարձակորեն չի հասկացել Քուչակի խոսքերը:

Ձարկած է զիս շամփուրն, բռնած կրակին,- միտքը թարգմանել՝
Вертель бьет меня, на огне согретье խոսքերով և այժմ երբ
ցույց են տալիս սխալը, ասել թե՝ այդ պատկերը նույնությամբ չի
կարելի թարգմանել ռուսերեն – շիտակ պատասխան չէ:

Թարգմանիչը հասկացել է պարզորեն՝ շամփուրն՝ ենթակա, զարկած է՝ ստորոգյալ, զիս՝ լրացուցիչ և ըստ այն թարգմանել է
Вертель бьет меня:

Կարծում ենք, որ ուղղումները թարգմանչի համար անօգուտ չեն, ինչպես ուզում է հավատացնել պ. Մակինցյան:

Այդ դեպքում իհարկե պ. Մակինցյանի սրախոսությունը «Кы-
чакъ на вертеле» անտեղի և անհամ է դառնում»:

«Արև», 1916, թիվ 99:

Մայիսի 8 - Տպագրվում է Ս. Գորոդեցկու «Հայաստանին» բա-
նաստեղծությունը՝ ընծայագրած Հ. Թումանյանին: Թարգմանիչն է
Գ. Քալաշյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
(Սերգեյ Գորոդեցկու)
Հ. Թումանյանին

Ինչպես նոր կնոջ չեմ անծանոթ և օտար՝
Երջանիկ հուզմունքով ես քո դեմ եմ կանգնում.
Եվ խոսքերը շուրթիս դողդողում են տկար,
Եվ հայացքս առաջին աղերսով մթագնում:

Ճանաչել! հասկանալ! և գրկել քեզ սիրով!
Եվ բանալ իրար դեմ մեր դռները ոսկի!
Հայաստա~ն, բռնկված արյունով, բոցերով,
Հայաստա~ն, քեզ սիրել եմ ուզում կրկնակի:

Հնությանդ դիմաց խոնարհվում եմ անգոր,
Համբուրում գեղությանդ շուրթերը կարմիր.
Զարմանում, թե ինչպե՞ս չգիտեմ քեզ ց'այսօր,
Մարմարի, ալմասի, երազի~ դու երկիր...

«Հորիզոն», 1916, թիվ 101:

Մայիսի 9 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ Նվարդ
Թումանյանին՝ Վանից:

Գրում է իր ծառայողական առօրյայից, Վանի առևտրական մի-
ջավայրից, գներից: Տեղեկացնում է. «Առաջին օրը առա հայրիկի
համար կոստյումացու բաց մոխրագույն, ապա ամենքի համար շատ
գեղեցիկ գուլպաներ և քեզ համար երկու զույգ ամառվա ձեռնոց-
ներ»:

ԹԶ ԱՐՏ, 168-169:

Մայիսի 11 - Արտավազդ Թումանյանի բացիկը Թիֆլիս՝ Օլգա
Թումանյանին՝ Վանից:

Տեղեկացնում է «Փանոսի նկարների մասին լսածներս սխալ դուրս եկան: Ոչ մի հաստատ տեղեկություն չիմացա: Իսկ Դանիել վարդապետը ասավ, որ... այրվել են (տես նաև մարտի 26, ապրիլի 13)»:

ԹՁ ԱՐՏ, 173:

Մայիսի 11 - Սերգեյ Գորոդեցկու նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Վանից:

Գրում է բանաստեղծի հետ հանդիպումներից մնացած գեղեցիկ հուշերի, Պարսկաստանի, Վանից ստացած անմոռաց տպավորությունների մասին:

Շատ է սիրել բանաստեղծի որդուն:*

Նամակի հետ ուղարկում է մի կատակ-ոտանավոր՝ նվիրված Թումանյանին.

Здравуца
Ованес, Ованес, Ованес,
Ты пивал ли персидский бекмес?
Туманян, Туманян, Туманян,
Ты курил ли душистый кальян?

За здоровье, за славу твою
Ало-черную влагву я пью
И курю я, дыша, словно вол,
За здоровье твое! Чох сакгхол!

*) Խոսքը Արտավազը Թումանյանի մասին է, որի հետ Գորոդեցկին եղել է Վանում և Իզդիրում:

ԳԱԹ ԹՖ, 1096 (297 լր.):

Մայիսի 13 - Հովհաննես Ղարիբյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Էջմիածնից:

Նամակն սկսում է թումանյանասիրական զեղումներով.

«Կուզեի Ձեզ գտնել,
Կուզեի Ձեզ տեսնել:

Այս վշտոտ սիրտս Ձեր առաջ բացել, դարդերս հայտնել, որպես մի բժշկի, և հույս ունիմ, որ Ձեր ձեռքի դարմանը կթմրացնե իմ սրտիս դառը վերքերը»:

Տրոնջում է, որ սրտակից շրջապատ չկա, շատ կուզենար լինել Թիֆլիսում: Սիրում է ընթերցել, բայց ընթերցանության լավ

գրքեր չի գտնում: Տարված է բանաստեղծի «անմահ ոտանավորներով»: Հիացած է մանավանդ «Հորիզոնում» տպագրված հոդվածով:՝ Ուղարկում է իր ոտանավորը և խնդրում է տպագրել տալ «Հորիզոնում»:

*) Նկատի ունի «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածը (տե՛ս մայիսի 6):

ԳԱԹ ԹՖ, 1553 (496 /12 լր.):

Մայիսի 14 - Վահան Թոթովենցի բացիկը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Թավրիզից.

«Պարսկաստանը շատ հետաքրքիր երկիր է, բայց այս անգամ ինձ համար ամենեն հետաքրքիրը այս անգլիացի մեշեդիներն են: Պետք է մեկի մը հետ ճամբա երթաս, որ հասկնաս: Այս մարդիկը կատարյալ անգլիացիներ են իրենց սառնարյունությամբ, իրենց տարօրինակ հետաքրքրությամբ: Իրենց գործին խորապես գիտակից են և գիտեն թե ինչ բանի համար եկած են:

Իմ հարգանքներս Ձեզի, տիկ. Թումանյանին, և մյուս բոլոր պզտիկ Թումանյաններուն: Վաղը կմեկնենք Ուրմիա»:

ԳԱԹ ԹՖ, 1214 (332 լր.):

Մայիսի 14 - «Համբավաբեր» շաբաթաթերթի խմբագիր Սամսոն Հարությունյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Սիրելի Հովհաննես, ես կցանկանայի, որ եթե ժամանակդ ների, «Համբավաբերի» առաջիկա համարում տպելու համար ուղարկեիր մեկ հոդված, որի նյութը ինքդ ընտրիր: Այդ օրը մեր տարեկան ընդհանուր ժողովն է և այդ օրվա համարում կցանկանայի, որ մեր նշանավոր գրողների հոդվածները լինեին:

Հ.Գ. Միաժամանակ կխնդրեմ գրվածդ ուղարկես երեքշաբթի կամ չորեքշաբթի, որպեսզի կարողանամք տպել տալ»:

ԳԱԹ ԹՖ, 1503 (375 լր.):

Մայիսի 15 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ Հովհ. Թումանյանին՝ Վանից:

Գրում է. «Հայրիկ ջան, ուղարկում եմ իմ գտած ժողովածուից երկու տաղ՝ Գրիգորիս Գեղեցիկի* գրածներից: «Տաղ ազնիվ»-ը կարողացա լավ արտագրել, իսկ երկրորդը՝ շտապեցի: Մի քանի անհասկանալի բառեր կլինեն՝ ոչինչ: Որոշ գաղափար կազմիր, մինչև բոլորը լավ արտագրեն և ուղարկեն: Դեռ բավական տաղեր էլ կան,

կան և թուրքերեն մի քանի հատ: Վերջը հիշատակարանի պես մի բան ունի, որ գրված է ռկո թվին:

Հուլյս ունեն և տաղարանը մի կերպ կազմակերպեն, շատ արժեքավոր բան է, կարծում եմ:

Շատ մազալու տպավորություն է թողնում «Տաղ ազնիվը»:

Ամեն բանաստեղծ չի ասի.

«Սիրով լափեցիր և՛ արհր սիրտս խոց»:

կամ՝

«Պատկերովդ՝ լուսին, աչքդ՝ մարդասպան»:

և կամ՝

«Թե ես մեռանեմ՝ քեզ ի՞նչ չափ, օգուտ»:

Մյուս տաղերն էլ կուղարկեն, ուր կան «ոմն» Ջաքարիա եպիսկոպոս Լմեցո** տաղերը»:

Վերջում՝ «Տաղ ազնիվ» և «Մաքուր պատկերով նըման Հրեշտակի...» սկսվածքով տաղերի արտագրված օրինակները:

*) Գրիգորիս Աղթամարցի:

**) Խոսքը վերաբերում է 16-րդ դարի բանաստեղծ, մանրանկարիչ Ջաքարիա Գնունեցուն, որին անվանել են մաս Լմեցի, Խժժեցի: Աշակերտել է Հովսեփ Աղթամարցուն և Գրիգորիս Աղթամարցուն:

ԹՁ ԱՐՏ, 173-176:

Մայիսի 15 - Սեյրիի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից:

Շատ է ցանկանում լինել Տաճկահայաստանում, բայց միջոցներ չունի: Խնդրում է բանաստեղծի օգնությունը. «Ինչ արած, որ այդպիսի շատ բաների համար շատ տեղերից Ձեզ են անհանգըստացնում. ես էլ ամենքի հետ»:

Հանդիպել է Հ. Մելիքյանին: Նա առաջարկել է որևէ պաշտոն զբաղեցնել «Հորիզոնում»: Ինքը համաձայն է, միայն այնպիսի աշխատանք լինի և այնպիսի վարձատրություն, որ չըջագայություններ անելու հնարավորություն տա իրեն:

Հանդիպել է Ահարոնյանին: Հայտնել է իր ցանկության մասին: Նա էլ խորհուրդ է տվել դիմել բժ. Օհանջանյանին: Խնդրում է, որ բանաստեղծը խոսի նրա հետ:

Վերջում. «Ձեր հոգվածները* գրականությունն ապահովելու մասին, շատ լավ էին, ու կարելի է այդ ձևով շատ բան անել: Գեղեցիկ բան կլիներ, եթե յուրաքանչյուր գրող, որ մի գիրք է գրում, վստահ լիներ, որ իր աշխատանքի համեմատ լավ գնահատություն կգտնի: Ամենից լավ և իրական միջոցն այն է, որ ներկայացվող

գրքերը լավ արժեքով գնվեն: Սրանով արդեն գրողը կարող է նվիրվել միայն իր կոչումին»:

*) Նկատի ունի «Գրականությանն ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածը (տե՛ս մայիսի 6):

ԳԱԹ ԹՖ, 1978 (438):

Մայիսի 15 - Հաղորդագրություն մամուլում ապրիլի 3-ին Հայ գրողների ընկերության նախաձեռնությամբ Թիֆլիսի Ժողովարանում տեղի ունեցած հանդեսի մասին՝ նվիրված Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակին, Տիգրան Աթաբեկյան ստորագրությամբ:

Տեղեկացվում է, որ ճառեր արտասանեցին Հովհ. Թումանյանը և Շիրվանզադեն: Ապա կենսագրական տեղեկություններ են տրվում Շեքսպիրի մասին:

«Համբավաբեր», 1916, թիվ 20:

Մայիսի 16 - Հակոբ Խանլարյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Գորիսից:

Գրում է, որ ուղարկել է իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն. «Ուղարկում եմ Ձեզ իմ առաջին փորձերը. Ձեզ, որ այնքան սիրալիր եք դեպի անփորձ գրիչները, Ձեզ, որի հոգին մի բանաստեղծական կատարելություն է արդեն:

Ընդունեցե՛ք խնդրում եմ ուղարկածս նվերը և եթե գրածներս արժանի են խորհուրդների և ուշադրության, գրե՛ք ինձ այդ մասին, որովհետև Ձեր խորհուրդները իմ հոգու համար պետք է լինեն ընդունելի - առանց վերապահության»:

Տեղեկացնում է, որ ուսուցիչ է Գորիսի հայկական դպրոցում և շուտով տեղափոխվելու է Շուշի:

ԳԱԹ ԹՖ, 1381 (346 լր.):

Մայիսի 17 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 108) «Գրական նկատողություններ» հոդվածը:

Մի քանի բնագրային ճշգրտումներ է անում Սայաթ-Նովայի երգերի վերաբերյալ՝ դրանց ռուսերեն թարգմանիչներին թյուրիմացություններից զերծ պահելու համար:

Իր «Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առիթով» հոդվածում (տե՛ս 1915, նոյեմբերի 26)՝ մի քանի բառերի սխալ բացատրություններ է տվել և հիմա ուղղում է:

Առարկուն է Ս. Իսրայելյանին, որ *փար* բառը բացատրել է որպես *վարագույր*՝ «փարը փառի և փարդայի հետ շփոթելով» (տե՛ս «Հորիզոն», 1915, 283): Ուղղում է. «Շուխկո աշխարհս բռնիլ է՝ արեգակի դեմը փար իս» տողում *փար*-ը նշանակում է վահան, «միայն թե *շուխկը* պետք է հասկանալ ոչ թե *շողք*, այլ *շվաք*»: «Իմ հուքմի հեքիմը դուն իս, ես էլ ուրիշ Շահ չի՛մ ասի» տողում «Շահը պետք է պահել մեծատառ և հուքմի հեքիմը հասկանալ տեր, իշխող»:

Ավելի հանգամանորեն կանգ է առնում Պ. Մակինցյանի «Գրական մանրութներ» («Մշակ», 1916, թիվ 97 և 98) հոդվածում արված դիտողությունների վրա: Մասնավորապես՝ ըստ Մակինցյանի Սայաթ-Նովայի «Ես բըլբուլ իմ, վարդըս մընաց խարուըն...» տողում *խար*-ը պետք է հասկանալ էշ, այսինքն՝ «վարդս մնաց իշին»: Թումանյանը բացատրում է. «Ես ամենայն քաղաքավարությամբ խընդրում եմ պ. Մակինցյանին՝ իր էշը դուրս տանի Սայաթ-Նովայի վարդերի միջից, որովհետև հատկապես էստեղ խարը կնշանակի փուշ և բանաստեղծն ասում է՝ վարդս մնաց փշերի մեջ...»: Օրինակներով և հավաստի վկայություններով ցույց է տալիս, որ *խար* բառը նշանակում է նաև վարդի կոկոնն ուտող բզեզ:

Հաստատում է իր կարծիքը, թե Սայաթ-Նովա անունը նշանակում է «երգի, երաժշտության տեր, իշխան»: Վկայակոչում է «հընդկական բառարանը», ըստ որի՝ «*Սայադ - տեր, իշխան*, նովա, որի արաբերենն է նուվա կամ նեվա = մելոդիա, երաժշտություն, ներդաշնակություն, նվագածություն, որից և մեր նվագն է կամ նվագածությունը»:

ԵԼԺ 7, 245-249:

Սայիսի 21 - Բարդուղիմեոս ճուղուրյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին Ս. Էջմիածնից (տե՛ս նաև մայիսի 7):

Ուշադիր կարդացել է Սայաթ-Նովայի երգերի Ախվերդյանի հրատարակությունը: Ունի դիտողություններ. «Ի նկատի ունենալով, որ Մոսկվայի կոմիտեում թարգմանել է տալիս ռուսերեն և հավանական է, թե շատ կետեր սխալ պիտի հասկացվին, ինչպես երևում է,- ես ուսումնասիրեցի և շատ կտորներ պարզելու կարոտ գտա: Ես այսօրվանից գրում եմ իմ բացատրությունները, եթե կհամաձայնեք, կուղարկեմ Ձեզ, որ *իմ գրածը նույնությամբ հրատարակելով*՝ դնեք ծանոթությամբ կամ առանձին և Ձեր ուղղումները, որպեսզի օգտվին և թարգմանողները: Բարեհաճեցեք գրել և Ձեր *հասցեն*»:

ԳԱԹ ԹՖ, 1581 (809):

Մայիսի 21 - Սկսում է տպագրվել Միք. Վարանդյանի «Ազգային պաշտպանություն» մեծածավալ հոդվածը:

Ամդրադառնում է Գր. Չախուշյանի և Թումանյանի (տե՛ս մայիսի 6) առաջ քաշած ցավոտ, «բացառիկ այժմեություն» ունեցող, «ահագանգի» նմանվող հարցերին՝ ինչպե՞ս պահպանել հայ լեզուն և գրականությունը, մշակութային արժեքները:

«Հորիզոն», 1916, թիվ 111 (շարունակությունը՝ 112-117, 119, 124 համարներում):

Մայիսի 22 - Տպագրում է («Համբավաբեր», 1916, թիվ 21, էջ 646-647) «Մի երկու խորհուրդ Բարեգործական խորհրդին» հոդվածը:

Բարեգործության ելքյան և հասարակական նշանակության մասին գրում է. «Կազմակերպված հասարակական բարեգործությունը, որ հներում միայն կուլտուրական ժողովուրդներին էր ծանոթ, ժամանակի ընթացքում թե՛ ձևի և թե՛ գաղափարի կողմից զարգանալով, հասավ այժմյան դրությանը: Այժմ բարեգործությունը, որ մի հասարակական իմաստուն պարտականություն է, ոչ միայն նրա մեջ է կայանում, որ անցողակի նյութական օգնություն հասցնի կարոտության մեջ գտնվող մարդուն՝ առժամապես նրա տառապանքն ամոքելու համար, այլ անմիջական նյութական օգնությունը վերապահելով սուր մոմենտներին և արտակարգ դժբախտ դեպքերին, գլխավորապես ձգտում է էնպես անի, որ մարդը մշտապես ազատ մնա աղքատության ու կարիքի երեսից, իր աշխատանքով ապրի, և, փոխանակ իր հասարակության համար մի անախորժ բեռ դառնալու, դառնա օգտակար անդամ»:

Այս տեսակետից բարձր գնահատելով Կովկասի հայոց բարեգործական ընկերության գործունեությունը՝ միաժամանակ նկատում է, որ ընկերությունը իր եռանդն ու միջոցները չպետք է փոշիացնի, զբաղվի այնպիսի խնդիրներով, որոնցով զբաղվում են մաս ուրիշ ընկերություններ: Օրինակ՝ հրատարակչական գործով, որով հիմնականում զբաղվում են Հրատարակչական և Գրողների ընկերությունները:

Խրախուսելի է համարում, որ ընկերությունը նպաստ է տալիս 123 դպրոցի: Հորդորում է, որ նա ավելի մեծ ուշադրություն դարձնի արհեստների ուսուցման վրա. «...Լավ կլիներ, եթե դպրոցների թիվը

թելուզ և եղբան շատ չլինի, բայց եղածները ուժեղ լինեն, իսկ արհեստանոցներ ինչքան կարելի է շատ բաց անել»:

Գովելի նախաձեռնությունն է համարում նաև ընկերության կենտրոնական գրադարանի հիմնումը, որ «միակ բանուկ հայկական գրադարանն է Թիֆլիսում»:

ԵԼԺ 7, 249-251:

Մայիսի 25 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 114) «Երկու բառ հայոց էպոսից» հոդվածը:

Մ. Գորկու խմբագրած «Сборник Армянской литературы» գրքի առաջաբանում Պ. Մակինցյանը, վկայակոչելով պրոֆ. Կոստանյանին, Դավթի զորության նշան **խաչ պատարագին**-ի երկրորդ բառի ծագումը կապում է «հայոց մի հին աստծու» անվան հետ, իսկ Առյուծաձև Միերը թարգմանում է разрывателем льва: Թումանյանը, նկատելով, որ հաճախ զուգահեռաբար գործածվում են **խաչ պատարագի** և **խաչ պատրաստի** ձևերը, հավանական է համարում, որ ճիշտը **պատրաստի** ձևն է, «որ ժամանակի հետ պատմողների բերանում դարձել է **պատերազմի**: Բացատրում է. «Եվ արդեն խաչի կամ սուրբ նշանի, և կամ զորության նշանի նշանակությունն էլ հենց նրա մեջն է, որ միշտ իրեն հետ է ու միշտ պատրաստ, որովհետև իրեն հետ է ծնված: Եղպես է ծնված և հին հնդկական դյուցազնը - Բհարատը կամ Բըգարատը, որ հնդկական առասպելի ասելով, եղավ Բագրատունի դինաստիայի նախահայրը, մի ցեղի, որ թագավորեց, ասում է, ամբողջ աշխարհում: Նա էլ իր զորության շրջանաձև նշանը՝ անմահության նշանը իր մարմնից, իրեն հետ ծնված, անբաժան ու մշտապատրաստ կրում էր իր աջ բազկի վրա»:

Իսկ Միերի Առյուծաձև մականունը, Թումանյանի կարծիքով, պետք է հասկանալ ոչ թե առյուծ ձևող, այլ առյուծակերպ:

ԵԼԺ 7, 251-253:

Մայիսի 25 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Նիկոլ Աղբալյան, Մինաս Բերբերյան, Դերենիկ Դեմիրճյան:

1) Նախագահողը հայտնում է, որ մտադիր են աշնանից սկսել հայ գրականության ժողովածուի տպագրությունը: Առաջարկում է նյութեր ընտրել Աղայանի մոտ եղածներից, ինչպես նաև մամուլից: Բոլոր նյութերը ուղարկել վարչությանը:

Կարգադրում են՝ հայտնել բոլոր ցանկացողներին, որ իրենց մոտ եղած նյութերից ընտրեն և հանձնեն քարտուղարին: Մամուլում հրապարակել հայտարարություն, որ նյութեր ունեցողները կարող են դրանք ուղարկել վարչության նախագահին:

Հավաքված նյութերը վարչությունը կհանձնի այդ նպատակով կազմված մասնաժողովին՝ ընտրություն կատարելու և պատրաստելու տպագրության:

2) Վարչությունը նպատակահարմար է գտնում ունենալ սեփական տպագիր օրգան և հանձնարարում Աղանյանին կազմել ծախսերի նախահաշիվ:

3) Տեղեկացվում է, որ Լեոն դեռևս չի պատասխանել այն հարցին, թե ինչու է հրաժարվել վարչության անդամությունից (տե՛ս 1915, ապրիլի 4): Հարց է առաջանում՝ թողնե՞լ նրան վարչության կազմում, թե՛ ոչ:

Կարգադրում են՝ Լեոյին վարչության կազմից հրաժարված համարել:

4) Ցանկալի է համարվում մի երեկույթ կազմակերպել գաղթական գրողների և նրանց ընտանիքների օգտին: Երեկույթին բանախոսելու պատրաստակամություն են հայտնում Զ. Եսայանը և Մ. Մատենճյանը:

Կարգադրում են երեկույթը կազմակերպել Արտիստական թատրոնում: Բանախոսությունների նյութը՝ ընդհանուր տեսություն արևմտահայ գրականության մասին:

5) Թումանյանը հիշեցնում է, որ շուտով լրանալու և տոնվելու է Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակը, առաջարկում է ի պատիվ նրանց կազմակերպել երեկույթ,* ինչպես նաև մի առանձին երեկույթ՝ նվիրված Նալբանդյանի մահվան 50-ամյակին**

Կարգադրում են՝ Շեքսպիրի և Սերվանտեսի մասին կբանախոսեն՝ Իսաբեկյան, Աղբալյան, Թոթովենց, Նալբանդյանի մասին՝ Ա. Աբեղյան, Թորոսյան, Արշակ Հարությունյան:

6) Նախագահողը առաջարկում է բացել հայ գրականության «կուրսեր»:

Որոշում են այդ մասին հայտարարություն հրապարակել մամուլում՝ խնդրելով ցանկացողներին մինչև օգոստոսի 20-ը դիմել վարչությանը՝ նախագահի կամ քարտուղարի հասցեով:

*) Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակին նվիրված միջոցառումների հարցը Թումանյանի նախաձեռնությամբ ավելի քան երկու ամիս շարունակ ԶԳԿՎ վարչության ուշադրության կենտրոնում էր (տե՛ս փետրվարի 16, մարտի

4, ապրիլի 20, 22, 26): Նախապատրաստվող երեկույթը տեղի է ունենում ապրիլի 28-ին (տե՛ս նաև մայիսի 1, 3): Խոսքն այստեղ ավելի լայն ծրագրով նոր երեկույթի մասին է:

**) Նախաճաշի մահվան 50-ամյակին նվիրված երեկույթի մասին որոշում կայացվել էր դեռևս ԶԳԿԸ վարչության մարտի 20-ի նիստում: Այդ առթիվ մարտի 31-ին տպագրվում է Թումանյանի «Նախաճաշի հիշատակին» հոդվածը, ինչպես նաև հայտարարություն՝ նույն օրը կայանալիք երեկույթի մասին: Բայց կայացման վերաբերյալ հաղորդագրություն մամուլում չկա: Երեկույթը հավանաբար ինչ-ինչ պատճառներով չի կայացել:

ԳԱԹ ԶԳԿԸՖ, 45/6:

Մայիսի 26 - Տպագրվում է «Գրականությանը՝ ազգային պաշտպանություն» վերնագրով հոդված՝ Արամայիս ստորագրությամբ:

Թումանյանի «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածի արձագանքներից է:

Համաձայն է, որ գրականությանը, իրոք, ազգային պաշտպանություն է պետք, բայց կարծում է, որ բանաստեղծի առաջարկած պաշտպանության ձևը «հեղինակին անհարմար դրության, կախման մեջ դնող պարագաներ» է պարունակում: Դրա փոխարեն առաջարկում է պաշտպանության իր ձևը. «Եթե հեղինակը տպարանից գիրքը դուրս բերելուց հետո երեսը շուռ տար ու տեսներ, որ գրքերը հավում են, իսկ վեց ամսից, մի տարուց հետո գրավաճառների դարակները դատարկվել են իր գրքերից, ապա դա կլիներ ամենամեծ ազգային պաշտպանությունը՝ մատուցած հայ գրողին: <....> Եվ գիրքն սպառող հասարակությունը ինքը կգտեր հեղինակներին. տեղի կունենար մի տեսակ «բնական ընտրություն»։ անշնորհքները հետ կմնային ու ձեռք կքաշեին գրչից, իսկ շնորհալիները կգնային, կբարձրանային՝ իրենց հետ բարձրացնելով և՛ այն ժողովուրդը, որին իրենք են պատկանում:

Նոր ֆոնդեր ստեղծելու կարիք չկա. այդ ֆոնդը կա, գոյություն ունի, ապրում է. և դա հայ ընթերցողն է. եթե նա բաժանորդագրվի, եթե նա գնե, դրանով արդեն մեծ գործ կլինի կատարած: <....> Արտադրողին՝ սպառող է հարկավոր, գրողին՝ գիրք գնելու շարունակ ընթերցող: Այդ պայմանը պետք է ստեղծել»:

«Հորիզոն», 1916, թիվ 115:

Մայիսի 27 - Մամուլը տեղեկացնում է.

«Հայ գրողների ընկերությունը առաջիկա աշնանից Թիֆլիսում բաց է անում Հայոց գրականության երեկոյան դասընթացներ (կուրսեր) (տես՝ մայիսի 25) և ցանկացողներին կոչ է անում գրվել մինչև աշուն»:

«Հորիզոն», 1916, թիվ 116:

Մայիսի 27 - Հայտարարություն մամուլում.

«Հայ գրողների ընկերությունը, ինչպես լսում ենք, որոշել է առաջիկա աշնանից հրատարակել մի պարբերական ժողովածու (տես՝ մայիսի 25)՝ «Նյութեր Հայոց գրականության պատմության», և հատորներով տպագրել հայ գրողների թողած նամակներն ու այլ գրական հիշատակարանները»:

«Հորիզոն», 1916, թիվ 116:

Մայիսի 29 - Տպագրվում է Պ. Մակինցյանի «Գրական մանրուքներ» խորագրով նոր հոդվածը*:

Առիթը Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուն է:

Սկիզբը համառոտ ակնարկ է «գրքի սովի» մասին. պատերազմի հետևանքով գրքի տպագրությունը նվազում է, ուստի և պետք է ողջունել ամեն մի նոր գրքի ծնունդը: Այդ ողջունելի հրատարակություններից է համարում Թումանյանի «Հայրենիքիս հետ»-ը, թեև, ինչպես ասվում է հոդվածում, «մեջը ոչինչ նորություն» չկա, այսինքն՝ ամփոփում է միայն արդեն տպագրված հայրենասիրական գործեր: Մասնավորապես գրում է, որ «Լուսավորչի կանթեղը», «Տրտմության սաղմոսներից»-ը, «Գաղթականի երգը», «Մեր նախորդներին»-ը, «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում»-ը, «Մեր ուխտը» արդեն «մեր պոեզիայի սեփականությունն են դառել վաղուց հետե»:

«Համեմատաբար ավելի թարմ նյութ» է համարում «Աղավնու վանքը», որ ժամանակին կարդացել են «Նոր Հոսանքում» ու «հիացել»: «Հայրենիքիս հետն» ու «Հոգեհանգիստը» նույնպես կարդացել են, բայց «անտարբեր մնացել»:

«Հին կռիվը» պոեմից մեջ է բերում «Հայի գիշեր, հայի գիշեր...» հատվածը, որտեղ օրորոցում որդուն քնեցնող մայրը պատմում է. «Տասնվեց տողի մեջ այսքան վարպետորեն մի անգամ Որբի և Սըհակի գրույցն ամփոփելուց հետո, ուղղակի անհասկանալի է թվում, թե ինչու Հովի. Թումանյանը նույն բանը մեկ էլ է պատմում՝ 52 ձանձրալի տող նվիրելով «Որբին»»:

Հիշեցնելով, որ Թումանյանի այդ «մեծ պոեմի» երկու հատվածները նույնպես արդեն ծանոթ են ընթերցողներին, հետաքրքրվում է. «Ե՞րբ պիտի պոետը տա մեզ այդ պոեմը լրիվ... դա ոչ միայն շատ հետաքրքրական է, այլև կարևոր մեր գրականության համար, որովհետև նրա մեջ առաջին անգամ պոեմի նյութ է դառնում մեր մոտիկ անցյալի մի խոշոր հասարակական հոսանքը»:

Համառոտ ներկայացնելով պոեմի «Տանը» հատվածի սյուժեն՝ ««վերին աստիճանի կենդանի» է համարում Վահանի մոր կերպարը. «Այս մի հատիկ մայրը հազարապատիկ ավելի կենդանի և հուզիչ է, քան Ավ. Ահարոնյանի բոլոր «Մայրերը»...»:

Հաջողված է համարում նաև Վահանի հոր կերպարը:

Անցնելով «տղերքի» կերպարներին՝ մեջ է բերում նրանց երգը և ավելացնում. «Եթե Թումանյանի պես պոետը չի կարողանում մի կարգին երգ դնել դրանց բերնում, կնշանակի՝ ոսկեբերան տղերք չեն եղել նրանք... Կարդացե՛ք «Վերջին օրը» և տեսե՛ք, թե դյուցազներգության ոճի վարպետի երկում ինչպես են կակազում «խմբապետն» ու նրա «ընկերը», երևի կամավորը...»:

«Աջանչելի» է համարում «Երկրում» հատվածի նախերգանքը: Ապա ներկայացնում է հատվածի բովանդակությունը: Վերապատմումի շեշտադրությունից զգացվում է, որ «տղերքի» կերպարը այստեղ էլ չի գոհացրել քննադատին:

Եվ վերջում. «Այսպիսով մեր սիրելի պոետը երես չի տալիս ընթերցողին. Նոր լույս տեսած գրքույկը ոչինչ նորույթ չի պարունակում մեջը, բայց կայնպես «Հայրենիքիս հետը» կուրախացնի հայ ընթերցողին, որովհետև գրքի սով է, որովհետև Հովի. Թումանյանի պոեզներն են, չնայած որ հրատարակությունը բանի նման չէ, չնայած որ գինն էլ 50 կ.՝ այնքան էլ էժան չէ: Պատերազմ է, ի՞նչ արած»:

*) Նույն խորագրով առաջին հոդվածը տես մայիսի 5:

«Աշակ», 1916, թիվ 117:

<Մայիսի վերջեր> - Երկտող Նար-Դոսին.

«Պարոն Նար-Դոս,

Ձեզ մոտ կգա երիտասարդ շնորհալի բանաստեղծ Չարենցը: Նա մի լավ բանաստեղծություն է գրել մեծանուն դերասան Պետրոս Ադամյանի մասին:՝ Խնդրում են տպել թերթում:

Ձեր *Հովի. Թումանյան*»:

*) Բանաստեղծությունը՝ «Արտիստը» վերնագրով, տպագրվել է «Հորիզոնի» 1916 թ. հունիսի 6-ի 124 համարում: Նար-Դոսը թերթի ոճաբան-քարտուղարն էր:

ԵԼԺ 10, 238, 614:

Հունիսի 1 - Նամակ-երկտող Գյուտ Աղանյանին.

«Տեր Գյուտ հայր,

Ես իրիկուն Գայանյան դպրոցում Նալբանդյանի հիշատակին գրական երեկույթ կա, տեսուչը Նալբանդյանի նկարը խնդրում է մեզանից: Վաղը ետ կբերեն: Խնդրում եմ տաք իրենց:

Ի՞նչ եղավ դահլիճի բանը:*

Վաղը երեկոյան ժամը 8-ին խորհրդակցություն ունենք,-** խնդրում եմ արձանագրություններն էլ բերեք:

Բայց եթե Դուք էլ համաձայն եք՝ վերջին վճարները շինենք քսանական ռուբլի. շատ է քիչ տասնականը:

Ձեր **Հ. Թումանյան**»:

*) Հավանաբար խոսքը ՀԳԿԸ հերթական երեկույթի համար դահլիճ ապահովելու մասին է:

**) Խորհրդակցությունը նվիրված էր լինելու «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» հարցին:

ԵԼԺ 10, 238-239, 614:

Հունիսի 1 - Ազնաուրյան Սուրեն Մ. ստորագրությամբ գրություն ՀԳԿԸ վարչության նախագահ Թումանյանին.

«Ավարտած լինելով Վանի միջնակարգ Արամյան դպրոցը, իմ բուռն ցանկությունն էր հետևել Ձեր աշնան բացվելիք գրական դասընթացներին (տե՛ս մայիսի 27):

Դիմելով Ձեզ կիսնդրեի, որ ի նկատի առնեիք ինձ ևս:

Հարգանք Ս. Մ. Ազնաուրյան

Իմ հասցեն – Тифлис, Армянский базар, No 10».

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 112:

Հունիսի 2 - Գյուտ Աղանյանի նամակը Թումանյանին:

Տեղեկացնում է, որ հարգելի պատճառով չի կարողանա մասնակցել ՀԳԿԸ վարչության և Հրատարակչական ընկերության ժողովներին:

Գրում է. «Դահլիճի գործի համար ուղղակի տանջվել եմ. մի դժոխք մարդ կա՝ Սուրգունյան անունով, որ և դժբախտաբար իմ աշակերտն է. խանգարում է ինչքան կարող է: Այս իրիկուն վերջին

պատասխանը կունենամ և դրական դեպքում ոչ ուշ քան 6-7 հունիսի:

Վաղը կգամ Ձեզ պատասխանով:

Խնդրեմ օրագիրների համար միստ նշանակեք կիրակիից հետո:

Քո՝ *Գյուտ* »:

ԳԱԹ ԹՖ, 842 (486):

Յունիսի 3 - Սկսում է տպագրել («Հորիզոն», 1916, թիվ 122*) «Ադամյանի օրերից (Հիշողություն)» հոդվածը:

Գրված է Ադամյանի մահվան 25-ամյակի առիթով:

Համառոտ ներկայացնում է հասարակական-մշակութային այն մթնոլորտը, ուր հանդես էր գալիս Ադամյանը շեքսպիրյան ներկայացումներով:

«Ութսունական թվականներն էին:

Մեր կյանքում ռազմական փողի նման թնդում էին Գամառ-Քաթիպայի ազատ երգերը, վարար գետի նման հոսում էին Ռաֆֆու վեպերը անընդհատ ու խորհրդավոր, մամուլի մեջ աջ ու ձախ շառաչակից մտրակում էր Գրիգոր Արծրունին, իսկ Թիֆլիսի թատրոնում զինվորական երաժշտությունը հնչում էր «Ձեթունցիների մարշը», և որոտում էր Ադամյանը: Հասարակությունը խռնվում էր թատրոնի դռների առաջ ու փողոցային երեխաները Թիֆլիսի փողոցներում ճչում էին:

«Օֆելիա՛, մտի՛ր կուսանոց...

Դեզդեմոնա, ո՞ւր է թաշկինակս...»:

Հայոց լեզուն տիրաբար հաղթանակում էր գրեթե ամբողջովին վրացախոս Թիֆլիսում և մի նոր շունչ էր փչում»:

Հիշում է, թե ինչպես է առաջին անգամ ներկա եղել «Համլետի» ներկայացմանը՝ Ադամյանի մասնակցությամբ. «Էդ գիշերը ինձ համար եղավ մի կախարդական գիշեր և գրեթե վճռական նշանակություն ունեցավ իմ ամբողջ գրական կյանքում: Էդ գիշերը ես էնքան սիրեցի Համլետը և հետո էլ Շեքսպիրը, որ մի քանի դրամա գրեցի ու միշտ ոչնչացրի, որովհետև... Շեքսպիրի գրածի նման չէին դուրս եկել: Սակայն էնքան ուժեղ էր կախարդանքը, որ մինչև օրս էլ ես ինձ ավելի դրամատուրգ եմ համարում, քան ուրիշ մի բան»:

Հիշում ու մանրամասն ներկայացնում է իր մասնակցությունը Հ. Կարենյանի «Վարդանանց պատերազմ» ողբերգության ներկա-

յացմանը, որտեղ Վարդանի դերուն հանդես էր գալու Ադամյանը, և ինքը Ավարայրում զոհված զինվորի համր դեր պիտի կատարեր: Այդ դերակատարությունը ավարտվում է զավեշտալի միջադեպով. Ադամյանի մուտքի ժամանակ սպանված զինվոր Թումանյանը հանկարծ սկսում է հազալ, հետն էլ աչքերը բացում է, որ Ադամյանին լավ տեսնի. «Մյուս օրն էր, թե մի երկու օրից հետո, պատմեցին, թե այժմ Ադամյանը էլ բարկացած չի, ծիծաղելով է պատմում էդ դեպքը և հարցնում էր, ուզում էր ինձ տեսնի: Ես գնացի, զարմանալի սիրով ու քաղաքավարությամբ ընդունեց, մանավանդ երբ իմացավ Ներսիսյան դպրոցի աշակերտ եմ և ինչ պատճառով էի գնացել, իրեն գրքերից միմն էլ նվիրեց ի հիշատակ Վարդանանց պատերազմի ներկայացմանը և իմ կարճատև, բայց աղմկալի բեմական գործունեության: Նրանից հետո մի քանի անգամ եղա մոտը:

Ինձ թվաց մի շատ քաղաքավարի ու քնքուշ, բայց հիվանդ մարդ, և, չգիտեմ ինչու, մենակ մարդ: Գուցե էն էր պատճառը, որ հյուրանոցում էր ապրում, չգիտեմ, բայց մենակ մարդ...

Այնուհետև երբ ավելի ու ավելի ծանոթացա նրա կյանքի հետ, նրա տառապանքների հետ, տեսա, թե մեր կյանքում ինչքան է հալածվել <...>, և թե նրան ծափահարողները ծափահարել են լոկ արտաքին փայլից շլացած թուպաբար և լքել են մշտապես, այնուհետև նա դարձավ ինձ համար մի մշտական վիշտ, մի գեղեցիկ վիշտ, մի իսկական Համլետ, որ բարձր ծիրքերով ծնվել էր մի շատ խեղդուկ մթնոլորտում...

Եվ խեղդվեց...»:

Հիշում է իտալացի ողբերգակ Ռոսսիի Համլետը Թիֆլիսի հայ բեմում և հասարակության գնահատականը.

«- Սքանչելի է ... բայց Ադամյանին չի հասնիլ:

Ես իմ կյանքում թերևս երբեք ինձ էնքան հպարտ չեմ զգացել իբրև հայ, ինչպես էն գիշեր:

Բայց, այնուամենայնիվ, չեմ կարող ասել՝ հպարտությունս ավելի մեծ եղավ, թե՞ վիշտս,...

Նա մեզանում չգնահատվեց և անպաշտպան, անժամանակ գերեզման իջավ»:

*) Շարունակությունը թիվ 124:

ԵԼԺ 7, 253-260:

Հունիսի 3 - Նամակ Բաբու՝ Տիգրան Հովհաննիսյանին՝ Թիֆլիսից:

Գրում ե գրականությանը ազգային պաշտպանության անհրաժեշտության մասին: Հիշում ե այդ հարցին նվիրված իր հոդվածը (տե՛ս մայիսի 6): Տեղեկացնում ե, որ հարցի շուրջ խորհրդակցություն ել եմ անցկացրել (տե՛ս հունիսի 1): Առաջարկում ե, որ Բաքվի հայ գրասերների ընկերությունը ևս միանա նախաձեռնությանը. «Թող գրականությունը համարվի ազգային-կուլտուրական պաշտոնություն, և նրա մարդիկ պաշտպանված լինեն ազգի կողմից: Ես կարծում եմ, որ էդ հնարավոր բան ե, միայն թե մենք պետք ե աշխատենք եղած միջոցներն ու մարմինները կազմակերպել ու գիտակցություն առաջ բերել, տրամադրություն զարգացնել, ուրիշ կերպ չի կարելի: Իսկ էս, ասում եմ ես, և՛ հնարավոր ե, և՛ հեշտ»:

Գրողների ընկերությունը մտադիր ե աշմանից «հայոց գրականության կուրսեր բացել (տե՛ս մայիսի 25, 27)»: Առաջարկում ե, որ գործին միանա նաև Բաքվի հայ գրասերների ընկերությունը. «...Երկու սեմինար, և՛ էստեղ պահենք, և՛ էդտեղ»: Մտադիր եմ աշմանից հրատարակել ««Հուշագրեր հայոց գրականության»՝ ընկերության օրգանը: Եվ նյութեր հայոց գրականության պատմության – նամակներ և դոկումենտներ (տե՛ս մայիսի 25, 27)»:

Ձապել Եսայանը իր մոտ կարդացել ե մի նամակ՝ «Մխիթարի նամակը», որտեղ իր հասցեին քննադատություն կա, թե գրականությամբ չի զբաղվում. «Էդ ես էլ եմ շատ ուզել և շատ էլ ուզում եմ, բայց բանից դուրս ե գալիս, որ իմ ու իմ բարեկամների ցանկությունը հերիք չեն: Այո՛, մենք պետք ե անպատճառ ազգային պաշտպանություն կազմակերպենք մեր գրականության համար: Ուրիշ կերպ՝ էսպես կերթա»:

Շատ ե «հոգնած ու թույլ»:

ԵԼԺ 10, 239-241:

Հունիսի 4 - Արտավազդ Թումանյանի երկտողը Թիֆլիս՝ Հովհ. Թումանյանին Վանից.

«Հայրիկ ջան,

Սարգիսը ասում ա, շատ գրիր և շատ ջերմ նամակ: Վճռեցի գրել կարմիր թանաքով: Քեզ երևի կկարդա իր գեղեցիկ ոտանավորները: Շատ ե վազազեցնում և չի թողնում կարգին գրեմ:

Ջերմ համբույրներով՝ քո Արտիկ»:

ԹՁ ԱՐՏ, 177:

Հունիսի 5 - Հայտարարություն մամուլում ՀԳԿԸ վարչության նախաձեռնությունների մասին.

«Հայ գրողների ընկերությունը առաջիկա աշնանից Թիֆլիսում բաց է անում հայոց գրականության երեկոյան դասընթացներ:

Ցանկացողները կարող են այժմվանից ցուցակագրվել (տե՛ս մայիսի 25, 27)»:

«Հայ գրողների ընկերությունը առաջիկա աշնանից հրատարակելու է մի պարբերական ժողովածու՝ «Նյութեր հայոց գրականության պատմության», տպագրելով հանգուցյալ հայ գրողների մամակներն ու այլ գրավոր հիշատակարանները (տե՛ս մայիսի 25, 27)»:

«Համբավաբեր», 1916, թիվ 23:

Հունիսի 6 - Սեդա և Անուշ Թումանյանների նամակը Վան՝ Արտավազդ Թումանյանին:

Տեղեկացնում են. «Շանթը եկել է Թիֆլիս: <....> Վահան Տերյանը և իր կինն էին այստեղ: Բայց ափսոս, շատ ափսոս, որ զնացին, լավ մարդիկ էին»:

ԹՁԱՐՏ, 177-178:

Հունիսի 7 - Եղիշե Տեր-Խաչատրյան ստորագրությամբ դիմում «հայ գրողների ընկերության մեծարգո նախագահին» (տե՛ս նաև հունիսի 7):

Իր մասին համառոտ տեղեկություններ հաղորդելուց հետո. «Արդ՝ մեծ ուրախությամբ լսելով Ձեր հղացած այն գովելի և միևնույն ժամանակ ցանկալի միտքը, թե հառաջիկա աշնան պիտի կազմակերպեք բանալու գրականության վերաբերյալ կուրսեր (տե՛ս հունիսի 5), ուստի սրանով կուզեմ իմ ցանկությունս հայտնելու, որ հաճիք նախօրոք իմ անունս ալ ցուցակին մեջ անցնելու»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 179:

Հունիսի 7 - Մամուլը հաղորդում է՝ Հովհ. Թումանյանն ստացել է Շեքսպիրի մահվան 300-ամյա տարելիցի առիթով ՀԳԿԸ վարչության անունից Լոնդոն ուղարկած հեռագրի (տե՛ս ապրիլի 29, 30) պատասխանը.

«Հարգելի պարոն,

Այսօր* ստացա Ձեր հետևյալ խիստ սիրալիր հեռագիրը.

«Հաճեցեք հայտնել Շեքսպիրի 300-ամյակի կոմիտեի նախագահ Սըր Ջորջ Ալեքսանդրին, որ Կովկասի Հայ գրողների ընկերությունն ու Շեքսպիրի 300-ամյա հիշատակը տոնելու համար հավաքված ունկնդիր խումբն բազմությունը Ձեր միջոցով իրենց հարգանքն ու հիացմունքն են հայտնում անգլիական մեծ ազգին ու նրա հոյակապ գրականությանը: Խորին երախտագիտության զգացումով նրանք խոնարհվում են Մեծ Բրիտանիայի անմահ զավակի հիշատակի առջև:

Նախագահ՝ Հովհ. Թումանյան»:

Ես հաղորդեցի այս մասին Սըր Ջորջ Ալեքսանդրին: Վստահ եմ, որ նա և իր կոմիտեն մեծապես կգնահատեն մեր ազգային բանաստեղծի մասին հայ ժողովրդի հիացման այս արտահայտությունն ու նրա համակրանքը մեր ազգային կյանքի բոլոր երևույթներին: Հավատում եմ, որ ապագայում մեծ շանսեր կան հայ ցեղի և նրա գրականության բարգավաճման համար:

Հարգանք՝ Անյուրին Վիլյամս

Նախագահ անգլո-հայ կոմիտեի»:

*) Հեռագիրը թվագրված է՝ Լոնդոն, 17 մայիսի, 1916:

«Հորիզոն», 1916, թիվ 125:

Հունիսի 8 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 126) «Ի՞նչ են ասում» հոդվածը:

Առիթը ռուսական և վրացական մամուլի այն տեղեկատվությունն է, թե իբր «Մեսրոպ Եպիսկոպոսը զենք է տանում ու բաժանում հայերին, Անդրանիկն էլ խմբեր է կազմում վրացիների դեմ»:

Թումանյանին շատ են վշտացրել ու զայրացրել այդ «կարճամիտ» և «չարախոս» լուրերը: Ցավում է մանավանդ, որ վրաց մտավորականությունը հրապարակավ չի հերքում դրանք. «Էս տեսակ հոդված կարդալուց հետո մարդ լցվում է անհուն ցավով ամեն անգամ, երբ լսում է նրա՝ Անդրանիկի սիրած խոսքը, որ հաճախ կրկնում է. «Երբ իրիկունը գլուխներդ բարձին կղնեք, որ քնանաք, մի քիչ մտածեք ձեր ազգի մասին: Այնուհետև մտածեք ձեր հարևանի մասին, հայ լինի նա, թուրք լինի, ռուս լինի, վրացի լինի, ով կուզե լինի, և բարի մտածեցեք...»:

Եվ վերջում. «Եթե Անդրանիկը խումբ կազմեր վրացիների դեմ, անկասկած, երբեք էնքան վնաս չպետք է տար վրաց ժողովրդին,

ինչքան վնաս են տալիս ևս տեսակ հրապարակախոսները, որ թու-
նավորում են ժողովրդի միտքն ու հոգին»:

ԵԼԺ 7, 260-262:

Հունիսի 8 - Տպագրվում է Հ. Տեր-Միրաքյանի «Ազգային
պաշտպանություն» հոդվածը:

Թումանյանի «Գրականությանը ազգային պաշտպանություն
պետք է լինի» հոդվածի արձագանքներից է:

Մասնավորապես գրում է. «Նշաններից երևում է, որ պատե-
րագմից հետո պետք է ավելի հարգվի պետական կազմի մեջ մտնող
զանազան ազգությունների մշակույթը, հետևաբար, թերևս ավելի
լավ օրեր բացվին նրա համար: Մինչ այդ մեր միջնակարգ դպրոց-
ների աշակերտությունը իր կողմից կարող է պետական դպրոցների
հայ աշակերտների հետ միանալով, հայրենակցական շրջաններ
կազմել և նույնը շարունակել ուսանողական կյանքում, ինչպես որ
զանազան ժամանակներում նմանօրինակ պարապմունքներ այդ
շրջաններում երբեմն տեղի են ունեցել: Ամսական մի ռեֆերատով
պարապիլը մեծ ժամանակ չի խլիլ հարցասեր աշակերտներից և
ուսանողներից: Այսպիսով հետզհետե կընդարձակեինք գիտակից
ընթերցողների շրջանը և կապահովեինք գրականության գոյությու-
նը: Մինչ այդ՝ մենք հարկադրված պետք է լինինք, ինչպես որ պ. Հ.
Թումանյանն է առաջարկում, դիմել հասարակական հիմնարկու-
թյունների ժամանակավոր օժանդակությանը, մինչև որ հայ գրողի
արտադրությունը և նրա կյանքը նյութապես չապահովվի, հայ գրա-
կանությունը պատահականության դատապարտված կլինի»:

«Հորիզոն», 1916, թիվ 126:

Հունիսի 9 - Տպագրվում է Ա. Շախաբունյանի «Հարցում
«Սախալխո-Փուրցելի»-ին և «Թանամեդրովե Ազրի»-ին» վերնա-
գրով ռեպլիկը:

Հիշեցնում է. «Բանաստեղծ Թումանյանը չկարողացավ լռել և
իր զարմանքը հայտնեց «Սամշոբլո»-ի տխրահռչակ հաղորդագրու-
թյան մասին...» (տե՛ս հունիսի 8):

Ինքն էլ իր հերթին է զարմանք հայտնում, թե ինչու այդ հայտ-
նի վրացական թերթերը լռում են և որևէ կերպ չեն արձագանքում
հայ բանաստեղծի դառնացած հոգու արդար վրդովմունքին:

«Հորիզոն», 1916, թիվ 127:

Հունիսի 11 - Հ. Տեր-Դավթյանի պաշտոնական գրությունը թումանյանին՝ Թիֆլիսից.

«Վարչությունս պատիվ ունի հայտնելու Ձեզ, որ ամսի 29-ին կայացած ընկերության ընդհանուր ժողովը միաձայն ընտրեց Ձեզ Թիֆլիսի Հայոց երաժշտական ընկերության *պատվավոր անդամ*:

Վարչությունս հուսով է՝ չեք մերժի հարգել ընկերության ընտրությունը:

Պատվավոր անդամության վկայագիրը պատիվ կունենանք ներկայացնելու Ձեզ մոտ ապագայում:

Նախագահ՝ Հ. Տեր-Դավթյան

ի, տ. քարտուղարի՝ Դ. Ղազարյան»:

ԳԱԹ ԹՖ, 2201 (192 III ց.):

Հունիսի 12 - Տպագրվում է հոդված՝ «Верный курс хлеба» վերնագրով և И. Можак ստորագրությամբ:

Թումանյանի «Մի երկու խորհուրդ Բարեգործական խորհրդրդին» (տե՛ս մայիսի 22) հոդվածի արձագանքներից է:

Հոդվածագիրը համաձայն է բանաստեղծի հետ, որ տարրական դպրոցները անհրաժեշտ ու կայուն գիտելիքներ չեն տալիս. ավագ դպրոց են մտնում տարրականում սովորածը իսպառ մոռացած: Դպրոցն առհասարակ շրջանավարտին հիմք չի տալիս կյանքում իր տեղը գտնելու, մի կտոր հաց վաստակելու համար: Բայց համաձայն չէ բանաստեղծի այն մտքին, թե հանրակրթական առարկաների հաշվին պետք է մեծացնել արհեստների ուսուցումը: Ընդհակառակը, այն կարծիքին է, որ ժողովրդական դպրոցների հանրակրթական ծրագրերը ավելի պետք է ընդարձակել ու խորացնել, իսկ արհեստագործական ուսումնարաններ պետք է մտնեն միայն հանրակրթական դպրոցներն ավարտելուց հետո:

«Кавказское слово», Թիֆլիս, 1916, թիվ 161:

Հունիսի 14 - Սուրեն Ազնաուրյան ստորագրությամբ դիմում թումանյանին՝ Թիֆլիսից (տե՛ս նաև հունիսի 1).

«Մեծարգո պ. Հովհ. Թումանյան,

Ավարտած լինելով Վանի միջնակարգ եռամյա դպրոցը, իմ բուռն ցանկությունն էր հետևիլ Ձեր աշնան բանալիք գրական դասընթացներուն: Դիմելով Ձեզ, կխնդրեի, որ ի նկատի առնեիք ինձ ևս:

Հարգանքք Ս. Մ. Ազնաուրյան»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, թիվ 112:

Հունիսի կեսեր - Նամակ Դսեղ՝ Վահան Թումանյանին՝ Թիֆլիսից:

Եղել է Վաչնաձեի մոտ, Վահանը շուտ պետք է գա, «շատ է հարկավոր»:* Ինքը մի քիչ տկար է: Համլիկը եկել ու գնացել է: Արշավիրը կմնա: Տնեցիները լավ են: Հարցնում է նանից: Բարևներ «նանին ու հարսներին»:

*) Խոսքը բանակում ծառայող Վահանի արձակուրդը երկարացնելու մասին է:
ԵԼԺ 10, 241, 616:

Հունիսի 17 - Թիֆլիսի Հայոց թեմի առաջնորդի անունից գրություն ՀԳԿԸ վարչությանը.

«Ամսիս 22-ն, կիրակի օրը ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճում է այցելել Տփլիս քաղաքը:

Նորին Սրբության ընդունելության համար խնդրում են հաճել ընկերությանդ վարչության երկու ներկայացուցիչ ուղարկել Առաջնորդարան (ամսիս 18-ին, երեկոյան ժամը 8-ին) խորհրդակցելու և կազմակերպելու Նորին Սրբության ընդունելությունը»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 108/4:

Հունիսի 18 - Օլգա Թումանյանի նամակը Վան՝ Արտավազդ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Ընտանեկան տեղեկություններ է հաղորդում: Փողի կարիք ունեն: Թումանյանի մասին գրում է. «Հայրիկը վեց հատ ոսկի ատամ չի՛նել տվեց և գիտե՞ս ինչ արժե՝ 265 ռ., էնպես որ ահագին ծախսի տակ ընկավ»:

ԹԶ ԱՐՏ, 179-186:

Հունիսի 19 - Սկսում է տպագրել («Հորիզոն», 1916, թիվ 135*) «Ազգային պաշտպանության խնդիրը և Ղ. Աղայանը» հոդվածը:

Գրված է Աղայանի մահվան 5-րդ տարելիցի առիթով: Հիշում և ընդարձակ քաղվածքներ է անում նրա մի հոդվածից,** որի ձեռագիրը, հույս չունենալով տպագրելու, հեղինակը ժամանակին հանձնել էր իրեն: Հոդվածում Աղայանը անցկացնում է բազմիցս կրկնված այն միտքը, թե ազգը զարգացած գրականություն, գիտություն, մշակույթ չի կարող ունենալ, քանի դեռ այդ բնագավառներով զբաղվող մտավորականը չունի նյութական ապահովություն, զրկված է ազգային պաշտպանությունից: Բերում է սեփական օրինակը, թե ինչ-

պես իր բազմաթիվ գեղեցիկ ստեղծագործական ծրագրեր մնացել են չիրականացված, քանի որ ինքը միշտ նյութական կարիքի մեջ է եղել: Թուճանյանն ավելացնում է. «Եվ էսպես՝ Աղայանն էլ եղավ մեր *խանգարված* գրողներից մինը: Շատ քիչ բացառությամբ՝ նրա գրվածքներն էլ ունեն ոտի վրա աշխատողի, աշխատակից գրողի գործի բոլոր նշանները»:

Բացառություն է համարում միայն Սունդուկյանին, որ ապահովված լինելով՝ կարողացել է ամբողջովին նվիրվել իր սիրած գործին: Եվ շարունակում է. «Եվ նշանակելին ո՞րն է: Էն, որ Սունդուկյանը կյանքում էլ մնաց առանձին, երբեք չեղավ հայ գրողների հետ ու նրանց շրջանում ոչ մի ընկեր չունեցավ: Ամեն անգամ, երբ էս կամ էն առիթով հայ գրողների ցանկը կազմում էինք, միշտ մոռանում էինք Սունդուկյանին, միշտ վերջն էինք հիշում ու վերևը գրում»:

Թուճանյանի կարծիքով սխալվում են նրանք, որ կարծում են, թե հայ գրողը կարող է իր գրվածքները վաճառելով իրեն ապահովել. «Դա ցավին կօգնի միայն մասամբ: Եվ ավելի շատ կնպաստի շատ գրելու գործին, բայց գրականությունը քանակով չի գրականություն, այլ որակով, և գրողը նրանով չի նշանավոր, թե ինչքան է գրում, այլ թե ինչ բան է գրում: Լավագույն գրողներից շատերի գրական գործերը, եթե հավաքենք թեկուզ իր գործունեության վերջին շրջանում և տպագրենք ու վաճառենք, դարձյալ նրանց համար ապրուստ չեն դառնալ, մանավանդ փոքրիկ ժողովուրդների մեջ՝ էն գրական գործերը, որ ապագայում շատերի համար են ապրուստ դառնալու և իրենց ազգերի համար էլ հոգևորական կյանք ու հարստություն: Եվ իմաստուն ու հասուն ազգերը, իրենց ունեցած տաղանդների վրա ինչքան էլ առատ-առատ ծախսեն, լավ են իմանում, որ, այնուամենայնիվ, շատ էժան գնով շատ թանկ բան են ձեռք բերում»:

*) Շարունակությունը՝ թիվ 136:

*) Խոսքը Աղայանի «Տարրական ճշմարտություններ» հոդվածի մասին է:

ԵԼԺ 7, 262-269:

Յունիսի 23 - Նամակ Վան՝ Արտավազդ Թուճանյանին՝ Թիֆլիսից:

Ուրախ է, որ որդու գործերը հաջող են, ունի սիրողների, համակրողների, բարեկամների շրջապատ: Իրենք մտադիր են բոլորով գնալ Բորժոմ: Վահանի արձակուրդը երեք ամսով երկարացրել են: Մուշեղը մտադիր է մտնել ռազմաբժշկական ֆակուլտետ: Արտա-

շեսի գործերն էլ լավ են: Տեղեկություններ է հաղորդում ընտանեկան առօրյայից: Իրենց այցելել են Ռոմանոս Մելիքյանը, Գորոդեցկին: Ունեն ռուս ծանոթների նոր շրջան. «Այժմ նրանք շատ են հետաքրքրվում մեզանով»: Ժողովածուները* հենց ստացվեցին, կուղարկի: Պատվիրել է, որ շարունակեն «Հորիզոնն» էլ ուղարկել:

*) Խոսքը «Поэзия Армении» և «Сборник Армянской литературы» ժողովածուների մասին է:

ԵԼԺ 10. 241-242:

<Հունիսի 23> - Նամակ Դսեղ՝ Վահան Թումանյանին՝ Թիֆլիսից:

Ուրախացել են, որ եղբոր արձակուրդի գործը գլուխ է եկել (տե՛ս նախորդ նամակը): Նրան խորհուրդ է տալիս. «Դու քեզ լավ ու հանգիստ պահիր: Զգույշ կաց վատ մարդկանցից ու վատություններից»:

Իրենք գնում են Բորժոմ: Համլիկը մնում է. «մի քիչ քեֆը լավ չի»: Արշավորի գործը լավ է: Մուշեղը «մտնում է վոեմնի բժշկական մասը»: Արտիկն էլ լավ է: Եղբորն էլ է կանչում Բորժոմ. «Լավ կանես, որ մի ժամանակ գտնես – մի քիչ եղ ու պանիր առնես հետդ - գաս Բորժոմ մի երկու օրով»:

ԵԼԺ 10, 243:

Հունիսի 30 - Տպագրվում է Վ. Մենակի «Մի հողվածի առիթով» խորագրով հողվածը:

Խոսքը Պ. Մակինցյանի «Գրական մանրուքներ» խորագրով նոր հողվածի (տե՛ս մայիսի 29) մասին է՝ գրված «Հայրենիքիս հետ» ժողովածուի առիթով:

Մակինցյանի քննադատական պահվածքը Թումանյանի ժողովածուի հանդեպ զարմացրել ու վրդովեցրել է հողվածի հեղինակին. «Մինչև այժմ պ. Մակինցյանը, որքան մենք առիթ ենք ունեցել կարդալու, միշտ խուսկ է ծիսել Հովի. Թումանյանի առաջ, իսկ այսօր հանկարծ իր այդ հողվածում շատ դժգոհ է իր սիրած բանաստեղծից:

Ի՞նչն է պատճառը, ի՞նչ է պատահել:

Պատահել է այն, որ իր ստեղծագործության մեջ ազատ բանաստեղծ Հովի. Թումանյանը թույլ է տվել իրեն՝ երգել իր հայրենիքը:

Իր բանաստեղծությունների մեջ «Մշակ»-ի գրախոսին այն-
քան անհաճո բառեր, ինչպիսին են «Հայ հայրենիք», «Հայի վիշտ»,
«Հայ հայդուկ» և այլն գործածելուց հետո Յովհ. Թումանյանը հա-
վաքել է իր հայրենիքին նվիրած բանաստեղծությունները մի գրքույ-
կի մեջ և դրել հրապարակ: Այդ արդեն ներելի չէ մի գեղարվեստա-
գետի համար և պ. Մակինցյանը այդ չի ներում բանաստեղծին»:

Անդրադառնում է հատկապես «Հայրենիքիս հետ» և «Հոգե-
հանգիստ» բանաստեղծությունների վերաբերյալ քննադատի խոս-
տովանությամբ, թե դրանք իր վրա որևէ տպավորություն չեն թողել:
Համարյա ամբողջապես մեջբերելով և ըստ արժանվույն գնահա-
տելով «Հոգեհանգիստը»՝ խոսքն ավարտում է հեզմական հարցով.
«Մենք հավատում ենք, որ «Մշակ»-ի գրախոսի վրա չեն ազդել այդ
տողերը, բայց ինչո՞ւ է պ. Մակինցյանը կարիք զգացել անպատճառ
ցուցադրել զգացվելու իր անընդունակությունը»:

Հոգվածի հեղինակը անարդարացի է համարում Մակինցյանի
դիտողությունները նաև «Հին կռիվը» պոեմի երկու գլուխների վերա-
բերյալ, հատկապես նրա հեզմական տոնը, երբ խոսում է պոեմի
երիտասարդ հերոսների մասին. «Եվ ահա գալիս են այդ «լու-
սաբերները»... «տղերքը»,- գրում է պ. Մակինցյանը: Բայց ափսոս,
որ արևելյան դերվիշի պես պոետը հենց այստեղ էլ ընդհատում է իր
պատմությունը»: Թե չէ «ո՞վ գիտե՞ ինչե՞ր կպատմեր նա տղերան-
ցից,- բացականչում է պ. Մակինցյանը: Այդ նշանակում է, որ պ. Մա-
կինցյանը գիտե, որ Յովհ. Թումանյանը նախօրոք ծրագրել է վատ
բաներ գրել «տղերանց» մասին իր պոեմում և միայն մի դիպված՝
ծեռագրի կորուստը, զրկել է պ. Մակինցյանին Յովհ. Թումանյանի
բերանից «տղերանց» հասցեին վատ բաներ լսելու հաճույքից: Պ.
Մակինցյանը շատ կուզեր, որ Յովհ. Թումանյանը շատ բաներ պատ-
մեր «տղերանց»-ից և հատկապես վատ բաներ, բայց Յովհ. Թուման-
յանը պոեմ է գրում և ոչ թե հոգված «Մշակ»-ի համար, ուստի պ. Մա-
կինցյանի ցանկությունը մնում է անկատար»:

Դրան հակառակ բերելով պոեմի «Օրինյա ի տեր, հայի լեզ-
վով...» սկսվածքով հատվածը՝ ավարտում է խոսքը. ««Ունենք, թո-
ղինք ամենքին».- այսպես են զոհաբերել իրենց գաղափարի համար
կյանքի ամենն թանկ արժեքները և սեփական կյանքը այն «տղեր-
քը», որոնց հակառակորդներն են այսօր պ.պ. Մակինցյանները»:

«Արև», 1916, թիվ 141:

Յուզիսի 30 - Սկսում է տպագրվել Դ. Դեմիրճյանի «Գրականության պաշտպանություն» հոդվածը՝ իբրև արձագանք թումանյանի ««Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածին:

Այդ նշանաբանը, որ ընդունված է լուսավոր ազգերի մեջ, անսովոր է համարում հայ իրականության համար, որտեղ գրականության մշակներին գնահատում են միայն մահից հետո, իսկ կենդանության ժամանակ սովորաբար հալածում են. «Ադամյան, Ռաֆֆի, Աղայան, Թումանյան և այլն հալածանքի պատմություններ ունին: Արծրունին հալածել է այս չորսին էլ. . . Թող Աստված շատ բարի տա Լեոյին, որի գործի որոշ մասը ես դրականապես ընդունում եմ և երանի նրա ամենամեծ թշամին ես լինեմ. բայց ճշմարտությունն այն է, որ նրա գրական քննադատական գրվածքները ժամանակին համարյա հալածանք են եղել հայոց գրականության»:

Ցավում է, որ հայ հեղինակի գնահատականը պետք է գա իյուսիսից.* հայերը գնահատել չգիտեն իրենց ուժերին: Եվ վերջում. «Թումանյանը դնում է գրականության պաշտպանության խնդիրը: Խոսենք ուրեմն գրականությունից: Պետք է պաշտպանել գրականությունը: Բայց ինչպե՞ս»:

Այս հարցին պատասխանում է հոդվածի շարունակության մեջ:

Դեմիրճյանի կարծիքով՝ գրականությանն ամենից առաջ պետք է բարոյական ապահովություն. ամեն պատահական մարդ իրավունք չպիտի ունենա խոսելու գրականության մասին. «Փտած են այն մարդիկ, որ գրաբար մատենագրությունը հայտարարում են փտած և թեթևամիտ են նրանք, ովքեր նորն են համարում թեթևամիտ. արևելահայերը «մենք» չենք և արևմտահայերը «նրանք»: Մեր հեղինակներին կարգերի բաժանել՝ գեղարվեստական-ազգային և տենդենցիոզ-ազգայնական, գերադասելն ու ստորադասելը, նրանց ընդունելն ու չընդունելը մենք պետք է սպասենք երկար տասնամյակների ջանադիր և լուրջ քննադատությունից: Բայց ընդհանուր սկզբունքն այն է, որ նրանց նախևառաջ պետք է լայնորեն պաշտպանենք»: Չի շրջանցում նաև նյութական ապահովությունը՝ մի շարք հիմնավորումներով:

«Թողնելով այլ անգամի այս կարևոր խնդիրներին վերադառնալը,՝ եզրափակում է Դեմիրճյանը,՝ մենք միանում ենք Յուզի. Թումանյանի նշանաբանին՝ «Գրականությանը ազգային պաշտպանություն է պետք»: Այո՛, պաշտպանություն նյութական և բարոյական»:

*) Նկատի ունի Բրյուսովի դասախոսությունները:

«Յորիզոն», 1916, թիվ 144 (շարունակությունը՝ թիվ 145):

Յունիս - Գրում է «Յիմի բացել են հանդես...» քառյակը:
ԵԼԺ 2, 9:

Յունիս - Գրում է «Ետ չեկավ...» քառյակը:
ԵԼԺ 2, 10:

Յունիս - Գրում է «Ուր կորան...» քառյակը:
ԵԼԺ 2, 11:

<Յունիս> - Գրում է «Յանգել են...» քառյակը:
ԵԼԺ 2, 65:

<Յունիս> - Գրում է «Չի գալիս...» քառյակը:
ԵԼԺ 2, 66:

<Յունիս> - Դ. Դեմիրճյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝
Լորուտից:

Յողված է ուղարկել «Յորիզոնին»՝ Միք. Վարանդյանի դեմ և խնդրում է Թումանյանին միջամտել, որ տպագրվի. «Խնդրում եմ մի նեղություն կրես և ուշ դարձնես, որ տպեն: Վարանդյանը հիմի ուզում է ինձ խոսքից ու լրագրից էլ զրկել, կռվեցնել «Յորիզոնի» հետ և բաժանել: Ահա այդ չպետք է թողնել: Ես միշտ ասել եմ և կասեմ, որ գեղարվեստն ու գրականությունն էլ կուսակցություններ են իրենց բարձր նշանաբանով, և հասարակական բանակռվի մեջ պետք է սեղմել շարքերը և պաշտպանել: Դրա համար շատ ափսոս, որ քո հողվածը իր ժամանակին չտպվեց: Եվ վերջապես, երբ լրագրում գրում կամ կարդում ենք գրական խնդիրների մասին, նշանակում է, ինչ էլ որ լինի, լրագրական խոսքն էլ հասարակական նշանակություն ունի, և մենք *կամա-ակամա* զբաղվում ենք դրանով. այլապես՝ աննպատակ ինչո՞ւ ենք գրում կամ կարդում գրական հողվածները լրագրում»:

Ակնարկում է, որ Վարանդյանը «շատ մեթոդաբար փչացրեց կամ ուզում էր փչացնել Բրյուսովի տպավորությունը* և բավական խանգարեց «Գրականության պաշտպանությանը»**»:

Եվ վերջում. «Ոչ հանուն իմ, այլ հանուն մեր Վերնատան, ես սպասում եմ, և շատերն էլ սպասում են քո խոսքին <....>: Պետք է պաշտպանել գրականությունը նեո-լեոներից***»:

*) Վարանդյանը ժամանակին «Հորիզոնում» բարձրացրած աղմուկով փորձել էր խանգարել հայ պոեզիայի մասին Բրյուսովի կարդացած զեկուցման տպավորությունը՝ մի շարք գրողների հասցեին ուղղված աչառու քննադատությամբ (տես ԴԴ ԵԺ, հ. 14, էջ 602):

**) Նկատի ունի Թումանյանի «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածը (տես մայիսի 6): Դեմիրճյանը կարծում էր, թե այդ հոդվածը մնացել է անավարտ և ավստոսանք է հայտնում, որ շարունակությունը չի տպագրվել:

***) Վարանդյանին և նրա մամաններին համեմատում է Լեոյի հետ՝ նկատի ունենալով գրողի ու գրականության նկատմամբ վերջինիս անբարյացակամ վերաբերմունքը:

ԴԴ ԵԺ, XIV, 314-315:

Հուլիսի 2 - Ղարաքիլիսայում հեղինակի բեմադրությամբ ներկայացվում է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան:

Դերերում՝

Անուշ – օր. Սիրանույշ, Սարո – Մինասյան, Մոսի - Դևոյան, մայր՝ – Խանգադյան:

«Համբավաբեր», 1916, թիվ 39:

Հուլիսի 7 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 149) «Պետք է ընդունել» հոդվածը:

Պատերազմից հայ ժողովրդին բաժին հասած աղետների մեջ բանաստեղծը ուշադրություն է հրավիրում մի դառը իրողության վրա. «Բռնաբարության հետևանքով հազարավոր հայ այրի կանայք ու աղջիկներ էսօր կանգնած են մի շատ ծանր դրամայի առաջ՝ ապօրինի երեխաներ են ծնելու, այսինքն մոր ու անվերջ տառապանքներ իրենց համար»: Այդ թշվառների վիճակը թեթևացնելու համար առաջարկում է. «Հայոց եկեղեցին պետք է միջնորդություն հարուցանի պատշաճավոր իշխանության առջև՝ օրինավոր ընդունել տալու նրանց զավակներին և ինքն էլ ընդունի իր մայրական գիրկը: Ինչքան շուտ, էնքան լավ»:

ԵԼԺ 7, 269-270:

Հուլիսի 7 - Արտավազը Թումանյանի նամակը Թիֆլիս՝ Նվարդ Թումանյանին՝ Վանից:

Գրում է իր ծառայողական գործերից, Վանի առօրյայից: Խորհուրդներ է տալիս քրոջը: Նրա դժգոհությանը, թե ձանձրանում է, հետաքրքիր մարդիկ չկան շրջապատում, կիսակատակ պատասխանում է. «Մարդիկ ես ասում! Ահա Իվան Ֆադեյիչը:» Փառք աստծո, դրանից էլ լավ բա՞ն: Ինքդ ես գրում, թե ամբողջ օրը միասին եք լինում, իսկ իրիկունները գրական ասուլիսներ եք սարքում: Դրանից էլ լավ բա՞ն»:

*) Հովհաննես Թումանյանն է:

ԹՁԱՐՏ, 183-185:

Հուլիսի 7 - Եղիշե Տեր-Խաչատրյան ստորագրությամբ դիմում ՀԳԿԸ վարչության նախագահին.

«Մեծ ուրախությամբ լսելով Ձեր հղացած գովելի և միևնույն ժամանակ ցանկալի միտքը, թե հառաջիկա աշնան պիտի կազմակերպեք բանալու գրականության վերաբերյալ կուրսեր, ուստի սրանով կուգամ իմ ցանկությունս հայտնելու, որ հաճիք նախօրոք իմ անունս ալ ցուցակին մեջ անցնելու»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, թիվ 179:

Հուլիսի 8 - Սուրեն Նազանյան ստորագրությամբ նամակ Թիֆլիսի Թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

Ուսուցիչ է տեղի Ս. Փրկչի դպրոցում: ՀԳԿԸ անդամ է: Ուզում է Հայոց հրատարակչական ընկերության հրատարակությունները ստանալ և տարածել Ալեքսանդրապոլում և նրա շրջանում: Պատրաստ է ներկայացնել երաշխավոր անհատ կամ դրամական երաշխավորություն: Խնդրում է նամակը հանձնել Հրատարակչական ընկերությանը:

ԳԱԹ ԹՖ, 1798 (412 լր.):

Հուլիսի 10 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 152) «Մի երկու խոսք սերբ ժողովրդական էպոսի մասին» հոդվածը:

Սկզբում ընդհանուր դիտողություններ է անում սլավոն ժողովուրդների էպոսների մասին. «Եվրոպայում սլավոն ժողովուրդների մեջ ավելի ուշ է զարգացել գրականությունը, եղ պատճառով էլ ավելի երկար ժամանակ նրանց մեջ է կենդանի մնացել ժողովրդական բանահյուսությունը: Սլավոնների մեջ էլ ամենքից լավ պահել ու զարգացրել է իր էպոսը սերբ ժողովուրդը, որ, սլավոնագետների կարծիքով, թեև ենթարկվել է թուրքերի քաղաքական ծանր լծին,

բայց ազատ է մնացել էն երկարատև հասարակական ստրկությունից, որին ենթակա են եղել ռուսն ու լեհացին՝ ճորտատիրական կարգերի պատճառով, որ հազար անգամ ավելի սպանիչ ազդեցություն է արել, քան ամեն քաղաքական լուծ ու ճնշում: Եվ սրանից է, որ ռուսական ազգային էպոսի (былина) մասերն էլ կենդանի են մնացել ավելի երկրի հյուսիսային ծայրերում, ուր ճորտատիրության օրենքը չի հասել»:

Սերբական էպոսի չորս շրջան է առանձնացնում. «1. Հնագույն կամ դիցաբանական երգերը, 2. Կովկասյան դաշտի երգերը, 3. Արքայազուն Մարկոյի երգերը և 4. Նոր ժամանակի երգերը»: Այա համառոտ ներկայացնում է էպոսի պատմական հիմքը և բովանդակության ուրվագիծը: Համեմատաբար հանգամանորեն գրում է գլխավոր հերոսի՝ Մարկոյի մասին, «որ հանդիսանում է սերբ ժողովրդի ազգային նվիրական զգացմունքների ու առաքինությունների մարմնացում, նրանց Սասունցի Դավիթը»:

ԵԼԺ 7, 270-272:

Հուլիսի 10 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 152) սերբական էպոսի մի հատվածի թարգմանությունը՝ «Մարկոն ռամազանին գինի է խմում» վերնագրով և «Սերբական ազգային ժողովրդական էպոսից» նշումով:*

*) Էպոսի այս հատվածում նկարագրվող միջադեպի պատմական հիմքի մասին թարգմանությանը անմիջապես նախորդող հոդվածում թուրքացիները գրում է. «Սերբերը սկզբում թուրքերին հաշտ աչքով էին նայում, նրանցից չէին սպասում էն չարիքները, ինչ որ տեսան հետագայում, դրա համար նրանց ազգային հերոսն էլ, էպոսի մեջ, իբրև էդ մոմենտի ու վերաբերմունքի արտահայտություն, համարվում է սուլթանի հոգեորդին, սուլթանն էլ նրա հոգեհայրը:

Բայց կարճ ժամանակից հետո թուրքերը սկսում են իրենց անտանելի ճնշումները՝ գեղեցիկ կանանց ու տղերանցը հավաքել, սերբերին արգելել զենք կրելը, ձի նստելը, կանաչ զգեստ հագնելը, ծանրաբեռնում են ամեն տեսակ հարկերով ու տուրքերով, զգվեցնում ու զայրացնում են ժողովրդին, և ահա հոգեորդին դուրս է գալիս հոր դեմ»:

ԵԼԺ 7, 184-187:

Հուլիսի 13 - Տպագրվում է «Թուրքահայ բարբառը» վերնագրով առաջարկություն-հոդված՝ Հր. Կարինյան ստորագրությամբ:

Ամիրաթեշտ է համարում 1915 թ. հայկական կոտորածներից հետո Կովկասի տարբեր քաղաքներում փախստական երեխաների

համար բացված դպրոցներն ապահովել արևմտահայերեն դասագրքերով:

Մասնավորապես. «Թուրքահայ բարբառով տպագրված Սեդրոսյանի, Լիսիցյանի և Թումանյանի կազմած «Լուսաբեր»-ներու Դ. տպագրությունը, ինչպես նաև Ռ. Ջարդարյանի «Սեղրագետ»-ներու Բ. տպագրությունը անհրաժեշտ է»:

«Աշխատանք», 1916, թիվ 21, Երևան:

Յուլիսի 17 - Մամուլը հաղորդում է, որ Արմեն Տիգրանյանը Ղարաքիլիսայում առաջին անգամ բեմադրում է «Անուշ» օպերան (տե՛ս հուլիսի 2)՝ ունենալով մեծ հաջողություն:

Անուշի դերում հանդես է եկել օր, Սիրանուշը, Սարո՝ Մինասյան, Մոսի՝ Դևոյան, մայրը՝ Խանգադյան:

«Համբավաբեր», 1916, թիվ 29:

Յուլիսի 17 - Տպագրվում է Ա. Կարինյանի «Ռուսահայ կյանքից և գրականությունից» հոդվածը:

Գրում է կապիտալիզմի զարգացման հետևանքով գյուղի քայքայման, գյուղական «ցեցերի» առաջացման, գյուղացիության կենսապայմանների վատթարացման և այդ ամենը հայ «քաղքենի» գրողների ստեղծագործության մեջ արտացոլման մասին, որ լայնորեն տարածված հայացք էր նոր-նոր ձևավորվող հայ մարքսիստ քննադատների մոտ:

Մասնավորապես. «Չափազանց բնորոշ գծերով այդ բոլորը նկարված է ռուսահայ քաղքենի պոետներից մեկի բանաստեղծության մեջ:

Պարտքատերը գանգատ գնաց,
Քեռիսվեն կրգա, կըծեծի,
Տերտերն օրհնեց, անվարձ մնաց,
Կըբարկանա, կանիծի:
Էն օրն եկան, թովջի արին,
Հարկ են ուզում տերության.
Ի՞նչ տամ կոռն ու բեկյարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան:
Ձեռքս պակաս, ուժս հատած,
Հագար ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Դա նորագույն գյուղացու «Գութանի երգն» է: Երկրագործական ծանր աշխատանքների պահուն երգուն է շինականը իր հուսահատ կյանքի տխուր էջերը, երգուն տառապանքով լի առօրյան և անհույս ապագան:

«Գութանի երգը» գրել է Հովհաննես Թումանյանը՝ անհետացող նահապետական գյուղի այդ տաղանդավոր երկրպագուն:

Սեղմ լեզվով և մեկամաղձոտ շեշտով գծում է նա հայ գյուղի բնահատուկ այն պայմանները, որոնք քշում են շինականներին դեպի արդյունաբերական վայրերը:

Միևնույնը դիտում ենք ամբողջ այն գեղարվեստական գրականության մեջ, որ նվիրվել է ռուսահայ գյուղի նկարագրությանը»:

Նույն հարթության վրա դիտելով Մուրացանի, Ագապյանի, Ադեյանի, Ջավախեցու, Շահնագարյանի, Փափագյանի ստեղծագործությունը՝ եզրակացնում է. «Այդ հեղինակներից ոչ ոք չի նկատում գյուղական իրականության մեջ որևէ առաջամարտ մի տարր... »:

«Պայքար», 1916, թիվ 29:

Հուլիսի 19 - Անդրանիկ Օզանյանի նամակը Բորժոմ՝ Թումանյանին՝ Պյատիգորսկից:*

«Սիրելի Հովհաննես,

Ստացա նամակդ.** գրեթե մխիթարական ոչինչ չէիր գրած:

Իմ առողջությունս գրեթե լավ չէ. բժիշկներու տված խորհուրդները կը կատարեն. ցեխի վանճա, էլեկտրական լույսի վանճա... մասսաժ:

Ստադիր եմ այս ամսվա վերջը, օգոստոսի սկիզբը գնալ Թիֆլիս:

Ես ոչ մի տեղից լուր չունիմ. մեր Երվանդը*** գրած էր երկու անգամ: Կը ցավիմ, որ պ. Իսպենդերյանը**** նույնպես հեռացել է: Գրած ես, որ ճառ խոսելու համար խելոք մարդիկ չունենք: Սխալվում ես, միմակ դուն հրավիրե, տես որչափ հավաքվեն գլխիդ սովորական սոխակներ...:

Եթե հայ ազգից էլ պակսի խելոք մարդիկ, ճապոնացի վերցնենք...*****

Պեկզադյաններու***** մոտ չեմ գնացած: Երկու անգամ գացի Ահարոնյանի մոտ. ապրում է: Ինչպե՞ս է քո առողջությունը:

Կը հուսամ, որ շուտով դուն ալ Թիֆլիս կը լինես. կը խոսենք: Ընդունե ջերմ բարևներս: Նույնպես հայտնիր ձեր տնեցիներուն հարգանքներս:

Կիկային բարևներս. Պեպեքին համբուրեք ու հարցուցեք. «դե հար, դե սար...»:*****

Անդրանիկ»:

*) Բնագրում Պերկանսկ:

**) Թումանյանի այդ նամակն անհայտ է:

***) Անդրանիկի քրոջորդին և թիկնապահը:

****) Հասարակական գործիչ Հովհաննես Սպենդիարյանն է, Հայոց ազգային բյուրոյի անդամներից, որ այդ օրերին հեռացել էր:

*****) Երգիծում է Ազգային բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանին, որ բյուրոյի նիստերից մեկում կարծիք էր հայտնել, թե Հայկական հարցի վերջնական լուծման համար կարելի է դիմել ճապոնիային:

*****) Նկատի ունի Հեղինե Մելիք-Հայկազյանին և Տիգրան Բեկզադյանին:

*****) Կիկան Պերկանսկին է՝ Թումանյանի դստեր՝ Աշխենի ամուսինը: Պեպեկը նրանց որդին է՝ երկու տարեկան Հովիկը:

ԳԱԹ ԹՖ, 888(499):

Հուլիսի 21 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 160) «Արևելքի նոր դարագլուխը» հոդվածը:

Գրում է, որ «Արևելքն ու Արևմուտքը լոկ աշխարհագրական տերմիններ չեն, այլև տարբեր քաղաքակրթություններ ու աշխարհայացքներ»: Համաշխարհային մշակույթի պատմության մեջ այս երկու քաղաքակրթություններն ու աշխարհայացքները մշտապես ունեցել են իրենց ներկայացուցչությունը և պահպանել են հավասարակշռությունը մինչև այն պահը, երբ «Արևելքը արաբական գերիշխանությունից հետո ընկնում է թուրքերի գերիշխանության տակ և XIV դարից սկսած Թուրքիան հանդիսանում է Արևելքի ներկայացուցչությունը Արևմուտքի հանդեպ մինչև էսօր: <....> Մինչև թուրքական գերիշխանությունը Արևելքը, որ կրոններ էր տվել աշխարհին, փիլիսոփայական սիստեմներ, շատ մեծ բանաստեղծներ ու գիտություններ, մեծ էլ հարգ ու հմայք ուներ և միշտ կենդանի ապրում էր ավանդական խոսքը, թե՛ Արևելքից է լույսը: Թուրքական գերիշխանությունից հետո Արևելքը և խավարն ու բարբարոսությունը դարձան հոմանիշ հասկացողություններ»:

Նա ոչ միայն ինքը ոչինչ չստեղծեց, այլև «մորթեց Արևելքի կուլտուրական ժողովուրդներին, խորտակեց նրանց հին ու փառավոր կուլտուրաները և, վերջին մահացու հարվածը տալով բյուզան-

դական պալեոլոգներին, էդ սպանիչ սուրը մեկնեց Եվրոպայի սիրտը»:

Չորս հարյուր տարվա պայքար պահանջվեց Եվրոպայից, որ կասեցնի նրա ավերիչ առաջխաղացումը: Բանաստեղծը համոզված է, որ այդ ավերիչ ուժին վերջին հարված հասցնելու է Ռուսաստանը. «Մեծ է Ռուսաստանի էս ծառայությունը քաղաքակիրթ աշխարհի առաջ և երբեք նրա կառավարության հոռի կողմերը չպետք է արգելեն տեսնելու էս մեծ գործը, որի հաջող ավարտումը համաշխարհային տոն է քաղաքակրթության համար»: Թումանյանը դեռ հավատում է, «թե Մեծ Հայաստանը վերջնականապես մաքրված է թուրքական տիրապետությունից». «Բացվում են Արևելքի ոսկի դռները՝ ազատ ժողովուրդների, լուսավորության ու քաղաքակրթության համար և սկսվում է մի նոր դարագլուխ Արևելքի պատմության համար»:

ԵԺ 7, 272-275:

Հուլիսի 21 - Տպագրվում է Լեոյի «Պառավական բամբասանք» հոդվածը՝ ի պատասխան Դ. Դեմիրճյանի «Գրականության պաշտպանություն» հոդվածի (տե՛ս հունիսի 30):

Լեոն «բամբասանք» է համարում Դեմիրճյանի՝ իր հասցեին ուղղած մեղադրանքը, թե հալածել է հայ գրողներին: Փորձում է փաստերով հերքել դա:

Մասնավորապես Թումանյանի վերաբերյալ գրում է. «Արծրունին չէ հալածել բանաստեղծ Թումանյանին: Երբ Արծրունին մեռավ, Թումանյանը դեռ նոր էր հայտնի դառնում իբրև բանաստեղծ: Ճիշտ է, Արծրունին ֆելիետոնի մեջ անողորմ կերպով ծաղրել է Թումանյանի մի անհաջող ոտանավորը, բայց համարել այս բանը հալածանք կարող են միայն չափազանց մեծամիտ մարդիկ»:

Ինչ վերաբերում է իր «Ռուսահայ գրականությունը» աշխատության մեջ Թումանյանի մասին հայտնած կարծիքներին, դրանք համարում է իր սկզբունքների ու համոզմունքների արտահայտություն:

«Հորիզոն», 1916, թիվ 160:

Հուլիսի 23 - Գյուտ Աղանյանի դիմում-բողոքը ՀԳԿԸ վարչությանը:

Տեղեկացնում է. «Պ. Լեոն Երևանի ու Ղարաբաղի Հայոց թեմական դպրոցների պատմության երկու հատորները գրելիս հանել է նույն դպրոցների արխիվներից բազմաթիվ դոկումենտներ, բավա-

կան ձևափոխությունների ենթարկել նրանց ու հանձնել տպելու Յ. Աղանյան տպարանին:

Ես, որպես այդ գրքերը սրբագրող, միջոցներ եմ գործ դրել իր ժամանակին դոկումենտները տեղ հասցնելու, բայց չի հաջողվել և բոլորը խնամքով պահել եմ ինձ մոտ այն դրության մեջ, ինչպես որ նա հանձնել է տպարանին»:

Հիշեցնում է. «Վարչությանդ ծանոթ է արդեն այդ մասին մամուլի մեջ հարուցված վեճը:՝* Լեոն վստահություն ունեցավ, իր կատարած հանցանքը ծածկելու համար, զրպարտել ինձ, որպես թե ես դոկումենտները իրեն չեմ վերադարձնում և այլն»:**

Խնդրում է վարչությանը՝ «հանձն առնել այդ դատը, որին և պարտավորվում եմ ներկայացնել թե բոլոր դոկումենտները, թե իմ վկաները և թե ամեն տեսակ կարևոր ցուցումներ տալ և որի վճիռը համարում եմ ինձ համար պարտավորական»:

Վերջում. «Առաջին հրավերից Լեոն խույս տվեց հրապարակով, որից հետո ես այսօր ստիպված եղա հրատարակել «Հորիզոնի» մեջ, որ մեր դատը, որպես վերաբերող գրողների և դոկումենտների, հանձնում եմ Հայ Գրողների Կովկասյան ընկերության և Հայոց Պատմական-Հնագիտական ընկերության վարչություններին»:

*) Տե՛ս «Հորիզոն», 1916. թիվ 132, 135, 137, 146:

**) Փաստաթղթերը դպրոցների արխիվներից հետ էին պահանջում, բայց Գյուտ Աղանյանը մեղադրում էր Լեոյին, թե նա աշխատությունը գրելուց հետո փաստաթղթերը, անպետք համարելով, նետել է զամբյուղ: Լեոն էլ մեղադրում էր հրատարակիչ Աղանյանին, թե նա է գիրքը տպագրելուց հետո փաստաթղթերը ոչնչացրել:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, թիվ 114:

Հուլիսի 24 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 163) «Մարկոն վերացնում է պսակի հարկը» թարգմանական հատվածը՝ «Սերբական ազգային էպոսից» նշումով:

ԵԼԺ 4, 188-194:

Հուլիսի 25 - Հայաստան Գևորգյանց ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ալեքսանդրապոլից:

Գրում է. «Ցանկանում եմ աշունը լսել Ձեր դասընթացն (տե՛ս ապրիլի 22, հունիսի 3) հայերեն սովորելու և լուրջ կերպով ծանոթանալու հայ գրականության հետ: Վերջացրել եմ գիմնազիան և 1 տարի պաշտոնավարել եմ պետական դպրոցում»:

ԳԱԹ ԹՖ, 1112 (590):

Չուլիսի 26 - Ավետիս Դուրբանյան ստորագրությամբ բացիկ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ախալցխայից:

«Լրագրից տեղեկացա, որ Չայ գրողների կովկասյան ընկերությունը մտադրվում է առաջիկա աշունքին բաց անելու հայոց գրականության դասընթացներ: Դժբախտաբար հայտարարության մեջ չէ պարզաբանված, թե ի՞նչ *նպատակի* են ծառայելու վերոհիշյալ դասընթացները և կամ ի՞նչ պետք է *անցնեն* այդ դասընթացների ժամանակ: Խնդրում եմ բարի լինեք պատասխանելու ինձ՝ վերջում տրված երկու հարցերին»:

ԳԱԹ ԹՖ, 1579 (500/2):

Չուլիսի 28 - Երվանդ Միրզայանց ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ասխաբադից:

Կարդացել է Չայ գրողների ընկերության հայտարարությունը (տե՛ս հունիսի 5)՝ աշնանը կազմակերպվելիք գրականության դասընթացների մասին: Ուզում է անդամագրվել. «Ատրպատականի թեմական դպրոցի սաներից մեկն էի ես, ուսումս կիսատ եմ թողել Ատրպատականի գաղթի և դպրոցի փակման պատճառով և որովհետև սեպտեմբերին պիտի գամ Թիֆլիս, ուստի խնդրում եմ ինձ ևս անդամագրել աշակերտների ցանկում»:

ԳԱԹ ԹՖ, 1755 (904):

Չուլիսի 31, Բորժոմ - Ստանում է Գյուլտ Աղանյանի դիմում-բողոքը (տե՛ս հուլիսի 23):

ԳԱԹ ՉԳԿԸՖ, թիվ 114:

Օգոստոսի 1 - Նամակ Թիֆլիս՝ Ջապել Եսայանին՝ Բորժոմից:

Ցավում է, որ հասցեատերը չի կարողացել գալ Բորժոմ, ինչպես պայմանավորվել էին նախապես*:

Իր հոգեկան ու ֆիզիկական վիճակի մասին գրում է. «Պետք է խոստովանեմ, որ էստեղ նոր եմ զգում, թե ինչքան եմ ջարդված ու հոգնած թե ֆիզիկապես և թե բարոյապես: Եվ մի ծանր թախիծ ճնշում է սիրտս շարունակ: Շատ բան է խորտակվել ինձ համար աշխարհքում, և աշխարհքը շատ ցավերով է լցված արդեն: Շատ բան կա, որ էլ չեմ սիրում, և բաներ էլ կան, որ սիրում եմ, բայց տեսնել չեմ կարող: Օրինակ, էն օրվանից հետո, որ տեսա մորս՝ սպանված եղբորս** դիակի վրա, և մյուս սպանված եղբորս (սպային)*** էլ

թաքցրինք, որ նա չիմանա, այլևս չեմ կարողանում տեսնել նրան – իմ մորը»:

Էջմիածնում գաղթականների ու որբերի «դժբախտության ու թշվառության ահռելիությանը» վկա լինելուց հետո այլևս չի կարողանում տեսնել «գաղթականներին առհասարակ, բայց մանավանդ նրանց – որբերին»։ «Տեսնելու համար հսկայական ուժ է հարկավոր, իսկ ես <....> շատ եմ ջարդված, հոգնած ու տկար»:

Գրում է գրականությանը ազգային պաշտպանությունն ապահովելու իր նախաձեռնությունների մասին (տե՛ս մայիսի 6, հունիսի 3): Ոգևորված է այդ գաղափարով: Մտահոգություն է հայտնում, որ ռուսական բանակը նահանջում է և «մեր թշվառ ժողովրդի մնացորդները տակավին մնում են հրոսակախմբերի ու բանակների ոտի տակ: <....> Աշխարհքը պետք է նորոգվի: Եսպես՝ անկարելի է»:

*) Զ. Եսայանը հիշում է. «Ցրտառության մը հետևանքով թոքերուս մեջ արթնացեր էր վաղեմի հիվանդությունս և ինձ մատներ էր գրեթե անզորության: Այդ ինձ համար բախտորոշ օրերուն Հոլի. Թումանյանն ինձ հետ վարվեցավ հարազատ եղբոր հոգածությամբ: Ինքը անձամբ բժիշկ բերավ, հակառակ որ ես բժիշկ ունեի, և հսկեց, որ կետ առ կետ կատարվեին պատվերները: Ինքը ամառվան ամիսները պիտի անցներ Բորժոմ, ինձ հետ պայմանավորվեցավ, որ այնտեղ հասնելէ հետո սենյակ մը կը վարձե ինձ համար և ինձ կը հեռագրե: Այդ բոլոր տաղտկալի գործերը անկկա կատարեց և ինձ հեռագրեց: Բայց ես արդեն գացեր էի Կոջոր բժշկի պատվերով և հեռագրեցի Թումանյանին, ինչպես և երկարորեն գրեցի այն պատճառները, որ ինձ կը հարկադրեին հրաժարվելու Բորժոմ երթալու և իր ընկերակցության մեջ անցկացնելու ամառվան ամիսները» (ԹԺՀ, 166):

**) Խոսքը Ռոստոմ եղբոր մասին է:

***) Փոքր եղբայրը՝ Արտաշեսը, զոհվել էր ռազմաճակատում (տե՛ս մարտի 2):

ԵԼԺ 10, 244-246:

Օգոստոսի 1 - «Շուշվա հայ աշակերտական միության» վարչության նամակը՝ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Շուշիից:

Ընկերության «աղքատիկ» գրադարանի համար բանաստեղծից «ձրիաբար» մի-մի օրինակ են խնդրում նրա «աշխատություններից»՝ ճանապարհածախսի վճարման երաշխավորմամբ:

Ստորագրել են՝ նախագահ՝ Լևոն Վարդապետյան,

քարտուղար՝ Հ. Տեր-Սարգսյան:

ԳԱԹ ԹՖ, 1912 (194 III g.):

<Օգոստոսի սկիզբ>, * Բորժոմ - Նամակ Գյուլտ Աղանյանին:

Պատասխանում է հասցեատիրոջ դիմումին (տե՛ս հուլիսի 23): Հայտնում է, որ այդ վեճը վարչության քննարկման առարկա կդարձնի միայն այն դեպքում, եթե երկու կողմն էլ մասնավոր կարգով կամ հրապարակավ գրավոր համաձայնություն տան և հստակ ձևակերպեն իրենց վեճի էությունը:

*) ԵԼԺ 10-ում նամակը քվազված է հուլիսի 24, 25: Բայց Աղանյանի դիմումի վրա Թումանյանի ձեռքով գրված է. «Վարչությունը ստացել է 31 հուլիս, Բորժոմ»: Հետևաբար պատասխանը հատորում նշած ժամանակ չէր կարող գրված լինել:

ԵԼԺ 10, 244:

<Օգոստոսի սկիզբ> - Մոսկվայում լույս է տեսնում «Поэзия Арменуса» ժողովածուն՝ Վալերի Բրյուսովի խմբագրությամբ, ծանոթագրություններով և ծավալուն առաջաբանով:

Առաջաբանի հիմնական դրույթները արդեն ձևակերպվել էին կովկասյան դասախոսությունների ժամանակ: Անդրադառնալով նոր շրջանի հայոց բանաստեղծության արժեքներին՝ Բրյուսովն առանձին սիրով է խոսում Հովհաննիսյան – Թումանյան - Իսահակյան եռաստեղծության մասին, որոնց անվան հետ է կապված հազարամյա ազգային ավանդույթների վերածնունդն ու զարգացումը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին:

Մասնավորապես Թումանյանի մասին գրում է. «Ованес Туманян (род. в 1869 г.) представляет сравнительно с Иоаннисяном тип поэта более страстного, более непосредственного. Уроженец горного Лори, во многих отношениях автодидакт, человек огромной, но не систематической начитанности, влюбленный в армянскую старину и близкий духом ко всему укладу народной жизни, Туманян как бы олицетворял собою тип южанина, в котором причудливо сочетаются два начала: кейф и гений. Ныне уже почти «патриарх» новой поэзии, так как уже успело вырасти новое поколение поэтов, принесших с собой новые идеалы, Туманян является центром всей армянской литературной жизни в Тифлисе. Популярность Туманяна, как поэта, огромна и особенно растет благодаря тому, что им написано много детских книжек, - сказок, легенд, рассказов, большей частью в стихах, - которые с жадностью читаются детьми. Таким образом, подрастающее поколение учится любить слово и поэзию по страницам Туманяна, и через его стихи впитывает в себя любовь к родному языку».

Բրյուսովը համաձայն չէ այն կարծիքին, թե Թումանյանի պոեզիան գեղագիտական թրծման ճանապարհ չի անցնում: Իբրև օրինակ՝ հիշում է բանաստեղծի պոեմները, որոնցում նրա տաղանդը դրսևորվում է բացառիկ ուժով. «Наибольшей силы поэзия Туманяна достигает в лирических поэмах, где сказывается всестороннее знание народной жизни и живое проникновение в глубь народного духа. Для читателей другого народа знакомство с поэмами Туманяна (например, с его «Ануш») дает больше в познании современной Армении у ее жизни, чем могут дать тольстые томы специальных исследователей. Поэт, в резких и ярких чертах, воссоздает быт родного народа, но делает это как художник, вызывая к жизни незабывающиеся образы, не столько индивидуализированные, сколько типические».

Ամփոփելով իր միտքը Թումանյանի մասին՝ Բրյուսովը շարունակում է. «В целом, поэзия Туманяна есть сама Армения, древняя и новая, воскрешенная и запечатленная в стихах большим мастером. В детских сказках Туманян дал образцы наивной безыскусственности и светлого юмора понятного и близкого детям. Наконец, сделано Туманяном и несколько стихотворных переводов с русского (отрывок из былины, баллады Пушкина и т. п.), в которых пленяет изумительное проникновение в дух оригинала, способность угадать самую сущность переводимого произведения».

«Поэзия Армении с древнейших времен до наших дней», Москва, Изд. Московского Армянского Ком, 1916, ст. 77-79.

Օգոստոսի 7 - Ցուլակ Խանգադյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին Բաքվից:

Մասնավորապես գրում է. «Ձեր բանաստեղծությունների Բաքվում հրատարակված ժողովածուի վրա կա 1887 թիվը: Ճիշտ է, որ Ձեր գրական գործունեությունը սկսվում է հենց այդ տարին, և եթե այդպես է. ո՞ր ամսում և ի՞նչ թերթում է եղել տպված Ձեր առաջին բանաստեղծությունը (գրական գործունեության սկիզբը առաջին տպագրված երկից պետք է հաշվել, չէ՞»:

Խնդրում եմ որոշ պատասխան տաք,- խիստ անհրաժեշտ է»:

Խնդրում է աշխատակցել իրենց հանդեսին*:

*) Խոսքը Բաքվի «Գործ» ամսագրի մասին է:

ԳԱԹ ԹՖ, 1364 (55):

Օգոստոսի 10 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝
Յովի. Թումանյանին՝ Իգդիրից:

Գրում է ռուսական զորքերի նահանջի մասին: Ափսոսանքով ու
ցավով է թողնում Վանը. «Ափսոս Վան... Ի՞նչ լավ էր... Իգդիրի պես
տեղում կարելի է զգալ մեծ կոնտրաստը: Եվ Վանը մնաց որպես մի
անմոռանալի հիշողություն դուրեկան և ցանկալի երազի նման:
Մենք կարծում էինք մի քանի օրից կվերադառնանք, բայց... ոչ...
Գուցե մի քանի ամսից էլ չվերադառնանք»:

«Ձերն համբույրներ և բարևներ» է ուղարկում Ս. Գորոդեցկու
կողմից՝ նրա մի ոտանավոր ողջույնի հետ (տե՛ս նաև մայիսի 11).

Шлю сердечный привет,
Крепко целую, желаю
Здоровья и сил. Масис
Тоже кланяется Вам
Седой своей головою.

Ваш Городецкии.

ԹԶ ԱՐՏ, 187-188:

Օգոստոսի 12 - Նամակ Բաքու՝ Ցոլակ Խանգադյանին՝ Բոր-
ժոմից:

Հասցեատիրոջ խնդրանքով (տե՛ս օգոստոսի 7)՝ տեղեկու-
թյուններ է հաղորդում իր առաջին ստեղծագործությունների մասին՝
«Շունն ու Կատուն», «Անբախտ վաճառականները», «Գութանի եր-
գը», «Մարոն», ամենահինը՝ «էն սիրային ոտանավորը իր պատմու-
թյունով հանդերձ», որ գրված է «1881 թե 82 թվականին»* և այլն:
Մասնավորապես «Շունն ու Կատուն» բալլադի մասին գրում է. «Եվ
«Շունն ու Կատուն» եթե իմ առաջին գրքում (Մոսկվայի) չկա՝ պատ-
ճառը հանգուցյալ Արասխանյանի զարմանքն է, որ նա հայտնեց ինձ
1889 թվականին, երբ տարա մոր «Մուրճուն» տպագրելու: Կարդաց,
շատ զարմացավ և հարցրեց, թե՛ ասացեք խնդրեմ՝ Շուն ու Կատո՛ւ
և բանաստեղծությո՛ւն, սրանք ի՞նչ կապ ունեն իրար հետ, էն էլ էս
տեսակ վայրենի լեզվով...»:

Հետաքրքրվում է, թե ինչի համար են պետք այդ տեղեկու-
թյունները հասցեատիրոջը: Եթե նա մտածում է ինչ-որ հոբելյանի
մասին, ապա ինքը կտրականապես դեմ է, «հանդիսավոր երդում է
արել գրող-ընկերների առջև երբեք հոբելյան չտոնել». «Էդ տեսակ
բանի անուն տալ՝ կնշանակի ինձ շատ ցավեցնել, մի բան, որ գոնե

քեզանից չեն սպասում: Ե՛ն էլ ես տեսակ տարին, երբ առանց է՛ն էլ ամենքս էլ շատ ենք ցաված, իսկ ես անչափ շատ»:

Հանգստավայրում փորձում է պարապել, բայց ոչ բանաստեղծություն գրելով. «Բանաստեղծություն, իհարկե, չեմ գրում և չեմ էլ կարող: Եսքան հոգնած ու հոգնածությունից թունավորված մարդը ի՞նչպես կարող է բանաստեղծություն գրել»: Հոգված է գրում Աճառ-յանի գավառական բառարանի մասին:

Խոստանում է աշխատակցել նորաստեղծ ամսագրին:**

*) «Հոգուս հատոր...» բանաստեղծությունն է:

**) Խոսքը վերաբերում է Բաքվի «Գործ» (1917-1918) ամսագրին:

ԵԼԺ 10, 246-248:

Օգոստոսի 14 - Մխիթար Տեր-Անդրեասյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից:

Գրում է. «Ես դժոխքից կարոտով ողջույն եմ ուղարկում քեզ ու քո «Երկնամերձ» ընտանիքիդ բոլոր անդամներին: Քո գործիդ հա-մար աննպաստ ժամանակ հասա Բաքու, ողբերգական մահով ընկել է ամսույս 5-ին Գուրգեն Վաչյանը (Ավետիսի որդին): Առ այժմ հե-տաձգում եմ խոստացածս բանակցությունը:

Օհանես, հիշո՞ւմ ես, որ ես քեզ ասացի, թե Սայաթ-Նովայի սի-րուհին շատ հաստ կին է եղել, դու, Նվարդը և ուրիշները բողոքեցիք, ես էլ իսկույն չգտա, որ Ձեզ ցույց տամ: Բաքվում գտել եմ, բաց արա՛ «դ» երգը, կարդա՛ 7-րդ տողը.

«Բոյեմեդ չուրս մատն ավելի լցվել է դոշդ ու թիկունքդ» -

Տնա՛շեն, սրանցից հաստ զատ կլինի:

Մխիթար»:

ԳԱԹ ԹՖ, 2171 (1132):

Օգոստոսի 14 - Տպագրվում է «Сборник Армянской Литературы» ժողովածուին նվիրված գրախոսական՝ Շ.*. ստորագրու-թյամբ:

Գրախոսը բարձր է գնահատում ժողովածուին՝ շեշտելով հատ-կապես Մ. Գորկու դերը դրա իրականացման գործում: Թերություն-ներն էլ, գրախոսի կարծիքով, առաջին հերթին կազմողներինն են, մասամբ էլ՝ թարգմանիչներինը:

«Շատ ավելի լավ ընտրություն կարելի էր անել մասնավորա-պես Հովհ. Թումանյանից և Ռ. Պատկանյանից, որոնց բանաստեղ-

ծությունները, բացի այդ, շատ են կորցրել թարգմանությունների մեջ, մանավանդ «Արաքսի արտասուքը»:

Այդ կողմից տուժել են և Սունդուկյանի «Պեպոն» և Յովի. Թումանյանի գողտրիկ պատմվածք «Գիքորը»: Բայց այստեղ չի կարելի մեղադրել թարգմանիչներին, որովհետև անկարելի է նույնիսկ մոտավոր հարազատությամբ թարգմանել Սունդուկյանի կոլորիտավոր «քաղկի լիզուն» և Թումանյանի գրչի տակ այնքան ճկուն ու արտահայտիչ Լոռու բարբառը... »:

Անընդունելի է համարում, որ թարգմանված բանաստեղծների շարքում Յակոբ Յակոբյանը չկա, և այդ կապակցությամբ ավելացնում. «Եթե մեզ հարցնեք, ժողովածուի մեջ բերած բանաստեղծներից իսկական բանաստեղծ կարելի է համարել միայն Յովի. Թումանյանին և Ավ. Իսահակյանին: Իսկ երբ մենք դառնում ենք նրանց, օրինակ, Պուշկինին կամ Յայնեին կարդալուց հետո նրանք էլ շատ փոքրանում են մեր աչքում: Տաղանդավոր Թումանյանը այնքան փոքր է թվում Պուշկինից, որքան հայ ազգը փոքր է ռուս ազգից»:

Եվ եզրակացությունը. «Վերջացնելով մեր խոսքը՝ պետք է ասենք, որ «Յայ գրականության ժողովածուն» լավ մտածված և ընդհանուր առմամբ բավարար կերպով իրագործված ձեռնարկություն է: Նրա խմբագիրներն ու աշխատակիցները մեծ եռանդ ու աշխատանք են թափել այդ ժողովածուի վրա: Բայց չենք կարող միևնույն ժամանակ չավելացնել, որ միջազգայնության մաքուր զգացմունքների ու ձգտումների դրոշակակիր Մաքսիմ Գորկին արժանի էր այդ կողմից ավելի լավ աշխատակիցների»:

*) Ստեփան Շահումյանն է:

«Պայքար», 1916, թիվ 33:

Օգոստոսի 15 - Ցոլակ Խանզադյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին Բաքվից:

Ստացել է բանաստեղծի նամակ-պատասխանը իր հարցմանը (տես օգոստոսի 7, 12):

Տեղեկացնում է, որ ուզում է «հողվածաշար» գրել Ռ. Պատկանյանի մասին: Պիտի ցույց տա, որ նա չէ մեր «ամենամեծ», «լավագույն» բանաստեղծը, ինչպես «իներցիայով» շարունակում են պնդել, այլ Յովի. Թումանյանը: Բացատրում է, թե ինչու է ուզեցել ճշտել, թե որ թվականին է վերաբերում վերջինիս «գրական գործունեության սկզբնավորությունը».* «Նախ, մեր ամբողջ գրականու-

թյան մեջ ամենաճիշտ և խելոք կարծիքը Պատկանյանի մասին Ձերն է - Վեսելովսկուն գրած Ձեր մի քանի տողը այդ մասին պատմական դատավճռի ուժ ունին (թեև արձանի բացման առթիվ Դուք ուղարկել էիք զարմանալի անհաջող ողջույն-ոտանավոր^{**} չնեղանաք, եթե հողվածունս հիշեն և հիշեցնեն Ձեզ), Հովհաննիսյանը միանգամայն համաձայն է Ձեզ:

Երկրորդ, եկող տարի Գամառ-Քաթիպայի մահվան քսանհինգ-ամյակն է և Ձեր գրական գործունեության 30-ամյակը: Սա ինձ համար խորախորհուրդ մի զուգադիպություն է: Թեկուզ այս տարի լինի Ձեր երեսնամյակը,- ոչինչ չի փոխվում դրանով:

Ղալմաղալ անելու միտք չունեն, հորեյլանի որոշ կոչ անելու նպատակ էլ չունեն^{***} բայց որ թոկ զգեք խեղդեք, ես չեմ կարող լռության տալ այն փաստը, որ մեր պոեզիան այժմ Գամառ-Քաթիպային ողորմի տալով ոչ թե սուգ պիտի անի, այլ ցնծա, բյուր ցնծա՝ որովհետև նրա *մեծագույնի, լավագույնի* գործունեությունը բոլորեց 30 տարին:

Եվ ոչ թե ախտվ պիտի հիշատակենք Գամառ-Քաթիպային, այլ մի տեսակ հրճվանքով, որովհետև այս 25 տարվա մեջ կարծես թե դար է անցել մեր պոեզիան»:

*) Թումանյանը հետաքրքրվել էր, թե հասցեատիրոջը ինչի՞ համար են պետք այդ տեղեկությունները (տե՛ս օգոստոսի 12):

**) Նկատի ունի Թումանյանի «Կգան, կանցնեն շատ-շատ ամիս ու տարի...» սկսվածքով քառատողը՝ գրված 1901 թ. սեպտեմբերի 23-ին, Պատկանյանի մահարձանի բացման առթիվ՝ օգտագործելով վերջինիս «Հեռացել եմ իմ հայրենի աշխարհից...» բանաստեղծության մի տունը:

***) Թումանյանը զգուշացրել էր, թե կտրականապես դեմ է հորեյլանին (տե՛ս օգոստոսի 12):

ԳԱԹ ԹՖ, 1365 (56):

Օգոստոսի 17 - Ցոլակ Խանզադյանի նամակ-բացիկը Թիֆլիս՝ Թումանյանին՝ <Բաքվից>:

Ավելի ճշգրտված տեղեկություն է ուզում բանաստեղծի առաջին տպագիր գործի մասին. «Ես ի չարն եմ գործ դնում Ձեր համբերությունը, բայց հարկադրված եմ. երեկ Արամ Առաքելյանն ասաց, որ *Ձեր առաջին գրվածքը* («Արևն ու Լուսինը») *տպվել է 1887 թ.*, այդպե՞ս է. եղ հաշվով «Շունն ու Կատուն» *գրվել է 86-87-ին* (ճիշտը ո՞րն է), իսկ տպվել 1889-ին... Դուք չե՞ք հիշում որտե՞ղ է տպված առաջին անգամ «Շունն ու Կատուն»:

Վերջին անգամ խնդրում եմ այդ մասին միանգամայն ճիշտ տեղեկություն տաք:

Ողջույն մեծ:

Ներեցեք, որ գահլա եմ տանում:

Հարգանքով՝ Ցոլ. Խանգադյան»:

ԳԱԹ ԹՖ, 1366 (57):

Օգոստոսի 21 - Մամուլը տեղեկացնում է.

«Հայ գրողների կովկասյան ընկերությունը մտադրություն ունի առաջիկա աշնանից բաց անել Հայոց գրականության դասընթացներ (տե՛ս մայիսի 27):

Դասընթացները լինելու են երկու սեմեստրով (կիսամյակով) աշնան և գարնան: Շաբաթական երկու օր, երեկոները: Ամսավճարը երկու ռուբլի:

Մինչև առաջիկա սեպտեմբերի 1-ը ցանկացողները իրենց ցանկությունն ու կրթական ցենզը կարող են հայտնել՝

Վարչության նախագահ Յովհ. Թումանյանին,

Вознесенская 18

կամ Գյուտ ա. ք. Աղանյանցին, Полтав. 7:

Վարչություն»:

«Հորիզոն», 1916, թիվ 186:

Օգոստոսի 22 - Տիգրան <Հովհաննիսյանի> նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից:

Եղել է Թիֆլիսում, բայց բանաստեղծին չի տեսել, որովհետև այդ օրը նա արդեն մեկնած է եղել Բորժոմ: Աշնանը կայանալիք դասընթացների (տե՛ս հունիսի 3) մասին խոսել է տիկին Եսայանի հետ. «... Թե քո նամակը, թե տիկնոջ հաղորդածը այնպիսի տպավորություն թողեցին իմ վրա, որ գործը լուրջ կերպով ոչ նախապատրաստված է, ոչ էլ նախապատրաստվելու վրա է: <....> Մենք բոլորս անպայման համակրում ենք ձեր ծրագրին և ողջունում ենք քո նախաձեռնած գործը, բայց որպեսզի լծվենք այդ գործին, պետք է վստահ լինենք, որ տակիցը պարզերես ենք դուրս գալու»:

Դժգոհում է, որ բանաստեղծը իր հոդվածներում* լռություն է պահպանում Հայ գրասերների ընկերության մասին, մինչդեռ Գրողների և Գրասերների ընկերությունները ծառայում են նույն նպատակին. «Թող Հայ գրողների ընկերությունը պաշտպանի Հայ գրակա-

նությունը գլխավորապես բարոյական կողմից, իսկ Հայ գրասերների ընկերությունը՝ գլխավորապես նյութական կողմից»:

Հիշեցնում է Ընկերության խնդրանքը՝ Բաքվում դասախոսություն կարդալու Սայաթ-Նովայի մասին. «Կրկնում եմ մեր առաջարկությունը: Իմ կողմից խորհուրդ կտայի պայմանավորվել Ն. Աղբալյանի հետ և նյութը բաժանելով մի երեկո կարդալ»:

Հավանել է սերբական էպոսից բանաստեղծի կատարած թարգմանությունը. «Տեսնելիս ուզում էի հիացնունքս հայտնել սերբական պոեմայի հրաշալի թարգմանությանդ համար: Ընդունիր հիացնունքիս գրավոր արտահայտությունը»:

*) Նկատի ունի «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածը (տե՛ս մայիսի 6):

ԳԱԹ ԹՖ, 1526 (785ա):

Օգոստոսի 24 - Նամակ Բաքու՝ Ցոլակ Խանգադյանին՝ Բորժոմից:

Տեղեկություն է տալիս «Արև ու Լուսին» բանաստեղծության գրության հանգամանքների մասին. «1887 թվականի ամառը (կարծեմ օգոստոսին) արևի խավարում եղավ, էդ մասին գրեցին, խոսեցին: Հենց էդ օրերում ես «Արևն ու Լուսինը» գրեցի, որ անպայման անհաջող է դուրս եկել»: Բացատրում է, թե Արասխանյանի մերժումից (տե՛ս օգոստոսի 12) հետո ինչու է, այնուամենայնիվ, որոշում տալել «Շունն ու Կատուն». «Նախքան տալելը, որ բերնեբերան ընկավ ընկերներիս շրջանում ու հավանություն գտավ, նրանից հետո տավեց երկրորդ գրքում»:

Չի հիշում Լեոյի որևէ տպագիր գործ, որտեղ, ինչպես ասել է Գր. Բալասանյանը, նա իրեն համարած լինի «մեր բանաստեղծության ամենալավ ներկայացուցիչը». «Ճշմարիտ է, Լեոն վերջին տարիներս, ինչ մոտ էինք իրար, մի քանի անգամ էդ տեսակ բաներ է ասել խոսակցության կամ քեֆի ժամանակ և շատ տարօրինակ պատմություններ է արել, թե ինչպես է եղել, որ ինքը իմ մասին աննպաստ բաներ է գրել ու մինչև անգամ ցույց է տվել մի տետրակ, որ նոր է գրել, իր նոր կարծիքն է, բայց չի տպվել, և տպագրված էդ տեսակ կարծիք ես չեմ տեսել ու չեմ կարդացել»:

Վերահաստատում է իր կարծիքը, թե Գամառ-Քաթիպան «հայոց ազգային մեծ բանաստեղծը չի», ինչպես նրա մասին ասել են.* «Այո՛, Գամառ-Քաթիպան անպայման տաղանդավոր մարդ է, բայց եթե նա քիչ է ազգային բանաստեղծ՝ էդ պակասությունը իրենը չի,

տաղանդի պակասությունը չի, այլ համգամանքների, ինչպես և իմը չի էն առավելությունը, որ ես ավելի եմ ազգային, այլ դարձյալ համգամանքներինը:

Մի խոսքով, օբյեկտիվ ու հարգալից վերաբերմունքը, կիրթ գեղարվեստական ճաշակն ու առողջ գրական հասկացողությունը վերջ ի վերջո որոշելու են ամեն մեկի տեղը:

Եվ օրինյալ են ամենքն իրենց տեղը»:

Չի հիշում Պատկանյանի արձանի բացման առիթով նրա «Իմ երգը» բանաստեղծության մի քառատողի շրջաբանությունը՝ «Կգան կանցնեն շատ-շատ ամիս ու տարի...», որ խանգաղյանը համարում է «զարմանալի անհաջող»:

Շուտով վերադառնալու է Թիֆլիս. «Գրադարանս շատ եմ կարոտել: Լավ բան է: Թեև չեմ կարողանում կարդամ, բայց շարունակ էմպես է թվում, թե եմ բոլոր լավ-լավ գրքերը մեծ մարդիկ են, հենց իրենք հեղինակներն են չորս կողմը շարված ու անվերջ գրույց ենք անում»:^{*}

^{*}) 1917 թ. հունվարի 30-ին գրված «Գրադարանս» բանաստեղծությունը գրեթե նույնությամբ հիշեցնում է այս տողերը:

ԵԼԺ 10, 248, 250:

Օգոստոսի 24 - Թուրքահայ ուսուցչական միության դիմումը ՀԳԿԸ վարչությանը՝ Երևանից.*

«Երևանի և շրջականերու Միությանն անդամներու համար վարչությունս ձեռնարկած է տեղս Կեդրոն. գրադարան մը հիմնել:

Սույն օգտապաշտ ձեռնարկության համար դիմում ենք վարչությանդ՝ խնդրելով Ձեր աջակցությունը մեր նորակազմ հիմնարկության իրականացման և հաջողության համար»:

^{*}) Դիմումի վրա Թումանյանի ձեռքով նշում. «11 նոյեմբ. 1916):

ԳԱԹ ՀԳԿԸՖ, թիվ 131:

Օգոստոսի 25 - Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միության Երևանի ճյուղի վարչության նամակը Թիֆլիս՝ Թումանյանին:

Ներկայացնելով հայ ուսուցչի սոցիալական կացությունը և դպրոցների վիճակը դիմում են բանաստեղծին. «Ձեր մեծագույն հեղինակության ազդու խոսքի և արտահայտիչ գրչի հերթական խնդիրը դարձնելով հայ ուսուցչությունը, իր նյութապես էլ առավել ներկա աննախանձ վիճակի բարելավումը, խնդրում է Ձերդ Մեծապատվու-

թյանը իր արդար դատի և պատվի պաշտպան հանդիսանալ հայ լրագիրներում՝ փրկելով նրա կյանքն ու մեռնող հայ դպրոցական կուլտուրան»:

Ստորագրությունը՝ ի. տ. քարտուղարի՝ Զ. Գրիգորյան:
ԳԱԹ ԹՖ, 1437 (193 III ց.):

Օգոստոսի 27 - Տպագրվում է Միք. Վարանդյանի «Գործ և կարիք» հոդվածի շարունակությունը:

Առարկում է Ջավախեցուն, որ իր մի հոդվածում, նկատի ունենալով, որ ամենօրյա «հացի» խնդիրը ժողովրդի մեջ մարել է հետաքրքրությունը ուրիշ ամեն բանի նկատմամբ, այն միտքն է հայտնել, թե՝ «մեր լեզուն անպետքացել է, որ նա «մերձիմահ հիվանդի» վիճակում է, որ ոչ մի «կարկատան» ու «սպեղանի» չեն կարող ուժ տալ նրան... Ջուր են ուրեմն թունանյամները, Լեռները, Վարանդյանները այնքան աղաղակում, թե պետք է ուժ տալ մեր գրականության, լեզվին ու պատմության, թե պետք է այդպիսով արգելք լինել մասսային այլասերման...»:

«Հորիզոն», 1916, թիվ 191 (սկիզբը՝ թիվ 190):

<Ամառ> - Թարգմանում է մի հատված սերբական ժողովրդական էպոսից՝ «Մարկոն վար է անում» խորագրով:

ԵԼԺ 4, 195-196:

<Օգոստոսի վերջ – սեպտեմբերի սկիզբ> - Գրում է «Հրապարակական զրույց «Кавказское слово» թերթի պ. խմբագրի հետ» հոդվածը:*

Առիթը Յու. Սենյոնովի «Россия в Малой Азии» հոդվածն է («Кавказское слово», 1916, թիվ 189, 190, օգոստոսի 26, 27), ուր, քաղվածքներ անելով թունանյանի հոդվածներից**, այն միտքն է անցկացնում, թե հայերը ավտոնոմիա են ուզում, ուրեմն սեպարատիստ են:

Հոդվածի սկզբում բանաստեղծը գրում է. «Ինձ էնպես է թվում, թե ես բավական պարզ եմ տեսնում հայ ժողովրդի պատմական ճանապարհը և զգում եմ նրա ներքին ձգտումը:

Հաստատ էսպես է, թե մոլորության մեջ եմ, եղ հետո պիտի երևա, բայց սա ինձ որոշ ինքնավստահություն ու անկեղծություն է ներշնչում իմ խոսքը համարձակ ասելու և իմ ճանապարհը անխտոր գնալու»:

Հետո նկատում է, որ Յու. Սեմյոնովի նշած հոդվածները*** գրված են տարիներ առաջ, ուստի չեն կարող էսօր առաջ բերվել իբրև վկայություն էն տրամադրությունների ու խնդիրների, որ առաջ բերեց մեծ պատերազմը, օրինակ, փոքր ազգերի ազատության կամ ավտոնոմիայի, որից էն ժամանակ իսկի էն մեծ տերություններն էլ չէին խոսում, որոնք էսօր էդ անունով են կոչվում ու ոգևորում ժողովուրդներին»:

Հիշում է պատերազմն սկսվելուց հետո գրած հոդվածները**** որտեղ միտք է հայտնել, թե «պատերազմը ազատություններ է բերելու ժողովուրդներին, նրանց թվում և հայ ժողովրդին»:

Թերթի առաջ քաշած այն հարցի վերաբերյալ, թե ինչ է ակնկալում հայ ժողովուրդը «Ռուսաստանից և ապա նրա դաշնակիցներից», տալիս է իր բացատրությունը: Բերելով Անգլիայի օրինակը, որի կազմում կան մի քանի փոքր ինքնավարություններ, գրում է. «... Ինչպես ամբողջ աշխարհի, էնպես էլ հայերի համար, ավտոնոմիան ուսուպիա չի, այլ շատ հասարակ մի հասարակական կարգ: Ուսուպիան էն է, որ չկա և չի լինելու, իսկ ավտոնոմիան կա, լինում է և կլինի, և ազգերն էլ էդ կողմն են գնում, էդ կողմն է գնում և Ռուսաստանը, ինչպես պարզ վկայում է Լեհաստանի խնդիրը: Եվ չէ՞ որ ավտոնոմիան բնավ սեպարատիզմ չի ենթադրում: Ձեզ ավելին ասեմ, եթե Ռուսաստանը մեզ ավտոնոմիա տար ու ասեր՝ «դե՛, մնաք բարով, ես գնում եմ», զոնե ես շատ կվախենայի... <.....> Մանավանդ նկատեցեք, որ մի որևէ թեկուզ Մենե կամ Տրինիդատ***** շրջապատված են եղել ու շրջապատված են ջրի ծովով, իսկ մենք, ինչպես և մեզ ընկեր ժողովուրդները, միշտ շրջապատված են եղել արյունի ծովով, որի մեջ դեռ լողում է մեր կեսը, և միշտ կարոտ ենք հզոր բարեկամի, վաղուց ազգովին ընտրել ու փարել ենք էդ հզոր բարեկամին և նրա իմաստուն և բարյացակամ վերաբերմունքը մշտական ապահով ու ամուր կապ պետք է լինի մեր մեջ»:

Բարձրացված հարցի մեջ «պրովոկացիայի թեկուզ հեռավոր միտք» չի տեսնում: Հորդորում է իրար չվիրավորել. «Կառավարական մարդկանցից ավելի գրչի մարդիկ են պարտավոր օբյեկտիվ ու հանգիստ մոտենալ էս տեսակ խնդիրներին և լուրջ ու բազմակողմանի քննության ենթարկել՝ միշտ տոգորված ինչպես համապետական, էնպես էլ առանձին ժողովուրդների կենսական շահերի պաշտպանության ազնիվ զգացմունքով և բոլորից մի մեծ ներդաշնակություն ստեղծելու բարձր գիտակցությամբ»:

*) Պահպանվել է հոդվածի սևագիրը (ԳԱԹ ԹՖ, 216): Իր ժամանակին չի տպագրվել:

**) Քաղվածքներն արված են Թումանյանի «Ահա թե ինչու» և «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածներից:

***) «Թյուրիմացություն մութի մեջ» (տե՛ս 1909, դեկտեմբերի 9), «Երեկվա պատմությունը և այսօրվա իրականությունը» (տե՛ս 1912, սեպտեմբերի 7), «Ահա թե ինչու» (տե՛ս 1912, հոկտեմբերի 16-17), «Հայկական հարցն ու իր լուծումը» (տե՛ս 1913, հունվարի 11, 13, 16, 19):

****) «Սրանով կհաղթես» (տե՛ս 1914, հոկտեմբերի 12), «Դեպի մեծ կյանք» (տե՛ս 1915, մայիսի 24), «Հանգիստ և լիքը հավատով» (տե՛ս 1915, հուլիսի 26) և այլն: Այդ հոդվածների մի մասը թարգմանվել է ռուսերեն և տպագրվել «Кавказское слово» թերթում:

*****) Փոքր ինքնավար կղզիներ են Անգլիայի կազմում:

ԵԼԺ 7, 459-462:

<Օգոստոսի վերջ – սեպտեմբերի սկիզբ> - Գրում է «Կարելին և ցանկալին» հոդվածը:*

Առիթը դարձյալ Յու. Սենյոնովի «Россия в Малой Азии» հոդվածն է: Շատ տեղերում կրկնվում են մախորդ հոդվածի մտքերը: Բանաստեղծի հիմնական ասելիքն այն է, թե ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ պատերազմի տարիներին գրած հոդվածներում ինքը այն համոզմունքն է հայտնել, որ պատերազմի արդյունքում ճնշված ազգերը ազատություն են ստանալու, ինչպես հայտարարում էին նաև Ռուսաստանն ու նրա դաշնակիցները. «Հայ ժողովուրդն էլ, որի թե՛ փոքրությունը, թե՛ տառապանքը Թուրքահայաստանում վեր է ամեն կասկածից, ամենաշատ ոգևորվողներից մինը եղավ և հենց առաջին օրերից, առանց երկար ու բարակ մտածելու, երեսին խաչ հանեց ու մետվեց կռվի մեջ՝ հանուն ընդհանուր գործի, այլև իր արյունոտ դատի կամավորական դրոշի վրա գրելով՝ մահ կամ ազատություն...»:

Ինչ վերաբերում է ավտոնոմիային, ապա՝ «ինքնավար Հայաստանի հարցը, թուրքահայերի խնդրանքով, առաջին անգամ ռուսները դրեցին Ադրիանապոլիս, բայց անգլիացիների պահանջով ստիպված եղան փոխել ու դնել բարենորոգումների հարցը, սակայն հայերին հուսադրելով, թե ապագայում նորից կընդլայնեն ու կիրագործեն»: Հենց այդ հույսով է ինքը ասել, թե նոր պատերազմը «բերելու է թուրքահայերին ազգային ինքնավար կյանք»:

Եվ ահա Յու. Սենյոնովը գրում է, թե հայերը անջատողական են, ուստի Հայաստանը պետք է «անեքսիայի» ենթարկել՝ բռնակցե-

լով Ռուսաստանին: Հայ մամուլն էլ շտապեց ռուս լրագրողի հայտարարության մեջ «պրովոկացիա» տեսնել: Բանաստեղծը համաձայն չէ դրա հետ:

Նախ՝ որ հայ ժողովրդի՝ ազատության ձգտումն ու երազանքները, ինչպես նաև իր հողվածներում հանդիպող «մարդավայել ազգային վիճակ և ցանկալի ապագա» և նման նախադասությունները միայն տրամադրություններ են և ոչ մի կոնկրետ քաղաքական ազգային իդեալ չեն պարզում»:

Եվ հետո՝ անկախ ամեն ինչից, ինքը միշտ իր հույսերը կապել է Ռուսաստանի հետ. «Էդ նույն կարծիքին եմ մնում, թեկուզ և էս կամ էն ռուս քաղաքագետը հրապարակավ դրան միանգամայն հակառակը հայտարարի և, նույնիսկ, դրա իրական արտահայտությունները տեսնենք կյանքի մեջ: Ինձ համար էս կամ էն քաղաքագետը չի որոշում պատմության ընթացքը, էս կամ էն ազգի պատմական ճանապարհն ու միսիան: Դրանք հաճախ ներս են սարդում պատմության մեջ, որպես բացարձակ վրիպակներ: Դրանցից ամենալավերն էլ՝ ոչ թե տևական ընթացք են տալիս կյանքին, այլ հասկանում են պատմության ընթացքն ու շարժվում ըստ այնմ: Հետևաբար, ասում եմ, էս կամ էն քաղաքագետի հոռի հայտարարությունը կամ ընթացքը եական արժեք չունի ինձ համար: Ուրիշ բան է իրեն՝ ազգի հայտարարությունը, որ անում է իր լավագույն զավակների բերանով, իսկ Ռուսաստանի լավագույն զավակները երբեք դաժան հոգի չեն հանդես բերել, և ուրիշ բան է ազգի՝ իրեն ընթացքը, և իր ընթացքով էլ Ռուսաստանը դեռ ազգեր չի խորտակել, այլ միայն ազգեր է ազատագրել ու կյանքի կոչել, ինչքան էլ ետամնաց լինի, որպես պետություն, և ինչքան էլ խավար: <....> Ես չեմ հավատացել ու չեմ հավատում թուրքի բարի հայտարարություններին, ինչպես որ չեմ հավատացել ու չեմ հավատում ռուսի չար հայտարարություններին: Մեր առջևն է երկրների ընդհանուր պատկերը: Մեր առջևն են նրանց անցած ճանապարհները, մեր առջևն են ժողովուրդների պատմությունները:

Ես ասել եմ՝ ռուսը կտա էդ ազատությունները ոչ միայն հայերին, այլև շատ ազգերի, էդ է ճանապարհը»:

*) Պահպանվել է սևագիրը (ԳՄԹ ԹՖ, 218): Իր ժամանակին չի տպագրվել:

ԵԼԺ 7, 462-469:

Սեպտեմբերի 1 - Տպագրվում է Միք. Աստվածատրյանի ««Անուշ» օպերան Ախալցխայում» հոդվածը:

Խոսքը օպերայի՝ հուլիսի 28-ին և 30-ին Ախալցխայում կայացած բեմադրությունների մասին է:

Մասնավորապես գրում է. ««Անուշ» օպերան Հովհ. Թումանյանի նույնանուն պեման է, եղանակված պ. Արմեն Տիգրանյանի ձեռքով:

Իբրև հայկական անդրանիկ օպերա՝ ողջունելի է «Անուշը» իր թերություններով հանդերձ, որը, անշուշտ, ժամանակի ընթացքում կոկվելով՝ կդառնա մեր բեմի գեղեցիկ զարդերից մեկը և համարձակություն կառնի երևալու մաս Թիֆլիսի և Բաքվի բեմերի վրա, ուր մինչև այժմ չի դրվել:

<....> «Օպերայի թերության գլխավոր աղբյուրը, ըստ իս, պիտի նկատել այն հանգամանքը, որ հարգելի երաժիշտը հարկավոր չափով չէ ուսումնասիրել այն միջավայրը, որի հարազատ ու գեղեցիկ պատկերացումն է «Անուշ» պեման»:

Բեմադրությունը կատարվել է սիրողական ուժերով: Երաժշտական միակ գործիքը եղել է դաշնամուրը, երաժիշտ կատարողն էլ՝ օպերայի հեղինակը:

«Հորիզոն», 1916, թիվ 195:

Սեպտեմբերի 3 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա է Մինաս Բերբերյանը:

1) Քանի որ վարչությունը որոշել է վերսկսել իր գործունեությունը և պարբերական երեկույթները, ուստի կարգադրում են վարձել գրասենյակ, գործավար և մշտական դահլիճ:

2) Քանի որ հայ գրականության դասընթացներ բացելու (տե՛ս մայիսի 25) մասին արդեն հայտարարություն է հրապարակվել մամուլում (տե՛ս մայիսի 7, օգոստոսի 21), ուստի կարգադրում են այդ նպատակով խորհրդակցության հրավիրել Մ. Մատենճյանին, Մ. Աբեղյանին, Ստ. Լիսիցյանին, Սմբատ Տեր-Ավետիքյանին, Ն. Ադունցին, Հ. Քաջազունուն, Գ. Իփեկյանին և Հ. Սուրխաթյանին:

3) Տեղեկացվում է, որ Լևոն Եվանգուլյանը, իբրև զաղթականությանն օգնող կազմակերպության ներկայացուցիչ, հայտնել է վարչության փոխնախագահ Մ. Բերբերյանին, որ կառավարությունը մտադիր է տասը հազար ռուբլի հատկացնել տաճկահայ այն գրող-

ներին և մտավորականներին, ովքեր կցանկանան վերադառնալ տալով ամեն մեկին առ առավելն մեկ հազար ռուբլի՝ դաշնադրությունից հետո 8 տարվա ընթացքում վերադարձնելու պայմանով:

Կարգադրում են համձնարարել Մ. Բերբերյանին ներկա լինել այդ առթիվ փոխարքայի դիվանում գումարվելիք խորհրդակցությանը, ծանոթանալ հարցի մանրամասներին և զեկուցել վարչությանը:

4) Նախագահողը տեղեկացնում է ստացել է վարչության անդամ քարտուղար Գ. Աղանյանի դիմումը (տե՛ս հուլիսի 23, <օգոստոսի սկիզբ>), որով խնդրում է Հայոց հնագիտական և պատմական ընկերության հետ միասին դատել իր և Լեոյի միջև ծագած խնդիրը՝ Երևանի և Ղարաբաղի թեմական դպրոցների արխիվներից Լեոյի վերցրած փաստաթղթերի շուրջ:

Կարգադրում են հարցի քննարկումը հետաձգել ավելի բազմամարդ ժողովի:

5) Տեղեկացվում է, որ ստացվել է Ներսիսյան դպրոցի հոգաբարձության գրությունը՝ ներկայացուցիչ ուղարկելու թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսի առաջարկով հրավիրվելիք խորհրդակցական ժողովին:

Կարգադրում են՝ խնդրել վարչության նախագահին ներկա լինել այդ ժողովին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/7:

Սեպտեմբերի 4 - Տպագրվում է Արտաշես Կարինյանի «Հայ մացիոնալիզմի ճգնաժամը» գրախոսականը՝ Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուի մասին:

Մասնավորապես գրում է. «Պատերազմը արթնացրել է մացիոնալիստական-քաղաքական տենչեր ոչ միայն մեծ պետությունների, այլև ավելի նվազ ու փոքր ազգությունների մտավորական շրջաններում:

<....> Պատերազմի առաջին օրերից սկսած մի շարք գեղագետներ նկարագծել են որոշ ակնարկներում և երգել բանաստեղծությունների մեջ քաղքենիական տենչերը, իդեալները... Այդ երկասիրությունների ահագին, գերազանց մեծամասնությունը զուրկ է որևէ գեղարվեստական արժեքից: Բայց դրանց մեջ պատահում են սիմպտոմատիքական էջեր, այնպիսի էջեր, որոնք մերկացնում են մացիոնալիստական մտավորականների հոգեբանության որոշ հատկությունները: Մանավանդ հետաքրքրական է այդ կողմից Հովի.

Թումանյանի երգերի այն ժողովածուն, որ լույս է տեսել այս օրերս և նվիրված է անմիջապես «հայրենիքի» մոտիվներին: Այդ երգերի մեջ երևում է մեզ ոչ միայն ռազմական ինստիգնկոններով տոգորված կոշտ «հայդուկը», այլև տկար հույզերով, հուսահատ տրամադրությամբ համակված մտավորականը...

Գրքույկի առաջին երգը, որ գրված է 1915 թվին, լեցուն է զվարթ, միանգամայն օպտիմիստական հովերով»:

Իբրև օրինակ բերելով «Հայրենիքիս հետ» բանաստեղծության վերջին տունը՝ «Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած...», այնուհետև անդրադառնում է նաև «Հոգեհանգիստ», «Լուսավորչի կանթեղը» բանաստեղծություններին:

Եվ վերջում. «Եվ նացիոնալիստական կուռքերը տապալելուց հետո «թըշվառ էն հոգիներին» անշուշտ կմնա կամ ընկնելը կրոնական-միստիքական որոնումների աշխարհը, կամ ընտրել հասարակական ստեղծագործության մոր, ավելի հաստատ և առողջ ուղիներ»:

«Պայքար», Թիֆլիս, 1916, թիվ 36, էջ 2-3:

Սեպտեմբերի 7 - Մեսրոպ Վարդանյանի նամակը Իգդիր՝ Արտավազդ Թումանյանին Թիֆլիսից:

Հասել է Թիֆլիս՝ Արտավազդի ուղարկած սնդուկով խաղողն էլ հետը: Երկար փնտրելով՝ վերջապես գտել է Թումանյանների բնակարանը. «Մի ժամ հետո Համլիկը եկավ, երկու ժամ վերջ Հայրիկդ և Անդրանիկը ժամանեցին: Անոնցմե կես ժամ վերջն ալ մեծ քույր Աշխենը՝ Խատիսովի կինը եկավ Բորիկին հետ, զորս հայրիկդ կապիկ կկոչե: Հայրիկդ զարմանալի պատմություններ ըրավ կինտոներու կյանքեն: Վերջապես ճաշի ժամանակ էր, ընտանիքի բոլոր անդամները հավաքվեր էին, շիտակը խոսելով չիամրեցի, բայց գիտեմ որ դյուժին մը մարդ կար: Այդ օրը հյուր էր նաև քահանա մը իր երկու երեցկիներով: Սեղանին սահմանները. հյուսիսեն աջ կողմս նստած էր տիկ. Աշխեն, հարավեն ձախ կողմս Համլիկը, արևմուտքեն դեմ Մայրիկդ և օր. Նեկտարը, արևելքեն կռնակիս ետև Բորիկը խաղող կուտեր: Օրիորդ Նեկտարին երբ որ խաղող հրամցուցին, ըսավ թե «չէի ուտեր, բայց քանի որ Արտիկն է դրկեր, սիրով կուտեմ»: Այդ ժամանակ տեսակ մը զգացում ունեցա, որ գրելով չեմ կրնար նկարագրել»:

ԹԶ ԱՐՏ, 190-191:

Սեպտեմբերի 9 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա է Մինաս Բերբերյանը:

Նախագահողը հայտնում է, որ Կոստանդին Ալիխանյանը ընկերությանը նվիրել է երկու հազար ռուբլի՝ առանց որևէ պայմանի:

Կարգադրում են՝

1) Այդ մասին հայտարարություն տալ մամուլում:

2) Գումարը օգտագործել վարչության հրապարակումների համար:

3) Ընկերության գրագրության համար գնել 200 ռուբլու թուղթ, իսկ 1800 ռուբլին դնել վաճառականական բանկ՝ ընթացիկ հաշվով:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/8:

Սեպտեմբերի 10 - Ցոլակ Խանգադյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ <Բաքվից>:

Շնորհակալություն է հայտնում տված տեղեկությունների համար (տես՝ օգոստոսի 17, 24): Խնդրում է արագացնել «նյութերի առաքումը» ամսագրի համար: Տեղեկացնում է. «Ձեր ուսանավոր-շնորհավորանքը Պատկանյանի արձանի բացման առթիվ (հեռագրատանը չեն ընդունել հայերեն բառերով, ռուս տառերով կազմած հեռագիրը) այս է՝

«Կըզան, կանցնեն շատ ամիս ու տարի,

Չի մամռոտիլ գերեզմանը այդ քարի.

Եվ տանջալի նորա խաչը սըրբազան,

Նորա անուն միշտ կըմնան անսասան»:

Տելեգրաֆիստն անգամ զգացել է, որ այս թիվածքը «թումանյանական» չէ ամենևին. բայց «Մշակը» (1901, No 230), դժբախտաբար, ամնահացրել է Ձեր ամենաապաշնորհ «բանաստեղծությունը» (տես՝ նաև օգոստոսի 15)»:

ԳԱԹ ԹՖ, 1367 (58):

Սեպտեմբերի 15 - Մեսրոպ Եպիսկոպոսի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ <Բաքվից>:

Գրում է Բաքվում իրեն մեծ հանդիսավորությամբ ընդունելու, անվերջ հյուրասիրությունների, նոր թեմում իր աշխատանքի առաջին օրերի, միջավայրից ստացած տպավորությունների մասին: Եվ վերջում. «Համբույրներ քեզ, բարևներ ձերոնց, ծանր է, շատ ծանր,

մանավանդ, երբ մտածում ես, թե ինչու անեծքի պես վատ բաները ծանրացած պիտի լինին մեր ցեղի և մեր մարդկանց վրա»:

ԳԱԹ ԹՖ, 1737 (900):

Սեպտեմբերի 17 - Բաբայան Խաչատուր ստորագրությամբ դիմում ՀԳԿԸ վարչությանը՝ Իգդիրից:*

Խնդրում է ամսական մի որոշ նպաստ նշանակել իր ընտանիքին՝ կնոջը և վեց փոքրահասակ երեխաներին, քանի որ հունիսի 1-ից իրեն զորակոչել են բանակ:

*) Թումանյանի ձեռագրով նշում, որ ստացվել է սեպտեմբերի 22-ին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 100/2:

Սեպտեմբերի 18 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 208) «Վրաստանի համար» («Երբ խոսում են Վրաստանի...») բանաստեղծությունը՝ «Հողվածի փոխարեն» ենթավերնագրով:

ԵԼԺ 1, 286-287:

Սեպտեմբերի 18 - Մամուլը տեղեկացնում է.

«Շուտով սկսվելու է Կովկասի Հայ Գրողների գրական երեկուների շարքը, առաջին երեկույթը նվիրված է արևմտահայ գրականության, որի մասին դասախոսելու են տիկ. Ջապել Եսայան և պ. Մ. Մատենճյան»:

«Հորիզոն», 1916. թիվ 208:

Սեպտեմբերի 18 - Տեղեկատվություն մամուլում.

«Կովկասի Հայ գրողների ընկերության վարչությունը որոշել է Կ. Մ. Ալիխանյանի նվիրած 2000 ռ. հատկացնել «Դիվան Հայոց գրականության» հրատարակության: Որոշված է նաև հրատարակել գրական գեղարվեստական մի ամսագիր»:

«Հորիզոն», 1916, թիվ 208:

Սեպտեմբերի 21 - Նամակ Բաքու՝ Յուլակ Խանզադյանին՝ Թիֆլիսից:

Գրում է, որ վերադարձել է Բորժոմից, և հին հիվանդությունը՝ մալարիան, կրկնվել է. «Ընկել էի աստղերի ետևից. գիշերները ժամը 3-4-ին դուրս էի գալիս անկողնից Վեներայի ծագումը տեսնելու, Հայկը և այլն, և այլն, և ահա Վեներայի ետևից ընկնելով՝ բանը էստեղ հասավ»:

Դժգոհում է, որ գրել չի կարողանում: «Գործի» համար ուղարկել է «Մոծակն ու Մրջյունը». «Թիֆլիսի շրջաններում արդեն տարածվել է, և կարծում են «Շունն ու Կատվից» ավելի լավն է»: Այս առիթով կատակում է. «Աստված ինձ էլ էս տեսակ անասուններից է տվել՝ շուն, կատու, մոծակ, մրջյուն: Մարդ չի կարող երևակայել, թե աստված իր բախտն ինչի հետ է կապել»:

ԵԼԺ 10, 251:

Սեպտեմբերի 21 - «Աշխատանք» եռօրյա թերթի խմբագրի պաշտոնական գրությունը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից.

«Մեծարգո պ. Զովհաննես Թումանյան,

նախագահ Ջայ Գրողների Կովկասյան ընկերության,

Ներփակ Ձեզի կղրկենք Վասպուրականի հին ու նոր «Աշխատանքի» շուրջ հավաքվող – մեռած և բացակա - գրական մշակներու անուններն ու անոնց համառոտ կենսագրական ծանոթությունները:

Քննության առնելով այդ, հաճեցեք *որոշել* անոնց բոլորին պատկանելիք պետական նվերի գումարը* և ղրկել խմբագրությանս, մեզի թողնելով անոնց առանձին գնահատության չափը:

Հարգանքներով՝ «Աշխատանքի» խմբագիր՝

Զմ. Մանուկյան»:**

*) Խոսքը տաճկահայ փախստական գրողներին և մտավորականներին իբրև փոխառություն կառավարության հատկացրած 10 հազար ռուբլու մասին է, որ պետք է վերադարձվեր 8 տարվա ընթացքում (տե՛ս սեպտեմբերի 3):

**) Վերջում Թումանյանի ձեռագրով նշում՝ 24 սեպտ. 1916

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 116:

Սեպտեմբերի 23 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 212) «Հանցավորներ ու վկաներ» հոդվածը:

Առիթը Շուլավերի տանուտեր Արամ Դալլաքյանի սպանությունն է, որին բանաստեղծը ներկայացնում է որպես «մեր գավառական մաքուր, ինտելիգենտ երիտասարդ գործիչներից մեկը»: Եվ հարց է տալիս. «... Ինչո՞ւ է էսպես անհմար շիտակ գործել ու ապրել մեր մթնոլորտում: Ինչո՞ւ են մեր լավ գործիչները ենթարկված վտանգի՝ հալածանքից սկսած մինչև օրը ցերեկով կազմակերպված սպանությունը»:

Պատճառը, ինչպես օրինակներով ցույց է տալիս բանաստեղծը, արդարադատության բացակայությունն է: Կաշառքն ու սուտ

վկայությունը միշտ արդարացնում են հանցավորին, իսկ տուժողը «ուզի-չուզի, վերջիվերջո պետք է հաշտվի իր անգործության ու դառը ճակատագրի հետ և ծունկ չոքի չարի առաջին»:

Եվ եզրակացությունը. «Ասելս էն է, թե մի համատարած դժոխքի մեջ է ապրում մեր գյուղացի ժողովուրդը, զանազան մութը կազմակերպությունների՝ շայկաների ճիրաններում, և էդ չար ու մռայլ բազմությունը թերևս կարելի լինի դնել մի ընդհանուր վերնագրի տակ՝ հանցավորներ ու վկաներ:

Սրանց դիմաց միանգամայն անգոր է եղած արդարադատությունը, ոչ միայն անգոր, այլև կորցրած ամեն հավատ ու հեղինակություն:

Եվ հանցավորները բացարձակ ուրախանում են, երբ բանն ընկնում է դատարանին, իսկ խաղաղ ժողովուրդը դատարանից նույնքան է վախենում, որքան հանցավորներից, եթե չասեն ավելի»:

ԵԼԺ 7, 275-280:

Սեպտեմբերի 24 - Ստանում է «Աշխատանքի» խմբագիր Զմ. Մանուկյանի պաշտոնական գրությունը՝ Երևանից (տե՛ս սեպտեմբերի 21):

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 116:

Սեպտեմբերի 24 - Ցոլակ Խանգադյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ <Բաքվից>:

Ստացել է բանաստեղծի նամակը (տե՛ս սեպտեմբերի 21): Շատ է մտահոգ նրա հիվանդության համար. «Մի դարդս բավական չէր, էս էլ մին: Վահանն* էլ հիվանդ է, իր ասելով, բավական լուրջ: Մտածում են, մտածում, չգիտեն, ինչպես կարող են օգնել: Այժմ էլ Ձեր հիվանդությունն է ինձ ցավ պատճառում: <....> Ես չեմ կարող երևակայել Ձեզ առանց Ձեր քաղցր հուժկո: Լավացեք, առանց էն էլ դարդ չատ կա, և ուրախ լուր տվեք Ձեր առողջության մասին»:

Ստացել է «Մոծակն ու մրջյունը» առակը: Տպագրելու համար խնդրում է բացատրել մի քանի բառեր ու արտահայտություններ՝ *էճ արև* (աշխարհքն), *սալարել*, *մըճըրվում*, *շահեք* և այլն. «Ձեր նոր առակը այնքան գեղեցիկ բան է, որ ես չեմ կամենա 1) որ նրա վրա մի փոքրիկ բիծ անգամ լինի և 2) որ մի փոքրիկ կետ իսկ մնա ինձ համար անհասկանալի:

Խիստ ուրախ եմ, որ մեր առաջին համարը զարդարված պիտի լինի Ձեր թանկագին անունով»:

*) Վահան Տերյանն է:

ԳԱԹ ԹՖ, 1368 (59):

Սեպտեմբերի 15 - Նամակ-երկտող Թումանյանին առաջնորդարանից.

«Հարգ. պ. Հովհ. Թումանյան,

Սրբազանի հանձնարարությամբ հայտնում եմ Ձեզ, որ այսօր ժամը 2-ին առաջնորդարանում ժողով է լինելու (տե՛ս սեպտեմբերի 3), որին մասնակցելու եմ գրողների ընկերության և ուսուցչական միության վարչությունները:

Հարգանք՝ Մ. Հարությունյան

(Ներսիսյան դպրոցից)»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 205:

Սեպտեմբերի 25 - Նամակ Բաքու՝ Ցոլակ Խանզադյանին՝ Թիֆլիսից:

Շատ սրտնեղած է Ղ. Աղայանի ընտանիքի հանդեպ Լեոյի և նրա կնոջ անմարդկային վերաբերմունքից. «Դու գիտես, որ ազգը Լեոյի համար հորեղյան կատարեց, հավաքած փողով մի տուն առան իրեն տվին: Էդ տանը ուրիշ կենողների թվում երկու սենյակի մեջ ապրում են Ղ. Աղայանի կինն ու տղեն: Եվ ահա, չնայելով նույնիսկ կառավարության կարգադրություններին, որ տանտերերը դուրս չանեն, թե չավելացնեն կենողներին, տիկին Լեոն, իբրև թե պ. Լեոն ձեռնպահ է, նահանգապետի միջոցով դուրս է անում Ղ. Աղայանի կնոջն ու որդուն, և գիտե՞ս ինչ պատճառաբանությամբ.

-Թե՛ սենյակների վարձը չեն վճարում ժամանակին:

Որովհետև մի քանի օր ուշացրել են, թեկուզ լինի մի քանի շաբաթ: Եվ, թեպետև սրանք տուն չեն գտնում, այնուամենայնիվ, դուրս պետք է գնան, թեկուզ փողոցը...

Ես չգիտեմ մի վաճառական, մի օտար, ով ուզում էր լիներ, էսպես կվարվե՞ր Աղայանի ընտանիքի հետ, թե չէ, միայն էն գիտեմ, որ իմ տանտերը – մի Ս. Մանվելյան, մի կոմերսանտ մարդ, 1500 ռ. թողնում է վրես ամիսներով՝ թեկուզ և պայման ունեն կապած հետը, թեպետ էս մարդն էլ իր տունը հայոց ազգից հորեղյանով չի ստացել...

Մարդ հիվանդանում է սրտի ցավից ու մեղությունից»:

Հասցեատիրոջ խնդրանքով (տե՛ս սեպտեմբերի 24) բացատրություն է տալիս «Մոծակն ու Մրջյունը» բալլադում գործածված մի

քանի բառերի վերաբերյալ՝ *արև, սալարել, մըծըրվել, շահել, տեղ չի ունեն*։ Շատ է ցանկանում նորաշրջան «Գործի» ամեն համարին նյութ ուղարկել, բայց հնարավորություն չունի. «Էս անտեր քաղաքը և զանազան ներքին ու արտաքին ցավ ու հոգսեր մարդու՝ ճշմարիտ որ՝ սպանում են։ Տարիները անցնում են, ետ ես նայում, որ զուր տեղը կորցրել ես ժամանակդ էլ. եռանդդ էլ. ամբողջ կյանքդ էլ։ Եվ ամեն օր սպասում եմք, որ պիտի փոխվի։ Ասում է՝ գնացին տեսան Մոլլա Նասրեդդինը մի վարար ջրի ափին նստած սպասում է։ Ասին՝ ընչի ես սպասում։ - Թե՝ սպասում եմ գետն անց կենա, որ հետո ես անց կենամ։ Գիշտ էսպես. մենք էլ սպասում եմք՝ էս ժամանակն անց կենա, որ մեր ուզած կյանքով ապրենք, պարապենք... ու շարունակ սպասում ենք»։

ԵԼԺ 10, 262-263:

Սեպտեմբերի 25 - Հայտարարություն մամուլում.

«Շուտով սկսվելու է հայ գրողների գրական երեկույթների շարքը. առաջին երեկույթը նվիրված է արևմտահայ գրականությանը, որի մասին դասախոսելու են տիկ. Ջապել Եսայանը և պ. Մ. Մատենճյանը»։

«Համբավաբեր», 1916, թիվ 39:

Սեպտեմբերի 30 - Հայ կարիքավոր գրողներին օգնող ընկերության գրությունը ՀԳԿԸ վարչությանը*:

Հայտնում են, որ մինիստրների խորհուրդը իր մարտի 25-ի նիստում, նկատի ունենալով ռուսական զորքի կողմից գրավված տարածքների հայ բնակչության աղետալի վիճակը և այն, որ այդ բնակչությունը հակված է իրենց կողմը, որոշել է 300 000 ռ. փոխատվություն հատկացնել նրանց:

Տեղեկացվում է նաև, որ այդ գումարից 10 000 ռ. տրամադրվում է գրողների ընկերությանը՝ փախստական կարիքավոր գրողներին և առհասարակ գրականությամբ զբաղվող մտավորականներին օգնություն ցույց տալու համար:**

*) Գրության վերջում թումանյանի ձեռքով նշված է ստացման ամսաթիվը՝ 7 հոկտեմբեր, 1916:

**) Գրության մեջ բերվում է որոշման ընդարձակ ռուսերեն շարադրանքը, որտեղ մանրամասն նշված են փոխատվության պայմանները և այն, թե հատկապես ովքեր կարող են օգտվել դրանից: Ստորագրել են Կովկասյան Ճակատից փախստականների գործերը կարգավորող գլխավոր լիազոր գեներալ մայոր Թամամշևը և գրասենյակի վարիչ Կլենսակին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/7:

Սեպտեմբերի 30 - Հայտարարություն մամուլում.

«Հայ գրողների ընկերության առաջարկության համաձայն, կխնդրենք թուրքահայ գրողներեն, որ հաճին իրենց գրական գործունեության համառոտ հիշատակությունը, ներկայի զբաղմունքը, ընտանիքի անդամներու թիվը և հասցեն հաղորդել Թուրքահայ գրողներու Թիֆլիսի հանձնախմբին՝ «Համբավաբեր»-ի կամ «Վան-Տոսպ»-ի հասցեով, թվականես մինչև երկու շաբաթ:

Թուրքահայ գրողներու Թիֆլիսի հանձնախումբը:

«Հորիզոն», 1916, թիվ 218:

Հոկտեմբերի 1 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Անուշավան Աբովյան, Դերենիկ Դեմիրճյան, Մինաս Բերբերյան:

1) Վարչությունը միաձայն ցանկություն է հայտնում վերսկսել ընկերության պարբերական երեկույթները, որ ընդհատվել էին պատերազմի հետևանքով:

Կարգադրում են՝ առաջին երեկույթը նվիրել արևմտահայ գրողներ Գր. Ջոհրապին, Ռ. Ջարդարյանին, Դ. Վարուժանին, Սիամանթոյին:

Բանախոսելու պատրաստակամություն են հայտնում Զ. Եսայանը և Մ. Մատենճյանը (տե՛ս նաև սեպտեմբերի 25):

2) Նախագահողը հայտնում է, որ Շիրվանզադեն հանձն է առել երեկույթներից մեկում կարդալ իր նոր անտիպ դրաման:

Կարգադրում են խնդրել Շիրվանզադեին իր դրաման կարդալ հաջորդ երեկույթին: Դրա համար վարչության կողմից նրան վճարել 100 ռուբլի:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/9:

Հոկտեմբերի 2 - Մամուլը տեղեկացնում է.

«Հոկտեմբերի 6-ին երաժշտական դպրոցի դահլիճում կայանալու է հայ գրողների ընկերության ներկա սեզոնի առաջին երեկույթը՝ նվիրված տաճկահայ աքսորական գրողներին»:

«Համբավաբեր», 1916, թիվ 40:

Պոկտեմբերի 2 - Տեղեկատվություն մամուլում.

«Հայ գրողների ընկերության առաջարկության համաձայն թիֆլիսում գտնվող թուրքահայ գրողները ժողով գումարելով մի հանձնախումբ ընտրեցին՝ պատերազմից վնասված թուրքահայ գրողների ցուցակը պատրաստելու և գրողների ընկերությանը ներկայացնելու համար»:

«Համբավաբեր», 1916, թիվ 40:

Պոկտեմբերի 3 - ՀԳԿԸ վարչության անունից պաշտոնական գրություն թիֆլիսի ոստիկանապետին:

Տեղեկացնում է, որ հոկտեմբերի 6-ին՝ երեկոյան ժամը 9-ին, տեղի կունենա Ընկերության հերթական երեկույթը՝ նվիրված Գ. Զոհրապի, Ռ. Զարդարյանի, Սիամանթոյի ստեղծագործությանը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 64/19:

Պոկտեմբերի 3 - Ցուլակ Խանգադյանի նամակը թիֆլիս՝ Թումանյանին՝ <Բաքվից>:

Ստացել է բանաստեղծի նամակը (տե՛ս սեպտեմբերի 25): «Ապուշ է կտրել պ. Լեոյի «չեզոքության» առթիվ»: «Մոծակն ու մրջյունը» առակի անհասկանալի բառերի բացատրությունից բավարարված է:

«Խիստ ցանկություն» է զգում ունենալու Պուշկինի նկարը իր «սեղանի վերև» և նրա կողքին՝ Թումանյանի դիմանկարը. «Պուշկինն ունենալուց հետո մի անհաղթելի ցանկություն զգացի նրա կողքին տեսնելու Ձեր նկարը, ամեն վայրկյան, ամենայն օր...»

Հայ հեղինակների մեջ (Նոյից սկսած) ո՞րը կարող էր Ձեզմից առաջ գծագրվել երևակայության մեջ.- ոչ ոք»:

ԳԱԹ ԹՖ, 1369 (60):

Պոկտեմբերի 4 - Մամուլը տեղեկացնում է.

«Հայ գրողների ընկերության վարչությունը թիֆլիսում գտնվող տաճկահայ մտավորականներին երեսուն աթոռ է հատկացրել իր գրական երեկույթներին ներկա լինելու համար»:

«Հորիզոն», 1916, թիվ 221:

Պոկտեմբերի 7 - Պերճուհի Բարսեղյան ստորագրությամբ նամակ ՀԳԿԸ վարչությանը:

«Հորիզոնում» կարդացել է վարչության դիմումը տաճկահայ գրողներին (տե՛ս սեպտեմբերի 30): Տեղեկություններ է հաղորդում իր մասին. «Կարապ» ծածկանունով բանաստեղծություններ է տպագրել Պոլսի «Ազատամարտի», «Աշխատանքի», Սիմոն Զավարյանի հիշատակին նվիրված «Գավառ» գրքի մեջ: Շվեյցարիայում հետևել է ֆրանսիական գրականության և մանկավարժության դասընթացների: «Ազատամարտի» խմբագրությունում աշխատող ամուսնու ձերբակալությունից ու անհետանալուց հետո հաստատվել է Թիֆլիսում:

Իր երկտողով հույս ունի մոտիկից ծանոթանալու Հայ գրողների ընկերության հետ:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 122:

Հոկտեմբերի 7 - Լրատվություն մամուլում.

«Այսօրվանից Թիֆլիսում սկսվում են Հայ գրողների ընկերության գրական երեկույթները, որ երկու տարուց ի վեր, պատերազմի պատճառով, դադարել էին: Երեկույթները կայանալու են Կովկասի կայսերական երաժշտական ընկերության դահլիճում: Այսօրվա երեկույթը նվիրված է տաճկահայ աքսորական նշանավոր գրողներին: Մեր հռչակավոր վիպասանուհի տ. Զապել Եսայանը անելու է տաճկահայ նոր գրականության ընդհանուր տեսությունը և կանգ է առնելու Ռ. Զարդարյանի, Սիամանթոյի և Վարուժանի վրա: Պ. Մ. Մատենճյանը խոսելու է Գր. Զոհրապի մասին, որի երկերը դարձրել է իր առանձին ուսումնասիրության առարկան (տե՛ս նաև սեպտեմբերի 18):

«Հորիզոն», 1916, թիվ 224:

Հոկտեմբերի 7 - Գեներալ-մայոր Թամանչևի և Կլենսկու ստորագրությամբ գրություն ՀԳԿԸ վարչությանը:*

Ի հավելումն իրենց՝ սեպտեմբերի 30-ի տեղեկատվության գրում են նախկին թուրքաբնակ հայերին տրվելիք գումարի ստացական ձևաթղթերի մասին և զգուշացնում. «Вам необходимо ознакомиться заказом означенных бланков в возможно непродолжительное время».

*) Գրության վրա Թունանյանի ձեռքով նշված է ստացման ամսաթիվը՝ 8 հոկտ., 1916:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/8:

Հոկտեմբերի 8 - Երաժշտական սալոնում տեղի է ունենում ՀԳԿԸ նոր սեզոնի առաջին գրական երեկույթը՝ նվիրված արևմտահայ գրականությանը:

Հայորդի ստորագրությամբ հաղորդման հեղինակը գրում է. «Հայ գրողների ընկերության նախագահը, բանալով երեկույթը, հավուր պատշաճի մի քանի խոսք ասաց՝ վեր հանելով այն տառապանքն ու խաչելությունը, որ այս թուրքիս քաշում են մեր տաճկահայ եղբայրները թուրքահայ գազանության ներքև, որին զոհ են գնացել նաև արևմտահայ վաստակավոր գրողներ՝ Ջոհրապ, Ջարդարյան, Վարուժան և Սիամանթո: Հարգելի բանաստեղծը հրավիրեց հասարակության՝ ջերմեռանդորեն մոտենալ արևմտահայերի ողջակիզվող մտքին, որն ունեցել է ծաղկման ու բարգավաճման զորավոր շրջաններ:

Ապա թուրքահայ գրագիտուհի տիկ. Ջապել Եսայան կարդաց առաջին դասախոսությունը:

...Սիամանթոն եղել է հզոր երգիչը ցեղի տառապանքներին ու սոսկումներին, Գր. Ջոհրապը՝ իրապաշտ արվեստագետը, ներկայացրել է պոլսահայ հասարակական և ընտանեկան կյանքը, Ռ. Ջարդարյան՝ գավառական կյանքի և լեզվի հզոր նկարիչը և վերջապես Վարուժան՝ քնքույշ և խորունկ բանաստեղծը, որ մարդկային հույզերն ու զգացմունքները շնչավորել է գեղեցիկ արվեստով:

Պ. Մատենճյանը՝ մասնավորապես նյութն ունենալով Գր. Ջոհրապը:

Դահլիճը ծայրեծայր լցված էր հետաքրքիր հասարակությամբ, որոշ տեղեր հատկացված էին արևմտահայ մտավորականության:

ԿՀԳԸ-ն սկսած դասախոսությունները արժանի են գնահատանքի և քաջալերանքի»:

«Համբավաբեր», 1916, թիվ 423:

Հոկտեմբերի 11 - Հաղորդագրություն Հայ գրողների ընկերության՝ նոր շրջանի առաջին գրական երեկույթի մասին (տե՛ս հոկտեմբերի 7, 8):

Մասնավորապես տեղեկացվում է. «Ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը, վերաբացելով գրական երեկույթների շարքը, հարգանքի խոսք ասաց տաճկահայ տարագիր գրողների, նրանց կրած անլուր տառապանքների առիթով՝ հանձին տիկ. Ջ. Եսայանի:

Տիկնոջը պ. Հովհ. Թումանյանը մատուցեց ծաղկեփունջ»:

Երեկոյթին ներկա է եղել Պետական դումայի անդամ Միք. Պապաջանյանը:

«Հորիզոն», 1916, թիվ 226:

Հոկտեմբերի 12 - Մամուլում հրապարակվում է ՀԳԿԸ վարչության հայտագիրը:

Տեղեկացվում է, որ ամսի 15-ին Երաժշտական ընկերության դահլիճում տեղի կունենա գրական երեկոյթ: «Հայոց հին բանաստեղծությունը» թեմայով դասախոսություն կկարդա Մամուկ Աբեղյանը: Դասախոսությունից հետո տեղի կունենա բանավեճ:

«Հորիզոն», 1916, թիվ 227:

Հոկտեմբերի 14* - Երաժշտական դպրոցի դահլիճում տեղի է ունենում Հայ գրողների ընկերության երկրորդ գրական երեկոյթը:

«Հայոց հին բանաստեղծությունը» թեմայով բանախոսում է Մ. Աբեղյանը:

Ըստ մամուլի հաղորդագրության՝ ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը ցավ է հայտնում այն երևույթի համար, որ հայ մտավորականությունը բոլորովին անծանոթ է հայոց հին բանաստեղծության, որ ունեցել է յուր ծաղկման ու զարգացման գեղեցիկ շրջանները:

Դասախոսության շուրջ տեղի է ունենում բանավեճ, որին մասնակցում է միայն Ստ. Լիսիցյանը:

Լեփ-լեցուն դահլիճում ներկա հասարակությունը բուռն ծափահարություններով է վարձատրում դասախոսին:

*) Ընկերության հայտագրում (տե՛ս հոկտեմբերի 12) երեկոյթի ամսաթիվ նշված է հոկտեմբերի 15:

«Համբավաբեր», 1916, թիվ 43:

Հոկտեմբերի 15 - Մեսրոպ Եպիսկոպոսի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ <Բաքվից>:

Սկսել է կարգի գցել առաջնորդարանի գործերը: Ստադիր է առաջիկայում լինել նաև Ասխաբադի և Թուրքեստանի կողմերում: Նպատակ ունի Բաքվում վերաբացելու օրիորդաց դպրոցը, «որ մի ժամանակ մեծ դեր էր կատարում». «Նա էր միայն վառ պահում թե հայությունը, թե մանավանդ հայոց լեզուն»: Խնդրում է Նվարդի միջոցով մի «օրինակելի աղջիկ» գտնել և ուղարկել «նոր բացվելիք դպրոցի համար»:

Նաև խնդրում է Խատիսյանի միջոցով մի գործ ճարել իր մամակաբերի համար, որ մասնագիտությամբ իրավաբան է:

ԳԱԹ ԹՖ, 1738 (907):

Հոկտեմբերի 17 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Անուշավան Աբովյան, Մինաս Բերբերյան:

1) Նախագահողը հայտնում է, որ Հ. Հովհաննիսյանը հանձն է առել մի շարք դասախոսություններ կարդալ, որոնցից մեկը՝ «Հայ պատմիչների փիլիսոփայական աշխարհայացքը» թեմայով, տեղի կունենա առաջիկա ուրբաթ օրը:

Կարգադրում են՝ ընդունել առաջարկը և այդ մասին հայտարարություն տալ «Հորիզոն» և «Кавказское слово» թերթերում:

2) Տեղեկացվում է, որ ընկերության անդամներից շատերը չեն վճարել անցած երկու տարվա և ընթացիկ տարվա անդամավճարները:

Կարգադրում են՝ մամուլի միջոցով հրավիրել նրանց երեկույթների ժամանակ վերանորոգել անդամակցությունը և անդամավճարները հանձնել վարչության գանձապահին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/10:

Հոկտեմբերի 17 - «Армянский вестник» շաբաթաթերթի խմբագրի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից.

«Մեծարգո Տեր

պարոն Հովհ. Թումանյան,

«Армянский вестник»-ի խմբագրությունը, ցանկանալով ունենալ իրեն մոտ հայ բոլոր գրողների և հասարակական գործիչների պատկերները, սրանով դիմում է Ձեզ պ. Հովհ. Թումանյան, և խնդրում Ձեր վերջին լուսանկարը:

Լիաժույս ենք, որ մեր այս խնդիրը անհետևանք չի մնա Ձեր կողմից, որի համար հայտնելով մեր սրտագին շնորհակալությունը, մնում ենք առ Ձեզ միշտ հարգանաց խորին հավաստիքներով՝

խմբագիր-հրատարակիչ՝ Ամիրյան,

քարտուղար՝ ստորագրություն»:

ԳԱԹ ԹՖ, 996 (265):

Հոկտեմբերի 19 - Վ. Վալադյանի նամակ-առաջարկությունը ՅԳԿԸ վարչությանը՝ Երևանից.

«Ցանկանում եմ դասախոսություն կարդալ ընկերությանդ գրական երեկոյներից մեկում՝ «Ռազմի դաշտում (ապրումներ և մտքեր)» նյութի մասին:

Եթե հարգո վարչությունդ համաձայն է - խնդրում եմ տեղեկացնել ինձ: Դասախոսելու համար թիֆլիս գալ կարող կլինեն նոյեմբերի 5-10-ը:

Հարգանքով՝ **Վ. Վալադյան** »:

ԳԱԹ ՅԳԿԸՖ, 174:

Հոկտեմբերի 19 - Հաղորդագրություն մամուլում.

«Հոկտեմբերի 14-ին թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում* կայացած Հայ գրողների ընկերության այս սեզոնի երկրորդ գրական երեկոյին պ. Մանուկ Աբեղյանը դասախոսեց Հայոց հին գրականության մասին:

...Դասախոսությունից հետո վիճաբանությունն սկսելուց առաջ գրողների ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը հայտնեց, որ միայն Վ. Բրյուսովից հետո է, որ մեր հին բանաստեղծության մասին լսում ենք պ. Մ. Աբեղյանից, որը տասնյակ տարիներ հմտորեն ուսումնասիրել է մեր հին գեղեցիկ գրականությունը, դեպի որը մենք շատ անտարբեր ենք եղել:

... Հասարակությունը ջերմագին վարձատրեց պ. դասախոսին՝ երկարատև և բուռն ծափերով: Երեկոյթը վերջացավ գիշերվա ժամը 12 և կեսին»:

*) Երեկոյթի օրը նախապես հայտարարված էր եղել հոկտեմբերի 15-ին, երաժշտական ընկերության դահլիճում (տես հոկտեմբերի 12):

«Հորիզոն», 1916, թիվ 233:

Հոկտեմբերի 19 - Մամուլը տեղեկացնում է.

«Ուրբաթ, հոկտեմբերի 21-ին, երաժշտական դպրոցի դահլիճում գրողների ընկերության հերթական երեկոյթին դասախոսելու է Հայկ Հովհաննիսյանը «Հայ պատմիչների պատմա-փիլիսոփայական աշխարհայացքի մասին»: Գրողների ընկերության վարչությունը, ընդառաջ գնալով հասարակության ցանկությանը, որոշել է երեկոյթներն սկսել երեկոյան ժամը 8-ից»:

«Հորիզոն», 1916, թիվ 233:

Պոկտեմբերի 20 - «Գործ» ամսագրի խմբագրության անունից՝ Ցոլակ Խանգաղյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից:

Գործնական առաջարկ է. «Ստանալով Ձեր համաձայնությունը աշխատակցելու «Գործ» ամսագրին, խմբագրական հանձնաժողովը դիմում է Ձեզ և խնդրում ընդունել իբրև ավանս 1917 թվի համար 600 ռ.: Մենք այդ գումարը կարող ենք վճարել Ձեզ սկսած առաջիկա նոյեմբերից ըստ Ձեր ցանկության կամ ամեն ամիս 50-ական ռ. կամ յուրաքանչյուր վեց ամսվա համար 300 ռ. 1916 թ. նոյեմբերին և 1917 թ. մայիսին:

Յուրաքանչյուր կիսամյակին մենք կհաշվենք, եթե Ձեր ուղարկած նյութերի արժեքը ավելի լինի քան Ձեզ տված ավանսը, գանազանությունը անմիջապես կփոխադրենք Ձեզ...»:

ԳԱԹ ԹՖ, 1370 (62):

Պոկտեմբերի 20 - Ալեքսանդր Սպենդիարյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Սուդակից (Ղրիմ):

Գրում է, որ մոտավորապես մի ամսից մտադիր է Թիֆլիս գալ, և բանաստեղծի հետ կքննարկեն «Թմկաբերդի առումը» պոեմի թեմաներով օպերա ստեղծելու հարցը. «Եթե Դուք դեռ ժամանակ չեք ունեցել զբաղվելու՝ «Թմկաբերդի առումը» մշակելու, թող դա Ձեզ այնքան էլ չնեղի. իմ՝ Թիֆլիս գալու ժամանակ մենք, համենայն դեպս, կկարողանանք Ձեզ հետ միասին վերջնականապես մշակել սցենարիումը, և, բացի դրանից, ինչպես արդեն գրել եմ, ես կզբաղվեմ երաժշտական նյութերի հավաքմամբ, ուստի իմ՝ Թիֆլիս գալը իզուր չի անցնի»:

Եվ վերջում. «Ամսահման ուրախ կլինեն հանդիպել Ձեզ և ժամանակ ու հետաքրքիր զրույցներ անցկացնել Ձեզ և Ձեր համակրելի աղջիկների հետ»:

ԳԱԹ ԹՖ, 1999 (980):

Պոկտեմբերի 21 - Արամ Խանճյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից:

«Աշխատանք» եռօրյա թերթի խմբագրությունը ՀԳԿԸ վարչությանն ուղարկել է արևմտահայ այն մտավորականների ցուցակը, որոնք հավակնում էին պետական նպաստ ստանալու (տե՛ս սեպտեմբերի 21): Բայց իր անունը այդ ցուցակից դուրս է մնացել: Ուստի դիմում է բանաստեղծին. «Ձեր առողջ դատողության և ուշադրության հայցելով կխնդրեի որպես սկսնակ բանահավաքի ինձ ևս

բաշխվելիք գումարեն որոշ բաժին մը հանել. այսպիսով քաջալերած կլինեք ինձի ապագային ավելին մեջտեղ բերելու և նպաստած կլինեիք հյուսձված ֆիզիկականս բարելավելու»:

Կենսագրական տեղեկություններ է հաղորդում իր մասին: Ավարտել է Վանի «պետական վարժապետանոցը»: Զբաղվել է ուսուցչությամբ և բանահավաքությամբ: Հավաքած նյութերն ու ուսումնասիրությունները տպագրել է Արամ Խանճյան, Ռոսկան և Սարգիսի ստորագրություններով: Աշխատել է Տիգրան Զիթունու հետ:

ԳԱԹ ԹՖ, 1383 (733):

Հոկտեմբերի 21 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 235) «Գրական երեկոներ» հոդվածը:

Առիթը Հայ գրողների ընկերության գրական երեկույթին (տե՛ս հոկտեմբերի 14) Մ. Աբեղյանի կարդացած դասախոսությունն է հայոց հին գրականության մասին:

Հոդվածն սկսվում է ազգային լուսավորության և ինքնաճանաչության մասին դիտողություններով. «Ինչքան ավելի ենք առաջ գնում, էնքան ավելի ենք նկատում ու համոզվում, որ աղջամուղջի ու անգիտության ճանապարհով ենք գնում և շիտակ ու անսայթաք առաջ գնալու համար մեր ձեռքին լապտեր պիտի ունենանք: Ամեն մի ժողովրդի համար բնության ու մարդկության ճշմարիտ ծանոթության հետ միասին, իր ազգային ինքնաճանաչությունն է իր ճանապարհի մթնոլորտում լույս տվող լապտերը»:

Այս տեսակետից կարևորում է Աբեղյանի դասախոսությունը, որ, ծանոթացնելով մեր հին գրականությանն ու պատմությանը, «ցույց էր տալիս, թե ի՞նչքան է հին էս ահռելի պատերազմը, որ էսօր վարում է հայ ազգը, թե սրանից ավելի մեծ աղետներ են տեղի ունեցել մեր հողի վրա»: Մարդիկ իմանում են, որ այդ աղետները «հայոց Ազգային Բյուրոյից» չէ, որ սկսվում են. «Սեփական ազգային կյանքի էս գրեթե կատարյալ անգիտությունը, որի մեջ կարող է լինել ոչ միայն դատողն ու դատապարտողը, այլ նույնիսկ և ինքը՝ Ազգային Բյուրոն, էս համատարած անգիտությունը մի շատ ցավալի վիճակ է, որից մենք դուրս պետք է գանք վերջապես, ինչ ուզում է լինի»:

Հայ գրողների ընկերության կազմակերպած դասախոսությունները նշանակալից քայլ է համարում այդ ուղղությամբ:

ԵԼԺ 7, 280-282:

Հոկտեմբերի 26 - Տպագրվում է ՀԳԿԸ վարչության ազդագիրը:

Տեղեկացվում է, որ հոկտեմբերի 28-ին Երաժշտական ընկերության դահլիճում տեղի կունենա գրական երեկույթ: «Պառնասական ուղղությունը ֆրանսիական գրականության մեջ» թեմայով կդասախոսի Մ. Մատենձյանը: Դասախոսությունից հետո տեղի կունենա բանավեճ:

Վարչությունը նաև խնդրում է ընկերության անդամներին վերանորոգել անդամակցությունը ընդհանուր ժողովի համար: Անդամակցությունը կարելի է վերանորոգել երեկույթների ժամանակ պ. զանձապահի մոտ:

«Հորիզոն», 1916, թիվ 239:

Հոկտեմբերի 27 - Նամակ Պետերբուրգ՝ Նիկողայոս Մառին Թիֆլիսից:

Տեղեկացնում է, որ ՀԳԿԸ նախաձեռնությամբ «հայ մտավորականների և մեծատունների մի խումբ հիմք են դրել մի խոշոր ընկերության, որ, գրողների ընկերությունից անկախ, նպատակ ունի ապահովելու ու զարգացնելու առհասարակ հայկական կուլտուրան և մասնավորապես հայագիտությունը իր բոլոր ճյուղերով»:* Ընկերության նպատակներից է նաև հետազայում հիմնադրել հայկական համալսարան և ակադեմիա:

Հարցնում է Մառին, թե ինչով կարող է օգտակար լինել այդ ձեռնարկությանը և ինչ պայմաններով:

*) Չնայած Թումանյանի համառ ջանքերին՝ ընկերության գործն այնպես էլ զլուխ չի գալիս: Դրան խանգարում են պատերազմի ընթացքում և պատերազմից հետո գլխապտույտ արագությամբ իրար հաջորդող իրադարձությունները, որոնք ճակատագրական հետքեր թողեցին հայ ժողովրդի կյանքում:

ԵԼԺ 10, 254, 623-625:

Հոկտեմբերի 28 - Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում տեղի է ունենում ՀԳԿԸ հերթական՝ չորրորդ գրական երեկույթը (տես հոկտեմբերի 26):

«Պառնասական ուղղությունը ֆրանսիական գրականության մեջ» թեմայով դասախոսում է Մ. Մատենձյանը: Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ա. Վշտունին, Հ. Սոլովյանը, Պ. Աբրահամյանը, Ստ. Լիսիցյանը, Ա. Ֆետվաճյանը, Վ. Մենակը:

«Հորիզոն», 1916, թիվ 245:

Հոկտեմբերի 28 - Մամուլը տեղեկացնում է.

«Լսել ենք, որ Հայ գրողների ընկերությունը ձեռնարկել է կազմելու բանաստեղծության ժողովածու (սկզբից մինչև մեր օրերը), որի մեջ մեծ տեղ է տրվելու հին բանաստեղծությանը:

Ժողովածուն բաղկացած է լինելու մի քանի հատորից»:

«Հորիզոն», 1916, թիվ 241:

<Հոկտեմբերի 29> - Նամակ Բաքու՝ Ցոլակ Խանզադյանին՝ Թիֆլիսից:

Ստացել է հասցեատիրոջ նամակը (տե՛ս հոկտեմբերի 3), որով խնդրում է թումանյանի լուսանկարը: Բանաստեղծը խոստանում է ուղարկել:

Դժվարանում է դրական պատասխանել «Գործին» աշխատակցելու առաջարկին, որովհետև ո՛չ հնարավորություն ունի, ո՛չ ժամանակ. «Չեմ սխալվիլ, եթե ասեմ՝ իմ գրվածքների 90 տոկոսը հիվանդ ժամանակս եմ գրել և մեկ էլ՝ երբ հիվանդության պատճառով մի տեղ եմ դրկել մի երկու, երեք ամսով: Հատկապես Աբասթուման:

Վերջապես վախենում եմ, թե խմբագրության պայմանն (տե՛ս հոկտեմբերի 20) ընդունեմ: Մամավանդ էս տարի գգում եմ, որ շատ եմ հոգնած ու ջարդված ամեն կողմից»:

ԵԼԺ 10, 255-256, 625:

Հոկտեմբերի 29 - Գեներալ-մայոր Թամամշևի և Կլենկսկու ստորագրությամբ գրություն ՀԳԿԸ վարչությանը:*

Տեղեկացնում են, որ փախստական գրողներին օգնելու համար հատկացված 10000 ռ. գումարը կարելի է ստանալ տալոնով. «Для получения Талона к оссигнованию на указанную сумму Вам надлежит обратиться Сметное Отделение Канцелярии Наместника Его Императорского Величества на Кавказе».*

*) Գրության վերջում Թումանյանի ձեռքով նշված է ստացման ժամանակը՝ 30 հոկտ. 1916:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/8:

Հոկտեմբերի 30 - Մամուլը տեղեկացնում է.

«Հայ գրողների ընկերությունը ձեռնարկել է կազմելու բանաստեղծության ժողովածու (սկզբից մինչև մեր օրերը) (տե՛ս նաև հոկտեմբերի 28.- խմբ.), որի մեջ տեղ է գտնվելու հին բանաստեղծությունը: Ժողովածուն բաղկացած է լինելու մի քանի հատորներից»:

«Համբավաբեր», 1916, թիվ 44:

Հոկտեմբերի 31 - Յուլակ Խանգադյանի նամակը Թիֆլիս՝ Թուճանյանին՝ <Բաքվից>:

Բանաստեղծի պատասխանը (տե՛ս <հոկտեմբերի 29>) «Գործի» առաջարկին (տե՛ս հոկտեմբերի 20) այնպես է հասկացել, թե բանաստեղծը, ընդունելով ավանսի առաջարկը, չի ուզում իրեն որևէ բանով պարտավորված զգալ կամ պատվերով գրել: Բացատրում է, թե խմբագրությունը ամենևին չի ուզեցել նեղացնել բանաստեղծին. «Վարձատրության այն խիստ պայմանական *մաքսիմումը*, որ նշանակվելու է Ձեր գրվածքների համար, մեր կարծիքով, ամենևին արժանի գնահատականը չի լինելու Ձեր գրական աշխատանքի, ուստի «Գործի» խմբագրությունն ուրախ է, որ հնարավորություն ունի այդ *մաքսիմումի* սահմանից դուրս գալու և առաջարկելու Ձեզ հատուկ «պայմաններ», որոնք պարտավորեցնում են ոչ թե Ձեզ, այլ խմբագրությանը»: Բանաստեղծը թող քանակի համար չմտախոգվի. «Մենք համոզված ենք, որ *ինչքան էլ գրեք, մեր առաջարկած 600 ռ. համեստ վարձատրությունը շատ չէ*»:

Տեղեկացնում է, որ այդպիսի հատուկ պայմաններից կարող են օգտվել Թուճանյանից բացի միայն Լեոն, Իսահակյանը և Տերյանը:

Նամակի վերջում Երվանդ Թաղիանոսյանը իր կողմից ավելացնում է. «Սիրելի Օհանես, քո նամակը կարդացել ենք ես և Յուլակը, խմբագրական մասնաժողովին դեռ չենք զեկուցել: Հարկ եմ համարում մի քանի խոսք իմ կողմից ավելացնել: Մեր՝ քեզ արած առաջարկի գլխավոր նպատակն այն է, որ մեր «Գործը» դառնա և քո գործը: Մենք գիտենք, որ առաջ-ով չի կարելի գրել:

Խնդրում ենք միայն քեզնից տալ «Գործին» այն, ինչ որ դու կցանկանաս և երբ կցանկանաս: Եթե տարին վերջանալուց հետո դու մեզ ոչինչ չտաս կամ շատ քիչ բան տված լինես, մենք քեզնից ոչ մի պահանջ չենք անի. այս մտքով էլ գրված է նամակը: Սեղմում եմ կարոտով քո ձեռքը և սպասում պատասխանի:

Քո Երվանդ:

ԳԱԹ ԹՖ, 1371 (61):

<Հոկտեմբեր> - Դ. Դեմիրճյանի նամակը Թուճանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է «Թմկաբերդի առումը» պոեմի թեմաներով օպերայի լիբրետոյի մասին (տե՛ս հոկտեմբերի 20): Այն կարծիքին է, որ այդ նպատակի համար պիտանի ուժեր հրապարակում չկան. լավագույն դեպքում կգրվի մի միջակ լիբրետո և միջակ էլ օպերա, և հասարակությունը դրանով կբավարարվի՝ ավելի լավը չլինելու պատճառով: Եվ եզրակացնում է. «Լիբրետո մեզանում գրող չկա իսկական իմաստով: Իմ կարծիքով՝ դու կարող էիր գրել, բայց դու պիտի ենթարկվես երաժշտի ղեկավարության: Ես էլ կարող եմ. և, անկախ մեր շնորհից, մի բան կա, որ խոսում է հօգուտ ինձ. մինչդեռ դու պետք է ենթարկվես մի ուրիշ երաժշտի ցուցմունքներին, ես այնքան ծանոթություն ունեմ երաժշտության և լիբրետոներին, և ավելի քիչ պետք ունեմ ցուցմունքի: Բայց երկուսիս էլ պետք է դնել գեղարվեստագետի պայմանների մեջ: Յնարավո՞ր է այդ, թե՞ ոչ,- դրա պատասխանը պետք է տա էքսպեդիցիան: Կամ ես պիտի գրեմ, կամ դու. երկրորդ դեպքում երաժիշտը պիտի քեզ հարմարվի: Ուզո՞ւմ ես փորձենք»:

ԳԱԹ ԹՖ, 1140 (310 լր.):

Նոյեմբերի 1 - Մամուլը տեղեկացնում է.

«Հայ գրողների ընկերությունը արդեն տպագրության է հանձնել գրական երեկույթների դասախոսությունները: Շուտով լույս կտեսնի տիկ. Ջ. Եսայանի «Թուրքահայ ժամանակակից գրողները» դասախոսությունը»:

«Յորիզոն», 1916, թիվ 244:

Նոյեմբերի 2 - Մամուլում հաղորդագրություն՝ ՀԳԿԸ նոր սեզոնի հերթական չորրորդ գրական երեկույթի (տե՛ս հոկտեմբերի 28) մասին:

«Յորիզոն», 1916, թիվ 245:

Նոյեմբերի 2 - Տպագրվում է ՀԳԿԸ վարչության ազդագիրը:

Տեղեկացվում է, որ նոյեմբերի 4-ին երաժշտական ընկերության դահլիճում տեղի կունենա ընկերության հերթական՝ հինգերորդ գրական երեկույթը: Մ. Աբեղյանը հանդես կգա հայոց հին գրականության մասին երկրորդ դասախոսությամբ՝ նվիրված Գրիգոր Նարեկացուն:

Դասախոսությունից հետո տեղի կունենա բանավեճ:

«Յորիզոն», 1916, թիվ 245:

Նոյեմբերի 3 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝
Համլիկ Թումանյանին՝ Իգդիրից:

Խնդրում է ուղարկել «1) Կիրակոս Գանձակեցի, 2) «Գիքորը»,
3) խաղերից բոլորը (տե՛ս մարտի 2), 4) հայրիկի հոդվածը՝ «Հան-
ցավորներ և դատավորներ» և էլ ոչինչ»:

ԹԶ ԱՐՏ, 194-195:

Նոյեմբերի 4 - Լրատվություն մամուլում:

ՀԳԿԸ վարչությունը Ն. Մառին հրավիրել է Թիֆլիս՝ դասախո-
սություններ կարդալու հայագիտության և կովկասագիտության
մասին:

«Հորիզոն», 1916, թիվ 247:

Նոյեմբերի 6 - Հաղորդագրություն մամուլում.

«Ուրբաթ, հոկտեմբերի 28-ին Թիֆլիսի երաժշտական դպրոցի
դահլիճում Հայ գրողների ընկերության երեկույթին պ. Մ. Մատենճ-
յանը դասախոսեց «Պառնասյան ուղղությունը գրականության մեջ»
նյութի մասին:

...Դասախոսությունից հետո եղան վիճաբանություններ,
որոնց մասնակցեցին Աբրահամյան, Լիսիցյան և այլն (տե՛ս նաև
հոկտեմբերի 28.- խմբ.):

Վիճաբանության խառնվեցին նաև այնպիսիները, որոնք քիչ
տեղեկություն ունեին Պառնասյան գրականության մասին»:

«Համբավաբեր», 1916, թիվ 45:

Նոյեմբերի 6 - Նամակ Աստրախան՝ Մեսրոպ Տեր-Մովսիս-
յանին Թիֆլիսից:

Գրում է Ազգային բյուրոյի շուրջ ստեղծված իրադրության
մասին: Բյուրոյին մեղադրում էին արևմտահայ գաղթականների օգ-
նության համար հանգանակված գումարները վատնելու մեջ: Կաս-
կածվում էր նաև Բյուրոյի նախկին նախագահ Մեսրոպ Եպիսկոպոս
Տեր-Մովսիսյանը: Գործին խառնվում է նաև Անդրանիկը՝ պահանջե-
լով իր հանգանակած գումարների հաշիվը: Բողոքում էին նաև գաղ-
թական հայերը. «Սասունցիք Ղարաքիլիսա սպառնացել են կենտրո-
նականի մարդկանց, թե՛ պիտի սպանենք»: «Մի խոսքով,- շարունա-
կում է բանաստեղծը,- ամեն բան էնքան է խախտւտ, որ ամեն կողմից
ճռճռում է: Տեսնենք ում գլխին է քանդվում»:

Իբրև լավ լուր հայտնում է Հայկազյան ընկերությունը հիմնելու իրենց մտադրության և առաջին քայլերի հաջողության մասին (տե՛ս հոկտեմբերի 27):

ԵԼԺ 10, 256-258, 626-627:

Նոյեմբերի 6 - Հ. Աճառյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Ստացել է բանաստեղծի նամակը: * Ոգևորված է մի նոր հայագիտական ընկերություն,** այնուհետև համալսարան, ակադեմիա հիմնելու գաղափարով (տե՛ս հուլիսի 3, հոկտեմբերի 27): Պատրաստ է ամեն կերպ օգտակար լինելու, որովհետև ինքն էլ է ժամանակին նույնպիսի մի մտադրություն ունեցել: Մանրամասն շարադրում է իր՝ հայագիտական ապագա դասընթացների ծրագիրը:

*) Այս նամակն անհայտ է (տե՛ս ԵԼԺ 10, 632):

**) Խոսքը Հայկազյան ընկերության մասին է:

ԳԱԹ ԹՖ, 867 (491):

Նոյեմբերի 9 - Նամակ Բաքու՝ Ցոլակ Խանզադյանին՝ Թիֆլիսից:

«Գործի» խմբագրությունը հրավիրել էր բանաստեղծին՝ աշխատակցելու հանդեսին՝ նախապես առաջարկելով ավանս գումար (տե՛ս հոկտեմբերի 20), որ նա զգուշացել էր ընդունել (տե՛ս հոկտեմբերի 29): Խմբագրությունում կարծել են, թե ավանսի առաջարկը բանաստեղծը հասկացել է իբրև իր վրա դրվող պարտավորություն կամ պատվեր և նեղացել է դրանից (տե՛ս հոկտեմբերի 31): Թումանյանը բացատրում է. «Ընդհակառակը, վախեցել եմ նեղացնեմ, նրա համար եմ հրաժարվել էս գլխիցն ընդունեմ: Իսկ եթե դուք էդպես եք մտածել և իմ ավանս ընդունելը ձեզ համար համարվելու է իմ լավ զգացմունքի ու մոտիկության նշանը՝ խնդրում եմ իսկույն ևեթ փոխադրեք. մանավանդ հենց դրամական մի շարք օպերացիաներ ունեմ և էդ 600 ռ. էլ մի ծակ կփակի: Կուզեք 600, կուզեք – 300 փոխադրեցեք, որ մյուս անգամ էլ էդ տեսակ կասկած չունենաք»:

Լավատես է Հայկազյան ընկերության կայացման վերաբերյալ. «Այժմ արդեն գլուխ է գալիս: Պետք է ստեղծել և Հայկական ակադեմիա»:

ԵԼԺ 10, 258-259:

Նոյեմբերի 9 - Մամուլը հաղորդում է, որ նոյեմբերի 11-ին երաժշտական ընկերության դահլիճում տեղի կունենա ՅԳԿԸ երեկոյթ:

«Հայ ժողովրդի դրությունը թուրքիայում 1908-1915 թթ.» թեմայով դասախոսություն կկարդա բժ. Խ. Բոնապարտյանը:

Բանավեճին կմասնակցեն Գ. Քալաշյան, Գազանճյան, Թորգոմյան և ուրիշներ:

«Հորիզոն», 1916, թիվ 251:

Նոյեմբերի 13 - Սոլունոն Եղիազարյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս թումանյանին Կիևից:

Ստացել է բանաստեղծի՝ հոկտեմբերի 3-ի նամակը* Հայկական համալսարան և ակադեմիա հիմնելու գործին մասնակից լինելու առաջարկությամբ: Չի կարող ընդունել առաջարկությունը երկու պատճառով. «ա) Ո՞վ է այդ ընկերության հիմնադիրը, բ) ի՞նչ նյութական միջոցների ու աղբյուրի վրա է դրել իրա հույսը Ձեր պատվելի ընկերությունը»:

Ավելի մանրամասնելով իր նկատառումները՝ գրում է. «Ընկերությունը մինչև անգամ մտադիր է Ակադեմիա հիմնել: Այս դեպքում հարցը ավելի է բարդանում: Ակադեմիայի համար ահագին գումար է հարկավոր: Բացի սրանից *Ակադեմիան Հայաստանի սահմաններից դուրս, հայոց Ակադեմիա չէ կարող լինել*, որովհետև պատմական հիմք չունի: Թիֆլիսը իմ աչքում մի գաղութ է, որից Հայաստանի հոտ չի բուրում: Թիֆլիսում հայոց լեզուն աղավաղվեց այն աստիճանի, որ ես զգվանքով լրագիրը ձեռքս եմ առնում: *Փոխանակ ժողովրդի լեզվով գրել, ժողովրդի լեզվի միջոցով հարստացնել գրական լեզուն, ստեղծում են նոր բառեր, նոր դարձվածներ, որոնք ժողովրդին անհասկանալի են*: Այս բոլորից հետո մարդիկ զարմանում են, թե ինչու ժողովուրդը հայոց լեզվով գրքեր չէ կարդում: *Չէ կարողում նրա համար, որ չէ հասկանում*: Ես, որ առաջ ամեն մի աչքի ընկնող գիրք գնում էի, այժմ *ոչ մի գիրք չեմ գնում, որովհետև չհնժու լեզուն ինձ համար զգվելի է*»:

Ինքը մշտապես զբաղվել է «իրավաբանական և սոցիալական կյանքի» խնդիրներով:

*) Նամակն անհայտ է:

ԳԱԹ ԹՖ, 1152 (615):

Նոյեմբերի 14 - Տեղի է ունենում ՀՀԿԸ վարչության հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Դերենիկ Դեմիրճյան, Մինաս Բերբերյան:

1) Լսում են Թումանյանի հայտարարությունը, թե գեներալ Թամանշի միջոցով կառավարությունից ստացել է 10 000 ռուբլի՝ տաճկահայ գաղթական գրողներին փոխարինաբար բաժանելու համար (տե՛ս սեպտեմբերի 30), և ժամանակավորապես դրել է վաճառականական բանկը: Ներկայացնում է նաև թուրքահայ գրողների կողմից ընտրված մասնաժողովի ուղարկած մի ցուցակ այն գաղթական գրողների, որոնք իրենց արժանիքներով և ընտանեկան կարիքավոր վիճակով արժանի են նպաստ ստանալու նշված պայմաններով (տե՛ս սեպտեմբերի 3): Մասնաժողովի անդամներից նիստին ներկա են Ծերուն Թորգոմյանը և Արտակ Դարբինյանը:

Նույնպիսի մի ցուցակ նախագահողը ներկայացնում է Երևանի «Աշխատանք» թերթի կողմից:

Կարգադրում են՝ դրամի մասնատրությունը հետաձգել, մինչև որ Երևանի գրողները վարչությանը ներկայացնեն իրենց կողմից ընտրված լիազորին, իսկ Թիֆլիսի մասնաժողովը հայտնի իր եզրակացությունը:*

2) Նախագահողն առաջարկում է վարչության կողմից ցավակցական հեռագիր ուղարկել Սենկևիչի մահվան առթիվ:

Կարգադրում են՝ հեռագրի կազմելը և ուղարկելը հանձնարարել վարչության նախագահին:

3) Տեղեկացվում է, որ ընկերության անդամ Ռուբեն Խանազատը փոխարինաբար 500 ռուբլի է խնդրել՝ իր աշխատությունը տպագրելու համար:

Կարգադրում են տալ 300 ռուբլի երաշխավորագրով և տոկոսով՝ 6 ամիս ժամանակով:

4) Նախագահողը հայտնում է, որ ընկերության անդամ Հովհ. Միրաքյանը նույն նպատակով խնդրել է 300 ռուբլի:

Կարգադրում են՝ տալ նրան խնդրած գումարը՝ 6 ամիս ժամանակով:

5) Ընկերության անդամ Խաչատուր Բաբայանցը նախագահի միջոցով հայտնել է, որ ինքը գինվոր է գնացել և խնդրում է նպաստ տալ իր ընտանիքին (տե՛ս սեպտեմբերի 17):

Կարգադրում են՝ նրա ընտանիքին տալ 100 ռ. միանվագ նպաստ:

6) Առաջարկություն է լինում երեկույթներին ավելի պատրաստ և բովանդակալից դասախոսություններ ունենալու նպատակով ավելացնել վարձատրության չափը:

Կարգադրում են՝ վարձատրությունը սահմանել 50 ռուբլի:

*) Պահպանվել է (ԳԱԹ ՀԳԿԸՖ, 100/10) այս կապակցությամբ Թումանյանի ձեռքով գրված մի այլ հայտարարության սևագիրը.

«Ի գիտություն թուրքահայ փախստական գրողների

Գեն. Թամամշևը Հայ Գրողների Կովկ. Ընկ. վարչության տվել է 10000 ռ. թուրքահայ փախստական գրողներին տալու փոխարինաբար և 6 % տոկոսով:

Վարչությանս դիմումին ի պատասխան Թիֆլիսի թուրքահայ փախստական գրողների ընտրած հանձնախումբը և Երևանի թուրքահայ գրասիրաց ընկերության վարչությունը ուղարկել են մեզ գրողների ցուցակը և վարչությանս մոտ ներկայացուցիչ են նշանակել պ.պ. Արամ Մանուկյանին և Արտակ Դարբինյանին:

Արդ վարչությունս յուր նախագահի և հիշյալ ներկայացուցիչների մասնակցությամբ կազմել է մի հանձնախումբ և նրան լիազորել է կատարելու փոխատվության բաշխման գործը:

Հայտարարում են ի գիտություն այն փախստական գրողների, որոնք մինչև այժմ Թիֆլիսի և Երևանի մարմինների միջոցով իրենց մասին տեղեկություն չեն հաղորդել վարչությանս, փութան մինչև ամսիս վերջը նորընտիր հանձնաժողովին դիմել՝ իր նախագահի անունով: Իրենց մասին տեղեկություններ և իրենց հասցեն:

Հայ գրողների կովկասյան ընկերության վարչություն:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/11:

Նոյեմբերի 14 - ՀԳԿԸ անունից ցավակցական հեռագիր Շվեյցարիա, ՎեՎե - գլխավոր կոմիտեին՝ Թիֆլիսից.

Հայ գրողների ընկերությունը հայտնում է իր խորին ցավակցությունը լեհական գրական գերդաստանին՝ Հենրիկ Սենկևիչի մահվան առթիվ, որի տաղանդավոր երկերը վաղուց ջերմագին սիրված են հայ ժողովրդի մեջ: Թող միշտ բարգավաճի լեհական պանծալի գրականությունը և Միցկևիչի ու Սենկևիչի գերեզմանների վրա ծնի ու զարգացնի նորանոր մեծ կրողներ ու պատգամախոսներ լեհական ոգու»:

ԵԼԺ 10, 259:

Նոյեմբերի 15 - Մամուլը ծանուցում է, որ նոյեմբերի 17-ին երաժշտական դպրոցի դահլիճում տեղի կունենա ՉԳԿԸ հերթական՝ յոթերորդ գրական երեկույթը:

«Թուրքահայ գրական նոր ուղղությունը և հայ հեթանոսությունը» թեմայով կթանախոսի Զ. Սուրխաթյանը:

Մտքերի փոխանակությանը կմասնակցեն՝ Մ. Մատենճյան, Դ. Դեմիրճյան, Վ. Մենակ, Գ. Լևոնյան, Գազանճյան, Ա. Մռավյան և Սոլովյան:

«Հորիզոն», 1916, թիվ 356:

Նոյեմբերի 15 - Մամուլում հաղորդագրություն, որ նոյեմբերի 13-ին տեղի է ունեցել հանգուցյալ Սաթենիկ Օհանջանյանի (տե՛ս 1915, հոկտեմբերի 4) անվան մանկական գրադարան-ընթերցարանի բացումը:

Բացման հանդեսին կարդացվել է ՉԳԿԸ վարչության և Հովհ. Թումանյանի անունից ուղարկված շնորհավորական գրությունը:

«Հորիզոն», 1916, թիվ 256:

Նոյեմբերի 15 - Տպագրվում է «Հրավիրում ենք կողմերին վերջ տալ» վերտառությամբ հոդված՝ *Աշխատակից Ս.* ստորագրությամբ:

Մասնավորապես ասվում է. «Ահա ամսից ավելի է, ինչ, 1914-1916 թթ. դադարից հետո, վերսկսվել են Հայ Գրողների ընկերության գրական երեկոները, որոնց մասին, սակայն, «Մշակում» ոչ հայտարարություններ և ոչ հաշվետվություն է տպվում՝ շնորհիվ փոխադարձ հարաբերությունների խզման, որ տեղի է ունեցել մոտ 3 տարի սրանից առաջ: Երևույթը աննորմալ է վերջին ծայր և արդյունք տխուր թյուրիմացությունների:

Մենք հրավիրում ենք կողմերին վերջ տալ այս անհաճո կացության՝ առանց սակայն կրկին անդրադառնալու հարաբերությունների խզման պատմությանը և հանուն գրականության շահերի, հանուն և այն գրական ուժերի ու աշխատակիցների, որոնք խնդրված են «Մշակի» շուրջը, այլև մայրենի գրականությունը սիրող բազմաթիվ ընթերցողների, վերսկսել թե՛ հայտարարությունների առաքումը և տպագրությունը և թե՛ պարբերական հաշվետվությունների զետեղումը «Մշակում»:

Դեռ մի շաբաթ առաջ հաճույքով կարդացինք «Մշակի» խմբագրական վերջին ծանոթությունը (տե՛ս «Մշակ», թիվ 245), որի

իմաստն այն էր, թե՛ եթե Հայ Գրողների ընկ. վարչությունը շարունակեր և շարունակե «նախկին ձևով իր երեկույթների և ժողովների հայտարարությունները տպագրել տալ նաև «Մշակուն», անկասկած է, որ համաձայն 1911 թ. խմբագրության որոշման, այդ երեկույթների և ժողովների լուրերն ևս կտպվեին» և կտպվեն քրոնիկոնի բաժնուն:

Ուրեմն ի՞նչ է մնում անել: Մնում է վերսկսել թե հայտարարությունների առաքումը և տպագրությունը և թե պարբերական ամփոփ հաշվետվությունների ղեկավարումը «Մշակուն», բայց կրկնում ենք, առանց կրկին անդրադառնալու հարաբերությունների խզման պատմությանը:

Դա համապատասխան կլինի թե՛ Հայ գրողների ընկերության նպատակներին ու դիրքին և թե՛ հիմնավորը «Մշակի» գրական ուժերի, աշխատակիցների ու ընթերցողների տրամադրություններին»:

Հոգվածի վերջում խմբագրությունը տալիս է ծանոթություն առ այն, որ «Մշակը» դեմ չէ Հայ գրողների ընկերության հայտարարությունների և հաշվետվությունների տպագրությանը:

«Մշակ», 1916, թիվ 256:

Նոյեմբերի 16 - Ազդագիր մամուլում.

«Ուրբաթ, նոյեմբերի 18-ին Երաժշտական ընկերության դահլիճում տեղի կունենա գրական երեկույթ, VII գրական երեկույթը, կդասախոսե Սուրիսայան, թուրքահայ գրական մոր ուղղությունը և հայ հեթանոսությունը:

Դասախոսությունից հետո տեղի կունենա վիճաբանություն»:

«Հորիզոն», 1916, թիվ 257:

Նոյեմբերի 16 - Հակոբ Տեր-Հարությունյան ստորագրությամբ դիմում ՀԳԿԸ վարչությանը՝ թիֆլիսից:*

Որպես ընկերության անդամ և համաձայն կանոնադրության՝ ընկերության ֆոնդից փոխարինաբար խնդրում է 300 ռուբլի:

*) Թումանյանի ձեռագրով նշում, որ ստացվել է նոյեմբերի 18-ին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 100/10

Նոյեմբերի 17 - Ե. Տաքեյան ստորագրությամբ նամակ ՀԳԿԸ վարչությանը:

Խնդրում է «Պարոն նախագահից». «Ինձ ալ մասնակից ընեիք կառավարության կողմե թուրքահայ մտավորականներու հատկաց-

ված դրամեն»։ Գրում է, որ պոլսահայ մտավորական Վարազդատ Տաքեյանի որդին է։ Հայրը «պաշտոնավարած է Պոլսկարիո Վառնա, Շումլա, Ֆիլիպե քաղաքները, որպես ավագ ուսուցիչ 18 տարի։ Աշխատակցած է *Իրավունք, Հայելի, Հայաթերթ, Ռազմիկ, Ազատամարտ* թերթերու։ Խմբագիր եղած է Պոլսկարիո Հայ ուսուցչական միության օրկան *Ռահվիրա* թերթին»։ 1914-ի արձակուրդներին կարևոր գործով զնացել է Կարին, պատերազմի սկզբին ձերբակալվել և արքայազն է։

Եվ վերջում. «Հոս բոլորովին անծանոթ միջավայրի մեջ մնացած եմ, որևէ աջակցություն չգտալով, խնդրեմ գոնե Դուք բարի եղեք վերոհիշյալ գումարեն իմօժի ալ բաժին համելու»։

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 177:

Նոյեմբերի 17 - Հակ. Տեր-Հարությունյանի նամակ-դիմումը (տես նաև նոյեմբերի 16) Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Ընդունելով, որ գրողների ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի փոխարինաբար վերցնելու մինչև 300 ռ., սրանով խոնարհաբար խնդրում եմ, որ կարգադրեք ինձ ևս փոխարինաբար տալու 300 ռուբլի:

Պարզ լինելու համար պետք է ասեմ, որ այդ 300 ռ. ես խնդրում եմ պ. Ռուբեն Խան-Ազատյանի համար, որը արդեն ընկերությունից ստացած լինելով իր անվան, այլևս չի կարող ստանալ ըստ կանոնադրության:

Ընդունեցեք, Տեր նախագահ, իմ խորին հարգանքս:

Հակ. Տեր-Հարությունյան»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 180:

Նոյեմբերի 17 - Մամուլը տեղեկացնում է, որ նոյեմբերի 11-ն Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում տեղի է ունեցել ՀԳԿԸ հերթական գրական երեկույթը: «Հայ ժողովրդի դրությունը Թուրքիայում 1908-1915 թթ.» թեմայով դասախոսություն է կարդացել բժ. Խ. Բոնապարտյանը:

«Հորիզոն», 1916, թիվ 258:

Նոյեմբերի 18 - Լրատվություն մամուլում.

Հայ գրողների ընկերությունը, «օժանդակ ունենալով Բրյուսովի խմբագրած «Позная Армения» գիրքը», կազմակերպում է հայ բանաստեղծության երեկո ռուսերեն լեզվով: Ռուսերեն թարգմա-

նությանը տպագրելու են նաև ընկերության գրական երեկույթներին կարդացված զեկուցումները:

«Հորիզոն», 1916, թիվ 259:

Նոյեմբերի 18 - ՀԳԿԸ վարչության նամակը «Հորիզոնի» խմբագրությանը:

«Վարչությունս, կարդալով «Մշակի» No 256-ում «Աշխատակից Ս.»-ի հոդվածը (տե՛ս նոյեմբերի 15) և թերթի խմբագրության ծանոթագրությունը, որոշեց՝ առանց անցյալի քննության մեջը մտնելու՝ վերականգնել իր խզած հարաբերությունը «Մշակ» լրագրի հետ:

Հայ գրողների ընկերության վարչություն»:

«Հորիզոն», 1916, թիվ 259:

Նոյեմբերի 19 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը:

Վարչության անդամներից ներկա են՝ Մինաս Բերբերյան, Դերենիկ Դեմիրճյան, Անուշավան Աբովյան:

1) Տեղեկացվում է, որ Թումանյանը ցանկություն է հայտնել նոյեմբերի 25-ին դասախոսել «Հայոց գրական լեզվի խնդիրը» թեմայով:

Հանձնարարվում է վարչությանը անել անհրաժեշտ կարգադրություններ:

2) Գյուտ ք. Աղանյանը վարչությանը ներկայացնում է նյութերի մի հարուստ ժողովածու՝ գլխավորապես թուրքահայ գրողների վերաբերյալ:

Կարգադրում են՝ կազմել մի մասնաժողով՝ նյութերից ընտրություն անելու և տպագրության հանձնարարելու համար: Մասնաժողովի անդամներ են ընտրվում՝ Հովհ. Թումանյան, Գ. ք. Աղանյան, Դ. Դեմիրճյան և Ն. Աղբալյան:

3) Նախագահողը հայտնում է, որ ընկերության անդամ Հակոբ Տեր-Հարությունյանը խնդրել է 300 ռ. փոխարինաբար:

4) Նախագահողը հայտնում է, որ վրաց գրող Իլյա Նակաշիձեն համաձայնել է երկու դասախոսություն կարդալ վրաց գրականության մասին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/12:

Նոյեմբերի 20 - Ա. Դարբինյանի պաշտոնական գրությունը Թումանյանին թիֆլիսից:

«Մեծարգո պ. Հովհաննես Թումանյանին, նախագահ վարչության Հայ գրողների ընկերության, թիֆլիս:

Եթե կարելի է, թուրքահայ գրողներին հատկացված գումարից պ. Ազատ Վշտունուն առհաշիվ վճարեք 25 ռ., որին նա անհրաժեշտ կարիք ունի:

Խորին հարգանքով՝ *Ա. Դարբինյան:*

Հ.Գ. Այս մասին նախապես խորհրդակցել ենք պ. Արամի* հետ»:

*) Արամ Մանուկյանն է:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/4:

Նոյեմբերի 23 - Գառնիկ Գյուլալյան ստորագրությամբ նամակ թիֆլիս՝ Թումանյանին՝ Աշտարակից:

Տեղեկացնում է, որ «Աշտարակի հայկական դպրոցների ուսուցիչների ձեռնարկությամբ տեղումս կազմվել է «Գրասիրաց ընկերություն», որը կազմակերպում է դասախոսություններ, գրական ասուլիսներ»: Ընկերության հանձնարարությամբ՝ առաջարկում է «Հայ գրողների ընկերության» հրատարակած և հրատարակելիք գրական ժողովածուներից ուղարկել՝ տարածելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1088 (293 լր.):

Նոյեմբերի 23 - Տպագրվում է ՀԳԿԸ վարչության ազդագիրը:

Տեղեկացվում է, որ ուրբաթ՝ նոյեմբերի 25-ին, Երաժշտական ընկերության դահլիճում տեղի կունենա գրական երեկույթ: «Հայոց գրական լեզվի խնդիրը» թեմայով զեկուցում կկարդա Հովհ. Թումանյանը (տե՛ս նոյեմբերի 30):

Ձեկուցումից հետո տեղի կունենա վիճաբանություն:

«Հորիզոն», 1916, թիվ 262:

Նոյեմբերի 24 - Արևմտահայ գրասերներու ընկերության նամակը թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից

«Մեծահարգ պ. Հովհ. Թումանյան,

նախագահ հայ գրողներու ընկերության,

Պատիվ ունինք հայտնելու Ձեզ, որ Երևանի մեջ կազմված է Արևմտահայ Գրասերներու ընկերությունը: Նորակազմ ընկերության վարչությունը սկսեր է արդեն սեղմ շրջանի մեջ երեկույթ դա-

սախտություններ, շուտով պիտի ձեռնարկե նաև հասարակական դասախոսություններու և երեկոյթներու երևանի մեջ:

Հաճույքով կիմանանք, որ Կովկասի Գրողներու ընկերությունը որոշեր է շուտով իր հերթական երեկոյթներն մին հատկացնել արևմտահայ նորագույն գրականության: Այդ առթիվ ընկերությունս որոշեր է երկու ներկայացուցիչ ունենալ նույն օր Թիֆլիս, որոնք քանի մը խոսքերով պիտի ներկայացնեն արևմտահայ վերջին շրջանի վերընձյուղող գրականությունը և մատնանշեն այդ շարժումը Վասպուրականի մեջ:

Այդ նպատակով ներկայացնում ենք Վասպուրականի նորագույն գրողներու անվանացանկը, իսկ իբր լիազոր Ձեզ կներկայացնենք պ. Ա. Մանուկյանը»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 129:

Նոյեմբերի 24 - Լրատվություն մամուլում.

«Ուրբաթ, ամսիս 25-ին, Հայ գրողների ընկերության գրական երեկոյթին զրույցի և քննության առարկա են լինելու հայոց գրական լեզուն և ռուսահայ գրական լեզուն. ժողովրդական բարբառներն ու նրանց հարաբերությունները գրական լեզվի հետ և լեզվական փոխառություններ»:

«Հորիզոն», 1916, թիվ 263:

Նոյեմբերի 25 - Տեղի է ունենում ՀԳԿԸ հերթական՝ ութերորդ գրական երեկոյթը:

«Հայոց գրական լեզվի խնդիրը» զեկուցումով հանդես է գալիս Հովհ. Թումանյանը:

«Հորիզոն», 1916, թիվ 266:

Նոյեմբերի 26 - «Վան-Տոսպի» խմբագրության դիմումը ՀԳԿԸ վարչությանը:

Խնդրում են. «Եթե կարելի է, թուրքահայ գրողներին հատկացված գումարից պ. Ազատ Վշտունուն առհաշիվ վճարեք 125 ռ., որին նա անհրաժեշտ կարիք ունի (տե՛ս նաև նոյեմբերի 20)»:

Ստորագրել են՝ Արտակ Դարբինյան, Ազատ Վշտունի:

Խորհրդակցել են նաև Արամ Մանուկյանի հետ:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/4:

Նոյեմբերի 26 - Հակ. Տեր-Հարությունյանի նամակը «մեծարգո պ. Հովհաննես Թումանյանին» Թիֆլիսից:

Հայտնում է, որ մահացել է «գրականագետ Սեդրակ Թառայանը»:^{*}

Մահվան նախօրյակին խնդրել է հոգ տանել իր ձեռագրերի և գրադարանի մասին: Եվ վերջում. «Այս մասին հայտնելով Ձեզ, խնդրում եմ այս հանգամանքն ի նկատի ունենալ, հանձնարարել մեկ երկու հոգու, որ արձանագրեն նրա թողած ձեռագիրներն ու գրքերը և միևնույն ժամանակ մտածեն նրա թաղման մասին:

Հույս ունեմ, որ այսօր իսկ ուշադրության կառնեք այս խնդիրը»:

^{*}) Թիֆլիսում հրատարակվող «Ընկեր» (1906-1907, 1910-1912, 1914) հասարակական և գրական շաբաթաթերթի խմբագիրն է: Աշխատակիցները 1917 թ. հրատարակել են մեկ համար՝ նվիրված խմբագրի մահվան տարելիցին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 180:

Նոյեմբերի 27 - Հաղորդագրություն Հայ գրողների ընկերության նոյեմբերի 25-ին կայացած գրական երեկույթի մասին:

Տեղեկացվում է, որ երեկույթում Հովհ. Թումանյանը զեկուցում է կարդացել հայոց գրական լեզվի խնդիրների մասին: Ձեկուցումից առաջ նրա՝ որպես գրողների ընկերության նախագահի առաջարկով ներկաները հոտնկայս հարգել են նոր վախճանված գրականագետ Սեդրակ Թառայանի հիշատակը:

Ձեկուցման շուրջ մտքերի փոխանակությանը մասնակցել են Ռ. Աբրահամյանը, Ստ. Լիսիցյանը և Թումանյանի փոխարեն նախագահող Սմբատ Տեր-Ավետիսյանը: Բոլորին պատասխանել է զեկուցողը:

Քանի որ շատերն են ցանկացել մասնակցել քննարկմանը, վճռել են՝ «ի նկատի ունենալով հայոց գրական լեզվի խնդրի մեծ լրջությունն ու կարևորությունը, առաջիկա գրական երեկոն էլ հատկացնել նույն խնդրին և շարունակել վիճաբանությունը»:

Նշվում է, որ՝ «չափազանց մխիթարական է մատնանշել այն հանգամանքը, որ Հայ գրողների ընկերության երեկույթներն արդեն ունեն գրականությամբ հետաքրքրվող մի ստվար հասարակություն, որն օր օրի վրա չտեսնված չափով ծայրից ծայր լցնում է երաժշտական դպրոցի դահլիճն ու վերնահարկը»:

Ըստ հաղորդագրության Հայ գրողների ընկերության վրա բարոյական մեծ պարտք կա այդ հասարակությանը հոգեպես կապված

պահել գրականությանը՝ միշտ տալով բովանդակալից և հետաքրքրական դասախոսություններ:

Երեկոյթը շարունակվել է մինչև գիշերվա ժամը 12-ը:
«Յորիզոն», 1916, թիվ 266:

Նոյեմբերի 28 - Արամ Դադյան ստորագրությամբ նամակ ՅԳԿԸ վարչությանը.

17 տարի է, որ իրեն նվիրել է հայ բանաստեղծության և իր մայրենի՝ ղարաբաղյան բարբառի ուսումնասիրությանը: Ցանկանում է ընկերության երեկոյթներին «մի քանի դասախոսություն արած լինել <....>, մանավանդ որ ներկայիս Յայ գրական լեզվի խնդիրը դրված է հրապարակի վրա»:

ԳԱԹ ՅԳԿԸՖ, 128:

Նոյեմբերի 29 - Մամուլը տեղեկացնում է.

«Կիրակի, նոյեմբերի 27-ին, երեկոյան, Գրական-գեղարվեստական սալոնի սրահում կայացած հասարակական գործիչների խորհրդակցության ժամանակ պ. Յովի. Թումանյանը հայտնեց, որ հայ գրողների ընկերությունը Ս. Թառայանի զավակներին հատկացրել է 100 ռ. (տե՛ս նաև նոյեմբերի 27)»:

«Յորիզոն», 1916, թիվ 267:

Նոյեմբերի 30 - Սկսում է տպագրել («Յորիզոն», 1916, թիվ 268*) «Յայոց գրական լեզվի խնդիրը» հոդվածը:

ՅԳԿԸ երեկոյթին (տե՛ս նոյեմբերի 25) կարդացած դասախոսությունն է:

Սկզբում նկատում է, որ «դեռ վերջնականապես չի կազմակերպված հայոց գրական լեզուն, դեռ շատ վիճելի խնդիրներ ու խախտու կողմեր ունի իր մեջ»: Մինչդեռ՝ «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»:

Պարզում է հոդվածում բարձրացված հարցերի շրջանակը՝ «թուրքահայ ու ռուսահայ գրական լեզուների խնդիրը, էս գրական լեզուների և ժողովրդական բարբառի հարաբերության և լեզվական փոխառությունների խնդիրը, ուրիշ խոսքով՝ դրված է մեր գրական

լեզուն վերջնական մի ճանապարհի վրա հաստատելու, միանգամ ընդմիջտ նրա բնավորությունն ու սահմանները որոշելու խնդիրը»:

Բերում է հայոց լեզվում առկա բազմաթիվ բառային փոխառության օրինակներ, որոնք այլևս չեն գիտակցվում իբրև փոխառություն, նաև այնպիսի օրինակներ, որոնց հետ զուգահեռ գործածվում են նաև հայերեն համարժեքները, և եզրակացնում. «Էս բոլոր օրինակները, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, էն են ցույց տալիս, որ ոչ մի լեզու, ինչքան էլ իր ազգային բնավորությունը պահի ու զարգացնի, չի կարող փոխառություններից ազատվել ու կղզիանալ: Ընդհակառակը, քանի զարգանա, էնքան շատ ավելի բարդ պահանջների պիտի պատասխանի և ավելի շատ ու առատ պիտի թե՛ փոխ առնի, թե՛ փոխ տա:

Եվ միշտ ավելի լավ է չունեցած բառը փոխ առնել, քան ճգնել անպատճառ ստեղծել կամ թարգմանել ու ֆրակը շինել պոչազգեստ, կոտլետը կողիկներ կամ ռահատլոխումը հանգստապատառ»:

Լեզվի բառապաշարի հարստացման գործում կարևորում է նաև թարգմանությունը՝ միաժամանակ զգուշացնելով. «Լեզվի հաջող փոխառությունն ու ճիշտ թարգմանությունը մեծապես տաղանդի ու շնորհքի գործ են դառնում, բայց, դժբախտաբար, լեզվի վրա անշնորհք մարդիկ շատ են ազդում, և հասկացող ու կիրթ ճաշակի տեր մարդկանց միայն մնում է խոսելիս թե գրելիս, փոխ առնելիս թե թարգմանելիս, զգույշ լինել ու բարեխիղճ, որովհետև ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհք»:

Հատուկ ուշադրություն է հրավիրում լեզվի շարահյուսական կառուցվածքի վրա. «Սակայն լեզվի խնդրում ամենից կարևորը լեզվի հիմքն է, իսկ լեզվի հիմքը լեզվի համաձայնությունն է, բառերի ու նախադասությունների հարաբերությունն ու կապն է»: Այն կարծիքին է, թե՛ «էսօրվա մեր ժողովրդական լեզվի համաձայնությունը գրաբարի համաձայնության միանգամայն հակառակն է և հաշտ ու համաձայն թուրք-թաթարական՝ մի խոսքով արևելյան լեզուների համաձայնությամբ»:

Գրաբարի համար բնորոշ է համարում եվրոպական լեզվակառույցը, աշխարհաբարի համար՝ արևելյանը. «Իսկ եթե առնենք մեր գրական լեզվի համաձայնությունը, կտեսնենք, որ նա խառն է, ո՛չ մեկինն է, ո՛չ մյուսինը, այլ կանգնած է մեջտեղը»: Երևույթի պատ-

ճառը համարում է այն, որ հայոց գրական լեզուն զարգացել է հիմնականում գաղութներում. «Մինչդեռ գաղութային լեզուն էսպես գործի մեջ էր ու զարգանում էր իր ճանապարհին, մայր երկրում, բնաշխարհիկ լեզուն, բուն ժողովրդի հետ միասին ալեկոծվում էր արյան ու արտասուքի ծովի մեջ, և եթե շատ կամ քիչ ազդում էր մեր գրական լեզվի վրա, ազդում էր իր միջից դուրս ուղարկած պանդուխտների բերանով, ժողովրդական երգերի միջոցով ու իր ծոցից ելած սակավաթիվ գրողների ձեռքով, էստեղ մի Աբովյանի, կամ մի Աղայանի ու Պռոշյանի, էնտեղ մի Խրիմյանի կամ Սրվանձտյանի: <....> Իսկ լեզուն բառեր ու բառերի շարան, բառերի «ստերոլորմյա» չի: <....> Ու մեր աչքի առջև, հետզհետե, քանի ժողովրդական զգացմունքներն ուժեղացան, քանի դեմոկրատական ուսմունքներն ու հայացքները խորացան, ծավալ առան, քանի տառապյալ հայրենիքն ու բնիկ ժողովուրդը ուշադրություն գրավեցին՝ էնքան ավելի ու ավելի երևան եկան, ճանաչվեցին ու սիրվեցին հայ ժողովրդի ազգային ստեղծագործությունները, նրանց թվում նաև լեզուն, և ամենից առաջ լեզուն: Ու ինչպես ամեն մի երևույթ, ամեն մի ստեղծագործություն հանդես եկավ համապատշաճ ասպարեզում, լեզուն էլ առաջ եկավ գրականության մեջ և այժմ հայոց գրական լեզվի դրությունը պարզ է ու որոշ:

Գաղութային գրական լեզուները՝ ինչ որ հարազատ տարր ունեին իրենց մեջ, հաջող փոխառություն և կամ ստեղծագործություն տալիս են նրան ու իրենք էլ, փոխադարձ զիջումներով իրար խառնվելով, միանում են նրա հողի վրա ու նրա մեջ, հայոց նոր գրական լեզվի մեջ, որ գալիս է ճոխացած ու ծովացած՝ արևելքի ու արևմուտքի ամենաթանկ հոգևոր գանձերով»:

Նոր գրական լեզվի զարգացման գործում կարևորում է բարբառների դերը և եզրակացնում. «Եվ էսպես, հայոց գրական լեզվի խնդիրը, զանազան շրջաններ անցնելուց հետո, վերջնականապես պիտի վճռվի ժողովրդական լեզվի կատարյալ հաղթանակով, ժողովրդական լեզվի հաղթանակը պիտի պսակվի ազգային ուժեղ գրականությամբ, իսկ ազգային ուժեղ գրականություն՝ կնշանակի ինքնուրույն ու հզոր ժողովուրդ»:

*) Շարունակությունը՝ թիվ 270:

ԵԼԺ 7, 283-296:

Նոյեմբերի 30 - Գրիգոր քահանա Նժդեհյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Կարսից:

Խնդրում է բանաստեղծի կարծիքը քրդական «Ջամբիլ-Ֆրոշ» ավանդության իր չափածո մշակման մասին (տե՛ս նաև մարտի 30):
ԳԱԹ ԹՖ, 1825 (417):

Նոյեմբերի 30 - Տպագրվում է ՀԳԿԸ վարչության ազդագիրը.

«Ուրբաթ, դեկտեմբերի 2-ին տեղի կունենա գրական երեկույթ «Ջրույց հայոց գրական լեզվի մասին» (շարունակություն նախորդ (տե՛ս նոյեմբերի 27) երեկույթի):

Կիսուհեն.- Մ. Բերբերյան, Սմբատ Տեր-Ավետիքյան, Հովհ. Տեր-Միրաքյան, Ռուբեն Աբրահամյան, Հայկ Հովհաննիսյան, Վահան Տերյան, Դ. Դեմիրճյան, Արամայիս Երզնկյան, Ստ. Լիսիցյան, Վ. Վալադյան, Հ. ք. ճուղուրյան, Գ. Լևոնյան և ուրիշներ:

Վերջը կպատասխանեն ռեֆերենտը:

Խոսողներից յուրաքանչյուրին ժամանակ է տրվում 10 և խնդրվում է խոսելիս ի նկատի ունենալ Հայոց լեզուն որպես գրական ֆակտոր, պարզել Հայոց գրական լեզվի վիճակը և այն ուղին, որով պիտի գնա նրա զարգացումը»:

«Հորիզոն», 1916, թիվ 268:

<Նոյեմբեր> - Գրում է «Ամպետքն ու պետքականը» հոդվածը*:

Ափսոսանք է հայտնում, որ իր «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» (տե՛ս մայիսի 6) հոդվածի շուրջ ծավալված ասուլիսը գնալով հեռանում է բուն խնդրից, նույնիսկ «շատ ցավալի» է ներկայացվում հայոց լեզվի վիճակը անգամ գավառներում: Այս վերջինի կապակցությամբ դիտում է. «Ես չեմ նկատած հայոց լեզվի վտանգը, այլ ընդհակառակը, միշտ տեսել եմ ու այժմ էլ պարզ տեսնում եմ նրա անդադար ծաղկումն ու բարգավաճումը և նրա ապագայի մասին բնավ տարակույս չունեմ»:

Հոդվածի անմիջական առիթը Ջավախեցու (Ղազար Տեր-Գրիգորյան) «Ազգային պաշտպանություն» հոդվածի («Հորիզոն», 1916, թիվ 163) երկրորդ մասն է, որ վերնագրված է «Հայ լեզուն» և որտեղ հեղինակը այն միտքն է հայտնում, «թե հայոց լեզուն նրա համար է հայի տանից դուրս վտարվում, որովհետև անպետք է կյանքի մեջ, ապրուստի համար պետք չի գալիս, հայը են լեզուն է սովորում, որը պետք է գալիս»:

Բանաստեղծը կտրուկ առարկում է. «Ամենից առաջ ասեմ, որ հայոց լեզուն երբեք չի վտարվել հայի տանից և նրանից հետո հանգիստ խոսենք: Խոսենք՝ գիտեք ինչի՛ մասին՝ անպետքի ու պետքականի:

Այո՛, սա շատ կարևոր հարց է»:**

*) Պահպանվել է սևագիրը (ԳԱԹ ԹՖ, 222): Իր ժամանակին չի տպագրվել:

**) Ձեռագիրը այստեղ ընդհատվում է:

ԵԼԺ 7, 472-473:

Դեկտեմբերի 1 - Տեղի է ունենում ՅԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Սին. Բերբերյան, Ան.

Աբովյան:

1) Նախագահը տեղեկացնում է, որ մեր գրողներից Ավ. Ահարոնյանը, Վ. Տերյանը, Դ. Դեմիրճյանը հիվանդ և նեղ դրության մեջ են, վարչությունը պետք է մտածի այդ մասին:

Կարգադրում են՝ վարչության գանձարանից նրանց տալ 500-ական ռուբլի:

2) Իշխան Բորիս Արդուբյանը նախագահին խոստացել է մեկ տարի ժամանակով վարչությանը ամսական տրամադրել հարյուր ռուբլի՝ իբրև նպաստ կարիքավոր գրողներին:

Կարգադրում են՝ պաշտոնական գրությամբ և մամուլով շնորհակալություն հայտնել իշխանին, ընկերության մյուս նվիրատուներին:

3) Լսելով Սեդրակ Թառայանի մահվան (տե՛ս նոյեմբերի 26) մասին՝ կարգադրում են նրա ընտանիքին տալ հարյուր ռուբլի և հանձնարարել նախագահին ներկայացուցիչ լինել հուղարկավորությանը:

ԳԱԹ ՅԳԿԸՖ, 45/14:

Դեկտեմբերի 1 - ՅԳԿԸ վարչության անունից պաշտոնական գրությամբ Թիֆլիսի ոստիկանապետին:

Տեղեկացվում է, որ դեկտեմբերի 2-ին՝ երեկոյան ժամը 8-ին, տեղի կունենա Ընկերության հերթական երեկույթը: «Ժամանակակից հայոց լեզվի մասին» թեմայով զեկուցում կկարդա Յովհաննես Թումանյանը:

ԳԱԹ ՅԳԿԸՖ, 64/21:

Պեկտեմբերի 1 - Լրատվություն մամուլում.

«Հայտնի երաժշտագետ Սպենդիարյանը օպերայի է վերածել բանաստեղծ Յովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը: Հատկապես այդ առիթով Թիֆլիս է եկել հեղինակը՝ խորհրդակցելու Յովհ. Թումանյանի հետ և ծանոթանալու հայկական ու պարսկական երաժշտությանը, հայկական պարերին, իր օպերայի համար օգտվելու նպատակով»:

«Հորիզոն», 1916, թիվ 269:

Պեկտեմբերի 3 - Տպագրում է («Հորիզոն», 1916, թիվ 271)

«Կարճ ու գեղեցիկ ճանապարհը» հոդվածը:

Առիթը «մի ոմն» բարերարի* «Հայ գրողների ընկերությանը մի տարի ժամանակով ամսական հարյուր ռուբլի» նվիրատվությունն է՝ «մեր տաղանդավոր գրողներին պաշտպանելու համար, մեր գրականության ազգային պաշտպանությունը իրականություն դարձնելու նպատակով»:

Նկատում է, թե նվիրատուն իզուր է ուզում գաղտնի պահել իր անունը. չէ՞ որ նա բարերարություն է անում ոչ թե մեկ անհատի, այլ ամբողջ ազգին, որի հավաքական պարտականությունն է «իբրև մայրական ձեռք», իբրև «ծնողական պարտականություն» հոգալ իր տաղանդավոր զավակների մասին, ուստի նվիրատուն «կարող է իր գումարի տակ ստորագրել նույնքան հանգիստ. ինչքան հանգիստ են ստորագրում են իմ գրած ոտանավորի տակ»:

Եվ եզրակացությունը. «Միայն էս հոգացողությունն է (մանրամասնությունների մասին չեն խոսում), որ քաղցր ու թեթև կլինի, կստեղծի մի ազգի բարձր մտավորականությանը վայել մի դրություն, գրականությանը, գիտությանն ու գեղարվեստին նվիրված մարդկանց բանակ, հետևաբար և ուժեղ գրականություն»:

*) Այդ բարերարը իշխան Բորիս Արղությանն է (տե՛ս դեկտեմբերի 1), որ չի ցանկացել, որ իր անունը հրապարակվի մամուլում, «գրողների ընկերության գործումն է մնում»:

ԵԼԺ 7, 296-297:

Պեկտեմբերի 4 - Պաշտոնական մամակ Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Համաձայն Կովկասի հայ գրողների վարչության առաջարկության (տե՛ս սեպտեմբերի 3.- խմբ.)՝ Թիֆլիսի թուրքահայ գրողները հրապարակային հայտարարությամբ 1916 թ. սեպտեմբերի

21-ին, հավաքվելով «Վան-Տոսպի» խմբագրատանը, ընտրեցին երեք հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որ Թիֆլիսի հայ օրաթերթերի միջոցով բոլոր թուրքահայ գրողներին ուղղված մի հայտարարությամբ կազմեց թուրքահայ գրող համարվածների ցանկը: Այժմ վերոհիշյալ հանձնաժողովը, վերջացած համարելով իր աշխատանքը, ցուցակը հանձնում է պատվարժան վարչությանը՝ իր կողմն իբրև ներկայացուցիչ ուղարկելով պ. Արտակ Դարբինյանին:

Ընդունեցեք մեր հարգանքները:

Ի դիմաց հանձնախմբի՝ Ծ. Թորգոմյան, Վ. Պապիկյան»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/5:

Դեկտեմբերի 4 - Մամուլը տեղեկացնում է.

«Երաժշտագետ Սպենդիարյանը թատրերգի (օպերայի) է վերածել բանաստեղծ Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» քերթվածը (պոեման)»:

«Համբավաբեր», 1916, թիվ 49:

Դեկտեմբերի 5 - Ղևոնդ Մելոյան ստորագրությամբ դիմում Թումանյանին:

Նյութական ծանր կացության մեջ է. խնդրում է իրեն էլ բաժին հանել թուրքահայ փախստական գրողների օգնության ֆոնդից. «...Եթե այդ Ձեր իրավասության սահմաններում մեջ կգտնվի, իսկ եթե ոչ, նեղություն հանձն առնեք միջնորդություն հարուցանելու ուր որ պետք է, որ ես ալ իմ բաժինը ստանամ, եթե ոչ թուրքահայ գրողներուն հատկացված առաջին 10 000 զումարեն, զոնե *վերջին հայտարարությամբ խոստացված կրեդիտեն*»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 157:

Դեկտեմբերի 5 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ Նվարդ Թումանյանին՝ Իգդիրից:

Գրում է, որ հիվանդանոցում է: Բժիշկներից ու քույրերից գոհ է: Այցելուներն էլ անպակաս են: Խնդրում է քրոջը. «Նվարդ, եկող կլինի՝ մեր խաղերից մեկ-մեկ օրինակ ուղարկիր, ֆլիրտն էլ (տե՛ս նոյեմբերի 3): Էստեղ մի օրինակ կա, որ իրար ձեռքից խլում են»:

ԹԶ ԱՐՏ, 200:

Դեկտեմբերի 6 - Սերգեյ Գորոդեցկու երկտողը Թումանյանին՝ Թիֆլիսից:

խնդրում է որևէ գիրք հայ թատրոնի մասին և բանաստեղծից նույն թեմայով մի հոդված՝ թեկուզ համառոտ:*

*) Թումանյանն այդ թեմայով հոդված չի գրել:

ԹԹ, 2508:

Դեկտեմբերի 6 - Հակոբ Գեմջյան – Կարա-Դերվիշի դիմումը ՅՊԿԸ վարչության նախագահին.

«Լուրջ և երկարատև բժշկության կարոտ հիվանդություն ունենալով և միևնույն ժամանակ նյութական շատ սուղ վիճակի մեջ լինելով, ես ստիպված եմ դիմել ընկերությանդ և խնդրել նշանակել ինձ նպաստ բժշկության համար 100-150 ռուբլի»:

Միաժամանակ խնդրում է իրեն ընդունել Ընկերության անդամ խոստանալով անդամավճարը «առաջին հնարավորության դեպքում» վճարել»:

*) Դիմումի վրա Թումանյանի ձեռքով նշում. «12 դեկտ. 1916»:

ԳԱԹ ՅՊԿԸՖ, 144/2:

Դեկտեմբերի 6 - Կարեն Միքայելյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից:

Շրջում է Երևանի նահանգի որբանոցներում, գրի առնում երեխաների պատմածը իրենց տեսածի մասին՝ դրանց հիման վրա գեղարվեստական գործեր գրելու համար:

Երկրորդ նպատակն է. «Հավաքել երեխաների, ինձ համար միանգամայն անսպասելի կերպով երևան եկած գրական արտադրությունները: Այժմ ձեռքիս տակ ունեմ մի մեծ գրականություն: Այդտեղից ընտրել եմ բանաստեղծական գրվածքները, որոնց մեջ կան հաճախ շատ հաջող կտորներ: Այդ կտորները իրենց մեջ արտացոլում են վերջին դեպքերը: Շատ հետաքրքրական և սրտառուչ է, թե ինչպես է երգում երեխան իր վիշտն ու ուրախությունը, իր կրած տանջանքները, իր տեսած սարսափները»:

Այդ մասին ինքը դասախոսություն է կարդացել Գրասիրաց ընկերությունում, մտադիր է կրկնել նաև Թիֆլիսում. «Ուրբերի մեջ կան բազմաթիվ արտաքու կարգի ընդունակ երեխաներ, իմ դասախոսությունների միջոցով ես ուզում եմ կոչ անել հասարակության, որ հիմնվի մի ֆոնդ, այդ երեխաների ընդունակությունները կատարելագործելու հնարավորություն տալու համար: <...> Այդ ֆոնդը անպայման պիտի գտնվի Հայ գրողների ընկերության մեջ, և նա պիտի կառավարի»:

ԳԱԹ ԹՖ, 1766 (913):

Դեկտեմբերի 6 - Մամուլը հաղորդում է.

«Դեկտեմբերի 2-ին, երաժշտական դպրոցի դահլիճում, Հայ գրողների ընկերության հերթական գրական երեկույթին տեղի ունեցավ նախորդ երեկույթին պ. Հովհ. Թումանյանի «Հայոց գրական լեզվի խնդրի» մասին արած զեկուցման վրա վիճաբանության շարունակությունը (տես նոյեմբերի 27)՝ նախագահությամբ պ. Մ. Աբեղյանի:

Վիճաբանությանը մասնակցեցին՝ պ.պ. Հ. Տեր-Սիրաքյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Ֆետվաճյան, Ա. Մռավյան, Վ. Վալադյան, Հ. ք. ճուղուրյան, Գ. Լևոնյան, Ա. Երզնկյան, բժ. Բոնապարտյան, Վշտունի, Մ. Մատենճյան, Ռ. Աբրահամյան, Դ. Դեմիրճյան, Ստ. Լիսիցյան և Մ. Աբեղյան: Վերջում իր պատասխանի մեջ պ. Հովհ. Թումանյան գտավ, որ հակաճառողների և իրեն ասածների մեջ էական տարբերություն չկա:

Երեկույթը գրավել էր շատ հասարակություն և անցավ հետաքրքրական»:

«Հորիզոն», 1916, թիվ 272:

Դեկտեմբերի 6 - Լրատվություն մամուլում.

«Այսօր նշանակված է հայ աշուղների ժողովը, ուր հայտնի երաժշտագետ Սպենդիարյանը գրի է առնելու արևելյան եղանակներ «Թմկաբերդի առումը» օպերայի համար»:

«Հորիզոն», 1916, թիվ 272:

Դեկտեմբերի 7 - ՀԳԿԸ վարչության անունից հայտարարություն:*

Ուրբաթ՝ դեկտեմբերի 9-ին՝ երեկոյան ժամը 8-ին, Երաժշտական ընկերության դահլիճում տեղի կունենա գրական երեկույթ՝ հայտնի երաժշտագետ Սպենդիարյանի պատվին:

Գրողների ընկերության նախագահի ողջույնից հետո կխոսի Երաժշտական ընկերության նախագահ պ. Հովսեփ Տեր-Դավթյանը՝ «Հայ ժողովրդական երգի նշանակությունը մեր կյանքում» թեմայով: Հայ ժողովրդական եղանակներ և երգեր կնվագեն ու կերգեն ժողովրդական երգիչների խմբերը և նվագաժամերը:

*) Հայտարարությունը սևագիր է, Թումանյանի ձեռագրով:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 64/20:

Պեկտեմբերի 8 - Արտակ Դարբինյանի* գրությունը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Տեղեկացնում է. «Վերջացրել ենք թուրքահայ գրողների ցուցակի պատրաստության գործը: Խնդրում ենք մոտիկ օրերումը գումարել Հայ գրողների վարչության ժողովը, որին ներկայացնելով՝ պ. Արամի հետ միասին՝ պիտի տանք ցուցակը և բերանացի բացատրություններ»:**

*) «Վան-Տոպ» շաբաթաթերթի (1915-1918, Թիֆլիս) խմբագիրն է:

**) Այս մասին տե՛ս նաև նոյեմբերի 14:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/1:

Պեկտեմբերի 8 - Հրապարակվում է ՀԳԿԸ վարչության ազդագիրը 10-րդ գրական երեկույթի մասին (տե՛ս դեկտեմբերի 7).

«Ուրբաթ, դեկտեմբերի 9-ին, երեկոյան 8 ժամին Երաժշտական ընկերության դահլիճում հայտնի երաժշտագետ Ա. Սպենդիարյանի պատվին տեղի կունենա գրական երեկույթ:

Գրողների ընկերության նախագահի ողջույնից հետո կխոսի Հայ երաժշտական ընկերության նախագահ պ. Հովսեփ Տեր-Ղավթյանը՝ Հայ ժողովրդական երգի նշանակությունը մեր կյանքում»:

«Հորիզոն», 1916, թիվ 274:

Պեկտեմբերի 8 - Մամուլը տեղեկացնում է.

«... Հայ երաժշտական ընկերության նախաձեռնությամբ, երեքշաբթի, ամսույս 6-ին, վարչության նախագահ Հովս. Տեր-Ղավթյանի բնակարանում, տեղի ունեցավ աշուղական և հայ ժողովրդական երգի երեկո՝ ներկայությամբ պոեմի հեղինակ պ. Հովհ. Թումանյանի, երաժշտագետ Սպենդիարյանի, Հայ երաժշտական ընկերության անդամների, հայ երաժիշտների, երգիչ-երգչուհիների և հայտնի աշուղների»:

«Հորիզոն», 1916, թիվ 274:

Պեկտեմբերի 9 - Նշան Սկրտչյան ստորագրությամբ դիմում ՀԳԿԸ վարչությանը՝ Թիֆլիսից*:

«Պատանի» գրական-գեղարվեստական և քննադատական ալմանախի՝ պատերազմի հետևանքով ընդհատված հրատարակությունը վերսկսելու համար Ընկերության ֆոնդից խնդրում է 300 ռուբլի միանվագ նպաստ:

*) Թումանյանի ձեռագրով նշում, որ ստացվել է դեկտեմբերի 10-ին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 100/6:

Դեկտեմբերի 10 - ՀԳԿԸ վարչության անունից պաշտոնական գրություն թիֆլիսի առևտրական բանկին՝ դրամ ստանալու կտրոնի մասին:*

*) Գրությունը ռուսերեն է, սևագիր և մշուժով, որ կարող են ստորագրել Հովհաննես Թումանյանը և Անուշավան Աբովյանը: Խոսքը կառավարության կողմից իբրև արևմտահայ փախստական մտավորականների փոխառություն տրամադրված 101 հազար ռ. գումարի մասին է, որ Թումանյանը դրել էր առևտրական բանկում (տե՛ս նոյեմբերի 14):

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 71:

Դեկտեմբերի 10 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ: Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան: Վարչության անդամներից ներկա են՝ Նիկ. Աղբալյան, Ան. Աբովյան:

1) Ներկայացվում են Նալբանդյանին և Շեքսպիրին ու Սերվանտեսին նվիրված երեկույթների մուտքի հաշիվները:

Կարգադրում են՝ հաստատել:

2) Քննարկվում է արևմտահայ փախստական գրողների համար նախատեսված 10 000 ռ. մասնատրության խնդիրը: Իբրև վերջիններիս ներկայացուցիչներ նիստին մասնակցում են Երևանից՝ Արամ Մանուկյանը, Թիֆլիսից՝ Արտակ Դարբինյանը: Պարզվում է, որ տաճկահայ գրողներից շատերը մաս ուսուցիչներ են: Հարց է առաջանում՝ նրանք պե՞տք է նպաստ ստանան միաժամանակ և Գրողների ընկերությունից, և՛ Ուսուցչական միությունից:

Կարգադրում են բանակցել Ուսուցչական միության հետ և ընդհանուր եզրակացության գալուց հետո միայն կատարել դրամի բաշխումը: Հանձնարարել Երևանի և Թիֆլիսի ներկայացուցիչներին, խորհրդակցելով վարչության նախագահի հետ, ճշտեն ցուցակը, փոխառվածքի չափը և ներկայացնեն ժողովին:

3) Նախագահողը հիշեցնում է, որ կան մաս արևմտահայ նահատակված կամ աքսորված գրողների ընտանիքներ, հնարավոր չէ՞ արդյոք պետական նպաստներից մաս հանել մաս նրանց:

Կարգադրում են՝ այդ մասին հարցում անել կառավարության ներկայացուցիչ գեմ. Թամանյանին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/3:

Դեկտեմբերի 11 - Հաղորդագրություն մամուլում.

«Ուրբաթ, դեկտեմբերի 9-ին (տե՛ս դեկտեմբերի 8) երաժշտական դպրոցի դահլիճում կայացավ հայ գրողների ընկերության երաժշտական երեկույթը՝ երաժշտագետ Ա. Սպենդիարյանի պատվին: Երեկույթը գրավել էր մինչև օրս չտեսնված բազմություն, չնայած գների կրկնապատկված լինելուն:

Նվագեցին չորս ասիական երաժշտախմբեր: Հասարակության խնդրանքով պ. Սպենդիարյանը դաշնամուրի վրա նվագեց իր Դրիմի թաթարական էսքիզներից: Ի պատիվ Սպենդիարյանի Հայ գրողների ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը ողջույնի խոսք ասեց»:

«Հորիզոն», 1916, թիվ 276:

Դեկտեմբերի 12 - Ստանում է Ա. Դադյանի՝ ՀԳԿԸ վարչությանն ուղղված նամակը (տե՛ս նոյեմբերի 28):*

*) Ստանալու օրվա մասին նամակի վրա նշում է արված Թումանյանի ձեռքով:
ԳԱԹ ՀԳԿԸՖ, 128:

Դեկտեմբերի 13 - ՀԳԿԸ վարչության անունից պաշտոնական գրություն թիֆլիսի ոստիկանապետին:

Տեղեկացվում է, որ դեկտեմբերի 16-ին տեղի կունենա Ընկերության հերթական երեկույթը: Վրաց գրականության մասին զեկուցումով հանդես կգա Ի.Կ. Նակաշիձեն:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 64/22:

Դեկտեմբերի 13 - ՀԳԿԸ վարչության անունից պաշտոնական գրություն-ծանուցագիր գրաքննության կոմիտեին:*

Ներկայացնում է վրաց գրականության մասին Նակաշիձեի զեկուցման թեզերը. «Состояние Грузии в эпоху до уничтожения крепостного права. Общественная жизнь, пресса и литература в 30х, 40х, 50х годах. Поэзия Ник. Бараташвили, Даниел Чоикадзе и его время. Влияние русской жизни и литературы 60х годов на грузинскую литературу и общественную жизнь. Жизнь и деятельность кн. Ил. Чавчавадзе и кн. Акаки Церетели».

*) Գրության վրա՝ Թումանյանի ստորագրությունը և գրաքննության կնիքը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 31:

Դեկտեմբերի 13 - Լեհական կազմակերպությունների հատուկ կոմիտեի գրությունը ՀԳԿԸ վարչության նախագահ Հովհ. Թումանյանին:

Հրավիրում են Արտիստական թատրոնում դեկտեմբերի 22-ին կայանալիք ցերեկույթին՝ նվիրված Հենրիկ Սենկևիչի հիշատակին:
ԳԱԹ ՀԳԿԸՖ, 141:

Դեկտեմբերի 15 - Տպագրվում է («Հորիզոն», 1916, թիվ 279) ՀԳԿ ընկերության՝ Ալ. Սպենդիարյանին նվիրված երեկույթին (տե՛ս դեկտեմբերի 7) թումանյանի ողջույնի խոսքի շարադրանքը:

Հիշեցնում է, թե «պատմական ծանր հարվածների տակ <...> ինչպես են «աղավաղվել ու աղճատվել մեր ազգային հոգևոր ստեղծագործությունները»: Բացառություն չէ նաև երաժշտությունը, և ուրախալի է, որ այս բնագավառում ևս վերածնության շարժում է սկսվել. «Մեր երաժիշտները վերադառնում են դեպի հարազատ ժողովրդի երգն ու եղանակը և դեպի հայ բանաստեղծի երկերն ու երգերը»: Ողջունում է Սպենդիարյանի «վերադարձը դեպի հայկական իրականությունն ու գրականությունը, որպես մի վկայված հռչակավոր երաժշտագետի վերադարձ, որ գալիս է դաշնավորելու հայ բանաստեղծի խոսքն ու հարազատ երաժշտությունը»:

Բանաստեղծության ու երաժշտության փոխադարձ կապի և այդ ասպարեզում Սպենդիարյանի ստեղծագործական առաքելության մասին գրում է. «Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և իր ոգևորությունով կենդանության շունչ է շնչում նրան, որ նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի, դրա համար նրան թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհում, որ կոչվում է երաժշտություն: Եսպիսով դուք գալիս եք հայոց բանաստեղծների կենդանի գեղարվեստական գործերը թևավորելու, որ նրանք դառնան հզոր ու կատարյալ, կախարդական գործեր»:

Վերջում Ընկերության անունից ողջունում է Սպենդիարյանի վերադարձը հայ հոգևոր իրականություն. «Ողջունում են ձեզ, որպես մի հարազատի, որ, երկար տարիներ օտարության մեջ մնալուց հետո, վերադառնում է դեպի տուն, դեպի հայրենի օջախը, հետը բերելով երաժշտությունը, ամենամուրբն ու ամենասուրբը, ամենաթանկ բանը, ինչ որ կա աշխարհքում ու կյանքի մեջ»:

ԵԼԺ 7, 298-299:

Դեկտեմբերի 15 - Ար. Մազմանյան ստորագրությամբ նամակ թումանյանին՝ թիֆլիսից:

Գրում է. «Ամսույս 18-ին, ցերեկով ժամը 12-ին մեր բանկի* դահլիճում կայանալու է մի մասնավոր խորհրդակցություն Կովկասյան ազգերի համերաշխության հարցի շուրջ՝ մասնակցությամբ հայ, վրացի և մուսուլման հասարակական և մամուլի գործիչների: Ժողովին մասնակցում են հառաջադեմ և շովինիզմով չներշնչված անձնավորություններ, ուստի խոնարհաբար խնդրում են ներկա լինել այդ ժողովին, որը երկար պրոպագանդայի մի արգասիք է ներկայացնում, և մասնակցել այն հիմնական հարցերի մշակման, որոնք մտնելու են նոր ընկերության ծրագրի մեջ»:

*) Նամակը գրված է Կոմերցիոն բանկի ձևաթղթի վրա:

ԳԱԹ ԹՖ, 1584 (506):

Դեկտեմբերի 16 - Հրապարակվում է ՀԳԿԸ վարչության ազդագիրը.

«Ուրբաթ, դեկտեմբերի 16-ին, երեկոյան 8 ժամին տեղի կունենա գրական երեկույթ: Կղասախոսե ռուսերեն լեզվով Իլիա Նականիձեն՝ ժողովրդական գրողները վրաց գրականության մեջ:

Դասախոսությունից հետո տեղի կունենա վիճաբանություն»:

«Հորիզոն», 1916, թիվ 280:

Դեկտեմբերի 18 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Նիկ. Աղբալյան, Դեր. Դեմիրճյան:

Գյուտ Աղանյանի առաջարկած նյութերից (տե՛ս մայիսի 25) կարդում են Արսեն Բագրատունու, Ղևոնդ Ալիշանի, Արսեն Այտնյանի, Խրիմյան Հայրիկի և Մ. Մամուրյանի նամակները:

Կարգադրում են՝ «Նյութերի» առաջին գրքի* մեջ տպագրել Բագրատունուց 4, Ալիշանից 7, Այտնյանից 2 նամակ, Խրիմյան Հայրիկի ու Մամուրյանի բոլոր նամակները:

Առաջին գրքի ծավալը որոշվում է 320 էրես:

Հեղինակների գրվածքների հետ տպագրել նրանց պատկերը և ֆաքսիմիլեն Մամուրյանի նամակները դժվարընթեռնելի լինելով՝ արտագրել տալ տպարանի համար:

*) Խոսքը հայ գրականության ժողովածուի մասին է (տե՛ս մայիսի 25):

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/15:

Ղեկտեմբերի 18 - Հաղորդագրություն («Հորիզոն», 1916, թիվ 282) ՀԳԿԸ հերթական երեկույթի մասին (տես ղեկտեմբերի 13, 16):

Հաղորդման մեջ բերվում է թումանյանի ողջույնի խոսքը՝ ուղղված Ի. Կ. Նակաշիձեին.

«Թանկագին Իլյա Պետրովիչ.

Թույլ տվեք ողջունել ձեզ Հայ գրողների ընկերության անունից, ի դեմս ձեզ՝ ողջունել վրաց գրականության եղբայրական գերդաստանը և ընկերության կողմից նվիրաբերել այս գիրքը՝ «Ποεσία Αρμενίου», իսկ այս գրքի մեջ ամփոփված են մեր ժողովրդի հոգին և մեր ամենաթանկ զգացմունքները:

Թող փարթամորեն բարգավաճի մեր եղբայր վրացի ժողովրդի գեղեցիկ գրականությունը, թող միշտ ապրեն մեր ընկեր վրացի գրողները (ԵԼԺ 7, 299):

«Հորիզոն», 1916, թիվ 282:

Ղեկտեմբերի 18 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Դ. Դեմիրճյան, Նիկ. Աղբալյան:

1) Նախագահողը տեղեկացնում է, որ Արամ Խատյանը գրավոր խնդրել է թույլ տալ իրեն մի դասախոսություն կարդալ Ղարաբաղի բարբառի մասին:

Կարգադրում են՝ խնդրել Խատյանին, որ դասախոսությունը գրավոր ուղարկի վարչությանը՝ ծանոթանալու համար:

2) «Պատանի» ընկերությունը նախագահի միջոցով խնդրել է 300 ռ. նպաստ:

Կարգադրում են՝ պատասխանել, որ կանոնադրության համաձայն նպաստ կամ փոխատվություն կարող են ստանալ միայն ընկերության անդամները:

3) Կարա-Դերվիշը, հիվանդ լինելով, նախագահի միջոցով նպաստ է խնդրել:

Կարգադրում են տալ 150 ռուբլի:

4) Ժողովին տեղեկացվում է, որ մինչև այժմ հոգացողություն չի արված հանգուցյալ Դ. Աղայանի գերեզմանը ցանկապատելու և վայելուչ դրության մեջ պահելու համար:

Կարգադրում են՝ կազմակերպել մի հավաքական երեկույթ Աղայանի հիշատակին և հասույթը տրամադրել նրա գերեզմանը բարեկարգելուն:

5) Կարեն Միքայելյանը խնդրել է թույլ տալ իրեն դասախոսել մեր որբերի մասին: Թումանյանն առաջարկում է ամենաընդունակ որբերին որդեգրել:

Կարգադրում են՝ խնդրել Միքայելյանին, որ դասախոսի հունվարի առաջին շաբաթվա ընթացքում և հասույթը տրամադրել ընդունակ որբերի որդեգրության:

6) Աշտարակի գրասիրաց ընկերությունը դիմել է վարչությանը մինչև այժմ տպագրված և հետագայում տպագրվելիք դասախոսություններից ուղարկել 30-ական օրինակ՝ տարածելու համար:

Կարգադրում են ուղարկել:

7) Լսելով վարչության համար ծառա ունենալու անհրաժեշտության մասին՝ կարգադրում են հանձնարարել Գյուտ Աղանյանին զբաղվել այդ հարցով:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 45/16:

Ղեկտենքերի 19 - Գեներալ-մայոր Թամանշևի պաշտոնական գրությունը ՀԳԿԸ վարչությանը:*

«Провшу Правлению представить требемыи отчем** не позже 23 декабря сего года».

*) Գրության վերջում Թումանյանի ձեռքով նշված է ստացման ամսաթիվը՝ 20 դեկտ., 1916:

**) Խոսքը փախստական գրողներին հատկացված գումարի հաշվետվության մասին է (տե՛ս սեպտեմբերի 30, հոկտեմբերի 7, 29):

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/8:

Ղեկտենքերի 22 - Թիֆլիսի լեհական գաղութի նախաձեռնությամբ տեղի է ունենում գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Հենրիկ Սենկևիչի հիշատակին (տե՛ս ղեկտենքերի 13):

ՀԳԿԸ անունից ողջույնի խոսք է ասում Թումանյանը:

«Հորիզոն», 1916, թիվ 288:

Ղեկտենքերի 22 - Արամ Դադյան ստորագրությամբ նամակ Թիֆլիսի Թումանյանին՝ Էջմիածնից:

Շնորհակալությամբ ստացել է բանաստեղծի՝ ղեկտենքերի 18-ի նամակը,* որով վերջինս ՀԳԿԸ վարչության անունից ինչ-որ

առաջարկով դիմել է նրան: Բայց մամակագիրը չի կարողանում կատարել բանաստեղծի «ցանկությունը», որովհետև հենց ամսի 18-ին էլ զորակոչվել է բանակ: Վերջում ցանկություն է հայտնում թիֆլիսում հանդիպել բանաստեղծի հետ՝ զրուցելու իր տեսությունների մասին, որոնք «արժանացած են եվրոպական հայագետների գնահատմանը»:

*) Նամակն անհայտ է:

ԳԱԹ ԹՖ, 1115 (597):

Դեկտեմբերի 23 - Պաշտոնական գրություն-ծանուցագիր գրաքննության կոմիտեին.

«В пятницу, 23 декабря 1916 г. В зале Императорского музыкального общества в 8 часов вечера состоится лекция Аршака Джемалаяна на тему «Каиср» Левона Шанта как историческая драма».

Ներկայացնում է զեկուցման բովանդակությունը:*

*) Գրության վրա՝ Թումանյանի ստորագրությունը և գրաքննության կնիքը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 32:

Դեկտեմբերի 23 - Ա. Դարբինյանի մամակը Թումանյանին՝ թիֆլիսից.

«Հիշեցնեմ Ձեզ, հարգելի պ. Թումանյան, հետևյալ խնդիրների կարգադրությունը

1. Մի հայտարարություն պիտի տայիք թերթերին գրողների հանձնաժողովի մասին:

2. Մի քանի հազար ռուբլի պիտի տայիք, որ տայինք անցյալ երեկո Ձեր տանը որոշված մարդկանց:

3. Գրողների երեկույթի համար պիտի տայիք մոր տոմսակներ (նախորդները չեղյալ համարելով)»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/2:

Դեկտեմբերի 23 - Գրություն գեներալ-մայոր Թամանշկին.

«Его превосходительству г-ну Главноуполномоченному по устройству Кавказского фронта

В ответ на отношение Вашего превосходительства от 19 сего декабря за No 6366 Правление честь имеет сообщить, что выдача ссуд писателям и интеллигентным беженцам-армя-

нам еще не произведена, так как предварительно составляется список и обследование лиц, имеющих право на ссуду.

К Выдаче приступим с 1 января 1917 г.

23 декабря 1916 г. No 14»:

*) Թամամշըը հետաքրքրվել էր, թե ինչպես է տնօրինվում արևմտահայ գաղթականության (հատկապես պատերազմից տուժած մտավորականության) օգնությունը և կառավարությունից հատկացված 300000 ռուբլու բաշխումը:

ԵԼԺ 10, 260, 628:

Դեկտեմբերի 25 - Հաղորդագրություն մամուլում.

«Դեկտեմբերի 16-ին Երաժշտական ընկերության դահլիճում կայացավ Հայ գրողների ընկերության երեկույթը (տե՛ս դեկտեմբերի 13), դասախոսեց վրացի լրագրող և հասարակական գործիչ իշխ. Ի. Պ. Նակաշիձեն՝ վրաց գրականության մասին: Ներկա էին վրաց գրողներ և հասարակական գործիչներ:

Նախքան դասախոսությունը Գրողների ընկերության նախագահ Յովհ. Թումանյանը հետևյալ խոսքերն ուղղեց դասախոսին.

Թանկագին Իլյա Պետրովիչ,

Թույլ տվե՛ք ողջունել ձեզ Հայ գրողների ընկերության անունից, ի դեմս ձեզ ողջունել վրաց գրականությանը և Ընկերության կողմից նվիրաբերել այս գիրքը՝ «Поэзия Арменуса»: Այս գրքում ամփոփված են մեր ժողովրդի հոգին և մեր ամենաթանկ զգացմունքները»:

«Համբավաբեր», 1916, թիվ 52:

Դեկտեմբերի 25 - Տպագրվում է («Հորիզոն», 1916, թիվ 288)

Թումանյանի ողջույնի խոսքը Հենրիկ Սենկևիչին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթում:

Նշանավոր լեհ գրողի հիշատակին բերում է «հայ ժողովրդի գրական գերդաստանի սերն ու հիացումը»: Նրան, որ «լավագույն օրերի արշալույսն» է վառել իր «ցեղի հոգու մեջ», փառաբանում է «միշտ արշալույսի ձգտող հայ ժողովրդի գրականությունը»: Նրան, որ «ընդհանուր եղբայրության ազնիվ կապերով» շաղկապել է մարդկանց ու ազգերին, օրհնում են «եղբայրության ու սիրո էնքան կարոտ հայ ժողովրդի գրողն ու ընթերցողը»:

Վերջում. «Եվ դու, որ համաշխարհային գեղեցիկ գրականության հավերժական տաճարում ճշմարտության, բարության ու գեղեցկության մեծ քուրմերից մինը եղար, քո վսեմ հաղթանակի հա-

մար դափնի պսակ* ենք ձոնում քո հիշատակին աշխարհի հնագույն գրականություններից մեկի՝ հայ գրականության անունից»:

*) Թումանյանը ՀԳԿԸ անունից պսակ է դրել Սենեկիչի բեմում դրված կիսանդրում:

ԵԼԺ 7, 299-300, 635:

Դեկտեմբերի 25 - Ստեփան Կանայանի երկտող-մանակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Ուղարկելով Ձեզ խոստացած կաշառքս, այն է վերջին աշխատությունս՝ «Անհայտ գավառներ հին Հայաստանի», հուսամ թե չեք մոռանալ ժամանակին ինձ ևս առաջարկելու Հայ գրողների ընկերության անդամ:

Հարգանք՝

Ստեփան Կանայան»:

ԳԱԹ ԹՖ, 1418 (496/5):

Դեկտեմբերի 25 - Գրություն Հարություն Սուրխաթյանին.

«Սիրելի պ. Սուրխաթյան,

Մեր նորագույն ընկերները՝ նորագույն բանաստեղծները, ցանկանում են ընդհանուր գծերով առաջուց իմանալ Ձեր դասախոսության (տես դեկտեմբերի 30) բովանդակությունը: Ես կարծում եմ, Դուք ոչինչ չեք ունենալ էս ցանկության դեմ և կխոսեք նրանց ներկայացուցչի հետ, պ. Շահինյանի հետ, որ գալիս է Ձեզ մոտ:

Ձեր *Հովհ. Թումանյան*»:

ԵԼԺ 10, 260, 629:

Դեկտեմբերի 25 - Հաղորդագրություն ՀԳԿԸ հերթական 12-րդ երեկույթի մասին.

«Հայ գրողների ընկերության հերթական գրական երեկույթը, որ կայացավ դեկտեմբերի 23-ին, անցավ շատ հետաքրքրական և հաջող: Դասախոսեց պ. Արշակ Ջամալյան, նյութ ունենալով «Լևոն Շանթի «Կայսր»-ը իբրև պատմական դրամա»: Ջրույցին մասնակցեցին Դ. Դեմիրճյան, Մատենճյան և Տեր-Գրիգորյան:

Դասախոսությունից առաջ նախագահ պ. Մ. Աբեղյանի առաջարկով հանդիսականները հոտնկայս հարգեցին օրերս վախճանված հայտնի թարգմանիչ Փիլիպոս Վարդանյանի հիշատակը»:

«Հորիզոն», 1916, թիվ 288:

Պեկտեմբերի 25 - Մամուլը տեղեկացնում է.

«Պեկտեմբերի 27-ին* Հայ գրողների ընկերությունն ունենալու է մի արտակարգ երեկույթ, ուր պ. Կ. Միքայելյան կարդալու է դասախոսություն «Որբերի աշխարհում» նյութի մասին: Բանախոսությունը բաղկացած է երկու մասից, առաջինում դասախոսը պիտի կարդա որբ բանաստեղծների մասին, երկրորդում՝ զանազան պատկերներ որբերի կյանքից»:

*) Երեկույթը տեղի է ունենում դեկտեմբերի 28-ին:

«Համբավաբեր», 1916, թիվ 52:

Պեկտեմբերի 26 - «Վան-Տոսպ» հանդեսի խմբագրի մամակը թումանյանին՝ Թիֆլիսից:

Իրեն անծանոթ Արմենակ Խոշարունի անունով մի արևմտահայ գրող, որ իր մասին հայտնում է, թե «մի քանի գրքեր ունի, որոնք ապագայում լույս կտեսնեն, ունի զանազան ձեռագիր աշխատություններ, որոնք մնացել են Պոլիս, թղթակից է եղել «Ընկեր» թերթին և այլն», կողոպտվել է և օգնություն է խնդրում: Ուզում է իմանալ, թե Գրողների ընկերությունը արևմտահայ փախստական գրողների օգնության ֆոնդի միջոցով կարո՞ղ է նրան օգնել:

ԳԱԹ ԹՖ, 2014 (985):

Պեկտեմբերի 28 - Տեղի է ունենում ՀԳԿԸ արտահերթ երեկույթը: Հայ որբ պատանիների գրական ստեղծագործությունների մասին բանախոսում է Կ. Միքայելյանը (տե՛ս դեկտեմբերի 6):

«Հորիզոն», 1916, թիվ 292:

Պեկտեմբերի 28 - Սերգեյ Գորոդեցկու բացիկը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Պետրոգրադից.

«Дорогого друга крепко целую, желаю счастье в новом году».

ԳԱԹ ԹՖ, 1097 (595):

Պեկտեմբերի 28 - Արամ Դադյանի մամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Էջմիածնից:

Նամակն սկսում է «սիրելի ուսուցչի» հանդեպ մեծարանքի գեղումներով. «Թույլ տվեք այդպես արտահայտվելու, որովհետև Ձեր գրական վաստակներով կրթված մոր սերնդի յուրաքանչյուր անդամը ազատ է իր ուզածի ձևով արտահայտվելու իր ուսուցչի վերա-

բերմամբ: Իսկ ներկայիս այդ զգացումը ավելի ևս զեղում է դառնում, քանի որ ուսուցիչը առիթ ունի սրտանց ուրախանալու իր երիտասարդ հետևողի գրական աշխատանքով»:

Ստացել է բանաստեղծի «փակ նամակը»: Տեղեկություններ է հաղորդում իր բառարանագրական աշխատության մասին, որ բարձր գնահատականի է արժանացել լեզվաբան գիտնականների կողմից (տե՛ս նաև դեկտեմբերի 22): Աշխատության մի մասին ամռանը ծանոթացել է Ե. Լալայանը, գնահատական և գովասանական վկայություն ունի նաև Մելեից: Աշխատությունը մտադիր է տպագրել և ցանկություն ունի խոսելու հետաքրքրվողների հետ:

Եվ վերջում. «Ձեր նամակը, Ձեր հուսադրող, ինձ համար սուրբ աջակցությունը բաց է անում ինձ համար երանության մի նոր հորիզոն, բայց, ավա՛ղ, առանց միակ և կարևոր հույսի, թե կդառնա՞մ արդյոք պատերազմի դաշտից...»:

ԳԱԹ ԹՖ, 1116 (304 լր.):

Դեկտեմբերի 28 - ՀԳԿԸ վարչության անունից պաշտոնական գրություն գրաքննության կոմիտեին:

Հայտնում է Կայսերական երաժշտական ընկերության դահլիճում Հ. Սուրխաթյանի՝ դեկտեմբերի 30-ին կայանալիք «Նորագույն հոսանքը հայ պոեզիայի մեջ» թեմայով դասախոսության մասին:

Ներկայացնում է դասախոսության համառոտ բովանդակությունը. «Общественные течения и настроения у армян на борьбе настоящего столетия. Поэзия, художественное и общественное значение армянских поэтов. Акон Аконян, Ш. Кургиян, В. Териан, Кялашян, Агасян, Тугранян, Леулу, Казарян, Симонян, Зарян, Пааре».

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 33:

Դեկտեմբերի 28 - Հակոբ Նևշեհիրյան ստորագրությամբ նամակ թումանյանին՝ թիֆլիսից:

Ներփակ ուղարկում է Օդեսայից ստացած մի նամակ, որի հեղինակը խնդրում է օգնել Բուլղարիայում պաշտոնավարած մի հայ ուսուցչի, որ՝ «անակնկալներու դժբախտ բերմամբ, բազմաթիվ ռումինահայ գաղթականների հետ միասին հասած է Օդեսա՝ անշուշտ անօգնական և կարոտ: Հայտնելով այսքանը, խնդրագիրը կհանձնեն Միությանդ նկատողության»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 109/3:

Պեկտեմբերի 30 - Թիֆլիսի թեմակալ Առաջնորդ Մխիթար եպիսկոպոսի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից։*

«Շնորհակալությամբ ստանալով «Կ. Յ. գրողների ընկ.» վարչությունից մի տոմսակ ամսիս 28-ին տեղի ունեցած Կ. Միքայելյանի դասախոսությանը ներկա լինելու համար, ցավում եմ, որ այդ օրը Ներսիսյան դպրոցում հոգաբարձական ժողով ունենալու պատճառով անկարող եղա ներկա լինելու դասախոսությանը։

Սրա հետ ուղարկում եմ Ձեր տոմսակի գինը – 3 ռուբլի»։

*) Թումանյանի ձեռքով գրված և ստորագրված է՝ «Վերադարձնել»։

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 108/5:

Պեկտեմբերի 30 - Լրատվություն մամուլում.

«Հայ գրողների ընկերության այսօրվա հերթական երեկույթին դասախոսելու է պ. Սուրխաթյան՝ Հայոց նորագույն բանաստեղծության մասին՝ սկսած Վահան Տերյանից մինչև սկսնակ բանաստեղծները»։

«Հորիզոն», 1916, թիվ 292:

Պեկտեմբերի 30 - Հաղորդագրություն ՀԳԿԸ արտահերթ երեկույթի (տե՛ս դեկտեմբերի 28) մասին.

«Չորեքշաբթի, դեկտեմբերի 28-ին, երաժշտական դպրոցի դահլիճում կայացած Հայ գրողների ընկերության արտակարգ երեկույթին՝ պ. Կարեն Միքայելյանը շատ հետաքրքրական հայտնություններ արեց որբերի աշխարհից և առանձնապես կանգ առավ նրանց գրած բանաստեղծությունների վրա, կարդաց իր հավաքած որբերի ոտանավորներից մի քանի հատ. հետաքրքրական ու անպաճույճ կերպով պ. Միքայելյանը գրի էր առել որբերի պատմածները։

Երեկույթի սկզբին Հայ գրողների ընկերության նախագահ Հովհ. Թումանյանի առաջարկությամբ հանդիսականները հոտնկայս հարգեցին որբերի նահատակված ծնողների, քույրերի ու եղբայրների հիշատակը։ Ներկա էին որբանոցներին խնամող հոգաբարձուների ներկայացուցիչներն ու որբանոցների կառավարիչները»։

«Հորիզոն», 1916, թիվ 292:

Պեկտեմբերի 30 - Տեղի է ունենում ՀԳԿԸ հերթական գրական երեկույթը։ «Ռուսահայ նորագույն բանաստեղծությունը» թեմայով

բանախոսում է Յ. Սուրխաթյանը:

Սկսման գրողներին ուղղված խոսքով հանդես է գալիս Յովհ. Թումանյանը:

Խոսքի սկզբում որոշարկուն է նոր շրջանի արևելահայ բանաստեղծության զարգացման փուլերը և իր տեղը. «Ռուսահայ բանաստեղծությունը երեք շրջան է ունեցել: 1857 թվականին ուսանող Ռ. Պատկանյանը՝ Գամառ-Քաթիպան, հրատարակել է իր «Ազգային երգարան» անունով բանաստեղծությունների տետրակն ու նրանով սկիզբն է դրել առաջին շրջանի բանաստեղծության:

Նրանից երեսուն տարի հետո, 1887 թվականին ուսանող Յ. Յովհաննիսյանը հրատարակեց իր բանաստեղծությունների առաջին գիրքը, ու սկիզբն առավ երկրորդ շրջանի բանաստեղծությունը:

Յովհաննիսյանից երեսուն տարի հետո էլ,* 1908 թվականին դարձյալ ուսանող Վ. Տերյանը հրատարակեց իր «Մթնշաղի անուրջները» ու առաջ եկավ երրորդ, նորագույն շրջանը, որի մասին համդիսավոր ու հավաքական կերպով խոսում ենք էսօր Յայ գրողների ընկերության մեջ:

Ինչպես տեսնում եք, ես ընկնում եմ երկրորդ շրջանի մեջ և կանգնած եմ հին շրջանի ու նորագույնի մեջտեղը»:

Հարգանքի տուրք մատուցելով հին շրջանի «հավերժացած» անունների հիշատակին՝ ջերմորեն ողջունում է նորագույններին, որ «նոր ոգևորությամբ ու նոր երգերով» հայտնվում են «Հայոց Գրական աշխարհում»: Նկատում է նաև, որ նորերի համար զարգացման ավելի նպաստավոր պայմաններ կան, քան եղել է իրենց սկսմանության շրջանում. ժողովուրդը հիմա ավելի է զարգացել ու հետաքրքրվում է գրականությամբ:

Ընդգծում է հատկապես քննադատության նոր որակը, նոր մեթոդներն ու չափանիշները: Միաժամանակ խորհուրդ է տալիս ուշադիր լինել քննադատական դիտողությունների հանդեպ, չշփոթվել, «որովհետև ամենից շատ ու ամենից լավ բանաստեղծն ինքն է իրեն հասկանում և իր ներքին բնագղն ու ինտուիցիան է իր ամենաուղիղ առաջնորդը: Համոզված եղեք, որ քննադատը ոչ բանաստեղծ կարող է ստեղծել և ոչ բանաստեղծ կարող է սպանել: Նա միայն մեկնաբանում, պարզում ու բացատրում է: Եվ վերջիվերջո մի քննադատ կա, որ վերջնականապես որոշում է ապրող ու մեռնող գործերը՝ ժամանակն է»:

Խոսում է նաև ազդեցությունների մասին. «Մի՛ շփոթվեք նաև

են ժամանակ, երբ ազդեցությունների խոսք են ասում: Համաշխարհային գրականության մեջ ոչ մի բանաստեղծ չկա, որ շատ կամ քիչ ազդված չլինի իր նախորդներից: Ազդեցությունը են սանդուղքն է, որով սկսնակը բարձրանում է դեպի ինքնուրույնությունը: Ոչ էլ հուզվեցեք, երբ լավ բանաստեղծություններ շատ չեն գտնում ձեր գրվածքներում: Լավ բանաստեղծություններ քիչ կան նույնիսկ նշանավոր բանաստեղծների մեջ: Հիշեցեք Հայնեի խոսքը, որ ասում է թե՝ մեծ բանաստեղծը նա է, որի յոթ գրվածքներից մինը լավն է, դուք շատ պետք է ուրախ լինեք, երբ ձեր տասնյոթ կամ քսանյոթ երգից մինը լավ լինի: Դրանով էլ դարձյալ կենդանի կմնաք ձեր մայրենի գրականության մեջ»:

Երիտասարդ բանաստեղծներին չի ասում բարով եք եկել, որովհետև Հայ գրողների ընկերության մեջ նրանք հյուր չեն, այլ տանտեր, ասում է միայն գնաք բարով. «Ձեզ ասում են՝ բարով գնաք դեպի մեր ժողովուրդն ու աշխարհը, վշտերի, ցավերի, չարիքների ու կարիքների աշխարհը, ձեր թարմ ու անկեղծ երգերով, կյանքի լավագույն ծայներով՝ մարդկանց հրապուրելու դեպի ճշմարիտն ու բարին, ազնիվն ու գեղեցիկը»:

*) Պատկանյանի, Հովհաննիսյանի, Տերյանի առաջին ժողովածուների միջև ժամանակահատվածը ուղիղ երեսուն տարի չէ: Թումանյանը կլորացրել է ժամանակը՝ խոսքը ավելի պատկերավոր ու տպավորիչ դարձնելու համար:

ԵԼԺ 7, 300-303:

Դեկտեմբերի 30 - Հաղորդագրություն («Մշակ», 1916, թիվ 292) ՀԳԿԸ՝ արտահերթ երեկույթի (տե՛ս դեկտեմբերի 28) մասին:

Հաղորդագրության մեջ բերվում է Թումանյանի ելույթի համառոտ շարադրանքը. «Հ. Թումանյանը հայտնեց, որ Հայ Գրողների ընկերությունն, ընդառաջ գնալով այդ միանգամայն բացառիկ հանգամանքին, որոշել է որդեգրել որբերից ընդունակներին ու տաղանդավորներին, որոնք վաղվա զարհուրանքի, սոսկումի և ավերի այն միակ արտահայտիչներն են լինելու, որ դեռ հայ պանթոնը չի ունեցել իր բարձրության վրա, և ինչպես իրանք խոցվել ու կտրատվել են թշնամու սրերից, պետք է մարդկության սիրտը խոցեն ու կտրատեն գրչով ու խոսքով: Ապա ցանկություն հայտնեց, որ մենք նրանց վերաբերվենք մեր հարազատների պես: Եթե ոչ, նրանք, որ դեռ իրանց մատաղ հասակում բողոքի ու խիզախության նետեր են ուղղում «հայոց ոխերիմ աստծուն» և երկնքի թռչուններին աղերսում, որպեսզի իրենց ճանկերով հող առնեն գետնից և տանեն ցանեն հա-

զարավոր անթաղ դիակների վրա, վաղը կարող են նույն արդար զայրույթով մեր դեմ ծառանալ»:

ԵԼԺ 7, 579:

Դեկտեմբեր - ԶԳԿԸ վարչության անունից շնորհակալագիր կովկասյան ռազմաճակատից փախստականների գործերը կարգադրող գլխավոր լիազոր թամամշին:

Հայտնում է, որ շնորհակալությամբ ստացել են պետական միջոցներից հատկացված 10 000 ռուբլին՝ փախստական թուրքահայերին օգնություն ցույց տալու համար (տե՛ս սեպտեմբերի 30):

ԳԱԹ ԶԳԿԸՖ, 109/7, 109/9:

Դեկտեմբեր - ԶԳԿԸ վարչության անունից հայտարարություն՝ «ի գիտություն թուրքահայ փախստական գրողների»:

«Գեներալ Թամամշյանը Հայ Գրողների Կովկասյան Ընկերության վարչությանը տվել է 10 000 ռ. թուրքահայ փախստական գրողներին տալու իբրև վարկ և 6 %-ով:

Վարչությանս դիմումին ի պատասխան Թիֆլիսի թուրքահայ փախստական գրողների ընտրած հանձնախումբը և Երևանի թուրքահայ գրասիրաց ընկերության վարչությունը ուղարկել են մեզ գրողների ցուցակը և վարչությանս մոտ ներկայացուցիչ են նշանակել պ. Արամ Մանուկյանին և Արտակ Դարբինյանին (տե՛ս նոյեմբերի 20, դեկտեմբերի 11):

Արդ վարչությունս յուր նախագահի և հիշյալ երկու ներկայացուցիչների մասնակցությամբ կազմել է մի հանձնախումբ և նրան լիազորել է կատարելու փոխատվության բաշխման գործը:

Հայտարարում են ի գիտություն այն փախստական գրողների, որոնք մինչև այժմ Թիֆլիսի և Երևանի մարմինների միջոցով իրենց մասին տեղեկություն չեն հաղորդել վարչությանս, փութան մինչև ամսույս վերջը նորընտիր հանձնաժողովին դիմել իր նախագահի անունով:

Նախագահ

հայ. գրող. ընկ. վարչության»:

ԳԱԹ ԶԳԿԸՖ, 109/10:

Դեկտեմբեր - «Աղբյուր-Տարագի աշխատակիցներ» խորագրի տակ տպագրվում է խմբային լուսանկար՝ մակագրությամբ. «Հովհ.

Թումանյան, Ղ. Աղայան, Ս. Թառայան, Շիրվանզադե: Լուսանկարված Աղբյուր-Տարազի խմբագրատանը 1898 թ.»*:

*) Լուսանկարը տպագրված է Ս. Թառայանի մահվան առիթով:

«Տարազ», 1916, թիվ 12:

1916 - Գրում է «Մոծակն ու Մրջյունը» («Գիժ Մոծակի պարի ժամին...») բալլադը:

ԵԼԺ 2, 176-179:

1916 - Առաջին անգամ տպագրվում է Ս. Տ. Ակսակովի «Алень-куш и вешочек» հեքիաթի՝ Թումանյանի թարգմանությունը՝ «Կարմիր ծաղիկը» վերնագրով*:

*) Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը Թումանյանի հեքիաթները հրատարակում էր երկու պրակով՝ «Ռուսական հեքիաթներ» և «Օտար հեքիաթներ»: «Կարմիր ծաղիկը» տպագրվել է առաջին պրակում:

ԵԼԺ 5, 394-405:

1916 - Առաջին անգամ տպագրվում է («Օտար հեքիաթներ», էջ 3-14) «Աներևույթ թագավորությունը» թարգմանական հեքիաթը՝ «Գերմանական» ենթավերնագրով:

ԵԼԺ 5, 406-414:

1916 - Գրում է ««Поэзия Армения» նշանակության մասին» հոդվածը*:

Թիֆլիսում Բրյուսովի այն տարակուսանքին, թե ինչպես է, որ իրենք մինչ այդ անծանոթ են մնացել հայոց հարուստ բանաստեղծությանը, Թումանյանը պատասխանել է. «Մինչև էսօր Ռուսաստանից մեզ մոտ ոստիկաններ են ուղարկել, թե գնացեք, գողեր բռնեցեք ու սրիկաներ: Նրանք էլ եկել են, ավազակներ, գողեր ու սրիկաներ են գտել: Դատախազներ են ուղարկել, թե մարդասպաններ ու ոճրագործներ երևան հանեցեք ու դատապարտեցեք: Նրանք էլ եկել, մարդասպաններ ու ոճրագործներ են գտել: Ժանդարմներ են ուղարկել, թե արթուն հսկեցեք, հեղափոխականներ գտեք: Նրանք էլ եկել են հեղափոխականներ են գտել: Եվ այլև, և այլև: Ու լուրը գնացել է Ռուսաստան, թե Կովկասում ավազակներ կան, գողեր ու սրիկաներ կան, մարդասպաններ, խաբեբաներ ու ոճրագործներ կան, հեղափոխականներ կան...

Բայց բանաստեղծներ չեն ուղարկել, թե գնացեք Կովկասում կան հայերի մեջ բանաստեղծություն որոնեցեք: Ահա առաջին ան-

գամն է ռուս բանաստեղծը գալիս մեզ մոտ հատկապես բանաստեղծության համար: Առաջին անգամն են ռուս նշանավոր բանաստեղծները մեր բանաստեղծությանը մոտենում և գտնում են լի ու լի, և այժմ լուրը կերթա Ռուսաստան, թե Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն էլ կա, բանաստեղծներ էլ կան...»:

Այս տեսակետից էլ բարձր է գնահատում «Поэзия Арменуса» ժողովածուի նշանակությունը: Այս առիթով դատողություններ է անում ընդհանրապես քննադատության մասին. «Մարդիկ կան, որ բանաստեղծների անհաջող գործերն են որոնում ու նրանցով են զբաղվում: Դրանք անգետ ու անճաշակ մարդիկ են և, նույնիսկ, վատ հոգու տեր մարդիկ: Թերությունները պետք է նկատել, բայց բանաստեղծին իր հաջող գործերի մեջ պետք է ճանաչել, նրանցով պիտի գնահատել:

Եվ էս ճշմարիտ է ոչ միայն ինքնուրույն գործերի համար, այլև թարգմանության: Չէ՞ որ բանաստեղծության թարգմանությունը, էն էլ առանձին համ ու հոտ, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը, շատ է դժար ու հազվագյուտ բան: Բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանության համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՛ ձևը կտեսնես, բայց բուրմունքը չես զգալ: Ինչքա՞ն շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև ինքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ինչքան սեր...»:

*) Պահպանվել է հոդվածի սևագիրը (ԳԱԹ ԹՖ, 223): Իր ժամանակին չի տպագրվել:

ԵԼԺ 7, 469-472:

1916 - Գրառում Ռաֆայել Զարդարյանի ալբոմում.

«Երջանկությունը, իմ շնորհալի բարեկամ, հենց նրանով է լավ, որ աշխարհի բոլոր լավ բաների նման՝ օդի նման, լույսի նման՝ միշտ ու ամեն տեղ կարող ենք գտնել, դեռ նրանցից էլ ավելի առատ: Երջանկության աղբյուրը *մարդու իրեն սիրտն է*: Եվ մեծ ու հարուստ սիրտ ունեցող մարդիկ կարող են վշտանալ և շատ վիշտ ու ցավ ունենալ, բայց երբեք դժբախտ չեն լինում նրանք»:

ԵԼԺ 8, 434:

Հունվարի 1 - Գրում է «Շնորհավոր...» բանաստեղծությունը:*

*) Ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Աշխենի ալբոմում:

ԵԼԺ 1, 288, 635:

Հունվարի 1 - Գրում է «Իմ Արփիկին» («Ա՛խ, Արփիկ ջան, որ արփի ես...») բանաստեղծությունը:

*) Սևագիր ինքնագիրը՝ հեղինակային ուղղումներով, բանաստեղծի դստեր՝ Արփենիկի ալբոմում:

ԵԼԺ 1, 416, 671:

Հունվարի 1 - Տպագրվում է Մ. Աբեղյանի «Հայ կուլտուրական կյանքը 1916 թվին» հոդվածը:

Ընդհանուր համապատկերի մեջ բարձր է գնահատում Հայ գրողների ընկերության գործունեությունը. «Գրողների ընկերության դասախոսությունները մեծ հետաքրքրություն են առաջ բերել մեր հասարակության մեջ, կրում են ըստ ամենայնի լուրջ և կրթիչ բնույթ, ամեն անգամ դեպի իրենց են գրավում մեծաթիվ ունկնդիրներ: Մնում է, որ գրողների ընկերությունը իրականացնի և իր մյուս ծրագիրը՝ հիմնել սիստեմատիկ դասընթացներ հայ գրականության և բանասիրության (տե՛ս 1916, մայիսի 27, օգոստոսի 21, նոյեմբերի 6)»:

«Հորիզոն», 1917, թիվ 1:

Հունվարի 1 - Տպագրվում է Մ. Մատենճյանի «Ռուսահայ գրականությունը 1916 թվին» հոդվածը:

Արձանագրելով, որ պատերազմի հետևանքով գրական կյանքը չէր կարող առանձին բեղմնավորություն ունենալ՝ այնուամենայնիվ նկատում է մի քանի գրքեր, որոնց շարքում նաև Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուն՝ որպես ուշագրավ երևույթ:

«Հորիզոն», 1917, թիվ 1:

Հունվարի 1 - Տպագրվում է հոդված Գրողների ընկերության մասին՝ «Ողջունում ենք» խորագրով, Altalena ստորագրությամբ:

Հեղինակը, իրեն համարելով ընկերության «սոսկալի» հակառակորդ, այնուամենայնիվ հանում ճշմարտության ողջունում է կարիքավոր գրողներին նյութական օժանդակություն ցույց տալու նախաձեռնությունը:

Ընկերության գործունեության մեջ նկատում է նաև թերություններ ու բացթողումներ. երեք տարվա ընթացքում ընդհանուր ժողով չի գումարել և հաշիվ չի ներկայացրել իր գործունեության մասին,* ընկերության մեջ տեղ են գտել նաև գրողի կոչում կամ առհասարակ գրականության հետ կապ չունեցող մարդիկ:

*) Հոդվածագիրը իրավացի չէ. այդ ընթացքում Գրողների ընկերությունը մի քանի ընդհանուր ժողով է գումարել և պարբերաբար հաշիվ է ներկայացրել իր գործունեության մասին:

«Գաղափար», օրաթերթ (երկօրյա), Թիֆլիս, 1917, թիվ 114-1:

Հունվարի 1 - Մոսկվայում տպագրվում է «Армянская литература 1916 г.» հոդված՝ Читатель ստորագրությամբ:

Տարվա գրական արտադրանքի ընդհանուր տեսության մեջ անդրադառնում է նաև Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուին, Պ. Մակինցյանի գրախոսականին (տե՛ս 1916, մայիսի 19) և այդ գրախոսականի առթիվ Վ. Մենակի հոդվածին (տե՛ս 1916, հունիսի 30)՝ կատարելով ընդարձակ քաղվածքներ:

Իր կողմից բարձր գնահատելով Թումանյանի «հրաշալի բանաստեղծությունները», որոնք «զարդարում են մեր պոեզիան»՝ հոդվածագիրը չի շրջանցում նաև նրա հոդվածները, ինչպես նաև բեղմնավոր գործունեությունը՝ որպես ՀԳԿԸ վարչության նախագահի. «Находясь во главе О-ва армян-писателей, наш поэт руководит им и дает тон всей этой организации, вызвавшей такое воодушевление и интерес к литературе.

Из сказанного ясно, что армянский народ не без основания так ценит О. Туманяна при его жизни. В этом отношении наш заслуженный писатель составляет счастливое исключение в ряду своих товарищей по перу. Но армянский народ еще выскажет свое уважение к нему по поводу исполнившегося юбилея 25-летьем деятельности его».

«Армянский вестник», Москва, 1917, թիվ 1, էջ 6-8:

Հունվարի 3 - Տպագրվում է Ավ. Գուլոյանի «Հայ գրականությունը 1916 թվին» հոդվածի շարունակությունը:*

Արձանագրելով, որ տարվա ընթացքում մեր գրականությունը «փոքր է եղել»՝ առանձնացնում է Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուն. «Տարվա սկզբին լույս տեսավ Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» նոր ու հին հայրենասիրական ոտանավորների

ժողովածուն: Դրանով էլ վերջանում է գրական հին սերնդի աշխատանքն այս** ասպարեզում»: Նորերից հիշում է Քալաշյանին, Չարենցին, Վալադյանին և ուրիշների:

*) Սկիզբը՝ «Արև», 1917, թիվ 1:

**) Այսինքն՝ բանաստեղծության:

«Արև», 1917, թիվ 2:

Հունվարի 3 - Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Աստրախանից:

Դժգոհում է, որ կյանքը անհետաքրքիր է անցնում, դպրոցները լավ վիճակում չեն: Հայտնում է, որ առաջնորդարանում զեկուցումներ է կազմակերպում տեղի հայերին հայ հասարակական կյանքին մոտեցնելու նպատակով: Տոմսերի վաճառքից հավաքված գումարը հատկացնում է տեղի գրական ընկերությանը: Մտադրություն ունի այսուհետև նման գումարներ ուղարկել Թիֆլիս՝ մայր ընկերությանը՝ գրողներին օգնելու ընդհանուր գործին նպաստելու համար:

Թումանյանի հաղորդած տեղեկություններին (տե՛ս 1916, նոյեմբերի 6), թե մտադիր են հայկական ակադեմիա ստեղծել, կազմակերպել գրական դասընթացներ, թե այդ նպատակի համար հայ հարուստները խոստացել են խոշոր գումարներ հատկացնել և թե գործին մասնակցելու համար նկատի ունեն նաև իրեն, խոստանում է թողնել բոլոր պաշտոնները և նվիրվել միայն այդ նպատակի իրականացմանը: Միաժամանակ կասկած է հայտնում, թե այդ մտադրությունը հնարավոր է իրականացնել:

Հայտնում է, որ մտադիր է ճանապարհորդել անդրկովկասյան երկրներում և մարտի վերջին լինել Բաքվում: Բանաստեղծին ևս հրավիրում է Բաքու՝ խոստանալով հոգալ նյութական և ամեն կարգի հարմարությունների համար:

ԳԱԹ ԹՖ, ց. 2, 399: ԹԹ, 2447:

Հունվարի 4 - Լիզեճյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Խնդրում է բանաստեղծի միջնորդությունը, որպեսզի նյութական օգնություն ցույց տրվի ուսուցիչ Միհրան Ղարիբջանյանին:

ԳԱԹ ԹՖ, 1332 (718):

Հունվարի 4 լույս 5-ի գիշեր, Թիֆլիս - Դստեր՝ Նվարդի հետ այցելում է հյուրանոց՝ Վահան Տերյանին:

Նվարդը եղբորը՝ Արտավազդին ուղղված հունվարի 6-ի նամակում գրում է. «... Երեկ գիշեր հայրիկն ու ես գնացինք Վահանին հյուր նրա հյուրանոցը: Էնտեղ էին Կարենը,* Ա. Խոնդկարյանը,** հետո էլ եկավ բժիշկ Գրոն:*** Մինչև գիշերվա երկուսը էնտեղ էինք, ընթերցեցինք, լավ անցավ»:

*) Կարեն Միքայելյան, «Գարուն» տարեգրքի խմբագիր:

**) Արամ Խոնդկարյան, լրագրող, թարգմանիչ:

***) Գրիգոր Տեր-Յակոբյան, բժիշկ-հոգեբույժ, պրոֆեսոր:

ԹԶ ԱՐՏ, 203:

Հունվարի 5, Թիֆլիս - Թումանյանին այցելում են Վահան Տերյանը և Կարեն Միքայելյանը:

Նույն նամակում Նվարդը գրում է եղբորը. «Երեկ էլ ճաշին էին մեզ մոտ: Վաղը ցրվում են. Կարենը գնում է Մոսկվա, Վահանը՝ Երևան»:

ԹԶ ԱՐՏ, 203:

Հունվարի 5 - Գրում է «Անուշի ալբոմից» («Երազեցի շարունակ...») բանաստեղծությունը:*

*) Սևագիր ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Անուշի ալբոմում:

ԵԼԺ 1, 289:

Հունվարի 8 - Գրում է «Երեխի նման» («Երեխի նման մտա ես աշխարհ...») բանաստեղծությունը:*

*) Սևագիր ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Աշխենի ալբոմում:

ԵԼԺ 1, 417, 671:

Հունվարի 10 - Հաղորդագրություն մամուլում ՀԳԿԸ երեկույթում Հ. Սուրխաթյանի՝ «Ռուսահայ նորագույն բանաստեղծությունը» թեմայով բանախոսության մասին (տե՛ս 1916, դեկտեմբերի 30):

Տեղեկացվում է, որ Թումանյանը ողջույնի խոսք է ասել սկսնակ բանաստեղծներին:

«Հորիզոն», 1917, թիվ 5:

Հունվարի 11 - Կարեն Միքայելյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին Բաքվից:

Տեղեկացնում է, որ մի նամակ էլ Թիֆլիսից է գրել՝ ուղարկելով նվիրատուների* ցուցակը, որտեղ մոռացել է հիշել 50 ռ. նվիրած Արամ Կրիստյանի անունը:

Նախորդ օրը Հովհաննիսյանի տանը ճաշի ժամանակ հայտնել է ընկերության** և այդ նպատակով հավաքված գումարի մասին: Դա ներկաների վրա մեծ տպավորություն է թողել, և խմել են բանաստեղծի կենացը:

*) Նկատի ունի «որդեգիրների ֆոնդի» նվիրատուներին:

**) Խոսքը վերաբերում է Հայկազյան ընկերությանը:

ԳԱԹ ԹՖ, 1767 (914):

Հունվարի 11 - Մամուլում հայտարարություն «Հասկեր» ամսագրի 1916-1917 թթ. բաժանորդագրությունն սկսվելու մասին:

Հատուկ տեղեկացվում է, որ հանդեսի մշտական աշխատակիցներն են Հովհ. Թումանյանը և Աթ. Խնկոյանը:

«Գաղափար», 1917, թիվ 116-3:

Հունվարի 13 - Տպագրվում է ՀԳԿԸ երեկոյթում Թումանյանի՝ սկսնակ գրողներին ուղղած խոսքի շարադրանքը (տե՛ս 1916, դեկտեմբերի 30):

«Հորիզոն», 1917, թիվ 8:

Հունվարի 14 - Մի խումբ սկսնակ գրողներ համեստ նվերով այցելում են բանաստեղծին՝ շնորհավորելու նրան անվանակոչության օրվա առթիվ:

Պահարեն (Հայկ Պետրոսյան) հիշում է. «1917 թվականի հունվարի 14-ն էր: Մի ցուրտ, ձյունատարափ երեկո, Հովհաննես Թումանյանի անվանակոչության օրը:

Երկու տասնյակից ավելի երիտասարդ գրողներ հավաքվել էինք մեր ընկերներից մեկի բնակարանը, որը գտնվում էր Բեհբուքյան No 60 շենքում, այն տան մեջ, ուր ապրում էր նաև անվանի վիպասան Շիրվանզադեն:

Գնել էինք ցուլի մի փոքրիկ սև արծան՝ բրոնզե աղջիկը վրան թիկնած, ոսկե ժապավենի վրա մակագրել. «Սիրելի Հովհաննես Թումանյանին մի խումբ սկսնակ գրողներից»:

Որովհետև բոլորս միասին չէինք կարող գնալ շնորհավորելու, հարցը հեշտությամբ լուծեցինք հետևյալ ձևով: Մեր խմբում ունեինք ընդամենը երեք կին գրող՝ բանաստեղծուհիներ Լեյլի, Արմենուհի Տիգրանյան և Վարսենիկ Աղասյան,* ուստի նրանց հանձնարարեցինք արծանը տանել և մատուցել Թումանյանին, որի բնակարանը գտնվում էր մեր հավաքատեղիին մոտիկ, իսկ մենք սպասում էինք:

Շատ չանցած՝ մեր պատգամավորների վերադարձի փոխարեն գալիս է Թումանյանի պատգամավորը՝ իր հետ բերելով մի սպառնական հրավեր:

- Եթե բոլորդ չգաք, նվերը ետ կուղարկեմ:

Ավելի քան քսան հոգի, իրար ետև թաքնվելով, ամոթխած ու անհամարձակ, մարմարե սանդուղքներով բարձրանում ենք Վոզնեսենսկայա փողոցի No 18 տան երրորդ հարկը: Դուռը բացվում է, և մենք, ցրտից ու ամոթից կարմրատակած, մտնում ենք Յովի. Թումանյանի լուսավոր դահլիճը: Աղմուկն ու իրարանցումը սաստկանում են մի պահ, ապա մեղմանում, դառնում զվարթագին:

Թումանյանն ինքն է մոտենում մեզ, յուրաքանչյուրիս թևից բռնած տեղավորում սեղանի շուրջը:

Պարում են: Թև թևի տված՝ քոչարի են թռչում Թումանյանը, Շիրվանզադեն, զորավար Անդրանիկը: Յետգիտես ընտելանում, բացվում ենք՝ մասնակցելով ընդհանուր խրախճանքին:

Խմում են մեր կենացը:

- Աճեցեք-բազմացարուքին կենացը,- առաջարկում է ժողովրդական հերոս Անդրանիկը:

Յոտնկայս խլրտում: Բաժակների զարկոց: Բարենաղթություններ:

Ապա Ստ. Լիսիցյանը խնդրում է մեզ՝ յուրաքանչյուրիս, արտասանել մի կտոր մեր գործերից: Ընդունվում է միաձայն: Արձակագիրները, նկատի ունենալով իրենց ժանրի երկարաշունչ բնույթը, ազատվում են այդ պարտականությունից՝ առաջնություն վաստակելու պատիվը թողնելով մեզ՝ բանաստեղծներին:

Յարթ ու հանգիստ անցավ ծրագրի առաջին մասը՝ չափավորներդաշնակ: Բայց երբ հերթը հասավ մեր մազախռիվ ընկերներից մեկին, նա այնպիսի երկար ոտանավոր արտասանեց, որ զորավար Անդրանիկը ձանձրության «պատերազմ հայտարարեց» մեզ:

– Մեզի ոտանավոր պետք չէ: Ձեր ոտանավորչի խերն անիծեմ: Գնացեք ֆրոնտ՝ գենք գործածելու:

Այս հարձակումն ավելի լուրջ ընթացք պիտի ստանար (քանի որ մեր «ոտանավորչի» ընկերը, ուշադրություն չդարձնելով, դեռ շարունակում էր իր արտասանությունը), եթե Յովի. Թումանյանը քաղցրությամբ ու կատակով չդառնար նրան:

– Պարոն, բավական է, հոգնեցիք: Շնորհակալ եմ: Դուք արդեն մի պոեմի չափ արտասանեցիք:

Բայց «պարոնը» չգիջեց իր մուսային՝ աղաղակելով.

– Ո՛չ, պ. Թումանյան, հանուն ձեր պատվի պիտի վերջացնեմ այս բանաստեղծությունը:

Այսպես էր Թումանյանը. սիրալիր, հյուրընկալ, բայց գիտեր նուրբ ակնարկներով խարազանել մարդկային թերությունները»:

*) Հանդիպման մասին Վարսենիկ Աղասյանը հիշում է. «Չեմ մոռանում այն երեկոն, երբ մենք՝ պատանի գրողներս, մեր ընծայով ներս մտանք Թումանյանի մոտ: Որպիսի՜ հիացմունքով ընդունեց նա մեզնից այդ չնչին նվերն ու ասաց.

– Ես ինձ երջանիկ եմ զգում, որ տեսնում եմ ձեզ էղբան համերաշխ, կարծես թե մի ընտանիք լինեք: Ձեր էդ սերտ կերպով աշխատելն ինձ շատ է ոգևորում. հիմա ես կարող եմ ասել, որ կան մարդիկ մեր սկսած գործը շարունակելու համար:

Մենք ժպտում դեմքերով շրջապատեցինք նրան: Թեյի սեղանի շուրջ մինչև ուշ գիշեր լսում էինք նրա սրտաբուխ խորհուրդները» (ԹԺՂ, 650):

ԹԺՂ, 673-674, 966:

Յունվարի 15 - Տպագրվում է Ավ. Գուլոյանի «Հայ գրականությունը 1916 թվին» հոդվածի շարունակությունը:*

Նկատելով, որ «ինքնուրույն գրականության համեմատ նվազ պետք է լիներ նաև թարգմանականը»՝ այնուամենայնիվ այդ բնագավառում ուշագորավ է համարում Ռ. Թադորի «Մահիկի»՝ այդ «մանկական հոգու գեղեցիկ արտահայտությունների»՝ Համլիկ Թումանյանի թարգմանությունը:

*) Սկիզբը՝ հունվարի 3:

«Արև», 1917, թիվ 9:

Յունվարի 15, Թիֆլիս - Երկտող Ստեփան Մալխասյանին.

«Սիրելի Ստեփան,

Էսօր ժամը 7-ին երեկոյան խնդրեմ ինձ մոտ գաս Вознесенская ул. No 18, լեզվական գրական մի կարևոր խնդրի համար:

Բարեկամդ՝ *Յովի. Թումանյան*»:

ԵԼԺ 10 , 261:

Յունվարի 15 - Գրում է «Երկու դարի արանքում...» քառյակը:

ԵԼԺ 2, 12:

Յունվարի 15 - Տպագրվում է Հ. Տեր-Միրաքյանի «Որբերի բանաստեղծությունը» հոդվածը:

Մասնավորապես գրում է. «Համաշխարհային գրականության մեջ չտեսնված բանաստեղծություններ էին, որոնց նվիրական տպավորության տակ մնացինք սրտի վարանոտ զգացմունքներով այն գրական երեկոյին (տե՛ս 1916, սեպտեմբերի 28), երբ պ. Կ. Միքայելյանը կարդաց իր մեղվաջան աշխատանքով հավաքած զարմանալի արգասիքները տարագիր երեխաների և իր պատկերավոր լեզվով վերարտադրեց նրանց պատմածները ահավոր օրերից... (տե՛ս 1915 դեկտեմբերի 6, 30):

Վերև ասացի, որ վարանոտ զգացմունքներով լսեցինք... Բայց ինչո՞ւ... Մի կողմից մենք հրճվում էինք, որ մեր երեխաները... հոգեբանական հնարավորություններ են ունեցել իրենց անմեղ թոթովանքով արտահայտելու համաշխարհային վշտի հուզումնալից բեկոր հայկական վիշտը. մյուս կողմից սոսկալի ճնշվում էին մեր սրտերն այն վայրկյաններին, երբ մենք մտածում էինք, թե որքան ահավոր են եղել այն սարսափները, որ լեզու են տվել մանուկներին: Այդ երեկոյին ես իմիջիպալոց ասեցի. «Երբ մարդիկ լռում են, քարերն են խոսում», և ահա այս անգամ Հայաստանի քարերի խոսքը լսելու դեռ պատեհություն չունեցած՝ մենք լսեցինք տառապանքի բովից մասամբ ազատված մանկական աշխարհի սրտաճնլիկ ճիչը, նրա իղձն ու փափագը: Իհարկե, այստեղ խոսքը բանաստեղծական լեզվով խոսելու մասին է: Ոգեշունչ խոսքեր ասացին նաև օտար բանաստեղծներ, ինչպես օրինակ՝ Բրյուսովն ու Նեմիրովիչ-Պանչենկոն պատեհ առիթներով. բայց ինչո՞ւ լռում են հայ բանաստեղծները, արդյոք զարմանալի չէ՞: Ինչո՞ւ օր. Հովհաննես Թումանյանը մույնպես լռել է, որ այնպես անձնվիրությամբ իր կյանքը վտանգի ենթարկելով իր դստեր հետ շտապեց «Վշտի հովիտը», հենց որ Վանից ահավոր փախուստի լուրն առավ: Պարզ էր, և այն երեկո նա ակնարկեց, որ տակավին կարողություն չունի իր տեսած ու լսած սարսափները գրչով արտահայտելու: Շատ են նրանք ու շշմեցուցիչ, որ հայ բանաստեղծը հիմա արտահայտելու ուժ զգար իր մեջ»:

«Համբավաբեր», 1917, թիվ 6:

Հունվարի 16 - Գրում է «Մինչև էսօր իմ օրում...» քառյակը:*

*) Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ջնջված:

ԵԼԺ 2, 67, 532:

Հունվարի 16 - Գրում է «Առատ կըլնի կինը արդ...» քառյակը:*

*) Պահպանվել է մեկ ինքնագիր՝ ջնջված:

ԵԼԺ 2, 68, 532:

Չունվարի 20 - Նոր Նախիջևանի հայկական կոմիտեի գրական-գեղարվեստական սեկցիայի նախագահ Չակոբ Խաչատրյանի պաշտոնական նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

«Ռոստով-Նախիջևանի հայկական կոմիտեի լիազորությամբ» խնդրում է բանաստեղծին տեղի հասարակության համար դասախոսություն կարդալ՝ «նվիրված հայկական կյանքին (բառի ամենալայն իմաստով)»:

Համաձայնության դեպքում՝ խնդրում է հայտնել իր պայմանները, դասախոսության թեման և ժամանակը:

ԳԱԹ ԹՖ, 1385 (348 լր.):

Չունվարի 20 - Գրում է «Գրադարանս» («Բազմած են էսպես շուրջս ամեն օր...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 290:

Չունվարի 20 - Նվարդ Թումանյանի նամակը Մոսկվա՝ Կարեն Միքայելյանին.

«Չարգելի պ. Կարեն!»

Վաղուց պիտի Ձեզ գրեի՝ տեղեկություններ տալու ինձ վրա դրված պարտականության մասին, բայց, անկեղծ եմ ասում, ո՛չ հնար կար, ո՛չ էլ հալ: Գուցե չհավատաք, եթե ասեմ պատճառը. առանց չափազանցնելու եմ ասում՝ ազատ ժամ չեմ ունեցել մեր ընտանեկան գրական երեկույթներից: Ամբողջ օրը զնացող-եկող, իսկ երեկոները հաճախ էն տեսակ զրույցներ են լինում, որ ականայից բռնվում եմ. և՛ հետաքրքիր են, և՛ հոգնեցնող: Հենց նոր զնացին Նիկոլն ու Դերենիկը: Լավ երեկո էր. հայրիկը կարդաց Բրյուսովի ժողովածուի մասին գրված հոդվածը, հետո էլ պարսկ. բանաստեղծից, վերջն էլ ընթրիք ու զրույց. դե հիմա արի ու թող: Գիշերվա ժ. 1-ն է, հոգնած եմ, բայց ուզում եմ օգտվել հարմար առիթից, թե չէ էս երկու օրը Բրյուսովները կգան, և էլ հնար չի լինի գրելու: Հիմա լսեք - որբերին տարա լուսանկարվելու, հաջող դուրս եկավ միայն մեկը, որը և առաջարկում եմ. մյուսներին երկրորդ անգամ այսօր նկարեցին, պատրաստ կլինի փետրվարի սկզբին, և էն ժամանակ կուղարկեն: Բայց ինչ խաթաբալա գործ էր, ժամեր էր, որ սպասել եմ. չլինի՞ վրեժ առնելու դիտավորությամբ էդ պարտականությունը ինձ վրա

դրիք: Ինչևէ: Առայժմ բարի գիշեր, զի աչքերս կըմքոստանամ: Բարևներ հայրիկից և ծանոթներից:

Հարգանքներով՝ Նվարդ Թումանյան»:

ԳԱԹ ԹՖ, 327:

Հունվարի 22 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Վարչության անդամներից ներկա են՝ Նիկ. Աղբալյան, Ան. Աբովյան, Դեր. Դեմիրճյան, անդամ քարտուղար Գյուտ ա. ք. Աղանյան:

Նախագահը տեղեկացնում է՝

1. Վ. Բրյուսովը գալու է Թիֆլիս: Կարդալու է երեք դասախոսություն՝ Վերհամնի, Պուշկինի և... ուսուցիչների մասին: Յուրաքանչյուր դասախոսության համար պետք է վճարել 500 ռուբլի: Որոշում են դասախոսություններն անցկացնել արտիստական ընկերության դահլիճում:

2. Վարչության ականջին հասնում են դժգոհության ծայներ, թե մեր երեկույթները շատ ուշ են վերջանում: Որոշում են զգուշացնել դասախոսներին, որ իրենց դասախոսություններն ավարտեն գիշերվա ժամը 11-ից ոչ ուշ:

Արձանագրությունը նախագահի հետ ստորագրել են բոլոր ներկաները:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/1:

Հունվարի 22 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Վարչության անդամներից ներկա են՝ Նիկ. Աղբալյան, Դեր. Դեմիրճյան, Գյուտ ք. Աղանյան:

Քննվում են «Դիվան հայոց գրականության» ժողովածուի տպագրության հետ կապված հարցեր:

Որոշում են՝

1. Էջի չափսերի և շարվածքի համար հիմք ընդունել «Вопросы теории и искусства» գիրքը:

2. Տառատեսակը No 10:

3. Վերնագիրը՝ «Դիվան հայոց գրականության»:

4. Քանակը՝ 1020 օրինակ:

5. Ուղղագրությունը և կետադրությունը, նույնիսկ սխալները պահել հեղինակներին՝ անփոփոխ:

6. Սկզբում դնել հառաջաբան՝ նամակների աղբյուրների և ձեռնարկության մասին:

7. Յուրաքանչյուր հատված առանձնացնել արաբական թվանիշերով:

8. Նամակների սկզբում դնել նամակագրի և հասցեատիրոջ անունները:

9. Գրքի մեջ դնել հեղինակների նկարները առանձին թերթի վրա, իսկ մի-մի երես ֆաքսիմիլներ՝ տեքստի մեջ:

10. Ամբողջ ընտրությունը հանձնել նախագահին:

Առաջարկ է լինում վարձատրությունը նշանակել նյութերի հավաքման և պատրաստման համար: Այդ աշխատանքը միայնակ կատարած Գյուտ Աղանյանը հրաժարվում է վարձատրությունից:

Արձանագրությունն ստորագրել են Թումանյանը և Դեմիրճյանը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/2:

Հունվարի 23 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ հորը՝ Իգորիից.

«Հայրիկ ջան!

Հեռագիրս ստացած կլինեք: Անհանգստանալ թեև էնքան էլ հարկավոր չի, բայց եթե տեղեկանաս Գավրիլովից* իմ «կարգը», շատ լավ կլինի. շատ է կարևոր, և որքան շուտ՝ էնքան լավ:

Հեռագրել էի նաև Գիգային և Եվանգուլովին,** բայց ցայժմ պատասխան չկա:

Բոլոսովը եթե երևան շուտ եկավ, կգնամ լսելու:

Բայց հույս չունենմ:

Սքանչելի գարնանային եղանակներ են: Վանից մորից լավ լուրեր չեն գալիս:

Բժ. Տեր-Հովհաննիսյանը բարևում է:

Գուցե մոտ օրերս գնամ Վան:

Ջերմ համբույրներով՝ քո Արտիկ»:

*) Վասիլի Գավրիլով, Լոռու և Բորչալուի գավառապետ:

**) Եվանգուլով Լ. (Եվանգուլյան Լևոն), գաղթականների տեղավորման գծով լիազոր, Հայաստանի Առաջին հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում:

ԹԶ ԱՐՏ, 204:

Հունվարի 24 - Գրում է «Ափսո՛ւ, որ չես տեսնում բընավ...» բանաստեղծությունը։*

*) Սևագիր ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Անուշի ավրմուն։ Այս բանաստեղծությունը եԼԺ 2-ում (էջ 69, 532) տպագրված է իբրև քառյակ և ծանուցվում է, թե ինքնագիրը չի պահպանվել։

ԵԼԺ 1, 418:

Հունվարի 24, Թիֆլիս - «Վան-Տոսպ» շաբաթաթերթի խմբագրության պաշտոնական գրությունը Թումանյանին.

«Մեծարգո պ. Հովհաննես Թումանյան,

խմբագրությունս, աչքի առաջ ունենալով հասարակական գործունեության մեջ Ձեր երկարամյա մասնակցությունն և փորձառությունը, Ձեզ ուղարկում է «Վան-Տոսպի» No No 7 և 8, ուր շոշափված է նոր քաղաքական կուսակցություն հիմնադրելու հարցը, և խնդրում է հայտնել այդ խնդրի մասին Ձեր հայեցակետը, «Վան-Տոսպի» մեջ հրատարակելու համար։

Այս նպատակով դիմել ենք զանազան անձնավորությունների, որոնցից ստացած պատասխանները պիտի հրատարակենք հետզհետե։

Հարգանքներով՝ «Վան-Տոսպի» խմբագրություն»։

ԳԱԹ ԹՖ, 2559 (160 III g):

Հունվարի 25 - Կարեն Միքայելյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից։

Տեղեկացնում է, որ Բաքվից հեռանալիս Մխիթար Տեր-Անդրեասյանին խնդրել է բանաստեղծի անունով ուղարկել հոգուտ «որդեգիրների ֆոնդի» ստացված գումարը։ Խնդրում է «Հորիզոնում» տպագրել տալ ստացված գումարների հաշիվը, նաև գրողների ընկերության գործունեիքն ամփոփելով՝ հոգուտ հիշյալ ֆոնդի որևէ բան ձեռնարկելու համար։

Իր և տիկ. Ջապելի* գրքերի տպագրության վերաբերյալ որևէ տեղեկություն չունի։

Բանաստեղծի հասցեով «Поэзия Армения» ժողովածուից երկու օրինակ է ուղարկել՝ Դեմիրճյանին և Լեյլիին հանձնելու համար։ Հայտնում է Ժողովածուի երկրորդ տպագրության մտադրության մասին, և ապա. «Խնդրում են Ձեր գրվածքների, ինչպես նաև մյուսների թարգմանությունների նկատմամբ Ձեր բոլոր նկատողությունները

գրի անցկացնեք, որպեսզի հնարավորություն ունենանք երկրորդ տպագրության ժամանակ ի նկատի ունենալ»:

Մանրամասն տեղեկություններ է ուզում հիմնադրվելիք կուլտուրական ընկերության** մասին:

*) Ձապել եսայանն է:

**) Խոսքը հավանաբար Հայկազյան ընկերության մասին է:

ԳԱԹ ԹՖ, 1768 (915):

Հունվարի 25 - Արտավազդ Թումանյանի նամակը Թիֆլիս՝ հորը՝ Իգդիրից.

«Հայրիկ ջան!

Ուղարկում եմ Մուշեղի ձիուց ծնված* երեք հարյուր ռուբլին, 100 էլ ուղարկել եմ Մուշեղին: Մի երկու շաբաթից նորից ուղարկեք Մուշեղին, մինչև «մարդ» դառնալը:

Համբույրներով՝ քո Արտիկ:

*) Խոսքը ինչ-որ ձիու վաճառքից ստացված գումարի մասին է: Արտավազդը հունվարի 4-ին մորն ուղղված նամակում գրում է. «Ձին մոտ ժամանակներս կծախվի, և Մուշեղին ավելի մեծ գումար կուղարկեն» (ԹԶ ԱՐՏ, 202):

ԹԶ ԱՐՏ, 205:

Հունվարի 25 - Թամար Թումանյանի նամակը Իգդիր՝ եղբորը՝ Արտավազդին՝ Թիֆլիսից:

Գրում է. «Էնպես լավ անց կացրինք հայրիկի տոնը,* վաթսուն-հինգը հոգի եկան, աթոռներ պակսեց, գնացինք, Աշխենանց տանից բերեցինք: Անդրանիկը հարբած եկել էր, էնքան ուշունց էր տալի որ»:

*) Թումանյանի անվանակոչության օրը (տե՛ս հունվարի 14):

ԹԶ ԱՐՏ, 205

Հունվարի 25 - «Գրական իրիկուններ» ընդհանուր խորագրով, Օճնիկ ստորագրությամբ հաղորդում 1917 թ. հունվարին 18-ին Երևանում Վ. Տերյանի՝ «Հայոց նոր շրջանի բանաստեղծության ոճի ու լեզվի զարգացման մասին» թեմայով դասախոսության մասին:

Ներկայացվում է դասախոսության համառոտ բովանդակությունը: Մասնավորապես. «Ապա դասախոսը նկատողության ու գնահատումի առավ Աբովյանի, Աղայանի, Պատկանյանի, Շահազիզի և ապա նորագույններու՝ Հովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի և Դեմիրճյանի ոճն ու լեզուն»:

«Աշխատանք», Երևան, 1917, թիվ 75:

Հունվարի 26 - Ա. Միրինով ստորագրությամբ նամակ թումանյանին՝ Թիֆլիսից:

Հայտնում է, որ Վ. Բրյուսովի դասախոսությունների (տե՛ս հունվարի 22) համար թատերական ընկերության դահլիճը կարող են տրամադրել փետրվարի 4-6 կամ 5-7 օրերին: Համաձայնության մասին խնդրում է հայտնել մինչև հունվարի 27-ը: Վճարը՝ ըստ պայմանավորվածության:

ԳԱԹ ԹՖ, 1760 (906):

Հունվարի 26 - Թումանյանին այցելում է Եղիշե Բաղդասարյանը և ձայնագրիչով վերցնում նրա մի ելույթը:

Նվարդը եղբորը՝ Արտավազդին ուղղված հունվարի 27-ի նամակում գրում է. «Երեկ մեզ մոտ էր Եղիշե Բաղդասարյանը, հայրիկի մի ճառը ֆոնոգրաֆով վերցրեց, ես էլ մի երգ երգեցի փորձի համար, մի պլաստիկա էլ նա գնաց, հաջող էր կեսը»:

ԹԶ ԱՐՏ, 206:

Հունվարի 27 - Ջապել Եսայանի նամակը Թումանյանին:

Խնդրում է գրողների ընկերության միջոցներից նյութական օգնություն Լևոն Թյությունջյանին:

ԳԱԹ ԹՖ, 617: ԹԹ 2226:

Հունվարի 27 - Սկսում է տպագրվել* Լեոյի ծավալուն հոդվածը «Поэзия Арменуса» ժողովածուի մասին:

Ժողովածուն համարում է «շատ խոշոր գրական երևույթ»՝ կարևորելով հատկապես մի քանի նշանավոր գործերի, այդ թվում Թումանյանի «Սասունցի Դավիթ» և «Անուշ» պոեմների թարգմանությունը:

*) Շարունակվում է թիվ 24, 26 –ում:

«Հորիզոն», 1917, թիվ 19:

Հունվարի 28 - Գրում է «ЭКСПРОМТ» («Իմ Անուշը, իմ ողջը թանկ...») բանաստեղծությունը:*

*) Սևագիր ինքնագիրը՝ հեղինակային ուղղումներով, բանաստեղծի դստեր՝ Անուշի պլեոմուն:

ԵԼԺ 1, 419, 672:

Յուզվարի 31 - Գրում է «Արփենիկին» («Հիշո՞ւմ ես Բորժոմն, այծյամնե՛ր, ժայռե՛ր...») բանաստեղծությունը:*

*) Նվիրված է բանաստեղծի դստերը՝ Արփիկին:

ԵԼԺ 1, 291:

Յուզվարի 31 - Թարգմանում է Ռոբերտ Բյորնսի «O, Nert thou in the cauld blast» (Օ՛, եթե դու լինեիր սառը մորիկի մեջ») երգի երկրորդ տունը՝ «Թե լինեի անապատում...» («Թե լինեի անապատում մեռած հավետ...»):

ԵԼԺ 2, 281, 606:

Յուզվարի 31 - Տպագրվում է Ա. Ջամալյանի վերլուծական հոդվածը՝ նվիրված «Գործ» ամսագրի 1917 թ. առաջին համարին:

Թումանյանի «Մոծակն ու Մրջյունը» առակի մասին գրում է. «Այդ առակն ունի մի քանի վարիանտներ. մեր բանաստեղծն օգտվել է մի նոր վարիանտից, որ նրան պատմել է Անդրանիկը: «Մոծակն ու Մրջյունը, ըստ ամենայնի արդարացնելով Յովհ. Թումանյանի խոսքի պատկերավորությունն ու աշխույժը, կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: Եվ եթե նա փոքր-ինչ ավելի կարճ լիներ, մայրենի լեզվի դասագրքերի մեջ լավագույն առակների շարքը կարող էր դասվել»:

«Յորիզոն», 1917, թիվ 22:

Յուզվար - Տպագրում է («Գործ», 1917, թիվ 1) «Մոծակն ու Մրջյունը» («Գիժ Մոծակի պարի ժամին...») բալլադը:*

*) Տպագրվել է հեղինակային ծանոթագրությամբ. «Ես հանրածանոթ առակը, որ եզոպոսն ունի «Ճպուռն ու Մրջյունը» անունով, Փեդրոսը՝ «Ճանճն ու մրջյունը», Կռիլովը՝ «Смрекоза и Мыравей» (Ջրփիթեռն ու մրջյունը), իսկ մեր Վարդանը (միջնադարյան առակների մեջ), «Ժիժիկ ու մեղուք» և «Մրջինն և կամ ժիժին ու Մեղուն», ահա էս առակի նոր վարիանտը - «Մոծակն ու Մրջյունը» - ինձ պատմեց մեր Անդրանիկը, որ լսել է Տաճկաստան»: Վահան Թոթովենցը հիշում է. «Իմ ներկայությամբ Անդրանիկը պատմեց Թումանյանին մրջյունի ու ճպուռի առակի սասունցիական վարիանտը: Թումանյանը հետագայում գրի առավ այդ վարիանտը և հրատարակեց այն Բաքվի «Գործ» ամսագրում: Որովհետև ես լսել էի, թե Անդրանիկը ինչ էր պատմել, շատ հետաքրքրական էր իմանալ, թե ինչպես է մշակել Թումանյանը:

Կարդացի նրա մշակածը և այն ժամանակ խորապես հասկացա, թե ինչ էր ուզում ասել Թումանյանը, երբ պնդում էր՝ ժողովրդական հեքիաթը, երգը, առակը կամ որևէ ասացվածք չպետք է փչացնել: Նա մեղադրում էր շատ շատերին, որ ժողովրդական հեքիաթ-

ները մշակելիս փչացրել են: «Գործ» ամսագրում տպված այս առա-
կը գրեթե Անդրանիկի պատմածն էր, բայց մեծ վարպետի կնիքով:
Նա համենել էր այդ պարզ պատմությունը մի քանի գունավոր բառե-
րով, մի վարպետություն, որ միայն հատուկ էր թունանյանի նման
մեծ բանաստեղծին» (ԹԺՅ, 143):

ԵԼԺ 2, 176-179:

<Յունվար> - Վահան Տերյանի հեռագիրը Թիֆլիս՝ Թունանյա-
նին՝ Պետերբուրգից:

Ներկայացնում է իր առողջական ու նյութական ծանր վիճակը:
Խնդրում է օգնություն:

ԳԱԹ ԹՖ, 2390 (1092 ա):

Փետրվարի 1 - Վալերի Բրյուսովի նամակը Թիֆլիս՝ Թունան-
յանին՝ Մոսկվայից:

Գրում է Բաքվի և Մոսկվայի դասախոսությունների մասին՝ իր
հարգանքի ու մեծարանքի խոսքերն ուղղելով բանաստեղծին: Ցավ
է հայտնում, որ ստիպված է մերժել Թիֆլիս գալու հրավերը:

ԳԱԹ ԹՖ, 1060 (581):

Փետրվարի 1 - Արշակ Սինանյան ստորագրությամբ նամակ
Թիֆլիս՝ Թունանյանին՝ Տրապիզոնից.

«Մեծարգո պ. Թունանյան,

Մի պարոն՝ Ռուբենովիչ ազգանունով, ժողովում է մշանավոր
բանաստեղծների ձեռքով գրված մի-մի բանաստեղծություն՝ առան-
ձին գրքով հրատարակելու համար: Նրա խնդրանքով դիմում եմ Ձեզ
և խնդրում, եթե հարմար և հնարավոր կը գտնեք, արտագրեցեք Ձեր
ձեռքով Ձեր բանաստեղծություններից մեկն ու մեկը, ուղարկեցեք
ներքև տրված հասցեով՝ պ. Ռուբենովիչին հանձնելու համար:

Խ. Խ. Արշակ Սինանյան:

Հասցեն՝ Трапезунд, Союз Городов, Аршаку Синаняну»:

ԳԱԹ ԹՖ, 1983 (441 լր.):

Փետրվարի 3 - Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում
տեղի է ունենում ՀԳԿԸ 18-րդ գրական երեկույթը:

«Ռազմի դաշտում. ապրումներ և մտքեր» թեմայով բանախո-
սում է Վ. Վալադյանը: Խոսում է մարտի դաշտում զինվորի հոգեբա-

նության, բնագոյների ու բանականության, անձնական զգացմունքների և սրանց հետ կապված այլ հարցերի մասին:

Բանախոսությունից հետո մտքերի փոխանակությանը մասնակցում է նաև թոււմանյանը:

«Հորիզոն», 1917, թիվ 28:

Փետրվարի 5 - Գրում է «Արփենիկի ալբոմից» («Դու չգիտե՞ս...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 292:

Փետրվարի 5 - Հայտարարություն, որ սկսվել է «Հասկեր» մանկական ամսագրի 1917 թ. բաժանորդագրությունը:

Տեղեկացվում է, որ հանդեսի մշտական աշխատակիցներն են Հովհ. Թոււմանյանը և Աթ. Խնկոյանը:

«Արև», 1917, թիվ 27:

Փետրվարի 7 - Տպագրում է («Հորիզոն», 1917, թիվ 28) ««Поэзия Армения» գրքի երկրորդ հրատարակության առիթով» հոդվածը:

Տեղեկանալով, որ պատրաստվում է գրքի երկրորդ հրատարակություն՝ բանաստեղծը հատկապես Սայաթ-Նովայի երգերի թարգմանության մեջ նկատում է բազմաթիվ սխալներ, որոնց մի զգալի մասը, ըստ նրա, գալիս են ոչ ճիշտ տողացի թարգմանությունից: Մանրամասն վերլուծելով այդ սխալները, առաջարկելով իր ճշգրտումները՝ ամփոփում է ասելիքը. «Եվ վերջապես, իմ նկատողություններից շատերը մեզանում վիճելի են տակավին»:

Եթե ես ասում եմ՝ էսինչ տեղը բար պետք է լինի, ոչ թե բառ, էդ հո չի մշանակիլ, թե հայոց բանասերներն ու գրողներն իսկույն ևեթ ասելու են՝ աչքներիս վրա, էդպես էլ կընդունենք: Դրան ապացույց հենց էն հանգամանքը, որ էս նկատողությունների մի մասը արել եմ դեռ գիրքը տպագրելուց առաջ, մի երկուսն ընդունվել են և գրքի մեջ ուղղվել, մյուսները, ինչպես որ կային, էնպես էլ մնացել են:

Այժմ իմ արած նկատողությունների միտքը սա է: Ափաշկարա տեսնելով էն ահագին տպավորությունը, որ արավ Հայաստանի բանաստեղծության գիրքը - «Поэзия Армения», և ի նկատի ունենալով, որ շուտով երկրորդ տպագրություն է լինելու,* պետք է հմուտ մարդկանց ձեռքով սրբագրել և գիրքն ազատել գոնե էն տեսակ

սխալներից, որոնք միանգամայն փոխում են բանաստեղծության իմաստը և նսենացնում են էս հոյակապ գրքի արժեքը»:

*) Այդ երկրորդ տպագրությունը չի եղել:

ԵԼԺ 7, 304-313:

Փետրվարի 9 - Գրում է «Ծով է իմ վիշտն, անափ ու խոր...» քառյակը:

ԵԼԺ 2, 13:

Փետրվարի 10 - Վահան Միրաքյանի նամակը Թիֆլիս՝ Թուսմանյանին՝ Շուկավերից:

Գրում է, որ պատահել է Ռուսաստանին պատիվ չբերող մի ցնցող դեպք: Բորչալուի գավառի կալվածատեր Սումբատովը նախկին գաղտնի գործակալների և ժամդարմերիայի աջ թևը կազմող ոստիկանական մի քանի ներկայացուցիչների հետ դուրս է եկել՝ գավառի գյուղերի անունից անօրինական ընտրություններ անելու: Գյուղացիները ընկել են թյուրիմացության մեջ՝ սխալմամբ իշխան Սումբատովին և նրա գործակիցներին ընդունելով կոմիսարների տեղ, որոնց անհամբեր սպասելիս են եղել Թիֆլիսից:

Հույս ունի, որ զոնե բանաստեղծի օգնությամբ Թիֆլիսից ժամանակավոր կառավարիչներ կուղարկեն. «Այդ մասին լավ կլիներ, խորհրդակցելով բանվորական կուսակցության հետ, ընդհանուր համաձայնության գալիք»:

ԳԱԹ ԹՖ, 1753 (401 լր.):

Փետրվարի 10 - Տեղի է ունենում ՀԳԿԸ հերթական՝ 19-րդ գրական երեկույթը:

«Պոեզիան և լեզուն որպես ստեղծագործություն» թեմայով բանախոսում է Ռ. Աբրահամյանը:

«Հորիզոն», 1917, թիվ 33: «Մշակ», 1917, թիվ 33:

Փետրվարի 11 - Տպագրվում է «Հրատապ սփոփանք. խոսքեր՝ Հ. Թումանյանի, հանգեր՝ Սկսնակի» վերնագրով անստորագիր երգիծական ոտանավոր՝ իբրև արձագանք Հ. Սուրխաթյանի «Ռուսահայ նորագույն բանաստեղծությունը» բանախոսության և Թումանյանի՝ սկսնակներին ուղղված խոսքի (տե՛ս 1916, դեկտեմբերի 30).

Քննադատն ասաց.- մեկդ խրոնիկյոր,

Մեկդ քաղքենու ձգտումի երգիչ,

Մեկդ՝ Տերյանի մոնթն է գլխիկոր,
 Կամ Յարճանյանին նման է շատ քիչ!
 -Է՛, ասաց՝-ասաց! Ի՞նչ անենք, տղեք,
 Ինչո՞ւ եք տրտմել,- սրտապի՛նդ եղեք!
 Ես ի՞նչ եմ կանչել – որ նա ձեզ գովի,
 Այլ,- որ քըրքըրի, խուզի ու բովի,
 Դեռ շա՛տ կունենանք էսպես հավաքույթ,
 Դեռ ձեր գլխին կա երկու երեկույթ...
 Էնտե՛ղ դուք պիտի դուրս գաք ասպարեզ,
 Եվ ձեր շնորհքով կանգնեք պարզերես:
 Ես շա՛տ եմ խնդրում, որ չը դադարեք,
 Թղթին չափսոսե՛ք,- գրե՛ք, մի՛շտ գրեք!
 Ամեն քսանյոթ ոտանավորից-
 Մեկը լա՛վ դուրս գա՛ մե՛ծ բան է նորից:
 Հետո՛ կորոշվին փոքրեր ու մեծեր-
 Ժամանակն է լոկ քննադատը ձեր:
 Քննադատը ձեզ խանձեց իր բովում,
 Դե՛ լավ, ի՞նչ անենք, որ ձեզ չե՛մ գովում...
 Ես ասում եմ լոկ սրտապի՛նդ եղեք,
 Տղամա՛րդ կացեք, մի՛ տրտմեք, տղե՛ք!!

«Հորիզոն», 1917, թիվ 31:

Փետրվարի <11> - «Русские Ведомости», «Русское Слово»,
 «Утро России», «Киевская Мысль», «Приазовский Край» թերթերի
 հարցաթերթիկ-նամակը թումանյանին.

«М<илостивыи> Г<осударь>»,

В интересах всестороннего освещения в русской прессе
 национальных вопросов на Кавказе, имеем честь обратиться
 Вам, как одному из Кавказских общественно-национальных дея-
 телей, с просьбой не отказать в любезности сообщить нам
 свое мнение по следующим вопросам:

1) Что Вы считаете причиной национальных конфликтов на Кавказе?

2) При каких условиях местных и обще-российских эти конфликты могли бы быть разрешены?

Для полноты освещения вопроса формою и размерам Ва-
 шего любезного сообщения просим не стесняться.

С совершенным уважением
Пете Потемкин (П. П. П.)
Константин Суховых (К. Народин)
Владимир Швейцер (Пессимист)
Адрес для ответа:
Грибоедовская, 25, К. А. Суховыху».

ՊԱԹ ԹՖ, 2560 (184 III ց.):

Փետրվարի 14 - Տպագրում է («Հորիզոն» 1917, թիվ 32)
«Գործի ենք անցնում» հոդվածը:

Խոսքն այն մասին է, թե ինքներս մեզ ճանաչելու, մեր գրականությանը պաշտպան կանգնելու մասին ընդհանուր դատողություններից արդեն անցնում ենք գործնական քայլերի: Իբրև ապացույց բերում է հայաբնակ շատ վայրերում գրասերների ընկերությունների հիմնումը: Անհրաժեշտ է համարում ուղիղ ընթացք տալ այդ «լուսավոր ամբիոնների» գործունեությանը՝ «ճանաչելու մեզ, մեր շրջապատն ու հեռուն...»: Օրինակ՝ այդ ընկերությունները կարող են երեկույթներ կազմակերպել՝ Աբովյանի արձանի, «հայ գրականության պաշտպանության» համար դրամ հայթայթելու: Եվ եզրակացությունը. «Եվ սրա մեջ ինչքան նյութականը արժեք կունենա, նյութականից շատ ավելի բարոյականը կունենա նշանակություն և մեծ ազդեցություն կանի մեր գրականության ընդհանուր բնավորության վրա»: ԵԼԺ 7, 314-315:

Փետրվարի 14 - Հաղորդագրություն մամուլում:

Նոր Նախիջևանի տեղական հայկական կոմիտեին կից կազմակերպվել է առանձին գրական-գեղարվեստական հանձնաժողով, որի նպատակն է «զարկ տալ տեղիս հայության ազգային ինքնագիտակցության, բարձրացնել գաղութիս որոշ չափով լքյալ տրամադրությունը և միաժամանակ պրոպագանդա մղել ռուսական շրջաններում հոգուտ մեր դատի...»:

Տեղեկացվում է, որ դասախոսություններ կազմակերպելու համար հանձնաժողովն արդեն բանակցություններ է սկսել Միլյուկովի, Մառի, Բրյուսովի, Մ. Շահինյանի, Թումանյանի (տես հունվարի 20), Լեոյի և «ուրիշ խոշոր ուժերի հետ»:

«Հորիզոն», 1917, թիվ 32, «Արև», 1917, թիվ 32:

Փետրվարի 14 - Հաղորդագրություն մամուլում 1917 թ. հունվարի 18-ին երևանում Վ. Տերյանի՝ «Հայոց նոր շրջանի բանաստեղծության ոճի ու լեզվի զարգացման մասին» թեմայով զեկուցման մասին:

Տեղեկացվում է. «Բանաստեղծ դասախոսը մատնանշեց ամենն առաջ հայ աշխարհիկ լեզվի նախնական շրջաններու մասին, գտնելով, որ «Հյուսիսափայլեն» ու «Վերք Հայաստանեն» առաջ 30-ական թվականներուն գործածելի եղած է աշխարհաբար լեզուն: Սակայն այնուամենայնիվ, հոգեբանական և իրավական հիմքերը ի նկատի ունենալով, ինքն ալ իրավացի գտավ, որ հայ աշխարհիկ լեզվի իրավական հիմնադիրները դարձյալ նույն «Հյուսիսափայլեն» ու «Վերք Հայաստանին» եղած են: Աբովյան, Նալբանդյանն ու Նազարյանը եղան հայ մտքի ու լեզվի մշակման ռաիվիրաներ ռուսահայ գրականության հիմնավորումի շրջանին: Բանաստեղծ Տերյանը վերլուծության ենթարկեց այնուհետև գրականության վերածնության շրջանի գրողներու հոգեկան ապրումները, ընդհանուր մտայնությունը, գրաբարի ու աշխարհաբարի պայքարը, որու ընթացքին գրաբար լեզվին դեմ ամենախիստ պայքար ստեղծողները դարձյալ գտան հաշտության եզրեր՝ օգտվելով գրաբարի ճոխ ու բազմազան գանձերեն, միաժամանակ հեռու վանել զայն գործածական կյանքեն, ձգտելով աշխարհիկ լեզուն տոհմիկ ու ռամիկ զավառաբարբառը դարձնել մշակված, գրական ու հասկանալի լեզու: Դասախոսը այնուհետև ներկայացուց ու համեմատության առավ Աբովյանի ու Աղայանի, Գամառ-Քաթիպայի ու Շահազիզի, Հովհաննիսյանի և Թումանյանի, Իսահակյանի և Դեմիրճյանի ոճն ու լեզուն՝ իր դասախոսությունը դարձունելով համարյա գրողներու ոճի ու լեզվի համեմատություններու շարք մը հեռու մնալով մասնագիտական ընդհանրացումներե: Ձեկույցեն վերջ բուռն ծափերու մեջ կարդաց իր սեփական քերթվածներեն քանիները: Բանաստեղծ Տերյանը լայն հայացքներով ու վառ երազներով առլցուն գծեց հայ բանաստեղծության տեղը ընդհանուր գրականության մեջ՝ գտնելով, որ հայ պոեզիան պակաս արդյունքներ չէ տված ու չպիտի ալ տա»:

«Հորիզոն», 1917, թիվ 32:

Փետրվարի 16 - Ողջույնի խոսք է ասում հայ արվեստագետների առաջին պատկերահանդեսի առթիվ կազմակերպված բանկե-

տին՝ շեշտելով արվեստագետների նորակազմ ընկերության կարևորությունը և հետագա հաջողություններ մաղթելով նրան:

«Հորիզոն», 1917, թիվ 33:

Փետրվարի 16 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության հերթական նիստը:

Վարչության անդամներից ներկա են՝ Նիկ. Աղբալյան, Ան. Աբովյան, Ար. Հարությունյան, անդամ քարտուղար Գյուտ ա. ք. Աղանյան:

I. Քննվում է ընկերության տարեկան ընդհանուր ժողով գումարելու հարցը:

Որոշում են ժողովը նշանակել կիրակի՝ մարտի 5-ին, քաղաքային վարչության դահլիճում՝ այդ մասին հայտարարելով մամուլում:

Օրակարգում լինելու են՝

1. Նոր անդամների ընտրություն:

2. Հաշվետվություն:

3. Դասախոսություններ:

4. Հրատարակություններ:

5. Գրականության դասընթացներ:

6. Արևմտահայ գրողների և մտավորական գործիչների նպաստի խնդիրը:

7. Շնորհալի որբերի որդեգրում:

8. Պաշտոնատար անձանց ընտրություն:

II. Նախագահողը տեղեկացնում է՝ որբերի համար ստացվել են նվիրատվություններ՝ Կարեն Միքայելյանից՝ 500 ռուբլի, ապա՝ 298 ռ. 15 կոպ., Հարությունյանից՝ 25 ռ. և վարչության կազմակերպած երեկոյթից՝ 222 ռ. 40 կոպ.:

Որոշում են մամուլով շնորհակալություն հայտնել նվիրատուներին:

III. Նախագահողը տեղեկացնում է՝ Բյուլետենը հետաքրքրվում է, թե երբ նպատակահարմար կլինի իր այցելությունը Թիֆլիս:

Որոշում են խնդրել նրան, որ այցելությունը լինի Ջատկից հետո:

IV. Աղանյանը տեղեկացնում է, որ երկրորդ սրբագրությունը* ինքն առաջարկել է Մանուկ Աբեղյանին, որ համաձայնել է, սակայն 16 երեսի համար պահանջում է 10 ռ. վարձատրություն:

Որոշում են ընդունել Արեղյանի առաջարկը:

Արձանագրությունը թումանյանի հետ ստորագրել են Ա. Աբովյանը և Գ. Աղանյանը:

*) Խոսքը «Դիվան հայոց գրականության» հատորի (տե՛ս հունվարի 22) մասին է:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/3:

Փետրվարի 17 - Մամուլը տեղեկացնում է.

«Մեծ պասի առաջին շաբաթին հանդեսները արգելված լինելու պատճառով այսօր հայ գրողների ընկերության հերթական գրական երեկույթը չի կայանա»:

«Հորիզոն», 1917, թիվ 34:

Փետրվարի 17 - Միքայել Միքայելյան ստորագրությամբ մամակ-դիմում* ՀԳԿԸ վարչությանը՝ Թիֆլիսից.

«Առաջարկելով Մեծարգո վարչությանը անդամագրության համար հինգ ռուբլի (5), խնդրում եմ ինձ գրել անդամ Ձեր ընկերությանը:

Ես մասնակցել եմ հայ պարբերական մամուլին սկսած 1903 թվից, «Մշակ», «Тифлисскому листку», «Ընկեր», «Հորիզոն» և ուրիշ թերթերի մեջ թե հասարակական կյանքի վերաբերյալ և թե գեղարվեստի վերաբերյալ հոդվածներով»:

*) Դիմումի վրա՝ թումանյանի մակագրությունը. «Վճարված է. Հ. Թ.»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 130: ԹԹ, 3499:

Փետրվարի 20 - Ե. Զարգարյան ստորագրությամբ մամակ Թիֆլիս՝ թումանյանին՝ Մեշեդսեյից (Պարսկաստան):

Տեղեկացնում է, որ ամսագրերի և գրքերի համար գումար է փոխադրել ««Հորիզոնի» հասցեին», բայց դեռևս ոչինչ չի ստացել: Տեղեկացնում է, որ ստացել է բանաստեղծի ուղարկած «14 կապոց գրքերը», գումարն ուղարկում է ««Հորիզոնի» հասցեին»:

«Հասկեր» հանդեսի հետ կապված ինչ-որ խնդրանքով դիմել է բանաստեղծին և ներողություն է խնդրում անհանգստացնելու համար. «Ամսաթերթի համար Ձեզ հանձնարարված ներդրության համար Ձեր ներողամտությունն եմ խնդրում, քանի որ Ձեր սրտին մոտ է մանուկների կրթության գործը. դրա համար էլ ինձ թույլ տվի նրանց հասանելիք գումարները Ձեր անունով փոխադրելու՝ հուսալով, որ կարևոր կարգադրություններ կանեք»:

խնդրում է այդ հարցով զբաղվել, քանի որ անհամբեր սպասում է:

ԳԱԹ ԹՖ, 1187 (326 լր.):

Փետրվարի 20 - Գրիգոր Չալխուշյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Դոնի Ռոստովից.

«Եղբայր Թումանյան,

Մարիետա Շահինյանին (որը տաղանդավոր կարդացող է) հրավիրում են Բաքու, մտադիր են ինքս տանելու, որ 9-ին կարդա դասախոսություն: Հետո կանցնի Երևան ու վերադարձին մոտավորապես 15-ին կցանկանար դասախոսելու և այդտեղ: Ամեն կողմից ցանկալի կլիներ, որ Թիֆլիսում նա դասախոսեր: Գրում եմ առաջուց, եթե պետք է հող պատրաստել:

Սիրով՝ *Գր. Չալխուշյան*»:

ԳԱԹ ԹՖ, 1914 (421 լր.):

Փետրվարի 22 - Մամուլը հաղորդում է.

«Հայ գրողների ընկերության հրավերով առաջիկա շաբաթներից մեկում Վալերի Բրյուսովը Թիֆլիսում կարդալու է դասախոսություն, իսկ Ջատկվա շաբաթին դասախոսելու է Իվ. Վեսելովսկին»:

«Հորիզոն», 1917, թիվ 38:

Փետրվարի 22 - Տպագրվում է հոդված «Ընթերցողի հուշատետրից» վերնագրով՝ Հ. Բաղդասարյան ստորագրությամբ:

Հոդվածագիրը ի թիվս այլ հարցերի անդրադառնում է նաև Տ. Հախումյանի՝ «Поэзия Армении» և «Сборник армянской литературы» ժողովածուներին նվիրված հոդվածին, ուր դժգոհություն է հայտնվում, թե ռուսական պոեզիայից հայերեն գոհացուցիչ թարգմանություններ չկան: Հ. Բաղդասարյանը առարկում է՝ միայն հիշողությամբ թվարկելով մի ամբողջ շարք հաջողված թարգմանություններ, այդ թվում նաև Լերմոնտովի «Մծիրիի», ռուսական բիլինաներից հատվածների, Պուշկինի «Օլեգի երգի», «Ջրահեղձի» թումանյանական թարգմանությունները:

«Արև», 1917, թիվ 38:

Փետրվարի 23 - Հաղորդագրություն մամուլում.

«Վաղը երաժշտական դպրոցի դահլիճում Հայ գրողների ընկերության հերթական 20-րդ գրական երեկույթին պ. Դերենիկ Դեմիրճ-

յանը դասախոսելու է «Գրական արվեստը» նյութի մասին հետևյալ ծրագրով. գրական ստեղծագործությունը որպես հոգեբնախոսական երևույթ, հակադրությունները, պատկերները և պատրանքները՝ որպես գրական ստեղծագործության պայմաններ: Գրական ստեղծագործության տարբեր գնահատությունների պատճառները: Օրինակները՝ Նահապետ Բուչակից, Սայաթ-Նովայից, Խ. Աբովյանից, Պ. Դուրյանից, Զովի. Թումանյանից, Ավ. Իսահակյանից, Վ. Տերյանից և այլ հեղինակներից»:

«Հորիզոն», 1917, թիվ 39:

Փետրվարի 24, Թիֆլիս - Երաժշտական դպրոցի դահլիճում տեղի է ունենում ԶԳԿԸ հերթական երեկույթը:

«Գրական արվեստը» թեմայով բանախոսում է Դ. Դեմիրճյանը (տե՛ս փետրվարի 23):

Ընկերության նախագահ Թումանյանը ողջունում է երեկույթին ներկա Ալ. Ծատուրյանին, որ վերջում երախտագիտություն և շնորհակալություն է հայտնում:*

Դասախոսության ընթացքում Դեմիրճյանը գրականության մեջ էական դեր է վերապահում հակադրությանը, պատկերին և պատրանքին, առանձին-առանձին վերլուծում դրանց դերն ու նշանակությունը կյանքում և գեղարվեստի մեջ: Ի թիվս այլ օրինակների՝ բերում է նաև Թումանյանի «Լոռեցի Սաքուն» պոեմը, որտեղ «սկզբում անշարժ, մռայլ քարափներին գեղեցիկ է հակադրվում խելագար շարժումների մեջ փրփրած Դեբեդ գետը»:

*) Ըստ «Մշակի» հաղորդագրության՝ «Դասախոսությանը ներկա էր նաև վերջերս Թիֆլիսում հյուր եղած Ալ. Ծատուրյանը, որին ընկերության նախագահ Զովի. Թումանյանը հայ գրողների անունից ողջույնի խոսք է հղում, ապա գրկախառնվում են ու համբուրվում: Վերջում Ծատուրյանը երախտագիտության և շնորհակալության խոսք է ասում («Մշակ», 1917, թիվ 44)»:

«Հորիզոն», 1917, թիվ 40:

Փետրվարի 24, Թիֆլիս - Հեռագիր Մոսկվա՝ Վալերի Բրյուսովին.

«Правление общества писателей просит Вас в Тифлис на вторую неделю после пасхи. Ждем с нетерпением.* Подробности письмом.**»

Туманян»:

*) Բրյուսովը Թիֆլիս չի եկել հիվանդության պատճառով:

**) Այդ նամակն անհայտ է:
ԵԼԺ 10, 261, 630:

Փետրվարի 24 - Մամուլը տեղեկացնում է.

«Ինչպես լսում ենք, Հայ գրողների ընկերությունը իր հերթական երեկոյթներից բացի կազմակերպելու է նաև հատուկ աշակերտական երեկոյթներ»:
«Հորիզոն», 1917, թիվ 40:

Փետրվարի 25 - Տեղի է ունենում ՀԳԿԸ հերթական երեկոյթը:

«Գրական արվեստը» թեմայով բանախոսում է Ռ. Դեմիրճյանը: Ներկա էին Թիֆլիս հյուր եկած Ա. Ծատուրյանը, որին «ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը ողջույնի ճառ ասաց հայ գրողների անունից և գրկախառնված համբուրվեց»:

Ծատուրյանը հանդես է գալիս շնորհակալական կարճ խոսքով. «Ես շատ զգացված եմ այս ողջույնից, և այն, ինչ որ ասաց իմ գրչեղբայր Թումանյանը, արժանի է սրտի պատասխանի. նրան կարելի է պատասխանել սրտի խոսքերով, սրտի հույզերով, բայց քանի որ իմ հիվանդությունը սրտի հիվանդություն է, ուստի ամեն մի հուզում կարող է աղետալի լինել ինձ համար. կասեմ մի երկու խոսք: Ձեր ողջույնի և ընդունելության մեջ ես նկատում եմ սեր դեպի մայրենի խոսքը, մայրենի գրականությունը և մայրենի արվեստը: Եվ ես հոգով ուրախ եմ, հրճվում է իմ սիրտը, որ այստեղ համախընդրվածներդ ունեք այդքան սեր դեպի ձեր մայրենի խոսքը և գրականությունը, որի մշակների թվին պատկանում եմ և ես: Սրտանց ուրախ եմ, որ այս երեկոյթները լինում են պարբերաբար և շարունակվում են: Հայտնում եմ խորին շնորհակալություն ձեր ընդունելության համար և ցանկանում, որ մայրենի գրականության սերը միշտ վառ լինի ձեր սրտերում»:

«Մշակ», 1917, թիվ 44:

Փետրվարի 26 - Տպագրվում է Ա. Աբեղյանի «Խոսել է պետք» հոդվածը՝ «Поэзия Арменуса» ժողովածուի հրատարակության առթիվ:

Ողջունելով ժողովածուն՝ իբրև նշանակալից երևույթ հայ իրականության մեջ՝ ցավով նկատում է. ««Հայ բանաստեղծության» ռուսերեն հրատարակությունը միաժամանակ լուրջ խորհրդածությունների նյութ է տալիս այն ճակատագրի վերաբերմամբ, որ ունեն նրա՝

ռուսերեն թարգմանության բնագիրը կազմող հայերեն հրատարակությունները մի կողմից, և նրանց երկնող ու ստեղծագործող հեղինակները- մյուս կողմից: Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում Հայ բանաստեղծության թարգմանական թանկարժեք հատորի հազարավոր օրինակներով սպառման հանդեպ իբրև մի մռայլ պատկեր, մի ցավալի իրականություն ձեր առաջ ծառանում է այն տխուր փաստը, որ նույն հայ բանաստեղծության հայերեն բնագիրները տարիների, այն ևս երկար տարիների ընթացքում մնում են չսպառված. առանձին հատորները նույն վիճակին են արժանանում, ինչ որ օրինակ նրանց բավական ընդարձակ ժողովածուները, «Հայ գրողների»* - բանաստեղծների ու արձակագիրների երկհատոր ստվար և ոչ թանկարժեք հրատարակությունները»:

Առաջարկում է տպագրել հին և միջնադարյան բանաստեղծության համահավաք, լիակատար հատորներ և հավելում: «Որչափ գիտենք. նման մի միտք ծագել է Հայ գրողների ընկերության վարչության մեջ: Եվ լավագույնն էլ այն է, որ նա հանձն առնի դրա նախաձեռնությունը՝ հրավիրելով ձեռնհաս և գիտակ անհատներ: Եվ որովհետև այդ ձեռնարկությունը մեծամեծ ծախսերի հետ է կապված, ապա ուրեմն աջակցությունը պիտի ցույց տան ուրիշները, իսկ ամենից առաջ, մեր կարծիքով, Մոսկվայի Հայկական կոմիտեն, որ և հրատարակել է հայ բանաստեղծության ռուսերեն թարգմանությունը: Այդ հրատարակությունը արդեն տվել է նյութական միջոց, որ և հնարավորություն կտա այսպիսի մի գործի»:

*Նկատի ունի Թումանյանի և այլոց կազմած «Հայ գրողներ» քրեստոմատիաները:

«Համբավաբեր», 1917, թիվ 10:

Փետրվարի 28 - Անտոն Թումանյան ստորագրությամբ նամակ-խնդրագիր Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Ցանկանալով անդամագրվել Հայ գրողների կովկասյան ընկերությանը, խոնարհաբար խնդրում եմ մայիսի 5-ին կայանալիք ընդհանուր ժողովին առաջարկել իմ թեկնածությունը:

Ահա այս երկրորդ տարին է, ինչ աշխատակցում եմ «Հորիզոն» օրաթերթին և վարում եմ «Վրաց կյանք» բաժինը: Անցյալում ես աշխատակցել եմ այլ պարբերական հրատարակությունների և հարկ եղած դեպքում կարող եմ ներկայացնել թերթերի համարները»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 99/16: ԹԹ, 3500:

Մարտի 1 - Լրատվություն մամուլում.

«Հայ գրողների հերթական երեկույթը, որ կայանալու է ուրբաթ՝ մարտի 3-ին, նվիրված է լինելու «Поэзия Армении»-ին: Ռուսերեն լեզվով կարդացվելու են ռեֆերատներ հայ գրականության մասին, լինելու են արտասանություններ և երգ»:

«Հորիզոն», 1917, թիվ 44:

Մարտի 3, Թիֆլիս - Երաժշտական դպրոցի դահլիճում տեղի է ունենում Հայ գրողների ընկերության 21-րդ հերթական գրական երեկույթը՝ նվիրված հայոց բանաստեղծությանը:

Երեկույթն սկսվում է Հովնանյան օրիորդաց դպրոցի խմբի «Մեր հայրենիք» երգով, ապա Բերբերյանը ռուսերեն ընդհանուր տեսություն է ներկայացնում հայոց բանաստեղծության մասին: Արտասանվում են բանաստեղծություններ Հ. Թումանյանից, Ալ. Օստոյանից, Ռ. Պատկանյանից, Հ. Հովհաննիսյանից և Գր. Աղթա-մարցունց:

«Հորիզոն», 1917, թիվ 48:

Մարտի 3 - Հայերեն թարգմանությամբ տպագրվում է հատված «Поэзия Армении» ժողովածուի մասին Բատյուշկովի հոդվածից («Поэзия народа художника», «Речь», 1916, No 343).

«Այդ գործի մեջ Վ. Բրյուսովը կատարում է Վիրգիլիոսի դերը, որ տանում է մեզ հիասքանչ այն ծաղկոցները, ուր բուրում են Արևելքի անուշահոտ պոեզիայի ծաղիկները, ցողված արևմտյան կուլտուրայի տարրերով... այդ ժողովածուն մի ամբողջ ժողովրդի գյուտ է: Երբ կարդում ես իրար հետևող երեսները, ուր ամփոփված են հին ժամանակների բանահյուսական ստեղծագործությունների մոգական զարգացման տարբեր աստիճանները՝ սկսած ժողովրդա-կան ամենահասարակ երգերից, աշուղների պոեզիաներից, հին ու միջին դարերից մինչև քսաներորդ դարու սկիզբները, այն ժամանակ թվում է, որ ձեր առջև միայն մի դեմք է՝ տարբեր արտահայտու-թյունների մեջ, մի հավաքածո միություն - հայ ժողովուրդը, որպես մի ամբողջական անկախ օրգանիզմ, իր սաղմի, ձևակերպման, զար-գացման և բարձր ստեղծագործման մեջ, ինչպես ժողովրդական աշուղ Սայաթ-Նովայի պոեզիաների, համաժողովրդական բանաս-տեղծ Պատկանյանի և «հայ գրական երկնքի երեք աստղերի»՝ Հով-հաննիսյանի, Թումանյանի և Իսահակյանի բանաստեղծությունների մեջ»:

«Յորիզոն», 1917, թիվ 46:

Մարտի 5 - Հաղորդագրություն մամուլում.

«Այսօր՝ երեկոյան ժամը 8-ին քաղաքային դումայի դահլիճում կայանալու է Հայ գրողների ընկերության ընդհանուր ժողովը: Ընկերությանը անդամագրվել կարող են գրականության, գիտության և հրապարակախոսության ասպարեզներում գործողները: Անդամների ընտրությունը կայանալու է ժողովի սկզբին, այնպես որ անդամագրվելու համար ցանկություն հայտնողները պետք է լինեն նիստի դահլիճում, որպեսզի ընդունվելուց հետո մասնակցեն ժողովին»:

«Յորիզոն», 1917, թիվ 48:

Մարտի 5 - ՀԳԿԸ վերստուգիչ հանձնաժողովի զեկույցը ընկերության ընդհանուր ժողովին:

Վարչության հանձնարարությամբ հանձնաժողովը մարտի 2-ին ստուգել է ընկերության՝ 1914, 1915 և 1916 թթ. դրամական հաշիվները: Ճշգրիտ տվյալներով ներկայացնում է այդ տարիների դրամական մուտքերի ու ելքերի մանրամասն հաշվեկշիռը:

Այնուհետև արձանագրում է. «Ընկերության վարչությունը 1914 թվին՝ պատերազմը հայտարարելու հետ, դադարեցրել է իր գործունեությունը (տե՛ս 1914, հոկտեմբերի 1), որը տևեց մինչև 1916 թվի հունվարի 13-ը, երբ տեղի ունեցավ Վ. Բոյուսովի առաջին դասախոսությունը: Այնուհետև գարնանը, տալով մի երկու հորեյանական դասախոսություն (տե՛ս 1916, ապրիլի 28, մայիսի 27), սեպտեմբերից սկսեց իր մի շարք դասախոսությունները երաժշտական դպրոցի դահլիճում (տե՛ս 1916, սեպտեմբերի 18, հոկտեմբերի 11): Վարչության գործունեության դադարեցումը վերոհիշյալ ժամանակամիջոցում տեղի է ունեցել հատուկ արձանագրությամբ 1914 թվի ամռանը: Գործունեության այսօրինակ դադարեցումը պատերազմի արհավիրքների պատճառով միանգամայն տեղին է»:

Վերջում դիտողության կարգով. «Ցանկալի է, որ մի կերպ այդ թվին և կամ հաջորդ՝ 1915 թվի օրերին ընդհանուր ժողով գումարվեր, որտեղ իրազեկ արվեր ընկերության անդամներին գործի դրությունը և այնտեղ հրապարակեր վարչության որոշումը»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 49:

Մարտի 5 - Տպագրում է («Յորիզոն», 1917, թիվ 48) «Էսօրվան ժողովի առիթով» հոդվածը:

Խոսքը պատերազմի հետևանքով երկամյա ընդմիջումից հետո Հայ գրողների կովկասյան ընկերության առաջին ընդհանուր ժողովի մասին է։* Թուրքմանյանը շարադրում է այն հիմնական անելիքները, որ պիտի իրականացնի ընկերությունը աշխարհաքաղաքական մոր իրադրության պայմաններում։ Հայկական հարցի ասպարեզը, գրում է նա, որ կլանել էր հայ մտավորական երիտասարդության ամբողջ ուշադրությունը, պատերազմը «արյան ծով կապեց ու պատեց անորոշ հույսերի մշուշով»։ Բայց մնաց «ինքնուրույն ազգային կյանքի անգուսպ տենչը»։ Դրա արտահայտությունն են գրասերների ընկերությունների հիմնումն ու հաճախակի դասախոսությունները։ Այս ընդհանուր մթնոլորտում մոր հեռանկարներ են բացվում գրողների ընկերության առջև. «Այժմ, երբ Ռուսաստանում էլ մոր ազատ կարգեր են հաստատվում, ավելի ևս պիտի հաստատվի ու խորանա մեզանում էս շարժումը և ընդունի շատ ավելի լուրջ կերպարանք։

Թիֆլիսը դեռ երկար ժամանակ պիտի մնա մեր կուլտուրական, գրական-գիտական շարժման կենտրոն։ Իսկ էս կենտրոնում Հայ գրողների ընկերությունը կարևոր դեր ունի կատարելու։

<....> Նորից հարց է առաջ եկել, թե ո՞վ կարող է նրան անդամագրվել։ Իհարկե, ամեն մեկը, ով իր ուժերի ներածին չափ աշխատում է գիտության, գրականության ու հրապարակախոսության ասպարեզում, շատ թե քիչ՝ էդ միևնույն է։ Փորձը ցույց է տալիս, որ շատ համեստ ուժերի համախմբումն է ստեղծում էն տաք ու հարազատ մթնոլորտը, ուր կյանք ու հարգանք է ստանալու մեր գեղարվեստագետը, գրողը, գիտնականը կամ հրապարակախոսը։

Հայ գրողների ընկերության նպատակների մեջ են մտնում և արդեն առաջադրած են Հայագիտության միջնակարգ և բարձրագույն կուրսերի խնդիրը (տե՛ս 1916, մայիսի 27, սեպտեմբերի 18), հայ գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին ապահով վիճակի մեջ դնելու խնդիրը և հայոց բարբառները ուսումնասիրելու, բառամթերքն ու ոճերը ամբարելու, ազգային կենդանի լեզվի, ինչպես և գրական լեզվի բառարանները կազմելու խնդիրը։ Եվ էս խնդիրներն առաջ են բերել, նույնիսկ, հատուկ կարևոր խորհրդակցություններ ու շարժում։

Գրականության, գիտության ու հրապարակախոսության ասպարեզում գործող, մեծ թե փոքր, մեր բոլոր մտավորականների

պարտականությունն է միանալ, միասին ընդգրկել եւ կենսական գեղեցիկ խնդիրները ու առաջ տանել»:

*) Այդ ընդհանուր ժողովը հայտարարված օրը չի կայացել: «Հորիզոնը» իր մարտի 7-ի համարում տեղեկացնում է. «Հայ գրողների ընկ. ընդհանուր ժողովը, որ պիտի կայանար մարտի 5-ին քաղաքային դումայի դահլիճում, հետաձգվեց անորոշ ժամանակով»:

ԵԼԺ 7, 215-317, 637-638:

Մարտի 7 - Տպագրում է («Հորիզոն», 1917, թիվ 49) «Հսկայի ազատությունը» հոդվածը:

Գրում է. «Ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ»:

Որպես օրինակ՝ ռուսական բիլինաների տարբեր հատվածներից քաղված սյուժետային դրվագների հիման վրա ներկայացնում է երեսուն տարի «փեչի» վրա անդամալույծ պառկած Իլիա Մուրոմեցի՝ հրաշքով ոտքի կանգնելու և հսկայի ուժ ձեռք բերելու պատմությունը. «Ու վեր կացավ հսկան, աղոթեց, իր նժույգը հեծավ: Հեծնելը տեսան, բայց էլ չտեսան ուր գնաց...»:

Եվ վերջում. «Ի՛նչ հոյակապ գեղեցկություն և ինչքա՛ն հարազատ ու ճշմարիտ...

Ճշմարիտ, որ աշխարհում գրեթե էլ ծակ բերան չէր մնացել, որ չասեր, թե Ռուսաստանը մի ընկած անդամալույծ է, նրանից ոչինչ չի դուրս գալ: Վերջին օրերս բուլղարական մինիստրը մինչև անգամ դիակ էր անվանում, և...

Եվ հանկարծ... հսկան վեր կացավ տեղից:

Մի առավոտ էլ զարթնեց Մայր Ռուսաստանը, տեսավ՝ իր սիրելի զավակը, իր անդամալույծ Իլիան, իր Պետական դուման արդեն կանգնել է հսկայորեն, երկիրը մաքրում է ավազակություններից և մի օրում էնքան գործ է կատարել, որ ինքը չի կատարել մի ամբողջ դարում:

Դուրս եկավ, որ ռուսական փեչը, որին պառկած էր ռուսական Իլիան էնքան տարի, նրա համար Պրոմեթեոսի ժայռն է եղել, և էնքան տարի ինքն իր մեջ աճելով ու մխալով ուժ է հավաքել՝ միանգամից վեր կենալու և մի հսկայական զարկով փրկելու իր երկիրը: Մեծ ու ահավոր մի վայրկյան...».

Բայց պատահում է, որ երկար տարիներով անդամալույծ հսկաները վեր կենալիս միանգամից չեն կարողանում ամուր ոտի վրա կանգնել, մի քանի անգամ չոքում են, մինչև որ վերջնակա-

նապես կարողանում են հաստատուն կանգնել: Եվ ամեն մի չոքելով հազար հազարավոր մարդիկ են ընկնում տակն ու զուր կոտորվում:

Այժմ Ռուսաստանի ամեն մի քաղաքացին միայն մի հոգս պիտի ունենա՝ ամուր բռնի, իր ուժերի ներածին չափ նեցուկ դառնա ռուսական նոր ոտի կանգնած հսկային, որ նա հաստատուն կանգնի:

Էս է պահանջում ինչպես ընդհանուրի, էնպես էլ ամեն մի անհատի շահն ու փրկությունը»:

*) Նկատի ունի փետրվարյան հեղափոխությունը:

ԵԼԺ 7, 317-320:

Մարտի 8 - «Ուղղումն» ծանուցումով մամուլն զգուշացնում է.

«Պ. Յ. Թումանյանի հոդվածում* («Յորիզոն», թիվ 49) 4-րդ սյուն. 8-րդ էջից հետո պետք է ավելացնել հետևյալ տողերը.

Մի առավոտ էլ զարթնեց մայր-Ռուսաստանը, տեսավ՝ իր սիրելի զավակը, իր անդամալույծ Իլիան, իր Պետական դուման արդեն կանգնել է հսկայորեն, երկիրը մաքրում է ավազակություններից, և մի օրում էնքան գործ է կատարել, որ ինքը չի կատարել մի ամբողջ դարում»:

*) Խոսքը «Հսկայի ազատությունը» հոդվածի մասին է (տե՛ս մարտի 7): Ակադեմիական տասհատորյակում այդ ուղղումը կատարված է:

«Յորիզոն», 1917, թիվ 50:

Մարտի 9 - Ուշացած* հաղորդագրություն ՀԳԿԸ 20-րդ գրական երեկույթի մասին (տե՛ս փետրվարի 24):

*) Հրապարակման ծանոթագրության մեջ բերվում է ուշացման պատճառը. «Այս հաշվետվությունը շարված էր ներկա անցքերից (նկատի ունեն փետրվարյան պետական հեղաշրջումը Ռուսաստանում.- Խմբ.) առաջ և տեղ չլինելու պատճառով միայն այսօր հնարավորություն ունեցանք զետեղելու թերթի մեջ»:

«Յորիզոն», 1917, թիվ 51:

Մարտի 12 - Մամուլը տեղեկացնում է, որ վաճառվում են Թումանյանի հեքիաթների առանձին պատկերազարդ հրատարակության հետևյալ հատորները՝

Անբախտ վաճառականները	35 կ.
Գառնիկ ախպերը	50 կ.
Տերն ու ծառան	15 կ.
Խոսող ձուկը	50 կ.
Գիքորը	50 կ.

Մի կաթիլ մեղրը	50 կ.
Քաջ Նազարը	40 կ.
Փոքրիկ ձկնորսը	40 կ.
Լեզուն կտրած ծիտիկը	40 կ.
Ոսկի քաղաքը	25 կ.

Ծանուցվում է. «Բացի Թիֆլիսի գրավաճառներից և «Հորիզոնի» խմբագրատնից այդ գրքերը վաճառվում են մաս Գ. Վարդապետյանցի մոտ (Вельяминовская, 22) քանակությամբ 25 տոկ. զիջումով կանխիկ»:

«Հորիզոն», 1917, թիվ 54:

<Մարտի 17> - Վահան Տերյանի շտապ հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Սուխումից:

«Խոնարհաբար խնդրում եմ գրողների նախագահին, Թիֆլիսի պետական իշխանությունների միջոցով շտապ դիմել տեղիս իշխանություններին, որպեսզի ինձ պաշտպանեն բժիշկ Շուլցի և սանատորիայի տնօրենի ծանակություններից: Այստեղ ոչ ոքի չճանաչելով, հիվանդ, ես անգոր եմ»:

ԳԱԹ ԹՖ, 2261 (1092բ): ՎՏԵԺ, 4, էջ 309:

Մարտի 19 - Տպագրվում է «Поэзия Армении» վերնագրով հոդված՝ Վալերի Յավիցկի ստորագրությամբ:

Չափազանց բարձր է գնահատում ժողովածուն՝ իբրև բացառիկ մշակութային երևույթ, ներկայացնում իր տպավորությունները հատորում տեղ գտած հեղինակների մասին: Հոդվածագրի տպավորությամբ՝ նոր շրջանի հայ գրականության մեջ տիրապետող ազգային ցավոտ խնդիրներն են, գյուղացիության սոցիալական կացությունը: Իբրև վերջինիս բնորոշ արտահայտություն հիշում է Թումանյանի «Գութանի երգը» («Пахарь»)

Իսկ ընդհանրապես ժողովածուի կարևոր առանձնահատկությունը համարում է այն, որ այստեղ ամբողջովին բացահայտվում են հայի ազգային հոգեբանությունը, նրա՝ բազում դարերի տառապանքը: Ընթերցողը համոզվում է, որ չնայած դրան, հայ ժողովուրդը կարողացել է ստեղծել բարձր մշակույթ, որի լավագույն ավանդույթները շարունակվում են մաս նոր ժամանակներում:

«Это особенно ясно видно по тем шедеврам поэтического творчества,- записанным в него,- какие даны такими поэтами нового времени, как О. Туманян и А. Исаакян, когда они,

забывая ужасы жизни, отдаются всецело во власть художественному творчеству. У Туманяна удивительно сильно, с художественной простотой переданы армянские легенды, как: «Голубиный скит», «Сердце девы», «Лампада просветителя» и произведения из современной жизни, как лирическая поэма - «Ануш»». Առանձին անդրադառնում է նաև Իսահակյանի «Արու-Լալա Մահարի» պոեմին:

«Армянский вестник», Մոսկվա, 1917, թիվ 12, էջ 5-8:

Մարտի 20 - Վասիլի Գավրիլով ստորագրությամբ նամակ (ռուսերեն) Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է Շուկավերում Սումբատովի կատարած ապօրինի ընտրությունների (տե՛ս փետրվարի 10) մասին, որի ընթացքում Խատիսովի մոտ վարկաբեկել են իրեն: Խնդրում է բանաստեղծին խղճի հանգստության համար իր հետ անհապաղ հանդիպելու և զրուցելու հնարավորություն ստեղծել:

ԳԱԹ ԹՖ, 1080 (290 լր.):

Մարտի 28 - Հաղորդագրություն մամուլում՝ ԶԳԿԸ նոր նախաձեռնության մասին.

«Հայ գրողների ընկերությունը հայտարարել էր, որ անցյալ տարվանից հայոց գրականության և հայագիտության կուրսեր էր բաց անելու (տե՛ս մարտի 5), բայց հետաձգվեց: Այժմ դրությունը այսպիսին է. հայտարարությունից հետո դասընթացներին գրվողների թիվը այնքան մեծ է եղել, որ գործն առել է լուրջ կերպարանք և պահանջել է ավելի մեծ ծախսեր: Եվ գործը այժմ դրված է մի մեծ կազմակերպության* առաջ, որ սկսվել է Գրողների ընկերության նախաձեռնությամբ, և որի նպատակն է պաշտպանել հայոց կուլտուրան: Այս նորակազմ ընկերությունը, որ շուտով կհայտարարվի, իր վրա է առել բաց անել ու պահպանել հայոց գրականության ու հայագիտության միջնակարգ ու բարձրագույն կուրսեր, անցյալ տարվանից հարաբերության մեջ է մտել գիտնականների ու մասնագետների հետ և ստացել է նրանցից շատերի համաձայնությունը: Ընկերության նպատակն է նաև ապահովել մեր մեջ գիտության, գրականության և գեղարվեստի մարդկանց վիճակը, ուսումնասիրել հայոց աշխարհքը, պատմությունն ու լեզուն: Ընկերության մեջ մտնելու են ինչպես գրական-գիտական, այնպես էլ ֆինանսական աշխարհի կարող ուժերը»:

*) Խոսքը Հայկազյան ընկերության մասին է:
«Հորիզոն», 1917, թիվ 65:

Մարտի 31 - Թումանյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության արտահերթ նիստ:

Վարչության անդամներից ներկա են՝ Մինաս Բերբերյան, Անուշավան Աբովյան, Նիկոլ Աղբալյան, Արշակ Ջամալյանց, Դերենիկ Դեմիրճյան, անդամ քարտուղար՝ Գյուլտ ա. ք. Աղանյան:

Նախագահողը հայտնում է, որ մարտի 31-ին՝ երեկոյան ժամը 6-ին, վախճանվել է բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանը:

Ներկաները հոտնկայս հարգում են հանգուցյալի հիշատակը:
Որոշում են՝

1. Ընկերության կողմից անել թաղման կարգադրություններ:

2. Մահվան մասին հեռագրով հայտնել Մոսկվա՝ հայոց կոմիտեին (խորհրդին), «Армянская весна»-ի խմբագրությանը, Պետրոգրադ՝ Հայ եկեղեցական խորհրդին, Նոր Նախիջևան՝ Գրիգոր Չալխուշյանին՝ հայ գրասիրաց ընկերությանը, Բաքու՝ «Արևի» խմբագրությանը և գրասիրաց ընկերությանը, Շուշի՝ թեմական դպրոցին, Երևան՝ թեմական դպրոցին, Էջմիածին՝ ճեմարանին, Ալեքսանդրապոլ՝ առևտրական դպրոցին, Գանձակ՝ Հովսեփ Մելիք-Բեգլարյանին:

3. Քանի որ Ջատկի տոների առիթով վաղը թերթեր լույս չեն տպվելու, առանձին թերթով մահագույժ տպել ու ցրել քաղաքում:

4. Առաջիկա երեկույթի համար մեծացնել տալ հանգուցյալի նկարը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/4:

<Մարտ> - Թումանյանին այցելում է խարբերոցի պրոֆեսոր Տոնապետ Լյուլեճյանը:*

Ջապել Եսայանը հիշում է. «Օր մը, գարնանային շքեղ օր մը, Հովհ. Թումանյանը գտա հուզմունքի բարձրագույն աստիճանի մեջ: Իր մոտ այցելության եկեր էր խարբերոցի պրոֆեսոր մը, Լյուլեճյանը, և պոետին պատմել էր իր հրաշքով փրկված կյանքին դժնի պատմությունը: Լյուլեճյանը նախապես տեսեր էի. անիկա լռակյաց և տխուր մարդ էր, գիտեի մոտավորապես իր անցած տառապագին ճանապարհը, բայց անձամբ իր բերանեն ոչ մեկը խոսք չէր լսած այդ մասին: Ինչպե՞ս էր եղել, որ անիկա Հովհ. Թումանյանի մոտ խոսեր էր, ասիկա հետևանքն էր անշուշտ այն մեծ վստահության,

որ Հովհաննես Թումանյանը կներշնչեր իր պարզ բարությանը, մարդոց ներքին էության հետ հաղորդակցության մտնելու իր թանկագին հատկությանը:

Օրերով և շաբաթներով Հովհ. Թումանյանը մնաց իր լսածների տպավորության տակ: Անհկա հաճախ կխոսեր այդ մասին և այդ անկյունեն կարծես կտեսներ և կընդգրկեր անըմբռնելի տրագեդիան, որ կատարվեր էր»:

*) Տոնապետ Լյուեճյանը Մեծ եղեռնի օրերին ձերբակալվում և ծանր խոշտանգումների է ենթարկվում օսմանյան բանտերում: Մահամերձ վիճակում ընկնում է հիվանդանոց և հրաշքով փրկվում: Ապա անցնում է Երզնկա և նվիրվում թուրք ընտանիքներում պահվող հայ երեխաների փրկության գործին: Ռուսական բանակում ծառայող մահմեդականների կեղծ ամբաստանությամբ, թե թուրք երեխաների է բռնի հայացնում, կանգնում է դատարանի առաջ: Արդարացվելուց հետո տեղափոխվում է Երզրում և շարունակում իր ազգանվեր գործը: 1917 թ. ձմռանը Պետերբուրգի ամերիկյան դեսպանի և Թիֆլիսի հյուպատոսի աջակցությամբ գալիս է Թիֆլիս և Վահան Թոթովենցի միջոցով ծանոթանում Թումանյանի հետ: Նրան առաջարկում են տեղափոխվել Ամերիկա, բայց նա հրաժարվում է և վերադառնում Երզրում՝ շարունակելու իր գործը: Այստեղ հիվանդանում է բժավոր տիֆով և վախճանվում 1917 թ. մարտին:

ԹԺՀ, 156, 922-923:

<Ապրիլի սկիզբ>*, Թիֆլիս - Ցավակցական հեռագիր Մոսկվա՝ Ալ. Ծատուրյանի ընտանիքին.

«Հոգով ցավում եմ այն ծանր կորստի համար, որ կրեց հայրենի գրականությունը հանձին վաղաժամ մահացած Ծատուրյանի:

Հովհաննես Թումանյան»:

*) Հեռագրի ձեռագիրը չի պահպանվել: Տեքստը տպագրվել է ապրիլի 9-ին («Հորիզոն», 1917, թիվ 71):

ԵԼԺ 10, 261, 630:

<Ապրիլի սկիզբ> - Ալ. Ծատուրյանի մահվան կապակցությամբ «Հորիզոնի» խմբագրության հասցեով ցավակցական հեռագիր Թումանյանին՝ Շահսուվարյան ստորագրությամբ:

ԳԱԹ ԹՖ, 1841 (1639):

<Ապրիլի սկիզբ> - Ալ. Ծատուրյանի մահվան կապակցությամբ ցավակցական հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանի գրասերների միության կողմից՝ Վերասկիզ Պարույր ստորագրությամբ:

ԳԱԹ ԹՖ, 1940 (967):

Ասորիկի 2 - Հաղորդագրություն մամուլում՝ Ալ. Ծատուրյանի հուղարկավորությունը կազմակերպելու միջոցառումների մասին:

Տեղեկացվում է, որ Հայ գրողների ընկերությունը որոշ կարգադրություններ է արել, հեռագրեր է ուղարկել տարբեր տեղեր: Խմբագրությունը որոշել է խնդրել Գրողների ընկերության վարչությանը նախաձեռնությունների խորհրդակցությանը հրավիրել նաև մշակութային հաստատությունների ներկայացուցիչներին:

«Մշակ», 1917, թիվ 69:

Ասորիկի 4 - Ցավակցական հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.*

«Прошу передать союзу армянских писателей мое глубокое соболезнование по поводу кончины национального поэта Александра Цатуряна.

Артюстка Меликян».

*) Ներքևում՝ հեռագրի հայերեն թարգմանությունը Թումանյանի ձեռագրով:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 102/4: ԹԹ, 3501/4:

Ասորիկի 4 - «Գործ» ամսագրի խմբագրության ցավակցական հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Ցավակցություն հայտնելով այն ծանր կորստի առթիվ, որ կրեց հայոց գրականությունը հանձին Ալեքսանդր Ծատուրյանի, խնդրում ենք մեր ներկայացուցիչը լինել թաղմանը»:

«Հորիզոն», 1917, թիվ 69: «Մշակ», 1917, թիվ 71:

Ասորիկի 5 - Գևորգյան ճեմարանի մանկավարժական խորհրդի ցավակցական հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Էջմիածնից.

«Председателю общества писателей армян Туманяну

Педагогический совет академии выражает свое глубокое соболезнование по поводу безвременной кончине известного нашего поэта Цатуряна. Попросим Манука Абеги́ана быть нашим представителем на похоронах.

Помощник ректора Аветик Тер-Погосян».

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 102/2: ԹԹ, 3501/2:

Ասորիլի 6 - Ղարաբաղի թեմական դպրոցի տեսուչ Սամվելյանի ցավակցական հեռագիրը Թիֆլիս՝ ԶԳԿԸ վարչության նախագահ Թումանյանին՝ Շուշիից.

«Ղարաբաղի թեմական դպրոցը ողբում է այն ծանր կորուստը, որ կրեց հայոց գրականությունը հանձին քաղաքացիական վշտի և մեր ժողովրդի իդեալական ձգտումների պանծալի երգիչ Ալեքսանդր Ծատուրյանի»:

«Յորիզոն», 1917, թիվ 71:

Ասորիլի 6 - Մոսկվայի՝ հայ ուսանողներին օգնող հայ կանանց ընկերության նախագահ Կատարինե Ժամհարյանի ցավակցական հեռագիրը Թիֆլիս՝ ԶԳԿԸ վարչության նախագահ Թումանյանին՝ Մոսկվայից.

«Հայ ուսանողուհիներին օգնող Մոսկվայի հայ կանանց ընկերությունը իր ցավակցությունն է հայտնում Հայ գրողների ընկերությանը հայոց գրականությունը ժողովրդական վշտի և դեպի ժողովուրդը տածած սիրո երգերով զարդարող մեր թանկագին բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանի մահվան առթիվ»:

«Յորիզոն», 1917, թիվ 71:

Ասորիլի 6 - Տպագրվում է հոդված «Ալեքսանդր Ծատուրյան» վերնագրով՝ բանաստեղծի մահվան առթիվ.

«Ալ. Ծատուրյանը մեծ ուշադրության արժանացավ իննսունական թվականներին, ընդամենը հինգ-վեց տարվա ընթացքում: Այդ այն ժամանակներն էր, երբ մեր առաջնակարգ բանաստեղծները՝ Յ. Զովհաննիսյանը, Զովհ. Թումանյանը, շատ չէին հետևում քաղաքացիական ծայնին: Մեր մյուս առաջնակարգ բանաստեղծ Ավ. Իսահակյանն էլ դեռ նոր էր սկսել իր գործունեությունը: Այդ հինգ-վեց տարիների ընթացքում, հասարակական վշտին արձագանք էր տալիս Ալ. Ծատուրյանը...»:

«Արև», Բաքու, 1917, թիվ 68:

Ասորիլի 6 - Թումանյանի նախաձեռնությամբ տեղի է ունենում հայկական ընկերությունների, հասարակական հիմնարկությունների և թերթերի ներկայացուցիչների խորհրդակցություն: Քննարկվում են Ալ. Ծատուրյանի թաղմանը, ստեղծագործությունների հրատարակությանը և մահարձանի կառուցմանը վերաբերող հարցեր:*

*) Ծատուրյանը մահացել էր մարտի 31-ին Ջաքաթալայում:

«Հորիզոն», 1917, թիվ 71:

Ապրիլի 7 - Ցավակցական հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին՝ Նովոչերկասկից.

«Поэту Ованесу Туманяну

От имени кружка студентов армян Донского политехнического института приношу глубокое соболезнование по случаю смерти дорогого поэта Александра Цатуряна. Не говорите мне он умер: Он живет. Пусть жертвенник разбит, огонь еще пылает, пусть роза сорвана, она еще цветет, пусть арфа сломлена, аккомпанемент еще рыдает.

Председатель Меликян».

ԹԹ, 3501/3:

Ապրիլի 7 - Հովհ. Հովհաննիսյանի ցավակցական հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին Բաքվից.

«Հոգով ցավում եմ այն ծանր կորստի համար, որ կրեց հայրենի գրականությունը հանձին վաղաժամ մահացած Ծատուրյանի»:

«Հորիզոն», 1917, թիվ 71:

Ապրիլի 7 - Տեղի է ունենում գրական-գեղարվեստական սալոնի հերթական նիստը՝ նվիրված Ծատուրյանի հիշատակին:

Հիշողություններով հանդես են գալիս Ջ. Եսայանը, Տ. Նազարյանը, Հ. ք. ճուղուրյանը և ուրիշներ:

Երաժիշտ Հովսեփ Տեր-Դավթյանը, Հովհ. Մալխասյանը ուշադրություն են հրավիրում առհասարակ գրողների անապահով վիճակի վրա: Սգահանդեսին ներկա Հովհ. Թումանյանը տեղյակ է պահում, որ կազմվում է մի մեծ ընկերություն* որի նպատակներից մեկն է լինելու հայ գրական աշխատավորների ապահովությունը:

*) Նկատի ունի Հայկազյան ընկերությունը, որի շուրջ բանակցություններն արդեն ընթացքի մեջ էին:

«Մշակ», 1917, թիվ 71:

Ապրիլի 9 - Հաղորդագրություն մամուլում:

Տեղեկացվում է, որ ՀԳԿԸ վարչության նախագահ Հովհ. Թումանյանի նախաձեռնությամբ կայացել է հայկական ընկերությունների, հասարակական հիմնարկությունների և թերթերի ներկայացուցիչների խորհրդակցություն (տե՛ս ապրիլի 6):

Որոշվել է՝

1) Ալեքսանդր Ծատուրյանին թաղել Խոջիվանքի գերեզմանատանը, ուր թաղված են հայ գրողները:

2) Պսակի գումարները հատկացնել հանգուցյալի երկերի հրատարակությանը և մահարձանին և բոլոր գումարները ուղարկել Հայ գրողների ընկերությանը:

3) Համքարները, ազգային դպրոցների աշակերտները, կանանց բարձրագույն դասընթացների ուսանողուհիները և արհեստագիտական դպրոցի սաները պետք է հավաքվեն հանգուցյալի բնակարանը, իսկ քաղաքային դպրոցի աշակերտությունը իրենց վարժուհիների հետ թափոփին դիմավորելու են Ալեքսանդրյան այգու մոտ:

4) Սգերթին նվագելու է III գիմնազիայի երաժշտախումբը:

«Հորիզոն», 1917, թիվ 71:

Ապրիլի 9 - Տպագրում է («Հորիզոն», 1917, թիվ 71) «Վերջին ցանկությունը» հոդվածը:

Գրված է Ալ. Ծատուրյանի մահվան առիթով: Հիշում է «մահվանից մի քանի օր առաջ» իրենց վերջին գրույցը: Ծատուրյանը ցանկություն է հայտնել մի վերջին անգամ այցելել հայրենի գյուղ, տեսնել սիրած մոր շիրիմը, իր մանկության թեմին: Բայց ցանկությունը այնպես էլ մնում է անկատար: Եվ բանաստեղծը խորհրդածում է. «Եվ տաք դիակի առջև կանգնած էն էի մտածում, թե չտեսա՞վ... Այժմ էլ, երբ ցավելով խոսում են նրա տառապալից կյանքի մասին, նրա գրական գործերի մասին, նրա գործերի հրատարակության և այլ ավելի մեծ խնդիրների մասին, մի տարօրինակ համառությունով իմ սիրտն էլ էն փոքրիկ ցավն է բռնել, նրա վերջին կարոտը, որ, մեռնելով ձգտեց, ու չկարողացավ հասնի, տեսնի ոչ իր բազմատանջ ու շատ սիրած մոր գերեզմանը, էն մոր, որ աղքատության մեջ, անդավաճան, ցուրտ խրճիթում ծոցն առնում ու տաքացնում էր փոքրիկ Ալեքսանդրին, և ոչ էլ էն հին թեմին, որ ցուրտ ու բութ գիշերները իր պառաված ճյուղերով մթնում անդադար ծեծում էր նրանց աղքատիկ խրճիթի պատերն ու կտուրը, և որի վրա ամռան արևոտ օրերին էնքան թուփն է քաղել ու խաղացել, զվարճացել մանկուց որբացած ու ամեն զվարճություններից, ամեն հաճույքներից զրկված Ալեքսանդրը...»:

ԵԼԺ 7, 320-322:

Ասորիկի 9 - Շիրվազադեի նամակը* Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է մի թյուրիմացության մասին, որ ծագել է իր և Անդրանիկի միջև. ինքը կատակով ինչ-որ արտահայտություն է թույլ տվել արևմտահայության մասին, որ զորավարը լուրջ է ընդունել, վիրավորվել ու բորբոքվել է: Ընդհարումը ստացել է սուր բնույթ, և իրեն ստիպում են ներողություն խնդրել: Բանաստեղծին գանգատվում է. «Այս տխուր պատմության մեջ ամենացավալին ինձ համար կլինի այն, եթե ինձ ճանաչող մարդիկ գեթ մի վայրկյան հավատան, որ ես ընդունակ եմ իմ թրջահայ եղբայրներին վիրավորելու: Եթե ինձ կախաղան էլ բարձրացնեն, դարձյալ պիտի պնդեմ, որ Անդրանիկին ուղղած իմ առաջին դարձվածն եղել է բարեկամական կատակ:

<....> Արդ ես ինչպե՞ս ներողություն խնդրեմ մի մեղքի համար, որ չեմ գործել: Չէ՞ որ ներողություն խնդրելով ես կհակասեմ ճշմարտությանը և կվերցնեմ ինձ վրա մի հանցանք, որ չեմ գործել»:

Միջադեպին անհարկի միջամտել են Անդրանիկի խմբից ինչ-որ մեկը և նրա քրոջ որդին: Ձորավարը, ինչպես ինքն է ասում, դրան տեղյակ չի եղել: Շիրվանզադեն հավատում է նրան, ապա դիմում է բանաստեղծին. «Բայց թող նա ևս ինձ հավատա և չմեղադրե ինձ, որ ես իբր թե կարող եմ վիրավորել մի թշվառ ժողովրդի, որի վշտերովն եմ ապրել 10 տարի և որի համար բանտ եմ նստել, աքսորվել և անվերջ հալածվել»:

Այնուհետև, անցնելով նամակի բուն նպատակին, որ ըստ էության բանաստեղծի հաշտարար միջնորդության ակնկալիքն է, շարունակում է. «Թրջահայերին վիրավորելու միտքն արմատապես ժխտելով՝ դառնում եմ իմ և պ. Անդրանիկի փոխադարձ վիրավորանքներին խոսքով: Ամենքը կարող են ապացուցանել, որ առաջին վիրավորողը, ինձ «սրիկա» անվանողը և իմ վրա աթոռ բարձրացնողը նա է եղել: Մտիր իմ դրության մեջ և ասա, կը լռեի՞ր ինքդ, եթե մեկը քեզ «սրիկա» անվաներ և աթոռը վրադ բարձրացներ գլուխդ ջարդելու: Կարծում եմ, որ չէիր լռիլ և վիրավորանքին վիրավորանքով կպատասխանեիր, այսինքն՝ կանեիր այն, ինչ որ ես եմ արել: Արդ, ո՞վ ումից պետք է ներողություն խնդրի, նա ինձնից, թե ես նրանից: Բայց ես դարձյալ զիջող կլինեմ և չեմ պահանջի միակողմանիություն: Մենք երկուսս էլ մեղավոր ենք, հետևաբար թե ներողությունով կարելի է լուծել խնդիրը, միաժամանակ միմյանցից կխնդրենք ներողություն: Դրանից ավելի զիջել չեմ կարող: Գալով

այդ տղայի** վայրենի վարմունքին, այդ մասին կխոսի իբր միջնորդ Ահարոնյանը: Ես լիազորում եմ նրան խոսել իմ կողմից և ինչ որ երկուքդ որոշեք, ես կընդունեմ: Չեմ հրաժարվիլ նաև ընկերական դատից»:

*) Նամակն ստորագրված է՝ Շիրվան:

**) Խոսքը Անդրանիկի քրոջ որդու մասին է, որ նաև գորավարի թիկնապահն էր: ԳԱԹ ԹՖ, 1904 (950):

Ապրիլի 10 - Վալերի Բրյուսովի և կնոջ հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից:

Հայտնում են Թիֆլիս գալու անհարմարության մասին: Շնորհավորում են Ջատկի տոնը: Գրում են՝ մանրամասնությունները մամակով:

ԳԱԹ ԹՖ, 1061 (582):

Ապրիլի 10 - Ցավակցական հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին՝ Էրզրումից.

«Эрзрумский армянский районный комитет глубоко опечален безвременной кончиной певца народной скорби поэта Цатуряна, присоединяемся к всеобщей печали.

Архимандриу Завен, Ашот Мелконян, Рубен Тер-Гевондян, Левон Мауванян, Левон Ланис Балаовекян».

*) Ներքևում՝ հայերեն թարգմանությունը Թումանյանի ձեռագրով:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 102/5: ԹԹ, 3501/5:

Ապրիլի 11 - Ցավակցական հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին՝ Վլադիկավկազից.*

«Глубокой скорбью оплакиваем смерть патриота гражданина Цатуряна, звезда которого погасла прежде чем светит напильном небе новоосвобожденной родины.

Варсеник Агасян, священник Сарикян, Нерсес Тер-Оганесян».

*) Ներքևում՝ հայերեն թարգմանությունը Թումանյանի ձեռքով:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 102/6: ԹԹ, 3506:

Ապրիլի 11 - Ցավակցական հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին՝ Պետերբուրգից.

«Выражаем нашу скорбь по поводу безвременной кончины певца национального горя Александра Цатуряна и особенно

болеем за утрату его накануне освобождения родины от векового гнета и страдания.

Совет петербургских армянских церквей».*

*) Ներքևում հայերեն թարգմանությունը թումանյանի ձեռագրով:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 102/7: ԹԹ, 3501:

Ապրիլի 13 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Նիկ. Աղբալյան, Դեր. Դեմիրճյան, Ան. Աբովյան:

Նախագահողը հիշեցնում է նախորդ նիստի որոշումը՝ Ծատուրյանի թաղումը կատարել միայն գրողների ընկերության միջոցներով: Սակայն «Մշակի», «Աղբյուր-Տարազի» խմբագրությունները և այլ ազգային հաստատություններ առաջարկում են ընդհանուր միջոցներով կազմակերպել հասարակական հուղարկավորություն: Ուստի ինքը այդ նպատակով հրավիրել է բոլոր ցանկացող հաստատությունների ժողով, որ վարչության լիազոր Աղանյանի հետ ուրիշ 4 հոգի ևս ընտրելով՝ այդ մասնաժողովին է հանձնել թաղման բոլոր կարգադրությունները:

Որոշում են ընդունել արված կարգադրությունները, հանձնարարել գանձապահին իբրև փոխառություն Աղանյանին ծախսերի համար տալ 300 ռուբլի:

Նախագահը առաջարկում է հրավիրել ընդհանուր ժողով, որտեղ կքննարկվեն նաև ընկերության կանոնադրության մի քանի կետերի վերանայման հարցը: Օրինակ՝ Ընկերության անվանումից հանել «Կովկասյան» բառը, թույլ տալ, որ Ընկերության անդամ լինի «գրականության նախանձախնդիր» ամեն մի անձ և այլն:

Կարգադրում են՝ 1) Ընդհանուր ժողովը նշանակել ապրիլի 22-ին. 2) հանձնարարել Գ. Աղանյանին և Ան. Աբովյանին կազմել ընդհանուր ժողովների ծախսերի նախահաշիվ. 3) կանոնադրության հիշյալ կետերի փոփոխության հարցը հանձնել ընդհանուր ժողովի տնօրինությանը. 4) բոլոր անդամակցել ցանկացողները պետք է դրվեն ընդհանուր ժողովի քվեարկության:

Նախագահը տեղեկացնում է, որ Թիֆլիսում հիմնադրվում է մի ընկերություն «Հայկազյան» անունով: Նպատակն է՝ ապահովել ու պաշտպանել գիտությունը, գրականությունը, գեղարվեստը, հիմնել

հայոց ակադեմիա և համալսարան: Ծանոթացնում է վճարովի կամ անվճար անդամագրվելու նախնական պայմաններին:

Կարգադրում են՝ գրողներից նոր ընկերությանն անդամագրելու թեկնածուները պետք է անցնեն ընդհանուր ժողովի քվեարկությանը:

Անդամագրվելու արժանի գրողների, գիտնականների, արվեստագետների ցուցակ կազմելու պատասխանատու գործին մասնակից դարձնել նաև «Մշակ», «Հորիզոն», «Արև», «Գործ» թերթերի խմբագրություններին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/5:

Ապրիլի 13 - Մամուլը հաղորդում է.

«Հայ գրողների ընկերության վաղվա հերթական երեկույթը նվիրված է լինելու Ալ. Ծատուրյանին: Նրա հիշատակին հարգանքի խոսք են ասելու հայ գրողները, հիմնարկությանց և ընկերությունների ներկայացուցիչները, որոնք թաղմանը չեն խոսել: Խոսք է տրվելու նաև բոլոր նրանց, որոնք կցանկանան հարգանքի խոսք ասել բանաստեղծի հիշատակին: Բոլոր խոսողներն էլ վաղօրոք հայտնելու են ընկերության նախագահ Հ. Թումանյանին: Երեկույթին երգվելու և արտասանվելու են Ալ. Ծատուրյանի բանաստեղծություններից»:

«Հորիզոն», 1917, թիվ 74:

Ապրիլի 14 - Տեղի է ունենում ՀԳԿԸ հերթական երեկույթը՝ նվիրված Ալ. Ծատուրյանի հիշատակին (տե՛ս ապրիլի 13):

Ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը, բացելով հանդեսը, Գրողների ընկերության կողմից վշտակցություն է հայտնում սիրելի բանաստեղծի մահվան առթիվ, նկարագրում է նրա չարքաշ օրերն ու ապրումները՝ ցանկանալով, որ ոչ մի հայ գրող այլևս այդպիսի անօրինակ զրկանքներով չի կենսագրություն չունենա:

Ս. Բերբերյանն իր ելույթում ներկայացնում է իր՝ Մոսկվայում եղած ժամանակ վաղամեռիկ բանաստեղծի կյանքն ու կենցաղը՝ ականատեսի վկայությամբ:

Օր. Ստեփանյանը դաշնամուրի նվագակցությամբ կատարում է «Մի լար բլբուլ» երգը: Լինում են այլ կատարումներ ևս:

Ն. Աղբալյանը կարդում է Ալ. Ծատուրյանի՝ Մոսկվայի հայ ուսանողական հայրենակցության հրատարակած բացիկի վրա տպված նրա շատ համառոտ կենսագրությունը:

Խոսք են ասում նաև Դ. Դեմիրճյանը, Բաշինջադյանը, Ֆետվաճյանը և ուրիշներ:

«Արև», 1917, թիվ 90:

Ապրիլի 16 - Տպագրում է («Հայաստան» օրաթերթ, Թիֆլիս, 1917, թիվ 1) «Հայաստանը պետք է խոսի» հոդվածը:

Գրում է, որ Հայաստան ասելով՝ ռուսահայերը սովորաբար հասկանում են Տաճկահայաստան: Բայց մինչև պատերազմը շատ քիչ բան են իմացել այդ Հայաստանի մասին: Եվ ինքը, որ երկու անգամ եղել է այնտեղ՝ նախ Ալաշկերտի հովտում, ապա Վանում, Վասպուրականում, Արածանիի հովտում, «մի տխուր զգացողություն», «մի խորին վիշտ» է ապրել, թե մենք ինչքան ենք տկար մեզ հասած աղետի հանդեպ, տկար ֆիզիկապես, նյութականապես ու բարոյապես:

«Հապա նրա՝ Հայաստանի հա՞րցը, հայկական հա՞րցը...

Եվ Հայաստանը գրեթե միշտ լռության է եղել դատապարտված ակամա: Ո՛չ նրա ցավն ենք կարողացել ճշմարիտ իմանալ, ո՛չ էլ ցանկությունը:

Հայաստանը պետք է խոսի վերջապես:

Բավական էր:

Եվ պետք է խոսի էնքան լուրջ ու զգաստ, ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողովուրդների մեջ, այլև էնքան հաստատուն ու բաց ճակատով կարող է խոսել մի ժողովուրդ, որ ապրել է մարդկային լավագույն ձգտումներով և ամեն ինչ տվել է ու կտա ապագա կյանքի համար»:

ԵԼԺ 7, 323-324:

Ապրիլի 20 - Ե. Ջարգարյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մեշեդիսեյից (Պարսկաստան) (տե՛ս նաև փետրվարի 20):

«Մեծապատիվ պարոն Հովհաննես Թումանյանց,

Թիֆլիսում

Անցյալներում (տե՛ս փետրվարի 20.- Խմբ.) փոստի փոխանակագրով 32 ռուբլի փող էի փոխադրել Ձեր հասցեով «Հասկեր» մանկ. ամսագրի և հեքիաթների գրքույկների համար: Ամսագրերը ստացված են, այնինչ գրքերը չենք ստացել:

Խնդրում եմ այդ առթիվ կարևորն կարգադրեցեք:

Անկեղծ հարգանքներով՝ Ե. Զարգարյան»:
ԳԱԹ ԹՖ, 1188 (326 լր.):

Ապրիլի 20 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:
Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:
Վարչության անդամներից ներկա են՝ Նիկ. Աղբալյան, Ան.

Աբովյան:

1. Նախագահողը տեղեկացնում է, որ արդեն հայտարարված է ամսի 22-ի ընդհանուր ժողովի (տե՛ս ապրիլի 13) մասին: Առաջարկում է կազմել անդամագրվել ցանկացողների ցուցակ:

Կարգադրում են՝ խնդրատու գրողների հայտերը քվեարկության դնել ընդհանուր ժողովում:

2. Աթաբեկ խնկոյանը նախագահի միջոցով դիմել է ընկերությանը՝ 300 ռ. նպաստի խնդրանքով:

Կարգադրում են՝ բավարարել խնկոյանի խնդրանքը՝ նպաստի գումարից հանելով ընկերությանը պարտք 50 ռուբլին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/6:

Ապրիլի 22 - Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում տեղի է ունենում ՀԳԿԸ տարեկան ընդհանուր ժողովը:*

Բացելով ժողովը՝ նախագահող Թումանյանը առաջարկում է հարգել ընկերության հանգուցյալ անդամներ Ալ. Ծատուրյանի, Փ. Վարդանյանի, Ս. Մանդինյանի հիշատակը:

Այնուհետև տեղի են ունենում ընտրություններ: Ընկերության նոր անդամներ են ընտրվում Ավ. Ահարոնյանը, Մ. Աբեղյանը, Ավ. Իսահակյանը, Ա. Տիգրանյանը, Զ. Եսայանը, Նար-Դոսը, Ստ. Կանայանը, Ա. Զիվելեզովը, Հովհ. Սպենդիարյանը և ուրիշներ:

*) Այս ժողովը, որ նախատեսված էր անցկացնել մարտի 5-ին, հետաձգվել էր անորոշ ժամանակով (տե՛ս մարտի 5, Թումանյանի «Էսօրվան ժողովի առթիվ» հոդվածի ծանոթագրությունը):

«Հորիզոն», 1917, թիվ 84: «Մշակ», 1917, թիվ 83:

Ապրիլի 22 - Հաղորդագրություն մամուլում:

Մի խումբ մտավորականներ և ազգային գործիչներ հրավիրում են «մեր կուլտուրայի զարգացմանը նախանձախնդիր ու կարող մարդկանց՝ հայտնի ունեորներին, գիտնականներին, գրողներին ու գեղարվեստագետներին գալ միանալ և կազմել մի ուժեղ ազգային միություն, մի մեծ ընկերություն»:

Ներկայացվում են ապագա ընկերության* նպատակներն ու խնդիրները՝ կազմել «Հայոց ակադեմիա, դնել հայկական համալսարանի հիմքը, զարգացնել հայագիտությունը, ուսումնասիրել հայոց աշխարհը, մեր հին ու նոր կյանքը, մեր գրականությունն ու գեղարվեստը և ապահով վիճակի մեջ դնել հայ գիտնականներին, գրողներին, գեղարվեստագետներին»:

Ընկերությունը հետևելու է մեր կուլտուրական հիմնարկությունների գործունեությանը և հարկ եղած դեպքում օգնելու:

Գործին մասնակցելու կոչ է արվում բոլոր ցանկացողներին:

Հաղորդագրությունն ստորագրել են՝ Կոստանդին Ալիխանյան, Հովհ. Թումանյան, Մ. Բերբերյան, Գևորգ Խատիսյան, Համբ. Մելիքյան, Փիլ. Վարդապարյան, Սիրական Տիգրանյան և ուրիշներ (20 հոգի):

*) Խոսքը Հայկազյան ընկերության մասին է:

«Հորիզոն», 1917, թիվ 81:

Ապրիլի 23 - Տեղեկատվություն մամուլում.

«Այսօր՝ ցեր. ժ. 1-ին Արտիստական ընկ. դահլիճում կայանալու է մի ժողով, կազմակերպելու և հիմնադրելու «Հայկազյան» անունով մի ընկերություն: Ժողովին հրավիրված են հայտնի ունևորներ, գիտնականներ, գրողներ և գեղարվեստագետներ: «Հայկազյան» ընկերությունը միտք ունի կազմել հայոց ակադեմիա, դնել հայկական համալսարանի հիմքը, զարգացնել հայագիտությունը և բազմակողմանի ուսումնասիրել մեր աշխարհը, մեր հին ու նոր կյանքը, մեր գրականությունն ու գեղարվեստը և ապահով վիճակի մեջ դնել հայ գիտնականներին, գրողներին ու գեղարվեստագետներին:

Միաժամանակ «Հայկազյան» ընկերությունը հետևելու է հայ կուլտուրական հիմնարկությունների գործունեությանը և նրանց օժանդակելու կարիք եղած ժամանակ»:

Նախաձեռնողների շարքում առաջիններից մեկը հիշվում է Թումանյանի անունը:

«Մշակ», 1917», թիվ 82:

Ապրիլի 23, Թիֆլիս - Տեղի է ունենում սահմանափակ թվով հրավիրված մարդկանց փակ նիստ՝ հիմնադրելու մի համազգային ընկերություն՝ «Հայկազյան» անունով:

Նիստի նախագահ Կ. Ալիխանյանը և Հովհ. Թումանյանը խոսում են ընկերության նպատակների և նշանակության մասին:

Մ. Բերբերյանը ծանոթացնում է ընկերության կանոնադրությանը: Ընկերությունը կառավարելու է մի վարչական մարմին՝ բաղկացած 18 հոգուց՝ ինը դրամատերեր և ինը գրողներ, գիտնականներ, արվեստագետներ: Գրողների, գիտնականների և արվեստագետների ցուցակը պետք է ներկայացնի Հայ գրողների ընկերությունը:

Ունևորները մշտական անդամակցության համար միանվագ պետք է վճարեն 5000 ռուբլի, պակաս ունևորները՝ 5800 ռուբլի՝ հինգ տարվա ընթացքում: Ներկաները ստորագրությամբ թիֆլիսի վաճառականական բանկ են դնում 100000 ռուբլի: Որոշվում է ստորագրահավաքը թիֆլիսում շարունակել:

Ժողովին ներկա ռուս պրոֆեսոր Բենեշկիչը ողջունում է ընկերության հիմնադրումը:

Նիստի մասնակիցները ընկերության հիմնադրման մասին հեռագիր են ուղարկում Ն. Մառին՝ խնդրելով նրա մոտիկ մասնակցությունը:

«Հորիզոն», 1917, թիվ 84:

Ապրիլի 23 - ՀԳԿԸ վարչության անունից նամակ «Մշակի» խմբագրությանը.

«Այս օրերս բացվելու է թիֆլիսում Հայկազյան անունով մի ընկերություն, որի նպատակն է պաշտպանել հայ գրականությունը, գիտությունն ու զեղարվեստը, կազմել հայոց ակադեմիա և հայոց համալսարանի հիմքը դնել: Ընկերության հիմնադիրներն են լինելու մի կողմից դրամատերեր և մյուս կողմից հայ գրողներ, գիտնականներ ու զեղարվեստագետներ: Դրամատերերը վճարելու են միանվագ 5000 ռուբլի, իսկ գրողները, գիտնականներն ու զեղարվեստագետները լինելու են այնպիսի անձեր, որոնց հեղինակությունը անվիճելի է լինելու ազգի ընդհանրության համար:

Հայ գրողների ընկերության վարչությունը, որին հանձնված է կազմել վերջինների ցուցակը, խնդրում է խմբագրությանդ օժանդակել այս կարևոր աշխատանքին և մի շաբաթվա ընթացքում ուղարկել մեզ այսպիսի անձերի մի ցուցակ:

Նախագահ՝ Հ. Թումանյան

Անդամ քարտուղար՝ Գյուտ ա. ք. Աղանյան»:

*) Այս բովանդակությամբ գրություններ ուղարկվում են նաև «Հորիզոն», «Արև» և «Գործ» պարբերականներին, բազմաթիվ կազմակերպությունների և ընկերությունների (տե՛ս մայիսի 22):

«Մշակ», 1917, թիվ 82:

Ապրիլի 23 - Գառնիկ Գյուզալյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Աշտարակից:

Հիշեցնում է. «Դուք Ձեր ուղարկած նամակով* շնորհավորեցիք տեղիս «Գրասիրաց ընկերության» բացումն: Միաժամանակ իմ խնդրանքը Դուք գրեցիք, որ կկարգադրեք ուղարկելու ինձ 30-ական օրինակ Ձեր ընկերության հրատարակություններից»: Խնդրում է ուղարկել՝ տարածելու համար:

*) Նամակն անհայտ է:

ԳԱԹ ԹՖ, 1088 (592):

Ապրիլի 24, Բաքու - «Գործ» ամսագրի խմբագրության գրությունը Թիֆլիս՝ ԶԳԿԸ վարչությանը.

«Ստացանք ձեր նամակը (տե՛ս ապրիլի 23), որով խնդրում եք հայտնել Ձեզ այն գրողների, գիտնականների և արվեստագետների անունները, որոնք մեր կարծիքով կարող են ճանաչված լինել ազգի ընդհանրության կողմից:

Այդ հարցին պատասխանելու համար խմբագրության ժողով տեղի ունեցավ ապրիլի 23-ին: Ժողովին մասնակցում էին 12 անդամ:

Ահավասիկ այդ ցանկը:

Վիպասաններ – Շիրվանզադե (միաձայն), Նար-Դոս (10 ձայն), Փափազյան (10 ձայն):

Բանաստեղծներ – Ավ. Իսահակյան (միաձայն), Հովհ. Թումանյան (միաձայն), Դ. Դեմիրճյան (միաձայն), Հովհ. Հովհաննիսյան (միաձայն), Վահան Տերյան (11 ձայն):

Հրապարակագիրներ – Լեո (միաձայն), Մ. Վարանդյան (միաձայն), Գր. Չալխուշյան (8 ձայն), Ավ. Շախխաթունյան (6 ձայն):

Քննադատներ – Ն. Աղբալյան (միաձայն), Ս. Հակոբյան (միաձայն):

Բանասերներ – Մանուկ Աբեղյան (միաձայն), Ստեփան Մալխասյան (միաձայն), Ն. Աղոնց (միաձայն), Հրաչյա Աճառյան (միաձայն), Միաբան (միաձայն), Կ. Կոստանյան (10 ձայն), Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյան (8 ձայն), Վ. Ամատունի (7 ձայն):

Ազգագրագետ – Ե. Լալայան (միաձայն):

Ճարտարապետ – Թորամանյան (միաձայն):

Նկարիչներ – Փ. Թերլենեզյան (միաձայն), Բաշինջադյան (միաձայն):

Արձանագործներ - Ա. Տեր-Մարության (միաձայն), Յ. Գյուրջյան (7 ձայն):

Երաժիշտներ – Ռոմանոս Մելիքյան (միաձայն), Գ. Միրզայան (7 ձայն), Եղիշե Բաղդասարյան (8 ձայն), Կոմիտաս վարդապետ (միաձայն), Տիգրանյան (կույր) (7 ձայն), Սպենդիարյան (8 ձայն):

Տնտեսագետ – Տոտոմյան (միաձայն):

Իրավագետ – Ղամբարյան (միաձայն):

Դերասաններ – Սիրանույշ (միաձայն), Աբելյան (միաձայն), Ջարիֆյան (միաձայն), Մայսուրյան (7 ձայն), Ավետիսյան (7 ձայն), Արմենյան (6 ձայն), Իսահակ Ալիխանյան (6 ձայն):

«Բանասերներ» բաժնից հետո ժողովի անդամների թիվը երկուսով պակասեց. Ե. Լալայանի քվեարկման ժամանակ և այնուհետև ժողովին մասնակցում էին 10 հոգի»:

Խմբագրության կողմից գրությունն ստորագրել է Սիմոն Հակոբյանը:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/6:

Ապրիլի 25, Թիֆլիս - ՀԳԿԸ վարչության անունից գրություն Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյանին.

«Վարչությունն սրանով հայտնում է Ձեզ, որ ընկերությանս ընդհանուր ժողովը, համաձայն իր կանոնադրության 4-րդ հոդվածի, գաղտնի քվեարկությամբ ընտրեց Ձեզ Ընկերության անդամ:

Վարչության նախագահ՝ Հ. Թումանյան

Անդամ քարտուղար՝ Գյուտ ք. Աղանյան»:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 40:

Ապրիլի 26 - Հաղորդագրություն Հայկազյան ընկերության հիմնադիր ժողովի (տե՛ս ապրիլի 23) մասին:

«Հորիզոն», 1917, թիվ 84:

Ապրիլի 26 - Հաղորդագրություն ՀԳԿԸ տարեկան ժողովի (տե՛ս ապրիլի 22) մասին:

«Հորիզոն», 1917, թիվ 84:

Ապրիլի 26 - Հայ արվեստագետների միության գրուքյունը
ՀԳԿԸ վարչությանը.

«Ի պատասխան Վարչությանդ մեր խորհրդին ուղղած գրու-
քյան (տե՛ս ապրիլի 23), որով նորակազմ Հայկազյան ընկերության
պետքերի համար խնդրում եք ուղարկել Ձեզ հայ գեղարվեստա-
գետների մի ցանկ, որի մեջ մտնեն ընկերության կողմից անվիճելի
համարվող արվեստագետները, խորհուրդս հարմարագույն համա-
րեց ուղարկել Ձեզ ըուրր իրեն ծանոթ արվեստագետների անուն-
ները՝ ընտրության գործը թողնելով Վարչությանդ:

Վարդես Սուրենյանց – Պետրոգրադ, Վարդան Մախոխյան –
Բեռլին, Էդգար Շահին – Պարիս, Եղիշե Թադևոսյան – Թիֆլիս,
Գևորգ Բաշինջաղյան – Թիֆլիս, Փանոս Թերլեմեզյան – Թիֆլիս,
Արշակ Ֆետվաճյան – Թիֆլիս, Մարտիրոս Սարյան – Նոր Նախի-
ջևան, Դավիթ Օքրոյան – Պետրոգրադ, Սարգիս Խաչատուրյան –
Թիֆլիս, Հակոբ Գյուրջյան – Պարիս – Մոսկվա, Անդրեաս Տեր-Մա-
րության – Պարիս, Թորոս Թորամանյան - Ալեքսանդրապոլ, Շարլ
Ադամյան – Պարիս, Փուշմանյան – Նյու-Յորք, Լևոն Հազարապետ-
յան – Էջմածին, Գրիգոր Շարբաբջյան – Թիֆլիս, Հմայակ Արծաթ-
բանյան – Նոր Նախիջևան, Գարեգին Լևոնյան – Թիֆլիս, Հմայակ
Հակոբյան – Թիֆլիս, Վրթանես Ախիկյան – Թիֆլիս, Ստեփան
Գաբաև - Թիֆլիս, Սարգիս Երկանյան – Թիֆլիս, Միքայել Միքայել-
յան – Թիֆլիս, Ալեքսանդր Միրզոյան – Թիֆլիս, Խ. Աղաջանյան –
Նոր Նախիջևան, Հովհ. Ալխազյան – Պարիս, Ս. Առաքելյան – Մոսկ-
վա, Լազար Արտազյան – Թիֆլիս, Նինա Բեհբուտյան – Թիֆլիս,
Համբարձումյան – Նոր Նախիջևան, Վահրամ Գայֆեճյան - Ախալց-
խա, Գրիգորյան – Պոլիս, Գ. Կեպինյան – Թիֆլիս, Հովհաննիսյան –
Նոր Նախիջևան, Զապել Պոյաճյան – Լոնդոն, Սոֆիա Գևորգյան –
Մոսկվա-Հոլանդ, Տեր-Առաքելյան – Թիֆլիս, Ա. Թեզոյան – Մոսկվա,
Արսեն Շահնազյան – Թիֆլիս, Ս. Յակուլով – Մոսկվա, Տարագրոս –
Պետերբուրգ, Մ. Արեսալունյան – Թիֆլիս, Դավիթ Ջեռլյան – Թիֆլիս,
Գաբրիել Տեր-Միքայելյան – Թիֆլիս, Քրիստափոր Տեր-Սարգսյան –
Թիֆլիս, Ռուբ. Օգանեզյան – Թիֆլիս, Կարբոնիել Բաբայան – Պա-
րիս, Օր. Արղության – Թիֆլիս, Միքենեճյան – Մոսկվա, Օր. Դեր-
ձակյան – Մյունխեն, Հորչոփ - Նախիջևան, Քյուրքճյան – Մոսկվա,
Դեմիրճյան – Կահիրե, Պ. Ղամբարյան – Թիֆլիս, Զաքարյան –
Պարիս, Հոպանյան – Պարիս, Նշանյան – Պարիս, Ե. Նազարյան –
Ալեքսանդրապոլ, Թամանյան – Պետրոգրադ, Զուրաբյան – Թիֆլիս,

Թահտաճյան – Պոլիս, Թերզյան – Պոլիս, Ազնավոր – Պոլիս, Լևոն Կյուրեղյան – Վենետիկ, Ռուբեն Մարտիրոսյան – Թիֆլիս, Յովի. Քաջազնունի – Թիֆլիս, Բաբանյան – Պոլիս, Միք. Խոնունց – Թիֆլիս, Եղիսաբեթ Պատկանյան – Թիֆլիս, Ռաֆ. Շիշմանյան – Պարիս, Օննիկ Փոտատյան – Պոլիս, Օհանջանյան – Թիֆլիս, Իրանյան – Պարիս:

Ընդամենը 75 հոգի, որոնցից ներկայումս Թիֆլիսում են գտնվում 30-ը:

Խորհրդի անդամ քարտուղար՝

Գարեգին Լևոնյան»:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/1:

Ապրիլի 27 – Թիֆլիսի քաղաքային դումայի նիստերի դահլիճում տեղի է ունենում ՅԳԿԸ տարեկան ընդհանուր ժողովը:*

Թումանյանը տեղեկացնում է, որ նախորդ ընդհանուր ժողովում (տե՛ս ապրիլի 22) և այսօրվա ժողովից առաջ գաղտնի քվեարկությամբ ընկերությունը համալրվել է 47 նոր անդամներով: Այս առաջարկում է ընտրել ժողովի նախագահ** և քարտուղար: Նախագահ է ընտրվում Մ. Աբեղյանը, քարտուղար՝ Ս. Եսայանը:

1.Վարչության քարտուղարը կարդում է նախագահի հանգամանալից գրավոր տեղեկագիր-զեկույցը ընկերության 1914-1916 թթ. գործունեության մասին.

«Վարչության կազմը

1.Յովհաննես Թումանյան (նախագահ)

2. Առաքել Բաբախանյան

3. Մինաս Բերբերյան (փոխնախագահ)

4. Աշոտ Փանասյան

5. Գյուտ ա. ք. Աղանյան

6. Արշակ Յարությունյան

7. Անուշավան Աբովյան (գանձապահ)

8. Նիկողայոս Աղբալյան

Այդ կազմը պաշտոնավարեց 1914 թ. հունվարից մինչև մույն թվի հունիսի 1-ը: 1915 թ. մարտի 18-ին վարչությունից հրաժարվեց պ. Առաքել Բաբախանյանը, իսկ հունիսի 1-ին հերթով դուրս եկան պ. պ. Յովի. Թումանյան, Ա. Փանասյան, Մ. Բերբերյան և Արշ. Յարությունյան, և մույն օրվա ընդհանուր ժողովում ընտրվեցան վարչության անդամներ՝ Յ. Թումանյան, Մ. Բերբերյան, Դերենիկ Դեմիրճ-

յան, Անուշավան Աբովյան (գանձապահ), Արշակ Ղազարյան, և փոխանդամներ Աշոտ Աթանասյան և Արշակ Չարությունյան:

Վարչությունը 1914 հունվար 9-ից մինչև 1916 դեկտեմբերի 18-ը ունեցել է մի քանի նիստ (1914 – 32, 1915 – 9, 1916 – 16):

Նիստերին վարչության անդամները ներկա են եղել՝ Հ. Թումանյան՝ 55 անգամ, Գյուտ ա. ք. Աղանյան՝ 57, Ան. Աբովյան՝ 44, Մին. Բերբերյան՝ 43, Նիկ. Աղբալյան՝ 26, Դեր. Դեմիրճյան՝ 20, Առ. Բախսանյան՝ 19, Աշ. Աթանասյան՝ 18, Արշ. Ղազարյան՝ 14, Արշ. Չարությունյան՝ 10:

Գրական երեկույթներ

1914 թ. ընկերության երեկույթները շարունակվեցին սովորական կերպով, ու մինչև մայիս տեղի ունեցան հետևյալ դասախոսությունները՝

Հունվար՝ 2. Զրույց - Բանակոճվը մամուլի մեջ, 9. Մ. Մատենճյան - Գ. Սունդուկյանի «Պեպոն», 16. Պ. Մակինցյան - Ալ. Ծատուրյանի մասին, 23. Թ. Թորամանյան – Հայ ճարտարապետության ընդհանուր տեսություն, 30. Գ. Լևոնյան – Հայ աշուղական երգերը:

Փետրվար 6. Գ. Իփեկյան - Ա. Զոպանյան և իր երգերը, 27. Սոֆիա Դանիելբեգյան, Հովհ. Թումանյան, Մ. Բերբերյան, Լեո և Աթանասյան – Հայ կնոջ դերը գրականության մեջ:

Մարտ 6. Ծուլուկիձե - Վրաց գրականության մասին, 20. Ն. Աղբալյան – Հայ գրականության ապագան, 17. Արշ. Չարությունյան – Հայ կուլտուրայի ապագան:

Ապրիլ՝ 10. Մ. Մատենճյան – Շիրվանզադեի «Պատվի համար»-ը, 17. Մ. Մատենճյան – Պետրոս Դուրյանի մասին, 24. Դ. Դեմիրճյան – Հայոց գրականության լեզուն:

Մայիս՝ 1. Վ. Վալադյան – Ֆ. Դոստոևսկու մասին, 8. Ն. Աղբալյան – Ընդհանուր հայացք հայ գրականության վրա, 22. Գուլոյան – Պարսկական գրականության մասին:

Սակայն այդ ընթացքում բռնկեց համաշխարհային պատերազմը, ու ընկերությունս, ուրիշ շատ նման հաստատությունների հետ, ստիպված եղավ ընդհատել առժամանակ իր գործունեությունը, և վարչությունս, ինչպես և ընկերությանս անդամներից շատ շատերը, տարվեցին հայ ժողովրդի աղետի հետ կապված գործերով:

Այդ շրջանում վարչությունը ունեցել է միայն մի քանի դասախոսություններ, այն է՝ ռուս նշանավոր բանաստեղծ Վալ. Բրյուսովի

երկու երեկոյները, Նալբանդյանի և Շեքսպիրի ու Սերվանտեսի հիշատակին նվիրված դասախոսությունները:

1916 թվի սեպտեմբերից արդեն վարչությունս հնարավոր համարեց վերսկսել իր կանոնավոր գործունեությունն ու միաժամանակ գրական երեկոյները երաժշտական դահլիճում, ուր մինչև 1916 թ. դեկտեմբերի վերջը տեղի ունեցան հետևյալ դասախոսությունները՝

Հոկտեմբեր՝ 7. Ջապել Եսայան և Մ. Մատենճյան – պոլսահայ գրողներ Սիամանթոյի և Ջոիրապի մասին, 14. Մանուկ Աբեղյան – Հայոց հին բանաստեղծությունը, 21. Հ. Հովհաննիսյան – Հայ պատմիչների պատմաաշխարհայացքը, 28. Մ. Մատենճյան – Պառնասյան ուղղությունը ֆրանսիական գրականության մեջ:

Նոյեմբեր՝ 4. Մ. Աբեղյան - Գրիգոր Նարեկացի, 11. Բժ. Բոնապարտյան – Տաճկահայոց կյանքը մինչև ներկա պատերազմը, 18. Սուրխաթյան – Հայ հեթանոսները, 25. Հովհ. Թումանյան – Հայոց գրական լեզվի մասին:

Դեկտեմբեր՝ 2. Թումանյանի դասախոսության շարունակությունը, 8. Հովսեփ Տեր-Դավթյան – Հայ ժողովրդական երգերի նշանակությունը մեր կյանքում, 16. Ի. Նակաշիժե - Վրաց բանաստեղծության մասին, 23. Ա. Ջամալյան – Շանթի կյանքը, 28. Կ. Միքայելյան – Որբերի աշխարհում, 30. Սուրխաթյան – Հայոց նորագույն բանաստեղծությունը:

Երեկոյները ավելի մեծ չափով մատչելի անելու նպատակով վարչությունը կարգադրեց 30 ձրի տեղ հատկացնել մեր տաճկահայ գաղթական մտավորականներին և որոշ չափով աժամացրած տոմսեր տալ Ներսիսյան և Հովնանյան դպրոցների բարձր դասարանների աշակերտ-աշակերտուհիներին:

Դահլիճի ընդարձակությունը հնարավորություն տվեց վարչությանս դասախոսությունների վարձատրությունը բարձրացնել մինչև 50 ռուբլի:

Հրատարակություններ

1. Դեռ անցյալ ընդհանուր ժողովում ընդունվեց վարչության առաջարկը՝ հրատարակելու «Դիվան Հայոց գրականության» անունով ժողովածուի շարք, ուր պիտի մտնեն մեր գրողների նամակներ, հիշատակարաններ և ուրիշ գրվածքներ: Այդ հրատարակության իրագործման համար վարչությունս առանձին մասնաժողովների ձեռքով աշխատել է նյութեր պատրաստել: Առաջին երկու տարին հնարավոր չեղավ այդ հրատարակությունները գլուխ բերել, որով-

հետև ծայրահեղ թանկության հետ քաղաքում մինչև իսկ չգտնվեց կարևոր քանակությամբ հարմար թուղթ այդ գործի համար: Իսկ այժմ, երբ արդեն թղթի պաշարը երևան է եկել շուկայում, վարչությունն հնարավոր գտավ սկսել նյութերի տպագրությունը: Տպագրությունը կատարվում է առանձին մասնաժողովի հսկողությամբ:

2. Վարչությունն որոշել է հրատարակել իր պարբերական թերթը, որի համար նույնպես պատրաստություններ է տեսնում:

3. Ընկերությանն երեկոյթներին կարդացված դասախոսությունները հասարակությանը մատչելի անելու նպատակով ձեռնարկել է հետզհետե լույս ընծայել այդ դասախոսությունները, որոնցից արդեն լույս են տեսել Ջապել Եսայանի, Մանուկ Աբեղյանի դասախոսությունները, և հետզհետե պիտի հրատարակվեն մյուսները:

Արևմտահայ գրողներին և մտավորական գործիչներին նպաստ

Արևմտահայ փախստականների գլխավոր լիազոր գեներալ Թամամշյանի կարգադրությամբ վարչությանն հանձնվեց տասը հազար ռուբլի՝ փոխարինաբար բաժանելու արևմտահայ կարոտավոր գրողներին ու մտավորական գործիչներին: Փոխառությունը, որ նպաստի ձև ունի, տրվում է 6 տոկոսով, 8 տարի ժամանակով, որից հետո պիտի վերադարձվի կառավարության:

Վարչությունն բարվոք համարեց մամուլի միջոցով հրավեր կարդալ այդպիսիներին, որ իրենք խորհրդակցելով որոշեն, թե որոնց են իրենք համարում գրող և մտավորական գործիչ, և զեկուցանեն վարչության:

Արևմտահայ մտավորականները մասնաժողովներ կազմեցին Թիֆլիս և Երևան և իրանց ներկայացուցիչների միջոցով ներկայացրին վարչությանն իրանց գրողների և մտավորական գործիչների ցուցակներ, որոնց հիման վրա էլ վարչությունն սկսել է արդեն բաշխել կառավարությունից ստացած գումարը և հետզհետե հաշիվ ներկայացնել գեներալ Թամամշյանին:

Դիմում պետություններին

Վարչությունն, տեղեկանալով հեռագիրներից, որ Վանի, Էրզրումի և Կիլիկիայի հայ ժողովրդին կոտորում են ու աքսորում և ամեն տեսակ բարբարոսությունների ենթարկում, հեռագիրներով խնդրեց չեզոք պետությունների ազդեցիկ լրագիրների խմբագրություններին, որ իրենք իրենց հայտ բարձրացնեն հոգուտ հայ ժողովրդի և միջոցներ գործ դնեն վերջ տալու նրանց հալածանքներին:

Այդ հեռագիրներից Ամերիկայինը վերադարձրել են մի թյուրիմացությամբ, իսկ մյուս երկիրների խմբագրությունները խոսել են այդ մասին իրենց թերթերում:

Սայաթ-Նովայի արձանի բացումը

Սայաթ-Նովայի արձանը պատրաստվեց, և վարչությունս մեծ հանդեսով կատարեց մշանավոր բանաստեղծի արձանի բացման հանդեսը կաթողիկե Ս. Պետրոս եկեղեցու բակում խումբ բազմության ներկայությամբ:

Մասնակցություն հասարակական հանդեսներին

Վարչությունս մասնակցել է հետևյալ հասարակական հանդեսներին՝

ա. Շնորհավորել է Հայոց պատմական և հնագիտական ընկերության բացումը:

բ. Ողջունել է Բաքվի Հայ գրասերների ընկերության բացումը:

գ. Խ. Հարությունյանի, դերասան Աղայանի, Միկ. Սինանյանի հոբելյաններին՝ իր ներկայացուցիչներով:

դ. Մասնակցել է Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին ողջերթ մաղթելու հանդեսին:

ե. Կայսեր և կաթողիկոսի ընդունելության հանդեսներին:

զ. Ակ. Ծերեթելու, Սենկևիչի և Թառայանի թաղմանը՝ պատգամավորներով և հեռագրով:

Շնորհալի որբերի որդեգրում

Վարչությանս անդամները վերջին երկու տարում մոտ շփում ու մասնակցություն ունեին Տաճկաստանի սարսափներից փախած որբերի խնամատարությանը նվիրված հաստատություններին, ծանոթ էին արդեն, որ այդ որբերի մեջ կան այնպիսի շնորհալիներ, որոնք, լավագույն հոգացողությամբ, կարող էին ապագայում ույժեր դառնալ հայ գրականության համար: Այդ բանին վարչությունս առավել հավաստիացավ Կարեն Միքայելյանի՝ հայ որբերի մասին արած դասախոսությունից, որից հետո որոշեց այդպիսիների ապագան ապահովելու համար ֆոնդ կազմել և նրանց առնել իր պաշտպանության տակ:

Վարչությանս՝ այդ մասին արած ծանուցումը արձագանք գտավ հասարակության կողմից, և սկսել են արդեն նվերներ ստացվել այդ նպատակով»:^{***}

Այնուհետև ընկերության գանձապահը ներկայացնում է նշված ժամանակահատվածում ընկերության ֆինանսական մուտքերի ու ծախսերի հաշվետվությունը:

Սկսվում է մտքերի լայն փոխանակություն հատկապես ընկերության դրամական եկամուտների ու ծախսերի շուրջ:

Գ.Լևոնյանը ուզում է իմանալ, թե ովքեր են եղել նպաստ ստացողները: *Թումանյանը* պատասխանում է, որ ընդհանուր ժողովի հրահանգի համաձայն՝ ինքը իրավունք չունի հայտնելու: *Լևոնյանին* հետաքրքրում է, թե ինչով է պայմանավորված, որ նպաստառուներից մեկը շատ է ստանում, մյուսները՝ անհամեմատ քիչ: *Թումանյանը* բացատրում է, որ վարչությունը ոչ մի դիմողի չի մերժել, ամեն մեկն ստացել է, որքան իրեն հարկավոր է: Բացի դրանից, համաձայն ընդհանուր ժողովից ստացած մանդատի, վարչությունը նպաստների չափը որոշելիս հաշվի է առնում նաև խնդրատուի գրական արժանիքը:

Ի պատասխան բժ. *Աղասարյանի* դիտողությանը, թե նպաստի առավելագույն չափը՝ 500 ռ., շատ է, *Թումանյանը* ուշադրություն է հրավիրում ներկա տնտեսական ճնշիչ պայմանների և ռուբլու արժեզրկվածության վրա:

Ս. Աբեղյանը հետաքրքրվում է, թե ինչու հաշվետվության մեջ խոսք չկա գրքերի տպագրությունից ստացված մուտքերի մասին: *Թումանյանը* բացատրում է, որ Սայաթ-Նովայի գրքերը գտնվում են «Գիր» գրախանութում, դրանց վաճառքից ստացված գումարը կարտահայտվի հաջորդ տարվա բալանսի մեջ:

«Արև» բանկի անդամ *Յ. Սպանյանը* դիտում է, թե վարչությունը թերացել է փոխարինաբար տրված գումարները վերադարձնելու գործում: *Թումանյանը* բացատրում է, թե պատերազմի առաջ բերած հանգամանքները նկատի ունենալով՝ վարչությունը ներողամիտ է գտնվել դեպի պարտապանները:

Սատենճյանը նկատում է, որ դասախոսությունների ժամանակ աֆիշների, հայտարարությունների և այլ կողմնակի ուղղություններով ավելի շատ գումար է ծախսվում, քան տրվում է դասախոսներին: *Թումանյանը* բացատրում է, թե 1914 թ. Սայաթ-Նովայի շրջանն էր, ուստի աշուղներին հատկացված գումարը դասախոսներից մի փոքր ավելի է եղել: Երեկոյանների համար ավելի ընդարձակ դահլիճներ ձեռք բերելու հետ ավելացել է նաև դասախոսությունների վճարը: Հայտնում է նաև կամավոր նվիրատվություն-

ներից գոյացած նոր ֆոնդերի մասին: Նկատի ունենալով արված դիտողությունը՝ վարչությունը կաշխատի այլևս մեծ գումարներ չծախսել հայտարարությունների ու գովազդների համար:

Վերջիվերջո ժողովը հաստատում է վարչության ներկայացրած տեղեկագիրն ու հաշվետվությունը և անցնում դասախոսությունների հարցին:

Արտահայտվում են Վ. Տերյանը, Մ. Մատենճյանը, Ստ. Կանայանը, Պարզյանը, Մ. Աբեղյանը: Բարձրացնում են դասախոսությունների բովանդակության, կազմակերպման եղանակների ու ձևերի, դասախոսների ու նրանց ընդդիմախոսների ընտրության, բանավեճերի անցկացման հետ կապված հարցեր:

Թումանյանը բացատրություններ է տալիս արված դիտողությունների վերաբերյալ: Այն դիտողությանը, թե ընդդիմախոսները հաճախ պատահական և անիրազեկ մարդիկ են, պատասխանում է, թե պատրաստված ընդդիմախոսներ գտնելը հաճախ վարչության համար դժվարություններ է ստեղծում՝ կապված նաև նրանց վարձատրության հետ՝ նկատի ունենալով ընկերության սուղ միջոցները: Անդրադառնալով այն դիտողությանը, թե դասախոսությունները որոշակի սիստեմի չեն ենթարկված՝ դարձյալ մեջտեղ է բերում դրամական միջոցների սղության խնդիրը, որի հետևանքով վարչությունը ստիպված է լինում հատուկ համակարգված դասախոսություններ պատվիրելու փոխարեն հարմարվել դասախոսների նախասիրություններին: Ինչ վերաբերում է այն առաջարկին, թե բացի մեծ լսարանի համար կազմակերպվող դասախոսություններից, պետք է կազմակերպվեն նաև միայն վարչության անդամների համար հատուկ դասախոսություններ, տեղեկացնում է, որ վարչությունը այդպիսի մտադրություն ունեցել է, բայց հնարավոր չի եղել իրագործել համապատասխան դահլիճ չգտնելու, ինչպես նաև հին ռեժիմի ժամանակ եղած այլևայլ դժվարությունների պատճառով: Չի շրջանցում նաև վճարող անդամների փոքր քանակը, քանի որ դասախոսները խուսափում են անվճար խոսելուց: Եվ վերջապես ընկերությանը և վարչությանը չի կարելի ծանրաբեռնել հաճախակի միջոցառումներով, քանի որ ներկա հանգամանքների պատճառով բոլորն էլ բազմազբաղ են:

Առաջարկ է եղել, որ ընկերությունը դասախոսություններ կազմակերպի նաև գավառներում: Թումանյանը բացատրում է, որ դա նախ կապված է մեծ ծախսերի հետ, որ ընկերությունը ի վիճակի չէ

հոգալ: Բացի դրանից դասախոսները մեծ մասամբ ուսուցիչներ են, որ հնարավորություն չունեն, Թիֆլիսից բացակայելով, թողնել իրենց ուսումնական զբաղմունքները:

Անդրադառնալով դասախոսությունների ներքին կազմակերպվածության հարցին՝ բացատրում է՝ նախ՝ վարչությունն անկարող է այդ նպատակով առանձին վարձատրությամբ պաշտոնյաներ պահել, որոնց փոխարինում են Ներսիսյան դպրոցի բարձր դասարանների աշակերտները, և երկրորդ, գլխավորը՝ վերջերս հայ հասարակության մեջ նկատվում է մի արտասովոր հետաքրքրություն դեպի մայրենի գրականությունը, ուստի երեկույթներին ամեն անգամ լինում է այնպիսի խումբ բազմություն, որ երաժշտական դպրոցի դահլիճը չի կարողանում բոլորին տեղավորել:

Գեներյանի հարցապնդմանը՝ ֆուտուրիզմի մասին իր դասախոսության վերաբերյալ, պատասխանում է, որ այդ դասախոսությունը մերժել է վարչությունը:

Թումանյանի բացատրություններից հետո խոսում են *Ն. Աղբալյանը, Ն. Սարգսյանը, Դ. Սպենդիարյանը, Ստ. Լիսիցյանը, Մ. Մատենճյանը, Սոֆիա Դանիել-Բեկը, Ս. Եսայանը, Գ. Քալաշյանը, Ստ. Կանայանը, Ստ. Զորյանը:*

Նախագահողն ամփոփում է քննարկումը: Ժողովն ընդունում է հետևյալ բանաձևը:

1) Վարչությունը, ի կատարումն նախկին որոշման, պետք է կազմակերպեր, բացի հրապարակական դասախոսություններից, նաև գրական-գիտական բովանդակության զրույցներ առնվազն ամիսը մի անգամ, հատկապես ընկերության անդամների համար:

2) Ընդհանուր ժողովը հանձնարարում է վարչությանը աշխատել այսուհետև անել հրապարակային դասախոսություններ ըստ կարելույն որոշ սխտեմով, լուրջ հսկողություն սահմանել կարգապահության վրա ընկերության երեկույթների օրերը:

3) Ընդհանուր ժողովը ցանկություն է հայտնում, որպեսզի վարչությունը աջակցի ըստ ամենայնի այն գավառական գործընկերներին և մարմիններին, որոնք կնախաձեռնեն դասախոսություններ կազմակերպել գավառական քաղաքներում:

Օրակարգի մնացած հարցերի քննարկումը հետաձգվում է Ժամանակի ուշ լինելու պատճառով:

*) Ապրիլի 22-ի ժողովի շարունակությունն է:

**) Թումանյանն ինքը ժողովին զեկույց պիտի տար ընկերության 1914-1916 թթ. գործունեության մասին:

***) Ձեկույցի տեքստը՝ Թումանյանի ձեռագրով, տե՛ս ԳԱԹ ՀԳԿԸՖ, 39: ԹԹ, 3427:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/7:

Ապրիլի 27 - Նամակ-դիմում Թումանյանին.

«Հարգելի պ. Հովհ. Թումանյան,

Ցանկանալով անդամագրվել Հայ գրողների ընկերության, խնդրում եմ այսօրվա ժողովում ինձ քվեարկեք:

Ես աշխատակցել եմ և շարունակում եմ աշխատակցել «Հորիզոն», «Ժայռ», «Համբավաբեր», «Պատանի», «Գեղարվեստ», «Շողեր» պարբերականներին և հանդեսներին:

Հարգանք՝ Անուշ (Նիկողայոս Քալաշյան)»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 99/53: ԹԹ, 3502:

Ապրիլի 27 - Տպագրվում է («Մշակ», 1917, թիվ 82) նամակ խմբագրության.

«Թիֆլիս, 20 ապրիլի

Այս օրերս բացվել է Թիֆլիսում Հայկազյան անունով մի ընկերություն, որի նպատակն է պաշտպանել հայ գրականությունը, գիտությունն ու գեղարվեստը, կազմել հայոց ակադեմիա և հայոց համալսարանի հիմքը դնել: Ընկերության հիմնադիրներն են լինելու մի կողմից դրամատերերը և մյուս կողմից հայ գրողներ, գիտնականներ ու գեղարվեստագետներ: Դրամատերերը վճարելու են միանվագ 5000 ռուբլի, իսկ գրողները, գիտնականներն ու գեղարվեստագետները լինելու են այնպիսի անձինք, որոնց հեղինակությունը անվիճելի է լինելու ազգի ընդհանրության համար:

Հայ գրողների ընկերության վարչությունը, որին հանձնարարված է կազմել վերջինների ցուցակը, խնդրում է խմբագրությանդ օժանդակել այս կարևոր աշխատանքին և մի շաբաթվա ընթացքում ուղարկել մեզ այսպիսի անձերի մի ցուցակ:

Նախագահ՝ *Հ. Թումանյան*

Անդամ քարտուղար՝ *Գյուտ ա. ք. Աղանյան*»:

Ապրիլի 27 - Տեղի է ունենում ՀԳԿԸ տարեկան ժողովի (տե՛ս ապրիլի 22) շարունակությունը:

Նախագահում է Մ. Աբեղյանը:

Ժողովին տեղյակ է պահվում, որ նախապես ծրագրված «Դիվան Հայոց գրականության» հատորի հրատարակությունը չի իրականացել տեխնիկական պատճառներով:

Թումանյանը՝ որպես ընկերության նախագահ, զեկույց է ներկայացնում երեկոյաներին կարդացված դասախոսությունների մասին:

«Հորիզոն», 1917, թիվ 86:

Ապրիլի 28, Քաքու - Հայ գրասերների ընկերության գրությունը ՀԳԿԸ «արգո» վարչությանը.

«Հայ գրասերների ընկերության խորհուրդը, ելության առնելով վարչությանը գրությունը (տե՛ս ապրիլի 23) Հայկազյան ընկերության հիմնադիր անդամների ցուցակի մասին, որոշեց ոչ մի ցուցակ չներկայացնել՝ միանգամայն վստահելով Հայ գրողների ընկերությանը:

Խորհուրդը իր ջերմ գոհունակությունն է հայտնում վարչությանը և առանձնապես նրա հարգելի նախագահ Հովհ. Թումանյանի նախաձեռնությամբ հիմնված Հայկազյան ընկերության ծրագրի առթիվ և անսայթաք հաջողություն է ցանկանում այդ հայօգուտ գործին, որ հուսով ենք՝ նոր դարագլուխ է կազմելու հայկական մշակույթի պատմության մեջ:

Նախագահ խորհրդի՝ Տ. Հովհաննիսյան

Քարտուղար՝ Տոլ. Խանգադյան»:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/2:

Ապրիլի 28, Թիֆլիս - Հայ Դրամատիկական ընկերության խորհրդի պաշտոնական գրությունը Թումանյանին:

Ծավալուն գրության սկզբում խոսվում է ազգերի հասարակական, բարոյական, մշակութային կյանքում թատրոնի դերի ու մշակութային մասին:

Ապա ներկայացվում է հայ թատրոնի ներկա վիճակը՝ ծանրանալով այն հանգամանքի վրա, որ սեփական շենք չունենալու պատճառով նա մեր ժողովրդի կյանքում չի կարողանում կատարել այն դերը, ինչին ընդունակ է իր դերասանական կարող ուժերի շնորհիվ:

Եվ վերջում. «Հայ դրամատիկական ընկերությունն իր բարոյական պարտականությունն է համարում խոսել այս մասին և, վերջապես, գտնել միջոց ազգային գեղարվեստի այս անոթալի կացությանը վերջ տալու:

Ահա այս նպատակով դիմում ենք Ձեզ, մեծարգո պարոն, իբրև թատրոնի բարձր արժեքը գիտցող և իբրև ազգային լուսավորության և պատվասիրության նախանձախնդիր մի անհատի, խնդրելով Ձեզ շնորհ բերել ամսույս 30-ին՝ ցերեկվա 12 ժամին կայանալիք ժողովին, ուր պետք է քննվի ազգային թատրոն կառուցանելու խնդիրը:

Ժողովը կկայանա Քաղաքային վարկի ընկերության դահլիճում (Пыжунская-3) ապրիլի 30-ին, առավոտյան 12 ժ. »:

ԳԱԹ ԹՖ, 2497 (136 III ց.):

Ապրիլի 29, Թիֆլիս - Մասնակցում է Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության որբանոցի օգտին երաժշտական դպրոցի դահլիճում կայացած երեկույթին:

Երեկույթի սկզբում խոսք է ասում որբերին խնամելու անհրաժեշտության մասին՝ նրանց կյանքից պատմելով մի քանի դեպքեր, որոնց ինքն է ականատես եղել:

Վերջում դպրոցի երգչախումբը երեք անգամ կատարում է «Մեր հայրենիք», ապա լինում են արտասանություններ և երգեր:

«Յորիզոն», 1917, թիվ 89:

Ապրիլի 29 - Հաղորդագրություն ՀԳԿԸ տարեկան ժողովի (տե՛ս ապրիլի 27) շարունակության մասին:

«Յորիզոն», 1917, թիվ 86:

Ապրիլի 30 - Տպագրվում է նամակ խմբագրության՝ «Անդրանիկ – Շիրվանզադե միջադեպը» վերնագրով.

«Ներքև ստորագրողներս՝ Անդրանիկի և Շիրվանզադեի հավանությամբ՝ մոտիկից ծանոթանալով նրանց մեջ տեղի ունեցած անախորժ միջադեպի (տե՛ս ապրիլի 9) մանրամասնություններին՝ երկու կողմի լիազորությամբ գալիս ենք հայտնելու հետևյալը:

Շիրվանզադեն հայտնում է, որ Անդրանիկին ուղղված իր խոսքերը չեն համապատասխանում իր իսկական զգացմունքներին, դրա համար ներողություն է խնդրում նրանից և խորապես ցավում է, որ իր հախուռն արտահայտություններով վիրավորել է իր տաճկահայ եղբայրներին:

Անդրանիկն էլ իր կողմից հայտնում է, որ վերև հիշված միջադեպի պատճառով՝ առանց իր գիտության՝ իր ազգականներից մեկի կողմից բիրտ ուժի գործադրությունը Շիրվանզադեի դեմ՝ չի համա-

պատասխանում իր զգացմունքներին և ցավ է հայտնում այդ դեպքի համար:

Այս հայտարարությունով միջադեպը համարվում է վերջացած:

Հովհ. Թումանյան

Համբ. Մելիքյան

29 ապրիլի, Թիֆլիս»:

«Հորիզոն», 1917, թիվ 88: «Մշակ», 1917, թիվ 88:

Ապրիլի 30 - Մասնակցում է դերասանների, Դրամատիկական ընկերության խորհրդի, մամուլի, կուլտուրական ընկերությունների ներկայացուցիչների, թատրոնին մոտ կանգնած մարդկանց խորհրդրդակցությանը (տե՛ս ապրիլի 28), որ հրավիրվել էր Շիրվանզադեի նախաձեռնությամբ:

Նպատակն էր ստեղծել ազգային թատրոն:

Բարձրացվում է մասնավորապես սեփական շենք ունենալու խնդիրը: Ոմանք կարևորում են շենքի շքեղությունը: Թումանյանն իր ելույթում ավելի կարևոր է համարում, որ թատրոնի շենքը կարողանա իր մեջ ամփոփել գրողների, նկարիչների, երաժշտական և ազգագրական ընկերությունների: Այս տեսակետը պաշտպանում է նաև Հովհ. Աբելյանը:

Որոշվում է ընտրել մի հանձնախումբ՝ Արտիստական թատրոնի շենքը գնելու բանակցություններ վարելու համար: Հանձնախմբի մեջ մտնում են Հովհ. Թումանյան, Շիրվանզադե, Ալ. Խատիսյան, Խ. Աֆրիկյան, Հովհ. Աբելյան, Հ. Տեր-Դավթյան և ուրիշներ:

«Հորիզոն», 1917, թիվ 89:

Ապրիլի 30 - Մանրամասն հաղորդագրություն ՀԳԿԸ ընդհանուր ժողովի մասին (տե՛ս ապրիլի 22, 27):

Տեղեկացվում է, որ ժողովի շարունակությունը տեղի կունենա մայիսի 3-ին:

«Մշակ», 1917, թիվ 88:

Մայիսի 1, Թիֆլիս - «Մշակ» լրագրի խմբագրության գրությունը ՀԳԿԸ վարչությանը.

«Ի պատասխան Ձեր վարչության գրության (տե՛ս ապրիլի 23) խմբագրությունս ներկայացնում է իր կարծիքով անվիճելի գրողների, հրապարակախոսների և գիտնականների հետևյալ ցուցակը.

1. Շիրվանզադե

13. Լ. Շանթ

- | | |
|----------------------|-------------------|
| 2. Ա. Ահարոնյան | 14. Նար-Ռոս |
| 3. Յ. Առաքելյան | 15. Ավ. Իսահակյան |
| 4. Հովի Հովհաննիսյան | 16. Վ. Տերյան |
| 5. Հովի. Թումանյան | 17. Վրթ. Փափազյան |
| 6. Լեո | 18. Լ. Մանվելյան |
| 7. Մ. Աբեղյան | 19. Մ. Մանվելյան |
| 8. Միաբան | 20. Հ. Աճառյան |
| 9. Ստ. Մալխասյան | 21. Սարուխան |
| 10. Կար. Կոստանյան | 22. Դավիթ Անանուն |
| 11. Գր. Չալխուշյան | 23. Բ. Իշխանյան |
| 12. Նիկ. Ադունց | 24. Սուրխաթյան |

Այս որոշումը խմբագրության կազմի մեջ և աշխատակիցներից անցել է միաձայն, իսկ ինչ վերաբերում է թյուրքահայ գրողներին ու գիտնականներին, ընդհանրապես, նկարիչներին, երաժիշտներին, դերասաններին, խմբագրությունն դրանց ցուցակները ներկայացնելու գործը թողնում է իր հայեցողության:

Խմբագիր՝ Հ. Առաքելյան

Ի.տ. քարտուղարի՝ Ստ. Ջորյան:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 96:

Մայիսի 2 - Հաղորդագրություն ազգային թատրոնին նվիրված խորհրդակցության (տե՛ս ապրիլի 30) մասին:

«Հորիզոն» 1917, թիվ 89:

Մայիսի 2 - Հաղորդագրություն Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության՝ որբանոցի օգտին կայացած երեկույթի (տե՛ս ապրիլի 29) մասին:

«Հորիզոն», 1917, թիվ 89:

Մայիսի 2 - Ցավակցական հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին՝ Կոկանդայից.

«Выражаем свое сердечное соболезнование армянскому обществу писателей кончине достойного товарища армянскому народу потери талантливого поэта друзьям и знакомым хорошего человека Александра Цатуряна.

София Иван Коварков».

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 102/8: ԹԹ, 3501:

Մայիսի 3, Թիֆլիս - Քաղաքային դումայի դահլիճում շարունակվում է ՀԳԿԸ տարեկան ընդհանուր ժողովը (տես ապրիլի 22, 27):*

Նախագահում է Մ. Աբեդյանը, քարտուղար՝ Ս. Եսայան:

Վարչության նախագահ **Հ. Թումանյանը** տեղեկացնում է, որ վարչության նախագծած «Դիվան հայոց գրականության» հատորներում տպվելու են տարբեր փաստաթղթեր, հայ գրողների հիշատակարաններ, նամակներ, ֆաքսիմիլներ՝ հին ժամանակներից սկսած մինչև մեր օրերը: Նկատի ունենալով թղթի և տպագրության համար պահանջվող ծախսերի մեծությունը՝ առայժմ գուցե հնարավոր լինի հրատարակել տարեկան 2 մեծ հատոր միայն: Այդ նպատակի համար վարչությունը իր տրամադրության տակ ունի արդեն 2000 ռ.:

Տեղեկացվում է, որ վարչությունը նպատակ ունի հրատարակել նաև Ընկերության զուտ գրական օրգանը:

Ժողովականներից խոսողները տարակուսանք են հայտնում, որ ներկա քաղաքական ու տնտեսական աննպաստ պայմաններում հազիվ թե հնարավոր լինի հրատարակել այդպիսի զուտ գրական պարբերական. լավ կլինի հետաձգել, մանավանդ որ վարչությունը չէ կազմել նախահաշիվ հրատարակության ծախսերի մասին:

«Դիվան հայոց գրականության» ծրագրի շուրջ մտքերի երկար փոխանակությունից հետո ժողովը հանձնարարում է վարչությանը այդ հրատարակության գործը տնօրինել իր հայեցողությամբ՝ ըստ հանգամանքների:

Ընկերության օրգանի մասին առաջարկը նույնպես սկզբունքորեն ընդունվում է, բայց նպատակահարմար է համարվում առայժմ բավարարվել միայն՝ տարեկան մեկ-երկու ժողովածու հրատարակելով:

Թումանյանը, անդրադառնալով գրականության միջնակարգ և բարձր դասընթացներ կազմակերպելու հարցին, նպատակային է համարում դա հետաձգել՝ նկատի ունենալով, որ նորակազմ Հայկազյան ընկերությունը խոստացել է հարկավոր զումարով օժանդակել դրանց կայացմանը: Տեղեկացվում է նաև, որ դասընթացներին մասնակցել ցանկացողների թիվը հասել է վեց հարյուրի: Ընդհանուր ժողովը, կարճատև բանավեճերից հետո, նպատակահարմար է գտնում բացել երկու տեսակի դասընթացներ՝ նյութական միջոցների ընձեռած հնարավորության սահմաններում: Հանձնարարում է վարչությանը դասընթացներն սկսել Հայկազյան ընկերությու-

նից կամ մի այլ տեղից միջոցներ ստանալուն պես, իսկ մինչ այդ վարչությունից կազմել մի հանձնաժողով, որը մշակելու է դասընթացների տիպն ու ծրագիրը:

Վարչության նախագահը տեղեկացնում է, որ արևմտահայ գրողներին նպաստ տալու համար գեներալ Թամամշյանից ստացված 10000 ռ. բաշխվել է առանձին մասնաժողովի ձեռքով, որի մեջ կան և թուրքահայ ներկայացուցիչներ: Ներկայումս այդ գումարից մնացել է ընդամենը մի քանի հարյուր ռուբլի:

Ս. Եսայանի այն հարցին՝ թե ինչու այդ 10000 ռ. ստացման մասին հիշատակություն չկա Ընկերության դրամական հաշիվների մեջ, Թունանյանը պատասխանում է, թե դա եղել է հանձնարարության ձևով, ուստի և վարչությունը գումարը չի մուտքագրել ո՛չ հաշիվների, ո՛չ էլ նախահաշվի մեջ:

Շնորհալի որբերի որդեգրելու հարցը փոքր տարակարծությունների տեղիք է տալիս: Ոմանց կարծիքով՝ դա Գրողների ընկերության գործը չէ, և պետք է թողնել որբախնամ մարմիններին. վարչությունը այդ նպատակով ստացած 747 ռ. 70 կ. կարող է հանձնել որևէ ընկերության:

Վարչության բացատրությունից հետո ժողովն այնուամենայնիվ ընդունում է շնորհալի որբերին որդեգրելու առաջարկը: Լսելով Թունանյանի հաղորդումը, թե Հայկազյան ընկերությունը խոստացել է տալ տաղանդավոր որբերի համար անհրաժեշտ գումարը՝ ժողովը հանձնարարում է վարչությանը որբերի մեջ գտնել իրոք օժտված երեխաներ և հովանավորել՝ եղած միջոցների սահմաններում հոգալով նաև նրանց կրթության գործը:

Ապա ընտրվում է մի հանձնաժողով՝ *Ս. Տիգրանյան, Ս. Արեղյան և Ն. Սարգսյան*, որ վարչության հետ միասին զբաղվի Ընկերության կանոնադրության փոփոխության հարցով և այդ մասին գեկույց տա Ընկերության արտակարգ ընդհանուր ժողովուն՝ հնարավորինս շուտով: Այս հիման վրա էլ ընդհանուր ժողովը հետաձգեց նոր վարչության և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունները, որոնք կատարվելու են փոփոխված կանոնադրության հիման վրա:

Մի քանի կարևոր նկատողություններով ու լրացումներով ընդհանուր ժողովը հաստատեց վարչության ծախսերի 1917 թ. նախահաշիվը, որ կազմում է 10000 ռ.»:

*) Ժողովի ընթացքը ներկայացվում է ըստ մամուլի հաղորդագրության: Մամբանասն արձանագրությունը՝ ԳԱԹ ՀԳԿԸԾ, 46/7: Արձանագրության վերջում. «Ընդհանուր ժողովը Կ. Շիրինյանի առաջարկությամբ խնդրեց Վարչությանը

շարունակել իր պաշտոնավարությունը մինչև ընկերության կանոնադրության փոփոխությունը»:

«Մշակ», 1917, թիվ 92: «Հորիզոն», 1917, թիվ 93:

Սայիսի 4 - Հաղորդագրություն «Հայկազյան» անունով ընկերություն հիմնելու նպատակով հրավիրված սահմանափակ թվով մարդկանց փակ նիստի (տե՛ս ապրիլի 23) մասին:

«Արև», 1917, թիվ 90:

Սայիսի 4 - Հաղորդագրություն Հայ գրողների ընկերության Ալ. Ծատուրյանի հիշատակին նվիրված երեկույթի (տե՛ս ապրիլի 14) մասին:

«Արև», 1917, թիվ 90:

Սայիսի 5 - Հաղորդագրություն ՀԳԿԸ տարեկան ընդհանուր ժողովի շարունակության (տե՛ս մայիսի 3) մասին:

«Մշակ», 1917, թիվ 92:

Սայիսի 6 - Ռուբեն Աբրահամյանի* նամակը Թիֆլիս՝ Թումանյանին Աբասթումանից:

Ուղարկում է ոտանավորներ՝ խնդրելով բանաստեղծի կարծիքը:

Երկու նպատակ ունի. «1) գտնել մեր նոր գրական լեզվի ռիթմը և մշակել համապատասխան տաղաչափություն և 2) հայացնել Հոմերոսը, Սոփոկլեսը և կամ որևէ այլ մեծ ձեռնարկություն սկսել»:

Առաջինի վերաբերյալ բերում է օրինակներ: Երկրորդի մասին գրում է. «Դրա համար հարկավոր են շատ պայմաններ, նախ՝ խոշոր տաղանդ, և ապա՝ ժամանակ և հնարավորություն՝ տարիների ընթացքում բարեխղճորեն ուսումնասիրել հայերենը, հայոց գրականությունը, ընդհանուր գրականությունը և գիտական գրականությունը...»:

*) Ռ. Աբրահամյանը սովորել է Գևորգյան ճեմարանում: Բանաստեղծություններ է տպագրել «Հորիզոնում»՝ Ռ. Խոջա-Միրզա ստորագրությամբ: Մասնակցել է ՀԳԿԸ երեկույթների բանավեճերին (տե՛ս 1916, նոյեմբերի 27, 30, դեկտեմբերի 6):

ԳԱԹ ԹՖ, 780 (215 լր.):

Սայիսի 6, Թիֆլիս - Հայ պատմական և հնագիտական ընկերության գրությունը ՀԳԿԸ վարչությանը.

«Ընկերության խորհուրդը, բարձր գնահատելով բացվելիք Հայկազյան ընկերության առաջադրած նպատակները և կամենալով օժանդակել Ձեզ գիտական գործիչների ցուցակ կազմելու գործում, լսելով մեծարգո խորհրդիդ No 76 գրությանը (տե՛ս ապրիլի 23), կազմեց Ռուսաստանում մեզ հայտնի հայազետների ցուցակը, որ և ուղարկում ենք Ձեզ: Միևնույն ժամանակ հարկավոր ենք համարում հայտնել, որ մենք հնարավորություն չունենք արտասահմանում ապրող հայազետների ցուցակը ներկայացնելու:

Ռուսաստանում ապրող հայազետների ցուցակ

1. Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյան
2. Մեսրոպ վարդ. Մաքսուտյան
3. Սահակ վարդ. Ամատունի
4. Գարեգին Եպ. Հովսեփյան
5. Դպիր Գալուստ Միաբան
6. Գյուտ քհ. Աղանյան
7. Մալխասյան Ստեփան
8. Տեր-Ավետիքյան Սմբատ
9. Լիսիցյան Ստեփան
10. Շահնազարյան Ասլան
11. Տեր-Հակոբյան Սենեքերիմ
12. Հովհաննիսյան Աշոտ
13. Երվանդ Տեր-Մինասյան
14. Թորամանյան Թորոս
15. Հովհաննիսյան Հայկ
16. Աբեղյան Մանուկ
17. Մելիքսեթբեկյան Լևոն
18. Աբրահամյան Ռուբեն
19. Լալայան Երվանդ
20. Բաբախանյան Առաքել (Լեո)
21. Խոստիկյան Միսակ
22. Շահազիզյան Երվանդ
23. Ջամինյան Աբրահամ
24. Կոստանյան Կարապետ
25. Բյուլակ-Հովհաննիսյան Խաչատուր
26. Ադոնց Նիկողայոս
27. Օրբելի Հովսեփ
28. Քալանթարյան Աշխարհբեկ

29. Հրաչյա Աճառյան
30. Մանանդյան Հակոբ
31. Տիգրանյան Սիրական
Փոխնախագահ՝ Ստ. Լիսիցյան
Անդամ քարտուղար՝ Կ. Տեր-Ավետիքյան»:
ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/5:

Մայիսի 7 - Տպագրում է («Հորիզոն», 1917, թիվ 94) «Հայկազյան ընկերությունը» հոդվածը:

Հանգամանորեն շարադրում է ընկերության նպատակն ու խնդիրները (տե՛ս նաև ապրիլի 27):

Առաջնահերթ խնդիրներն են՝

ա) «Մեր ազգային պատմության նյութերը» սփռված են վանքերում, մամուլի էջերում, տարբեր երկրների արխիվներում և այլուր: Պետք է այդ ամենը հավաքել, ի մի բերել և կարող ուժերի միասնական ջանքերով ստեղծել ժողովրդի գիտական պատմությունը:

բ) Չունենք մշակված գրական լեզու. «Պետք է հավաքել հայոց բարբառների, բովանդակ հայության լեզվական գանձերը, բառերն ու ոճերը, ամբարել, ուսումնասիրել ու օգտագործել, կազմել հայոց կենդանի լեզվի բառարանը, ստեղծել հայոց ազգային գրական լեզուն»:

գ) Գիտություն չունենք, մեր կարող գիտական ուժերը հնարավորություն չունեն զբաղվելու իրենց գործով, շատերն էլ իրենց գիտական աշխատանքն անում են օտար լեզուներով. «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերեն լեզվով և հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ, Հայկական Ակադեմիա»:

դ) «Պետք է ստեղծել Հայկական Համալսարան, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերեն լեզվով»:

ե) Հայ գրողները «ամենքն էլ գրականությամբ պարապել են իմիջիայլոց, պատահաբար, ոտքի վրա: Ամենքն էլ եղել են խանգարված գրողներ, և ամբողջ մեր գրականությունն էլ խանգարված գրողների խանգարված գրականություն է:

Պետք է ազգովին պաշտպանել Հայոց գրականությունը, գրողներին կապել իրենց գործի հետ և միանգամ ընդմիշտ վերջ տալ էս

անառողջ ու անպատվաբեր դրությամբ»:

զ) «Գեղարվեստը իր ամեն ճյուղերով՝ թատրոն, երաժշտություն, նկարչություն և այլն, մեր մեջ ընկած է երեսի վրա <...>: Պետք է ուժեղ կերպով հովանավորել ու զարգացնել գեղարվեստի ամեն մի ճյուղերը մեր մեջ»:

Եվ եզրակացությունը. «Չմոռանաք, որ մեր ժողովուրդը, ինչ բարձր բան կատարել է, միշտ կատարել է՝ չնայելով նեղ ու դառն ժամանակին...»

Եվ սրա մեջն է մեր ցեղի մեծությունն ու մեր կյանքի մեծ դրաման:

Ինչ որ մենք կլինենք՝ մեր Համալսարանն էլ մեզ հետ»:

ԵԼԺ 7, 324-327:

Սայիսի 8, Թիֆլիս - «Հորիզոնի» խմբագրության պատասխան գրությունը ՀԳԿԸ վարչությանը.

«Ի պատասխան Ձեր նամակի (տե՛ս ապրիլի 23) պատիվ ունենք հաղորդելու մեր անվանացանկը այն անձերի, որոնք, մեր կարծիքով, պետք է հրավիրվեն անդամ նորակազմ Հայկազյան ընկերության: Ցուցակը կազմելիս մենք ղեկավարվել ենք այն սկզբունքով, որ հրավիրվեն հայ գրականության, գեղարվեստի ու գիտության ասպարեզում անպայման հեղինակություն ներկայացնող անձեր՝ թե՛ որպես տաղանդի տեր մարդիկ և թե՛ իբրև վաստակավոր աշխատավորներ, որոնք աչքի ընկած ծառայություն են մատուցել հայ գրականության, գեղարվեստին ու գիտության: Դրել ենք նաև մի քանի խոշոր տաղանդների անուններ, որոնք ընդհանուր նշանակություն ունեն:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում ավելացնել, որ ընկերության հիմնադիր ժողովին ներկայացված անուններից պետք է հրավիրվեն նրանք, որոնց մասին որևէ վեճ չկա, որոնք առաջարկված են եթե ոչ միաձայնությամբ, գեթ 2/3-ից ավելի ձայներով: Մեզ թվում է, որ ընկերության հաջողության տեսակետից հիմնադիր ժողովում չպետք է լինեն այնպիսի մարդիկ, որոնք այս կամ այն պատճառով կարող են գործի մեջ կիրք մտցնել: Հայկազյան ընկերությունը, ըստ մեր կարծիքի, պետք է գտնվի վեր որևէ հոսանքից կամ, ընդարձակ մտքով, գրականության, գեղարվեստի և գիտության հետ առնչություն չունեցող նկատումներից: Բայց նա համակված պետք է լինի լայն դեմոկրատիկ ոգով և ծառայի հայ ժողովրդի օգտին:

Մենք առաջարկում ենք հետևյալ անձանց:

Գրողներ – Հովհաննես Թումանյան, Լևոն Շանթ, Ավետիք Իսահակյան, Շիրվանզադե, Հովհաննես Հովհաննիսյան, Ավետիս Ահարոնյան, Ջապել Եսայան, Վահան Տերյան:

Քննադատ - Նիկողայոս Աղբալյան:

Պատմաբան - Ն. Ադոնց:

Պատմագիր - Լեո:

Բանասեր-լեզվաբան - Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Միաբան, Հ. Մանանդյան:

Նկարիչ - Ե. Թադևոսյան, Փ. Թերլենեզյան, Մ. Սարյան, Է. Շահին:

Ճարտարապետ - Թորամանյան, Հ. Քաջազնունի:

Երաժիշտ - Կոմիտաս վարդ., Ա. Սպենդիարյան:

Դերասան - Սիրանուշ, Աբելյան, Մայսուրյան, Ջարիֆյան»:

Նամակն ստորագրել են ի. տ. խմբագրի՝

Ա. Շահխաթունի, Ս. Կրացյան:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/3:

Մայիսի 8 - Թիֆլիսի առևտրական բանկից ստանում է 1917 թ. Ազատության փոխառության հաշվին մուծած 300 ռուբլու անդորրագիր.

«Получено от Ованеса Туманяна в счет подпуски на 5 % заем Свободы 1917 г. на ном. Руб.300 — авансом Руб. /пять-десять/, в чем дана сия квитанция.

Тифлисский Купеческий Банк (ստորագրություններ)».

ԹԹ ԹԸԱ, թղթ. 33:

Մայիսի 10 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Արշակ Ջամալյան, Դեր. Դեմիրճյան, կանոնադրության փոփոխության մասնաժողովի անդամներ՝ Ս. Տիգրանյան, Ն. Սարգսյան, Մ. Աբեղյան:

1. Նախագահողը հայտնում է, որ ընկերության տարեկան ընդհանուր ժողովի շարունակության երկրորդ նիստում ընդունվեց վարչության առաջարկը՝ կանոնադրության մի քանի կետերի փոփոխության վերաբերյալ (տե՛ս ապրիլի 12), ընտրվեց մի մասնաժողով (Մ. Աբեղյան, Ս. Տիգրանյան, Ն. Սարգսյան), որ վարչության հետ միա-

սին պիտի կատարի այդ փոփոխությունները և զեկուցի ընդհանուր ժողովին:

Կարգադրում են՝ կանոնադրության մեջ մտցնել հետևյալ բարեփոխումները՝

1. Ընկերության անվանումից հանել «կովկասյան» բառը:

2. Ոչնչացնել փոխնահանգապետի վավերացումը:

3. 2-րդ պարագրաֆի բ. և գ. կետերից ջնջել «ներգործող օրենսդրության պահպանությամբ» և «պատշաճավորությամբ» բառերը:

4. 2-րդ պարագրաֆի դ. կետը ամբողջապես հանել:

5. 4-րդ պարագրաֆի ծանոթագրությունը ամբողջապես հանել:

6. 6-րդ պարագրաֆից հանվում են «առանց հարգելի պատճառների» և «պարտավորվելով չվճարված անդամավճարները տալ ընկերության՝ կրկին անդամավճարվելիս» բառերը:

7. Ավելացնել հետևյալ կետերը՝

Ընկերության անդամագրվել ցանկացողը ընդհանուր ժողովից մի ամիս առաջ պետք է վարչության ներկայացնի իր աշխատանքների ցուցակը և առանձին տպած գործերից մի-մի օրինակ, վարչությունն այս բոլորը հանձնում է իր կամ ընկերության անդամներից մեկին՝ պարտավորելով քննադատական համառոտ զեկուցում պատրաստել ընդհանուր ժողովի համար: Այս զեկուցումը քննարկման է առնվում ընդհանուր ժողովում, որից հետո դիմումը դրվում է քվեարկության:

8. Ավելացնել հետևյալ կետը – ընկերությանը կարող են անդամագրվել նաև գրասերներ՝ վճարելով տարեկան 5 ռուբլի:

9. Ավելացնել հետևյալ կետը - գրասերը ևս ընտրվում է ընդհանուր ժողովում՝ գաղտնի քվեարկությամբ:

10. Ավելացնել հետևյալ կետը - ընկերության գրասեր անդամները օգտվում են գրող անդամների բոլոր իրավունքներից, միայն ունեն լոկ խորհրդակցական ձայն և ընկերության գանձարանից որևէ դրամական օժանդակություն ստանալ չեն կարող:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/5:

Մայիսի 11 - Մամուլը հաղորդում է.

«Մայիսի 12-ին, Երեկոյան ժամը 8-ին Գայանյան դպրոցում տեղի կունենա ՀԳԿԸ երկրորդ փակ ժողովը: Լինելու է զրույց «Հայ

գրականության վիճակը և բովանդակությունը» նյութի շուրջ: Ձեկուցելու է Հովի. Թումանյանը»:^{*}

*) Ժողովը տեղի չի ունեցել, որովհետև նույն օրը Գայանյան դպրոցում տեղի է ունեցել ուսուցիչների համագումարի շարունակությունը: Ավելի ուշ իր «Ուղիղ ճանապարհը» հոդվածում (տե՛ս մայիսի 28) բանաստեղծը հիշում է. «Էնպես պատահեց, որ եղ. օրը դահլիճը բռնեց հայ ուսուցչական համագումարը և, զեկուցում կարդալու փոխարեն, նույն խեղճության ու հոգեկան ստրկության մասին ես ստիպված էի շատ ավելի սեղմ շեշտել հայ ուսուցչական համագումարի առջև իմ ողջույնի խոսքի մեջ՝ իսկական, ներքին ազատությունը ակնկալելով ազատ դպրոցից ու ճշմարիտ լուսավորությունից» (ԵԼԺ 7, 230):

«Հորիզոն» 1917, թիվ 97:

Մայիսի 11 - Սերգեյ Գորոդեցկու նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Վանից.

«Дорогой друг!

Вот я вижу их, воспетые Вами вулканы; и огромные чувства волнуют меня, жуткие и печальные в цветущих садах Вана. Но среди этих чувств есть одно, ясное, как утро сейчас,- это воспоминание о Вас. Оно меня не покидает.

Сына Вашего* я очень полюбил.

Будучи в Персии, я сочинил, шутя и любя, здравицу Вам. Переверните эту страницу и прочтите:

Здравица

Ованес, Ованес, Ованес

Ты пивал ли персидский бекмес?

Туманян, Туманян, Туманян,

Ты курил ли душистый кальян?

За здоровье, за славу твою

Ало-черную влагу я пью,

И курю я, дыша, словно вол

За здоровье твое! Чох салнол!

Крепко жму Вашу руку, всей Вашей райской семье приветы. Тamarочке целую черные кудри.

Ваш душевно

С. Городецкий».

*) Նկատի ունի Արտավազը Թումանյանին, որ այդ օրերին Վանում էր:

ԳԱԹ ԹՖ, 1099 (3):

Մայիսի 11 - Մամուլը հաղորդում է.

«Ուրբաթ՝ մայիսի 12-ին, Գայանյան դպրոցի դահլիճում տեղի կունենա Հայ գրողների ընկ. անդամների փակ նիստը: Երեկոյթի նյութը կլինի «Հայոց գրականության վիճակը և բովանդակությունը»: Մի ամփոփ գեկուցումով հարցը կդնի պ. Հովհ. Թումանյանը: Ապա անդամների մեջ տեղի կունենա մտքերի փոխանակություն»:

«Մշակ», 1917, թիվ 97:

Մայիսի 12 - Մասնակցում է Հայ ուսուցչական համագումարի բացմանը, որ տեղի է ունենում ժամը 12-ին Գայանյան դպրոցի դահլիճում:

Իր ելույթում մասնավորապես ասում է (տե՛ս նաև մայիսի 11, աստղանիշ ծանոթագրությունը). «Ընկերներ՝, ապրում ենք պատերազմական շրջանում, երբ ռազմիկների արժեքը շատ է բարձրացել, սակայն չպիտի մոռանալ, որ կա նաև խավարի և լուսի պայքար, և այդ պայքարի մեջ ամենածանր ու դժվարին պարտականությունն ընկած է հայ ուսուցչի վրա: Բռնապետական ռեժիմի օրերին դպրոցն ու գրականությունը կաշկանդված էին, և գրականությունը՝ շնորհիվ այդ հանգամանքի, չունեի իր փայլուն արտահայտությունը: Այժմ, երբ դպրոցը վերածնվելու է ազատ կարգերի մեջ, բարգավաճելու է նաև հայ գրականությունը, որովհետև այդ երկու գործոն ուժերը օրգանապես կապված են իրար հետ: Այսուհետև հայ գրականությունն իր գոյության նոր շրջանն է թևակոխելու՝ շնորհիվ վերածնված, ազատ դպրոցի: Այդ ազատությունը չպետք է լինի լոկ արտաքուստ, այլև ներքուստ: Ներքին ազատագրումն պետք է կատարվի մեր սրտերում: Սրտի ազատագրումից կստեղծվեն ծաղկած, լուսավոր դպրոցն ու գրականությունը: Վերջացնելով խոսքս՝ Հայ գրողների ընկերության կողմից ողջունում են համագումարը և ցանկանում նրան լիակատար աջողություն»:

«Մշակ», 1917, թիվ 100: «Հորիզոն», 1917, թիվ 100:

Մայիսի 14 - Հաղորդագրություն մամուլում «Հայկազյան ընկերության» հիմնադրման մասին՝ Սկայ ստորագրությամբ.

««Հայկազյան ընկերություն» անունով մի նոր հաստատություն է ավելանում Թիֆլիսում մեր ազգային-կուլտուրական ընկերությանց կողքին...

Գրականության համար էլ, որ գլխավորապես զարգացել և զարգանում է լրագրությամբ, բացի ընդհանրապես մասնական ջան-

քերից՝ մասնավոր հրատարակիչներ ու գրավաճառանոցներ, կան և հաստատություններ, որոնց մեջ նշանավոր դեր է կատարել Թիֆլիսի Հրատարակչական ընկերությունը լայն ծրագրով:

Հայ գրողների դեռահաս ընկերությունը դեռ նոր-նոր է սկսում օգնության հասնել հայ հեղինակներին, թեև տարեկան մի համեստ գումարով, որից, սակայն, ավելի սպասելն շատ դժվար է:

Չնայելով այս ջանքերին՝ հայոց մեջ կարելի է ասել ոչ մի հեղինակ, թեկուզ անուն ունեցող և շատ կարդացվող հեղինակ, օր.՝ Րաֆֆի, Լեո, Ահարոնյան, Շիրվանզադե, Հ. Թումանյան, Հ. Հովհաննիսյան և այլն, չեն կարողացել միմիայն իրենց գրչով ապրել առանց կողմնակի ավելի կամ նվազ աշխատանքի...

Եվ մեր հայ բարերարները և ազգային-կուլտուրական հաստատություններն ավելի ազգօգուտ գործ կատարած կլինեին, երբ նպաստեին հուսատու գրականագետների, հեղինակների, բանաստեղծների, գեղարվեստագետների, գիտնականների և այլն: Այստեղ եղած օժանդակությունը գրավական ունի, որ ապարդյուն չի կորչիլ օժանդակությունը, մինչդեռ ուսանողության օժանդակության գործում այս դրական հավաստիքը չկա, այլ միայն հույս: Այս բոլորից հետևում է, կրկնում ենք, որ մեր գրականությունը, գեղարվեստը և մանավանդ հայագիտությունն ավելի կամ նվազ չափով կարոտ են քաջալերության և պաշտպանության:

Մեր կյանքի այս պակասը հանձն է առնում լրացնել Հայկազյան ընկերությունը»:

«Համբավաբեր», 1917, թիվ 18:

Մայիսի 16 - Հաղորդագրություն մամուլում՝ Հայ ուսուցչական համագումարի մասին, որտեղ ողջույնի խոսքով հանդես է գալիս Թումանյանը (տե՛ս մայիսի 12):

«Հորիզոն», 1917, թիվ 100:

Մայիսի 16 - Արծվիկ Մութաֆյան ստորագրությամբ նամակ Թիֆլիսի Թումանյանին՝ Ղարսից:

Ուտանավորներ է գրում, բայց երկար ժամանակ չի համարձակվել բանաստեղծից խորհուրդներ խնդրել: Այժմ քանի որ նա «բանաստեղծների նախագահն» է, առիթ է ստեղծվել նրա հետ «նամակագրություն ունենալու»: Մամուլում կարդացել է սկսնակ բանաստեղծներին ուղղված նրա «ճառը» (տե՛ս հունվարի 13), հու-

սադրվել է հատկապես այն խոսքերից, թե՝ «եթե 30 բանաստեղծություններից մեկը հաջող է և անցնում է, նա կարող է գրել»:

Բանաստեղծի օգնության կարիքն ունի: Երկու բանաստեղծություն ուղարկել է իրենց միության թերթին՝ տպագրելու, բայց մերժել են, թե մեկը գողացված է: Երդվում է, որ ինքը ոչ մեկից չի արտագրել, բայց իր բանաստեղծությունը նման է ստացվել մի հայտնի բանաստեղծի գրածներին: Ուղարկում է իր բանաստեղծությունների ժողովածուն և ուզում է իմանալ բանաստեղծի կարծիքը. «Անհամբեր սպասում եմ Ձեր պատասխանին, թե արդյոք իրավունք ունե՞ն բողոքելու և ինձ բանագող անվանելու...»

Երկրորդ և երրորդ անգամ խնդրում եմ Ձեզ, հարգելի բանաստեղծ, եթե անմեղ եմ, ցույց տվեք Ձեր պաշտպանությունը, իսկ եթե ոչ, խրատեք, զգուշացրեք, նախատեք ինձ»:

ԳԱԹ ԹՖ, 1781 (567 լր.):

Մայիսի 22 - ՀԳԿԸ վարչության անունից գրություն Հայկազյան ընկերության ժամանակավոր հանձնաժողովին.

«Հայ գրողների ընկերության վարչությունը, ստանալով հանձնաժողովի առաջարկը՝ հայ գրողների, գիտնականների, գեղարվեստագետների ցուցակ կազմելու, իր կողմից դիմեց «Հորիզոն», «Մշակ», «Արև» և «Գործ» թերթերի խմբագրություններին (տե՛ս ապրիլի 23) և Թիֆլիսի հայ դրամատիկական, երաժշտական, արվեստագետների, ազգագրական, պատմական-հնագիտական և Բաքվի հայ գրասերների ընկերություններին, որոնցից և ստացավ գրավոր ցուցակներ (տե՛ս ապրիլի 24, մայիսի 1, 6, 8), բացի Ազգագրական ընկերությունից և «Գործ»-ի խմբագրությունից:

Այդ ցուցակներից օգտվելով, ինքն էլ իր կողմից լրացնելով վարչությունն կազմեց միայն Ռուսաստանի սահմաններում ապրող հայ գրողների, գիտնականների և գեղարվեստագետների ցանկը, որ և սրա հետ ներկայացնում եմ հարգելի հանձնաժողովիդ:

Նախագահ՝ Հովհ. Թումանյան

Անդամ քարտուղար՝ Գյուլտ Աղանյան»:

ԹԹ ԹԸԱ, 40/5:

Մայիսի 26, Թիֆլիս - Հայկազյան ընկերության ժամանակավոր հանձնաժողովի հրավեր-գրությունը Թումանյանին.

«Խնդրում ենք Մայիսի 31-ին, չորեքշաբթի, երեկոյան ժ. 8-ին շնորհի բերեք Թիֆլիսի Երաժշտական ընկերության դահլիճ (Грѹбѹѹ-

довская ул.) Հայկազյան ընկերության հիմնադիր ժողովին մասնակցելու համար»:

ԳԱԹ ԹՖ, 2498 (218 III ց.):

Սայիսի 27 - Գայանյան դպրոցի դահլիճում տեղի է ունենում ԶԳԿԸ ընդհանուր ժողովի (տե՛ս մայիսի 3) շարունակությունը:

Նախագահում է Ստ. Լիսիցյանը:

Ժողովը մի քանի ուղղումներով հաստատում է հատուկ հանձնաժողովի կողմից փոփոխության ենթարկված կանոնադրությունը: Ապա տեղի է ունենում վարչության անդամների ընտրություն:

Գաղտնի քվեարկությամբ վարչության անդամներ են ընտրվում Հովհ. Թումանյանը, Ն. Աղբալյանը, տիկ. Ջ. Եսայանը, Դ. Դեմիրճյանը, Նիկ. Սարգսյանը, Ան. Աբովյանը (գանձապահ), Ստ. Կանայանը և Վ. Տեր-Գևորգյանը:

Տեղեկացվում է, որ թեև կանոնադրության փոփոխված տարբերակում ընկերությունը դարձյալ անվանվելու է «Հայ գրողների կովկասյան ընկերություն», բայց իր գործունեությունը տարածելու է ամենուրեք:

«Հորիզոն», 1917, թիվ 112: «Արև», 1917, թիվ 114:

Սայիսի 27 - Ղազարյան Դ.*, Սարգսյան Ե. ստորագրությամբ նամակ-բացիկ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից:

Հայտնում են, որ համերգներով գտնվում են Երևանում: Ցանկություն ունեն մասնակցելու Հայկազյան ընկերության հիմնադիր ժողովին՝ որպես Թիֆլիսի հայոց խմբական երաժշտության հիմնադիրներ:

*) Կոմպոզիտոր Դանիել Ղազարյանն է:

ԳԱԹ ԹՖ, 1550 (163 III ց.):

Սայիսի 27 - Հ. Տեր-Գրիգորյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Մեծարգո պ. Թումանյան!

խոնարհաբար խնդրում եմ չմերժել սույն այս նամակիս վրա գրել, թե ինչին էր վերաբերում Ձեր գրությունը՝ ուղղած Հայ դրամատիկական ընկերության խորհրդին՝ արդյոք ցույց տալու անվիճելիների ազգանունները, որոնք պետք է մտնեին «Հայկազյան» ընկերությունը, թե մատնանշելու այն պարոնների ազգանունները, որոնք

Հայ գրողների ընկերության մեջ մյուսների հետ պետք է ընտրեին անվիճելիներին:

Ձեր խ. ծ. Դ. Տեր-Գրիգորյան»:

*) Թումանյանի այդ գրությունն անհայտ է:

ԳԱԹ ԹՖ, 23183 (195 III):

Մայիսի 28 - Տպագրում է («Հորիզոն», 1917, թիվ 111) «Ուղիղ ճանապարհը» հոդվածը:

Առիթը մայիսի 11-ին Մոսկվայի Մեծ թատրոնում գումարված ժողովն է, ուր հանդես են եկել ռուս նշանավոր շատ գիտնականներ, գրողներ, մտավորական գործիչներ: Հատկապես Մաքսիմ Գորկին և Ն. Մորոզովը իրենց ելույթներում Ռուսաստանի մեծ դժբախտությունն են համարել հետամնացությունը, տգիտությունն ու ծուլությունը: Նրանց կարծիքով՝ արտաքին ազատությունը, դեմոկրատիան* քիչ բան են նշանակում, քանի դեռ մարդիկ զուրկ են ներքին ազատությունից, ստրկական հոգեբանությունից: Իսկական ազատության ու առաջադիմության հասնելու ուղիղ ճանապարհը գիտության ու մշակույթի զարգացումն է:

Թումանյանը զուգահեռ է անցկացնում ռուս և հայ իրականությունների միջև և եզրակացնում. «Այո, մենք շատ ու շատ ավելի ենք հետամնաց և ավելի խոր էլ պիտի զգանք մեր հոգևոր ստրկությունը, ավելի ուշադիր էլ ականջ դնենք աշխարհի առաջավոր ժողովուրդների ու նրանց լավագույն զավակների կոչին, հետևենք նրանց, հիմնենք ու ազգովին պաշտպանենք Հայոց Համալսարանը, Հայոց Ակադեմիան, զարգացնենք ու ծավալենք գիտությունը, գրականությունն ու գեղարվեստը մեզանում: Եվ մենք ամեն կողմից ընդունակ ենք բարձր նպատակների հասնելու, լավագույն ազգերի բարձրությանը հասնելու, իսկ էս ամենին հասնելու համար արդեն ճանապարհը բաց է մեր առջև, ուղիղ ու պայծառ»:

*) Նկատի ունեն փետրվարյան հեղափոխության հռչակած դեմոկրատական ազատությունները:

ԵԼԺ 7, 328-330:

Մայիսի 28, Թիֆլիս - Գայանյան դպրոցի դահլիճում տեղի է ունենում լոռեցիների հայրենակցական միության ժողով:

Նախագահում է Թումանյանը:

Ընտրվում է 13 հոգուց բաղկացած մի մարմին, որ մեկնելու է Լոռվա գյուղերը՝ գյուղացիներին օգնություն ցույց տալու նպատակով:

«Հորիզոն» 1917, թիվ 113:

Մայիսի 29 - Թոմաս Սարգսյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Երկրպագում է մուսայի ընտրյալներին: Ցանկանում է նամակագրական կապ ունենալ բանաստեղծի հետ: Հետաքրքրվում է նրա ու առհասարակ գրողների կյանքով: Հույս ունի նամակներով որոշ տեղեկություններ և օգտակար խորհուրդներ ստանալ: Վերջում. «Ձեր կենսագրության հետ քաջ ծանոթ եմ ու իմ սրտաբաղձ ձգտումն է մոտ-մոտ լինել ձեզ... Հավատում եմ այդ ինձ կհաջողվի նամակով»:

ԳԱԹ ԹՖ, 1976 (437):

Մայիսի 31, Թիֆլիս - Երաժշտական դպրոցի դահլիճում տեղի է ունենում Հայկազյան ընկերության հիմնադիր ժողովը:

Ներկա են Թիֆլիսում գտնվող բոլոր հայ գիտնականները և արվեստագետները, բազմաթիվ հետաքրքրասերներ:

Ժողովը բացում է Թումանյանը:

Իր բացման խոսքում բանաստեղծը ներկայացնում է ընկերության նպատակներն ու խնդիրները: Կանգ է առնում հատկապես հայոց համալսարանի առաջին՝ հայագիտական ֆակուլտետի վրա, որ բացվելու էր առաջիկա աշնանը: Ընկերության առաջնահերթ խնդիրներից է համարում Հայոց ակադեմիայի հիմնումը և Հայկազյան գրադարանի ստեղծումը, որտեղ հավաքվելու են ժամանակի ընթացքում հայոց լեզվով, ինչպես նաև հայերի ու Հայաստանի մասին եղած բոլոր հրատարակությունները:

Իր խոսքում բանաստեղծը մասնավորապես ասում է. «Մինչև այժմ հայ ժողովուրդն ունեցել է մի հոգևոր կենտրոն՝ Էջմիածնի տաճարը, այժմ մենք ուզում ենք կառուցանել մի նոր տաճար՝ գիտության, գրականության ու գեղարվեստի տաճարը՝ Հայկազյան ընկերությունը:

Եվ հայ ժողովուրդը թե՛ նյութական, թե՛ մտավոր կարողություն ունի այս նոր տաճարը կառուցանելու: Մենք չունինք գրականությանը նվիրված պրոֆեսիոնալ գրողներ, սրանից հետո պիտի ունենանք: Մենք չունինք հայ գիտնականներ, սրանից հետո պիտի ունե-

նանք: Մենք չունինք հայ գեղարվեստագետներ, սրանից հետո պիտի ունենանք: Եվ ապագայում հայոց կուլտուրայի զարգացման պատմությունը զրոյը պետք է բաժանի երկու շրջանի – մինչև Հայկազյան ընկերությունը և Հայկազյան ընկերությունից հետո»:

Ըստ մանուկի հաղորդագրության («Հորիզոն», 1917, թիվ 116)՝ Թումանյանի ելույթն ընդունվել է որոտընդոստ ծափահարությամբ:

Ըստ նույն հաղորդագրության՝ մտքերի փոխանակությանը մասնակցել են Շիրվանզադեն, Ստ. Կանայանը, Հ. Առաքելյանը, Փ. Վարդազարյանը, Ստ. Մալխասյանը, Լ. Շանթը, Փ. Թերլեմեզյանը և ուրիշներ:

Այնուհետև ժողովը միաձայն որոշում է կազմել մի ժամանակավոր գործադիր մարմին և նրան հանձնարարել մինչև սեպտեմբեր կազմակերպել հայկական ֆակուլտետը՝ միաժամանակ բանակցելով հրավիրվելիք դասախոսների հետ:*

*) Թումանյանի թանգարանում՝ բանաստեղծի ընտանեկան արխիվում, նույն մայիսի 31 ամսաթվով և նույն թղթապանակում պահվում է «Հայկազյան ընկերության նախանձախնդիր անդամների» մի ցուցակ՝ իր՝ բանաստեղծի ձեռագրով. մի մասի անվան դիմաց նշված է նվիրատվության չափը.

1. Օլգա Թումանյան - 10 ռ.
2. տ. Աշխեն Թումանյան - 10 ռ.
3. Գեորգ Խատիսյան - 10 ռ.
4. Մուշեղ Թումանյան - 10 ռ.
5. օր. Նվարդ Թումանյան - 10 ռ.
6. Արտավազդ Թումանյան - 10 ռ.
7. Համլիկ Թումանյան - 10 ռ.
8. տ. Եղիսաբեթ Վարդազարյան - 10 ռ.
9. տ. Մարիամ Միքայելյան - 10 ռ.
10. Սինաքսար Սարիբեկյան - 10 ռ.
11. տ. Իզաբելա Զավրիյան - 200 ռ.
12. Դավիթ Զավրիյան
13. Տիգրան Գյուլալյան
14. տ. Երանյակ Գյուլալյան
15. բժ. Արիստակես Զարգարյան
16. տ. Մարիամ Բերբերյան
17. Վահ. Փափազյան
18. Ի. Մարկոսյան
19. Աբրահմ Գաբրիելյան - 10 ռ.

20. Յուլիա Սպենդիարյան - 10 ռ.
 21. Հակոբ Անագչյան - 10 ռ.
 22. Մարգարիտ Անագչյան - 10 ռ.
 23. Առաքել Հարությունյան - 10 ռ.
 24. Հեղինե Հարությունյան - 10 ռ.
 25. Ծերմակ - 10 ռ.
 26. Սիմոն Սկրտչյան - 10 ռ.
 27. Արտեմ Թայիրյան - 10 ռ.
 28. Սոֆիա Թայիրյան - 10 ռ.
 29. Հովսեփ Արղության - 10 ռ.
 30. Սաթենիկ Արղության - 10 ռ.
 31. Արշակ Բաջուռյան - 10 ռ.
 32. Գեորգ Սուքիասյան - 200 ռ.
 33. Գրիգոր Չալխուշյան
 34. Սոֆիա Չալխուշյան
 35. Ռուբեն Չալխուշյան
 36. Սերովբե Չալխուշյան
 37. Ստեփան Չալխուշյան
 38. Խաչատուր Չալխուշյան
 39. Լևոն Չալխուշյան
 40. Իսկուհի Չալխուշյան
 41. Ջաբել Չալխուշյան
 42. Շուշանիկ Չալխուշյան
 43. Լևոն Բաշալյան
 44. Գայանե Լոխանյանց
 46. քժ. Նիկողայոս Լոխանյանց
 46. Գեորգ Բորոտինյան - 200 ռ.
 47. Եղիսաբեթ Բորոտինյան - 200 ռ.
 48. Չաղիկ Աղամյան - 10 ռ.
 49. պրոֆ. Վահան Ռոստոմյան - 10 ռ.
 50. Հովակիմ Դավթ. Պապուկյանց - 200 ռ.
 51. Հմայակ Բզնունի - 200 ռ.
 52. Արշակ Սարկիսյան - 200 ռ.
 53. Կարապետ Համբարձումյան - 200 ռ.
- ԹԹ ԹԸԱ, թղթ. 39:

Չունիսի 1 - Տեղի է ունենում ՉԳԿԸ նորընտիր վարչության նիստ:

Ներկա են՝ Զ. Թումանյան, Ս. Կանայան, Ն. Աղբալյան, Դ. Դեմիրճյան, Սարգսյան և Վ. Տեր-Գևորգյան, բացակա են՝ Գ. Մեսյան և Ան. Արսվյան:

Նախ անցկացվում է վարչության ղեկավար կազմի ընտրություն: Նախագահ է ընտրվում Թումանյանը, փոխնախագահ՝ Ն. Աղբալյանը, քարտուղար՝ Վ. Տեր-Գևորգյանը:

Նիստը նախագահում է Թումանյանը:

Օրակարգում՝ գրական-պատմական դասընթացների հարցը, տաղանդավոր որբերի ուսման խնդիրը, ընթացիկ հարցեր:

Նախագահը հայտնում է, որ դասընթացների հարցը առկախ է մնացել Հայկազյան ընկերության երևան գալու պատճառով: Նպատակահարմար է ճանաչվում, որ առաջիկա ուսումնական տարվանից Գրողների ընկերությունը այնուամենայնիվ բաց անի այդ դասընթացները: Սահմանվում են ուսման վարձերի և դասախոսների ժամավճարների չափերը: Նպատակահարմար են գտնում օժանդակության համար դիմել Հայկազյան ընկերությանը,

Պետերբուրգի եկեղեցական խորհրդին, Նախիջևանի բարեգործականին:

Դասընթացներին ունկնդիր կարող են լինել միջնակարգ կրթությամբ անձինք, ինչպես նաև միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտները: Դասախոսավող առարկաներ են հաստատվում՝ հայոց գրականություն, հայոց պատմություն, գրելիք պատմություն, ընդհանուր գրականություն: Ցանկալի է համարվում հայոց գրականության և հայոց պատմության հին և նոր շրջանները առանձին-առանձին դասախոսել: Ամեն առարկայի տրվում է շաբաթական երկու ժամ:

Դասընթացների վերահսկիչ ընտրվում է Ն. Աղբալյանը:

Հայոց նոր գրականություն դասախոսելու է Ն. Աղբալյանը, հայոց նոր պատմություն՝ Աշոտ Հովհաննիսյանը, ընդհանուր գրականություն՝ Վ. Տեր-Գևորգյանը: Մյուս առարկաների դասախոսների ընտրությունը հետաձգվում է:

2. Որոշվում է գրական շնորհք ունեցող որբերի մասին տեղեկություններ ստանալու նպատակով հայտարարություն հրապարակել մամուլում: Առայժմ նկատի ունեն երեք շնորհալի որբերի, որոնց

ուսման վարձի համար ընկերությունն իր տրամադրության տակ արդեն ունի որոշ գումար:

Վերջում նախագահը հայտնում է, որ ընկերությունը Ալ. Ծատուրյանի ֆոնդի օգտին ստացել է 80 ռ., Սայաթ-Նովայի գրքերի վաճառքից՝ 150 ռ.:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/9:

Չունիսի 2 - Հարություն Մարտիրոսյան ստորագրությամբ նամակ թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից:

Տեղեկացնում է, որ Նախիջևանում եղած ժամանակ լսել է «Մշակի» թղթակից և հայ գրողների ընկերության անդամ ոմն Ալեքսանդր Տեր-Սարգսյան Պարզյանցի ձերբակալության մասին:

Հայտնում է նաև Երևանի ոստիկանության 1912 թ. գործերի ցուցակում նրա մասին եղած տվյալները:

ԳԱԹ ԹՖ, 1589 (771):

Չունիսի 2 - Թիֆլիսի Հայ երաժշտական ընկերության պատասխանը ՀԳԿԸ վարչության դիմումին.

«Ի պատասխան «Հայ գրողների» վարչության վերջին գրության (տե՛ս ապրիլի 23) Թիֆլիսի Հայ երաժշտական ընկերության վարչությունը մայիսի 1-ին իր արտակարգ նիստում կազմեց մեր իրականության մեջ անպայման հեղինակություն վայելող և աչքի ընկնող գրողների, գիտնականների և երաժիշտների հետևյալ անվանացանկը:

Հայ գրողներ՝ Հովհաննես Թումանյան, Հովհ. Հովհաննիսյան, Վահան Տերյան, Ավետիք Իսահակյան, Շուշանիկ Կուրդինյան, Արմենուհի Տիգրանյան, Ավետիս Ահարոնյան, Շիրվանզադե, Վրթ. Փափազյան, Նար-Դոս:

Հայ գիտնականներ՝ Կարապ. Կոստանյան, Մանուկ Աբեղյան, Ստ. Մալխասյան, Ստ. Կանայան, դպ. Գալուստ Տեր-Մկրտչյան, Գարեգին եպ. Հովսեփյան, Եր. Լալայան, Թորամանյան, Ադոնց, Հ. Աճառյան, Լեո:

Նկարիչներ և քանդակ՝ Եղիշե Թադևոսյան, Բաշինջաղյան, Ֆետվաճյան, Սուրենյան, Սարյան, Թերլեմեզյան, Հակոբյան, Գյուրջյան:

Երաժիշտներ՝ Հովսեփ Տեր-Դավթյան, Ալ. Սպենդիարյան, Կոմիտաս վրդ., Նիկող. Տիգրանյան, Գևորգ վրդ. Չորեքչյան, Սպիրիդոն Մելիքյան, Սարգիս Բարխուդարյան, Անուշ. Տեր-Ղևոնդյան, Գր. Միր-

զայան, Ռոմանոս Մելիքյան, Անտոն Մայիլյան, Արմեն Տիգրանյան, Ազատ Մանուկյան:

Նախագահ՝ Զ. Տեր-Դավթյան:

1917 թ. հունիսի 2»:

ԹԹ ԹԸԱ, 39/17:

Հունիսի 3 - Մեսրոպ Եպիսկոպոսի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Աբասթումանից:

Հիշեցնում է բանաստեղծին, որ իր նամակներին պատասխանի:

Դժգոհում է, որ հայկական դպրոցները չեն ծառայում իրենց նպատակին. «լազարեթներ» են, գերիների հավաքատեղիներ, անկեղանոցներ է այլն. գործում է միայն 30 աշակերտ ունեցող Աղաբաբյան դպրոցը՝ «մի քանի անկենդան կամ կիսակենդան» ուսուցիչներով:

Դժգոհում է տեղի հասարակությունից, որ անկիրթ է, հեռու է հասարակական հետաքրքրություններից:

Տեղեկացել է, որ Թիֆլիսում մտադիր են հիմնելու Հայկազյան ընկերություն, ակադեմիա, գրադարան: Ոգևորված է այդ գաղափարով, առաջարկում է իր ծառայությունը: Մասնավորապես գրադարանի մասին գրում է, որ պիտի լինի «սովիդ, օտարալեզվյան աղբյուրներով, պիտի ունենա մի քանի լուրջ պատրաստված և գիտական հեղինակությամբ անձինք»:

Հետաքրքրվում է «Հորիզոնի» վիճակով, որ համարում է հուսահատական: Գրում է իր ապագա ծրագրերի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1739 (399 լր.):

Հունիսի 4, Թիֆլիս - Քաղաքային վարկի ընկերության գրասենյակում տեղի է ունենում Հայկազյան ընկերության ժամանակավոր մասնաժողովի առաջին նիստը:

Ներկա են՝ Կ. Ալիխանյան, Հովհ. Թումանյան, Փ. Վարդազարյան, Լ. Ղուլյան, Մ. Բերբերյան, Լ. Շանթ, Ն. Աղբալյան, Արտ. Սեյլանյան, Ստ. Լիսիցյան:

Նախագահ՝ Կ. Ալիխանյան:

Փոխնախագահ՝ Հովհ. Թումանյան:

Գանձապահ՝ Բերբերյան:

Քարտուղարներ՝ Սեյլանյան, Մալխասյան:

Որոշվում է նիստերը պարբերաբար գումարել կիրակի օրերին՝ երեկոյան ժամը 7-ին:

Նախագահը հիշեցնում է, որ վերջին ընդհանուր ժողովի կողմից առաջարկություն է եղել գործի հաջողության համար ստեղծել երկու ենթաժողովներ՝ տնտեսական և ուսումնական: Ժամանակավոր մասնաժողովն ընտրված է այդ նպատակով:

Տնտեսական ենթաժողովի անդամներ են ընտրվում՝ Սեյլանյան, Ղուլյան, Ալիխանյան, ուսումնականի՝ Ալիխանյան, Թումանյան, Ս. Տիգրանյան, Շանթ, Լիսիցյան, Մ. Աբեղյան, Մալխասյան, Բերբերյան, Ն. Աղբալյան:

Ուսումնական ենթաժողովին հանձնարարվում է ապագա հայագիտական ֆակուլտետի դասընթացների ծրագիր կազմել և մասնաժողովի կողմից հաստատվելուց հետո բանակցություններ վարել դասախոսների հետ:

Դասախոսությունները երեկոյան լինելու պատճառով Ա. Միլյանը խոստանում է դասախոսությունների համար ապահովել առևտրական դպրոցի շենքը:

Կայացվում են նաև կազմակերպական բնույթի որոշումներ՝

ա) ամենից առաջ ապահովել կանոնավոր և ճիշտ հաշվապահություն,

բ) վարձել մի ծառա,

գ) բոլոր թղթերի և անդորրագրերի վրա դնել «Հայկազյան ընկերություն» դրոշմանիշը և պատվիրել ընկերության կնիքը,

դ) թարգմանել ընկերության կանոնադրությունը և տպել 10-ական օրինակ հայերեն և ռուսերեն:

5. Կարևորվում է խոստացված անդամավճարները հնարավորինս շուտ գանձելու խնդիրը:

Առաջարկվում է կազմել ցուցակ այնպիսի դրամատերերի, որոնց մասնակցությունը ընկերության գործերին ցանկալի է:

Հանքային ջրեր զնացողներին հանձնարարվեց այնտեղ աշխատանք տանել ընկերության անդամների թիվը մեծացնելու ուղղությամբ:

Արձանագրությունն ստորագրել են՝

Նախագահ՝ Թումանյան,

քարտուղար՝ Լիսիցյան:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/18:

Յուզիսի 7 - Մամուլը տեղեկացնում է:

Հայկազյան ընկերության ժամանակավոր կոմիտեի նախագահ է ընտրվել Կ. Ալիխանյանը, փոխնախագահներ՝ Հովհ. Թումանյանը և Լ. Ղուկասը, քարտուղարներ՝ Ստ. Լիսիցյանը և Ստ. Մալխասյանը, գանձապահ՝ Մ. Բերբերյանը (տե՛ս հունիսի 4):

«Հորիզոն», 1917, թիվ 118:

Յուզիսի 7 - Եր. Արծրունի, Ար. Խաչիկյան* ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին և Հայ գրողների ընկերության վարչությանը:

Բանաստեղծի՝ հունիսի 5-ի «գրությամբ** համաձայն» ուղարկում են «Նորայր Տապաղյանի ոտանավորներու տետրակը»: Իրենց «մեծ վշտի անունովը» ողջունում են «Հ. գրողների նորընտիր վարչությանը»: Հավատացած են, որ նորընտիր վարչությունը բարեհաճ վերաբերմունք կունենա արևմտահայ ստեղծագործողների նկատմամբ:

*) Աղբակցիների մայր միության կենտրոնական վարչության անդամներ:

**) Գրությունն անհայտ է:

ԳԱԹ ԹՖ, 987 (125 III ց.):

Յուզիսի 7, Թիֆլիս - Թումանյանի բնակարանում տեղի է ունենում Հայկազյան ընկերության ուսումնական ճյուղի նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Ներկա են ճյուղի անդամներ Մ. Աբեղյանը, Ն. Աղբալյանը, Մ. Բունիաթյանը, Ստ. Լիսիցյանը, Լ. Շանթը, Ս. Տեր-Ավետիքյանը, Ս. Տիգրանյանը, Ստ. Մալխասյանը: Հրավիրվածներ՝ Հայկազյան ընկերության պատվո նախագահ ակադեմիկոս Ն. Ե. Մառը և Մեսրոպ Եպիսկոպոսը:

Թումանյանը, բացելով նիստը, շնորհակալություն է հայտնում Մառին՝ ընկերության գիտական ճյուղի անդրանիկ նիստին մասնակցելու հրավերն ընդունելու և իր խորհուրդներով ու աջակցությամբ գործին օգնելու համար: Ընկերությունը իր հիմնադրման առաջին օրից մեծ հույս է կապել Մառի հեղինակավոր օժանդակության հետ, և ընկերության անունից նրան ուղարկված հեռագիրը միայն քաղաքավարական ցույց չի եղել, այլ երախտագիտության տուրք դեպի անվանի գիտնականը, որ իր բեղմնավոր աշխատություններով նորանոր հորիզոններ բացեց արևելագիտության առջև, և որի համա-

կրողներն ու աջակցությունը խոշոր գրավականներ կլինեն ընկերության նպատակների հաջող իրագործման:

Այնուհետև տեղեկացնում է, որ նիստի խնդիրն է լինելու հայագիտական ֆակուլտետ բանալու, նրա ձևի, դասավանդվելիք առարկաների, հրավիրվելիք դասախոսների և հարակից այլ հարցերի քննարկումը: Խնդրում է նիստի մասնակիցներին հայտնել իրենց տեսակետները: Ցանկալի է համարում լսել հատկապես Մառի կարծիքը՝ այդպիսի ֆակուլտետի, հետագայում հայկական համալսարանի մասին:

Ն. Մառը, շնորհակալություն հայտնելով հեռագրի և հրավերի համար, ասում է, որ ֆակուլտետի կազմի մասին նախ կցանկանար լսել ժողովականների կարծիքը և հետո հայտնել իր տեսակետը: Ինչ վերաբերում է հայկական ֆակուլտետին և ապագա համալսարանին, ապա դրանք անհրաժեշտ և օգտակար են ոչ միայն հայերի ու Կովկասի, այլև գիտության համար ընդհանրապես: Գիշտ է, գիտությունը հայրենիք չունի, բայց չի կարելի ամեն գիտություն ամեն տեղ միևնույն հաջողությամբ մշակել: Պետրոգրադում վաղուց կա Արևելյան լեզուների ֆակուլտետ, բայց նա անկարող է այնքան տեղ տալ հայագիտությանը, որքան նա արժանի է: Երկար ջանքերից հետո հազիվ կարելի եղավ ապացուցել, թե կովկասագիտությունը հատուկ գիտություն է, և համոզել, որ դրա մշակման ամբիոն հատկացվի գիտությանը ճանաչման: Կովկասում բացվելիք հայկական ֆակուլտետն ու համալսարանը, ինչպես և վրացականը, որ նույնպես մտադիր են հիմնել, ոչ միայն լիակատար ծավալով կմշակեն կովկասագիտության բազմազան ճյուղերը, կովկասյան լեզուները, ներառյալ և բևեռագիտությունն ու կուլտուրան, և սրանով ընդհանուր գիտությանը կծառայեն, այլև տեղական-ազգային լեզուներով մշակելով գիտությունը՝ այն մատչելի կդարձնեն ժողովրդին, նրա մեջ կարթնացնեն հետաքրքրություն դեպի գիտությունը, մի բան, որ Պետրոգրադի ֆակուլտետը պետական լեզվով գրված աշխատություններով ի վիճակի չէ իրագործել: Սա միայն իր կարծիքը չէ՝ իբրև կովկասագետի, այլև ուրիշ՝ ոչ կովկասագետ մարդկանց: Լուսավորության մինիստր կոմս Յ. Տոլստոյը շատ էր աշխատում Կովկասում բացել համալսարան, բայց այն ժամանակվա պայմաններում դա չհաջողվեց: Այժմ, երբ ոչ միայն մեկ, այլև մի քանի համալսարան կարելի է բացել՝ տեղական լեզուներով դասատվությամբ, հարկավոր է դրանք բացել արդեն եղած ուժերով: Այստեղի ֆակուլտետը

գործնականորեն էլ օգտակար կարող է լինել Արևելյան լեզուների ֆակուլտետին նրանով, որ նրան կմատակարարի ոչ միայն տեղական լեզուների իմացությամբ, այլև գիտական մշակված հորիզոն ձեռք բերած երիտասարդ ուժեր, որոնք այնտեղ կամ ուրիշ բարձրագույն ուսումնավայրերում կատարյալ հաջողությամբ և ավելի կարճ ժամանակում կավարտեն իրենց ուսման բարձրագույն դասընթացը: Ուստի, ողջունելով հայկական ֆակուլտետի և ապագա համալսարանի բացման գաղափարը, ցանկություն է հայտնում, որ դրանք սերտ կապ պահպանեն ապագա վրացական համալսարանի հետ, որ իր վրացի աշակերտները որոշել են բացել Թիֆլիսում: Երկու համալսարանները պետք է նաև աջակցեն միմյանց, որ անհրաժեշտ է ոչ միայն գիտության շահերի համար: Ցանկալի է համարում, որ հայկական ֆակուլտետն ու ապագա համալսարանը կապ ու հարաբերություն ունենան Պետրոգրադի Արևելյան լեզուների ֆակուլտետի հետ՝ նրանից ստանալով խորհուրդներ և դասախոսներ, այնտեղ ուղարկելով իրենց սաներին՝ գիտության մեջ կատարելագործվելու:

Ստ. Լիսիցյանը հայկական ու վրացական ապագա գիտակրթական հաստատությունների հիմնումը համարում է պատմական երևույթ և խնդրում է Մառին օգնել իր խորհուրդներով: Կարծում է, որ հայկական ֆակուլտետը և համալսարանը առայժմ պետք է բավարարվեն հայագիտությամբ և դրա հետ անմիջականորեն առնչվող արևելագիտության բաժիններով՝ դրանց շրջանակը հետզհետե ընդարձակելու հեռանկարով:

Ս. Տիգրանյանը հիշեցնում է, որ հայկական ֆակուլտետի հիմնադրման միտքը ծագել է Պետերբուրգում, երբ մի ակումբում խոսք է եղել հայոց պատմություն գրելու մասին: * Թիֆլիսում Թումանյանի նախաձեռնությամբ այդ գաղափարի շուրջ ձևավորվել է համակիրների մի խումբ, որի ջանքերով էլ գաղափարը դրվել է գործնական հունի մեջ: Գործի հաջողության համար ինքը ևս խնդրում է Մառի խորհուրդներն ու աջակցությունը:

Ս. Տեր-Ավետիսյանը, Մ. Աբեղյանը, Ն. Աղբալյանը իրենց ելույթներում խոսում են ֆակուլտետում դասավանդվելիք առարկաների, դրանց ծրագրերի, ուսման տևողության և դրանց հետ առնչվող հարցերի մասին:

Մտքերի փոխանակությունից հետո ընդունվում է որոշում՝

Հայկական ֆակուլտետը պետք է ունենա երեք բաժանմունք՝ լեզվաբանական, մատենագիտական և պատմական:

Յուրաքանչյուր բաժանմունք պետք է ունենա հիմնական և օժանդակ առարկաների առանձին խմբեր:

Բոլոր բաժանմունքների համար պետք է կազմել առարկաների լիակատար կամ իդեալ ցանկ՝ թողնելով դրա իրագործումը իրական հնարավորության:

Ուսանող-ուսանողուհիներ պետք է ընտրվեն միջնակարգ դպրոցներ ավարտածներից: Նրանք չպետք է չափից ավելի ծանրաբեռնված լինեն բազմաթիվ առարկաներով:

Պետք է կազմել ցանկ այն առարկաների, որոնք անխտիր անհրաժեշտ են բոլոր բաժանմունքների համար, և նրանց, որոնք մասնագիտական դասընթաց պիտի կազմեն:

Ընդհանուր համաձայնությամբ բոլոր բաժանմունքների համար կազմվում են պարտադիր և մասնագիտական առարկաների ցանկեր, որոնց վերջնական խմբագրումն ու դասավորությունը հանձն է առնում Ն. Մառը: Արձանագրության մեջ բերվում են այդ ցանկերը:

Ա. բաժանմունք՝ լեզվագիտական

Հիմնական առարկաներ - գրաբար (գործնական և տեսական), միջնադարյան հայերեն, հայ բարբառագիտություն, հայերենի ֆոնետիկա, հայերենի համեմատական (պատմական) քերականություն:

Օժանդակ առարկաներ - ընդհանուր լեզվագիտություն, սանսկրիտ, պարսկերեն (պեհլևիի հետ), վրացերեն (քարեբական լեզուների ներկայացուցիչ), հունարեն, ասորերեն, արաբերեն, թուրքերեն, բենազրերի լեզու:

Բ. բաժանմունք՝ մատենագիտական

Հիմնական առարկաներ – հին, միջին, նոր և ժողովրդական գրականություն:

Օժանդակ առարկաներ - բյուզանդական, ասորական, վրացական և պարսկական գրականություններ:

Գ. բաժանմունք՝ պատմական

Հիմնական առարկաներ – Հայաստանի պատմություն մինչև հայերի գալուստը, հայոց պատմություն հայրենիքում և գաղութներում, հայոց եկեղեցական պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, հայոց իրավունք, հնախոսություն, հնագրություն (ծեռա-

գիրներ), ազգագրություն, արվեստ, դրամագիտություն, աղբյուրների գիտություն:

Օժանդակ առարկաներ – Պատմություն Արևելքի, Հռոմի կայսերական շրջանի, Բյուզանդիայի, Պարսկաստանի, Թուրքիայի, Կովկասի տիրապետության:

*) Հայոց պատմություն գրելու և այդ նպատակով հատուկ ֆոնդ ստեղծելու գաղափարը ծագել էր 1912 թ., երբ Թումանյանը պետերբուրգյան դատավարությունից հետո մարտ–ապրիլ ամիսներին հոգևոր ու գործնական լայն շփումների մեջ էր Պետերբուրգի և Մոսկվայի հայ և ռուս մտավորական շրջանների հետ: Այդ գաղափարով ոգևորված էր նաև Ն. Մառը (տե՛ս 1912, մարտի 24, ապրիլի 25):

ԹԹ ԹԸԱ, թղթ. 36/21:

Հունիսի 9, Թիֆլիս - Թումանյանի բնակարանում տեղի է ունենում ուսումնական ժամանակավոր ենթաժողովի (տե՛ս հունիսի 4) նիստ:

Ներկա են՝ ենթաժողովի անդամներ Հովհ. Թումանյան, Ն. Աղբալյան, Մ. Աբեղյան, Ստ. Մալխասյան, Ս. Տիգրանյան, Ստ. Լիսիցյան, Սմբ. Տեր-Ավետիքյան:

Հրավիրված է ակադեմիկոս Ն. Մառը:

1. Ընթերցվում և հաստատվում է ենթաժողովի՝ հունիսի 7-ի նիստի արձանագրությունը:

2. Ընդառաջելով նախորդ նիստում իրեն ուղղված դիմումին (տե՛ս հունիսի 7)՝ Ն. Մառը ներկայացնում է ապագա համալսարանի հայագիտական բաժանմունքում ավանդվելիք առարկաների կարգավորված ցանկը, դասընթացների մանրամասն ծրագիրը: Նախքան ծրագրի քննարկմանն անցնելը Մառը ենթաժողովի ուշադրությունը հրավիրում է երկու հարցի վրա՝

ա) Քանի որ նախորդ նիստում կարծիքներ հնչեցին, թե համալսարանի հիմնական նպատակը լինելու է հայագիտական առարկաների ուսուցիչներ պատրաստել միջնակարգ դպրոցների համար, անհրաժեշտ է սկզբից ևեթ հստակեցնել նպատակը՝ արդյոք ապագա համալսարանը պիտի գործնական նպատակ ունենա և իր դասընթացը այնպես հարմարեցնի, որ այնտեղից դուրս գան որակյալ հայագետ մանկավարժներ դպրոցների համար, թե հիմնական ձգտումը լինելու է առաջ տանել զուտ գիտությունը՝ առանց նրա գործադրությունը նկատի ունենալու: Պետրոգրադի համալսարանը այս երկրորդ նպատակն ունի աչքի առաջ: Այնպես որ՝ ծրագրի

բնույթն ու բովանդակությունը պետք է բխեն այն բանից, թե ինչ պահանջներով ենք մոտենում խնդրին:

բ) Ենթաժողովը կամենում է, որ ծրագրի մեջ գլխավոր և բացառիկ տեղ ունենան հայագիտական առարկաները: Բայց բանն այն է, որ այդ առարկաներից գլխավորները անկարելի է անցնել առանց Առաջավոր Արևելքի պատմության: Պետրոգրադում ուսանողները այդ ընդհանուր և կից առարկաները լսում են կա՛մ հենց նույն արևելագիտական ճյուղում, կա՛մ լեզվա-պատմագիտական բաժնում: Եթե վերցնենք զուտ հայագիտական առարկաները անջատ, գիտական տեսակետից սխալ արած կլինենք: Ծրագրելով այդպես նեղ շրջանակներով՝ կունենանք ոչ թե համալսարան, ոչ թե նույնիսկ մի ֆակուլտետ, այլ շատ-շատ մի ինստիտուտ:

Մտքերի փոխանակությունից հետո ժողովը հանգում է այն եզրակացության, որ ապագա գիտական հաստատությունը պիտի ձգտի հատկապես հայագիտական առարկաների ուսումնասիրությանն ու մշակմանը՝ առանց աչքի առաջ ունենալու ուսուցիչ պատրաստելու կամ այլ գործնական նպատակ: Լինելով զուտ գիտական հիմնարկություն՝ նա պիտի իր ծրագրի մեջ ոչ միայն ամփոփի բացառապես նեղ մտքով հայագիտական առարկաները, այլև ավելի լայն դնի խնդիրը՝ դառնալով իրոք մի ֆակուլտետ, համալսարանի մի մաս:

Այնուհետև *Ն. Մառը* ծանոթացնում է Պետրոգրադի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի ծրագրին, մատնացույց է անում, թե ինչ փոփոխություններ պիտի կատարվեն՝ նկատի ունենալով տեղական պայմանները: Ապա քննության է դնում իր մշակած ծրագիրը ապագա հայագիտական ֆակուլտետի համար: Բացատրում է, որ ծրագիրն այնպես է կազմված, որ ուսանողները գերծմնան առարկաներով ավելորդ ծանրաբեռնվածությունից, կարողանան ամփոփվել որևէ մասնագիտական ճյուղի մեջ, կենտրոնանալ որևէ հատուկ խնդրի ուսումնասիրության վրա:

Քննարկման ժամանակ Սմբ. Տեր-Ավետիսյանը այն կարծիքն է հայտնում, թե քանի որ հոգեբանությունը և տրամաբանությունը անցնում են միջնակարգ դպրոցներում, ծրագրից կարելի է հանել դրանք՝ տեղը դնելով փիլիսոփայության պատմություն:

Ն. Աղբալյանն առաջարկում է ծրագրում տրամաբանությունից ներառել գլխավորապես մեթոդներին վերաբերող բաժինը, ընդհա-

նուր առարկաների շարքում տեղ տալ նաև պատմագիտական մեթոդոլոգիային:

Ս. Տիգրանյանը կարծում է, որ կարելի է նաև չունենալ հոգեբան կամ փիլիսոփա մասնագետ: Ուսանողներին կարելի է առաջարկել հոգեբանությունը կամ փիլիսոփայության պատմությունը ուսումնասիրել ուրիշ գիտական հաստատություններում կամ բարձրագույն կուրսերում:

Ստ. Լիսիցյանն ավելացնում է, որ փիլիսոփայության պատմությունից չպետք է ծանրանալ միայն հին շրջանի վրա, կարելի է անդրադառնալ նաև միջնադարյան կամ նոր շրջաններին՝ նկատի ունենալով, թե ուսանողին հատկապես ինչ է հետաքրքրում հայագիտությունից:

Ն. Մառը, լսելով բոլոր դիտողություններն ու առաջարկությունները, մի քանի փոփոխություններ է կատարում իր մշակած ծրագրում:

Քվեարկվում և ընդունվում է ծրագիրը վերջնական տեսքով:

Արձանագրության մեջ բերվում է ծրագրի ամբողջական տեքստ, որ զբաղեցնում է 8-9 մեծադիր էջ:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/20:

Հունիսի 9, Թիֆլիս - Մամուլը հաղորդում է, որ Նվարդ Թումանյանը ելույթ է ունեցել Հայ ուսանողության ընդհանուր համագումարում:

Խոսելով դպրոցներում ուսումնական գործի բարեփոխումների անհրաժեշտության մասին՝ կանգ է առել հատկապես կրթության ազգայնացման սկզբունքի, մայրենի լեզվի կարևորության, տարրական, միջնակարգ և ավագ դպրոցների ռամկավարացման և ինքնավարության և դրանց հետ կապված այլ խնդիրների վրա:

«Հորիզոն», 1917, թիվ 120:

Հունիսի 11, Թիֆլիս - Թումանյանի տանը տեղի է ունենում Հայկազյան ընկերության ժամանակավոր վարչության ուսումնական ենթաժողովի* նիստ:

Ներկա են՝ Հովհ. Թումանյան, Սմբ. Տեր-Ավետիքյան, Ստ. Մալխասյան, Լ. Շանթ, Նիկ. Աղբալյան, Ս. Տիգրանյան, Ստ. Լիսիցյան:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Ստ. Լիսիցյան:

Քննվում և փոփոխություններով ընդունվում է նախորդ նիստում (տե՛ս հունիսի 9) կազմված դասատախտակը: Այս առիթով տե-

ղեկացվում է, որ նախորդ նիստում Ն. Մառը հայտարարել է, թե 1917/18 ուստարվա առաջին կիսամյակում ռուսերեն կարող է կարողալ երկու մասնավոր դասախոսություն՝ «Изобретение армянского алфавита» և «История Ани»:

Մառը հանձն է առնում նաև սիստեմատիկ ղեկավարել այն ուսանողների պարապմունքները, որոնք կուզեման աշխատել Անիում:

Մտքերի փոխանակությունից հետո դասախոսների վարձատրության չափը որոշելու համար ընդունվում են հետևյալ սկզբունքները՝

ա) Վարձատրությունը բաժանվում է երկու մասի. մեկը՝ հիմնականը, տրվում է անկախ այն բանից, թե դասախոսը տվյալ կիսամյակում ունի, թե չունի դասաժամեր, մյուսը՝ ըստ դասագին:

բ) Հիմնական վարձատրությունը նշանակվում է՝ գիտական աստիճան ունեցող և գիտական աշխատություններով հայտնի դասախոսներին՝ տարեկան 3000 ռ., միայն համալսարանավարտ կամ միայն գիտական աշխատություն ունեցող դասախոսներին՝ 2000 ռ.:

գ) Այնպիսի առարկաների համար, որոնք պահանջում են զուտ անձնական մասնագիտական հետազոտություն (օրինակ՝ Հայաստանի աշխարհագրություն, հայոց գրականություն, հայոց պատմություն), դասագին մեկ ժամի համար նշանակվում է 300 ռ. (կիսամյակին՝ 150 ռ.), իսկ այնպիսի առարկաների, որոնք գիտության մեջ արդեն լավ ուսումնասիրված են, կամ լեզուների ընդհանուր դասընթացների համար՝ մեկ ժամին տարեկան 200 ռ. (կիսամյակին՝ 100 ռ.):

դ) Վերատեսչության համար՝ 1200 ռ., ուսումնական խորհրդի քարտուղարության համար՝ 1200 ռ.: Գիտական հանդեսի («Մասնաճյուղի տարեգրքի») երկու խմբագիրներից յուրաքանչյուրին՝ 1200 ռ.:

ե. Հատուկ գիտական աշխատություն կամ թարգմանություն պատվիրելիս մասնաճյուղի խորհուրդը ամեն անգամ հատուկ վարձատրություն է նշանակում:

զ) Մասնավոր դասախոսությունների վարձատրությունը մասնաճյուղի խորհուրդը նշանակում է ամեն անգամ առանձին համաձայնությամբ:

է) Մասնագիտական հանդեսի հոդվածների համար յուրաքանչյուր երեսին նշանակվում է 10 ռ. վարձատրություն:

Անցնելով դասախոսների ընտրությամբ՝ ենթաժողովը որոշում է հոգեբանություն, տրամաբանություն, փիլիսոփայության պատմու-

թյուն դասախոսելու համար հրավիրել Սիրական Տիգրանյանին, Մի-
ջին Արևելքի պատմության համար՝ Աշոտ Հովհաննիսյանին, արա-
բերենի համար՝ Մկրտիչ ք. Ղազարյանին, գրաբարի համար՝ Ստ.
Մալխասյանին, գրականության պատմության համար՝ Մանուկ
Աբեղյանին, Հայաստանի աշխարհագրության և հայոց պատմության
համար՝ Ստ. Լիսիցյանին, ֆրանսերենի համար՝ Հր. Աճառյանին:

Սրանք բոլորը՝ որպես մշտական անդամներ, հիմնական
վարձատրությամբ և դասագնով:

Սիայն դասագնով լատիներեն պարապելու համար հրավիր-
վում է Ռ. Աբրահամյանը: Անգլերենի և գերմաներենի համար դա-
սախոսներ չեն ընտրվում:

Վերջում բերվում է ծախսերի ընդհանուր նախահաշիվը՝ 38000
ռուբլի:

*) Որոշ արձանագրություններում կոչվում է նաև ուսումնական խորհուրդ:

ԹԹ ԹԸԱ, 39/16:

Հունիսի 12, Թիֆլիս - Տեղի է ունենում Հայկազյան ընկե-
րության ժամանակավոր վարչության ուսումնական խորհրդի նիստ:

Ներկա են՝ նախագահ Հ. Թումանյան, անդամներ Մ. Աբեղյան,
Լ. Շանթ, Ս. Տեր-Ավետիքյան, Ս. Տիգրանյան, Ստ. Մալխասյանց:

Հանգամանորեն քննարկվում և կազմվում են հայագիտական
ֆակուլտետի երեք՝ լեզվաբանական, պատմական և գրականական
բաժանմունքների առաջիկա երեք տարիների ուսումնական պլանը,
ավանդվելիք առարկաների ցանկը՝ դրանց հատկացվող տարեկան և
շաբաթական ժամաքանակներով, դասախոսների ծանրաբեռնվա-
ծությամբ:

Կազմվում է նաև սպասվող նվազագույն ծախսերի մանրա-
մասն նախահաշիվը՝ հիմնական և «կողմնակի» դասախոսների հա-
մար նախատեսված տարեկան աշխատավարձով, «մի պատկառելի
մատենադարան» հիմնելու հեռանկարով և վարչական ծախսերով:

Սկզբունք է ընդունվում դասերի մի մասը հանձնել գիտու-
թյանը նվիրվածներին, որոնց այդ նպատակով պետք է ապահովել
տարեկան 5000 ռ. վարձատրությամբ (մի մասը՝ իբրև հիմնական
վարձատրություն, երկրորդ մասը՝ դասագին, երրորդ մասը գիտա-
կան աշխատանքների վճար), դասերի մյուս մասը հանձնել կողմ-
նակի դասախոսների՝ նրանց վճարելով մի դասի դասագին 400
ռուբլի:

Առաջին տարվա համար միաձայն հաստատվում են հինգ հիմնական դասախոսներ՝ *Մանուկ Աբեղյան* (հիմնական վարձատրություն 3000 ռ., դասագին 2 դասի, մնացածը գիտական աշխատանքների), *Հրաչյա Աճառյան* (հիմնական վարձատրություն 3000 ռ., 2 դասով, մնացածը գիտական աշխատանքների), *Ստեփան Մալխասյան* (3000 ռ. հիմնական վարձատրություն, 4 դասով, մնացածը գիտական աշխատանքների), *Աշոտ Հովհաննիսյան* (2000 ռ. հիմնական վարձատրություն), *Սիրական Տիգրանյան* (2000 ռ. հիմնական վարձատրություն):

Կազմվում և արձանագրությանն է կցվում դասատախտակ՝ առաջին տարվա ընդհանուր դասընթացի համար լրիվ, երկրորդ և երրորդ տարիներինը՝ միայն լեզվաբանական բաժանմունքի համար:

ԹԹ ԹԸԱ, 39/5:

Հունիսի 14 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Քննվում է շնորհալի որբ երեխաների ուսման հարցը:

Նախագահը հայտնում է, որ ըստ Մոսկվայից Կ. Միքայելյանի հաղորդման՝ տեղի Հայ տիկնանց կոմիտեն որոշել է իր միջոցներով Գևորգյան ճեմարանում ուսման տալ 5 շնորհալի որբերի՝ յուրաքանչյուրին հատկացնելով 400 ռուբլի:

Կ. Միքայելյանը բողոքել է նաև, թե ինչու ժամանակին չեն պատասխանել իրեն: Պետք է տեղեկացնել, որ նրա նամակը ուշացումով են ստացել, բացի դրանից վարչությունն ինքը մտածում է որբերի մասին:

Որոշում են առաջժմ որդեգրել 3 որբերի՝ Վաղարշակ Երիցյանին*, Նորայր Դաբադյանին** (տես հունիսի 7) և Միհրանին*** Այդ մասին հայտնել նրանց խնամատարներին (Ծիրանավոր որբանոց): Ընկերությունը պարտավորվում է այս երեքին էլ ըստ հարկի պատրաստել և ուսում տալ հայկական միջնակարգ դպրոցներում:

Նոր որբերի համար որոշվում է հայտարարություն տալ թերթերում (տես հունիսի 1), որպեսզի գրական նմուշներ և տեղեկություններ ուղարկեն:

Ապա նախագահը հայտնում է, որ Գարեգին Սարգսյանի միջոցով Կովկասյան բանակի սպայական «բատալիոնից» ստացվել է

1226 ռ. 98 կոպ.՝ հոգուտ որբերի ուսման: Որոշվում է շնորհակալություն հայտնել ճակատային սպաներին և զինվորներին:

Նախագահը հայտնում է, որ ընկերությունը «գրական անձեռից» նյութական օժանդակության դիմումներ է ստանում: Բայց նպաստի գումարները սպառված են, ուստի ոչ ոքի օժանդակել չեն կարող:

Մասնավոր աղբյուրներից վարչությունը տեղեկացել է, որ ընկերության անդամ Ալեքսանդր Տեր-Սարգսյան Պարգյանը կասկածվել և ձերբակալվել է՝ իբրև ոստիկանության գաղտնի գործակալ: Այս հիման վրա բարվոք է համարվում հիշյալ պարոնին ժամանակավորապես՝ մինչև ընդհանուր ժողովը, հեռացնել ընկերությունից և այդ մասին մամուլով տեղեկացնել հասարակությամբ:

*) Հետագայում ճանաչված բանաստեղծ Վաղարշակ Նորենց:

**) Հետագայում հայտնի գրականագետ-քննադատ Նորայր Դաբադյան:

***) Անհայտ:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 46/9:

Հունիսի 15, Թիֆլիս - Նամակ Բաքու՝ Երվանդ Թադիանոսյանին:

Գրում եմ. «Վերջապես, սատանի ականջը խլանա ու ոտը կոտրի, մի հողված գրեցի «Գործին»: Հետո, երևի, ուրիշ տեսակի ապրանք էլ կղրկեն: Բայց բանն էն է, որ մինչև էսօր կատարյալ խայտառակ եղա: Ախր, որ էն գլխիցը չէի ուզում ավանս վերցնեմ՝ գիժ հո չէի: Ես իմ բանը գիտեի չէ՞: Հիվանդ, հոգնած, հազար ու մի բանի մեջ խառնված, տրամադրություն չկա: Ես էլ գիտեմ, որ փողի խաթեր են գրելու: Զոռ արիք՝ վերցրի (տե՛ս 1916, հոկտեմբերի 27, 29), խայտառակվեցի: Շատ բան ունեմ, ճիշտ է, բայց որը կիսատ-պռատ, որը անմշակ, որը գլխումս, և այլն, և այլն»:

Գմալու է Պյատիգորսկ՝ քայքայված ջղերը բուժելու, քիչ հանգըստանալու. «Գմամ մի քիչ պաչինկա ըլեմ, վերանորոգվեմ, տեսնենք ինչ է դառնում»:

Ստահոգ է երկրում ստեղծված իրավիճակի համար. «Շարունակ ինձ թվում է, թե որտեղ որ է՝ մեր աշխարհքը տակն ու վրա է լինելու: Ոնց որ մի լցրած խախուտ թվանք ըլի մի խամ մարդու ձեռքին, որ սպասում ես, թե հրես որտեղ որ է կտրաքի ու...»:

ԵԼԺ 10, 262:

<Հունիսի առաջին կես, Թիֆլիս> - Թումանյանին առաջին անգամ հանդիպում է վրաց բանաստեղծ Տիցիան Տաբիձեն:

Նա հիշում է. «1917 թ. ամառն էր: Ես նոր էի Մոսկվայից վերադարձել Թիֆլիս: Ինձ հետ ժամանել էր նաև Կ. Բալմոնտը:

Դա հեղափոխության* հաղթանակի և նրա առաջին խոստումների իրականացման ժամանակաշրջանն էր:

Հովհաննես Թումանյանին ես առաջին անգամ տեսա Վրացական ակումբի այգում ընթրիքի ժամանակ, որը Բալմոնտի պատվին կազմակերպել էր Սանդրո Կանչելին:

Նա միանգամայն անկախ էր պահում իրեն և ետ չէր մնում Բալմոնտից էքսպրոմտներում, նույնիսկ ռուսերենով:

Մեկ ամիս անց «Слово»** թերթում տպագրվեց (տե՛ս օգոստոսի 18) Բալմոնտի բանաստեղծությունը՝ «Тебе, Ованес Туманян»:***

*) Խոսքը վերաբերում է փետրվարյան հեղափոխությանը:

**) «Кавказское слово» օրաթերթ:

***) Բանաստեղծության ճիշտ վերնագիրն է «Ованесу Туманяну» (տե՛ս օգոստոսի 3):

ԹԺՀ, 728, 970:

<Հունիսի առաջին կես> - Ալ. Բաժբեուկ-Մելիքյանը և վրաց գեղանկարիչ Լադո Գուդիաշվիլին Թիֆլիսում բացված գեղանկարչական ցուցահանդեսում ծանոթանում են Թումանյանի հետ:

Գուդիաշվիլին հիշում է. «1917 թվականն էր:

Թիֆլիսի շոգ ամառն ստիպել էր ինձ և նկարիչ Բաժբեուկ-Մելիքյանին երկար նստել Գոլովինսկի պողոտայի նստարանին՝ ցուցահանդեսի շինության դիմաց, ուր մեր նկարները քրտնում էին շոգից: Ցուցահանդեսում մարդիկ շատ կային, նրանց թվում՝ բանաստեղծներ (առաջին այցելուներից մեկը գրող Շիրվանզադեն էր), քննադատներ և մեկենասներ:

Հանկարծ երևանյան հրապարակի կողմից երևաց մեկը, որ գալիս էր ցուցահանդեսի ուղղությամբ: Հովհաննես Թումանյանն էր: Ես և Սաշան, սաստիկ հետաքրքրված, հետևեցինք, թե ուր է գնում բանաստեղծը: Դե իհարկե, չսխալվեցինք. նա մտավ մեր նկարների ցուցահանդեսը:

Նա շատ ուշադիր հետևում էր նկարիչների անուններին: Մենք, առանց երկար մտածելու, որոշեցինք մոտենալ և ծանոթանալ մեծ բանաստեղծի հետ: Բանաստեղծը շատ գոհ էր մեր բարեկամության

և միատեղ կազմակերպած ցուցահանդեսի համար: Կարճատև զրույցից հետո բանաստեղծը խնդրեց Սաշային ընկերակցել իրեն միասին դիտելու մեր նկարները: Նա կանգ առավ Բաթբեուկ-Մելիքյանի «Տաճարի տոնը» մեծ նկարի առաջ, երկար նայեց այդ նկարին, որից հետո հարցրեց հեղինակին, թե ինչից է, որ փոքր նկարներում ավելի զուսպ են տրված լույսի էֆեկտները, քան այս մեծ կտավի վրա, որտեղ, սակայն, ավելի ուժեղ են զգացվում լույսն ու ուրախությունը, որոնք բնորոշ են մեր երկրին: Իմիջիայլոց, բանաստեղծին դուր եկավ Բաթբեուկ-Մելիքյանի «Հայուհու գլուխը» էսյուդը, որ նա գնեց ցուցահանդեսում:

Բաթբեուկ-Մելիքյանի նկարի կողքին կախված էր իմ նկարը՝ «XII դար» անունով: Թումանյանը հետաքրքրվեց այդ նկարի բովանդակությամբ: Ես բացատրեցի, ստացա մի խիստ հաճելի քննադատություն, որի մեջ բանաստեղծը շեշտեց վրացական հնագույն մշակույթի ու կենցաղի ժամանակաշրջանը հիշեցնող սյուժեի մեկնաբանության անսահման խորությունը:

Իհարկե, ցուցահանդեսի ամենաշահագրգռված այցելուն Հովհաննես Թումանյանն էր, բայց շոգը ստիպում էր մեզ թողնել ցուցահանդեսի դահլիճը: Ցուցահանդեսի շենքին, հրաժեշտ տալով մեզ, նա շնորհակալություն հայտնեց ստացած հաճույքի համար և կրկին անգամ ընդգծեց մեր բարեկամությունը և համատեղ աշխատանքը:

Մենք հաճախ հիշել ենք նրա խորհուրդները: Ամենից ավելի ես չեմ կարողանում մոռանալ բանաստեղծի դեմքը, հմայքը և ժպիտը, որոնք սեր էին ներշնչում դեպի այդ Մեծ մարդը»:

ԹԺՀ, 719-720:

<Հունիսի առաջին կես> - Թումանյանի տանը Սարգիս Բարխուդարյանը կատարում է «Անուշի» թեմայով գրած իր սիմֆոնիկ պոեմը:

Բարխուդարյանը հիշում է. «1917 թ. մայիսին, վերադառնալով տուն, որոշեցի այցելել Հովհ. Թումանյանին և ծանոթացնել նրան Պետերբուրգում ավարտած «Անուշ» սիմֆոնիկ պոեմիս երաժշտությամբ: Իմ ցանկությունն իրականացավ նույն թվականի ամռանը:

Ընկերոջս՝ Հովհ. Թումանյանի ավագ որդու՝ Մուշեղի հետ նախապես պայմանավորվելով՝ նշանակված օրը վերցրի «Անուշ» սիմֆոնիկ պոեմի կլավիրը, գնացի նրանց տուն: Իմ երաժշտությունը

լսելու համար հավաքվել էր Թումանյանի ողջ գերդաստանը: Կային նաև հյուրեր:

Հավաքվածներին և Հովհ. Թումանյանին նախ ծանոթացրի «Անուշ» պոեմի երաժշտական ձևի կառուցվածքին, հետո սկսեցի նվագել: Պոեմի յուրաքանչյուր մասի կատարումից առաջ ես հակիրճ պատմում էի երաժշտության բովանդակությունը:

Հավաքվածները հատուկ ուշադրությամբ և մեծ հետաքրքրությամբ էին լսում պոեմի երաժշտությունը: Նվագելիս մերթ ընդ մերթ նայում էի այն կողմը, որտեղ նստած էր Հովհ. Թումանյանը, և տեսնում էի, թե ինչպես նա լարված լսում է ու հետևում երաժշտության զարգացմանը: Տեսա նաև, որ Թումանյանին բնորոշ ժպիտը չէր չքանում նրա դեմքից: Նկատեցի, որ նա շատ է զգացվել երաժշտությունից, և նրան շատ է դուր գալիս երաժշտության ժողովրդական կոլորիտը: Երբ վերջացրի նվագս, Թումանյանը խրախուսանքի խոսքեր ասաց, գտավ, որ ինձ հաջողվել է երաժշտությամբ վերարտադրել «Անուշ» պոեմի բովանդակությունը, և շնորհականություն հայտնեց իրեն պատճառած բավականության համար: Երեկոյի մնացած մասը մենք անցկացրինք թեյի սեղանի շուրջը բարեկամաբար զրուցելով: Հրաժեշտին Թումանյանն ինձ հաջողություն մաղթեց ստեղծագործական հետագա աշխատանքի մեջ և խնդրեց այցելել իրենց:

ԹԺՀ, 721-722:

<Հունիսի կեսեր>, Թիֆլիս - Որբանոցի սան սկսնակ բանաստեղծ Վաղարշակ Երիցյանը (Նորենց) հանդիպում է Թումանյանին նրա բնակարանում:

«Մի երկտող հանձնարարականով» սկսնակ պատանին հուզմունքով սեղմում է «դռան զանգի կոճակը»: Սպասասենյակում նրան ընդառաջ է գալիս ինքը՝ բանաստեղծը, և ուղեկցում պատշգամբ, ուր ճաշի սեղան էր բացված՝ բազմաթիվ հյուրերով: Հյուրերի թվում էր նաև Անդրանիկը, որ ճանաչում և հետաքրքրվում է սասունցի պատանու ընտանիքի ողբերգական ճակատագրով:

Հուլագիրը շարունակում է. «ճաշն ավարտված էր: Անդրանիկը տրտմորեն լուռ էր: Ես, ինքս ինձ գտած, անհանգիստ շարժումներ էի անում: Թումանյանն, այդ նկատելով, ոտի կանգնեց և «Պարոններ, ինձ մի քանի բոլակով ներեցեք» ասելով՝ հեռացավ սեղանից:

- Վաղարշակ, արի՛...

Ես նորից շփոթվեցի և թողեցի ճաշասեղանը՝ առանց ցտեսություն ասելու: Հետագայում ես այնքա՛ն եմ ափսոսացել, որ չեմ սեղմել Անդրանիկի ձեռքը:

Թումանյանն ինձ տարավ իր աշխատանոցը, նստեցրեց դեմը, մի դարակից հանեց տետրը, դրեց սեղանի վրա: Ես ճանաչեցի իմ բանաստեղծությունների տետրերից մեկը:

Հարցրեց, թե ինչպե՞ս եմ ապրում որբանոցում, ինչպե՞ս եմ սովորում, ի՞նչ գրքեր եմ կարդում, շարունակո՞ւմ եմ գրել:

- Ես ծանոթացել եմ քո տետրին: Եթե լավ սովորես և աշխատես, կարող ես բանաստեղծ դառնալ: Սյո նկատի ունենալով՝ մեր ընկերությունը որդեգրել է քեզ: Դու այժմ կմնաս որբանոցում, բայց ինչ կարիք որ ունենաս, կդիմես ինձ: Չքաշվես, ուզած ժամանակ կգաս: Բացի դասագրքերից, ի՞նչ ես կարդում: Շատ կարդա: Ես կգրեմ Բարեգործական ընկերության գրադարանի պետին՝ պարոն Օհանյանին, որ ուզածդ գիրքը տա կարդաս: «Գիր» գրախանութից մեր ընկերության հաշվին կվերցնես քեզ անհրաժեշտ դասագրքերն ու գրականությունը: Ձեզ ռուսաց լեզու սովորեցնո՞ւմ են: Ո՞չ: Էդ լավ չէ: Անհրաժեշտ է ռուսերեն սովորել...

Եվ այդպես շարունակեց բավական երկար: Զրույցի վերջում նա ինձ տվեց երկու հանձնարարական ծրար՝ մեկը՝ Բարեգործական ընկերության գրադարանի պետին, մյուսը՝ «Գիր» գրախանութի տնօրենին հանձնելու համար:

Թումանյանն ինձ ուղեկցեց մինչև սանդուղքների գլուխը: Նորից ասաց, որ ուզածս ժամանակ չքաշվեմ իրեն դիմելու և ինձ ճանապարհ դրեց իր հայրական ժպիտով:

ԹԺՀ, 848-851:

Հունիսի 17 - Գրում է «Մայրըդ էն օրն ասում էր ինձ...» բանաստեղծությունը:*

*) Ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Աշխենի ալբոմում:

ԵԼԺ 1, 293:

<Հունիսի 18>, Թիֆլիս - Մի օր իր աշխատասենյակում հափշտակված ունկնդրում է Անդրանիկին, որ գրավիչ պատումով մի միջադեպ է ներկայացնում իր վարած կռիվներից:

Վահան Թոթովենցը հիշում է. «Մի օր մի ընկերոջ հետ միասին (Ներսես Դշխոյան) մտնում ենք Թումանյանի սենյակը՝ ողջերթ մաղ-

թելու նրան: Թուճանյանը պիտի գնար Հանքային ջրերը բուժվելու: Մենք ներս մտանք այն մոմենտին, երբ Անդրանիկը պատմում էր ինչ-որ կռվի պատմություն: Թուճանյանը կանգնած էր՝ մի ոտը դրած թախտի վրա, թևերը բարձրացրած վեր, փայլուն, արծաթուն աչքերով լսում էր:

-Թուրս քաշեցի՜...- ասաց Անդրանիկը և կանգ առավ:

Նա ուներ այդպիսի սովորություն: Այդ պառուզան երբեք չէր դանդաղեցնում պատմությունը, այլ ընդհակառակը, ավելի խորացնում էր, կարծես կանգ էր առնում, ժամանակ էր տալիս, որ լսողը ընդգրկի պահը:

Թուճանյանը չհամբերեց և սկսեց գոռալ.

-Խփի՛ր, խփի՛ր...

Մենք, որ դրսից էինք եկել և չէինք կարող տարվել պատմությանը, հազիվ կարողացանք զսպել մեր ծիծաղը:

Նրանք երկար ժամանակ շարունակեցին տարվել այդ պատմությանը, մինչև ներսից եկան իմաց տալու, որ գնացքի ժամանակը գալիս է, պետք է գնալ կայարան»:

ԹԺՀ, 141-142, 921: ԵԼԺ 10, 681:

Հունիսի 20 - Մամուլում հրապարակվում է Դսեղից ուղարկված մի նամակ՝ Ա. Բաղոյան ստորագրությամբ, որտեղ բողոքներ կան Թուճանյան ընտանիքից:

«Ընկերներ,- գրում է նա,- վատ օրերում էինք ապրում մենք՝ Դսեղա շրջանի ռանչպար ժողովուրդներս, որովհետև մի կողմից վանքի ծառայողներն էին նեղացնում, մյուս կողմից Լոռվա պրիստավը: Իհարկե, պրիստավը ինքը չէր մեզանից կաշառք առնում կամ ծեծում, այլ իրեն ստրկացրած Դսեղի բնակիչների միջոցով, որոնք ներկայումս ժողովրդի շահերի պաշտպան են դարձել: Գյուղացիները մանավանդ ատում են Գր. Թուճանյանցին: Այս պարոնը դարմանի մի մեքենա ուներ Դսեղ գյուղում, մեքենայի վրա դարման կապողներից ամեն մեկից հարյուր ռուբլի էր առել՝ ասելով, թե զինվորությունից կազատի: Այդ անիրավը բավական չէր համարում, որ դարմանը ձրի էր կապել տալիս, այլև պարոն Լոռվա պրիստավի միջոցով հրամայել էր տալիս տանուտերին, որ գյուղացիները ձրի տանեն Քոլագերանու կայարանը - 5 վերստ ճանապարհ: Տանուտերն էլ հենց այդպիսի գործի էր ման գալիս, որ մի քանի շափ կաշառք առնի. մեկին ուղարկի, մյուսին՝ ոչ: Տանուտերի օգնականն էլ դամ-

շին վերցրած, ծեծ ու փշուր էր անում մեզ: Ձմեռվա ցուրտ ժամանակին զգրի միջոցով եզները գոմից դուրս էր անել տալիս:

Մեր հարևան գյուղում մարդասպանություն էր կատարվել և ինչ-որ հրաշքով այդ հանցանքը կապեցին մեր գյուղի վզին և հետո մեզ պատասխանատվությունից ազատելու համար պրիստավը հրամայեց, որ 40 սայլ գնան, դարման տանեն ձրի:

Ընկերներ, ահա այդպիսի արյուն ծոող, հին ռեժիմի մարդիկ այժմ կամենում են գյուղացիներին պաշտպան լինել, բայց ինչպես որ գայլը ոչխարի հետ վարվի, նույնպես էլ նրանք պետք է անեն: Դուք գիտեք, ընկերներ, թե անցյալ տարիներում Դսեղը և վանքի մյուս գյուղերը ինչ օր էին քաշում ողորմածիկ Ռ. Թումանյանցի ձեռքից և այժմս դուրս է եկել մի Ռոստոմ- էլի էդ ազգիցը: Ժողովուրդը կրակումն է մնացել այդ տան <<ղոչաղություններից>>: Էլ ինչ ասեմ, այդ պ. Թումանյանցիները, մեծից մինչև փոքր, գյուղացիներին վնասելով եկել են և այդպես էլ գնալու են:

Ընկերներ, իհարկե, այդպիսի կապիտալիստներն ուրախ կլինեն, որ պատերազմը երկարի, քանի որ ռանչպարը աշխատում է, իսկ իրենք՝ ուտում և հարստանում: Գյուղացիները մեղավոր չեն նրան ջոկելում, քանի որ կարծում էին, որ էլի հին օրենքներն են գործում, որոնց ժամանակ մեր թշնամիների ու կեղեքիչների խոսքն էր առաջ գնում: Անգրագետ ժողովուրդը չի հասկանում, թե այս ազատությունը ինչի համար եղավ, և որ նա մեզ նման թշվառների գործ է: Չկա քարոզիչ, որ տգետ ժողովրդին կազմակերպի, գիտակցության բերի, բռնցքների ձեռքից ազատի և նրանց նոր ճանապարհներ ցույց տա, որոնք խեղճ ու կրակ մարդկանց համար մի քիչ տանելի պայմաններ ստեղծեն»:

«Պայքար», սոցիալ. դեմոկրատ. օրաթերթ, խմբ. կոլեգիա Ա. Մռավյան, Ս. Խանոյան և ուրիշներ, Թիֆլիս, 1917, թիվ 53:

Հունիսի 25 - Ռուսերեն թարգմանությամբ տպագրվում են Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքը, «Ասում են ուռին» հատվածը և «Սրտիս թագուհի» բանաստեղծությունը:

Թարգմ. Մ. Դեռ (Ջանուկյան):

«Армянский вестник», Մոսկվա, 1917, թիվ 25, էջ 8-9:

Հունիսի 25 - Տպագրվում է Յու. Վեսելովսկու գրախոսականը՝ նվիրված «Поэзия Армении» ժողովածուին:

Բարձր գնահատելով ժողովածուն՝ իբրև իր տեսակի մեջ եզակի երևույթ՝ լավագույն թարգմանությունների շարքում առանձնացնում է նաև Թումանյանի «Անուշը»:

Բացթողում է համարում, որ հատորում համեմատաբար փոքր տեղ է հատկացվել ազգային-ազատագրական թեմաներով գործերին:

«Армянский вестник», Մոսկվա, 1917, թիվ 25, էջ 15-16:

Հունիսի 27 - Արտավազդ Թումանյանի նամակը Պյատիգորսկ՝ հորը և քրոջը՝ Նվարդին՝ Վանից:

Հորը. «Հայրիկ ջան!

Չորս օր է՝ արդեն Վան եմ: Վաղն առավոտ գնում եմ Գյոշք, Անգղ-Ոստան սննդատու կայանները բանալու:

Գուցե մի քանի շաբաթ կամ ավելի քիչ մնամ: Շատ է հետաքրքիր էն կողմերը լինել:

Ճանապարհին, իհարկե, ոչինչ չպատահեց, և անվտանգ հասնք Վան: Պապովյանին հանդիպեցի, որ եկել էր Բերկրիի դեպքերը քննելու:

Ընդհանրապես հայ-քրդական հարաբերությունները շատ սուր կերպարանք են ստացել, առանձնապես մի քանի գերմանացի զինվորականների շնորհիվ: Սրանք երևի շուտով կմաքրվեն էստեղից:

Մինչև հիմա ձեզանից ոչ մի նամակ չունեմ, ոչ էլ Թիֆլիզից: Շատ է հետաքրքիր, արդյոք չե՞ք փոշմանել Պյատիգորսկ գնալով, ո՞նց եք ապրում, Մուշեղից ի՞նչ նորություն կա:

Ամենքիդ ամուր համբուրում եմ:

Արտիկ»:

ԹԶ ԱՐՏ, 216-217:

Հունիսի 31 - Վահան Փափագյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Խնդրում է բանաստեղծի աջակցությունը՝ մի երեխայի նյութականը ապահովելու և Ներսիսյան դպրոց ընդունվելու համար:

ԳԱԹ ԹՖ, 2301 (480 լր.):

Հունիս - Տպագրվում է Վ. Մենակի «Վահան Տերյան (քննական տեսություն)» հոդվածը:

Բնութագրելով Տերյանի քնարերգությունը՝ մասնավորապես գրում է. «...Անջատումը հայրենի իրականությունից բանաստեղծի

համար ունի իր թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը. մի կողմից Տերյանը ազատել է իր ստեղծագործությունը մեր իրականության ավերիչ ազդեցություններից, իսկ մյուս կողմից նրա պոեզիան դրանով զրկվել է այն առանձնահատուկ կոլորիտից, որ այնքան հարազատ է դարձնում մեզ համար, օրինակ, Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի քնարները»:

«Գեղարվեստ», Թիֆլիս, 1917, թիվ 6, էջ 232-241:

Չուլիսի 2 - Մամուլում հաղորդագրություն:

Բոստոնում լույս է տեսել հայոց բանաստեղծության անգլերեն ժողովածու՝ «Armenian poems» խորագրով, Ալիս Սթոուն Բլախուելի (Alise Stone Blachwell) թարգմանությամբ:

Ժողովածուում տեղ են գտել Հովհ. Թումանյանի, Պ. Դուրյանի, Մ. Նալբանդյանի, Ալիշանի, Ռ. Պատկանյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Խրիմյան Հայրիկի, Հովհ. Հովհաննիսյանի և ուրիշների բանաստեղծություններից:

«Հորիզոն» 1917, թիվ 137:

Չուլիսի 2 - Տպագրվում է Յու. Վեսելովսկու՝ «Поэзия Армении» ժողովածուին նվիրված գրախոսականի շարունակությունը (սկիզբը տե՛ս հունիսի 25):

Գրում է թարգմանությունների որակի մասին՝ նկատելով որոշ թերություններ՝ ազգային լեզվամտածողությանը համապատասխան բառընտրության տեսանկյունից: Մասնավորապես. «В переводе стихотворения Туманяна «Голубиный скитъ» сказывается, с другой стороны, стремление ввести некоторые архаизмы в духе памятников древне-русской письменности. Мы узнаем, например, что услышав нашествии Тамерлама на Армению, «Седовласый мних» Овань «осерчал зело, затужилъ вельми». В общем, с такими приемами переводчиков мы встречаемся в книге сравнительно редко; да многия стихотворения не давали и повода для подобной неожиданной стилизации в русском духе...».

Վերջում, դարձյալ բարձր գնահատելով ժողովածուն, նկատում է, որ հետագայում վերահրատարակելու դեպքում կարելի է անել որոշ հավելումներ:

«Армянский вестник», Մոսկվա, 1917, թիվ 25, էջ 15-16:

Հուլիսի 10-12, Պյատիգորսկ - Նամակ Թիֆլիս՝ Օլգա և Համլիկ Թումանյաններին:

Գրում է հանգստավայրի իրենց առօրյայի, իր առողջության, երեխաների մասին: * Լավ են տեղավորվել, սնունդը առատ է, ընդհանուր պայմանները լավ են: Մասնավորապես. «Մի բարեկամ ունենք - Բզնունի, ** որ ամեն բանում օգնում է, ամեն տեսակ լավություն անում, շաբաթը երկու անգամ էլ ճաշի հրավիրում, շատ էժան էլ ամեն տեսակ ապրանք տալիս»:

Նամակ է ստացել Արտիկից: Արեգից ու Մուշեղից լուր չունի: Խորհուրդներ է տալիս Թիֆլիսի կայազորում ծառայող որդուն՝ Համլիկին. «... Աշխատիր քեզ լավ պահել, որ էդ վոկզալ կոչվածը ֆրոնտից էլ վատ տեղ է, *** միշտ զգույշ եղիր և խոհեն: Գիշերներն էլ մի ուշանար և մենակ մի մնաք երբեք, ոչ դու, ոչ մայրիկը»:

Խնդրում է իր գրադարանից ուղարկել Жаклоу-3 «В дѣбрах Инду» գիրքը:

*) Բանաստեղծի հետ հանգստանում էին դուստրերը՝ Աշխենը՝ որդու՝ Բորիկի հետ, Սեդան, Թամարը, Արփիկը, Անուշը:

**) Պարսկահայ վաճառական Հմայակ Բզնունին, որին բանաստեղծը նվիրել է «Անուշի» առաջին հրատարակության մի օրինակը՝ հեղինակային ընծայականով:

***) Համլիկը իր զինվորական ծառայությունն անցկացնում էր Թիֆլիսի երկաթուղային կայարանում:

ԵԼԺ 10, 203-204, 631:

Հուլիսի 14 - Հրաչյա Աճառյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Երկար ժամանակ սպասել է, թե «Հայկազյան ընկերության վարչությունից» պաշտոնական հրավեր կստանա Թիֆլիս մեկնելու համար: Անհանգստանում է, որ հրավերն ուշանում է, որովհետև «Նախիջևանի թեմական դպրանոցում սովորություն կա, որ ամեն ուսումնական տարվա վերջում ուսուցիչները հայտնեն իրենց մնալու կամ հրաժարվելու մասին», իսկ ինքը դեռ չի կարողանում կողմնորոշվել: Մի կերպ ձգձգել է իր պատասխանը: Բայց որովհետև այլևս անկարելի է, ուստի խնդրում է «այս նամակն ստանալուց անմիջապես հետո ապահովյալ ծրարով և պաշտոնական մի գրությամբ հայտնել Ձեր մտադրությունը, որպեսզի ըստ այդմ ես ևս կարողանամ պատասխան տալ դպրանոցի հոգաբարձության: Ձեր պատաս-

խանը ուշանալու կամ բացակայելու դեպքում բնական է, թե ես ազատ եմ համարվում»:

Ինքը մեկնում է Բաքու և խնդրում է նամակներն ուղարկել Բաքվի հասցեով:

ԳԱԹ ԹՖ, 868 (493):

Յուլիսի 15 - Գնդապետ Ն. Ռոզանովի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Կիևից:

Գրում է. «Разбурная дома бумага, я нашел переписку по Вашему делу*, которая воскресила во мне много пережитых минут в дни насилья и произвола»: Այնուհետև ներկայացնում է իր անառողջ վիճակը, անդրադառնում բանակի կացությանը: Վեր է հանում թույլ տրված սխալներ՝ շարադրելով իր նկատառումներն ու ցանկությունները: Ապաքինվելուց հետո շարունակելու է զինվորական ծառայությունը:

Խնդրում է պատասխանել նամակին:

*) Խոսքը պետերբուրգյան դատավարության մասին է:

ԳԱԹ ԹՖ, 1958 (435 լր.):

<Յուլիսի կեսեր>, Պյատիգորսկ - Նամակ Կոշոր՝ Փիլիպոս Վարդազարյանին:

Գրում է իր ինքնագագաղության մասին. «Պյատիգորսկ սկզբում շատ թուլացա, մեկ՝ որ սկսել էի հանգստանալ՝ նրանից, մեկ էլ նրանից, որ վանմաներ էի ընդունում: Էսպես բացատրեցին բժիշկները, նրանք գտան, որ օրգանական հիվանդություն չունեմ, այլ սաստիկ հոգնած եմ:

Այժմ լավ եմ արդեն – կազդուրվում եմ նկատելի կերպով»:

Եղել է Լեռնոստովի տանը, դուելի վայրում, «նրա ման եկած տեղերում». «Նրա գրվածքների մեջ շատ կտորներ միայն էստեղ կարելի է հասկանալ»:

Հանդիպել է Գրեչանինովի հետ, որ ցանկանում է «Անուշի» թեմաներով օպերա գրել.* «Եկել էր ինձ հետ խորհրդակցելու: Գոհ մնաց: Ինձ վրա էլ էն տպավորությունը թողեց, որ նրանից բան է դուրս գալու»:

Տեղեկացնում է, որ Կիսլովոդսկում Հայ գրողների ընկերությանը մի տուն են նվիրել, մի քանի անդամներ արդեն հրավիրվել են հանգստանալու: «Մի քանիսի հետ» խոսելու է նաև Հայկազյան ընկերության մասին:

*) Այս մասին ուրիշ փաստ հայտնի չէ:
ԵԼԺ 10, 264-265:

Օգոստոսի 3, Պյատիգորսկ - Մասնակցում է քաղաքային ժողովարանի դահլիճում կազմակերպված հայկական երեկույթին և երեկույթից հետո կայացած ճաշերույթին:

Կոմպոզիտոր Ազատ Մանուկյանը հիշում է. «Օգոստոսի 3-ն է: Հայտարարված է հայկական ճոխ երեկույթ Պյատիգորսկի քաղաքային ժողովարանի դահլիճում: Մասնակցում են Ամիրագոյի խմբի օպերային երգիչներ, քառաձայն խումբը իմ ղեկավարությամբ: Մեծ տառերով գրված է բանաստեղծ Բալմոնտի անունը, որը մասնակցելու է երեկույթին իր ելույթով:

Հովհաննեսի առանձին խնդրանքով բանաստեղծը հանձն էր առել մասնակցելու հայկական երեկույթին իր արտասանությամբ:

Երեկույթն անցավ փայլուն հաջողությամբ: Բալմոնտի ելույթը հայ պոեզիայի մասին և արտասանությունը Բոյուսովից՝ մեծ օվացիաներ առաջ բերեց:*) Հովհաննեսը չհամբերեց, բարձրացավ բեմ և իր վառվռուն ճառով և հետո էլ իր համբույրով Բալմոնտի հետ խանդավառություն առաջ բերեց դահլիճում: Այդ գիշերվա եկամուտը ծածկեց առողջարանի պարտքը:**

Համերգային բաժնից հետո կայացավ բանկետ, ուր ներկա էին բոլոր մասնակցողները: Հովհաննեսը նստել էր Բալմոնտի կողքին: Թամադա ընտրվեց Հովհաննեսը: Փոխանակվեցին կենացներ ու ճաշեր գրականության և արվեստի շուրջ:

Արտիստների ելույթները, սեղանակիցների խմբական երգերը և առանձնապես Հովհաննեսի սրամիտ ու բովանդակալից կենացները անվերջ ծափեր էին առաջ բերում:

Հուզումնալից խոսք ասաց Բալմոնտը, որը Հովհաննեսին համարեց ամենախոշոր բանաստեղծը: Դարձյալ համբույր, դարձյալ խանդավառություն:

Բանկետը վերջացավ լուսաբացին»:

*) Բալմոնտը կարդացել է «Ախթամար» բալլադի իր թարգմանությունը և Թումանյանին նվիրված հանպատրաստից բանաստեղծությունը (տե՛ս սեպտեմբերի 24):

**) Երեկույթը Թումանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր առողջարանի 4000 ռուբլի բանկային պարտքը փակելու համար:

ԹԺՀ, 516-517:

Օգոստոսի 7 - Հրաչյա Աճառյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին Բաքվից:

Հետաքրքրվում է, թե «ի՞նչ եղավ Հայկական Համալսարանի բացման խնդիրը»: Այնուհետև. «Ես Նախիջևանից մեկնելու ժամանակս ընդարձակ և ապահովյալ նամակ էի գրել Ձեզ՝ Թիֆլիսի հասցեով (տե՛ս հուլիսի 14.- Խմբ.), բայց այժմ լսելով, որ հեռացել եք Թիֆլիսից, պարտք համարեցի այս երկտողով դիմել Ձեզ»:

Ինքը Բաքվում է, Նախիջևան է մեկնելու օգոստոսի 23-ին:
ԳԱԹ ԹՖ, 869 (492):

Օգոստոսի 10 - Կոնստանտին Ալիխանյանի (Ալիխանով)* նամակը Պյատիգորսկ՝ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Պատասխանելով բանաստեղծի նամակին** շնորհակալություն է հայտնում իր մասին ասված բարի խոսքերի համար: Շատ ուրախ է նրա առողջական վիճակի բարելավման համար:

Հետաքրքրվում է Հայկազյան ընկերության գործերով՝ հատկապես կարևորելով Թումանյանի դերը: Հայտնում է, որ ամռանը մնալու է Թիֆլիսում՝ իր գործերը կարգավորելու համար:

*) Մեծահարուստ բանկային գործիչ, որ պետք է լիներ Հայկազյան ընկերության նախագահը (ԵԼԺ 10, 224):

**) Թումանյանի այդ նամակն անհայտ է:

ԳԱԹ ԹՖ, 801 (225 լր.):

Օգոստոսի 11, Պյատիգորսկ - Նամակ Բաքու՝ Հրաչյա Աճառյանին:

Պատասխանում է տարբեր ժամանակներում Աճառյանից ստացած երեք նամակներին (տե՛ս 1916, նոյեմբերի 6, 1917, հուլիսի 14, օգոստոսի 7), որտեղ նա հետաքրքրվում է Հայկազյան ընկերության կողմից հիմնադրվելիք համալսարանով, ինքը մասնակցություն ունենալու է գործին, թե՞ շարունակի մնալ Նոր Նախիջևանում: Թումանյանը պատասխանում է, որ նրա թեկնածությունը առաջինների շարքում է:

Մասնավորապես. «Հայկական համալսարանը լինի, թե չլինի՝ Ձեր խնդիրը ես համարում եմ վերջացած: Հայկազյան ընկերությունը միայն համալսարանի համար չի, այլև նա իրենց կողմնակի պաշտոններից ազատելու է մեր գիտության, գրականության ու գեղարվեստի մարդկանց (հարկավ ոչ ամեն մեկին) և նրանց հնարավորություն է տալու, որ իրենց գործով ու իրենց մասնագիտությունով

զբաղվեն: Եդ մարդիկ պետք է ընտրվեն աշնանը, բայց էն շատ քչերից մեկը, որոնց մասին խոսք է եղել, և որոնց վիճակը նախորոշված է՝ դրանցից մեկը Դուք եք:

<...> Ես կարող եմ Ձեզ վստահացնել, որ Դուք արդեն Հայկազյան ընկերության ընտրած գիտնականներից մեկն եք և աշունքից ազատ պիտի զբաղվեք Ձեր մասնագիտությամբ:

<...> Համալսարանի գործը էսպես եղավ: <...> Որոշվեց՝ փոխանակ համալսարանը բանալու՝ առայժմ մեր գիտության մարդկանցից ոմանց հնարավորություն տալ Հայկազյան ընկերության միջոցներով՝ Ռուսաստան թե արտասահման՝ պատրաստվելու առաջիկա համալսարանի համար: Եստեղ էլ դարձյալ Ձեզ ի նկատի ունենք:

Վերջապես Ձեզ ի նկատի ունենք էն խմբի մեջ, որ կազմված է լինելու մեր գիտնականներից ու բանասերներից, և որին առայժմ Հայկական ակադեմիա բարձրանունն ենք տալիս:

Ինչպես տեսնում եք, ինչ էլ որ լինի՝ Դուք այսուհետև պիտի Ձեզ նվիրեք հայոց լեզուն ուսումնասիրելու և հավաքելու գործին, որի մեծությունը Դուք ամենից լավ գիտեք, և մի գործ, որի համար Դուք, եթե չեմ սխալվում, անփոխարինելի եք մեր մեջ».*

*) Աճառյանի թիֆլիս տեղափոխվելու հարցը ձգձգվել է: Կնքվել է պայմանագիր, նշանակվել է թոշակ, բայց գործը խափանվել է վերահաս քաղաքական իրադարձությունների պատճառով:

ԵԼԺ 10, 205-206, 633:

Օգոստոսի 15, Պյատիգորսկ - Նամակ Վլադիկավկազ՝ Հակոբ Սառիկյանին:

Ձերն խոսքեր է գրում Պյատիգորսկում միասին անցկացրած օրերի մասին: Բանաստեղծին թվացել է, թե հանձին նրա «շատ թանկ բան» է գտել, «այսինքն մարդ»։ «Ձե՞ որ մարդը՝ զոմե մեզ համար՝ ամենաթանկ բանն է»:

Անհանգիստ է երկրում ստեղծված խառնակ վիճակի համար. «Ձեր գնալու հենց մյուս օրն էր, կարծեմ, որ իմացանք Վլադիկավկազ պատահած տակնուվրայի մասին և շատ անհանգստացանք: Փառք աստծու, որ էլի էդպես հեշտ է անցել: Կարող էր շատ ավելի մեծ ծավալ առնել: Եվ, դժբախտաբար, դեռ չեն անցել նույնիսկ ավելի ծանր դեպքերի հնարավորությունները:

Մանավանդ Անդրկովկասի համար, մեր երկրի համար: Առաջիկա զարհուրելի պատահարները ինձ հանգիստ չեն տալիս ոչ մի օր,

ոչ մի ժամ: Հրաշք պետք է լինի, որ առանց մեծ աղետների անցկացնենք»:

Տեղեկացնում է, որ Անդրանիկն է եղել իրենց մոտ: Փեսան և տղան* եկել են Պետերբուրգից. «Շատ նոր տեղեկություններ բերին հետաքրքրական, բերին նաև Կովկասի նոր վարչական բաժանումի քարտեզը: Բայց ոչ մի բան ինձ չի ուրախացնում, քանի որ պատերազմի ճակատն էսքան խախտու է և բանակը քայքայված, և պաշտպան լինելու փոխարեն պատուհաս է դառնում»:

*) Խոսքը Աշխենի ամուսնու և Մուշեղ Թումանյանի մասին է:

ԵԼԺ 10, 206-208:

Օգոստոսի 15 - Ավագ Աղաբաբյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մանջուրիայից:

Հիշեցնում է, որ բանաստեղծից խնդրել էր «մի ձեռնարկ», որով «տեղի հայկական կոմիտեն» կարողանար առաջնորդվել: Ստացել է Հայոց բարեգործական ընկերության կանոնադրությունը, որը, սակայն, տեղի փոքրաթիվ (մեծ ու փոքր՝ ընդամենը 66 հոգի) հայ գաղութի համար նպատակահարմար չէ օգտագործել: Դրա համար իրենք կազմել են մի ավելի «նպատակահարմար ուստավ»:

Տեղեկացնում է, որ իրենք մտադիր են գրադարան բաց անել: Խնդրում է «համապատասխան գումարի դիմաց» իրենց ուղարկել հայկական հարցին վերաբերող հայերեն կամ հայերենից թարգմանված գրքեր, ինչպես նաև Րաֆֆու, Պատկանյանի, Նալբանդյանի, Շիրվանզադեի, Աղայանի, Ահարոնյանի, Իսահակյանի, Թումանյանի ստեղծագործություններից, «Ποэзия Арменуса» և այլն:

Ցանկանում են նաև բաժանորդագրվել «Արև», «Մշակ», «Հորիզոն», «Գործ» և այլ պարբերականների:

ԳԱԹ ԹՖ, ց.2, 229: ԹԹ, 2687:

<Օգոստոսի կեսեր>, Պյատիգորսկ - Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝ Օլգա Թումանյանին:

Գոհ է, որ ընտանիքը Թիֆլիսում իրեն լավ է զգում: Ինքը, ընդհակառակը, իրեն շատ ծանրաբեռնված է զգում. «Մանավանդ էս տարի էլ շարունակ մտածում եմ, թե ինչ են լինելու մանավանդ էդ կողմերը* - տղերքն էլ դես ու դեն ցրված»: Պատվիրում է ձմռան համար պարենի և վառելիքի պաշար տեսնել:

Իր վրա վատ տպավորություն են թողել գյուղից ստացված տիած լուրերը. «Ես դրանցից** զգված եմ հեռացել մինչև էստեղ:

Դրանցից ոչինչ էլ չի հարկավոր, ինչպես որ երբեք էլ չի եղել, այլ ընդհակառակը – շահագործել են միշտ ինձ էլ, անունս ու պատիվս էլ ու անխնա փչացրել: Եվ բավական է»:

*) Խոսքը ռուս-թուրքական ռազմաճակատում տիրող դրության մասին է:

**) Նամակից չի զգացվում, թե հատկապես ում նկատի ունի:

ԵԼԺ 10, 268-269:

Օգոստոսի 18 - Տպագրվում է Կ. Բալմոնտի «Ованесу Туманяну» բանաստեղծությունը (տե՛ս օգոստոսի 3):

«Кавказское слово», 1917, թիվ 184:

Օգոստոսի 20 - Զր. Աճառյանի նամակը Պյատիգորսկ՝ Թումանյանին՝ Բաքվից:

Բանաստեղծի վերջին նամակի (տե՛ս օգոստոսի 11) պատասխանն է:

Տեղեկանալով, որ Զայկազյան ընկերության դասախոսների ընտրությունը լինելու է առաջիկա աշնանը՝ խնդրում է՝ ընկերությունն ինքը դիմի Նոր Նախիջևանի թեմական դպրոցի հոգաբարձությանը՝ իրեն արձակելու համար: Ցավում է, որ Զայկազյան համալսարանի բացումը հետաձգվում է: Կարծում է, որ պետք է սպասել պատերազմի ավարտին և դրանից հետո գիտակ ուսուցիչներ ունենալու համար մարդիկ ուղարկել Գերմանիա ուսանելու: Ռուսաստանի մասին ինքը «շատ վատ կարծիք» ունի: Ինչ վերաբերում է համալսարանի երեք ֆակուլտետներին (լեզու, պատմություն, գրականություն), հնարավոր է համարում 8 ուսուցիչներով էլ սկսել: Եվ վերջում. «24 տարի է, որ ուսուցիչ եմ. ուսուցչությանս 25-ամյակի նախօրյակին արված այս առաջարկությունները և առհասարակ Ձեր նամակների տոնը մեծ պատիվ են ինձ: Երանի թե կարող լինեի սպասվածի զոնե կեսի չափ օգտակար լինել»:

Զետգրության մեջ տեղեկացնում է, որ ինքը՝ որպես թեմական դպրոցի ուսուցիչ, ազատված է զորակոչից: Նոր պաշտոնում էլ կարող է ազատված լինել, եթե «պատշաճավոր դիմում արվի կամ եթե օրենքը* փոփոխության ենթարկված չլինի»:

*) Ըստ գործող օրենքի՝ 25 տարեկանից հետո ռուսահպատակություն ընդունած քաղաքացիները ազատվում էին զինապարտությունից: Աճառյանը ռուսահպատակություն ընդունել էր 26 տարեկանում:

ԳԱԹ ԹՖ, 870 (239 լր.):

Օգոստոսի 24, Պյատիգորսկ - Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝ Օլգա Թունանյանին:

Դժգոհում է, որ տնից նամակներն ուշանում են: Անհանգիստ է. «Ասում է՝ ահի տարին խաբարը շատ կլի, մահի տարին՝ երազը: Քանի անգամ վատ երազներ են տեսել թե ընդհանուր դրության, թե տղերանց վրա: Անցյալ գիշեր էլ երազում տեսա՝ մեր տունը կտրել էին: Մարդ ինչ որ մտածում է, էն էլ տեսնում է երազում: Բայց ճշմարիտ ու իմաստուն նախազգացումներ էլ կան, որ շատ են վախեցնում»:

Անհանգիստ է հատկապես երկու տղաների համար. «Արտիկից շատ են վախենում, նրա տեղը շատ վատ է:՝ Թեև Համլիկն էլ պակաս չպետք է զգուշանա (տե՛ս հուլիսի 10-12)»:

Եղել է Կիսլովոդսկում. «Ես Կիսլովոդսկում էի, նոր են եկել: Ժողով են հրավիրել և՛ Հայկազյան ընկերության համար, և՛ Կովկասի ներկա դրության համար: Ժողովն ուրբաթ օրն է նշանակված. նորից պիտի գնամ»:

Տեղեկացնում է, որ Անդրանիկն իրենց մոտ է (տե՛ս օգոստոսի 15): Կենցաղային հանձնարարություններ է տալիս կնոջը, հատկապես. «Գրադարանս լավ պահեցեք: Բաց չթողնեք: Ձեռագիրներիս պահարանը փակեցեք»:

*) Արտավազը Թունանյանը զինվորական ծառայությունն անցկացնում էր Բերկրի-Կալայում, որտեղ կազմակերպում էր ռազմաճակատի պարենավորման գործը:

ԵԼԺ 10, 269-271, 634:

Օգոստոսի 26, Պյատիգորսկ - Նամակ Թիֆլիս՝ Փիլիպոս Վարդապարյանին:

Գրում է. «Կարելի եղավ գլուխ բերել Կիսլովոդսկ մի ժողով (տե՛ս օգոստոսի 24), ուր խոսեցինք մեր ֆիզիկապես ու նյութապես անապահով դրության մասին Կովկասում և մեր կուլտուրայի պաշտպանության ու ապահովության - այսինքն Հայկազյան ընկերության մասին: Հայկազյան ընկերությանն առայժմ անդամագրվել են քսաներկու հոգի 5 հազարանոց անդամ,* իսկ Կովկասի խնդիրը, որ վերջիվերջո ձևակերպեցի էս մի երկու խոսքի մեջ – օգնություն Կովկասյան ֆոնդին, էս խնդիրն, ասում են, հանգավ նրան, որ փող հավաքենք (մի խոշոր գումար), և փողով, մարդով ու ամեն կերպ օգնության գանք: Հիմա նորից գնալու են, որ հանձնաժողով ընտրենք

ու գործն սկսենք: Մեջները լավ մարդիկ կան, բայց ազգային ոչ մի բովանդակություն չունեն: Ոչ էս, ոչ էն: Եվ որտեղից լինե...»:

Հայտնում է, որ սեպտեմբերին կվերադառնան Թիֆլիս:**

*) Այսինքն՝ Ընկերության ֆոնդին հինգհազարական ռուբլի ներդրում անողներ:

***) Թիֆլիս վերադառնալը ձգձգվում է մինչև հոկտեմբեր:

ԵԼԺ 10, 271-272:

Օգոստոսի 26, Պյատիգորսկ - Նամակ Թիֆլիս՝ Կոստանդին Ալիխանյանին:

Գրում է Կիսլովոդսկում կայացած ժողովի մասին (տե՛ս օգոստոսի 24): Ինքը ժողովին ներկայացնելու է տարել երեք հարց՝ «քաղաքական, տնտեսական և կուլտուրական»։ «Կարճ զեկուցում արի Կովկասի և առանձնապես հայության ներկա անապահով դրության մասին և առաջարկեցի կազմակերպել օգնություն Կովկասյան ֆոնդին (помощь Кавказскому фонду)»:

Խոսել է հատկապես «Հայկազյան ընկերության և մեր կուլտուրական պաշտպանության ու զարգացման նշանակության մասին»:

Տեղեկացնում է, որ գաղափարը շատ մարդկանց է հետաքրքրել. «Դուրս է գալիս՝ բավական թվով ծագումով հայ գիտնականներ կան, որ հայերեն չգիտեն, այժմ, Հայկազյան ընկերության բացելով. պատրաստ են հայերեն սովորելու և հայ գիտնականներ դառնալու»:

Ընդգծում է, որ այդ նպատակներն իրագործելու համար շատ փող է պետք, բայց այդ կողմից ոգևորվողները քիչ են:

ԵԼԺ 10, 272-273:

Օգոստոսի 31 - Հայերեն թարգմանությամբ տպագրվում է Մաքսիմ Գորկու «Алмонус» ամսագրի (1917, թիվ 3-4) կարծիքը «Поэзия Арменуса» ժողովածուի մասին:

«Հայ բանաստեղծների թարգմանությունների փառահեղ և սովոր հատորը ոչ միայն խոշոր երևույթ է հայ բանաստեղծության համար, այլև մեծ տոն ռուս բանաստեղծության համար», - այսպես է սկսվում հոդվածը: Ապա հեղինակը ընդհանուր գծերով ներկայացնում է ժողովածուի բովանդակությունը՝ հայոց բանաստեղծության զարգացման նախորդ շրջանների հաջորդական կարգով, և շարունակում. «Ապա ժողովածուն անցնում է նորագույն, ներկա բանաստեղծության թե՛ ռուսահայերի, թե՛ թուրքահայերի: Առաջիններին

Բրյուսովը ավելի շատ ուշադրություն է հատկացնում այն հիման վրա, որ նա է արտահայտում բանաստեղծության մեջ ազգային հայկական իդեոլոգիան, մինչդեռ թուրքահայատակ հայրենակիցները նվիրելով իրանց ստեղծագործությունը «հավիտենական» թեմաների և ձևի կատարելագործության՝ ավելի հետաքրքրություն են ներկայացնում իրանց՝ հայերի համար, քան ռուս ընթերցողների: Ռուսահայերից խոշորագույնները՝ Ռ. Պատկանյանը, Յովհաննիսյանը, Ծատուրյանը, Յ. Թումանյանը, Իսահակյանը, Տերյանը, ներկայացված են շատ լի և բազմաթիվ կերպով, այնպես որ ցույց է տրված նրանց ստեղծագործության բոլոր կողմերը»:

Հնարավոր թերությունների հարցը թողնելով մասնագետներին՝ եզրակացնում է. «Համենայն դեպս ռուս ընթերցողը շնորհապարտ կլինի Վ. Բրյուսովին այս աշխատանքի համար, որ կատարված է մեծ սիրով և մեծ վարպետությամբ»:

«Մշակ», 1917, թիվ 184:

Հուլիս-օգոստոս - Տպագրում է («Գործ» ամսագիր, Բաքու, թիվ 7-8, էջ 146-154) «Հայերեն գավառական բառարան» հոդվածը (տես հունիսի 15):

Հր. Աճառյանի համանուն բառարանի գրախոսականն է: Նախքան բուն բառարանին անցնելը տալիս է մի ընդարձակ տեսություն ժողովուրդների լեզվական շփումների մասին, որ համարում է բնական երևույթ: Հայաստանը գտնվում է երեք աշխարհամասերի՝ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի շփման հանգույցում և իր գոյության դարերի ընթացքում ենթակա է եղել ազգագրական ու լեզվական ամենատարբեր ազդեցությունների, միշտ ձգտել է այդ խառնարանում գտնել, ճանաչել ու պահպանել իր սեփականը, ազգայինը. «Եվ էսպիսով՝ Հայաստանի բարձրավանդակը հանդիսանում է մի հսկայական Բաբելոնյան աշտարակ, ուր իրար են հանդիպել ու իրար են խառնվել շատ տեսակ ցեղեր ու լեզուներ և մինչև օրս էլ ո՛չ կարողանում են իրար հասկանալ և ո՛չ միասին մի ներդաշնակ կյանք ստեղծել»:

<....> Էս ամեն ազդեցություններին ենթակա Հայաստանի ժողովուրդը միշտ իզուր է աշխատել կերտել իր ինքնուրույնությունը և մի տևական որոշ պատկեր ստեղծել կյանքի, լեզվի ու սովորույթների: Շարունակ խանգարվել է ու խառնվել և շարունակ էլ նոր ճիգեր է արել՝ իր ունեցածը հավաքելու, կարգի դնելու, ինքնուրույնանալու,

ազգայնամալու: Ու հենց մեր օրերում էլ նույն ճիգն է անում նույն աղետների ու ազդեցությունների տակ:

Հավաքում է իր ազգագրական նյութերը, որ իրար անի, ամբողջացնի, իրենն ու օտարինը հասկանա:

Հավաքում է իր բանավոր գրականության, ժողովրդական բանահյուսության փշրանքներն ու իր ազգային էպոսի մնացորդները, որ ստեղծի իր ազգային բանաստեղծությունն ու գրականությունը:

Հավաքում է իր հին ճարտարապետության ջարդված ու ցրված բեկորները:

Վերջապես հավաքում է իր խառնված ու աղճատված լեզվի տարրերը, իր ոճերը, իր բառամթերքը, որ ստեղծի իր ազգային ընդհանուր լեզուն»:

Այս տեսակետից բարձր է գնահատում Սահակ վ. Ամատունու «Բառ ու բանը» և Հր. Աճառյանի «Գավառական բառարանը»:

Շեշտելով վերջինիս կարևորությունն ու լրջությունը՝ անցնում է դիտողություններին, որոնք վերաբերում են մի քանի տասնյակ բարբառային բառերի ու ոճերի ոչ ճիշտ մեկնաբանություններին՝ տալով իր բացատրություններն ու ճշգրտումները:*

*) Հոդվածը շարունակելի է, բայց շարունակությունը չի տպագրվել, հավանաբար չի էլ գրվել:

ԵԼԺ 7, 330-344:

Հուլիս-օգոստոս - Տպագրվում է Ցոլակ Խանգադյանի «Ալեքսանդր Ծատուրյան» («Գործ» ամսագիր, Բաքու, թիվ 7-8, էջ 105-126) հոդվածի շարունակությունը (սկիզբը՝ թիվ 5-6):

Խոսելով Ծատուրյանի թարգմանությունների մասին՝ Խանգադյանը նկատում է, որ հայ բանաստեղծական-թարգմանական գրականությունը այնքան էլ աղքատ չէ: Հիշում է մի քանի նշանավոր թարգմանիչների անուններ: Թումանյան թարգմանչի մասին գրում է.. «Հ. Թումանյանը մի շարք գեղեցիկ թարգմանություններ է տվել ռուսական պոեզիայից: Պոլշկինի «Утопленник», «Зимний вечер», «Песнь о вещем Олеге», Լերմոնտովի «Մծիրի»-ն...

Դժբախտաբար Թումանյանը հատուկ ուշադրություն չի դարձնում իր տաղանդի այս կողմի վրա»:

Ծատուրյանի քնարերգության մասին նկատում է, որ բանաստեղծը առանձնապես նոր բան չի ասում. «Երբ որ տալիս ենք Պատկանյանի, Շահագիդյանի, Հովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի, Վ. Տերյանի անունները, պատկերանում է մի-մի ինքնուրույն

աշխարհ՝ յուրօրինակ մտապատկերներով, դրանցից ամեն մեկը գյուտարար է, ամեն մեկը ասել է մի խոսք, որ իրանից առաջ չի եղել, այդ բանաստեղծներից ամեն մեկը մի էջ է մեր պոեզիայի պատմության մեջ: Այդպես չէ Ծատուրյանը: Եվ հասկանալի է, թե ինչու է Բրյուսովը առանձնացրել Ծատուրյանին մեր նոր պոեզիայի հիմնադիրների «եռաստեղությունից» (Յով. Յովհաննիսյան, Յով. Թումանյան և Ա. Իսահակյան)»:

«Գործ» ամսագիր, Բաքու, թիվ 7-8, էջ 121, 126:

Ամառ, Պյատիգորսկ - Առողջարանում Ջապել Եսայանի հետ բուժվելիս նրա մոտ ներկա է լինում մի տիպ, միաժամանակ զավեշտալի միջադեպի:

Ջապել Եսայանը հիշում է. «1917-ի ամառը անցուցինք երկուսս ալ Պյատիգորսկ: Ամեն օր իրար կհանդիպեինք և հաճախ միասին պտույտներ կընեինք զրուցելով: Այդ նույն Պյատիգորսկի մեջ ինձ պատահեցավ զարմանալի դեպք մը, որուն ներկա եղավ Յովհ. Թումանյանը:

Մեծահարուստ բուրժուա մը, որուն ծանոթացած էի նախապես, չեմ գիտեր ինչ պատճառով հարկադրվեր էր կանգ առնել Մոսկվայեն Բաքու գացած ժամանակ: Ձանձրանալով մենակութենեմ, տեղեկացեր էր, թե արդյոք ծանոթ մարդիկ կա՞ն այդ ամառանոցային քաղաքին մեջ: Իմ անունս և հասցես տվեր էին: Այդ մարդը իր ծառան դրկեց ինձ հայտնելու համար, թե այցելության պիտի գա: Ծառան միևնույն ատեն հայտնեց, թե իր տերը փող տվեր և պատվիրեր էր, որպեսզի զանազան ուտելեղեններ գնե թեյի համար: Ես կտրականապես մերժեցի և ըսի, թե եթե այդ պարոնը կուզե ինձ մոտ այցելության գալ, պետք է բավականանա իմ սեղանով: Մինչ այդ լուր դրկեցի նաև Յովհ. Թումանյանին, որուն ծանոթ էր հիշյալ բուրժուան: Երբ այդ մարդը եկավ, քիչ մը երկուսիս հետ խոսելե հետո հետաքրքրվեցավ, թե ուրիշ ո՞վ կա Պյատիգորսկ: Յովհ. Թումանյանը թվեց բաքվեցի մի քանի հարուստ ընտանիքներ: Մարդը սկսեց ափսոսալ, որ այդ մասին չէր գիտեր:

- Իմանո՞ւմ եք,- կըսեր ան,- սիրտս նեղվում էր, չէի գիտեր ինչպես անցկացնեմ օրս... որ իմանալի մարդի՞կ կան այստեղ...

Յովհաննես Թումանյանը հեզմական ակնարկ մը փոխանակեց ինձ հետ:

Մարդը հասկացավ, որ հիմարություն մը ըսավ, և ինձ դառնալով ավելացրեց.

- Չվիրավորվեք իմ խոսքերից, տիկին, ես չուզեցի ասել...

- Դուք ինձ չեք կարող վիրավորել,- ըսի մարդուն,- ես ձեր այցելությանն ավելի կարևորություն չեմ տար, քան թե ան կարծե...

Պետք էր տեսնել Հովի. Թումանյանի հրճվանքը իմ այս խոսքերու համար: Ալ անկե ետքը ամեն անգամ, որ ինձ կտեսներ, կիիշեր, ուրիշներու ալ կպատմեր և եզրակացություններ կհաներ մեր մտավորականներու վիճակին վրա, որոնք ենթակա էին այդ կարգի մարդոց վայրենի կոպտություններուն և կհանգեր Հայկազյան ընկերության անհրաժեշտության:

ԹԺՀ, 166-167:

Ամառ, Պյատիգորսկ - Ներկա է լինում Մարիետա Շահինյանի դասախոսությանը Միքայել Նալբանդյանի մասին:

Չապել Եսայանը հիշում է. «Մարիետա Շահինյանը ծանուցում տվեր էր, որ դասախոսություն պիտի կարդա Պյատիգորսկում Նալբանդյանի մասին: Ես ռուսերեն չգիտեի, բայց իբր քաղաքավարական ցույց Թումանյանի հետ գացի դասախոսության ընդարձակ սրահը: Հագիվ թե վեց հոգի կար: Մարիետա Շահինյանը ընկճված էր պարապ դահլիճի առաջ, իսկ Թումանյանը զայրույթի գերագրգռության մեջ էր տեղվույն բնիկ և եկվոր հայերու անտարբերության նկատմամբ: Այդ խնդիրն ալ արծարծեր էր իր մեջ այն կարծիքը, որ անհրաժեշտ էր Հայկազյան ընկերության ծրագիրը հաջողցնելը»:

ԹԺՀ, 167:

Ամառ, Պյատիգորսկ - Գործնական միջոցներով նյութական օժանդակություն է կազմակերպում առողջարանում բուժվող կարիքավոր հայերին:

Չապել Եսայանը հիշում է. «Անիկա կհոգար այնպիսի ամառանոցայիններու կարիքները, որոնք առանց փողի կամ գրեթե, եկեր էին այնտեղ: Օրնիբուն կզբաղեր այդ խնդիրներով, կերթար մեկ կամ մյուս հարուստին մոտ, մեծ կամ փոքր գումար մը կխլեր և կհանձներ որու որ պետք էր: Այդ դիմումները ոչ միայն ճնշիչ տպավորություն կընեին իր վրա, այլև իր սեփական միջոցները կնվազեցնեին: Բայց անիկա չէր ընկրկեր երբեք ոչ մի դժվարության առաջ: Կարծես ինքը անձամբ բեռնավորված էր ամենուն ամեն տեսակի հոգսերով և

պատասխանատու էր անոնց վիճակին: Եվ կային մարդիկ, որ չարա-
չար կզործածեին իր այդ տրամադրությունը»:

ԹԺՅ, 168:

Սեպտեմբերի 5, Պյատիգորսկ - Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝ Օլգա
Թումանյանին:

Գրում է, որ եթե դպրոցները ուշ են բացվելու, իրենք մի քիչ էլ
կմնան: Հանգստավայրում իրենց վիճակը շատ լավ է, ամեն ինչի
առատություն է: Բուլդոգի համար նվերներ է գնել: Մտահոգ է Թիֆ-
լիսում մնացածների, գյուղի իրենց ընտանիքի համար. «Գիշերս
վատ երազ եմ տեսել, շատ եմ անհանգիստ: Չեմ իմանում, ինչքան
խելոք ու իմաստուն եմ վարվելու և ապրելու մերոնք - ամենքը, որ էլ
դժբախտություն չունենանք, մինչև էս անտեր պատերազմի վերջը:
Ինչ որ տեսանք՝ հերիք էր»:

ԵԼԺ 10, 273-275:

Սեպտեմբերի 5 - Թիֆլիսի կոնսերվատորիայի դահլիճում տե-
ղի է ունենում Մ. Շահինյանի դասախոսությունը՝ «Հայոց հեքիաթ-
ները» թեմայով:

Ըստ մամուլի հաղորդագրության՝ դասախոսին հաջողվել է
ռուս ունկնդիրներին ծանոթացնել հայկական հեքիաթների բնույթին
և ոգու առանձնահատկություններին: Մասնավորապես. «Կանգ առ-
նելով Ղ. Աղայանի և Հովհ. Թումանյանի հեքիաթների վրա՝ ասաց,
որ նրանց հաջողվել է Հայոց հեքիաթների հարազատությունը, ոգին
պահպանել, Ղ. Աղայանը տվել է Հայոց հեքիաթների խրատական
դաստիարակչական կողմը, իսկ Հովհ. Թումանյանը մեր հեքիաթ-
ները տվել է արևելյան գունեղությամբ և երևակայությամբ»:

«Հորիզոն», 1917, թիվ 192: «Արև», 1917, թիվ 193:

<Սեպտեմբերի կեսեր>, Կիսլովոդսկ - Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝
Օլգա Թումանյանին:

Երեխաների գնալուց հետո հանգստավայրում իրեն վատ է
զգում: Գնացել է Կիսլովոդսկ, «մի երկու-երեք օրից» կվերադառնա
Պյատիգորսկ: Տեղեկացնում է. «Ս. Խաչ քաղաքից եկան հրավի-
րեցին: Տեսնենք: Լավ կացեք մինչև գամ: Էսօր ճաշին Խանադյաննե-
րի շրջանումն էի - շատ լավ էր, շատ էին ափսոսում, որ երեխեքը
գնացել են - չեն տեսել»:

ԵԼԺ 10, 275-276:

Սեպտեմբերի 18 - Թիֆլիսի նահանգական դատարանի որոշումը՝ Հայկազյան ընկերության գրանցումը մերժելու մասին.

«Резолюция и определение

1917 сентября 18-го дня по указу временного правительства Его Императорского Величества, Тифлисский Окружной Суд, по I-му Гражданскому отделению в следующем составе:

Председательствующий С. М. Мухоман

Члены суда В. Э. Менгольдт и

В. В. Потоцкий

Секретарь – Амирханов

Выслушав дело о регистрации Устава Общества ревнителей Армянской Культуры Айказян и приняв во внимание, что вопреки 1460/62 ст. Уст. Гр. Суд. Подписи учредителей на заявлении не засвидетельствованы, определяют; в ходатайстве о регистрации Устава Общества ревнителей Армянской Культуры Айказян отказать, уведомив в порядке 1460/66 ст. Уст. Гр. Суд. учредителей сообщением ему копии сего определения с возвращением и одного экземпляра устава с надлежащей на нем надписью об отказе в регистрации.

Верно. Помощ. секретаря».

ԹԹ ԹԸԱ, 37/4:

Սեպտեմբերի 24 - Տպագրվում է Կ. Բալմոնտի՝ «Ованнесу Туманяну» բանաստեղծությունը.

Тебе, Ованнес Туманян,
Напевный дарь от Бога дань,
И ты не только средь армян
Лучистой славой осиянь,
Но свой нарядный талисман
Забросил в дали русских странь,
И не введя себя в изьян,
Не потеряв восточный сань,
Ты стал сред нас родной Ивань;
Поешь,- я песней обуянь,
Тобою стих мой, видишь, пьянь,
Возмем мы песней вражий стань,

Любую ритму- на аркань,
И, если кличет черный врань,
Споем несчастье- обмань,
У нас напевовъ- полный жбань,
Его качнемъ мы, и тумань
Внезапно будет златоткань,
Живи же, светлый Туманян!*

*) Տպագրվել է նաև «Кавказское слово» թերթում (1917, թիվ 184)՝ «К. Бальмонт, 1917, 3 августа, Пятигорск» ստորագրությամբ և «հետևյալ ծանոթագրությամբ. «Это стихотворение поэт К. Бальмонт написал экспромтом и посвятил его популярному армянскому поэту Ов. Туманяну.

Свое произведение К. Бальмонт прочел лично в Пятигорске на Армянском вечере в четверг, 3 августа, в присутствии Ов. Туманяна» (տե՛ս նաև օգոստոսի 3):

«Армянский вестник», Մոսկվա, 1917, թիվ 37-38, էջ 13:

Մեպտեմբերի 30, Պյատիգորսկ - Հ. Բզնունուն է նվիրում իր լուսանկարը՝ մականորությամբ.

«Իր ազնիվ-խենթ բարեկամին՝ Հմայակ Բզնունուն:

Հ. Թումանյան»:

ԹԹ, 3957:

Հոկտեմբերի 2, Պյատիգորսկ - Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝ Օլգա Թումանյանին:

Աղջիկների գնալուց հետո տեղափոխվել է ուրիշ բնակարան: Հաջորդ օրը գնացել է Կիսլովոդսկ, որ շատ է հավանում. «Պարկը խոլվաթ, հրաշալի աշման անտառ, անուշ եղանակ, և ամբողջ օրը մուգիկան նվագում է»: Տեղեկացնում է. «Շարունակ հրավիրված էստեղ-էնտեղ, բայց շտապում եմ գործս վերջացնեմ գամ: Գործս էլ Հայկազյան ընկերությունն է և ուրիշ մի ընկերություն (տե՛ս օգոստոսի 26), որի անունը շուտով կիմանաք: «Միլիոնից ավելի Հայկազյանի համար խոստում ու գումար եմ բերում» (տե՛ս նույն տեղում):

Լինում է Ահարոնյանների մոտ:

ԵԼԺ 10, 270-271:

Հոկտեմբերի 4 - Անդրանիկ Օզանյանի նամակը Կիսլովոդսկ՝ Թումանյանին՝ Նոր Նախիջևանից.

«Սիրելի Օհաննես,

Քեզ քարտ մը գրեցի, ստացած կլինես:*

Հանգիստ եմ, կհուսամ, որ դուք ալ լավ եք:

Քեզ նեղություն մը պիտի տամ: Խնդրեմ տեսնես Հուսիկ վարդապետին, որը Ս. Խաչ վանքի վանահայրն է, եկած է Կիսլովոդսկ: Վանքը ունի վեցեմ ութ դեսիատին հող մը, որը բանջարանոց մ'է: Այդ տեղը պուլկարի մը ձեռքն է, որը լրացած է. խնդրեմ խոսաս, որ ինձ հատկացնեն այդ տեղը: Խոսա նաև պ. Չալխուշյանին: Ի՞նչ նորություն ունիս:

Երվանդը** հոս եկավ, շուտով կգնա Թիֆլիս. երկու տող կգրես պ. Պապաջանյանին,*** որ խնդիրս առնե ու դրկե, այդ մասին պոլկովնիկ Պեժմապեկով պետք եղած ձևականությունները ըրած է:

Բարևներս ծանոթներուն, հարգանքներս օրիորդներուն, համբույրներով:

Անդրանիկ:

Հ.Գ. Ինչպե՞ս եղավ ժողովարարության արդյունքը. բժիշկ Մուրադյանին քով նամակներ ունիմ, դրկես: Նամակներս այս հասցեով կդրկես:

*) Անդրանիկի այդ քարտն անհայտ է:

**) Երվանդ Փափազյան, Անդրանիկի քրոջորդին և թիկնապահը:

***) Միքայել Պապաջանյան (Բաբաջանյան), իրավաբան, հասարակական գործիչ, Ռուսաստանի պետական դումայի պատգամավոր, Հայոց ազգային բյուրոյի անդամ:

****) Պավել Պեժմապեկով (Բեժմաբեկով), Էրզրումի ճակատամարտում դավաճանել էր Անդրանիկին:

ԳԱԹ ԹՖ, 889 (500):

Հոկտեմբերի 5, Կիսլովոդսկ - Նամակ Թիֆլիս՝ կնոջը՝ Օլգա Թումանյանին:

Նվարդի նամակից իմացել է, որ եղբայրը՝ Վահանը, եղել է իրենց մոտ, ասել է, որ յուր ու պանիր կբերի և Ռոստոմի դստերը՝ Սաթիկին: Դժգոհում է, որ ինքը հագիվ է իր ընտանիքը մի կերպ պահում, լրացուցիչ հոգս չի կարող վերցնել ուսերին. «Ուրիշ բան է, եթե միջոց չլիներ, բայց երբ արդեն համոզվեցի, որ նրանք տասնյակ հազարներով պահում են զանազան ծակ ու ծուկերում, իսկ ես տասնյակ հազարով պարտք ունեմ, և մույնիսկ մեր տանը եղած եղն ու պանիրն էլ ես շարունակ առնում եմ, չափից դուրս տգեղ բան է էսքան շահագործել և միշտ խաբել, էլ չեմ ասում հետն էլ մարդու խայտառակել»:

Բայց ամենից շատ անհանգստանում է, որ երեխաները կարող են թոքախտով վարակվել.* «Չէ՞ որ երեք տարի առաջ իրեն՝ Ռոստոմին ասի, որ էլ չեն կարող պահել և էս, և էն պատճառով: Էս երկու տարին էլ բավական էր: Միջոցի բանը համարենք երկրորդական, և ես ուրիշի համար էլ չեն խնայիլ, ուր մնաց դրանց, եթե ինձ էդքան խաբած ու խաբելիս չլինեին: Բայց հո չեն կարող ամեն օր դողալ և կամ բժշկից են տեսակ հանդիմանություններ լսեն, որ չիմանամ, թե ինչ պատասխանեն, կամ իմ մեջս մտածեմ ու շարունակեմ նույնը»:

*) Երևում է՝ եղբոր դուստրը հիվանդ է եղել թոքախտով:

ԵԼԺ 10, 277-278:

Պոկտեմբերի 9, Պյատիգորսկ - Նամակ Վլադիկավկազ՝ Հակոբ Սառիկյանին:

Ստացել է հասցեատիրոջ նամակը,* որի համար շնորհակալություն է հայտնում: Խնդրում է իր կողմից բարևել և շնորհակալություն հայտնել նաև պ. Լիսիցյանին:** Տեղեկացնում է. «Պետք է գնայի Ն. Նախիջևան Հայկազյանի, գրողների ընկերության և Միք. Նալբանդյանի գործերով,*** բայց Թիֆլիսից էնպես տեղեկություններ ստացա, որ պետք է էնտեղ շտապեմ»:****

Կիսլովոդսկում լավ գործ են արել. «Գրեթե կես միլիոն բան հաջողեց ազգի համար» (տե՛ս Խոկտեմբերի 2):

*) Այդ նամակը անհայտ է:

**) Վլադիկավկազում բնակվող գործարանատեր - առևտրական Գերասիմ Լիսիցյանն է:

***) Ն. Նախիջևան պետք է գնար Հայկազյան ընկերության համար դրամահավաք կազմակերպելու, Մ. Նալբանդյանի արխիվը Թիֆլիս տեղափոխելու և ՀԳԿԸ մասնաճյուղ բացելու համար:

****) Խոսքը հավանաբար վերաբերում է սեպտեմբերի 29-ին սկսված Հայոց ազգային խորհրդաժողովի ընթացքին:

ԵԼԺ 10, 279, 637:

Պոկտեմբերի 10 - Կարեն Միքայելյանի նամակ-երկտողը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Մոսկվայից.

«Հարգելի պ. Հովհաննես Թումանյան,

Ուղարկում եմ իմ՝ Մոսկվայում կարդացած դասախոսության գուտ արդյունքը հօգուտ որբերի ֆոնդի:

Այս գումարը մի անգամ արդեն եկել էր Թիֆլիս և ետ եկել Ձեր՝ Թիֆլիսից բացակայության պատճառով:

Հարգանքներով՝ Կարեն»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 236: ԹԹ, 3603:

Հոկտեմբերի <20-24> - Նամակ վրացական նորաբաց համալսարանի վարչության նախագահ Գրիգորի Դիասամիձեին.*

«Միայն գիտությունը, գրականությունն ու արվեստն են ընդունակ լցնելու այն վիճի, որ բաժանում է ժողովուրդներին և միայն նրանք կարող են ստեղծել ապագայի լավագույն կյանքն ու իսկական մարդուն:

Ես հիացնումքով եմ պատկերացնում հպարտ և ազնիվ վրացուն, որը մայրենի լեզվով է ստանալու իր բարձրագույն կրթությունը:

Ե՞րբ պիտի գա այն օրը, որ կովկասյան մյուս ժողովուրդներին ևս բարձրագույն դպրոցների բացումը ողջունենք, որպեսզի գիտության ու արվեստի հիմքի վրա հանդիպենք միմյանց և հաստատենք միմյանց նկատմամբ փոխըմբռնողություն և փոխադարձ հարգանք:

Խնդրում եմ Ձեզ, թանկագին Գրիգորի Նիկոլաևիչ, ընդունեք և ուր հարկն է հայտնեք իմ ջերմ ողջույնը այս երևույթի առթիվ, նաև իմ համեստ ներդրումը**, որը գուցե մի աղյուս դառնա իր ծաղկման ճանապարհին կանգնած վրաց մշակույթի մեծ շենքուն»:

*) Նամակի լրիվ ռուսերեն տարբերակը տե՛ս նոյեմբերի 24:

**) Թումանյանը համալսարանի ֆոնդին նվիրել էր 100 ռուբլի:

ԵԼԺ 10, 279-780:

Հոկտեմբերի 21 - Սաֆո ստորագրությամբ թղթակիցը, ներկայացնելով «Գործ» ամսագրի առաջին համարի բովանդակությունը, Թումանյանի «Մոծակն ու Մրջունը» բալլադի մասին գրում է, որ այնտեղ «մի ավելորդ անգամ փայլում է մեր բանաստեղծի համեմատ սրախոսությունը»:

«Մշակ», 1917, թիվ 224:

Հոկտեմբերի 23 - Ծերուն Թորգոմյանի պաշտոնական նամակը Թումանյանին Թիֆլիսից:

«Հրազդանի»* խմբագրության անունից խնդրում է մի ձոն գրել՝ ուղղված ռուսահայ և տաճկահայ նոր գրողներին. «Խոնարհաբար խնդրում եմ այսօր պատրաստեք Ձոնը, որ վաղը տպագրության հանձնենք»:

*) Գրական-գեղարվեստական տարեգիրք՝ Ծ. Թորգոմյանի խմբագրությամբ: Լույս է տեսել միայն մեկ համար՝ 1918 թ.:

ԳԱԹ ԹՖ, 1217 (335 լր.):

Հոկտեմբերի 24 - Մամուլը հաղորդում է:

Շուտով սկսվելու է Հայկազյան ընկերության գործունեությունը. «Այս ամսուս Կիսլովոդսկում անդամագրվել է 30 հոգի, տալով 5000-ական»: Ագուլեցի վաճառական Խ. Ասլանյանը Ագուլիսի բարբառը հավաքելու համար մի քանի տասնյակ հազար ռուբլի է դրել Հայկազյան ընկերության տրամադրության տակ: Կիսլովոդսկում մի աստրախանցի տիկին՝ Յ. Գ., նվիրել է մի տուն՝ 20000 ռ. արժողությամբ (տե՛ս նաև օգոստոսի 26, հոկտեմբերի 2, 9):

«Հորիզոն», 1917, թիվ 226:

Հոկտեմբերի 27 - Գրում է «Նվարդի ալբոմից» («Լուսապսակ...») բանաստեղծությունը:*

*) Նվարդի ալբոմում բանաստեղծի ինքնագիրը կրում է «Իմ Արուսյակին» խորագիրը՝ ծանոթագրությամբ. «Ու աղջիկներից ամեն մեկը մի աստղ ընտրեց կամ համաստեղություն. Նվարդն էլ ընտրեց Վեներան, Լուսաստղը, Արուսյակը»:

ԵԼԺ 1, 294, 637:

Հոկտեմբերի 28, Թիֆլիս - Վաճառականական բանկի սրահում տեղի է ունենում Հայկազյան ընկերության ժամանակավոր վարչության նիստ:

Ներկա են՝ Կ. Ալիխանյան, Մ. Քալանթարյան, Ս. Տեր-Ավետիսյան, Արշ. Միլյան, Ա. Սեյլանյան, Յ. Թումանյան, Լ. Դուլյան, Ս. Տիգրանյան, Ա. Էնֆիաճյան, Ն. Աղբալյան:

Նախագահում է Կ. Ալիխանյանը:

Օրակարգում՝

Նախագահի հաղորդումը Հայկազյան ընկերության կանոնադրության հաստատման խոչընդոտների մասին:

Գրասենյակապետ հրավիրելու հարցը:

Յ. Թումանյանի հաղորդումը նոր անդամների մասին:

Հայկազյան ընկերության առաջիկա տարվա գործունեության ծրագիրը:

Փոփոխված կանոնադրության ընթերցում:

Նախագահողը տեղեկացնում է, որ Թիֆլիսի շրջանային դատարանը չի հաստատել ընկերության կանոնադրությունը (տե՛ս սեպտեմբերի 18)՝ նշելով մի քանի բացթողումներ: Ինքը կատարել է համապատասխան փոփոխություններ: Առաջարկում է հենց նույն

նիստում քննարկել կանոնադրության փոփոխված տարբերակը և ներկայացնել հաստատման:

Ամիրաթեշտ է համարում հրավիրել հայերեն և ռուսերեն լավ իմացող բանիմաց գրասենյակապետ: Որոշվում է գրասենյակապետի ամսական թոշակը՝ 150 ռ.: Թեկնածուի ընտրությունը թողնվում է նախագահի հայեցողությամբ:

Թումանյանը տեղեկացնում է, որ ամռանը հանքային ջրերում հանգստանալիս հանդիպել է ընկերության մի քանի անդամների ևս: Որոշել են այնտեղ հանգստացող դրամատերերի մասնակցությամբ մի ժողով գումարել և նրանց ծանոթացնել Հայկազյան ընկերության, նրա նպատակների ու խնդիրների հետ: Գաղափարը մեծ համակրության է արժանացել: Ընկերությանն անդամագրվելու ցանկություն են հայտնել 29 հոգի՝ վճարելով հինգհազարական ռուբլի անդամավճար (տե՛ս հոկտեմբերի 24): Այդ 29 անձնավորություններին ներկայացնում է անուն առ անուն: Նրանցից խաչատուր Ասլանյան անունով մեկը պատրաստակամություն է հայտնել նվիրաբերել 25 հազար ռուբլի զոկական բարբառը ուսումնասիրելու և հրատարակելու հատուկ նպատակով (տե՛ս հոկտեմբերի 24):

Տեղեկացնում է նաև, որ հրավեր է ստացել այցելելու Արմավիր, Եկատերինոդար, Վլադիկավկազ, Ռոստով, Նախիջևան, բայց ինչ-ինչ պատճառներով չի կարողացել այդ շրջագայությունը կատարել: Սակայն համոզված է, որ երբ ընկերությունը սկսի իր գործունեությունը, արժի այդ շրջագայությունը կատարել, որովհետև այդ վայրերում էլ ընկերությանը անդամագրվողներ շատ կլինեն:

Հայտնում է, որ անդամագրվածները ցանկություն են հայտնել՝ ընկերության բացման մասին ժամանակին իրենց տեղյակ պահելու, որպեսզի կարողանան հանդեսին մասնակցել:

Որոշվում է բոլոր անդամագրվածներին ընդունել ընկերության անդամ և ներկայացնել ընդհանուր ժողովի հաստատմանը: Հանձն առնել իրականացնելու այն հատուկ նպատակը, որի համար խաչ. Ասլանյանը խոստացել է 25 հազար ռուբլի: Ընկերության կանոնադրությունը հաստատվելուց հետո տպագրել և մի-մի օրինակ ուղարկել բոլոր անդամներին: Մշակել մի կոչ և տարածել բոլոր հայաբնակ վայրերում՝ նոր անդամներ գրավելու համար:

Նախագահողը տեղեկացնում է, որ համալսարանի հայագիտական ֆակուլտետի գործունեությունն սկսելը հետաձգվում է

պատրաստի դասընթացներ և համապատասխան դասախոսական ուժեր չլինելու պատճառով:

Լ. Ղուկյանը խոսում է դպրոցների ազգայնացումից հետո հայոց լեզվով դասագրքերի անհրաժեշտության մասին՝ հարկ եղած դեպքում չհրաժարվելով նաև թարգմանական դասագրքերից ու ձեռնարկներից:

Ստ. Լիսիցյանը տեղեկացնում է, որ հրատարակչական ընկերությունը արդեն ձեռնամուխ է եղել այդ գործին:

Մ. Աբեղյանն ու Կ. Ալիխանյանը այն կարծիքին են, որ թեև հայագիտական ֆակուլտետի բացումը հետաձգվել է, բայց այժմվանից պետք է ձեռնամուխ լինել գիտությանը նվիրված կարող ուժերի հայտնաբերման և պատրաստման գործին:

Յ. Թումանյանը հայտնում է, որ ինքը անպաշտոն կերպով բանակցել է Յր. Աճառյանի հետ, որ պատրաստ է թողնել իր դպրոցական դասերը և զբաղվել միայն գիտությամբ: Նա անվիճելիորեն մի ուժ է, որ կարող է լեզվագիտական լուրջ աշխատություններ տալ և, ի միջի այլոց, հանձն առնել զոկերենի բազմակողմանի ուսումնասիրությունը:

Խոսել է նաև Աշոտ Յովհաննիսյանի հետ, որ հրապարակած ունի նյութեր Իսրայել Օրիի գործունեության վերաբերյալ և այժմ պատրաստում է Դավիթ Բեկին նվիրված իր հատորը: Նա էլ մի երիտասարդ ուժ է, որ արժանի է ընկերության օժանդակությանը, որ նվիրվի հայոց պատմության ուսումնասիրությանը:

Իրեն հայտնի է նաև, որ պրոֆ. Աղաջանյանը, Տոտոմյանը և ուրիշներ պատրաստ են մի քանի հայերեն դասախոսություններ կարդալ իրենց մասնագիտությունից: Այդ դասախոսություններն առհասարակ հայկական համալսարանի հիմքն են դնելու: Մեր նպատակը միայն հայագիտություն մշակելը չէ, այլ նաև հայերեն գիտության տարածելը:

Ռ. Աբրահամյանը ևս կարծում է, որ հայագիտական ֆակուլտետի դասախոսների պատրաստումը պետք է սկսել անհապաղ: Խոսելով ազգայնացված դպրոցների մասին՝ դասագրքերից ավելի կարևոր է համարում հայոց լեզվով դասատվության հմուտ ուսուցիչների պատրաստումը հատուկ կուրսերի միջոցով:

Ստ. Լիսիցյանը այն կարծիքին է, որ ժողովում ասուլիսներին որոշակի ուղղություն տալու համար պետք է հստակեցնել ընկերության նպատակը՝ արդյոք միայն գիտության հարցերով պիտի զբաղ-

վի, թե պիտի օժանդակի նաև մանկավարժական գործին: Եթե որոշվի, որ այս երկրորդն էլ պետք է ներառվի ընկերության գործունեության ոլորտի մեջ, դա համակրանքով կընդունվի հասարակության կողմից:

Ս. Աբեղյանի կարծիքով դպրոցների խնդիրը չի կարելի դարձնել Հայկազյան ընկերության հիմնական նպատակ. դրանով կարող է զբաղվել պետությունը՝ հարկ եղած դեպքում ստանալով նաև ընկերության օժանդակությունը: Ընկերության գլխավոր նպատակը պետք է լինի հայագիտության ուժեր պատրաստելը:

Հ. Թումանյանը երկյուղ է հայտնում, որ եթե ընկերության նպատակներից մեկը դարձնենք մանկավարժական գործին օժանդակելը, դա մեզ կարող է շեղել մեր գլխավոր ծրագրից: Հիշեցնում է, որ մանկավարժական գործի համար գոյություն ունի հատուկ դպրոցական ֆոնդ: Այժմ մենք պետք է ձեռնամուխ լինենք հայկական Ակադեմիայի հիմնադրմանը՝ հրավիրելով ձեռնհաս գիտնականներ, նրանց միջոցներ տրամադրել միմիայն գիտությամբ զբաղվելու, մյուս կողմից՝ պիտի պատրաստենք և ապագա դասախոսներ մեր ֆակուլտետի համար:

Թումանյանին համակարծիք են նաև *Ս. Տեր-Ավետիքյանը* և *Կ. Ալիխանյանը*:

Լ. Ղուլյանը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ պոլիտեխնիկումի բացումը կարող է առաջացնել գիտությունը ժողովրդականացնելու պահանջ: Այդ նպատակով մտադրություն կա պոլիտեխնիկումի մեջ մի քանի դասախոսություններ կարդալ հայերեն, վրացերեն, թուրքերեն, որպեսզի ունկնդիրները հետագայում կարողանան ստացած գիտելիքները տարածել իրենց բնակության վայրերում: Առաջարկում է, որ ընկերությունը հոգ տանի այդպիսի պրոֆեսոր դասախոսներ պատրաստելու մասին:

Փ. Վարդազարյանը հիշեցնում է, որ առանց ընկերության դրամական միջոցների մասին ստույգ տեղեկություն ունենալու անմաստ է խոսել ծրագրերի ընդարձակման մասին:

Նախագահողը քվեարկության է դնում եղած առաջարկությունները: Միաձայն ընդունվում են հետևյալ որոշումները՝

Հիմնկվանից հրավիրել այն ձեռնհաս մարդկանց, որոնք կարող են բացառապես գիտությամբ պարապել և այդպիսով կկազմեն մի տեսակ հայկական ակադեմիա:

Եղած գիտական ուժերից և երիտասարդներից սկսել պատ-

րաստել դասախոսներ ապագա հայագիտական ֆակուլտետի համար:

Մնացած առաջարկները բավարար ձայներ չեն ստանում:

Ֆակուլտետի բացման հարցով զբաղվող հանձնաժողովին (Յ. Թումանյան, Ս. Տեր-Ավետիքյան, Ստ. Մալխասյան, Ս. Տիգրանյան, Մ. Աբեղյան, Լ. Շանթ, Ստ. Լիսիցյան, Ն. Աղբալյան) հանձնարարվում է հաջորդ նիստին բերել ակադեմիայի անդամների և ապագա դասախոս-ուժերի մի ցուցակ՝ դրամական նախահաշվի հետ միասին:

Ժողովի վերջում քննարկվում է ընկերության կանոնադրության վերանշակված տարբերակը և մտքերի փոխանակությունից հետո հաստատվում՝ որոշելով կրկին ներկայացնել Թիֆլիսի Շրջանային դատարանի հաստատմանը:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/14:

Հոկտեմբերի 30, Թիֆլիս - Տեղի է ունենում Հայկազյան ընկերության ուսումնական խորհրդի առաջին նիստը:

Ներկա են՝ Ստ. Մալխասյանց, Ստ. Լիսիցյան, Մ. Աբեղյան, Ն. Աղբալյան, Ս. Տիգրանյան, Ս. Տեր-Ավետիքյան:

Նախագահում է Թումանյանը:

Օրակարգում դրված է երկու հարց՝ Հայկական ակադեմիայի անդամների և Հայոց համալսարանի դասախոսների ընտրություն:

Մտքերի փոխանակություն է ծավալվում նաև ակադեմիայի կառուցվածքի և գործունեության ծրագրերի շուրջ, որից հետո որոշվում է՝

Ակադեմիան բաղկացած պիտի լինի երեք բաժանմունքից՝ հայագիտություն, գեղեցիկ գրականություն, գեղարվեստ:

Հայագիտական բաժանմունքը պետք է ունենա չորս ճյուղ՝ լեզու, բանասիրություն, պատմություն-հնագիտություն-աշխարհագրություն, ազգագրություն-իրավունք:

Ժողովը սահմանում է նաև ակադեմիայի անդամների իրավունքներն ու պարտականությունները:

Ակադեմիայի անդամն ընտրվում է ցմահ: Լինում են պատվո, իսկական և ազատ անդամներ: Պատվո անդամը գիտաժողովներին (կոնֆերենս) ներկա լինելու դեպքում օգտվում է ձայնի իրավունքից: Ազատ անդամը ևս գիտաժողովում ունի ձայնի իրավունք, բայց ազատ է պարտականություններից և նյութական վարձատրություն ստանում է միայն հատուկ աշխատությունների համար:

Իսկական անդամը պարտավոր է իր մասնագիտության սահմաններում հետազոտություններ և ուսումնասիրություններ կատարել: Նա պարտավոր է տարեկան հաշիվ տալ իր գիտական աշխատությունների մասին, գիտաժողովում կարդալ առնվազն երկու զեկուցում, մեկը իր ընթացիկ գիտական հետազոտությունների, մյուսը իր ճյուղին վերաբերող նոր լույս տեսած աշխատությունների մասին:

Գրական բաժնի անդամի առաջին զեկուցման նյութը լինելու է որևէ գրական-գեղարվեստական խնդրի մասին՝ իր ընտրությամբ:

Իսկական անդամն ստանում է տարեկան որոշյալ թոշակ:

Իսկական անդամը Հայկազյան ընկերությունից դուրս կարող է պաշտոն ունենալ միայն բարձրագույն դպրոցներում՝ շաբաթական միայն վեց ժամ դասախոսելու պայմանով, և իր մասնագիտության հետ կապ ունեցող գիտական հաստատություններում:

Մեկ առ մեկ նրանց բացակայությամբ քննարկելով թեկնածուներից յուրաքանչյուրի գիտական վաստակը՝ ժողովը միաձայն ակադեմիայի իսկական անդամ է ընտրում՝

Լեզվական ճյուղի համար – Հրաչյա Աճառյանին:

Պատմական-հնագիտականի համար – Սմբատ Տեր-Ավետիսյանին:

Բանասիրականի համար – Մանուկ Աբեղյանին և Հակոբ Մանանդյանին:

Ազգագրության և իրավունքի համար – Սիրական Տիգրանյանին:

Ազատ անդամ են ընտրվում՝

Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան)

Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյան

Գարեգին եպ. Հովսեփյան

Ստեփան Մալխասյանց:

Որոշվում է Ստ. Մալխասյանցին նյութական նպաստ տրամադրել՝ հայերենի բառարանը ավարտելու համար: Հրատարակել Մեսրոպ եպիսկոպոսի՝ ձեռագրերի ցուցակը: Միաբանին նյութապես օժանդակել՝ պարապելու հարմարություններ ապահովելու համար: Գարեգին եպիսկոպոսին նպաստ տրամադրել՝ հայկական մանրանկարչության ուսումնասիրությունը շարունակելու համար:

Ուսուցչապետեր Նիկողայոս Մառը և Նիկողայոս Ադոնցը ընտրվում են Հայկական ակադեմիայի պատվո անդամ:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/13:

<Սեպտեմբեր-հոկտեմբեր> - Տպագրում է («Գործ», Բաքու, 1917, թիվ 9-10) «Թագավորն ու չարչին» («Յե՛յ, լավ մանրո՞ւք...») բալլադը՝ «Չուղայի գաղթից» ենթավերնագրով:

ԵԼԺ 2, 180-183:

Նոյեմբերի 3, Թիֆլիս - Տեղի է ունենում Հայկազյան ընկերության ուսումնական խորհրդի երկրորդ նիստը:

Ներկա են՝ Մ. Աբեղյան, Ս. Տիգրանյան, Ս. Տեր-Ավետիքյան, Ստ. Լիսիցյան:

Նախագահում է Թումանյանը:

Կարդացվում և լրացումներով ընդունվում է նախորդ նիստի (տե՛ս հոկտեմբերի 30) արձանագրությունը:

Նախագահողի առաջարկությամբ՝ բանաստեղծներից, վիպասաններից, դրամատուրգներից, քննադատներից թեկնածուներ են առաջադրվում ակադեմիայի գրական մասի իսկական անդամության համար: Առաջադրվածներից միաձայն իսկական անդամներ են ընտրվում՝

Թումանյան Հովհաննես*

Իսահակյան Ավետիք

Շիրվանզադե

Ահարոնյան Ավետիս

Շանթ

Լեո

Գեղարվեստական մասի համար իսկական անդամ են ընտրվում՝

Նկարիչ՝ Եղիշե Թադևոսյան,

երաժիշտ՝ Կոմիտաս վարդապետ:

Թորոս Թորամանյանն ընտրվում է ազատ անդամ: Որոշվում է նրան նյութապես օժանդակել՝ իր ճարտարապետական ուսումնասիրությունները շարունակելու համար:

«Պատրաստվող ուժեր» են ընդունվում Աշոտ Հովհաննիսյանը, Երվանդ Տեր-Մինասյանը և Նիկողայոս Աղբալյանը: Սահմանելով նրանց իրավունքներն ու պարտականությունները՝ որոշվում է նպաստ տրամադրել առաջին երկուսին՝ պատմական դասախոսությունների պատրաստվելու, իսկ Աղբալյանին՝ հայ գրականություն ուսումնասիրելու համար:

*) Թումանյանը խնդրում է, որ իր անունը հանեն ընտրված ակադեմիկոսների ցուցակից: Խորհուրդը մերժում է՝ պատճառաբանելով, թե հայ գրողներից ակադեմիայի անդամ ընտրելիս չեն կարող շրջանցել նրա անունը (տե՛ս նույնքերի 5):

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/12:

Նույնքերի 5, Թիֆլիս - Վաճառականների բանկի սրահում տեղի է ունենում Հայկազյան ընկերության ժամանակավոր վարչության նիստ:

Մասնակցում են՝ Կ. Ալիխանյան, Հովհ. Թումանյան, Արտ. Սեյլանյան, Մ. Քալանթարյան, Խ. Աֆրիկյան, Փ. Վարդապարյան, Ն. Աղբալյան, Ստ. Լիսիցյան, Ս. Տիգրանյան, Մ. Աբեղյան, Ս. Տեր-Ավետիքյան, Ա. Էնֆիաճյան:

Նախագահ՝ Կ. Ալիխանյան, քարտուղար՝ Ստ. Լիսիցյան:

Օրակարգ՝ Նախորդ նիստի արձանագրության հաստատում, դրամական նվիրատվությունների հարցը, ժամանակավոր խորհրդի* ղեկուցումը Ակադեմիա հիմնելու մասին:

Ընթերցվում և հաստատվում է նախորդ նիստի արձանագրությունը:

Թումանյանը տեղեկացնում է, որ Խ. Ասլանյանից ստացել է հինգ հազար ռուբլի՝ որպես առաջին նվազ նվիրատվության այն քսանհինգ հազարի հաշվին, որ նվիրատուն մտադիր է հատկացնել Ազուլիսի բարբառի ուսումնասիրությանը:

Որոշվում է ընկերության հաշվապահական մատյանների մեջ այդ գումարի համար բացել հատուկ հաշիվ:

Թումանյանը ղեկուցում է նաև ժամանակավոր խորհրդի՝ Ակադեմիա հիմնելու որոշման մասին: Տեղեկացնում է, որ այդ հիմնարկությունը սկզբունքորեն տարբեր պիտի լինի եվրոպական կամ ռուսական ակադեմիաներից. այնտեղ պիտի համախմբվեն ոչ միայն արդեն անուն վաստակած և գիտության մեջ պատվավոր տեղ զբաղեցնող ուսումնականներ, այլև մեր իրականության մեջ գիտությամբ պարապող այն կարող ուժերը, որոնք իրենց աշխատասիրություններով արդեն ցույց են տվել հայագիտությամբ պարապելու անհրաժեշտ նախապատրաստություն և ընդունակություն: Հայկական Ակադեմիան պետք է լինի ոչ թե պատվի Ակադեմիա, այլ մի այնպիսի հաստատություն, որ միջոցներ ու հարմարություն տա հայագիտության զանազան ճյուղերի մշակմամբ զբաղվողներին՝ իրենց ամբողջ ժամանակն ու կարողությունը իրենց սիրած գործին նվիրելու: Հենց

այդ նպատակով այդ հաստատությանը պիտի տալ այնպիսի կազմակերպության, որ պաշտոնները չդառնան ինքնանպատակ, այլ մղեն ընտրելիք հայագետներին՝ իրենց ուսումնասիրությամբ պարապելու:

Այնուհետև Թումանյանը ներկայացնում է ժամանակավոր խորհրդի նախորդ երկու նիստերի արձանագրությունները՝ Ակադեմիա հիմնելու մասին, և ավելացնում, որ խորհուրդը աչքի առաջ է ունեցել գլխավորապես Ռուսաստանի սահմանների մեջ գտնվող գիտական և գրական ուժերը: Մասնավորելով խոսքը գրողների շուրջ՝ ասում է, որ ինքը չգիտի, թե ուրիշ ակադեմիաները գրողներին ակադեմիայի անդամ ընտրելիս ինչ են աչքի առաջ ունենում: Նկատի ունենալով սա և այն, որ ակադեմիայի անդամության հավակնորդ գրողների թիվը անհամեմատ ավելի մեծ է, քան գիտնականներինը՝ դիտում է, թե արդյոք ավելի հարմար չի լինի գրողների ընտրությունը հետաձգել մինչև Ակադեմիայի մյուս ճյուղերի կազմավորումը:

Ծավալվում է մտքերի փոխանակություն ճյուղերում ակադեմիկոսների թվաքանակի, ընտրության սկզբունքների, ընտրվածներին նյութապես ապահովելու միջոցների ու հեռանկարների շուրջ: Ժողովն ընդունում է Ալիխանյանի առաջարկը, թե Ակադեմիան բացի իսկական անդամներից, կարող է ունենալ նաև ազատ անդամներ:

Առարկության է հանդիպում այն առաջարկը, թե ակադեմիկոսության կոչումը հենց առաջին ընտրությամբ պետք է տրվի ցմահ: Միաձայն ընդունվում է Ալիխանյանի առաջարկը, որ ակադեմիայի անդամի առաջին երկու ընտրությունները լինեն հինգ տարով, և միայն երրորդը ցմահ: Այս որոշումից հետո ուժը կորցրած է համարվում այն սահմանափակումը, թե ակադեմիայի անդամը իրավունք չունի ուրիշ հաստատություններում պաշտոն զբաղեցնելու:

Սահմանվում է նաև ընտրության կարգը: Առաջին ակադեմիկոսներին ընտրում է ընկերության ընդհանուր ժողովը, իսկ այնուհետև նորերին՝ ինքը Ակադեմիայի խորհրդի հետ միասին:

Ակադեմիկոսների տարեկան թոշակը սահմանվում է վեց հազար ռուբլի:

*) Ժամանակավոր վարչությունը կոչվում էր նաև ժամանակավոր կոմիտե կամ ժամանակավոր խորհուրդ:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/11:

Նոյեմբերի 5, Թիֆլիս - Հայտարարություն Հայկազյան ընկերության վարչությանը.

«Հայկազյան ընկերության խորհրդի նախագահին, Հայկազյան ակադեմիայի անդամության թեկնածուների ցուցակը կազմելիս (տես՝ նոյեմբերի 3), երբ ինչ-ինչ պատճառներով ես խնդրեցի, որ իմ անունը ցուցակից հանեն, խորհրդի անդամները չհամաձայնեցին, առարկելով, թե հայ բանաստեղծների անունները գրելիս իրենք չեն կարող իմ անունը բաց թողնել: Էն ժամանակ ես համաձայնեցի մի պայմանով, որ իմ անունը գրվի առանց թռչակի:

Այժմ խնդրում եմ հարգելի վարչությանը՝ իմ այս հայտարարությունը կցել խորհրդի արձանագրությանը և նկատել, որ իմ անունը դրված է առանց թռչակի, և ես խնդիր չդնել քննության ու վիճաբանության առարկա:

Հովհ. Թումանյան»:

ԵԼԺ 10, 280-281: ԹԹ ԹԸԱ, թղթ. 40:

Նոյեմբերի 5 - «Գավառական նամակներ» խորագրի տակ տպագրվում է հոդված՝* Ստեփան Ղորղանյան ստորագրությամբ:

Ժամանակի «գրական ճաշակ» հասկացության շուրջ ընդհանուր խորհրդածություններից հետո այդ դիտակետից համառոտ ներկայացնում է հայոց բանաստեղծության զարգացման ընթացքը՝ 19-րդ դարի 60-70-ական թվականներից մինչև 20-րդ դար 10-ական թվականները:

Գամառ-Քաթիպային հաջորդող շրջանի մասին գրում է. «Թե որտեղ պիտի ձևակերպվեր և ապա մարեր մեր այն ժամանակվա գրական ճաշակը, և թե ինչ վախճան պետք է ունենային մեր այդ հակումները դեպի գեղեցիկը և վերացականը, այդ դժվար էր գուշակել: Մեր առաջադիմական երիտասարդությունը գնում էր իր դարի գաղափարների առջևից և անհոգ ու աղմկալից տանում էր սիրո և գեղեցկության ավետները և այդ գեղածիծաղ տրամադրությունը, մեր կյանքի իմաստը լինելով, ծփում-տարածվում էր մեր երկրի խորքերը, բնորոշելով իր ժամանակը և մտքերի ծավալը... իսկ հասնող սերունդների անվերջ շարաններ, մույնպես անհոգ և մույնպես խամ-դավառ, որպես և ինքը Հովհ. Հովհաննիսյան, գնում էին նրա ետևից, և նրա հետ միասին երգում անհոգ և հուսալից.

«Կուզեի լինել լուսին ամոթխած,

Արծաթի փայլով մազերըդ շոյել,

Այտերդ գգվել, սիրուց բորբոքված,

Դողդոջ շրթունքիդ համբույրներ դրոշմել»:

Իսկ եթե այդ տափարակից, ուր միշտ, այնուամենայնիվ, կհանգչեն մեր բազմամյա տենչանքները, դուք դառնալու լինեք դեպի մեր աշխարհի բարձրավանդակները, այնտեղ, ուր նոսրանում է օդը, ուր կարկաչուն վտակների ներդաշնակ աղմուկների մեջ նիրհում են դարերը, ձեզ կտիրապետե մի այլ տրամադրություն... Դուք կդժարանաք ասելու՝ հիանում, թե՞ սարսափում եք... իսկ այնտեղ՝ ներքևում, ժայռերի և աղմկալից ջրերի այդ կախարդական խառնուրդում, դուք կտեսնեք մեր բնության արտակարգ և բացառիկ կուսությունը...

Երկու հավասար ուժեր կտիրապետեն ձեր ամբողջությունը, լծորդաբար, դուք կանցնեք դրական զգացմունքներից դեպի բացասականը, ձեր բանականությունը տեղի կտա երազի, դարերը կանցնեն ձեր երևակայության միջով իրանց բոլոր վիթխարի ճնշող մեծությամբ և վեհությամբ, և դուք շնչասպառ կնետեք ձեզ բնության այդ գեղեցկադեմ սարսափների աշխարհից դեպի վեր, դեպի կապուտակ երկինքը, ուր ահռելի լեռները ճեղքում անցնում են կուտակված մռայլամութ ամպերի երկար և անվերջ շարանները...

Եվ այնտեղ, ընթերցող, տարիների ընթացքում, որպես մի կախարդ, բնակալել և սավառնել է մեր այդ սարերի մեծ սիրահար Յովի. Թումանյանը, այնտեղ նա երգել է, այնտեղ նա անում է հանել...

Յովի. Թումանյանը մեր «ծերուկ դայակի պատմվածքն է», այդպես բնորոշեց Պուշկինին Պոլոնսկին, երբ 1830 թվին առաջադեմ Ռուսաստանը բացեց Մոսկվայում իր մեծ ստեղծագործողի արձանը: Եվ, իհարկե, եթե հայոց նորագույն գրականությունը ունի իր կենդանի հիմնավորը երգիչը, որի դայալիկները այնպես մեծ սիմֆոնիա են ստեղծում մեր ահռելի ձորերում և այնպես գեղարվեստորեն տալիս են մեր «ծերուկ դայակի պատմվածքները», կախարդում, շոյում և ապա օրորում ձեր ճաշակը, ձեր տրամադրությունը, այդ, անկասկած, այն արտոնված շրջափակն է, ուր դեռ այնպես հմայուն իշխում և սավառնում է Յովի. Թումանյան...

«Ես երգեցի կես գիշերին,

Եվ աստղերը իմ երգեց

Գունատվեցին, դողդողացին

Եվ թափվեցին երկնքից...»:

*) Հողվածի սկիզբը՝ թերթի նախորդ, շարունակությունը հաջորդ երկու համարներում:

«Մշակ», 1917, թիվ 236:

Նոյեմբերի 7 - Գրում է «Կանցնեն օրերն, Անուշ ջան...» բանաստեղծությունը:*

*) Ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Անուշի ալբոմում:

ԵԼԺ 1, 295, 637:

Նոյեմբերի 7 - Գրում է «Քանի՜ մահ կա իմ սրբոտում...» քառյակը:*

*) Պահպանվել է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ բանաստեղծի դստեր՝ Նվարդի ալբոմում՝ հեղինակային ուղղումներով:

ԵԼԺ 2, 14, 516:

Նոյեմբերի 7 - Վրացական համալսարանի վարչության անունից փոխնախագահ Կ. Արխաղիի պատասխան նամակը Թումանյանին:

«Милостивый Государь

Ованес Тадевосович.

Правление Общества Грузинского Университета с большим нравственным для себя удовлетворением выслушало Ваше письмо (տե՛ս ինկտեմբերի <20-24>), адресованное Григорию Нуколаевичу Диасамидзе, по поводу учреждения Грузинского Университета.

Выраженные Вами чувства симпатии к Грузинскому народу и к вновь зарождающемуся разсадник высшего национального образования в Грузии – нашли живейший отклик в сердцах членов Правления Общества.

В глубоко прочувствованных словах Ваших как лучшего сына своей родины и талантливого выразителя ее души и чувств, мы видим ласку и привет всего армянского народа,- добрососедски живущего бок о бок с грузинским народом и находящего с ним в постоянном взаимодействии на почве культурного развития и духовного совершенствования.

Пережив прекрасные чувства, вызванные Вашим приветом,- мы не можем не повторить Ваших глубокознаменательных слов: “только наука, литература и искусство заполнят про-

пасть, разделяющую народы и лишь они создают грядущую лучшую жизнь истинного человека”.

Примите истинную признательность всего состава Правления Общества Грузинского Университета и лично мою за сердечный привет Ваш и жертвование - в пользу Грузинского Университета».

ԳԱԹ ԹՖ, 2145 (1146): ԹԹ ԹԸԱ, թղթ. 33:

Նոյեմբերի 10 - Գրում է «Կյանքից հարբած անցավոր...» քառյակը:*

*) Ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Աշխենի ալբոմում:

ԵԼԺ 2, 15, 516:

Նոյեմբերի 10 - Գրում է «Հրեշտակը» հուշ-պատմվածքը:*

*) Սևագիր պատահիկ է:

ԵԼԺ 5, 506, 810:

Նոյեմբերի 11 - Տպագրվում է վրացական համալսարանի վարչության փոխնախագահ Կ. Արխաղիի պատասխանը (տե՛ս նոյեմբերի 7) համալսարանի բացման առթիվ թումանյանի շնորհավորական նամակին (տե՛ս հոկտեմբերի <20-24>).

«Респу́блика», Թիֆլիս, 1917, թիվ 104:

Նոյեմբերի 11 - Գրում է «Ե՛տ եկեք...» քառյակը:*

*) Պահպանվել է չորս ինքնագիր, մեկը՝ բանաստեղծի դստեր՝ Նվարդի ալբոմում:

ԵԼԺ 2, 16, 517:

Նոյեմբերի 11 - Գրում է «Հին աշխարհքը ամեն օր...» քառյակը:*

*) Պահպանվել է չորս ինքնագիր, որոնցից մեկը՝ բանաստեղծի դստեր՝ Աշխենի ալբոմում:

ԵԼԺ 2, 17, 517:

Նոյեմբերի 12 - Գրում է «Զուր եմ փախչում, ինձ խաբում...» քառյակը:*

Ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Նվարդի ալբոմում:

ԵԼԺ 2, 18, 517:

Նոյեմբերի 12 - Գրում է «Իմ ծիտիկը դու հերվան...» քառյակը:*

*) Ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Սեդայի ալբոմում:

ԵԼԺ 2, 70, 532:

Նոյեմբերի 13 - Լևոն Տեր-Հարությունյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Իգդիրից:

Ուղարկում է իր աշխատանքը՝ «փոքրիկ կտորներ» - Լևոն Լևոնիի՝ «ի դիմաց Հայ գրողների ընկերության հրատարակչական խորհրդի»: Դրամական օգնություն է խնդրում, քանի որ աղքատ է բառի բուն իմաստով:

Կարծում է, որ իր և բանաստեղծի միջև մտերմությունն անխուսափելի է՝ որպես մոլեռանդ աշակերտի և ուսուցչի:

Խնդրում է աշխատանքը տպագրելիս պահպանել արտաքին ձևը:

ԳԱԹ ԹՖ, 2215 (717):

Նոյեմբերի 14 - Մամուլը հաղորդում է:

Պատրաստվել են հայերեն նոր մանկական օպերաներ՝ «Զարի վերջը», «Տատիկի գողը», «Կոշկավոր կատուն»: Ներկայացվելու են առաջիկա հունվարին՝ ղեկավարությամբ Հ. Պատոճյանի և Մարությանի:

«Հորիզոն», 1917, թիվ 243:

Նոյեմբերի 14, Թիֆլիս - Հայկազյան ընկերության նոր շենքում տեղի է ունենում ընկերության վարչության նիստ:

Ներկա են՝ Ղուլյան Լ., Թումանյան Հ. Վարդազարյան Փ., Սեյլանյան Ա., Աբեղյան Մ., Քալանթարյան Մ.:

Նախագահ՝ Կ. Ալիխանյան, քարտուղար՝ Ս. Տեր-Ավետիքյան:

Նախորդ նիստի (տե՛ս նոյեմբերի 5) արձանագրությունը ընթերցվելուց հետո քննության է դրվում Ակադեմիայի անդամության համար խորհրդի ընդունած թեկնածուների ցուցակը: Որոշվում է հրավիրել Թիֆլիսում եղած ձեռնհաս անձերից կազմված մի ավելի բազմամարդ ժողով և նորից քննության դնել թեկնածուների ցուցակը:

Ընթերցվում է Թումանյանի հայտարարությունը (տե՛ս նոյեմբերի 5), թե համաձայն է իր անունը թեկնածուների ցուցակում թող-

նել միայն այն դեպքում, եթե իրեն կազատեն ակադեմիայի անդամ-ներին հատկացվող տարեկան թոշակից:

Թումանյանի այս հայտարարությունը առաջ է բերում մի ուրիշ խնդիր՝ որքանով է հարմար գրող ակադեմիկոսներին տարեկան թոշակ նշանակել, ավելի նպատակահարմար չի՞ լինի նրանց առանձին ստեղծագործությունների համար սահմանել դրամական պարգև: Որոշվում է հարցի քննարկումը թողնել ուժեղացված կազմով ժողովին:

4. Ալիխանյանին, Յ. Թումանյանին, Մ. Աբեղյանին և Ս. Տեր-Ավետիքյանին հանձնարարվում է կազմել այդ ժողովին հրավիրվելիք անձանց ցուցակը:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/10:

Նոյեմբերի 20 - Գրում է «Քոշաքարում ես վազել եմ...» բանաստեղծությունը:*

*) Ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Անուշի ալբոմում:

ԵԼԺ 1, 296, 637:

Նոյեմբերի 20 - Տիգրան Յովհաննիսյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից:

Հավանական է համարում, որ նոր քաղաքային դուման Յովհաննես Յովհաննիսյանին չի վերընտրի վարչության անդամ (դպրոցական բաժնի համար), և նա, լիովին ազատ լինելով, կգբաղվի գրական աշխատանքով: Խնդրում է բանաստեղծին, որ Հայկազյան ընկերությունը շուտ կայացնի իր վերջնական որոշումը Յովհաննիսյանի մասին: Այդ որոշումը կարևոր է համարում, քանի որ «նա համառել է և ուզում է անպատճառ դնել իր տուփը ու քվեարկվել»: Կարծում է, որ «եթե որոշումը շուտով կայանա և իրան հաղորդվի, նա դումայի հայ անդամներին, որոնց թվում կան մեծ թվով իր անձնական բարեկամներից, աշակերտներից ու տաղանդի հարգողներից, կազատի իրան սև քվե տալու անախորժ անհրաժեշտությունից»: Ծանոթներից իմացել է, որ նա չընտրվելու դեպքում կընկնի ծանր հոգեվիճակի մեջ: Այնուամենայնիվ «տուփը դնելու է, որպեսզի պարզ լինի, որ իրան սևացրին և ոչ թե ինքը հրաժարվեց»:

*) Այսինքն՝ ինքը կհրաժարվի՝ առանց քվեարկության դրվելու:

ԳԱԹ ԹՖ, 1525 (379 լր.):

Նոյեմբերի 21, Թիֆլիս - Քաղաքային վարկի ընկերության

գրասենյակում տեղի է ունենում Հայկազյան ընկերության ժամանակավոր վարչության հերթական նիստը:

Ներկա են՝ Կ. Ալիխանյան, Մ. Քալանթարյան, Հ. Թումանյան, Տ. Աֆրիկյան, Լ. Ղուլյան, Փ. Վարդազարյան, Ստ. Լիսիցյան, Մ. Աբեղյան, Ս. Տեր-Ավետիքյան, Ս. Տիգրանյան:

Համաձայն նախորդ նիստի որոշման (տե՛ս նույնքերի 14)՝ հատուկ հանձնաժողովի կազմած ցուցակով նիստին հրավիրված էին Թիֆլիսում բնակվող հայագետներ, բանաստեղծներ և գեղարվեստագետներ, որոնցից ներկա են 15 հոգի՝ Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյան, Գ. ա. ք. Աղանյան, Ռ. Աբրահամյան, Գ. Բաշինջաղյան, Դ. Դեմիրճյան, Ա. Բաբախանյան (Լեո), Ե. Թադևոսյան, Փ. Թերլեմեզյան, Մ. Խոստիկյան, Մ. Մատենճյան, Սպ. Մելիքյան, Մելիքսեբեկյան, Ն. Խաչատրյան, Հ. Հովհաննիսյան, Վ. Փափազյան:

Նիստի նախագահ՝ Կ. Ալիխանյան, քարտուղար՝ Ստ. Լիսիցյան:

Օրակարգում՝ խորհրդակցություն ակադեմիա հիմնելու և անդամության թեկնածուների ընտրության սկզբունքների ու կարգի մասին:

Նախագահողը համառոտակի ներկայացնում է ընկերության նպատակը՝ նյութապես օժանդակել հայագիտությանը զբաղվող մասնագետներին՝ ավարտելու իրենց սկսած աշխատանքները, արդեն պատրաստի ուժերից կազմել մի գիտական հաստատություն՝ Ակադեմիա: Նիստի մասնակիցները հայտնում են իրենց տեսակետները այս հարցերի մասին:

Թումանյանը խորհրդակցության մասնակիցների առջև դնում է մի քանի առաջարկություններ՝ 1) հետաձգել ակադեմիայի պատվավոր անդամների ընտրությունը, թողնել մինչև ակադեմիայի կազմվելը, որ ինքը ընտրի իր պատվավոր անդամներին և ներկայացնի ընդհանուր ժողովի հաստատմանը, 2) Հայկական ակադեմիան աշխատանքի ակադեմիա է, և նրա անդամները իրենց վրա վերցնում են որոշ պարտադիր աշխատանքներ. գրողները և գեղարվեստագետները ակադեմիայից դուրս էլ թռչակ և նպաստ են ստանում, ուստի պարտադիր աշխատանքներից ազատ են մնում նույնիսկ ակադեմիայի անդամ ընտրվելու դեպքում, 3) ակադեմիան առայժմ կազմել միայն հայագետներից և առհասարակ գիտնականներից՝ կապելով նրանց գործը մասնագիտական դասախոսությունների և գիտական պարբերականների հետ:

Մեսրոպ եպիսկոպոսն այն կարծիքին է, որ նախքան ակադեմիա կամ հայագիտական ֆակուլտետ կազմավորելը պետք է լուրջ նախապատրաստվել, ոչ միայն հմուտ գիտնականներ ու դասախոսներ են պետք, այլև նրանց որակյալ ունկնդիրներ, որ մշտապես հարկադրեն նրանց բարձրացնելու իրենց մասնագիտական պատրաստվածությունը: Բերում է Վենետիկի Մխիթարյանների օրինակը, որոնք նույնպես ուզում էին ակադեմիա հիմնել, բայց այնպես էլ գործը մեռած մնաց:

Ս. Տեր-Ավետիքյանը, արձագանքելով Մեսրոպ եպիսկոպոսի ելույթին, նկատում է, որ իրենց նպատակը ոչ թե գիտական տիտղոսներ ստեղծելն է, այլ հայագիտությամբ զբաղվող ձեռնհաս ուժերին համախմբել մի հաստատության մեջ և բոլոր միջոցներով օժանդակել նրանց աշխատանքի արդյունավետությանը: Գիտական գրադարան ունենալը ակադեմիայի առաջնահերթ խնդիրներից է:

Ռ. Աբրահամյանը ողջունում է ակադեմիա հիմնելու գաղափարը: Մեկ-երկու անվանի գիտնականով էլ կարելի է հիմնել այդպիսի գիտական հաստատություն, այնուհետև հիմնադիր ակադեմիկոսները իրենք կկազմեն իրենց գործունեության ծրագիրը, նրանց շուրջը կհամախմբվեն երիտասարդ ու կարող ուժեր, նրանց նախաձեռնությամբ կգործուղվեն գիտական կենտրոններ կատարելագործվելու, և այդպիսով ակադեմիան կկայանա ու կամրապնդվի:

Ստ. Լիսիցյանը նորից ընդգծում է, որ հիմնադրվելիք գիտական հաստատության նպատակն է հայագիտական կարող ուժերին ազատել կողմնակի զբաղմունքներից, համախմբել մի գիտական ընտանիքի մեջ: Այդ հաստատությունը ակադեմիա կոչելը հավանոտ է համարում, որովհետև մեր գիտակցության մեջ ակադեմիա անվան հետ բարձր գիտական պահանջներ են կապվում: Նպատակահարմար է գտնում այդ հաստատությունը անվանել ավելի համեստ անունով՝ ինստիտուտ:

Թումանյանը հարց է ուղղում ելույթ ունեցողին՝ մի՞թե մեր հայկական իրականության մեջ չկան այնպիսի անվիճելի անուններ, որոնք կարող են արժանի լինել ակադեմիկոսի կոչմանը:

Կ. Ալիխանյանը նկատում է, որ Հայկազյան ընկերությունը բոլոր հայկական ընկերություններից ամենամեծն է և պետք է մեծ ձեռնարկությամբ սկսի իր գործունեությունը, որպեսզի շահի հասարակության համակրանքը: Այդ տեսակետից հիմնվելիք գիտական հաստատության համար ակադեմիա անվանումը ամենանպատա-

կահարմարն է. «Եթե մեր իրականությունը ակադեմիկոսի կոչմանը արժանի մեկ-երկու գիտնական էլ չի կարող տալ, ուրեմն ակադեմիան չի բացվի: Բոլոր դեպքերում նախ պետք է որոշենք՝ մեզ ակադեմիա պետք է, թե ոչ»:

Ս. Բարախանյան-Լեոն այն կարծիքին է, որ ակադեմիա անունը չպետք է խրոնոցների մեզ, դա մեզ համար նորություն չէ. Գևորգյան ճեմարանը կոչվում է նաև ակադեմիա, Մխիթարյանները նույնպես ունեին ակադեմիա, թեև լսարան չունեին: Ավելի լավ է խոսել ըստ էության, քան անվանումի մասին:

Նախագահողի հանձնարարությամբ *Ս. Տեր-Ավետիքյանը* ծանոթացնում է նախորդ նիստերի որոշումների մեջ վարչության կատարած փոփոխություններին:

Թումանյանը բացատրում է, որ ժամանակավոր խորհրդի այն խոսքերը, թե ակադեմիկոս «ընտրում են» այսինչ անձնավորությունները, պետք է հասկանալ այն մտքով, թե խորհուրդը առաջարկում է վարչությանը և ընդհանուր ժողովին՝ դրանց ընտրել:

Մեսրոպ եպիսկոպոսն այն կարծիքին է, որ եթե ակադեմիա ենք հիմնում, անհրաժեշտ է մի քանի ակադեմիկոսների կանոնադրությունները բերել տալ և նրանցով ղեկավարվել:

Նախագահողը բացատրում է, որ ակադեմիայի անդամների ընտրությունից հետո նրանց կհանձնարարվի զբաղվել այդ հարցով:

Ապա կարդացվում է զեկույց ժամանակավոր խորհրդի հանձնարարած հայագետներից Մ. Աբեղյանի, Ս. Տեր-Ավետիքյանի և Ս. Տիգրանյանի գիտական աշխատությունների մասին: Զ. Աճառյանի և Զ. Մանանդյանի աշխատությունների մասին դեռ այդպիսի զեկույց չի պատրաստված:

Ռ. Աբրահամյանի կարծիքով խորհրդի ներկայացրած ցուցակում գիտականորեն բարձր որակավորում ունեցող մասնագետներ չկան: Հարմար է ակադեմիայի անդամ ընտրել այնպիսի մարդկանց, ինչպիսիք են, օրինակ, Ն. Աղոնցը և Ն. Մառը:

Ժողովականներից մի քանիսը, ինչպես Զ. Թումանյանը և Լ. Ղուլյանը, հիշեցնում են, որ չպետք է մոռանալ հայ իրականությունը:

Տ. Աֆրիկյանը կարծում է, որ մեր ակադեմիային չպետք է մոտենաճք եվրոպական կամ ռուսական չափանիշներով. մեր ակադեմիան մեր չափով պիտի չափենք:

Ս. Աբեղյանը նկատում է, որ մենք եվրոպական իմաստով ակադեմիա կարող ենք ունենալ միայն 10-15 տարի հետո. այժմ

ավելի համեստ բնույթ տանք մեր հիմնարկությանը:

Թումանյանը, տեղեկացնելով, որ Ն. Մառը, իմանալով մեր հիմնարկության բովանդակությունը, այն համոզմունքն է հայտնել, որ դա իրոք կարող է լինել ակադեմիա, աշխատանքի ակադեմիա:

Ժողովը քվեարկությամբ գրեթե միաձայն (երեք-չորս ձեռնպահ) որոշում է հիմնել նախաձեռնվող հաստատությունը և կոչել ակադեմիա:

Նախագահողը հիշեցնում է, որ ակադեմիայի անդամների ընտրությունը լինելու է առաջիկա ընդհանուր ժողովում և դիմում է խորհրդակցության մասնակիցներին առաջադրել թեկնածուներ:

3. *Թումանյանի* նախաձեռնությամբ քվեարկության է դրվում և ընդունվում նրա առաջարկությունը՝ հետաձգել պատվավոր անդամների, գրականագետների ու բանաստեղծների ընտրությունները, ակադեմիայի սկզբնական կազմում թողնել միայն հայագետ գիտնականներ:

Մեսրոպ եպիսկոպոսը, հանգամանորեն ներկայացնելով Երվանդ Տեր-Միմասյանի գիտական վաստակը, առաջարկում է նրա անունը ներառել հանձնարարելի ակադեմիկոսների ցուցակի մեջ:

Ներկա եղողներից մի քանիսը տալիս են Լևոն Մսերյանի, Սողոմոն Եղիազարյանի, Խաչիկ Սամվելյանի, Սեմեքերիմ Տեր-Հակոբյանի և ուրիշների անունները:

Բոլոր թեկնածուների հարցի քննությունը թողնվում է հաջորդ նիստին:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/8:

Նոյեմբերի 22 - Գևորգ Բաշինջադյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրում է. «Ամսի 21-ի նիստին վարչության անդամները, ընտրյալների ցուցակի նկատմամբ, ինձ չգարմացրին, զարմացրիր միայն դու, թեև այդ ցուցակը վերջնական չէ և նա իրական նշանակություն չունի, սակայն այդ էլ բավական եղավ ինձ համար: Ինչպես ես քեզ հասկացա, *ընտրյալները* լայն խավերից ճանաչված և կասկածից դուրս ամծինք են: Ուրեմն ինչ ածական տանք ցուցակից դուրս մնացածներին»:

ԳԱԹ ԹՖ, 1027 (562):

Նոյեմբերի 24 - Տպագրվում է («Ресчыблукa», 1917, թիվ 114) Թումանյանի ողջույնը վրաց ժողովրդին՝ Վրաստանի առաջին ազ-

գայիւն հաճագունարի բացման արթիւ՝ «Приветствие армянского поэта Ов. Туманяна» լերնագրով.

«Братья грузины, братья наши издревне, братья измученные, но всегда свободные и высокие духом братья.

Если литература народа есть истинное отражение его духа и носитель этого духа есть поэт, то я несу вам душу армянства, самое высокое, что может иметь народ и человек.

Душа армянства ликует во мне, приветствуя первый национальный съезд сынов свободной Грузии.

С восторгом свидетельствую, что грузин никогда не падал духом и среди кавказских народов был всегда первым, как гражданин, в своих политических требованиях и общественной борьбе.

Если бросить взгляд на взаимоотношения соседей на всем земном шаре – мы не можем не признать, что грузин был одним из самых лучших как сосед.

Трения, которые иногда возникали среди армянских и грузинских отдельных кругов, должны исчезнуть в условиях свободной жизни; особенно с того дня, когда гонимое из своей старой родины армянство получит возможность вернуться для новой свободной жизни в родные пепелища и оставить пределы Грузии, где армяне спасались от тяжелых ударов истории. И между ними создастся более тесная великая духовная и культурная связь, и много еще великих дел имеем мы кавказские народы совершить вместе и будем мы – кавказские народы – братья как наши родные горы, каждый на своем месте, блестя своими вершинами, вечно рядом, всегда держась друг за друга и соединенные в своих основаниях.

Да здравствует братство кавказских народов!

Да здравствует свободная Грузия в союзе свободных народов свободной России!».

ԵԼԺ 7, 344-345:

Նոյեմբերի 24 - Հր. Աճառյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Դժգոհում է Հայկազյան ընկերության բացման ձգձգվելուց, իր վիճակի անորոշությունից: Հավատալով բանաստեղծի հաստատ

խոստումներին (տե՛ս օգոստոսի 11)՝ Թիֆլիս մեկնելու հույսով Նոր Նախիջևանում թողել է բնակարանը, վաճառել է կարասիները, կապկպել է գրքերը, անգամ ձմեռվա պաշար չի տեսել: Դպրանոցի հոգաբարձությունն էլ համաձայն է արձակել իրեն՝ «ասելով, որ իրենք պարտավոր են զոհաբերություն անել, եթե ավելի բարձր մի հաստատություն կպահանջի այդ»։ Իսկ Թիֆլիսից որևէ լուր այնպես էլ չկա: Մեկ տարվա ընթացքում կրած կորուստները անդամնալի են: Հիմա էլ կանգնած է նոր փաստի առաջ. դպրանոցում տեսչի օգնականի տեղ կա, Ռոստովի համալսարանում հայագիտություն մտցնելու մտադրություն ունեն, և ինքը չգիտի իր թեկնածությունը առաջարկի, թե չէ: Եվ վերջում. «Ահա կան այսպիսի խնդիրներ, որոնք պահանջում են անմիջական վճիռ: Ուստի խնդրում են, այս նամակը ստանալուն պես, ապահովյալ գրությամբ հայտնել ինձ Ձեր վերջնական որոշումը:

Ես շատ ու շատ տուժեցի՝ անխոհեմությամբ հավատալով Հայկ. ընկերության վաղաժամ հայտարարություններին և ցանկալի չէ, որ այսուհետև ևս և ավելի դառնապես տուժեմ»:

ԳԱԹ ԹՖ, 871 (494):

Նոյեմբերի 26 - Մասնակցում և հիշատակի խոսք* է ասում հայ կաթոլիկների աղոթատանը Մ. Պեշիկթաշյանի մահվան 50-ամյակի առիթով կատարված հոգեհանգստի արարողությանը:

*) Խոսքը չի հրապարակվել:

«Հորիզոն», 1917, թիվ 254:

Նոյեմբերի 28 - Հակոբ Սառիկյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Վլադիկավկազից:

Գրում է, որ վաղուց այլուրն ուղարկել է և լուր չունի՝ ստացել են, թե ոչ: Ներկայացնում է քաղաքում տիրող պայթյունավտանգ իրավիճակը. «...Ազգ ու լեզուների մի խառնարան է, ուր ներկայումս մի սոսկալի եմ է սկսվել, որը հեշտությամբ կարող է ավերիչ հրաբուխի փոխվել ու ամեն ինչ իր մոխիրների տակ թաղել: Անվերջ ընդհարումները մի օր կազակների ու ինգուշների մեջ, մյուս օրը՝ չեչենների ու զինվորների մեջ. և ամեն անգամ տասնյակներով ու հարյուրներով մարդկային զոհերով»:

Երկաթուղու գիծը քանդված է, համքերն այրվում են, երեխաներին զողանում են և փրկագնով վերադարձնում: Վախենում է որդուն Մոսկվայից բերել, խնդրած հացն էլ չի կարողանում ուղարկել:

Բանաստեղծից ուզում է իմանալ նրանց կողմերի վիճակի մասին:

ԳԱԹ ԹՖ, 1970 (436 լր.):

Նոյեմբերի 28, Թիֆլիս - Քաղաքային վարկի ընկերության գրասենյակում տեղի է ունենում Հայկազյան ընկերության ժամանակավոր վարչության ընդլայնված նիստը (տե՛ս նոյեմբերի 17):

Ներկա են՝ վարչության անդամներ Կ. Ալիխանյան, Փ. Վարդապարյան, Հ. Թումանյան, Ս. Լիսիցյան, Ա. Սեյլանյան:

Հրավիրվածներից՝ Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյան, Գյուտ ա. ք. Աղանյան, Շիրվանզադե, Լեո, Ս. Կանայան, Ռ. Աբրահամյան, Վ. Փափազյան, Գ. Բաշինջաղյան, Մ. Աբեղյան, Փ. Թերլեմեզյան, Ե. Թադևոսյան, Արս. վ. Ղևոնդյան, Ֆետվաճյան, Մելիքսեթբեկյան, Մ. Խոստիկյան:

Կարդացվում և հաստատվում է նոյեմբերի 21-ի նիստի արձանագրությունը:

Նախագահող Կ. Ալիխանյանը տեղեկացնում է, որ Շրջանային դատարանը ընկերության կանոնադրության մեջ որոշ թերություններ է նշել, որոնք վերացվել են, և կանոնադրությունը նորից ներկայացվել է հաստատման: Ժողովը հավանություն է տալիս կատարված փոփոխություններին:

Հավաստիացնում է, որ Ակադեմիայի ձևավորումից հետո ժամանակավոր վարչությունը չի դադարեցնելու իր գործունեությունը, այլ շարունակելու է օժանդակել գրողներին և բոլոր նրանց, ովքեր զբաղվում են հայագիտությամբ:

Այնուհետև ժողովն անցնում է ակադեմիկոսների ընտրության հարցի քննությանը, որ անավարտ էր մնացել (տե՛ս նոյեմբերի 5):

Քննարկմանը մասնակցողների մեծ մասը այն կարծիքին է, որ ակադեմիկոսների ընտրությունը պետք է կատարվի՝ հաշվի առնելով գիտական հաստատությունների կողմից վկայված անվանի մասնագետների եզրակացությունը:

Թումանյանը, դեմ չլինելով, որ ակադեմիկոսների ընտրության ժամանակ հաշվի առնվեն նշանավոր գիտնականների կարծիքները՝ թեկնածուների գիտական արժանավորությունների մասին, միաժամանակ ներկա ժողովը բոլորովին ձեռնհաս է համարում թեկնածուների ցուցակը կազմելու, մանավանդ որ հրավիրված են Թիֆլիսում

ապրող բոլոր աչքի ընկնող հայագետները, գեղարվեստագետներն ու գրողները:

Ժողովը քվեարկությամբ միաձայն հաստատում է այն պահանջը, որ ակադեմիկոսները պետք է ապրեն և գործեն թիֆլիսում:

Ժողովը հավանության չի արժանացնում այն առաջարկը, թե Ակադեմիայի առաջին անդամները պետք է լինեն միայն վկայված գիտնականներ, միաժամանակ որոշվում է, որ թեկնածուների ցուցակը կազմելիս առաջին հերթին աչքի առաջ ունենալ նրանց:

Այնուհետև ժողովի նախագահությունը ստանձնում է թունանյանը: Մտքերի փոխանակությունից հետո կազմվում է Ակադեմիայի անդամության թեկնածուների նախնական ցուցակը.

պրոֆ. Ն. Ադոնց

պրոֆ. Ս. Եղիազարյան

պրոֆ. Լ. Մսերյան

պրիվ.-դոց. Յ. Օրբելի

մագիստր. Կ. Կոստանյան

մագիստր. Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյան

Գալուստ Տեր-Մկրտչյան-Միաբան

Գարեգին եպ. Յովսեփյան

Ստ. Մալխասյան

Ա. Բաբախանյան-Լեո

Ս. Տեր-Ավետիքյան

Ա. վ. Ղևոնյան

Յ. Աճառյան

Ս. Տիգրանյան

Մ. Աբեղյան

Ս. Կանայան

Յ. Մանանդյան

Երվանդ Տեր-Մինասյան

Թեկնածուներից յուրաքանչյուրի գիտական աշխատությունների մասին տրվում է համառոտ տեղեկություն:

Մ. Աբեղյանը հայտարարում է, որ իրեն ճնշված է զգում ակադեմիկոսի պատվավոր կոչումից, խնդրում է իրեն թողնել միայն դասախոսների ցուցակում:

Ժողովն անցնում է դասախոսության թեկնածուների ցուցակի քննարկմանը: Մտքերի փոխանակության ժամանակ ելույթ ունեցողները ընտրության բավական խիստ պահանջներ են առաջադրում:

Այդ պահանջները աչքի առաջ ունենալով՝ ժողովն առաջարկում է դասախոսների հետևյալ ցուցակը.

1. Աշոտ Հովհաննիսյան
 2. Ռուբեն Աբրահամյան
 3. Նիկողայոս Աղբալյան
 4. Գրիգոր Ղափանցյան
 5. Մաքսության վարդապետ
 6. Մ. Խոստիկյան
 7. Ստ. Լիսիցյան:
- ԹԹ ԹԸԱ, թղթ. 39/9

Նոյեմբերի 30 - Գրում է «Ո՛վ իմանա՝ ո՛ւր ընկանք...» քառյակը*:

*) Պահպանվել է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ բանաստեղծի դստեր՝ Արփենիկի ալբոմում:

ԵԼԺ 2, 19, 518:

Նոյեմբեր - Տպագրում է («Գործ», 1917, թիվ 9-10) «Թագավորն ու չարչին» բալլադը:

ԵԼԺ 2, 180-183:

Դեկտեմբերի 4 - Ա. Զիլինգարյան* ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Մեծարգո ընկեր Հովհաննես,

Հ. Աճառյանի բառարանի մասին Ձեր գրախոսականի (տե՛ս <օգոստոս>.- խմբ.) շարունակությունը** չստացանք դժբախտաբար: Հույս ունենք, որ կհասցնեք գոնե «Գործի» No 12-ի համար: Անհամբեր սպասում ենք: Խնդրում ենք շտապել, որովհետև No 12-ի տպագրությունը արդեն սկսված է: Թերևս բարի լինեք ուղարկելու մեզ նյութեր «Գործի» հունվարի No-ի համար:

Խմբագրության կողմից –

Ձերն բարևներով - *Ա. Թ-Զիլինգարյան*»:

*) «Գործ» ամսագրի խմբագրության աշխատակիցներից է:

**) Գրախոսականի շարունակությունը չի տպագրվել, հայտնի չէ նաև որևէ ձեռագիր (ԵԼԺ 7, 641):

ԳԱԹ ԹՖ, 1922 (423 լր.):

Դեկտեմբերի 6 - Սերգեյ Գորոդեցկու նամակը Թիֆլիս՝ Թումանյանին:

Գիրք է խնդրում հայկական թատրոնի մասին, նաև բանաստեղծի՝ այդ թեմայով հոդվածներից՝ թեկուզ համառոտ:

ԳԱԹ ԹՖ, 1098 (297 լր.):

<Նույն օրերին> - Սերգեյ Գորոդեցկու նամակը Թիֆլիս՝ Թումանյանին:

Կրկնում է խնդրանքը՝ հոդված ուղարկելու մասին: Խոստանում է անհապաղ տպագրել: Պատմել և ոգևորել է բոլորին. անհամբեր սպասում են:

ԳԱԹ ԹՖ, 1099 (594):

Ղեկտենքերի 10, Թիֆլիս - Քաղաքային վարկի ընկերության շենքում տեղի է ունենում Հայկազյան ընկերության ժամանակավոր խորհրդի հերթական նիստը:

Ներկա են՝ Ա. Էնֆիաճյան, Արտ. Սեյլանյան, Փ. Վարդազարյան, Մկ. Քալանթարյան, Ն. Աղբալյան, Մին. Բերբերյան, Հովհ. Թումանյան, Սմբ. Տեր-Ավետիքյան, Սիր. Տիգրանյան, Ստ. Մալխասյանց:

Կարդացվում և հաստատվում է նոյեմբերի 28-ի ժողովի արձանագրությունը: Հայտարարվում է, որ Արս. Ղևոնյանը խնդրել է իր անունը հանել այդ ժողովում կազմված ցուցակից:

Նախագահող Կ. Ալիխանյանը տեղեկացնում է, որ ընկերության կանոնադրությունն արդեն հաստատված է նահանգական դատարանի կողմից, և ընկերությունն արդեն կարող է ձեռնամուխ լինել իրական աշխատանքի:

Մտքերի փոխանակությունից հետո ժողովը որոշում է՝

Կանոնադրությունը թարգմանել հայերեն և երկու լեզուներով տպագրել մի տետրի մեջ: Այդ գործը հանձն են առնում Հովհ. Թումանյանը և Ս. Տիգրանյանը:

Որպեսզի ընտրվելիք խորհրդի անդամները գործին նվիրված մարդիկ լինեն, պատրաստել ֆինանսական և գիտական սեկցիաների թեկնածուների ցուցակներ և ներկա խորհրդի կողմից ներկայացնել ընդհանուր ժողովի հաստատմանը:

Թեկնածուներ ընտրել ընկերության հիմնադիր անդամներից, որոնց թիվը հասնում է 59-ի:

Ֆինանսական սեկցիայի համար՝ Ալիխանյան Կ., Աղեքսանդրյան, Աֆրիկյան Խ., Էնֆիաճյան Արտ., Ղուկաս Լ., Միլյան, Մելիքյան Համբ., Նարինյան Խաչ., Սեդրակյան Արտ., Վարդազարյան Փ., Քալանթարյան Մկ.:

Գիտական սեկցիայի համար՝ Աբեղյան Մ., Ահարոնյան Ավ., Աղանյան Գյուտ ք., Աղբալյան Ն., Բերբերյան Մին., Բունիաթյան Մ., Թերլեմեզյան Փ., Թումանյան Հովհ., Լիսիցյան Ստ., Մալխասյանց Ստ., Մելիքյան Սպ., Տեր-Ավետիքյան Սմբ., Տիգրանյան Սիր., Փիրուզյան Հար., Ֆետվաճյան:

Սեկցիաների մեջ չպետք է մտնեն ընկերությունից նպաստավորվող անձեր: Եթե վերը բերված գիտական սեկցիայի թեկնածուների ցուցակից ընտրվեն նպաստավորվողներ (իբրև ակադեմիկոս, դասախոս և այլն), այդպիսիները պետք է դուրս գան սեկցիայի կազմից, որոնց կփոխարինեն ուրիշ թեկնածուներ:

Ընդհանուր ժողովը կազմում է մնայուն խորհուրդ, որն իր կողմից ընտրում է ընկերության ակադեմիկոսներ, դասախոսներ և այլն՝ նկատի ունենալով նախորդ ժողովում պատրաստված ցուցակը (տե՛ս նոյեմբերի 28): Այս կարգով ընտրվում են առաջին ակադեմիկոսները, որոնք այնուհետև ըստ կանոնադրության իրենք կկատարեն հաջորդների ընտրությունը:

Որոշվում է առաջիկա նիստը գումարել դեկտեմբերի 17-ին՝ ցերեկվա 10 անց 30-ին:

ԹԹ ԳԳ, 1079/39-7:

Ղեկտեմբերի 11 - Հր. Աճառյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Նոր Նախիջևանից:

Առիթը բանաստեղծի «Հայերեն գավառական բառարան» հոդվածն է (տե՛ս <Օգոստոս>, որտեղ գրախոսվում է Աճառյանի «Հայերեն գավառական բառարան» աշխատությունը (Թիֆլիս, 1913):

Խոստովանելով, որ չի «ախորժում» լրագրական վիճաբանություններից՝ նպատակահարմար է համարում իր կարծիքը գրախոսության մասին հայտնել նամակով: Անում է մի երկու մասնագիտական-տեսական դիտողություն: Մասնավորապես. «Երկու տարբեր լեզվի բառ իրար հետ համեմատելու ժամանակ առաջին նկատելու բանն է ծայնական նույնությունը և երկրորդը՝ նշանակության նմանությունը: Այս երկուսը այն անհրաժեշտ պայմաններն են՝ առանց որոնց համեմատությունը անհիմն է»: Այնուհետև. «Լեզվաբանության պայմաններից մեկն էլ այն է, որ համեմատելի բառերի արդի նմանությունից չխաբվենք: Եթե բառերը իրար հետ ցեղակցություն ունեն, պետք է որ քանի հինը գնանք, այնքան ավելի մոտենան միմյանց»:

*) Նամակի վերջին էջերը չեն պահպանվել, ուստի դժվար է ասել, թե թունանյանի դիտողություններից որոնք է ընդունել, որոնք՝ ոչ:

ԳԱԹ ԹՖ, 495/872:

Դեկտեմբերի 12 - Արտավազդ թունանյանի նամակը Թիֆլիս՝ հորը՝ Վանից.

«Հայրիկ ջան!

Ինչպես երևում է, ոչ դուք եք նամակ գրում, իմն էլ չեք ստանում: Ոչինչ, դրությունը շատ է խառնվել: Հիմա էդտեղ շատ ավելի է վտանգավոր, քան էստեղ: Սովը, էսպես, թե էնպես, անխուսափելի է: Մի քանի օրից գնում են թիմար (Այլուր)՝ կոմիսարի պաշտոնով. 13 գյուղ է: Տեսնենք: Հարկավոր է լավ և տոկուն աշխատել, որ ուզում են իրագործել: Երբեմն գոնե նամակ գրեք:

Համբույրներով՝ քո Արտիկ»:

ԹԶ ԱՐՏ, 226:

Դեկտեմբերի 17, Թիֆլիս - Եկեղեցու բակում տեղի է ունենում բազմամարդ հանրահավաք: Մասնակցում են 5000-6000 հոգի:

Խոսում է գորավար Անդրանիկը: Ներկայացնում է հայ ժողովրդի համար ստեղծված տագնապալի կացությունը: Մարտաշունչ հայրենասիրական կոչով դիմում է ժողովրդին՝ հրավիրելով «գոյության հարցի գիտակցության և բնազդին»:

«Հայաստան» (Ձորավար Անդրանիկի օրգան), Թիֆլիս, 1917, թիվ 179:

Դեկտեմբերի 20, Թիֆլիս - Երկտող Գյուտ Աղանյանին.

«Բարեկրոն Գյուտ ա. քահ. Աղանյան,

Հայ գրողների ընկերության վարչության անդամ տիկ. Ջապել Եսայանը տեղափոխվել է Բաքու տևական ժամանակով, ուստի վարչությունը խնդրում է Ձեզ, իբրև առաջին փոխանդամի, շնորհ բերել իր նիստերին:

Նախագահ՝ Հ. Թունանյան»:

ԵԼԺ 10, 281:

Դեկտեմբերի 20 - Գրում է «Երկար, երկար ման եկա...» բանաստեղծությունը:

*) Ինքնագիրը բանաստեղծի դստեր՝ Արփենիկի ալբոմում:

ԵԼԺ 1, 297, 638:

Դեկտեմբերի 21 - Հայտարարություն Գայանյան դպրոցի դահլիճում ՀԳԿԸ նախաձեռնությամբ կայանալիք հայ մտավորականության ժողովի մասին:

«Հորիզոն», 1917, թիվ 268:

Դեկտեմբերի 22 - Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Էջմիածնից:

Թողել է Աստրախանը և վերադարձել Էջմիածին: Չնայած աննպաստ պայմաններին՝ ուզում է մնալ այդտեղ:

Անդրադառնում է Թիֆլիսից հասնող կոչերին. «Անդրանիկը, Ջամալյանը, Ազգային խորհուրդը ոգևորությամբ մտածում են հայկական զորք կազմել, ափսոս ոգևորություն չկա, ափսոս այդ կոչերը ցնցումներ չեն առաջ բերում: Ժողովուրդը անչափ հոգնել է: Բոլորը ցանկանում են խաղաղություն, ու ռուսաց բոլշևիզմը անհիմն բարբառանք չէ: Այդ շարժման արծազանքները այստեղ էլ լսելի դարձան»:

Դժգոհ է, որ հայոց գնդի հրամանատար գնդապետ Հովսեփյանը հրամայել է արծակել ճեմարանի աշակերտներին և շինությունը հանձնել իրենց՝ դասալիքներին տեղավորելու:

Ծանր է նաև գաղթականության վիճակը. հավաքվում են վանքի բակում, աղմկում, պահանջներ ներկայացնում:

Տեղեկացնում է. «Մեր երիտասարդ վանականներից մի քանիսը, լսելով ընդհանուր զորաժողովը, որոշել են կամ իբրև գթության եղբայրների, կամ հոգևոր հովիվներ միանալ հայ գնդերին»:

Հայտնում է, որ՝ «Կովկասի կոմիսարիատը անմիտ քայլ արեց, որոշեց հայ դաշնակցականների օժանդակությամբ համայնացնել հայոց վանքերի հողերը, զրկել հայոց ճեմարանն ու մի քանի դպրոցներ իրենց եկամուտի աղբյուրներից և Էջմիածնի շուրջը ուժեղացնել թրջությունը»:

Վերջում կատակով խոստանում է բանաստեղծին «մի փութ բրինձ» ուղարկել որպես կաշառք, որ իր նամակներին պատասխանի:

ԳԱԹ ԹՖ, 1740 (399 լր.):

Դեկտեմբերի 23 - Հաղորդագրություն ՀԳԿԸ նախաձեռնությամբ հրավիրված հայ գրողների ժողովի մասին:

Մասնավորապես տեղեկացվում է. «Ներկա մոմենտի առիթով խոսեց Հովհ. Թումանյանը, որից հետո եղան և մի քանի խոսողներ,

որոնցից ընկ. Վ. Վալադյանը ներկա հավաքույթը համարեց ավելորդ, գտնելով, որ գործը դրված է և մարմինները արդեն սկսել են իրենց աշխատանքը, ուստի ժողովը, ողջունելով Ազգային խորհրդին, պետք է ցրվի: Վերջում ընկերը առաջարկեց համապատասխան բանաձև, որի խմբագրությունը հանձնվեց Յովհ. Թումանյանին, Ստ. Լիսիցյանին և Վ. Վալադյանին»:

«Յորիզոն», 1917, թիվ 270:

Պեկտեմբերի 23 - Բաց նամակ Անդրանիկին.*

«Սիրելի Անդրանիկ,

Ահավոր մոմենտի առջև ամեն մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ ունի և կարող է՝ թե վերահաս վտանգը կանխելու, և թե բաղձալի խաղաղությունը հաստատելու համար:

Ես չորս տղա ունեմ, չորսն էլ երկրի կառավարության, Ազգային խորհրդի և քո տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստական գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ կլինեն:

Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետևաբար ոչինչ չեմ խնայել, միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքն ու ազատությունը»:

Յավատում է Անդրանիկի «վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը», նրա ռազմական տաղանդին: Պատրաստ է ամսական հարյուր ռուբլի տրամադրել ազգային պաշտպանության ընդհանուր գանձարանին:

Նամակի վերջում՝ խմբագրության հավելումը. «Պ. Յովհ. Թումանյան միևնույն հայտարարությունը ըրած է նաև Ազգային խորհրդի առաջ: Կը խնդրվի բոլոր հայ թերթերն արտատպել այս նամակը»:**

*) 1917 թ. դեկտեմբերին կնքվում է ռուս-թուրքական զինադադար, ըստ որի՝ ռուսական բանակի և հայ կամավորների ազատագրած երեք հայկական նահանգները մնում էին անօգնական՝ թուրք և քուրդ հրոսակների վրեժխնդրության առջև: Վտանգը կանխելու համար ստեղծվում է հատուկ Ազգային խորհուրդ: Որոշվում է կազմել Յայաստանի երկրապահ զորամաս: Յրամանատար է նշանակվում Անդրանիկը: Նա կոչով դիմում է ողջ հայությանը՝ զորավիգ կանգնելու ստեղծվելիք զորամիավորմանը, ամեն ինչ զոհաբերել հանուն հայրենիքի փրկության (տե՛ս դեկտեմբերի 17): Թումանյանի բաց նամակը, որ տպագրվում է մի քանի հայկական թերթերում, Անդրանիկի այդ կոչի արձագանքն է:

**) Թումանյանի բաց նամակը տպագրվում է «Реченьская» (թիվ 137), «Աշ-

խատանք» (թիվ 67) օրաթերթերում: «Հորիզոնը», որ արդեն դաշնակցության պաշտոնական օրգանն էր, Թումանյանի բաց նամակը չի տպագրում՝ Անդրանիկի կոչը համարելով ոչ օրինական: Թերթի հավաստմամբ («1917, թիվ 275») Ազգային խորհուրդը գերագույն մարմին է ամբողջ Ռուսաստանի հայության համար, և ժողովրդին կոչ անելու իրավունքը վերապահված է միայն նրան: Ուստի թերթը հարկ է համարում «այդօրինակ անջատ քայլերը կանխելու համար խորհրդի այս որոշումը հայտարարել ի գիտություն հայության» (տե՛ս նաև թիվ 270-ի հաղորդագրությունը):

ԵԼԺ 10, 281-282:

Պեկտեմբերի 24 - Գրում է «Քանի՜ ձեռքից եմ վառվել...» քառյակը:*

*) Պահպանվել է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ բանաստեղծի դստեր՝ Աշխենի ալբոմում:

ԵԼԺ 2, 20, 518:

Պեկտեմբերի 24 - Գրում է «Ի՛նչքան ցավ եմ տեսել ես...» քառյակը:*

*) Պահպանվել է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ բանաստեղծի դստեր՝ Աշխենի ալբոմում:

ԵԼԺ 2, 21, 518:

Պեկտեմբերի 24 - Գրում է «Երագումըս մի մաքի...» քառյակը:*

*) Պահպանվել է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ Աշխենի ալբոմում:

ԵԼԺ 2, 22, 518:

Պեկտեմբերի 24 - Մամուլը տեղեկացնում է, որ Հայ գրողների ընկերության նախաձեռնությամբ քաղաքային խորհրդարանում հավաքված հայ մտավորականությունը, նկատի ունենալով կովկասյան ճակատի և թիկունքի ներկա դրությունը, ընդունեց հետևյալ բանաձևը.

«Ողջույն ուղարկել Հայոց ազգային խորհրդին և հրավիրել հայ մտավորականության բոլոր խավերին իրենց ուժերն ու փորձառությունը դնել Ազգային խորհրդի տրամադրության տակ: Նկատելով կովկ. ճակատի պահպանությունը և թիկունքի կարգապահությունը համապետական և համակովկասյան խնդիր՝ գործել ռուսական դեմոկրատիայի և կովկասյան բոլոր ազգերի ինտելիգենտների հետ համերաշխ՝ ընդհանուր դեմոկրատական խաղաղությանը հասնելու և հեղափոխության հայտարարած մեծ սկզբունքները իրականացնելու համար:

Նախագահ՝ Յովհ. Թումանյան»:

«Հայաստան» օրաթերթ (Զորավար Անդրանիկի օրգան), Թիֆլիս, 1917, թիվ 184:

Պեկտեմբերի 26 - Գրում է «Մընացել է բերդը մեզ...» քառյակը:*

*) Պահպանվել է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ ծոցատետրում:

ԵԼԺ 2, 23, 519:

Պեկտեմբերի 26 - Մամուլը հաղորդում է.

«Յովհ. Թումանյանը մի նամակով (տե՛ս դեկտեմբերի 23) հայտնում է Ազգային խորհրդին, որ իր չորս որդին դնում է երկրի իշխանության և Ազգային խորհրդի տրամադրության տակ, չորս դուստրն էլ պատրաստականություն են հայտնել թիկունքի ազգ. զինվ. հիմնարկություններում աշխատելու, իսկ ինքը պատրաստ է իր անձը նվիրելու, երբ հարկը պահանջի: Դրա հետ միաժամանակ նա ամսական 100 ռուբլի է մտցնում ընդհանուր ազգ. գանձարանը»:

«Մշակ», 1917, թիվ 271:

Պեկտեմբերի 27 - Գրում է «Հոգիս տանը հաստատվել...» քառյակը:

ԵԼԺ 2, 24, 519:

Պեկտեմբերի 29 - Անդրանիկի բաց նամակը Թումանյանին.

«Սիրելի Յովհաննես

Ես հրճվանքով կարդացի նամակդ (տե՛ս դեկտեմբերի 23.- խմբ): Հասած է ժամը, որ բոլորը նմանին քեզի, տրամադրելի ընելով իրենց զավակները և դրանք հայրենիքի պաշտպանության գործին: Պետք է մոռնանք պահ մը զրիչը, փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մեջ միայն կըծաղկի գեղարվեստի կյանքը:

Ես շատ զգացված եմ քո բարձր տրամադրութենեդ և կը հուսամ, որ մեր բովանդակ մտավորականությունը կը հետևի քո օրինակին, և այսպիսով կը դարբենենք մեր սրբազան ազատությունը:

Քոյդ Անդրանիկ»:

«Հայաստան» օրաթերթ (Զորավար Անդրանիկի օրգան), Թիֆլիս, 1917, թիվ 185:

<Նոյեմբեր- դեկտեմբեր> - Տպագրում է «Անց կացան...»

(գր.1890), «Ո՞ւր կորան...» (գր.1916, հունիս), «Ետ չեկավ...» (գր. 1916, հունիս), «Քանի մահ կա իմ սրտում...» (գր. 1917 նոյեմբ. 7), «Ետ եկեք...» (գր. 1917, նոյեմբ. 11) քառյակները:

«Գործ», Բաքու, 1917, թիվ 11-12:

1917 - Գրում է «Քու սերն անխոս խաբեց ինձ...» քառյակը:*

*) Պահպանվել է մեկ սևագիր-ինքնագիր:

ԵԼԺ 2, 71, 533:

<1917> - Թարգմանում է Գյոթեի «Wanderers Nachtlied» («Ճանփորդի գիշերվա երազը») բանաստեղծությունը՝ «Լերանց շարքերը...» սկզբնատողով:*

*) Թարգմանությունը կատարված է Մ. Յու. Լերմոնտովի ռուսերեն փոխադրությունից:

ԵԼԺ 2, 282, 606:

1917 - Տպագրում է («Լուսաբեր», 5-րդ տարի. 3-րդ տպ., Թիֆլիս, 1917) Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» պոեմի մի հատվածի թարգմանությունը՝ «Ռոստևանի և Ավթանդիլի մրցությունը» վերնագրով:

ԵԼԺ 4, 209, 615:

<1917> - Գրում է «<Դիտողություններ լեզվի մասին>» հոդվածը:

Ընդարձակ հոդվածի սևագիր գրառումներ են: Ձարգացնում է այն միտքը, թե հայ ժողովուրդը, դարեր շարունակ ենթարկվելով մեկը մյուսին հաջորդող նվաճողական արշավանքների ու բռնությունների, կրել է նաև ընդհանուր մշակութային և հատկապես լեզվական ազդեցություններ: Դրա հետևանքով աղավաղվել է մեր լեզուն: Բայց նաև նկատում է, որ չի կարելի հրաժարվել այդ բոլոր ազդեցություններից, քանի որ դրանցից շատերը դարերի ընթացքում մարսվել են մեր լեզվական մտածողության կողմից և դարձել են մերը: Ժողովուրդը, «հավաքելով թե հինը, թե նորը, էդ ամենից պետք է ստեղծի մի ուժեղ ու կենդանի լեզու, ազգային լեզու, գրական լեզու»: Այնուհետև. «Մարդիկ կան, որ կարծում են՝ մենք արդեն գրական լեզու ունենք. ոչ, նրանք շատ են սխալվում. էս լեզուն հայ ազգի լեզուն չի և չի կարող լինել: Էս մի խեղճ ու կրակ, սուտ ու սխալ իրար կցած բառերի մի ողորմելի շարան է, մի տերողորմյա, ուլունքի շարան, որ դժբախտ հանգամանքների բերումով դրանք հայոց

ազգի վզին են փաթաթել մի շարք հայերեն չիմացող մարդիկ»:

Մշակույթի տարբեր բնագավառներում ծայր առած շարժումը, որ նպատակ ունի բոլոր ասպարեզներում գտնելու բնիկ ազգայինը, վերաբերում է նաև լեզվին. «Նոր ենք հավաքում մեր լեզվի տարրերը, մեր բարբառները, մեր ոճերը, լեզվական գանձերը. դեռ չենք գտել մեր շեշտը, մեր համաձայնությունը, նոր ենք հավաքում մեր ժողովրդական երգերն ու եղանակները, նոր ենք հավաքում մեր ազգագրական նյութերը, առանց որի գրականություն չկա ինքնուրույն. նոր ենք հավաքում մեր նկարչության ու մանրանկարչության մնացորդները, մեր ճարտարապետության ձևերը, որ ջարդված ու ցրված են եղել, աղճատված ու խառնված են եղել, ինչպես և մենք ինքներս, որ ջարդված ու ցրված ենք եղել, և մենք ինքներս էլ նոր ենք հավաքվում ու նոր ենք ազգ դառնում վերստին, որովհետև մի ամբողջական ազգ չէինք վաղուց ի վեր...»

Եղպես էլ գրական լեզու չունենք ընդհանուր, որովհետև էն խեղճ ու կրակ, աղքատ ու աղճատ բառերի շարանը, որ այժմ կա մեջտեղը, մեր հրապարակի և հրապարակախոսության լեզուն դեռ մեր գրական լեզուն չի, և մեր գրական լեզուն տակավին գտնվում է իր կազմակերպության շրջանի մեջ:

Եվ էսպես, մի ընդհանուր ներդաշնակություն կա ամեն բանի մեջ. ինչպես դեռ ազգ չենք կազմակերպված, չունենք ազգային երաժշտություն, ազգային գեղարվեստ, տարազ և այլն, էնպես էլ չունենք լեզու»:

Գրական լեզվի ձևավորման ու զարգացման հիմնական աղբյուրը համարում է ժողովրդի կենդանի խոսքը: Բայց հանգամանքների բերումով գրական լեզուն պիտի կազմավորվեր գաղութներում, բնիկ արմատներից հեռու. «Սկիզբը դրվեց հին լեզվի վրա, խալիֆաների ձեռքով, սաղմոսով ու ժամագրքով: Այնուհետև էլ, բնիկ երկրի ժողովրդի դժբախտության պատճառով, լուսավորության, դպրոցի, գրականության և մամուլի գործը ձեռք առան գաղութները, որոնք կտրված էին հայրենի հողից ու լեզվի աղբյուրից, և դեր խաղացին մարդիկ, որոնք հայերեն չգիտեին՝ Ստեփանոս Նազարյան, Միքայել Նալբանդյան, Գրիգոր Արծրունի»:

Եվ մարդիկ, որոնք միանգամայն անտեղյակ էին թե՛ հայ լեզվին, թե՛ հայ կյանքին, որոնց վիճակվել էր, սակայն, թե՛ հայի վիճակը տնօրինել և թե՛ նրա գրական լեզուն հորինել՝ գործի անցան»:

Գործի անարդյունավետությունը ցույց է տալիս դիպուկ պատ-

կերավոր համեմատություններով. «Գիտեին, որ օտար երկրներում ձգտում կա և շարժում դեպի կենդանի ժողովրդի լեզուն, իրենք էլ խոսեցին եղև սկզբունքներից, բայց որովհետև եղև լեզուն չգիտեին, դրան փոխարինեցին իրենց չգիտեցած հայերենը, ու սկսեցին լեզու չիմել հեռու և՛ հայ ժողովրդից, և՛ նրա լեզվից: Գիշտ էն մարդունման, որ ճոխ բուրաստանի շենքին նստած մեջքն արած նրա միջի հազարգունի ու բուրավետ ծաղիկների՝ գույնզգույն թղթից ծաղիկներ է շինում, որ վաճառի մարդկանց: Կամ էն երեխաների նման, որ տոնածառ են խաղում: Մեծ անտառից մի եղևնու ճյուղ է ընկել ձեռքները, շրջապատել են ու զանազան զարդարանքներով ծանրաբեռում են: Սակայն նա արդեն մեռած մի ճյուղ է, ոչ թե կենդանի ծառ և չի ապրելու, և զարդարանքներն էլ ոչ մի կապ չունեն իրեն հետ»:

Դիտողություններ է անում բարբառների մասին. «Մի որևէ լեզվի բարբառները կազմվում են երկու ուղղությամբ՝ հորիզոնական ուղղությամբ, որ է՝ աշխարհագրական, տարածական իմաստով, ինչպես առանձին-առանձին տեղերի բարբառները, և 2, ուղղահայաց, իբրև շերտավորումն կամ ծալքավորումն, որ է՝ զանազան կերպարանափոխությունները, ձևակերպումները միևնույն տեղական բարբառի, իբրև հետևանք դասակարգերի, արհեստների, պարապմունքների, կյանքի ձևերի և այլն: <...> Բառերն ու ոճերը ընդհանուր են, և հայոց բարբառների մեջ մտնողը կզարմանա ներքին միությունից ու նմանությունից՝ արտաքին տարբերության հետ միասին: <...> Քաղաքակրթությունը լեզուները՝ բարբառները միացնում է»:

Ընդհանուր դիտողություններ առհասարակ լեզվի մասին.

«Ոչ թե էն ճամփով պետք է զարգանա լեզուն, որ մի ազգ մյուսից որքան կարելի է ավելի հեռանա ու անջատվի, այլ ընդհակառակը, ավելի մոտենա... <...> Լեզվի մեջ ապրում է մի ժողովրդի պատմությունը: <...> Նախնական մարդու կարծիքով, խոսքը իր նշանակած առարկայի հետ խորհրդավոր կապ ուներ: Խոսք արտասանել՝ կնշանակեր առարկան շոշափել: Խոսքով ցանկանալուն՝ օրհնանք թե անեծք, պետք է հետևեր գործողությունը: Եվ շատ խոսքեր, որ այժմ մերկ, դատարկ խոսքեր են մեզ համար, մի ժամանակ ահռելի բնավորություն ունեին:

Սակայն մերկ խոսքը բարձր կուլտուրայի պարզաբանությունն է, նախնական մարդը չէր կարող մերկ խոսքով բավականանալ: Եվ ահա նա խոսքերի, այսինքն՝ խորհրդավոր ուժերի հետ գործ ունենալիս գործ էր ածում և համապատասխան շարժումներ ու գործո-

ղություններ:

Եվ այժմ էն զանազանությունը, որ մեզ համար գոյություն ունի բանաստեղծության ու պրոզայի մեջ՝ նրա համար չկար: Նա երգելով ու շեշտով, ռիթմով էր խոսում միշտ և ժեստերով: (Երգելով կարողալը հատուկ է և հիվանդներից ոմանց, հոգեկան և անգրագետներին): Ամեն ժողովրդի բարբառն ավելի է մեկտղիկ, քան գրական լեզուն: Հին և նախնական լեզուներն ավելի են մեկտղիկ: Էդ մեկտղիան չքացել է արդեն անգլիական և գերմանական տարածված լեզուներից:

<....> Ասում են գեղեցիկ, ազնիվ լեզու պետք է լինի ինտելիգենցիայի լեզուն, գրականության լեզուն:

Բայց ո՞րն է ազնիվը:

Ահա մի հիմնական խնդիր: Դուք կարող եք ազնիվ ու գեղեցիկ անվանել ձեր մեջքի չափազանց բարակությունը և էդ գեղեցկության համար միշտ տառապել ձեր չոր կորսետների մեջ սեղմված, գեղեցիկ ու ազնիվ համարել ձեր բարձր կրունկներն ու դողդողալ նրա վրա, գեղեցիկ ու ազնիվ նաև համարել ձեր խեղդուկ ու փակ սալոնները, ձեր դեմքի դալկությունն ու արենապակասությունը, ձեր շինծու լեզուն, որ լեզու է կոչվում միայն էն պատճառով, որ բառեր ունի իր մեջ, այսինքն ամենաքիչը, ինչ որ կարող է ունենալ լեզուն, և բառերի մի շարան է, մի տերողորմյա, ու էն էլ հաճախ սուտ ու սխալ բառերի:

Բայց ազնիվն ու գեղեցիկը ընդարձակ տարածություն է, ազնիվն ու գեղեցիկը ազատ, մաքուր օդն է, ազնիվն ու գեղեցիկը առողջությունն է, կայտառ, էլաստիկ ու պլաստիկ ձևերն են, ազատ զարգացած մարմինն է, ազնիվն ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է, որ հազար ու մի ոճերով ու ձևերով է խոսում, որ հազարավոր տարիների ընթացքում հավաքել է հազարավոր գանձարաններից ու պահել, զարգացրել, ճոխացրել, գեղեցկացրել, որ ամբողջովին հոգի է ու հոգեբանություն, պատկեր ու տրամադրություն, շունչ է ու զգացմունք:

Հայոց լեզուն Սասունցի Դավթի հոր զենքն ու զրահն է, որ աչքից գցել ու սնդուկում փակել է անշնորհք, թշվառական հորեղբայրը: Սասունցի Դավթի հոր նժույզն է, որ առանց խնամքի փակել է կեղտոտ ախոռում հավերի թառի տակ, մինչև էդ զենք ու զրահով չզինավառվի հայ ժողովուրդը, մինչև էդ նժույզը չհեծնի՝ կմնա սրա նրա դռանը խեղճ ծառա»:

ԵԼԺ 8, 434-448:

1917 - Տպագրվում է Վ. Մենակի «Վահան Տերյան (քննական տեսություն)» հոդվածը:

Դատողություններ է անում Տերյանի քնարական աշխարհի մասին և եզրակացնում, թե նա, իբրև իր ժամանակի նոր սերնդի ներկայացուցիչ, նույնպես մեկուսանում է հայրենի հողից ու տնից և մեկնաբանում է. «Այս հանգամանքը, այս անջատումը հայրենի իրականությունից բանաստեղծի համար ունի իր թե՛ դրական, և թե՛ բացասական կողմերը. մի կողմից Տերյանը ազատել է իր ստեղծագործությունը մեր իրականության ավերիչ ազդեցություններից, իսկ մյուս կողմից նրա պոեզիան դրանով զրկվել է այն առանձնահատուկ կոլորիտից, որ այնքան հարազատ է դարձնում մեզ համար, օրինակ՝ Յոզի. Յոզիանիսյանի, Յոզի. Թումանյանի և Ավ. Իսահակյանի քնարերը»:

«Գեղարվեստ», 1917, թիվ 6, էջ 233:

1917 - Դ. Դեմիրճյանը «Նվեր «Վերնատան»» չափածո կամ արձակ խոհագրություններ է ձոնում «Վերնատան» անդամներին, նաև ինքն իրեն:*

Թումանյանին. «Երբ մանուկ էինք, սիրում էինք խաղալիք: Դարձանք պատանի, սիրեցինք մեր նմանին: Երիտասարդ էինք, սիրեցինք փառք, զործ, գիտություն: Կծերանանք, պիտի սիրենք հարգանք, դրամ, հանգիստ և մեր սերունդը: Սակայն երբ անհունի դռներին հասած՝ պիտի լսենք հավիտենության շունչը, գիտե՞ս ինչ պիտի սիրենք.

– Աղոթք...»:

*) Խմբագրությունը ծանոթագրում է. «1905-6 թվերին Յոզիաննես Թումանյանը Թիֆլիսում ապրում էր Բեյքոթյան փողոցի մի տան գավթում, զ. հարկի մի բնակարանում. այդ բնակարանի մի ապակեպատ սենյակը գրողները կոչում էին «վերնատուն»». շարունակ հավաքվում էին նրա մշտական անդամներ Դ. Աղայան, Դ. Թումանյան, Լ. Շանթ, Ն. Աղբալյան, Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան»:

«Գեղարվեստ», 1917, թիվ 6, էջ 144:

1917 - Մամուլում «Գեղարվեստի քրոնիկոնը» խորագրի տակ տպագրվում է «Էջեր հայ մտավոր կյանքի տարեգրությունից 1916 և 1917 թվականներ» անստորագիր* տեսությունը:

Սկզբում զետեղված է Թումանյանի դիմանկարը: Բանաստեղծին նվիրված հատվածում կարդում ենք.

«ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ. Եռանդուն նախագահը Հայ գրողների ընկերության, որ կազմակերպել է մի շարք գրական դասախոսություններ և ընդդիմախոսություններ: Եղավ նաև գլխավոր հիմնադիրներից մեկը Հայկազյան ընկերության. մի խոստումնաշատ ընկերություն, որը պատերազմի վրա հասնելով դեռևս չի կարողացել ցույց տալ իրան: Հովհ. Թումանյան ակտիվ մասնակցություն ցույց տվավ նաև ազգային-հասարակական գործերի, այս շրջանում չի տվել բանաստեղծական որևէ աշխատանք: Մանր գրքույկներով լույս տեսան նրա «Հայրենիքիս հետ» և «Հեքիաթների» 5 պրակ» (էջ 257):

Արմեն Տիգրանյանի մասին գրում է. «...Միշտ համեստ ու լուռ, տարիներ շարունակ գրում ու մշակում է իր «Անուշ» օպերան (Հովհ. Թումանյանի պոեմ): Փորձնական բեմադրությունները գավառական բեմերում, թեկուզ առանց օրքեստրի, թողել են բավարար տպավորություն, բայց «Անուշը» մինչև Թիֆլիսում բեմ հանելը, ինչպես հեղինակն էլ է ընդունում, դեռևս շատ և շատ աշխատանք է պահանջում» (էջ 260):

Առանձին ենթաբաժնում խոսում է նաև կովկասյան ազգային-կուլտուրական հաստատությունների մասին: Առաջին տեղում է Հայկազյան ընկերությունը՝ որպես մտավոր կյանքում նշանակալից երևույթ: Համառոտ ներկայացվում են ընկերության նպատակը, խնդիրները, հիմնադիր կազմը, որի մեջ էր նաև Թումանյանը:

Ամդրադառնալով Հայ գրողների ընկերությանը՝ հեղինակը գրում է. «Յուր եռանդուն գործունեությունը, որ ուներ այս ընկերությունը նախքան պատերազմը, այն չունեցավ պատերազմի ընթացքում և չէր կարող ունենալ արդեն: Առաջին շրջանում նույնիսկ բոլորովին լռել էր, քանի որ նրա եռանդուն նախագահը, ինչպես և վարչության անդամներից մի քանիսը զբաղված էին ազգային հասարակական գործերով զորաճակատում կամ թիկունքում: 1916-ին վերսկսվեցին ընկերության գրական երեկույթները, վերակենդանություն առավ Թիֆլիսի գրական մթնոլորտը, բայց այդ վերակենդանությունը երկար չտևեց մեր ազգային և քաղաքական կյանքի իրադարձությունների շնորհիվ:

Հ. Գ. Ընկերությունը Սայաթ-Նովայի երգարանից բացի, հրատարակեց Զ. Եսայանի և Մ. Աբեղյանի դասախոսությունները, ձեռնարկեց «Դիվան հայ գրականության» անունով մի կարևոր հրատարակության, բայց և այնպես ժամանակի հանգամանքները արգելք եղան այդ ձեռնարկության կատարմանը» (էջ 271-272):

Յեղիմակը խոսում է նաև հայ արվեստագետների միության մասին, որ, հիմնադրվելով 1915 թ. աշնանը, 1916 թ. մայիսին առաջին ընդհանուր ժողովին բազմաթիվ հանդիսականների ներկայությամբ շնորհավորական ճառեր են արտասանում Շիրվանզադեն, Յովհ. Թումանյանը, Ե. Լալայանը և ուրիշներ» (էջ 272):

*) Հավանաբար խմբագիրը Գարեգին Լևոնյանն է:

«Գեղարվեստ», 1917, թիվ 6, էջ 251-278:

Հունվարի 3, Թիֆլիս – Տպագրում է («Кавказское слово», 1918, No 1) բաց նամակ Սերգեյ Գորոդեցկուն:

Նամակի առաջին մասը մեծարանքի խոսք է՝ ուղղված ռուս ժողովրդին: Հիշում է համաշխարհային պատերազմում նրա հաղթանակները, հեղափոխությունը և նկատում. «До сего времени мы видели только его голову в лице его писателей и интеллигенции, а самый народ – туловище оставался в темноте и был нам неведом».

Ասում է, որ ռուսական հեղափոխությունը սթափեցրել է հոգնած աշխարհը. «И русский народ имеет совершить великую миссию в жизни народов».

Տարորինակ է համարում, որ այսքան բանից հետո ռուսական բանակը թողնում է պատերազմի ժամանակ իր գրաված տարածքները, Ռուսաստանն առհասարակ թողնում է Կովկասը: Բացատրություն ստանալու համար դիմում է իր մտերիմ ռուս բանաստեղծին՝ ուղղելով նրան մի քանի հարցեր. «Верить ли, что русские могут так легко оставить поля своих побед и Кавказ?»

Верить ли, что русские только по воле царей шли на Кавказ, и ныне за отсутствие этой воли, возвращаются домой?

Разве Россия представляет из себя одну лишь резиновую массу, которую растянули далеко и теперь на свободе она стягивается обратно, или же в этом историческом поступательном движении русского народа был свой внутренний смысл, обусловленный великим духом народа?

При завоевании Кавказа и вообще Ближнего Востока лучшие русские люди выражали ту мысль, что Россия призвана создать в этих странах свободную гражданскую жизнь, укрепить справедливый порядок и быть носительницей культуры и просвещения.

Как вы думаете, все это были лишь пустые фразы, и мы, верившие до сих пор, ошибались?

Россия за столетие с лишним положила миллиарды денег и миллионы жизней в бесчисленных героических войнах и создала обширнейшее государство, представляющее ныне великую российскую республику.

Как вы думаете, нет никакой связи между теми миллионнами русских людей и нынешними? И свободные русские люди наших дней, стоящие еще на исторических братских могилах, разве ныне отказываются от своего наследства, от своего положения на Востоке и от исполнения своей великой национальной миссии?

Разве развал этого нового третьего Рима не отдается с болью в сердцах его сынов и великая родина не найдет защиты в многотысячных своих полках и не создается новое мощное движение для защиты величия, свободы и чести России?».

ԵԼԺ 7, 346-348:

Հուճկարի 3 - Տափառվում է Սերգեյ Գորոդեցկու «Ангел Армени» բանաստեղծությունը՝ «Ованесу Туманяну» ընծայվածով:

Он мне явился в блеске алых роз,
Над той страной, что всех несчастней стран,
Одним крылом он осенял Масис,
Другим –седой от горьких грез Сипан.
Под ним, как тучи темен и тяжел,
Собираясь по долинам голубым,
С испепеленных, разорванных сел,
Струился молчаливый душный дым.

.....

Встань, страна! Воскресни, Аиастан!

Вот радугу я поднял над тобой!

Ты всех земных была несчастней стран,

Теперь счастливой осенись судьбой!».

«Кавказское слово», 1918, No 1.

Հուճկարի 4 - Գրում է «Ո՞նց է ժպտում իմ հոգին...» քառյակը:

ԵԼԺ 2, 25, 519:

Հուճկարի 5 - Գրում է «Իմ երգը» («Գանձեր ունեն անհո՛ւն, անժե՛ր...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 298, 638:

Հուճկարի 6 - Սկսնակ բանաստեղծ Մելինե Քոչարյանը (գաղ-

թական) Թումանյանին է ներկայացնում իր ուտանավորների տետրը:
ԳԱԹ ԹՖ, 2819 (587 լր.):

Հունվարի 10 - Տպագրվում է Սերգեյ Գորոդեցկու «Ответа Ованесу Туманяну» հոդվածը:

Բանաստեղծի «Открытое письмо Сергею Городецкому» հոդվածի պատասխանն է:

Սկզբում, անդրադառնալով Ռուսաստանի համեմատությանը հիդրայի հետ, որ իր բաց նամակում կատարել է Թումանյանը, դա բնորոշ է համարում Ռուսաստանի համար և, ընդարձակելով պատկերի սահմանները, ներկայացնում է հեղափոխությունից առաջ և հետո Ռուսաստանում ստեղծված իրավիճակը, միաժամանակ հաստատ համոզմունք է հայտնում, թե ռուսական տարերքի ընդերքում թաքնված ներուժը նոր վերածննդի կտանի Ռուսաստանը, իսկ ռուս ժողովուրդը դեռ միսիա ունի կատարելու ժողովուրդների կյանքում:

Պատասխանի երկրորդ մասը ամբողջապես վերաբերում է Ռուսաստանի կատարելիք դերին կովկասյան ժողովուրդների կյանքում:

Գրում է. «Русское дело на Кавказе переживает только кратковременный кризис.

И если нас сейчас жгут и гонят, если вместо вчерашнего подострастия мы начинаем встречать опыты пренебрежительного к нам отношения, то это только начальное недоумение, которое незамедлит рассеяться.

Кавказ не может жить без России, как и Россия без Кавказа.

Понимание этого пробивало даже толщу золотых корон прежних наших правителей. Но, понимая дело по существу, они непростительно вели себя к отношению народностям Кавказа: ценою мирного развития под русской эгидой была утрата национальной самостоятельности.

Конечно, Российская республика не повторит этих варварских ошибок. Ни в одном конгломерате народов на земле не будет такой свободы самоопределения наций, как в Российской федерации. Но тем теснее будет внутренняя спайка наций.

Немного странно, что мы, Русские, провозгласив принцип самоопределения наций, сами становимся в хвосте самоопре-

деляющихся и к самим себе этот принцип применяем позднее всех. Но это по русски. Хоть и позже других, мы все же спохватимся и тоже самоопределимся. В Закавказье следовало бы сделать это поскорее. Тогда не было бы печальных недоразумений, вроде разорения русских сел и новых русских анекдотов, какими являются русские беженцы на русской территории. Надо всетаки иметь ввиду, что очень немногие здесь понимают русскую психологию и потому легко принять наши национальные перипетии за окончательную утрату мощи. Здесь спотыкаться нам нельзя: тотчас примут за умершего. И потому русская национальная организация является сейчас делом самым первым, самым нужным.

Задачи России на Кавказе после революции не только возвысились качественно, но и увеличились количественно.

Прежде она была первой среди угнетенных, теперь она будет первой среди равных. Раньше она насильно водворяла свою казенную культуру. Теперь она, свободная к свободным, понесет кавказским народам все блага культуры, которыми мы владеем: энтузиазм своей интеллигенции, сокровища своей литературы, музыки и искусства, свои молодые технические силы, свою впервые получившую возможность свободно раскрываться культуру. И это новое русское дело уже началось: посмотрите хоть бы на медицинские учреждения общественных организаций в уездах. Они так вошли в народные массы, что их не вырвать. Так будет и со всеми другими дарами, которые молодая русская культура понесет на Кавказ.

<....> Русский народ способный на массовое озверение, так же способен и мгновенное нравственное просветление.

Нельзя указать сейчас, что будет той точкой, тем пределом, дойдя до которого, Россия откажется от зла и преобразится,- нельзя угадать, чья это будет кровь, чья жертва, чья смерть,- во что это последнее жертвоприношение. Тьме уже близко,- сомневаться не приходится. Мы у предели, мы в запяте. Россия не раз была в безднах, и всегда после этого его ждал новый подь ем.

Все жалкие слова про Россию уже сказаны: и развал, и распад, и гибель, и смерть, и колония, и Московия, но не держатся

они как-то рядом с Россией. И есть другие слова, которые незаметно, но очень крепко с ней связались: республика, федерация.

<....> Вот в какие дали, дорогой Ованес Фадеевич, пришлось мне уйти, чтоб ответить на Ваши глубокие и волнующие вопросы. Я, конечно, не исчерпал темы. Я затронул только некоторые, наиболее близкие мне стороны. А вопрос столь важен, что его необходимо осветить всесторонне. Поэтому редакция Кавк. Слово» приглашает высказаться по русскому вопросу всех, кто им взволнован и озабочен. Подумаем вместе над этим делом.

Вам же большое спасибо, дорогой друг. Подняв из житейской повседневной муты этот большой вопрос, Вы лишний раз оправдали свое призвание, о котором Вы говорите в одном из последних своих четверостиший:

«Делал я добро из зла».

«Кавказское слово», 1918, No 6:

Հոկտեմբերի 10 - Տպագրվում է հոդված «Еще о русском национальном совете» վերնագրով, Ֆ. Սիրիսյանի ստորագրությամբ:

Հոդվածը անուղղակիորեն է առնչվում Թումանյան - Գորոդեցկի երկխոսության հետ: Խոսքը նորակազմ Ռուսական ազգային խորհրդի մասին է, որի նպատակն, ըստ էության, կայսրության ծայրամասերի, մասնավորապես Անդրկովկասի ռուս ազգաբնակչության շահերի պաշտպանությունն էր՝ հեղափոխությունից հետո կայսրության ոչ ռուս ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքի համատեքստում: Այդ խորհրդի ստեղծումը տարակարծությունների և անհամգոստության տեղիք էր տվել ոչ ռուս մտավորականության շրջանում:

Հանգամանորեն ներկայացնելով խորհրդի կառարած և կատարելիք աշխատանքները՝ հոդվածագիրը եզրակացնում է. «Русские выступают последними на путь организации своего национального совета и уже это одно вместе с тем, что самая национальная организация взята в надежные руки русских, принадлежащих к интернационалистическим партиям, порука, что здесь нет воинствующего национализма, а есть только защита вполне законных национальных интересов русского населения

Закавказья и тех общегосударственных интересов, которые должны быть близки и дороги всем национальностям и Закавказья и всего государства.

Повторяем, совет необходим. Инициатива создания его – временное бюро в надежных руках и граждане Закавказья всех национальностей уже имеющих свои национальные советы, должны только приветствовать новый совет. Русское же население Закавказья должно, обязано прийти на помощь совету, чем может и как может».

«Кавказское слово», 1918, No 6.

Հունվարի 10 - Հաղորդագրություն մամուլում.

«В испол. ком. Арм. студенчества. Исполнительным комитетом армян. студенчества получена телеграмма из Сарыкамыша следующего содержания: «Доехав до Сарыкамыша и ознакомившись с положением дела мы умоляем товарищей студентов в двухдневный срок организовать отряд в 50 человека и отправить в Сарыкамыш в распоряжение Арутюна Костандяна. Организацию и отправку отряда примет на себя Москов. Арм. Комитет. Туманян, Магакян. Такого же содержания телеграмма получена от уполном. Москов. Арм., Комитета Согомояна».*

*) 50 հոգի պահանջով այսպիսի հեռագիր ստացել էր նաև Հայ գրողների ընկերությունը (տես հունվարի 21):

«Молот», ՀՀԴ օրաթերթ, Թիֆլիս, 1918, թիվ 6:

Հունվարի 13 - Իբրև արձագանք Թումանյան - Գորոդեցկի երկխոսության՝ տպագրվում է հոդված «Объединение великоросов» վերնագրով, Կ. Պ. Տումանով ստորագրությամբ:

Հոդվածի սկզբում արձանագրում է, որ հեղափոխությունից հետո Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող ժողովուրդները միավորվում են՝ ազգային ինքնորոշման իրավունք ձեռք բերելու համար: Այդ իրավունքին սպառնացող վտանգը կարող է գալ միայն ռուսների կողմից: Ուստի՝ «Отсюда ясно, что в национальном вопросе интересы русских противоположны интересам прочих живущих в России народов и что национальная борьба, если она окажется необходимою, может быть направлена преимущественно против русского народа в государстве»:

Հարց է դնում, թե կարելի է արդյոք խուսափել այդ պայքարից և պատասխանելուց առաջ օրինակներով հաստատում է, որ կյանքի ոչ մի բնագավառում հակադիր կողմերից ոչ մեկը կամավոր չի կարող հրաժարվել մյուսի նկատմամբ ունեցած իր առավելություններից: Սասնավորելով խոսքը Հայաստանում առաջացած ազգային հարցի շուրջ, շարունակում է. «Почему-же должны мы поверить искренности русских людей, которые заявляют, что хотят быть заодно со вчерашними недержавными народами? Ведь, их интересы противоположны нашим интересам, ведь, от осуществления национального самоопределения мы – выигрываем, они же – теряют, теряют свою былую гегемонию в государстве. А так как никто не враг своим эгоистическим интересам, то не вправе-ли мы видеть в объединении великороссов опасный симптом - провестник будущей национальной барьбы между великодержавным русским народом и объединенными силами недержавных народов?».

Օրինակներ բերելով նաև դասակարգային հարաբերությունների ոլորտից՝ շարունակում է. «Точно так же и мы, вполне признавая право великороссов на объединение, не можем не видеть в этом объединении опасного симптома, на который нельзя не обратить должного внимания, если мы хотим за собой завоеванное революцией право на национальное самоопределение. Отдельно русские люди могут быть прекрасными личностями, вполне идеалистически настроенными,- огромная масса русского народа может смотреть на процесс национализации в жизни окраин лишь как на потерю былого господства на этих окраинах».

Հիշեցնում է, թե ինչպիսի բացասական վերաբերմունք ունեին ռուս լավագույն հեղափոխականները կայսրության ոչ ռուս ազգաբնակչության շրջանում ազգային ինքնագիտակցության բուռն արթնացման և ինքնորոշման ձգտումների հանդեպ. «Отношение было всегда резко отрицательное, резко враждебное. Это понятно, если смотреть на русский народ с указанной выше точки зрения, если помнить, что русский народ в процессе развития самосознания в недержавных народах теряет былую свою гегемонию и инстинктивно ее защищает, оттягивая разрешение вопроса национального до более позднего времени».

Իր այս համոզմունքը չի կարող խախտել նաև «Кавказское слово»-ում Ֆ. Սիբիրսկու հոդվածը (տե՛ս հունվարի 10), քանի որ չի բացատրում «каковы конечные цели объединения у нас великороссов,- желают-ли они сохранить у нас былую гегемонию русского элемента, или же они полагают, что русские люди у нас могут выступать исключительно в качестве национального меньшенства, не могущего влиять сколько нибудь значительно на общественную жизнь на нашей окраине».

Կայսրության ծայրամասերում, մասնավորապես Կովկասում ռուսական քաղաքականության մասին ավելի անկեղծ և ուղղամիտ է համարում Ս. Գորոդեցկու բացատրությունը: Ընդարձակ քաղվածքներ է կատարում նրա պատասխանից՝ «на отчаянный вопль Ов. Туманяна по поводу отхода русских войск из пределов Турции и гибели армянских надежд на восстановление Армении (տե՛ս հունվարի 10)» և եզրակացնում, որ՝ «пока еще сильно заражены они ядом великодержавности, пока еще слишком свежо в их памяти воспоминание о недавнем господстве на всем пространстве России...».

Վերջում ընդարձակ շարադրանքով ներկայացնում է հոդվածի սկզբում իր առաջադրած հարցի պատասխանը. «Проидет время, окрепнут недержавные народы России. В процессе самоопределения некоторые этих народов добьются полного выделения из пределов России, другие получают гарантии своей политической самостоятельности и останутся в государственных границах России. В Федеративной Росси́йской республике русский народ займет сравнительно скромное место – представители этого народа перестанут носиться с идеей заниматься культуртрегерством Персии и среди народов России и займутся развитием своей собственной, пока еще примитивной культуры,- и тогда возможно будет протянуть братскую руку представителям русского народа и в их национальных объединениях видеть шаг направленный к совместному с нами достижению общих нам целей,- а не способ сохранить за собой созданную самодержавным правительством гегемонию одного великорусского народа в ущерб свободному развитию национальной культуры прочих, живущих в России, народов».

«Возрождение», 1918, No 9.

Հունվարի 16 - Իբրև արձագանք Թումանյան - Գորոդեցկի երկխոսության՝ տպագրվում է Պ. Կավկապաձեի «По поводу статьи С. Городецкого» հոդվածը:

Ալգրում հիշեցնում է Թումանյանի նամակի բովանդակությունը՝ ըստ իր ընկալման. «В своем «открытом письме» Ов. Туманян, видя, как деморализованная армия бежит с позиций, оголяя фронт и бросая на произвол судьбы завоевания трехлетних ратных трудов, спрашивал С. Городецкого: где вы русские?».

Հետո տեղեկացնում է, թե ով է Ս. Գորոդեցկին. «Это – молодой русский писатель, приехавший к нам кавказский фронт защищать отечество... в качестве земгусара или «lieutenant de soguor» и устроившийся в качестве «столичной звезды» в редакции «Кавк. Слов»... Кроме того, это – довольно известный поэт из «Лукоморья» прославившийся накануне революции стихотворением «Сретение царя», в котором нынешний республиканец и федералист, захлебываясь от «верноподанического» восторга, припадал к «священным стопам»...».

Հետագա շարադրանքում նախ զարմանք է հայտնում, թե ինչու «высокоуважаемый» Հովհ. Թումանյանը դիմել է հատկապես նրան, այնուհետև հանգամանալից բացատրություններով ցույց է տալիս, որ Գորոդեցկու պատասխանը ոչ թե վերաբերում է հայ բանաստեղծին հուզող հարցերին, այլ ըստ էության ներկայացնում է իր վեժիկոռուսական կայսերապետական հայացքները:

Մանավորապես գրում է. «Ответ С. Городецкого явился как нельзя более кстати в переживаемый нами момент, как некое «исповедание веры», как некая программа практической политики великорусских культуртрегеров на окраинах, среди «отсталых, темных и диких инородцев».

<....> С. Городецкий обещает нам нечто новое: теперь Россия «понесет кавказским народам все блага культуры, которому владеет», но вчитайтесь внимательно в статью этого «ученого кота» суворинского «Лукоморья», вдумайтесь в нее, ощутите душок, которым она вся пропитана, поскоблите автора-республиканца и вы убедитесь что имеете дело со старым нашим знакомым «опекуном» — великорусским централис-

том и империалистом, не мыслящим России без Кавказа и без гегемонии великодержавной народности на Кавказе.

Времена, конечно, уже не те, изменилось многое в общегосударственном укладе и в строе жизни и устроении недержавных народностей, теперь уже невозможно фельдвებელскими окриками управлять инородцами, теперь у нас, ведь, республика, федерация и иное прочее, тому подобное,- да, но программа великодержавной политики на окраине, но тенденция «культуртрегерства» не изменилась в своей сущности,

Мы здесь, говорит С. Городецкий. Мы, т. е. Россия. Здесь, т. е. на Кавказе.

Правда, он же признает, что Россия кентавр, который хочет превратиться в полного зверя, заменив немного человеческое, что у него было, «звериных»,- кентавр, голова которого «только ждал удобного момента, чтоб вовлечь туловище в бешеную скачку, достойную кентавра», постыдный отход армии «не есть сознательное предательство всероссийского дела,... а только темное несознательное подчинение стихийным силам, движущим сейчас всей Россией».

Но, ведь. это же не ответ поставленный Ованес Туманяном вопрос...».

Վերջում, ակնարկելով Գորոդեցկու վերապահումը, թե ինքը իր հոդվածում անդրադարձել է հարցի միայն մի քանի էական կողմերի, գրում է. «Я тоже не исчерпал темы. Я затронул только некоторые, наиболее интересные его стороны, хотя не коснулся таких, например, положений С. Городецкого, что «Кавказ не может жить без России, как и Россия без Кавказа» и Россия будет «первой среди равных».- не коснулся потому, что думаю: даже поэту, когда он берется за перо публициста, следует позаботиться о кое-какой хотя бы аргументации и не ограничиваться одними «изречениями»...».

«Республика», Тифлис, 1918, No 150.

Հունվարի 17 - Իբրև արձագանք Թումանյան - Գորոդեցկի երկխոսության՝ տպագրվում է բաց նամակ Ս. Գորոդեցկուն՝ Զ. Բաշինջադյան ստորագրությամբ:

Առիթը Թումանյանի նամակին Ս. Գորոդեցկու պատասխանն է,

որտեղ հողվածագիրը նկատում է «унреку по адресу русской армии, по поводу ее «неразмышляющего, стадного отхода» с тех границ, которых она за время настоящей войны достигла». Սա անարդարացի ու վիրավորական է համարում ռուսական բանակի համար, այն էլ նրանց կողմից, ովքեր, հողվածագրի կարծիքով, թիկունքի տաքուկ անկյուններում կեղծ հայրենասիրություն էին խաղում և գլուխ պահում: Դրանցից է համարում նաև Գորոդեցկուն՝ հարց ուղղելով նրան. «Как можете Вы, «тылавою», возмущаться тем, что не может и не хочет больше воевать русская армия, уставшая от трехлетнего непрерывного голода и холода, измученная постоянными лишениями, в то время как тыл старательно укрывался во всякого рода союзах и комитетах, как будто созданных специально для того, чтобы служить надежным убежищем для всех, охваченных своеобразной и дрящущей болезнью – «болезнью фронта». Как смеет тыл негодовать на фронт, когда этот самый тыл занимался позорной спекуляцией, наживал большие деньги, лишая фронт первой необходимости?»

Ըստ հողվածագրի՝ այդ «тыл»-ը իր «аженотруотизм»-ը շարունակում է նաև հեղափոխությունից հետո՝ հրապարակը ողողելով ամեն տեսակ գրական խմբավորումներով ու կոմիտեներով:

Եվ վերջում. «По истине можно сказать, что нет ничего бесконечнее человеческого безстыдства».

«Республика», Тифлис, 1918, No 151:

Չունվարի 18 - Իբրև արծագանք Թումանյան - Գորոդեցկի երկխոսության տպագրվում է հողված «Еще один ответ О. Ф. Туманяну» վերնագրով, Ալեքսանդր Սելիխանովիչ ստորագրությամբ:

Հողվածագիրը Թումանյանի նամակից առանձնացրել է մի հարց, թե ինչ է զգում, ինչ է մտածում ռուս մտավորականությունը «во время этого повального бегства русских войск с фронта и с Закавказья».

Ամբողջ հողվածը այս հարցի պատասխանն է. «Мы глубоко чувствуем наш позор, мы видим в этом факте то, что он есть: наше полное банкротство.

И возмездие уже постигло нас. Уже десятки русских де-

ревень разграблены, уже русским крестьянам говорят, чтобы они убегали в Россию.

Престиж России пал так низко, что над русским и Россией уже издеваются в обществе и в печати. Говорят, что это гнилая и мертвая страна, что это Бастилия, которая должна быть разрушена до основания. Видно, тяжело болен русский лев осмеливаются наносить удары столько копытом.

Наша революция проявила огромную силу разрушения. В нашем прошлом было много ужасного и позорного, и мы готовы теперь отречься от всего прошлого, даже от того хорошего, что в нем было. Разрушено прежнее государство, разрушены все прежние идеологии, разрушена армия, разрушаются все социальные связи. Мы идем к первозданному хаосу.

Но в революции мы чувствуем великую освобождающую силу. Хаос революции – это тот хаос, в которую рождаются звезды. И в этот страшный час, когда развал достиг крайних пределов, когда мы позорно сложили оружие перед лицом врага и направили его в междоусобной войне друг против друга, мы все же говорим: «да здравствует революция». Мы верим, мы знаем, что из хаоса должна родиться великая федерация, Российские Соединенные Штаты, а из ужасов междоусобной войны народятся новые отношения между народами и кланами».

Շարունակության մեջ ներկայացնում է հեղափոխությունից հետո երկրում ստեղծված սոցիալական ու քաղաքական իրավիճակը՝ կանգ առնելով հատկապես մտավորականության և ժողովրդի հարաբերությունների վրա: Հին իրավակարգի պայմաններում անանցանելի անդունդ էր գոյացել մտավորականության և ժողովրդի միջև: Հեղափոխությունը վերացրեց այդ անդունդը: Բայց նոր հասարակության կառուցման վիթխարի խնդիրների առջև հայտնված մտավորականությունը և ժողովուրդը մի պահ մոռացության են տվել ինչպես պատերազմի, այնպես էլ Ռուսաստանի ամբողջականության ու միասնության հարցերը. «Но кризис близко. Предметные уроки истории дорогой ценой уже научили нас многому. Действительность разобьет утопии, заставит вернуться к реальным задачам. Ужасы междоусобия заставят нас забыть рознь и объединиться. И тогда мы опять вернемся к решению тех задач, которые поставила перед нами история».

Վերջում դիմում է Թումանյանին. «Вы правы: не для того Россия в течении столетия затратила миллиарды рублей и полила русской кровью каждый клочок земли на Кавказе, чтобы покинуть его на произвол судьбы.

У России здесь есть своя миссия, и эту миссию она должна исполнить.

А вам, Ованес Фадеевич, низкий поклон и глубокая благодарность. В вашем письме чувствуется искренняя любовь к России и полное признание ее исторических заслуг на Кавказе. Спасибо вам и за то, что вы напомнили нам о нашем долге. Мы больше не имеем права стать в стороне, мы должны идти к народу и кричать о позоре, предательстве, о банкротстве. Хотя бы наши крики были гласом вопиющего в пустыне, хотя бы нас ждали участь тех, кто до сих пор вопиял в пустыне».

«Кавказское слово», 1918, No 13.

Հունվարի 20 - Տպագրվում է Սերգեյ Գորոդեցկու «Ржавые перья» հոդվածը:

Պատասխանում է միանգամից իր մի քանի ընդդիմախոսներին, որոնք «Известия К. К. Ц. С. П. Ц. и К. Д. и т. с. Р. и С, Д..», «Возрождение» (1918, No 9), «Республика» (1918, No 150) թերթերում՝ արծազանքել էին Թումանյանի բաց նամակի իր պատասխանին (տե՛ս հունվարի 10):

«Известия...»-ում տպագրված (1918, No 13)* «Аварическый туман» հոդվածի հեղինակի անունը չի տալիս: Հոդվածի բովանդակության վերաբերյալ ակնարկներից կարելի է ենթադրել, որ ընդդիմախոսը Գորոդեցկու պատասխանը Թումանյանին համարել է բանաստեղծական ոգևորության արտահայտություն, մինչդեռ, ըստ ընդդիմախոսի, բարձրացված ազգային-քաղաքական և դրանց հետ կապված մշակութային խնդիրները պահանջում են զգաստ ու հաշվենկատ մոտեցում: Համաձայն լինելով վերջին դիտողության հետ՝ Գորոդեցկին միաժամանակ հաստատում է բանաստեղծի կոչումն ու իրավունքը՝ հայրենիքի և ժողովրդի դժվար պահերին հանդես գալու նրանց անունից:

Այնուհետև գրում է. «Несогласие вот в чем: всякий поэт, призванный своею страной, имеет от нее определенный мандат; честно и пламенно изыскивать внутренний путь ее роста

и развития, чутко прислушиваться к пульсу ее жизни, не только механически определяя в каждый данный момент реальное соотношение сил (каковое дело всецело принадлежит партиям), но чувствуя и предугадывая неуловимые, никогда непостижимые движения ее организма. В политической жизни все проникнуто настоящим. Поэт же вносит корректив в политику, напоминая о прошлом и будущем. Поэт – хранилище и колыбель истории и народа, совершенно забываемой в злобах политического дня.

<....> И при всем моем уважении к современному строю, при всем моем бережном отношении к современному моменту, когда в хаосе создаются тончайшие соты сложнейшей, какую знает Европа, политической жизни, при всем нежелании как-нибудь помешать этой ювелирной работе, я не могу отказаться от своего, пускай мистического, пускай неподсчитанного, пускай без номера и квитанции, но тем более драгоценного для меня мандата русского поэта.

<....> Быть может, будущие поэты будут только мычать, мяукать, гогодать и завывать. Я лично думаю, при всей любви к музыкальным эффектам, отказаться от права мыслить, чувствовать и страдать по поводу жизни родины во всем ее объеме без всяких исключений. Я лично думаю, что к трезвости, ясности, расчету политиков – в общей сумме жизни – всегда будет требоваться корректив безумия «лирического тумана», как говорит мой оппонент, дерзости поэтов. Логика хрома без интуиции».

Հոդվածի վերջում անդրադառնում է Կ. Պ. Տումանովի («Возрождение», 1918, No 9), Պ. Կավկապաձեի («Республика», 1918, No 150) հոդվածներին և Զ. Բաշինջադյանի՝ իրեն ուղղած բաց նամակին: Բոլորն էլ Գորոդեցկուն մեղադրում են մեծապետականության մեջ, որովհետև, ըստ նրանց, վերջինս քարոզում և պաշտպանում է Կովկասը ռուսների կողմից մշակութային բռնազավթման ենթարկելու գաղափարը: Հոդվածի վերնագրի «Ржавые перья» արտահայտությունը վերաբերում է նրանց: Ջարմանում է, որ «provocator» «Республика»-ի էջերում նրանց կողքին հայտնվել է նաև «почтенный» Գ. Դիասամիձեի անունը: Այս ամբողջ մտայնությունը բնութագրում է որպես ասիականություն «в дурном смысле», որքան էլ իր համար քանկ է «Азия» բառը:

Առանձին պատասխանում է միայն Ջ. Բաշինջադյանի բաց մամուլին (տե՛ս հունվարի 17). «Из личных же выпадов я отвечаю только на один и только ввиду того, что он повторен в открытом письме ко мне студента Башинджагуана. И отвечаю я ему вот что: милый мальчик, вы заставили покраснеть за себя свою родину, Армению. Вы введены в заблуждение: я не герою тила. Не будучи призван, я добровольно приехал на армянский фронт, увлеченный порывом русской интеллигенции на помощь к Армении. С вашим паролем я был в тягчайшие минуты его жизни: Вашей крови детей, брошенных во время отступления, я поднимал с дороги, где уже все прошли, вот этой рукою, которою пишу вам. И в тыл, в Тифлис я попал только нынче летом по воле фронтовой демократии, как делегат съезда, а потом сотрудник его исполнительного органа. Стыд да освежить вашу душу».

*) «Известия...»-ի այդ համարը Երևանի գրապահոցներում հնարավոր չեղավ գտնել:

«Кавказское слово», 1918, No 15:

Հունվարի 20 - ՀԳԸ վարչության նախագահ Հովհ. Թումանյանի գրությունը Ալ. Պարեսնկչին.

«Бюро по установлению потерь армян от всемирной войны

20 января 1918.

No 17

Милостивый Государь

Александр Парэсньевич

Настоящим «Бюро по исследованию потерь армян от всемирной войны» сообщает, что согласно постановлению названного Бюро Вам поручает руководство военно-историческим отделом для составления очерка об участии армян во всемирной войны. При производстве Вашей работы Вы умеете руководствоваться сметой, представленной Вами и утвержденной постановлением Бюро. Согласно усмотрению трех помощников и сотрудников с вознаграждением в пределах утвержденной сметы. Сообщая Вам об этом Бюро просит незамедленно приступить к работе.

Председатель Ов. Туманян

За секретарь Саркисѳан».

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 65 ա:

Հունվարի 20 - Իբրև արձագանք Թումանյանի (տե՛ս հունվարի 3) և Ս. Գորոդեցկու (տե՛ս հունվարի 10) բաց նամակների՝ տպագրվում է հոդված՝ «Два слова к защите художника» վերնագրով, Профан ստորագրությամբ:

Առիթը Ս. Գորոդեցկու «Отвѳем Ованесу Туманяну» հոդվածի դեմ ուղղված քննադատություններն են (տե՛ս հունվարի 20): Առանց ուղղակիորեն մեղադրելու կամ արդարացնելու կողմերից որևէ մեկին՝ փորձում է պարզել տարածայնությունների պատճառը: Ըստ հոդվածագրի՝ հիմնական պատճառն այն է, որ ինչպես Թումանյանը, այնպես էլ Գորոդեցկին, չլինելով ո՛չ հրապարակախոս, ո՛չ քաղաքագետ, մուտք են գործել դժվարագույն սոցիալ-քաղաքական խնդիրների ոլորտ. «Поѳэт художник пробует заговорить языком публициста политика». Զգուշացնում է, որ Թումանյան-Գորոդեցկի երկխոսությանը պետք է մոտենալ միայն այս, իր համոզմամբ հասարակական տեսանկյունից:

Իր նպատակն է. «Защитить Городецкого-художника от недостойных посягательств на него со стороны Городецкого публициста».

Անուղղակիորեն հարցն ուղղելով Թումանյանին՝ գրում է. «Зачем свое письмо с вопросом – где мы, русские, когда уходит армия и обнажается фронт и границы, тѳени страшных возможных несчастий ложатся на родные горы Кавказа? – Почему вопрос этот поѳэт Туманян – поставил перед *поѳетом* Городецким, а не перед *политиками* врем. Русского национального совета, красного комитета партий эс- эр, эс-де, нар-соц, ка-де и т. п., красного совета раб., солд. и крест. Денут. и т. п., зачем было *художника* вводить в соблазнъ стать публицистом? Более старший – Ов. Туманян – должен был-бы удержать своего младшего друга, а не наоборот – толкать его в область чуждую ему, художнику.

Вѳедь далеко еще от нас, от России с Кавказом, то хорошее, светлое время, когда с уважением и терпимостью относиться будем мы к слову каждого гражданина, даже плохомыс-

лящего... А сами граждане будут больше размышлять, прежде чем садиться за публичное письмо.

А еще дальше от нас то время, когда вопросы этики и эстетики так взаимопереплетутся, что мы увидим принципы добра, красоты и истины воплощенными не только в искусстве, но и в политике, не только в книге или в полотне, но и в личной жизни граждан художников и политиков».

Վերջում մեջ է բերում ռուսական մի ասացվածք.

Беда, коль пироги начнет печить сапожник,

А сапоги точать – пирожник.

Եվ ավելացնում. «Это знакомое двусишнее целиком приложимо - в соответствующей редакции – также и к художнику-публицисту: выходит тоже беда...

Вот, про эту то беду надлежало бы вспомнить С. Гордецкому и Ов. Туманяну».

«Республика», 1918, No 154:

Հունվարի 21, Թիֆլիս - Պաշտոնական նամակ Հայոց ազգային խորհրդի կենտրոնական կոմիտեին.

«Ատացված է հայ գրողների ընկերության անունով գրած կոմիտեի գրությունը, որով առաջարկվում է ընկերության անդամներից 50 հոգի տրամադրել երգերում ուղարկելու (տե՛ս նաև հունվարի 10), ուր ինտելիգենտ ուժերի մեծ կարիք կա:»

Նախ, ընկերության անդամների թիվն էնքան մեծ չի էստեղ, որ կարելի լինի նրանցից 50 հոգի հանել երգերում ուղարկելու, եղածներն էլ մեծ մասամբ զբաղված են հենց նույն գործերով էս կամ էն կազմակերպության կամ հասարակության մեջ: Էս պատճառով էլ դժվար է լինում ընկերության նույնիսկ վարչական միստերը կազմել:

Երկրորդ, խնդրում են կոմիտեն հայտնի, թե ի՞նչ գործի համար են էդ մարդիկ, որ դրանով ղեկավարվենք ժողովում:

Նորերս էլ աշակերտական խումբ ուղարկվեց երգերում, իբրև թե նույն նպատակով, բայց նրանց՝ Թիֆլիս գրած նամակներից երևում է, որ մնացել են էստեղ պարապ, մեծ մասը ցրվել են, իսկ մնացած 40 հոգուց գնդապետ Թորգոմը** կազմել է «Անմահների գունդ (!)»***:

Նախագահ՝ **Հ. Թումանյան**:

*) Հայոց ազգային խորհուրդը այդ օրերին զբաղված էր երգումի պաշտպանությունը նախապատրաստելու գործերով: Նամակի ոճից երևում է, որ

Թումանյանը այնքան էլ զոհ չի եղել խորհրդի գործունեությունից:

**) Թորգոմը (Թորգոմ Թումանյան) Անդրանիկի զինակիցներից է եղել Սասունի և Բուլղարիայի ազատագրման կռիվների ժամանակ, հասել է փոխգնդապետի աստիճանի: 1918 թ. Անդրանիկը նրան նշանակել է Էրզրումի կայազորի հրամանատար:

***) Լինելով քաջ կռիվող և նվիրված հայրենասեր՝ Թորգոմը զերծ չի եղել նաև ինչ-ինչ արկածախնդրական հակումներից. մի այդպիսի ինքնագլուխ արարքի համար Անդրանիկը նրան զրկել է փոխգնդապետի աստիճանից: «Անմահների գունդը», որ հարուցել է Թումանյանի զարմանքը, հավանաբար այդ արկածախնդրության արտահայտություններից է:

ԵԼԺ 10, 283, 639:

Հունվարի 23 - Իբրև արձագանք Թումանյանի բաց նամակի՝ ուղղված Ս. Գորոդեցկուն (տե՛ս հունվարի 3), տպագրվում է «Русский вопрос» վերնագրով հոդված՝ Մ. Վեսելովզորով ստորագրությամբ:

Թումանյանի նամակում առաջադրված հարցերը հոդվածագրին, իր խոստովանությամբ, մղել են երկար ու տանջալից խորհրդողածությունների Ռուսաստանում ստեղծված իրավիճակի, ռուս ժողովրդի պատմական ճակատագրի, նրա անցյալի, ներկայի ու ապագայի մասին: Հավատում է ռուսական ոգու վերածննդին:

Անդրադառնալով Թումանյանին մտահոգող հիմնական հարցին՝ գրում է. «Ов. Туманян спрашивает в своем письме, бросают ли русские Кавказ окончательно, признает ли русский народ все свое движение на юг и восток исторической ошибкой, которую нужно исправить. Едва ли это так: еще на заре своей истории славяне стремились к Черному морю и на своих лодках возили мех, мед и воск в Византию: дальше московское царство, с неколебимым постоянством, с роковой последовательностью, стараясь найти выход из великой восточно-европейской равнины на белый свет, к морю, и в этом стремлении прорубить окно в Европу не может ограничиться Архангельском с его льдами, а идет на запад к Балтийскому морю, на восток Великому океану и на юг к Черному морю. Императорский период продолжается это движение, и не даром первому императору Петру приписывают завещание, в котором он советует своим преемникам добиваться всеми силами выхода к теплему, незамерзающему морю. Да иначе и не могло быть: без отдушины у моря русская страна должна была обнищать, задохнуться. Кавказ же со вре-

мен царя Ивана Грозного привлекал русских людей; казаки стали салиться на Терек, и еще при Грозном и в своем движении на юг, к теплomu морю, русские неизбежно должны были перейти через Кавказский хребет и продолжать свое роковое поступательное движение. Приходя в восток, русские приносили мир и новые формы жизни; самый ярый ненавистник русских не сможет опровергнуть того факта, что столетнее владычество русских на Кавказе дало мир и защиту кавказским народам от Персии и Турции, стерло границы между различными грузинскими царствами и княжествами, дало возможность грузинским землям объединиться и облегчило грузинам выработку единого национального самосознания. В армянских землях русское владычество принесло уверенность в физическом существовании, в завтрашнем дне, а это дало возможность подумать о духовной жизни, о том, что не единым хлебом жив бывает человек. Мы думаем, что это стремление к теплomu морю исторически правильно, оно неистребимо в народе, желающем дальше жить, и оно возродится, когда народная душа успокоится, осмыслит все происходящее. Такова наша вера, и мы благодарим таким нашим друзьям, как Ованес Туманян, который с болью в сердце, с тревогой за нас свои вопросы. Мы верим в наше возрождение и благодарим всем, кто помогает нам в нашем неверии».

«Кавказское слово», 1918, No 17.

Հունվարի 23, Թիֆլիս - Հայոց Ազգային խորհրդի Հատուկ կոմիտեի գրությունը Հայ գրողների ընկերության վարչությանը.

«Ի պատասխան Ձեր հունվարի 21-ի գրության (տե՛ս հունվարի 21)՝ Հատուկ կոմիտեն պարտք է համարում հայտնել Ձեզ, որ ինտելիգենտ մարդկանց կարիքը շատ է մեծ, և նրանք հարկավոր են՝

1. Գեներալ նահանգապետության համար իբրև վարչական պաշտոնյաներ,

2. իբրև էտապների կառավարիչներ,

3. իբրև պահեստներ ընդունող և կառավարողներ

4. իբրև զինվորական հաստատություններում գրասենյակային աշխատողներ և այլն:

Կարիքը այնքան մեծ է, որ վերջին հեռագիրներով հազար ինտելիգենտներ են պահանջվում:

Հատուկ Կոմիտեի նախագահ՝ (ստորագրություն)
քարտուղար Ե. Այվազյան»:
ԳԱԹ ՀԳԿԸՖ, 134:

Հունվարի 24 - Իբրև արձագանք Թումանյանի՝ Ս. Գորոդեցկուն ուղղած բաց նամակի (տե՛ս հունվարի 3)՝ տպագրվում է հոդված՝ «Россия стягивается» վերնագրով, Յու. Սենյոնով ստորագրությամբ:

Հոդվածն ունի Թումանյանի նամակից քաղված բնաբան. «Разве Россия представляет из себя одну лишь резиновую массу, которую растянули далеко, и теперь на свободе она стягивается обратно, или же в этом историческом поступательном движении русского народа был внутренний смысл, обусловленный великим духом народа».

Հիշում է, որ Թումանյանից առաջ էլ ռուսական կայսրության ընդարձակումը դեպի արևմուտք, արևելք ու հարավ համեմատել են չորս կողմ ծավալվող յուզաբժի հետ: Պատմական համառոտ ակնարկով հաստատում է, որ սահմանների այդ ընդարձակումը կենսական անհրաժեշտություն է եղել Ռուսաստանի համար: Այդ ընթացքում, կոտրելով հատկապես թուրքերի համառ դիմադրությունը, ռուսական ծավալումը դեպի հարավ ազատություն է բերել եվրոպական և ասիական շատ ժողովուրդների. «Греции, Сербии, Болгарии, Румынии, Грузии и Армении было по пути с Россией в ее государственном строительстве. И в конце этого пути лучезарной звездой для всех одинакого ярко светились свобода, независимость, национальное самоопределение. Мы все на этом пути были и остаемся союзниками – большая Россия и малые народы. В этом - наша общая миссия, если это можно назвать миссией».

Քաղվածք է բերում Թումանյանի նամակից. «Верить ли, что русские только по воле царей шли на Кавказ, и ныне за отсутствие этой воли, возвращаются домой».

Հոդվածի վերջին մասը ամբողջապես այս հարցի հանգամանակից պատասխանն է. «Русский народ, чьи настроения наиболее полно отразились в анархическом непротивленосте Льва Толстого, никогда и никого не считал своим побежденным, а себя победителем. Американец Вильсон словно подслушал русскую

душу, когда еще до нашей революции сказал, что не должно быть ни побежденных, ни победителей, т. е., что ни один из воюющих народов не должен поработить себе других.

Наши войска шли на Кавказ, как строители своего собственного государства, а не как поработители других народов. И когда это строительство вступило с революцией в новую фазу кристаллизации того, для чего, как масляное пятно, мы проникали вглубь Азии; когда наступил последний период этого строительства; когда дома происходят такие решительные события, от которого Россия или погибнет, или скрепнет на многие века, - тогда темные солдатские массы неудержимо потянулись к себе. Там нужно делать свое собственное большое дело, а на фронте, говорят они, среди серых скал и неприютной пустыни, где мы достоточно наголодались и нахолодались, братаясь с сыпным тифом, здесь теперь поработают те, кому эти скалы дороги и милы.

Они уходят, ибо, если Россия там, в глубине, погибнет, они здесь все равно ее не спасут, но сами погибнут в чужбине. Если же, наоборот, создастся новая крепкая Россия, они не могут не принять участия в этом созидании.

Сами того не понимая, но инстинктивно чувствуя, они уходят во имя того же цели, ради которой их деды, отцы и они сами шли на Кавказ ради построения своего собственного государства. Герцен говорил о казаках, об этих «славянских витязях», витязях мужиках, странствующих рыцарях черного народа, что они «имеют те неопределенные влечения, то политическое чутье, те пророческие догадки, которыми отличались норманны». И даже эти казаки, «безменная стража на крайних пределах отечества, которое они берегли», даже эти казаки потянулись к себе, ибо, спасая Россию изнутри, они спасают ее и на окраине.

Десять лет тому назад чешские демократы Клофач и Крамарж говорили в Москве, что для самоопределения Чехии и других славян достаточен самый факт существования сильной, свободной России.

Теперь Ованес Туманян констатирует, что «все народы Кавказа друг за другом приветствуют новую свободную Россию

и на своих национальных съездах выносят решения о том, что остаются в составе великой свободной российской республики».

Созидая себя, Россия подготовила почву для самоопределения Грузии и Армении.

Созидая себя, Грузия и Армения закрепляют то, для чего Россия пришла на Кавказ.

Наши пути всегда были общими и такими остаются сегодня».

«Кавказское слово», 1918, No 18.

Հունվարի 25 - Գրում է «Ի՞նչ ես թըռչում, խև-դև սի՛րտ...» քառյակը:

ԵԼԺ 2, 26:

Հունվարի 25 - Գրում է «Նա մի առյուծ, ես մի գառ...» քառյակը:

ԵԼԺ 2, 72:

Հունվարի 26 - Գրում է «Իմ սո՛ւր, արթուն ականջում...» քառյակը:

ԵԼԺ 2, 27:

Հունվարի 28 - Իբրև արձագանք Թումանյանի «Открытое письмо Сергею Городецкому» (տե՛ս հունվարի 3) և Ս. Գորոդեցկու «Ответ Ованесу Туманяну» (տե՛ս հունվարի 10) բաց նամակների՝ տպագրվում է հոդված՝ «На рубеже» վերնագրով և Нерս ստորագրությամբ:

Հիշելով, որ Վլ. Սուլովյովը դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին էր կանխատեսել Ռուսական Կայսրության՝ «երրորդ Հռոմի» կործանումը, որ գալու էր ոչ թե ներսից, այլ դրսից՝ տալիս է ռուսական հեղափոխության իր բնութագիրը: Արևմտյան և արևելյան արժեքների անհամատեղելիության հանգույցներում շփոթված ռուս մտավորականությունը վերջիվերջո փորձեց ապավինել «համընդհանուր եղբայրության» իդեալին. «...но зная, поднятое неумелыми руками,- быстро вышиблено ловким врагом. Флер, покинутый кучком мечтателей,- спал; из метели и мглы воззрелась на нас кровавая маска и вместо священного порыва остался – траги-

ческий фарс. Те, у кого были идеальные мечтания – давно поруганы и осмеяны и - - кто по тюрьмам, кто в могиле. У массы же одно-довольно того, что было при царях, а что другое неизвестно.

Монгольское в русской стихии нашло теперь свое завершение: Россия докатилась до предела, дальше которого – стена. Теперь – или погибнуть, или сделать гигантское усилие и перешагнуть через стену.

Многое говорит за второй исход. Правы те, кто поет отходную: Россия умирает. Но почему у меня – и не русского вовсе,- есть уверенность, что умирает не Россия вообще, а Россия старая, полумонгольская?»

Անուղղակիորեն անդրադառնալով այն մտայնությանը, թե Ռուսաստանը պատմական միսիա ունի կատարելու Արևելքում, անցկացնում է այն միտքը, թե քայքայված երկիրը պետք է առաջին հերթին հոգ տանի սեփական տունը կառուցելու մասին: Իսկ դրա համար Ռուսաստանին անհրաժեշտ է ապավինել եվրոպական արժեքներին. «Пробив окно в Европу, Россия и не заметила, что вызвала сквозняк, ибо с другого конца Востока пробил окно в его стене. Восток и Запад сплелись в причудливые узоры. Настойчивее, все настойчивее западный ветер волнует сонную Русь; ветер восточный делает последние мощные усилия для отвоевания своей старой добычи». Եվ եթե Ռուսաստանը այդ «сквозняк»-ից չմահանա, ավելի կկոփվի և հաղթանակած դուրս կգա փայլաբաղից:

Եվ եզրակացությունը. «Теперь русский народ - «в единственном числе». Когда русскую душу стрезвит изоляция, начнется созидательный процесс. Первейшей задачей русского народа будет строительство родного дома. Из первозданного хаоса, в которой обратилась сейчас страна, родятся побегу молодой культуры. Пусть у России «особая статья»,*,- закон необходимости писан и для нас. Вспышка монголизма есть последняя судорога. Петербургский период русской истерии кончен. «Самый умышленный из всех городов», город- призрак уже умер. На его месте родится европейская-мещанская столица, не колоритная и не фантастическая, а кристаллизовавшаяся, трезвая столица.

Иного пути нет: полувосточная держава потерпела крах; он больше существовать не может и не будет. Или конец, или единство мысли и воли в героическом порыве к преодолению Монгола и ясный путь западной культуры».

*) Չակերտավոր արտահայտությունները թումանյանի հոդվածից են:

«Кавказское слово», 1918, No. 22.

Հունվարի 29 - Գրում է «Տիկին Նիմֆա Գորոդեցկուն» («Հյուսիսի կողմից...») բանաստեղծությունը:*

*) Գրված է «Փարվանա» բալլադի ռուսերեն հրատարակության շապիկի վրա: Նվիրված է ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկու կնոջը:

ԵԼԺ 1, 299, 638:

Փետրվարի 2 - Գրում է «Լինե՛ր հեռու մի անկյուն...» քառյակը:

ԵԼԺ 2, 28:

Փետրվարի 2 - Գրում է «Մի հավք զարկի ես մի օր...» քառյակը:

ԵԼԺ 2, 28:

Փետրվարի 3 - Պ. Մոզյան ստորագրությամբ նամակ թումանյանին՝ թիֆլիսից.

«Հարգելի պ. թումանյան,

Ձեր որդեգիր երեք որբերի* մեկ-մեկ կոստում և մի-մի զույգ կոշիկ պատրաստելու համար մոտավորապես (1000) մի հազար ձեռքն է: Եթե տրամադիր լինեք սույն գումարով, կրնամ մի քանի օրից պատրաստել տալ»:

*) Խոսքը գրողների ընկերության որդեգրած երեք որբերի՝ Վաղարշակ Երիցյանի (Նորենց), Նորայր Դաբաղյանի և Միհրանի մասին է (տես 1917, հունիսի 14):

ԳԱԹ ԹՖ, 1776 (1239):

Փետրվարի 4 - Գրում է «Երկու շիրիմ իրար կից...» քառյակը:

ԵԼԺ 2, 30:

Փետրվարի 6 - Ս. Գորոդեցկու նամակ-գրությունը թումանյանին.

«Мудрецу большоу О. Т.

Когда зажгутся звездные лампы, Мой друг, в часы Рока, перед сном подумайте обо мно, вы, колы жизни яды

Горя змеется гибельным клубком...».*

*) Նամակում առկախ մտքեր են. հավանաբար բանաստեղծության նախնական գրառումներ են:

ԳԱԹ ԹՖ, 1100 (297 լր.):

Փետրվարի 7 - Տպագրվում է «Русская революция и западные демократии (отклик на письмо Ованеса Туманяна)» վերնագրով հոդված, Գ. Սորոկին ստորագրությամբ:*

Յեղիմակը պատերազմի ընթացքում և «в первые, медовые, месяцы революции» գործի բերումով եղել է Անգլիայում, Շվեդիայում, Նորվեգիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, չփվել է ռազմական ու քաղաքական գործիչների հետ, զրուցել պատերազմի և հեղափոխության մասին և շարադրում է իր տպավորությունները:

Յոդվածի առաջին մասում բացատրում է, թե ինչու ռուսական հեղափոխության պատճառներն ու իմաստը անհասկանալի են արևմուտքի դեմոկրատական գիտակցության համար: Մասնավորապես. «Как бы далеко Россия ни шагнула в своем освободительном порыве, никто на западе не думал, чтобы народы, поселяющие Россию, не понимали двоих основных, жизненных интересов, того, в чем одинаково заинтересованы все классы и слои общества – национальной, политической и экономической независимости. Никто не допускал, чтобы вожди русской революции, даже большевики, были вольны в своих действиях в такой исключительно критический момент для России.

Сознание ни англичанина, ни француза, и тем паче немца, не могло и не может помирится с мыслью сплошного разрушения, гибели того, над чем работали, трудились целые поколения, потому что все они, как политические деятели и просто граждане, не способны выделить материальный интерес из стремлений идеальных, как бы последние ни были чист и возвышенны сами по себе».

Պաշտօնը այն է, որ՝ «Там уже не понимали основных задач русской революции. И не потому, что не были знакомы с главными факторами развертывавшихся у нас событий, а именно потому, что рассматривали все перипетии русской революции

с западно-европейской, т. е. культурной, разумной точки зрения.

Все это, надо сознаться, качества, которым не обладает неорганизованный, на половину безграмотный русский народ, но, благодаря отсутствию которых, он, может быть, и смог стать на чисто революционный путь в борьбе с величайшим бедствием нашего времени – войной, и всем тем, что ее породило.

И это не парадокс и не историческое недорозумение, а факт».

Եվ եզրակացնիր։ «Россию не понимают теперь на западе, может быть, более всего оттого, что не способны сами к революции.

Всегда подлинная революция в основе своей разрушительна.

Она требует полной свободы действий, которой лишены западные народы по своему социально-политическому укладу жизни.

<....> Культура и прогресс – вот киты западной цивилизации, Эволюция, а не революция – вот ее законный образ действий.

И это опять таки не потому, что западной демократии чужда идея революции, а потому, что эта идея находится в крепких руках здравого смысла».

Հոդվածի երկրորդ, ավելի ընդարձակ մասը ընդհանուր դատողություններ են ռուսական հեղափոխության բնույթի, այդ հեղափոխությունը կատարող ժողովրդի ազգային հոգեբանության, ռուսական իրականության մեջ հեղափոխական տրամադրությունների զարգացման պատմական ընթացքի և դրանց հետ կապված այլ խնդիրների շուրջ։

Հոդվածի վերջին՝ ամփոփիչ մասը ավելի մոտ է առնչվում Թումանյանի նամակում արտահայտված մտահոգություններին. «События наших дней не дают встревоженной совести народа одуматься, заглянуть вглубь своей собственной стихии. Может быть, недалеко то время, когда русский народ осознает свои политические ошибки, увидит все истинно доброе и злое, чему учили его призванные и не призванные большие и малые вожди и

тогда большевизм в кавичках и без кавичек отпадет сам собою как ненужный хлам».

Այս գրում է, որ ռուսական հեղափոխությունը դեռևս զարգացման առաջին փուլում է: Ցանկանում է հավատալ, որ՝ «еще придут, а может уже и есть настоящие народные вожди, его подлинныя герои», որոնք կկարգավորեն բոլոր միջդասային ու միջազգային հարաբերությունները. «Судьба русской революции неразрывно связана с этой идеей высшей справедливости и только все пугающее и отталкивающее сейчас от стихийных выпадов и буевств нашего народа найдет свое должное объяснение всего происходящего. Только тогда между большевизмом и народным движением будет установлена непроходимая пропасть, явлена будет лож большевизма и правда народа.

Если же русская революция не дойдет своего логического конца, не сделает то, для чего она рождена, не выдержит, как государство, принуждена будет уступить иностранному нашествию или злейшему своему врагу – международному капиталу, то и тогда мы должны будем принять не только ее слабую сторону, но и сильную.

Полтора года тому назад великий французский мыслитель Анри Бергсон при избрании своем в члены французской академии в Париже сказал, что XX век в отличие от XIX-го века, века научных открытий и чудовищной техники, будет веком философии и религии.

И если это так, то плавным содержанием этого умонастроения, как нам кажется, сделаются главным образом судьбы русской революции, все ее порывы и чаяния, все, над чем мы теперь плачем и восторгаемся».

*) Հոդվածում, բացի վերնագրային նշումից, որևէ այլ ուղղակի հիշատակություն չկա ո՛չ Թումանյանի, ո՛չ նրա նամակի մասին: Բայց շարադրանքում ամենուրեք զգացվում է, որ հեղինակի մտորումների, դատողությունների ու դիտողությունների շարժառիթը Թումանյանի նամակում արտահայտված մտահոգություններն են: Հատկանշական է, որ հոդվածում Թումանյանի նամակի բազմաթիվ արձագանքներից ոչ մեկի մասին որևէ ակնարկ չկա:

«Кавказское слово», 1918, No 30.

Փետրվարի 20 - Ալ. Ծատուրյանի հուղարկավորության հանձնակատար Գյուտ Աղանյանի գրությունը ԶԳԿԸ վարչությանը:

Գրում է. «Վարչությանդ կարգադրությամբ հանձն առնելով հարգ. բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանի թաղման կարգադրություն անել, Թիֆլիսի հայ մամուլի և ազգային հաստատությունների կողմից ավելացված չորս ուրիշ անդամների հետ կատարեցի այդ պարտավորությունը: Մասնաժողովը ծախքերը մասնատեց մամուլի և հաստատությունների վրա, և վարչությունը որոշեց՝ ովքեր հաստատություններից չվճարեն իրանց վրա դրած մասնատրումը, նրանց փոխարեն կտա ինքը՝ վարչությունը»:

Այնուհետև թվում է այն հաստատությունները, որոնք չեն կատարել իրենց դրամական պարտավորությունները. Արիեստավորաց դպրոցը՝ 100 ռ., «Հասկերի» խմբագրությունը՝ 30 ռ., «Նվեր մանուկներին» ընկերությունը՝ 30 ռ., «Վան-Տոսպի» խմբագրությունը՝ 30 ռ., «Հայ բժիշկ» ընկերությունը՝ 75 ռ.: Դրա հետևանքով մուտքերի և ծախսերի միջև գոյացել է 251 ռ. 60 կոպ. տարբերություն պակասորդ: Այդ պակասորդը լրացրել է ինքը՝ կարգադրիչ Աղանյանը, իր անձնական գումարներից:

Ուստի. «Հայտնելով այս մասին հարգելի վարչության՝ խընդրում են, համաձայնի իր որոշման, կարգադրել վճարել ինձ հիշյալ պակասորդ 251 ռ. 60 կոպ.»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 92/02:

Փետրվար - Գրում է «Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ...» քառյակը:
ԵԼԺ 2, 31:

Փետրվար - Գրում է «Աշնան ամպին ու զամպին...» քառյակը:
ԵԼԺ 2, 32:

Մարտի 1, Թիֆլիս - Տեղի է ունենում Հայոց հայրենակցական միությունների միության (ՀՀՄՄ) նախապատրաստական նիստը:*

Մասնակցում են Ախալցխայի, Ախալքալաքի, Գանձակի, Լոռու, Հին Նախիջևանի, Ղարաբաղի և Զանգեզուրի, Ղազախ-Շամշադինի, Նուխիի, Նոր Բայազետի հայրենակցական միությունների ներկայացուցիչները:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Ար. Տեր-Գրիգորյան:

Նախագահը տեղեկացնում է. որ ժամանակի բացառիկ պայմանները Թիֆլիսում առաջ են բերել հայրենակցական միությունների, որոնց գործունեությունը առաջ է գնում միևնույն գծով և միև-

նույն սահմաններում: Սակայն նկատի ունենալով, որ ընդհանուր ուժերով և համերաշխ գործերով՝ ավելի հաջող կերպով պետք է հնարավոր լինի դրական արդյունքներ ստանալ, միտք է ծագել բոլոր հայրենակցական միությունների միություն կազմել:

Այդ ընդհանուր միության նպատակը պարզ է ինքնըստինքյան - ամեն կերպ ձգտել հաշտ ու խաղաղ ապրել մեր բոլոր հարևանների հետ և այս պատմական ծանր պահին փրկել մեր ժողովրդի կյանքը:

Ժողովը, ընդհանուր առմամբ համաձայն լինելով միությունների միություն ստեղծելու անհրաժեշտությամբ և նպատակին, վերջին հարցի (հարևանների հետ հաշտ ու խաղաղ ապրելու.- խմբ.) քննությունն ու որոշումը թողնում է հետագային:

Նախագահի առաջարկը երկար քննարկելուց հետո ընդունվում է որոշում. «Թիֆլիսի բոլոր հայրենակցական միություններից կազմել Միությունների Միություն Թիֆլիսում»:

Քննարկումից հետո նաև որոշվում է, որ յուրաքանչյուր միություն ընդհանուր միության մեջ պետք է ունենա երկու ներկայացուցիչ:

*) Այդ նոր միության ստեղծումը թունանյանի նախաձեռնությունն էր՝ կապված թուրքական բանակի նոր հարձակման հետևանքով ազգամիջյան ընդհարումների հետ: Այդ ընդհարումների հետագա սաստկացումը կանխելու նպատակով որոշվում է միավորել Թիֆլիսում գործող բոլոր հայրենակցական միությունները և ստեղծել միացյալ միություն՝ ՀՀՄՄ:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4: ԵԼԺ 10, 640:

Մարտի 2, Թիֆլիս - Տեղի է ունենում Հայրենակցական միությունների վարչությունների ներկայացուցիչներ համատեղ նիստ:

Նախագահում է թունանյանը, քարտուղար՝ Ար. Տեր-Գրիգորյան:

Մասնակցում են՝ Ազուլիսից – Ա. Զարգարյան և Տեր-Նիկողոսյան, Ախալքալաքից – Դ. Դեմիրճյան և Ա. Տեր-Գրիգորյան, Ախալցխայից – Գ. Արաբյան և Ստ. Մալխասյան, Լոռուց – Յովհ. Թունանյան, Ղազախ-Շամշադինից – Ար. Դավթյան և Տեր-Բարսեղյան, Գանձակից – Ա. Միանսարյան և Գ. Մարտիրոսյան, Հին Նախիջևանից – Յովհ. Արիստակեսյան, Նոր Բայազետից – Համբարձումյան և Ատոմյան:

1. Թունանյանը զեկուցում է, որ խորհրդի հանձնարարության համաձայն դիմում է ուղարկել Ազգային խորհրդին Շամշադինում

հավաքված հայ զինվորների խումբը Գանձակ – Շուշի անցկացնելու հարցի մասին:

2. Ապա կարդացվում է նախորդ նիստի արձանագրությունը և հաստատվում:

3. Նախագահողը ժողովի քննարկմանն է առաջարկում ՀՀՄՍ կենտրոնական խորհրդի հրահանգի նախագիծը: Որոշ փոփոխություններով ու լրացումներով նախագիծն ընդունվում է: Որոշվում է այն ներկայացնել վարչությունների ընդհանուր ժողովի քննարկմանն ու հաստատմանը:

4. Կենտրոնական խորհրդի համար նյութական միջոցներ ստեղծելու նպատակով հայրենակցական միություններից յուրաքանչյուրը խորհրդի գանձարան պիտի փոխանցի իր միջոցների 5 տոկոսը, միանվագ 200-ական ռուբլի:

5. Այնուհետև ժողովն անցնում է նախագահության ընտրությանը: Որոշվում է ընտրել մեկ նախագահ, երկու փոխնախագահ, մեկ քարտուղար և մեկ գանձապահ: Քարտուղար ընտրվելու է խորհրդի անդամներից, ամսական 600 ռուբլի աշխատավարձով:

Նախագահ է ընտրվում Հովի. Թումանյանը, փոխնախագահներ՝ Ար. Ջարգարյանը և Ստ. Մախասյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյան, գանձապահ՝ Միանսարյան:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մարտի 4 - Բարեգործական ընկերության դահլիճում տեղի է ունենում նորաստեղծ ՀՀՄՍ կենտրոնական խորհրդի առաջին նիստը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Ար. Տեր-Գրիգորյան:

Նիստում առանձին հայրենակցական միությունները ներկայացնում են՝ Լոռուց – Հովի. Թումանյան, Նոր Բայազետից – Համազասպ Համբարձումյան, Ախալքալաքից - Դերենիկ Դեմիրճյան և Արամ Տեր-Գրիգորյան, Ագուլիսից - բժ. Ար. Ջարգարյան և Հարություն Տեր-Նիկողոսյան, Ախալցխայից - Գևորգ Արաբյան և Հովի. Քյոսյան, Ղազախ-Շամշադինից - Ալեքսանդր Տեր-Բարսեղյան և Էդիպան, Գանձակից - Գրիգոր Մարտիրոսյան և Արշակ Միանսարյան, Նոր Նախիջևանից - Արտաշես Արեշյան և Միսակ Սահակյան: Բացակայում են Նուխիի և Շուշիի ներկայացուցիչները:

Ընդունվում է օրակարգ՝

ա) ՀՀՄՍ կենտրոնական խորհրդի կոմպետենցիան:

բ) Զինվորական խմբի՝ Ղարաբաղ անցկացնելու հարցը:

գ) Հարևանների հետ հաշտ ապրելու առաջարկի քննարկում:

1. Մի քանի պատգամավորներ հայտնում են, որ կենտրոնական խորհրդի կոմպետենցիայի քննարկմանը իրենք անհնար են գտնում մասնակցել, որովհետև իրենք ուղարկված են միայն այս նիստին մասնակցելու և իրենց հայրենակցական միությունների վարչությունները դեռևս կենտրոնական խորհրդի մշտական ներկայացուցիչներ չեն ընտրել: Ժողովը որոշում է՝ վերոհիշյալ հանգամանքը աչքի առաջ ունենալով՝ խորհրդի կոմպետենցիայի հարցը հետաձգել հաջորդ նիստին:

2. Շամշադինից եկած պատգամավորը հայտնում է, որ այնտեղ հավաքված են 2500-ի չափ զինված ղարաբաղցիներ և գանձակեցիներ և ուզում են անցնել Գանձակ և Ղարաբաղ, բայց տեղական մահմեդականները թույլ չեն տալիս, առաջարկում են զինաթափ լինել ու այդպես անցնել: Խումբը, որ իր կարծիքով հնարավորություն ունի ծայրահեղ դեպքում սրով անցնելու իր երկիրը, թյուրիմացություններից և միջադեպերից խուսափելու համար պատգամավորներ է ուղարկել Թիֆլիս՝ Ազգային խորհրդի և կառավարության մոտ՝ խնդրելու, որ նրանց կամ ճանապարհ տան, կամ իրավունք սրով անցնելու: Սակայն Ազգային խորհուրդն էլ, Կառավարությունն էլ, նախագահն էլ անորոշ պատասխան են տվել: Ուստի պատգամավորները խնդրում են Հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդին աջակցություն ցույց տալ իրենց և մի ելք գտնել:

Խորհուրդը որոշում է հանձնարարել Թումանյանին և Ար. Տեր-Գրիգորյանին պատգամավորների հետ միասին դիմել Ազգային խորհրդին և կառավարությանը՝ հարցին որոշ լուծում տալու:

3) Հարևանների հետ հաշտության մասին բանակցություններ վարելուն սկզբունքով համաձայն լինելով՝ ժողովը որոշում է խնդրի գործնական լուծումը հետաձգել մինչև կոնկրետ առաջարկներ լինեն:

4. Կենտրոնական խորհրդի կոմպետենցիային վերաբերող հարցը հետաձգել հաջորդ նիստին, հանձնարարել Տեր-Գրիգորյանին և Համբարձումյանին այդ ժողովին ներկայացնել կանոնների համապատասխան հրահանգ, ուր առանձին կետ լինի նաև կոմպետենցիայի մասին, և այդ հարցը ևս քննության հանձնի:*

Հետևյալ նիստը նշանակել մարտի 6-ին:**

*) ՀԱԱ-ում (Ֆ. 245, ց. 3, գործ 6) պահպանվում է մի փաստաթուղթ, որ հավանաբար պատրաստվել է այդ հանձնարարականով և կանոնադրության նախագիծ է հիշեցնում.

«1. Միությունների Միությունը կազմվում է Տփխիսում եղած բոլոր հայրենակցական միությունների ներկայացուցիչներից:

2. Միությունների Միության նպատակն է ա) ստեղծել ազգերի միջև հաշտ ու խաղաղ ապրելու պայմաններ և միջոցներ, բ) կազմակերպել հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործը, գ) կազմակերպել ժողովրդի պարենավորման գործը, դ) բացել ճանապարհները, ե) կազմակերպել բժշկա-սանիտարական գործը:

3. Միությունների Միության միջոցները:

4. Միությունների Միությունը ենթարկվում է Տփխիսի հայրենակցական միությունների ընդհանուր ժողովին:

5. Միությունների Միության կազմի մեջ մտնում են 2-3 ներկայացուցիչ յուրաքանչյուր հայրենակցական միությունից:

6. Միությունների Միության նախագահը, 2 փոխնախագահները, գանձապահը, քարտուղարը:

7. Միությունների Միության նիստերը օրինավոր են համարվում, եթե ներկա են անդամների կեսից ավելին:

8. Միությունների Միության հարցերը վճռվում են ձայների մեծամասնությամբ»:

**) Այդ նիստը տեղի է ունենում մարտի 7-ին:

ՀԱԱ, Ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մարտի 7 - Տեղի է ունենում ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Ներկա են մարտի 2-ի նիստին մասնակցած նույն անդամները: Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյան:

Նախագահողը նիստի քննարկմանն է ներկայացնում հայթուրքական հարաբերությունների, այդ հարևան ազգերի միջև հաշտության հասնելու խնդիրը՝ տեղեկացնելով, որ այդ նպատակով որոշ բանակցություններ արդեն սկսված են: Ժողովը միաձայն հաստատում է այդպիսի հաշտության, այդ ուղղությամբ սկսված բանակցությունները ամեն կերպ առաջ տանելու անհրաժեշտությունը: Որոշվում է այդ գաղափարը ժողովրդի մեջ տարածելու համար գավառներ գործուղել ձեռնհաս գործիչների, օգտագործել նաև մամուլի հնարավորությունները:

Ժողովը լսում է Ղազախ-Շամշադինի ներկայացուցչի հայտա-
րարությունը, որ այնտեղ հավաքված 2500 հայ զինվորների խումբը
հայրենիք՝ Գանձակ և Ղարաբաղ, վերադառնալու հնարավորություն
դեռ չի ստացել:

Ընդունվում է նախագահի առաջարկը՝ խորհրդի համար վար-
ձել առանձին բնակարան: Նախագահներից մեկը քարտուղարի հետ
միասին ամեն օր որոշ ժամանակ պետք է գտնվի գրասենյակում՝
խորհրդի գործերը անհապաղ առաջ տանելու նպատակով:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մարտի 9 - Տեղի է ունենում ՀՀՍՍ կենտրոնական խորհրդի
հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Հ. Համբարձում-
յան:

Նախագահողը ժողովին առաջարկում է քննարկել հայ-թուր-
քական հաշտության բանակցություններին վերաբերող սկզբունքա-
յին քայլերը՝

ա) Հաշտության գաղափարն արծարծելու համար մշակել հա-
մապատասխան կոչ և հրահանգ հաշտարար գործիչների համար:

բ) Նշանակել մրցանակներ, դրամական խրախուսիչ պարգև-
ներ այն անձանց ու խմբերին, որոնք աչքի կընկնեն հաշտության
գործընթացում և հանդես կգան մամուլում համերաշխության գաղա-
փարներով:

գ) Ամփոփապես ձեռնարկել գավառների հաշտության գործիչներ
ուղարկելու գործը:

Որոշում են՝

1. Հիմնել հաշտության ֆոնդ և այդ մասին համապատասխան
կոչ հրապարակել մամուլում:

2. Հաշտության ֆոնդի գործադրության խնդիրը առայժմ թող-
նել անորոշ:

3. Առաջիկայում գումարել խառը ժողով՝ բաղկացած թուրք
ներկայացուցիչներից և սույն խորհրդի անդամներից, որին և վստա-
հել՝ ա) հաշտության կոչի և հրահանգի մշակումը և բ) համաձայն
վերոհիշյալի՝ հաշտության ֆոնդի գործածությունը:

Քննարկելով հաշտության ֆոնդի խնդիրը՝ խորհուրդը հանձ-
նարարում է նախագահությանը մշակել համապատասխան կոչ և
հրապարակել մամուլում: Իսկ ինչ վերաբերում է խառը ժողովին,

այդ մասին բանակցությունները հանձնարարել նախագահ Թումանյանին:

ՀԱԱ, ֆ. 246, ց. 3, գործ 4:

Մարտի 11 - Տպագրում է («Респу́блика» օրաթերթ, Թիֆլիս, 1918, թիվ 194) «Что может делать Грузия?» հոդվածը:

Համառոտ ակնարկով ներկայացնում է կովկասյան ժողովուրդների անցած պատմական ճանապարհը: Թուրք-թաթարական ցեղերն ու ցեղախմբերը միջնադարյան կրոնական հոգեբանությամբ հեռու են եղել հասարակական ակտիվ կյանքից, հայերին դա թույլ չեն տվել դարեր տևած ծանրագույն ազգային խնդիրները: Միայն վրացիներն են, որ, մշտապես ապրելով իրենց հողի վրա, պատմական հանգամանքների բարենպաստ բերումով բոլոր ժամանակներում եղել են հասարակական շարժումների առաջատարը տարածաշրջանում, հատկապես ռուսական կայսրության կազմի մեջ մտնելուց հետո: Բարձր է գնահատում Վրաստանի դերը նաև ռուսական երկու հեղափոխությունների ժամանակ: Վրաստանում ապրող ժողովուրդների կյանքում կարևոր դեր է վերապահում վրաց պետականությանը հատկապես սոցիալիստական հեղափոխությունից հետո ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում. «Грузия, когда то занимавшая своими дворянством и князьями первое место среди закавказских народов перед правительством страны, теперь в дни революции, на пороге новой жизни, когда дворянство и князья более не в почете, появилась опять на первой позиции со своей сильной социал-демократической организацией и князьями нового времени, князьями революционной мысли и дела...»

Все это явно показывает, какую светлую роль суждено играть кавказской Франции – Грузии, какие светлые надежды следует возлагать на нее и какие великие обязанности лежат на ее деятелях.

И они с самопожертвованием впряглись в ярмо для несения этих тяжелых обязанностей и делают героические усилия для разрешения наших тяжелых вопросов, для спасения нашей страны от общего хаоса. И жизненные интересы всех наших народов требуют со всех сторон сердечно сблизиться и искренне спо-

собствовать спасению их общего положения и водворению мира.

Да, мир, только мир, нужен теперь всем народам. И в деле водворения в нашей стране мира, демократическая Грузия исполняет великую и светлую роль. Грузия, объединяющая кавказские народы вокруг общего дела, свободная от узко-национальных тенденций, подходящая к делу с широким государственным масштабом, горячая защитница народов, их национального самоопределения и стремящаяся к миру, ибо она сама имеет все, за исключением мира, или вернее, она все будет иметь, если будет иметь мир».

ԵԼԺ 7, 348-352:

Մարտի 11 - Տեղի է ունենում ՀՀՄՍ կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյան:

Որոշում են մարտի 15-ին գումարել հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողով:

Խորհրդի անդամներից մեկի առաջարկությամբ ժողովը համաձայնում է ընդունել հայրենակցական միությունների մարմինների միացումը:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մարտի 13 - Տեղի է ունենում ՀՀՄՍ կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյան:

Նախագահողն առաջարկում է քննարկել հայրենակցական միությունների ռազմամթերքը և առհասարակ ինտելիգենտ ուժերը գավառ ուղարկելու խնդիրը: Ժողովը նպատակահարմար է գտնում այդ հարցը քննարկել առաջիկա ընդհանուր ժողովում:

Հաստատվում է այդ ժողովի օրակարգը:

Խորհրդի զեկույցը ընդհանուր ժողովին:

Կանոնադրության քննարկում և հաստատում:

Ռազմամթերքի և ինտելիգենտ ուժերի՝ գավառ տեղափոխելու խնդիրը:

Ֆոնդի գործածության մասին (համաձայն նախկին որոշման) հայտարարությունն ի գիտություն խորհրդի:

ՀԱԱ, ֆ. 145, ց. 3, գործ 4:

Մարտի 15 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողովը:

Նախագահում է թուրքմենյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյան:

Հաստատվում է ժողովի՝ խորհրդի նախորդ նիստում (տե՛ս մարտի 13) ընդունված օրակարգը:

Օրակարգից դուրս միաձայն ընդունվում են թուրքմենյանի առաջարկությունները՝ 1) ապահովել Թիֆլիս - Բաքու և Թիֆլիս - Ջուլֆա երկաթգծերի աշխատանքը, 2) գավառ ուղարկել ժողովուրդների մեջ մշտական հաշտարար պատգամավորություններ, այն պայմանով, որ նրանք տեղերում կազմակերպեն և ստեղծեն հաշտության մշտական մարմիններ՝ բաղկացած հեղինակավոր և պատասխանատու ներկայացուցիչներից, 3) խիստ քննություն նշանակել մինչև օրս տեղի ունեցած ավերածների ու կոտորածների մասին և նրանց մասին, որոնք կարող են առաջ գալ այսուհետև, ըստ որում ամեն միջոց պիտի գործադրել, որպեսզի վերջ դրվի թալանին և խիստ պատժվի: Խիստ պատժվի նաև հանցավորը և խռովարարը:

Ընդունելով այս բանաձևը՝ ժողովը լիազորում է նախագահությանը՝ համապատասխան հանձնարարություն ներկայացնել Կովկասյան իշխանությանը՝ տպագրելով մամուլում:

Ժողովը որոշում է գումարել ընդհանուր ժողովներ պարբերաբար՝ շաբաթը մի անգամ, հինգշաբթի օրը:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

<Մարտի 16> - Պաշտոնական մամակ Անդրկովկասյան կոմիսարիատին, պատճենը՝ անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորուն:

Եղբայրասպան ընդհարումների սարսափները և չլսված արյունալի սպանողը, որպես ավերածության փոթորիկ կարող է գազանաբար պայթել խաղաղ բնակչության գլխին և իր ալիքներում մեծ թվով անմեղ զոհեր խեղդել, ազգաբնակչության բոլոր կուլտուրական օջախներին լիակատար կործանում բերել, որը երեկ դեռ պրոբլեմատիկ էր, իսկ այսօր ավելի ու ավելի ուժգնորեն է հանդես գալիս հասարակության առաջ, որպես իր շուտափույթ գալուստը ավելի

համառորեն հավաստող արյունալի ուրվական: Այդ հանգամանքը հարկադրել է Հայոց հայրենակցական միությունների՝ մարտի 15-ին կայացած ընդհանուր ժողովին բազմակողմանի քննարկման ենթարկել վրա հասնող ահավոր դեպքերի և ժողովրդական աղետի առաջն առնելու հարցը և այդ կապակցությամբ որոշում ընդունել դիմելու Անդրկովկասյան կոմիսարիատիդ՝ հետևյալ միջոցառումների առաջարկությամբ:

Թիֆլիս - Բաքու և Թիֆլիս - Ջուլֆա երկաթգծերը՝ որպես հաճախակի հարձակումների ենթարկվող ճանապարհներ, պետք է պաշտպանվեն Անդրկովկասի չորս գլխավոր ժողովուրդների ներկայացուցիչներից բաղկացած համահավաք ջոկատի կողմից՝ մոտակա ռազմական հրամանատարության կազմին ենթակա ղեկավարության ներքո:

Մինչև այժմ տեղերն ուղարկված ժամանակավոր հաշտարար պատգամավորությունների փոխարեն պետք է կազմակերպվեն և տեղերը գործուղվեն մշտական պատգամավորություններ, որոնք պետք է ուղարկվեն Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից ազգային խորհուրդների համաձայնությամբ: Այդ պատգամավորությունները պետք է օժտված լինեն լայն լիազորություններով, սրանց վրա պետք է դնել տեղերում պատասխանատու օրգանների ստեղծման պարտականությունները, դրանց տրամադրության տակ պետք է դնել ռեալ ուժեր այն հաշվով, որ դրանք՝ այդ օրգանները, աչալուրջ կերպով հսկեն կարգ ու կանոնի և խաղաղության պահպանմանը, կանխեն հարևանների խաղաղ համակեցության պայմանների խախտման բոլոր փորձերը և երկու կողմերի մեղավորներին ու հանցագործներին պատասխանատվության ենթարկեն:

Մինչև այժմ տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ կատարել խիստ հետազոտություն և քննություն, հայտնաբերված մեղավորներին պատասխանատվության ենթարկել, թալանված կողոպուտը վերադարձնել ըստ պատկանելության և բոլոր միջոցներով օժանդակել տուժածներին՝ վերականգնելու իրենց քայքայված տնտեսությունը:

Թվարկված միջոցառումների գործադրմանը ձեռնամուխ լինելու դեպքում Հայոց հայրենակցական միությունների խորհուրդը պատրաստ է իր բոլոր ուժերը դնելու Անդրկովկասյան կոմիսարիատի տրամադրության տակ:

Հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի

Նախագահ՝ *Հովհ. Թումանյան*

Քարտուղար՝ *Համ. Համբարձումյան*»:

ԵԼԺ 10, 284-285:

Մարտի 17, Թիֆլիս - Ցավակցական գրություն Մուշեղ Աղայանին.

«Մուշեղ ջան

Խորը ցավով լսեցի մամայի մահը:

Հույս ունեմ, որ դու իբրև փիլիսոփա մարդ՝ հանգիստ կընդունես էդ հարվածը:

Ես էսօր իրար ետևից մի քանի շատ կարևոր միտեր ունեմ,* առավոտը կգամ: Ներփակ ուղարկում եմ հինգ հարյուր ռուբլի:

Համբույրներով՝

քո *Հ. Թումանյան*»:

*) Խոսքը ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի, նրա տարբեր հանձնաժողովների միտերի մասին է:

ԵԼԺ 10, 285-286:

Մարտի 20, Թիֆլիս - Անդրկովկասյան կառավարության կարգադրությունը ռազմական միմիստրին.

«Խնդրում եմ Ձեզ տեղական ազգաբնակչության մեջ հաշտություն կայացնելու նպատակով կառավարության կողմից Բորչալուի և Ղազախի գավառները գործուղվող Հովհաննես Թադևոսի Թումանյանի տրամադրության տակ դնել Թիֆլիսի բաժանմունքի Հայկական վաշտից կես հարյուրյակ զինվորներ՝ մեկ սպայի հետ միասին, որի համար տալ համապատասխան վկայական:

Անդրկովկասյան կառավարության նախագահ»:

ԵԼԺ 10, 641:

Մարտի 20, Թիֆլիս - Անդրկովկասի կառավարության ռազմական միմիստրի վկայականը Թումանյանին.

«Տրվում է սույն վկայականը Հովհաննես Թադևոսի Թումանյանին առ այն, որ նրան կառավարության կողմից հանձնարարված է ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Բորչալուի և Ղազախի գավառներում ապրող ժողովուրդների միջև բարի դրացիական հարաբերություններ հաստատելու համար:

Անդրկովկասյան կառավարության նախագահ և ռազմական մինիստր՝ Ն. Լամիշվիլի»:

ԵԼԺ 10, 640-641:

Մարտի 22 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողով:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյան:

Բացելով ժողովը՝ նախագահը խոսքը տալիս է Ալլահվերդի Տեր-Սարգսյանին, որ մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ղազախի և Բորչալուի վերջին դեպքերի մասին: Այնուհետև զեկույց են լսում Գանձակի դեպքերի և ընդհանուր դրության մասին:*

Թումանյանը ժողովին տեղեկացնում է Ազգային խորհրդի՝ իրեն ուղղված հայտարարության մասին, թե որքան օրինավոր և հնարավոր է Հայրենակցական միությունների միության գոյությունը Ազգային խորհրդի հանդեպ:

Ժողովը միաձայն որոշում է, որ Միությունը, ինչպես վավերացված է նրա ծրագրում, իր գործունեությամբ ո՛չ փաստորեն, ո՛չ էլ իրավորեն չի կարող սեղմել Ազգային խորհրդի իրավասությունը և որևէ կերպ մրցակցություն առաջ բերել իր և Ազգային խորհրդի միջև: Այս որոշման դեմ արտահայտվում է Դ. Դեմիրճյանը:

Այնուհետև քննարկելով Թիֆլիսում նոր ստեղծված կուսակցության կողմնակիցներից բաղկացած (հայ-թուրքական հաշտությունն ընդունած) կազմակերպության հետ հարաբերության մեջ մտնելու խնդիրը՝ ժողովը որոշում է այդ կազմակերպության հետ մտնել հարաբերությունների և բանակցությունների մեջ, այդ հարցը քննարկելու համար ամսի 24-ին գումարել արտակարգ ընդհանուր ժողով:

*) Խոսքն այդ օրերին հաճախակի դարձած ազգամիջյան ընդհարումների մասին է:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մարտի 23 - Ստ. Մալխասյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Սիրելի բարեկամ

Խնդրեմ հայտնես -

1. Ե՞րբ ես ուղևորվելու հաշտարար միսիայով:

2. Քեզ հետ միաժամանակ գալի՞ն է և թյուրք հաշտարար Թյուրքիայից հայերի գույքը հետ ստանալու համար:

3. Կարո՞ղ են երկու հաշտարարների հետ գալ Նորավանք այն հայերը, որոնց գույքը կողոպտել են թյուրքերը և ստիպել գյուղից հեռանալ:

Խեղճերը փետրվարի 13-ից մինչև այսօր արդարություն և իրավունք են հայցում: Վարի, երկրագործական աշխատանքի ժամանակն անցնում է. թյուրքերը ցանում են մեր վարած բոստանները:

Ստ. Մալխասյան

23 մարտի, 3 ժամ»:

ԳԱԹ ԹՖ, 1631 (504 լր.):

Մարտի 23, Թիֆլիս - Պատասխանում է Ստեփան Մալխասյանի նամակին.

«Սիրելի Ստեփան,

Նոր վճռվեց: Կիրակի օրն ենք գնում*: Գնում են նահանգական կոմիսարի հետ: Ես կարծում եմ՝ տուժած հայերը կարող են և պետք է գան ու հայտնեն իրենց կորուստն ու պահանջը:

*) Խոսքը Անդրկովկասի կառավարության պաշտոնական լիազորությամբ (տե՛ս մարտի 20) Բորչալուի և Ղազախի գավառներ հաշտարար գործունեության մեկնելու մասին է:

Յ. Թումանյան»:

ԵԼԺ 10, 286:

Մարտի <24>* - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ ընդհանուր ժողովը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Յ. Համբարձումյան:

Նախագահողը քննության է դնում Թիֆլիսում կազմված սոցիալիստական բյուրոյի՝ հայ-թուրքական հաշտությանը նվիրված գործունեությունը:

Ալեքսան Տեր-Բարսեղյանը ժողովին տեղեկություններ է հաղորդում հիշյալ բյուրոյի կազմի և առաջիկա գործունեության մասին: Արտահայտվում են Արամ Տեր-Գրիգորյանը, Պողոս Աբելյանը և ուրիշներ, որոնք անհրաժեշտ են համարում մշակել գործունեության որոշ պլատֆորմ և քաղաքական խնդիրների վերաբերյալ էլ հանդես գալ միայն այդ պատրաստի պլատֆորմով: Այս մտքի, առհասարակ առանձին պլատֆորմ ունենալու դեմ արտահայտվում են միության

մի քանի անդամներ (Ալ. Սարգսյան, Դ. Դեմիրճյան և ուրիշներ)՝ ապացուցելով, որ առանց որևէ քաղաքական պլատֆորմի էլ կարելի է հանդես գալ:

Մտքերի փոխանակությունից հետո ընդունվում է բանաձև. «Գտնելով, որ Հայրենակցությունների միությունը կարող է արդյունավոր աշխատանք կատարել հաշտության խնդրում՝ գործակցելով միայն հաշտության անկեղծ կողմնակից խմբակցությունների և անդամների հետ՝ ընդհանուր ժողովը որոշում է կապ հաստատել սոցիալիստական միջազգային բլոկի հետ՝ թուրք-հայկական հաշտությունը իրագործելու համար, ուստի ներկայացուցիչների միջոցով մասնակցել հիշյալ բյուրոյի հաշտարար գործունեությանը՝ առաջարկելով նրան Միությունների միության կոմիսարիատին ներկայացրած հայտարարության կոնկրետ ծրագիրը»:

Սոցիալիստական բյուրոյի նիստին մասնակցելու համար ժողովը լիազորում է Արամ Տեր-Գրիգորյանին և Ալեքսան Տեր-Բարսեղյանին:

*) Այս նիստի արձանագրությունը թվագրված է մարտի 22: Անկասկած վրիպակ է, քանի որ մարտի 24-ի արտակարգ ժողովի մասին որոշումը կայացվել էր հենց մարտի 22-ի նիստում:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մարտի 29 - Տպագրում է («Մշակ», 1918, թիվ 66) «Հանգցրեք հրդեհը» հոդվածը.*

«Պատերազմն ինքնին մի վայրենի և բարբարոս երևույթ է: Բայց եթե դա համարենք վիճելի, սակայն մեր՝ հայերիս և թաթարներիս վերաբերմամբ կան անվիճելի ապացույցներ և՛ մեր վայրենության, և՛ մեր բարբարոսության մասին, երբ որ խաղաղ ժողովուրդները ծառանում են իրար դեմ և կողոպտում ու մորթոտում միմյանց ամենաանխնա կերպով: Դա հայ-թաթարական ընդհարումն է: Եվ այդ երևույթն ավելի սարսափելի է դառնում, երբ տեսնում ենք, թե որպիսի անտարբերությամբ է նայում այդ ամենին երկու ժողովուրդների ինտելիգենցիան, որը շատ դեպքերում ինքն է առաջ բերում ընդհարում և ինքն էլ մասնակցում նրան:

Կար ժամանակ, երբ ես կարծում էի, թե մենակ թաթարներն են ընդունակ այդպիսի գազանության: Բայց, ավա՜ղ, ժամանակներն ու անցքերը ապացուցեցին, որ մենք այդ բանում իրարից ետ չենք մնում և, բացի այդ, նույնիսկ աշխատում ենք միմյանց գերազանցել:

Եվ ահա նույնիսկ այս պահին, երբ ամեն կողմից մեր երկրի վրա են գալիս զինված ուժերը, արևելքից՝ Անգլիան, արևմուտքից՝ Գերմանիան, հյուսիսից՝ բուլղարիկները, հարավից՝ թուրքերը և նրանց առաջապահ շահսկանները, քյուրդերը, չեչենները և «ազադների ամեն տեսակ երամները», հայերը և թաթարները վեր են կացել, որպեսզի կողոպտեն և ոչնչացնեն միմյանց:

Այն ժամանակ, երբ մի կողմից մութ ուժերը տենդային եռանդով աշխատում են ավելի ու ավելի պառակտում մտցնել այդ ժողովուրդների մեջ, մյուս կողմից տեսնում ես, թե որքան քիչ են մարդիկ, որ վրդովվեին այդ հրեշային, կործանարար և խայտառակ երևույթից և պայքարեին նրա դեմ:

Մի րոպե մտածում ես, իսկ ո՞ր եմ այն անթիվ մարդիկ, որոնք դեռ երեկ խոսում էին հանուն ժողովրդի:

Ուզում ես ճշալ. ո՞ր եք դուք՝ ժողովրդի բարեկամներ, սոցիալիստներ և ոչ սոցիալիստներ ամեն տեսակի և կուսակցության, մի՞թե չեք տեսնում այս հրդեհը, որ լափում է ժողովրդին, մի՞թե չգիտեք, որ ժողովրդին ամենից առաջ պետք է իր կյանքը, չգիտե՞ք, որ նրան կրակից փրկելը առավել բարձր և ազնիվ գործ է, քան հեղափոխությունն ու հանրապետությունը:

Եկեք ուրեմն միասին հանգցնենք հետզհետե ծավալվող հրդեհը:

Հրծիզներին համարենք Կովկասի բոլոր ժողովուրդների և ամենից առաջ ազատության թշնամիներ և սերտ միաբան կռվի ելնենք նրանց դեմ:

Կատարենք մարդասիրության և ինքնապաշտպանության սրբազան գործը:

Երևակայեցեք, որ մեր մերձավորները, մեր կանայք և երեխաները վառվում են կրակի մեջ, և չդանդաղենք: Հիշենք, որ եթե չշտապենք, այն ժամանակ և՛ մեր մերձավորները, և՛ մենք կզոհվենք այդ հրեշավոր հրդեհին և այն ժամանակ կանիժենք և՛ հեղափոխությունը, և՛ ազատությունը»:

*) Ռուսերեն տարբերակը տպագրվել էր մեկ օր առաջ («Кавказское слово», 1918, թիվ 70):

ԵԼԺ 7, 352-354:

Մարտի 29 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների հերթական ընդհանուր ժողովը: Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Զ. Համբարձումյան:

ժողովում քննարկվում են մի քանի հարցեր:

Նախ ընդունվում է երկու որոշում՝

Թումանյանի առաջարկով՝ որոշվում է Միությունների միության մեջ ընդունել պարսկահայերի հայրենակցական միությունը:

Ընդունվում է Ար. Տեր-Գրիգորյանի առաջարկը՝ Միությունների միությունը, հաշտության գործում համագործակցելով սոցիալիստական բլոկի հետ, հնարավորության սահմաններում պետք է նրան օժանդակի նաև միջոցներով:

Այնուհետև քննարկվում է այն հարցը, թե առաջիկայում գործնական ինչ քայլեր պետք է ձեռնարկել հաշտության գաղափարն արծարծելու և տարածելու համար: Քննարկմանը մասնակցողները այս հարցը կապում են նաև հաշտության գործում Ազգային խորհրդի դերի հետ: Առաջարկում են դիմել Ազգային խորհրդին միջամտելու հաշտության գործընթացին՝ բարձրացնելով իր հեղինակավոր ձայնը:

Սակայն ժողովը բաց է թողնում այս խնդիրը և անցնում առաջիկայում ձեռնարկվելիք գործնական քայլերին: Անհրաժեշտ են համարվում հաշտության գաղափարի տարածումն ու ժողովրդականացումը մամուլի և հրապարակախոսական խոսքի միջոցով: Որոշվում է՝ ա) կոչ անել մամուլին՝ հաճախ արծարծելու համերաշխության խնդիրները. կոչի խմբագրումը հանձնարարվում է Դեմիրճյանին, Ղարաբեկյանին, Մ. Ավետիսյանին, բ) հանձնարարել միության անդամներին, ովքեր կարող են և հնարավորություն ունեն, հանդես գալ մամուլում հաշտության գաղափարի շուրջ հոդվածներով, հիշվում են Թումանյանի, Ար. Տեր-Գրիգորյանի, Դեմիրճյանի, Ղարաբեկյանի, Մարգարյանի անունները, գ) հաշտության կոչը գավառներում տարածելու գործը հանձնել սոցիալիստական բլոկի քննությանը և գործել նրա որոշման համաձայն:

Թումանյանը Լոռու հայրենակցական միության կողմից վճարում է սահմանված 200 ռուբլին և խնդրում մտցնել արձանագրության մեջ: Նույն վճարումը կատարում են նաև Գանձակի և Գողթնի հայրենակցական միությունները:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Ապրիլի 5 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների հերթական ընդհանուր ժողովը, որ հայտարարվում է խորհրդակցական:

Նախագահում է Ստ. Մալխասյանը:*

Շարունակում է քննարկվել հայրենակցական միությունների նպատակը՝ շեշտելով հատկապես ինքնապաշտպանության և հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը: Որոշվում է հանձնարարել կենտրոնական խորհրդին կազմել ինքնապաշտպանության և հաշտարար գործունեության որոշակի ծրագրեր և ներկայացնել ընդհանուր ժողովի քննարկմանը:

Այնուհետև կարդացվում է հայ-թուրքական սոցիալիստական բլոկի հայտարարությունը, որի համաձայն Միությունների միությանը առաջակվում է այդ բլոկում ունենալ ներկայացուցիչ, որ պետք է լինի սոցիալիստ և պատկանի սոցիալ-դեմոկրատական, սոցիալ-հեղափոխական միությանը:

Մտքերի փոխանակությունից հետո որոշվում է այդ բլոկում Միությունների միության կողմից ներկայացուցիչ ընտրել նախագահ Յովի. Թումանյանին, իսկ նրա բացակայության դեպքում՝ Ար. Տեր-Գրիգորյանին:

Ժողովում բարձրացվում է նաև Ազգային խորհրդում ներկայացուցիչ ունենալու հարցը, բայց չի քննարկվում:

*) Թումանյանն արդեն մեկնել էր Թիֆլիսից՝ Անդրկովկասյան կառավարության հանձնարարականով (տե՛ս մարտի 23) Բորչալուի և Ղազախի գավառներում հայ-թուրքական հաշտարար առաքելություն իրականացնելու համար, ուստի այս և հետագա մի քանի նիստեր ու ժողովներ տեղի են ունենում առանց նրա: Բացակայում են նաև Լոռու հայրենակցական միության ներկայացուցիչները:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Ապրիլի 12 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ ընդհանուր ժողովը:

Նախագահում է բժ. Ար. Ջարգարյանը:

Լսում են՝

1) Ընկ. Էլիբեկյանի զեկույցը Բորչալուի, մասնավորապես Բաշկիշատ, Բոլնիսի և հարևան գյուղերի հայ-թուրքական հարաբերությունների, այդ շրջանում լարված դրության մասին: Ձեկուցողը Միությունների միությանը առաջարկում է՝ ա) միջոցներ ձեռք առնել ապահովելու Բորչալուն Ախալքալաքի հետ կապող ճանապարհի անվտանգությունն ապահովելու համար, բ) հայրենակցական միություններն ապահովել ռազմամթերքով, գ) հաշտարար պատգամավոր ուղարկել այդ շրջան:

2) Ընկ. Տեր-Խաչատրյանի հայտարարությունը՝ Ղազախի գավառի Դոստուլ գյուղի վրա հարձակման մասին, և առաջարկը՝ այնտեղ ուղարկել ռազմամթերք և պատգամավոր:

3) Ընկ. Պապյանի հայտարարությունը՝ Ղազախի դրության և սար բարձրանալու* հարցի մասին:

4) Գնդապետ Յովսեփյանի հայտարարությունը՝ գավառներում ինքնապաշտպանության գործի կազմակերպման մասին:

Սրանց զուգընթաց բարձրացվում են նաև Ազգային խորհրդի գործունեությանը, այնտեղ հայրենակցական միությունների ներկայացուցչությանը, երկրային կենտրոններում ներկայացուցիչ ունենալուն, դրամական միջոցներին վերաբերող հարցեր:

Վերջին հարցին անդրադառնալիս ընկ. Աբելյանը և Նազարեթյանը առաջարկում են մշակել միության անդամներից անդամավճարների գանձման որոշակի ձև ու նորմա՝ պարտադիր բոլորի համար:

Ժողովը որոշում է՝ 1) առաջարկել հայրենակցական միություններին քննարկել սար բարձրանալու հարցը և այդ առթիվ կայացրած որոշումը ներկայացնել ընդհանուր ժողովի քննարկմանը ապրիլի 16-ին, 2) միջոցների խնդիրը թողնել արտակարգ ժողովի քննարկմանը, 3) Հայրենակցությունների միությունը Ազգային խորհրդում պետք է ունենա 3 ընտրովի ներկայացուցիչ, 4) համձնարարել Տեր-Գրիգորյանին, Ղարաբեկյանին և Էլիբեկյանին այդ ներկայացուցիչների ընտրության շուրջ երկրային կենտրոններում բանակցություններ վարել և արդյունքների մասին զեկուցել ընդհանուր ժողովին, 5) հաստատել նախորդ խորհրդակցական ժողովի որոշումները:

Ժողովն ընդունում է գնդապետ Յովսեփյանի առաջարկը՝ Միությունների միության կողմից ներկայացուցիչներ ուղարկել շրջաններ՝ իր հետ միասին ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար:

*) Խոսքը վերաբերում է ամառանոցային շրջանում հայ գյուղացիության անվտանգությանը, մասնավորապես զինված թուրքերի կողմից սպառնալիքներին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Ապրիլի առաջին կես - Անդրանիկի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ <Ալեքսանդրապոլից>.

«Սիրելի Օհանես,

Համլիկը եկավ և պատմած կլինի ամեն բան:

Թոթովենցը նորից է ըրած շատ մը խնդիրներ:*

Երեկ Ահարոնյանը** և Վահան Փափազյանը*** եկան քովս՝ հարցնելու: Լուր դրկեցի, որ ուրիշներից հարցնեն: Իմ քսան ամսվա ըսածներս սուտ էր, չի հավատացին. հիմա ի՞նչ կհարցնեք ինձ-նից:****

Վերջապես եկան, տեսան, նորից կոկորդիլոսի արցունքներ թափեցին և մեկնեցին Սարիղամիշ:

Ուրքս ցավում է, ոսկորին խրված է ըշտիկ մը, սափոքս, շորերս ծակած է, հույս ունիմ, որ քանի օրից լավանա:

Եկան քովս օրիորդները՝ Նվարդը և Անուշը:

Հեռագիրս ճշտությամբ չէիմ տպած, որսատեղի դավադիր-ներու ոհմակի մը մեջ ընկա:*****

Այսպիսի բան չէի կրնար երևակայել:

Բարևներով՝ Անդրանիկ:

Հ. Գ. Ահարոնյանը և Փափազյանը խնդրեցին, որ մնամ Ալեք-սանդրապոլ՝ մինչև իրենց վերադառնալը: Մտադիր եմ Ղարաքիլիսա գնալ»:

*) Նկատի ունի Խ. Պոյաճյանի և Վ. Թոթովենցի հարցազրույցը («Մշակ», 1918, մարտի 26):

**) Ահարոնյանն Արևելահայ ազգային խորհրդի նախագահն էր:

***) Վահան Փափազյանը (Կոմս) Արևմտահայ ազգային խորհրդի և ՀՀ պառլամենտի անդամ էր:

****) Անդրանիկը նեղացած էր Ազգային խորհրդից, քանի որ նրան թույլ չէին տվել մեկնել Երզրումի ռազմաճակատ:

*****) Խոսքը վերաբերում է Երզրումի ռազմաճակատի շուրջ տարածա-յնություններին, որոշ զինվորական գործիչների գաղտնի բանսարկություններին:

ԳԱԹ ԹՖ, 896 (507):

Ապրիլի 16 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ ընդհանուր ժողովը:

Նախագահում է Ստ. Մալխասյանցը:

Օրակարգում երեք հարց՝ սարի, Ազգային խորհրդում ներկա-յացուցչի ընտրության և միջոցների:

1) Լսում են Ար. Տեր-Գրիգորյանի հայտարարությունը սոցիա-լիստական բյուրոյի մասին և հանձնարարում նրան շարունակել մասնակցել բյուրոյի նիստերին:

2) Տեր-Խաչատրյանը հայտնում է սար բարձրանալու մասին Ղազախի հայրենակցական միության որոշումը և բացատրում, որ այն մնաց համարյա անորոշ:

3) Ընկ. Շահպարոնյանը հայտնում է սարի խնդրի մասին Գանձակի հայրենակցական միության վարչության տեսակետը, թե ներկա պայմաններում անհնար է թույլ տալ թուրք զինված ժողովրդին սար բարձրանալ և այնտեղից վտանգ ստեղծել հայ ազգաբնակչության համար: Ժողովականներից մի քանիսը, օրինակ՝ Դեմիրճյանը, հայտնում են, որ խնդիրը շատ բարդ է, և Միությունների միությունը չի կարող այն լուծել: Ժողովը քվեարկությամբ որոշում է հարցի քննարկումը շարունակել ըստ էության: Տեր-Բարսեղյանը, Աբելյանը, Տեր-Խաչատրյանը, Ստ. Մալխասյանը գտնում են, որ թուրքերի քոչին պետք չէ արգելել սար բարձրանալ: Հակառակ տեսակետը պաշտպանողներն ապացուցում են, որ քոչի ճանապարհը բացելը կնշանակի հայերի համար ստեղծել մի նոր ու խոշոր վտանգ, ուստի չպետք է թույլ տալ թուրք քոչվորներին զինված սար բարձրանալ: Այս տեսակետը պաշտպանում են Շահպարոնյանը, Սաղաթելյանը, Պետրոսյանը, Մարտիրոսյանը և ուրիշներ: Դեմիրճյանն առաջարկում է հարցը թողնել առկախ: Համբարձումյանն այն կարծիքին է, որ եղած նյութի հիման վրա անկարելի է այդ խնդիրը լուծել, ուստի առաջարկում է հետաձգել այն: Այս երկու առաջարկները քվեարկությամբ մերժվում են:

Հայրենակցական միությունների միությունը, քննարկելով հարցը, եզրակացնում է, որ հայ գյուղացիությունը չպետք է արգելք լինի իր հարևան թուրք գյուղացիության սար բարձրանալուն, վերջինս էլ չպետք է արգելքներ ստեղծի հայ գյուղացիության համար: Քվեարկությամբ ընդունվում է այս բանաձևը՝ 14 կողմ, 5 դեմ ձայների հարաբերությամբ:

Ժողովը որոշում է ստեղծել մի մասնաժողով և հանձնարարել նրան քննել հարցը և զեկուցել ընդհանուր ժողովին: Մասնաժողովի անդամներ են ընտրվում Պետրոսյանը, Թամալարյանը, Շահպարոնյանը, Տեր-Հովհաննիսյանը, Համբարձումյանը, Տեր-Բարսեղյանը, Դեմիրճյանը, Տեր-Գրիգորյանը:

Մյուս հարցերի քննարկումը թողնվում է հաջորդ նիստին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Ապրիլի 24 - Մամուլում «Գավառական կյանք» խորագրի տակ

հաղորդագրություն՝ բժ. Ա. Տեր-Յովհան. ստորագրությամբ. «Մեծ ՂԱՐԱՔԻԼԻՍԱ, 3 ապրիլի.- Երեկ Յովհաննես Թումանյանը, խոսելով հայ-թաթարական համերաշխության մասին, իր բուռն զայրույթը արտահայտեց այն խմբակների դեմ, որոնք զանազան տեղերում իրենց տմարդի և վայրագ արարքներով հայի անուն են խայտառակում և երկու հարևան ժողովրդի հարաբերությունների լարման պատճառ դառնում: Առանձին դառնությամբ և վիրավորված սրտով նա շեշտեց Վարդանու գյուղի (Մեծ Ղարաքիլիսայի մոտ) քստմնելի դեպքի մասին և հորդորեց աշխատել ամեն կերպ բավարարություն տալ անմիտ խուժանի վատշվեր վարմունքից տուժած թշվառներին: Թումանյանի բարի, անկեղծ սրտից բխած խելացի խոսքերը խոր տպավորություն թողին հասարակության վրա:

Մեծ Ղարաքիլիսան նորից կենտրոն է դառնում տաճկի յաթաղանից փախած հայության համար, ինչպես 90 տարի սրանից առաջ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, երբ Խաչատուր Աբովյանը և իր «Վերք Հայաստանի» հերոս Աղասին էլ այստեղ էին: Այստեղ են թափվում Սարիղամիշից, Կարսից, նույնիսկ Ալեքսանդրապոլից: Գալիս են և մալականները շարան-շարան՝ թողնելով իրենց ընդարձակ վարելահողերը և բարեկեցիկ կենցաղը, որ այժմ զուրկ է ապահովությունից: Նախկին այս աքսորվածները դեպի Կուբան են դիմում: Մ. Ղարաքիլիսան, սակայն, ապրուստի շատ քիչ հարմարություններ կարող է տալ և այն էլ շատ սահմանափակ թվով մարդկանց: Այստեղ է տեղափոխվել նաև Սարիղամիշի Թուրքեստանյան հմ. 391 հիվանդանոցը: 2000-ի չափ էլ հայ գաղթականություն կա այստեղ: Այսպիսի կուտակման ցավալի հետևանքներից զերծ մնալու համար անհրաժեշտ է սանիտարական մարմին»:

«Հորիզոն», 1918, թիվ 76:

Սայիսի 1 - Տեղի է ունենում ապրիլի 16-ի ընդհանուր ժողովում ընտրված «քոչային» մասնաժողովի նիստը:

Քննելով և ընդունելով ընդհանուր ժողովի սկզբունքային որոշումը՝ նիստն արձանագրում է՝

1) Քոչի և սար բարձրանալու խնդիրը Հայրենակցական միությունների միության քննարկման առարկա է դարձել այն պատճառով, որ գավառներից ստացված տեղեկությունների համաձայն՝

խնդիրն արդեն հարուցված է երկու հարևան ժողովուրդների միջև և այժմեական ու հրատապ նշանակություն ունի:

2) Միությունների միության սկզբունքային որոշումը՝ ցանկալի համարել սար բարձրանալու ճանապարհի բացումը, ուժ և նշանակություն ունի այն չափով, որչափ այն իրագործելի կլինի կյանքում: Իսկ դա կապված է մի շարք էական պայմանների հետ. այդ պայմանների բացակայության դեպքում խոսք չի կարող լինել ո՛չ թուրք քոչվորների սար բարձրանալու, ո՛չ էլ դրա անվտանգության մասին:

3) Այդ անհրաժեշտ պայմանները պետք է ապահովեն երկրային իշխանությունները՝ ա) գավառներում հաստատել օրինավոր իրավակարգ և վերջ տալ տիրող արյունահեղությանը (սահմաններում տիրող անիշխանությունը անհնարին է դարձնում դա), սար բարձրանալու ճանապարհին և առհասարակ տեղական ժողովուրդների մեջ տարածված ահաբեկչությանը, բ) քոչվորության խնդիրը կարգավորելու համար ստեղծել մի հատուկ պաշտոնական մարմին, որ ի վիճակի լինի գլուխ բերելու այդ գործը, քոչվորության կոմիսարիատի տրամադրության տակ դնել զենք և նյութական միջոցներ, գ) իշխանության միջոցներով իրականացնել սարի ճանապարհի ապահովությունը, ճանապարհին գտնվող վրանաբնակների անվտանգությունը, կառավարությունը պետք է հայտարարություն անի և այդ հայտարարությունն իրագործի, որպեսզի սար բարձրացող յուրաքանչյուր գյուղացի իրավունք ունենա օգնել մյուսներին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մայիսի 2 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների հերթական ընդհանուր ժողովը:

Նախագահում է Ստ. Մալխասյանը:

Օրակարգ՝

1) «Քոչի» մասնաժողովի զեկույցը և քննարկումը:

2) Ազգային խորհրդում ներկայացուցիչների ընտրություն:

3) Միջոցների խնդիրը:

«Քոչային» մասնաժողովի զեկույցում Հ. Համբարձումյանը ներկայացնում է քոչի անվտանգության համար մասնաժողովի նշակած միջոցառումների ծրագիրը (տե՛ս մայիսի 1): Քննարկմանը մասնակցում են Մ. Ավետիսյանը, Դ. Դեմիրճյանը, Տեր-Բարսեղյանը՝ նկատելով, որ մասնաժողովը չի կարողացել հաջողությամբ իրականացնել իր առջև դրված խնդիրները: Աբեյանն առաջարկում է

ծայն տալ Գրիգորյանին, Դանիելյանին, Տեր-Իսրայելյանին, որպեսզի նրանք՝ որպես գործին իրազեկ մարդիկ, արտահայտվեն ըստ էության և սկզբունքորեն: Այդ առաջարկին առարկում է նախագահողը՝ բացատրելով, որ խնդիրը սկզբունքորեն լուծված է և կարիք չկա նոր քննարկման: Սկսվում է վիճաբանություն: Քվեարկությամբ անցնում է նախագահողի որոշումը: Այնուհետև քվեարկության է դրվում 3 բանաձև՝ ա) շարունակել մասնաժողովի ներկայացրած զեկույցի քննարկումը, որ ստանում է 8 ձայն, բ) լսել նոր եկած ընկերների զեկույցները՝ առանց քննարկման. ստանում է 9 ձայն, գ) լսել Տեր-Ավետիքյանի, Գրիգորյանի, Տեր-Իսրայելյանի զեկույցները և կատարել մտքերի փոխանակություն. ստանում է 11 ձայն:

Նախագահողը «քոչային» մասնաժողովի զեկույցի քննարկումը հայտարարում է ընդհատված և առաջարկում լսել Տեր-Ավետիքյանին: Ապա Գրիգորյանը, Տեր-Իսրայելյանը, Դանիելյանը իրենց ելույթներում ապացուցում են, որ քոչի ճանապարհի բացումը կարող է հանգեցնել հայ բնակչության բնաջնջման: Դա կամխելու համար Միությունների միությունը պետք է զինի զավառների հայ բնակչությանը: Քոչի ճանապարհը բացելու համար պետք է պայման դնել, որ թուրքերն էլ բացեն երկաթուղին, խճուղիները: Արտահայտվողներից Դեմիրճյանը և Պետրոսյանցը ճանապարհի բացումը համարում են անկարելի: Հակառակ կարծիք են հայտնում Տեր-Ավետիքյանը, Համբարձումյանը: Դանիելյանը և Տեր-Հովհաննիսյանը կողմ են արտահայտվում ճանապարհի բացմանը: Դեմիրճյանն առաջարկում է խնդիրը թողնել առկախ և աշխատել այն լուծել մյուս ազգային հիմնարկությունների հետ միասին: Քվեարկությամբ առաջարկը չի անցնում: Նախագահն առաջարկում է քվեարկության դնել մի բանաձև, ըստ որի՝ ժողովը քոչի վերաբերյալ իր նախկին որոշումը թողնում է ուժի մեջ: Այս բանաձևը նույնպես 10 դեմով մերժվում է:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մայիսի 3 - Տեղի է ունենում ՀՀՄՄ արտակարգ ընդհանուր ժողովը:

Նախագահում է բժ. Ա. Զարգարյանը:

Կարդացվում է նախորդ ժողովի արձանագրությունը, ապա ներկա ժողովի օրակարգը՝

- ա) քոչի խնդրի քննարկման շարունակություն,
- բ) միջոցների խնդիրը,
- գ) ընտրություններ:

Քարտուղար Համբարձումյանը կարդում է նախորդ ժողովի որոշման համաձայն մշակած իր նախագիծը՝ քոչի վերաբերյալ: Արտահայտվողներից Տեր-Ավետիքյանը, Ղարաբեկյանը, Տեր-Իսրայելյանը, Պետրոսյանը և ուրիշներ ներկայացված նախագիծը համարում են «կազմված ուղիղ տեսակետի վրա» և կարծում են, որ պետք է ընդունել և քննարկումից հետո ներկայացնել կառավարությանը: Դրան հակառակ՝ Մ. Ավետիսյանը և մի քանի ուրիշներ նախագիծը համարում են անմշակ և զուրկ գործնական մշանակությունից: Այս տեսակետի դեմ հանդես է գալիս Համբարձումյանը՝ պնդելով, որ նախագծում կան քոչի խնդիրը բավարար կերպով լուծող որոշակի գործնական առաջարկներ:

Ժողովը որոշում է ընտրել 3 հոգուց բաղկացած մի մասնաժողով՝ հանձնարարելով նրան՝ ա) իրագործել ժողովում ընդունված որոշումները, այն է՝ Դեմիրճյանի և Միանսարյանի առաջարկները, բ) քննել Համբարձումյանի նախագծի կոնկրետ կետերը և հնարավորության դեպքում ներկայացնել ընդհանուր ժողովի հավանությանը, իսկ հակառակ դեպքում առանց այդ հավանության ներկայացնել կառավարությանը:

ՀԱԱ, ֆ, 245, ց.3, գործ 4:

Սայիսի 8 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների հերթական ընդհանուր ժողովը:

Օրակարգ՝

- 1) Քոչի մասնաժողովի զեկուցման և նախագծի քննարկում:
- 2) Գնդապետ Հովսեփյանի հայտարարությունը գավառներում ինքնապաշտպանության գործի կազմակերպման մասին:
- 3) Միջոցների և տուրքերի հարցը:
- 4) Ընտրություններ:

Օրակարգի վերջին երկու կետերը դարձյալ մնում են առանց քննարկման:

Քոչի մասնաժողովի անդամ Ղարաբեկյանը զեկույց է տալիս գործի մասին և կարդում քոչի վերաբերյալ նախագծի մշակված տարբերակը: Ժողովը որոշում է նախագիծը քննարկել կետ առ կետ: Քննարկումից հետո որոշվում է ընդունել նախագծի փոփոխված և

լրանշակված տարբերակը և մի առանձին գրությամբ ներկայացնել անդրկովկասյան կառավարությանը:

Նախագծի շուրջ մտքերի փոխանակությանը մասնակցում են Աբելյանը, Տեր-Բարսեղյանը, գնդապետ Յովսեփյանը, Ստ. Մալխասյանցը: Կարծում են, որ մինչև կառավարությանը ներկայացնելը նախագիծը անհրաժեշտ է քննության դնել հասարակական կազմակերպություններում, Ազգային խորհրդում, քննարկմանը պետք է մասնակցի նաև Միությունների միությունը:

Ժողովը, լսելով գնդապետ Յովսեփյանի հայտարարությունը, որոշում է դիմել բոլոր հայրենակցական միություններին և հորդորել, որ նրանցից յուրաքանչյուրը հոգ տանի իր գավառի ինքնապաշտպանության մասին:

Լսելով Տեր-Բարսեղյանի հայտարարությունը Միությունների միության նախագահ Յովհ. Թումանյանի մասին և նկատելով, որ Միությունների միությունը երկար ժամանակ է, ինչ տեղեկություն չի ստանում և չգիտի, թե ինչ վիճակի մեջ են Ղազախի, Լոռու և Փամբակի գավառները (նրանք ներկա չէին ժողովին.- խմբ.), ժողովը որոշում է հեռագրով խնդրել Յովհ. Թումանյանին ժամանակավորապես գալ Տփլիս և նշված գավառների մասին զեկուցել, իսկ եթե Թումանյանը հեռագրով կպատասխանի, որ անկարող է Տփլիս գալ, տեղեկություն բերելու նպատակով նրա մոտ ուղարկել Ալ. Տեր-Բարսեղյանին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մայիսի 11 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ ընդհանուր ժողովը:

Ներկա են Ագուլիսի, Ախալցխայի, Ախալքալաքի, Ղազախի, Նախիջևանի, Նոր Բայազետի հայրենակցական միությունների վարչությունների ներկայացուցիչները:

Նախագահում է Ար. Տեր-Գրիգորյանը:

Կարդացվում և հաստատվում է նախորդ ժողովի արձանագրությունը: Քարտուղար Համբարձումյանը հայտարարում է, որ նախորդ ժողովի որոշման համաձայն՝ հեռագիր են ուղարկել Թումանյանին և քոչի նախագիծը ներկայացրել են Անդրկովկասյան կառավարությանը:

Օրակարգի հարցերն են՝

1) 200 ռ. նպաստի վճարումների վիճակը:

2) Ազգային խորհրդում ներկայացուցիչ ունենալու խնդիրը:

3) Միջոցների և տուրքի խնդիրը:

4) Ազգային խորհրդում ներկայացուցիչների ընտրություն:

Արելյանն առաջարկում է օրակարգ մտցնել նաև քոչի նախագծի իրագործման հարցը այն նկատառումով, որ Միությունների միությունը և Ազգային խորհուրդը կառավարությունում հանդես գան համերաշխ ու միասնական օրինագծով: Առաջարկը օրակարգ չի մտնում, բայց դրա շուրջ ծավալվում են թեժ բանավեճեր: Վերջիվերջո որոշվում է փորձել կառավարությունից հետ վերցնել ներկայացված օրինագիծը: Այդ հարցով զբաղվող մասնաժողովի անդամության թեկնածու են առաջադրվում մի քանիսը: Մեծ մասը իրաժարվում է: Վերջիվերջո մնում է միայն առաջարկի հեղինակ Արելյանը:

Նախագահը հանդես է գալիս արտակարգ առաջարկով՝ ընդհանուր ժողովների վերաբերյալ մշակել «նակագ» և քննարկման դնել առաջիկա նիստերից մեկում:

Ժողովը որոշում է Ազգային խորհրդում ներկայացուցչի հարցի քննարկումը հետաձգել: Առաջարկվում է խորհրդի հետ բանակցություններ վարելու համար ընտրել պատվիրակներ: Նախագահը հիշեցնում է, որ նախորդ նիստերից մեկում այդպիսի որոշում արդեն ընդունված է՝ առանց Ազգային խորհրդի հետ բանակցելու: Քվեարկությամբ որոշվում է հարց հարուցել Ազգային խորհրդի առաջ, որ Միությունների միության ներկայացուցիչները Ազգային խորհրդի մեջ մտնեն խորհրդակցական ձայնի իրավունքով: Դարձյալ հիշեցվում է, որ նախկին որոշման համաձայն՝ Միությունների միության ներկայացուցիչները Ազգային խորհուրդ պիտի մտնեին վճռական ձայնով:

Օրակարգի մյուս հարցերի մասին ժողովը որոշում է՝

1) Հիշեցնել հայրենակցական միություններին, որ 200 ռ. միանվագ նպաստը վճարվի միայն գանձապահին:

2) Միջոցների և տուրքերի խնդրի քննարկումը հետաձգել:

3) Ազգային խորհրդի հետ գավառների ներկայացուցչության մասին բանակցություններ վարելը հանձնարարել ընդհանուր ժողովին և կենտրոնական խորհրդի նախագահին:

4) Ցանկալի համարել քոչի վերաբերյալ նախկին օրինագծի համար ընտրված պատվիրակության մասնակցությունը այդ օրինա-

գծի շուրջ Աբելյանի՝ Ազգային ժողովին անելիք առաջարկություններին:

Օրակարգից դուրս ժողովում լսվում է Դարբինյանի զեկուցումը Ձաքաթալայում պաշարված հայ ազգաբնակչության մասին: Որոշվում է դիմել Ազգային խորհրդին և խնդրել ձեռք առնել իրենից կախված բոլոր միջոցները՝ պաշարված հայ բնակչությանը բնաջնջման վտանգից փրկելու համար:

ՀԱԱ, ֆ. 245, ց.3. գործ 4:

Մայիսի 15, Ղարաքիլիսա - Հեռագիր Թիֆլիս՝ Անդրկովկասի կառավարության ներքին գործերի մինիստրին.*

«Սադախլու – Սանդար գծամասում գնացքների վրա հարձակումները դարձել են հաճախակի, որը տեղերում առաջ է բերում հուզումներ: Թախանձագին խնդրում ենք շուտափույթ միջոցների դիմել հարձակումներին և կրքերին վերջ դնելու համար: Մանավանդ որ մեր մասսաները, ինչպես տեսնում եք իմ նախորդ հեռագրից,* միանգամայն խաղաղասիրաբար են տրամադրված: Անհրաժեշտ է նման տրամադրությունները պաշտպանել և հասարակության տակաճներին թույլ չտալ գլուխ բարձրացնել:

Հովհաննես Թումանյան»:

*) Ներքին գործերի նախարարն այդ ժամանակ Ա. Չխենկելին էր:

**) Այդ հեռագիրն անհայտ է:

ԵԼԺ 10, 286, 642:

Մայիսի 16 - Գրում է «Լոռեցիներ, իմ քաջ հայրենակիցներ» դիմում-կոչը.*

«Փոքրաթիվ թշնամին մեր սարերին է հասել: Նա համարձակվում է մտնել Փամբակի ձորը, Մայմեխի ու Դվալի արանքը կամ գուցե մտածում է անցնել Գյուլլաղազանա կիրճից ներս դեպի Լոռու սրբազան ձորերը:

Լոռեցիներ, այժմ մեզ է ապավինել հայ փախստական ժողովուրդը և ամեն տեղից մեզ է նայում հայ ազգի աչքը: Հասել է էն օրը, երբ պետք է ցույց տանք, որ զուր չի Լոռու անունը Դադստան հասել, և ամեն միմդ անուն պիտի թողնեք աշխարհում:

Հավաքվեցեք մեր մութ անտառների նման, կրակ թափեցեք և զարկեցեք մեր սարերի կայծակների նման: Թող թշնամին էլ տեսնի, աշխարհքն էլ, որ կարելի է էրզրումի վրից էլ անցնել, Դարսի վրից էլ, բայց Լոռու սարերից անցնել չի կարելի:

Սպասում են ձեզ:

Հովհ. Թումանյան»:

*) Թումանյանն այդ օրերին, որպես ՀՀՍՄ կենտրոնական խորհրդի նախագահ, ղեկավարում էր Լոռու-Փամբակի ինքնապաշտպանության գործը՝ կանխելու համար թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի այդ շրջանը:

ԵԼԺ 7, 354, 648:

Մայիսի 16 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողովը:

Նախագահում է Ար.Տեր-Գրիգորյանը:

Ժողովը, իրենց դիմումի համաձայն, Միությունների միություն է ընդունում Շամախի-Գյոլջայի և Դարսի հայրենակցական միությունները:

Օրակարգի հարցերն են՝

- 1) Ընթացիկ պահը:
- 2) Արձանագրություն կազմելու ձևը:
- 3) Տուրքի և միջոցների խնդիրը:
- 4) Ընտրություններ:

Նախագահի առաջարկով Ջաքաթալա գործուղված Դարբինյանը հանգամանորեն զեկույց է տալիս իր և Սեյմի կողմից նույնպես Ջաքաթալա ուղարկված պատգամավոր Ասլանբեկովի հարաբերությունների, Ջաքաթալայում և Բիլական գյուղում տեղի ունեցած միտինգների, տեղի թուրք ազգաբնակչության մեջ նկատվող բաժանումների, պառակտումների և թայֆայականության մասին, և այն մասին, որ տեղի մուսուլմանները բացասական վերաբերմունք ունեն դեպի Կովկասյան իշխանությունները, սպասում են տաճիկների գալուն: Տեղի հայերը ապրում են սարսափելի օրեր, գտնվում են անելանելի դրության մեջ. զրկված պաշարից և օգնությունից, կտրված արտաքին աշխարհից՝ թուրքերի կողմից ենթարկվում են թալանի, բռնությունների, ապօրինությունների, ցանկանում են մի կերպ դուրս գալ այդ միջավայրից, բայց ճանապարհները փակ են: Դեպքերը ցույց են տալիս, որ տեղի մուսուլմանները մտադիր են աստիճանաբար կոտորել ու դուրս մղել հայերին իրենց բնակավայրերից: Դարբինյանն առաջարկում է դիմել Անդրկովկասյան կառավարությանը և Ազգային խորհրդին հանդես գալ մամուլում և պահանջել, որ հնարավորություն ստեղծվի հայ ազգաբնակչության համար՝ անվտանգ դուրս գալու վտանգավոր օղակից:

Դարբինյանի առաջարկի շուրջ մտքերի փոխանակությունից հետո ժողովն ընտրում է մի հանձնաժողով՝ հանձնարարելով նրան մշակել միջոցների նախագիծ՝ Ջաքաթալայի հայությանը օգնելու համար: Որոշում են՝ ա) դիմել հայոց Ազգային խորհրդին, բ) Ազգային խորհրդի միջոցով դիմել Անդրկովկասյան կառավարությանը, գ) խնդիրը արժարժել մամուլում:

Ընտրված հանձնաժողովին հանձնարարվում է նաև մշակել ընդհանուր ժողովների անցկացման «նակագ» և քննարկման ներկայացնել առաջիկա նիստին:

Ընթացիկ պահի մասին լսում են Ղարաբեկյանի զեկույցը և որոշում դրա շուրջ մտքերի փոխանակությունը թողնել հաջորդ նիստին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3. գործ 4:

Սայիսի 18 - Տեղի է ունենում հայ հայրենակցական միությունների վարչությունների հերթական ընդհանուր ժողովը:

Նախագահում է Ար. Տեր-Գրիգորյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյան:

Կարդացվում է նախորդ ժողովի արձանագրությունը: Նախագահը ուշադրություն է հրավիրում հատկապես Ջաքաթալայի հայ ազգաբնակչության վիճակին վերաբերող հարցի վրա: Այդ մասին լրացուցիչ զեկույց են տալիս Աբելյանը և Ղարաբեկյանը: Այս անցմուն են բուն օրակարգի հարցերին՝ 1) ժողովների անցկացման «նակագը», 2) ընթացիկ հարցեր, 3) գաղթականության հարցը, 4) միջոցների և տուրքերի հարցը, 5) ընտրություններ:

Ղարաբեկյանը մանրամասն զեկույց է տալիս ստեղծված դժվարին կացության, այդ կացությունն առաջ բերած պատճառների, Թուրքիայի, Գերմանիայի և մյուս հարևանների բռնած դիրքի մասին: Խոսում է նաև հայերի ազգային քաղաքականության, հարևանների հետ հարմարվելու և հաշտ ապրելու անհրաժեշտության մասին: Աշխատում է ապացուցել, որ Թուրքիան հավանորեն կթողնի հայերին բնաջնջելու քաղաքականությունը, կաշխատի տիրապետել Կովկասին և օգտագործել այնտեղ բնակվող բոլոր ժողովուրդներին, Կովկասը նվաճելու է ձգտում նաև Գերմանիան և դժվար թե կարողանա հաշտվել այնտեղ բնակվող ժողովուրդների բնաջնջման քաղաքականության հետ: Ջեկուցողի կարծիքով՝ հայ ժողովուրդը պետք է

համակերպվի այս կացության հետ և աշխատի պահել իր ֆիզիկական գոյությունը:

Ընթացիկ պահի շուրջ արտահայտվում են Համբարձումյանը, Խաչատրյանը, Աբելյանը, Ավետիսյանը, Դավթյանը և Լեոն:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Սայիսի 19 - Տեղի է ունենում հայ հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ ընդհանուր ժողովը:

Շարունակվում է նախորդ ժողովի հիմնական հարցի՝ կովկասահայության արդի կացության քննարկումը:

Արտահայտվողներից Ար. Տեր-Գրիգորյանը խոսում է համաշխարհային պատերազմի էության, պատերազմող կողմերի խնդիրների, պատերազմի հնարավոր ավարտի, ռուսական մեծ հեղափոխության, այդ իրադարձությունների հետևանքով հայ ժողովրդի ներկա կացության մասին: Դառնալով գործնական խնդիրներին՝ Տեր-Գրիգորյանն ասում է, որ հայ ժողովուրդը չպետք է վիատվի և դիմի կործանարար գաղթի, այլ մնալով իր բնակության վայրերում՝ պիտի աշխատի ամեն կերպ շարունակել իր գոյությունը: Իսկ եթե գաղթն սկսված է և անխուսափելի, պետք է արտագաղթել որոշակի ծրագրով՝ ո՞ւր գաղթել: Անհրաժեշտ է մթերաշատ գավառներից մթերքը տեղափոխել անվտանգ տեղեր, այդ գործի կազմակերպման համար Միությունների միությունը պատրաստ է և կարող է նշանակալից դեր կատարել:

Ղարաբեկյանն այն կարծիքին է, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել ժողովրդի մեջ տիրող խուճապի դեմ, կանգնեցնել գաղթը, մարդկանց վերադարձնել իրենց բնակավայրերը: Լեոյի կարծիքով այդ ամենը պետք է իրականացնի Ազգային խորհուրդը: Ղարաբեկյանն առաջարկում է այդ մասին բանաձև մշակել և ուղարկել Ազգային խորհուրդ: Աբելյանն առաջարկում է քննարկել միջոցների հարցը և հանգել որոշակի եզրակացության: Տեր-Բարսեղյանը կարծում է, որ հարցը պետք է դնել Ազգային խորհրդի առաջ և պահանջել հստակ պատասխան:

Ժողովը որոշում է ընտրել մի մասնաժողով՝ 7 հոգուց կազմված, նրան հանձնարարել միջոցների քննարկումն ու համակարգումը: Մասնաժողովի անդամներ են ընտրվում՝ Արամ Տեր-Գրիգորյան, Մարգար Ավետիսյան, Պողոս Աբելյան, Ալեքսան Տեր-Բարսեղյան, Լեո, Միքայել Ղարաբեկյան, Համազասպ Համբարձումյան:

Լսում են Ալեքսանդրապոլից վերադարձած հայ սպա Լևոն Խոջայանին, որ պատմում է թուրքերի հարձակման, խուճապի ու գաղթի մասին:

Որոշվում է հաջորդ արտակարգ ժողովը գումարել մայիսի 21-ին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մայիսի 20 - Տեղի է ունենում մայիսի 19-ի ընդհանուր ժողովում ընտրված մասնաժողովի նիստը:

Ներկա են բոլոր անդամները:

Քննելով գաղթի, ժողովրդի մեջ նկատվող խուճապի, գավառները ինտելիգենտ ուժեր ուղարկելու և ինքնապաշտպանության խնդիրները մասնաժողովը որոշում է՝

Գաղթի մասին հրապարակել մի կոչ՝ հորդորելով գաղթող ժողովրդին վերադառնալ իր բնակության վայրերը և շարունակել սովորական աշխատանքները: Կոչի խմբագրումը հանձնարարել Ար. Տեր-Գրիգորյանին:

Գաղթականներից նրանք, ովքեր չեն ցանկանում վերադառնալ, տեղավորել Լոռու, Նոր Բայազետի, Ղազախի, Շամշադինի և այլ հարմար գավառների գյուղերում:

Արագացնել հասարակական աշխատանքների կազմակերպումը կառավարության միջոցներով:

Ախալքալաքից և այլ մթերաշատ գավառներից մթերքը տեղափոխել թշնամուց անվտանգ և կարիքավոր գավառները:

Գավառներ ուղարկել ինտելիգենտ ուժեր և բժշկական կազմ:

Կազմակերպել գավառների, մասնավորապես ճանապարհների անվտանգության գործը:

Միությունների միության ներկայացուցիչներ ունենալ թե՛ կենտրոնական և թե՛ տեղերի գաղթականական մարմիններում:

Գաղթականներին, ըստ հնարավորության, տեղավորել իրենց բնակավայրերին մոտ տեղերում:

Առաջարկել Երևանի, Ղամարլուի և Ալեքսանդրապոլի հայրենակիցներին կազմակերպել հայրենակցական միություններ:

Եթե գաղթի առաջն առնելն անհնարին լինի, կազմակերպել այն՝ կանոնավորելով տրանսպորտը, գույքի, կանանց, երեխաների տեղափոխությունը՝ ապահովելով ավագակային հարձակումներից:

Պաշտոնյաների, հոգևորականների և այլ ազդեցիկ անձանց միջոցով ազդել ժողովրդի հոգեբանության վրա և խուճապի առաջն առնելու համար գործադրել բոլոր իրական միջոցները:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մայիսի 21 - Տեղի է ունենում հայ հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողովը:

Մասնակցում են Ագուլիսի, Ախալքալաքի, Ախալցխայի, Գանձակի, Ղազախ-Շամշադինի, Ղարաբաղի, Լոռու, Փամբակի, Նոր Բայազետի, Նախիջևանի, Շամախի-Գյոլչայի հայրենակցական միությունների վարչությունների ներկայացուցիչները՝ թվով 26 հոգի:

Նախագահում է Ար. Տեր-Գրիգորյանը:

Օրակարգ՝

- 1) Ժողովների նախագահության ընտրություններ:
- 2) Մասնաժողովի ղեկուցումը գաղթականության մասին:
- 3) Զեկուցում միջոցների և տուրքերի մասին:
- 4) Միության վերաբերմունքը դեպի Ազգային խորհուրդը:

Ժողովները նախագահելու համար առաջադրված 7 թեկնածուներից քվեարկությամբ ընտրվում են երեքը՝ Արամ Տեր-Գրիգորյանը, Լեոն, Միքայել Ղարաբեկյանը:

Հ. Համբարձումյանը կարդում է մասնաժողովի նիստի արձանագրությունը՝ կարևորելով հատկապես գաղթը կանխելու համար ժողովրդին ուղղվելիք կոչը: Ժողովը որոշում է դիմել հայրենակցական միությունների վարչություններին, այդ նպատակով գավառներ ուղարկել ներկայացուցիչներ:

Առաջարկ է լինում կոչով դիմել Թիֆլիսում բնակվող գավառացիներին վերադառնալ հայրենիք: Ժողովն ընդունում է առաջարկը:

Լսելով Աբելյանի առաջարկը զինակոչի մասին՝ ժողովը որոշում է հարցը մտցնել առաջիկա նիստի օրակարգ:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մայիսի 28 - Տեղի է ունենում հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նիստ:

Մասնակցում են Ղարաբաղի, Ղազախի, Լոռու, Ախալքալաքի, Ախալցխայի, Նոր Բայազետի, Շամախու հայրենակցական միությունների ներկայացուցիչները:

Նախագահում է Ստ. Մալխասյանը:

Լսում են՝

1) Բալաբեգյանի մանրամասն զեկույցը Ղազախի, Փամբակի, Լոռու և Ղարաքիլիսայի վերջին դեպքերի (տե՛ս ապրիլի 24) և հայթուրթական հարաբերությունների մասին:

2) Փախստականների կենտրոնական խորհրդին և քաղաքային ինքնավարությանը կից գաղթականական բաժնին ներկայացուցիչներ ուղարկելու հարցը:

3) Միջոցների խնդիրը:

Որոշում են՝ ա) փախստականների կենտրոնական խորհրդի համար Միության կողմից ներկայացուցիչ ընտրել Մարգար Ավետիսյանին, բ) քաղաքային ինքնավարությանը կից գաղթականական բաժնում ներկայացուցիչ ընտրել Համազասպ Համբարձումյանին, գ) հանձնարարել խորհրդի նախագահ Ստ. Մալխասյանցին միջոցների մասին բանակցել վաճառականական բանկի տնօրեն Բերբերյանի հետ:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մայիսի 30 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների հերթական ընդհանուր ժողովը:

Նախագահում է Մ. Ղարաբեկյանը:

Օրակարգում՝ ա) միջոցների խնդիրը, բ) Միության վերաբերմունքը դեպի Ազգային խորհուրդը:

Նախքան օրակարգի հարցերին անցնելը Լեոն հայտարարություն է անում մայիսի 26-ի խորհրդակցության ժամանակ ընտրված մասնաժողովի, վերջինիս ձեռնարկած քայլերի մասին: Կանգ է առնում հատկապես ուլտիմատումի* խնդրի և այն պատասխանի վրա, որ տվել է Ազգային խորհուրդը՝ հայտարարելով, որ այդպիսով ամենաանկատար կերպով է արված հայ ժողովրդի համար ամենապատասխանատու և ծանրակշիռ գործը: Այդ պատճառով ինքը հրաժարվել է այդ մասնաժողովից:**-

Տեղեկացվում է, որ այդ մասնաժողովը նպատակ ունի բանակցություններ սկսել Ազգային խորհրդի վերակազմության շուրջ՝ մասնակցության հրավիրելով նաև Միությունների միության նախագահությանը:

Նախագահ Ղարաբեկյանը հայտարարում է, որ պատահական անձանցից կազմված այդպիսի մի մասնաժողով միանգամայն ապարդյուն և աննպատակահարմար է: Հ. Համբարձումյանը Ղարաբեկյանի կարծիքը համարում է միակողմանի և սուբյեկտիվ:

Այնուհետև Համբարձումյանը զեկույց է տալիս վերջին շաբաթվա իրադարձությունների մասին:

Լսելով և քննարկելով միջոցների խնդրի մասին Տեր-Բարսեղյանի առաջարկը՝ որոշում են ընտրել ֆինանսական մասնաժողով՝ հանձնարարելով նրան ուսումնասիրել հարցը և ներկայացնել համապատասխան բանաձև: Մասնաժողովի անդամներ են ընտրվում Լազարյանը, Տեր-Հովհաննիսյանը, Տեր-Իսրայելյանը, Էդիյանը, Համբարձումյանը:

Ազգային խորհրդի նպատակների, իրավասությունների, գործունեության ոլորտների շուրջ երկար վիճաբանություններից հետո ժողովին ներկայացվում է ընտրամքային մի բանաձև.

1) Ազգային խորհուրդն այն մարմինն է, որը մշակում և վարում է հայ ժողովրդի արտաքին քաղաքականությունը:

2) Ազգային խորհրդի գործունեությունը կապված չպետք է լինի տերիտորիաների հետ:

3) Ազգային խորհրդի գործունեությունը էապես կապված կլինի տերիտորիաների հետ:

4) Ազգային խորհուրդը պետք է ունենա վարչական ֆունկցիաներ:

5) Ազգային խորհուրդը վարչական ֆունկցիաներ ունենալ չի կարող:

Լեոն առաջարկում է մի այլ բանաձև: Ազգային խորհուրդը՝

1) Ներկայացնում է հայ ժողովրդի ամբողջ իրավագործությունը:

2) Պաշտպանում է նրա շահերը:

3) Կառավարում է նրա ներքին գործերը՝ պատասխանատու լինելով ողջ ժողովրդի առաջ:

Այս բանաձևը քվեարկությամբ ընդունվում է միաձայն:

*) Նկատի ունի մայիսի 19-ի արտակարգ ընդհանուր ժողովում կայացված որոշումը, թե կովկասահայության ներկա կացության «հարցը պետք է դնել Ազգային խորհրդի առաջ և պահանջել հստակ պատասխան»:

**) Այդ մասնաժողովի մասին տե՛ս մայիսի 19, մայիսի 20:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մայիսի 31 - Միքայել Ղարաբյոզյանց ստորագրությամբ նամակ-խնդրագիր Թումանյանին.

«Հարգելի պ. Հովհաննես Թումանյանին

Սրանով ի գիտություն Ձեզ կամենում եմ երկու խոսքով մի բան խնդրել ձեզանից: Ինչպես ազգային խորհրդի և հինգ շրջանի* նախագահի, խնդրում եմ հոք տանեք և տաք մի բանով օգնեք մեզ: Մենք երեք եղբայրներ, որից մեկը Շիալի գյուղում մնաց, իսկ երկուսը այստեղ ենք, տանից դուրս գալու ժամանակ սարիցը իջանք, տուն չի կարողացանք գայինք և երկու եղբորս ձեռքին 25 ռ., այստեղ մի գյուղացուց վերցրի 80 ռ., որ բոլորովին պոծիլ ա, այժմ ոչ մի միջոց չի մնացել բացի ձեզանից խնդիրը, ուրեմն՝ կրկին անգամ խնդրում եմ զոնե մի բանով օգնած լինիք մի երեք օրով մինչև ի մի տեղեկություն իմանայինք մի կարգադրություն կը լիներ:

հարգանքով մեծ

Ղարաքիլիսայի բնակիչ

Միքայել Ղարազիօզիանց**:

*) Թումանյանն այդ օրերին Անդրկովկասի կառավարության հանձնարարությամբ զբաղված էր Բորչալուի, Ղազախ-Շամշադինի, Լոռի-Փամբակի ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու գործով:

**) Նամակի շարադրանքը թողնում ենք անփոփոխ. Թումանյանն այդ օրերին նույն բովանդակությամբ ու գրագիտության նույն մակարդակով հարյուրներով այդպիսի խնդրագրեր էր ստանում և հնարավորության սահմաններում աշխատում էր ընդառաջել բոլորին:

ԳԱԹ ԹՖ, 1552 (252 լր.):

<Մայիս> - Գրում է «Մի քանի ենթադրություններ» հոդվածը.*

«Տրապիզոնի հաշտությունը** և նման կոմբինացիաները ժամանակավոր բնավորություն ունեն: Ռուսական հեղափոխության ալիքները ուժեղ թափով ծավալվելու են կենտրոնական պետությունների հոգնած ժողովուրդների մեջ: Բոլոր մեծ ու փոքր կայզերները ընկնելու են իրենց գահերից:

Պատերազմը, որ ձգձգվեց ռուսական հեղափոխության պատճառով, վերջանալու է Անգլիայի և իր դաշնակիցների հաղթանակով: Տաճկաստանը հարելու է իր հին պաշտպանին՝ Անգլիային: Մահմեդական ժողովուրդները մոտենալու են Անգլիային: Կուլտուրական ժողովուրդները, և հատկապես հայերն ու թուրքերը, պարզ տեսնելու և խոստովանելու են իրենց ընդհարումների ամբողջ անմտությունը և, հակառակ բոլոր մութ ուժերի ջանքերին, մոտենալու և կապվելու են իրար հետ:

Նրանց մոտիկությունը սկսվելու և կատարվելու է աշխատավոր հասարակ ժողովրդի ձեռքով: Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան մեծ դեր է կատարելու սրա մեջ:

Ցարիզմի անբարեխղճություններից և հեղափոխականների անփութություններից տանջված, հոգնած ու քայքայված Ռուսաստանը, որ ֆրոնտներից հոսեց դեպի տուն, հանգստանալու է, ուշքի է գալու, և էն ժամանակ, երբ ուրիշ երկրներում սկսվելու են խառնակությունները, Ռուսաստանում սկսվելու է *содружие Руси*:*:

*) Պահպանվել է հոդվածի սկզբի տարբերակը: Բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել:

**) Թուրքական կառավարության և Անդրկովկասյան սեյմի միջև հաշտության բանակցություններն սկսվել են 1918 թ. մայիսի 14-ին:

ԵԼԺ 7, 474, 673:

<Չարուն> - Գրում է «Օրիենտալիստի խնդիրը և մենք» հոդվածը:

Հոդվածի առաջին մասում դատողություններ ու դիտողություններ է անում ստեղծված պատմական իրադրության մեջ կովկասյան ժողովուրդների քաղաքական կողմնորոշման մասին: Համաձայն չէ այն մտայնությանը, թե պատերազմի և հեղափոխության հետևանքով Ռուսաստանը վերջնականապես քայքայված է, ուստի պետք է կողմնորոշվել դեպի Տաճկաստանը: Համոզված է, որ «Ռուսաստանը մեռած չի, այլ հիվանդ է» և անկասկած պիտի առողջանա, և այդ դեպքում շատ բարիքներ է խոստանում իրեն բախտակից ժողովուրդներին»: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա՝ «նա մի հյուծված մարդ է, որի տունը քանդեց իր բարեկամ Գերմանիան, և այժմ նա դատապարտված է գերության թե՛ բարեկամի, թե՛ թշնամիների ձեռքին»: Տաճկական կողմնորոշումը հեռանկար չունի: Ստեղծված իրադրության մեջ Տաճկաստանը «կարող էր մեծ ույժ առնել և շատ կողմնակիցներ ունենալ, եթե ժողովուրդների ապահովության և ազատության հաստատում հավատ ներշնչեր: Բայց էդ ձևի երկրներ ու ժողովուրդներ գրավելն, իր հետ կապելը անգլիական հանճարին է վերապահված, և հույս չկա, թե Տաճկաստանը էս տեսակետից, թեկուզ ամենափոքր չափով, պետական իմաստություն ցույց տա»: Նա շարունակում է կոտորածի ու սարսափի իր ճանապարհը: Բայց «կոտորածներով ու սարսափով կարելի է երկրներ ավերել, բայց իբրև պետություն սիրել ու իր հետ պահել՝ անկարելի բան է»:

Գիշտ ճանապարհը համարում է կովկասյան ժողովուրդների միասնությունն ու համերաշխությունը. ժողովուրդները հոգնել են պատերազմից, նրանց միջև ընդհարումներ հրահրողները նրանց առաջնորդներն են միայն:

Յոդվածի երկրորդ մասում* արձանագրում է, որ պատերազմը դեռ չավարտված՝ Թուրքիան, օգտվելով Կովկասից Ռուսաստանի հեռանալուց, իր ծայրահեղ պահանջներով նորից լարվածության մեջ է պահում իրադրությունը՝ ցույց տալով, որ ինքը խաղաղություն չի ուզում կամ չի հասկանում, որ այդ խաղաղությունը առաջին հերթին իրեն է պետք. «Նա իր պահանջներով պատերազմ է առաջ բերում – մի պատերազմ, որից եթե էսօր մի որևէ ձևով խուսափենք, մոտիկ առաջիկայում դառնալու է սարսափելի և նոր կրակի մեջ է ձգելու թե՛ իր, թե՛ մեր հոգնած ժողովուրդները:

Նա իր գործելակերպով հենց էսօր Կովկասը դրել է պատերազմից վատթար վիճակի մեջ – մահմեդական ցեղերը դնելով վայրենի շարժումի մեջ»:

Թուրքիան և նրա հրահրած մահմեդական ցեղերը չեն հասկանում, որ լավագույն ճանապարհը ոչ թե կոտորած, ավեր ու սարսափ տարածելն է, այլ բոլոր ժողովուրդների միջև հաշտություն ու համերաշխություն հաստատելը. «Մահմեդական էդ ժողովուրդները չեն կարողանում հասկանալ, թե ինչ կլիներ, եթե իրենք հրացանի զարկերի և թալանների փոխարեն իրենց կայարաններում իրենց հարևան քրիստոնյա ժողովուրդներին հանդիպեին խաղաղ հարևանի սիրով ու նոր օրերի կարմիր դրոշակով:

Ինչպես ինքը՝ Տաճկաստանն էլ չի հասկանում, թե ինչքան լավ կլիներ, որ էդ ամենի փոխարեն ազատ ընդունելի պայմաններ ու սահմաններ հայտարարեր թաթար, հայ ու վրացի ժողովուրդների համար և ինքն էլ բախտի բերած մոմենտից օգտվեր առատ-առատ:

Եսպիսով թե՛ տաճկական, թե՛ իրեն գործակից ժողովուրդները գնում են իրենց հին ավանդական ճանապարհով, սարսափի ու կոտորածի ճանապարհով: <....> Եսպիսով Թուրքիան մնում է նույն հին Թուրքիան: Դարձյալ պակասում է նրան պետական իմաստությունը: Դարձյալ նա կարող է կոտորածներ առաջ բերել, բայց տիրել ու իրեն հպատակեցնել - չի կարողանում:

Դարձյալ նա գալիս է կոտորածներ սարքելու, ավերելու և սարսափներ տարածելու, հուսահատներին իրեն դեմ հանելու, փոխանակ օգտվելու առիթից՝ իշխելու և իրեն հպատակեցնելու»:

Թուրքիան իր այդօրինակ պահվածքով կովկասյան ժողովուրդների մեջ զգվանք ու ատելություն է առաջացնում իր հանդեպ, որից կարող են օգտվել հզոր տերությունները. «...Քրդերը կամ ճանապարհի կտրող բանդաները չափազանց վատ նեցուկներ են իրեն համար»:

Հոդվածի երրորդ մասում, նկատի ունենալով արևմտահայությանը պատուհասած աղետը, ռուսների նահանջից հետո նաև արևելահայությանը սպառնացող օրհասական վտանգները, առաջարկում է փրկության իր ծրագիրը, որ հանգում է հետևյալին: Պատմության ողջ ընթացքում այդպիսի օրհասական պահերին հայ ժողովուրդն ապավինել է իր անառիկ լեռներին, նույնը պիտի անի նաև հիմա՝ ամրանալով Լոռու լեռնաստանում և այնտեղից նեցուկ լինելով Հայաստանի մյուս վայրերում կռվող ժողովրդին. «Հայությունը պետք է չորս կողմից հավաքվի և կենտրոնանա էն լեռնաշխարհում, որ ընկնում է Քուռ և Արաքս գետերի մեջտեղը և կազմում է նրանց ջրբաժանը – Շիրակի դաշտից և Ախալքալաքի սարահարթից սկսած: <....> Այժմ ամենակարևոր հերթական խնդիրներից մեկն է - Կարսի և Պարսկաստանի երկաթուղու գիծը ապահովել 70 վերստ հեռավորության վրա Թիֆլիսից սկսած մինչև Լոռու ձորերի բերանը»:

*) Հոդվածի այս մասը «Կովկասի դրությունը 1918 թ.» վերնագրով տպագրվել է՝ ՌԻՀ 2, 391-392, 454:

ԵԼԺ 7, 475-481, 674:

<Գարուն> - Գրում է «...Մի հայ ժողովուրդ» սկսվածքով հոդվածը:

Գրում է Ռուսաստանից հայ ժողովրդի դարավոր սպասելիքների, անվերապահ նվիրվածության և ռուս իշխանությունների ոչ համարժեք վերաբերմունքի մասին՝ ցույց տալով դա հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից քաղված օրինակներով:

Առանձնացնում է այդ հարաբերությունների պատմության երկու փուլ: Առաջինը սկզբից մինչև 19-րդ դարի 80-ական թվականներն ընկած շրջանն է, երբ ռուս-հայկական հարաբերությունները զարգանում էին բնականոն ընթացքով. «Էսպես, ըստ ամենայնի, Ռուսաստանին ապավինած ու անվերապահ հավատարիմ մի ժողովուրդ: Եվ էս մի ժողովուրդն էլ ճանաչում էր մի Ռուսաստան՝ իր ավանդական բարի վերաբերմունքով ու հովանավորությամբ»:

Սակայն ժամանակները փոխվում են, և հայության հանդեպ ռուսական վերաբերմունքի մեջ հակասական շերտավորումներ են հանդես գալիս. «...Կովկասում մեզ համար հայտնվեց երկու Ռուսաստան՝ մեկը մյուսից միանգամայն տարբեր վերաբերմունքներով ու վարմունքներով: Էդ երկու Ռուսաստաններից մեկը ներքին գործերի նախարարությունն էր (ամանձնապես լուսավորության նախարարությունը), իսկ մյուսը՝ արտաքին գործերի և զինվորական նախարարությունները»: Զինվորական նախարարությունը պարզ տեսնում և գնահատում է նվիրվածությունն ու քաջությունը հայ զինվորի, որ ռուս զինվորի հետ ուս ուսի կռվում է Ռուսաստանի թշնամիների դեմ, «հայ ժողովուրդն էլ իր կողմից ծառայել ու սիրել է հարազատի մման, և մինչև էսօր ոչ մի թյուրիմացություն ու դժգոհություն չի պատահել հայ ժողովրդի և ռուս զինվորականության մեջ»: Մինչդեռ «ներքին գործերի նախարարությունը և քաղաքացիական իշխանությունը <...> հայ ժողովրդի վրա նայեց որպես թշնամի տարրի վրա, հալածանք հարուցեց գրականության մեջ, հալածանք հարուցեց դպրոցների դեմ»: Հիշում է այդ հալածանքների հետևանքները, անդրադառնում է հայ եկեղեցու իրավունքների սահմանափակմանն ու կալվածքների բռնագրավմանը, հայ ժողովրդի դեմ հեղափոխականության և անջատողականության սարքովի մեղադրանքներին, դրան հաջորդած հալածանքներին ու ձերբակալություններին, այսպես կոչված «դաշնակցության գործին».*

*) Ձեռագիրն այստեղ ընդհատվում է, թերի է մաս սկզբից:

ԵԼԺ 7, 481-485, 674:

Չունիսի 2 - Տեղի է ունենում հայ հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ ընդհանուր ժողովը:

Նախագահում է Մ. Ղարաբեկյանը:

Նախքան օրակարգին անցնելը լսում են Ախալքալաքից վերադարձած Ա. Տեր-Գրիգորյանի զեկույցը: Տեղեկացնում է, որ Ախալքալաքում հացի մեծ պաշար կա: Որոշում են խնդրել Տեր-Գրիգորյանին, Շահվերդյանին և Մալխասյանցին այդ պաշարը ապահով տեղափոխելու համար բանակցել Ազգային խորհրդի և կենտրոնական գաղթականական խորհրդի հետ:

Անցնելով օրակարգի հիմնական՝ Ազգային խորհրդի կազմի և իրավասության հարցին՝ ժողովն արձանագրում է, որ դրա հետ կապված սկզբունքային խնդիրներն արդեն լուծված են (տես մա-

յիսի 30): Ուստի մտքերի փոխանակությունից հետո որոշում են ընտրել մի մասնաժողով, հանձնարարել նրան մշակել մի ընդհանուր բանաձև և ներկայացնել ժողովի քննությանը: Մասնաժողովի անդամներ ընտրվում են նախորդ բանաձևի բոլոր հեղինակները և Ավետիսյանն ու Մալխասյանը:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Հունիսի 5 - Որպես Ջալալօղլու շրջանի Լոռի-Ղազախ-Շամշադին-Բորչալու-Փամբակ միության գլխավոր լիազոր՝ մակագրում է նույն շրջանների զինվորական հրահանգիչ Նիկոլայ Հարությունի Հակոբյանց-Դադիվանովի կատարած ծախսերի (ընդամենը 2583 ռ. 52 կոպ.) հաշվետվությունը:

«Ведомость на жалование, милиционерам, состоящими опер-офицерами при уполномоченном Джалал-оглынского района Союза Лори-Казах-Шамшадин-Борчали-Бамбак Николае Арутюнянце Дадиванове, для обучения военноу службе ополченцов в возрасте от 35 до 50 лет, ...всего 2000 руб.

Ов. Туманян

5 / VI 18»:

ԳԱԹ ԹՖ, 2448 (224 III ց.):

Հունիսի 8 - Տեղի է ունենում հայ հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ նիստը:

Նախագահում է Ստ. Մալխասյանցը:

Օրակարգին անցնելուց առաջ նիստին ներկա Միքայել Բաբաջանյանը զեկուցում է հաշտության բանակցությունների, կնքված պայմանագրերի, անկախ Հայաստանի ապագա քաղաքականության մասին:

Այնուհետև քարտուղար Համբարձումյանը զեկուցում է բանաձևերը մշակող մասնաժողովի կատարած աշխատանքների մասին: Ներկայացված բանաձևը կետ առ կետ քննարկելուց հետո որոշվում է ընդունել առաջարկներով ու լրացումներով: Հանձնարարվում է մասնաժողովին բանաձևը լրամշակումից հետո հրապարակել մամուլում և ներկայացնել Ազգային խորհրդին: Ըստ բանաձևի՝ Ազգային խորհուրդը կազմվում է 50 հոգուց, որից 25-ը՝ կուսակցություններից, 11-ը՝ հայրենակցական միություններից՝ յուրաքանչյուրից 1, 14-ը՝ ազգային կարևոր կազմակերպություններից:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Հունիսի 11 - Տեղի է ունենում հայ հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ ընդհանուր ժողովը: Քվորումի բացակայության պատճառով նիստը համարվում է խորհրդակցական:

Լսում են՝

1) Դարբինյանի հայտարարությունը սոցիալիստական բլոկի մասին: Որոշում են իրագործել այդ հարցի վերաբերյալ ընդհանուր ժողովի նախկին որոշումը՝ բլոկին նյութական օժանդակություն ցույց տալու մասին:

2) Քարտուղար Համբարձումյանի հայտարարությունը Ախալքալաքի լիազոր Տեր-Գրիգորյանի հեռագրի մասին:

3) Պ. Աբեյանի զեկույցը Ախալքալաքի դեպքերի, ազգաբնակչության գաղթի, գաղթականության վիճակի մասին: Այդ խնդիրների կարևորությունը նկատի ունենալով՝ ժողովը համարվում է օրինական: Ընդառաջելով Աբեյանի առաջարկությանը՝ ժողովը որոշում է՝ 1. Ստեղծել 3 հոգուց կազմված մի կոմիտե և ուղարկել Ախալքալաք՝ կազմակերպելու գաղթականների կյանքը, նրանց վերադարձը և հանձնումը Թուրքիայի իշխանությանը: 2. Կոմիտեի ընտրությունը թողնել առաջիկա նիստին, հանձնարարել Ախալքալաքի հայրենակցական միությանը մինչ այդ երաշխավորել 3 վստահելի անձանց, որոնց մասին Միությունների միությունը, համաձայն իր որոշման, կդիմի Ազգային խորհրդին՝ նրանց Ախալքալաքի շրջան ուղարկել համապատասխան լիազորություններով:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3. գործ 4:

<Հունիսի 20-22>, Քոբեք - Նամակ Այգեհատ՝ դստերը՝ Նվարդին.

«Նվարդ ջան, ես ես րոպեիս գերմանացիների մեծի մոտ էի: Լավ կլինի ամեն բան: Շատ սիրով վերաբերվեց, մանավանդ երբ իմացավ բանաստեղծ եմ: Ասում է՝ ես երկու օրը ամեն բան կվերջանա, բայց խորհուրդ տվեց, որ ես մի հասնեմ Թիֆլիս ու վերադառնամ: Իրենք առավոտը վաղ էստեղից՝ Քոբեքից, ժ. 6-ին ինձ կուղարկեն Սանահին, որ 7-ին գնամ Թիֆլիս: Երևի մի օր կմնամ էստեղ:»

Այժմ մայրիկը Ջաղի ձորում, Գոգնանց բաղունն է՝ Թամարի հետ: Երկու գառն են առել ուղարկել, ես էլ գնում եմ: Ուզում եք՝ հյուր եկեք: Բարևներ ու համբույրներ ամենքիդ՝

հայրիկը»:

*) Թումանյանը մտադիր է եղել Թիֆլիսում մնալ մեկ օր, բայց Լոռի վերադառնալը ձգձգվել է, հավանաբար այն պատճառով, որ տեղի էր ունենալու ՀՀՍՄ վարչությունների արտահերթ ընդհանուր ժողով, որտեղ զեկուցում ուներ նաև ինքը (տե՛ս հունիսի 25):

ԵԼԺ 10, 287, 643:

Հունիսի 25 - Մամուլը տեղեկացնում է.

«Այսօր, երեկոյան ժամը 5-ին, Կ. Հ. Բարեգործական Ընկ. շինության դահլիճում կը կայանա հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ ընդհանուր ժողովը: Օրակարգն է 1) զեկուցում Հովհ. Թումանյանի, որ վերադարձել է Լոռի, Փամբակ գավառներից, 2) մի քանի կարևոր հարցեր»:

«Մշակ», 1918, թիվ 120:

Հունիսի 26 - Մ. Է. ստորագրությամբ տպագրվում է հարցազրույց Թումանյանի հետ՝ Լոռու շրջանում տիրող իրադրության մասին.

«Մենք առիթ ունեցանք զրուցել նորերս Լոռուց եկած պ. Հովհ. Թումանյանի հետ և տալ մի քանի հարցեր: Մեր հարցին, թե տաճկական զորքեր կան Լոռվա շրջանում, պ. Հ. Թումանյանը պատասխանեց – Շատ քիչ. այն էլ ցրված զանազան կողմեր, թեև ազգաբնակչությունը հազարներով է հաշվում նրանց, բայց ճիշտ չէ:

Ճանապարհը բաց է, թե ոչ.

- Ոչ. երկաթուղին գործում է մինչև Քուլագերան կայարանը, իսկ նրանից դեմը գնում է զրահապատը մինչև Դսեղի ձորը և մտնում թունելը, իսկ այժմ տաճիկները արգելում են զրահապատին մինչև թունել գնալը, որի համար ծածկել են թունելի մյուս բերանը և այս կողմից էլ թնդանոթներ են դրել: Իսկ դեպի Թիֆլիս բոլոր կայարաններում կանգնած են գերմանական և վրաց զորքերը: Պետք է ասել, որ տաճիկները խիստ ամրացել են այդ գոտում: Թեև ես ստույգ չգիտեմ, բայց ասացին, որ տաճիկ և գերմանացի զինվորները ընդհարվել են այդ շրջանում, որ իբր թե սպանվել են մեկ գերմանացի և չորս տաճիկ զինվոր:

- Ի՞նչ վիճակ է տիրում Ղարաքիլիսայում, Ջալալ-Օղլում և Դիլիջանում:

- Մենք կտրված ենք այդ շրջաններից և ստույգ տեղեկություն չենք կարողանում ստանալ. նույնիսկ ուղարկում ենք մարդիկ, որ

տեղեկություն բերեն, գնում, հետ չեն գալիս: Լուր ստացանք, որ տաճիկները Ղարաքիլիսայում կոտորած են սարքել, իբր թե ի վրեժ Վարդանլու թուրքական գյուղի: Ասում են, որ կոտորվել են 300 հոգի, իսկ մնացածը փախել: Մնացած տեղերում՝ Ջալալ-Օղլում և Դիլիջանում ևս եղել են անկարգության դեպքեր:

- Ի՞նչ վիճակի մեջ է գաղթականությունը:

- Գաղթականությունը ցրված է զանազան մասերում, երկաթուղու շուրջ հավաքված գաղթականությունն արդեն քաշվել է զանազան վայրեր, միայն Աղթալայում են մնացել գաղթականներ, որոնց մեջ տարածված է սև ծաղիկ հիվանդությունը, իսկ գյուղերում տեղավորված գաղթականների մեջ բարեբախտաբար հիվանդություն չկա, շնորհիվ Լոռվա առողջարար օդի: Անդրանիկի զորամասի հետևից գնում է մի քանի տասնյակ հազար գաղթականություն, որ բաղկացած է գլխավորապես տաճկահայերից: Մի քանի օր առաջ, երբ Լոռու շրջանից դեպի Դիլիջան էր գնում Անդրանիկի զորամասը, և նրան հետևող գաղթականությունը, ճանապարհին տեղաց զարհուրելի կարկուտ, որից սպանվեցին բազմաթիվ գաղթականներ, իսկ կենդանի մնացածները դաշտերում թողին ուտելու հացը և փախան: Այժմ գյուղացիք գնում են դաշտերը, թաղում անթաղ դիակները և բերում նրանց թողած մթերքն ու իրերը: Իսկ դաշտերում թափված սատկած անասուններին հաշիվ չկա: Լոռվա գյուղերում այնքան գաղթականություն կա, իհարկե, բաց երկնքի տակ մնացած, որ երբ գիշերը կրակ են անում, ամեն մի գյուղ նմանվում է մեծ քաղաքի: Գաղթականության շարժման հետևանքով բոլոր արտերը տրորվել են: Տաճիկների գրաված տեղերում առանձնապես տաճկահայ գաղթականներ չեն մնում, որովհետև ջարդում են նրանց: Հենց որ տաճիկները մոտենում են, գաղթականները իրենց ունեցած թե իրերը, թե հագուստները և թե նույնիսկ ալյուրը թափում են գետը կամ թողնում ու սարսափահար փախչում: Այժմ գյուղացիք գնում ու անհաշիվ իրեր են հանում գետից:

Վերջում մեր հարցին պ. Թումանյանը պատասխանեց, թե սուտ են այն լուրերը, որ տարածվել են իր և իր աղջիկների գերվելու մասին»:

«Հորիզոն», 1918, թիվ 124:

Հունիսի 28, Թիֆլիս - Նամակ Կոստանդնուպոլիս՝ Գևորգ Խատիսյանին.

«Սիրելի Գիգա,

Ինձանից շատ բարև արա մեր պատգամավորներին և ասա. մեր ժողովուրդը փչանում է: Շարունակ գյուղերում թալան, առևանգություն, սպանություն, ծեծ ու հալածանք: Մինչև ձեր խորհրդաժողովի* վերջանալը էստեղ էլ շատ բան կվերջանա, և կամ գուցե հուսահատված ժողովուրդը կդիմի էն տեսակ միջոցների, որ խնդիրը միանգամից կամ էս կողմը կարի, կամ էն: Մեր Ազգային խորհրդի ու, էսպես ասած, կառավարության ապիկարությունը հասնում է ոճրագործության: Ոչ թե իրենք իրենց ճանապարհը չբաց արին, այլ երբ գերմանացին և վրացին էլ բաց արին, նույնիսկ էն ժամանակ էլ մի չեկան ու տեղեկություն չտվին, թե ինչ կա, ինչ չկա, որ մենք էլ մեր գիտեցածն անեինք ու որոշ սահմանում կանգնեինք, թե էս էլ մերն ու մեր իրավունքն է:** Այժմ էլ դեռ բան չեն անում: Նույնիսկ կոմիսիան ուղարկել ուշացրել էին: Էլ չեն ուզում գրել շատ ու շատ մութ ու գարշելի բաների մասին, որոնց հետևանքով ես երեկ հրաժարական տվի:***

Ամոթ է էդ բոլորի հետ կապված լինել:

Տաճիկ կառավարության ներկայացուցչի հետ մի երկու տեսակցություն են ունեցել: Ջարմանքով լսեց ասածներս և հայտնեց, որ մախ՝ ինքը տեղեկություն չունի, երկրորդ՝ մեր Ազգային խորհուրդը իբրև թե չի ուզում խնդիրը հաշտ վերջացնել և չի ուզում իր հետ տեսնվի: Էսօր Ավետիքին**** տանելու են մոտը: Պետք է բողոքել և էդտեղից մի խիստ կարգադրություն լինի, որ վերջանան էս խայտառակությունները կամ քննություն նշանակվի:

Ես նորից դառնալու եմ Լոռի:

Թիֆլիսում արդեն խոլերայի դեպքեր են եղել: Սոսկալի ամառ է լինելու՝ հիվանդություններ, կոտորածներ, սով ու շոգ:

Համբույրներով՝ քո *Հովհաննես*»:

*) Այդ խորհրդաժողովին մասնակցելու համար Կոստանդնուպոլիս էին մեկնել Ավ. Ահարոնյանը, Մ. Պապաջանյանը, Ալ. Խատիսյանը և երկու քարտուղար, որոնցից մեկը Գ. Խատիսյանն էր: Ժողովին ներկա էին լինելու Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Բուլղարիայի ներկայացուցիչները: Նպատակներից մեկը Բաթումի՝ հունիսի 3-ի դաշնագրի վերանայումն էր՝ ըստ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի: Ժողովը տեղի չի ունեցել:

**) Նկատի ունի հայ-վրացական սահմանի ճշգրտումը, որ երկար ժամանակ վեճի առարկա էր և 1918 թ. դեկտեմբերին հանգեցրեց քսան օր տևած հայ-վրացական պատերազմի:

***) Խոսքը վերաբերում է Լոռու, Ղազախի, Շամշադինի, Բորչալուի գավառների լիազորի պաշտոնից (տես մարտի 20) հրաժարվելուն:

****) Նկատի ունի Թիֆլիսի հայոց ազգային կենտրոնական խորհրդի փոխնախագահ Ավետիք Սահակյանին:
ԵԼԺ, 10, 287-288, 643-644:

Հունիսի 30 - Մամուլը տեղեկացնում է, որ Հ. Ոսկանյանի նորակազմ օպերային խումբը Հայկական ակումբի թատրոնում հուլիսի 2-ին պիտի ներկայացնի «Անուշ» առաջին հայկական օպերան, երաժշտություն՝ Ա. Տիգրանյանի:

Մասնավորապես. «Ի նկատի ունենալով այդ ներկայացման գեղարվեստական հաջողությունը՝ հրավիրված է սիմֆոնիական նվագախումբ: Պատրաստվում են դեկորներ, զգեստներ և այլն: Այդ ներկայացմանը դրված լինելով անդրանիկ հայկական օպերան, ոչ մի ծախսի առաջ կանգ չի առել վարչությունը»:

«Հորիզոն», 1918, թիվ 128:

Հունիս - Գրում է «Կըլթացնում են, արտոդրում...» քառյակը:
ԵԼԺ 2, 33:

Հուլիսի 2 - Մամուլը հիշեցնում է, որ Հայկական ակումբի թատրոնում հուլիսի 2-ին Հ. Ոսկանյանի նորակազմ օպերային խումբը պիտի բեմադրե Ար. Տիգրանյանի առաջին հայկական օպերան «Անուշ»՝ ըստ Հով. Թումանյանի (տե՛ս հունիսի 30):

«Մշակ», 1918, թիվ 126:

Հուլիսի 4 - Գր. Բալաբեգյան ստորագրությամբ գրություն Հայոց Ազգային խորհրդի գլխավոր լիազոր, Լուռու-Փամբակի, Ղազախի, Շամշադինի և Բորչալուի հայրենակցական միության նախագահ Հովհ. Թումանյանին.

«Վերջին նահանջի ժամանակ ես նույնպես վերադարձել եմ Թիֆլիս ու մինչև հիմա ապրում եմ առանց աշխատանքի, ուրիշ որևէ աղբյուր ունենալու: Սրանով խնդրում եմ պարզել իմ դրությունը ու վճարել ինձ հասանելիք ռոճիկս ու իմ միջոցով արած ծախսերս: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկա պայմաններում միանգամայն կարճ ժամանակամիջոցում անհնար է որևէ ուրիշ պաշտոն կամ աշխատանք գտնել լիազորությունը վերջացնելուց հետո, խնդրում եմ ի նկատի ունենալ այդ բոլորը և ըստ այդմ անել այդ վարձատրությունը: Ավելորդ չեմ համարում հիշատակել, որ խուճապի ժամանակ, լինելով Շնող-Հայրունի շրջանում և այդպիսով

բացակա լինելով տնից, ունեցել են նյութական զգալի կորուստներ, երգրից փախած՝ թողնելով ու զրկվելով հազուստներից և տնային այլ պարագաներից:

Հարգանքով՝ Շնող-Սամահինի շրջանի լիազոր Գր. Բալաբեգյան»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 92/21:

Ֆուխի 10 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Ներկա են՝ Ա.Աբովյան, Նիկ. Սարգսյան, Դեր. Դեմիրճյան:

Քննարկվող հարցերը՝

1. Նախագահը տեղեկացնում է, որ անհայտ չարագործների ձեռքով սպանվել է «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանը: Խնդրում է վարչությանը, որ արտահայտի իր վերաբերմունքը կատարվածի հանդեպ:

2. Հայտնում է նաև, որ «Մշակում» տպագրված մի հոդվածում հարց է բարձրացվում, թե ինչու օգնություն չի հասնում կարիքավոր գրողներին: Գանձապահը ներկայացնում է հաշիվ, որից երևում է, որ ընկերության անդամներին փոխարինաբար տրված է 1110 ռուբլի, որ դեռ չի վերադարձվել, իսկ տրամադրելի գումար մնացել է ընդամենը 400 ռ.:

3. Ծառուրյանի թաղման կարգադրիչը ներկայացնում է կատարված ծախսերի մանրամասն հաշիվը՝ բոլոր փաստաթղթերով: Հաշվետվությունից երևում է, որ մի քանի հաստատություններ չեն կատարել իրենց ստանձնած գումարային պարտավորությունները (տե՛ս փետրվարի 20): Պակասող 251 ռ. Գ. Աղանյանը ծախսել է իր անձնական հաշվից:

Որոշվում է՝

ա) Մամուլում հրապարակել, որ վարչությունը կատարված սպանությունը համարում է զգալի ռճիր, դատապարտում է գրչի մարդու վրա գործած այդ եղերագործությունը և հայտնում է իր զայրույթը:

բ) Հրավիրել վարչության և ընկերության անդամներին՝ ներկա լինելու Հ. Առաքելյանի հուղարկավորությանը:

Գ) Գրավոր պահանջել ապառիկ գումարները: Արմեն Տիգրանյանի 60 ռ. և Բագրատ Այվազյանի 30 ռ. պարտքը թողնել անպահանջ՝ համարելով նպաստ: Համաձայն նախկին որոշման (տե՛ս

փետրվարի 20)՝ պակասորդ 251 ռ. գումարը Աղանյանին վճարել ընկերության դրամարկղից:

Նախագահ՝ Յովհ. Թումանյան:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 48 (1):

Հուլիսի 11 - Ցավակցական հեռագիր Թումանյանին՝ որպես ՀԳԿԸ վարչության նախագահի, «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանի մահվան կապակցությամբ.

«Հայ Գրողների Ընկ. նախագահին.

Լեհական գրական-արտիստական կոլոն,* Թիֆլիսում հուլիսի 9-ի իր ժողովում լսելով նախագահի հաղորդությունը Հ. Առաքելյանի անժամանակ և ողբերգական մահվան մասին և հարգելով հանգուցյալի հիշատակը ոտքի կանգնելով, թույլ է տալիս իրան խնդրելու Ձեզ, պարոն նախագահ, կոլոյի անունից հայ գրողների ընտանիքին հայտնել խորին ցավակցական խոսքերը այս ծանր կորստի համար, որ այս ճգնաժամային օրերին կրեց հասարակությունը հանձին Համբարձում Առաքելյանի, մաքուր և ազնիվ հրապարակախոսի, հայրենասերի և մարդու, որ ջերմ սիրում էր իր բազմաչարչար ժողովրդին:

Կոլոյի նախագահ՝ Պեկարսկի»:

*)կոլո, այսինքն՝ գաղութ, համայնք (ռուսերեն колония բառի կրճատ ձևը)»

«Մշակ», 1918, հուլիսի 28, թիվ 146:

Հուլիսի 11 - Մամուլը տեղեկացնում է.

«Այսօր երեկոյան ժամը 6-ին (նոր ժամանակով) Կ. Հ. Բարեգործ. Ընկեր. տան մեջ կկայանա հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողովը, որ քննարկելու է մի շարք կարևոր խնդիրներ և լսելու է Յովհաննես Թումանյանցի զեկուցումը»:

«Մշակ», 1918. թիվ 133:

Հուլիսի 11 - ՀԳԿԸ վարչության դիմում-նամակը «Մշակի» խմբագրությանը՝ իր որոշումը (տե՛ս հուլիսի 10) թերթի առաջիկա համարում տպագրելու մասին.*

«Հայ գրողների կովկասյան ընկերության վարչությունը իր ամսի 10-ի ժողովում, լսելով «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանի սպանության լուրը, գտավ, որ կատարված սպանությունը մի զգալի ոճիր է, ուստի և դատապարտում է գրչի մարդու վրա գոր-

ծած այդ եղեմնագործությունը, հայտնում իր զայրույթը՝ հայտարարելով այս մասին մամուլի մեջ: Վարչությունը միաժամանակ որոշեց վարչության և ընկերության անդամներին ներկա լինել հանգուցյալ հրապարակախոսի թաղմանը»:

*) Նույն գրությունը ուղարկվում է նաև «Հորիզոնի» խմբագրությանը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 97/28:

Չուլիսի 11 - Տեղի է ունենում հայ հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողով:

Նախագահում է Թումանյանը:

Ժողովի քննարկմանն են առաջարկվում հետևյալ հարցերը՝

Համբարձում Առաքելյանի սպանությունը:

Համերաշխության հարցի արծարծումը մամուլում:

Միության նյութական միջոցները:

Վերակազմության խնդիրը:

Ազգային խորհրդի և Միության համախորհրդակցության հարցը:

Փախստականների վերադարձը:

Ազգային խորհրդի գործունեությունը:

Որոշում են քննարկել օրակարգի միայն առաջին երկու հարցերը, մյուսները հետաձգել:

Հանգուցյալ հրապարակախոս Հ. Առաքելյանի հիշատակը հարգում են ոտքի կանգնելով: Որոշում են հրապարակավ բողոքել կատարված եղեմնագործության դեմ, Միության ներկայացուցիչներ ուղարկել՝ մասնակցելու հանգուցյալի հուղարկավորությանը:

Անցնելով օրակարգի երկրորդ հարցին՝ Թումանյանը վերստին կարևորում է համերաշխության գաղափարի լայն արծարծումը մամուլում: Ամհրաժեշտ է համարում այդ հարցի շուրջ մամուլում հանդես եկողների նյութական վարձատրությունը: Համձն է առնում ինքը ձեռք բերել անհրաժեշտ գումարը: Գանձապահին է հանձնում այդ նպատակով վաճառականների կոմիտեից ստացած 1000 ռուբլին:

Քննելով այս խնդիրը՝ ժողովը որոշում է ընդունել նախագահի առաջարկը, կոչ անել մամուլին, որպեսզի ձայն բարձրացնի հոգուտ համերաշխության՝ խոստանալով վարձատրությամբ քաջալերել այդ ուղղությամբ աշխատողներին, ընտրել այդ գործի համար մի հատուկ մասնաժողով՝ Հովի. Թումանյան, Մարգար Ավետիսյան, Արամ-

Տեր-Գրիգորյան, Աթաբեկ Խնկոյան, Համազասպ Համբարձումյան և Պողոս Աբելյան կազմով:

ՀԱԱ, ֆ. 254, ց. 3, գործ 4:

Հուլիսի 12 - Գրում է «Ո՞ւր հեռանաս, կոխած տեղերդ արյունոտ» քառյակը:

ԵԼԺ 2, 73:

Հուլիսի 14, Թիֆլիս - Որպես Լոռու, Փամբակի, Ղազախ-Շամշադինի և Բորչալուի ընդհանուր լիազոր՝ հայտարարություն Հայոց ազգային խորհրդին:

Գրում է. «Ինչպես հրաժարականիս* մեջ հայտնել էի, ես միանգամայն պատահմունքով ընկա Թիֆլիս (տե՛ս <հունիսի 20-22>) և թե՛ բոլոր իրերս, թե՛ բոլոր թղթերս ու հաշիվներս մնացին Դսեղ, ուր այժմ գրաված են տաճիկները:

Մինչև թղթերս ձեռք բերելն ու մանրամասն հաշիվ տալը՝ ես ընդհանուր հաշիվը ներկայացնելով – խնդրում եմ վճարեք ինձ հասանելիք գումարը՝ հոգալու են պարտքերը, որ ինձ հանձնած հինգ շրջանները կառավարելու համար, ճանապարհի փակ լինելու պատճառով ես ստիպված եմ եղել անելու կողմնակի միջոցներից և այլ ընկերություններից:

Փետրվար ամսին ինձ տրված է Ազգային խորհրդից մի չեկ հիսուն հազար ռուբլու հիշյալ հինգ շրջանների լիազորության համար, որոնք զինվորական իշխանության խորհրդակցությամբ բաժանված են եղել տասնմեկ շրջանների (հետագայում 13 շրջանի) 1. Բորչալու, 2. Շնող, 3. Ուզունլար, 4. Դսեղ, 5. Ջալալօղլի, 6. Փամբակ, 7. Դիլիջան, 8. Կողբ-Բարանա, 9. Քարվանսարա, 10. Շամշադին, 11. Բաշքյանդ»:

Այնուհետև 22 կետով մանրամասն ներկայացնում է «պաշտոնեության և ռոճիկի» ճշգրիտ տվյալները** և ամփոփում.

«Ազգային խորհուրդը ինձ տվել էր մի բյուջե, որով ամսական ծախքը հասնում էր քառասուն հազար և ավելի: Բայց որովհետև դրա մեջ նշանակած էին և զինված խմբեր, էդ խմբերը դեռ չէինք կազմել և նույնիսկ համարում էի ավելորդ, քանի որ զինվորներ ունեինք և միշտ կարողանում էինք օգտվել նրանցից և, վերջապես, զգուշանում էի խմբի առաջ բերելուց, դրանից էլ ամսական ծախքն էսքան կրճատվեց և, ինչպես խորհուրդը տեսնում է, չի հասնում նույնիսկ տասն և հինգ հազարի:

Հարկ են համարում հայտնելու, որ մենք էս կարճ ժամանակում դեռ միայն եղած զանազան ինքնաբուխ խմբերն ու խմբակցություններն էինք ցրում և հարկավոր մարմիններն ստեղծում, տակավին ազգային տուրքի գանձմանն էլ չէինք դիմել և էս հինգ շրջանից ոչ մի կոպեկ դրամ չենք ստացել:

Ինչպես հիշեցի, Ազգային խորհուրդը փետրվարին ինձ տվել է մի չեկ հիսուն հազար ռուբլու, որ իր ժամանակին զեղչել են նույն ճանապարհով ու նույն տեղը, ուր զեղչում էր Ազգային խորհուրդն իր չեկերը և հիսուն հազարի չեկի դիմաց ստացել են 42 հազար 500 ռուբլի, այսինքն՝ 15 տոկոս զեղչած:

Արդ, խնդրում են, էս գումարը ընդհանուր ծախքից հանելով՝ մնացածը տաք ինձ, որ կարողանամ ետ տալ փոխ առած գումարները և վճարեմ անվճար մնացած ռոճիկները, այլև մի որոշ գումար հատկացնել լիկվիդացիայի համար: Թեև եղել են և առաջուց պաշտոնի մեջ մի քանիսը, բայց մինչև մանրամասն հաշիվ ներկայացնելը ռոճիկները պետք է հաշվել մարտի 15-ից մինչև հունիսի 15-ը, այսինքն երեք ամիս:

Ի դեպ են համարում վկայելու, որ մեր պաշտոնյաները ընդհանրապես եղել են պարտաճանաչ ու նվիրված, մեծ մասամբ բարձրագույն կրթության տեր մարդիկ, ոմանք մեծապես տուժել են խուճապների ժամանակ և գրեթե ամենքն այժմ մնացել են բաց:

Հովի. Թումանյան»:

*) Լիազորի պաշտոնից Թումանյանի հրաժարականի տեքստն անհայտ է: Հրաժարականի մասին բանաստեղծի հիշատակումը տե՛ս հունիսի 28:

**) Այս մանրամասն հաշվետվությունը պերճախոս վկայում է Հայաստանի հյուսիսային շրջանների լիազոր Թումանյանի կատարած աշխատանքի բնույթի ու ծավալների մասին:

ԵԼԺ 10, 288-291, 644-645:

Հուլիսի 15 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների հերթական ընդհանուր ժողովը:

Նախագահում է Թումանյանը:

Լսում են՝

Փախստականական գլխավոր խորհրդի ներկայացուցիչներ Արտակ Թադևոսյանի և Հայրապետ Հովհաննիսյանի զեկույցը՝ Թիֆլիսում եղած գաղթականների վիճակի, նրանց տեղափոխման մասին:

Միությունների միության վերակազմության խնդիրը:

Միությունների միության նյութական միջոցների հարցը:
Որոշում են՝

ա) խնդրել Լուու, Բորչալուի, Ղազախի և Ախալքալաքի հայրենակցական միություններին գաղթականական գլխավոր խորհրդին տալ 2-3 ներկայացուցիչներ՝ մասնակցելու Թիֆլիսի գաղթականության եվակուացիայի ծրագիրը մշակող խորհրդակցությանը.

բ) ցանկալի համարել գաղթականության կանոնավոր տեղափոխությունը Ղազախի և Բորչալուի գավառներ.

գ) գաղթականական գլխավոր խորհրդին տալ գաղթականության տեղափոխության համար անհրաժեշտ տեղեկություններ.

դ) միջոցների հարցի քննությունը հետաձգել.

ե) վերակազմել Միությունների միության ընդհանուր ժողովը՝ ընդունելով, որ յուրաքանչյուր հայրենակցության վարչության կողմից ընդհանուր ժողովի նիստերին վճռական ձայնով կարող են մասնակցել միայն 3 ներկայացուցիչ՝ ներկայացնելով գրավոր մանդատներ, իսկ վարչության մյուս անդամները կարող են ներկա լինել խորհրդակցական ձայնով, առաջիկա ընդհանուր ժողովը գումարել համաձայն վերակազմության նոր սկզբունքների՝ այդ մասին հայտարարելով մամուլում.

զ) ընդունել, որ վերակազմված ընդհանուր ժողովը պետք է ընտրի մի գործադիր մարմին՝ կոչված իրագործելու ընդհանուր ժողովի որոշումները.

է) հանձնարարել Միության քարտուղար Հ. Համբարձումյանին կազմել և ներկայացնել մի նախագիծ, որով սահմանվեն Միությունների միության և հայրենակցությունների հարաբերությունները:

ՀԱԱ, ֆ. 245, ց.3. գործ 4:

Հուլիսի 16 - ՀՀԴ ուսանողական միության Թիֆլիսի կոմիտեի գրությունը Հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նախագահին.

«Ներփակ ներկայացնելով ՀՀԴ ուսանողական միության Թիֆլիսի կոմիտեի ազդագիրը գաղթականության վերաբերյալ կայանալիք ժողովի մասին, կոմիտեն խնդրում է Ձեզ ուղարկել առնվազն մեկ հատուկ ներկայացուցիչ, որ ի վիճակի լինի զեկուցում տալ ժողովին գաղթականության համար Ձեր կոմիտեի կողմից կատարված աշխատանքների մասին:

վերոհիշյալը նաև ամսույս 14-ին կայացած հասարակական բաց ժողովի ցանկությունն է»:

Գրությունն ստորագրել են կոմիտեի նախագահը և քարտուղարը:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 42:

Յուլիսի 18 - Տեղեկատվություն մամուլում.

«Հայ Հայրենակցական Միությունների Միությունը սույն ամսի 19-ին, ուրբաթ, երեկ. ժ. 7-ին (նոր ժամ.) Կ. Հ. Բարեգ. ԸՆՆԿ. գրադարանում (Աբաս Աբադյան հրապ.) հրավիրում է

Վարչության ընդհանուր ժողով

Օրակարգն է՝ ա) Միության վերակազմության խնդիրը, բ) Միության միջոցները և այլ հարցեր:

Համաձայն ընդհանուր ժողովի հուլիսի 15-ի որոշման, այսուհետև յուրաքանչյուր վարչություն ընդհանուր ժողովին մասնակցելու համար ուղարկում է վճռական ձայնով միայն երեք անդամ գրավոր մանդատներով: Մյուս անդամները կարող են ներկա լինել խորհրդ. ձայնով:

Հայրենակցական Միությունների խորհուրդ»:

«Մշակ», 1918, թիվ 139:

Յուլիսի 19 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների հերթական ընդհանուր ժողովը:

Նախագահում է Թումանյանը:

Լսելով ժողովականների կարծիքները՝ ժողովը ձայների մեծամասնությամբ որոշում է՝

1) հայրենակցական միությունների վարչությունների փոխարեն ընդունել հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդ, որ կազմված լինելով յուրաքանչյուր միության վարչությունից 3-ական ներկայացուցչից՝ հանդիսանում է ՀՀՄՄ-ի բարձրագույն մարմինը.

2) հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը իր միջից ընտրում է 7 հոգուց կազմված մի գործադիր մարմին, որ պիտի իրագործի կենտրոնական խորհրդի որոշումներն ու կարգադրությունները.

3) գործադիր մարմինը իր միջից ընտրում է իր համար նախագահություն, որ միևնույն պաշտոնը վարում է նաև կենտրոնական խորհրդում (գործադիր մարմնի նախագահը և քարտուղարը

համարվում են նաև կենտրոնական խորհրդի նախագահ և քարտուղար)։

4) գործադիր մարմնի կազմի ընտրությունը հետաձգել առաջիկա նիստին։

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4։

Հուլիսի 19, Թիֆլիս - Երկտող Գյուտ Աղանյանին.

«Սիրելի տեր Գյուտ հայր,

Որդուս ձեռքով մի հարյուր ռուբլի են ուղարկում։ Խնդրում են մեր ընկերության կողմից (գրողների) Գալուստ Տեր-Մկրտչյանի՝ Միաբանի համար հոգեհանգիստ նշանակեք կիրակի օրը, հայտարարություն տաք և կարգադրեք։

Ձեր Հ. Թումանյան »։

ԵԼԺ 10, 292։

Հուլիսի 19 - «Ազգերի համերաշխության համար» խորագրի տակ տպագրվում է ՀՀՄՄ հայտարարությունը.

«Հայ Հայրենակցական Միությունների Միությունը, որ իր գոյության գլխավոր և էական նպատակը դրել է հարևան ժողովուրդների համերաշխության գործը, խորին ցավով նկատել է, որ մեր կյանքում ամեն մի վատ բան, ստոր երևույթ, որ կարող է արգելք դառնալ ազգերի համերաշխությանը, արագ ու շտապ արձագանքում, տարածվում և արձագանք է տալիս զանազան ձևերով։ ... Այս վայրենի ու կործանարար երևույթի դեմն առնելու և ժողովուրդների մեջ համերաշխության ոգին զարթեցնելու և զարգացնելու համար Հայրենակցական Միությունների Միությունը, համաձայն իր սկզբնական որոշումների, ձեռնարկելու է զանազան միջոցներ, որոնցից գլխավորներից մեկն է մամուլը, հրապարակական խոսքը։ Այս խնդրի համար Միությունների Միությունը միաժամանակ մտնում է հարաբերության մեջ Կովկասյան ժողովուրդների ընկերության հետ։

Հայրենակցական Միությունների Միություն»։

«Հորիզոն», 1918, թիվ 142։

Հուլիսի 20, Թիֆլիս - Երկտող Գյուտ Աղանյանին.

«Սիրելի տեր Գյուտ,

Ոմանք կարծում են շատ ավելի հարմար է, որ վաղը հոգեհանգստից* հետո բոլոր ընկերությունների և թերթերի ներկայացուցիչներին հրավիրենք խորհրդակցության՝ հենց մոտիկ Թանդոյան

եկեղեցու դպրոցի դահլիճը: Էսօր շատերը չեն կարող: Եվ ես մասին պետք է հայտարարել վաղվա թերթերում:

Բարեգործական ընկերության նախագահը խնդրում է իրենց էլ դնեք մահազդի մեջ: Ես հետո կանցնեմ մոտոլ, մի ժամից կամ երկու:

*) Խոսքը Գալուստ Տեր-Մկրտչյանի (Միաբան) հոգեհանգստի մասին է (տե՛ս հուլիսի 19):

Քո 7. Թումանյան»:

ԵԼԺ 10, 292:

Հուլիսի 20, Թիֆլիս - Երկտող Համազասպ Համբարձումյանին.

«Հարգելի Համազասպ,

ժողով պիտի նշանակել, և՛ նակագի խնդիրը* կա, և՛ գաղթականների հանգանակության, և՛ թերևս ուրիշ խնդիրներ կլինեն:

Փողի համար էս երկու օրն են ժողով անելու:

Ձեր՝ 7. Թումանյան»:

*) Նակագի, այսինքն՝ ժողովները վարելու կարգի մասին հրահանգի խնդիրը ծագել է Թումանյանի բացակայությամբ գումարված բազմաթիվ ժողովների ընթացքում (տե՛ս մայիսի 11, 16, 18), երբ հաճախ չէր հաջողվում քննարկվող հարցերի շուրջ ընդհանուր հայտարարի գալ. զգացվում էր բանաստեղծի հեղինակավոր ներկայության պակասը:

ԵԼԺ 10, 293:

Հուլիսի 22, Թիֆլիս - Երկտող Համազասպ Համբարձումյանին.

«Հարգելի Համազասպ,

Եթե ուշ չի, չորեքշաբթի նշանակեք,* Կարճիկյանի բնակարանում, որովհետև երեքշաբթի շատ են զբաղված:

Ձեր 7. Թումանյան»:

*) Խոսքը ՀՀՍՍ ժողովի մասին է (տե՛ս նախորդ գրությունը):

ԵԼԺ 10, 293:

Հուլիսի 22 - Վրթանես Փափազյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Վրաստանի Դաղեթի շրջանի Ախալգորի գյուղից.

«Սիրելի Հովհաննես,

Երկու ամիս է, որ Վրաստանի ծոցումն ընկած հայաբնակ այն գյուղն են, լավ տեղ է, «հանգստանում են», բայց որովհետև ապրելու հաց գտնելու համար տանջանքը ամենօրյա է դառնում, ստիպված են հրաժարվել այլևս որևէ կերպ «հանգստանալու» մտքից և

վերադառնալ Թիֆլիս: Երևի օգոստոսի 1-ին (հին տոմարով) այդ-
տեղ կլինեմ: Գալուցս առաջ քեզ գրելու պատճառը հիմա կիմանաս:
Բավական է, եթե ասեմ քեզ, որ քաղաք իջնելուցս օրից այլևս ինձ
անհրաժեշտ է ճար մտածել ապրելու համար: Վերջացավ բոլորը,
ինչ ունեի, մնալու եմ առանց նյութական միջոցի: Ոչ միայն ես, այլև
ընտանիքս, որին փող պիտի ուղարկեմ, գոնե մի բան, այլև ծերունի
(ծեր) քույրս, որ այդտեղ է և իմ ձեռքին է նայում: Դե, որ կողմը
նայում եմ մի ճար գտնելու, էլի աչքս Հայկազյան ընկերությանն է
դառնում: Աղետի մեջ եմք, ես մանավանդ: Մի բան մտածիր, մի կերպ
արա, որ ընկերությունից կարողանամ մի գումար ստանալ, մինչև
տեսնենք ինչ կլինի: Ուրիշ էլ ինչ կարելի է անել: Մի՞թե, հիրավի,
ընկերությունը օգնության չի հասնիլ գրողներին՝ նրանց ամենանեղ
օրերին: Ես մեծ հույս ունեմ, որ դու կհաջողես այդ և այդպիսի
հույսով է, որ մի 15 օր էլ մի կերպ ապրելուց հետո կիջնեմ քաղաք:

Բարեկամական բարևներով՝ Վ. Փափազյան:

Յ. Գ. Փոստ չկա գյուղում: Այս նամակն էլ եկողի հետ եմ
ուղարկում: Դադեթի գյուղական շարժումների ճիշտ կենտրոնում
եմ»:

ԳԱԹ ԹՖ, 2318 (480 լր.):

Հուլիսի 23 - Մամուլը տեղեկացնում է.

«Այսօր երկուշաբթի, հուլիսի 23-ին Յ. Ոսկանյան օպերային
խումբը մասնակցությամբ օր. Ասլանյանի, Սիրանուշի, պ. Աբգար-
յանի, Արաբաբյանի, արքունական թատրոնի երգիչ Մինասյանի
կներկայացնի առաջին հայկական օպերան:

Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպ. 5 արարվածով Հովի. Թու-
մանյանի պոեմայից»:

«Հորիզոն», 1918, թիվ 144:

Հուլիսի 23 - Հայտարարություն մամուլում ՀՀՍՍ կենտրո-
նական խորհրդի ընդհանուր ժողովի մասին.

«Հայոց Հայրենակցական Միությունների Միությունը այսօր՝
հուլիսի 23-ին՝ երեկոյան ժամը 7-ին, Կ. Հ. Բ. ընկերության դահլի-
ճում (Աբաս-Աբաթյան հրապարակ) հրավիրում է Կենտրոնական
խորհրդի ընդհանուր ժողով, որին, համաձայն ընդհանուր ժողովի
հուլիսի 15-ի և 19-ի որոշումների, մասնակցել կարող են երեք ներ-
կայացուցիչ յուրաքանչյուր վարչության կողմից:

Օրակարգն է՝

Գործադիր մարմնի ընտրություն:
Միջոցների խնդիր և ընդհանուր հարցեր»:
«Հորիզոն», 1918, թիվ 144:

Հուլիսի 24 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Լսում են՝

1) Հայ հեղափոխական դաշնակցության ուսանողական միության Թիֆլիսի կոմիտեի գրությունները (տե՛ս հուլիսի 26), որտեղ, ցանկանալով գաղթականական նոր մարմին ստեղծել, կոմիտեն առաջարկում է Միությունների միություն ուղարկել իր ներկայացուցչին, որ կծանոթացնի փախստականական նոր կազմակերպություն ստեղծելու իր նախաձեռնության մասին: Որոշում են հայտնել ուսանողական միության կոմիտեին, որ Միությունների միությունը խրախուսում է ամեն մի օժանդակություն գոյություն ունեցող գաղթականական գլխավոր խորհրդին, այդ գործին մասնակցելու հրավիրում է նաև ուսանողական միության կոմիտեին, բայց գաղթականության գործը տնօրինող նոր կազմակերպության ստեղծումը ցանկալի և անհրաժեշտ չի համարում:

2) Գործադիր մարմնի անդամների և նախագահի ընտրության հարցը: Որոշում են՝ ա) գործադիր մարմնի նախագահության ընտրությունը պետք է կատարի կենտրոնական խորհուրդը, բ) ընտրությունը կատարել գաղտնի քվեարկությամբ:

Առաջադրված թեկնածուներից գործադիր մարմնի անդամներ են ընտրվում՝ Հովհ. Թումանյան, Միանսարյան, Հովսեփ Արղության, Մարգար Ավետիսյան, Արամ Տեր-Գրիգորյան, Դարբինյան: Այս ընտրվածները անձնափոխանորդ են ընտրում Սահակյանին, Ստ. Ջորյանին, Պետրոսյանին, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ՝ Շահվերդյանին, Օհանջանյանին, Դավթյանին: Գործադիր մարմնի նախագահ է ընտրվում Թումանյանը, փոխնախագահներ՝ Հ. Արղությանը և Մ. Ավետիսյանը, գանձապահ՝ Միանսարյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյանը:

Քննելով մի քանի ընթացիկ հարցեր՝ խորհուրդը որոշում է՝ ա) հանձնարարել գործադիր մարմնին ուսումնասիրել միջոցների խնդիրը և զեկուցել խորհրդին, բ) մշակել նակազ և ներկայացնել խորհրդին, գ) հանձնարարել գործադիր մարմնին հայրենակցական

միություններին առաջարկել կապ հաստատել իրենց գավառների հետ և նրանցից կանոնավոր կերպով ստանալ գործնական լիազորություններ, դ) հաջորդ նիստին մասնակցողները պետք է ներկայացնեն գրավոր մանդատներ:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Յուլիսի 25- Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Վարչության անդամներից ներկա են՝ Ստ. Կանայանց, Նիկ. Աղբալյան, Ա. Աբովյան:

Քննարկվող հարցեր՝

1. Հաղորդում Հ. Առաքելյանի սպանության առթիվ Թիֆլիսի Լեհական գրական-արտիստական կոլոյի ցավակցական հեռագրի (տե՛ս հուլիսի 11) մասին:

2. Գաղթականների օգնության ծրագրվող կոչի քննարկում: Այդ կապակցությամբ ժողովը դիմում է Գրողների ընկերությանը՝ ի դեմս նրա նախագահի. «Մեծ պատերազմի ընթացքում նախ Թուրքիայի հայաբնակ գավառները մի քանի անգամ և ապա Կովկասինը ամայացան: Հայ ժողովուրդը տեղահան եղավ իր դարավոր բնակավայրից՝ ապահով անկյուն որոնելու իր անձին ու պատվին, թողնելով իր տունը, հողն ու գույքը:

Ժողովրդի մի մասը զոհ գնաց պատերազմի արհավիրքին իր հայրենիքում, իսկ մյուս մասը, որ կարողացավ ազատվել սրից ու հրից, որք ու գաղթական թափառում է Կովկասի, Ռուսաստանի, Պարսկաստանի ծայրամասերում՝ ենթարկված սովամահի, ամեն տեսակ համաճարակների, շատ շատերը նրանցից բացօթյա և խոտ ճարակելով:

Տասնյակ հազար աշակերտներ որբացած, հարյուր հազարավոր հողագործներ հողազուրկ, անհամար արհեստավորներ ու վաճառականներ գործազուրկ, ուսանողներ և ուսանողուհիներ թափառական:

Մի ամբողջ ժողովուրդ, որ տարիներ շարունակ որոնում է իրավունք և արդարություն, առանց, սակայն, դրան հասնել կարողանալու, ձգտում է նպաստավոր պայմաններ ստեղծել իր քաղաքակրթական հակումների համար: Ուժասպառ է եղած՝ անկարող ինքն իր ուժերով պաշտպանելու և պահպանելու իր գույնը: Այս հանգամանքը ավելի զգալի է դարձնում մեր ազգային աղետը և իրա-

վունք է տալիս Հայ գրողների ընկերությանը, ի դեմս Ձեր, պ. նախագահ, դիմելու մարդկության մտքին ու խղճին, հանուն մարդկության, որ չգիտե ընտրել ազգերին, դառնալ քաղաքակրթությանը, որի համառ և հավատարիմ մշակն է եղել հայ ժողովուրդը, դառնալ մարդկության լուսավոր ապագային, որի տենչն ապրում է ինչպես մեր ժողովրդի, այնպես և մեր սրտում, ձայն բարձրացնել ու գործադրել Ձեր ազդեցությունը՝ թեթևացնելու մեր դժբախտ ժողովրդի ծանր վիճակը»:

Որոշում են՝

ա) Շնորհակալություն հայտնել Կոլոյին հետևյալ բովանդակությամբ. «Председателю Тифлисского Коло Людвигу Мухало-вичу Пекарскому

Правление общества Пис. Арм., получив Вашу телеграмму по поводу убийства редактора газ. «Мшак» А. Аракеяна, тронут Вашим сочувствием, высоко ценю слово осуждения польского Коло злодеяния против человека пера, заявляем свою глубокую благодарность».

բ) Հանձնարարել պ. Կանայանին պատրաստել կոչի գերմաներեն. պ. պ. Հարոյին և Վարդանյանին՝ ֆրանսերեն թարգմանություններն ու տպել գերմաներենը՝ 20, իսկ ֆրանսերենը՝ 200 օրինակ: Այս ամենի կարգադրությունը հանձնարարել Աղանյանին:

Նախագահ՝ Հովհ. Թումանյան:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 47/2:

Հուլիսի 25 - Տպագրվում է Սպ. Մելիքյանի գրախոսությունը «Անուշ» օպերայի բեմադրության (տես հունիսի 30, հուլիսի 2) մասին:

Գրախոսն արձանագրում է, որ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի՝ հուլիսի 19-ին* կայացած ներկայացումը, Թումանյանի պոեմի գեղարվեստական արժեքը երաժշտության լեզվով բացահայտելու առումով, զգալի առաջընթաց է նախորդ ներկայացումների համեմատությամբ: Նկատում է նաև որոշ թերություններ՝ բացատրելով. ««Անուշ» պոեման նույնիսկ եվրոպացի երաժշտի համար, որի հետևող ահագին գրականություն կա, հեշտ վճռելի խնդիրներ չի դնում, իսկ հայկական օպերայի գրելու առաջին փորձի համար հայ երաժշտի առաջ անշուշտ շատ ու շատ անհաղթելի դժվարություններ պիտի հայտնվեին: Մենք պիտի շնորհակալ լինենք, որ գոնե

որոշ չափով որոշ դժվարություններ հարգելի հեղինակը հարթել է և պիտի լինենք ուրախ, եթե հեղինակը, չհամարելով գործը վերջացած, շարունակեր կրկին և կրկին այդ անճաման պոեմայի վերամշակությամբ զբաղվել»:

*) Ըստ նախապես արված հայտարարությունների՝ ներկայացումը պիտի կայանար հուլիսի 2-ին (տե՛ս հունիսի 30, հուլիսի 2):

«Հորիզոն», 1918, թիվ 146:

Հուլիսի 26 - Համազասպ Համբարձումյանի նամակը* Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի Հովհաննես

Վրաց կառավարությանը տրվելիք դիմումը արդեն ստորագրել եք, ուղարկեցեք, որ հանձնեմ: Պարսկաստանի դիմումը թարգմանած է: Թարգմանության համար պետք է վճարել: Բացի այդ հարկավոր է այսօր տպագրել տալ, որի համար նորից գումար է հարկավոր, մինչդեռ մեր կասսայում ոչինչ չկա: Դիմումի անգլերենը եթե արտագրել եք, ուղարկեցեք, որ տպագրել տամ ու հանձնեմ, դրան մույնպես ծախքեր են հարկավոր:

Բարի եղեք կարգադրել, թե առաջիկա ընդհանուր ժողովը, որ լինելու է հինգշաբթի, որտեղ պիտի գումարել, որովհետև բարեգործական ընկերության տանը պահանջում են օրական... (փող չլինելու պատճառով այդ ծախքերը չենք կարողանա ծածկել, հարկավոր է շուտով միջոցների խնդիրը լուծել):

Գրաբերիս ձեռքով բարի եղեք ուղարկել դիմումը և տալ Ձեր կարգադրությունը:

Միշտ Ձեզ հարգող Հ. Համբարձումյան»:

*) Այս նամակի մեկ այլ օրինակ՝ օգոստոսի 26 ամսաթվով և մեկ-երկու մասնակի սրբագրումներով պահվում է ԳԱԹ-ում, 1963 (392/18) թվահամարի տակ:

ԳԱԹ ԹՖ, 1465 (362 լր.):

Հուլիսի 26, Թիֆլիս - Երկտող Համազասպ Համբարձումյանին:

«Հարգելի Համազասպ,

Ուղարկում եմ վրաց կառավարությանը և անգլերենը:՝ Փողը էսօր կամ վաղը կի հոգան:

Հինգշաբթի ժողովը կարող եք անել Արամյանցի տանը No 24 սենյակում:

Ձեր *Հովհ. Թումանյան*»:

*) Խոսքը վերաբերում է ՀՀՄՄ-ի և ՀԳԿԸ-ի ստորագրությամբ աշխարհի ժողովուրդներին ուղղված կոչին, որի անգլերեն տարբերակը պետք է հանձնվեր Թիֆլիսի անգլիական դիվանագիտական միսիայի ներկայացուցչին: Կոչը նպատակ ուներ, ներկայացնելով հայ ժողովրդի ծանր վիճակը, օգնություն ստանալ այդ ժողովուրդների պառլամենտներից, ակադեմիաներից, համալսարաններից, գիտական ընկերություններից: Կոչի բովանդակությունը ընդհանուր առմամբ նույնն է եղել բացառությամբ Թուրքիային և Պարսկաստանին ուղղվածներից:

ԵԼԺ 10, 293, 647-648:

Հուլիսի 28 - Շիրվանզադեի երկտող-դիմումը Թումանյանին.

«Սիրելի Հովհաննես,

Անհրաժեշտ կարիք ունենալով դրամի, շատ խնդրում եմ գրողների ընկերության միջոցներից տալ ինձ փոխարինաբար ութ հարյուր ռուբլի (800):

Քո Շիրվանզադե:

28 հուլիս, 1918 թ., Թիֆլիս»:

ԳԱԹ ԹՖ, 1905 (951):

Հուլիսի 28 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Ն. Աղբալյան, Ստ. Կանայան, Ա. Աբովյան:

Հարցեր՝

1. Խորհրդակցություն տիրող թանկությունների և դրա հետևանքով Գրողների ընկերության տնտեսական ծանր կացության շուրջ:

2. Գաղթականների օգնության կոչի վերջնական տարբերակի քննարկում և հաստատում:

Կարգադրում են՝

Հայ գրողների, գիտնականների, դերասանների և գրական ամեն տեսակ գործիչների համար բացել կոոպերատիվ խանութ: Այդ նպատակով օգոստոսի 1-ին գումարել Ընկերության ընդհանուր ժողով: Հանձնարարել Աղանյանին անել բոլոր անհրաժեշտ կարգադրությունները:

Նախագահ՝ Հովհ. Թումանյան

Քարտուղար՝ Աղանյան:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 47/3:

<Հուլիսի երրորդ տասնօրյակ>, Թիֆլիս - Գրությունն Հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդին.*

«Կարևոր գործով բռնված եմ: Խնդրում եմ ժողովին նախագահի փոխնախագահը:

Յ. Թումանյան»:

*) ՀՀՄՍ կենտրոնական խորհուրդ ստեղծելու որոշումը կայացվել է 1918 թ., հուլիսի 19-ի (տե՛ս) նիստում: Դա փոխարինելու էր ՀՀՄՍ վարչությունների ընդհանուր ժողովին: Խորհուրդը (նախագահ՝ Թումանյան, փոխնախագահ՝ Մարգար Ավետիսյան), բաղկացած լինելով հայրենակցությունների երեքական ներկայացուցիչներից, հանդիսանալու էր ՀՀՄՍ գերագույն մարմինը: Խորհուրդը հուլիսի 21-ի նիստում (տե՛ս) գաղտնի քվեարկությամբ ընտրել է յոթ հոգուց բաղկացած գործադիր մարմին Թումանյանի նախագահությամբ:

ԵԼԺ 10, 294, 648:

Հուլիսի 30 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Յ. Համբարձումյան:

Կարդացվում են խորհրդի կանոնադրության և ժողովների նախագի նախագծերը: Որոշվում է առաջարկել գործադիր մարմնին քննել և մշակել վերջնական նախագիծ, ներկայացնել հայրենակցություններից յուրաքանչյուրի, որից հետո՝ խորհրդի քննությամբ:

Կարդացվում է աշխարհի պետություններին և ժողովուրդներին ուղղվելիք դիմումը: Որոշվում է հավանություն տալ դիմումի խմբագրված տարբերակին:

Թումանյանը տեղեկացնում է, թե ինչ բովանդակություն պետք է ունենա Վրաստանին, Պարսկաստանին, Թուրքիային, Ադրբեջանին ուղղվելիք դիմումը: Որոշվում է հանձնարարել գործադիր մարմնին պատրաստել այդ դիմումը և ներկայացնել խորհրդի առաջիկա նիստին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Հուլիսի 31 - Մամուլը տեղեկացնում է.

«Հինգշաբթի, օգոստոսի 1-ին երեկոյան 7 ժամին Կուպեչեսկի բանկի շինության մեջ տեղի կունենա «Հայ Գրողների Ընկերության» արտակարգ ընդհանուր ժողովը:

Օրակարգ

1. Ընկերության անդամների կոոպերատիվ հիմնելը (տե՛ս հուլիսի 28):

2. Ընթացիկ հարցեր:

Վարչություն»:

«Հորիզոն», 1918, թիվ 160:

Օգոստոսի 1 - Թիֆլիսի վաճառականական բանկի շենքում տեղի է ունենում Հայ գրողների ընկերության ընդհանուր ժողով:

Որոշվում է Ընկերության անդամների համար բացել կոոպերատիվ խանութ: Գործը կազմակերպելու համար ընտրվում է մի մասնաժողով:

«Մշակ», 1918, թիվ 151:

Օգոստոսի 6 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Վարչության անդամներից ներկա են՝ Գ. Աղանյան, Ստ. Կանայան, Ն. Սարգսյան:

Լսում են՝

Վարչության նախագահ Թումանյանի զեկույցը, որ Ընկերության գանձարանը դատարկ է, բայց անվերջ դիմումներ են լինում նպաստների համար: Բացի այդ արդեն ծրագրված (տե՛ս հուլիսի 28) կոոպերատիվի համար անհրաժեշտ է որոշ գումար՝ հիմնական ծախսեր անելու: Եվ որովհետև Հայկազյան ընկերությունը այդպիսի ծախսերի իրավունք չունի, ուստի մնում է դիմել հայ Ազգային խորհրդին, որ նա 100 հազար ռուբլի գումար հատկացնի հայ գրողների կարիքները հոգալու համար:

Որոշում են վարչության միաձայն համաձայնությունը տալ նախագահի առաջարկությանը և դիմել Հայոց Ազգային խորհրդին հարյուր հազար ռուբլի տրամադրել Ընկերությանը՝ հիշյալ նպատակի համար:

Նախագահ՝ Հովհ. Թումանյան:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 47/4:

Օգոստոսի 8 - Գառնիկ Քալաշյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից:

Շնորհակալ է բանաստեղծից նրա ուղարկած 150 ռուբլու համար: Բայց 15 օր է հիվանդ պառկած լինելով՝ արդեն «10-ը այդքան գումար» է ծախսել: Մոտ 3000 ռ. ստանալիք ունի «Հայաստանի նախկին կոմիսարիատի ընկերությունից», բայց դեռ չի ստացել: Խնդրում է. «Եթե որևէ հնար կա, այսօր կամ վաղը մինչև կեսօր 1-ը ինձ մի փոքր փող, շուրջ 200-300 ռուբլի գումար հասցնեք, որ ես 3-4

օր կարողանամ առանց արյուն պղտորելու պառկել: Թե չէ այսօր կրիզիսիս 4-րդ օրն էր, և ես փողի համար ստիպված տանից դուրս եմ եկել և մրսել:

Հարգանք՝ Ձեր՝ Գ. Քալաշյան:

ԳԱԹ ԹՖ, 2345 (1199):

Օգոստոսի 8 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը:

Նախքան օրակարգին անցնելը լսում են զեկույցներ Բակուրյանում և Ծալկայում ապաստանած մոտ 60 հազար փախստականների օրհասական կացության մասին:

Հայտարարվում է նիստի օրակարգը՝ 1) գաղթականության խնդիրը, 2) վիրահայ Ազգային խորհրդի նիստերին մասնակցության հարցը, 3) միջոցների հարցը, 4) ընթացիկ հարցեր:

Այս հարցերի շուրջ քննարկումներից հետո որոշում են՝

Գործադիր մարմինը Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Տաճկաստանի կառավարությունների ներկայացուցիչներին է հանձնում իր մշակած դիմումը և բանավոր խնդրում, որ արագացվի փախստականների՝ հայրենիք վերադառնալու խնդրի լուծումը:

Յուրաքանչյուր հայրենակցություն իրավունք ունի իր գավառի կարիքների համար բացառիկ հուշագրեր ներկայացնելու հայոց կառավարության դիվանագիտական ներկայացուցչին. բացառիկ համարվում է այն հուշագիրը, որի հետաձգումը կարող է բացասական հետևանքներ ունենալ ժողովրդի համար:

Հանձնարարել Աբելյանին առաջիկա նիստում հանդես գալ վիրահայ Ազգային խորհրդի հետ գործակցելու օգտին զեկուցումով և հիմնավորել այդ տեսակետը, իսկ Դարբինյանին հանձնարարվում է հանդես գալ հակափաստարկներով և մույնպես հիմնավորել դրանք:

Հաջորդ նիստը նշանակել օգոստոսի 15-ին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Օգոստոսի 10, Թիֆլիս - Տպագրում է («Հորիզոն», 1918, թիվ 158) «Անդրանիկը և Ղարաքիլիսան» թղթակցությունը.

«Ղարաքիլիսայի անկման օրից սկսած անդադար մարդիկ են պատահում, որոնք դատապարտում են Անդրանիկին, թե Ղարաքիլիսայի պատերազմի ժամանակ նա, խոշոր ուժերով, էնքան մոտիկ՝

Դսեղ նստած, մինչդեռ եթե օգնության հասներ Դվալից, պատերազմը բոլորովին ուրիշ ելք կունենար:

Այո՛, միանգամայն ճշմարիտ են ասում, որ եթե Անդրանիկը Լոռու կողմից, Դվալից օգնության հասներ, պատերազմը անկասկած ուրիշ ելք կունենար, բայց բոլոր դատապարտողները մի բան չգիտեն, որ հենց եղպես էլ ծրագրված էր և կատարվելու վրա էր, երբ զինվորական բարձր հրամանատարությունից հրահանգ եկավ Անդրանիկին՝ մնալ Դսեղ և պաշտպանել երկաթուղու գիծը:

Դսեղից տրված տեղեկության հետևանքով մինչև էս հրամանը փոխվեց, արդեն երրորդ օրն էր և գրեթե միաժամանակ եկավ Ղարաքիլիսայի անկման բոթը».*

*) Ժամանակակիցների վկայությամբ Ղարաքիլիսան մի քանի օր տևած ուժեղ դիմադրությունից հետո հանձնվել է 1918 թ. մայիսի 28-ին:

ԵԼԺ 7, 354-355, 648:

Օգոստոսի 10 - Մամուլում հրապարակվում է Թումանյանի երկտողը.*

«Ալեքսանդրապոլից Թիֆլիս հասած մի մարդ, որ ներկայումս ծառայում է տաճիկների մոտ, Ալեքսանդրապոլը տաճիկների կողմից գրավելուց անմիջապես հետո առիթ է ունեցել մեկնել Կարս: Նա պատմում է, որ Կարսում այրված են հետևյալ շենքերը՝ հույն Կիրակի Զիլինգարովի խանութները, այստեղից մինչև Պոլիցեյսկայա փողոցի բոլոր խանութները, Բայրամ-Փաշայի կամուրջի շրջանում բոլոր խանութները, Ղաֆաֆյանների և Էլբակյանների խանութները մինչև խարիտովի տները... Կարսում մնացել են միայն Թևոս Մազմանյանի խանութները, որը լինելով պայտազործ, տաճիկները աշխատեցնում են և վերաբերվում են լավ»:**

*) Խմբագրությունը ծանոթագրում է. «Խմբագրությունն պ. Զ. Թումանյանի երկտողը որոշեց տպագրության տալ՝ գտնելով, որ պատմության համար այդ կռիվների վկաների տված ցուցմունքներն իրենց որոշ արժեքը պիտի ունենան»:

**) Պատերազմի հետևանքով արևմտահայության կրած զրկանքների մասին նաև մասնավոր մարդկանց այսպիսի վկայություններն են հիմք տվել Թումանյանին գրելու «Դիմում հայ ժողովրդին» կոչը (տե՛ս դեկտեմբերի 18):

«Հորիզոն», 1918, թիվ 158:

<Օգոստոսի առաջին կես>, Թիֆլիս - Հայ գրողների ընկերության անունից պաշտոնական նամակ Երևան՝ Հայաստանի վերածնության կոմիտեին.

«Հայ գրողների ընկերությունն իր հիմնադրության օրից հենց առաջին ընդհանուր ժողովում ընդունեց մի որոշում - երբեք մասնավոր դիմումներ չանել նյութական միջոցների համար, և եթե հարկ լինի երբևէ դիմում անել, ապա դիմել ազգային-հասարակական մարմինների: Չնայելով էս որոշումին, Հայ գրողների ընկերությունը մինչև էսօր դիմում չի արել, նույնիսկ ազգային-հասարակական մարմիններին: Բայց այժմ, կյանքի ծանր պայմանները ստիպում են միջոցների դիմել առանց էն էլ ծանր հայ գրական մարդկանց վիճակը թեթևացնելու: Վերջերս էլ գրողների ընկերությունը որոշում կայացրեց բանալ կոոպերատիվ, օգնելու համար թե իր անդամներին և թե առհասարակ մեր մտավորականությանը, բայց դրա համար էլ միջոցներ պիտի գտնել: Եվ ահա, էս ամենը հայտնելով հարգելի կոմիտեիդ, էն հավատով, թե ինչքան բարձր եք նկատում հայ գրողի և գրողների ընկերության բարձր կուլտուրական արժեքն ու կարևորությունը, խնդրում եմ մի հիսուն հազար ռուբլի գումար հատկացնել Հայ գրողների ընկերությանը հիշյալ նպատակների համար»:

Անշուշտ քաջ հայտնի է կոմիտեիդ՝ ինչ գեղեցիկ դեր են կատարում վերջերը մեր կյանքում հայոց հայրենակցական միությունները, օգնության հասնելով մեր զավակներին, թե կուլտուրական կյանքի, թե ինքնապաշտպանության գործում և թե, մանավանդ, համերաշխության և բարի դրացիական հարաբերություններ հաստատելով մեր հարևան ժողովուրդների հետ:

Սակայն միություններին էսքան լայն գործունեության համար միջոցներ են պակասում, և միությունները չեն դիմում հանգանակության ի նկատի ունենալով, որ արդեն հանգանակություն չատ է կատարվում մեր ժողովրդի մեջ: Եվ որովհետև հայ վերաշինության կոմիտեի նպատակն է հատկապես մեր ժողովրդին օգնության հասնել, էդ պատճառով էլ Հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհուրդը, դիմելով հարգելի կոմիտեիդ, խնդրում է հատկացնել իրեն մի քանի հազար ռուբլի՝ հաջողեցնելու իր կարևոր ձեռնարկությունները էս տազնապալի օրերում հայ ժողովրդին օգնելու համար»:

*) Կոմիտեն մերժել է Գրողների ընկերության այդ փոխառությունը՝ պատճառաբանելով, թե միջոցներ չունի:

**) Վերջին երկու պարբերությունները գրված են ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի կողմից:

ԵԼԺ 10, 294-295, 649:

Օգոստոսի 15 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը:

Մտքերի փոխանակությունից հետո որոշվում է հաջորդ նիստը նշանակել օգոստոսի 20-ին՝ այդ մասին հայտարարելով մամուլում:

Այդ նիստին քննարկել՝

Վրաստանի հայոց Ազգային խորհրդում Միության կողմից ներկայացուցիչ ուղարկելու խնդիրը:

Հայ ժողովրդական կուսակցության հրավերն ուղարկել բոլոր հայրենակցական միությունների վարչություններին:

Կանոնադրության և նակագի նախագծերը բազմացնել և ուղարկել բոլոր հայրենակցությունների վարչություններին:

Անդրադառնալ նաև ընթացիկ հարցերի:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Օգոստոսի 20 - Հաղորդագրություն մամուլում.

«Այսօր՝ երեկոյան ժամը 7-ին, Կ. Հ. Բ. Ընկ. տան մեջ կկայանա Հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի նիստը. Օրակարգն է՝ ա) Վրաստանի հայոց ազգային խորհրդում ներկայացուցիչներ ունենալու խնդիրը, բ) Միջոցների խնդիրը և գ) Ընթացիկ հարցեր: Խորհուրդը հրավիրում է բոլոր հայրեն. միություններին ուղարկել իրենց ներկայացուցիչներին»:

«Մշակ», 1918, թիվ 164:

Օգոստոսի 20 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը:

Հայտարարված օրակարգից հասցնում են քննարկել միայն Վրաստանի հայոց Ազգային խորհրդի հետ համագործակցելու խնդիրը: Առաջարկվում են հարցին վերաբերող մի քանի բանաձևեր, որոնցից ձայների մեծամասնությամբ անցնում է այս մեկը. «Ժողովը, լսելով Համբարձումյանի բողոքը Վրաստանի հայոց ազգային խորհրդի անիրավականության դեմ՝ իբրև ոչ ժողովրդական անմիջական ներկայացուցիչներից կազմված մի հիմնարկության, հաշտվելով խորհրդի գոյության հետ ներկա պայմաններում, անցնում է ընթացիկ հարցերին»:

Այնուամենայնիվ հարցի շուրջ ծավալվում են բուռն բանավեճեր: Վիրահայոց Ազգային խորհրդի կազմի վերաբերյալ քննադատական դիտողություններով հանդես է գալիս Պ. Աբելյանը: Այդ դիտողությունները մեկ առ մեկ հերքող ելույթով հանդես է գալիս խորհրդի անդամ Դարբինյանը: Վերջիվերջո քվեարկության է դրվում հիմնական հարցը՝ այդ խորհրդում ներկայացուցիչներ պետք է ունենալ, թե ոչ: Դեմ արտահայտվում են Թումանյանը, Հ. Արղուրյանը և ուրիշներ, կողմ են արտահայտվում Մ. Ալավերդյանը, Աղաբաբյանը, Ամատունին, Շահվերդյանը: Չայների մեծամասնությամբ (6 - 7) անցնում է երկրորդ տեսակետը:

Որոշվում է Վրաստանի հայոց Ազգային խորհուրդ ուղարկել 8 ներկայացուցիչ: Ներկայացուցիչների ընտրությունը հետաձգել՝ սպասելով Ազգային խորհրդի բացմանը, որից հետո միայն հայտարարել Միության մասնակցության մասին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Մինչև օգոստոսի 22 - ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի անունից գրում է «Народам и государствам всего мира» դիմում-կոչը.

«Вследствие сложных действий имевших место на Кавказском фронте,- мирное армянское население, бросившее свои насиженные гнезда, лишенное средств существования, обреченное на гибель, гонимое голодом и холодом стало на гибельный путь беженства и оставленное на произвол судьбы, гибнет от эпидемий, преследований и множества иных бедствий.

Предотвратить эту гибель народа и оказать ему действительную помощь выше сил и средств многострадального армянского народа.

И потому Союз Армянских Землячеств, соединяющий в своем голосе волю всех армянских провинций Закавказского Края, обращаясь к великим просвещенным Государствам и народам, пребывает в твердой уверенности, что они не пожелают в эту трудную минуту быть безучастным зрителем кровавой трагедии и гибели его, и не откажут во имя гуманности и человеколюбия, придти на помощь народу доказавшему свою способность к культуре и прогрессу.

Посему Союз Союзов настоящим обращается к великому Русскому* народу, в лице его Правительства и настоятельно

просит о посильной материальной и моральной помощи гибнущему народу.

Председатель:**

Секретарь: А. АМБАРЦУМЯН».

*) Այս նույն տեքստը, միայն անունը փոխած, ուղարկվել է նաև մյուս պետություններին:

**) Պահպանված միակ մեքենագիր տարբերակի վրա Թումանյանի ստորագրությունը չկա, բայց անկասկած տեքստի հեղինակը նա է, քանի որ, իբրև ՀՀՍՍ կենտրոնական խորհրդի նախագահ, բոլոր կարևոր փաստաթղթերը ինքն էր ձևակերպում ու շարադրում:

ԵԼԺ 7, 355-356, 648-649:

Օգոստոսի 22 - «Воззвание к народам мира» վերնագրով տպագրվում է Կովկասում Գերմանիայի պատվիրակության նախագահ գեներալ Ֆոն-Կրեսսի հետ ՀՀՍՍ կենտրոնական խորհրդի նախագահ Հովի. Թումանյանի պաշտոնական գրույցի շարադրանքը:

Սկզբում տեղեկացվում է, որ ՀՀՍՍ կենտրոնական խորհուրդը և Հայ գրողների ընկերությունը* կոչով դիմել են աշխարհի ժողովուրդներին ու պետություններին՝ նյութական ու բարոյական օգնություն խնդրելով՝ «страдающему армянскому народу»: Կոչի տեքստը բոլոր դեպքերում նույնն է, միայն Թուրքիային, Պարսկաստանին, Վրաստանին և Ադրբեջանին ուղղվածները մի փոքր այլ կերպ են խմբագրված:

Այնուհետև բերվում է գրույցի շարադրանքը. «На днях председатель общества писателей армении и союза армянских землячеств поэт Ов. Туманян посетил главу германской делегации генерала Фон-Крессу и вручил ему текст воззвания с просьбой передать его правительству и народу Германии.

Маститый поэт был очень любезно принят ген. Фон-Крессом в продолжительной беседе, длившейся с лишком 11/2 часа.

Ов. Туманян детально ознакомил ген. Фон-Кресса с положением армянского народа и с его неотложными нуждами. При этом генерал выказал основательное знание и ясное представление о положении дел на Кавказе, о взаимоотношениях народов Закавказья и пр. Во время беседы были затронуты вопросы послужившие темой воззвания и, главным образом, беженский вопрос. Конкретно просьба Ов. Туманяна к ген. Фон-Крессу, как представителю Германии, по беженскому вопросу заключалась

в том, чтобы беженцам было разрешено вернуться на свои места и была бы возвращена им половина хлеба, оставленного в отошедших к Турции областях. Ген. Фон-Кресс обещал всевозможное содействие в разрешении этого вопроса.

Коснулись вопроса об устанавлении более нормальных отношений между турками и Азербайджаном, с одной стороны, и Арменией – с другой, ген. Фон-Кресс заметил, что урегулированию этих отношений препятствует Андраник различными своими выступлениями. На это Ов. Туманян ответил, что, во первых, Андраник действует без ведома и согласия правительства Армении и, во вторых, в его выступлениях его сильно поддерживают сами турки. При этих условиях никто не может воздействовать на него.

Как так? – удивился генерал Фон-Кресс.

Очень просто,- последовал ответ.- Турецкое правительство не разрешает беженцам вернуться на свои места. С другой стороны, оттуда, где утверждают турки, они собирают и увозят неизвестно куда армянскую молодежь. И вот голодные, гонимые беженцы и уstraшенная молодежь тысячами собираются вокруг народного героя, ища у него защиты. Устранить эти причины, и силы его сами собой растают.

Генерал Фон-Кресс коснулся между прочим и англофильски настроений армян, что по его словам очень странно, так как армяне ничего не получили до сих пор от англичан.

Очень понятно и это,- ответил Туманян.- Англичане и французы постоянно давали нам обещания и естественно, что мы ожидали, что они придут когда нибудь и исполнят свои обещания. От Германии же мы никогда ничего не слышали и не думали, что когда-нибудь Германия появится на Кавказе. А теперь оказалось, что пришли не те, кто об этом все время говорил, а те, которые ничего об этом не говорили. Для нас одинаковы все великие народы Европы. Наши требования, тем более теперь, сводятся к обеспечению жизни и имущества нашего народа, предоставления ему возможности культурного развития, так что такой великой державе, как Германия не представляет труда исполнить эти требования. Ген. Фон-Кресс,

очень сочувственно относился к воззванию, обещал немедленно передать текст воззвания в Берлин своему правительству.

В тот же день Ов. Туманян представил австрийскому представителю г. Франкельштейну воззвание к Австрии. Г. Франкельштейн также очень внимательно отнесся к Ов. Туманяну и обещал незамедлительно передать воззвание в Вену».

*) Ըստ թերթի հաղորդման՝ Գրողների ընկերության կոչը, ի տարբերություն ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի կոչի, ուղղված է եղել բոլոր երկրների պառլամենտներին, ակադեմիաներին, համալսարաններին, գիտական ընկերություններին և այլն:

ԵԼԺ 7, 551-553, 689:

Օգոստոսի 23 - Ռ. Պալասանյան (արևմտահայ ուսուցիչ) ստորագրությամբ նամակ թուրքացիներին՝ Թիֆլիսից.

«Հարգելի պ. Հ. Թումանյան,

Թիֆլիսի արևմտահայ ուսուցչ. միության վարչությունն ձեռնարկած է կազմակերպել դասախոսություններ, նպաստելու համար ուսուցիչներու մտավոր զարգացման և մասամբ արևելահայ միությանը ցույց տալու ողբալի վիճակի հասած մեր ուսուցիչներուն:

Ուստի կոչմե՛ն Ձեզ, խնդրելով մի դասախոսության ձայն... Միության Վարչությունը հուսով է, որ չպիտի մերժեք մեր այս դիմումը:

Դասախոսության վայրը կլինի Հ. Հ. Դ. ակումբը: Նյութը և դասախոսության օրը կթողնինք Ձեր ընտրության:

23 օգոստոս, 1918, Թիֆլիս»:

ԳԱԹ ԹՖ, 1927 (187 III ց.):

Օգոստոսի 24 - Մ. Դարբինյանի բողոք-հայտարարությունը մամուլում.

«Ինձ՝ որպես Վ.Հ.Ա. խորհրդի (ժողովի) անդամի, հետաքրքրում է այդ հանգամանքը,* և ցանկալի է գիտենալ, թե ովքե՞ր են էդ «ոչ զարգացած» ուղեղների տերերը, և էդ ո՞ր կուսակցությունն է, որ մի այդպիսի պատասխանատու հիմնարկություն է ուղարկում խակ ուղեղի տեր պատանիների:

Կարծում եմ, որ դուք քաղաքացիական քաջություն կունենաք հրապարակ հանելու էդ «ոչ զարգացած ուղեղով պատանիների» անուն-ազգանունները՝ հիշելով նաև, թե որ կուսակցությանն են պատկանում նրանք»:

*) Խոսքը վերաբերում է ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի՝ օգոստոսի 20-ի նիստում Պ. Աբելյանի այն հայտարարությանը, թե Վրաստանի հայոց «ազգային խորհրդի անդամների մեջ կան նույնիսկ պատանիներ, որոնց ուղեղն անգամ բնախոսապես զարգացած չէ» (այդ նիստի արձանագրության մեջ այս խոսքերի մասին ակնարկ չկա.- Խմբ.):

«Մշակ», 1918, թիվ 168:

Օգոստոսի 27 - Ծիրանավոր որբանոցի սան Գուրգեն Հարությունյանը թունամյանին է ներկայացնում իր ոտանավորների և շարադրությունների տետրը:

ԳԱԹ ԹՖ, 2770 (1542):

Օգոստոսի 29 - Տեղի է ունենում ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի հերթական նիստը: Նախագահում է թունամյանը:

Նախքան օրակարգին անցնելը՝ լսում են Պ. Աբելյանի հայտարարությունը Մ. Դարբինյանի՝ «Մշակում» տպագրած բաց նամակի (տե՛ս օգոստոսի 24) մասին: Մտքերի փոխանակությունից հետո որոշվում է այդ առիթով Մ. Դարբինյանին հայտնել դժգոհություն և խնդրել նախագահությանը այս մասին բացատրությամբ հանդես գալ «Մշակ» թերթում (տե՛ս սեպտեմբերի 1):

Անցնելով օրակարգին և լսելով գործադիր մարմնի գեկույցը միության միջոցների մասին՝ խորհուրդը որոշում է առաջարկել գործադիր մարմնին կազմել նախահաշիվ և ներկայացնել խորհրդի քննությանը:

Խորհուրդը որոշում է նաև շարունակել Միությունների միության ծրագրի համերաշխության սկզբունքի հետևողական իրագործումը՝ ժողովրդի լայն խավերում արծարծելով այն միտքը, թե ո՛չ քաղաքական հանգամանքները, ո՛չ էլ պատերազմական դրությունը փաստացի փոփոխություններով չպետք է կարողանան քայքայել համերաշխության սկզբունքը. հարևան ժողովուրդները պարտավոր են ապրել հաշտ, համերաշխ և միանգամայն լոյալ փոխադարձ վստահության մթնոլորտում:

ՀԱԱ, ֆ. 245. ց. 3, գործ 4:

Օգոստոսի 30 - Գրում է «Կյանքն ահա...» քառյակը:
ԵԼԺ 2, 74:

Սեպտեմբերի 1 - Տպագրում է «Քանի~ ձեռքից են վառվել», «Ինչքան ցավ են տեսել ես», «Երագունս մի մաքի», «Լինե՛ր դալար մի անկյուն», «Երկու շիրիմ իրար կից» քառյակները:

«Ժողովրդի ձայն», 1918, թիվ 1:

Սեպտեմբերի 1 - ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի պաշտոնական մամակը «Մշակի» խմբագրությանը.

««Մշակի» 168-ում Հայրենակցական Միությունների Միության խորհրդի անդամ Մ. Դարբինյանը զետեղել է մի բաց մամակ (տե՛ս օգոստոսի 24)՝ ուղղված նույն խորհրդի անդամ պ. Աբելյանին, որի մեջ վերագրում է նրան Հայրենակցական Միությունների խորհրդի՝ օգոստոսի 21-ի նիստում արտասանած այս դարձվածքը,- «Կուսակցությունների կողմից Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդն են մտել պատանիներ, որոնց ուղեղը դեռևս ֆիզիոլոգիապես զարգացած չէ»:

Հայտնելով, որ նախ Մ. Դարբինյանը խորհրդի հիշյալ նիստում կատարված փաստը ճիշտ չի բերում, պ. Աբելյանը, խոսելով Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի կազմի թերությունների մասին, ասաց. «Ազգային խորհրդի անդամների մեջ կան նույնիսկ պատանիներ, որոնց ուղեղն անգամ բնախոսապես զարգացած չէ», և երկրորդ՝ որ Աբելյանը ինքն իր արտահայտությունը ինքնաբերաբար ետ վերցրեց, ասելով, որ նա չի կամենում այդպիսի սուր դարձվածքներով վնասել ժողովի արժանապատվությանը, և դրանով միջադեպը համարվեց սպառված: Խորհուրդն իր օգոստոսի 29-ի նիստում գտավ, որ պ. Մ. Դարբինյանը անհարմար պետք է համարեր հրապարակական քննության նյութ դարձնել փակ նիստում արտասանված և ինքնաբերաբար ետ վերցրած մի անհաջող արտահայտություն:

Նախագահ՝ *Հովհ. Թումանյան*

Քարտուղար՝ *Հ. Համբարձումյան*:

«Մշակ», 1918, թիվ 174:

Սեպտեմբերի 2 - Հակոբ* ստորագրությամբ մամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Պոլսից.

«Սիրելի Հովհաննես,

Նախ շատ ու շատ բարևներ քեզ, բոլոր ընտանիքիդ և ընդհանուր բարեկամներիդ: ... Երկար չեն գրում, ... Չիթունու կինը եկել էր մեզ մոտ, ասաց, որ ամուսնուց մամակ ունի աքսորատեղից,

խնդրում է օգնել: Նա քեզ հիշեց (կինը) և խնդրեց որ գրեմ, թերևս մի կերպ կարողանաս մի գումար մնացնել նրա ընտանիքին (5 զավակ ունի):

Ձերն բարևներով՝ քո Հակոբ»:

*) Հայոց կենտրոնական ազգային խորհրդի քարտուղար Հակոբ Քոչարյանն է (տե՛ս 1915, սեպտեմբերի 2):

ԳԱԹ ԹՖ, 1455 (761):

Սեպտեմբերի 3 - Հայ ժողովրդական կուսակցության կենտրոնական կոմիտեի և «Ժողովրդի ձայն» թերթի խմբագրության շնորհակալական նամակը Թումանյանին.

«Հարգարժան բանաստեղծ Հովհաննես Թումանյան,

Հայ ժողովրդական կուսակցության կենտրոնական կոմիտեն և «Ժողովրդի ձայնի» խմբագրությունը սրտի անհուն բերկրությամբ ողջունում է Ձեր աշխատակցությունը մեր թերթին և հայտնում շնորհակալություն, որ հենց առաջին համարից զարդարեցիք «Ժողովրդի ձայնի» էջերը Ձեր տաղանդավոր ու շողերիկ արտահայտություններով:

Ցանկանալով Ձեզ ուժ ու եռանդ՝ սպասում ենք Ձեր նոր քառյակների* ու ստեղծագործություններին առհասարակ»:

*) Թումանյանի քառյակներից մի քանիսը առաջին անգամ տպագրվել են «Ժողովրդի ձայնում»:

ԳԱԹ ԹՖ, 1471 (361 լր.):

Սեպտեմբերի 3 - Տեղի է ունենում ՀՀՄՄ ընդհանուր ժողով:

Նախագահում է Թումանյանը:

Բացելով ժողովը՝ նախագահողը ներկայացնում է հայ գաղթականության, մասնավորապես արևմտյան ռազմաճակատից, այսինքն՝ Գերմանիայից և Ավստրիայից վերադարձած հայ գեղիների տխուր վիճակը՝ առաջարկելով հոգուտ նրանց կազմակերպել միավազ հանգանակություն:

Մտքերի փոխանակությանը մասնակցողների մեծ մասը պաշտպանում են Թումանյանի առաջարկը: Դեմ արտահայտվողները ավելի նպատակահարմար են համարում պարտադիր տուրքի ձևը: Կողմ արտահայտվողները առաջարկում են նաև հանգանակության իրականացման միջոցներ՝ նշանակել գաղթականության օրկամ շաբաթ, գաղափարը լայնորեն արժարժել մամուլում, կազմակերպել դասախոսություններ և այլն:

Քվեարկությամբ միաձայն անցնում է Թումանյանի առաջարկը: Որոշվում է հանձնարարել գործադիր մարմնին մշակել հանգանակության ձևը և այդ մասին զեկույց ներկայացնել կենտրոնական խորհրդի առաջիկա նիստին:

Պ. Աբելյանն առաջարկում է գաղթականության խնդիրը ամբողջ ծավալով քննելու համար գումարել հատուկ խորհրդակցություն՝ Միությունների միության, վիրահայ Ազգային խորհրդի, փախըստականական գլխավոր խորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հովսեփ Արղությանն առաջարկում է սահմանափակվել միայն Միությունների միության և խորհրդի անունից դիմում հղելով հիշված խորհրդակցությանը, որ կազմված պիտի լինի հայ հասարակության ներկայացուցիչներից: Արղությանի այս առաջարկն ընդունվում է միաձայն:

Գործադիր մարմնի նիստը մշանակվում է սեպտեմբերի 4-ին, Թումանյանի տանը:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Սեպտեմբերի 5 - Տեղի է ունենում ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը:

Հանգանակության մասին գործադիր մարմնի զեկույցին և կազմած ծրագրին ժամոթանալուց հետո կատարվում է Միության հանգանակությունը հօգուտ գաղթականների, հավաքված գումարը հանձնվում է գաղթականական գլխավոր խորհրդին:

Հանգանակության հաջողությանը նպաստելու նպատակով քայլեր են ձեռնարկվում դասախոսությունների կազմակերպման, մամուլում կոչերի և հոդվածների հրապարակման ուղղությամբ: Հանգանակության թերթերը բաժանվում են բանկերին և վաճառականական դասին:

Խորհուրդը որոշում է՝

1) Հաստատել գործադիր մարմնի մշակած հանգանակության ծրագիրը:

2) Գործադիր մարմնին հանձնարարել պատրաստել գաղթականության գործերի կազմակերպման ծրագիր և ներկայացնել խորհրդի առաջիկա նիստի քննարկմանը:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Սեպտեմբերի 6 - Համազասպ Համբարձումյանի նամակը Թումանյանին թիֆլիսից:

Գրում է. «Սիրելի Հովհաննես,

Թերթիկները արդեն պատրաստեցի. երկու-երեք օրինակ հետո պատրաստ կլինի: Այսօր-վաղը կաշխատեն պատրաստել կոչի նախագիծը, որը կհամեմատեք Ձեր կազմածի հետ: Մինչև այժմ ծախսված է - և այդ ծախքը չի ծածկած փող չլինելու պատճառով - երկու հարյուր վաթսունմեկ ռուբլի 261 ռ. (հաշվելով թերթիկների ծախքը – 200 օրինակ և վաղուց մասսային վճարելի տաս ավելին): Բացի այդ անհրաժեշտ է մի քանի մանր-մուկ ծախքեր ևս անել – օրինակ, արձանագրությունների համար մատյան և այլ մանր-մուկ բաներ գնելու համար: Եթե դուք այժմ հնարավորություն ունեք, մի փոքրիկ գումար ուղարկեցեք այդ ծախքերը ծածկելու համար մինչև գանձում փող լինելը: Ձեր ուղարկելիք փողի մանրամասն հաշիվը կգրեմ: Փողը կարելի է հանձնել տղայիս: Վաղը երեկոյան կլինի գործադիր կոմիտեի նիստը:

Ձեր Համազասպ Համբարձումյան»:

Վերջում ներկայացնում է կատարված ծախսերի հաշիվը:

ԳԱԹ ԹՖ, 1464 (362 լր.):

Սեպտեմբերի 7 - Լևոն Տեր-Հարությունյան ստորագրությամբ նամակ թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից:

Տեղեկացնում է, որ «17 թ, հոկտեմբերին» ՀԳԿԸ հրատարակչական վարչությանն է ուղարկել իր «աշխատությունը»՝ «փոքրիկ կտորներ», բանաստեղծություններ և այլն: Եվ վերջում. «Հուսով, որ դեռևս գոյություն կունենա... խնդրում եմ նեղություն կրեք վերադարձնելու բարեկամիս, պ. Վահագ Կանայանին, որի համար հայտնում եմ նախօրոք անվերջ շնորհակալություններս: Եթե աշխատության կեսը կորցրած չլինեի, այդ նեղությունը չէի պատճառի Ձեզ:

Հարգանքներով՝ Լ. Տեր-Հարությունյան»:

ԳԱԹ ԹՖ, 2216 (1153):

Սեպտեմբերի 7 - Տեղի է ունենում ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի գործադիր մարմնի նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Ներկա են Ախալքալաքի հայրենակցական միության ներկայացուցիչներ Աբելյանը և Օհանջանյանը:

Լսում են Աբելյանի զեկույցը և գաղթականության նոր մարմին ստեղծելու նրա ծրագիրը (տե՛ս սեպտեմբերի 5): Անընդունելի են համարում ծրագրի այն մասը, ըստ որի գաղթականության խորհուրդը պետք է ենթարկվի Հայաստանի կառավարությանը՝ խորհրդի գործունեության միայն որոշ մանրամասներ թողնելով նրա իրավասությանը:

Որոշում են՝

1) Գոյություն ունեցող գաղթականական խորհուրդը պետք է մնա և գործի:

2) Այդ խորհրդի կազմը պետք է համալրել նոր անդամներով:

3) Գլխավոր խորհրդի և Վրաստանի հայոց Ազգային խորհրդի միջև պետք է որոշ կապեր հաստատել:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Սեպտեմբերի 9 - Գրում է «Պատրանք» («Վեր է կացել էն սարում...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 301, 639:

Սեպտեմբերի 11 - Թումանյանի՝ որպես Լոռու, Ղազախի, Շամշադինի, Բորչալուի, Փամբակի ընդհանուր լիազորի հայտարարությունը Հայոց ազգային խորհրդի լիկվիդացիոն կոմիսարիատին.

«Սրա հետ ներկայացնելով իմ անձնական և Ղազախ-Շամշադինի ներկայացուցիչ պ. Նիրակո Ջագիանիի հաշիվը՝ 4964 ռ. 80 կ, խնդրում եմ վճարել:

Հովհ. Թումանյան:

1918 սեպտ.11, Թիֆլիս»:

ԳԱԹ ԹՖ, 2451 (222 III ց.):

Սեպտեմբերի 12 - Տպագրում է («Մշակ, 1918, թիվ 183) «Հայ ժողովրդի կապը Գերմանիայի հետ» հոդվածը:

Նկատելով, որ՝ «մի ազգ մի ուրիշ ազգի հետ շփվում ու կապվում է իր քաղաքական խնդիրներով կամ կուլտուրական փոխադեցություններով»՝ ցավով արձանագրում է, որ՝ «նոր հայությունը քաղաքական կյանք չի ունեցել և իբրև մի քաղաքական մարմին չէր կարող հարաբերություն ունենալ մի որևէ պետության հետ»: Այդ պատճառով էլ, գրում է այնուհետև բանաստեղծը, տարուբերվել է տարբեր կողմնորոշումների միջև՝ մշտապես ապրելով երերուն հույսերի և դրանց փլուզման ծանր հիասթափություններ: Օրինակներ է

բերում պատմությունից՝ կանգ առնելով հատկապես հայկական հարցի վրա, և ավելացնում. «Ահա այսպես, հենց էն գլխից միշտ եղել ենք сквозняк-ների մեջ: Հայկական հարցը ժամանակավորապես ընկել է սրա կամ նրա ձեռքը, հայկական հարցի հետ էլ մեր մեղն է թեքվել այս կամ այն կողմը, ու ամեն մեկի հետ էլ ժամանակավորապես բարեկամանալով, բոլորից էլ կտրվել ենք մշտապես ու շատերի հետ էլ թշնամացել:

Եվ ինչպես ժողովրդական առածն է ասում՝ «Խորովածը չկերած՝ ծխից քոռացանք»»:

Այս ամենի փոխարեն ունեցել ենք կուլտուրական կյանք, որի տերն ու տնօրենը մենք ենք եղել. «Ահա այս կողմից է, որ մենք ազատ ու հաստատուն թանկագին կապեր ունենք մի քանի ազգերի հետ, որոնց մեջ Ռուսաստանն ու Գերմանիան շատ մեծ տեղ ունեն»:

Կանգ է առնում հատկապես հայ-գերմանական գրական-մշակութային կապերի վրա, ընդգծում է գերմանական բարձրագույն կրթօջախների դերը հայ մշակույթի գործիչների պատրաստման գործում: Եվ ընդհանուր եզրակացությունը. «Ինչ խոսք, որ այս բարձր կապով լուսավոր Գերմանիայի հետ կապված հայ ժողովուրդը միշտ կմնա նրան երախտապարտ ու բարեկամ: Սակայն մյուս կողմից էլ բնական ու վայելուչ է, որ Գերմանիան այս թոհ ու բոհի մեջ հովանավորի իր լուսավորության ավազանում մկրտված ժողովրդին, իրան հետ այսքան բարձր կապով կապված ժողովրդին, և դա լինելու է ոչ միայն ըստ ամենայնի օգտակար, այլև միաժամանակ վերին աստիճանի մի գեղեցիկ գործ այս խելագար վերուվարումների մեջ»:

ԵԼԺ 7, 356-358:

Սեպտեմբերի 12 - Տեղի է ունենում ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը:

Լսում են՝

1) Համբարձումյանի հայտարարությունը Ազգային խորհրդի գաղթականական մասնաժողովի՝ փախստականական խորհրդակցություն գումարելու որոշման մասին: Այս մասին լրացուցիչ տեղեկություն են տալիս Տեր-Գրիգորյանը և Արղությանը:

2) Աբելյանի հայտարարությունը խորհրդի այն որոշման իրագործման մասին, որը վերաբերում է Միությունների միության համա-

գործակցությանը Վրաստանի հայոց Ազգային խորհրդի հետ:

Այս հարցերի շուրջ մտքերի փոխանակությունից հետո խորհուրդը որոշում է՝ ա) անմիջապես գրավոր դիմում ուղարկել Վրաստանի հայոց Ազգային խորհրդին՝ անհամաձայնություն հայտնելով ՀՀՄՍ կենտրոնական խորհրդի նախկին որոշման հետ և խնդրելով ընդունել համագործակցության առաջարկը, բ) հանձնարարել Օ-հանջանյանին և Աբելյանին պատրաստել այդ դիմումը և անձամբ ներկայացնել Ազգային խորհրդին:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3. գործ 4:

Սեպտեմբերի 15 - Տպագրում է «Ունց է ժպտում իմ հոգին», «Մի հավք զարկի ես մի օր», «Հիմի բացել են հանդես» քառյակները:

«Ժողովրդի ձայն», 1918, թիվ 13:

Սեպտեմբերի 26 - Մամուլը տեղեկացնում է.

«ԱՅՍՕՐ

Երեկոյան ժամը 7ին, Արամյանի տան No 16 սենյակում (3-րդ հարկում) կկայանա Հայրենակցական Միությունների Միության կենտրոնական խորհրդի նիստը՝ քննելու համար մի շարք կարևոր հարցեր»:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1918, թիվ 141:

Սեպտեմբերի 29 - Տպագրում է «Ինչ ես թռչում խև դև սի՛րտ...», «Հին աշխարհքը ամեն օր...», «Մնացել է բերդը մեզ...», «Ու՛վ իմանա՛ ուր ընկանք...» քառյակները:

«Ժողովրդի ձայն», 1918, թիվ 23:

Սեպտեմբերի 30 - Հայոց Ազգային խորհրդի՝ Վրաստանում գործող գաղթականական բաժնի գրությունը Հայ գրողների ընկերությանը.

«Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի Գաղթականական բաժինը սրանով խնդրում է Ձեզ ուղարկել 2 ներկայացուցիչ՝ մասնակցելու հայ որբերի խնամակալության ու պահպանության հարցի մասին տեղի ունենալիք խորհրդակցության, որ նշանակված է հոկտեմբերի 1-ին երեկոյան ժամը 7-ին, Կովկասի հայ բարեգործական ընկերության դահլիճում:

Սույն խորհրդակցությանը հրավիրվում են Թիֆլիսի բոլոր ազ-

գային-հասարակական այլ հաստատությունների ու կազմակերպիչների ներկայացուցիչները:

Նախագահ գաղթ, բաժնի՝ (ստորագրություն)»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 92/97:

<Սեպտեմբեր> - Գրում է «Ձինվորագրվել են» հոդվածը:

«Ժողովրդի ծայն»-ի* հրատարակության առիթով «Աշխատավոր»-ը** բերում է թերթի աշխատակիցների ցուցակը, որտեղ կա մաս Թումանյանի անունը, և հայտարարում, թե նրանք «զինվորագրվել են»: Հոդվածի գրության առիթը այս վերջին արտահայտությունն է:

Գրում է. «Իհարկե, սա կռվող կուսակցականի լեզու է, վրդովված աղանդավորների տոն է, բայց ուզում եմ ես առիթով մի երկու խոսք ասել:

«Հորիզոնը» իր հաշվետվության մեջ, են էլ միայն իմ մասին, հիրավի ճիշտ էր նկատել, ասել էր, թե իր տեղը չի:

«Ժողովրդի ծայնը» լրագիր է, են էլ ուրիշ կուսակցության բերան. ինձ նման մի անկուսակցական բանաստեղծ մարդու համար ի՞նչ տեղ է սա: Շատ-շատ ես կարող եմ հյուր լինել էնտեղ, թեկուզ և պատվավոր հյուր: Եվ եթե հոդված գրեմ, կարող է են տեսակ հոդված լինի, որ խմբագրությունը ստիպված լինի տակը ծանոթություն դնել:

Բայց էդպես եմ ես և՛ «Հորիզոնում» (որի հետ իմ կապերը չեմ կտրել): Էնտեղ էլ իմ տեղը չի: Էնտեղ էլ հաճախ իմ հոդվածների տակը ծանոթություններ են դրել և կարող են դնել: Էդպես է եղել և էդպես կլինի մաս ուրիշ լրագիրներում: Դրանցից ոչ մեկը իմ տեղը չի, ինչպես և իմ նմանների:

Այո՛, էսպես մարդիկ կան, որոնց տեղը չեք գտնիլ, թեկուզ որոնելով գնաք հասնեք մինչև իրենց տունը:

Ես դրանցից մեկն եմ:

Ահա լրանում է երեսուն տարին՝ ես շարունակ զանազան տեղեր եմ ընկնում, որոնցից ոչ մեկը իմ տեղը չի: Երեսուն տարի է՝ ես որոնում եմ իմ տեղը, դեռ չեմ գտնում, և երեսուն տարի է՝ ես միայն պատրաստվում եմ իմ գործով՝ գրականությունով զբաղվելու, դեռ չեմ սկսել:

Հիմի շատերը կզարմանան, թե ինչպե՞ս թե չեմ սկսել... հապա որ էնքան գրել եք...

Այո՛, ճիշտ է, գրել եմ, բայց ոտի վրա, ի միջի այլոց:

Գրել եմ, երբ իբրև հիվանդ կամ հոգնած մարդ, մի երկու ամսով զնացել եմ մի որևէ ամառանոց հանգստանալու և կամ ավելի հաճախ, երբ հիվանդ անկողնում պառկած եմ եղել: Սրանից էլ սովորություն է դարձել, եթե մի քանի օր հիվանդանում եմ, մոտիկ ծանոթներս ու ընկերներս հարցնում են, թե ի՞նչ եմ գրել:

Բայց ի՞նչն է պատճառը, որ ինչպես իմ նմանները չեն գտել իրենց տեղը, էնպես էլ ես իմ տեղը չեմ գտել, չեմ նստել ու իմ գործը չեմ սկսել, այլ դեռ պատրաստվում եմ...

Դրա պատճառը կասեի, եթե մինը լիներ, և, վերջապես էդ խնդրով զբաղվելու ժամանակն էլ չի»:

Հոդվածով ուզում է միայն «մի բարձր տեսակի ծանր դրամայի վրա ակնարկել և զգուշացնել, որ էս լեզվով չխոսեն էս տեսակ մարդկանց վրա», ապա ավելացնում. «Մենք զինվորներ չենք և չենք կարող զինվորագրվել որևէ թերթի կամ կուսակցության: Եթե դրանց մեջ և դրանց շրջանում էլ լինում ենք, էդ միայն աշխարհագրական հանգամանք է, ուրիշ ոչինչ: Հոգեկան կապ ու աշխատակցություն չկա ընդհանրապես»:

Ինքը «շատ արագ ու թեթև» անցել է գրեթե բոլոր կուսակցությունների միջով, բայց երբեք չի կարողացել «մերվել ու ծուլվել» ոչ մեկի հետ, որովհետև ինքը և իր նմանները չեն կարող ընդունել մի ծրագիր և 40 տարի հետևել դրան, մարդու հոգեբանության ու մտածողության մեջ ժամանակի ընթացքում շատ փոփոխություններ են կատարվում:

Օրինակ. «Մարդը կարծում է, թե քրիստոնեությունն ու եկեղեցին նույն բաներն են: Մի քիչ խորամուխ է լինում և տեսնում է, որ ոչ թե նույն բաները չեն, այլ մինչև անգամ հակառակ բաներ են: Էսօր կարծում է, թե աստված է մարդուն ստեղծել, էգուց տեսնում է, որ, ընդհակառակը, մարդն է աստծուն ստեղծել»:

Կամ. «Կարծում է, թե սոցիալիզմն ու սոցիալիստները նույն բաներն են ու հանկարծ վերահասու է լինում, որ դա էլ քրիստոնեության ու եկեղեցու պես կարող են հակառակ բաներ լինել, և մի սոցիալիստ նույնքան վտանգավոր կարող է լինել սոցիալիզմի համար, ինչպես մի հոգևորական՝ քրիստոնեության համար»:

Բացատրում է, թե ինչու ինքը իրեն ո՛չ լիարժեք քրիստոնյա է համարում, ո՛չ լիարժեք սոցիալիստ. «Ահա քրիստոնեությունը ինձ համար էնքան աստվածային է, բայց ես քաշվում եմ ինձ քրիստոնյա անվանելու: Մարդու աշխատանքի ու վաստակի արդար բաշխման

գաղափարը ինձ համար էնքան սուրբ է ու վսեմ, բայց ինձ սոցիալիստ չեմ անվանել երբեք»։ Բերում է հոգևորականների և սոցիալիստների օրինակներ, որոնց իրական էությունը ոչ մի կապ չունի իրենց քարոզած գաղափարների հետ։

Եվ ամփոփում է ասելիքը, «Էսպես։ Ո՛չ սրանցից եմ, որ սրանց հետ լինեմ, ո՛չ էլ, ինչպես ասի, իբրև քրիստոնյա կամ սոցիալիստ էնքան կատարյալ, որ թեկուզ էն սակավաթիվ սոցիալիստների ու քրիստոնյաների հետ լինեմ, որոնք պակաս չեն կյանքում։

Վերջապես, ինչպես էլ վերջիններիս հարգեմ ու սիրեմ, մենք մի տեսակ հոգեպես տարբեր կլիմաների մարդիկ ենք։ Մինչդեռ մեկի պաշտամունքի կենտրոնը բարոյականությունն է, մյուսի իդեալը ազատ ու արդար հասարակարգը, իմ և իմ նմանների պաշտամունքի առարկան գեղեցիկն է։

Գեղեցիկ որ ասում եմ՝ շատերը գեղեցիկ կին կհասկանան, ինչպես բարոյականություն որ ասում եմք, սեռական ողջախոհություն եմ հասկանում։ Բայց ես քչերի հասկացած գեղեցիկն եմ ասում։

Սրանից հետո ես ինչպե՞ս կարող եմ զինվորագրվել որևէ կուսակցության կամ նրա թերթին»։

Իբրև «եզրափակում» ավելացնում է. «Կուսակցական մամուլը, հիրավի, կուսակցության զինվորն է, կուսակցական մամուլի ամբողջության անդամն ու մասը և մշակ է հասարակական կամ քաղաքական պարզ ու որոշ սահմանված մի գործի, մի ծրագրի, իսկ բանաստեղծը իր խառնվածքով ի ծնե ազատ ու սավառուն մի միտք, միշտ որոնող մի հոգի և ինքնիշխան ստեղծագործող, եթե կուզեք, ամեն մի՞նը մի ջոկ ու առանձին կուսակցություն, եթե առանց կուսակցություն բառի յուրա չեք գնում»։

Վերջում սկսում է բացատրել, թե ինչու ինքը, այնուամենայնիվ, աշխատակցում է «Ժողովրդի ձայն»-ին, բայց ձեռագիրը մնում է անավարտ։

*) Քաղաքական, հասարակական, գրական օրաթերթ, 1918-1919։

**) Գյուղացիական և բանվորական օրաթերթ, 1917-1921։

ԵԼԺ 7, 486-492։

Չոկտեմբերի 2 - Համազասպ Համբարձումյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի Հովհաննես,

Ուղարկում են պատրաստած թղթերը ի թիվս որոնց նաև հանգանակության թերթիկը, խնդրում են բարեհաճեք ստորագրել և վերադարձնել կատարելու համար: Բացի այդ, հարգելի Հովհաննես, խնդրում են միջոցներ ձեռք առնեք միության ծախքերը հոգալու համար, գտնել միջոցներ, որպեսզի հնարավորություն լինի վճարել ինձ խորհրդի և ընդհանուր ժողովի որոշումների համաձայն նշանակած ռոճիկը, որը ես չեմ ստացել հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար, իսկ աշխատանք ինչքան որ եղել է, ես աշխատել եմ կատարել և պետք է ասած, որ միշտ էլ աշխատանք եղել է և բավականին շատ: Ես ստիպված եմ Ձեզ նեղություն տալու միմիայն այն պատճառով, որ այժմ իմ նյութականը չափազանց անմախանձելի դրության մեջ է: Հույս ունեմ, որ այս հարցը կտնօրինեք...

Ձեր Համագասպ Համբարձումյան»:

ԳԱԹ ԹՖ, 1465 (362 լր.):

Հոկտեմբերի 3 - Վրաստանի հայոց Ազգային խորհրդի պաշտոնական գրությունը Հայ գրողների ընկերության նախագահ Հովհ. Թումանյանին.

«Ի պատասխան Ձեր հոկտեմբերի 2-ի գրության, Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի Գաղթականական Բաժինն այսու պատիվ ունի հայտնել Ձեզ ի գիտություն, որ ամսույս 2-ի նիստն այնքան շտապողական եղավ, որ հնարավորություն չունեցանք նախօրոք հայտնել Ձեզ»:

Գրությունն ստորագրել են գաղթականական բաժնի նախագահը և քարտուղարը:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 42:

Հոկտեմբերի 3 - Տեղի է ունենում ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը:

1) Նախագահի առաջարկությամբ խորհուրդը քննարկում է Շուլավերի շրջանում հայերի և թուրքերի միջև ծագած տարածայնությունների ու դժգոհությունների հարցը: Որոշվում է հանձնարարել Շուլավերի հայրենակցական միության վարչությանը միջադեպը հարթելու նպատակով այդ շրջան ուղարկել հատուկ պատգամավոր: Նույնու մերկայացուցիչը այդ առիթով առաջարկում է հարց հարուցել նաև մյուս հայկական գավառներում վնասների, ավերածու-

թյունների, կոտորածների վերաբերյալ քննություն կատարելու մասին:

2) Քարտուղար Համբարձումյանը հայտնում է, որ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի կողմից հրավեր է ստացվել հոկտեմբերի 4-ին ամբողջ կազմով մասնակցելու փախստականական խորհրդակցությանը (տե՛ս սեպտեմբերի 12): Արելյանը բացատրություններ է տալիս խորհրդակցության կազմի ու նպատակների մասին, այն է՝ ա) փախստականների վերադարձը և տեղավորումը, բ) պարտադիր կամ կամավոր տուրքի հարցը, գ) գաղթականական մարմինների կազմակերպման հարցը, դ) որբերի հարցը: Որոշվում է՝ ա) մասնակցել փախստականների խորհրդակցությանը, բ) խորհրդակցությանը գաղթականական մարմինների կազմակերպման հարց չհարուցել, պաշտպանել կամավոր տուրքի գաղափարը, գաղթականների վերադարձի և տեղավորման առաջարկները:

Հովսեփ Արղությանն առաջարկում է Միության միջոցներով մի որբանոց պահել: Որոշվում է խնդիրը քննության դնել առաջիկա նիստերից մեկում:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3. գործ 4:

Հոկտեմբերի 5 - Հաղորդագրություն մամուլում.

«Հայրենակցական Միությունների Միությունը առաջարկ է ստացել Վիրահայ Ազգ. խորհրդից բանալ մի որբանոց Միության հաշվով և անունով (տե՛ս հոկտեմբերի 3)»:

«Մշակ», 1918, թիվ 201:

Հոկտեմբերի 6 - Տպագրում է «Իմ երգը» (*«Գանձեր ունեն անտակ, անժեր»*) բանաստեղծությունը:

«Ժողովրդի ձայն», 1918, թիվ 28:

Հոկտեմբերի 7 - Գառնիկ Քալաշյանի գրությունը թումանյանին.

«Հարգելի պ. Թումանյան,

Ջերմագին խնդրում եմ, ինձ եթե որևէ հասանելիք լինի, տաք կնոջս՝ Փիրուզա Քալաշյանին՝ ինձ հասցնելու համար»:

ԳԱԹ ԹՖ, 2346 (1200):

Հոկտեմբերի 10 - Տեղի է ունենում ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը:

Լսում են՝

1) Թումանյանի զեկույցը ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի գործադիր մարմնի և ՀԳԿԸ վարչության խառը ժողովի և քննված խնդիրների վերաբերյալ: Ժողովում խոսք է եղել Հայաստանի վերաշինության ընկերության միջոցներից մի որոշ գումար ստանալու մասին (տե՛ս <օգոստոսի առաջին կես>), որ պետք է տան Մանթաշյանը, Համբ. Մելիքյանը և Յուզբաշյանը: Դրա մի մասը նախատեսվում է հատկացնել հայրենակցական միություններին, հիմնական մասը՝ Գրողների ընկերությանը:

2) Մ. Ավետիսյանի և խորհրդի մյուս անդամների առաջարկը՝ կազմել մի հանձնաժողով, որ պետք է ուսումնասիրի պատերազմական 4 տարիների անցուդարձը, մշակի մի լուրջ հուշագիր՝ ներկայացնելու խաղաղության համագումարին:

Որոշում են՝ առաջին հարցի վերաբերյալ հավանություն տալ գործադիր մարմնի քայլին, երկրորդի վերաբերյալ՝ հանձնարարել գործադիր մարմնին հուշագիր կազմելու համար ընտրել հանձնաժողով և ներկայացնել մանրամասն զեկույց:

Որբանոցի և զավառներում քննություն կատարելու հարցերը (տե՛ս հոկտեմբերի 3) հետաձգվում են:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Հոկտեմբերի 15 - Հայոց ազգային կենտրոնական խորհրդի քարտուղար Հակոբ Քոչարյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Պոլսից՝ Հակոբ ստորագրությամբ.

«Սիրելի Հովհաննես,

Քեզ մի կարճ նամակ գրեցի (տե՛ս սեպտեմբերի 2.- խմբ.), ...էլի գրում եմ այս երկտողը նորից Չիթունու մասին, որի կինն ու երեխաները պատմել են՝ ինքը Բուլղարիա է ու չի կարող օգնել ընտանիքին, որը մեծ կարիքի մեջ է: Նա ինքը գրագետ է և քեզ ծանոթ, կինը ասում է, որ իջել են Կովկասում և քեզ մոտ է, Թիֆլիսում: Չի կարելի արդյոք գրական ֆոնդից մի գումար տաս ընտանիքի համար, վերցնես և ուղարկես այստեղ... Հուսով եմ, դու ել, բոլոր ընտանիքդ էլ լավ են: Ջերմ բարևներս բոլորիդ:

Քո Հակոբ»:

ԳԱԹ ԹՖ, 1456 (762):

Հոկտեմբերի 17 - Նիկոլայ Հակոբյանց-Դադիվանյանի ստացականը՝ Թումանյանից իր հասանելիք գումարը (տե՛ս հունիսի 5) ստանալու մասին.

«Расписка

17/X 18, Туфлус

Сего числа от Главноуполномоченного Союза Лори-Казак-Шамшадин-Борчало-Бамбак Ованеса Туманяна получил 2083 руб. 50 коп. денег за прислуженное время, так что отныне я больше никаких денежных требований к нему не имею ... расписываюсь собственноручно, Николаи Акопянц-Дадиванян».

ԳԱԹ ԹՖ, 2448 (224 III g.):

Հոկտեմբերի 17 - Ազդ մամուլում.

«Այսօր՝ երեկոյան ժամը 7-ին, Արամյանի տանը կկայանա հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նիստը»:

*) Այդ նիստը չի կայացել Թումանյանի հիվանդության և բացակայության պատճառով (տե՛ս հոկտեմբերի 27):

«Մշակ», 1918, թիվ 211:

Հոկտեմբերի 24, Թիֆլիս - Երկտող Արշակ Ջամալյանին.

«Հարգելի Արկադի Նազարովիչ,

Ես վերջին անգամ տեսնվելուց հետո մինչև էսօր հիվանդ անկողնում պառկած եմ: Իսպանկա է, մի քիչ բարդություններով:

Էսօր Շիրվանզադեն եկավ հայտնեց, որ մեր գրողների ընկերության համար 10000 ռ. եք որոշել:

Չեմ իմանում ի՞նչ տասը հազար է, խնդրեմ մի տեղեկություն տաք:*

Արդյոք են մեր ստանալիքի հաշվի՞ցն է, թե էդ էլ ուրիշ բան է:

Հարգանքներով՝

Հովհ. Թումանյան»:

*) Երկտողի վրա հասցեատիրոջ կողմից նշված է, որ տասը հազար ռուբլին տրամադրված է Թումանյանի նամակի հիման վրա: Բանաստեղծի այդ նամակն անհայտ է:

ԵԼԺ 10, 295-296, 649-650:

<Հոկտեմբերի> 26* - Ալեքսանդր Պարզյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Գերապատիվ պարոն

Իմ՝ Հայ գրողների ընկերության հասցեով գրավոր ուղղած խնդրի բերանացի պատասխանը ստանալով գանձապահ պ. Աբովյանից, որը միամտացրեց ինձ, որ ես մնում եմ անդամ ընկերության և իմ դեմ ոչ մի հեռացման հարց ընկերության կողմից չի եղել, այլ՝ ընդհակառակը, շտապում եմ նրանց հանձնել այս տարվա անդամավճարս և անդորրագիր ստանալ:

Սրանով շնորհակալությամբ դիմում եմ Ձեզ մի աղերսանքով միայն՝ երկտողով «Հորիզոնի» մերձակա համարներից մեկում հայտարարել, որ այդ և մյուս թերթերում տպածից վերցրած տեղեկությունները, թե ես հեռացված եմ ընկերության անդամությունից, չեն համապատասխանում ճշմարտությանը, քանի որ ես եղել եմ և մնում եմ անդամ նույն ընկերության:**

Շնորհակալությամբ մնամ միշտ երախտապարտ՝ Ալ. Պարզյան»:

*) Ձեռագիր բնագրում նամակը թվագրված է 26 հ. 1918: Քանի որ նամակում խոսք կա տարվա անդամավճարը վճարած չլինելու մասին, պետք է ենթադրել, որ խոսքը վերաբերում է հոկտեմբեր ամսին մամուլով տեղեկացնելով հասարակությանը:

**) ՀԳԿԸ վարչությունը որոշել էր (տե՛ս 1917, հունիսի 14) Ալ. Տեր-Սարգսյան Պարզյանին գաղտնի ոստիկանության գործակալ լինելու կասկածանքով ժամանակավորապես հեռացնել ընկերությունից՝ այդ մասին մամուլով տեղյակ պահելով հասարակությանը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 168:

Հոկտեմբերի 27 - Համազասպ Համբարձումյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի Հովհաննես,

Վերջին երկու շաբաթը Ձեր բացակայության ժամանակ Միությունը երկու անգամ հավաքվեց, բայց նիստերը չկայացան: Ներկայիս շատերը պահանջում են միջոցներ ձեռք առնել, որպեսզի առաջիկա հինգշաբթի Միության խորհրդի նիստը կայանա, ուստի այս մասին պատիվ ունեմ հայտնել Ձեզ՝ կենտրոնական խորհրդի նիստը կկայանա հինգշաբթի, հոկտեմբերի 31-ին, երեկոյան ժամը 5 1/2-ին: Արամյանի տանը: ...Հույս ունենք, որ առաջիկա հինգշաբթի կկարողանաք ներկա լինել: Ի տեղեկություն պիտի հայտնեմ, որ Միության գործերը չափազանց անկանոն են, մանավանդ դրամական միջոցների վերաբերմամբ: Այնքան ենք աղքատացել, որ սենյակի վարձը չենք կարողանում վճարել: Հույս ունենք, որ առողջությամբ տանից

դուրս գալու օրից կաշխատեք կանոնավորել բոլոր գործերը: Եթե որևէ կարգադրություն ունեք անելու, գրավոր կերպով հայտնեցեք:

Միշտ Ձեր Հ. Համբարձումյան»:

ԳԱԹ ԹՖ, 1466 (362 լր.):

Հոկտեմբերի 30 - Մամուլը տեղեկացնում է.

«Այսօր* տեղի կունենա Հայրենակցական Միությունների կենտրոնական խորհրդի նիստը խորհրդի նախագահ Հովհ. Թումանյանի բնակարանում (Վոզնեսենսկայա No 18)»:

*) Ժողովը տեղի է ունենում հաջորդ օրը:

«Մշակ», 1918, թիվ 221:

Հոկտեմբերի 31 - Տեղի է ունենում ՀՀՍՄ կենտրոնական խորհրդի հերթական նիստը:

Նախագահում է Թումանյանը:

Լսում են Համբարձումյանի զեկույցը հաշտության համագումարին ներկայացվելիք հուշագրի մասին, Աբեյանի առաջարկը, որ խորհուրդը Վրաստանի հայոց Ազգային խորհրդում իր ներկայացուցչի միջոցով հարց հարուցի Ախալքալաքի փախստականության մասին:

Միաձայն որոշում են՝

1) Հուշագիրը* պատրաստելու համար ստեղծել հատուկ հանձնաժողով, անձամբ Աբեյանի, Տեր-Գրիգորյանի, Խզմալյանի, Սարգսյանի վրա դնել հուշագիրը կազմելու պարտականությունը: Հանձնաժողովի նիստերին պաշտոնական գրությամբ հրավիրել՝ ա) Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ջամալյանին, բ) գաղթականական գլխավոր խորհրդի նախագահ Հ. Արղությանին և վիրահայ Ազգային խորհրդի նախագահին:

2) Լիազորել քարտուղար Համբարձումյանին և Շահպարոնյանին ներկա լինելու Ազգային խորհրդի առաջիկա նիստին և ՀՀՍՄ կենտրոնական խորհրդի անունից պաշտպանել Ախալքալաքի ներկայացուցչի հարուցած խնդիրը:

3) Հուշագիրը կազմող հանձնաժողովի նիստը գումարել նոյեմբերի 2-ին Թումանյանի բնակարանում:

*) Խոսքը հաշտության համագումարին ներկայացվելիք հուշագրի մասին է:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Հոկտեմբերի 31 - Հաղորդագրություն մամուլում.

«Ատ. Լիսիցյանի, Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի կազմած **ԼՈՒՍԱՔԵՐ** հայերենի դասագիրք: Նոր տպագրությամբ լույս տեսան ԱՌԱՋԻՆ և ԵՐԿՐՈՐԴ տարիներ: ԵՐԿՐՈՐԴ տարին լույս կը տեսնի մինչև նոյ. 15-ը: Պահեստը՝ «Գիր» գրավաճառանոցում»:

«Մշակ», 1918, թիվ 222:

Նոյեմբերի 2 - Տեղի է ունենում հաշտության համագումարին ներկայացվելիք հուշագիրը կազմող հանձնաժողովի նիստը:

Ներկա են կենտրոնական խորհրդի անդամները, Թումանյանը, Մ. Ավետիսյանը, հանձնաժողովի անդամներ Սարգսյանը, Խզմալյանը, Աբելյանը, Տեր-Գրիգորյանը, Հայաստանի կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ Ջամալյանը:

Որոշում են՝ ա) խնդրել նախագահ Թումանյանին և Ա. Ջամալյանին գործի ֆինանսական կողմը ապահովելու համար ստեղծել մի հատուկ հանձնաժողով՝ կազմված հայ ականավոր ֆինանսիստներից, բ) հուշագիրը կազմելու խնդիրը քննելու նպատակով գումարել մի առանձին նիստ՝ մասնակցության հրավիրելով Հովսեփ Խունունցին, Բունիաթյանին, Ղամբարյանին, Փիրուզյանին, Բերբերյանին, Արղությանին, Ազգային խորհրդի նախագահին, Դուլուխանյանին, գ) հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել նոյեմբերի 5-ին, Թումանյանի բնակարանում:

ՀԱԱ ֆ. 245, ց. 3, գործ 4:

Նոյեմբերի 3, Թիֆլիս - Ցավակցական երկտող Գյուտ Աղանյանին նրա որդու մահվան կապակցությամբ.

«Իմ թանկագին բարեկամ, սիրելի տեր Գյուտ,

Մեծ կսկիծով կարդացի էսօր լրագրում քեզ և քո ընտանիքին հասած ծանր դժբախտության մասին: Հիրավի, չափազանց մեծ եղավ քո բաժին վիշտը էս աշխարհքում: Հավատում եմ, որ քեզ հատուկ ողջամտությամբ պիտի տանես և էս վերջին հարվածը* ու հայրորեն ամոքես ընտանիքիդ տառապանքը:

Հիվանդությունից ուժասպառ եղած՝ անկարող եմ տանից դուրս գալու: Խորասիրտ վշտակցում եմ քեզ և քո լավ ընտանիքին:

Միշտ բարեկամդ՝

Հովհ. Թումանյան »:

*) Գյուտ Աղանյանը կորցնում էր իր երկրորդ որդուն:

ԵԼԺ, 10, 296, 650:

Նոյեմբերի 3 - Հաղորդագրություն մամուլում.

«Հովի. Թումանյանը հիվանդացել է սպանական տենդով: Վերջերս փոքր-ինչ ապաքինվել է»:

«Մշակ», 1918, թիվ 225:

Նոյեմբերի 4, Թիֆլիս - Կարա-Դերվիշից (Հակոբ Գենջյան) նամակ-խնդրագիր ՅԳԿՎ վարչության նախագահ Թումանյանին.

«Մեծարգո պ. Նախագահ

Սիրանից մի քանի ժամանակ առաջ ես դիմել էի Միությանը տալ ինձ նպաստ, բայց Միությունը, առարկելով, որ կասսայում դրամ չկա, մերժեց ինձ: Այսօր իմանալով, որ մեր Միությունը գրող-ներին բաժանել է 10000 ռուբլի (տե՛ս հոկտեմբերի 24) դիմում եմ Ձեզ և խնդրում տալ ինձ նպաստ 800 ռուբլի, որ ես հնարավորություն ունենամ վաղօրոք... ծախսերս հոգալ:

Նյութական ծանր կացության մեջ եմ և խնդրում եմ նշանակված նպաստը տալ ինձ:

Կարա-Դերվիշ, 1918. XI. 4. Вознесенская 45, Թիֆլիս»:

ԳԱԹ ՅԳԿՎՖ, 144/5:

Նոյեմբերի 4* - Անդրանիկի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Գորիսից:

Ճանապարհների խափանման և հաղորդակցության միջոցների բացակայության պատճառով երկար ժամանակ կտրված լինելով աշխարհից՝ վերջապես հնարավորություն է ստացել** բանաստեղծին*** գրելու այն իրադարձությունների մասին, որ կատարվել են իր հետ և իր շուրջը անցած վեց-յոթ ամիսների ընթացքում:

Մասնավորապես գրում է. «Կռվի ժամանակ միշտ առաջապահ դիրքերու մեջ, իսկ քաշվելու ժամանակ ամենեւն վերջը, գաղթականությունը միշտ առաջը ձգած՝ Հայկական առանձին հարվածող զորամասը իր դերը կատարեց, անշուշտ, իր կազմութենեն, 10 ապրիլ, 1918, ի վեր Ալեքսանդրապոլեն մինչև Դիլիջանի շուրջը տեղի ունեցած պատերազմական ընդհարումների միջոցին: Հունիսի սկզբներուն, Ն. մ. Ջորամասը կգրավեր Դիլիջան՝ իբր սահմանապահ զորամաս, իբր սպիտակ դրոշակով թող Բաթումին մեջ պատգամավորության մը հայտնի, թե հաշտությունն արդեն կնքված է թուրք կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև:

Հաստատապես վերահաս լինելով հաշտության դաշնագրի բոլոր այն նվաստացուցիչ և որևէ հեղափոխական հայու համար անհամդուրժելի պայմաններուն, որով հայությունը կհամաձայներ թողնել իր դարերու երազը, ընդունել չափազանց նեղ և ամենաամպետք երկրամասի մը Հայաստան կազմելը, թույլ կուտար թշնամի ուժերու ամեն կերպ օգտվել բոլոր տեսակի փոխադրական միջոցներե և ճանապարհներե, այն ատեն ինձ անհնար թվաց, որ կարենամ իմ գործնասով մնալ որևէ դիրքի վրա և թույլ տալ, որ թշնամի ուժը անցնի գնա կռվելու համար դաշնակից, ազգակից ուժի մը դեմ. այդ պարագան ինձ համար ավելի քան անհանդուրժելի էր, հետևապես անմիջապես տեղեկացուցի կորպուսի հրամանատարության, որպեսզի ուրիշ ուժեր գան և փոխարինեն իմ գործնասը:

Այդ պահանջես վերջը նկատի ունենալով այն լճացած, ստրկացած մթնոլորտը, բոլոր այն երևակայելի դժվարությունները, որոնք կսպառնային Հայկական Հանրապետության և հայ ժողովրդին, վճռեցի անցնել Պարսկաստանով և միանալ դաշնակից անգլիական բանակին, որու շնորհիվ միայն կիոսայի փրկել թրքահայության վերջին բեկորները: Իմ այս որոշումը հաղորդեցի մասնավոր պատգամավորներու միջոցով Վեհափառ կաթողիկոսին, Հայաստանի Ապահովության խորհրդի Երևանի մարմնին, տաճկահայ գորապետներուն և առհասարակ թուրքահայ ժողովրդին:

Իմ ցանկությունն էր, որ թուրքահայ զինված մասը դուրս գա այդ սահմաններեն, իսկ գաղթականությունը տեղավորի Հայաստանի սահմաններու մեջ, համեմատաբար ապահով շրջանները՝ Նոր Բայազետ, Ախտա և Դարալագյազ:

Դժբախտաբար տաճկահայ գործնասերը զանազան պատճառներով հարկավոր փութկոտությամբ չմիացան գործնասիս, և միայն փոքր խմբակներ աճապարեցին ինձ մոտ, այն էլ՝ ուշ: Ձորամասը գնալով սովորացավ և Նոր Բայազետեն մեկնելուս անոր թիվը հասավ մոտ 3500, 2 թնդանոթով և 6 փուլիմյոթով: Մյուս կողմանե ալ դժբախտաբար գաղթականությունը ամբողջ ճանապարհին, հակառակ իմ հորդորներուս, չթողեց գործնասը և ամեն տեղ հետևեցավ անոր, նույնիսկ առաջ անցավ և իր անկարողություններովը և սանձարձակություններովը մեծագույն հարվածը տվավ գործնասի թե՛ ռազմական, թե՛ պարենավորման գործին և թե՛ առհասարակ անոր հմայքին»:

Այնուհետև մանրամասն նկարագրություններով ներկայաց-

նում է կռիվներով անցած իր ճանապարհը՝ Նոր Բայազետից մինչև Նախիջևան, Մեղրի, Ղափան, Սիսիան ու վերջապես Գորիս, հաղթանակներն ու կրած անհաջողությունները: Հիասթափված ու դառնացած է ամենուրեք հանդիպած խոչընդոտներից, ժողովրդի անմիաբանությունից, ընդհանուր գործի հանդեպ անտարբերությունից, տեղական պատասխանատուների ապիկարությունից, կառավարող շրջանների դժկամությունից:

Եվ վերջում. «Այժմ կգտնվիմ Գորիս, չեմ գիտեր ուրիշներ ինչ կխորհին, և կենթադրեմ, թե իմ ըրածի մասին լավ չեն խորհիր ու խոսիր. բայց անհամեստություն չի լինի, եթե հայտնեմ ոչ միայն իմ, այլ ամբողջ Ջանգեզուրի, Ղափանի և Սիսիանի Ազգային խորհուրդի և մանավանդ հայ ժողովուրդի համոզումն է, որ եթե մինչև այսօր թրքական որևէ ուժ չէ մտած Ջանգեզուրի կամ Սիսիանի կամ Ղափանի շրջանը, այդ բանը արդյունք է միայն իմ և իմ զորամասի ներկայության այդ շրջաններու մեջ: Ինչպես անցյալի մեջ, զորամասի ավելի արդյունավոր գործողություն ունենալու արգելք է հանդիսացեր 1-ին՝ գաղթականությունը, 2-րդ՝ տեղական կազմակերպություններու թերությունն ու անգործունեությունը, թուլությունը, այսօր ևս այդ երկու գործոնները մեծ չափով արգելք են արդյունավետ գործունեության: Ջանգեզուրի և Սիսիանի շրջանին մեջ տասնյակ հազարավոր տաճկահայ, ռուսահայ, նախիջևանցի գաղթականությունը մերկ ու սոված թափված են դաշտերում, ձորերում մեջ: Ներկա ցուրտ եղանակին հազարավոր գաղթականություն մնացած է, չէ տեղավորված և ոչ մի ապահովություն ունի վաղվա ուտելիքի մասին: Օրական հարյուրով կմեռնին անտեր և կմնան անթաղ, որոնց հանդեպ, պարզ է, որ անտարբեր չեմ կարող մնալ: Արդյոք չկա՞ որևէ կազմակերպություն, որ օգնության հասներ այս շրջանը մնացած 12-14 հազար գաղթականության, որը անպայման կմահանա, եթե օգնության չհասնին շուտով:

Երևանեն հայությունը դուրս չեկավ իր կաշիեն և Բաթումի դաշնագրեն, չուզեր ոչ մեկ օգնություն ցույց տալ այս շրջանի գաղթականության և կապ պահել այստեղի կազմակերպություններու հետ: Կարծեք այստեղի հայությունը խորթ լիներ: Նույնիսկ այստեղեն ղրկված հատուկ պատգամավորին (Արտակ Շիրինյանին) պատասխաններ էին, թե «պետք է ամեն զիջում ընենք, մույնիսկ զինաթափ լինենք և զանք հեռացնենք Անդրանիկին», խաչ քաշենք այդ հայության վրա, և մերժեց ռազմամթերքի և այլ օժանդակության

մասին կատարված պաշտոնական դիմումը: Ահա այս տեսակ ցինիկ և ստրկական խորհուրդներ տալե վերջ հայկական կառավարությունը այսօր միայն լայն օրերուն կանդրադառնա Ղարաբաղի վրա և կուզե տեղական զինվոր. Կազմակերպություն հառաջացնել Ղարաբաղի մասին Ադրբեջանի հետ բանակցությունները վարելու ժամանակ ռեալ ուժերու վրա հենվելու համար, մի բան, որու համար ուշացեր է: Իսկ տեղական կազմակերպություններու գործունեությունը բոլորովին անբավարար, անբնական է, ամբողջ հոգսը ծանրացած է իմ վրա: Ոչ մի եռանդ և զոհաբերության զգացմունք չի նշմարվիր այս ժողովուրդի և ղեկավարներու մեջ: Դուրսեն զորամասի համար ոչ մի կոպեկ օգնություն չեն ստացած:

Լսեր և կարդացեր են, որ, անշուշտ, կարճամիտ և կամ քինախնդիր նախանձու դիվանագետներ ինձ կմեղադրեն Լոռու և Նախիջևանի հայության պատահած դժբախտություններու պատճառով: Այդ մարդիկը, չեն գիտեր, Բաքվի, Գյոկչայի, Ղարսի, Բերկրիի, Վանի շրջանի և ամբողջ տաճկահայության գլուխն եկած փորձանքներուն ու արհավիրքներուն համար մի՞թե ինձ մեղավոր չեն համարեր: Այդ ամենքի մասին ունիմ իմ փաստաթղթերը, բացի անոնցմե, որոնք արդեն հրապարակված են:

Երկու անգամ է Շուշուց սուրհանդակ և նամակ կատանանք, այնտեղ միշտ սպասող են մեզ. Շրջանին մեջ՝ Հադրուքի ճանապարհին, ճարտար ուղարկեր են թուրքական 400 զինվոր՝ 4 թնդանոթով և փուլենյոթով ճնշելու: Բայց հայերը Սոկրատ բեկի ղեկավարությամբ զանոնք բոլորը կոտորած, և՛ թնդանոթները, և՛ փուլենյոթները գերած են:

Արտաքին աշխարհեն ստացված լուրերը ցույց կուտան, թե պատմական թույլներ է, որ կանցնինք, ամեն կողմ՝ Շուշի, Նախիջևան, Մեղրի, Տաճկահայաստան, գործունեության համար ֆրոնտ ունինք, և եթե այս թույլիս չշարժվինք, ապա սերունդները մեզ պիտի դատապարտեն, դժբախտաբար, սակայն, ժողովուրդը և իր ղեկավարները թե՛ գաղթականության և թե՛ գործի հանդեպ այնպիսի հանցավոր անտարբերություն ցույց կուտան, որ ուղղակի վիատեցուցիչ է: Երբեք թույլեն չեն ըմբռնած, կարծեք:

Համենայն դեպս շուտով կշարժվին Շուշի՝ այնտեղի դրությունը շտկելու համար, իսկ անկե ետք ոչինչ կարելի չէ ըսել և նախատեսել: Կսպասին դեպքերուն, կամ թե չէ շուտով բախտը կունենամ ձեզ տեսնելու:

Բայց ինձ համար մեծագույն անբախտություն է, որ աշխարհե կտրված ենք, ո՛չ ուրիշներ մեր գործունեութենեն տեղեկություն ունին, ո՛չ ալ մենք ուրիշներուն գործունեութենեն: Եվ միակ մտահոգությունս է, որ մեր պոռնիկ, ստրկացած դիվանագետները այս անգամ ևս չպաշտպանեն տաճկահայ դատը, և այդ դժբախտ ժողովուրդի այնքան արյունն ու տառապանքը և խոյանքները մնա անհետևանք, և անոնց դիակներու կույտին ու վշտին վրա ուրիշներ, շահագործողներ կերտեն իրենց դիրքը, փառքը»:

*) Նամակի ամսաթիվ նշված է 22/4 նոյեմբեր, այսինքն՝ հին տոմարով հոկտեմբերի 22, նոր տոմարով նոյեմբերի 4:

**) Նամակն ուղարկված է այդ օրերին պաշտոնական գործով Գորիսում հայտնված Կարա-Ղերվիշի միջոցով:

***) Նամակը կրճատումներով, «Անդրանիկի կռիվները» խորագրով հրապարակվել է մամուլում («Հորիզոն», 1918, թիվ 22, դեկտեմբերի 18)՝ առանց նշելու հասցեատիրոջ՝ Թումանյանի անունը, հետևյալ ծանոթագրությամբ. «Ստորև հրատարակում ենք մի քանի հապավումներով Անդրանիկի մի ընդարձակ նամակը, որ նա գրել է իր անձնական բարեկամներից մեկին մի առ մի նկարագրելով իր զորամասի ունեցած կռիվները»:

Նամակը առանց կրճատումների և ծանոթագրություններով հրապարակվել է նաև «Պատմա-բանասիրական հանդեսում» (2014, թիվ 2, էջ 175-182)՝ Ս.Հովհաննիսյանի և Ի. Վարժապետյանի աշխատասիրությամբ:

ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 8, ք. 1-6:

Նոյեմբերի 5 - Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի անունից գրություն Թիֆլիս՝ Թումանյանին.

«Господину Ованесу Туманяну

Кавказский Историко-Археологический институт имеет честь просить Вас, согласно постановлению Института от 30 октября с. г. по докладу адъюнкта Д. П. Гордеева, передать через него в институт армянские рукописи Вашего собрания, а равно рукопись Евангелия из собрания Каранянца для их научной обработки»:

*) Գրության վերջում Թումանյանի ձեռքով նշումներ՝ «Տեր, մեծ մեր, մեծ բարերար, որ գվրիպալս են» սկսվածքով մի հին ձեռագրի և Վեներտիկի մի տպագիր ավետարանի մասին:

ԳԱԹ ԹՖ, 2561 (1276):

Նոյեմբերի 11, Թիֆլիս - Երկտող Մամիկոն Գևորգյանին.*

«Սիրելի Մամիկոն,
ես դեռ տանից դուրս չեմ գալիս:

Մի հոդված եմ ուղարկում քեզ, քո հրաշալի թարգմանությամբ
գետեղելու: Ոչ ոքի ցույց մի տալ (հիարկե, խմբագրի մասին չի
խոսքս):

Իսկ եթե ինչ պատճառներով ետ ես դրկելու, այժմ դրկիր, որ
տամ ուրիշ տեղ տպելու:

Բարևներով՝

քո *Յ. Թումանյան* »:

*) Մ. Գևորգյանը «Кавказское слово» լրագրի խմբագրատան աշխատողնե-
րից է:

ԵԼԺ 10, 296-297, 650-651:

Նոյեմբերի 11 - Արամ Վրույրի դիմումը ԶԳԿԸ վարչությանը.

«Ի նկատի ունենալով իմ նյութական ծանր դրությունը, որ
թեթևակի ընդհարման և հայաբնակ վայրերի ջլատման պատճառով
միանգամայն դարձած է անտանելի, չգտա ուրիշ միջոց, եթե ոչ դի-
մել ընկերության վարչության և խնդրել մի հազար ռուբլու նպաստ,
հնարավորության դեպքում վերադարձնելու պայմանով»:

ԳԱԹ ԹՖ, 3118 (1088):

Նոյեմբերի 14 - Տպագրում է («Ժողովրդի ձայն», 1918, թիվ 60)
«Վերջին տեղատվությունը» հոդվածը:

Գրության առիթը այդ օրերին հայ-վրացական սրված հակա-
մարտություններն են: Հիշեցնում է, որ հարևան ազգերի հարաբերու-
թյունների համապատկերում հայերի և վրացիների բազմադարյա
համակեցությունը բացառիկ է, քանի որ «պատմության մեջ հայտնի
չի հայ-վրացական պատերազմ»: Եվ ահա այն պահին, երբ մեծ պա-
տերազմից հետո հզոր տերությունները մարդկության առջև բացում
են խաղաղության ու ազատության դռները, «ես երկու ժողովուրդ-
ների դեմոկրատիկ սոցիալիստական կառավարությունները ժամա-
նակ ու հարմարություն են գտել իրենց փոքրիկ սրերը իրար դեմ
ճռճելու»: Պատճառը «իրենց դեռ չկազմակերպված և չհաստատ-
ված պետությունների սահմանների և գաղթականության խնդիր-
ներն» են:

Պատմական համառոտ ակնարկով ցույց է տալիս, որ դարեր
շարունակ արևելքի մուսուլման ցեղերը ասպատակել են հայոց եր-
կիրը՝ տեղահան անելով բնիկ ժողովրդին: Նրանք իրենց հարձա-

կումների թափը կոտրել են Հայաստանի վրա՝ հնարավորություն տալով Վրաստանին պահպանելու իր հողն ու հարաբերական ազատությունը: Այդ պատճառով էլ հայ գաղթականության հոսքը եղել է մեծ մասամբ Վրաստան: Բայց երբ մահմեդական ասպատակություններից հետո կարճատև խաղաղության շրջան է եղել, հայերը վերադարձել են իրենց երկիրը. «Էսպեսով՝ կանոնավոր կերպով ստեղծվել է հայ ժողովրդի պարբերական մակընթացությունը և տեղատվությունը Վրաստան և Վրաստանից ետ»:

Վստահ է, որ բարենպաստ պայմաններ են ստեղծվել գաղթական հայության նոր «տեղատվության» համար. «Երկար դարերի դժոխային բռնություններից հետո Տաճկաստանն ինքն է հեռանում Հայաստանից, և կատարվում է հայության վերջին մեծ տեղատվությունը ամեն տեղից, նույնպես և Վրաստանից, հայության Մեծ Վերադարձը դեպի Հայաստան:

Վերադառնալու են ոչ միայն երեկվա գաղթականները, այլև նրանք, որ դարեր առաջ եկել հաստատվել են Վրաստանում:

Եվ ամենից առաջ ու իրեն՝ հայ ժողովրդի շահն է էսպես պահանջում»:

Անդրադառնալով Ախալքալաքի, Բորչալուի, Ղազախի, Լոռու և Փամբակի շրջանների հանդեպ վրացական հավակնություններին՝ գրում է. «Վրաստանի պահանջը, անշուշտ, պատմական-քաղաքական պահանջ է, ոչ թե պատմական-կուլտուրական կամ ազգագրական, որովհետև եղ շրջանները կամ ամբողջովին, կամ մեծ մասամբ բռնված են հայերով կամ թուրքերով, և անկասկած, խախտու պահանջ է, հատկապես սոցիալիստ մարդկանց համար: Բայց ես կարծում եմ, որ էս խնդիրը լուրջ պետք է նայվի վրացի ժողովրդի իրական կարիքի տեսակետից, հողի ու տեղի պակասության տեսակետից:

<...> Պատմական-քաղաքական տեսակետը ինչքան էլ խախտու լինի, այնուամենայնիվ, նա մի բան է ազգերի հոգեբանության մեջ, իսկ եթե դրան միանում է իրական կարիքը, խնդիր դառնում է լուրջ:

Եթե էսօր պատմության բերմունքով դրությունը փոխվել է, և հայն ու թուրքը շատ հող ունեն, վրացին քիչ, թող վերադարձնեն վրացուն նույն հողերը, ինչ որ նա երեկ, նույն պատմության բերմունքով, ստիպված է եղել թողնելու իրենց:

Այսպես, էսօրվա հողապական ժողովուրդը վաղը, ավելի ևս նեղվելով, ուզի-չուզի, ստիպված կլինի զենքի դիմելու»:

Եվ եզրակացությունը. «Այո՛, և տեղ շատ կլինի ամենքի համար, և ազատ ու երջանիկ ապրելու և ամեն կերպ զարգանալու հնարավորություն:

Մի՞թե չեք լսում Վիլսոնի հոյակապ հայտարարությունները,* որի ծայնի մեջ միացած են աշխարհքի բոլոր մեծ ազգերի ծայները:

Տգեղ ու ապարդյուն աղմուկներով դիտոմանս մի՛ մտցնեք համամարդկային կյանքի էս վեհ ու նվիրական վայրկյանին»:

*) Վիլսոնի ելույթը ամբողջությամբ տպագրվել է «Ժողովրդի ծայն» թերթի 1918 թ. 57 համարի հավելվածում:

ԵԼԺ 7, 358-365:

Նոյեմբերի 21 - Տեղի է ունենում ԶՅՄՄ կենտրոնական խորհրդի նիստ:^{*}

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Զամբարձունյան:

Նախագահը համառոտ զեկույց է տալիս նախորդ որոշումների կատարման մասին:

Որոշում են հաշտության համաժողովին ներկայացվելիք հուշագրի պատրաստման գործը հանձնարարել Վերմիշյանին, Զովհաննիսյանին և Լեոյին, որոնք հայտնում են իրենց պատրաստակամությունը: Գործի կազմակերպման հոգսը իր վրա է վերցնում ԶՅՄՄ կենտրոնական խորհուրդը, որ եթե Հայաստանի կառավարությունը տա իր հավանությունը, կհամարվի պաշտոնական, հակառակ դեպքում՝ օժանդակ մարմին:

Ֆինանսական հանձնաժողովի տեղեկությունների հիման վրա որոշվում է կազմել բյուրոյին կից մի ֆինանսական հանձնաժողով, որի ներկայացուցիչները մտնում են բյուրոյի մեջ՝ որպես իրավագորանդամներ:

Հաստատվում է բյուրոյի վերջնական կազմը՝ Զովհաննիսյան, Վերմիշյան, Լեո, կենտրոնական խորհրդի նախագահ:

Բյուրոյի անդամների համար, իբրև վարձատրություն, սահմանվում է 100-ական ռուբլի օրաժախս, որ ընդունվում է ծայների մեծամասնությամբ:

Պ. Աբեյանն առաջարկում է դիմել դաշնակիցներին: Ջամալյանը տեղեկացնում է, որ դա արդեն արվել է Հայաստանի կառավարության կողմից:

վերմիջյանն առաջարկում է հատուկ ուղերձով դիմել հայ ժողովրդին: Հանձնարարվում է Լեռին կազմել այդ ուղերձը և ներկայացնել հաջորդ նիստի քննությանը:

Հանձնարարվում է հայրենակցական բոլոր միությունների վարչություններին ներկայացնել բյուրոյի գործունեության ծրագիր:**

*) Նիստի արձանագրության մասին հիշատակությունը տես նոյեմբերի 24:

**) ՀԱԱ-ում այս արձանագրության հետ պահվում է մաև ռուսերեն մի փաստաթուղթ.

«Повестка

Члены Центрального Совета Землянических Советов и Комиссии оформивавшүся при Совета составления меморандума подлежащего представлению Мирной Конференции, а равно лица приглашенные для участия в работах Комиссии извещают, что предстоящее соединенное заседание Комиссии Совета Землянических Союзов имеет быть в четверг, 21-ого ноября, в 6 часов вечера, в Тифлисском Банке. Члены Центрального Совета Шахпаронян, Абеян, Аветисян, Саркисян, Хзмалян, Дж. Тер-Григорян, Ар. Тер-Григорян, Ов. Туманян, А. Амбарцумян.

Члены Комиссии и приглашенные лица

Дипломатический представитель Армении.

Представитель Арм. Нац. Совета.

Хунунц, Бекзадян, Вермишев, Пиралов, Берберов, Бунуатян, Атанасян, Лео, Энфеаджян, Гулиев, Арзуманян, Африкян, Багдасаров.

Секретарь Центр. Совета – Амбарцумян».

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Նոյեմբերի 22 - Համազասպ Համբարձումյանի մամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի Հովհաննես,

Երեկ տուն վերադառնալուց հետո ինձ վատ զգացի, այժմ հիվանդ եմ, տաքություն ունեմ 38,5 աստիճան, ուստի անկարող եմ այսօր տանից դուրս գալու, հետևաբար չեմ կարողանալու ներկա լինել մաև այսօր երեկոյան: Ուղարկում եմ 1) Հայրենակցությունների ցուցակը, 2) երեկվա ժողովի արձանագրությունը և 3) նոյեմբերի 11-ի և 15-ի նիստերի արձանագրությունները,* որոնցից նո.

11-ի արձանագրության մեջ հիշված են այն անձինք, որոնց ենթադրում եք հրավիրել որպես լիազորներ և աշխատակիցներ:

Հարգելի Հովհաննես, երբ այսօր կլինեք բանկում, աշխատեցեք մի կերպ ձեռք բերել Միությունների միության ընթացիկ ծախքերը ծածկելու համար անհրաժեշտ մի գումար (տե՛ս նաև հոկտեմբերի 27.- խմբ.), մասնավորապես ...աշխատեք արագացնել ինձ հասանելիք քարտուղարի վարձատրությունը սկսած հունիսի 1-ից (տե՛ս նաև հոկտեմբերի 2.- խմբ.): Փողի մեծ կարիքի մեջ եմ:

Հուլյա ունեն՝ մի կերպ գործը կհաջողացնեք:

Ձեր Համ. Համբարձումյան»:

*) Այդ արձանագրություններն անհայտ են:

ԳԱԹ ԹՖ, 1467 (362 լր.):

Նոյեմբերի 24 - Տեղի է ունենում հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողով:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Պ. Աբելյան:*

Ժողովը հոտնկայս հարգում է նոր վախճանված Խզմալյանի հիշատակը:

Թումանյանը զեկույց է տալիս այն բյուրոյի մասին, որ կազմել էր ՀՀՄՄ կենտրոնական խորհուրդը՝ հաշտության համաժողովին ներկայացվելիք հուշագրի համար ստուգված նյութեր հավաքելու նպատակով: Բյուրոն հավաքում և համակարգում է այն բոլոր փաստերը, որոնք կարող են տալ պատերազմի հետևանքով հայ ժողովրդի կրած նյութական կորուստների, բռնությունների ու տառապանքների ամբողջական պատկերը: Բյուրոն առայժմ գործում է ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի ընդհանուր ղեկավարությամբ, բաժանված է 16 շրջանների, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա իր առանձին վարիչը, գործելու է հետևյալ ուղղություններով՝ ա) պատմա-քաղաքական բ) զինվորական, գ) տնտեսական, դ) քրեական: Պատմա-քաղաքական բաժնի համար հրավիրված է Լեոն, զինվորական մասը, մինչև վարիչ ընտրելը, մի քանի զինվորականների հետ ղեկավարում է Բեզգադյանը, տնտեսական բաժնի վարիչն է Վերմիշյանը, քրեականինը՝ Տ. Հովհաննիսյանը: Բյուրոյի նախագահն է Թումանյանը, քարտուղարը՝ Կորյուն Ղազարյանը: Բյուրոյի նիստերին մասնակցում է Հայաստանի կառավարության տնտեսական միսիայի ներկայացուցիչ Ջամալյանը: Գավառներում քրեական մասը կազմակերպելու համար հրավիրվում են մասնագետ իրա-

վաբաններ, ռուսներ: Գործը կպահանջի կես միլիոնից ոչ պակաս գումար. մի մասը տալիս է Հայաստանի կառավարությունը, մյուս մասը՝ վաճառականները: Ժողովը հավանություն է տալիս այն բոլոր քայլերին, որ այդ ուղղությամբ կատարել է ՀՀՄԿ կենտրոնական խորհուրդը:

Թումանյանը հայտնում է, որ Հայաստանի կառավարության դիվանագիտական միսիան դիմել է դաշնակից պետությունների ներկայացուցիչներին՝ հայ ժողովրդի թալանի առաջն առնելու խնդրանքով: Տաճիկների առաջ ճանապարհը փակված է Բաթումի, Ջուլֆայի կողմից, բայց բաց է Էրզրումի ճանապարհը, որով տանում են թալանը: Տաճիկները հայ ժողովրդից թալանած գույքի մի մասն էլ աշխատում են տալ Ատրպատականի ժողովրդին՝ իբրև նրանց սեփականություն:

Թումանյանը առաջարկում է ժողովին խորհրդի անունից դիմել դաշնակիցների ներկայացուցիչներին և խնդրել, որ՝ ա) նրանք շուտափույթ տաճկական զորքերը հանեն հայկական գավառներից, բ) թալանին վերջ տրվի, գ) հայ ժողովրդին հնարավորություն տրվի սովից փրկվելու և իր քայքայված տնտեսությունը վերականգնելու:

Վճռվում է հանձնարարել միությունների վարչություններին մինչև նոյեմբերի 26-ը տեղեկություններ հայտնել իրենց գավառների մասին: Վարչությունների ներկայացուցիչները խոստանում են կատարել հանձնարարությունը:

Որոշվում է՝ ա) հանձնարարել կենտրոնական խորհրդին կազմակերպել դաշնակից պետությունների՝ Թիֆլիս եկող ներկայացուցիչներին դիմավորելու գործը, բ) խրախուսել, որ հայրենակցական միություն չունեցող գավառները ևս հասնեն դրան, գ) պահանջել, որ միությունները ժամանակին վճարեն իրենց անդամավճարները, որպեսզի կենտրոնական խորհուրդը դուրս գա դրամական ճգնաժամից:

Թումանյանը հայտնում է, որ շատ տեղերում ժողովուրդը տրամադրված է ժամանակին տաճիկների օգտին լրտեսություն արած մարդկանց դեմ, և կարող են լինել վտանգավոր «էքսցեսներ».

հարկավոր է դրա առաջն առնել:

*) Խորհրդի քարտուղար Հ. Համբարձումյանը հիվանդության պատճառով նիստին չի մասնակցում (տե՛ս նոյեմբերի 22):

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Նոյեմբերի 29 - Տիգրան Նազարյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Գրողների ընկերության և նրա նախագահի ուշադրությունն է հրավիրում երկու հարցի վրա:

1. Սեդրակ Թառայանի դուստրը՝ Գայանյան դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի Արշալույսը, «դպրոցն ավարտում է առաջիկա գարնան: Ոչ մի տեղից այլևս հույս չկա ստանալիք: ... Ապրուստի համար 250 ռ. է պետք»:

2. Բաֆֆու հարազատ քույրը՝ տ. Ջավահիր Առաքելյանը՝ փախստական Ուրմիայից, երկու չափահաս աղջիկների հետ երեք տարի է ապրում է Բաֆֆու տանը: Նրանց ապրուստը հոգալու համար «անհրաժեշտ է միանվագ մի քանի հազար ռուբլու նպաստ տալ»:

Հույս է հայտնում, որ բանաստեղծը հնարավորը կանի նրանց օգնելու համար:

ԳԱԹ ԹՖ, 1808 (926):

Նոյեմբերի 30, Թիֆլիս - Մասնակցում է գերմանահայկական կուլտուրական միության հավաքույթին:

Հավաքույթի նպատակն էր ներկա գերմանացիներին ծանոթացնել Սայաթ-Նովայի կյանքին ու ստեղծագործությանը: Մասնավորապես հաղորդվում է. «Երեկոյթը բացվեց ճիշտ ժամը 7 և կեսին: Դոկտոր. Դիրրը պարզ բնորոշեց Սայաթ-Նովայի կենսագրությունն ու նրա գործունեությունը, որ պ. Դիրրը ուսումնասիրել էր անձամբ:

Մի քանի լրացուցիչ բացատրություններ տվեց Սայաթ-Նովայի մասին Հ. Թումանյանը, որի ասածը Կ. Աբովյանը թարգմանեց գերմաներեն լեզվով»:

«Մշակ», 1918, թիվ 252:

Նոյեմբեր - Գրում է «Բերանն արնոտ մարդակերը էն անբան...» քառյակը:

ԵԼԺ 2, 34:

Դեկտեմբերի 3 - Սերգեյ Գորոդեցկու ցավակցական նամակը Թումանյանին՝ նրա որդու՝ Արտավազդի զոհվելու կապակցությամբ.

«Дорогой Ованес,

Сейчас передали мне ... о гибели в бою ... друзей и темнокрылого голубя Артука... на его как единокровного брата во

мне горе кажется маленькими сумерками по сравнению с огромной болью вашей скорби. Я не смею утешать вас, отца героя, но я так близко стою около вас и смотрю вместе с вами в опустевший мир и жду минуты, чтобы поднять вместе с вами глаза ... звездам, где теперь душа Артука.

Обнимаю вас и целую вас крепко».

ԳԱԹ ԹՖ, 1102 (297 լր.):

Դեկտեմբերի 4 - Օհան Զյանդարյան ստորագրությամբ ցավակցական նամակ Թումանյանին՝ Արտավազդ Թումանյանի զոհվելու կապակցությամբ.

«Սիրելի Զովհաննես,

Ընդունիր իմ խորին ցավակցությունը քո այն վշտի համար, որ ունեցար սիրելի Արտավազդիդ կորստյան պատճառով: Ես խորապես ցավում եմ նախ՝ որպես անուշ Արտիկին մոտիկից ճանաչողներից մեկը և երկրորդ, որ մենք կորցնում ենք մի մատաղ, շնորհալի նկարչի և բանաստեղծի, ջախել, եռանդուն և ազնվագույն հասարակական գործչի, որը ահա չորս տարի է Վանի, այլևայլ շրջաններում այնքան սրտանց կպել էր հասարակական գործունեության, որի հետևանքը եղավ նրա ողբերգական մահը:

Ցավակցությունս հայտնելով հայ ժողովրդի ուսուցչիդ, հավատացած եմ, որ հայրական անհուն վշտիդ մեջ անշուշտ մի սփոփանք գտնես, և դա այն գիտակցությունն է, որ Արտավազդը քո սիրած հայ ազգի ապագայի համար զոհված նահատակներից մեկն է:

Սիրասուն Արտիկիդ շիրիմը համբուրող, քեզ միշտ հարգող Օհան Զյանդարյան»:

Վերջում ափսոսանք է հայտնում, որ հիվանդության պատճառով չի կարողանում անձամբ գալ:

ԳԱԹ ԹՖ, 2348 (486 լր.):

Դեկտեմբերի 4 - Տեղի է ունենում ԶԶՄՄ կենտրոնական խորհրդի նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Լսում են՝

1) Թումանյանի զեկույցը բյուրոյի գործունեության մասին: Որոշում են ընդունել ի գիտություն:

2) Դաշնակից պետությունների ներկայացուցիչներին տրվելիք դիմումի հարցը: Որոշում են դիմումը մշակել և կարգալ հանձնաժողովում, ապա դնել խորհրդի քննարկմանը:

3) Դաշնակից պետությունների ներկայացուցիչներին դիմավորելու խնդիրը: Որոշում են գործի կազմակերպումն ու իրականացումը հանձնարարել գործադիր մարմնին:

4) Միությունների միության անունով որբանոց բացելու հարցը (տե՛ս հոկտեմբերի 3): Քվեակությամբ որոշվում է առանձին գրությամբ դիմել Վրաստանի հայոց Ազգային խորհրդի գաղթականական բաժնին և խնդրել հայտնել խորհրդին, թե ինչպես, ինչ միջոցներով և ինչպիսի դրամական օժանդակությամբ կարող է նա նպաստել, որ խորհուրդն ի վիճակի լինի որբանոց բացել:

5) Դազախ-Շամշադինի ներկայացուցիչ Տեր-Քարսեղյանի հայտարարությունը՝ այդ գավառի ճանապարհները բացելու և անվտանգությունն ապահովելու մասին: Որոշում են առաջարկել այդ գավառի հայրենակցական միության վարչությանը այդ խնդրի մասին գրավոր դիմում անել գործող բյուրոյին:

6) Միությունների միության դրամական միջոցների հարցը: Որոշում են պահանջել հայրենակցական միություններից կենտրոնական խորհրդին վճարել 200 ռ. միանվագ տուրքերը և իրենց գանձած գումարների 5 տոկոսը:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Դեկտեմբերի 7, Թիֆլիս - Նամակ Թեհրան՝ Հովսեփ Միրզոյանին.

«Իմ ազնիվ բարեկամ պ. Հովսեփ,

Բուլղարացի Գրիգորը, որ Վանի գաղթականության հետ է եղել, եկավ Թիֆլիս և մի զարհուրելի բոթ բերավ մեզ համար, որ իմ որդի Արտավազը (Արտիկ), որ Վան էտապնի կոմենդանտ էր - ճամփին, Բեջարից Համադան, իր ընկերների հետ սպանվել է քրդերից:

Ես և իմ ամբողջ ընտանիքը ուղղակի խորտակված ենք էս դժբախտության ծանրության տակ և ապրում ենք միայն էն թեթև կասկածներով, որ հարուցված են զանազան կողմերից, թե սուտ է:

Ես նամակներ եմ գրել Համադան, ի միջի այլոց նրա մոտիկներից մեկին, գյուղատնտես Սահակ Ստեփանյանին, որ այժմ Համադան նահանգապետի այգին է խնամում:

Արշակ խանն էլ (Գորոյան), որ այժմ այդտեղ է, նույնպես իր

կողմից միջոցներ է ձեռք առել: Նույնը խոստացել է և միստր Ջեմսը՝ նամակիս բերողը, որ ամերիկական միսիայի ներկայացուցիչն է:

Աղաչում են, Դուք էլ ձեր կողմից միջոցներ ձեռք առեք իմանալու, թե ինչ է եղած և տեղեկացրեք միստր Ջեմսի, Արշակ խանի կամ Պարսից հյուպատոսարանի միջոցով: Իսկ եթե դժբախտությունը պատահած է՝ որդուս դիակը և իր ընկերների, փոխադրել տալ Համադան: Հեռագրեցեք անմիջապես, ամեն ծախք կուղարկեմ և ես էլ կգամ, ամենքին լիովին կվարձատրեմ:

Ստույգը կարելի է իմանալ Համադանից: Ես նամակ եմ ստացել տիկին Ջապել Եսայանից, Թեհրանից օգոստոսի 29-ին, գրած ձեր տանից, բայց ոչ մի տեղեկություն: Լսեցի, որ տիկին Ջապելն էլ արդեն Ամերիկա է գնացել:

Խնդրում են բարևեցեք տիկին Մաշոյին:

Միշտ Ձեր՝

Հովհ. Թումանյան»:

ԵԼԺ 10, 297-298:

Դեկտեմբերի 10 - Սոսկվայի Հայկական կոմիտեի անունից տպագրվում է դիմում հայ ուսանողության գործադիր կոմիտեին. Доехав до Сарыкамыша и ознакомившись с положением дела мы умоляем товарищей студентов в двухдневный срок со организовать отряд 50 человек и отправить в Сарыкамыш в распоряжение Арутюна Костаняна. Организацию и отправку отряда примет на себя Москов. Арм. Комитет. Туманян, Магакян».*

*) 50 հոգու պահանջով դեռևս տարեսկզբին (տե՛ս հունվարի 20, 21) Հայ գրողների ընկերությունը դիմել էր վիրահայոց Ազգային խորհուրդը:

«Молот», 1918, No 61.

Դեկտեմբերի 11 - Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի գրությունը Հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի նախագահին:

Խնդրում են թույլ տալ հայրենակցական միությունների նախագահներին կամ վարչություններին 12-20 տողով գրավոր տեղեկություններ տալ իրենց գավառների կրած վնասների մասին:

ԹԹ ԹԸԱ, թղթ. 42:

Պեկտեմբերի 12 - Հովհաննես Թումանյանի բնակարանում տեղի է ունենում ՀՀՍՄ կենտրոնական խորհրդի նիստ։*

Մասնակցում են Շամախու, Գյոկչայի, Գողթնի, Գանձակի, Ղարաբաղի, Լոռու և Նոր Բայազետի հայրենակցական միությունների ներկայացուցիչները։

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյան։

Լսում են՝

Դաշնակից պետությունների ներկայացուցիչներին տրվելիք դիմումի ընթերցումը։ Որոշում են դիմումը առայժմ բազմացնել 15 տպագիր օրինակով և պետությունների ներկայացուցիչների՝ տեղում լինելուն պես ներկայացնել ի պատկանելույն, իսկ հետո թարգմանել ֆրանսերեն և տարածել։

Մեր երկրի զանազան մասերում կյանքի ապահովության և ճանապարհների բացման խնդիրը։ Որոշում են լիազորել գործադիր մարմնին այդ նպատակների իրագործման համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ։

Խորհրդի և դիմումը մշակող բյուրոյի միջև հաստատուն և իրավական հարաբերություն ստեղծելու և նույն բյուրոյին թողնված գումարների պատասխանատվության խնդիրը։ Որոշում են՝ ա) այս հարցի մանրամասն քննությունը հետաձգել մի այլ ժողովի և հատկապես զբաղվել դրանով, բ) ցանկալի համարել, որ բյուրոյի գանձապահության պաշտոնը վարի խորհրդի գանձապահը։

Միությունների միության միջոցների հարցը։ Որոշում են խստորեն պահանջել հայրենակցություններից ամենակարճ ժամանակամիջոցում վճարել 5 տոկոսը գանձած գումարներից, 200-ական ռուբլի նպաստը և առանձին նիստ գումարել՝ քննելու միայն միջոցների խնդիրը։

*) Նիստի մասին հայտարարությունը՝ «Մշակ», 1918, թիվ 287։

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4։

Պեկտեմբերի 14, Թիֆլիս - Նամակ Գորիս՝ Անդրանիկ Օզանյանին.

«Սիրելի Անդրանիկ,

Նամակդ (տես նոյեմբերի 4) ստացա, շատ ուրախացա, որ դու առողջ ես և գործերդ էլ ավելի լավ են, քան թե պատմում են զանազան մարդիկ։

Նամակիցդ քաղվածքներ կտպագրվեն թե՛ հայ, թե՛ ռուս մամուլի մեջ (տե՛ս դեկտեմբերի 18): Թիֆլիս որ եկա, տեսա շատ են տարածել և շատ են խոսում, որ դու լավ դեր չես կատարել Ղարաքիլիսայի կռվի ժամանակ: Ես մի հերքում գրեցի (տե՛ս օգոստոսի 10) և պարզեցի, թե ինչ որ գրել են Անդրա - (էստեղ ընդհատեցին, տեսնվեցինք անգլիական հյուպատոսի հետ և շարունակում եմ) ճիշդին – նա էլ էնպես է վարվել և այլն: Գուցե պատահել է թերթի էդ համարը, կարդացել ես:

Անգլիական հյուպատոսի հետ այժմ տեսնվեցինք, խոսեցինք քո մասին, թե ինչ ստեր են տարածում:

Մեր ազգային խորհրդի և մեր կառավարության ապիկարությունների և հանցավոր զանցառությունների մասին կխոսենք, երբ կհանդիպենք: Եթե գրեմ, ո՛չ ժամանակ կա, ո՛չ էլ թուղթը հերիք կանի:*

Ես մի երկու ամիս հիվանդ պառկած էի, նոր եմ վեր կացել:

Էս երկու օրս լուր առանք, որ Պարսկաստանում սպանվել է իմ երկրորդ որդին՝ Արտավազդը, որ Վան գաղթականության հետ էր: Ուղղակի խորտակված ենք ամբողջ ընտանիքով էս վշտի ծանրության տակ (տե՛ս նաև դեկտեմբերի 7):

Մեր կառավարությունը մինչև էսօր էլ կոնգրեսին ներկայացնելիք մեմորանդումի համար հոգս չքաշեց, նյութեր չհավաքեց, թե ինչ կորուստներ ենք ունեցել մենք կամ ինչ բռնություններ են կատարվել մեր ժողովրդի վրա: Ստիպված մենք սկսեցինք՝ Հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը (տե՛ս մարտի 16): Այժմ իմ նախագահությամբ մի բյուրո** է կազմված և աշխատում է եռանդով: Կառավարությունն էլ տվել է իր սանկցիան:

Գրաբերս՝ պ. Դավիթ Անանունը, մեր կողմից գալիս է լիազոր՝ Ղարաբաղում կազմակերպելու էս գործը: Խնդրում են աջակցություն ցույց տալ նրան, եթե հնարավոր կլինի:

Այժմ սպասում են հունական և ֆրանսիական դեսպաններին, գալու են մոտս, մի փոքրիկ շրջանի հետ մի գրույց անենք:

Լոռեցիները վրացի զորքերի լրբությունից կատաղած՝ հարձակվել են նրանց վրա, և առաջ է եկել կանոնավոր պատերազմ: Վրացիք նահանջել են մինչև Բորչալու՝ տալով բավական սպանվածներ և գերիներ:

Զբաղված ենք էդ կռիվը վերջացնելու գործով:***

Հույս ունենմ, որ շուտով քեզ կտեսնեն: Մերոնք շատ բարև են անում քեզ ամենքը:

Քո Հովի. Թումանյան:

Հ. Գ. Ի նկատի ունեցիր, որ այժմ մեզ համար, մեր դատի համար միմիայն մեր կառավարությունը և հասարակությունն է հարկավոր: Էդպես են խորհուրդ տալիս և մեր բոլոր բարեկամները:****

Քեզ պետք է ասեն, որ Գրիգոր Բուլղարացին և իր ընտանիքը ուղղակի հանցավոր են Վանա գաղթի բոլոր թշվառությունների մեջ: Էսպես են պատմում և դատապարտում բոլոր եկածները»:****

*) Խոսքը վերաբերում է Թուրքիայի հետ Հայաստանի Հանրապետության կնքած Բաթումի պայմանագրին (տե՛ս նոյեմբերի 4, Անդրանիկի նամակը):

**) Պաշտոնապես կոչվում էր «Քննիչ հանձնաժողով համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասները որոշող բյուրո», ստեղծվել է 1918 թ. դեկտեմբերի 17-ին:

***) 1918 թ. ամառվանից սկսած՝ սահմանային վեճերը Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև ի վերջո հանգեցնում են հայ-վրացական պատերազմի, որ, տևելով 20 օր, ավարտվում է դեկտեմբերի 31-ին: Թումանյանը ամբողջապես նվիրվել է կռիվները խաղաղությամբ ավարտելու գործին:

****) Թումանյանը ամենայն հավանականությամբ նկատի ունի դաշնակիցներին, որոնց համար Անդրանիկի ներկայությունը տարածաշրջանում այնքան էլ ցանկալի չէր: Նա զգուշացնում է Անդրանիկին ետ կանգնել Շուշիում ամրացած Նուրի փաշայի վրա զնալու մտադրությունից՝ նկատի ունենալով նորաստեղծ Հայաստանի Հանրապետության առկա վիճակը (տե՛ս ԼԿ, 129-130):

*****) Գր. Բուլղարացին Վանի պաշտպանության ժամանակ քաղաքի զինվորական կոմիսարն էր, ապա՝ միլիցիայետը: Նա է 1918 թ. մարտի 21-ին ստորագրել Վանի գաղթի հրամանը, որ հետո մամուլում որակվում է որպես ուշացած, որը և պատճառ է դառնում մեծ կորուստների (տե՛ս ԼԿ, 234-236):

ԵԼԺ 10, 298- 300, 652-654:

Դեկտեմբերի 15 - Սարիբեկ Տեր-Մելիքսեդեկյան ստորագրությամբ խնդրագիր Հայ գրողների ընկերության նախագահին.

«Քառասունինը տարի ուսուցչական պաշտոնավարության հետ զուգընթաց աշխատակցել եմ հայ օրաթերթերում, ամսագիրներում և երգիծաբանության թերթերում: 1874 թվից սկսյալ գավառական կյանքի բազմազան և բազմատեսակ լավ և վատ պատկերները ներկայացրել եմ ընթերցող հասարակությանը: Այդ թերթերում գրել եմ բազմաթիվ ֆելիետոններ, բանասիրություններ և զանազան տեսություններ: Իմ հեղինակությամբ տպագրված կա «Գասպար - Ամի» թատերգական գրքույկը չորս գործողությունից բաղկացած և «Տիրացու Մարկոս» վեպիկը Շիրակա կյանքից: «Խաթաբալայուն»,

«Հայելիում» և «Մախլասում» աշխատակցել են Ղալաշի Մարգար ստորագրությամբ... 44 տարի անդադար ծառայել են հայ գրականության և այդ բոլորի համար ոչ մի կոպեկ վարձատրություն չեն ստացել, բոլոր խմբագիրները շահագործել են ինձ: Ուստի դիմելով Հայ գրագիտական ընկերության, խոնարհաբար խնդրում եմ այս իմ նյութական ամենաողբալի դրության ժամանակ մի նյութական օգնություն հասցնել ինձ, որով բարոյապես մխիթարած կլինեք օգնության կարոտ կողոպտված և հայրենիքից վտարված անգործ ուսուցչիս»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 100:

Դեկտեմբերի 18 - Թումանյանի բնակարանում տեղի է ունենում ՀՀՍՄ կենտրոնական խորհրդի նիստ:

Ներկա են Լոռու, Ղազախի, Շամախու, Ախալքալաքի, Փամբակի, Գանձակի, Ալեքսանդրապոլի, Ղարաբաղի և Նոր Բայազետի հայրենակցական միությունների ներկայացուցիչները, նաև ոստիկանության ներկայացուցիչը:

Նախագահում է Թումանյանը:

Օրակարգ՝

1) Բյուրոյի գանձապահի հարցը:

2) Վրաստանի հայոց ազգային խորհրդի նախագահության նիստերին ՀՀՍՄ կենտրոնական խորհրդի կողմից երկու ներկայացուցիչ ունենալու խնդիրը (հատկապես Ախալքալաքի և Լոռու հայրենակցական միությունների և Կենտրոնական խորհրդի կողմից):

3) Հայ-վրացական պատերազմը և Միությունների միության վերաբերմունքը:

4) Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի վերաբերյալ նախագահը հայտնում է, որ բյուրոն սկզբունքորեն միանգամայն համաձայն է իր գանձապահի պաշտոնը տալու կենտրոնական խորհրդի ընտրած անձնավորությանը՝ ենթարկելով նրան մույն խորհրդի իշխանությանը: Որոշում են – ընդունելով նախագահի հայտարարությունը ի գիտություն՝ այս հարցը մանրամասն քննության առնել առաջիկա նիստերից մեկում:

Երկրորդ խնդրի վերաբերյալ բացատրություն է տալիս նախագահը: Լրացուցիչ տեղեկություն է հայտնում Ախալքալաքի ներկայացուցիչ պ. Աբելյանը: Որոշում են – լիազորել Կենտրոնական խորհրդի անդամներին և պ. Աբելյանին ներկա լինել Վրաստանի հա-

յոց ազգային խորհրդի նախագահության նիստերին՝ որպես ՀՀՍՍ կենտրոնական խորհրդի ներկայացուցիչ:

Նախքան պատերազմի հարցին անցնելը նախագահը զեկուցում է Վրաստանի հայոց Ազգային խորհրդի գաղթականական բաժնի հետ ՀՀՍՍ կենտրոնական խորհրդի անունով որբանոց բացելու և պահելու (տե՛ս հոկտեմբերի 3) շուրջ բանակցությունների մասին: Որոշում են գաղթականական բաժնի պատասխանը ընդունել ի գիտություն:

Անցնելով հայ-վրացական պատերազմի հարցին՝ Հովհ. Թումանյանը ժողովականներին ծանոթացնում է հարցի մանրամասներին և փաստացի հանգամանքներին և առաջարկում ընդունել իր՝ 4 կետից բաղկացած բանաձևը:

Խնդրի շուրջ տեղի է ունենում մտքերի փոխանակություն, որին մասնակցում են Դեմիրճյանը, Բաղդասարյանը, Աբովյանը, Աբեյյանը, Սարգսյանը, Համբարձումյանը և ուրիշներ: Առանձին բանաձևեր են առաջարկում Դարբինյանը, Բաղդասարյանը և Թումանյանը: Առանձին բանաձևերը քննարկելուց հետո խորհուրդը հանձնարարում է Բաղդասարյանին և Համբարձումյանին կազմել անհրաժեշտ բանաձևը: Մի քանի րոպե ընդմիջումից հետո այդ բանաձևը պատրաստվում և կարդացվում է հայերեն ու ռուսերեն լեզուներով: Որոշվում է բանաձևն ընդունել և հանձնարարել նախագահին անմիջապես հրապարակել մամուլում և տարածել պատերազմող ժողովրդի մեջ:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գործ 4:

Դեկտեմբերի 18 - ՀՀՍՍ կենտրոնական խորհրդի հատուկ քննիչ հանձնաժողովի անունից տպագրում է («Մշակ», 1918, թիվ 20)* «Դիմում հայ ժողովրդին».

«Վերջացավ համաշխարհային պատերազմը: Մոտենում է հաշվեհարդարի ժամը:

Ոչ մի ժողովուրդ այնքան զոհեր չի տվել այս ահեղ պատերազմին, այնքան աղետների չի ենթարկվել այս չորս տարիների ընթացքում, որքան հայությունը:

Մեր հայրենիքի մեծագույն մասը այսօր ավերակ է ու ամառի: Միլիոնի է հասնում կոտորված հայերի թիվը, իսկ կենդանի մնացածները հալվում ու մաշվում են օտար երկինքների տակ՝ «փախստականի», «գաղթականի» ճակատագրին ենթարկված:

Ամեն մի գիտակից հայ իր սրբազան պարտքը պիտի համարի այսօր ամեն ջանք թափել, որպեսզի հաշտության մոտալուտ վեհաժողովի** սեղանի վրա դրված լինի հայության կրած անլուր տառապանքների լիակատար պատկերը և տված հսկայական զոհերի ճիշտ հաշիվը:

Այդ նպատակով Հայ Հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նախաձեռնությամբ և հայոց կառավարության հավանությամբ կազմվել է մի հատուկ քննիչ Հանձնաժողով, որ և դիմում է այժմ հայ ժողովրդին և աջակցություն խնդրում ամեն մի գիտակից հայից:

Ժամանակը կարճ է, իսկ անելիք գործը՝ վիթխարի, բայց և այնպես Հանձնաժողովի անդամները, առանց տատանվելու, ստանձնեցին իրանց վրա դրված ծանր պարտականությունը՝ վստահ լինելով, որ այսպիսի մի անկրկնելի պատմական թույլ, երբ մի, թեպետև հայկական, վերջին ճիգ պետք է գործ դնել, որպեսզի մեր արյունաքամ ժողովուրդը, մեր նահատակ ազգը իր արդար դատը շահի և իր դարավոր իղձի իրականացման արժանանա, չի գտնվի ոչ մի հայ, որ իր աջակցությունը մերժի այս գերազանցապես գաղափարական և անհրաժեշտ ու անհետաձգելի գործին:

Հայ ժողովրդի մարտիրոսության պատմությունը պիտի պատրաստ լինի մինչև հաշտության վեհաժողովի բացումը** և համենայն դեպս շատ վաղ, քան նրա փակումը:

Շտապենք:

Ով ուզում է և կարող է թեթևացնել Հանձնաժողովի անհրաժեշտ ահագին ծախսերը, թող օր առաջ ուղարկի իր դրամական օժանդակությունը:

Նա, ով նյութեր ունի հավաքած՝ հայության դահիճների գազանությունների մասին, մեր ժողովրդի կրած աղետների ու նյութական վնասների մասին թուրքիայում թե Կովկասում, թող անմիջապես հանձնաժողովի տրամադրության տակ դնի այդ նյութերը:

Գազանության զոհերի ու ավերակների լուսանկարների և աղետների լուրջ ուսումնասիրությունների համար Հանձնաժողովը պատրաստ է վճարել բավարար վարձատրություն փոխադարձ համաձայնությամբ:

Լուրջ ուսումնասիրություններ ասելով՝ Հանձնաժողովը հասկանում է ճշգրիտ վիճակագրական արժանահավատ վկայությունների և հավաստի տվյալների վրա հիմնված հետազոտություններ:

Հայ ժողովրդի արդար դատի համար պետք չէ ոչինչ, բացի ճշմարտությունից:

Հանձնաժողովը խնդրում է գազանությունների զոհերին և ակամատես վկաներին չզլանալ իրենց ցուցմունքները տալու իր քննիչներին:***

Կրկնում ենք՝ մի վերջին ճիգ է պահանջվում հայ ժողովրդից:

Թող ամեն մի հայ կատարի իր այդ սուրբ պարտականությունը և կատարի անհապաղ:

Քննիչ հանձնաժողովի նախագահ՝

Հովհ. Թումանյան»:

*) Դիմումը մեկ օր առաջ տպագրվել էր «Հորիզոնում» (1918, թիվ 21), իսկ մեկ օր հետո տպագրվում է «Ժողովրդի ձայնում» (1918, թիվ 85):

**) Հաշտության վեհաժողովը պետք է տեղի ունենար հաջորդ տարի Փարիզում:

***) Հայաստանի ազգային արխիվում պահվում են 1917-1919 թթ. գրված ութ տասնյակից ավելի նամակներ, որտեղ անձամբ տուժած մարդիկ մանրամասն գրում են իրենց կորուստների մասին (տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1):

ԵԼԺ 7, 365-366:

Դեկտեմբերի 18 - Արամ Վրույրի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Սիրելի Հովհաննես,

««Մշակում» կարդացի հոդվածդ:» Ի նկատի ունեցեք, եթե պետք լինի փաստերի լուսանկարելու համար մասնագետ, պատրաստ եմ գալ ժողովրդի վերածնության:

Վրույր»:

*) Խոսքը «Դիմում հայ ժողովրդին» կոչի մասին է, որ տպագրվել էր նույն օրը:

ԳԱԹ ԹՖ, 2149 (459 լր.):

Դեկտեմբերի 19, Թիֆլիս - ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի անունից պաշտոնական գրություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը.*

«Հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը իր դեկտեմբերի 18-ի արտակարգ նիստում, քննելով հայկրացական ընդհարման խնդիրը և ի նկատի ունենալով, -

1, որ հարևան ու ազգակից ժողովուրդների միջև առաջ եկած եղբայրասպան պատերազմը հղի է սարսափելի ծանր ու կործանարար հետևանքներով.

2, որ այդ ժողովուրդների բարյացական ու խաղաղ համակեցությունն է միակ գրավականը նրանց քաղաքակրթական հառաջա-

դիմության և քաղաքական ու տնտեսական բարգավաճման.

3, որ այդ երկու եղբայր ժողովուրդների պատմության մեջ եղած համակեցության խախտումը կնշանակի ոճիր գործել այդ ժողովուրդների խղճմտանքի դեմ.

4, որ չկա և չի կարող լինել այդ երկու ազգակից ժողովուրդների միջև և ոչ մի դեպք ու ոչ մի խնդիր, որ անկարելի լիներ լուծել հաշտ ու խաղաղ ճանապարհով.

5, որ այդ համակեցության խախտումը կատարվում է այն ժամանակ, երբ այդ ժողովուրդները մտնում են նոր ու լուսավոր կյանքի շրջանը.

Ո Ր Ո շ Ե Գ - ա) բուռն կերպով բողոքել կատարվող արյունահեղության դեմ, բ) պահանջել անմիջապես դադարեցնել թշնամական գործողությունները, գ) ընդհարման պատճառները վերացնելու համար անմիջապես գումարել հայ-վրացական կոնֆերանս, որի իրավասությանը հանձնել նաև մյուս բոլոր վիճելի խընդիրները, դ) տրամադրել երկու կառավարություններին խորհրդիս լայն աջակցությունը վերոհիշյալ նպատակներին հասնելու համար և ե) այս որոշումը հայտնել երկու կառավարություններին, երկու ժողովուրդների ազգային-հասարակական հիմնարկություններին և ամեն կերպ տարածել այդ ժողովուրդների ամենալայն խավերի մեջ:

Հայրենակցական միություններ - Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Ախալքալաքի, Գանձակի, Գողթնի, Ղազախ-Շամշադինի, Ղարսի, Ղարաբաղի, Լոռու, Հին Նախիջևանի, Նոր Բայազետի, Պարսկաստանի, Փամբակի, Շամախու, Շուլավերի:

Կենտրոնական խորհրդի նախագահ՝

Հովհ. Թումանյան

Քարտուղար՝ *Հ. Համբարձումյան* »:

*) Այս գրությունն ուղարկվում է նաև Վրաստանի Հանրապետության կառավարությանը. ռուսերեն սևագիր տարբերակը՝ «Правительству Грузинской Республики» վերնագրով, պահվում է Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ, ֆ. 468, ց. 1, գործ 7):

ԵԼԺ 10, 300-301:

Ղեկտների 22, Թիֆլիս - Նամակ Վրաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Գեգեչկորիին.

«Многоуважаемый Евгений Петрович!

Сегодня узнал, что представители союзников сделали предложение перемирия, неприемлемое для грузинского прави-

тельства. Не найдете ли целесообразным созвать экстренное совещание из представителей армяно-грузинской интеллигенции составить новый проект перемирия на основании условий, которые были Вам предложены, когда я и Зурабов были у Вас.

Этот совместно составленный проект сообщить представителям союзников с просьбой его провести.

Так, крайне необходимо прекращение этого погубного для обеих сторон кровопролития, что мы должны всеми силами домогаться этого что бы то ни стало

Жду Вашего ответа».

ԵԼԺ 10, 301:

Պեկտեմբերի 22, Թիֆլիս - Նամակ Վրաստանի Հանրապետության լուսավորության նախարար Գեորգի Լասխիշվիլիին.

«Многоуважаемый Георгий Михайлович!

Сегодня узнал, что представители союзников сделали предложение перемирия, неприемлемое для грузинского правительства.

Крайняя необходимость прекращения этого погубного для обеих сторон кровопролития заставляет меня просить Вас поторопиться с приведением в исполнение резолюции совещания,* которую мы с князем Накашидзе передали Вам позавчера.

Составленный совместно с грузинской писательницей, приемлемый для обеих сторон проект перемирия сообщить представителям союзников с просьбой его провести.

Жду Вашего ответа.

Искренно уважающий Вас *Ов. Туманян*».

*) Խոսքը վերաբերում է դեկտեմբերի 18-ին ընդունված որոշմանը (տե՛ս դեկտեմբերի 19):

ԵԼԺ 10, 302:

Պեկտեմբերի 22 - Տպագրվում է անստորագիր հոդված՝ «Անախորժ դեպք» խորագրով.

«Ամսիս 18-ին Հոլի. Թումանյանը մի խումբ ծանոթների հետ խոսակցելով անցնելիս է եղել Սոլուլակսկայա փողոցով: Խոսակցությունը վերաբերել է հայ-վրացական հարաբերություններին: Հազիվ Հոլի. Թումանյանը և իր ուղեկիցները հասնում են Երևանյան հրապարակ, երբ նրանց մոտենում է մի պարոն և հրավիրում այս-

պես կոչված Հատուկ Ձորամասի (Особый Отряд) դիվան: Հ. Թումանյանին ընդունում է իր գրասենյակում Հատուկ Ձորամասի վարիչներից մեկը և բացատրություն պահանջում Հ. Թումանյանից այն խոսակցության մասին, որ տեղի է ունեցել փողոցում՝ ավելացնելով, որ ըստ իր ունեցած տեղեկությունների Թումանյանը իբր թե Վրաստանի կառավարության հասցեին աննպաստ կարծիքներ է հայտնել: Հ. Թումանյանը պատասխանում է, որ իր ասածների մեջ ոչ մի աննպաստ խոսք չի եղել Վրաստանի կառավարության հասցեին, որ նա միշտ եղել է Կովկասյան բոլոր և մասնավորապես հայ և վրացի ժողովուրդների համերաշխության կողմնակից, և որ փողոցում էլ նրա խոսակցությունը կրել է նույն բովանդակությունը: Այդ բացատրություններից հետո Հատուկ Ձորամասի ծառայողը ցուցակագրել է Թումանյանի և իր ուղեկիցների (բժ. Ն. Կաճկաճյանի, երգահան Հ. Ամիրխանյանի և մի քանի ուրիշների) անունները և հասցեները և արձակել՝ առաջարկելով հետագայում զգույշ լինել և փողոցում մնալ խոսակցություններ թույլ չտալ իրեն:

Նման դեպքերը հազիվ թե նպաստեն արյունահեղության դադարեցման և երկու ժողովուրդների շուտափույթ մերժեցման»:

«Մշակ», 1918, թիվ 263:

Դեկտեմբերի 27 - Տպագրում է («Ժողովրդի ձայն», 1918, թիվ 92) «Ելքը» հոդվածը:*

Դատապարտում է հայ-վրացական զինված ընդհարումները սահմանային խնդիրների պատճառով: Դրանք համարում է ինչ-որ շահագրգիռ ուժերի կողմից հրահրված. «... Ամեն մի եկվոր տիրապետողն աշխատում է ամեն կերպ խառնել իրար հետ բոլոր ժողովուրդներին, խեղաթյուրել սրանց էթնիկական և տերիտորիական ամբողջությունն այն դիտավորությամբ, որ իր դեմ չունենա առողջ ու կենսունակ միություններ, հաստատել և ապահովել իր տիրապետությունը մեկուսացրած ժողովուրդների անդամանջատ երկրամասերի վրա»:

Խնդրի լուծման խաղաղ ելք է առաջարկում. «Ինձ թվում է, թե քաղաքական, ստրատեգիական և նույնիսկ էթնոգրաֆիական սկզբունքները կմնան խախտու և անգործադրելի ժողովուրդների կողմից: Իբրև հաստատ, անդրդվելի միակ հիմքը պետք է լինի **կուլտուր-պատմական սկզբունքը**:

Ժողովուրդները շատ բան կարող են մոռանալ, բայց իրենց

պատմությունը, իրենց կուլտուրան չեն կարող մոռանալ: Ու իրականությունն ապացուցում է, որ կուլտուր-պատմական սկզբունքները ժողովուրդների համար առավել թանկարժեք են, քան թե էթնիկականն անգամ»:

*) Հոդվածի ռուսերեն տարբերակը՝ «Выход» վերնագրով, տպագրվել էր դեկտեմբերի 24-ին «Туфлусскаս лусток» թերթի No 277-ում: Հոդվածին արձագանքում է վրաց բանաստեղծ Տիցիան Տաբիձեն բաց նամակով, որ տպագրվում է «Սաքարթելո» թերթի 1919 թ. թիվ 1-ում (վրացերեն): Տաբիձեն հիշում է. «Ես դեռ մանկուց գիտեի, որ Կովկասը շատ անգամ է դարձել ազգամիջյան ընդհարումների թատերաբեմ: Առաջին մարդը, որ բոլորից ավելի էր տանջվում այդ մտքից, Հովհ. Թումանյանն էր: Նրա յուրաքանչյուր ելույթում, յուրաքանչյուր խոսքում զգացվում էր ցանկություն՝ կանխելու այդ չարիքը: Նրա անկեղծությամբ հավատում էր ամբողջ առաջադեմ վրաց հասարակությունը: Այդ մասին վկայեց Թիֆլիսը նրա քառասունհինգամյա հոբելյանի օրը: Այդ հարցում գրաված Թումանյանի ազնիվ դիրքը դրդեց ինձ բաց նամակ գրել, որ հրատարակվեց մամուլում» (ԹԺՀ, 728):

ԵԼԺ 7, 367-368, 651:

Դեկտեմբերի 27 - Տպագրվում է «Հովհ. Թումանյանի մի հոդվածը» նյութը, որտեղ «Тиф. Лис.»-ից կրճատումներով թարգմանված ներկայացվում է Թումանյանի՝ հայ-վրացական կոնֆլիկտի մասին հոդվածը՝ առանց նշելու վերնագիրը: Բովանդակությունից պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է «Ելքը» հոդվածին (տե՛ս դեկտեմբերի 27):

«Ժողովրդի ծայն», 1918, թիվ 92:

<Դեկտեմբեր> - Գրում է հոդված՝ համաշխարհային կյանքն ալեկոծող իրադարձությունների, դրանց հորձանուտում Հայաստանի ներկա վիճակի և տագնապահարույց ապագայի մասին.

«... Բայց մինչև էդ լավ բաների իրականանալը ով գիտի ինչեր ենք քաշելու: Տեսեք, թե ինչպես է ալեկոծվում աշխարհը մի ծայրից մինչև մյուսը: Դարձյալ մի լայն ալեկոծություն, դարձյալ մի խոշոր ցնցում, և միանգամից կրճկենք մի նոր միջին դարերի բարբարոսության և խավարի մեջ, իսկ մեզ նման փոքր ազգերը, որ պատրաստվում են նոր օրի ու նոր արշալույսի,* կերթան ոտքի տակ: Ահա նայեցեք Հայաստանին. ո՛չ մեր ապիկարությունը սահման ունեցավ, ո՛չ մեր հակառակորդների անգթությունը: Նա էն օրին է հասել, որ միմիայն մի լուսավոր ու հզոր հովանավորություն կարող է նրան փրկել ու կազդուրել:

Այլևս ինձ չի ուրախացնում ո՛չ հանրապետություն, ո՛չ ազատություն: Էս զարհուրելի արհավիրքների տակից էս այլևս չեմ տեսնում ծագող արշալույսը. ընդհակառակը, դեռ կասկածով էլ լցվել եմ դեպի ապագան, միայն մի ցանկություն ունեմ, որ մնացածը ապրի որպես ֆիզիկական գոյություն:

Էս մեծ հարցերի հետ ներքին փոքր խնդիրները միշտ անպակաս –սահմանային վեճը, որ առաջ բերեց էս պատմությունը ու դեռ չի էլ վճռված».*

*) Նկատի ունի մոր իշխանությունների խոստումները:

**) Հոդվածից պահպանվել է միայն այս սևագիր հատվածը:

ԵԼԺ 7, 492-493, 675:

Պեկտեմբեր - Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի անունից դիմում Կովկասում դաշնակից պետությունների ներկայացուցիչներին:

Ընդարձակ շարադրանքով (ավելի քան 10 մեքենագիր էջ) ներկայացնում է հայ ժողովրդի կրած տառապանքները Օսմանյան կայսրության լծի տակ, նրա՝ դարեր տևած անհավասար ապարդյուն պայքարը ազատության համար, նրա ականա մասնակցությունը համաշխարհային պատերազմին, հայ կամավորական ջոկատների մարտական ծառայությունները ռուսական բանակի հրամանատարության տակ, պատերազմի ընթացքում, հատկապես ռուսական բանակի՝ կովկասյան ճակատը լքելուց հետո թուրքերի վայրագությունները Արևմտյան և Արևելյան Հայաստանում, հայ ժողովրդի գլխին կախված իսպառ բնաջնջման վտանգը: Այնուհետև գավառ առ գավառ ներկայացնում է հայության կրած մարդկային և նյութական վնասների վիճակագրությունը: Եվ վերջում.

«Но твердое сознание справедливости нашего дела и непоколебимая вера в конечную победу принципов культуры озаряли ярким светом крестный путь многострадального нашего народа и ныне в минуту победного торжества союзников и установления мира на новых началах, мы, Армянские Землянические Союзы, представляющие нашу провинцию, ее жителей, обращаемся к Союзникам с нижеследующим:

Первое. Мы просим немедленно-же освободить нашу родину от воинских частей Османского Правительства и явных и тайных агентов последнего, продолжающих свое злое дело сея-

ния раздоров и смуты между нами и вековыми нашими трудящими мусульманскими массами, пользуясь темнотою последних.

Второе. Принять действенные меры к срочному и безболезненному возвращению беженцев в родные места.

Третье. Принять экстренные меры к тому, чтобы отходящие турецкие войска и мусульманские банды не увозили с собой и не уничтожали наше уцеленное имущество.

Четвертое. Принять меры к тому, чтобы немедленно-же был наложен арест на имущество наше, вывезенное, где-бы оно не было - на станциях-ли находилось – на станциях-ли железных дорог, пристанах-ли и других путях в Турцию и в частности установить охрану по Эрзрумскому шоссе, и на Батумской линии для прекращения открытого разбоя.

Пятое. Предложить Турецкому командованию и местным татарам, действующим под руководством последнего, снять осаду Карабаха (Елизаветпольской губ.), если таковое еще продолжается, освободить беженцев Гекчайского и Шамахию-ского уезда, запертых в лесах, и Нухинского и Арешского уездов, осажденных в горах и лесных бедрах.

Шестое. Установить по Закавказию свободу передвижения и обеспечить безопасность жизни и имущества также и армян при их передвижении.

Седьмое. Установить порядок, которым было бы устранено влияние и давление турок и их агентов при решении внутренних вопросов между нами и соседних нам мусульманскими трудовыми массами.

Восьмое. До окончательного политического установления нашей Родины на предстоящем всемирном конгрессе весьма срочно отпустить достаточные материальные средства – деньгами, продовольствием и сельскохозяйственными орудиями, для восстановления нашего трудового хозяйства, без чего истребление нашего народа будет продолжаться и более, но только мирным путем.

Центральный Совет Армянских Землянических Союзов взял на себе приятную обязанность возбуждения настоящего ходотайства перед Правительствами Союзных Государств, вполне уверен в благоприятном для Армянского народа разре-

шения поставленных всем вопросам, либо оно вытекает из самого понятия справедливости, культуры и необходимости восстановления поправленного права, к чему Союзные Державы так последовательно и планомерно шли по настоящему день».

Դիմումն ստորագրել են Հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նախագահը և քարտուղարը:

ԹԹ ԹԸԱ, թղթապանակ 42:

1918, <տարեվերջ> - Ազգային խորհրդին է ներկայացնում Լոռու, Ղազախի, Շամշադնի, Բորչալուի և Փամբակի լիազորության 1918 թ. արած ծախսերի հաշիվը.

Ազգային խորհրդի Ղարաքիլիսայի հանրակացարանի համար Թիֆլիս գնված իրեղեններ և մթերք - 621

Հանրակացարանի մի տարվա վարձը - 600 և այլն:*

Ստորագրություն՝ ընդհանուր լիազոր՝

Հ. Թումանյան:

*) Ծախսերի թվարկումը շարունակվում է:

ԳԱԹ ԹՖ, 2444-2445 (220 III ց.):

1918 - Գրում է «Ձոն» վերնագրով հոդվածը.*

«Երիտասարդ ընկերներ:

Վաղուց ի վեր մենք բաժանված ենք եղել երկու մեծ հատվածի՝ ռուսահայ և տաճկահայ, ու միշտ ձգտել ենք նորից միանալու, իբրև մի պատառված ամբողջության երկու մասեր: Բայց աշխարհքի չար տիրողները ամեն անգամ սրերով են կտրատել մեր՝ եղբայրական գրկախառնության համար իրար տարածած բազուկները:

Էսօր էլ, եթե միացել ենք, միացել ենք համաշխարհային թոհ ու բոհի հետևանքով, կենդանին ու մեռելն իրար խառնված, երբ հույսի ու հիասթափության շափառուկները անդադար հետևում են իրար մեր տակավին սևակնած երկնքում:

Սակայն անխորտակելի է մեր ժողովրդի կուլտուրական հակումն ու ձգտումը, և ստեղծագործության տենչն ու կարոտը՝ անդիմադրելի:

Երբ ամեն ինչ կորցրած գաղթականը օտարության մեջ հենց կանաչ խոտի վրա կրակ արավ թե չէ, իր առաջին հոգսերից մեկն եղավ գրադարան հիմնել, դպրոց բանալ ու թերթ հրատարակել:

Այժմ էլ, երբ մի կողմի արյունն ու արցունքը չեն ցամաքել, իսկ մյուս կողմը երերում է տազնապի դաժան շնչից, մեր երիտասարդ

գրողները երկուստեք իրար են եկել՝ իրենց անցյալի տխրության ու ապագայի խնդության արցունքները միացնելու մի նոր-հզոր Հրազդանի մեջ՝ սասանած հայության ոգին ոռոգելու և կազդուրելու համար: Ես ուզում եմ մեր անմահ Նահապետի՝ Հրազդանի երգչի անուշ խոսքերով բացականչել.

- Ա՛յ դրախտի ջրեր, իջե՛ք, իջե՛ք,

Ջերկիրն Հայոց արբեցուցեք...

Բարով ես գալիս, ո՛վ նոր Հրազդան, բարով եք գալիս, ո՛վ նորեր, ո՛վ լավեր: Դո՛ւք, որ բազմատանջ հայության երկար ժամանակ բաժանված ու իրար կարոտ հոգիները առաջին անգամ միացնում եք ձեր՝ թեկուզև համեստ, բայց գեղեցիկ գործի մեջ: Օրինված լինեք և՛ դուք, և՛ ձեր ազնիվ գործը: Եվ թող ձեր երիտասարդ կյանքի վրա բացվի էն երջանիկ արշալույսը, որ մեր՝ նախորդներիս, երիտասարդությունը երազեց իր փոթորկալի ու մութ գիշերին»:

*) Տպագրվել է սկսնակ գրողների «Հրազդան» գրական-գեղարվեստական ժողովածուի սկզբում (Գիրք Ա, 1918, Թիֆլիս, էջ 3-4)՝ իբրև առաջաբան՝ ծանոթագրությամբ. ««Հրազդանի» խմբագրությունը անհրաժեշտ չի գտել առանձին հառաջաբանով բացատրել թերթի նպատակը, քանի որ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանն հստակորեն ընդգծել է նպատակը՝ իր գեղեցիկ «Ձոնի» մեջ» (էջ 96):

ԵԼԺ 7, 368-369, 651:

1918 - Գրում է «Ս. Նունեի* պատկերի առաջ» («Խունկի բուրյան մըշուշներում...») բանաստեղծությունը:**

*) Ս. Նունեն վրաց եկեղեցու սրբերից է:

**) Պահպանված մի սևագիր ձեռագրում վերնագրված է «Վրաստանի ոգին»: Ս. Գորոդեցկին հիշում է. «1918 թվականը նշանավորվեց վրաց բանաստեղծների հետ Թումանյանի բազմաթիվ հանդիպումներով, գրույցներով ու ժողովներով: <...> Այդ թվականին Հովհաննես Թումանյանը գրեց այնպիսի սքանչելի բանաստեղծություն, ինչպիսին է «Վրաստանի ոգին».

Խունկի բուրյան մըշուշներում,
Սըրմունջներով պատած երգի՝
Կանգնած է նա կապույտ հեռվում՝
Վարդը կյանքի, հարսն երկընքի,
Եվ չըգիտեմ աղո՞թք անեմ,
Թե՞ ըզմայլվեմ իր գեղի դեմ:

Այդպիսի բանաստեղծություններ ունկնդիրները ցնծությամբ էին ընդունում» (ԹԺՀ, 688-689):

ԵԼԺ 1, 639:

1918 - Գրում է «Աղջիկ Անուշ, երգ Անուշ...» քառյակը:
ԵԼԺ 2, 75:

1918 - Վենետիկի Մխիթարյանները հայերեն թարգմանությանը տպագրում են «Ποэзия Арменуса» (Մոսկվա, 1916) ժողովածուի համար իբրև առաջաբան ռուս բանաստեղծ և քննադատ Վալերի Բրյուսովի «Հայ բանաստեղծությունը և իր նույնությունը դաբերու ընթացքի մեջ» ծավալուն հոդվածը:

«Բազմավեպ», 1918, թիվ 1-12 (հունվար-դեկտեմբեր), Վենետիկ-Սուրբ Ղազար, էջ 140-141:

<1918> - Մտքեր օրատետրից.

«Ամբողջ մարդկությունը մի ընտանիք է: Ժողովուրդները էդ մեծ ընտանիքի անդամներն են: Գնում են մի նպատակի, և ամեն մեկն ունի իր դերը - երջանիկ դարձնելու ամենքին, և ամենքի երջանկությունը դարձնելու ամեն մեկի երջանկությունը: Ի՞նչ դեր ունի ամեն մի ժողովուրդ: Նեղ ազգայնականությունը և այլն ինչքան են վնասում, կառավարություններն ինչքան են վնասում, աղանդները և այլն:

Մեծ պատերազմի հաղթությունը եղավ ռուսական բոլշևիզմը: Նա եղավ էն ցնցումը, որ նոր հոգեբանություն ու նոր կյանք է առաջ բերելու: Նա ճամփի վրա է գցում: Հնի խորտակումն է, որ արդեն զգվեցրել էր ամենքին, իմպերիալիզմի դեմ բողոքել են բոլորը - ցրիվ և դժգոհ են եղել բոլորը – սա միանգամից էդ զայրույթը հավաքեց և զարկեց: Եվ ստիպում է նոր մտածել ու նոր ճամփա բռնել...

... Մենք մեջտեղն ենք – *հոգևոր* Արևելքի և *գործնական* Արևմուտքի: Արևելքը – մարդը հասցրել է աստծուն, տիեզերքին: Աթմանին* խառնել: Իսկ Արևմուտքը - ամենաշատը մինչև դասակարգը: Եվ ունեցել է էնպես թռիչքներ – ինչպես ֆրանսիական, անգլիական մեծ խարտիան – մարդու իրավունքը...

Երկուսի սինթեզը:

Իրենց մեծ էնցիկլոպեդիստներից հետո ֆրանսիական հեղափոխությունը – ընդհանուր եղբայրություն, հավասարություն և ազատություն:

Անգլիական մեծ խարտիան – մարդու իրավունքը:

Ռուսը – նոր կոմունիզմը – իսկ Արևելքը - վաղուց ի վեր»:

*) Աթմանը հնդկական կրոնի՝ բուդդիզմի և հնդկական փիլիսոփայության կենտրոնական գաղափարներից է, որ նշանակում էր անհատական հոգևոր սկիզբ: Հաճախ Աթմանը նույնացվում էր Բրահմանին՝ իբրև տիեզերական, օբյեկտիվ հոգևոր սկիզբ:

ԵԼԺ 8, 450-451, 652:

<1918> - Գրառում Հայաստանի անկախության մասին.

«Այո՛, անկախությունը լավ բան է: Դրա մասին չխոսեմք:

Բայց եթե ինքը՝ հայ ժողովուրդը, ֆիզիկապես, ֆինանսապես, բարոյապես անկարող է իր անկախությունը պաշտպանելու, ոչ մի պետություն էլ հանձն չի առնում նրան հովանավորելու և պաշտպանելու,- ի՞նչ պետք է անենք: Չենք ուզում:

Եթե անկախությունը թոկ է դառնալու հայությունը խեղդելու համար – չենք ուզում:

Եթե անկախ Հայաստանը դառնալու է մի փոքրիկ վանդակ՝ ամեն կողմից դռները փակած, և միակ դուռն էլ, որ բաց է - բաց է տաճիկ ասկյարի համար, չենք ուզում»:

ԵԼԺ 8, 451:

<1918> - Գրառումներ իր քաղաքական հայացքների մասին.

«Ես երբեք ինձ սոցիալիստ չեմ անվանած, ինչպես և քրիստոնյա, որովհետև մի քիչ ծանոթ եմ թե՛ սոցիալիզմի էության և թե՛ ավետարանին և տեսնում եմ, որ ոչ մեկն էմ, ոչ մյուսը: Եվ եթե որևէ սոցիալիստական խմբակցության էլ կապված եմ եղել ու շատ կարճ միջոցով, կապված եմ եղել ոչ թե ծրագրային կապով, այլ լոկ ընկերական և կոնկրետ գործի շուրջը:՝ Եվ էսպես շատ է մեծ իմ հարգանքը դեպի սոցիալիզմը, և բնականից իմ մեջ կան նրա հայացքները – իբրև բանաստեղծի:

Ամեն մի իսկական սոցիալիստ նոր ժամանակի առաքյալն է: Հին ժամանակի և նոր ժամանակի առաքյալների մեջ մի քանի էական տարբերություններ կան: Հին ժամանակի առաքյալը կյանքում զրկված մարդու և ընչազուրկի պաշտպանությունը հիմնում է իր ողորմության վրա, նոր ժամանակների առաքյալը նույն բանը հիմնում է արդար աշխատանքի և վաստակի ու կյանքի վայելքների արդար բաշխման վրա:

Եվ հին ու նոր ժամանակի ամենամեծ անջրպետներից մեկը էս երկու հայացքների տարբերությունն է:

Երկրորդ մեծ տարբերությունը սա է. հիմը – սուրբեր, որ իրենց

հոգին էին փրկում, փախչում էին կյանքից ու աղմուկից. նորը – հերոսներ, գործիչներ, որ չեն փախչում կյանքից, ընդհակառակը՝ մեջք են ընկնում՝ ուրիշներին փրկելու:

Վերջապես, հինը ասում էր՝ իմ իշխանությունը էս աշխարհից չի, նորը ընդհակառակը՝ շատ է իրական և դրա համար էլ էս աշխարհում և՛ իրական իշխանություն ունի, և՛ ույժ – կազմակերպված բանվորություն և սոցիալիստական վարդապետություն անող հսկա բազմություն, որ արդեն մեծ է ամեն մի պետությունից»:

*) Նկատի ունի 1905-1906 թվականների ընթացքում Լոռու և Ղազախի շրջանում հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործը:

ԵԼԺ 8, 451-452, 652-653:

<1918> - գրում է «Մեծ տարբերություններից» հոդվածը:

Դատողություններ են ռուսական «բոլշևիզմի» համայնատիրական գաղափարախոսության ծագման և ժամանակի ընթացքում դրա փոփոխությունների շուրջ: Տարբերակում է «բոլշևիզմի» երկու տեսակ. «Ոչ թե էն սարսափելի բոլշևիզմը, որ ջարդում ու սարսափ է տարածում ավերչի ձեռքով, այլ էն բոլշևիզմը, որ մարդուն հասարակական ու անհատական երջանկություն է խոստանում»:

Ոմանք կարծում են, թե ռուսական բոլշևիզմը պատերազմից հոգնած ու տուն վերադարձած զինվորների ձեռքի գործն է, ոմանք էլ, թե՝ «Լենինը փակված վագոնում եկավ Գերմանիայից, որ Ռուսաստանը քայքայելու համար տարածի էդ բոլշևիզմը»: «Բայց,- ինչպես գրում է բանաստեղծը,- ավելի լայն ու խոր հասկանալու համար պետք է դիմել ժամանակին ու հարցնել, թե որտեղից է բոլշևիզմը: Արդյո՞ք նա մի պատահական, սեպարատ երևույթ է, թե որևէ գաղափարի զարգացումը: Եվ երբ հարցնում եք ժամանակին, պարզ ու պայծառ կանգնում է ձեր առջև ամբողջ պատմությունը և երևույթն էլ բացատրում է շատ հասարակ ձևով»:

Ըստ այդ բացատրության՝ համայնատիրության գաղափարը ծագել է մարդկային ցեղի բնական անհավասարությունից, որ ժամանակի ընթացքում հասարակական իմաստ է ձեռք բերել, հետո անցել է կրոնական բարոյախոսության ոլորտ և վերջիվերջո հանգեցրել բոլշևիզմին: «Եվ ահա էսպիսով, ինչպես տեսնում ենք,- եզրակացնում է բանաստեղծը,- մարդկության մեծամասնության դատն է դրված իրապարակում, առանց ազգի խտրության»:

Վերջում գրում է այդ դատի դրվածքի տարբերությունների մա-

սին հին ու նոր ժամանակներում. «Արդ, ինչի մեջն է տարբերությունը էդ մեծ դատի վերաբերությամբ, ինչով են տարբերվում հին ու նոր ժամանակները: Հին ժամանակը աղքատի ու գրկվածի դատը հիմնված էր խղճմտանքի վրա և անհատական գործ էր, մեր ժամանակներում նա հիմնված է հասարակական գիտակցության վրա և կազմակերպված քաղաքական գործ է: Մեկը կրոնական-բարոյական պահանջ ու պարտականություն էր, մյուսը քաղաքական ու քաղաքացիական պահանջ ու հասարակարգ:

Մեկը իր բարձր արտահայտությունը գտավ քրիստոնեության մեջ, մյուսը՝ սոցիալիզմի: Մեկը տարածվեց առաքյալների ձեռքով, մյուսը՝ հեղափոխական պրոպագանդիստների: Մեկը մարմնացավ քրիստոնեական եկեղեցու մեջ, դարձավ եկեղեցական նվիրատվություն, և մյուսը արտահայտվեց հասարակապետությունների կերպարանքով և առայժմ իր ամենաբարձր արդյունքին է հասել ռուսական բոլշևիզմի մեջ:

Մեկը մեծապես մյուսի ժառանգն է, ինչ-ինչ ծանոթություններով:

Մեկը եղբայր է ասում մարդկանց, մյուսը՝ ընկեր:

Առաջին կոմունիստական կազմակերպությունները եղան քրիստոնեական վանքերը»:

ԵԼԺ 7, 493-496:

<1918> - Գրառում ժողովուրդների փոխադարձ շփումների ու փոխազդեցությունների մասին:

Գրում է, որ գտնվելով Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի միջև՝ Հայաստանը «նրանց մեծ արշավանքների, վաճառականական հարաբերությունների, մշտական անցուդարձի և մեծ շարժումների կամուրջ» է եղել: Այժմ էլ «լիքն է ինչպես նրանց թողած ավերակներով, էնպես էլ նրանց թողած կուլտուրական ազդեցությունների հետքերով»։ «Խառը ազգաբնակչություն ունեցող քաղաքներից ո՞րն էլ գնաք, կգտնեք սովորաբար եզերքներին, ետ ընկած թաղամասերում առանձնապես առանձին ցեղերի պատկանող բնակիչներին՝ նստած իրենց հատուկ բնակարաններով, նիստ ու կացով, լեզվով ու տարազով: Ներս մտնեք, կտեսնեք՝ խառն են, բայց դարձյալ ամեն մի թաղում որոշ ազգի բնակչություն է գերակշռում. իսկ երբ հասնում եք քաղաքի կենտրոնի հրապարակներին կամ կամուրջներին,

էստեղ արդեն խռնված են ամենքը ու իրար են անցնում ամեն լեզվի ու տարազի մարդիկ:

Աշխարհն էլ էդպես է:

Քաղաքակրթության մեծ օջախներից ու հաղորդակցության մեծ ճանապարհներից հեռու ժողովուրդները երկար դարերով մնում են անխառն՝ իրենց հատուկ կյանքով ու կերպարանքով, տարազով ու լեզվով, իսկ ժողովուրդների համար կենտրոնական հրապարակ կամ կամուրջ հանդիսացող երկրները անվերջ հեղեղման մեջ են եղել և ներկայացնում են խառնուրդ հնուց անցած գնացած կամ նրանցից հետո նոր եկած զանազան ցեղերի և նրանց ամեն տեսակի ազդեցությունների...»:^{*}

^{*}) Ձեռագիրն այստեղ ընդհատվում է. հավանաբար հատված է անավարտ կամ ամբողջապես չպահպանված ինչ-որ հոդվածի:

ԵԼԺ 7, 496-497:

1918 - Թիֆլիսում տպագրվում է Սերգեյ Գորոդեցկու «Ангол Арменус» ժողովածուն, որ բացվում է «Հայաստան» բանաստեղծությամբ (տե՛ս 1916, ապրիլի 13):

Ժողովածուն նվիրվում է Թումանյանին՝ հետևյալ ընծայակա-նով. «Ձեզ եմ նվիրում, լուսավոր բարեկամ, այս գիրքը ոչ միայն այն պատճառով, որ մինչև սրտիս խորքը հմայված եմ Ձեր անձնավորու-թյամբ, այլև այն պատճառով, որ Ձեր անունը գաղափար է, իմ հայ-րենիքի բարեկամությամբ հայոց հարության գեղեցիկ գաղափարը»:

ԹԺՅ, 874:

1918 - Սարմենը (Սարգսյան Արմենակ) Թումանյանին է ներկայացնում իր քառյակների և բանաստեղծությունների տետրը:

Քառյակներից մեկը.

Արև-բարձունքի հավերժության դեմ կյանքը՝ ակնթարթ,

Բայց մարդիկ էլ կան, որ հավետ կապրին աշխարհի սրտում:

Երանի նրան, ով չկա, բայց կա իր գործը անպարտ,

Ով որ տանում է իր հավերժության մարդը ակնթարթ:

1918, Գանձակ:

ԳԱԹ ԹՖ, 2802 (576 լր.):

Հունվարի 1 - Տպագրվում է «Հայ գրականությունը 1918 թվին» տարեկան տեսությունը՝ Գ. Շահինյան ստորագրությամբ:

Գրում է, որ «անցնող 1918 թ. մեր ժողովրդի համար դեզերումի և կոտորածի տարի եղավ», դրա համար էլ «մեր գրականության կորիֆեյները՝ Շիրվանզադե, Նար-Դոս, Ահարոնյան, Շանթ, Թումանյան, Հովհաննիսյան, համարյա ոչինչ մնալուն և արժեքավոր, սազական իրենց տաղանդին, չարտադրեցին...»:

«Զանգ», եռօրյա թերթ, Երևան, 1919, թիվ 1:

Հունվարի 6 - Նամակ Վրաստանի Հանրապետության նախագահ Նոյ ժորդանիային

«Милостивый государь Но́й Николаевич!

Как я вам сообщил письменно и на словах, мною, ввиду осложнений, связанных с прискорбным армяно-грузинским конфликтом, была временно приостановлена деятельность бюро, организованного нашим союзом под моим председательством, по установлению потерь армян от всемирной войны.

Ныне ввиду наступившего успокоения я решил возобновить деятельность указанного бюро и просить во избежание досадных недоразумений известить онеимению с Вашей стороны препятствий.

Примите уверения в совершенном уважении и преданности.

Председатель Совета союзов центрального совета армянских землячеств».

ԵԼԺ 10, 303:

Հունվարի 10 - Տպագրվում է Տիցիան Տաբիձեի «Հովհաննես Թումանյանին» բաց նամակի հայերեն թարգմանությունը.*

«Քաղաքականությունը Հայաստանի և Վրաստանի բախտի վճիռը հանձնեց արյունոտ սրին,- մինչև որ դեմոկրատիան սպառեց խաղաղ ճանապարհով հաշտություն ձգելու բոլոր միջոցները- սակայն դեմոկրատական սրից էն կողմն էլ խոսում է բանաստեղծությունը:

Ձեզ ճանաչում է վրացի հասարակությունը՝ ինչպես բանաստեղծի և հայրենասերի: Ոչ ոք ավելի իրավունք չունի Հայաստանի

Ժողովրդի անունից խոսելու ինչպես Դուք, և ոչ ոքի ձայնը չի լինի այնպես ճշմարիտ և բարձր, ինչպես լուսավորված բանաստեղծինը և հայրենասերինը: Դուք, ինչպես բանաստեղծ, այս իրավունքը ստացաք զգացված երգերով և իբրև հայրենասեր, երբ յոթը զավակներիդ օրհնեցիք պատերազմի դաշտը ուղարկելիս ընդդեմ թուրքերի (տե՛ս 1917, դեկտեմբերի 26.- խմբ.): Դուք այն ժամանակ հավատում էիք պատերազմի նպատակին և գիտեիք, որ ամեն մի պատերազմից պիտի հաղթող դուրս գա ճշմարտությունը և կուլտուրան:**

Բայց դեռ չէր վերջացել պատերազմը Թուրքիայի հետ, որ նոր պատերազմ սկսվեց այժմ վրացիների հետ. մենք հավատում ենք, որ չի գտնվի մի ուրիշ հայ, որին այնպես տխրացներ այս պատերազմը, ինչպես Ձեզ:

Բացի նրանից, որ Ձեր մեջ խոսում է բանաստեղծի բարեծնությունը, Դուք առաջինը վճիռ դրիք Կովկասի ապագայի համար:

Սա հեղափոխության Ձեր գնահատումն էր, որի մեջ Դուք հաստատում էիք, որ Վրաստանը Կովկասի Ֆրանսիան է (տե՛ս 1918, մարտի 11), ենթադրում էիք հանձինս Ֆրանսիայի հեղափոխության պաֆոսը և բարեծնության բանաստեղծությունը:

Մի քանի օր առաջ, մինչև պատերազմը կսկսվեր, Դուք ինքներդ առաջինը գրեցիք հաշտեցուցիչ խոսք Վրաստանի սահմանների մասին (տե՛ս 1918, նոյեմբերի 14):

Այո՛, Վրաստանի մասին:

Միայն բանաստեղծն ազգային արժեքի իսկական զգացմունք ունի, և այս պատճառով էլ Դուք պիտի այս խոսքն ասեիք:

Հիմա էլ, երբ ռազմաճակատում պատերազմ է- և Մակեդոնիայի ուրվականով երկյուղ է ներշնչում ապագային, և անհնար է առանց կրքի խոսելը- գոնե Դուք ցույց կտաք այս համարձակությունը և կասեք սովորական ճշմարտությունը:

Վրաստանը դարերի ընթացքում հաստատեց իր բարեծնությունը և անընդհատ ավանդապահությամբ պահպանեց իր ստրկության մեջ էլ (տե՛ս 1918, մարտի 11) ուրիշ ազգության պատվով վերաբերվելու, եթե նա հալածանքի և նեղությունների է ենթարկված: Վրաստանի դեմոկրատիայի առաջնորդներն էլ ծերացան միջազգայնության (ինտերնացիոնալի) մաքրության պահպանության մեջ և այսօր էլ արդարացում է վրացի դեմոկրատիան իր անձնապաշտությունը նույնիսկ պատերազմով:

Բայց սա էլ որ փոխվի և եկեղեցիներում լսվի անեծքը- վրաց բանաստեղծությունը իր անձի պաշտպանությամբ բարձր կլինի: Եվ ազգային արժեքի գիտակցությամբ մեղապարտների գործը չի խառնի ազգի հավիտենական սրբության հետ:

Այն վկայելու, որ բարեծննդությունը մշտապես պիտի գնահատվի- Ձեզ հետ զրուցելու, Ձեր գրածը մտաբերելու մասին այս հիշումն է:

Ես և այն վրացի բանաստեղծները, որոնց Դուք ճանաչում եք- Ձեզ պատվելու մեջ միացած- մտածում ենք, որ կկտրվի պատերազմ սկսող ձեռքը, Հայաստանի ժողովուրդն էլ կազատվի Ադաֆերի ճանապարհից, և Ձեր ու ձեր նման հարգելի բանաստեղծներով լուսավորված ճանապարհը կմնա Ձեր խաղաղ սահմաններում»:

*) Վրացերեն բնագիրը տպագրվել էր «Սաքարթվելո» («Վրաստան») թերթի 1919 թ. թիվ 1-ում:

**) Այս հավատը արտահայտվել է Թումանյանի՝ 1914 թ. պատերազմի թեմայով գրված մի քանի հոդվածներում՝ «Ազգերի պատերազմը և նրանց դյուցազունները» («Հորիզոն», դեկտ. 4, թիվ 194), «Սրանով կհաղթեն» («Հորիզոն», հոկտ. 12, թիվ 226), «Վերջին տագնապը» («Հորիզոն», հոկտ. 21, թիվ 233) և այլն:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 6:

Հունվարի 12 - Տպագրվում է Գ. Շահինյանի «Հայ գրականությունը 1918 թվին» տարեկան տեսության (տե՛ս հունվարի 1) շարունակությունը:

Հանրագումարի է բերում իր դիտարկումները.

««Հմերը», «մեծերը» լռել են, երգում են «նորերը», լսենք նրանց ու հասկանանք և տարբերենք նրանց: Շատ չեն այնքան էլ այդ անունները՝ Քալաշյան, Գ. Շահինյան, Լեյլի, Արմ. Տիգրանյան, Ռաֆայել Ջարդարյան, Ա. Բորյան, Վեսպեր, արձակագիրներից Ծ. Թորգոմյան, Ս. Ջորյան:

«Հմերի», «մեծերի» և «փոքրերի» ու «նորերի» առաջին տարբերությունը սահմանող գիծը աշխարհապրումի տարբերությունն է: Ասել է՝ մեծերը՝ Թումանյան, Հովհաննիսյան, Դեմիրճյան, Իսահակյանն ու Տերյանը աշխարհը չեն ապրում որպես ռեալ հանգամանք, իբրև ներկա:

Չկան «մեծերից» դեպի կյանքը ձգվող թելեր, նոքա բոլորը կամ անցյալի հեքիաթայինն են ապրում (Թումանյան) կամ մերժում են ներկա սոցիալական բուրժուական հասարակարգը (Իսահակյան, Հովհաննիսյան) կամ կառչում են այնպիսի արժեքների, որոնք

տիեզերական են ներքուստ, ուրեմն և վաղվա, կամ այսօրի, այս իրականի հետ քիչ առնչացված (Դ. Դեմիրճյան) կամ կյանքն ու աշխարհը, ասել է հասարակական կենցաղն ու բովանդակ մեծ անշունչը դարձնում են «երազ ու հեքիաթ» և միրաժի պես ձգում են մեր հոգին երազայինն ու ցնորականը (Տերյան)....»:

«Զանգ», 1919, թիվ 5:

Չունվարի 16 - Չովսեփ Միրզոյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Թեհրանից.

«Իմ թանկագին բարեկամ

Ձեր նամակը (տե՛ս 1918, դեկտեմբերի 7) և Ձեր որդու սպանության լուրը խիստ մեծ ցավ պատճառեց ինձ: Անմիջապես սկսեցի տեղեկություններ հավաքել այստեղ: Բայց դժբախտաբար ոչ մի դրական արդյունքի չհասա: Այսքանը միայն հաստատ է, որ Արտիկը երեք ուրիշ ընկերոջ հետ դուրս է եկել Բեջայրից, բայց Համադան բնավ չի հասել: Թե ինչ է պատահել նրանց, շատ բան ասում են, բայց ոչ մեկը ստույգ չէ, ընդհակառակը, բոլոր այդ կողմնակի տեղեկությունները հիմնված են ասեկոսեների վրա:

Այդ պատճառով ես գրեցի Համադան եղբորս, որ ոչ մի ջանք կամ ծախք չխնայի ստույգ տեղեկություն ձեռք բերելու և հաղորդելու ինձ: Բնական բան է, որ եթե ես լուր ստանամ նրանից, անմիջապես կհաղորդեմ քեզ - եթե հարկ լինի նույնիսկ հեռագրով:

Մինչև այդ, բոլոր սրտով մաղթում և ցանկանում եմ, որ Արտիկի սպանման տարածված լուրերը սուտ դուրս գան և մի կողմից մի գեղեցիկ օր հայտնվի ձեզ մոտ՝ մխիթարելու Ձեր հայրական սիրտը:

Մինչ այդ խնդրեմ ձեր այս ծանր օրերում ընդունեք իմ սրտագին համակրանքի անխափան հավաստիքը:

Ձեր անկեղծ՝ Յ. Միրզոյան»:

ԳԱԹ ԹՖ, 1756 (403):

Չունվարի 21, Թիֆլիս - Տպագրում է («Ժողովրդի ձայն», 1919, թիվ 18) բաց նամակ-երկտող Տիցիան Տաբիձեին.

«Իմ ազնիվ բարեկամ, կարդացի հայ-վրացական կոնֆլիկտի առիթով Ձեր հրապարակական նամակը, որ ուղղել էիք ինձ (տե՛ս հունվարի 10.- իսմբ.): Ձեր նամակից անմիջապես հետո սկսվեցին հաշտության բանակցությունները: Էդ պատճառով ես հետաձգեցի իմ պատասխանը, որովհետև բանակցությունների էս կամ էն ելքը մեծապես ազդելու էին իմ պատասխանի բնավորության վրա: Այժմ,

բարեբախտաբար, հաշտությունն արդեն կայացած է և էլ չի ուշանալ Ձեր պատասխանը»:

ԵԼԺ 7, 370:

Հունվարի 23 - Լեոյի երկտողը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հիվանդ եմ, չեմ կարողանում դուրս գալ, խնդրում եմ դեկտեմբեր ամսվա ռոճիկի* մնացորդը տաս Սիմոնիս»:

*) Լեոն համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասները որոշող բյուրոյի պատմահասարակական բաժնի վարիչն էր (տե՛ս ԵԼԺ 10, 652-653):

ԵԼԺ 10, 657:

Հունվարի 23 կամ 24 - Երկտող Տիգրան Հովհաննիսյանին.*

«Տիգրան,

Լեոն հիվանդ է: Իր դեկտեմբերի մնացորդ երկու հազարը խնդրում է: Եթե հնար ունես, արա:

Քո Հովհաննես»:

*) Տ. Հովհաննիսյանը Բյուրոյի քրեական-քննչական բաժնի վարիչն էր: Պետք է հայտնաբերել ու գրանցել թուրքերի հարձակումների ժամանակ կատարված սպանությունների և այլ գազանաբարո արարքների փաստերը:

ԵԼԺ 10, 363:

Հունվարի 26, Թիֆլիս - Տպագրում է («Հորիզոն», 1919, թիվ 11, «Հառաջ», 1919, թիվ 11) «Պատանեկության օրերից» հուշագրությունը:

Գրված է իր պատանության ընկեր, հետագայում հասարակական-քաղաքական գործիչ, դաշնակցության հիմնադիր անդամներից Ստեփանը Ջորյանի (Ռոստոմ) մահվան կապակցությամբ:

Հիշում է իրենց առաջին հանդիպումը 1883 թ. քեռի Բաղդուտանը, երբ հայրը իրեն բերել էր Ներսիսյան դպրոց ընդունվելու, իսկ Ստեփանը արդեն ռեալական ուսումնարանի աշակերտ էր: Գրում է իրենց մտերմության, պատանեկան հետաքրքրությունների ու արկածների մասին, նաև թե ինչպես Ստեփանը սիրում էր լսել, և ինքն էլ հաճախ պատմում էր պատմություններ հատկապես «քաջերի կյանքից», «Հետագայում էլ մի քանի պատմություններ արավ ու առաջարկեց, որ բանաստեղծության նյութ առնեն: Ես նրա պատմածներից միայն մեկից, որ պատմեց 1890 թվականին, մի տերտերի ու իր աղջկա պատմությունից օգտվեցի ու նյութ առա մի պոեմի: Պոեմը թեև գրելիս բոլորովին փոխվեց և ուրիշ բան դուրս եկավ, բայց ես նվիրեցի Ստեփանին: Բավական տարիներ առաջ ռուս

Ժանդարմները խուզարկեցին,* տարան կորցրին էդ պոեմը և միայն մի երկու կտոր գտա պատահմունքով, որ տպվեցին «Տանը», «Երկրուն», «Հայոց լեռներուն» վերնագիրներով»:**

Բնութագրում է ընկերոջը՝ իբրև մարդու և իբրև ազգային-հեղափոխական գործչի. «Ռուս գրականության ազդեցության տակ նա պատրաստի ժողովրդասեր էր, ինքն էլ ի ծնե դեմոկրատ, հայ ժողովրդի ու նրա վիճակի վրա էլ որ աչքը բացվեց, արդեն գրեթե կազմակերպված էր ապագա Ռոստոմը:

Էսպես էր, երբ ռեալական դպրոցն ավարտեց ու գնաց Մոսկվա ուսանելու:

Մոսկվայից արդեն հեղափոխականի նամակներ էր գրում:

Զմոռանամ ասել, որ 1884 թվականին մի օր եկավ տուն ու հայտնեց, թե էսօր քո հայրենակից մի լավ տղի հետ ծանոթացա:

Անունը ազգանունը հարցրի:

Ասավ՝ Սիմոն Զավարյան:

Ռ՞վ կարող էր էն ժամանակ ենթադրել, թե երկուսն էլ, տակավին աշակերտներ, միևնույն չարքաշությամբ անցնելու էին միևնույն ճանապարհը ու թաղվելու էին նույն գերեզմանատանը, կողք կողքի, երկուսն էլ միշտ կարոտ կուլտուրական խաղաղ կյանքի ու աշխատանքի՝ իրենց հետ տանելով միշտ իրենց փայփայած գեղեցիկ ծրագիրները:

Իմ նպատակից դուրս է Ստեփանի պատանեկության էս շրջանից դեսն անցնելը, սակայն մի բան կարող եմ ասել, որ նա իր բնավորությամբ, իր բարոյական առողջ ամբողջությամբ մնաց նույնը, ինչ որ էր պատանի ժամանակ: Միշտ պարզ, հասարակ, քչով բավականացող, իրեն զրկող, հաշտարար և բոլորանվեր նվիրվող ամեն մի գործի, որ կառներ իր վրա:

Ինչպես ծնվել էր, էնպես էլ մնաց, էնպես էլ գնաց»:

Եվ վերջում. «Գնա՛, Ստեփա՛ն ջան, դու էլ գնա էն խորհրդավոր աշխարհքը, որ էնքան շատ լավ ընկերներ, հարազատներ ու սիրելիներ են գնացել ու էն աշխարհքը դարձրել էնքան հրապուրիչ»:

*) Խոսքը 1911 թ. հունվարի 19-ին Թումանյանի բնակարանում կատարված խուզարկության մասին է:

**) «Հին կռիվը» պոեմի հատվածներից են:

ԵԼԺ 7, 378-383:

Հունվարի 29 - Թեմակալ առաջնորդ Մխիթար Եպիսկոպոսի գրությունը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Մեծապատիվ պ. Հովհաննես Թումանյանին

Խնդրում եմ Ձեզ, հարգելի պարոն, կիրակի, փետրվարի 9-ին (նոր տոմարով), ժամը 12-ին շնորհ բերել Հովմանյան դպրոց՝ իբր պատվիրակ նույն դպրոցի հոգաբարձական ընտրության մասնակցելու:

Թեմակալ առաջնորդ՝ Մխիթար Եպիսկոպոս»:

ԳԱԹ ԹՖ, 2499 (506/7 լր.):

<Հունվար> - Սկսում է գրել հոդված* հեղափոխությունից հետո Կովկասում ստեղծված ժողովրդագրական իրավիճակի, դրա պատմական պատճառների, առկա ազգամիջյան հարաբերությունների, դրանց բարելավման միջոցների ու հեռանկարների մասին:

Որոշակի հույսեր է կապում «կովկասյան ազգերի առաջին կոնֆերենցիայի»** հետ. «Եթե ճշմարիտ որ էս և այլ նման կոնֆերենցիաներով կովկասյան ազգերը գան որոշ համերաշխության, դա երջանկություն կլինի բոլորի համար»:

Համառոտ պատմական ակնարկներով ներկայացնում է Կովկասում ստեղծված տարալեզու և տարակրոն ժողովուրդների խառնաշփոթության պատճառները. «Ժողովուրդները մեծ բազմություններով ակամայից տեղահան են եղել պատերազմների հետևանքով և մի երկրից փոխադրվել մյուս երկիրը, իբրև փախստական, գաղթական, և կամ թե չէ կառավարություններն են տեղահան արել փոխադրել մի տեղից մյուս տեղը, իրենց քաղաքական նպատակների համար, ի վնաս էս կամ էն ժողովրդի և հաճախ նույնիսկ ի վնաս երկուսի էլ՝ թե՛ տեղական և թե՛ եկվոր ժողովրդի»:

Կարծում է, որ իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ է ստեղծել կովկասյան ազգերի ամուր միություն՝ արտաքին սպառնալիքներին դիմագրավելու համար. «Բայց որպեսզի էդ միությունը հաստատուն լինի պետք է շատ հին դրություններ վերացնել կամ նոր դրություններ ստեղծել:

Դրանցից ամենակարևորներից մեկը, ես կարծում եմ, ժողովուրդներին իրենց բնակավայրերը, հայրենիքները հավաքելու խնդիրն է, հարկավ խոսքի ընդհանուր առումով»:

Խոսքը մասնավորելով հայ-վրացական հարաբերությունների շուրջ՝ անդրադառնում է Ջանաշվիլու տարակույսին, թե արդյոք ին-

քը իր «Վերին տեղատվությունը» հողվածում (տե՛ս 1918, նոյեմբերի 14) Ախալքալակի գավառի ազգային պատկանելության հարցը վիճելի է թողնում: Բացատրում է. «Ինչ վերաբերում է հատկապես Ախալքալակի շրջանին, դրա մասին կարող եմ ասել: Դա վրացական շրջան է, մի 90 տարի է, ինչ հայ ժողովուրդը եկել է, բռնել: Այժմ, երբ հայ ժողովրդին տրվում է իր երկիրը, պետք է նա վերադառնա և Վրաստանին թողնի Ախալքալակի շրջանը: Իհարկե, դա բավական մեծ դժվարությունների և անախորժությունների հետ է կապված, բայց եղ անելով՝ միանգամից ազատված կլինենք ապագա ավելի մեծ դժվարություններից ու անախորժություններից և կարգավորած մեր ժողովրդի կյանքը»:

*) Պահպանվել է երկու սևագիր հատված (ԹԹ, թղթապանակ 46), որ ակադեմիական տասնատորյակում տպագրվել է <Հայերի տեղահանությունների և հայ վրացական հարաբերությունների մասին> պայմանական վերտառությամբ:

**) Այդ կոնֆերանսը, անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատար գեներալ Ստյուարտի նախաձեռնությամբ, տեղի է ունեցել Թիֆլիսում 1919 թ. հունվարին:

ԵԼԺ 7, 498- 502, 676:

<Հունվարի վերջ կամ փետրվարի սկիզբ> - Գրում է «Պատասխան Տիցիան Տաբիձեին» հոդվածը:

Տաբիձեի՝ Թումանյանին ուղղած բաց նամակի (տե՛ս հունվարի 10) պատասխանն է:

Իր ուրախությունն է հայտնում հայ-վրացական կայացած հաշտության և շնորհակալություն Տաբիձեին՝ «մեր ժողովուրդների և մեր հայրենիքների վերաբերմամբ» «ազնիվ ու բարի ցանկությունների» համար: Բանաստեղծին չի զարմացրել նաև Տաբիձեի հավաստումը, թե իր նման են մտածում նաև իր ընկերները. «Այլ կերպ լինել չէր էլ կարող: Չէ՞ որ Դուք ձեր ժողովրդի ներկայացուցիչներն եք, ո՛չ էն ներկայացուցիչները, որոնք ընտրական քվեատուփերից են ծնվել, այլ էն ներկայացուցիչները, որոնք ծնվել են իրենց ժողովրդի ազգային ոգուց ու հանճարից»: Այդպես բարի և ազնիվ է մտածում նաև հասարակ ժողովուրդը: «Բայց աշխարհքում կառավարություններ կան, իշխողներ կան, որոնք էդպես չեն մտածում»: Սրանք են տնօրինում ժողովուրդների ճակատագիրը: Հիշելով հայտնի բանաձևը, թե «ամեն մի ժողովուրդ արժանի է իր կառավարությանը»՝ դրան հակադրում է մի այլ բանաձև. «Ճշմարիտն էն է, որ ոչ մի կառավարություն արժանի չի իր ժողովրդին»:

Սակայն ժողովուրդը պետք է տարբերել ամբոխից: Բոլոր ժողովուրդները ուզում են խաղաղություն և համերաշխություն, ոչ մի ժողովուրդ պատերազմ չի ուզում: Բայց երբ հարկ է լինում, կառավարությունները աղմուկ-աղաղակով «մի որևէ սուտով, մի որևէ լոգունգով» կարողանում են հարբեցնել ու ոգևորել ժողովրդին: Նույնիսկ բանաստեղծներն են հաճախ ենթարկվում դրան, և «աստվածային ոգևորությունը փոխարինվում է բարբարոսի կատաղությամբ»: Այսպես է ամբոխանում ժողովուրդը. «Իսկ ամբոխը մի հարբած ու սարսափելի բազմություն է, որ ո՛չ ծնող է ճանաչում, ո՛չ զավակ և պատրաստ է ոչ միայն գնալու ամեն մի կոտորածի, այլև ստեղծելու և կատարելու էն տեսակ ոճիրներ որ դուրս են բանական մարդու երևակայությունից»:

«Ինչքան գարշելի է էն սոցիալիստը, որ սուրը ձեռքին վեր է կացել և սոցիալիզմի անունով, աշխատավոր ժողովրդի անունով կոտորած է անում, իշխանություն ու երկիր է հափշտակում, նույնքան էլ գարշելի է, երբ գեղարվեստի մարդը, աստվածային սիրո և եղբայրական զգացմունքի փոխարեն, ատելության ու շովինիզմի կիրքն է բորբոքում մարդկանց սրտերում»:

Հուսալի առաջընթաց է համարում, որ «համերաշխության ու եղբայրության խնդիրը բանաստեղծությունից անցել է քաղաքականությանը» ազգերի լիզայի ստեղծմամբ: Բայց մարդկության՝ համերաշխ ու խաղաղ աշխարհի երազանքը դեռ հեռու է իրականությունից: Դաշնակիցները դեռ պատերազմը չեն ավարտել, ինչ իմանաս, թե մինչ այդ ինչ նոր ցնցումներ են սպասում աշխարհին, որոնք կործանարար կարող են լինել հատկապես փոքր ազգերի համար. «Նայեցեք Հայաստանին, որի համար էդքան գեղեցիկ բարենադրություններ եք անում: Էս համատարած ահռելի թշվառության մեջ ո՛չ մեր ապիկարությունը սահման ունի, ո՛չ թշնամիների անգթությունը, և նա գրեթե մահվան դուռն է հասել: Գոնե ինձ այլևս չեն ուրախացնում ո՛չ համրապետություն և ո՛չ անկախություն խոսքերը: Կորցրել են ուրախանալու ընդունակությունը: Կարծեք թե արտասուքի տակից այլևս չեն նկատում նրա նոր ծագող արշալույսը: Ընդհակառակը, մռայլ կասկածները սարսափ են ազդում դեռ մոտակա օրերի վերաբերությամբ, և ես այժմ միայն մի բան եմ ցանկանում նրան՝ մի հաստատուն, հզոր ու լուսավոր մի հովանավորություն, որ նա փրկվեր էս դրությունից և կազդուրվեր ժամանակի ընթացքում»:

Բանաստեղծների համար շատ հեշտ գործ է ժողովուրդների

միջև հաշտություն ու համերաշխություն հաստատելը, մի գործ, որ շատ դժվար է «մեր սոցիալիստական ու դեմոկրատիկ հանրապետությունների» համար. «Բանաստեղծը և փիլիսոփան ասում են՝ լեզուն նրա համար է, որ մարդ իր միտքը պարզ հայտնի աշխարհքի առաջ, իսկ դիպլոմատը կամ իշխողը ասում է՝ լեզուն նրա համար է, որ մարդ իր միտքը թաքցնի: Բանաստեղծ ու փիլիսոփան իրենց շնորհքն ու ազդեցությունը գործ են դնում ժողովուրդներին տանելու խաղաղ, շինարար աշխատանքի, դեպի սեր ու եղբայրություն: Դիպլոմատն ու իշխողը իրենց ուժն ու ճարպկությունը գործ են դնում հարևանին խաբելու, խեղդելու և կողոպտելու, այսինքն հաղթություն տանելու»: Ցավն այն է, սակայն, որ աշխարհը կառավարում են ոչ թե բանաստեղծներն ու փիլիսոփաները, այլ իշխողներն ու դիպլոմատները: Մեջբերելով Կիկերոնի միտքը, թե՝ «Աշխարհքի բոլոր վեճերը վճռվում են կամ բանականությունով, կամ ուժով: Առաջին միջոցը հատուկ է մարդուն, երկրորդը՝ անասունին, կենդանուն», ցավով նկատում է, որ ժամանակակից աշխարհում նախընտրում են երկրորդ միջոցը:

Եվ ամփոփումը. «Էս բոլոր դեպքերը, որոնց վերահասու և կամ ականատես եղանք, մի ավելորդ անգամ էլ պարզ ցույց տվեցին, թե ինչքան դժվար են կատարվում մեծ գաղափարների հաղթանակները, և ինչքան շատ են նրանցով դիմակավորվում մարդիկ»:

ԵԼԺ 7, 370-377:

Փետրվարի 3 - Անդրանիկ Օզանյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Գորիսից.

«Սիրելի Յովհաննես

Ղափանի ֆրանսիական պղնձի ընկերության տնօրեն պ. Ռուպենի միջոցով ղրկած 21/1 թվակիր նամակդ* ստացա:

Այդ նամակիդ արդեն պատասխանած եմ և ղրկած Երևանի գծով Ա. Սասունիի միջոցով:**

Օգտվելով պ. Ռուպենի վերադարձեն, կերկրորդեն նամակս:

Պարզ է, որ այսքան հոգնություններե վերջ անհրաժեշտ է, որ հանգստանամ: Այստեղի շրջանի ժողովրդի թե՛ անտարբեր վերաբերմունքը և թե՛ ընչասեր և այլասերված բարքը այլևս հնարավոր չեն դարձներ ինձ մնալ այս շրջանները: Երևակայեցեք, որ Շուշիի և Ղարաբաղի ինտելիգենցիան, դրամի սիրուն մտել է ադրբեջանական կառավարական պաշտոնության դասին մեջ, այդ կերպով

թույլ տալով Ադրբեջանին հայտարարելու, որ հայերը կընդունեն Ադրբեջանին ենթարկվել և հպատակվելը:

Մեկ խոսքով անհնար է այլևս զորամասովս կարենամ մնալ այս շրջանը: Հետևաբար որոշեցի մեկնել Ձանգեզուրից, անցնել Սիսիան և այնտեղ քանի մը օր մնալե վերջ անցնել դեպի Նոր Բայազեդ, Ղարաքիլիսա և ցրել բանակը:***

Ղարաքիլիսա հասնելուս մտադիր եմ հրավիրել քեզ գալ Ղարաքիլիսա. կհուսամ, որ հրավիրելուս չես ուշանար գալ: Կրկին անգամ կանդրադառնամ գաղթականության շուրջ, որոնք թվով 22000 այսօր սովի և մահվան սպառնալիքի առաջ կանգնած են. անհրաժեշտ է անոնց հասցնել շուտափույթ օգնություն, այլապես բոլորն ալ կկոտորվեն:

Նույն դրությունը կտիրե նաև Գողթանի գավառի մեջ, թուրքերը փակած են թե՛ դեպի Օրդուբաթ – Մեղրի գնալու ճանապարհը և թե՛ դեպի Նախիջևան: Այս կերպով Գողթանի 12000 ժողովուրդը, հաղորդակցութենե բոլորովին կտրված և արտաքին աշխարհե մթերք ստանալու հնարավորութենե զրկված, սովամահ լինելու վտանգին են ենթարկված: Մինչև հիմա համաձայն իրենց ներկայացուցչի հայտարարության, 150 հոգի մեռած են սովից:

Չափազանց անմխիթարական է և Սիսիանի ու Ձանգեզուրի գաղթականության դրությունը, եթե չասեն հուսահատական, ո՛չ փող ունեն և ո՛չ ալ, եթե փող իսկ ունենան, մթերք կա գնելու:

Ներփակ Ձեզ ուղարկում եմ Գորիսում հրատարակվող «Որոտան» թերթի մի օրինակը,**** ուր տպագրված է Բաքվից գեներալ Բագրատունիի միջոցով հօգուտ Ձանգեզուրի և Ղարաբաղի գաղթականության ստացած 600000 ռուբլի գումարի հաշվետվությունը:

Այդ 600000 ռուբլին գատ նույն միջոցով ինձ ուղարկված էր նաև 400000 (չորս հարյուր հազար) ռուբլի զորամասի կարիքներու համար և որուն կեսեն ավելին արդեն մի ամսվա ընթացքին ծախսված է:

Անշուշտ, պ. Ռոպենը այստեղի դրության մասին մանրամասն տեղեկություն կուտա: Այդ տեղեկությունները տված կլինեն նաև, անշուշտ, բժիշկ Ռուբենը***** ու մայրը Կիպոնը:*****

Երեկ այստեղ ինձ մոտ եկավ անգլո պատերազմական թղթակից պ. Սկոտլանտ Լիտելը, որը մեկնեցավ արդեն Շուշի, Բաքու:

Ազգի համար կոկորդիլոսի արցունք թափող և ազգի ցավերով տառապող պարոնները հիմա ալ վազեցին Փարի՞զ:*****

Բարևներս տանեցիներուն և հարցնողներուն:

Համբույրներով՝ Անդրանիկ»:

*) Թումանյանի այդ նամակն անհայտ է:

**) Անդրանիկի այդ նամակը չի պահպանվել:

***) Ղարաքիլիսա մեկնելու այդ ծրագիրը չի իրականացել:

****) Խոսքը «Որոտան» թերթի 1918 թ. հունվարի 22-ի համարի մասին է:

*****) Ռուբեն Տեր-Մինասյան, Անդրանիկի և նրա զորամասի բժիշկը:

*****) Կորնել Կիպոն (Գիրբոն). Անդրկովկասում անգլիական ներկայացուցչության հազարապետ:

*****) Նկատի ունի Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ Փարիզ՝ խաղաղության վեհաժողովին մասնակցելու մեկնած պատվիրակությանը:

ԳԱԹ ԹՖ, 890 (501):

Փետրվարի 3 - Մարտիրոս Հարությունյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ <Թիֆլիսից>.

«Սիրելի Հովհաննես !

Գրաբերս ունի բզեզների մի կոլեկցիա, որ ցանկանում է վաճառել: Գուցե մի բարեգործ մարդ գտնեք, որ գնե՝ Հայաստանի համալսարանին նվիրաբերելու համար – խոսվեր հետը:

Հարգ.՝ Մ. Հարությունյան»:

ԳԱԹ ԹՖ, 1490 (210 III g.):

Փետրվարի 4 - Տպագրվում է Տ. Փիրումյանի «Սայաթ-Նովան վրացերեն» հոդվածը:

Ողջունելով վրաց բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլու կողմից Սայաթ-Նովայի 28 վրացերեն երգերի հրատարակությունը՝ գրում է. «Սակայն հայ հասարակության համար ամենևին անկարևոր չէ իմանալ, թե ինչն է եղել պատճառը, որ պ. Գրիշաշվիլին ձեռնարկել է ժողովելու Սայաթ-Նովայի վրացերեն երգերն ու դրա հետևանքով ուսումնասիրելու նաև Թիֆլիսի հայ կյանքը:

Դրա պատճառը Կովկասի հայ գրողների ընկերության այն պատվաբեր եռանդն էր, որով նա սրանից հինգ-վեց տարի առաջ հատուկ սայաթնովյան երաժշտական երեկույթներ ու դասախոսություններ կազմակերպելով, նրա վաղուց սպառված ու մոռացության տրված հայերեն երգերի ժողովածուն նորից հրատարակելով ու նրա գերեզմանի վրա Թիֆլիսի Սուրբ Գևորգ եկեղեցու բակում մի ճաշակավոր ու չքմաղ մահարձան կանգնեցնելով, ուժգին կերպով հնչեցրեց մեծատաղանդ անմահի հայ աշուղի անունը՝ հայ հասարակության ականջին: Եվ ահա այդ մահարձանի օրը՝ 1914 թվի մա-

յիսի 15-ին, հանդեսին ներկա եղող վրաց գրողների խումբը շրջապատում է երիտասարդ բանաստեղծ Ի. Գրիշաշվիլուն ու ասում. «Դու թիֆլիսեցի ես ու մայրդ էլ հայ. երևի լսած կլինես Սայաթ-Նովայի վրացերեն երգերը կամ կիմանաս, թե նա ինչ կապ է ունեցել իր ժամանակի վրացիների հետ: Լավ կլինի, որ հանձն առնես այդ աշխատանքը, հավաքես Սայաթ-Նովայի վրացերեն երգերը և նրա կենսագրության հետ միասին տպագրես, որպեսզի վրաց հասարակությունն էլ հնարավորություն ունենա ծանոթանալու այդ տարօրինակ բանաստեղծ երգչի ու նրա ժամանակի հետ:

Եվ Գրիշաշվիլին բերում է իր գրքի ներածության մեջ վերոհիշյալ հանդիսավոր օրը հայկական տաճարի գավթում իրան այդ խորհուրդը տվող երկու սեռի մոտ տասը վրացի գրողների անունները: Այդ օրվանից նա վճռում է սիրով ու տքնությամբ կատարել իրան արված հանձնարարությունը...»:

Հոգվածի շարունակության* մեջ դիտողություններ է անում հրատարակության որակի, հատկապես բառարանի մասին: Այդ առիթով հիշում է Թումանյանի՝ տարիներ առաջ հրապարակված հոդվածը, որտեղ բանաստեղծը ճշգրտումներ էր արել Սայաթ-Նովայի գործածած մի քանի բառերի բացատրությունների մեջ: Նշում է, որ այդ ամենից անտեղյակ Գրիշաշվիլու բացատրությունները համընկնում են Թումանյանի ճշգրտումների հետ:

Եվ վերջում. «Այս փաստն ուրիշ շատերի հետ ապացուցանում է, որ անհրաժեշտ է ձեռք զարկել համակրելի հայ բանասերի** 70 տարի սրանից առաջ կազմած բառարանի վերաքննության ու լրացման, ինչպես նաև Սայաթ-Նովայի երգերի երեքլեզվյան ժողովածուի գիտական հրատարակության»:

*) Տպագրվել է «Աշխատավոր», 1919, մարտի 21, թիվ 54:

**) Նկատի ունի Սայաթ-Նովայի երգերի առաջին հրատարակիչ Գևորգ Ախվերդյանին:

«Հառաջ», 1919, թիվ 18:

Փետրվարի 7 - Մխիթար Տեր-Անդրեասյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Սիրելի Հովհաննես

Ամենքս էլ մեր բաժինն ունեցանք հայության վիճակված դառն բաժակից: Երևի գիտես, որ կինս ու միակ զավակս Հաշտարխանում են գերի «ընկել մեծամասնականների» ձեռքը: Ոչ մի հնարավորություն չկա ոչ միայն լուր ունենալ, լուր տալ, փող հասցնել, նույնիսկ

չգիտեմ, թե ինչ դրության մեջ են դեկտեմբերի 11-ից հետո. այդ օրը այնտեղից մեկնողներ են եղել, որոնք տեսել են նրանց ողջ, կենդանի... ուրիշ ոչինչ:

Բնակարանս հիմնահատակ են արել. ո՛չ շոր, ո՛չ ճերմակեղեն, ո՛չ ամանեղեն, ոչինչ, ոչինչ չեն թողել:

Քո գլխին եկած դժբախտություններն էլ հայտնի են ինձ, որոնց համար ընդունիր իմ եղբայրական ցավակցությունս:

Վերջապես անցածն անցավ, այսպես թե այնպես մեր կարողացածին համեմատ վերաշինության մասին պիտի մտածենք: Հմուտ ու պետքական մարդկանց պետք է առաջ քաշել ու գործի դնել: Այդ տեսակետից աններելի անփութություն է Արարատյան հասարակապետության կողմից գործի չհրավիրել գեներալ Վարդանյանի նման մի հմուտ մասնագետ, կարելի է ասել հայտնի գիտնական իր մասնաճյուղում, որին այնքան բարձր են գնահատում Պռժևալսկու նման մարդիկ: Նա կարող է պետքական լինել թե՛ տեղումը և թե՛ Կիևի շրջանում, ուր լավ կապեր ունի: Ահարոնյանը Եվրոպա գնալուց առաջ եղել է մոտը, խոսել է, բայց առանց հետևանքի է մնացել այդ բանակցությունը:

Հավանական է, որ շուտով Եվրոպա և Ամերիկա մեկնեն ապրանք բերելու մեր արդյունաբերության համար: Շատ ուրախ կլինեի, եթե Թիֆլիսով անցնելիս քեզ տեսնել կարողանայի: Դժվար թե ես կանգ առնեմ Թիֆլիսում, որովհետև դժվարությունների հետ է կապված ճանապարհորդության ընդհատումը:

Սիրով ու հարգանքով՝

Մխիթար»:

ԳԱԹ ԹՖ, 2172 (1134):

Փետրվարի 14 - Մամուլը հաղորդում է.

«Օրիորդաց «Խաժակ» միության կողմից պիտի ներկայացվի «Անուշ» Հովհաննես Թումանյանի երգախառն տռամը, 4 արարված, Պոլսի բեմին վրա առաջին անգամ՝ ի նպաստ ազգային հիվանդանոցի, Բերա, Բըթի Շանի ծմեռային թատրոնին մեջ, կիրակի՝ 16 փետր. 1919, ժամը 2-ին: Հայկական հարսանիք, Հայկական պարեր և տարազներ»:

«Ժողովուրդի ձայնը», Կ. Պոլիս, 1919, թիվ 21-103: Հայտարարությունը կրկնվում է թերթի հաջորդ համարում:

Մինչև փետրվարի 15 - Ամերիկյան կոմիտեի՝ որը աշակերտների միության հրավերը թուժանյանին՝ թիֆլիսից.

«Սիրելի հայրիկ՝ Յովհ. Թուժանյան

Բարեհաճեցեք Ձեր և Ձեր ընտանիքի ներկայությամբ զարդարել Ամերիկ. կոմիտեի պատվին տրվելիք մեր հանդեսը, որ կայանալու է կիրակի, փետրվարի 15-ին, Կովկ. հայոց բարեգործ. ընկերության վերի դահլիճում: Սկիզբը ժ. 4-ին:

Կազմակերպիչ՝ Որբեր»:

ԳԱԹ ԹՖ, 2500 (172 III g.):

Փետրվարի 15- Մամուլը տեղեկացնում է.

«Ներկա փետրվարի 20-ին լրանում է Յովհ. Թուժանյանի ծննդյան 50-ամյակը»:

«Հառաջ», 1919, թիվ 28:

Փետրվարի 15- Տպագրվում է հոդված՝ «Գրական կյանքը ռուսահայոց մեջ», Արմենիոս ստորագրությամբ:

Նկատի ունի պատերազմի տարիները: Անդրադառնում է հիմնականում «Գործ» ամսագրում տպագրված նյութերին: Առանձին գրքով հրատարակությունների մասին գրում է. «1916-ին բանաստեղծ Յովհ. Թուժանյան հրատարակեց բանաստեղծություններու գրքույկ մը՝ «Հայրենիքիս հետ», ուր ամփոփված են նախապես պարբերականներու մեջ հրատարակված կամ անտիպ կտորներ:

Հայոց հրատարակչական ընկերության հրատարակությամբ լույս տեսան Ա. Ահարոնյանի փոքրիկ պատմվածքները և Հ. Թուժանյանի ռուսական և օտար հեքիաթները: Այս գործերեն ոչ մեկը նոր բան մը չավելցներ հեղինակներուն գրական արժանիքներուն վրա»:

«Հայ աշխարհ», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1919, թիվ 4:

Փետրվարի 16 - Անդրանիկ Օզանյանի նամակը թիֆլիս՝ Թուժանյանին՝ <Գործիսից>.

«Սիրելի Յովհաննես,

Ձորամասի բժ. Ռուբենը Ձեզ հանդիպեր էր, բայց դժբախտաբար չէր տեսած. անշուշտ մեր մասին տեղեկություններ հաղորդած կլինի ֆրանս. ընկերության տնօրեն պ. Ռոպենը:

Կհուսամ, որ նա թիֆլիս եկած և Բարիզ մեկնած կլինի. այդ մասին ինձ իմացուցեք:

Ես ալ առայժմ այստեղ եմ, մի 20–30 օր ևս: Առողջությունս լավ է, կհուսամ դուք ալ լավ եք:

Համբույրներով՝ Անդրանիկ»:

ԳԱԹ ԹՖ, 891 (502):

Փետրվարի 16 - Մամուլը տեղեկացնում է.

«Այսօր՝ փետրվարի 16-ին, Հայ օպերային խումբը ժամը 12-ին կներկայացնե առաջին հայկական օպերան՝ «Անուշը»՝ ըստ Յովհ. Թումանյանի պոեմայի: Անուշի դերը կկատարե Սիրանուշը, Սարոյի դերը՝ արքունական թատրոնի երգիչ պ. Մինասյանը, Մոսիի դերը՝ պ. Աբգարյան: Կլիմի երկսեռ երգեցիկ խումբ: ԲԱԼԵՏ. սիմֆոնիկական նվագախումբ դիրիժորությամբ Ար. Տիգրանյանի: Ռեժիսոր Հ. Ոսկանյան»:

«Հառաջ», 1919, թիվ 29:

Փետրվարի 16 - Մամուլը տեղեկացնում է.

«Հովհ. Թումանյանը, որ վերջերս հիվանդացել էր, ներկայումս ապաքինվել է»:

«Մշակ», 1919, թիվ 37:

Փետրվարի 17 - Պոլսի Բըթի Շանի թատրոնում ներկայացվում է «Անուշը»՝ ըստ Թումանյանի պոեմի (տե՛ս փետրվարի 14):

Մամուլի հաղորդագրության մեջ ասվում է. «Թատերախաղը ինքնին շատ բան չպիտի արժեք առանց հայկական պարերուն ու երգերուն, որոնք խիստ հաջող կերպով կատարվեցան «Խաժակ» օրիորդներու միության կողմեն»:

Համառոտ ներկայացվում է թատերախաղի սյուժեն: Ներկայացման հաջողվածության մասին վերապահ կարծիքի է՝ ի տարբերություն բեմադրող Սիրունու: Բայց ընդհանուր առմամբ տպավորությունը լավ է համարում. «Մանավանդ դերակատար օրիորդները, որոնք ավելի «սևակ»ներ* էին, գրեթե վարժ դերասանուհիների պակասը չզգացուցին: Հայկական կյանքը բեմի վրա, հայ գեղջուկ երգերը, հայ ինքնատիպ պարերը, վերջապես ամեն բան որ հայկական է. ահա ինչ որ կառնիքներ դերակատարն ու հանդիսատեսը...»:

Մամուլը տեղեկացնում է նաև, որ «ներկայացումը տվել է զուտ արդյունք 700 ոսկի»:

*) Բառախաղ է. ակնարկում է թատերախմբի «Խաժակ» անվանումը:

«Հայ միտք», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1919, թիվ 4: «Ժողովըրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 55:

Փետրվարի 17 - Աշոտ Աթանասյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Սիրելի Յովհաննես,

Գալիս եմ քեզ մոտ Նախիջևանի շրջանի գյուղացիները, որոնք իմ ցուցմունքով պետք է հայրենակցական միություն կազմեն և որպես պաշտոնական մարմին իրանց վնասները ցուցակագրեն և տան մեզ:

Անհրաժեշտ է, որ նրանք հնար ունենան ժողով անելու և միությունների միության մեջ մտնելու, իսկ այժմ այդ դժվար է անել: Գուցե դու մի ելք ցույց տաս դրանց: Դրա համար էլ ուղարկում եմ քեզ մոտ:

Քո Աշոտ Աթանասյան»:

ԳԱԹ ԹՖ, 793 (221 լր.):

Փետրվարի 19, <Թիֆլիս> - Ամերկոմի՝ որբ աշակերտների միության և նրա օրգան «Փարոս» երկշաբաթաթերթի խմբագրության հանձնարարությամբ Ա. Վշտունին հրավիրում է Թումանյանին՝ մասնակցելու նրա 50-ամյակի և գրական գործունեության 30-ամյակի առթիվ որբերի կազմակերպած գրական երեկույթին:

ԳԱԹ ԹՖ, 2501 (1347):

Փետրվարի <19> - «Լիսիցյան» գիմնազիայի առաջին դասարանի աշակերտների և նրանց դաստիարակի շնորհավորական նամակը Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Սիրելի հայրիկ,

Այսօր հայերեն դասին մենք անցնում էինք «Գիքորը», երբ պ. Գիսակը կանգնեցրեց մեզ և ասաց.

- Երեխեք, այսօր մենք սովորում ենք այն մեծ բանաստեղծի գրվածքը, որի 50 տարին լրացավ: Այսօր այդ մեծ մարդու տոնն է:

Մեր առաջին դասարանը ձեր պատմությունները շատ է կարդացել ու շահտ և շահտ բան սովորել: Ընդունեցեք և մեր անկեղծ շնորհավորանքները, սիրելի հայրիկ: Երկար կյանք ենք մաղթում ձեզ...

«Լիսիցյան» գիմնազիայի I դասարանի ավագներ՝

Քոչարյան Գրիգոր

Մնացականյան Լևոն
Շահբազյան Դանիել
I դասարանի դաստիարակ, Ձեր կրտսեր աշակերտ՝ Գիսակ
Հովհաննիսյան»:
ԳԱԹ ԹՖ, 1514 (1688):

<Փետրվարի 19> - Շնորհավորական նամակ Թումանյանին
ծննդյան 50-ամյակի առթիվ՝ ընկերների կողմից.

«Մեր Հովհաննես!

Բնությունը կզրկվեր, եթե այս օրվա՝ մեր սրտին թանկագին
օրը հանգիստ մնայինք և բաժակ բաժակի զարկելով չտոնեինք այդ
երջանիկ տոնը: Համբույրների և կեցցեների մի հեղեղ է, որ ուղար-
կում ենք քեզ, մեր սիրելի, և մաղթում արժանանալ 50-ամյա փառա-
հեղ ստեղծագործական գործունեությանդ: Ընդունիր մեր անհուն
շնորհավորանքները: Դու ինքդ ես ասել. «ՔեՖ անողին քեՖ չի պակ-
սիլ», իսկ այսօրվա ազգային օրը նույնիսկ քեՖ չանող մարդի հա-
մար բարձրագույն քեՖի օր է:

Շիրվան

Հ. Աբելյան

Արշակ Ջոհրաբյան

Հ. Ոսկանյան

Սեմյոն Փիրումով

Հովհաննես ջան, համբուրում եմ քո սիրուն և խելոք ճակատը:

Լոռեցի Արամայիս Երզնկյան»:

ԳԱԹ ԹՖ, 1907 (952):

Փետրվարի 20 - Պոլսահայ մամուլը տեղեկացնում է, որ
փետրվարի 16-ին՝ ժամը 2-ին, Բրթի Շանի ձմեռային թատրոնում
օրիորդաց «Խաժակ» միության կազմակերպած ցերեկույթում բեմա-
դրվել է Թումանյանի «Անուշը».

«Ջոհրայի «Փոստալեն» հետո պ. Սիրունի փորձած էր վերա-
ծել ռուսահայ հայտնի բանաստեղծին այս սիրուն «Պոեմը» երգա-
խառն թատերգության:

Ձեռնարկը կարելի է հաջող համարել: Պ. Սիրունի, «Պոեմը»
զարդարող, սիրունցնող երգախառն ասացվածքներու փոխարեն
օպերեթի մը լրացուցիչ ու տպավորիչ երգ ու նվագի զուգորդության
տեղ բավականացած է, սակայն, Սարոյի, Անուշի և հարսներու

պարզ խոսակցությունները ընդմիջել հայկական գեղջկական երգ ու պարերով:

Ասիկա պետք է բացատրել անով թերևս, որ «Անուշ» հովվերգությունը լեռան զույգ սիրահարներու սրտերուն տրոփյունը երգերով ու մեղդիներով արտաբերելու համար մեր ներկա հայկական միջավայրի պայմաններն ու մեր պատրաստությունները անբավարար պիտի գային:

Միայն Սարոն, առաջին արարին մեջ, եղանակավոր հովվերգությունով մը սկսավ իր սիրո տաղը, որու մեջ ու առհասարակ մինչև վերջը, դժբախտաբար միայն իր ծայնով ուշագորավ էր, ու դերասանական-սիրային ձևերու մեջ՝ գրեթե ծախող:

Անուշի դերին մեջ օր. Թերլեմեզյանը հաջող էր ու խոստումնալից:

Համբարձման տոնի «վիճակ»ին Մոսիսի վրեժին ու Սարոյի եղերական վախճանին առիթով Անուշի բոլոր արտահայտություններն ու խելագարությունը տպավորիչ էին»:

«Ժողովուրդի ծայնը», Պոլիս, 1919, թիվ 28-108:

Փետրվարի 20 - Շնորհավորական քարտ Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ, Ազատ Վշտունուց.

«Սիրելի բանաստեղծ !

Դու Մուսաներից գերված,

Դու Աստվածներից սերված,

Դու ամենքից սիրված...

Մեր սիրելի բանաստեղծ, ընդունիր նորերից մեկի շնորհավորանքներն ու որդիական հարգանք լի համբույրները:

Ազատ Վշտունի»:

ԳԱԹ ԹՖ, 2143 (1083):

Փետրվարի 20 - Սանդրո Կանչելիի հեռագիրը Թումանյանին.

«Сердца поэтов принадлежат вселенной. Приветствую такое сердце певца Армении.

Сандро Канчели».

ԳԱԹ ԹՖ, 1420 (752):

Փետրվարի 20 - Նար-Դոսի շնորհավորական նամակը Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Շատ սիրելի Հովհաննես

Սրտով կուզեի այսօր անձամբ գալ քեզ մոտ՝ շնորհավորելու համար թանկագին հիսնամյակդ, բայց անիծյալ հանգամանքները, որոնց ձեռքին ես միշտ գերի եմ եղել ու կամ, դժբախտաբար զրկում եմ ինձ այդ հնարավորությունից:

Ուստի խնդրում եմ նամակովս ընդունիր իմ ջերմագին բարեմաղթանքներս ու համբույրս մեր սիրասուն գրականության այս հազվադեպ ուրախառիթ օրը:

Քո Նար-Դոս»:

ԳԱԹ ԹՖ, 1819 (932):

Փետրվարի 20 - «Սաքարթվելո» լրագրի խմբագրության շնորհավորական հեռագիրը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Թիֆլիսից, Տիցիան Տաթիծեի ստորագրությամբ.

«Редакция газеты Сакартвело приветствует Вас по случаю пятидесятилетнего юбилея. Ваш праздник является праздником Кавказского искусства и укрепления идей солидарности народов. Пусть Ваш творческий дух еще долго озарит Вашу родину на радость армянского народа, Грузины привыкли видеть Ваше благородство и будут долго помнить.

Тициан Табидзе».

ԳԱԹ ԹՖ, 2153 (1119):

Փետրվարի 20 - Ալեքսանդր Կուլեբյակինի չափածո ուղերձը Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Ованнесу Туманяну

Сонет акростих

О чем грустишь, задумчивый поэт?
В твоих глазах мы видим тень укора.
Армянский бард! Ты грустен, что не скоро
Народам Бог пошлет покою от бед.

Но это будет: стихнут волны спора,
Едва в сердцах забрезжит новый свет –
Святой агонь... Уже полсотни лет
Тоска о нем твой туманит взоры.

Уныл наш мир, как темный, жуткий лес,

Могила грез, святылище обмана.
А все-же и в нем сквозит лазурь небес.

Нет, непомеркнет солнце Аиастана!
Яснеет даль: ты видишь, Ованнес!
Не умолкай; нам нужно Туманяна!

Александр Кулебякин».

Ներքևում հեղինակի գրառումը. «Прочитано автором на заседании Тифлисского цеха поэтов в 26 февраля 1919 г. в честь О. Ф. Туманяна, где Ему было поднесено звание почетного члена цеха».

ԳԱԹ ԹՖ, 2658 (1299): ԹԹ, 729:

Փետրվարի 20 - Հայոց գյուղատնտեսական ընկերության վարչության շնորհավորական նամակը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ, Թիֆլիսից.

«Մեծարգո պ. Հովհաննես Թումանյան

Հայոց Գյուղատնտեսական ընկերության վարչությունը, բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայությունը հայոց բանաստեղծական գրականության, որի զարդերից մեկն եք Դուք այժմ, իր պարտքն է համարում շնորհավորել Ձեր ծննդյան հիսնամյակը և ցանկանալ Ձեզ երկար օրեր հոգուտ մայրենի գրականության:

Ի. տ. նախագահ ընկ.՝ Ա. Թադևոսյան,
քարտուղար՝ Մեիրաբյան»:

ԳԱԹ ԹՖ, 2470 (1302): ԹԹ, 480:

Փետրվարի 20 - «Феникс» և «Куранты» ամսագրերի խմբագրությունների շնորհավորական ուղերձը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Поэту Ованесу Туманяну

Редакции журналов «Феникс» и «Курантов» шлют Вам поздравления в день Вашего пятидесятилетия со дня рождения.

Редактор журнала «Феникс» Юрий Деген

Редактор журнала «Курантов» Борис Корнеев».

ԳԱԹ ԹՖ, 2471 (1307): ԹԹ, 3584:

Փետրվարի 20 - Հայոց դրամատիկական ընկերության խորհրդի շնորհավորական ուղերձը Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Մեծարելի մեր բանաստեղծ

Հովհաննես Թումանյան

Հայոց դրամատիկական ընկերության խորհուրդը մատուցանում է Ձեզ իր շնորհավորանքները Ձեր ծննդյան հիսնամյակի առթիվ: Դուք Ձեր քնարը հնչեցրել եք միշտ վսեմի, բարվոյ և գեղեցիկի համար, նույն այդ գաղափարին ծառայում են նաև մայրենի թատրոնը և դրամատիկական ընկերությունը:

Շնորհավորելով Ձեզ՝ դրամատիկական ընկերությունը մաղթում է, որ Դուք հնչեցնեք Ձեր գողտրիկ քնարը բազում տարիներ՝ սերմանելու համար բարվոյ և գեղեցիկի սերմերը հանուն Ձեր սիրելի ազգի, մարդկության և ազգերի եղբայրության:

Օգտվելով առիթից՝ խնդրում ենք ընդունել և մեր անձնական ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթությունները:

Հայոց դրամատիկական ընկերության խորհրդի նախագահ՝ Բ. Հ. Արղության-Երկայնաբազուկ

Անդամ քարտուղար՝ Ա. Նազարեթյան:

ԳԱԹ ԹՖ, 2469 (1301): ԹԹ, 3586:

Փետրվարի 20 - Շնորհավորական ուղերձ Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Թիֆլիսից.

«Художественное общество «Кольчуга» и цех Поэтов шлют Вам свои поздравления в день Вашего пятидесятилетия со дня рождения.

Товарищ председателя художественного общества «Кольчуга» Дмитрий Гордеев

Председатель цеха Поэтов Юрий Дегвич.

ԳԱԹ ԹՖ, 2649 (1291): ԹԹ, 731:

Փետրվարի 20 - Տիգրան Բեկզադյանի շնորհավորական նամակը Թիֆլիս՝ Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ <Բաքվից>.

«Սիրելի Հովհաննես ջան, ընդունիր Հեղինեի և իմ կողմից ճապոնական այս փոքրիկ ափսեմ և թող որ ջերմագին համբույրներ տալով քեզ, բարեմաղթենք դեռ երկար տարիներ մտքերիդ գեղեցիկ թռիչքներին - այս սիրուն թիթեռների թեթևությունը, կյանքիդ ուղիին

- այս քնքուշ խաղիկները, հոգուդ կարողությամբ - այս բոցերից միշտ վերածնվող ֆոսֆուր-ի հավիտենականությունը:

Հեղինեն շատ է ցավում, որ անկարող է անձամբ շնորհավորել քո ծննդյան հիսնամյակը մեր խեղճ խազեիմի ծանր հիվանդության պատճառով:

Ջերմագին համբույրներով՝

քո Տ. Բեկզադյան:

ԹԹ ԳԳ, 1082 (I) 4:

Փետրվարի 20 - Հովհաննես Ղազանջյանց ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ «հեռավոր խուլ անկյուններից».

«Հարգելի բանաստեղծ

Հովհաննես Թումանյանց

Թույլ տվեք մի անծանոթ անձնավորության իր մի անպաճույճ գրվածքը նվիրել Ձեր անվան. հուսով եմ, որ Դուք ամենայն սիրով կընդունեք այս գրվածքը ի նկատի ունենալով, որ հեռավոր խուլ անկյուններում կգտնվեն Ձեր տաղանդը և գործքերը հարգող ինքնաուս մարդիկ:

Ցանկանալով Ձեզ երկար կյանք և բեղմնավորություն Ձեր գրչին, մնամ Ձեր տաղանդին երկրպագու ծերունի Հովհաննես Ղազանջյանց:

Նվեր Հովհաննես Թումանյանին

Անսայթաք հառաջ գնա,
Մի վիհատիր, բանաստեղծ,
Ներշնչված սուրբ կրակով՝
Սիրե քո մուսային անկեղծ:

Աշխարհիս օրենքն այդպես է,
Շատերը քեզ կնախանձեն,
Իրանց տկար գրչակներով
Գրվածքդ կքննադատեն:

Մի ընկրկիր տգետներից,
Հանապազ դու հառաջե,
Հիշիր Քռիլովի խոսքը՝

Շունը փղին կհաչե:

Բախտը քեզի ժպտացել է,
Մուսայքն են քեզ օգնական,
Աստվածային սուրբ կրակովդ
Վերջացավ լաց ու կական:

Թեև քո կենդանությանդ
Շատերը քեզ կատեն,
Ապագային սուրբ գործքերդ
Գիտցիր կգնահատեն:

Երգիր, երգիր սուրբ սիրով,
Երգերովդ զմայլեցրու,
Աստվածային սուրբ անձովդ
Քար սրտերս կակղացրու:

Հ. Ղազանջյանց»:
ԹԹ ԳԳ, 1082 (I) 6:

Փետրվար 20 - Էլվիրա Տեր-Պետրոսյանց ստորագրությամբ շնորհավորական նամակ թունանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ <Թիֆլիսից>.

«Приветствую Вас, великого певца радости и скорби Армении, и исполнившимися 50-ми летия. От души желаю нового славного 50-ти для служения добру и красоте, букетик скромных, мною любимых фиалок да выразит Вам мои чувства восхищения+Вашими прекрасными творениями, побудившими меня еще больше любить армянскую литературу и нацию, создавшую ее.

Искренно уважающая и почитающая
Элвира Тер-Петросянц».
ԹԹ ԳԳ, 1082 (I):

Փետրվարի 20 - Բորիս Արղությանի շնորհավորական նամակը թունանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Թիֆլիսից.

«Սիրելի Հովհաննես

Հիվանդ եմ, տանից չեմ դուրս գալիս, որ գայի շնորհավորելու քեզ Քո ծննդյան կենդարյա օրը: Մաղթում եմ քեզ երկար տարիներ

դեռ ստեղծագործել ու խնդրում եմ, որ հայոց թատրոնին էլ մի գրական քո քանքարից դուրս եկած ընծա տաս, քանի որ դու այդ դիտավորությունն ես ունեցել և այդ ուղղությամբ արդեն գործել ես: Եթե իմ այս խնդիրը ու ցանկությունը կատարես – ինձ հետ հազարները, ես համոզված եմ, որ շնորհակալ կլինեն Քեզ: Համենայն դեպս կրկին մաղթելով ամենամանջան ցավերով ու դարդերով անցկացնել քեզ վիճակված տարիները, մնամ քեզ սիրող ու քեզ բարի ցանկացող՝

Բորիս Արղության:

Կինս ինձ հետ միասին մաղթում է Քեզ շատ բարիք:

Քո Բ. Արղության»:

ԹԹ ԳԳ, 1082 (I) 2:

Փետրվարի 20 - Սոֆյա Արղության-Երկայնաբազուկի շնորհավորական նամակը Թումանյանին.

«Մեծարգո պ. Հովհաննես Թումանյան

Ընդունեցեք անկեղծ և սրտագին շնորհավորանքներս

Ձեր ծննդյան առթիվ իմ բոլոր սաներից, պաշտոնակիցներից և ինձնից: Թող Ձեր գեղեցիկ սրինգը երկար, շատ երկար քաղցրալուր հնչի վերածնվող Հայաստանի մի քանի սերունդներին:

Շատ ցավում եմ, որ տկարությունը ինձ թույլ չի տալիս անձամբ Ձեզ տեսնել և սեղմել Ձեր ձեռքը:

Շատ ու շատ տարի Ձեզ կյանք և առողջություն:

Ընդունեցեք հարգանքներիս հավաստիքը՝

Սոֆյա Արղության-Երկայնաբազուկ»:

ԹԹ ԳԳ, 318 (16):

Փետրվարի 20 - Հ. Միրաքյան ստորագրությամբ շնորհավորական նամակ Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Սիրելի բարեկամ և ընկեր Հովհաննես Թումանյան

Օր եղավ, դժնդակ օրերից մեկը,* մեր թշվառ ժողովրդի ծանր երկունքի պահուն, երբ Դու նախանձեցիր էն աշխարհը գնացած հայ հերոսներին:** Նրանք Մեծ Դեմոկրատ Քրիստոսի պես իրենց մահով անմահացան: Ինչպես որ դու մի տեղ ասել ես քո չքնաղ երգերի մեջ «Մենք մահինն ենք, մահը՝ մերը»,*** յուրաքանչյուրս մի օր պետք է էդ ճամփեն բռնենք, բայց մեր ժողովրդին սիրտ տվողներին կյանքն էս հույսի ու հուսահատության խորհրդավոր օրերում ավելի քան անհրաժեշտ է: Հայ ժողովրդի Օհաննեսը կոչում ունի իր կյանքի կես

դարձն անցնելուց հետո՝ նորագույն ապրումներ ավանդելու ապագա սերունդներին այն իր երգած հիմնավորց ծառի տակ նստած մեր պապերի պես՝*** Հայաստանի նոր արշալույսին մարգարեանա, որ հայ ժողովուրդն այլևս չպիտի տեսնի այն զուլումների սև ու մուր օրերը, որ վերջապես նա պիտի ազատ ապրի իր նախնիքներից ընտիրների ստեղծած ոգով:

Դու էլ, սիրելիս, ապրի, որ նոր շնչով երգես այդ նորաստեղծ կյանքը մայր երկրի:

Շնորհավորում եմ Քո հիսնամյա տարեդարձը և հրճվանքով հիշում մեր միասին անցկացրած այն սիրուն ժամերը:

Քո Հ. Միրաքյան»:

*) Նկատի ունի 1915 թ ապրիլի 24-ը:

**) Հավանաբար նկատի ունի «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը:

***) «Թմկաբերդի առումը» պոեմի «Նախերգանքի» «Մահը մերն է, մենք՝ մահինը» տողն է:

****) Նկատի ունի «Հին օրհնություն» բանաստեղծության «Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրե՛ք...» արտահայտությունը:

ԹԹ ԳԳ, 1082 (I) 1:

Փետրվարի 20 - Եվգենի Գեգեչկորիի շնորհավորական հեռագիրը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Թիֆլիսից.

«Позвольте мне одному из почитателей вашего таланта принести свои искренные поздравления. Пусть думают многие один с сокрушением других с затаенной радостью, что семена вражды и ненависти в изобилии (.....?) на родной нам почве дают в данный момент богатую жатву. Проидет ненастье, расчислится атмосфера и «одна капля меда» превратится жителыный источник братства и единства наших народов.

Евгений Гегечкорю».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 1:

Փետրվարի 20 - Կովկասյան բանկի տնօրեն Միրիմանովի շնորհավորական հեռագիրը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Թիֆլիսից.

«Певцу Лорийских скал привет и много сил.

Директор Кавказского банка

Миеум.»

ԹԹ ԳԳ, 1082 (II) 5:

Փետրվարի 20 - Սոֆյա Դանիելբեկյանի շնորհավորական հեռագիրը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ Թիֆլիսից.

«Приветствую пятидесятилетие любимого поэта как яркого представителя армянского художественного творчества с пожеланием сил и здоровья на славу и процветании родной литературы.

Софья Даниелбемян».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 3:

Փետրվարի 20 - Գորիի հայ աշակերտական միության նախագահ Յասամանյանի շնորհավորական հեռագիրը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Գորիից.

«Гориуский армянский союз учащихся поздравляет вас с пятидесятилетия вашего рождения за те красивые переживания, что вы доставляли и должны вперед доставлять нам своим произведениями.

Председатель Ясаманян».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 6.

Փետրվարի 20 - Նինա Ասլամազովա ստորագրությամբ հեռագիր Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Сердечно поздравляю дорогого юбиляра.

Нина Асламазова».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 7:

Փետրվարի 20 - Բարձրագույն ինժեներական դասընթացների վարիչ Շիրմազանովի շնորհավորական հեռագիրը Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Горячо приветствую красу и гордости Армянской поэзии. Многие лета.

Инженер Шурмазанов. Заведующий

Высшими инженерскими курсами».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 9:

Փետրվարի 20 - VI իգական գիմնազիայի 7-րդ դասարանի աշակերտների շնորհավորական հեռագիրը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Седьмой класс шестой женской гимназии приветствует двадцатипятилетие любимого поэта, в нас пробуждающего лирою своей любовь к прекрасному и родной литературе».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 10:

Փետրվարի 20 - Ալեքսանդր և Աշխեն Բարխուդարյաններ ստորագրությամբ շնորհավորական հեռագիր Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Шлем искренний привет великому певцу армянского народа.

Саша, Ашхен Бархударян».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 4:

Փետրվարի 20 - Սամսոն Հարությունյանի շնորհավորական հեռագիրը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Шлю сердечное поздравление горячему проповеднику мира, любви и братства народов с пожеланием здоровья и долголетия.

Самсон Арутюнян».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 8:

Փետրվարի 21 - Մկրտիչ Մաղաքյան ստորագրությամբ հեռագիր Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ.

«По болезни не имею возможности лично принести свои поздравления по случаю Вашего пятидесятилетия. Сердечно поздравляя Вас желаю многие лета для славной и новой работы на пользу нашей милой родины и народа умеющего родить столь благородных как Вы, сынов.

Мкртич Магакян».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 12:

Փետրվարի 20 - Տալազրվում է Ս. Գորոդեցկու «О мудром и нежном» հոդվածը՝ Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ:

Ներկայացնում է բանաստեղծի մարդկային ազնվական նկարագիրը, հոգու բարությունն ու մտքի իմաստնությունը, նրա բանաստեղծական աշխարհի ազգային ու համամարդկային խորությունները, այն, որ հասկանալ Թումանյանին նշանակում է խորապես ճանաչել հայ ժողովրդին՝ իր մտածողությամբ, հոգեբանությամբ ու կեն-

ցաղով: Եվ վերջում. «Его творения – это памятник историческим страданиям Армении и обет ее богатого будущего».

«Закавказское слово», 1919, թիվ 27:

Փետրվարի 20 - Տպագրվում է Լև Կիպիանու «Неразрываемые звенья» հոդվածը՝ Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ:

Թումանյանին համարում է հայ և վրաց ժողովուրդների անտրոհելի մշակութային կապի կարևոր շղթան:

«Закавказское слово», 1919, թիվ 27:

Փետրվարի 20 - Տպագրվում է Վարդգես Ահարոնյանի «Певец родных гор» հոդվածը՝ Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ:

Անդրադառնում է 50-ամյա Թումանյանի կենսագրության մանրամասներին, այն միջավայրին, որտեղ ձևավորվել է ապագա բանաստեղծի անհատականությունը, հիշում է նրա բանաստեղծությունների առաջին ու երկրորդ ժողովածուները, որոնք ճանաչում են բերում երիտասարդ հեղինակին: Կարևորում է նաև Վերնատան գործունեությունը: Թումանյանին ներկայացնում է որպես մեկը այն եզակի անհատներից, որ ամեն ինչում՝ թե՛ ստեղծագործելիս, թե՛ կյանքում առհասարակ, դնում են իրենց շունչն ու հոգին՝ իրենց մեջ ամբողջացնելով սեփական ժողովրդի անցյալը, ներկան և ապագան:

«Закавказское слово», 1919, թիվ 27:

Փետրվարի 20 - Տպագրվում է Դ. Անանունի «Հարգանքի խոսք Յովհ. Թումանյանին» հոդվածը՝ բանաստեղծի ծննդյան 50-ամյակի առթիվ:

«Այսօր լրանում է հիսուն տարին այն մարդու, որի գլուխը վաղաժամ ալեհեր է դարձել, իսկ հոգին մնում է միշտ արի: Դա բանաստեղծ Յովհաննես Թումանյանն է, բանաստեղծ՝ առանց որակումների: Ածականը այստեղ կարող է նսեմացնել, այլ ոչ թե բարձրացնել: Բայց ինչ որ մենք պիտի շեշտենք այնուամենայնիվ, դա այն է, որ Յովհ. Թումանյանի քնարը հենց սկզբից ներդաշնակ կապ և հնչյուններ է փնտրել իր և հայության հոգևոր աշխարհի մեջ, փրցնող է, որ ամենից գլխավորն է, գտել: Ազգային քանքար իր ողջ էությամբ՝ Յովհ. Թումանյանը հեռու է, շատ հեռու է ինքնագովերգամոլությունից>: Նրա ստեղծած հայը հարազատ է ամենիս, նրա

հայի հոգեկան աշխարհը մերն է իր <գունավոր բովանդակությամբ>: Եվ մենք հրճվում ենք, <որ> բանաստեղծի պատկերած հայը անցնում է մեր մտքի ու տեսողության դաշտով: Եթե ժպտում ենք նրա վրա, մեզ վրա ենք ժպտում: Եթե լաց ենք լինում նրա համար, մեզ համար ենք լալիս: Հովի. Թումանյանը գերազանցապես ժողովրդական բանաստեղծ է, ժողովրդի խորքից ելած և իբրև զանգվածային ընդերքի պտուղ՝ նա խոսքի գոհար է»:

Այնուհետև նկատելով, որ բանաստեղծի հոբեյանը համընկնում է մեր երկրի ու ժողովրդի կյանքի դժվար ժամանակների հետ, երբ ավերված է ոչ միայն երկիրը, այլև ժողովրդի հոգին՝ շարունակում է. «Կարելի է կառուցել «բրած ու հատակած» քաղաքներն ու գյուղերը, կարելի է հերկել ու մշակել դաշտերն ու պարտեզները, բայց դժվարին գործ է վերականգնել հայի ավերված հոգու ունակությունները, նրան առաջնորդել դեպի հասարակական իդեալների և այլասիրության տաճարը: Այստեղ ընտիր հայ միտքն ու խոսքը ունեն կատարելու ամենից ծանր աշխատանքը: Պահ մի վարանում ենք և չենք հավատում հայ խոսքի այդ հրաշունչ ու բուժարար առաքելությանը, բայց երբ հիշում ենք խոսքի վարպետ Թումանյանին և նրա մյուս սակավաթիվ ընկերներին, այլևս ուղղվում է մեր կորացած մեջքը, և մենք հավատում ենք հայի պայծառ աստղին:

Մենք դեռ կպայքարենք...

Մեզ մխիթարող և առաջնորդող մարգարեներ են հարկավոր: Թող Հովի. Թումանյանը իմաստուն դարձած իր հիսուն տարվա կյանքի փորձից այսուհետև ևս կերտե ընտիր հայ խոսք՝ սփոփելու մեր վիշտը և ոգևորություն հաղորդելու մեր սրտին: Թող նա մեզ ուժ տա՝ մաքառելու երջանիկ ապագայի համար:

Պայծառ օրեր ենք մաղթում մեր Պառնասի զարդին»:

«Մշակ», 1919, թիվ 40:

Փետրվարի 20 - Տպագրվում է Հ. Սուրխաթյանի «Հովհաննես Թումանյանի տեղը մեր գրականության մեջ» հոդվածը:

Կանխադրույթն այն է, թե Թումանյանը «իր ստեղծագործություններով հավերժացրել է «մեր կուլտուրական կյանքի մի ողջ շրջան» իր կենդանի հերոսներով ու նրանց կենցաղով:

Բնութագրում է այդ շրջանը. «Մեր կյանքը, սկսած յոթանասնականներից, թեքվել է նահապետականից դեպի քաղաքայինը: Զգված պրոցեսը եղել է տևական: Այդ պրոցեսը անցել է պայքարի

բոլոր ելևեղների բովով և համապատասխան բնույթով էլ բեկվել ժամանակի գրողների ու բանաստեղծների մեջ: Եթե մենք մի գիծ անցկացնենք յոթանասնական թվականներից մինչև մեր օրերը, կտեսնենք, որ այդ գծի մի ծայրին կանգնած է Յովի. Թումանյանը՝ Յովհաննես Յովհաննիսյանի հետ,- մեկը որպես գերազանցորեն էպիկ, մյուսը՝ զուտ լիրիկ, ապա գծի մեջտեղ կանգնած կլինի Ավ. Իսահակյանը, իսկ գծի այս ծայրին Վահ. Տերյանը: Այդ հիման վրա էլ մենք համաձայն չենք մեր նորագույն քննադատության մեջ արտահայտված այն կարծիքին, թե Յովի. Թումանյանը ունիկում է մեր գրականության առաջադիմության ընթացքի մեջ, որ նա կանգնած է միանգամայն առանձնացած: Ընդհակառակը, մեր խորին համոզմամբ ու գեղարվեստական քննադատության անխուսափելի հետևանքով հենց բանաստեղծը իր լրիվ կերպարանքով կանգնած է հայ նորագույն գրականության զարգացման գլխավոր ճանապարհի վրա, գտնվում է նրա գլխավոր հունի գլխին»:

Ընդարձակ շարադրանքով անցկացնում է այն հիմնական միտքը, թե ապրելով ու ստեղծագործելով այն շրջանում, երբ «հայ նահապետական կյանքը» սկսում էր թեքվել դեպի քաղաքայինը՝ Թումանյանը «իր հոգեկան բովանդակ կյանքով, իր հոգեբանությամբ, մտածելակերպով ամբողջապես պատկանում է այդ նահապետական աշխարհին: Այս շրջանակներում էլ բնութագրում և արժեքավորում է նրա բազմաժանր ստեղծագործությունը՝ պոեմներ, բալլադներ, մանկական բանաստեղծություններ, պատմվածքներ, հեքիաթներ:

Եվ վերջում. «Բանաստեղծի արժանիքը մեծ է հայ գրականության հանդեպ: Նրա գրվածքները խոր հետք են թողնելու մեր գրականության մեջ: Նրա ընթերցողների թիվը ավելի մեծ է, քան մեր մյուս գրողների, պատճառ, որ նրա գրվածքներով է դաստիարակվում նաև մեր մանուկ սերունդը, նրանցով սովորում հայ լեզուն, բանաստեղծի կողմից իդեալական պարզության ու հստակության հասցված գեղարվեստական լեզուն:

Մեր բանաստեղծի գրական գործերը հանդես են բերում նաև նրա աշխարհայացքը. իր էությամբ դեմոկրատ բանաստեղծը ջատագով է հավասարության: «Սարն ամենքիս է հավասար», - գոչում է նրա հերոս թռչուններից մեկը:

Ապա՝ յուրահատուկ հումորը բանաստեղծի խոշոր արժանիքներից մեկն է, որը նրա գրվածքներին երբեմն հաղորդում է մի

առանձին հրապույր, գրավչություն, ինչպես նրա «Քաջ Նազարը», «Շունն ու Կատուն» և այլն:

Կարելի է ասել՝ մեր կյանքի բոլոր երևույթները այս կամ այն կերպ անդրադարձել են բանաստեղծի ստեղծագործությունների մեջ, հարկավ մեր հիշած պատկերացումներով: Մենք կանգ չառանք նրանց վրա: Այսօր դա մեր նպատակից դուրս է:

Յ. Թումանյանի դեմքը, որպես բանաստեղծի, գեղարվեստական գրողի, լրիվ է: Նա, այսպես ասած, արդեն հայկական Պառնասունն է:

Բայց մենք ունե՞նք սպասելիքներ, թե՞ ոչ: Այո՛. ունենք, բայց ոչ այնպիսի բաներ, որոնք նորություն լինեին բանաստեղծի համար: Նա ունի երկու պարտականություն: Առաջին՝ շարունակել պրպտումներն ու գյուտերը ժողովրդական հոգեկան գաղտնարանում և ամփոփել նրանց գեղեցիկ ձևերի մեջ: Երկրորդ՝ ավարտել հայդուկային շարժման պատկերացումը՝ տալով մեր կյանքի մի մեծ շրջանը կազմող այդ շարժման անձնագրի դոկիմտոտության նկարագիրը՝ բառիս ընդարձակ և լրջամիտ իմաստով:

Եթե այդ երկու գործն ևս կարողանա հրապարակ հանել բանաստեղծը, այն ժամանակ ապահովաբար իր ունեցած պսակների վրա մի ավելորդ պսակ ևս կհյուսվի»:

«Մշակ», 1919, թիվ 40:

Փետրվարի 20 - Տպագրվում է Գ. Լևոնյանի «Բանաստեղծը» հոդվածը՝ Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ:

Մեջբերելով «Պոետն ու Մուսան» պոեմի հայտնի տողերը.

Ունի՞ս, հարցրեց, մի պաշտոն, մի գործ:

Բանաստեղծ եմ ես. հայտնեցի հպարտ,- ներկայացնում է գրչի բանաստեղծի արհամարհված վիճակը «գործի մարդկանց» աշխարհում: Թող այդ «օրվա մարդիկ» պարապ համարեն նրան, բայց նա իր համար անձեռակերտ արձան է կանգնեցնում, որի դեմ անգոր է ժամանակը. «Մեծ է բանաստեղծի հոգին իր մտքերի պես, իր թռիչքների պես, իր տաղանդի պես. և այդ հոգին, այդ մտքերը, իր այս թռիչքներն ու տաղանդը Հովի. Թումանյանը նվիրաբերել է իր հայրենիքին իրանց բովանդակ ծավալով ու ամբողջությամբ:

Հայոց վիշտը անհուն մի ծով,

Անհուն մի ծով ահագին,

Էն սև ծովում տառապելով
Լող է տալիս իմ հոգին:

Թող Հայաստանի ազատագրությունը «հայոց վշտի անհուն ծովի մեջ լողացող» <այս> սքանչելի պոետի հոգուն ներշնչե երգ այսուհետև, ոչ թե տառապանք, այլ ծով ուրախություն, ծով հրճվանք և ծով աշխատանք»:

«Մշակ», 1919, թիվ 40:

Փետրվարի 20 - Տպագրվում է Ստ. Զորյանի «Ռ՞վ է Հովի. Թումանյանը» հոդվածը:

Գրում է հայ մտավորականի օտարամոլության, սեփական կարծիք չունենալու, ազգային արժեքների հանդեպ թերհավատության մասին: Նույնիսկ Թումանյանի նման մեծության հանդեպ նրա պահվածքը զգուշավոր է. ոմանք նրան համարում են «գյուղացիների բանաստեղծ», մյուսները՝ մանկական գրող, հայկական առասպելներ մշակող. ոչ մեկի համար դեռ պարզ չէ «բանաստեղծի մեծության չափը»: Մինչդեռ Թումանյանը «համազգային բանաստեղծ» է, «նա հայ գրականության համար նույնն է, ինչ որ Պուշկինը ռուս գրականության համար»:

Այնուհետև զուգադրաբար ներկայացնում է ընդհանրությունները այն դերի, ինչ որ կատարել են երկու բանաստեղծները իրենց ազգային մշակույթների համար, ուստի և՛ «եթե մի օր աշխարհի բոլոր առանձին ժողովուրդների բանաստեղծության ցուցահանդես լինի, հայ ժողովուրդը ուրիշ ոչ ոքի չի կարող ուղարկել, բացի Թումանյանից, իբր յուրօրինակ զտարյուն հայ բանաստեղծի, այնպես, ինչպես Ռուսաստանը ներկայացնողը կարող է լինել միմիայն Պուշկինը»:

Եվ եզրակացությունը.

«- Թումանյանը համազգային բանաստեղծ է:

- Թումանյանը հայոց Պուշկինն է»:

«Մշակ», 1919, թիվ 40:

Փետրվարի 20 - Տպագրվում է «Հովհաննես Թումանյան» խորագրով հոդված՝ Մ. Դարբինյան ստորագրությամբ:

Հրեբլանական շնչով ներկայացնում է բանաստեղծին՝ որպես բարության, սիրո, հաշտության, խաղաղության, մարդկային բոլոր բարձր առաքինությունների երգչի՝ օրինակներ բերելով հատկապես

նրա մանկական երկերից և գյուղաշխարհի պատկերներից: Այնուհետև. «Նա չի բավականացել միայն գրելով. իր ներկայությամբ աշխատել է խաղաղ ու հանգիստ կյանք ստեղծել այնտեղ, ուր փոթորկվել է հարևան ժողովուրդների միտքը, ուր խոսքի տեղ գեներն է բռնել»: Իբրև վկայություն բերում է «Իմ երգը» բանաստեղծությունը և հողվածն ավարտում մաղթանքով. «Ցանկանք, որ դեռ շա՛տ ապրի ու շա՛տ շաղ տա իր «անտակ, անծեր» գանձերից»:

«Մշակ», 1919, թիվ 40:

Փետրվարի 20 - Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ տպագրվում է «Հովհաննես Թումանյանի տոհմը» վերտառությամբ հողված՝ Սմբատ Տեր-Ավետիքյան ստորագրությամբ:

Ներկայացնում է տոհմի հայտնի պատմությունը մինչև քահանա տեր Թադևոսը՝ բանաստեղծի հայրը, որ սիրել է մահ երգերաժշտություն, եղել է հմուտ չոնգուրահար: Եվ վերջում. «Ահա այս անկեղծ և անհուն սերը, որ ունի մեր բանաստեղծը դեպի իր ծննդավայրը՝ գեղեցիկ Լոռին, մասամբ պարտական է մա իր հոր չոնգուրին և նրա խաղերին»:

«Մշակ», 1919, թիվ 40:

Փետրվարի 20 - Շնորհավորական նամակ Թումանյանին՝ Օհան Քյանդարյան ստորագրությամբ՝ Թիֆլիսից.

«Սիրելի Հովհաննես

Շնորհավորում եմ քո բեղմնավոր հիսնամյակը և սրտանց բարեմաղքում բարեբաստիկ օրեր:

Ես գրականագետ մարդ չեմ, որ կարողանայի պատկերացնել քո բազմակողմանի և շնորհալի հատկությունները և հայ ժողովրդին տված օգուտները:

Սակայն պարտք եմ համարում հիշել, որ երբ ես մեծ հիացմունքով և սիրով կարդում էի քո գրվածքները, զգացված մտածում էի.

Աջիդ դուրբան,

Հովհաննես ջան,

Ես էլ դուրբան,

Մենք էլ դուրբան,

Քեզի դուրբան

Հազար մեկ բան:

Միշտ մեծ լինես. մեզ միշտ հարգող

Օհան Բյանդարյան»:
ԹԹ ԳԳ, 1082 (1) 14:

Փետրվարի 20 - Տպագրվում է Պահարեի «Սրինգ (նվեր Հովհաննես Թումանյանին)» բանաստեղծությունը.

Առվի հնչուն կարկաչի պես թող լսեմ,
Սրինգի հուզկոտ քո թրթռներն երգերի,
Նորից անցնեն ծյունոտ լեռներն այս վսեմ,
Անզուսպ վազքիդ նորից լինեն ես գերի:

Այնտեղ, ուր որ ծուխ ու մշուշ իրար հետ
Մանրացել են օդաներին շուրջ կապած,
Սայլ ու ոչխար բռնել են դաշտ, արահետ,
Մայրուն ու կանչ ողջունում են լուսաբաց:

Գյուղ... Գոմ ու դեզ. երդիկի տակ տաք թոնդիր,
Քուրսու չորս կողմ երեխաներ, ծերունի.
Բոլորը մի հին արկածի ունկնդիր,
Որ ոչ սկիզբ, էլ ոչ ասես ծեր ունի:

Աստղոտ գիշեր... ամենն անցած մութի ծոց,
Լուսնի շողում լույս տեսիլներ ու փերի.-
Հեռուն հանկարծ խուլ արձագանք, կաղկանձոց,
Եվ ամենուր ահն է փռվում քաջքերի:

Ես ամա<ղ>, մութ սարերի գիժ որդին,
Թև եմ առնում դեպի վայրերն այն վսեմ,
Սրինգ, թող միշտ քո մորմոքող մեղեդին
Առվի հնչուն կարկաչի պես ես լսեմ:

«Մշակ», 1919, թիվ 40:

Փետրվարի 20 - Տպագրվում է Ալ. Պապուլյանի «Հավերժի տենչը (Հովհ. Թումանյանի պաթոսի ուրվագծերից մեկը)» հոդվածը:

Խորհրդածություններ են Թումանյանի ստեղծագործության մեջ կյանքի, մահի, անհունի, հավերժի, տիեզերականներ դաշնակության, մասնավորի և ընդհանուրի և սրանց հետ կապված խնդիրների շուրջ բանաստեղծի քնարական մտորումների մասին:

Ընդգծվում է, որ այդ մտորումները նրան չեն հեռացնում իրական կյանքից՝ մղելով դեպի «հարատև հաշտության, անվրդով սիրո և խաղաղ լավատեսության» երանավետ եզերքը, «մանավանդ որ նրա պանթեիզմն էլ ոչ բուդդայական միրվանա է, որ հրաժարվում է այն ամենից, ինչ մարդկային է, և ոչ էլ Սպինոզայի «միահանուրը» (всөөдичство), որ, ըստ Շոպենհաուերի, մի «քաղաքավարի աթեիզմ» է»։ Բանաստեղծի հոգու թռիչքները բախվում են աշխարհում տիրող չարության շնչին՝ առաջ բերելով ճնշող դրամա, բայց չգծտեցնելով նրան աստծու հետ։ «Ես ո՛չ բանաստեղծ եմ և ո՛չ նույնիսկ գրական քննադատ,- գրում է հոդվածի հեղինակը,- սակայն հաստատ գիտեմ, որ պոետը դեռ հաշիվ ունի իր Աստծուց, և դա է պատճառը, որ, գիտակցելով հանդերձ անհունության գաղափարը, նա դեռ չի տիրացել «հավերժ»-ի «կապույտ թռչունին»։ Նա դեռ կրում է միայն այդ «հավերժ»-ի ծանր և թախծալի տենչը։

Եվ նրա այդ անդադրում որոնումներն ու տենչերն են, որ այն-քան հարազատ են դարձնում մեզ մեր բանաստեղծին՝ մանավանդ մեր հանրային որոնումների, հուսահատության, հուսադրության, դողորդագին խորտակումների և ապրելու գերմարդկային ճիգերի այս խորհրդավոր օրերին»։ Բանաստեղծն ուզում է իր «հոգու հայրենիքի» նվիրական երազը կատարված տեսնել իրական հայրենիքում։

Բերելով «Հայրենիքիս հետ» բանաստեղծության վերջին տունը՝ հոդվածի հեղինակը եզրակացնում է. «Մեր հայրենիքի հետ կապված հույսերի իրագործումը լույսի հաղթանակ է. նրա ազատագրումը խաղաղության, եղբայրության և համամարդկային սիրո նվաճումն է։

Պոե՛տ, շարունակիր անդադրում տենչանքներդ. հույսի, լույսի հայրենիքդ պիտի փրկվի, դու պիտի նվաճես հավերժին»։

«Մշակ», 1919, թիվ 40։

Փետրվարի 20 - Տպագրվում է Սալ-Մանի «Օհանես Թումանյան» հոդվածը՝ նվիրված բանաստեղծի ծննդյան 50-ամյակին։

Բարեկամական հունդորով գրում է բանաստեղծի արտակարգ ժողովրդականության մասին։ Արտակարգ, որովհետև նրան սիրում են բոլորը, նույնիսկ բանաստեղծները՝ «բոլոր հայ բանաստեղծները (լսեցե՛ք, լսեցե՛ք) սա մի չտեսնված հրաշք է»։

Այդ համընդհանուր ճանաչումն ու սերը բացատրում է ոչ

միայն բանաստեղծի տաղանդով, այլև նրա մարդամոտությամբ, հյուրասիրությամբ, բարությանը ու սրախոսությամբ. «Թող նրա տաղանդների մասին խոսեն ուրիշները, ես կխոսեմ միայն բոլորից ընդունված տաղանդի մասին:

Դա քիմիապես բաժանվում է երեք տարրերի.

Առաջին – Օհանեսը սիրում է ուտացնել,

Երկրորդ – Օհանեսը սիրում է ուտել,

Երրորդ – Օհանեսը սիրում է սրախոսել:

Եվ ահա այդ երեք տաղանդները միացած և ամբողջացած, տալիս են մի Օհանես Թումանյան, որի մեջ սիրելը շաղկապում է երեք մյուս տարրերին և Օհանեսին դարձնում է համաժողովրդական, իսկ կրճատված՝ «մերը»:

<...> Ապա գիտե՞ք զաղտնիքը. ինչո՞ւ Օհանեսին սիրում ու հարգում են մեր բոլոր բանաստեղծները:

Ով գտնի, նրան հրավիրում են այսօր երեկոյան մեր Օհանեսի մոտ թեյի, ուր նա (թեյ խմողը) առիթ կունենա փաստորեն համոզվել, թե ինչու է Օհանեսը այդքան ժողովրդական:

Ինչո՞ւ է նա այդքան ուտում, ինչո՞ւ է նա այդքան ուտացնում և այդքան սրախոսում:

Այդտեղ հայ ազգի ժյուրին կտա իր վճիռը՝ Օհանեսի քանքարների մասին:

Նրա հոբեյանի մասին:

Թե խելք ունեք, եկեք»:

«Մշակ», 1919, թիվ 40:

Փետրվարի 20 - Տպագրվում է Մարիամ Թումանյանի «Ազնիվ բարեկան Հովհաննես Թումանյան» հոբեյանական ուղերձը բանաստեղծին:

Այս երկտողս նվիրում են մեր հինգշաբթի երեկոներին, որոնց դուք այնքան սիրում էիք, և որոնց հետ կապված են թե՛ Ձեզ և թե՛ ինձ համար այնքա՜ն քաղցր հուշեր:

Փոքր էր մեր շրջանը, բայց այնքա՜ն մտերմական, այնքա՜ն ներդաշնակ, որ մենք անհամբեր սպասում էինք շաբաթշաբաթ այդ օրին, որ գեթ մի քանի ժամով մոռանանք դառն իրողությունը և ապրենք բարձր ու վսեմ զգացմունքներով:

Հիշո՞ւմ եք արդյոք մեր գրական քննադատական զրույցները, հիշո՞ւմ եք մեր տաք վիճաբանությունները...

Իսկ հիշո՞ւմ եք՝ ինչպես ես խլում էի Ձեր ձեռքից Ձեր այն բանաստեղծությունները, որոնց Դուք չէիք հավանում, իսկ մենք ուզում էինք մտցնել հրատարակվելիք ժողովածուի մեջ:

Ավա~ղ, անցան այդ գեղեցիկ օրերը, բայց նրանց հիշատակը մեր սրտում կմնա հավերժ:

Ձեր զգայուն սիրտը շատ էր վրդովվում և հուզվում շրջապատի քար անտարբերությունից, մանավանդ մի ժամանակ, երբ հայոց լրագիրների համար սովորական բան էր դարձել գրողներին անվանել «Մուրացկան» և ամեն կերպ հալածել նրանց: Երբ ես համոզում էի Ձեզ ուշադրություն չդարձնել այդ բանի վրա և զբաղվել Ձեր գործով, Դուք ինձ առարկում էիք՝ «մեր գործը այնպիսի գործ է, ուր կարելի է ամեն բան զոհել, բացի զգացմունքները. սա զգացմունքների գործ է: Գրականություն, լավ եք ասում, բայց գրականությունից առաջ գրող կա, գրողն էլ իր զգացմունքներովն է գրող: Երբ որ այդ զգացմունքներն կզոհվեն, այնուհետև էլ գրող չի լինիլ, իսկ երբ գրող չի լինիլ, գրականություն էլ չի լինիլ»:

Հիշում է Ալ. Ծատուրյանի նամակը, որտեղ նա նույնպես դժգոհություն է հայտնում հայ գրողի հանդեպ հասարակական անտարբերությունից՝ գրական հոբելյանները որակելով որպես «հասարակական զգացմունքների կատակերգություն», ու շարունակում.

«Ես ոչինչ չունեմ ավելացնելու այդ պերճախոս խոսքերին և կարող եմ միայն իմ ցավը հայտնել, որ մենք, համարելով մեզ կուլտուրական ազգ, չենք կարողացել գնահատել մեր տաղանդները: Բայց ես հավատում եմ, որ մոտ է այն ժամը, երբ մենք կպարծենանք նրանցով, և հենց Դուք կլինեք առաջինը, որ առիթ չեք ունենալ գանգատվելու մեզ վրա:

Դուք, Հովհաննես, դեռ երկար պետք է ապրեք, դեռ շատ գեղեցիկ բանաստեղծություններ պետք է գրեք:

Հնչեցրե՛ք Ձեր քնարը, որպեսզի նրա քնքուշ մեղեդիները թափանցեն մարդկանց սրտերը և զարթեցնեն նրանց մեջ վսեմ ու մաքուր զգացմունքներ:

Ամեն բան, ինչ որ զուրկ է պոեզիայից, արժանի չէ հնչվելու, ինչպես ներկա սև օրերը, որ միայն տանջանք են հարուցանում»:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919 թիվ 39:

Փետրվարի 20 - Տպագրվում է «Մեր Հովհաննես Թումանյանին» խորագրով ուղերձ բանաստեղծին նրա ծննդյան 50-ամյա և

գրական գործունեության 30-ամյա հոբելյանների առթիվ՝ Հայազն ստորագրությամբ:

Ծավալուն արծակ բանաստեղծություն է, որտեղ հեղինակը քնարական ոգևորությամբ պանծացնում է թումանյանի՝ երեսուն տարիների ստեղծագործական վաստակը՝ վերջում փառաբանության խոսքեր հնչեցնելով նրա հասցեին.

«Փառք քեզ՝ անաղարտ սուրբ ճշմարտության, հավիտյան անմեռ վեհ գեղեցկության հրաշունչ երգիչ. անհաս վերևի, պայծառ արևի ճլվլան արտույտ, դու մեր բանաստեղծ:

Փառք քեզ՝ արնեքան մեր Հայրենիքի վշտին վշտակից, հառաչին հասու, ստրկի շղթան փշրել ու կոչինքիդ արծագանքող,- անճար գյուղացու էն արդարդատի, էն բյուր կարիքի սրտացավ պաշտպան, դու մեր բանաստեղծ:

Փառք քեզ՝ հայության զգայուն սրտի ցինջ արտացոլում, հայ ժողովրդի միշտ արթուն խղճի լրիվ մարմնացում, նրա եռանդի, շինարարության, սրբազան խանդի, հուսառատության կենդանի տիպար, դու մեր բանաստեղծ:

Հրաշքների մայր, հարազատ երկիր, եթե երբեմն մեղսալից աշխարհի չուղարկեիր դու այդպիսի մարդիկ, մեր կյանքի արտը խոսքն կդառնար»:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 39:

Փետրվարի 20 - Հովհաննես Սպենդիարյան ստորագրությամբ շնորհավորական նամակ թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հայ ժողովրդի սիրելի բանաստեղծ Հովհաննես թումանյանին

Ամենասիրելի ու հարգելի բարեկամ,

Այսօր, երբ Ձեր ծննդյան 50-ամյակն է լրանում, ես և ընտանիքս խնդրում ենք Ձեզ ընդունել մեր խորին սիրո ու հարգանքի անկեղծ արտահայտությունները:

Հայ ժողովրդի հարազատ ցավով Դուք տվիք նրան Ձեր բանաստեղծական մտքի և հոգու ընտիր գոհարները, որոնք հյուսեցին Ձեզ անթառամ պսակ անմահության: Լոռեցի Սաքոն ու Սասունցի Դավիթը, Անուշն ու Ախթամարը կմնան հավերժ հայ ժողովրդի հիշողության մեջ՝ իբրև բանաստեղծական քանքարի սքանչելի քերթվածներ, ուր հմայիչ գույներով պատկերվում է ու երգվում հայ աշ-

խարհի դյուցազնական կյանքն ու հայրենի երկրի գեղանկար բնությունը:

Սակայն միայն քնարերգությունը չէ, որ Ձեզ դարձրեց հայ ժողովրդի սիրելի բանաստեղծ: Մենք Ձեզ վերջին տարիների աղետի ժամանակ տեսել ենք հասարակական ասպարեզի վրա անձնվեր եռանդով գործելիս և չենք կարող այստեղ առանձին հաճույքով չարձանագրել այն իրողությունը, որ վայելելով հայ ժողովրդի անսահման վստահությունն ու սերը՝ Դուք Ձեր աչքերը չէիք փակում նրա պակասավոր կողմերի վերա, և երբ հարկավոր էր անաչառ դատավորի դերում հանդես գալ հայ ժողովրդի և նրա հարևանների մեջ ծագած փոխադարձ բարդությունների և բախումների ժամանակ, Ձեր դատավճիռը լինում էր անողոք, բայց միշտ արդարամիտ և անաչառ:

Արդ, ողջունելով այս երկտողով Ձեր ծննդյան 50-ամյակը, ի բոլոր սրտե ցանկանում եմ, որ Դուք շարունակեք լինել ինչպես այժմ, այնպես և ապագայում հայ աշխարհի զարդն ու պարծանքը:

Ձեր անձնվեր՝ Զովի. Սպենդիարյան»:

ԹԹ ԳԳ, 1082 (1) 9:

Փետրվարի 20 - Անուշավան Աբովյանի շնորհավորական նամակը Թումանյանին:

Գրված է Լոռու բարբառով: Մտերմական հուճորով իրեն համեմատում է այն տերտերի հետ, որ ժամում սաղմոս կարդալու հոգսից ազատվելու համար սաղմոսագիրքը համբուրում, դնում է բարձի տակ՝ մտովի դիմելով նրան, թե՛ «ով սուրբ սաղմոս, գիտեմ, որ քու միջին չիմ մարքարեքի ու Ասծու խոսքերն են տպած, հլէ էնա ինչ որ քու միջին գրած ա, չիմ ինձ դաբուլ ա», և մյուս օրը հանգիստ գնում է ժամ: Տերտեր ինքն է, սաղմոսը՝ իր հոգին ու սիրտը, որ լիքն են իր մտերիմ բարեկամի հանդեպ սիրով ու նվիրվածությամբ, բայց ինքը տերտերի նման իր տկար լեզվով չի կարող դրանք արտահայտել: Եվ դիմում է բանաստեղծին. «Ով գիտի, գիտի ոչ՝ դու խո շատ լավ գիտես, թե իմ հոքումն ու սրտումն ինչ դդամ լավ-լավ բաներ կան գրած, ինչ դդամ ազիզ մուրազնի ու սուրբ աղոթքնի կան դաջված թե՛ ալամ աշխարքի համա, թե՛ քու շնորհքի ու ջանի համա:

Էն ա որ էս անտեր լեզու չիկա թե՛ սրտինս դուս թափի – խալ-խին այդին անի, ըտոր հմա էլ միննաթըմ իմ քի, որ դու ինքդ կարթաս իմ սրտի գիրը ու թե որ պետքն ըլի խալխին էլ իմացում տաս:

Էլ ինչ ասեմ, Ուհանես ջան, Էրզնային թաքավորից խնդրում եմ որ քի հայր Աբրահամի տարսը հասցնի ու էն քու լավ-լավ, անմնամ տաղերի իցուն տարեն ազիզ օրն էլ արժանի անի:

Ապրի, «հմա մեզ պես չապրի» «Անուշի» անուշ ու քանքարավոր վարպետը:

Քո Անուշավան»:

ԹԹ ԳԳ, 1082 (1) 11:

Փետրվարի 20 - Տպագրվում է «Խոհեր. Հովհաննես Թումանյան» վերտառությամբ հոդված՝ Խ. Կ. ստորագրությամբ:

Հոբելյանական շնչով ներկայացնում է Թումանյանին՝ իբրև բանաստեղծի, հրապարակախոսի, հասարակական գործչի, ժողովրդագրական առաքյալի, «արթուն պահապան մարգարեի», որ հուսահատության պահերին հրապարակ է իջնում՝ «հույսի ու լույսի խոսքը շրթունքներին»:

Եվ վերջում. «Հ. Թումանյանն այսօր բոլորում է իր 50 տարին: Դեռևս հայ հասարակությունը, այդ պահանջկոտ հասարակությունը չատ սպասելիքներ ունի մեր սիրելի բանաստեղծից. նրա անցած գործունեության համար գոհ ու շնորհակալ՝ սպասում է նրանից նորանոր գործեր ու աշխատանքներ:

Մեր բանաստեղծի ծննդյան 50-ամյակն այսպես համեստ կատարելով՝ լոկ լրագրական մի քանի դրվատումներով, անշուշտ, չէ վերջանալու. մենք հույսով ու հավատքով սպասում ենք նրա տոնի իսկական կատարմանը ոչ այստեղ՝ Թիֆլիսում, այլ այնտեղ՝ հարազատ միջավայրում՝ մայրենի հողի վրա, հայրենի ազատ երկնքի տակ...

Այստեղ՝ Արարատյան աշխարհում, հայ բանաստեղծության տաղանդավոր ներկայացուցիչ, հայ գեղջուկի և ինտելիգենտի հետ մեկտեղ.

Ձեփյուռներով, ծաղկանց բույրով,

Ինչպես ծնող սիրագորով,

Քեզ կողջունեն զմրուխտ հագած

Գեղամ սարերն ու Արագած.

Եվ հարազատ աչքի նման

Քեզ կժպտա վճիտ Սևան,

Որ լեռների շուքերի հետ

Խաղ է անում, խայտում վետ-վետ.

Փայլփլում է ծփանքներով,
Հորինում է լույսերի ծով,
Եվ մերթ վշտով ու տխրությամբ
Սևանում է, ինչպես սև ամպ...

Սրտի անհուն բերկրությամբ՝ երկափ տարիներ, կյանք ու արև
ենք մաղթում քեզ, հայրենի երգիչ»:
«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 39:

Փետրվարի 20 - Տպագրվում է Ազատ Վշտունու «Արևելք»
քառյակների շարքը՝ «Հովհաննես Թումանյանին» ընծայականով.

Աշխարհի մեջ ցավելի՝
Երգն է անանց ավելի.
Երգն է անանց ավելի՝
Մեր կյանքի մեջ ցավելի:

Մի հավք տխուր ու սիրուն՝
Վարդի թփի ուսերուն.
Վարդի թփի ուսերուն՝
Կ'երգե տխուր ու սիրուն:

Քնար մ' ունեն,- վառ սերեն,
Լարը՝ կույսի վարսերեն.
Լարը՝ կույսի վարսերեն՝
Որ կը դողա վառ սերեն:

Սիրտս անափ մի ծով է.
Ծով-սրտիս պես մեծ ո՞վ է.
Ծով-սրտիս պես մեծ ո՞վ է.
Սերը սրտիս մի ծով է:

Տերը տվավ մարդուկին
Երգ ու գինի, վարդ ու կին.
Երգ ու գինի, վարդ ու կին,-
Չորս բան տվավ մարդուկին:

Այսօր եկուր ես ու դու
Ծծենք հեշտանք և սուտ ու
Ծծենք հեշտանք և սուտ ու
Վաղը հող ենք ես ու դու:

Աշխարհի մեջ ցավելի՝
Սերն է անանց ավելի.
Սերն է անանց ավելի՝
Մեր սրտին մեջ ցավելի:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 39:

Փետրվարի 20 - Տպագրվում է Գ. Լևոնյանի «Հայաստանի վերածնունդը* և Սասունցի Դավիթ» հոդվածը՝ «Նվիրում եմ Հովհ. Թումանյանին (իր հիսնամյակի օրը)» ընծայականով:

Հոդվածի առաջին մասում խոսում է հեթանոս Հայաստանի բանահյուսության մեջ հայտնի Վահագնի և Արտավազդի կերպարների մասին՝ մեկը որպես փրկության ու վերածննդի խորհրդանիշ, մյուսը՝ չարության ու կործանումի: Հատկանշական է համարում, որ մեր նոր բանաստեղծության ռահվիրա Հովհաննես Հովհաննիսյանը հենց այդպես էլ մեկնաբանել է նրանց խորհրդանշական իմաստը իր երկու նշանավոր ստեղծագործություններում:

Հոդվածի երկրորդ մասը նվիրված է «Սասունցի Դավիթ» էպոսին, որ համարում է համաշխարհային հնչողության գեղարվեստական հուշարձան-կոթող: Առանձին կանգ է առնում Դավթի կերպարի վրա՝ որպես Հայաստանի վերածնության խորհրդանիշի: Էպոսին արժանի մշակում է համարում Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը: Վերապատմում է պոեմում Դավթի հետ կապված դրվագները, և անում կարճ եզրակացություն. ««Սասունցի Դավիթը»** Հայաստանի վերածնունդի խորհրդանշող մի պայծառ էպոպեա է»:

*) Նկատի ունի Հայաստանի Առաջին հանրապետության ծնունդը:

**) Խոսքը Թումանյանի պոեմի մասին է:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 39:

Փետրվարի 20 - Տպագրվում է «Նոր սերնդի բարեկամը» վերնագրով հոդված՝ Նորերից ստորագրությամբ.

«Նոր սերնդի բարեկամն է նա:

Հովհ. Թումանյանը եղել է ոչ միայն հայ գրողների հին գերդաստանի անդամ, այլ նաև իր հասակի հիսուն տարիներն իջեցնե-

լով մինչև քսան՝ այն աշխուժությամբ ձեռնարկել է նորանոր խմբակ-
ցությունների, որքան կլինե՞ր պատանի, սկսնակ բանաստեղծն իր
եռանդով, իր հոգու վերացական աշխարհով:

Գոռոզ չէ նա՝ ի դեմս իր համբավի. զգվող ու գուրգուրող, միշտ
ժպտերես, խրախուսական. մեծ է իր անժխտելի տաղանդի մեջ, իր
անունով, դիրքով, բայց հասարակ է մարդկային առօրյայով, սովոր-
ական՝ որքան մի ընկեր... Եվ սրանք են այն արժանիքները, որ սա-
լոնից դուրս մատչելի են ոչ միայն մտավորականին կամ ինտելի-
գենտին, այլև գյուղացուն, աշակերտին ու նամանավանդ երեխանե-
րին:

Փոքրիկ մանուկն առաջին անգամ էսթետիկապես սնվում է
Թումանյանով և նրանով էլ մեծանում. եթե մեկը բախտ է ունեցել մո-
տիկից ծանոթանալու նրա անձի հետ, նա անշուշտ, գիտակցում է
այն համաչափությունը, որ կա այդ մեծ բանաստեղծի անձնավորու-
թյան ու ստեղծագործության պարզության մեջ:

Նրա կեսդարյա գոյությունը և երեսնամյա գրական գործու-
նեությունը պատվաստումն է նոր սերնդի աճման ու հոգեկան բարձ-
րացման:

Հաղթանակի տոն է այսօր, սակայն ափսոս, որ քաղաքական
այս վրեժխնդիր մթնոլորտը ավելի քան կապարացել է հոգեկան մեր
աշխարհի վրա և չի թուլատրում այն ոգևորությամբ հանդիպելու,
ինչ պատշաճ է ու վայել նոր սերնդի իսկական բարեկամին»:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 39:

Փետրվարի 20 - Տպագրվում է Վ. Խորենիի «Գյուղական աշ-
խարհի երգիչը» ծավալուն հոդվածի առաջին մասը:

Նախ ներկայացնում է գեղարվեստական ստեղծագործության
վերլուծության ու արժեքավորման իր սկզբունքը, որ հանգում է հե-
տևյալին.

«Մի բանաստեղծի գրական դեմքը որոշվում և բնորոշվում է
նրա ստեղծագործության այս կամ այն քննադատական մեթոդով:
Նայած թե ով ինչպիսի տեսակետներով է մոտենում սոցիալական և
կուլտուրական կյանքի երևույթներին՝ ըստ այնմ էլ նա սուբյեկտիվ և
որոշ գունավորումն է տալիս դրանց: Երևույթները երևում են նրան
այնպես, ինչպես նա ցանկանում է տեսնել, ինչպես որ նա մի շարք
սոցիալ-հոգեբանական և անհատական ենթակայական, կանխակալ

կարծիքներով ու նախատրամադրություններով պատրաստ է ըմբռնելու այդ:

Այս սուբյեկտիվ քննական հանգամանքը, որ անուրանալի է և բնական, առանձնապես երևան է գալիս այնպիսի՝ իր ապրումով մեծապես սուբյեկտիվ ստեղծագործության մեջ որպես բանաստեղծությունն է: Մարդկային հոգու այս ամենանեթակայիկ արտադրությունների ըմբռնումն ու գնահատումն ավելի մեծ միակողմանիության է ենթակա, քան այլ երևույթների քննադատությունը: Ուստի և գրական երկերի քննադատությունը օբյեկտիվ ու գիտական լինելու համար պետք է ոչ միայն ենթակայիկ (սուբյեկտիվ) կամ այսպես կոչված՝ պսիխոգենետիկ, այլև սոցիալ-գենետիկ մեթոդով կատարվի: Միմիայն այսպիսի քննադատությունը կարող է գիտական լինել և ամբողջական ու ճիշտ պատկեր տալ ստեղծագործողի ու նրա ստեղծագործության մասին»:

Այս «միացյալ՝ սինթետիկ մեթոդով» էլ վերլուծում ու բնութագրում է Հ. Թումանյանի ստեղծագործությանը և առաջադրում իր հիմնական կանխադրույթը. «Կարճ. նրա բանաստեղծությունը ինտելիգենտ գյուղացու բանաստեղծություն է: Նա այնպես է դիտում, սիրում ու պատկերացնում բնությունը, այնպես է հասկանում ու սիրում մարդուն, այնպես է սիրում կինն ու կյանքը, որպես *մտքով* ինտելիգենտը, բայց *հոգով* ու բնությամբ գյուղացին»:

Այնուհետև. «Այդ գյուղական իրական ու հոգեկան միջավայրի արդյունք է նրա բանաստեղծության մեծ մասը, համարյա ամբողջը, զոնե էականը: Միմիայն Հ. Թումանյանի նման գյուղացի ինտելիգենտն ու բանաստեղծը կարող էր ստեղծել այնպիսի պոեմաներ ու լեզենդաներ, որպես «Անուշ», «Լոռեցի Սաքոն», «Մարո», «Դեպի Անիունը», «Պոետն ու Սուսան», «Փարվանա», «Թմկաբերդի առումը», «Անիծած հարսը», «Պողոս-Պետրոս», այնպիսի մանկական գրվածքներ, որպես «Գիքորը» և «Մի կաթիլ մեղրը», կամ միայն նա կարող էր այնպես տաղանդավոր կերպով գրականի փոխադրել «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպը»:

Թումանյանի ամբողջ ստեղծագործությունը բնորոշում է որպես «Գյուղական աշխատավորական աշխարհի բանաստեղծություն», սոցիալական իդեալը՝ խաղաղություն, բանաստեղծին իրեն՝ «ժողովրդական մեծ բանաստեղծ»: Այս տեսակետից էլ արժեքավորում է Թումանյանի մի քանի հայտնի ստեղծագործություններ:

Ահա, օրինակ, ինչ է գրում «Գութանի երգի» մասին. «Ահա ձեր առաջ ամբողջ հոգեկան և տնտեսական պատկերով այն աշխատավորը, որը իր սոցիալական դրությամբ տարբերվում է պրոլետարիատից նրանով, որ նրա աշխատանքը շահագործվում է, հենց Մարքսի խոսքով, ոչ միայն ուղղակի կերպով շահագործող արդյունաբերական կապիտալից, այլև անուղղակի կերպով՝ և՛ վաշխառուական (պարտք), և՛ հողատիրական (կոռ ու բեգեառ), և՛ պետական ֆինանսական կապիտալից (իբրև «թովջի» հարկ)»:

«Սասունցի Դավթի» մասին. «Վեպը նախապես ազնվական-նախարարական բնույթ է միջնադարյան ծագումն ունի. «Սասունցի Դավթին» ևս նաև արդի գյուղացիության վիճակն է պատկերացնում, որովհետև այդ պոեմը նախապես գյուղացիական-ժողովրդական է դարձել և ապա մեր գյուղացիության կացությունը միջնադարից դեպքը շատ քիչ է փոխվել»:

Պոեմից մեջբերելով Դավթի խոսքերը՝ ուղղված Մարա գործին գրում է. «Աշխատավոր գյուղացու աշխատասիրության ու խաղաղասիրության զգացմունքների այս գեղեցիկ պատկերացումը լրացնում է գյուղացու բողոքը Դավթի դեմ, որը իր ավատական նախարարական քմահաճույքոտ մարզանքների ու որսի ժամանակ կոխկռտել է նրա արտը»: Ապա բերում է արտատեր պառավի հանդիմանանքի խոսքերը Դավթին և մեկնաբանում. «Ավելի գեղեցիկ ու ավելի պարզ հագիվ թե հնար լիներ արտահայտել ու պատկերավորել կիսաճորտական վիճակում ապրող և իր աշխատանքի արդյունքից զուրկ աշխատավոր գյուղացու հոգեբանությունը»:

*) Հոդվածը շարունակելի է:

«Հառաջ», 1919, թիվ 32:

Փետրվարի 20 - Տպագրվում է անստորագիր հոդված «Ժողովրդի երգչի տոնը» խորագրով՝ Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ:

Գրված է փառաբանական շնչով: Թումանյանը «մեր ամենամեծ ժողովրդական բանաստեղծն է», «մանուկ թե ծեր, տղա թե աղջիկ, գյուղացի թե քաղաքացի - բոլորն էլ սնվել, ապրել են նրա հոգու են քաղցրություններով». «Մեր նոր սերունդը իր ապրումներով ու զգացմունքներով որոշ չափով «Թումանյան սերունդ» կարող է կոչվել: Ժողովրդի հարազատ ու մեծ զավակը համճարեղ վարպետությամբ կարողացել է ամենայն հարազատությամբ վերարտա-

դրել ժողովրդի ապրումներն ու խոհերը, դարդերն ու հոգսերը, հույզերն ու հույսերը, ցավն ու դարդը – նրա Հոգին, և՛ իր գեղարվեստական պարզությամբ և՛ կատարելությամբ քաղցր, սիրելի ու հարազատ է դարձել ամենքի համար»:

Այս ոգով բնութագրում է նաև նրա ստեղծագործությունը. «Թումանյանը հայ ժողովուրդն ինքն է իր բանաստեղծական բնատուր և աստվածային ձիրքով, իր մաքուր, բնածին բարոյականությամբ և վսեմ, անկեղծ ու անկաշառ մարդկայնությամբ: <....> Հ. Թումանյանը, իր ժողովրդի մտքի, խոսքի ու բանաստեղծական ձևի մեծ վարպետը մի ինքնարժեք մեծություն, մի բնական, անգնահատելի գանձ է մեր գրականության համար: <....> Թումանյաններ ծնելով ու ստեղծագործելով՝ մեր ժողովուրդը նաև կուլտուրական գոյության արժեք և իրավունք է ստանում»:

«Հառաջ», 1919, թիվ 32:

Փետրվարի 20 - Տպագրվում է հոդված «Հովհաննես Թումանյանի գրական դեմքը Վալերի Բրյուսովի գնահատությամբ» խորագրով, Սալիմյան ստորագրությամբ:

Իբրև բնաբան բերում է ռուսերեն մի քառատող.

Вот нашъ патентъ на благородство,
вручаетъ намъ поэтъ:
Здесъ- духа мощного господство,.
Здесъ-утонченный жизнь и цвет..

Արժեքավորում է «Поэзия Армения» ժողովածուն՝ իբրև մշակութային նշանակալից երևույթ, որ «հայ հոգու Աստվածաշունչը պիտի համարվի», հատկապես Բրյուսովի առաջաբանը՝ անհրաժեշտ համարելով դրա հայերեն թարգմանության հրատարակությունը առանձին գրքով, ամբողջապես թարգմանաբար մեջ է բերում Թումանյանին վերաբերող հատվածը:

Իր կողմից ավելացնում է. «Բանաստեղծի լեզուն հակիրճ է, պարզ ու ժողովրդին հարազատ և իր պարզության մեջ՝ վսեմ ու գեղարվեստական, նկարագրությունները՝ շքեղ, իբրև հմուտ արտիստ, նա փորագրչի մի քանի շարժումներով կամ վրձինի մի քանի հարվածներով տալիս է հայրենի բնության փառահեղ տեսարաններ, հայրենի կյանքի՝ չքնաղ պատկերներ...

Ինչ վերաբերում է մեր բանաստեղծի ստեղծագործական տեմպերամենտին, պետք է ասել, որ նա հավասար հաջողությամբ արտադրում է թե՛ զուտ քնարական բանաստեղծություններ, թե՛ քնարական պոեմներ և թե՛ զուտ էպիկական պոեմներ ու լեգենդներ: Եվ ոչ ոք մեր բանաստեղծներից այնպիսի ամբողջական աշխարհ չի ստեղծել իր համար, որքան Հովհաննես Թումանյանը: Նրա ստեղծագործության էպիկական բնույթը արտահայտվել է ի միջի այլոց «Սասունցի Դավիթ» ժողովրդական դյուցազներգության գրական մշակման մեջ, որ մեզանում միայն Հովհ. Թումանյանը կարող էր այնքան վարպետորեն կատարել»:

Թվարկելով Թումանյանի՝ ժողովածուում զետեղված ստեղծագործությունները՝ դրանց թարգմանիչներով, հավելում է, որ «բոլոր այդ թարգմանությունները արված են վարպետորեն, տաղանդավոր բանաստեղծների ձեռքով»:

Վերջում շնորհավորում է բանաստեղծի հոբելյանը՝ մաղթելով նրան երկար տարիների կյանք և ստեղծագործելու բարենպաստ պայմաններ, «որ նա բարձրացնե բնականից ջինջ ու հստակ, բայց ներկայումս ծանր աղետներից խամրած ու գազազած Հայ Հոգին, որ նա փայլեցնե Հայ Հանճարը, որ **«իմանա՜ն ազգեր, որ Հայք չեն անցեր»**, ինչպես ասում է մեր բանաստեղծության Նահապետ Հ. Ալիշան»:

«Հառաջ», 1919, թիվ 32:

Փետրվարի 20 - Տպագրվում է «Հովհաննես Թումանյան (կենսագրական)» խորագրով անստորագիր հոդված:

Համառոտ ակնարկով ներկայացնում է բանաստեղծի անձնական ու ստեղծագործական կենսագրությունը:

«Հառաջ», 1919, թիվ 32:

Փետրվարի 20 - Վահան Տեր-Գևորգյանի (Վ. Խորենի) շնորհավորական երկտողը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Մեծարգո պ. Հ. Թումանյան

Շնորհավորելով, Մեծ բանաստեղծ, Ձեր գեղեցիկ ու բեղմնավոր հիսնամյակը՝ ի սրտե ցանկանում եմ, որ Ձեր կյանքի երկրորդ հիսնամյակը ևս նոր ստեղծագործություններով գա՛ն նոր փայլ, նոր շունչ ու գեղեցկություն տալու Ձեր պաշտած ժողովրդի անփայլ ու մռայլ կյանքին:

Խորին հարգանքներով՝ Վահան Տեր-Գևորգյան»:
ԹԹ ԳԳ, 1082 (1) 12:

Փետրվարի 20 - Ս. Սողոմոնյան և Ա. Սյուտճյան ստորագրությամբ շնորհավորական նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Ողջույն մեր պաշտելի մեծ բանաստեղծին!

Հարգելի Թումանյան

Շնորհավորում ենք այսօրվա Ձեր հոբելյանական տոնը՝ ցանկանալով Ձեզ դեռ էլի երկար, երջանիկ օրեր, օրեր, երբ կկարողանաք դիմավորել մեզ բոլորիս Ձեր ջերմ ժպիտով, բայց առանց արցունքների:

Հարգանքով՝ Ս. Սողոմոնյան, Ա. Սյուտճյան»:

ԹԹ ԳԳ, 1082 (1) 10:

Փետրվարի 20 - Տպագրվում է Արմենուհի Տիգրանյանի «Հովհաննես Թումանյանին» բանաստեղծությունը.*

Ի՞նչ ձոնեն քեզ, որ չունենաս,
Սե՞ր թե կարոտ, կապույտ երա՞զ,
Անխրատ սի՞րտ, գարնան համբո՞ւյր,
Սիրող աչե՞ր, գինի՞ թե բույր.

Մենության ցա՞վ, ե՞րգ թե ժպիտ,
Մտքե գրի՞չ, խոսքե մատի՞տ,
Հուզումներե կերտած տաճա՞ր,
Սիրո կնճիռ, փա՞ռք, թե՞ հանճար:

Գուցե մի սիրտ խորունկ ու հեզ,
Մեծի, փոքրի հանդեպ բեհեզ,
Սիրող ու վեհ, հպարտ, անպարտ...
Ա՛հ, թե լիներ նաև անդարդ...

Եվ կուզեի ձոնել ես քեզ
Մոռացության թևերն անտես,
Որ հասնեին վշտիդ ժամին
Օրորեին, հաշիշ տային:

*) Նույն օրը տպագրվում է նաև բանաստեղծության ռուսերեն թարգմանությունը՝ Ս.Գորոդեցկու թարգմանությամբ՝ («Закавказское слово», 1919, փետրվարի 20, թիվ 27)

«Հառաջ», 1919, թիվ 32:

Փետրվարի 20, հինգշաբթի - Երեկոյան Արտիստական թատրոնում դերասան Աբեյանը հայտարարում է, որ Հայ դերասանի օրվան զուգադիպում է Թումանյանի ծննդյան 50-ամյա և գրական գործունեության 30-ամյա հոբելյանը: Հանձնարարում են դահլիճում ներկա բանաստեղծ Ս. Գորոդեցկուն իրենց կողմից շնորհավորել բանաստեղծին: «Հասարակությունը ջերմ ցույց կազմակերպեց համուն հոբելյարի,- ասված է մամուլի հաղորդագրության մեջ,- և երկար ժամանակ չէին դադարում որոտընդոստ ծափահարությունները»:

«Մշակ», 1919, թիվ 42:

Փետրվարի 20 - Առավոտվանից սկսվում են այցելությունները Թումանյանին՝ շնորհավորելու նրա ծննդյան 50-ամակը:

Մամուլը հաղորդում է. «Փետրվարի 20-ի առավոտից բանաստեղծի բնակարանը դարձավ շնորհավորական այցելությունների և բարենաղթությունների օջախ»:

Գրողներ, հասարակական գործիչներ, կազմակերպությունների և զանազան հաստատությանց ներկայացուցիչներ այդ օրը իրանց հարգանքի և շնորհավորանքի խոսքը բերին բանաստեղծին:

Այցելությունները շարունակվեցին մինչև երեկո:

«Մշակ», 1919, թիվ 41:

Փետրվարի 20 - Ախալքալաքի հայրենակցական միության վարչության շնորհավորական նամակը Թումանյանին.

«Հայ ժողովրդի սիրելի բանաստեղծ Հովհաննես Թումանյանին

Տոլստոյի ծննդյան ութսունամյակի առթիվ նրան չինացիների կողմից ուղարկված հեռագրի մեջ Կոնֆուցիոսի երկրպագուները ասում էին. «Շնորհավորում ենք Ձեր ութսունամյա ճանապարհորդությունը արևի շուրջը»: Ախալքալաքի հայրենակցության վարչությունը, օգտվելով այդ պատկերավոր արտահայտությունից, այսօր ասում է Ձեզ՝ հայ հոգու անմեղ երգչիդ. «Բարենաղթելով երկարակեցություն մեր գրականության պարծանքին՝ շնորհավորում ենք

Ձեր հիսունամյա ճանապարհորդությունը արևի շուրջը, որից ստացած լույսը Ձեր հոգու արևից առատորեն տարածվել է հայ աշխարհի մթության մեջ և սասանեցրել է այնտեղ խավարի թագավորությունը:

Խորհ. նախագահ՝ Գր . Պապայան

քարտուղար՝ Պ. Աբելյան»:

ԳԱԹ ԹՖ, 1286: ԹԹ, 3585:

Փետրվարի 20 - Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի անունից Տիգրան Բեկզադյանի շնորհավորական նամակը Թումանյանին.

«Սիրելի Հովհաննես,

Քննիչ հանձնաժողովի մնացյալ հինգ անդամների կողմից ուղարկելով քեզ այս փոքրիկ նվերը - «Ճամփորդ ուղղափառի երեկոյան աղոթքին»^{*} հատուկ անկեղծությամբ և ջերմեռանդությամբ բարենաղթում ենք քեզ դեռ երկար և երջանիկ տարիներ՝ լուսավորելու և ջերմացնելու մեր վերածնվելիք հայրենիքը բնածին ու աստվածատուր կրակով, մինչև որ նա դառնա քո երազած այն «դալար անկյունը», ուր կլինի և «մանկության արդար քուն», և իրականության մեջ «լուսավոր ու երջանիկ մարդկություն»:^{**}

Ի դիմաց հանձնաժողովի վարիչ անդամների՝

Տիգրան Բեկզադյան»:

^{*}) Նկատի ունի Գյոթեի «Wuanderers Nachtlied» («Ճամփորդի գիշերվա երգը») բանաստեղծության թարգմանությունը Լերմոնտովի ռուսերեն փոխադրությունից՝ «Լերանց շարքերը...» սկսվածքով:

^{**}) Չակերտների մեջ առնված արտահայտությունները «Լիներ հեռու մի անկյուն...» քառյակից են՝ մեջբերված հիշողությամբ:

ԹԹ ԳԳ, 1082 (1) 5:

Փետրվարի 20 - Երրորդ արական գիմնագիայի աշակերտությունը հոբելյանական ցույց է կազմակերպում Թումանյանի տան մոտ:

Մամուլը հաղորդում է.* «Երրորդ արական գիմնագիայի ուսուցչական խումբն ու աշակերտությունը պատվի ցույց կազմակերպեցին հոբելյարին:

Ամբողջ հարյուրավոր աշակերտությունը ուսուցչական խմբի ղեկավարությամբ նվագախմբի քայլերգով ուղղվեց դեպի բանաստեղծի բնակարանը:

Բուժն կեցցեցների ու նվագախմբի թնդյունների տակ բանաստեղծը դուրս եկավ՝ շրջապատված հորեյլանի առիթով հավաքված համակրողներով: Մի քանի վայրկյան ուսուցիչներն ու սաները օդի մեջ էին պտտեցնում հորեյլարին և կեցցեցները դեռ երկար շարունակվում էին:

Ուս. խմբի կողմից հ. Բենիկը դիմեց հորեյլարին մոտավորապես հետևյալ խոսքերով.

«Կյանքը, առանձնապես հայ կյանքը, կարծես ապերախտ է դեպի իր մեծությունները, իր մարդիկը, որոնցից նա սովորում է: Դուք հայ կյանքի մեծություններից եք, և մեր դպրոցը չի ուզում իր վրա կրել ապերախտ կոչումը. նա իր ամբողջ ուսուցչական խմբով ու աշակերտությամբ եկել է իր երախտագիտությունը հայտնելու ձեզ՝ ձեր հիսնամյա հորեյլանի առթիվ, որովհետև գիտակցում է, թե ինչ եք արել հայ ժողովրդի համար:

Դուք Հայաստանի գեղեցիկ լեռներից իջեցրել եք ծաղիկները և նրանցով ոգի ներշնչել մանուկներին ու սեր սերմանել նրանց սրտում դեպի գեղեցիկ հայրենիքը: Դուք երգեցիք հայրենի վիշտը, սակայն ձեր արցունքները չհանգցրին մեր մեծ վիշտը: Մեր սաները եկել են հայտնելու ձեզ, որ նրանք գնալու են ձեր գծած ուղիով: Ուսուցչական խմբի ու աշակերտության կողմից համբուրում են ձեզ ու մաղթում, որ ձեր գրիչը միշտ երգի»:

Կեցցեցների ու նվագածության տակ հ. Բենիկը համբուրվում է հորեյլարի հետ:

Այնուհետև աշակերտության կողմից 8-րդ դաս. աշ. Դաստակյանը ողջունում է հորեյլարին ու ասում.

«Մենք ծաղիկներ չենք բերել ձեզ, որովհետև նրանք շուտ կթառամեն. մենք բերել ենք ձեզ մեր սրտերը, որոնք միշտ անթառամ են. 3-րդ արակ. գիմն. աշակերտությունը ձեր սերունդն է, որովհետև նա կրթվել է ձեզնով, և այսօր նա երդվում է, որ միշտ գնալու է ձեր ուղիով ու անմահ է պահելու ձեր անունը»:

Մի փոքրիկ սան՝ Դավթյան ազգանունով, արտասանում է հորեյլարի «Հին օրհնությունը»:

Հորեյլարը զգացված պատասխանեց բոլորին հետևյալ խոսքերով.

«Թանկագին ուսուցիչներ և սիրելի աշակերտներ. դեռ փոքր, պատանեկական հասակում ես տաղ էի ասում մեր մեծերի մոտ, որոնք ինձ ասացին՝ «Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրեք»,

սակայն անցան տարիներ, և ես նորից պիտի ասեմ. «Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրեք»: Մենք գրքերում էինք կարդում ու հեքիաթներում լսում մարդկանց գազանությունների մասին, սակայն այսօր մենք մեր աչքով տեսանք, որ դեռ չի վերջացել կռիվը, պատերազմը:

Շատ ճակատներ կան պատերազմում, սակայն ամենավսեմը ձերն է, որովհետև դուք եք կռվում այն լուսավոր գաղափարների համար, որոնք պիտի բերեն եղբայրություն ու ազգերի համերաշխություն, հավասարություն, լույս ու արդարություն: Դուք պիտի պայքարեք՝ վերացնելու ժողովուրդների վրայից տանջանքներն ու թշվառությունը: Ես մի համեստ գործիչ եմ, և այսօր ձեր այդ վառ զգացումները ապացուցում եմ, որ դուք պիտի ձեր գործը սրբությամբ կատարեք:

Ծերանալուց հետո ես նորից կրկնում եմ ձեզ, սիրելի աշակերտներ՝ «Ապրեք, երեխեք, բայց մեզ պես չապրեք»: Մենք՝ հին սերունդը, դժբախտ եղավ. մաղթում եմ, որ դուք ստեղծեք երջանիկ կյանք: Հայտնում եմ ձեզ բոլորիդ իմ խորին շնորհակալությունը՝ ինձ ցույց տված զգացումների համար»:^{**}

Կեցցեների տարափի տակ բանաստեղծը համբուրվում է բոլոր ուսուցիչների հետ, որից հետո նվագախումբը նվագում է ու աշակերտությունն ուղղվում է 3-րդ գիմնազիա»:

*) Նույն հաղորդագրությունը ավելի համառոտ՝ «Հառաջ», 1919, թիվ 33:

**) Թումանյանի խոսքը նույնությամբ տպագրված է ԵԼԺ 7, 383-384:

«Մշակ», 1919, թիվ 41:

Փետրվարի 20 - Գրական գործունեության 30-ամյակի առթիվ շնորհավորական նամակ Թումանյանին՝ Հակոբ Մելիք-Բախտամյան ստորագրությամբ.

«Սիրելի Հովհաննես,

Այսօր մամուլը տոնում է քո երեսնամյա գրական գործունեությունը, ես բանասեր չեմ, գրական ասպարեզում չեմ վարժվել, ուստի ների, որ չեմ կարողացել քեզ արժանի գովասանք գրելու, ո՞վ գիտե եթե շարադրեի գուցե մեր «Մշակն» էլ տեղ չտար: Սակայն համոզված լինելով, որ դու եմ աշխարհի բանաստեղծներից չես, որ չգնահատես և ստամոքսի արժեքը, ուստի, պարտքս մասամբ կատարելու համար, ուղարկում եմ քեզ մասնագիտությանս արդյունքից, իմ սեփական ագարակում պատրաստած մի կտոր կարագ: Կեր, որ առողջ և երկար տարիներ ապրես: Այսուհետ քո քնարը ավե-

լի ևս ուժեղ հնչե՝ արթնացնելու հայի բթացած զգացմունքը Հայաստանի այս վերաշինության շրջանում:

Քո Հակոբ Մելիք-Բախտամյան»:

ԹԹ ԳԳ, 1082 (1) 7:

Փետրվարի 20 - Հայ ժողովրդական կուսակցության ուսանողական ֆրակցիայի անունից շնորհավորական նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Սիրելի բանաստեղծ Հովհաննես Թումանյանին

Հայ ժողովրդական կուսակցության ուսանողական ֆրակցիան սրտի ուրույն թրթռով, հոգու զվարթ խնդությամբ շնորհավորում է իր սիրելի բանաստեղծի ծննդյան հիսնամյա տոնը և լավագույն զգացմունքների ամբողջ թափով ցանկանում է հայի վիշտ ու ցավի, խինդ ու երգի, մռայլ ներկայում՝ պայծառ, վառ ապագայի լավագույն գուսանի - հայրենի լեռ ու դաշտի, ծաղիկ ու բույսի, գետ ու աղբյուրի կախարդ կենարար, – հայ մարդու ազատ տենչերի, ըմբոստ խիզախումների ավյունալից ազդարար, – հայ գեղջուկի մաճ ու արտի, սրբազան աշխատանքի աննման ներբողող – խորհրդավորության անծիր ծով նրա զգացումների, քնքուշ ու բուռն ապրումների հարազատ թարգման թանկագին Հովհաննես Թումանյանին երկար կյանք, երկար լավ օրեր, տեսնելու իր պաշտած հայրենիքի լիակատար վերածնությունը, նրա քաղաքական ու կուլտուրական փարթամ ծաղկումն ու բարգավաճումը:

Մեր հիասքանչ երախտագետ հարգանքների մշտամնա պսակը Ձեր ալեհեր գլխին:

Փոխնախագահ՝ Շավ. Պապոյան

Քարտուղար՝ Հր. Պապոյան»:

ԹԹ ԳԳ, 1082 (1) 8:

Փետրվարի 20 - Իրավաբան Նիկոլայ Դմիտրիևիչ Սոկոլովի շնորհավորական նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.*

«Многоуважаемый Ованес Фадеевич!

Сегодня армянское общество чувствует в Вашем лице яркого выразителя поэтических настроений армянского народа, верного хранителя заветов гуманности и стойкого защитника державных прав справедливости.

В хор единодушных признаний и приветствий мне хочется внести несколько впечатлений от встреч с Вами на далеком

севере, в Петербурге.

Мне хочется вспомнить то время, когда в России царила реакция, когда ее слуги путем провокаций направляли темные массы одних народов на другие и путем насилия, лжи и подлогов сажали на скамьи подсудимых и в тюрьмы наиболее самоотверженных граждан.

Реакция была бессмысленна и жестока.

Но с отрадой вспомнится то единодушие в борьбе, которое спаивало всех нас, демократов разных политических партий и разных национальностей.

Как показателен был в этом отношении тот процесс армянских общественных деятелей, где на скамью подсудимых волею щегловитских агентов были посажены и Вы.

Вспоминаю Вашу речь на суде и те проникновенные слова, призывающие к примирению народов, которые Вы нашли в ответ на гнусное обвинение Вас в национальной травле, и которыми Вы сумели скучные судебные будни поднять до высоты торжественного провозглашения начал гуманизма в общественных и национальных отношениях

Во время того процесса состоялось и Ваше знакомство В. Г. Короленко.

Армянский поэт и русский писатель-художник, оба имевшие в то время десятки лет литературной работы, с юношеским энтузиазмом встретили друг друга и обмен мыслями и впечатлениями настолько увлек их, что, выйдя из дому после продолжительного разговора поздно вечером они пробродили по Петербургским улицам большую часть ночи.

Мы, русские, привыкли смотреть на В. Г. Короленко не только как писателя-художника, для нас он – выражение строгой и чуткой общественной совести.

К Вам так относится армянское общество.

И когда я вспоминаю Вашу с Владимиром Галактионовичем ночную прогулку по Петербургу, я невольно вижу в ней не только символ и конкретное выявление единения в области высших идеалов человечности двух народов, но и залог братства всех народов.

Ваш почтитель Н. Д. Соколов».

*) Իրավաբան Ն. Դ. Սոկոլովը Թումանյանի դատավարության ժամանակ նրա փաստաբաններից էր և ապրում էր Պետերբուրգում:

ԹԹ ԳԳ, 1082 (1) 13:

Փետրվարի 20 - Գրիգորի Դիասամիծեի շնորհավորական նամակը Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Глубокоуважаемый Ованес Татевосович,

Редакция газ. «Северный Кавказ», издающийся в Тифлисе и выражающей общественное мнение объединенных горских народов Кавказа, поручила мне приветствовать Вас по случаю исполнившегося пятидесятилетия со дня Вашего рождения. Редакция рада выразить свои чувства Человеку, идеал которого вполне совпадает с назначением ее органа, поставившего себе целью служение идею культурного и политического сближения народов всем нам дорогого Кавказа и пожелать ему от всего сердца здоровья и служения еще на многие годы родной литературе во славу армянского народа и на пользу всего Кавказа.

Уважающий и любящий Вас

Григорий Диасамидзе».

ԹԹ ԳԳ, 1082 (1) 15:

Փետրվարի 21 - Մամբրե Մատենճյանի շնորհավորական նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի պ. Հովհաննես Թումանյան: Երկար ժամանակից ի վեր հիվանդ պառկած լինելով՝ դժբախտաբար չկարողացա անձամբ մասնակցել Ձեր սիրելի հոբելյանին: Միևնույն է, սենյակումս անգամ զգացի, որ մի տեսակ զվարթ, հանրային ու տաք բնույթ ուներ Ձեր հիսնամյակի տոնը՝ բոլորովին տարբեր մինչև հիմա եղածներից: Խորապես համոզված եմ, որ Ձեր անուշ բնավորության ու տաղանդի շքեղ բնականությունն են դրա հիմնական պատճառը:

Ձեզ խորապես հարգող՝ Մ. Մատենճյան»:

ԳԱԹ ԹՖ, 1671 (870):

Փետրվարի 21 - Նոյ Ռամիշվիլիի շնորհավորական հեռագիրը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Թիֆլիսից.

«Горячо приветствую в Вашем лице печальника и певца двух братских народов. Временное омрачение умов не остано-

вот триумфального шествия царства любви и солидарности народов.

Министр Внутренних Дел
Ной Рамшвили».
ԹԹ ԳԳ, 1082 (II) 11:

Փետրվարի 21 - Մամուլը տեղեկացնում է, որ Հայ գրողների ընկերության վարչությունը մտադիր է մոտ օրերս կազմակերպել գրական երեկո՝ Հոլի. Թումանյանի ծննդյան հիսնամյա տարեդարձի առթիվ:

«Հառաջ», 1919, թիվ 33:

Փետրվարի 21 - Մամուլում տպագրվում է «Հոլի. Թումանյանի տոնը» խորագրով հաղորդում:

Հաղորդվում են մանրամասների փետրվարի 20-ին Թումանյանի բնակարանի մոտ տեղի ունեցած տոնական հանդիսության մասին:

«Մշակ», 1919, թիվ 41:

Փետրվարի 22 - Հայ ուսուցիչ-ուսուցչուհիների պրոֆեսիոնալ միության վարչության շնորհավորական ուղերձը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ Թիֆլիսից.

«Ազգային բանաստեղծ Հոլիհաննես Թումանյան

Հայկական դպրոցների դասատուների պրոֆեսիոնալ Միության վարչությունը անհուն բերկրանքով շնորհավորում է Ձեր ծննդյան հիսնամյա տարեդարձի տոնը: Այդ տոնը ամենից առաջ հայ դպրոցի, հայ ուսուցչի, հայ մանկան տոնն է: Մեր անմահ Ղազարոս Աղայանի հետ Դուք եք եղել, սիրելի Բանաստեղծ, մեր դասագրքերին ազգային ոգի ու շունչ տվողը: Ձեր բերանով է խոսել և ոգևորվել հայ ուսուցիչը: Ձեր շնչով է ջերմացել հայ մանուկը:

Մեր դաստիարակության հանձնված երեխաների հետ միասին ցանկանում ենք Ձեզ երկար կյանք: Թող վառ մնա դեռ երկար ժամանակ Ձեր մտքի ու սրտի հույզը. նրա կարիքը շատ մեծ է մանավանդ ներկա համազգային այս սև ու դաժան օրերին»:

ԳԱԹ ԹՖ, 2472 (1303): ԹԹ, 1035 (3587):

Փետրվարի 22 - Մելիք Պապուկյանց ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Լոռուց.

«Մեր հայրենակից մեծ բանաստեղծ ժողովրդական երգիչ
Հովհաննես Թումանյանին

Ոչ մեկին այնքան սրտի մոտ չէ Ձեր 50-ամյա ծննդյան տոնը և
30-ամյա գրական գործունեությունը, որքան մեզ՝ Լոռեցիներին՝ Ձեր
հայրենակիցներին: Սրտի անհուն հրճվանքով և ամենաանկեղծորեն
ողջունում ենք Ձեր այդ մեծ տոնը և հրճվում ենք, որ մեր հայրենիքը՝
Լոռին, հանձինս Ձեզ տվել է մի գրական հասարակական դեմք, որով
յուրաքանչյուր լոռեցի ամենայն իրավամբ հպարտությամբ կասե.
«Ես Հովհաննես Թումանյանի հայրենակիցն եմ, ժայռոտ, անտառոտ
Լոռու զավակը, որը ծնել է Հովհաննես Թումանյանին: Կեցցե Լո-
ռին... Հավետ կեցցեք Դուք...»:

Ցանկանում ենք ուշ, եռանդ և կարողություն մոր թափով ու
հոգով երգելու մեր ժողովրդի հոգուց և սրտից:

Մի խումբ լոռեցիների կողմից լիազորված՝

Մելիք Պապովյանց»:

ԹԹ ԳԳ, 1082 (I) 16:

Փետրվարի 22 - Մամուլում հրապարակվում են Ն. Ժորդա-
նիայի և Ե. Պ. Գեգեչկորիի շնորհավորական հեռագրերի հայերեն
թարգմանությունները՝ Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ:

Ժորդանիան գրում է. «Շնորհավորում եմ Կովկասի ժողովուրդ-
ների միության ազնիվ երգչի ծննդյան հիսնամյակը և ցանկանում,
որ նա շարունակի ընթանալ մեկ անգամ ընտրած իր ճանապար-
հով»:^{*}

^{*}) Գեգեչկորիի հեռագրի ռուսերեն բնագիրը տե՛ս փետրվարի 20:

«Հառաջ», 1919, թիվ 34, «Մշակ», 1919, թիվ 42:

Փետրվարի 22 - Տպագրվում է հայ ժողովրդական կուսակցու-
թյան ուսանողական ֆրակցիայի բաց նամակը (տե՛ս փետրվարի 20)
Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ:

«Ժողովրդի ձայն», 1919, թիվ 41:

Փետրվարի 23 - Հրավեր-նամակ Թումանյանին Թիֆլիսի եր-
րորդ արական գիմնազիայի մանկավարժական և ծնողական ընկե-
րության խորհուրդների կողմից.

«Մեծապատիվ պարոն Հովհաննես Թումանյան

Թիֆլիսի երրորդ արական հայկական Գիմնազիոնի մանկա-
վարժական և ծնողական ընկերության խորհուրդները և աշակերտ-

ները պատիվ ունեն խնդրելու Ձեզ հարգել Ձեր ներկայությամբ Վարդանանց տոնի աշակերտական հանդեսը, որ տեղի կունենա այսօր՝ ժամը 11-ին, Գիմնագիտնի շենքում (մուտքը Վեյամհնովսկայա փողոցից):

Խորին հարգանք՝ Ա. Սոպուրյան, Գիմնագիտնի տեսուչ
Ծնողական ընկերության նախագահ՝ Բ. Ա. Շխոյան»:
ԹԹ ԳԳ, 1082 (1) 18:

Մինչև փետրվարի 23 - Ընդհանուր հայ աշակերտական միության տեղական վարչության հրավիրագիրը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի ուսուցիչ !

Վարչությունս սույն ամսու 23-ին, առավոտ ժամի 13-ին, 3-րդ Իգական գիմնագիայում Ձեր թույլտվությամբ կազմակերպում է գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Ձեր 50-ամյակին:

Սրանով գալիս ենք խնդրելու Ձեզ չմերժել անձամբ ներկա գտնվելու վերոհիշյալ ցերեկույթին: Օգտվելով հանգամանքից՝ մենք հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը այն բոլորի համար, ինչ որ արել եք հայ աշակերտության համար:

Նախագահ՝ Գ. Վանցյան»:

ԳԱԹ ԹՖ, 2502 (1342): ԹԹ, 3594:

Փետրվարի 23, առավոտյան ժամը 12 - Երրորդ օրիորդաց գիմնագիտնի հայոց լեզվի ուսուցիչ-ուսուցչուհիները 40 աշակերտների հետ այցելում են Թումանյանին՝ շնորհավորելու ծննդյան 50-ամյակը:

Շնորհավորական խոսք է ասում ուսուցիչ Մելիք Ադամյանը: Աշակերտության անունից իր թոթով լեզվով բանաստեղծին շնորհավորում է ամենափոքրիկը: «Տեսարանն առհասարակ այնքան հուզիչ էր,- ասված է մամուլի հաղորդագրության մեջ,- որ բանաստեղծը մի քանի անգամ արտասվեց՝ գրկելով իրեն շնորհավորող փոքրիկ աշակերտուհուն և համբուրեց»:

«Մշակ», 1919, թիվ 43:

Փետրվարի 23 - Երրորդ իգական գիմնագիայում տեղի է ունենում ընդհանուր հայ աշակերտական միության ցերեկույթը՝ նվիրված Թումանյանի ծննդյան 50-ամյակին (տես մինչև փետրվարի 23):

Ներածական խոսքով հանդես է գալիս Դ. Դեմիրճյանը: Խմբո-

վին և մենակատարմամբ երգում էին աշակերտուհիները՝ Արմեն Տիգրանյանի նվագակցությամբ:

Հանդեսին ներկա հոբելյարը «սրտի խոսք» է ասում. «Հայ ժողովրդի արյունոտ կյանքի վերջալույսին և նոր կյանքի արշալույսին ես ես ոգևորությունը էնպես եմ հասկանում, որ մեր ժողովուրդը սկսում է սիրել իրենը, հարազատը: Մեր էն լավ խոսքերը անգրիվ մնացին, չասվեցին: Ցենզուրան և արյունը թույլ չէին տալիս:

Ես հույս ունեմ, որ դուք կասեք էդ չասված խոսքը և կապրեք, բայց մեզ պես չեք ապրի և ավելի մեծ բան կասեք, քան իմ համեստ ծառայությունը մեր ժողովրդին:

Դուք ինձ ոսկե գրիչ եք տալիս. ես ի՞նչ պիտի գրեմ, որ ոսկե գրչի արժանի լինի, որ բխում է ձեր զգացմունքներից:

Բայց ես իմ կարապի երգը կերգեմ մեր ժողովրդի վերածնության մասին, որ ես տեսակ ժողովուրդը պիտի որ ապրի, որի զավակները ես օրերին էլ դեռ ոգի և սեր ունեն գեղեցիկը սիրելու և իրենց գրողին ոսկե գրիչ տալու»:^{*}

«Հանդեսն ավարտվեց ցնծագին և բուռն ծափերի տակ,- ասվում է ցերեկույթի մասին հաղորդագրության մեջ:- Ինչ-որ գեղեցիկ, հոգեպարար, հեքիաթային շունչ կար գեղեցիկի և սիրո այդ մանկական պարզ ու բնական արտահայտությունների մեջ»:

^{*}) Տպագրված է՝ ԵԼԺ 7, 385, 655-656:

«Հառաջ», 1919, թիվ 36:

Փետրվարի 23 - «Русская» ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ <Թիֆլիսից>.

«Милостивый Государь,

Примите запоздалое поздравление к торжественному для Вас дню 20 го февраля от неизвестной. Не могу добавить почтительницы Вашего таланта – так как еще слишком слабо знаю родной Ваш язык. Лежу больна, но первые склады по армянски я прочла из Вашего сборника стихотворений.

Не теряю надежды в конце концов овладею армянским языком настолько, что буду в состоянии из подлинников понимать всю красоту его поэзии (а понимать истинную красоту поэзии вообще я умею).

Лежу больна, и только сегодня впервые нашла в себе сил взять перо, а потому поздравление мое так запоздает.

Да будет над Вами благословение Вашего страдающего народа.

Русская».

ԹԹ ԳԳ, 1082 (I) 17:

Փետրվարի 23 - Բորժոմի հայկական թատերական ուսումնարանի վարիչ Դավթյանի շնորհավորական հեռագիրը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Բորժոմից.

«Холодным проволком шлю теплые поздравления, искренне желаю благоприятных условиях отпраздновать Ваш 100 летний юбилей. Да здравствует Ваша муза, Ваша лира.

Заведующий Боржомским армянским училищем драматическою группы

Давтянц».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 13:

Փետրվարի 23 - Մամուլը հաղորդում է, որ փետրվարի 21-ին շարունակվում էին շնորհավորանքները Թումանյանին՝ նրա ծննդյան 50-ամյակի առթիվ:

Տեղեկացվում է, որ բանաստեղծին այցելում, շնորհավորում ու իր օրհնությունն է տալիս Մխիթար եպիսկոպոսը, որ փետրվարի 20-ին Արտիստական թատրոնում Ս. Գորոդեցկին բեմից արտասանում է Հովի. Թումանյանի հայերեն բանաստեղծություններից մեկը, ապա ներկայացնում նույնի իր ռուսերեն թարգմանությունը: Հոբելյանական հանդիսությունն անցնում է մեծ շուքով:

Հաղորդման մեջ հիշվում է նաև «Սաքարթվելո» թերթի խմբագրության անունից Տիցիան Տաբիձեի շնորհավորական հեռագիրը:

«Закавказское слово», 1919, թիվ 29:

Փետրվարի 24 - Հակոբ Սառիկյանի չափածո ուղերձը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Վլադիկավկազից.

«Իմ թանկագին Հովհաննես Թումանյանին

(իր ծննդյան 50-ամյակի առթիվ)

Իմ հայրենիքի, մեր դարդ ու ցավի

Հրաշալի երգիչ,

Մեր շեն և գլուղի, մեր դաշտ ու սարի

Վարպետ նկարիչ,

Ռանչպար-մաճկալի, հովիվ-հոտաղի
 Հոգու թարգմանիչ,
 Մեր մանուկների, մեր նոր սերնդի
 Մեծ դաստիարակիչ,
 Անհանգիստ, շիտակ, զգայուն հոգի,
 Ես ի՞նչ նվիրեմ,
 Ինչպե՞ս օրհնեմ քեզ,
 Որ սերս ու միտքս
 Հայտնած լինեմ քեզ:
 Թող Լուսավորչի էն վառ կանթեղը
 Քո չքնաղ ճամփեն
 Միշտ լուսավորի,
 Սուրբ Էջմիածնի ոսկեզօծ խաչը
 Մեզ համար անգին
 Արևդ պահի,
 Մեզ Արարատի զրդզրդան հովը
 Մեր դարդով տանջված
 Ճակատդ շոյի,
 Տառապած ցեղիդ ազատ որդիքը
 Անմեռ անունդ
 Հիշե՛ն ու օրհնեն,
 Հավիտյա՛ն երգեն...

Հ. ք. Սառիկյան:

Այս տողերը փորագրված են Վլադիկավկազի հասարակու-
 թյան նվիրած արծաթե բաժակի վրա:

Հ. Ս. »:

ԹԹ ԳԳ, 1082 (I) 20: ԳԱԹ ԹՖ, 1304:

Փետրվարի 24 - Շնորհավորական մամակ Թումանյանին՝
 Թիֆլիսից՝ Կարապետ Քեոսեյան ստորագրությամբ.

«Հարգելի պրն. Հ. Թումանյան

Սև ծովի եզերքի Կիրասոն քաղաքացի Կարապետ Քեոսեյանը
 կշնորհավորե Ձեր ծննդյան 50-րդ տարեդարձը և կմաղթե որ դարձ-
 յալ մեկ 50 ալ տեսնաք և հասնիք մինչև 100-էն անդին:

Սրվանձտյանի, Իզմիրլյանի, Հովհ. Գալայանի, Կարապետ
 Թումանյանի, Արփիար Արփիարյանի, Մինաս Չերազի, Բաբկեն-Սու-

րենի, Սուրեն Պարթևյանի, Հայր Ալիշանի ձեռքը սեղմողը Ձեր ձեռքը կսեղմե այս տարեդարձի առթիվ:

Կուր գետը, ճորոխը, Եփրատը, Գայլ գետը, Արիս և Իրիս այցելած թյուրքահայը Ձեր ձեռքը կսեղմե:

Սև ծովը, Մարմարան, Արշիպեղագոսը, Միջերկրականը, Ադրիատականը, Հունական ծովը, Ատլանտյան օվկիանոսը, Պալթիքը, Հյուսիսային ծովը և Իրլանդական ծովը տեսած Սև ծովի հայը Ձեր ձեռքը կսեղմե:

Կովկաս, Բարձր Հայք, Պոնտոս, Փոքր Հայք, Փոքր Ասիա, Կ. Պոլիս, Ռոմանիա, Ռուսաստան, Իտալիա, Մալթա, Գերմանիա, Դանիա, Շվեդիա, Նորվեգիա և Անգլիա այցելած Կարապետ Քեոսեյանը Ձեզի և Ձեր Օճախի անդամներուն երջանկություն կմաղթե:

Խորին հարգանքներով՝ Կարապետ Քեոսեյան»:

ԹԹ ԳԳ, 1082 (1) 19:

Փետրվարի 25 - Քանոյան օրիորդաց դպրոցում տեղի է ունենում ցերեկույթ՝ նվիրված Թումանյանի ծննդյան 50-ամյակին:

Բանաստեղծին «պատվավոր հրավիրյալների հետ» դպրոցի մուտքի մոտ մեծ շուքով դիմավորում են հոգաբարձությունը և աշակերտական-ուսուցչական ողջ կոլեկտիվը. «Օդը թնդաց «կեցցեմներով» և ուրիշ համակրական ցույցերով»: Հանդիսարանը զարդարված էր «նկարով, գորգերով և կանաչ տերևներով ու ծաղիկներով»: Երգչախումբը հյուրերին դիմավորում է «Մեր հայրենիք» երգելով: Դպրոցի կողմից ողջույնի խոսք է ասում Հ. Հովհաննիսյանը՝ «որոշելով նրա տեղն ու նշանակությունը արևելահայոց գեղեցիկ գրականության մեջ»: Բանաստեղծին ողջունում են նաև աշակերտները: Մեջընդմեջ տեղի են ունենում արտասանություններ, կատարվում են գեղեցիկ երգեր: Վերջում ներկայացվում է «Ամուշ» օպերայից մի տեսարան՝ հեղինակի նվագակցությամբ: Իր շնորհակալական խոսքում բանաստեղծը զարմանք է հայտնում «հայոց ազգի կենսունակության նկատմամբ»: «Սրտառուչ տողեր» է գրում այցելուների մատյանում:

«Մշակ», 1919, թիվ 60:

Փետրվարի 25 - Տեղի է ունենում գրական երեկույթ՝ նվիրված Դանիել Վարուժանին:

Դասախոսությամբ հանդես է գալիս Վ. Ահարոնյանը: Երեկույթի մասին հաղորդագրության մեջ մասնավորապես ասվում է. «Այս

շահեկան դասախոսության երկրորդ մասի սկզբին երիտասարդ գրողներով շրջապատված՝ դահլիճ մտավ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որին հասարակությունը ընդունեց աղմկալի ծափահարությամբ, պատշգամբից տեղացին ծաղիկներ:

Երիտասարդ գրողների կողմից հուզված ողջույնի խոսք ասաց Ստ. Ջորյանը՝ շեշտելով այն երախտագիտությունը, որով լցված են իր ընկերները Հ. Թումանյանի և մեր մյուս գրողների համդեպ»:

Պատասխան խոսք է ասում Թումանյանը.

«Ամեն անգամ, երբ ետ եմ նայում, տեսնում եմ, որ մեր ազգին բաժին ընկած անվերջ տանջանքներն ու դժբախտությունները ինձ և իմ ընկերներին թույլ չտվին գրելու եմ, ինչ որ իրապես մենք անպայման ծրագրել էինք: Մեծ հարված հասցրեց գրականության մանավանդ պատերազմը: Դ. Աղայանը մեռնելիս ինձ մի կտակ արավ, թե «Օհանես, իմ կտակն էն է, որ վերցնես իմ էս չգրած մյութերի ցուցակը ու դու գրես»:

Էսպիսի մի-մի ցուցակ ալեգարդ գրողներից ո՞վ չունի, հենց ահա ձեր առաջ նստած մեր *Շիրվանզադեն* (բուռն ծափահարություններ) և ուրիշ գրողներ. ով գիտի, ինչքան ցանկեր պիտի կտակեն նրանք սկսնակներին: Սակայն այդ կոշմարդ վերջիններիս համար կամաց-կամաց վերանում է, գալիս են լավ օրեր մեզ համար, հուսով եմ, որ դուք չգրված մյութերի ցանկեր չեք թողնի: Բացարձակ ճշմարտություն չէ այն պատմական հայտարարությունը, թե 40 միլիոնանոց ազգի ուժը միայն կարող է տաղանդ արտադրել. առանց ազգամոլության կասեմ, որ եվրոպական ուրիշ շատ մանր ազգերի նման մեր ցեղն էլ տաղանդներ տվել է ու կտա»:^{*}

^{*}) Թումանյանի այս խոսքը տե՛ս ԵԼԺ 7, 384, 655:

«Հառաջ», 1919, թիվ 39:

Փետրվարի 25 - Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձության հրավիրագիրը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Մեծարգո բանաստեղծ Հովհաննես Թումանյան

Դպրոցի հոգաբարձու պ. Հով. Ամիրխանյանի 25-ամյա հոգաբարձական գործունեության լրանալու առթիվ ամսույս 26-ին, երեկոյան ժամը 8-ին դպրոցի դիվանատանը լինելու է հոգաբարձական խորհրդի հանդիսավոր նիստը, որին ներկա լինելու հրավիրվում եք և Դուք:

Հոգաբարձությունս հույս ունի, որ հարգելով պ. Ամիրխանյանի 25-ամյա բեղմնավոր գործունեությունը չեք զլանալ պատվելու խորհրդի նիստը Ձեր ներկայությամբ»:

ԳԱԹ ԹՖ, 2503 (199 III g.):

Փետրվարի 25 - Տպագրվում է Ախալքալաքի հայկական միության շնորհավորական հեռագիրը Թումանյանին՝ «հայ ժողովրդի հոգու անմրցելի երգչին», ծննդյան 50-ամյակի առթիվ:

«Заквказское слово», 1919, թիվ 30:

Փետրվարի 25 - Ա. Ղլտճյանի չափածո ուղերձը Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Շնորհալի երգչին, հիսնամյակի առթիվ

Հայրենիքը միշտ կանգուն է
Ձեր անունով, գործիչներ.
Ձեր փառքն ու գովասանքն է
Հիշվում ընդմիշտ և անմեռ:

Լոռու խորունկ էն ձորերից,
Բարձր լեռան գագաթից
Լսվում է միշտ և կլսվի
Հովհան... ձայնը սիրալի:

Դսեղ գյուղն է Լոռու ձորում
Նիրհում քաղցր երազում.
Տեսնում սնած իր զավակին
Կյանքի դեկը յուր ձեռքին:
Բանաստեղծություն Ա. Ղլտճյանի»:

ԹԹ ԳԳ, 1083 (I) 21:

Փետրվարի 26 - Թիֆլիսի պոետների ցեխի հանդիսավոր նիստում Թումանյանն ընտրվում է ցեխի պատվավոր անդամ (տե՛ս փետրվարի 20):

ԳԱԹ ԹՖ, 2658 (1299):

Փետրվարի 26 - Վասիլի Զոտա ստորագրությամբ չափածո քառատող Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ..

«Ованессу Туманяну
Полвека дали серебро,
И золотое сердце знает,
Так мило, сладко горьких маяма,
А все-же Вы мудрость и добро.
Василий Зота».

ԳԱԹ ԹՖ, 2655 (1295):

Փետրվարի 26 - Տպագրվում է Լև Կիպիանու «О капле меда» խորագրով հոդվածը:

Բարձր է գնահատում Յովհ. Թումանյանին՝ իբրև գրողի և մարդկային տեսակի, վկայակոչելով այդ առթիվ հորեյանական հանդիսությունները, հասարակության, հատկապես երեխաների կողմից ինքնաբուխ կազմակերպված միջոցառումները, ինչպես նաև Ժորդանիայի, Գեգեչկորու և այլոց հորեյանական հեռագրերը, դրանցում արտահայտված մեծագույն սերն ու հարգանքը բանաստեղծի հանդեպ:

Հետգրության մեջ տեղեկացվում է, որ խմբագրություն են բերել երիտասարդ բանաստեղծ Գրիշաշվիլու՝ Թումանյանին ուղղված հորեյանական ողջույնի տեքստը:

«Закавказское слово», 1919, թիվ 31:

Փետրվարի 27 - Հրայր Խաչատրյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Եղել է բանաստեղծի մոտ՝ նրան հանձնելու իր «փոքրիկ նկարագրությունը»:^{*} Հանդիպման ուրախությունից մոռացել է բանաստեղծից խնդրել նրա լուսանկարը, որ շատ է փափագում ունենալ: Կանցնեն տխուր օրերը, կանցնի «համաշխարհային մի կաթիլ մեղրը», «կուգան մեր առաջ մեր երագած օրերը, կրկին անգամ կգնանք մեր ավերակված վաթանի գիրկը և կնորոգենք՝ թափելով մեր աչքերից ուրախության արցունքը <....>, տանելով մեզ հետ Ձեր սիրասուն լուսանկարը:

Դեպի մեր սիրելի վաթանը - դեպի մեր բնակարանը»:

Եվ վերջում. «Սիրելի երգիչ

Եթե կարելի է, ինձ տեղեկացնեիք, թե արդյոք կարելի է հիմա էլ Ձեզ համար նյութեր տալ, հետագային ուրիշ ուրիշ նյութեր և այլն:

Խնդրում եմ, որ այդ մասին տեղեկացնեիք ինձ, ինչ որ լինում է:

Ցտեսություն: Մնամ Ձեր մամակի սպասողությանը՝

Յ. Խաչատրյան»:**

*) Նամակագիրը գաղթական է: Իր «նկարագրության» մեջ նա հավանաբար ներկայացրել է պատերազմի ընթացքում իր ընտանիքի կորուստները՝ արձագանքելով ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի անունից թումանյանի՝ հայ ժողովրդին ուղղած դիմումին (տես 1918, դեկտեմբերի 18):

**) Նամակից բերված քաղվածքներում կատարված են ուղղագրական և ոճական որոշ սրբագրություններ:

ԳԱԹ ԹՖ, 1386 (496):

Փետրվարի 27 - Երեկոյան Կ. Հ. բարեգործական ընկ. շենքում կայանում է Հայրենակցական միությունների միության նիստ:

Ըստ մամուլի հաղորդագրության՝ «Հովհ. Թումանյանի երևումը առաջ բերեց խանդավառ ցույց: Մարգար Ավետիսյանը մի զգացված ճառով Միությունների Միության կողմից ողջունեց Հովհ. Թումանյանին թե՛ իբրև Միության նախագահի և թե՛ իբրև բանաստեղծի: Ողջույնի խոսք ասացին և Ստ. Մալխասյանը, Հ. Համբարձումյանը, Պ. Աբելյանը, Ս. Աբովյանը և կարսեցիների միության վարչության ներկայացուցիչը: Հովհ. Թումանյանը սրտազին շնորհակալություն հայտնեց: Նիստը հրապարակական էր: Ներկա էին Թիֆլիսի հայրենակցական բոլոր միությունների վարչությանց ներկայացուցիչները և բավական թվով հյուրեր»:

«Մշակ», 1919, թիվ 46:

Փետրվարի 28 - Երվանդ Մամիկոնով ստորագրությամբ հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Բաքվից.

«Сердечному другу воспевавшему родные горы и долины в бессмертных стихах привет и многие лета.

Ерванд Мамиконов».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 15:

Փետրվարի 28 - Մուշեղ և Համլիկ Թումանյանների շնորհավորական հեռագիրը հորը՝ Հովհ. Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ «Երևանից».

«Поздравляем Ваше литературное превосходительство от имени седого Арарата с благополучным вступлением шестой десяток.

Шун Мушья, Амлик катун анбун».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 14:

<Փետրվարի երրորդ տասնօրյակ> - Նամակ Վլադիկավկազ
Հակոբ Սառիկյանին:

Ցավակցություն է հայտնում նրա որդու մահվան կապակցությամբ. «Իմ սիրելի տեր Հակոբ,

Մեծ ցավով կարդացի նամակդ:՝ Տեր Հակոբ ջան, գուցե թե ուրիշ օրերում էսքան խոր չհասկանայի քո վիշտը, ինչքան էս օրերում, երբ աչքերս դեռ չեն ցամաքել որդուս կսկծից:՝* Եվ եթե գիտես կամ թե չգիտես, գուցե զգում ես, թե ինչքան ջերմ զգացմունքով եմ դեպի քեզ, թերևս դրանով էլ չափես, թե ինչքան կցավեի քեզ համար ու քո որդու համար»:

Գովասանական ջերմ խոսքեր է ասում հասցեատիրոջ Սասունիկ դստեր մասին, միայն դժգոհում է, որ իրենց քիչ-քիչ է այցելում:

Եվ վերջում. «Երկար պիտի գրեի, բայց ժամանակ չեղավ, եկան խանգարեցին: Բամն էն է, որ էս երկու օրը իմ ընկերներն ու բարեկամները մի աղմուկ սարքեցին, թե ինչ է՝ լրանում է իմ հիսուն տարին: Ակամայից ընկա հոբելյանի մեջ, որից էնքան շատ էի վախենում: Եվ ահա երկու շաբաթվա մի ցուցակ են դրել գրպանումս, թե ամեն օր որտեղ եմ լինելու: Այժմ ես էլ մի տեսակ թանաշավոր եմ դարձել և զարմանում եմ երկու բանի վրա, մեկ՝ թե ինչքան կենսունակ է մեր ժողովուրդը և բնավ հուսահատվել չգիտի իր շատ խորհրդավոր ճանապարհին, մեկ էլ՝ թե ինչքան զորեղ է ժողովուրդների մեջ համերաշխության ու եղբայրության զգացումը: Հենց նոր մոտս էր մի պատգամավորություն – հայերից, ռուսներից, վրացիներից, թուրքերից ու հրեաներից և հատկապես նրա համար, որ ես եղբայրություն ու համերաշխություն եմ սիրել»:

*) Այդ նամակը, որտեղ Սառիկյանը հայտնել է իր խորեն որդու մահվան մասին, չի պահպանվել:

**) Խոսքն իր որդու՝ Արտավազի գոհվելու մասին է:

ԵԼԺ 10, 304:

Մարտի 1 - Ամերկոմի որբ աշակերտական միությունը շնորհավորում է Թումանյանի ծննդյան 50-ամյա և գրական գործունեության 30-ամյա հոբելյանները.

«Հայ ժողովրդի քաղաքական և հասարակական այս անորոշ և ծանր պայմաններում իսկ ինքը՝ ժողովուրդը, հանձինս մեր մտավորականության և աշակերտության, չմոռացավ հարգել իր բանաստեղծի մեծ տոնը և կատարեց շքեղ և սրտաբուխ: Ամերիկ. կոմիտեի

որբ աշակերտական միությունը և «Փարոսի» խմբագրությունը մանկական և պատանեկական մաքուր մաղթանքներով շնորհավորում է իր գրչի վարպետին և պատանիների ու մանուկների բարեկամ մեծ բանաստեղծին»:

«Փարոս», միության ձեռագիր երկշաբաթաթերթ, Թիֆլիս, 1919, թիվ 4, էջ 14:

Մարտի 1 - Հրապարակվում է «Նվեր Հ. Թումանյանին» բանաստեղծությունը՝ Լ. Ազնավուրյան ստորագրությամբ.

Դու ով ամբոխի հարազատ զավակ
Դու հայրենիքի մեծ քնարերգու
Եվ որ երգում ես հայրենիք ու սեր,
Խփի՛ր քնարիդ, հյուսի՛ր նոր երգեր,

Կնճռոտ ճակտիդ դրել ես պսակ,
Հոգնած կանգնել ես հոծ ամբոխի մեջ
Քնարդ նորից լարել ես տխուր
Եվ հայրենիքիդ գովքն անում անվերջ:

Բայց խուլ ամբոխը քեզի չի լսում
<Այլ> նայում է միշտ հեգնում ու ծաղրում,
Անմիտ, ցնորված այդ ինչ ես երգում,
Մի՞թե չես տեսնում՝ ոչ ոք չի լսում:

Բայց դու լարել ես քնարդ դարձյալ
Կանգնել ես հաստատ կեղծ հողի վրա,
<Սուզված> խփում ես լարերին զգայուն.
Իսկ շուրջդ մարդիկ կեղծ ու անզգա...

«Փարոս», 1919, թիվ 4, էջ 3:

Մինչև մարտի 2 - Լոռու հայրենակցական միության անդամ Սիմ. Հովվյանը միության անունից Թումանյանին նրա ծննդյան 50-ամյակի կապակցությամբ նվիրում է «մի շքեղ արծաթե բլոկնոտ»՝ մակագրությամբ. «Հայրենի Լոռու անզուգական երգիչ Հովհաննես Թումանյանին»:

«Մշակ», 1919, թիվ 47:

Մարտի 2 - Հայտարարություն մամուլում.

«Մարտի 4-ին

Արտիստական ընկերության դահլիճում կայանալու է հայ ուսանողական կուլտուրական միության կազմակերպած գրական-գեղարվեստական երեկույթը՝ նվիրված Յու. Թումանյանի 50-ամյակին: Երեկույթին մասնակցելու են հայտնի ուժեր»:

«Հառաջ», 1919, թիվ 39:

Մարտի 2 - Դ. Վարուժանին նվիրված երեկույթի (տե՛ս փետրվարի 25) մասին հաղորդագրության մեջ բերվում է Թումանյանի՝ ի պատասխան Ստ. Ջորյանի արտասանած ողջույնի խոսքի շարադրանքը:*

*) Խմբագրությունն իր կողմից հավելում է. «Եվ անկեղծ բարեմաղթանքներով մեր մեծ բանաստեղծը վերջացրեց իր խոսքը»:

«Մշակ», 1919, թիվ 39:

Մարտի 2 - Հայաստանի կառավարության հեռագիրը Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Երկրի ապրած ծանր օրերին Հայաստանի կառավարությունը իր ողջույնն է ուղարկում հայ գրականության Ջարդին: Բանաստեղծի աղոթքի քաղցր հնչյունները թող հնչեն հայրենի ժողովրդի մեջ և աջակից լինեն նրա սպասավորների ոգուն:

Մինիստր նախագահի փոխանորդ՝ *Ա. Խատիսյան*»:

«Հառաջ» օրաթերթ, Թիֆլիս, 1919, թիվ 39:

Մարտի 2 - Թումանյանի պատասխանները Ժորդանիայի (տե՛ս փետրվարի 22), Գեգեչկորիի (տե՛ս փետրվարի 20) և Ռամիշվիլիի (տե՛ս փետրվարի 21) շնորհավորական հեռագրերին. «Վրաց կառավարության նախագահ Ն. Ն. Ժորդանիային

Շատ հարգելի Նոյ Նիկոլակիչ.

Սրտագին շնորհակալ եմ Ձեզնից Ձեր շնորհավորանքների և այն բարեմաղթությունների համար, որ ես հավատարիմ մնամ ինձ ժողովուրդների եղբայրության ուղիին վրա: Այն անհուն սերը, որ տածում եմ դեպի ժողովուրդներն ընդհանրապես և դեպի վրաց ժողովուրդը մասնավորապես, երբեք թույլ չի տալ ինձ շեղվելու այդ ուղիից:

Այս սերն ինձ համար մի անսպառ աղբյուր է այն հավատի, որ կանգնեն ու կմոռացվեն այս բոլոր դժբախտ անցքերը և Ձեզ նման փորձված պարագլուխները, որոնք ոգևորել են ամենքին ազատու-

թյան, հավասարության և եղբայրության մեծ լոզունգներով, կարող
կլինին անցկացնել ժողովուրդներին ժամանակավոր ձախորդու-
թյունների միջոցով և կապել հարևաններին եղբայրության ամուր
կապերով:

Ամբողջ սրտով աջողություն են ցանկանում Ձեզ մեր ժողո-
վուրդների միության և գեղեցիկ Վրաստանի բախտավորության հա-
մար Ձեր ունեցած հոգատարությունների մեջ:

Անկեղծորեն Ձեզ հարգող՝ Հովհաննես Թումանյան»:

Վրաց արտաքին գործերի նախարար Ե. Պ. Գեգեչկորուն

Շատ հարգելի եվգենի Պետրովիչ:

Ամբողջ հոգովս շնորհակալ եմ Ձեզնից Ձեր շնորհավորանքի և
տաղանդիս մասին ձեր հիշատակության համար:

Թշնամության այն սերմերը, որ այնքան առատ հունձ են տա-
լիս և խեղդում են մեր ժողովուրդները, խեղդում են ամենից առաջ
նրանց կուլտուրական աշխատավորներին, որոնց հայացքը ակնկա-
լությամբ ու հույսով ուղղված են ժողովրդի բարեկամ այնպիսի ազ-
նիվ գործիչների, որպիսին Դուք եք, որոնք խորին գիտակցությամբ
ու հավատով հուժկու կերպով ոտի կանգնեցին միության գաղա-
փարը պաշտպանելու համար:

Ծանոթ լինելով հարևանների համերաշխության Ձեր գեղեցիկ
ծրագրին՝ ես անկեղծորեն և խորապես ցավում եմ ժամանակավոր
անհաջողության համար, բայց հավատում եմ, որ Դուք չեք վիատիլ
և Ձեր ուժեղ ու համարձակ ձեռքերով կշարունակեք Ձեր աշխա-
տանքը չարության ու ատելության արմատները պոկելու համար և
դրանով հնարավորություն կտաք խաղաղ կուլտուրական կյանքի
ծաղկման հետ միասին ծաղկելու երկու ժողովուրդների տաղանդ-
ներին մեր գեղեցիկ երկնակամարի տակ:

Ես հավատում եմ, Դուք պատկանում եք պետական այն մարդ-
կանց շարքին, որոնց ուժը թաքնված է ոչ թե հողերի վրա տիրա-
պետելու, այլ ժողովուրդների սրտերի վրա իշխելու մեջ:

Ես հավատով ուղարկում եմ Ձեզ իմ սրտագին ու ջերմագին
բարեմաղթությունները՝ ցանկանալով Ձեզ հաջողություն, որ այն-
քան անհրաժեշտ է մեր տառապած ժողովուրդների բախտավորու-
թյան համար»:

«Վրաց ներքին գործերի նախարար Ն. Վ. Ռամիշվիլին

Անկեղծորեն շնորհակալ եմ Ձեզնից Ձեր շնորհավորանքի հա-

մար: Ձգացված են այն բանից, որ Դուք ինձ անվանել եք երկու ժողովուրդների հոգատար ու երգիչ: Իմ դեպի Վրաստանը տաժած սերը սրանից ավելի լավ պարզև չէր կարող ստանալ:

Սրտով ուրախ եմ, որ վերջին բոլոր անցքերը Դուք համարում եք մտքերի ժամանակավոր մթագնում և այնքան հաստատուն հավատում եք եղբայրության ու համերաշխության գաղափարի հաղթանակին:

Ուրախ եմ մանավանդ, որ այդ ասում եք Դուք՝ մինիստրդ, որ կարող եք գործնականապես կյանքի վերածել ձեր լավագույն զգացումները: Միության մեջ է ժամանակի իմաստը և երջանկության ուղին: Ամբողջ աշխարհը համոզվեց, որ ուրիշ ճանապարհ չկա նույնիսկ մեծ ժողովուրդների համար: Եվ այս միակ փրկարար ուղիի վրա մենք միշտ կլինենք Ձեզ հետ»:^{*}

^{*}) Թումանյանի այս պատասխանները ակադեմիական տասհատորյակում տեղ չեն գտել:

«Հառաջ», 1919, թիվ 39:

Մարտի 3 - Հայ դրամատիկ դերասանների միության շնորհավորական ուղերձը Թումանյանին ծննդյան տարեդարձի առթիվ՝ Թիֆլիսից.

«Մեծապատիվ պարոն Հովհաննես Թումանյանին

Հայ դրամատիկ դերասանների միության խորհուրդը երջանիկ է շնորհավորելու Ձեր 50-ամյա ծննդյան հոբելյանը և 30-ամյա գրական գործունեությունը:

Մենք երջանիկ ենք նրանով, որ Ձեր հոբելյանը զուգադիպեց «Հայ դերասանի օրվա» անդրանիկ հանդեսի հետ: Թող երկար ու երկար տարիներ ապրի բանաստեղծ Հ. Թումանյանը:

Հայ դրամատիկ դերասանների միության խորհուրդը ցանկանում է Ձեզ «ապրել, շատ ապրել, բայց երբեք մեզ մման չապրել»:

Նախագահ խորհրդի՝ Իս. Ալիխանյան

Անդամ քարտուղար՝ Վ. Միրզոյան»:

ԳԱԹ ԹՖ, 2473 (1300): ԹԹ, 3589, 1041:

Մարտի 3 - Ե. Ս. Ալավերդյան ստորագրությամբ հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Երևանից.

«Великому мастеру отлившему народные сказания в золотые формы поэзии, певцу родных полей и барды оплакивающему страдания несчастного народа и вдохновляющему родины на

подвиг, другу детей, глашатаю мира, любви среди людей и народов.

Группа писателей и общественных деятелей шлют из Эривани привет, надеются видеть своего литературного спасателя в столице Армении возглавляющим духовную жизнь.

Алавердян Енрем».

ԹԹ ԳԳ, 1082 (II) 16:

Մարտի 4, Թիֆլիս - Հեռագիր Երևան՝ Ալեքսանդր Խատիսյանին.

«Министру председателю Хатисову

Бюро постановления потерь армян от всемирной войны убедительно просит ускорить разрешение парламентом вопроса об осигновании трехсот тысяч субсидий на работы бюро. Промедление может вызвать ликвидацию деятельности бюроо ввиду исчерпания собранных частных средств.-

Председатель бюро *Туманянц*».

*) Կառավարությունն այնպես էլ չի կատարում դրամական օժանդակության մասին խոստումը, և բյուրոն ստիպված դադարեցնում է իր գործունեությունը:

ԵԼԺ 10, 305, 658:

<Մարտի 4>, Թիֆլիս - Երկտող Համազասպ Համբարձումյանին.

«Ես տկար եմ և անկարող եմ էս իրիկուն միստի գալու, խնդրեմ Մարգարը, եթե գա, նա մախազահի:

Ղրկում եմ Նուխու և Արեշի հայերին. թղթերը նայեցեք, կարգադրեցեք: Արդեն խոսել եմ մինիստրների հետ գաղթեցնելու մասին: Պաշտոնապես էլ կդիմենք:

Էս իրիկուն բանկետին էլ չեմ գալու. լավ չեմ:

Ձեր *Թումանյան*»:

ԵԼԺ 10, 305:

Մարտի 4 - Տեղի է ունենում Հայ ուսանողական կուլտուրական միության կազմակերպած երեկույթ՝ ի պատիվ Թումանյանի ծննդյան 50-ամյակի:

Ըստ մամուլի հաղորդագրության՝ երեկույթը բազմամարդ էր և արտակարգ ներկայացուցչական. ներկա էին անգլիական բարձրաստիճան անձինք ու շատ զինվորներ, պարսից փոխիյուպատոսը

և բազմաթիվ համակրող անձինք, ինչպես ռուս, այնպես էլ վրաց բարձր խավերից, մտավորականության ներկայացուցիչներ:

Ուսանողական միության անունից ողջույնի խոսք է ասում ուսանող Յովի. Պողոսյանը: Մասնավորապես. «Դուք մեր մթազնած երկնականարի վրա եղել եք պայծառ լուսատու աստղերից մեկը, մեր ալեծուխի ծով կյանքում հանդիսացել եք լուսասփյուռ փարոսներից ամենամեծը և ճշմարտի, գեղեցկի, բարու վսեմ գաղափարներով կրթել մեր մատաղ հոգին, որով հայ ուսանողներիս ավելի սերտ կերպով կապել եք մեր հարազատ մայր գրականության և այդ գրականությունը իրենց ուսերին կրող հայ հեղինակների հետ:

Ելույթներից հետո տեղի է ունենում ճոխ համերգ, ապա ճաշկերույթ, որ տևում է մինչև ժամը 3-ը. «Վերջում թունանյանը շնորհակալություն հայտնեց Ուսանողական միությանը, երեկույթին մասնակցողներին, ներկա գտնվող պարսից ընդհանուր հյուպատոսին և վրաց բանաստեղծներին, համակրական խոսք ուղղեց երեկույթին ներկա եղող անգլիացիներին և ջերմ ցանկություն հայտնեց ժողովուրդների եղբայրության ու բարեկամության գաղափարի իրագործման:

Բանաստեղծի ճառը շատ շուտ ընդհատվում էր բուռն ծափահարություններով:

«Մշակ», 1919, թիվ 50: «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 49: «Հառաջ», 1919, թիվ 44: «Закавказское слово», 1919, թիվ 38:

Մարտի 5 - Լուսավորության մինիստր Գևորգ Մելիք-Ուրա-գյոզովի շնորհավորական հեռագիրը* Թիֆլիս՝ Թունանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Երևանից.

«От себя, учителей, учащихся и всего ведомства Министерства народного просвещения взлелеянной Ваших песнях Армении сердечно поздравляю вас как поэта, общественного деятеля и друга детей Вашим пятидесятилетием, надеюсь скоро видеть Тифлисе.

Министр народного просвещения

Мелик-Кагезов».

*) Հեռագիրը՝ հայերեն թարգմանությամբ, տպագրված է նաև «Մշակի» թիվ 52-ում (մարտի 8):

ԹԹ ԳԳ, 1082 (II) 17:

Մարտի 6, 7 - Մամուլում հրապարակվում են Թունանյանի

ծննդյան 50-ամյակի առթիվ շնորհավորական և երևան այցելելու հրավերի հեռագրեր.

Երևանից. «Երկրի ապրած ծանր օրերին Հայաստանի կառավարությունն իր ողջույնն է ուղարկում հայ գրականության զարդին: Բանաստեղծի աղոթքի քաղցր հնչյունները թող հնչվեն հայրենի ժողովրդի մեջ և աջակից լինեն նրա սպասավորների ոգուն:

«Ասացեք Հովհ. Թումանյանին, որ այստեղ մարտի 9-ին տոնում ենք նրա հոբելյանը: Բոլորը խնդրում են նրան գալ: Թող հեռագրի գալու մասին»:

Մինիստր-նախագահի փոխանորդ Ա. Խատիսյան»:

Երևանից. «Երևանի գրական-գեղարվեստական խմբակը իր սիրելի բանաստեղծին հղում է իր ողջույնը, հույսով, որ ձեր կյանքի երկրորդ կիսուն դուք կհարստացնեք մայրենի գրականությունը ձեր ոսկի գրչի էլ ավելի հիասքանչ ստեղծագործություններով»:

Բաքվից «Հայ ինտելիգենտների միությունը սրտագին ողջունում է թանկագին հոբելյարին, որ մեծ է իր տաղանդով և անգնահատելի իր ազնիվ սրտով: Նախագահ՝ Հ. Մանանդյան»:

Հայաստանից. «Մեծ վարպետին, որ ժողովրդական առասպելները բանաստեղծության ոսկե ձևերի մեջ է ծուլել, հայրենի դաշտերի և դժբախտ ժողովրդի տանջանքների երգչին, հայրենիքի հերոսամարտի ոգևորողին, մանուկների բարեկամին, ժողովուրդների և մարդկանց խաղաղության և սիրո քարոզչին՝ մի խումբ գրողներ ու հասարակական գործիչներ Երևանից իրենց ողջույնն են ուղարկում և հույս ունին տեսնելու իրենց գրական <կուռքին> Հայաստանի մայրաքաղաքում, որ վերածնվող հայրենիքի հոգեմտավոր կյանքն է պսակում:

«Մշակ», 1919, թիվ 50: «Հառաջ», 1919, թիվ 43:

Մարտի 7 - Արտիստական թատրոնում Կովկասյան խորային ընկերության նախաձեռնությամբ, ի պատիվ Թումանյանի ծննդյան 50-ամյակի, «շքեղ բեմադրությամբ»* ներկայացվում է «Անուշ» օպերան:**

Երկրորդ գործողությունից հետո բեմ հրավիրված Թումանյանին դիմավորում են բոլոր ծափահարություններով և օվացիաներով: Ընկերության կողմից բանաստեղծին ողջունում է Հ. Հովհաննիսյանը: Անգլիացի հյուրերի համար անգլերեն խոսք է ասում Վ. Թոթովենցը:

Իր պատասխան խոսքում Թումանյանն ընդգծում է հայ ժողովրդի տոկոսությունն ու կենսասիրությունը, որ այդ աղետալի օրերին իր մեջ ուժ է գտնում մեծարելու իր մշակույթի գործիչներին: Շնորհակալություն է հայտնում ներկա գտնվող անգլիացիներին և վրաց բանաստեղծներին: Վերջիններիս կողմից բանաստեղծի հոբելյանը շնորհավորում է հաշվելին:

*) Հաղորդման հեղինակը մի քանի դիտողություններ է անում բուն ներկայացման մասին: Մասնավորապես. «Օպերայի բեմադրությունն այս անգամ ավելի խնամքով էր, բայց ո՛չ Անուշի դերակատար օր. Սիրանույշ և ո՛չ էլ Միմասյան – Սարոն չէին կրում հայկական կնիք»:

**) Ներկայացումը մի քանի օր շարունակ գովազդվում է մամուլում («Հառաջ», 1919, թիվ 40, թիվ 43):

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 53:

Մարտի 7 - Տպագրում է («Մշակ», 1919, թիվ 51) «Հայրենակցություններին օժանդակելու ամիրաժեշտությունը» հոդվածը:

Նկատի ունենալով, որ Անդրկովկասում ստեղծված «հայեր բուլանդակող երեք հանրապետության՝ Վրաստանի, Հայաստանի և Ատրպատականի» իշխանությունները դեռևս անկարող են ազգաբնակչության բոլոր խավերի, հատկապես գավառաբնակների բոլոր կարիքները հոգալ, առաջարկում է բարոյական և նյութական օժանդակություն ցույց տալ հայրենակցական միություններին, որովհետև դրանք «չեն ընտրված կուսակցական սկզբունքով, հանդիսանում են այն միակ կազմակերպությունները, որ, իբրև օժանդակ մարմիններ, տեղ են հասցնում և լսելի են դարձնում գավառի ձայնը»:

Հայրենակցական միության խորհրդի անունից դիմում է «բուլոր հայերին և հատկապես հայրենակցությունների անդամներին» բոլոր միջոցներով ու ձևերով աջակցել հայրենակցությունների վարչություններին. «Հայրենակցությունների միության խորհուրդը հույս է տածում, որ հայերը առհասարակ, և թիֆլիսաբնակ մեր հայրենակիցները մասնավորապես, վերջ կտան հայրենակցությունների համար սպանիչ հետևանքներ ունեցող իրենց անտարբերության, կխմբվեն այդ կազմակերպությունների շուրջը և կաջակցեն նրանց բարգավաճմանը թե՛ բարոյապես և թե՛ նյութապես: Հայրենակցությունները այժմ էլ, իրանց ներկա ծանր պայմաններում, հայ ժողովրդի համար կատարում են համեստ, բայց անփոխարինելի մի գործ:» Եթե մեր հասարակությունը, գիտակցելով այդ կազմակեր-

պությունների գոյության անհրաժեշտությունը, չմերժե նրանց իրենց հուժկու աջակցությունը, այդ դեպքում հայրենակցությունները կդառնան մի դարբնոց, որտեղ ժողովրդի մշակները կկոփեն հայության համար ոչ երկրորդական նշանակություն ունեցող մի գործ»:

Ստորագրել են խորհրդի նախագահ Թումանյանը և քարտուղար Յ. Համբարձումյանը:

*) Հավանաբար նկատի ունի պատերազմի հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստներն ու վնասները պարզող քննիչ հանձնաժողովի (բյուրո) շարունակվող աշխատանքները (տե՛ս 1918, դեկտեմբերի 18, 1919, մարտի 4):

ԵԼԺ 7, 385-387:

Մարտի 7 - Մամուլը տեղեկացնում է, որ հայ օպերետային խումբը ժամը 7-ին երկրորդ անգամ կներկայացնի «Անուշ» երաժըշտական դրաման:

Սարոյի դերում` Շարա Տալյան:

«Մշակ», 1919, թիվ 51:

Մարտի 7 - Մամուլը հաղորդում է. «Հեռագրական տեղեկություն է ստացվել, որ Երևանը մարտի 9-ին տոնելու է Հովհաննես Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Բանաստեղծը հրավիրված է Երևան (տե՛ս մարտի 6, 7)»:

«Մշակ», 1919, թիվ 51:

Մարտի 7 - Ըստ մամուլի հաղորդագրության` «Թիֆլիսի քաղաքային դումայի ս. դ. ձայնավորների հանձնարարությամբ էլիական դիմել է Հովհ. Թումանյանին և առաջարկել նրան ընդունել քաղաքի պատվավոր հաշտարար դատարանի անդամությունը»:

«Հառաջ», 1919, թիվ 43:

Մարտի 7 - Տպագրվում է Սալ-Մանի երգիծական հոդվածը` ուղղված այն տարածված մտայնության դեմ, թե հայերը ռեալիստ են, նյութապաշտ, անհաղորդ են իդեալականին, հոգևոր արժեքներին:

Հիշեցնում է, որ հայ մտավորականությունը միշտ էլ տարբեր միջոցներով պայքարել է այդ մտայնության դեմ և, ցավոք, շոշափելի արդյունքների չի հասել: Եվ ապա. «Սակայն եկավ 1919 թվի փետրվարի 20-ը, մեր մեծ ու սիրելի բանաստեղծ Յ. Թումանյանի հոբելյանը, և մենք այդ օրը ամենաշոշափելի կերպով և ամենաան-

հերքելի փաստերով ապացուցեինք հայի մասին եղած այդ կարծիքի ամբողջ ստույթունը:

Մենք ապացուցեցինք, որ հայերս աշխարհիս ամենափղեալիստ և աննյութասեր ազգն ենք»:

«Մշակ», 1919, թիվ 51:

Մարտի 8 - Մամուլը հաղորդում է, որ «Северный Кавказ» թերթի խմբագրությունը հեռագրով շնորհավորել է Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ:

«Հառաջ», 1919, թիվ 44:

Մարտի 8 - Մամուլը տեղեկացնում է.

«Սենատոր Ն. Դ. Սոկոլովը Հովհ. Թումանյանին ուղարկել է մի գրություն, որի մեջ ի միջի այլոց ասում է. «Մենք ռուսներս սովոր ենք Վ. Գ. Կորոլենկոյի վրա նայել ոչ միայն որպես գրող-գեղարվեստագետի, այլև նա մեզ համար խիստ և որոշ արտահայտություն է հասարակական խղճի: Դեպի Ձեզ այդպես է վերաբերվում հայ հասարակությունը»:

«Հառաջ», 1919, թիվ 44: «Ժողովրդի ձայն», 1919, թիվ 50:

Մարտի 8, Թիֆլիս - Հեռագիր Երևան՝ Ալեքսանդր Խատիսյանին.*

«Заместителю министра председателя правительства Армении Хатисову

Меня до слез тронули добрые пожелания и первый привет армянской литературы в моем лице первого правительства родного края. Все эти чувства я объясняю не моими литературными заслугами, а непобедимой мощью нашего народа, который не могут сломить голод, болезни, пытки, лишения. Он всегда остается могучим и окрыленным стремлением к высокому и прекрасному, и на этот раз он подобно легендарному фениксу воспрянет из пепла родных очагов обновленным к новой жизни и новым радостным песнопениям более талантливых поэтов.

Если вы требуете у меня молитвы поэта для нашего народа, то у меня есть лишь одна молитва для него, о физическом существовании его, все остальные приобретет он сам, тот народ, который, стоя на армянской возвышенности так близко

к небам, с мудрым челом против мирских бурь, смотрит ясно на свое великое и светлое будущее.

Моя душа полна веянием мощи непоколебимой верой в это великое будущее. И пусть этот великий дух и его непоколебимая вера будут опорой правительства, чтобы оно могло вывести наш народ из этого критического положения и одержать величайшую и прекраснейшую из всех побед, завоевав силою братской любви сердца соседних народов для счастья Армении.

Ованес Туманян».

*) Ուղարկված է՝ ի պատասխան բանաստեղծի ծննդյան 50-ամակի առթիվ Հաստանի կառավարության շնորհավորական հեռագրի (տե՛ս մարտի 2):

ԵԼԺ 10, 306:

Մարտի 8, Թիֆլիս - Հեռագիր Երևան՝ Ալեքսանդր Խատիսյանին.

«Заместителю министра председателя Хатисову

Примите, прошу, и передайте всем друзьям и знакомым мою душевную благодарность за Ваше милое приглашение меня в Эривань.* Я уже обещал председателю нашего парламента, моему товарищу Аветику Саакян, прибыть в Эривань к тридцатилетию моею литературной деятельности.**

Ованес Туманян».

*) Թումանյանն այդ օրերին Երևան չի ժամանել:

**) Հավանաբար նկատի ունի իր բանաստեղծությունների առաջին ժողովածուի հրատարակության (Մոսկվա, 1890) մոտեցող երեսնամյակը, որը, սակայն, չի նշվել:

ԵԼԺ 10, 307, 661:

Մարտի 8, Թիֆլիս - Հաղորդագրություն մամուլում՝ ի պատիվ Թումանյանի ծննդյան 50-ամյակի Հայ ուսանողական կոլտուրական միության կազմակերպած երեկույթի (տե՛ս մարտի 4) մասին:

«Հորիզոն», 1919, թիվ 44:

Մարտի 9 - Թիֆլիսի Արտիստական թատրոնում ողջույնի խոսք է ասում Հովի. Արեւյանի բեմական գործունեության 35-ամյակին նվիրված հորեւյանական երեկոյին՝ նրան նվիրելով «История внешней культуры» (Մ. 1885) գիրքը՝ ընծայականով.

Իրենց վաղանց կյանքի կեսին՝

Հովհաննեսը Հովհաննեսին

Յ. Աբելյանը հիշում է. «Յովհ. Թումանյանի ծննդյան հիսնամյակի և իմ բեմական գործունեության երեսունհինգամյակի առթիվ Թիֆլիսի Արտիստական ընկերության մեծ դահլիճում կազմակերպված էր շքեղ բանկետ»:

Ըստ պապական ավանդության ընտրվեց թամադա: Առաջին կենացը նվիրվեց Յովհաննեսին: Ինչ խոսք, որ ճառերին, գովասանքներին վերջ չկար: Ամեն ոք աշխատում էր արտահայտել յուր հրճվանքը մեծ բանաստեղծին: Երկրորդ կենացն իմն էր: Ոչ պակաս ոգևորությամբ ընդունվեց և այդ կենացը, բայց մի բանով գերազանցեց, որովհետև յուր կենացի վրա բնականաբար չարտահայտվող Յովհ. Թումանյանը խոսեց իմ կենացի առթիվ: Ահա թե ինչ ասաց նա.

- Ես խմում եմ մի մարդու կենացը, որը մեր գրականությանը նվիրել է մի բանաստեղծ և փրկել է հայ թատրոնը մի անշնորհք դերասանից: Երիտասարդ էի, երբ ես ուզում էի դերասան դառնալ: Եկա թատրոն, էս կողմն ընկա, էն կողմն ընկա, մի կերպ երկու խոսքանոց մի դեր տվին ինձ: Ներկայացումից հետո ուրախ-ուրախ գնացի Յովհաննեսի մոտ ու հարցրի.

- Պարոն Աբելյան, ո՞նց խաղացի:

Նա հարցրեց.

- Դու ի՞նչ դեր էիր խաղում:

- Այսինչ դերը,- պատասխանեցի ես:

-Յա՛, էդ դո՞ւ էիր... - ասաց Յովհաննեսը ու սկսեց մտածել:

Իսկ իմ սիրտը բաբախում էր, անհամբեր պատասխանի էի սպասում:

- Գիտե՞ս ինչ, ա՛յ տղա, մեղք ես, գնա մի ուրիշ գործով պարապիր, քեզանից դերասան չի դուրս գա:

Մենք մինչև Յոբելյանն էլ լավ բարեկամներ էինք, բայց այդ օրվանից կրկնապատկվեց մեր բարեկամությունը: Ես միշտ կարծում էի, որ Յովհաննեսն ինձնից տարիքով մեծ է: Կյանքի հոգսերը անժամանակ ծերացրել էին այդ բարի մարդուն: Ես նրան նվիրեցի մի արծաթե սերվիզ, իսկ նա ինձ՝ Ֆ. Յոտեմիրոտի «История внешнеу культуры» գիրքը հետևյալ մակագրությամբ.

Իրենց վաղանց կյանքի կեսին –

Յովհաննեսը՝ Յովհաննեսին:

Յ. Թումանյան:

Թիֆլիս, մարտի 9-ին:

Այսօր, երբ գրողը, արվեստագետը, գիտնականը այնպես բարձր են գնահատվում, թուճմանյանը չկա...

Ի՞նչ մեծ ցավ» (ԹԺՅ, 761-762):

*) Գրքի խմբագրությունը ծանոթագրում է. «Այստեղ փաստը շփոթված է. եթե խոսքը վերաբերում է Արտիստական ընկերության դահլիճում տեղի ունեցած հրեյանական խնջույքին, ապա այդ եղել է 1919 թ. մարտի 4-ին. բայց մամուլի հաղորդումներում խոսք չկա, որ այն վերաբերել է նաև Աբեյանին («3c», 1919, թիվ 36, «Յճ», 1919, No 44): Թուճմանյանը ողջույնի խոսք է ասել Արտիստական ընկերության թատրոնում մարտի 9-ին կայացած և հատկապես Աբեյանին նվիրված հրեյանական երեկոյին («Մշակ», 1919, թիվ 46, 54):

Հնարավոր է, որ այդ խոսքը ասված լինի այդ երեկոյից հետո կայացած խնջույքին: Համատեղ հրեյանական մի երեկույթ կազմակերպվել է նույն թվի ապրիլի 4-ին Տիգրան Նազարյանի սալոնում՝ նվիրված Թուճմանյանին, Հովհ. Աբեյանին, Է. Բրոջիին, Ջ. Պալիաշվիլուն (տե՛ս ապրիլի 4):

ԵԼԺ 1, 420, 672:

Մարտի 9 - Աթաբեկ Խնկոյանի գրությունը Թուճմանյանին.

«Գրողների ընկերության հարգելի նախագահին

Դրությունս կրիտիկական է: Հունվարից սկսած փող ձեռք բերելու համար բոլոր միջոցները սպառեցի: Էլ ոչ մի տեղից հույս չկա փող ստանալու: Վեց հոգով քաղցած նստած ենք, չոր հացի փող չկա: Հատուկ խնդրում եմ, հարգ. Թուճմանյան, անմիջական օգնություն ցույց տվե՛ք ինձ գրողների ընկերության կողմից, թեկուզ փոխարինաբար, ճարը մնացել է Ձեր մարդասիրությանը:

Հարգ. Աթ. Խնկոյան»:

ԳԱԹ ԹՖ, 1400 (740):

Մարտի 10 - Շնորհավորական հեռագիր Թուճմանյանին Բորժոմից.

«Բորժոմի հայոց դրամատիկական սեկցիան անկեղծորեն ողջունում է բժ. Հովհ. Թուճմանյանի հիսնամյակի հրեյանը: Կեցցե նրա քնարը և մուսան:

Սեկցիայի նախագահ՝ Դավթյան,

Քարտուղար՝ Հակոբյան»:

«Աշխատավոր», ԹԻՖլիս 1919, թիվ 48:

Մարտի 10, Թիֆլիս - Նամակ «Սաքարթվելո»-ի խմբագրությանը.

«Սրտանց շնորհակալ եմ «Սաքարթվելո»-ի շնորհավորանքների և բարեմաղթությունների համար, որ արել է իմ թանկագին ընկեր Տիցիան Տաթիձեի միջոցով:

Ես հավատում եմ՝ գալու է օրը, երբ բոլոր շովինիստների ջանքերին հակառակ հաղթանակելու է ժողովուրդների միության ու եղբայրության գաղափարը, ազատության մեջ ավելի ու ավելի են ամրանալու մեր դարավոր եղբայրական կապերը և մեր ինքնուրույնությունը շքեղ ու ինքնատիպ ծաղկելու է մեր գեղարվեստի ու գրականության մեջ:

Եվ Վրաստանը, որ չքնաղ է եղել նույնիսկ իր դժբախտության օրերում, ազատ Կովկասի ազատ ժողովուրդների եղբայրության մեջ, պետք է դառնա ավելի շքեղ ու ավելի սիրելի:

Հովհ. Թումանյան »:

ԵԼԺ 7, 387-388:

Մարտի 11 - Տպագրվում է Թումանյանի շնորհակալական խոսքը «Սաքարթվելոյի» խմբագրությանը՝ իր հիսնամյակի շնորհավորական ուղերձի համար.

«Մշակ», 1919, թիվ 54: «Հառաջ», 1919, թիվ 46: «Հորիզոն», 1919, թիվ 46: «Ժողովրդի ձայն», 1919, թիվ 52:

Մարտի 12 - Анна Антоновская ստորագրությամբ չափածո ուղերձ Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ.

Твоя душа в порфир одета,
А мысли в золотой туман...
В полустолетнем блеске лема
Душа твоя в порфир одета.
На будни наложивши veto,-
В порфир душа твоя одета,
А мысли — в золотой туман!

ԳԱԹ ԹՖ, 1287: ԹԹ, 730:

Մարտի 12 - Մայյա ստորագրությամբ չափածո ուղերձ Թումանյանին՝ նրա տանը հյուրընկալվելու առթիվ.

«Сонет Ованесу Туманяну

Живем мы в трудные торжественные годы
Весны начало и конец зимы.
В гостях у Ованеса Туманяна мы
Встречаем праздник молодой свободы.

Как много радостей таят наши невзгоды,
Кто светел – пусть слагает вещице псалмы,
Как нежен на воликах узор кау́мы.
И ты, поэт, стоешь, как Царь природы.

Пусть солнце заслонило могильный кипарис –
Вот вскинув руки вверх, стоит Тифлис,
Любви и равенства он молится «Осанна»!

И мы, в ком Аполлон животворец и Юн,
Каснемся набожно заветных наших струн
В гостях у Ованеса Туманяна.

Ма́я.

12 Марта 1919, Тифлис».

ԳԱԹ ԹՖ, 2659 (1305):

Մարտի 12 - ՀԳԿԸ վարչության նախաձեռնությամբ կոնսերվատորիայի դահլիճում տեղի է ունենում խորհրդակցություն- ժողով:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Վ. Խորենի:

Ժողովին մասնակցում են Թիֆլիսի հայկական գրական-գեղարվեստական բոլոր հաստատությունների ներկայացուցիչներ և շատ գրասեր ու գեղարվեստասեր անձինք:

Քննվում է Հայաստանի լուսավորության մինիստրությանը կից գեղարվեստական գիտական դեպարտամենտ հիմնելու հարցը:

Բոլոր ելույթ ունեցողները՝ Թումանյանը, Շիրվանզադե և շատ ուրիշներ, անհրաժեշտ են համարում այդպիսի դեպարտամենտի ստեղծումը, որ պիտի հովանավորի գրականությունը, թատրոնը և գիտությունը:

Գ. Լևոնյանը հարցնում է, թե կառավարությունը տվե՞լ է իր համաձայնությունը: Նախագահող Թումանյանը պատասխանում է,

«թե հայոց կառավարության մեջ թեև վճռական ոչինչ չի եղել, բայց այդ մասին խոսք միշտ կա, իսկ դեմ ոչինչ»:

Ա. Ջամալյանը կասկած է հայտնում, թե կառավարությունը հազիվ թե հնարավորություն ունենա այդ գաղափարն իրագործելու: Առաջարկում է հարցը լուծել սեփական միջոցներով կամ միացնել Հայկազյան ընկերության հետ: Հովի. Թումանյանը պատասխանում է, որ պետությունը միայն սանկցիա է տալու այդ գործին, իսկ գործն անպայմանորեն կազմակերպվելու է սեփական միջոցներով. ապա իր ունեցած զրույցների ու խոստումների համաձայն՝ պնդում է, որ օտար պետությունները օգնության են հասնելու նաև հայ ժողովրդի հոգեկան պահանջներին:

Դեպարտամենտի նախագիծը կազմելու համար ընտրվում է հանձնաժողով՝ Հովի. Թումանյան, նկարիչ Ե. Թադևոսյան, Տիգ. Հովհաննիսյան, Գ. Լևոնյան, դերասան Սևումյան, Սմբ. Տեր-Ավետիքյան և պրիվատ- դոցենտ Դ. Ջավրիյան:

«Մշակ», 1919, թիվ 57: «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 56:

Մարտի 14 - Մամուլը տեղեկացնում է՝ մարտի 17-ին վրաց ակումբի շենքում տեղի կունենա գրական դատ՝ հետևյալ թեմայով՝ «Հանցավոր է արդյոք Հայաստանը Վրաստանի հանդեպ, թե՞ ոչ»։ Դատին մասնակցելու են հայ և վրացի գործիչներ։ Դատախազն է Օնիաշվիլին, օգնական՝ Իմեդաշվիլին։ Պաշտպաններ՝ Արշ. Ջոհրաբյան և Ա. Երզնկյան։ Երդվյալ ատենակալներ են լինելու հայերի կողմից Շիրվանզադեն, Հովի. Թումանյան, Լ. Քալանթար, Դուռնիսյան, Փիրումյան, Նազարյան և ուրիշներ, վրացիների կողմից՝ Տոպուրիձե, Գոմարթելի, Ժորժուխանի, Քավթարաձե, Բուխաձե, Լոմտատիձե, Ճիաբերաշվիլի, Վիշապելի և ուրիշներ։ Սկիզբը երեկ. ժամը 7-ին։ Ճառերը կլինեն վրացերեն և ռուսերեն լեզուներով։

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 48: «Մշակ», 1919, թիվ 56:

Մարտի 14 - Հայ գրողների ընկերությունը տեղեկացնում է՝

Մարտի 15-ին կոնսերվատորիայի դահլիճում տեղի կունենա գրական երեկույթ՝ նվիրված Հովի. Թումանյանին։ Դասախոսելու են Դ. Դեմիրճյան՝ Հ. Թումանյանի արվեստը, Տ. Հովհաննիսյան՝ Թախիծը Հ. Թումանյանի բանաստեղծության մեջ, Վ. Խորենի՝ Հ. Թումանյանի բանաստեղծության հասար<> և փիլիսոփ<այական>

տարերքը, Գ. Էդիլյան՝ Յ. Թումանյանը մանկական գրող: Տոմսերը վաղօրոք կարելի է ստանալ:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 48: «Մշակ», 1919, թիվ 56:

Մարտի 14 - Տպագրվում է Վ. Խորենիի «Գյուղական աշխարհի երգիչը» հոդվածի շարունակությունը (սկիզբը տե՛ս փետրվարի 20):

Հոդվածի այս մասը ներկայացվում է «Սոցիալ-աշխատավորական մոտիվներ» ենթավերնագրով: «Սոցիալ-քաղաքական մոտիվների տեսակետից առանձնապես նշանակալից ու հետաքրքրական» է համարում «Հառաչանք» պոեմը: Համառոտ ներկայացնելով պոեմի ստեղծագործական պատմությունը՝ նկատում է, որ պահպանված հատվածն իսկ «չափազանց մեծ կարևորություն է ստանում» երկու տեսակետից. «Նախ՝ նրա համար, որ այդ հատվածն իսկ թե՛ իր գեղարվեստական արժեքով և թե՛ սոցիալական բովանդակությամբ մեծ կարևորություն ունի և ապա՝ մենք այդ պատահական երևույթ չենք համարում, այլ Յ. Թումանյանի բանաստեղծական ոգու և ներքին հոգեբանական ձգտումների տեսակետից էական ու չափազանց բնորոշ երևույթ»: Նկատի ունենալով պոեմի հատկապես «սոցիալ-քաղաքական» բովանդակությունը՝ այդ կարգին է դասում նաև «սոցիալական-աշխատավորական բանաստեղծության գոհար» «Գութանի երգը», «սոցիալ-փիլիսոփայական իմաստալից լեզենդներ» «Ուժը» (նկատի ունի «Հսկան».- խմբ.), «Էսպես չի մնա», «Մի կաթիլ մեղրը», «Սասունցի Դավիթը»՝ «հայ ժողովրդի «Դոն Զիխտը», որ «ոչ այնքան պատմական-քաղաքական, որքան սոցիալ-քաղաքական պոեմ է»:

Հոդվածի շարունակությունն ամբողջապես նվիրված է «Հառաչանք»-ի վերլուծությանը՝ «սոցիալ-քաղաքական» տեսակետից: Պոեմը վերլուծվում է առանձին հատվածների քաղվածային մեջբերման և դրանց սեփական սոցիոլոգիական հայեցակետից մեկնաբանության եղանակով:

Բերելով, օրինակ, ծերունու հայտնի տարակույսը, թե՛

Ո՞վ է իմացել էսպես հրաշք բան:
Էլ ի՞նչ թագավոր կամ էլ ի՞նչ իշխան,
Որ կռիվ չանի, ուրիշին չտիրի,
Մարդ չկոտորի, երկիր չավերի...,

մեկնաբանում է. «Այսպիսի հստակ ու պարզ քաղաքական գիտակցություն կարող է ունենալ միայն աշխատավոր և «թագավորի կամ իշխանի» ձեռին ստրուկ մարդը: Եվ այդ հասուն-քաղաքական դատողությունը պատահական չէ, այլ կյանքի փորձառության և իրական պայմանների անմիջական գաղափարային արտացոլումն է: Եվ միմիայն աշխատավոր ժողովրդի ծոցից ելած բանաստեղծը կարող էր այդքան գեղեցիկ և այդքան պարզ կերպով արտահայտել մեր գյուղացիության սոցիալ-քաղաքական մտայնությունը»:

Կամ վերապատմելով այն հատվածի բովանդակությունը, որտեղ ծերունին տրտնջում է իրենց հոգսաշատ կյանքից՝ հավելում է. «Ահա ձեզ պրոլետար գյուղացիության սոցիալ-տնտեսական կատարյալ և տխուր պատկերը»:

Մի այլ տեղ, վկայակոչելով ծերունու խոսքերը, թե՛ «ոչ ամոթ ունի ուժեղը, ոչ վախ, վայր եկել է տարել տկարին», համանման սոցիալական բովանդակություն է վերագրում Փարվանա դստեր խոսքերին՝ «տկար լավի» և «վես տմարդիի» հակադրության մասին:

Հոդվածի վերջին մասում, նկատի ունենալով պոեմի այն հատվածը, որտեղ ծերունին տրտնջում է, թե՛ «մեր հին աղաթից ընկել ենք, զրկվել, նորն էլ չգիտենք, թե ինչ է եկել», եզրակացնում է. «Դասակարգային գոյության կռվի պայմանները գյուղական աշխարհում ավելի են ծանրացել նոր սոցիալական հարաբերությունների շնորհիվ: Նահապետական ինքնամփոփ տնտեսության և ինքնագոհ կյանքի հիմքերը խախտվել են: Եթե ոչ դեռևս արդյունաբերական, գոնե վաշխառուական կապիտալը ու ոստիկանական դատարանը իրենց ավերիչ դերն են կատարում: Հին «աղաթը», հին նահապետական սոցիալական կարգ ու սարքը խորտակվել է, «նորից» էլ գյուղացին ոչ օգուտ է տեսնում, «ոչ էլ հասկանում»: Նա իր սահմանափակ ու դանդաղամիտ ուղեղով չի կարողանում այս մեծ սոցիալական փոփոխությունները հասկանալ, ասել, թե «ով է մեղավոր», բայց տեսնում է, որ ամբողջ կյանքը փոխվում ու քայքայվում է, գյուղացու մանր տնտեսությունը վաշխառուական կապիտալից խորտակվում է, իսկ ոստիկանական կամայական դատարանի («դիվանի») ձեռքից նրա ազատասեր զավակները փախչում են սարերը՝ «ղաչախ» են դառնում».*

*) Հոդվածը շարունակելի է:

«Աշխատավոր», ԹԻՖլիս, 1919, թիվ 48:

Մարտի 15- Տպագրվում է Վ. Խորենիի «Գյուղական աշխարհի երգիչը» հոդվածի շարունակությունը (սկիզբը տե՛ս փետրվարի 20, մարտի 14):

Շարունակում է վերլուծել «Հառաչանք» պոեմը:

Վերապատմելով այն տեսարանը, որտեղ գյուղացի ծերունին պատմում է գյուղում «թավադների» շահատակությունների մասին՝ եզրակացնում է. «Համարյա թե պրոլետարիատ գյուղացիության կատարյալ չքավորության ու ընչազրկության մի ցայտուն և գեղեցիկ պատկեր է»:

Այնուհետև ընդարձակ վերաշարադրանքով ներկայացնում է չորսն Զատիի և թավադի ընդհարման միջադեպը, երբ անարգվում է ըմբոստ հովվի պատիվը՝ «պահանջելով միջնադարյան «առաջին գիշերվա իրավունք», և ամփոփում իր դիտողությունները. «Այդպիսի «խղճի տեր» է ահա թավադը և դրանից ավելի չի պահանջում: Բայց այդ բավական է անգամ շղթայված ստրուկին ըմբոստացնելու և շղթայազերծ անելու»:

Այսպես իր դիտակետից ներկայացնելով պոեմի ամբողջ սյուժեն՝ վերջում բնութագրում է ծերունու կերպարը. «Սոսկական գյուղացին, ճիշտ է, իր ճարտասանական հարցումին պատասխանում է, թե ինքը «չի հասկանում, թե ո՞վ է մեղավոր», բայց այն հետաքրքրական, ավելին, ծայրղենոկրատական և նույնիսկ հեղափոխական մտքերը, որն արտահայտում է դրանից հետո, կասկած չեն թողնում, որ նման կարգերն ու վարքերը հեղափոխականացնում են անգամ ութսունամյա ծերունուն և ըմբոստացնում նման անիրավ ու անարդար կարգերի դեմ»:

Հոդվածի երրորդ մասը վերնագրված է «Սոցիալ-տնտեսական մոտիվներ»: Այս մասն ամբողջապես նվիրված է «Երկաթուղու շինությունը» պատմվածքին: «Հայ գյուղական աշխարհում «հին աղաթի անկման», նահապետական փակ տնտեսության քայքայման և «նոր», արդյունաբերական տնտեսակարգի տիրապետության տեսակետից» վերլուծում է պատմվածքը՝ կատարելով մի քանի եզրահանգումներ. «Մենք իմանում ենք, թե ինչ մեծ հոգեկան հեղափոխություն է առաջ բերել գյուղացիների նահապետական, սահմանափակ, հնապաշտ ու նորավախ հոգում առաջին շոգեմեքենան: <....> Սակայն ամենգոր դրամը իր քանդիչ դերը կատարել է նաև այս «աշխարհում»: Արդեն բոլոր գյուղացիք Ուհանես բիժու պես չեն մտածում: Նոր դրամական տնտեսությունը իսկույն զգացնել է տա-

լիս իր ազդեցությունը. նա արդեն նոր մտայնություն է առաջ բերել: Գյուղացիներից ոմանք արդեն ձեռք են քաշում հին աղաթից «փեշ-քեշ» տալուց և առևտուրի՝ փողով ծախելու կողմնակից են: <....> Ժեռ քարափների հետ նա քանդում է նաև գյուղացու ժայռամուր հին «աղաթները» և դրանց տեղ ճակատագրական անխուսափելիությամբ նոր տնտեսական կարգեր և նոր «աղաթներ» ու մտածելակերպ հաստատում»:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 49:

Մարտի 15 - Երեկոյան ժամը 7-ին կոնսերվատորիայի դահլիճում գրողների ընկերության նախաձեռնությամբ տեղի է ունենում գրական երեկույթ՝ նվիրված Թումանյանին:

Լսվում են զեկուցումներ Թումանյանի ստեղծագործությանը վերաբերող տարբեր խնդիրների մասին:

«Հովհ. Թումանյանի արվեստը» թեմայով զեկուցում է կարդում Դ. Դեմիրճյանը: Նկարագրելով այն միջավայրը, որտեղ ծնավորվել ու զարգացել է Թումանյանի տաղանդը՝ եզրակացնում է. «Թումանյանը պատկերներ վերցնում է Լոռու բնությունից ու միջավայրից:

Նա ունի պատկերների պարզություն, հոմերական հանգստություն ստեղծելու մեջ ու թախծալի թեթև հումոր: Ոճը իր մայրենի բարբառն է, պարզ, ժողովրդական, բայց գեղարվեստորեն զտած»: Ըստ Դեմիրճյանի՝ Թումանյանը «գյուղի կամ ժողովրդական բանաստեղծ չէ», «նա գուցե ավելի ազգային բանաստեղծ է. իրոք այդպես էլ է. նա մեր ազգի ապրումների անդրադարձումն է»:

Տիգրան Հովհաննիսյանը զեկուցում է «Թախծը Հովհ. Թումանյանի երկերում» թեմայով: Այն միտքն է զարգացնում, թե բանաստեղծի թախծը, որ առկա է նրա ստեղծագործությունների մեծ մասում, գալիս է իր ժողովրդի իրական կացությունից:

Վահան Տեր-Գևորգյանի (Վ. Խորենի) զեկուցման թեման է «Հովհ. Թումանյանի բանաստեղծության հասարակական և փիլիսոփայական տարերքը»: Ներկայացնում է իր «Գյուղական աշխարհի երգիչը» ծավալուն հոդվածի (տե՛ս փետրվարի 20, մարտի 14, մարտի 15) համառոտ շարադրանքը:

Ժամանակը ուշ լինելու պատճառով Գ. Էդիսյանի «Հ. Թումանյանը մանկական գրող» թեմայով զեկուցումը չի կայանում:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 49: «Մշակ», 1919, թիվ 60:

Մարտի 16 - Մամուլը տեղեկացնում է.

«Երեկոյան ժամը 5-ին կրուժուկում կայանալիք Հայ ուսանող-կուլտ. միութ. ուսանողական հավաքույթին խոսելու է Բեն. Հարությունյանը՝ «Հովի. Թումանյանի ստեղծագործության մոտիվը» նյութի մասին»:

«Աշխատավոր», 1919, թիվ 50: «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 56:

Մարտի 17 - Կ. Լիսիցյանի առաջին հայկական գիմնազիայում ուսուցչական կոլեկտիվը և աշակերտությունը կազմակերպում են գրական-երաժշտական երեկույթ Հովի. Թումանյանի պատվին:

Գիմնազիայի երգչախումբը բանաստեղծին դիմավորում է երաժշտական ձոնով, որ գրել էր ուսուցիչ Անտոն Մայիլյանը: Գրական մասը կազմված էր բացառապես Թումանյանի ստեղծագործություններից: Առաջին անգամ բեմից հնչում են մաս Լուռեցիների կյանքից վերցված արձակ գործեր:

Վերջում շնորհակալության խոսքով հանդես է գալիս բանաստեղծը՝ խորհուրդ տալով աշակերտներին կյանքի մեջ երբեք չդադարել սովորելուց:

Երեկոն անցնում է «ընդհանուր ոգևորությամբ և վերին աստիճանի կենդանի»:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 54: «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 60:

Մարտի 19 - Ազատ Վշտունու ստորագրությամբ հրավիրագիր Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի բանաստեղծ

Ամերիկյան կոմիտեի որբանոցների որբ աշակերտական միությունն և «Փարոս» երկշաբաթերթի խմբագրությունը ինձ հանձնարարել են Ձեզ խնդրել, որ բարեհաճեք շնորհի բերել մեզ մոտ կիրակի, մարտի 23, Երեկոյան ժամի 6-ին, ուր կայանալու է որբերի կազմակերպած գրական-գեղարվեստական երեկույթ մեր մեծ բանաստեղծի ծննդյան հիսնամյակի և գրական գործունեության երեսնամյակի առթիվ:

Ամերկբա են, որ չեք մերժի Ձեր ներկայությամբ ոգևորելու և մի քանի սրտալի խոսք ասելու մեր ամենքից մոռացված որբերին:

Հարգանք՝ Հին Ներսիսյան որբանոցի կառավարիչ Ա. Վըշտունի»:

ԳԱԹ ԹՖ, 2501 (1347):

Մարտի 20 - Գարեգին Լևոնյանի գրությունը Թումանյանին՝
Թիֆլիսից.

«Մեծարգո պ. Թումանյան

Անցյալ օրը Ձեզ մոտ մենք որոշեցինք ժողովը նշանակել
կիրակի օրը՝ ժամը 11-ին. այժմ, ինչպես լսում եմ, նույն օրը՝ ժամը
12-ին, Արվեստականի դահլիճում մեծ միտինգ կա Ղարաբաղի հար-
ցի մասին. արդյոք այդ ժողովները միմյանց չե՞ն խանգարի: Գուցե
մերը նշանակենք 10 1/2 – ին, որ 12-ին վերջացնենք կամ հետա-
ձգենք երեքշաբթի օրը: Սպասում եմ Ձեր պատասխանին, որ վաղը
հայտարարությունները տանեմ խմբագրություններին:

Խորին հարգանքով՝ Գ. Լևոնյան»:

ԳԱԹ ԹՖ, 1349 (344 լր.):

Մարտի 20, Թիֆլիս - Երկտող Գարեգին Լևոնյանին.

«Սիրելի Գարեգին,

Գոնե եղպես լինի, նշանակիր ժամը 10 1/2-ին, թե չէ ետ ձգելը
կուշացնի:

Բարևներով՝ Դ. Թումանյան»:

ԵԼԺ 10, 308:

Մարտի 20 - Թիֆլիսի հայկական ակումբի շնորհավորական
գրությունը Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ.

«Господину Ованесу Туманянцу

Милостивый Государь!

Совет Старшин Армянского Клуба приносят Вам свое
искреннее поздравление по поводу пятидесятилетия со дня
Вашего рождения, преклоняется перед величием Вашего талан-
та, лучами коего озарена вся наша литература и общественная
жизнь, присоединяет свой голос восторгу, проявленному всем
обществом по поводу Вашей литературной и общественной
деятельности и надеется, что еще долго Армянская литера-
тура и общественная жизнь будет иметь Вас во главе своих
представителей.

Совет Старшин постановил представить в Ваше рас-
поряжение 1600 р. из средств Клуба на издание Ваших произве-
дений по Вашему усмотрению, которые можете получить в
канторе Клуба.

Об этом Совет Старшин доложил Общему Собранию членов Клуба, составшемуся 2 марта, которое единогласно постановила утвердить это решение Совета и приветствовать Вас по поводу Вашего юбилея.

Прошу и лично от меня принять мои искренние поздравления и пожелания долгого процветания Вашего таланта и неувядающей славы Вашей луре.

Председатель Совета Старшин –

Управляющий делами Клуба».

ԳԱԹ ԹՖ, 1211 (140 III g.):

Մարտի 20 - Շնորհավորական նամակ Թումանյանին ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Գանձակից.

«Մեծարգո բանաստեղծ Հովհաննես Թումանյան

Գանձակի հայ աշակերտների ընդհանուր ժողովը իր ջերմ ու անկեղծ ողջույնով շնորհավորում է ազգային համերաշխության երգչի, առաջին հայ ժողովրդական բանաստեղծի ծննդյան հիսնամյակը՝ մաղթելով երկար ու երկար տարիներ այդ փայլուն ու բեղմնավոր գործունեության համար:

Ներեցեք այսքան ուշ շնորհավորելուս:

Հայ աշակերտների ընդհանուր ժողովը»:

ԹԹ ԳԳ, 318 (2): ԳԱԹ ԹՖ, 47:

Մարտի 22 - Շնորհավորական հեռագիր Թիֆլիս՝ Թումանյանին, ծննդյան 50-ամյակի առթիվ՝ Նոր Բայազետից.

«Հայ ժողովրդի դաժան փորձությունների օրերին է կատարվում հիսնամյա հորեյանը նրա արժանավոր զավակներից մեկի՝ Հովհաննես Թումանյանի՝ ծաղկած լեռների ու կիրճերի երգչի, պատանեկության անմնա՛ն ուսուցչի: Նոր Բայազետի կուլտուրական հիմնարկությունները ջերմագին շնորհավորում են այդ օրը՝ իբր ազգային վերածնության առաջին գարնան ողջույնը, մեր նոր կյանքի շենքին ցանկանում են ստեղծագործական նոր թափ նրա տաղանդավոր բանաստեղծին: Այդ օրը հավերժացնելու համար որոշեցինք կազմակերպել դպրոցական ու հասարակական ցերեկույթ, հիմնել մի ֆոնդ՝ դպրոցներում տարածել ու Թումանյանի մանկական գրքերը և քաղաքի փողոցներից մեկն անվանել նրա անունով»:

Հեռագիրն ստորագրել են՝ վարդապետ Եզնիկ, Վահան Աֆրիկյան, Բեյբութ Կարապետյան, Պետրոս Չիլինգարյան:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 63:

Մարտի 23 - Տպագրվում է Հարության Թումանյանի «Մեր Հովհաննես Թումանյանին» բանաստեղծությունը.

Թեպետ չենք ծնվել մի հորից-մորից,
Բայց մենք եղբայր ենք մեր ծնված օրից.
Երկուսս էլ միասին զարկել ենք լարին,
Հայրենի երգեր տըվել աշխարհին:
Աղետի, վշտի օրերին դաժան
Տանջվել ենք միասին, եղել անբաժան.
Անհույս ու անլույս մեր խավար երկրին
Երբ ոսկե շողով բացվել է կրկին,
Երկուսս էլ միասին մենք ուրախ տոնել.
Նոր արշալույսին գովեստ ենք ձոնել:
Այսօր հիսնամյա հանդիսիդ պահում՝
Քեզ մոտ են գալիս ես սիրով անհում.
Քնար ձեռիս՝ Քեզ մոտ են գալիս,
Ջերմագին համբույր և օրհնանք տալիս:
Զուներն ո՛չ ոսկի, ո՛չ անգին գոհար,
Որ նըվեր բերեն Քո տոնի համար.
Թող երգըս համեստ, եթե հավանես,
Քեզ նըվեր լինի, եղբայր Հովհաննես:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 62:

Մարտի 23 - Արտիստական ընկերության համերգային դահլիճում հայ ժողովրդական կուսակցության աշակերտական ֆրակցիայի նախաձեռնությամբ Հովհ. Թումանյանի և Հովհ. Աբելյանի պատվին տեղի է ունենում գրական-երաժշտական երեկույթ-բալ:

Բացառապես երիտասարդական ուժերով կազմակերպված երաժշտական մասից հետո հորեյարներին ողջույնի խոսք են ասում Վարդան Սիրվանյանը, Արմեն Քոչարյանը և օր. Մեհրաբյանը: Պատասխան խոսք են ասում հորեյարները:

Այնուհետև սկսվում են պարերը, որ տևում են մինչև ուշ գիշեր:
«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 61, 62, 65:

Մարտի 23 - Հայտարարություն մամուլում:

Տեղեկացվում է, որ մարտի 23-ին՝ կիրակի օրը, հայ օպերետային խումբը կներկայացնի Զ. Թումանյանի «Անուշ» պոեմի հիման վրա երաժշտական դրամա՝ բաղկացած 6 պատկերից: Սկիզբը ժամը 7 և կեսին:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 56:

Մարտի 23 - Մամուլը տեղեկացնում է.

«Առավոտը ժամը 10-ին 5-րդ իգական գիմնազիայում (Հավլաբար) ընկ. Բ. Թովչյանը կարդում է դասախոսություն՝ Հովհաննես Թումանյանը և նրա գրականությունը նյութի մասին: Մուտքը աշակերտուհիների համար ձրի է»:-

*) Սա հավանաբար այն «Ժողովն» է, որի մասին խոսվում է Գ. Լևոնյանի՝ Թումանյանին ուղղած գրության և դրա պատասխանի մեջ (տես մարտի 20):

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 56:

Մարտի 23 - Հայտարարություն մամուլում:

Տեղեկացվում է, որ մարտի 24-ին «պետական թատրոնում կայանալու է բանաստեղծ Ի. Գրիշաշվիլու սովորական երեկոն, մասնակցությամբ Հովհ. Թումանյանի, Ս. Գորոդեցկու, Ս. Քափանակյանի և ուրիշների»:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 56:

Մարտի 24 - Պետական (Արքունական) թատրոնի դահլիճում ներկա է լինում վրաց բանաստեղծ Գրիշաշվիլուն նվիրված երեկույթին:

Գեղարվեստական բաժնում Ս. Քափանակյանն արտասանում է «Մի կաթիլ մեղրը», որ հանդիսականների կողմից ընդունվում է մեծ ոգևորությամբ: Հեղինակին ողջույնի խոսք է ասում վրաց բանաստեղծ Պաուլո Յաշվիլին, որից հետո տեղի է ունենում հանդիսավոր ցույց, և հասարակությունը հոտնկայա որոտընդոստ ու երկարատև ծափերով դիմավորում է օթյակում նստած Թումանյանին:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 58:

Մինչև մարտի 27 - Լույս է տեսնում Անտոն Մայիլյանի «Ինձ մի սիրիր» ռոմանսը Թումանյանի համանուն բանաստեղծության հալերեն և ռուսերեն տեքստերով և բանաստեղծի դիմանկարով:

«Մշակ», 1919, թիվ 65:

Մարտի 27 - Հովնանյան դպրոցում Թումանյանի պատվին տեղի է ունենում դպրոցական հանդես, որ անցնում է «Կենդանի և հետաքրքրական»:

«Ժողովրդի ծայն», Թիֆլիս, 1919, թիվ 66: «Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 60:

Մարտի 29 - Տպագրվում է հոդված՝ «Համերաշխության միջոց» խորագրով, Հ. Պետ. ստորագրությամբ:

Առիթը հայ և վրաց մտավորական շրջաններում պարբերաբար տեղի ունեցող հորեյանական երեկոյթներն ու հանդեսներն են: Սրանից հեղինակը հետևեցնում է, որ «ազգերի ներքին համերաշխության միակ ու հեշտ միջոցը գեղարվեստի շաղկապն է», որտեղ մոռացվում են «հոգս ու առօրյա, տարածայնություն ու թշնամանք»։ «Վրաց հասարակությունը նույն ոգևորությամբ և դեռ ավելին է ծափահարում Հովհ. Թումանյանին, ինչ հայ հասարակությունը. Գրիշաշվիլին ու Իաշվիլին ողջունում են ավելի սրտանց ու անկեղծությամբ, քան հարազատի տաղանդով արբած հայ մտավորականը, և այսպես... Մարդկային հոգին լցվում է գեղեցիկի ու բարու գիտակցությամբ, ազգայնական կրքերին տեղի տալով համայնական զգացմունքը՝ սիրել միմյանց, և մանր ու չնչին են դառնում յուրաքանչյուր այնպիսի ձգտում, որ իր հանգիստը որոնում է մյուսի դժբախտության մեջ, իսկ պետական դավանանք է համարում շովինիզմի հաղթանակը»:

Անհրաժեշտ է համարում, որ մտավորական շրջաններում տիրող այդ ոգևորությանը հաղորդակից դառնա նաև հասարակ ժողովուրդը:

Եվ վերջում. «Համազգային հանդեսների կազմակերպությունը շեշտված է այսօր ավելի, քան երբևէ:

Հայ, վրացի, թուրք և ռուս ինտելիգենցիայի վրա ընկնում է մի պարտականություն, որով համերաշխության են կոչվելու Կովկասի խռոված ցեղերը:

Պարբերական խառն հավաքույթների ու երեկոների միջոցով է, որ պիտի մարի ազգայնական բոցը և ի չիք դարձվի շովեն կիրքն ու թույնը...

Հրավիրում ենք հայ և վրացի գրողների ուշադրությունն այս հեշտագործ հանգամանքի վրա և պահանջում, որ օր առաջ վերին շրջանների բարյացակամ տրամադրությունը դարձվի նաև բուն ժո-

ղովրդի հոգու և գիտակցության սեփականություն»:

«Ժողովրդի ձայն», 1919, թիվ 67:

<Մարտի երրորդ տասնօրյակ>, Թիֆլիս - Հեռագիր խորհրդր-
դային Միության ժողովրդական կոմիսարների խորհրդին.

«Армянским общественным деятелям стало известно, что Советская власть согласна освободить доктора Завриева и литератора Назарьяна в случае, если английское командование освободит Варвару Джапаридзе и двух сыновей Шаумяна. Ввиду этого армянские общественные деятели употребили все свое влияние, чтобы Варвара Джапаридзе и сыновья Шаумяна были освобождены. Путем влияния на разные круги на днях удалось добыться их перевода в Баку и освобождения из тюрьмы. Хотя они выпущены на поруки, но живут совершенно свободно. Ввиду этого надеемся, что советская власть теперь освобождает доктора Завриева и литератора Назарьяна.*

Председатель литературного общества

Օվ. Դումանյան.

*) Ջավրիկը և Նազարյանը Մոսկվայում բանտարկվել էին Բաքվի 26 կոմիսար-
ների սպանությանը և բոլշևիկների մասսայական ձեռքակալություններին
մասնակցելու մեղադրանքով: Շուտով, սակայն, մեղադրանքը հերքվում է, և
նրանք ազատ են արձակվում:

ԵԼԺ 10, 308:

Մարտի 30 - Տպագրում է («Աշխատանք», թիվ 62, «Ժողովրդի
ձայն», թիվ 68, «Մշակ», թիվ 70, «Кавказское слово», թիվ 58) «Օգ-
նություն հայոց գրականությանը» հոդվածը:

Թիֆլիսի Հայկական ակումբի ավագների խորհուրդը իր մի-
ջոցներից 1500 ռ. է տրամադրել Թումանյանին՝ իր ստեղծագործու-
թյունները տպագրելու համար: Բանաստեղծը հրապարակավ հայտ-
նում է, որ ինքն այդ գումարը հանձնում է գրողների միության վար-
չությանը՝ կարիքավոր գրողներին օգնելու համար:

Կոչով դիմում է հանրությանը. «Եվ խնդրում են ամենքին,
որոնց համար թանկ է հայոց գրականությունը և որոնք կարող են
օգնության գան մեր գրականությանը էս արտասովոր ծանր օրերում:

Եվ հավատացած են, որ անհետևանք չի մնալու իմ կոչը:

Օգնություն ուղարկողները կարող են ուղարկել մեր խմբա-
գրություններին, որոնք, անշուշտ, հանձն կառնեն ուրախությամբ

ստանալու և Գրողների ընկերությանը հասցնելու»:

ԵԼԺ 7, 388-389:

Մարտի 30 - Շնորհավորական նամակ Թումանյանին՝ Քութա-
յիսից.

«Սիրելի ու հարգելի բանաստեղծ Դովհաննես Թումանյան

Սրտի անհուն բերկրությամբ շնորհավորում ենք Ձեր ծննդյան
հիսնամյակը և ամբողջ սրտով Ձեզ էլի երկար ու երկար օրեր ցան-
կանում՝ միանգամայն հավատացած լինելով, որ Դուք Ձեր այդ
կյանքի մնացած օրերն էլ պիտի նվիրեք ձեր հեզ ազգին, ձեր մար-
դասիրական գաղափարների տարածման:

Մենք՝ Քութայիսի մի խումբ երիտասարդներ, Ձեր սիրելի հի-
շատակը հարգած լինելու համար, մարտի 22-ին մի երեկույթ կազ-
մակերպեցինք, որից ստացած 2000 ռ. (երկու հազար ռ.) արդեն
մենք ուղարկեցինք տալու հայոց նորաբաց գիմնազիայի հոգաբար-
ձության, որպեսզի վերջինս Ձեր անունով մի քանի թոշակառու աշա-
կերտներ պահի իր խնամքին հանձնված գիմնազիայում:

Խնդրում ենք ընդունեք մեր անկեղծ շնորհավորանքները:

Երեկույթը կազմակերպող խումբ:

1919 թ. մարտ 30, Քութայիս:

Յ. Գ. Մի օրինակը ուղարկված է «Աշխատանք» օրաթերթին»:

ԹԹ ԳԳ, 1082 (1) 23:

Ապրիլի 1 - Տպագրվում է հոդված՝ «Օգնություն հայ գրակա-
նության» խորագրով, Յ. Պետ. ստորագրությամբ:

Առիթը Թումանյանի համանուն հոդվածն է (տե՛ս մարտի 30):
Բանաստեղծի բարձրացրած խնդիրը խիստ հրատապ է համարում.
«Թե ինչ արձագանք պետք է գտնի այդ կոչը, մենք չգիտենք, բայց
որ խնդիրը դրված է իր հասունացման գերագույն ժամին, իր ծայ-
րահեղ կարևորության ժամանակ, այդ էլ մի ողբերգական ճշմար-
տություն է, ողբերգական նրանով, որ կարիքը չպետք է հասցվեր իր
գազաթնակետին և ապա մոտենար ըստ էության. սակայն շնորհա-
կալ կմնանք, եթե այստեղ գոնե ձայնը չմնա անապատի անգո ար-
ձագանք»:

Իր կողմից ավելացնում է, որ առաջին հերթին պետք է մտածել
սկսնակների մասին, ամենից առաջ նրանց պետք է օգնել բարո-
յապես ու նյութապես, քանի որ նրանք են գրականության ապագան:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 69:

Ապրիլի 2 - Սարիբեկ Տեր-Մելիքսեդեկյան ստորագրությամբ նամակ թումանյանին՝ Թիֆլիսից:

Փախստական է Կարսից: Երկար տարիներ զբաղվել է ուսուցչությամբ: Գրել և տպագրել է վիպակներ ու վոդևիլներ, աշխատակցել է մամուլին: Մի տարի է, որ անգործ է: «Կարիքից դղրված»՝ Աշոտ Անաստասյանի միջոցով դիմել է Գրողների ընկերությանը՝ «մի համեստ նպաստ» ստանալու հույսով: Լրագրերից տեղեկացել է, որ ընկերությունը իր «տրամադրության տակ եղած գումարներից» բաժին է հանելու գրականությանը ծառայող մշակներին: Ինքն էլ, որպես դրանցից մեկը, դիմում է բանաստեղծին՝ «որպես ողորմած Սամարացի»՝ օգնության հասնել իրեն՝ «կողոպտված փախստականին»՝ գնահատելով նրա՝ «44 տարի հայ գրականությանն արած ծառայությունը»:

ԳԱԹ ԹՖ, 2240 (459)

Ապրիլի 3, Թիֆլիս - Տիցիան Տաբիձեի մեծարման երեկոյին կարդում է «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» բանաստեղծությունը:

Տաբիձեն հիշում է. «Իմ երեկոյին՝ 1919 թ. ապրիլի 2-ին, նա մի պոեմ կարդաց, որն ամբողջովին նվիրված էր Վրաստանին և վրաց բանաստեղծներին: Վրաց բանաստեղծներից որևէ մեկի հորեյանին ոչ ոքի չի հաջողվում գերազանցել Հովհաննեսին. նա առաջինն էր գալիս և անպայման հորեյարին հանձնում իր կողմից գրված մի թուղթ»:

ԹԺՂ, 729, 971: ԵԼԺ 1, 639-640:

Ապրիլի 3 - Ժոզեֆինա Զարգարյանի նամակ-ողջույնը Թումանյանին՝ Թիֆլիսի լեհական համայնքի և անձամբ իր կողմից.

«Маленькоу веткоу кипариса, дорогоу Ованнес, приветствую я тебя.

Как эта ветка оторвана от большого строуного дерева, так и польская колония в Тифлисе, которая просила меня тебя приветствовать, оторвана от большоу и прекрасноу своеу родины.

Я выбрала кипарис, ибо это было любимым деревом нашего великого поэта, Адама Мицкевича, и твоего брата по перу.

Оба одинаково Вы любили свой народ, страдали за него и оба чудно его воспевали. И эхо далекой Гродненской губернии, где родился Мицкевич, равно как и эхо лорейских ущелий, оба повторяли стоны измученных народов и чудные песни их любимых поэтов.

Теперь оба народа свободны. Ты счастлив, Ованнес, что дождался свободы твоей родины, а народ твой счастлив, что имеет такого Ованеса Туманяна.

Живи еще долго для всех нас!

Ж. Заргарян».

ԳԱԹ ԹՖ, 1190 (622):

Ապրիլի 3 - Զոկ Մանուկներ ստորագրությամբ չափածո ուղերձ Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ.

Մեծ վարպետ

(Հովհաննես Թումանյանին)

Լսել կուզե՞ք թոթովանքը մեր լեզվի
Կամ ջերմ սիրով բաբախումը մեր սրտի,
Ահա եկել բոլորել ենք Ձեր շուրջը,
Նվեր բերել թարմ ծաղիկի այս փունջը:

Ձեր տաղերից նյութ է քաղել մեր լեզուն,
Գիտենք ո՞վ էր Դավիթ, Մհեր դյուցազուն,
Մենք երգել ենք Սարոյի հետ Անուշին,
Շատ ենք պարել Թմկաբերդի առունին:

Բայց երբ այստեղ մեծարում են Ձեր տոնը,
Ընդունեցեք մեր համբույրն էլ, մեր ծոնը,
Բարև տարեք Ձեր Արփիկին, Սեդային,
Երնեկ նրանց, որ Ձեզի պես հայր ունին:*

*) Ձեռագրի սկզբում կա մակագրություն. «Կարդաց էնման Թումանյանի 50-ամյա հոբելյանի հանդեսին, որը կազմակերպել էին թիֆլիսաբնակ Ջոկերը բժ. Արիստակես Ջարգարյանի նախաձեռնությամբ՝ զոկական երեկույթին և ներկայացմանը 3 ապրիլի, 1919 թ.»:

ԹԹ ԳԳ, 318/13:

Ապրիլի 4 - Ջալալ Տեր-Գրիգորյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Սիրելի Յովհաննես

Գրական-գեղարվեստական Սալոնի այսօրվա երեկույթը նվիրված է Քեզ, Յովհ. Աբելյանին, Բրոջուն և Ջ. Պ. Պալիևին, ինչպես արդեն հայտարարված է լրագիրներում: Պ. Տ. Նազարյանը ինձ հանձնարարեց խնդրելու Քեզ, որ ներկա գտնվես ընտանիքով հանդերձ: Սկիզբը եր. ժամը 7-ին: Երեկ էի ուզում տեսնվել Քեզ հետ, բայց չաջողվեց: Իմ կողմից էլ խնդրում եմ ուրիշի խոսք չտաս և այսօր երեկոյան անպատճառ գաս Սալոն: Երեկույթը կրելու է միջազգային բնույթ և հուսով եմ, որ լավ պիտի անցնե: Անպատճառ գաս:

Ծաշից հետո երեկոյան մոտ ժամը 6-ին ես կգամ քեզ մոտ, որ միասին գնանք:

Քեզ անձնվեր Ջալալ Տեր-Գրիգորյան»:

ԳԱԹ ԹՖ, 2199 (463):

Ապրիլի 4 - Թիֆլիսի Գրական-գեղարվեստական Սալոնում տեղի է ունենում երեկույթ՝ նվիրված Յովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյա, դերասան Յովհ. Աբելյանի՝ 35-ամյա, կոմսերվատորիայի պրոֆեսոր Էմիլիո Բրոջունի՝ 35-ամյա և կոմպոզիտոր Ջ. Պ. Պալիևի՝ 25-ամյա գործունեության տարեդարձներին:

Հանդեսը նախագահում է բժշկապետ Բ. Նավասարդյանը, քարտուղար՝ Ջ. Տեր-Գրիգորյան:

Հոբելյարների մուտքը դահլիճը ընդունվում է խանդավառ ծափահարություններով:

Նախագահը իր ներածական խոսքում ընդհանուր գծերով առանձին-առանձին բնութագրում է բոլոր հոբելյարներին, մասնավորապես Թումանյանին՝ «իբրև գյուղի առաքինությունները գրչով պատկերացնող բանաստեղծի, որի ամեն մի տողից գյուղի բույրն է զգացվում. իբրև մի գրող, որի երկերով մեր մանուկ սերունդն է դաստիարակվում, որ ամենքիս սեր է ներշնչում դեպի գեղեցիկն ու վսեմը, մեր բարքերն է մեղմացնում»:

Հատուկ ընդգծում է նրա՝ հայրենասեր քաղաքացու բարձր նկարագիրը՝ վկայակոչելով այցելությունները Արևմտյան Հայաստան և այն, որ իրեն ու իր զավակներին անմնացորդ նվիրել է հայրենիքին ծառայելու գործին:

Իր ելույթում Ջ. Տեր-Գրիգորյանը «Սալոնի մշտական հաճա-

խորդ գրագետների, հրապարակախոսների, արտիստների և արվեստագետների ու ներկա հասարակության կողմից» մեկ առ մեկ շնորհավորում է բոլոր հոբեյարներին, մասնավորապես Թումանյանին բարենաղթում է, «որ նա իր գրական գործունեության 30-ամյակը, որ լրանում է հաջորդ տարի (1920թ. օգոստոսին), տոնվի Մայր Հայաստանում, ավելի բարեբախտ հանգամանքներում»: Ապա դիմում է բանաստեղծին. «Սիրելի՛ Հովհաննես, մենք Քեզ պիտի տանենք Մայր Հայաստան, որը «Վեհափառ դայակն է մանուկ օրերիդ»: Չէ՞ որ Դու Քո ճաճանչափայլ տաղանդը, Քո ողջ հոգին ստացել ես Հայոց «ծիծղուն, կապուտակ երկնքից», հայրենի բարձրագահ սեզ լեռներից՝ խրոխտ ու վեհապանծ, բյուրակնյա վճիտ առուներից ու զուլալ աղբյուրներից, հազար ու հազար քնքուշ ծաղիկներից և այդ ամենքի թագն ու պսակը կազմող, այս բոլորի զավակ հայ գյուղացուց, հայ կնոջից... Օ~ն ուրեմն, ներշնչվի՛ր, հեծի՛ր սրաթև Պեգասոս կեկեռաբաշով և «ոգևորության հզոր թևերով» սլացի՛ր դեպի հայրենի Պառնաս, դեպի Հայոց բարձունքները:

Սլացի՛ր դեպի երբեմնի դրախտավայր հայ աշխարհը, շրջի՛ր հայրենի Գողգոթաները, մեր հերոսամարտի պատմական վայրերը ու մեր ժողովրդի ազատամարտի էպոպեն հավերժացրո՛ւ անմահ արվեստով...

Ո՛վ դու իմաստուն թռչուն, մարդկային սրտի զրնգուն ծայնով երգի՛ր Սեր, Գեղեցկություն, Կյանք և Ուժ, ստեղծագործ աշխատանք և մեր Ֆենիկս ժողովրդի հոգին, Հայ Հոգին, որ անթեղած է հայրենի մոխիրների տակ և որը, սակայն, մեր վերածնունդի Արշալույսին Քո սիրտ ու հոգի ներշնչող կանչը լսելով՝ իր ճգնած ու տրորված թևերը կշտկե և նորից կծգտի սավառնել դեպի բարձրն ու վսեմը... Ո՛վ դու, Հազարան Բլբուլ, Քեզ կարոտել են մեր Հայրենիքի հազարյան վարդերը, դալարագեղ պուրակները, երփնածաղիկ ու սիզավետ, մարմանդ դաշտերը, շաղոտ ու շողոտ, գունագեղ ու բուրավետ հորոտմորոտները, կանաչագեղ բլրակները, էն գեղեցիկ ծաղիկ սարի աղջիկները, մեր իտալական երկնքի լազուրը, միայն մեր հորիզոններին հատուկ մայրամուտի սքանչելի ու զմայլելի երփներանգ ու թովիչ շողերն ու գույները, բյուր բոցերը, բյուր ցուլքերը երկնային:

Թռի՛ր, սլացի՛ր դեպի Մայր Հայաստան, Կայծ-Ոգիդ հաղորդի՛ր մեր երիտասարդության և թող Գողթան երգիչների ու գուսանների սերունդները իրենց կերոնները վառեն հանճարիդ խարույկից, մեծ-պզտիկ հանճարիդ սիրովը վառվին ու մեր ոսկեշող երազների

իրագործման օրերին այնտեղ՝ Հայաստան աշխարհում, շողազարդ ու վարդավառ տոներ կատարեն Քո պատվին, տոներ հայ հանճարի, հայ շնորհքի, հայ արվեստի ու գեղեցկության պատվին- Նավասարդյան տոներ- ծնծղաներով, երգ ու պարով...

Օ~ն, անդր, սլացի՛ր դեպի Հայ աշխարհը, երգերովդ փարատի՛ր հայ մուսայի սուգն ու վիշտը և Քո Արվեստի շնչով հղկած ու մշակած՝ վերադարձրո՛ւ ժողովրդին այն հոգեկան գանձերդ, որ ստացել ես նրանից»:

Հ. Բենիկը, շնորհավորելով բոլոր հորեյարներին, դիմում է հատկապես Թումանյանին և Աբելյանին՝ նշում է. «Իսկ ձեզ ի՞նչ խոսք հյուսեն, զույգ սիրելիներ, զույգ Հովհաննեսներ, մեկմեկու մման, հավասար սիրելի, հավասար անմման:

Ես ձեզ շնորհավորել եմ լռության մեջ սրտիս համակ սիրով, բոլոր նրբին խավերով և բարձրածայն՝ ի լուր հայության հակիրճ խոսքերով:

Երբ ձեր շուրջը մեր ժողովրդի գովքն է ծովանում, ուրախությունից թունդ է ելնում սիրտս, թրթռում է ճնճողկի թևի մման, կարծես կրծքիցս թռչիլ է ուզում և ես զույգ ձեռքով թռնում եմ թև առած, թռչում դառած սիրտս:

Իմ ուրախությունը բխում է այս անդրդվելի համոզմունքիցս, թե ազգ պահողը տաղանդն է, հանճարն է:

Ոչ մի ազգ հարատև ապրել ու երջանիկ լինել կարող չէ, թեկուզ ֆիզիկապես հզոր, իշխանությամբ զորեղ, զենք ու զրահով անպարտելի ճանաչվի, եթե նա իր հոգու աշխարհում տաղանդ չունի, շնորհալիներ չունի, հանճար չունի:

Ազգ կրթող, ազգ պահող, ազգ բարձրացնողը տաղանդն է, հանճարն է, ազգ կործանողը նրանց բացակայությունը:

Ձեզ նայելիս միտքս է գալիս հանրածանոթ իմաստալից պատմվածքը. վիրավոր արծիվը արմաքան է լինում հոգեվարքի տագնապի մեջ. նա արագահաս մահն է կարոտում: Նրա հեկեկանքը դուրս է կանչում մի կախարդի, որ կանգնում է նրա առաջ.

-Ի՞նչ կտաս ինձ, արծի՛վ, եթե ես քեզ բժշկեմ, վերստին կենդանացնեմ. տո՛ւր ինձ ամենաթանկ բանը, որ դու ունիս:

Արծիվը մտածում է. «Ամենաթանկ բանը կյանքս է, որ նա չի ուզում: Պահանջի՛ր, կախա՛րդ, պատրաստ եմ տալու:

-Տո՛ւր ինձ թևերդ, արծի՛վ:

Սարսափում է արծիվը ու մտածում. «Թևե՞րս, ուրեմն ես այլևս թռիչք պիտի չունենամ, ուրեմն էլ չեմ բարձրանալու այս փօնուն աշխարհից դեպի քինջ եթերքը, էլ չեմ լողալու արևի շողերի մեջ, էլ չեմ համբուրելու աստղերի ցլփերը...

-Ո՛հ, ո՛հ, կախա՛րդ, առ կյանքս, լավ է մեռնեն, քան առանց թև ու թռիչք ապրեն:

Դուք՝ տաղանդավոր սիրելիներ, մեր ազգի թևն եք ու թռիչքը, առանց տաղանդի չարժեք ապրել:

Դուք աստվածավառ լապտերներ եք հայ ժողովրդի հոգու երկնքում, տիրական օգնությամբ դուք վառեցիք ճրագները մեր մեջ: Միշտ վառ պահեցե՛ք Ձեր կանթեղները, քանի կաք, որ մեզ փայլ տաք, իսկ երբ չեք լինի, ձեր վառած ճրագները մշտական վառ կմնան հայ ժողովրդի սրտի մեջ ու լույսերով կցողեն ձեր ազնիվ հիշատակը:

Շնորհավորում եմ ձեզ, շնորհավորում եմ ձեր մեջ իմ հույսերը:

Հար. Թումանյանը ողջունում է հորեյարներին «սրամիտ ոտանավորով»: Թումանյանին դիմում է այսպես.

«Իսկ դու, եղբայր Հովհաննե՛ս,
Դափնեպսակ հայ գուսան,
Քո հիսնամյա տոնիդ այսօր
Քեզ է գովում իմ Մուսան.
Հայ գուսան,
Իմ Մուսան,
Քեզ է գովում իմ Մուսան»:

Վերջում խոսքով հանդես են գալիս հորեյարները: «Հովհ. Թումանյանը.- ինչպես տեղեկացնում է մամուլի հաղորդագրությունը,- իր գեղեցիկ ճառի մեջ շեշտեց այն նշանակալից հանգամանքը, որ այսօր իր հորեյանը տոնվում է Գրական-գեղարվեստական Սալոնում՝ Տիգրան Նազարյանի հարկի տակ, բժշկապետ Բագրատ Նավասարդյանի նախագահությամբ և Ջ. Տեր-Գրիգորյանի քարտուղարությամբ:

«Դեռ Մոսկվայի իմ առաջին ժողովածուն դուրս չեկած՝ առաջին անգամ իմ բանաստեղծությունները տպվել են «Աղբյուրում», երբ ես դեռ անհայտ մի պատանի էի, պ. Տիգրան Նազարյանը որո-

նում էր ինձ ու ինձպեսներին և մեր երկերը տպագրելով «Աղբյուրում»՝ խրախուսում էր մեզ: Մոսկվայի իմ առաջին ժողովածուի լույս ընծայվելուց հետո էլ, լավ հիշում եմ, բժշկապետ Նավասարդյանը, պատահելով ինձ, գովաբանեց ու խրախուսեց ինձ, և այդ բանը իսկապես թև տվավ ինձ: Դա նշանակալից է մանավանդ այն պատճառով, որ ես ու իմ շրջանի մյուս սկսնակ բանաստեղծները անբարյացակամ ընդունելություն գտանք շատերի կողմից: Ջ. Տեր-Գրիգորյանն էլ՝ իբրև իմ վաղեմի բարեկամ ու ընկեր, միշտ թե՛ հեռվից նամակներով, թե՛ անձամբ ինձ խրախուսել է ու դրվատել. հենց էս հորեղյանն էլ սրա սարքածն է. իբրև մեր գրականությանը նախանձախնդիր մի անձն, նա բացավ իմ ծննդյան տարեդարձի այս գաղտնիքը ու պատճառ դարձավ այսքան բանի»: Ապա շնորհակալություն հայտնելով ճառախոսներ հ. Բենիկին, Հար. Թումանյանին, Հովհ. Մալխասյանին և ընդհանրապես հասարակությանը՝ խանդավառ ծափերի տակ իր խոսքը վերջացրեց բանաստեղծը:

«Տարագ», Թիֆլիս, 1919, թիվ 12, էջ 80-84:

Ապրիլի 4 - Հրավեր-նամակ Թումանյանին Թիֆլիսի 4-րդ արական գիմնազիայի տնօրենության կողմից.

«Многоуважаемый поэт

Педагогический совет и совет родительского кружка почтительнейше просят Вас пожаловать с семейством на вечер, устраиваемый по случаю Вашего 50-летнего юбилея, в здании Тифлисской 4-ой мужской гимназии (Вельгуйская улица, д. No 4) в воскресенье 6-го сего апреля, в 7 часов вечера.

При сем прилагается программа вечера.

Директор гимназии

Председатель родит. кружка».

ԹԹ ԳԳ, 318 (15) ԳԱԹ ԹՖ, 75:

Ապրիլի 5 - Ողջույնի խոսք Թումանյանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ, Արգութինսկայա - Դոլգորուկովայի իգական գիմնազիայի հանդիսավոր հավաքություն.*

«Ահա վերջապես մենք էլ հասանք այս ուրախալի օրվան: Մեր սրտերի ցնծության և շնորհավորումի օրը: Բարի լինի Ձեր գալուստը, հարգելի բանաստեղծ: Շատ անգամ ենք երազել տեսնել Ձեզ, որովհետև Դուք Ձեր հազվագյուտ գեղեցիկ բանաստեղծություններով զարթեցրել եք մեր սրտերի մեջ բարի զգացմունքներ: Ձեր

գրվածքների ազդեցության տակ, հարգելի բանաստեղծ, բացվեցան մեր աչքերը, տեսանք նորանոր շատ բաներ, որոնց առաջ չէինք նկատում: Երբ մեզ կարդացին Ձեր հայտնի աշխատություն «Մի կաթիլ մեղրը», մենք միաձայն հարցրինք՝ դա պատերազմից առաջ է գրված, թե՞ հետո: Պատերազմից դեռ շատ առաջ – պատասխանեցին մեզ:

Այո՛, ինչպես Աստվածանից ընտրված մարգարե, Դուք այդ ամենն առաջուց նախատեսել էիք: Մենք՝ փոքրից մինչև մեծը, մեր այգու ամենափոքր բույսից մինչև ամեն ծաղկած ծառը - ամենքս օգտվում ենք Ձեր գույնզգույն, ջերմացնող ճառագայթներից և ուրախանում ենք:

Այժմ, թանկագին բանաստեղծ, թույլ տվեք մեր անկեղծ սրտից միաբերան Ձեզ ասել՝ ապրեք երկար, շատ երկար, միևնույն եռանդով առաջ տանեք Ձեր ստեղծագործող աշխատանքը և մարգարեական ներքին զգացմունքով նախատեսե՛ք մեր ապագան և ջերմացե՛ք ամենքիս սրտերը:

5 ապրիլի, 1919, Տփլիսի»:

*) Հավաքություն ողջույնի խոսքեր են ասվում նաև ռուսերեն և վրացերեն (ԳԱԹ ԹՖ, 1246: ԹԹ, 3592, 3593):

ԳԱԹ ԹՖ, 1296: ԹԹ, 3691:

Ապրիլի 6 - Սերգեյ Գորոդեցկու նամակը Թոմանյանին՝ Թիֆլիսից.

«Дорогой Иван Фадеевич,

За один день я не умел составить сколько-нибудь подробного проэкта распределений продуктов среди интеллигенции. Поэтому разрешите мне сейчас изложить только основные положения проэкта, которое мне представляется целесообразным. Если они будут приняты вашим совещанием, я в кратчайший срок разработаю проэкт.

Проект имеет три части

I Администрация

II Транспорт.

III Распределение.

I Администрация. Во главе всего дела стоит Бюро.

1) Представитель Америки. 2) Представители местных финансов, 3) Представители общественных деятелей, литераторов

и т. д. Ее функции: 1) Высшая администрация, 2) Финансы, 3) Контроль, 4) Ревизия.

II Транспорт. Доставка продуктов до Батума здесь не рассматривается. Для доставки от Батума до Тифлиссских районных складов необходимы следующие учреждения:

1. Батумская контора.

а) Получает товары с пароходов.

б) Устраивает транзитный склад в Батуме.

в) Доставляет товары на станции Тифлис.

2. Тифлисская контора.

а) Получает товары со ст. Тифлис.

б) Устраивает Главный Тифлиссский склад.

в) Доставляет товары в районные склады.

3. Районные склады в Тифлисе.

а) Получают товары из главного Тифлиссского склада.

а) Выдает товары районным комитетам.

III Распределение. Для распределения продуктов могут быть использованы следующие домовые и районные комитеты. Во случае если они откажутся от этого, могут быть учреждены свои домовые и районные комитеты из лиц, получающих продукты.

1. Районные комитеты.

а) Получают продукты из районных складов.

б) Выдают продукты домовым комитетам по **карточкам**, предъявляемыми последними.

2. Домовые комитеты.

а) Составляют карточки получателей.

б) Получают продукты из Районных комитетов.

в) Выдает продукты получателям.

Такая организация представляется мне наиболее гибким.

Буду ждать Вашего ответа.

Крепко жму Вашу руку.

Ваш С. Городецкий».

ЦиѢ ѢѢ, 1103 (17 лр.).

Ասորիկի 6 - IV արական գիմնագիայում ծնողական ժողովի նախաձեռնությամբ կազմակերպվում է «շքեղ ու ճոխ համդիսավոր հոբելյան ի պատիվ բանաստեղծ Յովի. Թումանյանի»:

Մամուլը հաղորդում է, որ՝ «դահլիճի մեջտեղ կախված էր բանաստեղծի մեծադիր լուսանկարը դափնյա պսակով զարդարված: Պատկերը մնալու է ընդմիշտ ռուս ու վրաց բանաստեղծների շարքում»:

Վարագույրը բացվելուն պես գիմնագիայի երգչախմբի կատարմամբ բեմից հնչում է Անտոն Մայիլյանի երաժշտական ծոնը Թումանյանին՝

Բերեք ծաղիկներ, պսակներ հյուսենք,

Հայոց պոետի ճակատը զուգենք

բառերով: Մանկահասակ աշակերտները մեծ դափնեպսակ են դնում բանաստեղծի ոտքերի առջև: Հայերեն և ռուսերեն արտասանվում են Թումանյանի ստեղծագործություններից, կատարվում է «Ախթամարը»՝ Անտոն Մայիլյանի երաժշտական ձևավորմամբ:

Կարդացվում է գեներալ Բագրատունու շնորհավորանքը և նրա կողմից 1000 ռ. է դրվում բանաստեղծի տրամադրության տակ:

Հանդեսին ներկա մինիստր Նոյ Ռամիշվիլին և Թումանյանը ամբողջ ընթացքում աշխույժ խոսակցության մեջ էին: Նրանք, ինչպես հաղորդում է մամուլը, «իրենց խոսակցության միջոցին միշտ շեշտում էին, որ հայ-վրացական կոնֆլիկտը մի թյուրիմացություն է, և որ վրացին առանց հայի և հայը առանց վրացու անկարող են ապրել, և որ երկու ժողովուրդների մեջ պետք է տարածել համերաշխության գաղափարը: Մինիստրը առաջարկում է խմել ազատ ու հպարտ Հայաստանի կենացը, իսկ բանաստեղծը՝ գեղեցիկ ու ազատ Վրաստանի»:

Վերջում տրվում է ճոխ ընթրիք, որ տևում է մինչև ուշ գիշեր:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 74:

Ասորիկի 7 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուլտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Սարգսյան, Աբովյան, Կանայան, Դեմիրճյան:

1. Թումանյանը Հայկական ակումբի կողմից իրեն տրամադրված 1500 ռուբլին հանձնում է վարչության տնօրինությանը:

2. Կոոպերատիվի համար դիմել է ամերիկացիներին, որ ցածր

գներով մթերք տրամադրեն, որովհետև Թիֆլիսի ինտելիգենցիան շատ ծանր դրության մեջ է: Բանկերից մեկն էլ դրամ է բաց թողնում այդ մթերքի հանդեպ անհրաժեշտ չափով:

Ամերիկացիները խնդրել են մի վեց հոգի ներկայացնել, բոլոր ազգերը, բայց ամեն մեկը իր համար:

Ինտելիգենցիան գրողներ, գեղարվեստագետներ, դպրոց, մամուլ:

Մնում է ամերիկացիների վերջնական համաձայնությունն ստանալ:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 1067: ԹԹ, 604:

Ապրիլի 10 - Ռուսերեն թարգմանությամբ տպագրվում է («Кавказское слово», 1919, թիվ 66) Թումանյանի «Իմ պատասխանը Լևան Կիպիանուն» հոդվածը:*

Վրաց գրող Կիպիանու՝ Թումանյանին ուղղված երկու հրապարակային նամակներից առաջինի պատասխանն է:**

Երկխոսության թեման հայ և վրաց ժողովուրդների միջև ծագած հակամարտության և հաշտության հեռանկարների մասին է: Թումանյանի համոզմամբ՝ հայ, վրացի, ինչպես նաև կովկասաբնակ մյուս այլազգի հասարակ ժողովուրդը միշտ էլ հաշտության ու համերաշխության կողմնակից է, նրանց հակամարտության մղում են իշխանությունները և կառավարությունները. «Ժողովուրդներին խորթ է կաթինետում նստած պոլիտիկոսի նեղսրտությունը և վայրկյաններով ապրող կառավարիչների հիվանդ նյարդայնությունը: Նրանք բնության մեջ ու բնության հետ ձուլված են ապրում, և դարերով ապրած կյանքն ու փորձն է նրանց առաջնորդում: Էդ է պատճառը, որ նրանք էսքան էլ կարողանում են դիմանալ էն բոլոր թույլների, որ ներարկում են նրանց տանջված մարմնի մեջ հազար ու մի տեսակ կառավարիչներ ու դեկավարներ, ամեն տեսակ բարձր գաղափարի անունով և կամ ուղղակի բարբարոսաբար»:

Կիպիանու հարցին թե՝ «ի՞նչ պետք է անենք, որ մոտենանք իրար», պատասխանում է «Դուք էլ երկյուղով եք մայում էն անդունդին, որ փորել են մեր ժողովուրդների մեջ մեր կառավարող շրջանները: Բայց չէ՞ որ ժամանակն աշխարհքին նոր լոզունգ է տվել՝ էդ տեսակ դեպքերում երես դարձնել կառավարող շրջաններից և նայել հասարակ ժողովրդին, ամեն մի ազգի ընդհանրությանը, և իսկույն ձեր երկյուղը կանցնի»: Օրինակներ է հիշում, թե ինչպես

հայ և վրացի, հայ և թուրք հասարակ մարդիկ նույնիսկ հակամարտության ամենաթեժ օրերին բարի մարդկային վերաբերմունք են ցուցաբերել միմյանց նկատմամբ: Այսպես, հայ և վրաց հակամարտող կողմերին բաժանող կամրջի երկու ծայրերին կանգնած են զինված պահակներ: Պարզվում է, որ նրանք մտերիմ ընկերներ են, պատերազմի ժամանակ միասին կռվել են կողք կողքի: Հենց որ տեսնում են՝ իրենց հսկող չկա, միմյանց դեմ են վազում և կամուրջի մեջտեղում գրկախառնվում. «Ժամանակն է, որ մեր կառավարող շրջաններն էլ հասկանան ժամանակի ու ժողովուրդների պահանջները, իրենք էլ մի քիչ բանաստեղծ դառնան, իրենք էլ, բանաստեղծների ու հասարակ ժողովրդի հետ միասին, գան եղբայրության կամուրջի մեջտեղը՝ եղբայրորեն համբուրվելու: Այլապես նրանց էլ կհասնի էն վատ կառավարիչների ճակատագիրը, որ խորտակվում ու անեծքով են կորչում իրենց վատ ճանապարհին՝ եղբայրության, խաղաղության և արդար աշխատանքի դրոշմ տանող ժողովուրդների ոտքերի տակ:

Էս համոզմունքով ու էս զգացմունքով մենք իրար կգանք և մեզ հետ բոլոր նրանք, որոնք բանաստեղծ են հոգով:

Ավելի թափով ու միաբան կանցնենք գործի, մի լուսավոր ու փրկարար գործի»:

*) Հայերեն բնագիրը (ԳԱԹ ԹՖ, 229) բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել:

**) Լևան Կիպիանու երկու բաց նամակները Թումանյանին՝ «Из нусеми к Ов. Туманяну» ընդհանուր խորագրով տպագրվել էին «Кавказское слово» թերթի 1919 թ. 51-րդ և 62-րդ համարներում, մարտի 22-ին և ապրիլի 4-ին:

ԵԼԺ 7, 389-393, 656-657:

Ապրիլի 12 - Տպագրում է («Ժողովրդի ձայն», 1919, թիվ 78) «Պարոն Վ. Սիրվանյանի առաջարկի առիթով» հոդվածը:

Սիրվանյանն իր «Մեր հոբելյանները» հոդվածում («Ժողովրդի ձայն», 1919, թիվ 75), նկատի ունենալով Թումանյանի 50-ամյա հոբելյանի հանդիսությունները, առաջարկում է ծափերի ու մեծարանքների փոխարեն հոբելյարին ապահովել, որպեսզի կարողանա զբաղվել միայն իր գործով:

Ի պատասխան այդ առաջարկի՝ բանաստեղծը գրում է. «Պարոն Սիրվանյան, եթե իմ հոդվածներից էլ առաջ բերեր մեր հոբելյանների մասին,* կտեսներ, որ ես միանգամայն ուրիշ կարծիքի եմ: Երբ ժողովուրդը հոբելյան է անում, նա էդ օրերում վերահաս-

տատուն կամ գնահատում է հորեյարին և իր զգացմունքներն է մեջտեղ բերում, այսինքն ամենամեծը, ինչ որ էդ օրը կարելի է բերել: Ինչ վերաբերում է ապահովությանը, էդ հարցը պետք է լինի ընդհանուր ձևով, ամենքի համար, ոչ թե մասնակի ու հենց հորեյանի օրը:

Շնորհակալություն հայտնելով պ. Սիրվանյանին իր ազնիվ ցանկության համար՝ ես խնդրում եմ մեր հասարակությանը իմ վերաբերությամբ արձագանք չտալ նրա կոչին և մամուլի խնդիր չշինել իմ խնդիրը, որպես մասնավոր խնդիր»:

*) Սիրվանյանը մեջ է բերում Ալ. Ծատուրյանի քառատողը.

Օ՛, հավատացեք անծայր երկնքում
Չեն փայլում այնքան բազմաթիվ աստղեր,
Որքան լսում եմ ես հայի կյանքում
խոսքե՛ր և խոսքե՛ր...

ԵԼԺ 7, 393, 657:

Ապրիլի 12, Թիֆլիս - Հեռագիր Մոսկվա՝ ВЦИК քարտուղար Վառլամ Ավանեսովին.

«Радио Ваше от 30 марта получено. Варвара Джапаридзе и сыновья Шаумяна ныне освобождены без всяких порук и каких либо ограничений свободного выезда, о чем Джапаридзе сама сообщает Сталину в письме, которое послано в Москву специальным курьером. Пока ни Джапаридзе, ни сыновья Шаумяна не выражают желания выехать с Кавказа. Джапаридзе поедет в Россию, когда узнает от Сталина, где ее дети, как она пишет ему. Поэтому меры к обмену представляются ненужными, и мы просим предоставить Завриеву и Назарьяну полную свободу выезда.»*

Председатель литературного общества

Ов. Туманян».

*) Այս մասին տե՛ս նաև <Մարտի երրորդ տասնօրյակ>:

ԵԼԺ 10, 309:

Ապրիլի 12 - Սերգեյ Գորոդեցկուց նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Дорогой Ованес Фадеевич,

Посылаю Вам на благословение, что успел перевести из Ваших стихов «Проклятую невесту», напечатаем в пасхальном

номере, по этому, если где неверно, сообщите поскорей, чтоб я успел поправить.

Целую Вас крепко, как люблю.

Ваш С. Городецкый».

ԳԱԹ ԹՖ, 1104 (297 լր.):

Ապրիլի 15 - Սարգիս Աբովյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Սիրելի և թանկագին Հովհաննես.

Անսահման ցավում եմ, որ անկարող եմ այս երեկո ներկա լինել իմ սիրելի դպրոցում և անչափ սիրված ընկերոջս տոնախմբության շարունակության մասնակցել...:

Ինձ այդտեղից կանչեցին քաղաքային դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիները մի անհրաժեշտ և անհետաձգելի գործի պատճառով:

Ցավելով բոլորից ներողություն եմ խնդրում բացակայության համար: Համոզված եղիր, որ միշտ հարգված ու սիրված ես, և եթե անձամբ այդտեղ չեմ, սակայն հոգով հետո եմ:

Քեզ միշտ սիրող՝ Սարգիս Աբովյան»:

ԳԱԹ ԹՖ, 739 (214 լր.):

Ապրիլի 16 - Գրում է «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» («Չէ՛, չի լռել մեծ Շոթայի...») բանաստեղծությունը:

ԵԼԺ 1, 304-305, 639-640:

Ապրիլի 19 - Տպագրվում է Վ. Խորենիի «Գյուղական աշխարհի երգիչը» հոդվածի շարունակությունը:*

Հոդվածի այս մասը կրում է «Հովի. Թումանյանի բանաստեղծության քննարկական վերլուծությունը» ենթավերնագիրը:

Ամբողջապես նվիրված է բանաստեղծի հայրենասիրական երգերի վերլուծությանը՝ իր նախընտրած սոցիալ-քաղաքական դիտակետից: Հիմնական կանխադրույթն այն է, թե Թումանյանի հայրենասիրությունը տարբեր է պատկանյանական հայրենասիրությունից, որովհետև նա ժողովրդի ազգային-քաղաքական կացությունը անբաժան է դիտում սոցիալականից, նրա հայրենասիրությունը մեկ ամբողջություն է կազմում բնապաշտական և հումանիստական համամարդկային իդեալների հետ: Եվ այս ամենը բանաստեղծի երգերում արտահայտվում է իբրև խորապես զգացված անձնական-

քնարական ապրում. «Անհնարին է լինում նրա մոտ արտաքին սոցիալականը տարբերել ներքին ենթակայականից: Եվ սրա մեջ է Թումանյանի բանաստեղծական տաղանդի ինքնօրինակությունը: Նա ամեն ինչ, նաև հայրենիքի բնության սերը, նրա «հազարավոր ցավերը», նրա տառապանքը ապրում է բանաստեղծորեն, ապրում է նուրբ, ապրում է համամարդկային մտքով ու վեհ զգացմունքով, բնականորեն, անխառն, էսթետիկական համակումով և համակրումով, զերծ ամեն տեսակի արտաքին, ռոպեական, պաշտոնական նկատումներից, շարժառիթներից կամ թելադրանքներից: Նա իր հայրենիքը սիրում է ոչ թե «որովհետև» կա «նրա համար» և ոչ թե որևէ նեղ ազգայնական կամ ուռա-պատրիոտիստական մոտիվներից: Ո՛չ:

Այդ Գամառ-Քաթիպայական հայրենասիրությունը խորթ է նրա հոգուն: Թումանյանի հայրենասիրությունը մի բնական զգացմունք է դեպի հայրենի, հարազատ բնությունը ու ժողովուրդը: Եթե կուզեք դա հայրենասիրություն չէ, այլ հայրենական բնասիրություն կամ բնապաշտություն ու ժողովրդասիրություն է: Այդպիսի հայրենասիրությունից հեռու է նախ ամեն տեսակ նեղ ազգայնականությունը և ապա՝ դա անբաժան է իրական ժողովրդասիրությունից ու իսկական մարդասիրությունից: Մի մաքուր, մի վեհ հումանիստական գեղապաշտ, բնապաշտ ու մարդապաշտ շունչ ունի այդ հայրենասիրությունը, և այդ է հայ աշխատավոր ու այդ իսկ խաղաղասեր ժողովրդի իսկական հայրենասիրությունը»:

Իր այս դիտարկումները հաստատելու համար քննադատը մանրամասնորեն վերապատմում-վերլուծում է Թումանյանի «Նախերգանքը»՝ մեկ-երկու տեղ հիշելով նաև «Ամուշի» առաջին երգի սկզբի՝ «Կանչում է կրկին, կանչում անդադար...» հատվածը և «Հայրենիքիս հետ» ժողովածուն:

Եվ եզրակացությունը. «Այս է իսկական հայրենասիրությունը. և Հ. Թումանյանը բանաստեղծական ինտուիցիայով և ժողովրդի մարդու բնահարազատ ապրումներով կարողացել է տալ դրա էությունը՝ ճշմարիտ կամ դեմոկրատական հայրենասիրության հոգեբանությունը՝ անմեղա գեղարվեստական պատկերացումով»:

*) Սկիզբը տե՛ս փետրվարի 20, մարտի 14, մարտի 15:

«Աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 77:

Ապրիլի 19 - Անդրանիկ Օզանյանի երկտողը Թիֆլիս՝ Թուսմանյանին՝ Էջմիածնից.

«Սիրելի Յովհաննես,

Էջմիածնում գտնվում եմ իմ զորամասով: Եթե հարմարություն ունես, արի այստեղ, ցանկանում եմ քեզ տեսնել:

Գեներալ-մայոր Անդրանիկ»:

ԳԱԹ ԹՖ, 892 (503):

Ապրիլի 20 - «Կովկասի մեջ. հայ դյուցազներգության նախորդակի կոչերը» խորագրի ներքո տպագրվում է Յովհ. Թումանյանի «Նամակ Անդրանիկին» բաց նամակը և Անդրանիկի պատասխանը (տե՛ս 1917, դեկտեմբերի 23):

«Ժողովուրդի ձայնը», Պոլիս, 1919, թիվ 87-178:

<Ապրիլի երկրորդ տասնօրյակ> - Գրում է «Իմ պատասխանը Լևան Կիպիանուն» հոդվածի երկրորդ մասը:*

Անդրադառնում է վրաց գրողի՝ իր երկրորդ նամակում արտահայտած վրդովմունքին, թե «հայ մշակները վատ են վերաբերվել էն քուրդ երեխաների հետ», որոնք հանձնված են եղել վրացիների խնամքին:

Գրում է. «Ինձ մնում է միայն մի բան, երանի տալ Ձեզ, այո՛, երանի Ձեզ, որ միայն էդ անգետ մշակների արարքն եք տեսել:

Ես դրանից շատ ավելի վատ դեպքերի եմ ականատես եղել, էն էլ ոչ միայն հասարակ մշակների կողմից, այլ հաճախ ինտելիգենտ մարդկանց և նույնիսկ հայտնի մարդկանց: Եվ էդ երևույթները ինձ շատ են զարմացրել ու շատ են խորասուզել ծանր մտածմունքների մեջ և մինչև էսօր էլ չեմ կարողանում հաշտվել էն մտքի հետ, թե հիրավի իմ տեսածը ճշմարիտ է:

Ու Յամլետի նման շարունակ մտածում եմ, թե գուցե չար դևն է մեր մտքերը պղտորում, անկարելի է, որ էդպես լինի իրականության մեջ:

Սա մի միամտություն է, որից մեզ նման միամիտները չեն ազատվելու, ինչպես որ էդ գազանություններից էլ կյանքը շուտով չի ազատվելու:

Դեռ պատերազմի սկզբում մեր թերթերը գրում էին գերմանացիների զորքի բարբարոսությունների դեմ, շատ վրդովվողների շարքում ես էլ վրդովվեցի: Էնքան վրդովվեցի, որ մի խիստ բողոք էլ գրեցի գերմանացիների բարբարոսության դեմ:** Դրանից հետո դեպքը

բերեց գնացի դեպի ֆրոնտը*** և էնտեղ մոտիկից ծանոթացա թե՛ ռուս զորքի և թե՛ հայ զորքի արարքների հետ, որն իմ աչքով տեսա, որն իմ ականջով լսեցի հենց իրենց բերանից: Դրանից հետո հավաստի աղբյուրներից պատմեցին և տեսա, որ առհասարակ ամենքն էդպես են, իրարից մի քիչ տարբեր ձևերով: Մինչև բուլշևիկները...****

*) Պահպանվել է (ԳԱԹ ԹՖ, 229) հոդվածի այս մասի թերի սևագիր տարբերակը միայն:

**) Նկատի ունի իր «Ապաշավանք» հոդվածը (տե՛ս 1914, սեպտեմբերի 18):

***) Նկատի ունի իր երկու այցելությունները ռազմաճակատ՝ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1915 թ. հունիս-հուլիս ամիսներին:

****) Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

ԵԼԺ 7, 503-504, 676:

Ապրիլի 22, Թիֆլիս - Նամակ Երևան՝ Թրիստափոր Վերմիշյանին:

Երկու դստեղի գալիս են Երևան՝ աղ տանելու. խնդրում է նրանց օգնել:

Շնորհակալ է, որ Վերմիշյանը պաշտպանել է իրենց «դժբախտ քննիչ հանձնաժողովի գործը», որ այնուամենայնիվ տապալվել է պառլամենտում՝ չնայած կառավարության մեծամասնության աջակցությանը: Խոր ափսոսանք է հայտնում դրա համար. «Եվ էն էլ հայ ժողովրդի կրած տանջանքների ու վնասների գործը, նրա արդար պահանջի գործը, միլիոնավոր կեղեքվածների ու թալանվածների գործը - և էդ մարդիկ, որոնք էդքան անկարևոր են համարում էդ գործը ու էդպես անցնում դրա վրից - էդ մարդիկ համարվում են էդ ժողովրդի ներկայացուցիչները: Եվ բանից դուրս է գալիս՝ ամբողջ աշխարհքը պահանջ ունի՝ բացի հայությունից:

Այնինչ, ամերիկյան հյուպատոսը անցյալ օրը, իրեն մոտն էի, ինքն առաջարկեց, որ երեք շաբաթից հետո գնում են Փարիզ, տվեք բյուրոյի գործերը հետս տանեն, նույնիսկ ցույց տվեց, թե ինչ գրեմք ու ինչ անի մեր պատգամավորությունը, խոստացավ ինքն էլ էնտեղ օգնի: Վերջապես մյուս կողմից էլ մեր պատգամավորությունն է գնում - ամեն կողմից նոր նյութեր են ղրկում, Հյուսիսսային Կովկասից ահագին գաղթականություն է գալիս նոր պահանջներով - իսկ մենք ամեն բան թողինք կիսատ ու բյուրոյի դռները փակեցինք*»:

*) Բյուրոն (քննիչ հանձնաժողով, համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասները որոշող բյուրո) պաշտոնապես հիմնվել է 1918 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀՍՍ ընդհանուր ժողովում: Նախագահ է ընտրվել Թու-

մանյանը: Չնայած նախագահի գործադրած ջանքերին՝ բյուրոն իր գործունեությունը դադարեցնում է 1919 թ. ապրիլին:

ԵԼԺ 10, 309-310, 652-653:

Ապրիլի 24 - Երկտող Համազասպ Համբարձումյանին.

«Սիրելի Համազասպ,

Էս իրիկուն կգամ, երկու խոսք ունեմ ասելու, **կարևոր** գործեր կան:

Քո **Հ. Թումանյան**»:

ԵԼԺ 10, 310:

Ապրիլի 26 - Մամուլը հերքում է այն հաղորդումը, թե Հովհ. Թումանյանը նշանակվել է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական միսիայի խորհրդական:

Տեղեկացվում է, որ այդ պաշտոնում նշանակվել է իշխան Սիքայել Թումանյանը:

«Աշխատավոր», 1919, թիվ 80:

Ապրիլի 26 - Տպագրվում է Վ. Խորենիի «Գյուղական աշխարհի երգիչը» հոդվածի շարունակությունը:*

Հոդվածի այս մասն սկսվում է Թումանյանի «զուտ հայրենասիրական, ժողովրդական-քաղաքացիական երգերի» մասին նախնական դիտողություններով. «Հակամարդկային զգացումներից զերծ և ժողովրդասիրությամբ են տոգորված Հ. Թումանյանի նաև զուտ հայրենասիրական՝ ժողովրդական-քաղաքացիական երգերը: Հումանիստական և միջազգային խաղաղասիրական մի վեհ շունչ կա այդ երգերի մեջ: Ոչինչ այդտեղ նեղ-ազգայնական, անհաշտ ու օտարամերժ: Հարազատ ժողովրդի ու հայրենիքի ազատության երգը ներշունչ ու տոգորուն է ժողովրդների եղբայրության ու համերաշխության վսեմ զգացմունքով: Ու այս հումանիստորեն ներշունչ և միջազգայնորեն տոգորուն՝ իսկական ու ճշմարիտ-դեմոկրատիկ հայրենասիրությունը բնականաբար իր ներքին հոգեբանական ու տրամաբանական հետևողականությամբ հասնում է փիլիսոփայական ընդհանրացման- տիեզերական հայրենազգացման: Հայրենի բնության ու հարազատ ժողովրդի մաքուր սերը, իբրև այդպիսին ընդհանրանում է բնականաբար, և ծավալվում է մինչ տիեզերքի՝ «Անհայտ-Անհունի» սահմանները:

Ճշմարիտ հայրենասիրությունը փոխվում է եթիկական ու կրո-

նական կոսմոպոլիտիզմի, որովհետև այդպիսի այլասեր ու հանդուրժող հայրենասիրությունը ժողովրդասիրություն է, իսկ ժողովրդասիրությունը մարդասիրություն է, ճշմարիտ մարդասիրությունն էլ միջազգայնություն ու աշխարհաքաղաքացիություն է: Սիրելով իր հարազատ ժողովրդին իբրև մարդկության ամբողջի մի փոքրիկ մասնիկը և հայրենի աշխարհը իբրև մեծ աշխարհի՝ մեր տիեզերական հայրենիքի մի սիրուն, գողտրիկ ու հարազատ ուրոտ, մենք ապրում ենք ողջ Մարդկության և Անհունի կյանքով:

Իր ժողովրդի մարդկանց անկեղծ ու մաքուր սիրելով՝ նա սիրում է բոլոր մարդկանց, ողջ մարդկությունը, իսկ հայրենի բնության անկյունում իրեն հարազատ ու երջանիկ զգալով՝ նա ապրում է դրա մեծ ամբողջի՝ տիեզերքի՝ «Անհունի կամ Անհայտի կյանքով», ինչպես այդ կոչում է բանաստեղծը:

Դեպի հայրենիք ձգտումը հանգում է «դեպի Անհունը» տենչանքի: Հայրենի միջավայրում՝ բնության հարազատ ծոցում է նա զգում իր և բնության սերտ միությունը: Այստեղ է, որ նա զգում է անհատական և տիեզերական կյանքի «Անհունի» գոյակից միությունն ու ամբողջությունը»:

Իբրև այս դիտարկումների «ապացույց» բերում է «Հայրենիքիս հետ» և «Վայրէջք» բանաստեղծությունները: Դրանց բովանդակությունը յուրովի ներկայացնելուց հետո ամփոփում է իր հիմնական ասելիքը. «Հայրենիքի կարոտը՝ հայրենի բնության սերն է, որ իր իսկությամբ ու խորունկությամբ հասնում է բնապաշտության ու հանգում էսթետիկական պանթեիզմի, ինչպես ամեն մի անմիջական ու մաքուր բնազգացում և անկեղծ ժողովրդասիրություն»:

Հողվածի երկրորդ մասը ներկայացվում է «Հայրենասիրություն-ժողովրդասիրություն-մարդասիրություն» խորագրով: Խոսվում է «Հայոց վիշտը», «Մեր նախորդներին», «Տրտմության սաղմոսներից» բանաստեղծությունների մասին:

Առաջինի վերլուծությունից եզրակացնում է. ««Հայոց վիշտը»՝ հայրենի կոլեկտիվի մեծ տառապանքը, կյանքի ու մահվան ողբերգությունն է, որ համակում է ամբողջովին նրա հոգեկից ու հարազատ անդամին: Կոլեկտիվի վիշտը դառնում է անհատական վիշտ: Անհատը իրեն հոգեպես միանգամայն անբաժան է զգում իր սոցիալական ու հայրենի ամբողջից»:

Երկրորդի մասին. «Հայրենիքի սոցիալական վշտի ուժգին ու խորունկ ապրումը մոռացնել է տալիս անհատական սերն ու պաշ-

տամուքները- գեղարվեստական թե կրոնական: Ավելին: Այս շարժառիթներից նա անաստվածյան ըմբոստացումներ է ունենում: Չարիքի մեծությունից ու անմտությունից ընդվզում է նրա հոգին անգամ Աստծո դեմ:

Իսկ երրորդի իմաստը մեկնաբանում է այսպես.

«Չարիքի՝ հայ ժողովուրդի անմիտ ու անծայր տանջանքի ու Աստծո գոյությունը նա իրար հետ հաշտեցնել չի կարողանում և իր կրոնաբարոյական ցասումն է պոռթկում իր սոցիալական «Տրտմության Սողոմոսների» մեջ».

*) Սկիզբը տես փետրվարի 20, մարտի 14, մարտի 15, ապրիլի 19:

«Աշխատավոր», 1919, թիվ 80:

<Ապրիլի 29>, Թիֆլիս - Նամակ Երևան՝ դստերը՝ Աշխենին:

Հետաքրքրվում է Երևանում դստեր և նրա ընտանիքի վիճակով: Մտահոգ է որդու՝ Համլիկի կրթության և ընդհանրապես նրա ապագայի հարցով: «Վերջերս օրիորդ Նվարդի խնդիրն էլ տաքացել է».* Համլիկը գալիս է Երևան, կպատմի:

Հոգնել է ամենօրյա զանազան հանդիպումներից, հրավերքների կանչվելուց և հրավերքներ ունենալուց. երազում է խաղաղ հանգստի մասին:

Ամհանգիստ է Երևանում ծառայող որդիների՝ Համլիկի և Մուշեղի համար. «Ասում են՝ հեռագրով կանչել են բոլոր օֆիցերներին: Համլիկին հույս ունեմ, որ կպահեն իր պաշտոնում:** Չթողնես գնա ուրիշ տեղ: Մուշեղն էլ արդեն էդտեղ է հաստատվել:***

Դրությունը հետզհետե էնքան է խախտւտանում իմ աչքում, և բոլոր մեծ ու փոքր կառավարիչներն էլ էնքան հիմար են թվում, որ շարունակ սպասում են նորանոր աղետների: Ով գիտե, գուցե աչքս է վախեցել»:

Ամդրանիկը եկել է Թիֆլիս և իջել իրենց մոտ: Նրա հետ իրենց «սովորական դալմադալը» և «վերջին օրերի հիսնամյակի**** դալմադալ» տունը դարձրել են «հարսանքատուն»:

Ամդրանիկն իրեն պատմել է «Երևանի դեպքը», որ «քիչ էր մնացել խայտառակությունը կատարյալ լինի»:*****

*) Խոսքը վերաբերում է Նվարդի ամուսնությանը, որ այդ ժամանակ չի կայացել:

**) Համլիկ Թումանյանը աշխատում էր Հայաստանի Հանրապետության խորհրդարանում որպես դիվանատան վարիչ:

***) Մուշեղ Թումանյանը Երևանում զինվորական ծառայության մեջ էր: Հետո ընտանիքով տեղափոխվում է Կարս, որտեղ զինվորական ծառայությանը համատեղ ուսուցչություն էր անում ռեալական դպրոցում:

****) Խոսքը բանաստեղծի 50-ամյա հոբելյանի նախապատրաստությունների մասին է (տե՛ս <Փետրվարի երրորդ տասնօրյակ>):

*****) 1919 թ. ապրիլի 2-ին, Անգեղակոթ գյուղում հրաժեշտ տալով զանգեզուր-ցիներին և ցրելով զորքի մի մասը, Անդրանիկը շտապում է դեպի Էջմիածին: Ապրիլի 13-ին, խուսափելով Հայաստանի կառավարության հետ շփում ունենալուց, առանց Երևան մտնելու, հասնում է Էջմիածին, որտեղ, զինաթափելով զորքը և զենքը հանձնելով կաթողիկոսին, պատրաստվում էր թողնել Էջմիածինը, երբ լուր է հասնում նրան, թե Երևանում մի ոստիկան զենք գտնելու պատրվակով խուզարկել է իր անզեն զինվորներից մեկին և, վերցնելով դրամապանակը, փորձել է փախչել: Ձիմվորը դիմադրել է, և այդ համարձակությունն առիթ է դարձել լուրջ միջադեպի:

Իմանալով այդ մասին՝ Անդրանիկը զայրացած, պահի ազդեցությամբ, որոշում է հարձակվել Երևանի վրա, բայց Էջմիածնի հոգևորականության, դաշնակից պետությունների ներկայացուցիչների, Երևանից Էջմիածին հասած պատվիրակների միջամտությամբ կանխվում է ընդհարումը:

ԵԼԺ 10, 311-312, 664-665:

<Ապրիլ>, Թիֆլիս - Պաշտոնական նամակ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանգուլյանին*:

Նամակի առաջին մասում հիշեցնում է, թե ինչպես ինքը Ռուսական զորքերի՝ Կովկասից հեռանալուց հետո Ազգային խորհրդին զգուշացրել է մեր ժողովրդին սպառնացող նոր վտանգների մասին և առաջարկել դրանք կանխելու որոշակի ծրագիր. «Մեր ընդհանուր վիճակը, գործերի դրությունը, ուժերի հարաբերությունը նկատի ունենալով և ծանոթ լինելով մեր անցյալին՝ ես համոզված էի, որ ռուսների՝ Կովկասը թողնելուց հետո մենք չենք կարողանալու պահենք մեզ թողնված ֆրոնտը և բերդերը՝ իրենց ռազմական ու պարենավորման հսկայական պահեստներով: Ինձ թվում էր, որ պետք է մեր ժողովուրդը բոլոր հովիտներից ու դաշտավայրերից տեղի տա և նորից մտնի իր աշխարհի հին բնական միջնաբերդերը՝ Լեռնաստանները, ինչպես պատահել է մեր պատմության ընթացքում շատ անգամ, և էս դեպքում Ռուսահայաստանում Կուրի և Արաքսի մեջ գտնվող Լեռնաշխարհում – Լոռի, Ղազախ, Շամշադին – կլինեի զինված ու ապահով, և մեր ամեն տեսակ մթերքների պահեստները մեր Լեռնաշխարհքում կլինեն, որոնք պետք է ընկնեին միայն հայ ժո-

ղովրդի հետ, երկրորդը – չէին տալ եղ ամենը թշնամուն բերդերը թողնելիս, և սոված թշնամուն կշտացնել և ուժեղացնել ըստ ամենայնի»:

Ազգային ժողովը ուշադրության չի արժանացնում բանաստեղծի առաջարկը, դրա փոխարեն այդ առաջարկը հետաքրքրում է Ամերիկայի և Անգլիայի ներկայացուցիչներին. «Ազգային խորհրդի հետ խոսելուց հետո նրանք ասել են, որ Ազգային խորհուրդը լավ չի ըմբռնում, իրենց կարծիքով, գործերի լրջությունը, և առաջիկայում, հիրավի, կոտորած է սպասում հայ ժողովրդին, քանի որ նա լավ չի ըմբռնում իր դրությունը ու չի կանխում եղ ամենը»:

Ամերիկացիների և անգլիացիների առաջարկով ինքն ստանձնում է ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործը՝ սկսելով Լոռուց. «Նրանք խոստանում էին շատ խոշոր գումարներ դնել եղ գործի վրա՝ նկատելով եղ դիմադրությունը, դաշնակիցների կռիվը և եղ լեռնաշխարհների և Ղարաբաղի ուժեղացումը»:

Հիշեցնում է, որ «մինչև Ազգային խորհրդի կողմից ընդհանուր լիազոր» նշանակվելը** և Ղարաքիլիսա մեկնելը*** հիմնականում ամերիկացիների և անգլիացիների տրամադրած միջոցներով զբաղվել է ինքնապաշտպանության համար զենք ու զինամթերք ձեռք բերելով. «Ես համձն առա սկսել մի համեստ գումարով՝ փորձելու, թե ինչքան է հեշտ ու հնարավոր, որպեսզի կարողանամ արդարացնել ինձ վրա դրած հույսն ու վստահությունը: Սկզբի համար վերջրի միայն 2 հազար և հայրենակցությունների շրջաններից հանձնաժողովներ կազմելով, հանձնաժողովներն էլ շատ հմուտ մարդիկ, հրավիրվեցին զենք գնելու և տեղափոխելու, և գործն սկսվեց»:

Վերջում բացատրություններ է տալիս կատարված ծախսերի և դրանց հաշվետվությունների մասին:

*) Պահպանվել է նամակի սևագիր տարբերակը՝ միջից պակասող էջերով:

**) Հետագայում Թումանյանը հրաժարվում է Ընդհանուր լիազորի պարտականություններից (տե՛ս 1918, հուլիսի 14):

***) Թումանյանը Ղարաքիլիսա մեկնել է 1918 թ. մայիսի 25-ին և մնացել մոտ մեկ ամիս:

ԵԼԺ 10, 312-316, 665-666:

Մայիսի 1 - Տպագրվում է հոդված՝ «Մայիսի մեկը և Հովհաննես Թումանյանը» խորագրով, Ս.* ստորագրությամբ:

Թումանյանի ծննդյան 50-ամյակի կապակցությամբ հիշում է Պուշկինի՝

Самодержавный властитель,
Тебя, твой родя ненавижу;
Твою гибель, смерть детей
Я с злобной радостью увижу...

քառատողի՝ Թումանյանի թարգմանության պատմությունը:**

Այնուհետև. «Հովհաննես Թումանյանը բանվորության երգիչը չէ: Նա չի երգել կոլեկտիվ աշխատանքի քաղցրությունը, բանվորի ստեղծագործող բազուկը, մեքենայի հուզիչ աղմուկը, գործարանի ծուխն ու ծխնելույզը. բայց նա չի թունավորել նույնպես մեր սրտերը «ազգասիրական» մոտիվներով, մարդատյաց թույնով: Թումանյանը սիրել է իր հայրենի Լոռվա սարերն ու ձորերն, երգել է անհատի ազատությունը, կռվել է պողետարին հատուկ համառությամբ և շիտակությամբ:

Անդրկովկասի համերաշխության, վրացի-հայի-թուրքի եղբայրության համար, որի կարելիության նա միշտ էլ խորապես հավատացել է:

Բանվոր դասակարգը չի մոռանա երբեք ազատ սարերի ու ձորերի տաղանդավոր երգչին, եղբայրության վեհ գաղափարի այդ համոզված ու ազնիվ մարտիկին»:

*) Հավանաբար ամսագրի խմբագիր Սուրեն Երզնկյանն է:

**) Տես ԵԼԺ 2, 254, 596:

«Բանվոր» ամսագիր, Թիֆլիս, 1919, թիվ 1:

Մայիսի 3, Թիֆլիս - «Տիկին Բուլմերինգի մոտ (գեներալ Ակիմովի մոտ)» մասնակցում է «ընտանեկան երեկույթի»:

Դստերը՝ Աշխենին, գրում է (տե՛ս մարտի 4). «Երեկ իրիկուն տիկին Բուլմերինգի մոտ (գեներալ Ակիմովի մոտ) մի անակնկալի ենթարկվեցի:

Իբրև թե մի ընտանեկան երեկույթում պետք է կարդային Շանթի «Հին աստվածները»: <....> Գնամ տեսնեմ – մի 70-80 հոգի հայ ու գերմանացի ընտիր հասարակություն և դարձյալ իմ 50-ամյակի պատմությունը: Գերմանացի բանաստեղծ Նեյմանը, որ պիտի կարդար և իր թարգմանած «Հին աստվածները», ռուսերեն լեզվով մի ռեֆերատ կարդաց համառոտ հայոց բանաստեղծության մասին, կանգ առավ ինձ վրա ու ողջույնի խոսք ասավ գերմանացիների կողմից և կարդաց իր թարգմանած «Անիծած հարսը» և երկու ուրիշ ոտանավորներ:

Ապա թե մի ծաղկազարդ կողովի մեջ լիքը ցորեն տվին, վրեն մի կարտ – Народному поэту Армену – привез от мыслящѹ Германи.

Ես շնորհակալություն հայտնեցի և թարգմանություններով ու կողովով շտապեցի տուն: Բանից դուրս է գալիս, որ ցորենը եղ տեսակ դեպքերում առանձին հարգանքի նշան է - մեր աղ ու հացի պես մի բան»:

ԵԼԺ 10, 317-318:

Սայիսի 3 - Տպագրվում է «Աերգեյ Գորոդեցկին մեր մեջ» հոդված՝ Սուրիկ ստորագրությամբ:

Մանրամասներ է ներկայացնում Ս. Գորոդեցկու՝ ապրիլի 25-ին և 27-ին կարդացած դասախոսություններից: Ժամանակակից հայ քնարերգությանը նվիրված երկրորդ դասախոսության մեջ նկատում է, որ հայ քնարերգության լավատես գծերն ավելի ու ավելի շեշտվում են հայ մեծագույն քերթողներ Դ. Վարուժանի և Յովի. Թումանյանի ստեղծագործություններում: Ըստ հաղորդագրության՝ «դառնալով Յով. Թումանյանին, գտավ, որ հայ ժողովուրդի վերածնության և ապագա լավագույն ստեղծագործություններու երաշխիքը նույն ինքն այս բանաստեղծն է, որ անիկա ցույց տվավ այնպիսի ընդունակություններ և ստեղծագործական տաղանդ, որ հայ ցեղի թաքուն ուժերն ի լույս ընծայելե ետք, անոր վաղվան նոր հույսերու դուռները բացին մեր առջև: Թումանյանեն նույնպես արտասանեց կտորներ, որոնցմե մեկը՝ հայերեն»:

«Աշխատանք», Երևան, 1919, թիվ 15 (223):

Սայիսի 4, Թիֆլիս - Նամակ Երևան՝ դստերը՝ Աշխենին:

Վատ երազ է տեսել. «Ձեր գնալուց հետո մի գիշեր երազ տեսա, որ ատամիս կողքից մի փոքրիկ սիրուն ատամ էր դուրս եկել, հանեցին ու բերանս արյունով լցվեց»: Ինքը «սասանված» է արդեն և շատ է հավատում «նախազգացումների ու երազների», դրա համար էլ անհանգիստ է թռան՝ Յովիկի համար, որ հիվանդացել է, միայն լավ է, որ նրան բուժում է բժիշկ Սաղյանը:

Մտահոգ է որդու՝ Յանլիկի ապագայի համար. «Յանլիկի մասին որ գրել էի, թե եղտեղ մնա (տես <ապրիլի 29>.- Խմբ.), պատճառն էն է, որ չեն ուզում նա զինվորական դառնա կամ պաշտոնյա: Նա էն տեսակ արագությամբ ու հաջողությամբ էնքան մի գեղեցիկ լեզու էր ստեղծում և էնքան էր լուրջ գնում դեպի գրականությունը,*

որ ես ուզում եմ նա ուսումը շարունակի ու պարապի: Էդ հազար անգամ ավելի լավ կլինի, քան էսօրվան ճանապարհը»:**

Ավագ որդու՝ Մուշեղի մասին. «Մուշեղն էլ, ով գիտի, գուցե իր մասնաճյուղի մեջ մի բան դուրս գա»:**

Հոգնել է իր 50-ամյակի առթիվ այցելություններից ու հրավերքներից. «...Ինձ համար ինչքան շատ՝ էնքան վատ»:

*) Նկատի ունի որդու ցուցաբերած թարգմանչական հմտությունները: Հայտնի էին հատկապես Օմար Խայամից կատարած նրա թարգմանությունները:

**) Այդ ժամանակ Համիկ Թումանյանը Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի դիվանատան վարիչն էր (տե՛ս նաև <ապրիլի 29>):

***) Մուշեղ Թումանյանն ավարտել էր Պետերբուրգի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Հետաքրքրվում էր նաև քիմիայով ու կենսաբանությամբ: Հետագայում զբաղվել է մանկավարժությամբ. Թիֆլիսի և Շուշիի դպրոցներում դասավանդել է հատկապես քիմիա:

ԵԼԺ 10, 316-318, 666-667:

Մայիսի 6 - Սերգեյ Գորոդեցկու նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Дорогоу Ованес Фадеевич,

Умоляю завтра дать статью, хотя бы без перевода, переведем сами. Можно доставить в редакцию «Нового Дня» - Ермоловская 4, или в «Кавк. Сл.». Не забудьте про сегодняшній вечер, Просим притти и Нвард.

Весь Ваш С. Городецку.

ԳԱԹ ԹՖ, 1105 (297).

Մայիսի 10 - Դիմում Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ Հովհ. Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Ի նկատի ունենալով, որ գրաշար Խաչատուր Տեր-Հովհան-նիսյանը քսանհինգ տարի անընդհատ աշխատել է գրաշարական ասպարեզում և այժմ հիվանդ է՝ չունենալով հնարավորություն աշխատելու և միջոց ապրելու, մնում է նյութապես ապահովել նրան: Այդ նպատակով կազմվել է մի հոբելյանական մարմին գրաշար բանվորներից, որի կողմից դիմում եմք Ձեզ և խնդրում, որ Դուք էլ ուղարկեք ներկայացուցիչ մասնակցելու կազմակերպվելիք հոբելյանական աշխատանքներին, որի նիստը տեղի կունենա կյուրակի՝ ամսի 11-ին՝ ժամ. 11-ին, «Շահխաթունյանի» ընթերցարանում:

Հույսով եմք, որ չեք մերժիլ թե՛ ներկայացուցիչ ուղարկելու և թե՛ Ձեր նյութական ու բարոյական աջակցությունը ցույց տալու:

Ժամ. նախ. հանձնաժողովի՝ Արշ. Հախվերդյան
քարտ. Խաչ. Վարդանյան»:
ԳԱԹ ՀԳԿԸՖ, 181: ԹԹ, 3514:

Սայիսի 11 - Անդրանիկ Օզանյանի նամակը Թիֆլիս՝ Թուճան-
յանին՝ Բաթումից.

«Սիրելի Հովհաննես,

Թիֆլիսեն մեկնելես՝ մեկ օրեն հասա Բաթում:

Այստեղ կսպասենք դեռ նավու, ձիս ու մաս մը իրեղեններ ար-
դեն ուղարկեցի Վառնա, իսկ մենք երևի դեռ մի քանի օր կսպասենք
մինչև մեզ տանող շոգենավի գալը:

Շատ ու շատ բարևներ բոլորին:

Սիրով՝ Անդրանիկ:

Հ.Գ. Քեֆ անողին քեֆ չի պակսիր. դարդ անողին դարդ չի
պակսիր. աշխարհը այսպես եկեր, այսպես կերթա»:

ԳԱԹ ԹՖ, 893 (504):

Սայիսի 13 - Սուրեն Նազանյան ստորագրությամբ նամակ
Թիֆլիս Թուճանյանին՝ Արդահանից:

Գրողների ընկերության անդամ է: Անդամավճարի մի մասը (2
ռուբլի) ուղարկել է: Հանգամանքների բերումով մնացած մասը (3
ռուբլի) ուշացրել է: Հիմա ուղարկում է. Բայց երեք ամիս պայմա-
նաժամկետն արդեն անցել է: Ուզում է իմանալ՝ արդյոք պե՞տք է
ուշացնելու մասին բացատրություններ տալ, որպեսզի չգրկվի ընկե-
րության անդամությունից:*

Գրում է, որ Գրողների ընկերությունը իր երեկույթներով ու
հանդեսներով «լավ տպավորություն է թողնում»:

Այնուհետև. «Չմոռանամ գրել, որ խիստ ցավ զգացի վերջին
բանակրիվ-սկանդալի համար:** Վշտացիր և ներիր, այո՛, ներիր այդ
«կրիտիկոսներին» - «հայրենի եզերքի»*** սիրելի բանաստեղծ:

Ձարմանալին այն է, որ մի կողմնակի մարդ, մի լրագրական
աշխատող գրիչ չի բարձրացնում և իրենք՝ գրողներն են ստիպված
պաշտպանվել զանազան դրամբյանիզմի դեմ, ստեղծելով անա-
խորժ դրություն իրենց համար: Ո՞վ մեզանից այնքան կույր է, որ
չհասկանա հոգեկան այն մոտիվ-մղիչերը, որոնք հանդես են բերում
«լուրջ» կրիտիկոսի դերում այդ «անլուրջ» մարդոցը: Եվ մի՞թե մեր
քննադատությունն այնքան է ընկել, որ կարիք ունի այդպիսիների

օգնության: Որքա՜ն վատ է այդ բոլորը, որքա՜ն զգվելի, իսկ ամենից վատը՝ գրողների կրածը»:

Վերջում տեղեկացնում է, որ Ներսիսյան դպրոցին վերակացու է հարկավոր՝ «չնչին վարձով»: Ինքը դիմել է: Երախտապարտ կլինի, եթե բանաստեղծը կարողանա օգնել:

*) Ըստ Գրողների ընկերության կանոնադրության՝ անդամավճարը երեք ամսից ավելի ուշացածը զրկվում է միության անդամությունից:

**) Հավանաբար նկատի ունի տարիներ առաջ՝ 1913 թ. Հարություն Սոլովյանի և Թումանյանի բանավեճը՝ «Գառնիկ ախպեր» հեքիաթի շուրջ:

***) Ակնարկում է Ա. Տերտերյանի «Հայրենի եզերքի քնարերգուն» ուսումնասիրությունը:

ԳԱԹ ԹՖ, 1799 (923):

Սայիտի 14 - Անդրանիկ Օզանյանի նամակը Թիֆլիս Թումանյանին Բաթումից.

«Սիրելի Հովհաննես,

Արդեն շոգենավի խնդիրը վերջացավ. կմեկնենք իտալական շոգենավով. միասին կուզան գեմ. Տոմսոնը,* Միք. Պապաջանյանը և Կորնել Կիպոնը: Երևի լավ շրջանակ և գեղեցիկ ճամփորդություն կունենանք, օրն ալ կխոստանա լավ լինել:

Հատուկ հարգանքներս մայրիկին, տիկնոջ և օրիորդներուն:

Ցտեսություն:

Համբույրներով՝ ձեր Անդրանիկ»:

*) Անդրկովկասում անգլիական ներկայացուցչության դեկավար:

ԳԱԹ ԹՖ, 894 (505):

Սայիտի 16 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը:

Վարչության անդամներից ներկա են՝ Ստ. Կանայան, Ն. Աղբալյան, Նիկ. Սարգսյան, Դ. Դեմիրճյան:

Թումանյանը հայտնում է, որ Թիֆլիսի Հայկական ակումբը իրեն նվիրել է մի հազար ռուբլի, որ ինքն իր կողմից նվիրում է գրողների ընկերությանը: Այդչափ մի գումար իրեն նվիրել է նաև գողթներիցիների հայրենակցական միությունը, որն ինքը դարձյալ նվիրում է ընկերությանը: Առաջարկվում է շնորհակալություն հայտնել Հովհ. Թումանյանին:

Թումանյանն առաջարկում է դերասան Վրույրի հորեյանական ներկայացման առթիվ նրան նվիրել մի հազար ռուբլի: Առաջարկն ընդունվում է:

Գրաշար Խաչատուր Տեր-Յովհաննիսյանի 25-ամյա հոբելյանի համար դիմում էր եղել վարչությանը (տե՛ս մայիսի 10)՝ որևէ կերպ մասնակցելու:

Որոշում են հատկացնել հինգ հարյուր ռուբլի, Դեմիրճյանին ուղարկել՝ շնորհավորական խոսք ասելու հոբելյանական հանդեսին:

Բժիշկ Արծրունին խնդրում է մի երեկույթ կազմակերպել, որտեղ ինքը կարողանա դասախոսություն կարդալ իր գիտական բառարանի մասին:

Խրիմյանի ընտանիքը առաջարկում է մի երեկույթ կազմակերպել՝ նվիրված նրա հիշատակին:

Ընկերության անդամներից շատերը հետաքրքրվում են, թե վարչությունն ինչու գրական երեկույթներ չի կազմակերպում: Վարչությունը բացատրում է, թե մինչև այժմ գիշերներն անհանգիստ են, եղել են մաս ալ տեխնիկական խնդիրներ:

Որոշում: Որովհետև հիմնական խնդիրը դահլիճ գտնելու դժվարությունն է, վարչության նախագահը հանձն է առնում անձամբ զբաղվել այդ խնդրով, վարչության մյուս անդամները հանձն են առնում զբաղվել կազմակերպական հարցերով:

Աչքի առաջ ունենալով գրողների մեծագույն մասի նյութական դժվար կացությունը՝ դիմել հայոց կառավարությանը, որ նրանց օգնելու նպատակով մի հիսուն հազար ռուբլի գումար տրամադրի ընկերությանը:

Նախագահը հայտնում է, որ ինքը դիմել է Ամերիկյան Միսիսիին, որ գրողների ընկերության անդամներին հաց տան:

Որոշվում է այդ խնդրով դիմել ուղղակի ամերիկացիներին:

ԹԹ, 3582:

Սայիսի 17 - Դիլիջանի գիմնագիայի վերատեսչության նամակը Թիֆլիս՝ Թումանյանին.

«Մեր սիրելի բանաստեղծ Յովհաննես Թումանյան

Ապրիլի 26-ին Դիլիջանի «Գիմնագիան անտառում» կատարեց Ձեր ծննդյան 50-ամյակը: Աշակերտությունը և ուսուցչության մի մասը, որ սնվել է Ձեր երկերով, երախտագիտությամբ հիշեց հայ բանաստեղծի անունը, մի բանաստեղծի, որ կանգնած հայ պառնասի բարձունքներում՝ ձեռք է մեկնել բոլոր բանաստեղծներին:

Մանուկները լսեցին, տեսան* Ձեր «Շունն ու Կատուն», «Մի

կաթիլ մեղրը» և մեծերը՝ տրտմության ու բողոքի երգերը, գեղեցիկ «Անուշը» իր սիրուն Անուշով: Ամենքս ծանոթ էինք դրանց, բայց այն օրը միասին իմացան և զգացինք Ձեր մոտիկությունը և հարազատությունը բոլորիս: Մտանք մի պահ Ձեր աշխարհը, լեռների ու գույների, ծաղիկների և երգերի, մեղմ տրտմության ու տրտունջի աշխարհը և ցանկացանք, որ բանաստեղծը նորից տես գա մեզ ավելի բարձր ու գեղեցիկ աշխարհներ առաջնորդելու բոլորիս:

Մանկավարժական կազմի անդամները և երեխաները, մեծ ու փոքր, սեղմում են Ձեր ձեռքը:

Վերատեսուչ գիմնազիայի»:

*) Հավանաբար երեխաների ուժերով ներկայացրել են Թումանյանի այդ գործերը:

ԳԱԹ ԹՖ, 1242: ԹԹ, 3595:

Սայիսի 26, Թիֆլիս - Գրողների ընկերության անունից շնորհավորական հեռագիր Երևան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը,

«Первую годовщину политической свободы исторически испытанного родного народа общество писателей армян мыслит как первый народный праздник торжествующей правды и прогресса, как счастливое начало предстоящего торжественного шествия к великим культурным завоеваниям, к вечному творчеству духа человеческого, и потому в этот торжественный день общество писателей армян преисполненное светлых надежд на будущее, с глубоким душевным проникновением шлет дорогой родине искреннее приветствие, с нею вместе проникается радостью и верит, что годовщина эта знаменует долгожданный возврат странствующей армянской литературы вместе со странствующим народом к родной земле.

Председатель *Ованес Туманян*».

ԵԼԺ 10, 318-319:

Սայիսի 26, Թիֆլիս - ՀՀՍՍ խորհրդի անունից շնորհավորական հեռագիր Երևան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը.

«В созвучии сияющей природы освобожденный армянский народ сегодня торжественно встречает первую годовщину духовного и политического возрождения с твердой непоколебимой

уверенностью, что народ, достойно вышедший из тяжелых испытаний и приобревший дорогою ценою политическую свободу, сумеет отныне искусно двинуть новый корабль государственной своей жизни по правильному пути прогресса и культуры. Союз 21 армянского землячества проникается глубокою радостью по случаю действительного народного праздника и шлет свободной родине свое сердечное приветствие.

Председатель Совета союзов

Ованес Туманян».

ԵԼԺ 10, 319:

Մայիսի 26 - Տպագրվում է Ե. Շահագիրի «Հովհաննես Թումանյան» հոդվածի շարունակությունը:

Գրված է հանրամատչելի շարադրանքով՝ մասսայական ընթերցանության համար:

Թումանյանին դասում է հներից հետո եկող այն նորերի շարքին, որոնց ստեղծագործության մեջ «երևում է հայ ժողովրդի դեմքը յուր լիակատար իրական պատկերով, յուր մտածելակերպով, աշխարհայացքով, խոհերով ու տենչերով»: Թումանյանը «բոլորամասն ընդգրկում է այդ ուղղությունը, պարագլուխ հանդիսանալով հայկական բանաստեղծության այդ նոր ուղղության դպրոցին, որին շտապում են անդամագրվել նոր ուղղությամբ սնված մեր երիտասարդ բանաստեղծները՝ Ավետիք Իսահակյանը, Լ. Շանթը, Դերենիկ Դեմիրճյանը և մյուսները»:

Հատուկ ընդգծում է գրական միջավայրում և հասարակական գիտակցության մեջ այդ նոր «կաճառի» տեղը հաստատելու համար Թումանյանի հսկայական կազմակերպական ջանքերը: Այս առիթով ներկայացնում է վերնատան գործունեությունը և ամփոփում իր դիտարկումները. «Մի խոսքով, վերնատունը դառնում է մի կենտրոնավայր, մի քուրա, որտեղ գրողներից շատերը թրծվում, առաջնորդվում, ղեկավարվում և հմտություն ու փորձնականություն են ձեռք բերում իրանց գրական գործունեության համար: Եվ այդ բոլորի կենտրոնը, սիրտն ու հոգին, ինչպես ասացինք, լինում է ինքը Թումանյանը, որ յուր ամենքին ի մի հավաքելու, կապելու, միացնելու բնատուր ընդունակությամբ կարողանում է առաջնորդ ու ղեկավար հանդիսանալ և հարկավոր ու նպատակահարմար ուղղությունը տալ վերնատան երեկույթներին»:

Արձանագրում է այն բացառիկ փաստը, որ բանաստեղծի առաջին գրական փորձերի գնահատողը եղել է ոչ թե պաշտոնական քննադատությունը, «այլ ինքը հայ ժողովուրդը, որ մի կողմ թողնելով պաշտոնական քննադատությունը և նրա կատարելիք վավերացումը ու սրբագործումը, ինքը յուր բնագոյով, յուր հոգով ճանաչում է ու գնահատում բանաստեղծին՝ վարակելով, քաշելով ու տանելով յուր հետևից և քննադատությունը»:

Թումանյանի ստեղծագործության կարևոր և անբաժանելի մասն է համարում նրա հողվածները: Այդ ժանրին բանաստեղծը դիմում է այն ժամանակ, բացատրում է հողվածագիրը, «երբ մի որևէ հրատապ խնդիր է դրված լինում հրապարակի վերա, աշխատելով ծայրահեղորեն պարզ գրել, ժողովրդին հասկանալի լեզվով արտահայտվել, որի համար երբեմն զոհ է բերում մինչև իսկ գրական լեզվի հատկությունը ու կանոնավորությունը»: Որպես օրինակ հիշում է հայ-վրացական սահմանային վեճերի մասին հողվածները:

Համառոտ տեղեկություններ է տալիս բանաստեղծի ընտանիքի, նրա՝ որպես Գրողների ընկերության նախագահի գործունեության մասին: Հետաքրքիր դիտարկումներ է անում նաև նրա մարդկային տեսակի մասին. «Նա մի անուշ խոսող, պատմող, ծիծաղող ու ծիծաղեցնող, կենսուրախ ու սրամիտ մարդ է, ամենքի հետ շուտ մտերմացող, ամենքի սիրտը յուր հետ կապող, նա բանաստեղծ է ոչ թե միայն այն ժամանակ, երբ ստեղծագործում է, այլ բանաստեղծ է և յուր առօրյա կյանքում. նրա խոսվածքը, զրույցը, կատակը, սրաբանությունները բոլորն էլ բանաստեղծություն են, որ նա անգիտակցաբար անվերջ ու անհատմուն շռայլում է ամեն րոպե ու ամեն մի դեպքում. այդպես է նրա հոգին, այդպես է նրա էությունը: Սքանչելի է նա և արժե լսել նրան նամանավանդ, երբ նա պատմում է հայի անցյալից, հայրենիքից, գյուղական կյանքից»:

Ափսոսում է, որ մշտապես հաստատված լինելով քաղաքում՝ քիչ ժամանակ է ունենում շուտ-շուտ այցելելու գյուղ, իր մանկության սիրած վայրերը, անմիջականորեն շփվելու ժողովրդի հետ, մի բան, որ, ինչպես ակնարկում է հողվածագիրը, չէր կարող ազդեցություն չթողնել նրա ստեղծագործության վրա: Որպես այս ամենի վկայություն՝ բերում է բանաստեղծի՝ 1902 թ. դեկտեմբերի 4-ին Ս. Շահագիզին հասցեագրած նամակը (տե՛ս ԵԼԺ 9, 388-390, 648):

Համառոտ տեղեկություններ է տալիս բանաստեղծի ծննդյան 50-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունների մասին:

Գրում է նաև սեփական ստեղծագործությունների հանդեպ բանաստեղծի անփույթ վերաբերմունքի մասին, որ նա «աջ ու ձախ վատնում, անխնայորեն շռայլում է յուր բանաստեղծության գոհարները՝ չտալով նրանց այն գինը, որին արժանի են նրանք: Նրա այդ բանաստեղծական շռայլության ու վատնողության պետք է վերագրել այն հանգամանքը, որ նրա վաղօրյա գրվածներից շատ բան կորել, ոչնչացել է»:

Եվ վերջում. «Հովհաննես Թումանյանը ներկայումս հասել է յուր հասակի աշնանը, բայց այդ աշունը խորին, ուշ աշուն է, տերևաթափ ծառատունկով, թառամած ու թոշնած բույս ու արոտով, այլ վաղ նորափթիթ աշուն, դեռ բնության բոլոր զարդն ու բեղմնավորության թափը պահած, ատոք, ուռճացած հասկերով և բյուրաբեղուն բարիքներով աշուն: Եվ հայ աշխարհը, որ դեռ շատ թաքուն գանձեր ունի պահած յուր մեջ - վեպեր, հին գրույցներ ու ավանդություններ, որոնք սպասում են իրանց մշակողներին, ակնկալում է և իրավունք ունի ակնկալելու նրանից դեռ շատ Դավիթ Սասունցիներ...»:

*) Հանդեսի այն համարը, որտեղ հոդվածի սկիզբն է, չի պահպանվել:

«Հայ համայնք», Նոր Նախիջևան, 1919, թիվ 16, էջ 247-250:

Սայիս - Տպագրվում է Թումանյանի «Պատրանք» բանաստեղծությունը:

«Տարագ», 1919, թիվ 5, էջ 38:

Հունիսի 2, Թիֆլիս - Պաշտոնական գրություն Երևան՝ Հայաստանի Հանրապետության նախարարապետին.*

«Հայ գրողների ընկերության նախաձեռնությամբ Թիֆլիսում տեղի ունեցան հայ գրողների, գիտնականների ու գեղարվեստագետների մի քանի ժողովներ՝ մեր մեջ գիտությունը, գրականությունն ու գեղարվեստը պաշտպանելու և զարգացնելու նպատակով, և հանգեց մի եզրակացության, որ արտադարձական կրթության գործը մեր մեջ ապահովելու համար պետք է լուսավորության միևնույնության կից հիմնել մի փոխնախարարություն:

Գրության հետ ուղարկելով ժողովականների մի մասի ստորագրությամբ ժողովների առաջարկը և էն սկզբունքները, որոնք, ժողովի կարծիքով, սահմանելու են փոխմիևնույնության կազմը, իրավասությունն ու նպատակը,** խնդրում են ընթացք տալ մեր խնդրին:

Ժողովի նախագահ՝ **Հովհ. Թումանյան**»:

*) Նախարարապետի պաշտոնն այդ ժամանակ վարում էր երկարատև արձակուրդում գտնվող վարչապետ Յ. Քաջազնունուն փոխարինող Ալ. Խատիսյանը:

**) Գրության հետ ուղարկվել է ընդարձակ համախոսական՝ ժողովի մասնակիցներ Թումանյանի, Շիրվանզադեի, Վ. Փափազյանի, Դ. Դեմիրճյանի, Տ. Յովհաննիսյանի, Ստ. Զորյանի, Ե. Լալայանի և ուրիշների ստորագրությամբ:

ԵԼԺ 10, 319-320:

Հունիսի 2 - Աշոտ Աթանասյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից:

Փետրվար-մարտ ամիսներից աշխատավարձ չի ստացել: Պարտքեր են կուտակվել. պարտատերերից խուսափելու համար տանը չի մնում: Բժիշկների պահանջով հիվանդ կնոջը շտապ պետք է առողջարան ուղարկել. «Ահա այս բոլոր ծանր պարագաները ստիպում են ինձ խնդրել քեզ ինչպես և լինի գոնե 2000 ռ. հասցնել տունս: Չեմ կասկածում, որ դու այդ չանես ամենայն պատրաստակամությամբ և ձեռքիդ տակ գտնված բոլոր միջոցներով»:

ԳԱԹ ԹՖ, 794 (221 լր.):

Հունիսի 7, Թիֆլիս - Քննիչ հանձնաժողովի անունից՝ նախագահ *Հովհ. Թումանյան* ստորագրությամբ պաշտոնական նամակ Հայաստանի Հանրապետության նախարարապետին:

Նամակի սկզբում տեղեկացնում է. «Ի լրումն այն հեռագիրների, հայտարարությունների ու զեկուցումների, որ Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովը* անցյալ տարվա նոյեմբերից ի վեր, ուղարկել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, պատիվ ունեմ հայտնելու Ձեզ հետևյալը.

Ապրիլի կեսին տեղեկություն ստանալով, որ ապրիլի 1-ի նիստում Հայաստանի Պառլամենտը իր խոստացած 300 000 ռ. գումարի փոխարեն հատկացրել է միայն 50 000 ռ., քննիչ հանձնաժողովը որոշեց դադարեցնել իր գործունեությունը նույն ամսի 15-ից ցնոր տնօրինություն»:

Այնուհետև հանգամանորեն ներկայացնում է գոյության ընդամենը մի քանի ամիսների ընթացքում (1918 թ. նոյեմբերից մինչև 1919-ի ապրիլ) հանձնաժողովի գործունեությունը, դրամական ստացվածքների ու ծախսերի հաշվետվությունը, ՀՀ կառավարության ու պառլամենտի հետ դժվար հարաբերությունների պատմությունը:

Կանգ է առնում հանձնաժողովի գործունեությունը խոչընդոտող նաև այլ հանգամանքների վրա՝ մասնավորապես հայ-վրացական զինված հակամարտության հետևանքով. «Շուտով բռնկվեց հայ-վրացական պատերազմը, և վրաց կառավարությունը հայտարարեց, թե ամեն մի հայ, որ որևէ կերպ աջակցություն ցույց կտա Հայաստանի կառավարությանը, կհամարվի պետական դավաճան և գույքը կգրավվի հարքունիս:

Միննույն ժամանակ վրաց միլիցիան խուզարկության ենթարկեց մեր գրասենյակը, որ երկու շաբաթ փակ պահեցինք, մինչև որ ինձ հաջողվեց վրաց կառավարությունից գրավոր թույլտվություն ստանալ հանձնաժողովի գործունեությունը ազատ շարունակելու:

Եթե դրա վրա ավելացնենք այն հանգամանքը, որ Հայաստանի կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ պ. Ջամալյանը ոչ միայն մասնակից էր Հայրենակցական միությունների միության նախաձեռնության մեջ քննիչ հանձնաժողովը կազմակերպելու գործում, այլև ի պաշտոնե նրա անդամներից մեկն էր համարվում, հասկանալի կլինի, թե ինչու հայ-վրացական պատերազմի ընթացքում վաճառականները շատ քիչ բան արեցին հանձնաժողովի համար (մեկ-երկու հոգի նպաստ տվին, այն էլ այն աստիճան վախենալով, որ հրաժարվեցին անդորրագիր ընդունել):

Այնուհետև Թիֆլիս եկան հայ-վրացական կոնֆերենցիային** մասնակցելու համար Հայաստանի Պառլամենտի հինգ անդամներ, որոնք անտարբեր վերաբերմունք ցույց տվին դեպի քննիչ հանձնաժողովը, բացի պ. Մ. Հարությունյանից, որ գործին ծանոթանալուց հետո իր կարծիքը փոխեց:

Բավական է ասել, որ հայ պատվիրակության հինգ անդամներից և ոչ մեկը ոչ մի անգամ չբարեհաճեց մտնել հանձնաժողովի գրասենյակը և հետաքրքրվել, թե ինչ է արվում այնտեղ, թեև պատվիրակները բնակվում էին այդ գրասենյակից միայն մի քանի քայլ հեռու գտնվող տան մեջ, և այդ ուղիղ այն ժամանակ, երբ յուրաքանչյուր օր մի քանի հարյուր հայ փախստական էր հաճախում այդ գրասենյակը իր կրած վնասների և տառապանքների մասին հայտնելու համար:

Այդ բավական չէ՝ պատվիրակության անդամներից ոմանք շարունակ պնդում էին, թե հանձնաժողովի գործունեությունը իմաստ չունի, քանի որ արդեն ուշ է, Փարիզի կոնֆերենցիան այսօր-վաղը բոլոր հարցերը կլուծի»:

Գրում է, որ հայ պատվիրակությունը պատերազմի հետևանքով արևելահայության կրած վնասների մասին «ենթադրական թվեր» է ներկայացրել «հաշտության կոնֆերենցիային», մինչդեռ քննիչ հանձնաժողովը ձեռքի տակ ունի «միանգամայն գիտական մեթոդով հավաքած թվեր»: Հանձնաժողովն այդ «թվերը» հանձնել է պատվիրակության անդամ Պապաջանյանին՝ «Փարիզ հասցնելու համար»: Նույն նպատակով արտաքին գործերի մինիստր Տիգրանյանին հանձնված նյութերը կազմում են ամբողջ չորս հատոր:

Վերջում տեղեկացնում է, որ հանձնաժողովի տրամադրության տակ կան ուրիշ նյութեր էլ, որոնք ի մի բերելու և համակարգելու համար դրամական միջոցներ են պետք. «Հակառակ դեպքում հանձնաժողովը ստիպված կլինի վերջնականապես դադարեցնել իր գործունեությունը և իր մոտ եղած տասնյակ հազարավոր հայտարարությունները*** ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ի տնօրինություն

Նախագահ՝ *Հովհ. Թումանյան*»:

*) Հանձնաժողովի հիմնադրման մասին պաշտոնապես հայտարարվեց 1918 թ. դեկտեմբերին: Նախապատրաստական աշխատանքներն սկսվել էին նոյեմբերին (տես նաև 1918 դեկտեմբերի 14):

**) Խոսքը վերաբերում է հայ-վրացական ընդհարումների կապակցությամբ 1919 թ. հունվարի 9-ին Ամստամի գինվորական գործիչների նախաձեռնությամբ Թիֆլիսում բացված Հայաստանի և Վրաստանի կառավարությունների ներկայացուցիչների կոնֆերանսին, որտեղ որոշվեց Լոռին հայտարարել «չեզոք գոտի»:

***) Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) (ֆոնդ 221, ցուցակ 1) պահվում են Վանի, Կարսի, Արդահանի, Սուրմալուի, Կադզվանի, Ախալքալակի, Ալեքսանդրապոլի, Գանձակի, Շուշիի, Ղարաքիլիսայի, Ելիզավետպոլի, Նախիջևանի, Բաքվի, Բորչալուի գավառի Ուզունլար, Վարդաբլուր գյուղերի և այլ բնակավայրերի բնակչությունից 1917-1919 թվականների ընթացքում ստացված և հանձնաժողովի նիստերում քննարկված հարյուրի չափ հայտարարություններ՝ պատերազմի հետևանքով իրենց կրած վնասների (մանրամասն ցուցակներով), գաղթավայրերում իրենց հանդեպ եղած անտարբերության, ինչպես նաև թուրքերի վայրագությունների մասին: Հանդիպում են նաև ռուս գինվորականների վկայություններ:

ԵԼԺ 10, 320- 326, 668-669:

Հունիսի 7 - «Միաբնանց Կրապետի տղա Մաթոս» ստորագրությամբ նամակ Թումանյանին Թիֆլիսից:

Գրված է հատուկ շեշտված տնավարի ոճով և Լոռու բարբառով՝ բանաստեղծին դիմելով «սիրելի Օհանես ապեր»: Թիֆլիսա-

բնակ դազախ-շամշադինցիները հրավիրում են Գայանյան դպրոցում կազմակերպած իրենց հավաքույթին. «Ըսօր, քու պուճուր «ախպերտինքը», Ղազախ - Շամշադինցիքս մեզ ու մեզ, տնավարի հրվաքվըմ ենք թե մը քիչ մուշղուլաթ անենք Գայանյանց ըխճըկերանց ըշկուլըմը:

Հենց քու ըրեխանց արևը կը սիրես. տընով-տեղով համեցեք մեզ մոտ. մշամդրեք էլ ունենք: Էն Աստօժը գդենա, վեր կիսաբերան չենք կանչըմ:

Քեզ կանչըմ չենք, թե ուրըշների հանգի իրեստը տյուս պղարաք անենք:

Աստծու տվածեն ինչ կճարենք ընել կուտենք, ջան կասենք, ջան էլ լսենք: Թե վեր դոնաղ ունես, դոնաղիդ հետ համեցեք:

Դե էլ ի՞նչ ասեն. ես քիչ ասեմ, տյու շատ հասկացի:

Մնամ քու շատ պարին կամեցող Քեզ միշտ հարգող՝ Միարբնանց Կրապետի տղա Մաթոս:

Մեր հայրենակցութենի մեկել հնգերտերանց կողմանից քեզ շատ պարով ու խնդիրք, վեր կեսա:

Մաղաթանց Պետին էլ ա շատ խնդրվըմ»:

ԳԱԹ ԹՖ, 1123 (307 լր.): ԹԹ, 3596:

Հունիսի 13, Թիֆլիս - Թումանյանի մոտ գումարվում է տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների ժողով:

Քննարկվում է «միացյալ Հայաստանի»* խնդիրը: Ալ. Խատիսյանին ուղղված հունիսի 15-ի մամակում բանաստեղծը գրում է. «Անցյալ օրը մոտս մի փոքրիկ ժողով կար դրա համար. ամեն կուսակցությունից մի քանի հոգի, և մի երկու էլ չեզոք մարդ - երկար խոսակցությունից հետո տեսանք, որ չենք կենտրոնանում ընդհանուր ցավի վրա և գտանք, որ ավելորդ է ավելի մեծ ժողով գումարելը: Դրանով հենց գուցե ավելի վեճն ու հուզմունքը բորբոքվի»:

*) Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրը՝ 1919 թ. մայիսի 28-ին, խորհրդարանը որոշում է ընդունում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարել Միացյալ Հայաստանի կառավարություն: Թեև դրան համահայկական բնույթ տալու նպատակով որոշվել էր խորհրդարանում 12 արևմտահայ ներկայացուցիչների տեղ հատկացնել, այնուամենայնիվ արևմտահայերը դժգոհ էին, քանի որ իրական հիմք չկար Միացյալ Հայաստանի կառավարության գոյության համար:

ԵԼԺ 10, 328, 669:

Չուճիսի 13 – Մամուլը տեղեկացնում է, որ առանձին գրքով լույս են տեսել «Տարազի» ներկա տարվա բոլոր համարները:

Տարվա ընթացքում հանդեսում տպագրված հեղինակների շարքում հիշվում է նաև Թումանյանը:

«Ժողովրդի ձայն», 1919, թիվ 123:

Չուճիսի 14 - Դավիթ Մալյանց ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Թելավիից:

Շատ է ուզում գնալ Չայաստան, «տեսնել այնքան տարվա փափագած ավերակ աշխարհը»: Նաև կարոտ է ուսման, որպեսզի իր կարողացածի չափով օգտակար լինին «հայրենի աշխարհին»: Դիմում է բանաստեղծին. «Խնդրում եմ մի ճար արեք, ես ուզում եմ ճեմարանում սովորել, բայց չեմ կարողանում. ահա 3-րդ տարին է, ինչ չարչարվում եմ, բայց չեմ կարողանում մտնել ճեմարանը: Բացի դրանից, ես այստեղ մնալ չեմ կարող, թեկուզ ոսկի թափեն: Թող ես լինեմ այնտեղ և լինեմ սոված»:

Ուտանավորներ է գրում, բայց չի համարձակվում ուղարկել:

ԳԱԹ ԹՖ, 1632 (383 լր.):

Չուճիսի 15, Թիֆլիս - Պաշտոնական նամակ Չայաստանի Հանրապետության նախարարապետին:

Ներկայացնում է հայ գրական ու գիտական մտավորականության անօգնական վիճակը այդ դժվար օրերին: Հիշեցնում է, որ Հայ գրողների ընկերությունը իր հիմնադրման օրից որոշել է օգնության խնդրանքով երբեք չդիմել մասնավոր անձանց*: Այժմ, երբ «մենք արդեն ունենք մեր կառավարությունը», որի համար ազգային մշակույթի պաշտպանությունը առաջնահերթ խնդիր պետք է լինի, վստահություն է տալիս դիմելու նրան օգնության խնդրանքով. «Հիրավի, ծանր է մեր և կառավարության դրությունը, էդ պատճառով էլ վարանում էինք դիմում անելու, բայց այժմ ստիպված՝ գրողների ընկերության վարչության որոշումով դիմելով Ձեզ, պարոն նախարարապետ, խնդրում եմ ընթացք տալ մեր խնդրին և մի գումար հատկացնել Հայ գրողների ընկերությանը՝ էս նեղ օրերին օգնության հասնելու մեր գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին»:

*) Այդ մասին տես ԹՏ (1909-1914), 465: ԵԼԺ 6, 539: ԵԼԺ 10, 328-329:

Հունիսի 15, Թիֆլիս - Նամակ երևան՝ Ալեքսանդր Խատիսյանին:

Նամակը անձնական-մտերմական բնույթի է, սակայն բարձրացված հարցերը ազգային-հասարակական հնչեղություն ունեն՝ քննիչ հանձնաժողովի (բյուրո) ճակատագիրը,* «գեղարվեստագետների առաջարկը»** և «գրողների ընկերության խնդիրը»:***

Առաջինի վերաբերյալ գրում է. «Դուք գիտեք, ինչ ուզում եք արեք: Կուզեք որոշեցեք շարունակելու, կուզեք դադարեցրեք. դրա պատասխանատվությունը, համեմայն դեպս, ինքը՝ բյուրոն չի: Բայց ինչ էլ որ անեք, լիկվիդացիայի գումարը պիտի տաք: Միայն մի բան պետք է ասեմ, որ էս խնդրում մասամբ մեր կառավարությունը (ոչ քո օրով****), իսկ ամբողջովին մեր Պառլամենտը – ուղղակի հանցավոր են մեր ժողովրդի առաջ: Այժմ դու ուզում ես ուղղել: Չգիտեմ կարողանալու ես, թե չէ: Բայց շատ ու շատ է անհրաժեշտ, որ էս գործը կատարվի: Ես թույլ եմ, որ ասեմ, որ խնդիրներ կան սենյակումս կուտակված ու շարունակ դիմում են զանազան կողմերից, թե կորուստների ու վնասների բյուրոն ե՞րբ է բացվելու»: Ինքը ուզում է հրաժարական տալ, բայց սպասում է բյուրոյի վերաբացմանը:

Տեղեկացնում է, որ երկրորդ հարցի վերաբերյալ նոր կարծիք կա. «Եթե կառավարությունը միջոցներ չունենա կամ զլանա - Հայկազյան ընկերությունը դարձնել մի էդ տեսակ հիմնարկություն կառավարության սանկցիայով»:

Երրորդ հարցի վերաբերյալ կարծում է, որ գրողների միության խնդրանքը «պետք է հարգվի»: Օրինակ է բերում Վրաստանի կառավարությանը, որ վրաց գրողների ընկերությանը հատկացնում է մեկ միլիոն ռուբլի. «Թող մեր կառավարությունն էլ գոնե մի հարյուր հազար ռուբլի տա, եթե ավել չի կարող»:

Շատ է ուզում, որ «Միացյալ Հայաստանի ակտի շուրջ բարձրացած աղմուկը»***** առանց բարդությունների վերջանա. «Մեր ազգը մի էդ տեսակ վատ խասիաթ ունի, մի վատ գիծ ունի, եթե էս էլ են հին խասիաթն է, որ բռնել է - շատ է ցավալի և հեշտ չի վերջանալ»:

*) Քննիչ հանձնաժողովը իր գործունեությունը դադարեցրել էր, երբ Հայաստանի Հանրապետության պառլամենտը որոշել էր խոստացած 300 000 ռուբլու փոխարեն հանձնաժողովին հատկացնել միայն 50 000 ռ. (տե՛ս ապրիլի 15):

**) Խոսքը արտադպրոցական կրթության գործը ավելի լավ կազմակերպելու նպատակով լուսավորության նախարարությանը կից ենթանախարարություն ստեղծելու առաջարկի մասին է (տե՛ս հունիսի 2):

***) Գրողների միության վարչության որոշումով Թումանյանը դիմել էր նախարարապետին դրամական օգնության խնդրանքով (տե՛ս նույն օրվա նախորդ նամակը):

****) Ալ. Խատիսյանն այդ ժամանակ փոխարինում էր արձակուրդում գտնվող վարչապետ Զ. Քաջազունուն (տե՛ս նաև հունիսի 2):

*****) Աղմուկը բարձրացել էր հավանաբար «Միացյալ Հայաստանի ակտի» մասին հաղորդագրության հրապարակումից հետո («Աշխատավոր» օրաթերթ, Թիֆլիս, 1919, թիվ 107, հունիսի 1): Պատճառը խորհրդարանում արևմտահայության ներկայացուցիչների ձևական բնույթն էր. Արևմտյան Հայաստանը ամբողջապես զրավված էր թուրքերի կողմից, արևմտահայությունը ցրված էր աշխարհով մեկ: Այնուամենայնիվ 1919 թ. օգոստոսի 1-ին բացվում է «Միացյալ անկախ Հայաստանի» առաջին ընտրված խորհրդարանը՝ Ավետիք Սահակյանի նախագահությամբ («Աշխատավոր» օրաթերթ, Թիֆլիս, 1919, թիվ 156, օգոստոսի 5):

ԵԼԺ 10, 327-328, 669-670:

Հունիսի 15 - Հակոբ ք. Սառիկյանի շնորհավորական հեռագիրը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Վլադիկավկազից.

«Радостный день празднования 50 летия своего несравненного певца любви, свободы и братства, Владикавказская армянская колония в счастливыи час осуществления заветных чаяний и надежд, шлет тебе единокдушный привет и пожелания новых сил на еще долгое и радостное служение горячо любимому тобою народу и пусть подрастающее поколение увенчает светлое чело твое душистыми цветами родных освобожденных полей.

От имени колонии
священник Сарикян»
ԳԱԹ ԹՖ, 1973 (977):

Հունիսի 19 - «Ամուշ» պոեմի 1916 թ. հրատարակության մի օրինակի վրա գրում է ընծայական.

Իմ Թամարիկին,
Որ իր Հայրիկին
ճանաչեց նոր –
Էսօր:*

*) Թամար Թումանյանը պատմում է, որ ինքը մի անգամ դասագրքում նորից կարդացել է պոեմի «Ամպերը դանդաղ ուղտերի նման...» հատվածը և բարձ-

րածայն արտահայտել իր հիացմունքը: Բանաստեղծը ժպտալով ասել է. «Աղջիկս ինձ նոր ճանաչեց» և տեղնուտեղը գրել այս ընծայականը:

ԵԼԺ 1, 421, 672-673:

Հունիսի 19 - Տպագրվում է Բենիկ վարդապետի ««Տարագի» «Գլուխգործոցը»» հոդվածը:

Ներկայացնում է ամսագրի մայիսյան «պատկառելի հատորի» բովանդակությունը:

Հովի. Հովհաննիսյանի և Հովի. Թումանյանի մասին գրում է. «Այստեղ են և մեր զույգ սիրելիներ, զույգ բանաստեղծներ, զույգ Հովհաննեսներ՝ Հովհաննիսյան և Թումանյան, առաջինը իր «Ես հարություն եմ առնելու» բանաստեղծությամբ, երկրորդն իր՝ «Պատրանքով»»:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, թիվ 128:

Հունիսի 20 - Արևմտահայ հայրենակցական միությունների գործադիր մարմնի գրությունը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի պ-րն Հովհաննես Թումանյան

Արևմտահայ հայր. միությունների գործադիր մարմինը սրանով խոնարհաբար խնդրում է Ձեզ, որ բարեհաճեք ընդունել պատվավոր նախագահությունը մեր ծրագրած երեկույթը կազմակերպող կոմիսիայի և տալ Ձեր փորձված ցուցմունքը գործի հաջողության համար:

Լիահույս եմք, որ չեք մերժի մեր առաջարկը:

Հասցե - Զիգրաշենի գավիթ:

Նախագահ՝ Արամ Ահարոնյան

քարտուղար՝ Ա. Գասպարյան»

ԳԱԹ ԹՖ, 2562 (166):

Հունիսի 21 - Մոսկվայի հայկական կոմիտեի «Որբ աշակերտական միության» վարչության հրավիրագիրը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Անգուգական բանաստեղծ

Հովհաննես Թումանյան

Մոսկ. հայկ. կոմիտեի «Որբ Աշակերտական Միությունը» ի պատիվ կոմիտեի (հինգամյա գործունեության) կազմակերպել է հանդես: Միությունն ուրախ կլինի, եթե Ձեր ներկայությամբ պատվեք սույն հանդեսը, որ տեղի է ունենալու Կրծանիսի Վարդանյանի

շենք (VII որբանոց), ամսույս 22-ին, կիրակի, ժամը 3 1/2 – ին, ցերեկը:

Մոսկ. հայկ. կոմիտեի «Որբ Աշակերտական միության» վարչություն»:
ԳԱԹ ԹՖ, 2504 (172 III g.):

Յուզիսի 22 - Ամերիկյան կոմիտեի՝ որբ աշակերտական միության վարչության և «Շավիղ» աշակերտական թերթի խմբագրության հրավիրագիրը թուճմանյանին՝ Թիֆլիսից.

Հրավիրում են իրենց մոտ՝ մի որևէ նյութի շուրջ դասախոսելու, և բացատրում են. «Որովհետև մեր որբանոցը և մանավանդ Կրծանիսի բոլոր որբանոցները կարոտ են դասախոսների: Ձեզ էլ հայտնի է, որ մեր մատաղ հասակի մեջ հարկավոր են Ձեզ պես կյանքի, բարոյականի ոգևորիչներ, որպեսզի այսօր ինչ որ տեսնելու ենք, վաղը մեզ համար մութ չլինի և անհասկանալի»:

ԳԱԹ ԹՖ, 2506 (172 III g.):

Յուզիսի 27 - Ամերիկյան օգնության կոմիտեի կովկասյան մասնաճյուղի գրությունը թուճմանյանին.

«Милостивый государь,

Известное число тифлисских армянских деятелей проявили похвальный интерес к работе Американского Комитета и желание принять участие в стараниях Комитета улучшить положение тысяч и тысяч их отечественников, которые еще находятся под угрозой смерти от болезни и голода.

Американский Комитет искренно приветствует подобное сотрудничество.

Во 1, так как финансовое время сверх сил, во 2, так как подобное сотрудничество будет иметь ободряющее действие на жертвелей в Америке и значительно увеличит их симпатии по отношению к армянскому народу,

Американский Комитет сердечно приглашает вас присутствовать на собрании, имеющий целью обсудить этот вопрос, назначенное на 29 сего июня, в воскресенье в 8 часов, в помещении Комитета, Ново-Бейбутовская 2.

Уважающий».

ԳԱԹ ԹՖ, 875 (124 III g.):

Յուլիսի 1 - Հովհաննես Մխիթարյան ստորագրությամբ նամակ Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից:

Հիշեցնում է. «Անշուշտ կհիշեք, որ ասկե մոտավորապես ամիս մը առաջ Ձեր առաջարկությամբ «Վանի ինքնապաշտպանություն» իմ աշխատությունս հանձնեցի Ձեր նախագահությանը կազմված հանձնաժողովի անդամ ռուս գեներալին»:

Ուզում է իմանալ, թե ինչպես է ընդունվել ու գնահատվել իր աշխատությունը: Խնդրում է այդ մասին տեղյակ պահել իրեն:

ԳԱԹ ԹՖ, 1770 (406):

Յուլիսի 3 - Ավետիք Իսահակյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ժնևից.

«Սիրելի Օհաննես, Դերենիկ ջան, և բոլոր սիրելիներս, կարոտյալներս, ստացա Նվարդի և Դերենիկի սիրալիր տողերը, և շատ ու շատ ուրախացա. անսահման տխուր եմ, որ հեռու եմ հայրենիքից և բոլոր հիմ, ազիզ ընկերներից... Սիրելիք, առայժմ ոչ մի հնարավորություն չունեն վերադառնալու, ճամբու ծախս չկա, և, հակառակի պես, ոչ մի տեղից հիմնկուհիմակ հնար չկա փող ստանալու: Կովկասից փող չի գա, կուրսը ընկած է, և ինձ էլ բավական փող է պետք՝ տեղիցս շարժվելու համար. հույս ունեմ, որ մի-երկու ամսվա ընթացքում հայկական դժբախտ ճակատագիրը որոշվի, դրությունը մի քիչ կարգավորվի, հաղորդակցություն սկսվի, գուցե հնարավորություն ունենամ գործերս շտկել:

Չափազանց ձանձրացել եմ Եվրոպայից. համը վաղուց ելել էր այստեղ մնալու. վերջին տարիներն էլ գերության վիճակ էր, ասես, մի խոսքով հոգիներս ելավ:

Հույս ունեմ, որ հակառակ բոլոր Ձեր կրած դառնություններին ու գրկանքներին, հիմա լավ եք, և լավագույնի հույսերով՝ ուրախ ու ոգևորված: Բարով արժանանանք իրար տեսության, գոնե մի-երկու տարի լավ ապրելու միասին: Ամեն: Շտապում եմ վերջացնել այս երկու տողս, և գրկելով Ձեզ ամենքիդ կարոտով համբուրում եմ Ձեզ բոլորիդ:

Ձեր Ավետիք»:

ԳԱԹ ԹՖ, 1295 (144 III g.):

Յուլիսի 4 - Որբանոցի կառավարչուհի Համասփյուռ Միրզախանյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի պ. Հ. Թումանյան

Այսօր ժամը 7-ին Բարեգործականի դահլիճում կայանալիք ժողովի մասին Ձեր հրավերը զանազան որբախնամ մարմիններու ուղղված լինելով՝ պարտք կհամարենք Ձեր ուշադրության հանձնելու մի շատ կարևոր կետ:

Նկատի ունենալով, որ ժողովը զբաղվելու է անպայման մեր որբերի խնամատարության խնդրով, ես և իմ ընկերուհիներ, որ հինգ տարիներ ի վեր տարել ենք մեր երեխաների ֆիզիկական և բարոյական դաստիարակության դժվարին գործը՝ ձևականորեն միայն իբրև պաշտոնյա, իսկ իրականապես իբրև որբերին տեր, մենք կուզանք հայտնելու և խնդրելու Ձեզ, որ միանգամ ընդմիշտ ազատեք մեր երեխաները զանազան խնամակալ-խնամակալուհի ըսված մարմիններից, որոնք ոչ միայն ավելորդ ծանրություններ են, այլ միանգամայն մեր որբերի դաստիարակության և խնամքի գործը փճացնողներ և խանգարողներ են հանդիսացել: Եթե բոլոր որբանոցների պաշտոնյաները գործը շարունակաբար տարած լինեին և չմնային լոկ պաշտոնյայի դերում, այսօր նույն բանն պետք է ասեին և բոլորը:

Լիափույս ենք, որ այսօրվա ժողովը կստեղծե մի կազմակերպություն՝ ժողովրդի վստահությունը վայելող անհատներից կազմված, որը պետք է կանոնավորե-կարգավորե որբախնամության գործը և մշակե կրթական կուլտուրական մի որոշ ծրագիր, փրկելով մեր երեխաներուն այլազան հովանավորող ձեռներից:

Հարգանք՝ Համասփյուռ Միրզախանյան, կառավարչուհի Ամերիկ. կոմիտ. No 5 Գայանյան որբանոցի»:

ԳԱԹ ԹՖ, 1754 (402):

Հուլիսի 4 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Ստ. Կանայան, Ն. Սարգըսյան, Դ. Դեմիրճյան:

Նախագահը հայտնում է, որ ամերիկյան կոմիտեն առաջարկել է վարչության մի ներկայացուցիչ ուղարկել հայ հիմնարկությունների այն ժողովին, ուր քննվելու է հայ որբերի խնամատարության խնդիրը:

Որոշվում է ներկայացուցիչ ուղարկել Գյուտ Աղանյանին:

Այնուհետև նախագահը հայտնում է, որ հուլիսի 3-ի «Աշխատավորում» կա մի հոդված Դ. Վարուժանի ընտանիքի թշվառ վիճակի մասին:

Որոշվում է ստուգել տեղեկության իսկությունը, որոշել նպաստի չափը և օգնության հասնել բանաստեղծի ընտանիքին:

Այս նախագահը հայտնում է, որ հայ գրողներին օգնելու համար դրամական միջոցներ հատկացնելու մասին վարչության դիմումին ի պատասխան, ինչպես երևում է մամուլում հայտնված լուրերից, հայոց կառավարությունը մտադիր է այդ նպատակով որոշ գումար հատկացնել:

Որոշվում է հեռագրով դիմել լուսավորության նախարարին՝ պաշտոնական պատասխան ստանալու:*

*) Հեռագիրն ուղարկվել է հուլիսի 5-ին:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 181: ԹԹ, 3583:

Հուլիսի 5, Թիֆլիս - Հեռագիր Հայաստանի ժողովրդական լուսավորության նախարարին.*

«Прошу телеграммой сообщить результатам моего просьбы о пособии армянским писателям.

Председатель общества писателей-армян

Туманян».

*) Հայաստանի Հանրապետության լուսավորության (կոչվում էր Հանրային կրթության) նախարարն այդ ժամանակ Գևորգ Մելիք-Կարապոյազյանն էր:

ԵԼԺ 10, 329, 670:

Հուլիսի 5 - Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի մինիստրի գրությունը մինիստրների խորհրդին.

«Հայ գրողների ընկերության կողմից հարց է հարուցված կառավարության առաջ՝ օգնություն տալու հայ գրողներին, գիտնականներին և հրապարակախոսներին, մի գումար հատկացնելու այդ նպատակով հիշյալ ընկերությանը:

Անվիճելի համարելով, որ հայ գրչի ու գրքի վաստակավորներին տնտեսական այս ծանր պայմաններում Հայաստանի կառավարությունը պետք է հանձն առնի՝ չնայած իր գանձարանի անձուկ վիճակին, խնդրում եմ հաստատել հետևյալ օրինագիծը.

Օրինագիծ

Հայ գրողներին, գիտնականներին ու արվեստագետներին նպաստ տալու մասին

«Հարյուր հազար ռուբլի վարկ բանալ հանրային կրթության և արվեստի մինիստրի անունով՝ հայ գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին օգնության հասնելու Հայ գրողների կովկասյան ընկերության միջոցով»:

Հանրային կրթության և արվեստի նախարար
Դիվանապետ»:

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218: ԹԹ, 1128:

Հուլիսի 8 - Հայաստանի Հանրապետության լուսավորության նախարարի հեռագիրը Թիֆլիս Վրաստանում Հայաստանի ներկայացուցչությանը.

«Прошу сообщить Ованесу Туманяну. Правительство постановило отпустить сто тысяч рублей для выдачи пособия писателям, ученым и публицистам через Общество Армянских писателей. На днях вышлю деньги и инструкцию.

Министр Просвещения».*

*) Հեռագրի բլանկի վրա ռուսերեն մակագրություն. «С подлинным верно. Управляющий делами Миссии Армян в Грузии».

Այնուհետև հայերեն. «Ուղարկում եմ պարոն Հովհաննես Թումանյանին ի գիտություն:

Հ. Գ. Գործերի կառավարիչ՝ Տիգրանյան»:

ԳԱԹ ԹՖ, 2295 (1988): ԹԹ, 1129:

Հուլիսի 9 - Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի մինիստրի գրությունը Թումանյանին.*

«Կառավարության որոշմամբ մի հարյուր հազար ռուբլի է հատկացվում հայ գրողներին, հրապարակախոսներին և գիտնականներին նպաստ տալու նպատակով: Նպաստի տնօրինությունը թողնվում է հայ գրողների ընկերության վարչության հայեցողության, որը, սակայն, ի նկատի պիտի ունենա հետևյալը.

ա. Նպաստը տրվելու է հիշյալ կատեգորիայի արևելահայ և արևմտահայ անձանց անխտիր, Հայաստանում թե այլուր ապրող-ների:

բ. Նպաստը տալու յուրաքանչյուր դեպքի մասին կայացած պատճառաբանված որոշման պատճենը ուղարկվելու է հանրային կրթության և արվեստի մինիստրություն:

Հանրային կրթության և արվեստի մինիստր՝

Ս. Տիգրանյան

Դիվանապետ՝ Բ. Մեիրաբյան»:

*) Բանաստեղծի հուլիսի 5-ի մամակի պատասխանն է:

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218: ԹԹ, 1130:

Հուլիսի 9 - Տպագրվում է հաղորդում ամսի 8-ին Թումանյանի՝ Վրաստանում հայկական դիվանագիտական միսիա այցելության մասին:

Այցելության ժամանակ բանաստեղծը հայտարարել է. «Որովհետև որբերի մի մասը անցնում են հայկական կառավարության և հասարակության հոգացողությանը, և ի նկատի առնելով, որ այդ գործը պահանջում է հաս. լայն օգնություն և օժանդակություն», ուստի ինքը Հ. Թումանյանը իր ընտանիքով իր վրա է վերցնում կանոնի տուրք այդ գործի օգտին ամսական 300ռ.»:

«Նոր աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 135:

Հուլիսի 10 - Տեղի է ունենում Հայ հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի նիստ:

Քննարկվում են տարածված անհիմն լուրերը, թե Բաթումի շրջանը միացնում են Հայաստանին:

Ելույթ է ունենում Թումանյանը: Քննադատում է Հայաստանի և Վրաստանի իշխանություններին, որ անտարբեր են այդ լուրերի հանդեպ և պաշտոնապես չեն հերքում՝ թույլ տալով, որ դրանց շուրջ ավելորդ կրքեր բորբոքվեն:

Տեղի է ունենում մտքերի փոխանակություն, որից հետո որոշվում է. «Բողոքել այդ անհեթեթ լուրերի տարածման դեմ: Արտահայտել Հայրենակցական միությունների տեսակետը այդ խնդրի մասին մի բանաձևով, որը հրատարակել թերթերում և ընտրել մի հանձնաժողով՝ հանձնարարելով նրան կազմել հիշյալ բանաձևը և հանձնել մամուլին: Այս հանձնաժողովի անդամ ընտրել Հովհ. Թումանյանին, Մարգար Ավետիսյանին և Համ. Համբարձումյանին»:

ԵԼԺ 8, 651

Հուլիսի 13, Թիֆլիս - «Մեր անելիքը» թեմայով դասախոսություն է կարդում Թիֆլիսի Ցուրինյան որբանոցում:*

*) Դասախոսությունը կարդացել է որբանոցի սաների խնդրանքով (տես հուլիսի 22):

«Փարոս» երկշաբաթաթերթ, Թիֆլիս, 1919, թիվ 19:

Հուլիսի 16 - Արևմտահայ հայրենակցական միությունների

գործադիր մարմնի գրությունը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Մեծարգո պարոն Հովհ. Թումանյանին

Գործադիր մարմնի երեկույթը կազմակերպող հանձնաժողովը որոշեց ծրագրած երեկույթը (տե՛ս հունիսի 20) թողնել ապագային, իսկ այժմ տալ ազգագրական մի հանդես, ուստի խնդրում ենք Ձեզ նեղություն կրեք խոսելու ժողովարանի ամառային ակումբի վարչության հետ պայմանների և օրվա մասին: Որոշված է երեկույթը կազմակերպել ոչ վաղ, քան օգոստոսի 3-ը, շաբաթ օրը: Լիափույս ենք, որ չեք մերժի:

Քարտուղար՝ Ա. Գասպարյան»:

ԳԱԹ ԹՖ, 2563 (126):

Հուլիսի 18 - Գր. Ղափանցյանի դիմումը Թումանյանին՝ Երևանից.*

«Ի նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից բաց է թողնված որոշ գումար հայ գրողների և գիտնականներին օժանդակելու նպատակով, նվաստս, իբրև գիտության սպասավոր, խոնարհաբար դիմում եմ Ձեզ հատկացնել որոշ գումար և ինձ:

Ավարտել եմ Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետը իբրև հայագետ լեզվաբան, չորս տարի եղել եմ Գևորգյան ճեմարանում դասախոս (ներածություն լեզվաբանության, գրաբարի, պատմական քերականության և բարբառագիտության): Առայժմ ունեմ հրատարակած միայն երեք փոքր գրքույկներ՝ «Լեզվաբանական դիսցիպլիններ և լեզու», «Προσχοждение др. арм. слова армени», «Հայարմենական լեզվախմբի ազգակցական բովանդակությունը»: Գիտության ճեմարանի օժանդակությամբ (պրոֆ. Ն. Մառի միջնորդությամբ) ես ձեռնարկել էի Արարատյան բարբառի մանրամասն ուսումնասիրման, սակայն հեղափոխությունը և վերջին անցուդարձը խանգարեցին դրա ավարտմանը: Գտնվելով նյութական ծանր դրության մեջ և չկարողանալով շարունակել իմ գիտական աշխատանքներս, ես մեծապես հույս եմ տածում, որ այս իմ խնդիրը չի մնա առանց արձագանքի:

Գրիգոր Ղափանցյան»:

*) Նույն բովանդակությամբ դիմում նույն օրը Ղափանցյանն ուղարկել է նաև Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարին: Դիմումի վրա նախարարի մակագրությունը. «Ուղարկել Թիֆլիս պ. Հովհաննես Թումանյանին, «Հայ գրողն. ընկ-ն նախագահին, 18/VI»: Հաջորդ

էջին՝ «Համաձայն հանրային կրթության և Արվեստի միմիստրի մակագրության, Դիվանս սույն խնդիրը ուղարկում է «Հայ գրողների ընկերության նախագահ Զ. Թումանյանին, 20/VII»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 148/1, 148/2: ԹԹ, 3515:

Չուլիսի 18 - Համազասպ Համբարձումյանի նամակը Թումանյանին Թիֆլիսից,

«Սիրելի Հովհաննես

Սկզբունքորեն անհարմար և անընդունելի պետք է համարել, երբ մեկը զբաղվում է իր գրական գործերի տարածումով: Բայց որովհետև երեկ երեկոյան իմ աշխատությունների մասին խոսք եղավ և պարզվեց, որ դու հետաքրքրվում ես ծանոթանալ նրանց հետ, ուստի թույլ եմ տալիս ինձ ուղարկել մի քանի բան, որոնք կօգնեն քեզ մոտավոր գաղափար կազմել աշխատություններիս մասին: Ափսոսում և ցավում եմ, որ հնարավորություն չունեմ ուղարկել քեզ բոլոր աշխատություններիցս մի օրինակ, որովհետև նրանք բոլորը սպառված են. ես էլ չունեմ և ոչ մի հատ, ուստի բավականանա՞նք միայն եղածով:

Բոլոր աշխատություններս սպառված են - գտնել շուկայում անհնար է:

Աշխատություններս են՝ 1) «Արյունի էջեր», 2) «Անհունի էջերում» (ամենամեծը), 3) «Հպարտ հոգու երգերից», 4) «Թարգմանական բանաստեղծություններ», 5) «Песни Кучака Haxanema», 6) պարբերական մամուլի մեջ զանազան ժամանակ լույս տեսած բանաստեղծություններս («Մշակ», «Արշալույս», «Գործ» և այլն):

Այդ գրվածքներից ուղարկում եմ՝ 1) «Արյան էջերը» (իմ առաջին և անհաջող փորձերը) երկու օրինակ: Սոքա պատկանում եմ քեզ: 2) «Հպարտ հոգու երգերից» (այս գիրքը ես ավելի գնահատելի եմ համարում), 3) թարգմանական բանաստեղծություններս և 4) «Գործի» 11-12 համարները, որտեղ կգտնեք մի քանիսը իմ բանաստեղծություններից:

Բացի այդ - որպեսզի հնարավորություն տամ քեզ «մոլորամը» գտնել և «մոլորամով» առաջ տանել գործը, ուղարկում եմ իմ գիտական դիսերտացիոն աշխատությունը՝ «Психологические основы социально-политических и экономических явлений» - դա ներկայացվելու է համալսարան: Այդ աշխատությունը համարյա ավարտված է. այժմ զբաղված եմ դորա վերջնական մշակումով:

Այս գրքերից, ինչպես հիշեցի, քեզ պատկանում եմ միայն

երկու օրինակը «Արյան էջերի», իսկ մյուսները նեղություն կկրես մի քանի օրից հետ վերադարձնել:

Միշտ քո՝ Հ. Համբարձումյան»:

ԳԱԹ ԹՖ, 1468 (562 լր.):

Հուլիսի 20 - Տեղի է ունենում ՀԳԿԸ վարչության նիստ:

Նախագահում է Թումանյանը, քարտուղար՝ Գյուտ Աղանյան:

Վարչության անդամներից ներկա են՝ Նիկ. Աղբալյան. Դեր. Դեմիրճյան, Ստ. Կանայան:

1. Հայաստանի կառավարությունը հարյուր հազար ռուբլի է հատկացրել իբրև նպաստ կարիքավոր հայ գրողներին, գիտնականներին և հրապարակախոսներին՝ բաշխումը թողնելով վարչության հայեցողությանը:

Նախագահը տեղեկացնում է, որ նախորդ օրը վարչության անդամների և հրավիրված հայտնի գրողների մասնակցությամբ իր մոտ տեղի է ունեցել խորհրդակցական նիստ և կազմվել է միայն անվիճելի համարված հայ գրողների մի ցուցակ, որոնք ցանկալի է, որ նպաստ ստանան: Որոշվել է այդ ցուցակը առաջարկել վարչության «բարի հայեցողությանը»:

Նախագահը հատուկ գրությամբ (տե՛ս հուլիսի 20) դիմել է վարչությանը, որ եթե ընդունվի այդ ցուցակը, անպայման հեռագրով ներկայացվի կառավարությանը, քանի որ նպաստ ստացողները մաս խորհրդակցության մասնակիցներն են: Ինքը՝ որպես վարչության նախագահ, առայժմ հրաժարվում է իրեն հատկացված հարյուր հազարից: Առաջարկում է մաս ցուցակը քննելիս ղեկավարվել ընկերության կանոնադրության՝ նպաստների վերաբերյալ հրահանգներով:

Տեղեկացվում է մաս, որ Ահարոնյանի ընտանիքը նույնպես նպաստ ստանալու դիմում է ներկայացրել: Նկատի ունենալով, որ Ահարոնյանը, կառավարության ներկայացուցիչ լինելով Փարիզում, նյութապես ապահովված է՝ խորհրդակցական նիստը նպատակահարմար չի համարել նրա ընտանիքին նպաստ տալ: Առաջարկվում է, որ վարչության նիստը քննարկի այդ հարցը:

Գյուտ Աղանյանն առաջարկում է նպաստը բաշխելիս նկատի ունենալ գրողի իրական արժանիքը և կարիքավորության չափը, իսկ այդ չափը պարզելու համար պետք է հատուկ ստուգում կատարել, որպեսզի նպաստը լինի ոչ թե պարզ, այլ ծառայի իր նպատակին:

Աղբայանը, հետևելով Թումանյանի օրինակին, նույնպես առայժմ հրաժարվելով նպաստից, առաջարկում է կազմել նպաստառուների երեք ցուցակ՝ նկատի ունենալով երկու հարյուր հազար ռուբլի: Առաջին ցուցակով բաշխել ստացված հարյուր հազար ռուբլին: Այնուհետև դիմել Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերությանը և Հայաստանի կառավարությանը՝ յուրաքանչյուրից խնդրելով հիսուն հազարական ռուբլի: Երբ առաջին հիսուն հազարն ստացվի, բաժանել «հեռավոր ցուցակի» գրողներին, իսկ երբ երկրորդ հիսուն հազարն ստացվի, բաժանել թուրքահայ գրողներին, որոնք Տաճկաստանում են և անհայտ են մնացել մեզ:

2. Նախագահը հայտնում է, որ իրեն դիմել է որբերի վարչությունը և խնդրել մասնակցել հոգուտ որբերի գրադարանի կազմակերպվող երեկույթին: Ցանկալի է համարում, որ Ընկերությունը որոշ գումարով նպաստի այդ գործին:

3. Հայտնում է նաև, որ Աթ. Խնկոյանը խիստ կարիքի մեջ է և օգնության կարոտ:

4. Տեղեկացնում է, որ բանաստեղծ Հովհաննիսյանը նեղության մեջ է, ուստի ինքը Ընկերության դրամատոմսը գրավ է դրել բանկում և երկու հազար ռուբլի ուղարկել Պյատիգորսկ:

5. Հարց է առաջանում գումարելու Ընկերության ընդհանուր ժողով: Բայց պարզվում է, որ ընդհանուր ժողովների վերջին տարվա քարտուղար Վ. Տեր-Պետրոսյանը բոլոր գործերն ու արձանագրությունները չի ներկայացրել, ուստի ընկերության գործունեության մասին բավարար տեղեկություններ չկան:

6. Նախագահը հայտնում է, որ Երևանի թեմի առաջնորդի փոխանորդ է նշանակվել Ղևոնդ ա. ք. Աթանասյանը՝ Խրիմյանի և Աբովյանի աշակերտներից վերջինը, որ հայտնի է իր հասարակական գործունեությամբ:

Կարգադրում են՝

Վարչությունը հավանություն է տալիս խորհրդակցական ժողովի որոշմանը՝ միաժամանակ նշելով, որ գրողների կարիքավորության չափի մասին քննությունը դժվար իրագործելի է և անհարմար, ուստի պարզապես պետք է ղեկավարվել կանոնադրության 14 պարագրաֆով:

Որոշվում է՝ նախ՝ նկատի ունենալով ռուբլու չափազանց արժեզրկվածությունը՝ նպաստի համար նշանակել այնպիսի մի աչքի ընկնող գումար, որով հնարավոր լինի նպաստառուին շոշափելի օգ-

նութիւն ցույց տալ: Եվ երկրորդ՝ նպաստի բաշխումն սկսել հայտնի-
ներից և վաստակավորներից և հասնել մինչև նորագույնները:

Քննարկելով խորհրդակցական ժողովի և Աղբալյանի ներկա-
յացրած ցուցակները՝ առաջին նվազ նպաստ ստանալու համար ըն-
դունվեց հետևյալ ցուցակը՝

1. Հովհաննէս Թումանյան 10 հազար ռուբլի (նպաստից հրա-
ժարվում է մինչև մյուս բաժանումը)

2. Հովհաննէս Հովհաննիսյան 10 հազար ռուբլի

3. Դերենիկ Դեմիրճյան 10 հազար ռուբլի

4. Շիրվանզադէ 10 հազար ռուբլի

5. Վրթանէս Փափագյան 10 հազար ռուբլի

6. Նար-Դոս 10 հազար ռուբլի

7. Նիկ. Աղբալյան 10 հազար ռուբլի (նպաստից հրաժարվում է
մինչև մյուս բաժանումը)

8. Մանուկ Աբեղյան 7 հազար ռուբլի

9. Լեո 10 հազար ռուբլի

10. Ստեփան Կանայան 7 հազար ռուբլի

11. Երվանդ Տեր-Մինասյան 7 հազար ռուբլի

12. Գյուտ ա. ք. Աղանյան 7 հազար ռուբլի

15. Սմբատ Տեր-Ավետիքյան 7 հազար ռուբլի

14. Անանուն 5 հազար ռուբլի

Երկրորդ և երրորդ բաշխումի համար ժողովն ընդունում է
հետևյալ ցուցակը՝ իրեն իրավունք վերապահելով լրացնել այն
Տաճկաստանում և այլուր գտնված գրողներով, երբ կստացվեն հա-
մապատասխան գումարները:

Ստեփան Մալխասյանց (ստուգել), Վեսպեր, Լեռ Կամսար, Վա-
լադյան, Ստ. Զորյան, Ռէն, Շանթ, Ավ. Իսահակյան, Միք. Մանվելյան,
Արսեն Տերտերյան, Աթ. Խնկոյան, Սարգիս Քամալյան, Ստ. Տեր-
Ավետիքյան, Գար. Լևոնյան, Ադօ, Մարգար, Տ. Փիրունյան, Վ. Նա-
վասարոյան, Բ. Թովիչյան, Բ. Իշխանյան:

Լիազորել նախագահին հնարավորութիւն գտնել՝ որբանոցի
գրադարանի օգտին հատկացնելու երկու հազար ռուբլի:

Հանձնարարել նախագահին հոգ տանել Աթ. Խնկոյանին օգ-
նելու մասին:

Խնդրել Հայաստանի կառավարութեանը՝ դարձյալ մի գումար
հատկացնել գրողների համար:

Հաստատել նախագահի կատարած ծախքը և ժամանակին թափել գրավ դրած գումարը:

Պահանջել Տեր-Գևորգյանից նախկին գործերը և սեպտեմբերին նշանակել ընդհանուր ժողով:

Ընկերության կողմից հարգանք մատուցել Ղևոնդ ա. ք. Աթանասյանին՝ ընկերության նախագահի և մյուսների ներկայությամբ:

Արձանագրությունն ստորագրել են՝ Հ. Թումանյան (նախագահ), Ստ. Կանայան, Դ. Դեմիրճյան, Գյուտ Աղանյան (քարտուղար):

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 248, թերթ 139-140: ԹԹ, 1135:

Հուլիսի 20, Թիֆլիս - Պաշտոնական նամակ Գրողների ընկերության վարչությանը.

«Երեկվա՝ վարչության և հրավիրված գրողների խորհրդակցական նիստը կառավարական մի հարյուր հազար ռուբլի նպաստի (տես՝ հունիսի 15.- խմբ.) վերաբերությամբ՝ որոշ սկզբունքներ ընդունելուց և ցուցակ կազմելուց հետո՝ խնդրի վերջնական որոշումը թողեց վարչության էսօրվա նիստին:

Եվ ահա վարչության ուշադրությանն են առաջարկում հետևյալ խնդիրները:

Առաջինը. ինչպես և երեկ էի պնդում, հիշյալ սկզբունքները, դիմումներն ու նպաստավորների ցուցակը հեռագրել կառավարության և առնել նրա սանկցիան, քանի որ որոշողներն են մեծ մասամբ ստացողները: Հեռագրում բացատրել դրությունը և խնդրել կառավարությանը՝ անմիջապես պատասխանել:

Երկրորդը. վերանայել Ահարոնյանի խնդիրը, և

Երրորդը. իմ դրությունը միանգամայն տարբերվում է իմ ընկեր գրողների դրությունից էն հանգամանքով, որ ես գրողների ընկերության նախագահն եմ, ինձ են դիմում ամենքը, և ես պարտավոր եմ հոգալու նախ և առաջ ուրիշների կարիքները: Դրա համար էլ ես առայժմ հրաժարվում եմ ինձ հատկացված տասը հազար ռուբլի գումարից, խնդրում եմ էն էլ բաժանել ուրիշ կարիքավոր գրողների, և իմ խնդիրն էլ հետաձգել երկրորդ մվագին ստացողների խնդրի հետ:

Նախագահ՝ **Հովհ. Թումանյան**:

ԵԼԺ 10, 330:

Հուլիսի 20, Թիֆլիս - Պաշտոնական նամակ Թիֆլիսի որբաշակերտական միության վարչությանը.

«Ստացել են վարչությանդ հրավերը՝ ներկա լինելու միության էսօրվա ցերեկույթին, ուր դուրս են գալու մեր որբերը, որոնք բոլորը Հայոց գրողների ընկերության հոգեգավակներն են:

Հրձվում են ձեր պայծառ ոգևորությամբ և վսեմ խլրտունով:

Հայ գրողների խորհրդի և գրողների ընկերության վարչության կողմից իմ տրամադրության տակ եղած գումարից երկու հազար ռուբլի հատկացնում են ձեր հրատարակությունների գործին,* որ և կբերեն անձամբ:

Միշտ ձեր *Հովհ. Թումանյան*»:

*) Որբ-աշակերտական միությունն ուներ իր ձեռագիր պարբերականը՝ «Փարոս» անունով, որը իր գեղեցիկ ձեռագրով բազմացնում էր Ցոլակ Հայկազյանը (վանեցի որբ, հետագայում հայտնի ուսուցիչ-մանկավարժ) և բաժանում անվանի ընթերցողներին, այդ թվում և Թումանյանին այնքան ժամանակ, մինչև որ սկսում է կանոնավոր տպագրվել իբրև շաբաթաթերթ:

ԵԼԺ 10, 331, 672:

Հուլիսի 20 - Ամերիկյան կոմիտեի որբ աշակերտական միության վարչության հրավիրագիրը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Քնար» դրամատիկ խումբը որբերի մասնակցությամբ հոգուտ որբ աշակերտության տալիս է շքեղ ցերեկույթ. խնդրում ենք Ձեր ներկայությամբ հարգեք ցերեկույթը:

Կիրակի, սկիզբը ժամը 3-ին:

ԳԱԹ ԹՖ, 2505 (172 III g.):

Հուլիսի 21 - «Պատանի» ավանախի խմբագրության կողմից Մ. Էփրիկյանի գրությունը Թումանյանին.

«Մեծարգո պ. Հովհ. Թումանյան

Ահա Ձեր պահանջած երիտասարդ գրողների ցուցակը.

Միքայել Մանուկյան, 2. Ստ. Ջորյան, 3. Վ. Վալադյան, 4. Արմենուհի Տիգրանյան, 5. Գառնիկ Քալաշյան, 6. Սեյրի, 7. Լեյլի, 8. Եղիշե Չարենց, 9. Վարդգես Ահարոնյան, 10. Մ. Էփրիկ, 11. Համբ. Մազմանյան, 12. Ազատ Վշտունի, 13. Պահարե, 14. Արշ. Խոնդկարյան»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 167/1, 167/2: ԹԹ, 3516:

Հուլիսի 22 - «Սերգեյ Գորոդեցկու դասախոսությունը հայկական հարցի մասին» հոդվածում Օ. Ս ստորագրությամբ հեղինակը մասնավորապես տեղեկացնում է, որ դասախոսը, «կարդալով Դ. Վարուժանից ու Հովհ. Թումանյանից նմուշներ, նկատեց, որ նման

բանաստեղծությունները հանճարի արդյունք են և Վարուժանին դասեց Մեթերլինգի շարքին»:

«Նոր աշխատավոր», Թիֆլիս, 1919, թիվ 145:

Հուլիսի 23 - Մ. Էփրիկյանի երկտողը Թումանյանին.

«Մեծարգո պ. Հովհ. Թումանյան

Հետագա թյուրիմացություններից խուսափելու համար խընդրում են իմ ուղարկած երիտասարդ գրողների ցուցակը (տե՛ս հուլիսի 21.- խմբ.) վերադարձնել կամ չեղած համարել».*

*) Պատճառը հավանաբար այն երիտասարդ գրողների բողոքն է, որոնց անունները ցուցակի մեջ չեն մտել:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 167/1, 167/2: ԹԹ, 3516:

Հուլիսի 24, Թիֆլիս - Նամակ Երևան՝ Գրիգոր Ղափանցյանին:

Ստացել է նպաստ ստանալու մասին Ղափանցյանի դիմումը՝ հանրային կրթության և արվեստի մինիստրի մակագրությամբ: Ցավում է, որ չի կարող բավարարել նրա խնդիրը, քանի որ կառավարությունից ստացած հարյուր հազար ռուբլի գումարն արդեն բաշխված է (տե՛ս հուլիսի 20):

Հիշեցնում է, որ «մի երկու տարի առաջ» Թիֆլիսում հիմք դրվեց Հայկազյան ընկերությանը, որ «տաճկական արշավանքի» և դրան հաջորդած դեպքերի հետևանքով մնաց անավարտ: Ներկայացնում է ընկերության նպատակն ու խնդիրները՝ «պիտի գրականությունը, գիտությունն ու արվեստները հովանավորեր, պաշտպաներ ու զարգացներ»: Կարևորում է հատկապես բարբառների հավաքման գործը. «Այժմ էլ արդեն պետություն ունենք. հետևաբար ընկերությունը պիտի հրաժարվի շատ կետերից իր կանոնադրության ու կենտրոնական որոշ գործի վրա: Մենք արդեն Աճառյանին մշտական թոշակ էինք կապել ու հրավիրում էինք մեր լեզուն հավաքելու գործին (տե՛ս 1917, օգոստոսի 11.- խմբ.) - բայց ճանապարհները փակվեցին: Մենք նույնիսկ լեզվի համար հատուկ գումար ունենք: Եթե Դուք կնվիրվեք լեզվի հավաքման գործին – միանգամ ընդմիշտ կկապվեք էդ գործի հետ, և հուսով եմ - անկարոտ: Եթե համաձայն եք – խնդրեմ գրեցեք Ձեր համաձայնությունն ու առաջարկը, որ ես առաջարկեմ ընկերության վարիչներին:

Հարգանքով՝ *Հովհ. Թումանյան*»:

ԵԼԺ 10, 331-332:

Հուլիսի 28 - ՀԳԿԸ վարչության անունից պաշտոնական պատասխան «Ժողովրդի ծայն» օրաթերթի հարցապնդմանը.

««Ժողովրդի ծայն»-ի հարգելի խմբագրության

«Ժողովրդի ծայն»-ի հմ. 158-ում խմբագրության կողմից արած հարցապնդման Վարչությունն հարկ է համարում պատասխանել:

Ամենից առաջ Վարչությունը ցավում է, որ ստիպված է նկատելու խմբագրությանը, որ Հայ գրողների ընկերության վարչությանը հարցապնդում անելու ժամանակ, երբ խոսքը վերաբերում է անվիճելի հայ գրողներին, հեզմական տոնը շատ է անտեղի ու անվայել:

Երկրորդ՝ արդար և այդ 100,000 ռուբլի գումարը բաժանվելու է 12 հոգու վրա, իսկ դրանից դուրս կազմված է 19 հոգու մի այլ ցուցակ, որը հետզհետե պիտի լրացվի, որոնց հատկացրած է հետագա ստացվելիք գումարները:

Ինչ վերաբերում է քննության, Վարչությունը ղեկավարվել է թե՛ ընդհանուր ժողովի տված հրահանգի 14 կետով և թե՛ Հայաստանի կառավարության տված ցուցմունքով:

Վարչության նախագահ՝ Հովհ. Թումանյան

28 հուլիսի, 1919»:*

*) Թումանյանի այս մամակը ԵԼԺ տասհատորյակում տեղ չի գտել:

«Ժողովրդի ծայն», 1919, թիվ 160:

Հուլիսի 31 - «Ժողովրդի ծայն»-ի խմբագրության պատասխանը Թումանյանի պաշտոնական մամակին.

«Ով կարդացել է մեր հարցապնդումը, նա շատ լավ գիտե, որ մենք ամենևին դեմ չենք եղել, որ այդ 100,000 ռ. բաժանվեին թեկուզ հենց նույն անվիճելի գրողների միջև, որոնց մեջ և այժմ բաժանված է՝ չնայած այն հանգամանքին, որ մեր տեսակետով նրանք բոլորն էլ գրեթե շատ թե քիչ ապահովված մարդիկ են, և նյութական կարիքը նրանց այնքան շատ չի ճնշում, որքան մյուս ոչ անվիճելիներին, բայց մենք բողոքել ենք գումարի բաժանման այն տնային ձևի դեմ, որի շնորհիվ իրենք՝ հայ գրողները, հնարավորություն չունեն մասնակցելու այդ նպաստների բաժանման մեջ:

Նամակը պարզում է և մի այլ հանգամանք. այն, որ այս գումարը, ինչպես ինքը՝ Վարչությունն էլ խոստովանում է, բաժանված է արդեն 12 անվիճելի գրողների մեջ, իսկ 19 հոգու մի այլ ցուցակ է կազմված, որի մեջ մտնողները պիտի ստանան հետագա գումարները:

Պարզ և հասկանալի:

Ուրեմն ոչ անվիճելիները և նյութապես տակավին չապահովվածները թող սպասեն. մի օր նրանք էլ կստանան:

Երանի հավատացյալներին:

Խմբագրություն»:

«Ժողովրդի ձայն», 1919, թիվ 160:

Յուլիս - Գրում է «Պետք է պարզ ասել» հոդվածը.*

«Վրաստանի և Հայաստանի հանրապետական կառավարությունները մինչև օրս չկարողացան էս երկու երկրի մեջ մի համերաշխություն ստեղծել կամ գոնե պահպանել հին բարի հարաբերությունները: Մի կապ, որ էնքան հեշտ ու հնարավոր էր երկու ժողովրդի թե՛ պատմական ու կուլտուրական կյանքի և թե՛ ներկա վիճակի առնչությունով: Երկու կողմի մամուլն էլ միշտ հրահրեց հակառակության կրակը, իբրև թե պաշտպանելով ժողովուրդների շահերը:

Ինչ ասել կուզի, որ էս տեսակ մթնոլորտում չարություններն էլ հեշտ են գտնվում և նույնիսկ ստեղծվում»: Իբրև օրինակ բերում է տարածված այն լուրը, թե Բաթումի շրջանը միակցում են Հայաստանին:

Զգիտես որտեղից եկող այդ լուրը ավելի է բարդացրել հայվրացական առանց այն էլ լարված հարաբերությունները: «Պաշտոնական հերքում էլ չկա տակավին, և մութն է: Շուրջներս տիրում է նույն հին բյուրոկրատական աղջամուղջը»: Հայ ժողովրդի ամունից ասում են, թե ժողովուրդը պահանջում է. «Անկարելի բան է, որ էս տեսակ հայկական պահանջ լինի: Բաթումի շրջանը երբեք հայկական չի եղած և չի կարող լինել: <....> Եվ առհասարակ սահմանների խնդրին դառնալով՝ պետք է ասել, որ վրաց ժողովուրդը <....> իր հարևան երկրներից գավառամաս չի խլել ու վրան նստել և ոչինչ չունի ետ տալու. ընդհակառակը, նա կորցրել է և միայն առնելիք ունի: Սիա էդ առնելիքը պետք է ճիշտ որոշվի, որ ոչ զրկված մնա, ոչ էլ հեռու գնա:

Պետք է միանգամ ընդմիշտ ընդունել էս ճշմարտությունը և պարզ ասել»:

*) Հոդվածի հիմնական դրույթները Թումանյանը ներկայացրել է ՀՀՄՍ կենտրոնական խորհրդի նիստում ունեցած իր ելույթում (տե՛ս հուլիսի 10):

ԵԼԺ 8, 448-450:

Օգոստոսի 2 - Տեղի է ունենում ՀԳԿԸ արտակարգ ընդհանուր ժողովը:

Բացելով ժողովը՝ վարչության նախագահ Հովհ. Թումանյանը հայտնում է, որ Հայաստանի կառավարությունից հարյուր հազար ռուբլի գումար էր ստացվել հայ գրողներին նպաստ տալու համար: Գումարը վարչությունը բաժանել էր մի քանի գրողների (տե՛ս հուլիսի 20), որի առթիվ մի խումբ գրողներ, դժգոհ լինելով, հայտարարություն են ներկայացրել՝ պահանջելով ընդհանուր ժողով գումարել՝ այդ առթիվ խորհրդակցելու համար: Այդ նպատակով վարչությունը գումարել է սույն ժողովը:

Ապա առաջարկում է ընտրել ժողովի նախագահ: Նախագահ է ընտրվում Տիգրան Հովհաննիսյանը, քարտուղար՝ Մարգարը:

Նախագահողը խնդրում է Թումանյանին՝ ներկայացնել գործի էությունը: Թումանյանը տեղեկացնում է, որ ինքը՝ իբրև գրողների ընկերության վարչության նախագահ, աչքի առաջ ունենալով գրողների նյութական վատ կացությունը, օգնության խնդրանքով հատուկ գրությամբ* դիմել էր Հայաստանի կառավարությանը և համարային կրթության նախարարից ստացել պաշտոնական պատասխան:** Ստանալով այդ պատասխանը՝ վարչությունը մի քանի գրողների մասնակցությամբ նիստ է գումարում և որոշում գումարը մասնատրել արձանագրության մեջ նշված գրողներին:***

Այնուհետև՝ գաղտնի քվեարկությամբ մի քանի դիմողների (Ազատ Վշտունի, Ստ. Թևոսյան, Հ. Համբարձումյան, Գ. Ղարաջյան) ընկերության անդամ ընդունելուց հետո, ժողովն անցնում է հիմնական հարցի քննարկմանը:

Վարչության նիստի որոշումը բողոքարկողների անունից Հ. Համբարձումյանը բացատրություններ է տալիս բողոքարկման շարժառիթների վերաբերյալ: Ասում է, որ համաձայն ընկերության կանոնադրության՝ վարչությունը գրողներին օժանդակություն կարող է տալ միայն ընդհանուր ժողովի որոշմամբ և նրա կատարած նախահաշիվին համապատասխան: Քանի որ կառավարությունը դրամը ուղարկել է վարչությանը և ոչ մասնավոր անհատի, ուստի վարչությունը առանց ընդհանուր ժողովի չի կարող մասնատրել գումարը: Երկրորդ՝ մասնատրելիս գրողներին բաժանել են կատեգորիաների, որ սխալ է, և երրորդ՝ մասնատրողները եղել են իրենք՝ նպաստ ստացողները, որ առնվազն անհարմար է: 10 հոգուց բաղկացած խորհրդակցությունը ընդհանուր ժողով գումարելու պահանջով

վարչությանը դիմել է՝ աչքի առաջ ունենալով այս «անհարթությունը»:

Հայր ճուղուրյանն իր ելույթում այն կարծիքն է հայտնում, թե չնայած մասնատրելու իրավունքը վարչությանն է պատկանում, սակայն վերջինս իրեն իրավունք չպիտի վերապահեր ըստ իր հայեցողության սրան-նրան գրող համարել, մյուսներին՝ ոչ: Այդպիսի որոշում կարող է կայացնել հատուկ ընտրված մի հեղինակավոր մարմին:

Մադաթ Պետրոսյանը հայտնում է, որ վարչությունը այդ որոշումը կայացնելիս լրիվ կազմով չի եղել, բացի դրանից խորհրդակցության են հրավիրվել այն գրողները, որոնք նպաստ պիտի ստանային:

Թումանյանը բացատրում է, որ վարչությունն այդ քայլն արել է կանոնադրության համաձայն, ըստ որի՝ վարչությունը իր ունեցած եկամուտները մասնատրում է կարիքավոր գրողներին. այստեղ կանոնադրության ոչ մի խախտում չկա, մանավանդ որ հատուկ գումարը տրամադրվել է հատկապես նպաստ տալու համար: Վարչությունը նկատի է ունեցել, որ ընդհանուր ժողովին հաշիվ կտա: Իսկ ինչո՞ւ է հատկապես այդ 12-ի վրա բաժանվել գումարը, ժողովի արձանագրությունից էլ երևում է, որ այնտեղ իրոք խոսք եղել է, թե ովքեր են անվիճելի գրողները. դա առհասարակ շատ ծանր և դժվար խնդիր էր, դրանով շատ է զբաղվել վարչությունը և ղեկավարվել է գլխավորապես այն անկետայով, որ երկու տարի առաջ կատարվեց Հայկազյան ընկերության հիմնարկության ժամանակ: Բայց խոսք է եղել նաև այն մասին, որ շատ գրողներ կարող էին դուրս մնացած լինել, ուստի վարչությունը ինքը կազմել է մի ցուցակ, որ դեռ կիսատ է և կշարունակվի. աչքի առաջ ենք ունեցել, որ վարչությունը կառավարությունից նոր գումար պիտի խնդրի, որը բարեգործական ընկերության խոստացած հիսուն հազար ռուբլու հետ կմասնատրի նոր ցուցակի մեջ մտած գրողներին: Գրողները այսպիսի սահմանափակ թվով վերցնելու խնդրում դեր է խաղացել նաև գումարի փոքրությունը. այժմյան հաշվով հարյուր հազար ռուբլին մի չնչին գումար է, և նպաստ տալիս պետք էր այնպես մասնատրել, որ ստացողը մի շոշափելի բան ստանար: Օրինակ՝ երբ խոսք եղավ արտասահմանում գտնվող գրողների մասին, վարչությունը առայժմ նրանցով զբաղվելը մի կողմ դրեց՝ աչքի առաջ ունենալով, որ եթե որևէ գումար որոշվի էլ, մինչև ուղարկվի, տեղ հասնի,

արտասահմանի վալյուտայի վերածվի, շատ չնչին գումար պիտի դառնա, ուղարկելու էլ համարյա հնարավորություն չկա: Մինչև այժմ վարչությունը շատ նպաստներ է տվել, նույնիսկ վիճելի գրողներ նպաստ են ստացել, սակայն ոչ մի բողոք չի եղել մինչև օրս, իսկ այսօր, երբ կառավարությունը մի գումար է հատկացրել այդ նպատակով և հատկապես անվիճելի գրողների համար, բողոք է բարձրանում: Մյուս կողմից ես պետք է հայտարարեմ, որ այդ գումարները ստացողները ինձ հայտնել են, որ իրենք հրաժարվում են նպաստն ընդունել, քանի որ խոսակցության նյութ է դարձել:

Թումանյանի բացատրությունից հետո որոշվում է նախ քննել այն հարցը, թե ձևական տեսակետից վարչությունը իրավացի՞ է վարվել՝ հարցը բարձրացնել առանց ընդհանուր ժողովի, ապա վարչության որոշումը քննել ըստ էության:

Ելույթ են ունենում՝ Յ. Մալխասյան, Յ. Ղազարյան, Յ. Գենջյան, Ա. Աթանասյան, Յ. Համբարձումյան, Գ. Ղարաջյան: Բացի առաջինից բոլոր խոսողները պնդում են, որ վարչությունը առանց ընդհանուր ժողովի իրավունք չունեն որոշում կայացնելու, որովհետև նախագահի և մինիստրի գրությունները ցույց են տալիս, որ դրամը վարչությանն է եկել և ոչ անհատի անունով և հատկացվել է գրողներին առհասարակ և ոչ անվիճելիներին միայն: Կանոնադրությամբ վարչությանը չի վերապահվում այնպիսի իրավունք, ինչպիսին է այդպիսի գումարի բաշխումը: Այդ գումարը ուղարկելիս կառավարությունը չի հիշում անուն-անուն, թե ում պետք է հատկացվի, ուրեմն ընկերության ժողովի որոշմամբ պետք է մասնատրվի: Որոշումը կայացրել են վարչության հինգ անդամներ, որոնք բոլորն էլ շահագրգռված էին, և վերջապես ցուցակի կազմումը ևս ձևական տեսակետից սխալ է:

Թումանյանը նորից հայտնում է, թե որովհետև 12 հոգին հրաժարվում են գրողների ընկերության միջոցով նպաստ ստանալ, ուստի այս աշխատանքը ավելորդ է, և ինքը չի կարող կառավարությունից դրամն ստանալ: Կառավարությունը, ճիշտ է, անուններ չի տվել, բայց թողել է վարչության հայեցողությանը, ուստի ձևական տեսակետից վարչությունը ճիշտ է վարվել:

Հարցը սպառված համարելով՝ քվեարկության է դրվում հետևյալ բանաձևը՝

1) Ձևական տեսակետից Վարչությունը կանոնադրության հակառակ է վարվել՝ առանց ընդհանուր ժողովի որոշում կայացնելով (15 ձայն):

2) Ձևական տեսակետից վարչությունը վարվել է կանոնադրության համաձայն, և կարիք չկար հարցը ընդհանուր ժողով բերել (23 ձայն):

Այնուհետև խնդիրը քննվում է ըստ էության, թե վարչությունը նպաստը հատկացնելիս ինչ սկզբունքներով է ղեկավարվել:

Յ. Գեոքյանը բողոքում է այն վերաբերմունքի դեմ, որ վարչությունը ցույց է տվել դեպի նոր գրողները և հատկապես դեպի իրեն իբրև առանձին հոսանքի ներկայացուցչի:

Ս. Պետրոսյանը, Յ. Մախասյանը, Յ. Ղազարյանը, Տեր-Մանուկյանը, հայր ճուղուրյանը այն միտքն են հայտնում, որ նախ՝ դրանք եկել է ոչ թե միայն նշանավոր գրողների համար, այլ առհասարակ գրողների, վարչությունը աչքաթող է արել նոր-ապագա գրողներին, շատ գրողներ ցուցակից դուրս են մնացել, մյուս կողմից՝ սա ապահովություն չէ, այլ նպաստ, ուստի պետք էր աչքի առաջ ունենալ ավելի նյութական կարոտությունը, ոչ թե գրական արժանիքները:

Յ. Համբարձումյանը ժողովին ներկայացնում է իր կազմած մի գրություն, որտեղ թվարկվում են այն հատկանիշները, որոնցով մեկը կարող է գրող համարվել, ինչպես մնա և համառոտ կանոնադրություն՝ նպաստը բաշխելու ժամանակ ղեկավարվելու համար:

Գ. Ղարաջյանը, վարչության որոշումը սխալ համարելով, առաջարկում է ընտրել մի հանձնաժողով, որը ընդհանուր ժողովի տեսակետների համաձայն գումարը կմասնատրի գրողներին:

Տ. Հովհաննիսյանը առաջարկում է վարչության վճիռը թողնել անփոփոխ, միայն առայժմ 100 հազարի կեսը տալ վարչության որոշած գրողներին, մյուս կեսը հատկացնել ուրիշներին, իսկ հաջորդ անգամ ստացված ֆոնդից 50 հազար ռուբլին տալ վարչության որոշածներին:

Ստ. Լիսիցյանը առաջարկում է բաշխումը թողնել վարչությանը, որը կվերաբնեն իր որոշումը՝ աչքի առաջ ունենալով գրողի ոչ միայն արժանիքը, այլև կարիքը:

Այս առաջարկները դրվում են քվեարկության: Առաջինն ստանում է 15 կողմ, 12 դեմ, 1 ձեռնպահ, երկրորդը՝ 4 կողմ, 19 դեմ, երրորդը՝ 8 կողմ, 15 դեմ:

Առաջին առաջարկը համարվում է ընդունված: Սակայն հանձնաժողովի ընտրությունը թողնվում է հաջորդ նիստին՝ ժամանակ չլինելու պատճառով:

Ժողովը շարունակվում է օգոստոսի 6-ին:

Կարդացվում և մի քանի ուղղումներով հաստատվում է նախորդ նիստի արձանագրությունը:

Այնուհետև ԶԳԿԸ վարչության նախագահ Թումանյանը հանդես է գալիս հատուկ հայտարարությամբ: «Մեր ընկերությունը, – ասում է նա, – գրողների, գիտնականների, լրագրողների ընկերություն է, ուստի մենք չենք կարող անուշադիր լինել դեպի մամուլը.**** և ես չգիտեմ՝ այն սխալները, որ մտել են այդ արձանագրության մեջ, թյուրիմացությամբ արդյունք են, թե՞ դիտավորյալ: Ես բողոքում եմ այդ ձևի վերաբերմունքի դեմ. օրինակ՝ «Ժողովրդի ձայնի» մեջ գրված է, որ ընկերությունը մեծ թափով հավաքել է անդամավճարները՝ սպառնալով չվճարողներին թույլ չտալ ներկա լինել ժողովին, մինչդեռ շատերը չեն վճարել, և ոչ ոք նրանց չի զրկել ներկա լինելու իրավունքից. գրված է, որ կային անդամներ, որոնք 5-6 տարի չէին վճարել, նույնիսկ վարչությանը մոտ եղող անձնավորություններ, և գրողը վարչությանն է մեղադրում այն բանում, որի համար պիտի մեղադրեր չվճարողներին: Գրված է, որ վարչությանը և վարչության նախագահին ցանկալի չէր ընդհանուր ժողով գումարելը, մինչդեռ եթե իրոք այդպես լիներ, վարչությունը ամենայն հեշտությամբ կարող էր, հիմնվելով կանոնադրության վրա, 10 հոգու հայտարարությամբ ժողով չգումարել և շատերին անդամ չհամարել՝ իբրև անդամավճար չտվողների, որովհետև 5 տարի անդամավճար չտվողը չէր կարող անդամ համարվել և այլն: Իսկ «Նոր աշխատավորը» գրում է, թե որովհետև մամուլի մեջ ասել էին՝ «12 առաքյալների» վրա են բաժանել գումարը, ուստի գրողները հրաժարվել են ստանալ նպաստը, մինչդեռ այստեղ քանիցս հայտարարվեց, որ նրանք հրաժարվել են, որովհետև նպաստի խնդիրը ժողովի առարկա է դարձել, որ մինչև այժմ նպաստներն այդ ձևով չեն տրվել և այլն»:

«Ժողովրդի ձայնի» խմբագիրն ասում է, որ իր թերթի հրապարակումներում որևէ չար դիտավորություն չի եղել:

Ժողովի քարտուղար Մարգարը առաջարկում է նպաստը բաշխելու համար առանձին հանձնաժողով չընտրել, այլ երկու-երեք հոգու հանձնարարել, որ վարչության հետ վերանայել կայացված որո-

շունը՝ ընդհանուր ժողովի պահանջների համաձայն: Հարցը մնում է առկախ և թողնվում հաջորդ նիստին, որ տեղի է ունենում օգոստոսի 9-ին:

Այս նիստն ամբողջապես անցնում է բանավեճերով մասնաժողովի ընտրության, նրա կազմի, կատարելիք դերի, նպաստի բաշխման սկզբունքների և դրանց հետ կապված հարցերի շուրջ: Թումանյանն իր ելույթում նկատում է, որ վարչությանը քննադատում էին, թե վարչության մասնատրող անդամները իրենք իրենց նպաստ են բաժանել, մինչդեռ ընդհանուր ժողովի որոշմամբ էլ մասնաժողովի անդամները իրենք ևս կարող են նպաստ ստանալ: Ուրեմն այդ որոշումով ժողովը անվստահություն է հայտնում վարչությանը, հակառակ նրան, որ շատ ճառախոսներ, ժողովն էլ քվեարկությամբ վստահություն են հայտնել վարչությանը: Ինչ վերաբերում է վարչության գալիք դիրքին, պիտի ասել, որ վարչությունը այս խնդրում, ինչպես հայտարարել է, ոչ մի մասնակցություն չի ունենալու, բայց ընտրվելիք հանձնաժողովի գործունեության դեմ ոչ մի խոչընդոտ չի հարուցանի: Միայն գործերի մասին պիտի մանրամասն զեկուցում ներկայացնի հայոց կառավարությանը:

Վերջապես ընտրվում է հանձնաժողովը՝ Տ. Հովհաննիսյան, Ն. Աբելյան, Մ. Պետրոսյան, Գ. Ղարաջյան և Հ. Քոչարյան: Հանձնաժողովին հանձնարարվում է նպաստների բաշխումը կատարել՝ աչքի առաջ ունենալով ստացողի կարիքը և արժանիքը:*****

*) Արձանագրության մեջ բերվում է գրության տեքստը (տե՛ս հունիսի 15):

**) Արձանագրության մեջ բերվում է նաև պատասխան գրության տեքստը (տե՛ս հունիսի 9):

***) Կարդացվում է այդ նիստի արձանագրությունը՝ նպաստառուների ցուցակով (տե՛ս հունիսի 20):

****) ՀԳԿԸ այս ձգձգված ընդհանուր ժողովը լայնորեն լուսաբանվում է մամուլում: Օբյեկտիվ տեղեկատվության կողքին լինում են նաև միտումնավոր ու կողմնակալ հրապարակումներ:

Առավել ակտիվություն են ցուցաբերում «Նոր աշխատավոր» և «Ժողովրդի ձայն» թերթերը: Առաջինն աշխատում է ծավալվող իրադարձությունները ներկայացնել անկողմնակալ դիրքորոշմամբ: Երկրորդի հրապարակումները Գրողների միության վարչությանը վարկաբեկող միտվածություն ունեին: Ահա, օրինակ, ինչպես է ներկայացնում ամբողջ անցուդարձը «Ժողովրդի ձայն»-ը. «Վարչությունը, ստանալով այդ գրությունը, հապճեպ խորհրդածության է հրավիրում հայ գրողներից մի քանի անձնավորություններ և իր ոչ լրիվ

կազմով որոշում այդ ամբողջ գումարը բաժանել 12 հոգու վրա՝ յուրաքանչյուրին տալով 7-ից մինչև 10 հազար ռուբլի և այդպիսով հարցը փակել։ Ստացողները լինելու են վարչության անդամները և այն գրողները, որոնք և մասնատրում են այդ գումարը։ Այդ լուրը հրապարակ գալով՝ ընկերության 10 անդամներ, գտնելով այդ մասնատրությունը անարդար և միևնույն ժամանակ պատվո խնդիր, բողոք են ներկայացնում այդ խնդիրն ընդհանուր ժողովի քննության դնելու։ Այդ բողոքը մեծ տհաճություն է պատճառում թե՛ վարչությանը, թե՛ այն անձանց, որոնց վրա մասնատրված էր գումարը, և ահա նրանք, իրենց անձը բացարձակաբար քննության անձեռնմխելի համարելով, որոշում են հրաժարվել այդ գումարները ստանալուց, որի հիման վրա էլ վարչությունը, ինչպես հայտնվեց այդ ժողովում, որոշում է կամ այդ գումարը բոլորովին չստանալ և կամ հայտնել Հայաստանի կառավարությանը վարչության կազմած բաշխման ցուցակը և ստանալ նրա սանկցիան։ Դա մի տեսակ սպառնալիք էր վարչության կողմից, որ ուղղվեց դեպի ընդհանուր ժողովը, որպիսին մեծ վիճաբանություն հարույց»։

Հանդես են գալիս նաև առանձին անհատներ, որոնք անիմաստ, նույնիսկ զավեշտալի են համարում գրականության հետ ուղղակի կապ չունեցող այդ խնդրի շուրջ ծայր առած աղմուկն ու իրարանցումը։ Վահան Թոթովենցն, օրինակ, ոչ առանց հեզմանքի, գրում է. «Լուծվելիք հարցը սա է։ Պետք է վերջնականապես կատեգորիաների բաժանել գրողները՝ հին գրողներ, նոր գրողներ և երիտասարդ գրողներ։ Այս բաժանումը պետք է ըլլա բոլոր գրողներու մասնակցությամբ։

Հովհ. Թումանյանն մինչև Ազատ Վշտունին պետք է իրենց տեղը գիտնան»։

*****) Այդ մասնաժողովը ունենում է 5 նիստ (օգոստոսի 16-29)։ Վերջին նիստում որոշում են հարյուր հազար ռուբլին բաշխել հետևյալ կերպ՝ 6000-ական՝ Հովհ. Թումանյան, Դ. Դեմիրճյան, Նար-Դոս, Վ. Փափազյան, Հ. Հովհաննիսյան, Շիրվանզադե. 4000-ական՝ Մանվելյան, Թորանյան, Խնկոյան, Մատենճյան, Վ. Վալադյան, Դ. Անանուն, Ս. Ավետիսյան, Արամայիս, Ե. Լալայան. 2500-ական՝ Հ. Աղաբաբ, Բ. Այվազյան, Ս. Զորյան, Տեր-Գրիգորյան, Տ. Փիրունյան, Ս. Մանալյան, Ազատ Վշտունի, Բաբայան, Սրինգ, Պ. Աբելյան, Վրույր (ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 218, թերթ 92-93։ ԹԹ, 1143)։

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218, թերթ 73-78։ «Ժողովրդի ձայն», 1919, թիվ 159, 160, 165, 168, 171։ «Նոր աշխատավոր», 1919, թիվ 157, 160, 163։

Օգոստոսի 3 - Տպագրվում է հաղորդագրություն Թիֆլիսի Ցուրիխյան որբանոցում թուժանյամի կարդացած դասախոսության (տե՛ս հուլիսի 13) մասին:

Տեղեկացվում է. «Հուլիսի 13-ին Ցուրիխյան որբանոցում դասախոսեց մեր ամենիս սիրելի Հովի. Թումանյանը «Մեր անելիքը» նյութի շուրջը»:

Բերվում է դասախոսության շարադրանքը.* «Նա, խոսելով ներկա դրության մասին, ասաց, որ մեր երեկվա ազատությունը** դեռ շատ թերի է, սա միայն մեր ֆիզիկական ազատությունն է, իսկ մեր մեծ, իսկական ազատությունն այն ժամանակ կլինի, երբ մենք հոգով ու մտքով էլ կազատվենք թուրքերից: Հայը, երկար ժամանակ ենթարկվելով թուրքերին, թաթարներին և ուրիշ կիսավայրենի ազգերին, յուրացրել է նրանց վատ հատկությունները, որոնցից պետք է ազատվել, և նա համարեց այդ մեր ազգի ամենամեծ դժբախտությունը:

Բայց,- ասաց,- իմացած եղեք, որ հայը ստեղծագործող և ազնիվ ցեղ է, ուրեմն հռչակավոր Բայրոնի ասածները հայի մասին, թե «ինչ առաքինություններ որ ունեն հայերը, դա նրանց սեփականն է, իսկ ինչ վատ հատկություններ որ ունեն, վերցրել են իրենց տիրապետող ազգերից»,*** միանգամայն ճշմարիտ են:

Նա հայերի և թուրքերի միջև եղած տարբերությունը պարզելու համար օրինակ բերեց հետևյալը: Ինչպես բոլոր քրիստոնյա ազգերը, այնպես էլ հայը, կնոջը այնքան է բարձրացրել, որ, պատկերը եկեղեցում դրած, նրան Աստվածամայր անունն է տվել և պաշտում է, իսկ թուրքը բանտարկել է հարեմում և նրան համարում է մի ստորադրյալ էակ՝ լոկ իր քմահաճույքին ծառայող:****

Բացի այդ, նա հրաշալի օրինակ բերեց հայի ստեղծագործող մտքի գոյության ու գեղեցիկին երկրպագու լինելուն: Օր. 1896-ին, երբ Վանում կոտորած էր տեղի ունենում, թուրքերը, ամեն բան փշրելով, ջարդելով, մարդկանց սպանելով մտնում են մի մարդու տուն, այդ ահ ու սարսափի մեջ մարդը սկսում է պաշտպանել իր շինած արձանը, որպեսզի չկոտրեն, այնինչ թուրքերը մարդկանց էլ էին կոտորում:

Հեռու չգնալու համար օրինակ բերեց հայ որբերի «Փարոսն» էլ:

Հապա մենք ինչպե՞ս կգտնենք մեր ազատությունը: Երևի շատերը կարծում են՝ թուրքերին սպանելով, վրեժ առնելով, ո՛չ, սա ար-

դեն ինքնըստինքյան դժբախտություն է. մենք սպանելով՝ թուրքին հասցնում ենք իր նպատակին, նմանվում ենք նրան, մենք պետք է աշխատենք չնմանվել նրան, այլ նրան ետ դարձնել, նմանեցնել մեզ: Այն ազգերը, որոնք վրեժով են լցված իրար դեմ, համգստություն չունեն, իրար *կոտորում* են, փչացնում իրարու վաստակ և իրար հասցնում մեծամեծ վնասներ:

Այդպիսի բաներից ազատվել դժվար է, որովհետև մի բան, որ յուրացրել ենք, դժվար ենք հրաժարվում նրանից»:

Իբրև օրինակ, ինչպես նշվում է հաղորդագրության մեջ, բերում է աստվածաշնչյան հայտնի ավանդությունը՝ դեպի Ավետյաց երկիր իրենց առաջնորդող Մովսեսից անապատում թափառող հրեաների դժգոհության մասին, թե իրենք եգիպտական գերության մեջ ավելի լավ էին զգում իրենց:

Այնուհետև. «Ահա ճիշտ այսպես. այն ժամանակ կլինի մեր մեծ ազատությունը, երբ օտարների մեզ տված վատ հատկություններն ու սովորությունները կմեռցնենք մեր հոգում:

Եվ վերջում. «Ես հավատում եմ, որ սա մեր ստրկության վերջալույսն է, և սկսում է բացվել մեր մեծ ազատության արշալույսը, և դուք եք, որ հիմք կդնեք դրան: Իհարկե, դուք բոլորդ էլ չեք, սակայն ձեր միջից կլինեն անպատճառ: Չկարծեք, թե ով որ աղքատ է, որք է, նա չի կարող մեծ մարդ դառնալ և մեծ գործ կատարել, ընդհակառակն, մեծ մարդկանց կենսագրություններն ապացուցում են, որ ամենամեծ մարդիկ չքավորներն են եղել:

Այս դասախոսությունները, որ դուք կազմում եք, ես հավատացած եմ, որ մեծ դեր են կատարում: Ինչպես որ լուցկին մի շփումից կարող է բոցավառվել, այնպես էլ ձեր մեջ կան այնպիսիներ, որոնց մատաղ սիրտն ու հոգին մի ոգևորիչ խոսքով բոցավառվում է և նրա ներքին աշխարհում մեծ հեղաշրջում է առաջանում:

Ես խորապես համոզված եմ, որ դուք կկոչեք այն մեծ ազատությունը, որի մասին խոսեցի, վերածնվելով, որովհետև դուք տպավորված եք այդ ցեղի ստեղծագործող ձիրքով և հարազատ եք նրան: Դուք պետք է ճանաչեք ձեզ՝ ինքզինք ճանաչելը ամենամեծ հաղթանակն է:

Այդ բոլորից հետո ես կասեմ՝ չպետք է մեծամտել, երեխաներ, ձեզ նման երեխայի ամենամեծ թշնամին մեծամտությունն է ներքին կարողության»:

Բուռն ծափահարություններից հետո եղել են հարցեր, որոնց

«սիրալիր» պատասխանել է բանաստեղծը:

*) Դասախոսության շարադրանքը ակադեմիական տասնատորյակում (ԵԼԺ 7, 554-557) տպագրված է <Խոսք հայ որբերին> պայմանական խորագրով:

**) Նկատի ունի Հայաստանի Առաջին հանրապետության ստեղծումը 1918 թվականին:

***) Բայրոնի այս խոսքերը վերցված են Ավգերյանի օգնությամբ նրա կազմած «Բառարան անգղիերեն և հայերեն» գրքի «Առաջաբանից»:

****) Մուսուլմանական արևելքում կնոջ վիճակի մասին Թումանյանը խոսում է նաև «Կինն ու մահմեդական պետությունների անկումը» հոդվածում (տե՛ս 1915, հունիսի 8):

«Փարոս» երկշաբաթերթ, Թիֆլիս, 1919, թիվ 19:

Օգոստոսի 5 - Հայաստանի Հանրապետության ժողովրդական լուսավորության և արվեստի նախարարի հեռագիրը* Երևանի դրամատանը.

«Прошу Эриванское Казначество выпустить в размере сто тысяч рублей (100 000) и эту сумму целиком перевести в Тифлис финансовому агенту Дипломатической миссии в Грузии для передачи председателю Союза Армянских писателей на Кавказе Ованесу Туманяну на оказание помощи армянским писателям, ученым и публицистам.

Министр Народного просвещения и искусства,

Правитель Канцелярии».

*) Պահպանվել է հեռագրի ձեռագիրը:

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218, էջ 79:ԹԹ, 79:

Օգոստոսի 6 - Մ. Կասմանյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից:

Խնդրում է բանաստեղծի միջնորդությունը՝ Գայանյան և Հովնանյան դպրոցներում ֆրանսերենի դասեր ստանալու համար:

Մասնավորապես գրում է. «Ի նկատի ունենալով, որ մեծ նշանակություն ունի Ձեր խոսքը արդի հասարակական գործիչների համար, և որ գեներալ Արշակ խան Կորոյանը ինձ ուղարկեց Ձեզ մոտ իր կողմից դիմելու, խոնարհաբար խնդրում եմ միջնորդել Գայանյան և Հովնանյան դպրոցների հոգաբարձություններին ֆրանսերեն դասերը ինձ հանձնելու մասին»:

ԳԱԹ ԹՖ, 1421 (4931 լր.):

Օգոստոսի 7 - Տեղի է ունենում Հայ գրողների կովկասյան

ընկերության ընդհանուր ժողով:

Շարունակում է քննարկվել գրողներին օժանդակելու նպատակով Հայաստանի կառավարության տրամադրած հարյուր հազար ռուբլու բաշխման հարցը:

Վարչությունը, ինչպես հայտարարվել էր ամսի 6-ի ընդհանուր ժողովի շարունակության մեջ (մանրամասները տե՛ս օգոստոսի 2), հրաժարվում է նպաստը բաշխելուց և որևէ հանձնաժողովի հետ բաշխման գործին մասնակցելուց:

Զնայելով նախորդ ընդհանուր ժողովի կողմից վարչությանը ծափահարությամբ հայտնված վստահությանը և չնայելով ընդհանուր ժողովի հայտարարությանը, թե վարչությունից բաշխման գործը վերցվում է այն պատճառով, որ վարչության մեջ գտնվում են շահագրգռված անձինք՝ ամսի 6-ի ընդհանուր ժողովում ընդունված որոշումը, ըստ որի ընտրվում է հանձնաժողով այնպիսի մարդկանցից, որոնց իրավունք է տրվում նաև նպաստ ստանալ, և այսպիսով ստեղծվում է մի մարմին, որի կազմը և գնահատականը միանգամայն նույնն է, ինչ որ վարչությանը, ուստի վարչությունը այդ որոշումը համարում է իրեն հայտնված անվստահություն և որոշում է վարել ընթացիկ գործերը մինչև առաջիկա հերթական ընդհանուր ժողովը, որին և ներկայացնել իր հրաժարականը:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 1069: ԹԹ, 605:

Օգոստոսի 9 - Կարգադրություն Վրաստանում Հայաստանի կառավարության ֆինանսական գործակալին ուղարկելով Պետական բանկի երևանյան բաժանմունքի փոխանցման տոմսը (No 498036).

«Финансовому агенту Прав. Армении при Груз. Республ.

По предъявлению сего заплатите г. председателю Союза Армянских писателей Ованесу Туманяну или кому он прикажет сто тысяч рублей.

Деньги получены от Министра Просвещения и Искусств.

9 августа, 1919.

Контролер (подпись)

Кассир (подпис)

100 000 р. - Бухгалтер».

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218, էջ 80: ԹԹ, 1159:

Օգոստոսի 10 - Սկսում է տպագրվել Տ. Փիրումյանի «Մի մո-

ռացված գիրք, որի մասին անհրաժեշտ է խոսել» հոդվածը:

Անուշավան Աբովյանի «Լեռների հեքիաթը» հուշագրության գրախոսականն է: Շարունակության մեջ («Նոր աշխատավոր», 1919, թիվ 162) վերաշարադրանքով ներկայացնում է գրքում պատանի Թումանյանի մասին պատմող հատվածը. ««Լեռների հեքիաթը» գրքում մենք անսպասելի կերպով գտնում ենք նաև մի կարևոր գրական-պատմական նյութ: Նրա 213-219 երեսներում դուրս է բերված մեր կեսդարյան կյանք ունեցող բանաստեղծ Յովհ. Թումանյանը 12 տարեկան հասակին: Բանից դուրս է գալիս, որ այդ ժամանակ նա եղել է մի արտակարգ գեղեցիկ ու դեմքի շատ հմայիչ ու վեհ արտահայտություն ունեցող պատանի: Սովորելիս է եղել Ջալալօղլու հայոց ծխական դպրոցում և առաջին տեղն է ունեցել այդտեղ գրված իր ընդունակություններով: Չափազանց սիրահարվող բնավորություն է ունեցել, միաժամանակ սիրահարված է եղել մի քանի աշակերտուհիների վրա: Դպրոցի տեսուչը երեք լրտես է նշանակել նրա վրա, որոնց և հաջողվել է տեղն ու տեղը բռնել նրա գրած հետևյալ սիրային բանաստեղծությունը (բերում է «Յոգո՛ւս հատոր...» ոտանավորն ամբողջությամբ.- խմբ):

Այդ հանցանքի համար մեր պարոն բանաստեղծին դպրոցի տեսուչը որոշել է մի լավ, զորս դու պատվիրեցիր, ծեծել ռոզգով, սակայն դպրոցի բարեսիրտ ուսուցչուհի Յեղիմեի միջնորդության շնորհիվ դառնության բաժակն անցել է նրա գլխից և այդպիսով հայ ժողովուրդն էլ ազատվել է ռոզգով ծեծված բանաստեղծ ունենալու անպատեհությունից»:

«Նոր աշխատավոր», 1919, թիվ 161:

Օգոստոսի 14 - Մի խումբ հայ գրողների կողմից նամակ Հայաստանի Հանրապետության կրթության նախարարին՝ կառավարության տրամադրած 100 000 ռ. նպաստը բաշխելու առթիվ.

«Տեր նախարար,

Հայաստանի կառավարությունը Հայ գրողների ընկերության վարչության միջոցով հայ գրողներին բաշխելու է հատկացրել 100 000 ռուբլի մի գումար: Ընկերության վարչությունը, համարելով այդ որպես մի պաշտպանություն հայ գրականության և ոչ թե բարեգործություն, կամենալով միանգամայն զգալի և շուտափույթ օգնություն հասցնել հայ գրողներին, ղեկավարվելով նաև հայ գրողների ընկերության ընդհանուր ժողովի՝ իր վարչությանը տված այն հրա-

հանգով, թե նպաստելու դեպքերում առաջնորդվելու է գրողի արժեքովը հայ գրականության մեջ - գումարի մի մասը բաշխել էր մեզ՝ ներքևում ստորագրողներին, հատկացնելով յուրաքանչյուրին 10 հազարական ռուբլի:

Սակայն վարչության այդ որոշումը հայ գրողների ընկերության՝ մեծ մասամբ ոչ-գրողների կողմից հանդիպեց հրապարակային և լրագրային այնպիսի տգեղ արտահայտությունների, որ մենք ստիպված եղանք հրաժարվել այդպիսի վիրավորիչ հանգամանքներում նպաստը ստանալուց, մանավանդ որ մեր անուններն էլ ժողովներում տգեղ կերպով երևան հանվեցին, ինչ որ ընկերության կանոնադրությունով անգամ անթույլատրելի է:

Այդ ամենը ի նկատի ունենալով էր նույնպես, որ ընկերության վարչությունն ևս ձեռնթափ եղավ դրամի բաշխմանը մասնակցելուց (տես օգոստոսի 2):

Պարտք համարելով հայտնել այս ամենը, Տեր Նախարար, մենք սրանով խնդրում ենք, որ նախարարությունն ինքը ստանձնի հատկացված դրամի բաշխման գործը և ինքը մասնատի իր հայեցողությամբ: Այս ձևով հայ գրողները կարող պիտի լինեին ընդունել Չայաստանի կառավարության կողմից տրված նպաստը:

1919, օգոստոսի 14, Թիֆլիս:

Ամենայն հարգանք՝

Շիրվանզադե

Ա. Բաբախանյան (Լեո)

Յ. Յովհաննիսյան

Վ. Փափազյան

Նար-Ղոս

Դ. Դեմիրճյան»:

Գրության վրա անստորագիր մակագրություն.* «Գրողների վարչության կողմից պաշտոնապես ոչինչ հայտնի չէ ինձ, թե նա կուզեր իմ կարգադրությամբ բաց թողնել այդ գումարը. այդպիսի մի գրություն ստանալուց հետո միայն հնարավոր է բաշխումն անձամբ կատարել»:

*) Հավանաբար նախարարի մակագրությունն է:

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218, թերթ 88:

Օգոստոսի 16, Թիֆլիս - Երկտող Տիգրան Յովհաննիսյանին.

«Մի երկու շաբաթով ես բացակայելու եմ Թիֆլիսից:» Խնդրում

են իմ բացակայությանը հանձն առնեք կատարելու քննիչ հանձնա-
ժողովի նախագահի պարտականությունը:

Քո Հովի. Թումանյան»:

*) Գնալու էր Դսեղ:

ԵԼԺ 10, 333:

Օգոստոսի 18 - «Գործավոր» թերթի թիվ 21-ում տպագրվում է
փոքրիկ ֆելիետոն՝ Մարքիզ Ժյուլ ստորագրությամբ:

Ծաղրում է գրողների ընկերության ընդհանուր ժողովում (տե՛ս
օգոստոսի 5, 10) ծայր առած անհեթեթ վիճաբանությունները՝ գրող-
ներին ի նպաստ կառավարության տրամադրած 100 000 ռուբլու
բաշխման շուրջ:

«Գործավոր», 1919, Թիֆլիս, թիվ 21:

Օգոստոսի 23 - Թիֆլիսի «Արիեստավորաց ակումբի ազատ
թատրոնում» «հայ օպերետային խումբը» ներկայացնում է «Անուշ»
երաժշտական դրաման՝ ըստ Թումանյանի պոեմի:

«Նոր աշխատավոր», 1919, թիվ 172:

Օգոստոսի 25 - Հայաստանի Հանրապետության հանրային
կրթության և արվեստի նախարարի պատասխան գրությունը մի
խումբ հայ գրողներին.

«Մեծարգո պ. պ. Շիրվանզադե, Ա. Բաբախանյան. Հ. Հովհան-
նիսյան, Վ. Փափագյան, Նար-Դոս, Դ. Դեմիրճյան

Ձեր ս. թ. օգոստոսի 14-ի (տե՛ս օգոստոսի 14) գրությունը տեղ
հասավ այսօր, որից երևում է, թե Դուք հրաժարվում եք Հայաստանի
կառավարության որոշած 100 000 ռ. նպաստից Ձեր բաժինն ստա-
նալ՝ խուսափելով այդ գումարի բաշխման շուրջն առաջացած անա-
խորժ գրույցներից:

Այդ առիթով պետք է ասեն, որ ինչպես անշուշտ հայտնի է Ձեզ,
Մինիստրությունս գումարի բաշխումը թողած էր Հայ գրողների ըն-
կերության վարչության հայեցողության տալով մի քանի հրա-
հանգներ:

Անձամբ դեմ չլինելով Ձեր առաջարկին՝ ինձ վրա առնելու այդ
նպաստի բաշխման գործը, պիտի նկատեն, որ ստեղծված կացու-
թյան մեջ անկարող եմ այդ անելու, քանի որ Հայ գրողների ընկե-
րության վարչությունը պաշտոնապես չի հայտնել ինձ, թե ինքը

հրաժարվում է այդ գումարը բաշխելուց, իսկ այդ իրավունքը նրանից հետ առնելու ոչ մի օրինական հիմք չունեն:

Այդ գումարի բաշխումն անձամբ կարող են կատարել այն դեպքում միայն, երբ Հայ գրողների ընկերության վարչությունն ինքը այդ իմաստով գրություն ուղղե ինձ:

Հանրային կրթության և արվեստի մինիստր
Դիվանապետ»:

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218, թերթ 89: ԹԹ, 1142:

<Օգոստոսի երրորդ տասնօրյակ, մինչև 27-ը> - Հեռագիր Երևան՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդական կրթության նախարարին.

Эривань

Министру Народного просвещения

Комиссия, избранная Общим Собранием Общества писателей для распределения ста тысяч рублей, асигнованных Правительством для нуждающихся писателей, ученых, публицистов, просит ускорить высылку денег.

Председатель комиссии».

Հեռագրի տեքստի սկզբում նշում. «Черновик телеграммы председателя комиссии (О. Туманян)* министру народного просвещения о высылке сто тысяч рублей, асигнованных правительством для писателей и ученых».

*) Թումանյանը ՀԳԿԸ ընդհանուր ժողովի կողմից ընտրված հանձնաժողովում չի եղել: Խոսքը հավանաբար այն հանձնաժողովի մասին է, որ 10 000 ռուբլին բաշխելու համար ընդհանուր ժողովը իր վերջին նիստում (օգոստոսի 9) ընտրել էր հետևյալ կազմով՝ Տ. Հովհաննիսյան, Ն. Աբեյան, Մ. Պետրոսյան, Գ. Ղաբաջյան, Ն. Քոչարյան (տե՛ս օգոստոսի 2): Այդ հեռագրի և դրա պատասխանի մասին (տե՛ս օգոստոսի 27) հիշում է Տ. Հովհաննիսյանը ՀԳԿԸ վարչությանն ուղղած իր գրության մեջ (տե՛ս սեպտեմբերի 1):

ՀԱԱ, ֆ. 207, ց. , գործ 218, էջ 90: ԹԹ, 1136:

Օգոստոսի 28 - Տպագրվում է «Ազատ թատրոն» խորագրով հոդված՝ Մ. Դարբինյան ստորագրությամբ:

Խոսքը վերաբերում է «Անուշ» երաժշտական դրամայի ներկայացմանը (տե՛ս օգոստոսի 23):

Գրում է. «Շաբաթ օրը՝ օգոստոսի 23-ին, ես դժբախտություն ունեցա լինելու «Արհեստավորաց ակումբի» «Ազատ թատրոնում»:

խաղալու էին «Անուշը», որ երաժշտական դրամայի է վերածել ոմն տ. Մարիամ:

Ես հարց եմ տալիս ինձ անծանոթ տիկ. Մարիամին.— Ի՞նչ իրավունքով Դուք աղավաղել եք մեր սիրելի բանաստեղծի սիրելի պոեման:

1.Որտեղի՞ց եք վերցրել ու չոբան Կարոյի բերանը դրել հետևյալ բառերը. «Խեղճ Սարո, սիրահարվել է Անուշի վրա, բայց չի իմանում, որ դրանով դժբախտացնելու է թե՛ իրեն և թե՛ աղջկանը, որովհետև Մոսին ասում է, թե ես իմ քույրը չոբանի չեմ տալ, 2.Որտե՞ղ եք կարդացել, որ մայրը, երբ իր մոռացկոտ աղջկանը հանդիմանում է, թե ինչո՞ւ է ձորում ուշացել ու կուժը դատարկ տուն եկել, աղջիկը՝ Թունանյանի Անուշը, էն համեստ ու ամաչկոտ շփոթված Անուշը պատասխանի «Էհ, մայրի՛կ, մարդ մարդու դարդ չգիտեր, կեսգիշերին ժամ էր ասում»: 3.Էդ ո՞ր «Անուշի» մեջ է գրած, որ Մոսին երբ իմանում է, թե Սարոն իր քրոջը փախցրել է, խանչալը հանում է ու բացականչում. «Երդվում եմ ամենակարող Աստուծով և էս խանչալով, որ ուր էլ գտնեմ, երկսին միասին սպանեմ»: 4. Ո՞վ էր էն սապատավոր-կուզի անմասխարան, որին բարեհաճել եք Կադ-Ասլան անունը տալ, կոխի տեսարանից հետո մոտեցավ Անուշին և ասաց. «Դու գնա՛ արխեին կաց, ես կհաշտեցնեմ, միայն թե էն աղջկա (անունը մոռացել եմ) ու իմ բանը դգացրու», և որը խոսում էր դարաբաղու բարբառով: Եվ վերջապես ո՞վ եք դուք, ի՞նչ մարդ եք, ի՞նչ անուն տամ ձեր արարքին: Սա ոչ գրական շանտաժ է, ոչ գրագողություն, ես բանի համար անուն չեմ գտնում. սա կատարյալ ավազակություն է, մարդասպանություն, օրը ցերեկով կատարված «Ազատ թատրոնի» բեմի վրա, խուռն բազմության ներկայությամբ:

Իսկ ավազակների տեղը բանտն ու աքսորավայրն է և ոչ թե հոնորար ստանալը կամ բեմը:

Այժմ դառնում եմ պ. Ոսկանյանին: Էդ ի՞նչ «դերասաններ» եք բեմ հանում: Որտեղի՞ց էիք հավաքել էդ աշակերտ-աշակերտուհիներին և «Անուշի» մեջ ռուսական եղանակներով երգել տալի «Էն-զելի»:

Շատ էլ թե ձեր թատրոնը «Ազատ թատրոն» է, բայց ո՞վ է ձեզ իրավունք տվել բեմը բալագան շինելու: Մի՞թե կարծում եք, թե ամեն բան կարելի է անել, միայն թե միջից փող դուրս գա: Սա դերասանուհու հոգեբանություն է, թե...

Չեմ երկարացնում. երևի քաջություն կունենաք երկուսդ էլ հրապարակով բացատրություն տալու, իսկ առայժմ ես մամուլի, հասարակության և գրականագետների ուշադրությունն եմ հրավիրում Թիֆլիսի ամենահայտնի փողոցի վրա գտնվող «թատրոն վրա, ուր խեղճ դեմոսը, իր վերջին կոպեկները հավաքելով, 30-40 ռուբլի է վճարում, դահլիճը բերնեբերան լցնում... »:

«Նոր աշխատավոր», 1919, թիվ 176:

Օգոստոսի 31 - Տպագրվում է Յ. Ոսկանյանի «Ակամա պատասխան Մ. Դարբինյանին» հոդվածը:

«Ազատ թատրոնի» տնօրենն է: Պատասխանում է Մ. Դարբինյանին՝ իր հասցեին ուղղված կշտամբանքներին՝ Թումանյանի «Անուշը» աղավաղված բեմադրելու համար (տե՛ս օգոստոսի 28): Վիրավորված բացատրում է, որ ինքը՝ իբրև ռեժիսոր, ոչ էլ իր խումբը որևէ կապ չեն ունեցել ներկայացման հետ: Ինքը 16 տարի համեստաբար ծառայել է հայ բեմին, իր թատրոնում լավագույն դերասանների ուժերով բեմադրվել են հայ, ռուս և համաշխարհային թատերգության հայտնի նմուշներ. «Եվ եթե դժբախտաբար մի անհաջող ներկայացում է եղել ինձնից և իմ խմբից անկախ, ապա չպիտի կույր լինել և չգիտեմ ինչից դրդված, բամբասանքով զբաղվել»: Հիշեցնում է, որ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան «հարազատությամբ» Թիֆլիսում առաջին անգամ իր թատրոնում է բեմադրվել:

«Նոր աշխատավոր», 1919, թիվ 179:

<Օգոստոսի երրորդ տասնօրյակ>, Դսեղ - Նամակ Թիֆլիս՝ ընտանիքին.

«Սիրելիք, ես լավ տեղ հասա և լավ եմ: Սրանք* էլ ինձանից լավ են: Մերոնք** էլ սրանցից են լավ:

Մայրիկին դրկում եմ, որ բան բերի ձեզ համար: Ասի՝ մի երկու տոպրակ մածուն բերի ձեզ համար – չբերեց: Ասի՝ ազդակ ու գաթա բերի – չբերեց: Էլի ես մի երկու գաթա դրի ու մի քանի ազդակ: Էլի ես: Համլիկը մի քանի մեշոկ եմիշ էր դրկել. ասի՝ մի մեշոկ եմիշ տար – չբերեց: Ասի՝ մի քանի ռամկա մեղր բերի – չբերեց: Կանֆետ կար – ասի՝ էն բերի – էն էլ Սեդիկը չթողեց: Ասի՝ մի քոց ֆոն կամ դամբիլ տար, էն էլ ֆոնը չբերեց, դամբիլն էլ Անուշը կերավ: Մի խոսքով, մինչև չգաք – ձեզ ճար չկա:

Համբույրներով՝

հայրիկ:

Պահարաններն ու սենյակն բաց չթողնեք:

*) Նկատի ունի գյուղում ապրող հարազատներին:

**) Նկատի ունի իր կնոջն ու երեխաներին:

ԵԼԺ 10, 333:

Սեպտեմբերի 1 - Արամայիս ստորագրությամբ նամակ թիֆլիս՝ Թումանյանին՝ Բաքվից.

«Հարգելի պ. Հովհաննես Թումանյան,

Վերջապես ինձ համար ևս հասավ ժամանակը, որ ասեմ, որ սրանից դեմը ձիգ տալու էլ ույժ չի մնացել, ուստի դիմում եմ Ձեզ. եթե գրողներին օգնելու խնդիրը մարմնանա և գտնեն, որ ինձ ևս հարկավոր է հիշել, ապա չէի հրաժարվի առաջարկվելիք օգնությունից:

Ձերմ հարգանքներով՝ Արամայիս:

Հ.Գ. Պատվավորը և չխլողն այն կլինեք, եթե գնվեին գրողի տպած կամ անտիպ աշխատությունները:

Նույն»:

ԳԱԹ ԹՖ, 979 (545):

Սեպտեմբերի 1 - Գրություն ՀԳԿԸ վարչությանը.

«Նպաստների բաշխման համար ընտրված հանձնաժողովը,* կատարելով ընդհանուր ժողովի կողմից իր վրա դրված պարտականությունը, սրա հետ ուղարկում է Ձեզ իր և ընդհանուր ժողովի արձանագրությունները և իր ստացած խնդիրքը Հ. Աղաբաբից, ինչպես նաև ժող. կրթության մինիստրին ուղարկած հեռագրի սևագիրը և նրա պատասխանը:

Մասնաժողովի վերջին արձանագրության մեջ Դուք կգտնեք նրա որոշումը Հայաստանի կառավարության կողմից ստացված 100 000 ռ. նպաստի բաշխման մասին»:

*) Հանձնաժողովն ընտրվել էր Միության ընդհանուր ժողովի կողմից հետևյալ կազմով՝ Տ. Հովհաննիսյան, Ն. Աբեյան, Մ. Պետրոսյան, Գ. Ղարաջյան, Հ. Զոչարյան: ՀԳԿԸ վարչությունն հրաժարվել էր մասնակցել այդ հանձնաժողովի աշխատանքներին (մանրամասները տես օգոստոսի 2, սեպտեմբերի 13):

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, թղթ. 114: ԹԹ, 1145:

Սեպտեմբերի 3 - Գյուտ Աղանյանի նամակը Թումանյանին՝ թիֆլիսից:

Նախորդ օրվա (տես՝ օգոստոսի 2) ընդհանուր ժողովը ծանր տպավորություն է թողել վրան, և ոչ թե նրա համար, որ վնասվել է իր «անձնական շահը». ինքը ամբողջ կյանքում անշահախնդիր ծառա-

յել է ազգին, ազգային մշակույթին, պարտքերի տակ է ընկել, նույնիսկ ստիպված է եղել վաճառել տպարանը, բայց հատուցման որևէ հավակնություն չի ունեցել: Ավելի շատ անհամապատասխան է վարչության հեղինակության համար. «Բայց ես չափազանց վրդովված եմ նրանով, որ մենք անտարբեր մնացինք, երբ ընդհանուր ժողովը, այդ խայտաբղետ ժողովը մեկ կողմից ծափահարելով վստահության քվե տվավ վարչությանը և մյուս կողմից անվստահության քվե տվավ նրան՝ քանդելով նրա բոլոր որոշումները: Ես գտնում եմ, որ վարչությունը չարաչար անպատված է դրանով և նախքան ընդհանուր ժողովը պարտավոր է նիստ գումարել՝ իր դիրքը որոշելու հանդեպ առաջիկա ընդհանուր ժողովին:

Իմ կարծիքով՝ 1. վարչությանը պետք է հայտնել հայ – կառավարության վարչության որոշումը և ընդհանուր ժողովի որոշումը, և 2. վարչությունը այդ ապտակը պետք է հետ մղել՝ հրաժարական տալով»:

Ստորագրությունը՝ Ձեր՝ Գյուտ: ԳԱԹ ԹՖ, 843 (487):

Սեպտեմբերի 13 - ՀԳԿԸ վարչության պաշտոնական գրությունը Հայաստանի Հանրապետության կրթության և արվեստի մինիստրին՝ Թումանյանի ստորագրությամբ.

«Ստանալով հանրային կրթության և արվեստի տեր նախարարի գրությունը, որով առաջարկում էր վարչության գրության հետ փոխադրած հարյուր հազար ռուբլին բաժանել իբրև նպաստ վարչության հայեցողությամբ Թիֆլիս և այլուր գտնված հայ գրողներին, գիտնականներին և հրապարակախոսներին, վարչությունս, նախապես խորհրդակցելով մեր ականավոր գրողների հետ, ի նկատի ունենալով, որ դա պաշտպանություն է հայ գրականությանը և ոչ թե բարեգործություն է, որ նպաստ է, աչքի առաջ ունենալով դրամի արժեքի անկումը՝ պետք է այնպիսի չափով բաշխել, որ լինի փոքր-ինչ շոշափելի, տարվույս հուլիս 20-ի ժողովում որոշեց այդ գումարը առաջին հերթին բաժանել հետևյալ անձերին՝

1. Հովհաննես Թումանյան – 10 հազար ռուբլի (նպաստից հրաժարվում է մինչև մյուս բաշխումը)

2. Հովհաննես Հովհաննիսյան - 10 հազար ռուբլի

3. Դերենիկ Դեմիրճյան - 10 հազար ռուբլի

4. Շիրվանզադե - 10 հազար ռուբլի

5. Վրթանես Փափագյան - 10 հազար ռուբլի

6. Նար-Դոս - 10 հազար ռուբլի
7. Նիկողայոս Աղբալյան - 10 հազար ռուբլի (նպաստից հրա-
ժարվում է)
8. Մանուկ Աբեղյան - 7 հազար ռուբլի
9. Լեո - 10 հազար ռուբլի
10. Ստեփան Կանայան - 7 հազար ռուբլի
11. Երվանդ Տեր-Մինասյան - 7 հազար ռուբլի
12. Գյուտ ա.ք. Աղանյան - 7 հազար ռուբլի
13. Սմբատ Ավետիսյան - 7 հազար ռուբլի
14. Անանուն - 5 հազար ռուբլի:

Բայց բացի վերոհիշյալներից կան նույնպես ուրիշ գրողներ, որոնք նույնպես գտնվում են կարոտության մեջ, ուստի վարչու-թյունս կազմեց մեկ ուրիշ մի երկրորդ ցուցակ, որոնց և որոշեց բա-ժանել 50 000 ռուբլի, որպիսի գումար ապահովվում էր Կովկ. Յ. բա-րեգործական ընկերության կողմից նույն նպատակով: Միևնույն նիս-տում վարչությունը որոշում կայացրեց շարունակել գրողների այդ ցուցակը, ուր մտցնել նաև Տաճկաստան և այլուր մեզանից ան-ծանոթ մնացած այլ գրողներին և նրանց համար միջնորդել Հայաս-տանի Հանրապետության առաջ՝ տրամադրելու վարչությանս դարձ-յալ մի գումար բավարարելու նաև երրորդ ցուցակի գրողներին:

Հագիվ թե այս որոշումը կայացել էր, բայց տակավին չէին ստացվել թե՛ առաջին, թե՛ երկրորդ գումարները, երբ վարչությունս ստացավ ընկերության 10 անդամների ստորագրությամբ մի հայտա-րարություն, որով հիշյալները խնդրում էին անհապաղ ընդհանուր ժողով գումարել 100 000 ռուբլու մասին կարգադրություն անելու համար: Վարչությունը անհապաղ հրավիրեց ընդհանուր ժողով, որ ունեցավ երեք նիստ:

Ընդհանուր ժողովը հենց առաջին նիստում որոշեց քանդել վարչության որոշումը և ընտրել իր միջից մի նոր հանձնաժողով, որին և հանձնել 100 000 ռուբլու բաշխման գործը: Իմիջիայլոց առարկելով, թե նպաստ ստացողների մեջ կան և վարչության ան-դամներ, սակայն հենց նույն ընդհանուր ժողովը կայացրեց որոշում, որ դրամաբաշխի մասնաժողովի անդամները իրավունք ունեին նպաստ ստանալ:

Սրանից հետո եղած ժողովում ընդհանուր ժողովը գտավ իր որոշումը հակասական ու փոխեց իր այդ որոշումը:

Վարչությունը, նկատելով այդ ընդհանուր ժողովի կողմից

իրեն հայտնված անվստահություն և ակնհայտնի վիրավորանք, որոշեց հրաժարվել նպաստը բաշխելուց, որևէ հանձնաժողովի հետ բաշխման գործին մասնակցելուց և այդ մասին հայտարարեց հետևյալ ընդհանուր ժողովին:

Նույն ժողովին այն 12 անձերը, որոնց վարչությունն որոշել էր հատկացնել հիշյալ գումարը, վարչությանն նախագահի միջոցով հայտարարեցին, որ իրանք ևս հրաժարվում են դրամ ստանալ այն ընկերության միջոցով, որը մինչև այդ օրը ոչ մի նպաստ ստացողի անուն չի հանել հրապարակ այդ իսկ հաշվետվությունների մեջ, իսկ այժմ իրանց անունները դարձրել են հրապարակական վիճաբանության և վիրավորանքի առարկա:

Չնայելով այս բոլոր հայտարարություններին՝ ընդհանուր ժողովը որոշեց ընտրել հինգ հոգուց մի մասնաժողով, որին և հանձնարարեց դրամն ստանալ և բաժանել ըստ իր հայեցողության:

Ընդհանուր ժողովներն առհասարակ այն տեսակ կերպարանք էին առել, որ վարչությունը և նպաստառու գրողները մնացին իրանց որոշման վրա և հրաժարվեցին մեկը բաշխելուց, մյուսը նպաստ ստանալուց:

Վերոհիշյալների համար վարչությունն հարկ է համարում, տեր նախարար, զեկուցանել Ձեզ ի տնօրինություն:

Սրա հետ վարչությունն ուղարկում է իր հուլիս 20-ի օրագրի վավերացրած պատճենը և մասնաժողովի ամբողջ գրագրությունը՝ խնդրելով վերջինս վերադարձնել կարևորություն անցնելուց հետո:

Վարչությանն նախագահ՝ Յ. Թումանյան

Անդամ քարտուղար՝ Գյուլտ ա. ք. Աղանյան»:

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218: ԹԹ, 1145 պ:

Սեպտեմբերի 16 - Հովսեփ Բաղդասարյան ստորագրությամբ նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Կյանքս լինելով տառապանքի մի օղակ, ազդել է ինձ վրա և այդ ազդեցությունը ներշնչել է ինձ շարադրել մի քանի ոտանավորներ, որոնց մասին ցանկանում եմ իմանալ Ձեր կարծիքը:

Ուստի դիմելով Ձեզ խնդրում եմ արդյոք կարելի է բարեհաճեք աչքի անցկացնել գրություններս և հայտնեք ինձ Ձեր կարծիքը:

Հարգանքներով՝ Հովսեփ Բաղդասարյանց,

16 տարեկան, Ռուս Հայկ. կոմիտեի որբ ծիրանավոր»:

ԳԱԹ ԹՖ, 1019 (275 լր.):

Սեպտեմբերի 23 - Բաթումի Հայոց հրատարակչությունից Իոսիֆ Մնդրյանց ստորագրությամբ նամակ Թիֆլիս Թումանյանին.

«Уважаемый Ованес Туманян

Батумское Армянское Издательство выпустило на русском яз. сборник под редакцией Сергея Городецкого, один экземпляр чего при сем Вам высылаем, решили также выпустить сборник приблизительно такого же характера на армянском языке. С этой целью Издательство обращается к вам с просьбой принять на себя труд редактирования сборника, а также собирания и выбора материала.

Предъявитель сей, наш представитель студент Павел Ашрадян (Ашрадиян ?) уполномочен нами на все переговоры с Вами по этому поводу,

С совершенным уважением

Иосиф Ашотович Мндоянц.

Батумское Атрм. Изд.- во».

ԳԱԹ ԹՖ, 1774 (407 լր.):

Սեպտեմբերի 28 - Աշոտ Աթանասյանի նամակը Թումանյանին Թիֆլիսից.

«Սիրելի Հովհաննես !

Տիգ. Նազարյանի «Սալոնը» վերափոխվում է «Գրական-գեղարվեստական ակումբի», բայց այս անգամ... առանց Տիգ. Նազարյանի: Այսօր, երեկոյան ժամը 7-ին նույն տեղում մի խորհրդրդակցություն կա, թե ինչպես կազմակերպել այդ ակումբը, որպեսզի նա դառնա իսկական գրական գեղարվեստ. ակումբ, այդ խորհրդրդակցությանը հրավիրված ես դու, ուստի խնդրեմ մի ժամով այսօր գաս «Սալոն», ուր քեզ իմիջիպալոց սպասելու է Հովհ. Հովհաննիսյանը:

Քո Աշոտ Աթանասյան»:

ԳԱԹ ԹՖ, 795 (221 լր.):

Սեպտեմբերի 29 - Արևմտահայ հայրենակցական միությունների գործադիր մարմնի գրությունը Թումանյանին Թիֆլիսից.

«Հարգելի պ. Հովհ. Թումանյան

Գործադիր մարմինը պաշտոնական գրությամբ դիմել է Հայկական ակումբի ավագների խորհրդին, որպեսզի հոկտեմբերի 4-ին ակումբը տրամադրվի երեկույթի համար, սակայն ոչ մի պատաս-

խան չի ստացված, ուստի Գործադիր մարմինը խնդրում է Ձեզ, որ միջնորդեք խորհրդի առջև* հոկտեմբերի 4-ին ակումբը մեզ տրվի, որովհետև երեկույթի կազմակերպիչ Գր. Սյունին գնալու է Թեհրան և անկարող է սպասել, իսկ երեկույթը հետաձգել անկարելի է:

Նախագահ՝ Արամ Ահարոնյան.

ի. տ. քարտուղարի՝ Ա. Գասպարյան»:

*) Գործադիր մարմինը այդպիսի խնդրանքով բանաստեղծին դիմել էր մաս հուլիսի 16-ի գրությամբ:

ԳԱԹ ԹՖ, 2564 (126):

Սեպտեմբեր - Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի մինիստրի պաշտոնական նամակը ՀԳԿԸ վարչությանը.

«Այսօր ստացա Ձեր ուղարկած ծրարը (տե՛ս սեպտեմբերի 13), ուր ներփակ էին 1) Հայ գրողների ընկերության արտակարգ ժողովի արձանագրությունը, 2) Ձեր բացատրական գրությունը կառավարական 100 000 ռ. բաշխումից հրաժարվելու մասին, 3) վարչությանդ ս. թ. 20 հուլիսի ծրագրի պատճենը:

Նկատելով, որ վարչությունդ հրաժարվել է 100 000 ռ. նպաստը բաշխելու հանձնառությունից, Մինիստրությունս հարմար դատեց բաշխումն անձամբ կատարել, վերջ տալու համար ծագած անախորժ միջադեպին. կխնդրեմ վարչությանդ նախագահ պ. Հ. Թունանյանին և քարտուղար հայր Գյուլտին ստանալ և հատկացնել նպաստը սույն գրությանս կցված ցուցակում հիշատակված անձանց՝ նշանակված քանակությամբ:

Հուսով եմ, որ վարչությունդ հրաժարվելով նպաստի բաշխումից, հանձնառու կլինի նրա հատուցման հոգսն իր վրա առնել, որով կարագացնի նպաստի բաշխման և հատուցման առանց այն էլ ուշացած գործը, վերացնելով մի շարք նոր ձևականությունների դիմելու անհրաժեշտությունը (վարկը նոր մարդու կամ մարմնի անուն փոխադրել, նպաստառուների տեղն ու հասցեն որոնել և այլն):

Խնդրում եմ հետևյալ գրականներին հատկացնել ստորև նշանակված գումարները և ստացման փաստաթղթերն ուղարկել մինիստրությանս.

1. Հովհաննես Հովհաննիսյան 10 000 ռ.
2. Շիրվանզադե 10 000 ռ.
3. Վրթանես Փափազյան 10 000 ռ.
4. Նար-Դոս 10000 ռ.

5. Լեռ 10000 ռ.
 6. Դ. Դեմիրճյան 10000 ռ.
 7. Ստ. Կանայան 5000 ռ.
 8. Գ. քահ. Աղանյան 5000 ռ.
 9. Դ. Անանուն 5000 ռ.
 10. Յ. Դադբաշյան 5000 ռ.
 11. Ս. Մատենճյան 4000 ռ.
 12. Ս. Մանալյան 4000 ռ.
 13. Լ. Բաբալյան 4000 ռ.
 14. Վրույր 4000 ռ.
 15. Ա. Խնկոյան 4000 ռ.
- Հանրային կրթության և արվեստի մինիստր,՝
Դիվանապետ»:
ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218: ԹԹ, 1146:

Չոկտեմբերի 3 - Գր. Ներսիսյան ստորագրությամբ խնդրագիր թուճանյանին՝ Թիֆլիսից.

Ծայրահեղ կարիքը հարկադրում է անհանգստացնելու Ձեզ, խնդրելով Ձեր միջնորդությունը Հայ գրողների ընկերության վարչության առաջ, որ փոխարինաբար տրվի ինձ երեք հազար ռուբլի (3000) մի քանի ամսվա ժամանակով»:

ԳԱԹ ՀԳԿԸՖ, 148/1, 148/2: ԹԹ, 3517:

Չոկտեմբերի 4 - «Հայաստանի գրական ընկերությունը» խորագրով հաղորդագրություն մամուլում.

«Չնայած այն ծանր դրության, որի մեջ գտնվում է Հայաստանի ժողովուրդը, չնայած որ այդ ժողովրդի ֆիզիկական գոյությունը նույնպես ապահով պայմանների մեջ չէ դրված, այնուամենայնիվ կուլտուրական ստեղծագործական աշխատանքներ ևս կատարվում են այս աշխարհում, հոգեկան կյանքով ևս ապրելու բուռն տենչ է նկատվում մեր հանրապետության մեջ:

Դրա գեղեցիկ ապացույցներից մեկն էլ Հայաստանի գրական ընկերությունն է, որի հիմնադիր անդամների առաջին ընդհանուր ժողովը տեղի ունեցավ կիրակի օրը քաղաքային տան դահլիճում: Ընկերության հիմնադիր անդամներն էին Հայ գրողների կովկասյան ընկերության տեղումս գտնվող անդամները...»:

«Հառաջ», 1919, թիվ 12:

Հոկտեմբերի 5, Թիֆլիս - Նամակ Երևան՝ դստերը՝ Նվարդին:

Հետաքրքրվում է դստեր որպիսությունով՝ ինչպես տեղ հասավ, ինչպես է զգում իրեն: Տեղեկացնում է, որ Անուշն էլ է գնացել Ղարս: Եվ վերջում. «Քո գնալուց հետո Լյուսին մեզ չի հեռախոսել: Ասում են Լևոնը գալիս է Երևան: Ես վախում եմ՝ մինչև նրա Երևան գալը դու արդեն մի նոր պատմություն լինես սարքած,* քեզ ի՞նչ կա»:

Փափազյանի գալու պատճառով նամակն ավարտում է:

*) Ակնարկը հավանաբար վերաբերում է Նվարդի ամուսնությունը չկայանալու (տե՛ս ապրիլի 29) ինչ-որ պատճառի:

ԵԼԺ 10, 333-334:

Հոկտեմբերի 5 - Դստեր՝ Անուշի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Կարսից.

«Հայրիկ ջան: Իրիկունը քեզ մի նամակ էի գրել, առավոտը կարդացի ու որոշեցի չուղարկել. երևի տրամադրությունս վատ ա եղել, երևակայիր քեզ հիշել եմ, ամեն գիշեր քեզ երազումս միշտ տեսնում եմ, մանավանդ քեզ շատ եմ անհանգստանում, իսկ դուք մի նամակ չեք գրում, ամեն օր սպասում եմ, որ քեզինց նամակ կլինի:

Եղանակները կամաց-կամաց ցրտում են, բայց դուրեկան է, ես շատ եմ ուզում աշնանը գյուղում լինել, բայց

Մենք շատ լավ ենք, Մուշեղը մեր դիմացն ա ապրում, նրանք էլ ուտելու բանի են:

Չի կարելի ասել, թե ժամանակը շատ ուրախ է անցնում:

Ջերմ համբույրներով՝ Անուշ:

5 հոկտ. 1919 (ըստ Աշխենի)»:

ԹԹ ԳԳ, 935/10:

Հոկտեմբերի 7 - Տպագրվում է Լևոն Թութունճյանի «Թրքահայ մշակույթը կծանոթացվի»* հոդվածը:

Գրում է Ջ. Եսայանի՝ Թիֆլիսում կազմակերպած դասախոսության մասին: Հիշում է, որ դասախոսություններ են կարդացվել նաև Դ. Վարուժանի և Գր. Ջոհրապի մասին: Այս առիթով խոսում է գրական կյանքի կազմակերպման գործում Թումանյանի ծառայությունների մասին. «Հայ գրողներու երեկույթները շատ սիրուն ֆուայեմը կըստեղծեին գրականության շուրջ գրույցներու կամ ինչպես հոս կ'ըսեն- ասուլիսներու համար: Մեր սիրելի ու ինքնուրույն բանաստեղծը՝ Հովհ. Թումանյան՝ կենսունակ նախագահը Կովկասի հայ

գրողներու միութեան, այդ հավաքութեան հոգին, կրցածը կ'ըներ գեղարվեստական տաքութիւն մը ստեղծելու համար. մտավորականութեան ընտրված դէմքեր և շատ նորահաս երիտասարդներ կ'հավաքվէին այս գրական երեկոյթներուն»:

Մեկ անգամ ևս ակնարկելով, որ արևելահայ գրողները, քիչ բացառությամբ, տարվելով սոցիալական խնդիրներով, մոռանում են, որ գրականութիւնը ամենից առաջ արվեստ է՝ շարունակում է. ««Հասարակական գործիչ»ները Հովի. Թումանյանի բանաստեղծութիւնները եթէ կ'հարգեն, անոր համար է, որ «ժողովուրդից»ն է երգում և այդ ոչ թէ անոր համար, որ Թումանյան հայ ժողովրդական հեքիաթները, բարքերը, անգիր երգերը գեղարվեստական զմայլելի շունչով կենդանացուցած է, այլ անոր համար, որ «ժողովրդի կյանքից» գրելը հասարակական տենդենց կ'ենթադրէ, ռամկավարության և ընկերավարության դատին կնպաստէ... Անշուշտ, կովկասահայ գեղագետներու մասին չէ խոսքս, որոնց ներկայացուցիչները, ինչպէս Գարեգին Լևոնյան և ուրիշներ, հայ գրական-գեղարվեստական հասկացողության վարպետներն են կ'հաշվվին»:

*) Հեղինակի «Կյանքը Կովկասի մէջ հայ արհավիրքի օրերուն» հոդվածաշարի մասերից է:

«Ժողովուրդի ձայնը», Պոլիս, 1919, թիվ 301-210:

Հոկտեմբերի 11, Թիֆլիս - Նամակ Կարս՝ դստերը՝ Անուշին:

Դստեր՝ հոկտեմբերի 5-ի նամակի պատասխանն է:

Ապաստում են նրա և քրոջ՝ Աշխենի վերադարձին. «Դուք մեզ եք տեսնում երազում, մենք էլ ձեզ: Դե վերջապէս եկեք, որ աչքով տեսնենք»: Շատ բան են ուզում ուղարկել, բայց դժվար է տեղ հասցնելը:

Գոհ է դստեր ջերմ նվիրածութիւնից հայրենի Լոռուն. «Անուշ ջան, ինչ լավ է, որ դու հոգով ծուլված ես մեր հայրենիքի հետ, և ինչ վատ է, որ հենց ձեր ժամանակ ամեն բան փչացավ մեր հայրենիքում – Լոռի: Բայց էլի, հետո մի բան կանեն էմտեղ: Նանը, խեղճը շատ կ'ոտրված, շատ խորտակված գնաց Արտաշի շորերը գրկած,* և ինձ թվում է, որ նա էլ երկար չի ապրիլ:** Երեկ գիշեր էլ նրա վրա շատ վատ երազ տեսա»:

Տեղեկացնում է. «Ահարոնյանի Արփիկը երեկ պիտի գնար Երևան, որ փող ձեռք բերեր կառավարութիւնից, հանկարծ հեռագիր ստացավ, որ ինքն ու Բաբիկը*** գնան Փարիզ, և գնում են: Բավական զարմանալի է, թէ էս ծախքերը ո՞վ է ամուսն: Հենց Փարիզ հասնելը...»:

Եվ վերջում. «Ձեզ համար միայն մի քիչ կոնֆետ ենք դրկում: Իսկապես, որ շատ բան դրկենք, էլ գալ չեք»:

*) Արտաշես Թումանյանը ռազմաճակատում զոհվել էր 1916 թ. հունվարին, բայց մորից թաքուն էին պահում: Նամակից երևում է, որ նա մոր էր իմացել որդու զոհվելու մասին:

**) Թումանյանի մայրը վախճանվել է 1936 թվականին:

***) Արփիկը Ահարոնյանի դուստրն է, Բաբիկը (Բաբկեն)՝ որդին:

ԵԼԺ 10, 334-335, 674:

Չոկտեմբերի 11, Թիֆլիս - Նամակ Կարս՝ դստերը՝ Աշխենին:

Չորդորում է դստերը վերադառնալ Երևան, քանի որ ամուսնուն՝ Գիգային «չեն ուզում Երևանից բաց թողնեն»:

Տեղեկություններ է հաղորդում իրենց ընտանեկան անցուդարձից: Մասնավորապես. «Տերտերն է մի քիչ տաքություն տալիս, և իսկի էլ չես կարող երևակայել, թե ինչ ողբերգություն է դուրս եկել ու ինչ սարսափ է ընկել քաղաքի վրա: Ես մտածում եմ լուրջ, որ վախից կարող է մի վտանգ պատահել»:

Այսպես կատակով գրում է նաև որդու՝ Համլիկի մասին. «Համլիկը, ճիշտ է, շուտ-շուտ մեզ համար սաղվաթ* է դրկում, բայց հետո էլ երեսներս վեր է բերում, ասում է՝ էնքան ձեզ համար բան դրկեցի, որ քանդվեցի, դուք էլ ինձ համար դրկեցեք, և ցուցակներ է դրկում, թե ինչ կարելի է դրկել, օրինակ – շորեր, ոտնամաններ և էս տեսակ համեստ բաներ»:

Մուշեղի մասին. «Մուշեղն ու Մարուսյան ճիշտ որ լավ են իրար գտել: Ես կարծում եմ դրանք էդպես էլ կմնան:

Ձեռքները կընկնի – կուտեն, չի ընկնիլ – սոված կմնան: Առածն ասում է՝ անգույնն էլ մի գույն է - բեդռանգ դա բիր ռանգ դըր»:

Իսկ Աշխենին. «Դու քո նամակում** գրել ես, որ շատ բան չուղարկենք, որ տիկնոջը նեղություն չլինի: Մենք էլ բան չենք ուղարկում, որ տիկնոջը իսկի նեղություն չլինի»:

*) Նվեր (թուրքերեն):

**) Աշխենի այդ նամակը չի պահպանվել:

ԵԼԺ 10, 335-336:

Չոկտեմբերի 14 - Բորիս Արղության-Երկայնաբազուկի նամակը Թումանյանին Թիֆլիսից.

«Սիրելի Չովհաննես,

Երեկ եղա քեզ մոտ առավոտյան ժամը 9 1/2 – ին, թխկթխկաց-
րի, բայց ինձ չբաց արին դուռը: Խնդրում եմ և հիշեցնում եմ,
որպեսզի չի մոռանաս փնտրել քեզ մոտ պ. Վարդգես Սուրենյանի
թարգմանությունը «Վինձորսկիյա կունուշկի», որ քեզ մոտ պիտի
լինի և ուղարկես ինձ մոտ: Այդ թարգմանությունը շատ հարկավոր է
դրամատիկական ընկերության, որը ուզում է մոտիկ ժամանակում
դնել այդ թարգմանությունը բեմի վրա:

Քո Բորիս Արդության-Երկայնաբազուկ»:

ԳԱԹ ԹՖ, 989 (263 լր.):

Չոկտեմբերի 16 - Տեր-Յովհաննիսյան ստորագրությամբ
նամակ Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Յարգելի բանաստեղծ

պ. Յովհաննես Թումանյան

Ցանկանալով նոր հիմքերի վրա դնել Տ. Նազարյանի գրական-
գեղարվեստական սալոնը, խնդրում եմք Ձեզ շնորհ բերել ուրբաթ՝
ամսույս 17-ին, երեկոյան ժամը 7-ին Սալոն, այդ ձեռնարկության
համակիրների առաջին հիմնադիր ժողովին, ուր քննության կառնվի
նոր կանոնադրությունը, որից հետո տեղի կունենա իմպրովիզացիոն
երեկույթ մասնակցությամբ հիմնադիրների՝ ըստ ցանկության:

Ժամ. վարչ. անդամ՝ Տեր-Յովհաննիսյան»:

ԳԱԹ ԹՖ, 2227 (506):

Չոկտեմբերի 17 - Տպագրում է («Մայրության և մանկության
պաշտպանություն» միօրյա թերթ, Թիֆլիս, 1919) «Մեր կյանքի
հիմնական խնդիրը» հոդվածը:

Ձուգահեռ օրինակներով ցույց է տալիս, որ բովանդակ կեն-
դանական աշխարհում ամենաանպաշտպանը կին-մայրն ու իր մա-
նուկն են: Բնության մեջ ամեն մի արարած ծնում, սնում ու խնամում
է իր ձագին, մինչև ինքնուրույն կյանքի պատրաստ լինելը: Միայն
կին-մայրն է, որ ծնելուց հետո դեռ երկար ժամանակ պիտի խնամի
իր զավակին, այն էլ այն դեպքում, երբ ինքն է հասարակության մեջ
ամենից իրավագույրկն ու պաշտպանության կարոտը: Դրան գումա-
րած նաև հալածանքները հատկապես ապօրինի ծնունդների ու
նրանց մայրերի նկատմամբ: Եվ վերջում.

«Խեղճ մայրեր...

Խեղճ մանուկներ...

Թո՛ղ օրհնված լինեն նրանք, որոնք էս արյունի օրերուն մեր առջևը դրին մոր ու մանկան և նրանց պաշտպանության խնդիրը:*

Ավելի սուրբ ու ավելի նուրբ խնդիր դժար թե կարելի լինի դնել հասարակության առաջ:

Եվ թո՛ղ օրհնված լինեն նրանք էլ, որ կապաշտպանեն մայրությունն ու մանկությունը, մինչև նոր հասարակարգի հետ գա էն մեծ օրը, երբ կին-մայրը ինքը կլինի իր ամձի և իր վիճակի տերն ու տնօրենը»:

*) 1919 թ. հունիսի 1-ին Թիֆլիսում կազմակերպվել է Մայրության ու մանկության պաշտպանության ընկերություն, որին ակտիվորեն մասնակցել է նաև Թումանյանը:

ԵԼԺ 7, 394- 395, 657:

Հոկտեմբերի 20, Թիֆլիս - Նամակ Երևան՝ դստերը՝ Նվարդին:

Ստացել են դստեր նամակը և շատ ծիծաղել, որ Համլիկը իրենց կատակից (տես հոկտեմբերի 11, Աշխենին ուղղված նամակը) նեղացել է:

Տեղեկացնում է. «Էս քանի ժամանակ է թեթև հիվանդ եմ, տանից դուրս չեմ գալիս»:

Հորդորում է դստերը, որ շուտ գա, Անուշն ու Աշխենն էլ արդեն Կարսից եկած կլինեն:

Դժգոհ է Կարսում գտնվող որդու՝ Մուշեղի վիճակից (տես նաև հոկտեմբերի 11, Աշխենին ուղղված նամակը). «Աշխենը գրում է, որ Մուշեղը լուրջ հիվանդ է: Իսկ ես կարծում եմ առհասարակ Մուշեղի դրությունը լուրջ է և շատ անմախսանձելի: Ուրիշ կերպ չի էլ կարող լինել, երբ մարդ ունեցած-չունեցած խելքից էլ հրաժարվի ու էնպես բան բռնի ու գնա:

Էն, որ ասել են խելքը երկրորդական բան է, բանաստեղծների համար են ասել, որ խելքից բարձր ուրիշ բան էլ ունեն, ոչ թե նրանց համար, որոնց նույնիսկ փոքրիշատե խելք ունենալը մեծ երջանկություն պետք է լինի և պետք է միշտ խելքը բանեցնեն»:

ԵԼԺ 10, 337:

Հոկտեմբերի 24 - Լևոն Բուդաղյան ստորագրությամբ նամակ Թումանյանին Թիֆլիսից:

«СЛОВО» լրագրի թիվ 54-ում կարդացել է Թումանյանի նամակը* և ի պատասխան պատմում է Շևքեթ անունով մի թուրք բեկի մասին: Այդ բեկին տեղացի հայերը պաշտում էին, որովհետև նա

պատերազմի ժամանակ ամեն ինչով, նույնիսկ զենքով պաշտպանում էր նրանց բոլոր վտանգներից: Լսելով այդ մասին՝ թուրք իշխանությունները զորք են ուղարկում նրա դեմ, կոտորում են ընտանիքը, իրեն էլ ձերբակալում: Հայ երիտասարդներին հաջողվում է փրկել միայն նրա դստերը:

Ռուսաստանում հաստատված նոր կառավարությունը Տրապիզոնի բերդից նրան ինչ-ինչ ճանապարհներով կարողանում է տեղափոխել Թիֆլիսի բերդ, որտեղ և նա վախճանվում է: Իմանալով այդ մասին՝ Տրապիզոնի հայերը գալիս իրենց ծախսով հուղարկավորում և ամփոփում են նրա աճյունը Թիֆլիսի թուրքական գերեզմանոցում:

*) Խոսքը «Իմ պատասխանը Լևան Կիպիանուն» բաց մամակի մասին է, որի ռուսերեն թարգմանությունը տպագրվել էր «Кавказское слово» թերթում (տես ապրիլի 10):

ԳԱԹ ԹՖ, 1062 ((284 լր.):

Յուկտենբերի 25 - Մամբրե Մատենճյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Հարգելի պարոն Հ. Թումանյան

Եթե կարևոր եք համարում, այսօր նորից կարող եմք տեսնվել՝ վերջնական ձև տալու համար մեր ծրագրին: Պատրաստ եմ հաճույքով գալու Ձեզ մոտ որ ժամին որ ցանկաք կամ թերևս դուք ինքներդ կուզեիք անցնել ինձ մոտ, ես տանն եմ մինչև ճաշ և երջանիկ կլինեմ Ձեզ տեսնելով. ուզում եմ ասել՝ կարգադրեցեք ինչպես որ կամենաք:

Հարգանքներով՝ Մամբրե Մատենճյան»:

ԳԱԹ ԹՖ, 1672 (390 լր.):

Յուկտենբերի 28 - Սիմեոն Հակոբյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Փարիզից.

«Սիրելի Հովհաննես,

Երկար ժամանակ ի վեր ուզում էի քեզ գրել: Հիմա էլ Լևոնը (Շանթը) շտապում է, չեմ կարողանում երկար գրել:

Ուզում եմ, սակայն, այս հեռու տեղերից քեզ սիրով ու կարոտագին ողջույններ ուղարկել:

Հովհաննես ջան, գիտեմ քո վիշտը, իմացա քո ծանր կորուստները, ամբողջ հոգով համակիր եմ քեզ:

Ի՞նչ ես անում, արդյոք կարողանո՞ւմ ես նոր բան գրել, քո էմ սիրուն, սքանչելի տաղերից, որ մարդուն այդքան թեթևություն և այնքան հանգիստ հուզում են պատճառում:

Սիրտս լի է մեր աշխարհի կարոտով, Անուշի, Թաթուլի, Փարվանայի, Մարոյի, քո երգերի անանցանելի կարոտով:

Հովհաննես ջան, հավետ շնորհակալ եմ քեզանից այս անկորնչելի (մեկ բառ անընթեռնելի.- Խմբ.) համար, որ դու տվիր շատերի հետ միասին նաև ինձ և որով ես ապրում եմ կյանքի դառն թուփերին:

Գրիր, եթե ժամանակ ունես, գրիր քո կյանքից և քո խոհերից:

Ինչպե՞ս է Նվարդը, ինչպե՞ս է Մուշեղը, ի՞նչ եմ անում մյուսները:

Ես առայժմ կմնամ Պարիզ. նամակ կարող ես ուղարկել Հակոբ Քոչարյանի միջոցով:

Այս ծովածավալ քաղաքի մեջ օրերս անցկացնում եմ ձանձրալի աշխատանքի մեջ, կարոտելով ձեզ բոլորիդ:

Դերենիկը ի՞նչ է անում:

Ջերմ ու կարոտով համբույրներ՝

քո Սիմ. Հակոբյան»:

ԳԱԹ ԹՖ, 1462 (361 լր.):

Հոկտեմբեր - Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի մինիստրի գրությունը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Երևանից.

«Պ. Լևոն Բաբայանին հատկացված չորս հազար ռուբլի (4000) գումարը, եթե իրեն փոխանցելու հնարավորություն չունեք, խնդրում եմ համձնեք սույն գրությունը ներկայացնող պ. Թեոդոս Տեր-Հովհաննիսյանին, որը գնում է Շուշի:

Միաժամանակ խնդրում եմ այդ մասին տեղեկացնեք պ. Լևոն Բաբայանին:

Հանրային կրթության և արվեստի մինիստր

Դիվանապետ»:

ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 218: ԹԹ, 1147:

Հոկտեմբեր - Տպագրվում է Տիգրան Նազարյանի հոդվածը՝ Թումանյանի ծննդյան տարեդարձի հոբելյանական հանդիսությունների մասին:

Գրում է. «Փետրվարի 7/20-ը (Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը) անմոռանալի կմնա մեր գրականության պատմության մեջ: Դա մի արևոտ, մի լուսաշող օր էր հայ գրականության, հայ ստեղծագործ մտքի, հայ բանաստեղծության համար: Այդ օրը Հայոց ամպամած երկնքից սև շղարշը պահի մի հետ քաշվեց, և արևը իր կենարար ճառագայթներով տաքացրեց մեր սրտերը, և մենք արտահայտեցինք մեր անհուն կարոտը՝ խաղաղ կուլտուրական կյանքի ու մեր աննկուն կամքը ապրելու և ստեղծագործելու...

Առաջին անգամն էր, որ Թիֆլիսի մտավորականությունը, Թիֆլիսի հասարակությունը՝ առանց ազգերի ու կուսակցությունների խտրության, ինքնաբերաբար ու սրտաբուխ կերպով այնպիսի ջերմ ու այնպիսի վայելուչ ցույցեր արավ ու հարգանքներ տվավ հայ գրականությանը ի դեմս նրա փայլուն ներկայացուցիչ Հովհ. Թումանյանի: Առաջին անգամն էր, որ մեր գրողներին ու բանաստեղծներին տեսանք՝ կուսակցությունների ու լրագրերի կապանքներից ազատագրված և միմյանց մոտ նստած. առաջին անգամն էր, որ տեսանք հրատարակիչներին ու ընդհանրապես մեր ընտիր գրողների ստեղծագործական աշխատանքի պտուղները վայելողներին՝ նրանց որոնելիս, մեծարելիս...»:

Հանգամանորեն ներկայացնում է գրեթե բոլոր հոբելյանական միջոցառումները՝ հավելելով. «Եվ այդպես երկու ամբողջ ամիսներ, Թումանյան ամիսներ»:

Հիշում է, որ բանաստեղծը «իր գրական մկրտությունը ստացել է «Աղբյուրի» անապական ավազանում՝ 1890 թվի օգոստոսի համարում առաջին անգամ տպագրելով իր «Արև և Լուսին» բանաստեղծությունը, որ ուղարկել էր իր գրական կնքահոր՝ Ղազարոս Աղայանի միջոցով»:

Հիշում է նաև, որ հոբելյանի օրը, շնորհավորելով նրան, «Աղբյուր» և «Տարազի» աշխատակիցները բանաստեղծին նվիրել են «գեղածիծաղ մի նկար՝ պատանին վրձինը ձեռին», նկարի վրա՝ շնորհավորական մի ուղերձ՝ խմբագրի ինքնագրով.

«Հոգեհարազատդ մեր սիրելի Բանաստեղծ,

Ո՞վ կարող է ամենից ավելի հոգեկան հրճվանք ու սփոփանք զգալ, եթե ոչ նա, որ ականատեսն է վաղ գարնան կարմիր արշալույսին մատաղ արեգիդ ծագմանը, և ապա ամբողջ երկնականարի վրա երեսուն տարվա ստեղծագործող աշխատանքիդ:

Ո՞վ կարող է ամենից ավելի ուրախ լինել և փառք տալ Ստեղծողին, եթե ոչ նա, որ ականատես է, թե ինչպես դաժան ծննան երկունքով ծնված կայտռիկ գարուն անուշաբույր ծիլ-Մանուկդ, որին օրորել է զեփյուռը, սնուցել մայիսյան հովը, բեղմնավորել ամռան կիզիչ արևը, այսօր արիական հասակում զվարթ է ու կենսարար:

Եվ «Աղբյուր» ու «Տարազն» են, քաղցրախոսդ մեր սիրելի Բանաստեղծ, որ իբրև ականատեսներ գրական օրհնյալ ծննդանդ, գարնանային թոթովանքիդ, ամառային կենսարար արևով բեղմնավորմանդ և այսօր թանկագին կյանքիդ վաղորդյան պանծալի աշնանամուտիդ նախատոնակին էլ տեսնում են արդեն անգին շալակդ համեղ ու սննդարար առատ բերքերովդ հայրենի շտեմարանը լցրած:

Ընդունիր ուրեմն, սիրելի հոբելյար, ջերմ ողջույն և օրհնություն «Աղբյուր»-ից, ուր առաջին անգամ նրա լուսեղեն ակունքից կարկաչեցիր՝ թոթովելով՝ «Արև և Լուսին»:

Ընդունի՛ր, թանկագին հոբելյար, շնորհավորությունն և խընդակցություն «Տարազ»-ից, որի էջերը նման «Աղբյուր»-ի շատ-շատ տարիներ են պճնազարդվել քո հրաշագեղ ստեղծագործություններով:

Ընդունի՛ր, մեծարելի՛ հոբելյար, հարգանք ու հիացմունք Գրական-գեղագիտական սալոնից:

Արևշատություն Քեզ, սիրելի՛ Բանաստեղծ, քո աղամանդյա հոբելյանդ տոնես Մայր Հայաստանի ազատ Մասիսի գեղածիծաղ լանջերին»:

«Տարազ», 1919, թիվ 10, էջ 68-69:

Նոյեմբերի 1 - Վրացական համալսարանի վարչության նախագահ Գրիգորի Դիասամիձեի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Дорогой Ованес Татевосович, податели сего письма – садовники Тохвадзе и Кашахидзе, приобревшие давно уже дом с садом в Крцанисах от Акопова. Эти садовники лишены возможности приступить к обработке сада, так как не могут найти пристанище в собственном доме. Дело в том, что в их доме помещается приют для сирот Московского Армянского Комитета Российского Общества Красного Креста. К несчастью, эти садовники не могут отыскать помещение и по близости где-нибудь. Так вот, добревший Ованес Татевосович, не отка-

жете им посоедѣствовать, чтобы Комитет предоставил им в их доме хотя бы две комнаты. Я очень извиняюсь, что приходится Вас беспокоить, но, зная Ваше всегдашнее отзывчивое отношение к трудящимся элементам, позволяю тревожить Вас настоящим обращением.

Привет сердечный вам и всем Вашим. Жму руку.
Любящий Вас и преданный Вам Гр. Дуасамидзе.
ԳԱԹ ԹՖ, 1144 (311 լր.):

Նոյեմբերի 10 - Անդրանիկ Օզանյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Փարիզից.

«Սիրելի Յովհաննես Թումանյան

Սիրելի՛, Եղիշե և Ջաքեյան ուղարկեցինք Կովկաս պաշտոնով:՝ Մանրամասնությունք կպատմեք քեզ բերանացի: Ամսույս 12-ին գեներալ Բագրատունիի հետ կմեկնինք Ամերիկա: Իմ առողջությունս այնչափ ալ լավ է: Եղիշեին բարոյական աջակցությունդ չխնայես:

Հարգանքներս տիկնոջ և օրիորդներուն, սիրալիր բարևներս քեզ և զավակներուդ: Ինչպես Երևանյան տիրող կառավարությունը հոգնեցա՞վ, թե կշարունակե իր համառությունները: Այդ բոլորի մեջ կցավիմ հատիսյանին:

Եթե շարունակեն այդ մտայնությամբ տանիլ ընդհանուր Ազգի գործը, քիչ ժամանակեն բնական մահով պիտի մեռնին և տուժողը պիտի լինի մեր ժողովուրդը: Նույն մտայնությունն է նաև հոս. բայց կլինի մի ամիս, որ բավական զիջած են և իրենց լսածին նայելով մի կոպեկ էլ չունին: Փող պիտի կտրեին՝ դարձյալ ժողովրդին կողոպտելու համար, սակայն այդ էլ չհաջողվեց:

Բարևներս պ. Կիկային և հարգանքներս իր տիկնոջ:

Անդրանիկ:

Հ.Գ. «Դարդե ընողին դարդ չի պակսիր, քեֆ ընողին քեֆ չի պակսիր»: Դե՛հ, գինիները լեցուցեք և իմ կենաց խմեցեք: Իմ կողմես մայրիկիդ ձեռքը համբուրիր: Բարևներս հարցնողաց:

Նույն»:

*) Անդրանիկի քարտուղար Եղիշե Քաջունին և Ջաքեյանը Կովկաս էին գործուղվել Փարիզում հանգանակված գումարներով տեղի գաղթականությանն օգնելու առաքելությամբ:

ԳԱԹ ԹՖ, 895 (506):

Նոյեմբերի 22, Թիֆլիս - Հայ հայրենակցական միությունների անունից ողջույնի նամակ Վրաստանի Հանրապետության նախագահ Նոյ ժորժանիային.*

«Многоуважаемый Ной Николаевич!

Во дни, когда мудрою рукою восстанавливаются вековая солидарность и взаимопонимание двух братских народов, мы все проникнуты глубоким сознанием, что только на незыблемых основах мирной и солидарной жизни народов грузинского и армянского могут быть воздвигнуты их светлая будущность и культурное преуспеяние. А потому союзы армянских землячеств, усматривающие свое назначение в достижении единения и солидарности народов Закавказья, с чувством величайшей радости приветствуют Вас и правительство республики, Вами возглавляемое, в неуклонном стремлении Вашем к достижению взаимопонимания и солидарности двух вековых соседей-народов на основе права и справедливости.

Да будет исполнена та миссия единения и умиротворения народов Закавказья, к которой призвана Грузия».

*) Այս և նույն օրվա հաջորդ երկու նամակների գրության առիթը Հայաստանի խորհրդարանի նոյեմբերի 11-ի նիստում հաստատված հայ-վրացական պայմանագիրն է՝ երկու երկրների միջև երկկողմանի անմաքս ապրանքափոխանակության մասին:

ԵԼԺ 10, 338, 675:

Նոյեմբերի 22, Թիֆլիս - Բոլոր հայ հայրենակցական միությունների անունից ողջույնի նամակ Վրաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Եվգենի Գեգեչկորիին.

«Многоуважаемый Евгений Петрович!

Накануне успешного осуществления заветной мечты солидарности и единения народов грузинского и армянского, нарушенных временными и преходящему явлениями, каковое нарушение причиняло бесконечную боль Вам и всем нам, равно зная Вас как убежденного сторонника идеи солидарности, я от имени всех армянских земляческих союзов, посвятивших свою деятельность делу солидарности народов Закавказья, выражаю чувство глубокой радости и благодарности и приветствую все Ваши начинания в этом направлении.

Да укрепится на реальных и вечных основах дело единения народов Закавказья».

ԵԼԺ 10, 338-339:

Նոյեմբերի 22, Թիֆլիս - Հայ հայրենակցական միությունների անունից ողջունի մամակ Վրաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Նոյ Ռամիշվիլին.

«Многоуважаемый Ной Виссарионович!

Сознавая, что Вам как руководителю внутренней политики республики и глав доблестной ее армии, причиняли душевные страдания временные осложнения в отношениях двух братских народов и осуществляемая ныне солидарность и единение их также бесконечно радуют Вас, столь близко стоящего к жизни обеих народов, от имени армянских земляческих союзов выражаю Вам сердечную радость и остаюсь в твердой уверенности, что благодаря Вашим усилиям впредь дело солидарности двух братских народов еще более укрепится и станет могучим фактором их развития».

ԵԼԺ 10, 339:

Նոյեմբերի 23 - Աշոտ Աթանասյանի մամակը Թումանյանին Թիֆլիսից.

«Սիրելի Հովհաննես,

Այսօր եղա Տիգ. Հովհաննիսյանի մոտ ստանալու Ղարաքիլիսայի նահատակության լուսանկարները, որ Բյուրոն ձեռք բերեց անցյալ տարի – նպատակով, որ դրանց կլիշեները առնվեն և օգտագործելուց հետո վերադարձվեն: Պ. Տ. Հովհաննիսյանը հայտնեց, որ այդ լուսանկարները քեզ է հանձնել, ուստի խնդրեմ դրանցից մի քանիսը տալ պ. Մ. Ղազարյանին, որը գրում է Ղարաքիլիսայի հերոսամարտի պատմությունը՝ կլիշեներ շինել տալու համար և ապա այդ կլիշեները հանձնել Բյուրոյին, իհարկե, լուսանկարների հետ միասին:

Քո Աշոտ Աթանասյան»:

ԳԱԹ ԹՖ, 796 (466):

Նոյեմբերի 28 – Հաղորդագրություն մամուլում՝ Խրիմյան Հայրիկի մահվան 12-րդ տարելիցին նվիրված հանդիսության մասին՝ Սիջան ստորագրությամբ:

Հանդիսության ընթացքում արտասանվել են Հովհաննես Թումանյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ղ. Աղայանի և այլոց բանաստեղծությունները՝ նվիրված Հայրիկին:

«Հառաջ», 1919, թիվ 57:

Նոյեմբերի 28, Թիֆլիս - Նամակ Երևան՝ Դավիթ Անանունին.

«Սիրելի բարեկամ,

Ձեր հասանելիք գումարից ուղարկում եմ առայժմ երեք հազար ռուբլի:

Ինչո՞ւ՝ կհարցնեք:

Նախ՝ էստեղ շատ գրականների դրությունը էնքան վատ է, որ գալիս եմ, ես էլ ում փողը մոտս է լինում, տալիս եմ իրենց: Էդպես էլ Ձերն էի արել: Խոստանում եմ միշտ ու, իհարկե, ետ չեն բերում: Էդպես էլ ինքս ընկել եմ մի ահագին պարտքի տակ:

Մի խոսքով՝ երեք հազարը դրկում եմ – հարյուր հազարից* նշանակած 5 հազարի հաշվին, մնում է երկու հազարը, էն էլ կդրկեմ բյուրոյից** տալիք գումարի հետ մոտ օրերս: Շնորհակալ եմ մեր բյուրոյի հանձնարարությունները կատարելու համար:

Նամակս շատ վռազ եմ գրում, թե մի քիչ էլ գրական գրույց անեիմք:

Ձերն բարևներով միշտ բարեկամդ՝

Հովհ. Թումանյան:

*) Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ընդառաջելով Թումանյանի խնդրանքին (տե՛ս հունիսի 15), հարյուր հազար ռուբլի էր հատկացրել Գրողների միությանը՝ կարիքավոր գրողներին ու գիտնականներին օգնելու նպատակով (տե՛ս հուլիսի 20):

**) Խոսքը պատերազմի հետևանքով հայ ժողովրդի կրած վնասները որոշող հաշվիչ հանձնաժողովի մասին է:

ԵԼԺ 10, 340:

Դեկտեմբերի 2 - Գրում է «Մեծ պատերազմից հետո (Իմ բարեկամ Շ. Միսաքյանին)» քառատող չափածո ընծայականը.

Իմ սըրտին զարկին էնքան գընդակներ,

Մեջտեղն էլ զարկին՝ անշուշտ մահաբեր...

Նայի՜ր, թե ինչքա՜ն մեծ սիրտ ունեմ ես,-

Կանգնած եմ ահա ու չեմ ընկել դեռ:*

*) Գրված է «Ամուշ» պոեմի 1916 թ. առանձին հրատարակության՝ Շ. Միսաքյանին նվիրած օրինակի անվամաթերթի վրա:

ԵԼԺ 1, 422, 673:

Դեկտեմբերի 3 - Մամբրե Մատենճյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Սիրելի պարոն Յ. Թումանյան

«Աուդիտորիում» խմբակցությունը ոչ մի դեպքում չի համաձայնվում զիջել, որովհետև դահլիճը վարձել են և փողն արդեն վճարել, աֆիշաներ են տպել, 800 ռուբլու տոմսակ ծախել և այլն և այլն: Ես անձամբ անելանելի կացության մեջ եմ, ճիշտն ասած ոչինչ չեմ կարողանում անել, այնպես որ Ձեր կազմակերպելիք երեկույթը թող հետաձգվի, քանի որ նրանք պնդում են, որ խոստացել եմ, իսկ ես չեմ կարող ձև անել, որ այդպես չէ: Նրանք նույնիսկ ասում են, որ երբ պ. Թումանյանն ուզի այլ անգամ կազմակերպել այդ երեկոն, իրենք ևս իրենց բոլոր ուժերով կաջակցեն ըստ ամենայնի նպաստելու համար գործին:

Խորին հարգանքով՝ Մ. Մատենճյան»:

ԳԱԹ ԹՖ, 1673 (871):

Դեկտեմբերի 5 - Ավետիք Իսահակյանի նամակը Թիֆլիս՝ Թումանյանին՝ Ժնևից.

«Սիրելի Յովհաննես,

Նամակս ուղարկում եմ պ. Զխենկելու հետ, ես նրա հետ բարեկամացել եմ, և գիտեմ, թե ինչ է ասվում հայ միջավայրում նրա մասին. Կարս, և այլն: Բայց ես այն համոզմունքն ունեմ, թե անցյալը պետք չէ քրքրել, անշուշտ օգտվել պիտի անցյալից, բայց ժողովուրդները ապրում են ներկայի և ապագայի շահերով. մենք ընկած ենք մահմեդական օվկիանոսի մեջ, բարեկամ, ընկեր կամ գրեթե չեզոք հարևան էլ չունենք, այս ամենը, որ թե քեզ և թե ամեն հայի հայտնի է, մեր վրա հրամայական է դնում նվազեցնել, չեզոքացնել մեր թշնամիների քանակը. ես այն կարծիքին եմ, որ ամենից հեշտ վրացիների հետ կարելի է բարի դրացիական հարաբերություններ ստեղծել, շնորհիվ որոշ, հաստատ տվյալների, կրոն, քաղաքակրթություն նույն աստիճան, համանման մտայնություն և այլն:

Դրան հասնելու ճանապարհը – իրար հասկանալն է, պարզել թյուրիմացությունները, զսպել մամուլը և մանավանդ բռնել փոխադարձ զիջման ուղին. ի՞նչ էք կառչել Արդահանին, Ախալքալաքին, տվեք նրանց. այնտեղ մի մասուն հայություն չկա, մյուս մասն էլ պատմականորեն – Ջավախք – համարյա նույնն է, և վերջապես ի՞նչ արժեք ունի նա մեզ համար, ինչ գավառ է որ: Հայ ժողովուրդը

ժամանակի մեջ քաշեցեք, տարեք Կարս, Բասեն, Ալաշկերտ և այլուր: Ես նրանց բազմիցս հայտնել եմ, որ Լոռին՝ մեր Կյուրեկյան Տաշիրը, չենք զիջի: Բայց Ախթալան, Լավվարը, Շուլավերը նրանցն է: Ամոթ է, երկու պատմական հիմնավորը դրացիները իրար միս ուտեն և նպաստեն թաթարների ուժեղացմանը:

Գիտեմ, որ ինձ նման շատ մտածողներ կան, և իմ ձայնը նոր խոսք չէ, և արժեք էլ չունի, բայց և այնպես խնդրում եմ, խոսքս տեղ հասցնես թե մեր Նիկոլին, որ մեծ դեր է խաղում, և թե քո շրջապատին, որ ազդեցություն ունի:

Իմացած եղեք, եթե հայ և վրացի, գոնե հարաբերաբար, համերաշխ լինեն, թե եվրոպան և թե Ռուսիան ավելի հարգանքով կվերաբերվեն, և ավելի դյուրավ կլուծվի մեր և նրանց անկախության հարցը, և թե ոճրագործ թաթարները ավելի կզսպվեն:

Ես ոչինչ լուր չունեմ անցուդարձից՝ այդտեղի, միայն մեկ-մեկ, սրտի ցավով լսում եմ, թե մեր խեղճ ժողովուրդը քաղցած է, որովհետև վրացիք ճանապարհ չեն տալիս, և ուրեմն հենց այդ ճանապարհը ձեռք բերելու համար պիտի զիջենք: Ինձ թվում է, թե Թիֆլիսի հայ բուրժուազիան շատ ազդեցություն ունի գործերի ընթացքի վրա և մեր գեղացու, գաղթականի, արհեստավորի շահերը զոհ եք բերում Թիֆլիսի հարուստներին, որոնց միշտ ատել եմ և հիմա ավելի նվազ չեմ ատում: Նամակս երկարեց, կարճ կտրեմ, ասածս հին ճշմարտություններ են, որը սակայն պիտի կրկնել միշտ:

Պ. Չխենկելուն խոսել եմ քո մասին. խնդրում եմ ծանոթանաս հետը: Նա ուզում է համերաշխ ոգով գործել: Նրանք էլ կարիք ունեն մեզ հետ լավ լինելու: Նրանց էլ ամեն հայտնի եվրոպացի քաղաքագետ նույն խորհուրդն է տալիս. նրանք էլ վախ ունեն թաթարներից: Գործեցեք միասին, մի վանեք նրանց հեռու. հիմա դուք ավելի փորձված եք հերվա դեպքերից և ուրեմն շրջահայաց կգործեք:

Ես, եթե ողջ մնամ, մարտ-ապրիլ ամիսներին կվերադառնամ հայրենիք: Հույս ունեմ ավելի լավ հանգամանքներում իրար տեսնենք, քան որ բաժանման ժամանակն էր: Շուտով կլուծվի հայոց հարցը, և հոռետես չլինենք լավ կլուծվի:

Ամենաջերմ համբույրներ քեզ, Օլյաին, երեխաներին, Նիկոլին, Դերենիկին, Շանթին և բոլոր հին բարեկամներին: Բարևներ Սոֆիայից և Վիգենից:

Քո Ավետիք:

Պ. Քոչարյանի նամակը խնդրեն դրկել Բագու, տ. Բեգլարյանի միջոցով, որ տիրոջը հանձնվի»:

ԳԱԹ ԹՖ, 1296 (143 III ց.):

Դեկտեմբերի 10 - Վրթանես Փափազյանի նամակը Թիֆլիս՝ Թուֆանյանին՝ Երևանից.

«Սիրելի Յովհաննես

խնդրեն ինձ հասանելիք և քեզ մոտ մնացած 1800 ռուբլի փողը կովկասյան բռնաներով (վրացականը այստեղ չի անցնում) տալ գրաբեր պ. Էդուարդ Կզարթմյանին՝ ինձ բերելու համար:

Այդպիսով ես ամբողջովին քեզանից ստացած կլինեմ Չայաստ. կառավ. ինձ հասանելիք 10000 ռուբլին և սա թող համարվի իբր ստացական:

Բարևներով Վ. Փափազյան»:

ԳԱԹ ԹՖ, 2321 (489):

Դեկտեմբերի 11 - Չայաստանի Չանրապետության հանրային կրթության և արվեստի մինիստր Ն. Աղբալյանի գրությունը Թուֆանյանին.

«Քանդակագործ Միք. Միքայելյանը առաջարկում է մինիստրության գնել Գ. Սունդուկյանի, Ա. Ծատուրյանի, Ղ. Աղայանի և Ա. Քալանթարի գլուխ-դիմակները: Մի գրությամբ դիմել եմ Թիֆլիսի հայ Արվեստների Միությանը (ՉԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 216: ԹԹ, 229.-Խմբ.),* որ Ձեզ հետ միասին տեսնեն և գնահատեն այդ դիմակները արվեստի և դրամական արժեքի տեսակետով: Չույս ունեն, որ պիտի չներժեք Ձեր աջակցությունը այս բարենպաստակ գործին:

Չանրային կրթության և արվեստի մինիստր

Դիվանապետ»:

*) Նույն բովանդակությամբ նամակ (ՉԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 216: ԹԹ, 232) Աղբալյանն ուղարկել էր նաև Վրաստանում Չայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանին՝ տեղեկացնելով, որ պատճենը ուղարկվել է Թուֆանյանին:

ՉԱԱ, ֆ. 207, ց. 1, գործ 216: ԹԹ, 234:

Դեկտեմբերի 21 - Տպագրվում է Չովի. Թուֆանյանի «Պատրանք» բանաստեղծությունը:

«Բանակի օր», հավանաբար մեկօրյա թերթ, 1919:

Դեկտեմբերի 27 - Տեղի է ունենում Հայաստանի գրական ընկերության 10-րդ գրական երեկույթը:

«Հ. Թումանյանի բանաստեղծության հասարակական ու փիլիսոփայական տարերքը» թեմայով դասախոսում է Վահան Խորենին:

«Հառաջ», Թիֆլիս, 1919, թիվ 77:

Դեկտեմբերի 31 - Արամայիս ստորագրությամբ նամակ (տե՛ս նաև սեպտեմբերի 1) Թումանյանին՝ Բաքվից.

«Մեծարգո պարոն Հովհաննես Թումանյան,

Պ. Լեոն գրել էր, որ գրողներին պետական նպաստ մասնադրող հանձնաժողովը թե ով՝ իմ անունս դուրս է գցել ցուցակից: Դա մի շատ հետաքրքիր պատմություն է, որ ցարդ ինձ համար մութ է մնացել և կցանկանայի պարզել, թե ինչո՞ւ են այդպես վարվել:

Ապա կիսնդրեի խորհուրդ՝ հետևյալի համար: Պարապությունը՝ ապրելու համար գրել եմ մի դրամա, որ, ինչպես ասում են, վնաս չունի. աջող է. արդ, որքա՞ն հարմար կլիներ, եթե ուղարկեի Թիֆլիս, այդտեղ բեմի վրա դնելու:

Հարգանք առ Ձեզ՝ Արամայիս»:

ԳԱԹ ԹՖ, 980 (259 լր.):

1919 - Տպագրվում է Թումանյանի ծննդյան 50-ամյակին նվիրված ծավալուն հոդված՝ Ե. Տեր-Մարտիրոսյան ստորագրությամբ:

Ընդհանուր ակնարկով հաջորդաբար ներկայացնում է բանաստեղծի քնարերգությունը, պոեմները, մանկական չափածոն և արձակը, լեզվամտածողության յուրահատկությունները և եզրակացնում. «Մեր գրականության մեջ ստեղծվել է մի դպրոց, որ հիրավի Թումանյան կարելի է անվանել: Վահ. Միրաքյանը իր «Լալվարի որսով», Գ. Մեսյանը իր «Ձարի» պոեմով, մանկական ամսագիր «Հասկերի» շուրջ խմբված Աթ. Խնկոյան, Հակ. Աղաբաբ և այլ սկսնակ ուժեր հիշյալ դպրոցի աշակերտներ կարող են համարվել թե՛ իրենց սյուժեներով և թե՛ արտահայտության ձևերով:

<....> Թումանյանի տաղանդը իր ամբողջական զարգացման ընթացքում տարբեր արտահայտություններ է ունեցել: Նա իր գրական գործունեության արշալույսին ներկայանում է որպես քնարերգակ (ποιητικ), ապա վարպետորեն մի շարք պոեմներ է հյուսում, տալիս է գեղարվեստորեն մշակված լեզենդներ և խորիմաստ հեքիաթներ, դիմելով ժողովրդական բանահյուսության՝ նա գրականու-

թյան պարզևուժ է վերաստեղծված դյուցազնական դրվագներ, նա սպասավորում է հայ դպրոցին՝ տալով մատաղ սերնդին շատ գողտրիկ մանկական պատմվածքներ: Թումանյանի անձնական ապրումները գերազանցորեն համամարդկային են միաժամանակ, քանի որ նա երգել է մարդկայինը առհասարակ, նա հիմնադիրը եղավ ազգային պոեմի, որի նյութը, ինչպես վերը ասացինք, ժողովրդի կյանքն է իր դրական և բացասական կողմերով: Ամենուրեք և միշտ նա գերծ է մնացել միտումնավոր արվեստից, որ կարճ կյանք ունի գեղեցկի ասպարեզում: Այսպես, նա տալով անցողակի շրջանն ապրող հայ գյուղի պատկերը, երբ վերազնահատության էին ենթարկվում հին արժեքները, նա չի քարոզում, տնտեսապես ու բարոյապես քայքայվող գյուղի վերակազմության համար նա ծրագիրներ չի առաջադրում, ինչպես Սուրաբանը: Նա իրավացիորեն կարող է «Հայոց վշտի» անգուգական և անմոռաց երգիչը համարվել, սակայն որպես այդպիսին նա մեր դարավոր տառապանքից ազատագրվելու ուղիներ չի մատնանշում, ինչպես անում են այդ Ռ. Պատկանյանը և Բաֆֆին: Նա առարկայորեն է մոտեցել մեր իրականության, կյանքի երևույթներին և որպես գեղագետ քննել, դիտել, ուսումնասիրել է և նույնը գեղարվեստորեն վերարտադրել հնարավորության սահմաններում միշտ վարագուրած պահելով իր հակակրանքն ու համակրանքը նրանց հանդեպ:

Սերունդներ կգան ու սերունդներ կերթան, կյանքի առօրյա մանր-մունր հոգսերին արձագանքող շատ հրապարակախոս գրողներ մոռացության կտրվին: Իսկ Թումանյանը՝ որպես մաքուր արվեստի հավատարիմ ու տաղանդավոր արտահայտիչ, հավերժորեն կապրի հայ գրականության մեջ»:

«Ալիք» տարեգիրք, Պյատիգորսկ, 1919, էջ 35-51:

1919 - Թիֆլիսում հրատարակվող «Գրական-գեղարվեստական ալմանախ»-ի 5-րդ գիրքը նվիրվում է Թումանյանի ծննդյան 50-ամյակին:

Պատերազմում զոհված երիտասարդ և սկսնակ գրողների մասին հոգվածում հիշվում է նաև Արտավազդ Թումանյանի անունը. «Արտ. Թումանյան - զոհվեց 1917 թվի Վանի վերջին նահանջի ժամանակ իբրև անձնուրաց հայրենասեր հերոս»:

«Գրական-գեղարվեստական ալմանախ», գիրք 5, 1919, էջ 126-127:

<1919> Գաղթականների տառապանքներին ականատես «մի հին զինվոր» Խաչատրյան Հրայրը Թումանյանին է ուղարկում իր հուշատետրը*:

Հուշատետրի «Վերջաբանում» դիմում է բանաստեղծին. «Ես հավատացած եմ և գիտեմ, որ չունիմ ես այնքան ուսում, որ կարողանամ գրել այնքան, որքան գրությունը պահանջում է ինձանից: Ես չեմ էլ կարող գրել սիրուն, շքեղ, ինչպես մի կաթիլ մեղրն է գրված: Ես հավատացած եմ, որ չունիմ ուսում այնքան, ես գիտեմ 2 ականից եմ դուրս եկել և չունիմ այնքան ուսում: Բանաստեղծ, ես միմիայն գիտեմ, որ դուք կներեք ինձ իմ ամեն մեկ անուղիղ գրության համար»:

*) ՀՀՍՄ կենտրոնական խորհրդի անունից հայ ժողովրդին ուղղված Թումանյանի դիմումի (տե՛ս 1918, դեկտեմբերի 18) արձագանքներից է:

ԳԱԹ ԹՖ, 2759 (524 լր.):

1919 - Տպագրվում է («Գրական գեղարվեստական ալմանախ», 1919, գիրք 5, էջ 131) Թումանյանի կարծիքը հայ գրականության արդի վիճակի մասին՝ ի պատասխան Ստ. Ջորյանի կազմած հարցաթերթիկի*, որ կրում է «Հայ գրականության վիճակը» խորագիրը.**

«Ես մեր բանաստեղծների, վիպասանների ու դրամատուրգների գործերը տարիներ առաջ եմ կարդացել:

Սխալ կլիներ, եթե մեր գեղեցիկ գրականության վրա կարծիք հայտնեի հին տպավորության տակ:

Էն ժամանակից դեսը շատ եմ փոխված իմ գրական ճաշակն ու հասկացողությունը և իմ աշխարհայացքը: Ինչ որ էն ժամանակ թվում էր գեղեցիկ ու հերոսական, այժմ տգեղ է ու բարբարոսական: Ես վերջին տարիներս, երբ դեպք է լինում, վերադառնում եմ իմ հին կարդացածներից մեկին կամ մյուսին, հիասթափվում եմ հաճախ: Ընդհանուր տպավորությունս ու կարծիքս էն է, որ մեր գեղեցիկ գրականությունը առողջ ու ամբողջական գործեր չատ չունի:

Սինչև այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ոտքի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչև երկինք հասնի:

Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը ազատ Հայաստանն է, ազատ հարազատ հողը, ժողովուրդը:

Էդ ազատ Հայաստանն էլ կտա մեր գրական ուժեղ ու կենդանի լեզուն, որ լինելու է ժողովրդական բարբառների, գրաբարի ու եղած գրական լեզվի համադրությունը: Հայ ժողովրդական կենդանի բարբառների ազդեցությունն է լինելու տիրական:

Չնչին է հայ ժողովրդական կենդանի բարբառների միջև եղած տարբերությունը և կայանում է գլխավորապես կը-ի և ում-ի մեջ: Եստեղ էլ գերակշռելու է կովկասահայ բարբառը: Ես չնչին տարբերությունները մի կողմ թողած, հայ ժողովրդական բարբառները մի լեզու են և հայտնաբերում են մի ամբողջական հայություն»:

*) Հարցարանի հեղինակ Ստ. Ջորյանը գրում է, որ այն պատրաստ է եղել «դեռ 1917 թ. վերջերին», բայց ժամանակին չի հրապարակվել «մեր ժողովրդի գլխին պայթած ահավոր աղետների» պատճառով: Այնուհետև ներկայացնում է հարցարանը. «1) Ի՞նչ է Ձեր կարծիքը գեղեցիկ հայ գրականության ներկայի մասին. ա) վիպասանություն, բ) դրամա, գ) քնարերգություն:

2) Ի՞նչպե՞ս եք նայում գեղեցիկ հայ գրականության ապագային:

ա) Արդյոք ներկան երաշխավորո՞ւմ է նրա ապագա առաջադիմությունը:

բ) Որո՞նք են, Ձեր կարծիքով, նրա գրավականները:

3) Ի՞նչ կարծիք ունիք ռուսահայ և թուրքահայ գեղարվեստական բարբառների մասին:

ա) Ապագան այդ բարբառներից որի՞ն է պատկանում:

բ) Ցանկալի՞ է արդյոք նրանց ձուլումը. թե՛ մեկի կամ թե՛ մյուսի չբացումը:

4) Ի՞նչ կարծիք ունիք ժողովրդական բարբառների մասին»:

Թումանյանից բացի հարցարանին պատասխանել են նաև Շիրվանզադեն, Նար-Դոսը, Վ. Փափազյանը, Դ. Դեմիրճյանը և ուրիշներ:

**) Թումանյանի պատասխանը այս խորագրով էլ տպվել է ԵԼԺ-ում:

ԵԼԺ 7, 396, 658:

<1919> - «Կովկասյան Հայոց խորային ընկերության» վարչության նախագահ Տեր-Հովհաննիսյանի նամակը Թումանյանին՝ Թիֆլիսից.

«Ազնիվ բարեկամ

Այսու պատիվ ունինք հայտնելու Ձեզ, որ արդեն տեղումն հիմք դրված է «Կովկասյան Հայոց խորային ընկերության», որի կա-
րիքը մեր հայ ժողովրդի կյանքում չափազանց զգալի է:

Մենք լիահույս ենք, որ Ձեզ համար շատ ուրախալի կլինի այս
մեր ձեռնարկը և որ Ձեր զգացմունքներին էլ կհամապատասխանի
այս երևույթը, ուստի և դիմելով Ձեզ խնդրում ենք Ձեր բարոյական և
նյութական աջակցությունը այս գործի համար:

Վարչությունս արդեն կազմակերպում է գեղարվեստական
պարբերական հավաքույթներ: Առաջին երեկոն տեղի կունենա շա-
բաթ օրը, ամսվա 28-ին՝ Գեղարվեստական սալոնում, Գոլովինսկ.
No 41, Երեկոյան ժամը 8 1/2, խնդրում ենք պատվել հավաքույթը
Ձեր ներկայությամբ:

Անդամագրություն և նվերներ ընդունվում են վարչության գան-
ձապահ՝ պ. Հակոբ Տեր-Հարությունյան, գրասենյակում, Երևանյան
հրապարակ:

Նախագահ վարչության՝ Տեր-Հովհաննիսյան»:

ԳԱԹ ԹՖ, 2228 (469):

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ա

Աբաջիկ – 43, 63-65, 68

Աբելյան Ա.<Լեքսանդր> (1858-1940) – դրամատուրգ - 197

Աբելյան Հովհաննես (1865-1936) – դերասան – 170, 375, 388, 396, 654, 686, 715-717, 728, 735, 737

Աբելյան Ներսես (1855-1933) – ուսուցիչ, լրագրող – 192, 803, 806

Աբելյան Պողոս (1877-1943) – հայ ազգային գործիչ, տնտեսագետ, իրավաբան, մանկավարժ, գրող, թարգմանիչ – 527, 531, 533, 536, 538-540, 542-545, 554, 562, 576, 580, 584, 585, 587, 589, 591, 596, 600, 601, 610, 611, 620, 621, 687, 703, 795

Աբելյան Արտաշես (1878-1955) – մանկավարժ, բանասեր, թարգմանիչ – 86, 192, 224, 351, 462

Աբելյան Մանուկ (1865-1944) – հայագետ, մանկավարժ, թարգմանիչ – 265, 278, 280, 282, 286, 307, 317, 326, 347, 362, 371, 374, 377, 379, 380, 383, 385, 389-391, 393, 408, 410, 411, 413, 415, 419, 420, 451-456, 463, 464, 466, 470, 471, 474, 485, 783, 808

Աբեսալոյան Մ. - 376

Աբովյան Անուշավան (1862-1938) – գրող, Թումանյանի մտերիմ ընկերը – 23, 32, 136, 154, 155, 179, 189, 274, 279, 295, 303, 309, 335, 347, 348, 360, 368, 371, 377, 378, 402, 407, 559, 570, 573, 599, 621, 676, 677, 742, 800

Աբովյան Խաչատուր (1809-1848) – գրող, լուսավորիչ, մանկավարժ – 83, 134, 168, 301, 338, 345, 346, 350, 534, 782

Աբովյան Կ. – 613

Աբովյան Սարգիս (1869-1942) – Թումանյանի դասընկերներից, մանկավարժ, գյուղատնտես – 703, 746

Աբրահամյան Արշակ – արճեշյի գաղթական – 102

Աբրահամյան Պ. – 283

Աբրահամյան Ռուբեն (1881-1951) – իրանագետ-լեզվաբան, պրոֆեսոր – 287, 298, 302, 307, 392, 393, 419, 451, 464-466, 470, 472

Աբրահամյան Տիգրան – արճեշյի գաղթական – 102

Ագապյան Արշակ (1860-1905) – գրող, մանկավարժ – 246

Ա-Ղո/Աղո (Տեր-Մարտիրոսյան Հովհաննես, 1867-1954) – գրող, վիճակագիր, հրապարակախոս – 165, 783

Ադամյան Մելիք – ուսուցիչ – 695

Ադամյան Շարլ – 376

Ադամյան Պետրոս (1849-1891) – դերասան – 209, 213, 227, 229, 230, 240

Ադելյան Ազարիա (Դանիելյան, 1881-1951) – գրող, գյուղագիր – 246

Ադոնց Նիկողայոս (Տեր-Ավետիքյան, 1871-1942) – պատմաբան, բյուզանդագետ, բանասեր, մանկավարժ – 265, 374, 389, 393, 396, 408, 454, 466, 471

- Ազյան Մ. (Միքայելյան Ալեքսանդր, 1884-1937) – մշակութային գործիչ – 126
- Ազնավոր (Ազնավորյան Հովհաննես, 1870 - ^{առ}) – տպագրիչ, գրավաճառ, լրագրող – 377
- Ազնավորյան Լ. – 705
- Ազնաուրյան Սուրեն Մ. – 228, 235
- Աթաբեկյան Տիգրան (XIX-XX դդ.) – «Համբավաբերի» թղթակից – 220
- Աթանասյան Աշոտ (1870-1941) – գյուղատնտես, խմբագիր, գրող – 75, 76, 378, 610, 653, 672, 713, 765, 791, 810, 824
- Աթանասյան Ղևոնդ ք. (1839-1919) – քահանա, մանկավարժ, թատերական գործիչ – 782, 784
- Ալավերդյան Եփրեմ. Ս. – 708, 709
- Ալավերդյան Մ. - 580
- Ալեքսանդր Ջորջ – Շեքսպիրյան կոմիտեի նախագահ – 207, 233
- Altalena – տե՛ս Գենջյան Հակոբ
- Ալիխանյան Իսահակ (1876-1956) – դերասան – 375, 708
- Ալիխանյան Կոստանդին - բանկային գործիչ, մեծահարուստ – 268, 269, 372, 373, 409-411, 433, 438, 449, 451, 452, 456, 457, 462-465, 470, 473
- Ալիշան Ղևոնդ (1820-1901) – բանաստեղծ, հայագետ, թարգմանիչ, բանասեր – 158, 166, 168, 178, 184, 190, 312, 429, 684, 699
- Ալիսազյան Հովհ. – 376
- Ալիսկյան Վրթանես (1872-1936) – նկարիչ – 94, 99, 376
- Ալվերդյան (Հախվերդյան) Գևորգ (1818-1861) – բանասեր, բժիշկ – 138, 191, 221, 649
- Ակսակով Ս. Տ. – 324
- Ահարոնյան Ավետիս (1866-1948) – գրող, հասարակական-քաղաքական գործիչ – 42, 72, 83, 100, 149, 178, 200, 203, 206, 219, 227, 303, 367, 371, 389, 396, 400, 408, 435, 455, 474, 532, 557, 610, 637, 648, 650, 651, 781, 784
- Ահարոնյան Արամ – 772, 811
- Ահարոնյան Արփիկ – Ավ. Ահարոնյանի դուստրը – 814, 815
- Ահարոնյան Վարդգես (1888-1965) – Ավ. Ահարոնյանի որդին, գրականագետ – 15, 74, 83, 93, 98, 238, 283, 292, 327, 428, 484, 665, 699, 785
- Աղաբաբ Հակոբ (Աղաբաբյան, 1875-1926) – գրող, մանկավարժ – 795, 806, 829
- Աղաբաբյան – 580
- Աղաբաբյան Ավագ – 435
- Աղամյան Ջաղիկ – 406
- Աղայան <Բեգլար> (1880-1921) – դերասան, թատերական գործիչ, բանաստեղծ – 381
- Աղայան Լուսիկ – Ղ. Աղայանի դուստրը, Մ. Սարյանի կինը – 149, 201
- Աղայան Ղազարոս (1840-1911) – գրող, մանկագիր, մանկավարժ – 72, 100, 131, 223, 236, 237, 240, 272, 301, 313, 314, 324, 338, 346, 435, 443, 484, 571, 693, 700, 820, 825, 828
- Աղայան Մուշեղ (1888-1966) – Ղ. Աղայանի որդին, երաժշտագետ, երգահան – 524
- Աղանյան Գյուլտ (1856-1919) – ավագ քահանա, խմբագիր-հրատարակիչ, պատմաբան – 14, 23-25, 27, 31, 32, 34, 35, 39, 47, 129, 130, 135, 136, 155, 192, 205, 207, 224, 228, 229, 248-252, 258, 265, 266, 268, 274, 279, 290, 295, 303, 309, 312-314, 335, 336, 347, 348, 360,

- 368, 371, 373, 375, 377, 378, 385, 393, 396, 401, 464, 470, 474, 475, 514, 559, 560, 566, 567, 573-575, 601, 602, 742, 775, 781, 783, 784, 806-809, 811, 812
- Աղաջանյան Խ. – 376, 451
- Աղասարյան – բժիշկ – 382
- Աղասյան Վարսենիկ (1898-1974) – բանաստեղծուհի – 319, 330, 332, 367
- Աղբալյան Նիկոլ (1873-1947) – գրականագետ, քննադատ, մանկավարժ – 24-27, 31, 39, 47, 148, 189, 190, 205, 206, 211, 223, 224, 259, 295, 309, 312, 313, 334, 335, 347, 360, 368, 369, 371, 374, 377, 378, 384, 396, 402, 407, 409-411, 413, 415-417, 449, 453, 455, 456, 472-474, 484, 570, 573, 759, 781-783, 794, 808, 827, 828
- Աղեքսանդրյան - 473
- Աղթամարցի/ Գեղեցիկ Գրիգորիս (մոտ 15-րդ դ. վերջ-^{առ}) – բանաստեղծ, Աղթամարի կաթողիկոս – 124, 125, 218, 219, 353
- Աղթամարցի Հովսեփ (^{առ}-1544) – մշակութային և կրթական գործիչ, գրիչ, ծաղկող, բանաստեղծ – 219
- Աճառյան Հրաչյա (1876-1953) – լեզվաբան, հայագետ, մանկավարժ – 255, 288, 374, 389, 394, 396, 408, 419, 420, 430, 433, 434, 436, 439, 440, 451, 454, 466, 468, 471, 474, 786
- Աճեմյան Լյալյա (Մոսյա) – իրավաբան, հատիսյանների բարեկամը – 98, 99
- Ա. Մ. (Մեհրաբյան Արշակ, 1875-1957) – գրող, թարգմանիչ, մանկավարժ – 123, 126
- Ամասիսիսի – 68
- Ամատունի Վ. – բանասեր – 374, 580
- Ամատունի Սահակ վարդ. (1856-1917) – բանասեր, հոգևորական – 393, 440
- Amiko (Մարության Օհանջան, 1890-1965) – հաշվապահ, գավառական թղթակից – 163
- Ամիրխանյան Հ. – երգահան – 626
- Ամիրխանյան Հովսեփ – 19, 700, 701
- Ամիրխանով – 444
- Ամիրյան – 279
- Ամիրջանյան Տիգրան (1835-1897) – հասարակական-քաղաքական գործիչ, գրող, երգահան, թատերագիր – 168
- Այգեկցի Վարդան (12-րդ դարի վերջ-13-րդ դարի սկիզբ) – քարոզիչ, առակագիր – 340
- Այվազյան Բագրատ (1862-1934) – գրող – 560, 795
- Այվազյան Ե. – 506
- Այվազյան Հակոբ (1890-1924) – բանաստեղծ, լրագրող – 72
- Այտնյան Արսեն վարդ. (1823-1902) – բանասեր, լեզվաբան – 312
- Անագչյան Հակոբ – հաշվապահ, մտավորական – 406
- Անագչյան Մարգարիտ – 406
- Անանուն Դավիթ (Տեր-Դանիելյան Դավիթ, 1880-1942) – բանասեր, խմբագիր – 158, 179, 180, 189, 389, 618, 665, 783, 795, 808, 812, 825
- Անաստասյան Աշոտ – 733
- Անդրանիկ – տես Օգանյան Անդրանիկ
- Անտոնովսկայա Աննա – 718
- Անուրջ (Քալաշյան Նիկողայոս, 1895-1961) – բանաստեղծ – 385
- Աշխատակից Ս. (Եսայան Սարգիս, 1885-1973) – լրագրող – 292, 295

Աշրադնյան Պավել – 810
 Առաքելյան Արամ (1870-1933) –
 Թումանյանի դասընկերներից,
 ուսուցիչ, լրագրող – 114, 117,
 257
 Առաքելյան Համբարձում (1855-
 1918) – հրապարակախոս,
 «Մշակի» խմբագիր – 14, 389,
 405, 559-561, 570
 Առաքելյան Ջավահիր – 613
 Առաքելյան Սեդրակ – (1896-1957)
 – ատամնաբույժ, դերասան –
 376
 Ասլամազովա Նինա – 663
 Ասլանբեկով – 541
 Ասլանյան – դերասանուհի – 568
 Ասլանյան Խաչատուր – ագուլեցի
 վաճառական – 449, 450, 456
 Աստվածատրյան Միքայել (1878-
 1937) – մանկավարժ, լրագրող,
 գավառական թղթակից – 19,
 265
 Ավագյան Հովհաննես (1882-1959) –
 գրականագետ, խմբագիր – 61
 Ավանեսով Վառլամ (1884-1930) –
 կուսակցական, պետական
 գործիչ – 745
 Ավգերյան Հարություն (1774-1854)
 – հայ լեզվաբան, բառարանա-
 գիր, Մխիթարյան միաբանու-
 թյան անդամ – 798
 Ավետիսյան – դերասան – 375
 Ավետիսյան Մարգար (Մարգար,
 1880-1937) – գրող, մանկավարժ
 – 32, 40, 529, 536, 537, 543,
 544, 546, 553, 562, 569, 574,
 597, 601, 703, 709, 778, 783,
 789, 793, 795
 Ավետիսյան Սմբատ – 808
 Ավլեցյան – 66
 Արաբաբյան – 568
 Արաբյան Գևորգ – 516, 517
 Արագի Մովսես (1878-1964) – գրող
 – 145, 146

Արամ – տե՛ս Մանուկյան Արամ
 Արամայիս (Տեր-Դանիելյան Միսաք
 1874-1954) – բանասեր, գրող –
 225, 795, 806, 829
 Արասխանյան Ավետիք (1857-1912)
 – տնտեսագետ, հրապարակա-
 խոս, «Մուրճ» ամսագրի հիմնա-
 դիր և առաջին խմբագիր – 254,
 259
 Արեշյան Արտաշես – 517
 Արզումանյան – 610
 Արիստակեսյան Հովհաննես – 516
 Արխադի Կ. – 460, 461
 Արծաթբանյան Հմայակ (1876-1920)
 – գեղանկարիչ – 376
 Արծրունի (Վահան, 1857 -1947) –
 բժիշկ, խմբագիր – 760
 Արծրունի Գրիգոր (1845 -1892) –
 գրող, հրապարակախոս, խմբա-
 գիր – 229, 240, 248, 481
 Արծրունի Եր. – 411
 Արղության-Երկայնաբազուկ Բորիս
 – իշխան, մեծահարուստ բարե-
 րար, գրասեր, հայ որբերի և
 փախստականների հայկական
 կոմիտեի գանձապահ – 303,
 304, 660, 661, 815, 816
 Արղության Հովսեփ (1863-1925) –
 հասարակական գործիչ, «Երի-
 տասարդ Հայաստան» խմբի և
 ՀՀԴ կուսակցության հիմնադիր-
 ներից, հայ ազատագրական
 շարժման գործիչ – 406, 569,
 580, 587, 591, 596, 600, 601,
 658
 Արղության Սաթենիկ – 376, 406
 Արղության-Երկայնաբազուկ Սոֆիա
 (1860-1954) – գրող, մանկա-
 վարժ – 661
 Արմեն Գեղամ (Նալբանդյան Գե-
 ղամ, XIX-XX դդ.) – մշակու-
 թային գործիչ – 151
 Արմենյան Արմեն (Իփեկյան Արմե-
 նակ, 1871-1965) – թատերական

գործիչ, դերասան, բեմադրիչ – 23-25, 27, 28, 30, 31, 35, 37, 47, 375
 Արշավիր – 236, 238
 Արսեն – 93
 Արտազյան Լազար – 376
 Արտաշես – 238
 Արփիարյան Արփիար (1851-1908) – գրող, հրապարակախոս, խմբագիր, քաղաքական գործիչ – 698
 Ափինյան Կարապետ (1870-1944) – խմբագիր, մանկավարժ – 135
 Աֆրիկյան Գևորգ (1887-1918) – բանաստեղծ – 151
 Աֆրիկյան Խ. – 388, 456, 473, 610
 Աֆրիկյան Վահան (XIX -1969) – մանկավարժ – 727
 Աֆրիկյան Տ. – 464, 466

Բ

Բաբայան Լ. – 812, 819
 Բաբախանյան Առաքել (1860-1932) – պատմաբան, գրականագետ, հրապարակախոս, գրող – 14, 19, 23-25, 27, 28, 30-34, 37, 39, 47, 158, 160, 161, 178, 224, 240, 242, 248, 249, 259, 261, 266, 272, 275, 285, 339, 345, 374, 377, 378, 389, 393, 396, 400, 408, 455, 464, 466, 470, 471, 543, 544, 546, 547, 609-611, 641, 783, 801, 802, 808, 812, 829
 Բաբայան – բժիշկ – 96
 Բաբայան (Լևոն, 1868-1920) – գրող, մանկավարժ – 795
 Բաբայան Խաչատուր (1892-1920) – մանկավարժ – 269, 290
 Բաբայան Կարթունիել – 376
 Բաբանյան – արվեստի գործիչ – 377
 Բաբանով – ռուսական բանակի փոխգնդապետ, ազգությամբ լեզգի, հայատյաց – 68

Բաբաջանյան Միքայել – Ռուսաստանի Պետական դոմայի պատգամավոր – 205, 553
 Բաբիկ (Բաբկեն) – Ավ. Ահարոնյանի որդին – 814, 815
 Բաբկեն վարդապետ (Աղավեյան, 1869-1916) – հոգևոր գործիչ – 86, 91, 100, 112, 173
 Բաբկեն-Սուրեն – արևմտահայ մտավորական գործիչ – 698
 Բագրատ Սրբազան (1869-1938) – հոգևորական, 1915 թ. ամռանը Թումանյանի հետ զբաղվել է էջմիածնում կուտակված փախստականներին օգնելու գործով – 93, 114
 Բագրատունի – զեներալ – 647, 742, 822
 Բագրատունի Արսեն (1790-1866) – հայագետ, փիլիսոփա, գրող, թարգմանիչ – 312
 Բագրունի Յ. (Կարինյան Յրանդ, 1890-1931-ից հետո) – լրագրող, մանկավարժ – 181
 Բաժբեուկ-Մելիքյան Ալեքսանդր (1891-1966) – վրացահայ նկարիչ – 422, 423
 Բալաբեգյան Գր. – ՀՀՍՍ կենտրոնական խորհրդի անդամ – 546, 558, 559
 Բալախովսկյան Լևոն – 367
 Բալասանյան Գր. (1869-1935) – բանասեր, գրող, մանկավարժ – 161, 259
 Բալմոնտ Կոնստանտին (1867-1942) – ռուս բանաստեղծ, թարգմանիչ – 43, 106, 123, 125-127, 152, 422, 432, 436, 444, 445
 Բալտրուշայտիս Յուրգիս (1873-1944) – ռուս-լիտվացի բանաստեղծ, թարգմանիչ – 123, 125
 Բահաթուր Տ. – Բաքվի հայ գրասերների ընկերության հիմնադիր

անդամներից – 48
 Բաղդասարյան Եղիշե (<1881> - 1919) – խմբավար, կոմպոզիտոր – 339
 Բաղդասարյան Հ. (Հակոբ, XIX - 1938) – խմբագիր, մանկավարժ – 349, 621
 Բաղդասարյան Հովսեփ – սիրող բանաստեղծ – 809
 Բաղդասարով – ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի անդամ – 610
 Բաղդի – պատանի թումանյանի առաջին տանտերը Թիֆլիսում – 641
 Բաղդյան Ա. – Դսեղի բանկիչ, որ բողոքներ էր գրում թումանյան ընտանիքից – 426
 Բայրոն Ջորջ Լոուի Գորդոն (1788-1824) – իրավաբան, թարգմանիչ, գրող – 127, 199, 798
 Բաշալյան Լևոն (1868-1943) – արևմտահայ գրող – 406
 Բաշինջաղյան Գևորգ (1857-1925) – նկարիչ – 52, 53, 100, 210, 370, 375, 376, 408, 464, 467, 470
 Բաշինջաղյան Ջաքար (1895-1971) – տնտեսագետ, մանկավարժ – 496, 500, 501
 Բաջուղյան Արշակ – 406
 Բատյուշկով – ռուս լրագրող – 353
 Բարաթաշվիլի Ն. (1817-1845) – վրաց բանաստեղծ – 142, 310
 Բարատինսկի Եվգենի (1800-1844) – ռուս բանաստեղծ – 141
 Բարբյուս/Բարբի Անրի (1873-1935) – ֆրանսիացի գրող, լրագրող և հասարակական գործիչ – 198, 199
 Բարդուղիմեոս Եպիսկոպոս - 111
 Բարխուդարյան Ալեքսանդր (1889-1974) – թարգմանիչ, լրագրող – 99, 664
 Բարխուդարյան Աշխեն –Ալ. Բարխուդարյանի կինը – 664

Բարխուդարյան Սարգիս (1887-1973) – երգահան – 408, 423
 Բարյան Ա. – 131
 Բարսեղյան (Պարտիզյան) Պերճուհի (1889-1940) – գրող – 275
 Բաքիաուզ Ալֆրեդ – անգլիական նպաստաբաշխ-բժշկական հանձնախմբի անդամ – 206
 Բեգզադյան Արամ – 50
 Բեկզադյան Տիգրան (XIX -1942) – հասարակական գործիչ, մտավորական – 247, 610, 611, 658, 659, 687
 Բելյակ – ռուս գեներալ – 65
 Բեկյուզյան/Բեկյուլյան Ռուբեն քահանա (XIX դ.-1930-ական թթ. հետո) – հասարակական գործիչ – 40, 58
 Բեիբուղյան Նինա – 376
 Բենեշկիչ – ռուս պրոֆեսոր – 373
 Բենիկ վարդապետ (Եղիազարյան, 1867-1920-ական թթ. հետո) – գրական-հասարակական հոգևոր գործիչ – 688, 737, 739, 772
 Բերբերյան – բանկի տնօրեն – 546
 Բերբերյան Մարիամ – 405
 Բերբերյան Մինաս (1871-1919) – իրավաբան, գրականագետ, մանկավարժ – 14, 15, 23-25, 39, 47, 136, 137, 148, 155, 170, 179, 189, 197, 223, 265, 266, 268, 274, 279, 290, 295, 302, 303, 353, 360, 369, 372, 373, 377, 378, 409-411, 473, 474, 601, 610
 Բերբերյան Ռուբեն (1873-1942) – գրականագետ, խմբագիր – 137
 Բերգերով – 204
 Բերգսոն Անրի (1859-1941) – ֆրանսիացի փիլիսոփա – 513
 Բզնունի Հմայակ – պարսկահայ վաճառական – 406, 430, 445

Բըքստոն Զարուդ – անգլիացի հոգևորական, հասարակական գործիչ – 203, 206

Բլախուել Ալիս Սթոուն – հայ պոեզիայի անգլերեն թարգմանիչ – 429

Բլոկ Ալեքսանդր (1880-1921) – ռուս բանաստեղծ – 152

Բյորնս Ռոբերտ (1759-1796) – շոտլանդացի բանաստեղծ – 340

Բյուզանդ Նորայր (Բյուզանդացի, 1844-1915) – բանասեր, բառարանագիր – 213

Բյուլակ-Յովհաննիսյան Խաչատուր – ռուսաստանաբնակ հայագետ – 393

Բոնապարտյան Խ. – բժիշկ – 289, 294, 307, 379

Բորիսով Սիխայիլ Իվանովիչ – 193

Բորյան Ա.<ըմենակ> (1886-1918) – բանաստեղծ, լրագրող – 639

Բորոտինյան Գեորգ – 406

Բորոտինյան Եղիսաբեթ – 406

Բրյուսով Վալերի (1873 -1924) – ռուս գրող, քննադատ, թարգմանիչ – 43, 106, 120, 123-126, 128, 131, 132, 136, 148-167, 169, 170, 174, 175, 177-181, 183, 186, 189, 190, 199, 201, 204, 214, 241, 252, 253, 280, 294, 324, 333-335, 339, 341, 345, 347, 349, 350, 353, 354, 367, 378, 432, 439, 441, 632, 683

Բրյուսովա Իոաննա (1875 -1965) – Վ. Բրյուսովի կինը – 157

Բրոջի/ Բրոջուի Էնրիկո – Թիֆլիսի կոմսերկատորիայի պրոֆեսոր – 717, 735

Բուդաղյան <Արտաշես> – բժիշկ – 103

Բուդաղյան Լևոն – 817

Բուլղարացի Գրիգոր – Վանի ապրիլյան ինքնապաշտպանության հերոսներից – 619

Բունիաթյան Ս. – Ավ. Արասխանյանի քրոջ որդին – 411, 474, 601, 610

Գ

Գաբաս Ստեփան – 376

Գաբրիելյան Աբրամ – 405

Գազանճյան – 289, 292

Գ. Զ. – տե՛ս Գամառ-Քաթիպա

Գամառ-Քաթիպա – տե՛ս Պատկանյան Ռափայել

Գայայան Յովհաննես (1864 -1934) – բանաստեղծ, բանասեր, մանկավարժ – 698

Գայֆաճյան Վահրամ (1879 -1960) – նկարիչ – 376

Գանձակեցի Կիրակոս (1203-1271) – պատմիչ և եկեղեցական գործիչ – 287

Գասպար – 13

Գասպարյան Ա. – 772, 779, 811

Գավրիլով Վասիլի – 336, 359

Գարեգին վարդապետ – տե՛ս Յովսեփյան Գարեգին

Գեգեչկորի Եվգենի (1880-1954) – Վրաց արտաքին գործերի նախարար – 522, 624, 662, 694, 702, 706, 707, 823

Գենջյան Յակոբ (1872-1930) – գրող, թարգմանիչ, մանկավարժ – 133, 306, 313, 384, 602, 606, 791, 792

Գերցեն Ալեքսանդր (1812-1870) – ռուս հեղափոխական, գրող, փիլիսոփա, հրապարակախոս – 507

Գիգա – տե՛ս Խատիսյան Գևորգ

Գիսակ – տե՛ս Յովհաննիսյան Գաբրիել

Գյոթե Վոլֆգանգ (1749-1832) – գերմանացի գրող – 141, 209, 213, 480, 687

Գյուզալյան Գառնիկ (1893-1958) – մանկավարժ – 296, 374
 Գյուզալյան Երանյակ – 37, 405
 Գյուզալյան Տիգրան – 37, 405
 Գյուրջյան Հակոբ – քանդակագործ – 375, 376, 408
 Գնունի Իվ. (Շահնազարյան Հովհաննես, 1874-1940-ական թթ.) – գրականագետ, խմբագիր – 141, 142, 148
 Գոմարթելի – 720
 Գորդեն Դմիտրի – 606, 658
 Գորկի Մաքսիմ (1868-1936) – ռուս գրող – 70, 123, 128, 223, 255, 403, 438
 Գորոդեցկի Նիմֆա – Ս. Գորոդեցկու կինը – 510
 Գորոդեցկի Սերգեյ (1884-1966) – ռուս բանաստեղծ, թարգմանիչ – 139, 197, 200, 201, 204, 216, 217, 238, 254, 305, 318, 398, 472, 473, 487-489, 491, 492, 494-497, 499, 502-504, 506, 508, 510, 511, 613, 631, 636, 664, 686, 697, 729, 740, 741, 745, 746, 756, 757, 785, 810
 Գորոյան Արշակ – 615, 616
 Գրադատ – 158, 160, 161
 Գրեչանինով Ալեքսանդր (1864-1956) – ռուս կոմպոզիտոր – 183, 431
 Գրիգոր (Չուբարյան Գրիգոր, 1888-1962) – իրավաբան, մանկավարժ – 93
 Գրիգորյան Հ. – 261, 536
 Գրիգորյանց – 160
 Գրիմ եղբայրներ (Հակոբ՝ 1785-1863, Վիլհելմ՝ 1786-1859) – գերմանացի բանասերներ, հեքիաթագիրներ – 38, 42, 44, 48, 142, 147
 Գրիշաշվիլի Իոսեբ (1889-1965) – վրաց բանաստեղծ, գրականագետ – 648, 649, 702, 729, 730

Գուդիաշվիլի Լադո (1896-1980) – վրաց նկարիչ – 422
 Գուլիկ – 610
 Գուլոյան Ավետիք (1878-1920) – գրող – 219, 327, 332, 378, 785
 Գևորգ V (1846-1930) - Ամենայն Հայոց Կաթողիկոս (1911-1930) – 80, 92, 98
 Գևորգյան – 192
 Գևորգյան Մամիկոն (1877-1962) – բառարանագետ, թարգմանիչ, դրամատուրգ – 607
 Գևորգյան Սոֆիա – 376
 Գևորգյանց Հայաստան – 249
 Գևորգյանց-Տեր-Դավթյան Վարսենիկ – 23

Դ

Դաբալյան Նորայր (1904-1955) – բանաստեղծ, գրականագետ – 411, 420, 510
 Դադյան Արամ – 299, 310, 318
 Դալլաքյան Արամ (19-րդ դ.-1916) – հասարակական գործիչ – 270
 Դադբաշյան Հ. (1866-1939) – բառարանագիր, պատմաբան – 812
 Դանթե Ալիգիերի (1265-1321) – իտալական վերածննդի հիմնադիր բանաստեղծը – 207
 Դանիել վարդապետ - 217
 Դանիելբեկյան Սոֆիա/Դանիել-Բեկ (Ղորղանյան, 1870-1948) – գրող, մանկավարժ – 378, 384, 663
 Դանիելյան – 536
 Դանիելյան Ա. – 90
 Դավթյան – Բորժոմի թատերական ուսումնարանի վարիչ – 697, 717
 Դավթյան Ար. – ՀՀՄՍ վարչության անդամ – 516, 543, 570
 Դարբինյան Արտակ (1878-1950) – խմբագիր, հասարակական գործիչ – 290, 291, 296, 297, 305,

308, 309, 315, 323, 540-542, 554, 569, 576, 580, 621
 Դարբինյան Մ. (Մաթևոս, 1891-1941) – գրող, թարգմանիչ, խմբագիր – 583-585, 669, 803, 805
 Դարբինյան Վարդան – բժիշկ-դեղագործ – 117
 Դեզվիչ/Դեզեն Յուրի – Թիֆլիսի «Феникс» գրական ամսագրի խմբագիր – 657, 658
 Դեմիրճյան Դերենիկ (1877-1956) – գրող, քննադատ – 14, 23-28, 32, 39, 40, 47, 99, 118, 136, 148, 154, 158, 159, 179, 184, 186, 189, 205, 223, 240-242, 248, 274, 285, 290, 292, 295, 302, 303, 307, 312, 317, 334-338, 346, 349, 350, 360, 368, 370, 374, 377, 378, 396, 402, 407, 464, 484, 515, 516, 525, 527, 529, 533, 534, 536, 537, 559, 621, 639, 640, 695, 720, 724, 742, 759, 760, 762, 765, 774, 775, 781, 783, 784, 795, 801, 802, 807, 812, 819, 827, 832
 Դեո Մ. (Ջանուսյան Մովսես, XIX-XX դդ.) – բանաստեղծ – 427
 Դերենիկ – տե՛ս Դեմիրճյան Դերենիկ
 Դերձակյան – 376
 Դիասամիձե Գրիգորի – վրաց հրապարակախոս, Վրացական համալսարանի վարչության նախագահ – 157, 170, 448, 460, 501, 692, 821, 822
 Դիկենս Չարլզ (1812-1870) – անգլիացի գրող – 127
 Դիրր – 613
 Դշխոյան Ներսես (1888-1965) – լրագրող, ծառայող – 425
 Դոլուխանյան – 601, 720
 Դոլուխանով – 64

Դոստոևսկի Ֆեոդոր (1821-1881) – ռուս գրող – 378
 Դպիր Գալուստ Միաբան – տե՛ս Տեր-Սկրտչյան Գալուստ
 Դրո (Դրաստամատ Կանայան, 1884-1956) – ռազմապետական-հասարակական գործիչ – 66
 Դուրյան Պետրոս (1852-1872) – բանաստեղծ – 122, 126, 158, 168, 350, 378, 429
 Դևոյան – 64
 Դևոյան – դերասան – 242, 245

Ե

Եգիրյան քույրեր – 107
 Եգիրյան-Բաղդասարյան Նվարդ – դերանասուհի, լրագրող – 107
 Եզնիկ վարդապետ (Գյանջեցյան Եզնիկ (Ղևոնդ), 1869 - ^{առ}) – բանասեր – 727
 Եզոպոս – առակագիր – 340
 Եկատերինա II (1729-1796) – ռուս կայսրուհի – 126
 Եղիազարյան Սկրտիչ – 91
 Եղիազարյան Սողոմոն/Սողոմոն (1852-1935) – տնտեսագետ – 289, 467, 471
 Եղոյան – 35
 Ենգիբարյան Գարեգին (1863-1920) – գրականագետ – 47
 Եսայան Ջապել (1878-1943) – գրող, թարգմանիչ, հրապարակագիր, հասարակական գործիչ – 134, 224, 231, 250, 251, 258, 269, 273, 274, 276, 277, 286, 337-339, 360, 364, 371, 379, 380, 396, 402, 441, 442, 475, 485, 616, 813
 Եսայան Ս.<արգիս> (1878-1943) – լրագրող – 377, 384, 390, 391
 Եվանգուլյան Լևոն – Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ – 265, 336, 753, 828

Եվանգուլյան Շ. – 113
 Երենյան Ս.<Իմոն վարդ> (1871-1938) – բանասեր – 16
 Երզնկյան Արամայիս (1879-1937) – պետական, քաղաքական գործիչ – 14, 302, 307, 654, 720
 Երզնկյան Սուրեն (1879-1963) – բանասեր, խմբագիր – 754, 755
 Երիցյան Գարեգին (1879-1966) – նկարիչ, խմբագիր, լրագրող, դրամատուրգ – 189
 Երիցյան Վաղարշակ (1903-1973) – բանաստեղծ – 420, 421, 424, 425, 510
 Երկանյան Սարգիս – 376

Զ
 Զամինյան Աբրահամ (1861-1937) – գրականության պատմաբան – 393
 Զավարյան Սիմոն (1866-1913) – գյուղատնտես, ազգային գործիչ, դաշնակցության հիմնադիրներից – 276, 642
 Զավրիս /Զավրիյան Դ.<ավիթ> Խ.<Քրիստափորի> (1889-1957) – քիմիկոս, գիտության վաստակավոր գործիչ – 64, 66, 70, 405, 720, 731, 745
 Զավրիյան Իգարելա – 405
 Զարգարյան Աբելար – 140
 Զարգարյան Արիստակես (Ռուստեն, 1864-1935) – Թուրքիայի մտերիմներից, բժիշկ, հասարակական գործիչ – 142, 209, 405, 515-517, 530, 537, 734
 Զարգարյան Ե. – 348, 370, 371
 Զարգարյան Ժողեֆինա – Զարգարյան Արիստակեսի կինը – 733, 734
 Զարդարյան Ռաֆայել (1896-1986) – բանաստեղծ – 325, 639

Զարդարյան Ռուբեն (1874-1915) – գրող, խմբագիր – 168, 197, 245, 274-277
 Զարիֆյան <Յովհաննես> (1879-1937) – դերասան – 25, 375, 396
 Զաքարյան – 376
 Զաքեյան – 822
 Զեոլյան Դավիթ – 376
 Զոհրաբյան Արշակ (1876-1920) – քաղաքական գործիչ, հրապարակախոս – 654, 720
 Զոհրապ Գրիգոր (1861-1915) – գրող, քաղաքական գործիչ – 168, 274-277, 379, 813
 Զոտա Վասիլի – 701, 702
 Զորյան Զ. – 90
 Զորյան Ստեփան – տե՛ս Ռոստոմ
 Զորյան Ստեփան (1890-1967) – գրող – 52, 127, 384, 389, 569, 639, 669, 700, 706, 765, 783, 785, 795, 831
 Զուրաբյան – 376
 Զուրաբով – 625

Է
 Էդիլյան Գուրգեն (1885-1942) – հոգեբան, մանկավարժ – 517, 547, 721, 724
 Էլիավա – 713
 Էլիբեկյան Զ.<ակոբ> (1884-1937) – մանկավարժ – 44, 530, 531
 Էմին Մկրտիչ (1815-1890) – բանասեր, պատմաբան, թարգմանիչ, մանկավարժ – 106
 Էնֆիաճյան Ա. – 449, 456, 473, 610
 Էսքիլես (525/4-456 թ. ա.) – հույն ողբերգակ – 209
 Էփրիկյան/Էփրիկ Միսաք (1892-1938) – գրական-մշակութային գործիչ – 785, 786

Թ
 Թագոր Ռաբինդրանատ (1861-1941) – հնդիկ գրող, դրամատուրգ, երգահան, նկարիչ – 332
 Թադևոս քահանա (1839-1898) – Թումանյանի հայրը – 670
 Թադևոսյան Արտակ – 564, 657
 Թադևոսյան Եղիշե (1870-1936) – նկարիչ – 203, 376, 396, 408, 455, 464, 470, 720
 Թահտաճյան – 377
 Թադիանոսյան Երվանդ (1864-1948) – իրավաբան, խմբագիր-հրատարակիչ, մշակութային գործիչ, թարգմանիչ – 48, 285, 421
 Թամալարյան - 533
 Թամամշև/Թամամշյան – գեներալ – 273, 276, 284, 290, 291, 309, 314-316, 323, 380, 391
 Թամանյան <Ալեքսանդր> (1878-1936) – ճարտարապետ, Երևան քաղաքի առաջին գլխավոր հատակագծի, կառավարության շենքի, օպերայի և այլ նշանավոր շինությունների հեղինակ – 376
 Թայիրյան Արտեմ – 406
 Թայիրյան Սոֆիա – 406
 Թանգիկ – 94, 99
 Թառայան Սեդրակ (1862 -1916) – գրող, գրականագետ, թարգմանիչ, խմբագիր – 298, 299, 303, 324, 381, 613
 Թեգոյան Ա. - 376
 Թերզյան – 377
 Թերլեմեզյան – երգչուհի, դերասանուհի – 655
 Թերլեմեզյան Փանոս (1865-1941) – նկարիչ – 56, 194, 201, 203, 217, 375, 376, 396, 405, 408, 464, 470, 474

Թլկատինցի (Հարությունյան Հովհաննես, 1860-1915) – արևմտահայ գրող, մանկավարժ, հասարակական գործիչ, «գավառական» հորջորջումով հայտնի գրական շարժման սկզբնավորող – 168
 Թյությունջյան /Թութունճյան Լևոն (1892-1977) – լրագրող – 339, 813
 Թոթովենց Վահան (1889-1938) – գրող, հրապարակախոս, մանկավարժ, թարգմանիչ – 206, 218, 224, 361, 425, 532, 712, 795
 Թորամանյան Թորոս (1864-1934) – ճարտարապետ – 375, 376, 378, 393, 396, 408, 455, 795
 Թորգոմյան Ծերուն (1896-1986) – գրող – 289, 290, 305, 448, 639
 Թորոսյան Ս. – 18, 192, 197, 224
 Թոփչյան Բ. – 729, 783
 Թունմյան Անտոն (1887-1959) – լրագրող, մշակութային գործիչ – 352
 Թումանյան Անուշ (1898-1927) – Թումանյանի դուստրը – 115, 140, 232, 329, 337, 339, 430, 460, 463, 805, 813, 814
 Թումանյան Աշխեն (1891-1968) – Թումանյանի դուստրը – 109, 140, 163, 188, 189, 247, 267, 326, 329, 338, 405, 425, 430, 435, 461, 478, 752, 755, 756, 813-815, 817
 Թունմյան Արեգ (1900-1937) – հասարակական, պետական և կուսակցական գործիչ, պատմաբան, Թումանյանի կրտսեր որդին – 140, 430
 Թունմյան Արտաշես (1892-1916) – Թումանյանի փոքր եղբայրը – 4, 112, 118, 164, 166, 179, 184, 187, 251, 814, 815

Թումանյան Արտավազդ (Արտիկ, 1894-1918) – Թումանյանի որդին, գրող – 4, 19, 26, 49, 83, 116, 140, 141, 148, 150, 156, 159, 163, 164, 188, 194, 200, 216-218, 231, 232, 236-238, 242, 254, 267, 287, 305, 329, 336, 338, 339, 398, 405, 428, 430, 437, 475, 613-615, 618, 640, 704, 830

Թումանյան Արփենիկ (1899-1981) – Թումանյանի դուստրը – 140, 164, 326, 340, 430, 472, 475, 734,

Թումանյանց Գր. – 426

Թումանյան Թամար (1907-1989) – Թումանյանի դուստրը, ծարտարապետ – 140, 338, 430, 555, 771

Թումանյան Թորգոմ – Անդրանիկի զինակիցներից, զնդապետ – 504

Թումանյան Կարապետ (1884-1950) – հոգևոր գործիչ – 698

Թումանյան Համլիկ (1898-1937) – Թումանյանի որդին, թարգմանիչ – 13, 74, 80, 83, 90, 92, 112, 140, 155, 236, 238, 267, 287, 332, 405, 430, 437, 532, 703, 752, 756, 757, 805, 815, 817

Թումանյան Հարություն (1869-1943) – գրող, ուսուցիչ – 728, 738, 739

Թումանյան Հովիկ (1914-1945) – Ալեքսն Թումանյանի և Գևորգ Խատիսյանի որդին – 247

Թումանյան Մարիամ (1870-1946) – իշխանուհի, մշակութային-հասարակական գործիչ – 166, 199, 673

Թումանյան Միքայել – իշխան, Մարիամ Թումանյանի որդին, գրասեր – 194, 750

Թումանյան Մուշեղ (1889-1937) – Թումանյանի որդին, մանկավարժ, բնագետ – 15, 16, 18, 20, 32, 43, 73, 89, 103, 140, 237, 338, 405, 423, 430, 435, 703, 752, 753, 757, 813, 815, 817, 819

Թումանյան Նվարդ (1892-1957) – Թումանյանի դուստրը, գրականագետ – 16, 26, 48, 70, 75, 77, 83, 84, 90, 93, 98, 99, 102-104, 109, 114, 116, 127, 140, 141, 156, 182, 188, 216, 242, 255, 278, 305, 328, 329, 334, 335, 339, 405, 417, 428, 446, 449, 460, 461, 554, 752, 757, 774, 813, 817, 819

Թումանյան Ռոստոմ (1872-1916) – Թումանյանի երկրորդ եղբայրը – 4, 112, 113, 116-119, 140, 251, 427, 447

Թումանյան Սեդա (1905-1988) – Թումանյանի դուստրը – 140, 232, 430, 462, 734, 805

Թումանյան Վահան (1882-1937) – Թումանյանի եղբայրը, հոդագործ – 117, 118, 236-238, 446

Թումանյան Օլգա (1871-1971) – Թումանյանի կինը – 90, 112, 148, 150, 159, 200, 216, 236, 405, 430, 435, 437, 443, 445, 446, 827

Թևոսյան Ստ. – 789

Ժ

Ժամհարյան Կատարինե – 363

Ժորդանիա Նոյ – Վրաց կառավարության նախագահ – 637, 694, 702, 706, 823

ժորժովիանի – 720

Ի

Իաշվիլի – տե՛ս Յաշվիլի Պաոլո
Իզմիրյան Մատթեոս կաթողիկոս
(1845-1910) – հոգևոր գործիչ,
բանասեր – 698

Իմեդաշվիլի Իոսեբ (1876-1952) –
վրաց հրապարակախոս, հրա-
տարակիչ – 157, 720

Իշխանյան Բ.<ախշի> (1879-1921) –
բանասեր, լրագրող – 389, 783

Իսաբեկյան – 224

Իսահակյան Ավետիք (1875-1957) –
բանաստեղծ – 20, 74, 122, 124-
126, 136, 154, 156, 252, 256,
285, 338, 346, 350, 354, 359,
371, 374, 389, 396, 408, 429,
435, 439-441, 455, 484, 639,
667, 715, 762, 774, 783, 826

Իսահակյան Իսահակ (1893-1916) –
բանաստեղծ – 151

Իսրայելյան Ս.<արգիս> (1882-
1973) – մանկավարժ – 138, 221

Իվանով Վյաչեսլավ (1866-1949) –
ռուս բանաստեղծ – 106, 115,
123, 125-128, 151-153, 205,

Իրանյան - 377

Իփեկյան Գասպար (1883-1952) –
քննադատ, գրական-մշակութա-
յին գործիչ – 197, 206, 265, 278

Լ

Լալայան Երվանդ (1864-1931) –
ազգագրագետ, բանահավաք,
խմբագիր – 209, 319, 374, 375,
393, 408, 486, 765, 795

Լանոզյան Կ. – 90

Լասիշվիլի Գեորգի – Վրաստանի
Հանրապետության
լուսավորության նախարար –
625

Լարինովսկի – 68

Լեյլի (Տեր-Մկրտչյան Փառանձեն,
1892-1951) – բանաստեղծուհի –
159, 319, 330, 337, 639, 785

Լեո – տե՛ս Բաբախանյան Առաքել
Լերմոնտով Ս. (1814-1841) – ռուս
բանաստեղծ – 349, 431, 440,
480, 687

Լիզա – 195

Լիզեճյան – 328

Լիսիցյան Գերասիմ – առևտրական
– 447

Լիսիցյան Լևոն (1891-1921) – ար-
վեստաբան, հնագետ, հասարա-
կական գործիչ – 15, 99

Լիսիցյան Կատարինե (1863-1957)
– մանկավարժ, հրատարակիչ –
110, 725

Լիսիցյան Ստեփան (1865-1947) –
ազգագրագետ, թարգմանիչ, բա-
նասեր – 15, 19, 245, 265, 278,
283, 287, 298, 302, 307, 331,
384, 393, 394, 402, 409-411,
413, 415, 417, 419, 451, 453,
455, 456, 464, 465, 470, 472,
474, 477, 601, 792

Լիտնոզյան Ե. – 101

Լմեցի Զաքարիա եպիսկոպոս (XVI
դար) – հայ մշակութային գործիչ՝
խմբագիր, բանաստեղծ, մանրա-
նկարիչ, գրիչ. հայտնի է նաև
Գնունեցի, Խժեցի մականուննե-
րով – 219

Լյուլեճյան Տոնապետ (1875-1917) –
կենսաբան, մշակութային գոր-
ծիչ – 360, 361

Լոխանյանց Գայանե – 406

Լոխանյանց Նիկողայոս – բժիշկ –
406

Լոմտատիձե – 720

Լուսիկ – տե՛ս Աղայան Լուսիկ

Լևոնյան Գարեգին (1872-1947) –
բանասեր, խմբագիր, մշակու-
թային գործիչ – 38, 141, 203,
209, 210, 292, 302, 307, 376-
378, 382, 486, 668, 679, 719,
720, 726, 729, 783, 814

Լևոնյան Խաչատուր (1855-1915) –
բանասեր – 112

Խ

Խ. (Բորյան Խորեն, 1892-1919) –
բանաստեղծ – 52

Խայամ Օմար (մոտ 1048-1122-ից
հետո) – պարսիկ բանաստեղծ,
փիլիսոփա – 757

Խանազատ/Խան-Ազատյան Ռուբեն
(Կարապետյան Նշան, 1862-
1929) – մանկավարժ, հրատա-
րակիչ, գրական-հասարակա-
կան գործիչ – 290, 294

Խանադյաններ – 443

Խանզադյան – դերասանուհի –
242, 245

Խանզադյան Ցուլակ (Գրասեր, 1886-
1935) – գրաքննադատ, թարգ-
մանիչ – 51, 113, 160, 253, 254,
256-260, 268, 269, 271, 272,
275, 281, 284, 285, 288, 386,
440

Խ. Կ. (Կանայան Խաչատուր, 1881-
1976) – բանասեր, մանկավարժ
– 677

Խանլարյան Հակոբ (1885-1966) –
մանկավարժ, բանաստեղծ – 220

Խանճյան Արամ – գավառական
թղթակից – 281, 282

Խանոյան Ս. (Խանոյան Սար-
գիս/Սերգո, 1877-1937) – գրա-
կան-հասարակական գործիչ –
427

Խաշվելի – 712

Խաչատրյան – 543

Խաչատրյան Հակոբ (1884-1960) –
թարգմանիչ – 334

Խաչատրյան Հրայր – 702, 703, 831

Խաչատրյան Ն. – 464

Խաչատուրյան Սարգիս (1886-
1947) – նկարիչ – 203, 376

Խաչենց – 128, 165, 170

Խաչիկյան Ար.<սեն> (1885-1975) –
մտավորական – 411

Խատիսյան Ալեքսանդր (1874-1945)
– բժիշկ, քաղաքական-հասա-
րակական գործիչ, Թիֆլիսի քա-
ղաքապետ, Հայաստանի Առա-
ջին հանրապետության վարչա-
պետ – 19, 156, 157, 170, 388,
557, 706, 709, 711, 714, 715,
765, 768, 770, 771

Խատիսյան Ղևոդ (1876-1932) –
իրավաբան, քաղաքական գոր-
ծիչ – 19, 28, 117, 140, 247, 279,
359, 372, 405, 557, 815, 822

Խատյան Արամ – 313

Խզմալյան Թադևոս (1869-1918) –
մանկավարժ – 95, 600, 601,
610, 611

Խնկոյան Աթաբեկ (1870-1935) –
գրող, մանկագիր – 20, 34, 330,
342, 371, 562, 717, 782, 783,
795, 812, 829

Խոնդկարյան Արամ – լրագրող,
թարգմանիչ – 329

Խոնդկարյան Արշավիր (1889-1957)
– գրող, թարգմանիչ – 785

Խոշարունի Արմենակ – 318

Խոջա-Միրզա Ռ. – 392

Խոջայան Լևոն – զինվորական –
544

Խոստիկյան Միսակ (1881-1938) –
մանկավարժ – 393, 464, 470,
472

Խորեն – 93

Խորեն եպիսկոպոս – 64

Խորենի Վահան – տե՛ս Տեր-
Ղևոդյան Վահան

Խորենացի Մովսես – պատմագիր,
5-րդ դար – 106

Խրիմյան Հայրիկ (Մկրտիչ, 1820-
1907) – գրող, մանկավարժ,
1892-1907 թթ. Ամենայն Հայոց
Կաթողիկոս – 168, 301, 312,
429, 760, 782, 824, 825

Խունունց Հովսեփ – Ներսիսյան
դպրոցի վերատեսուչ – 50, 54,
57, 58, 66, 601, 610
Խունունց Միքայել – 377

Ծ

Ծատուրյան Ալեքսանդր (1865-
1917) – բանաստեղծ, թարգմա-
նիչ – 16, 43, 83, 106, 124-126,
154, 158, 205, 350, 351, 353,
360-365, 367-369, 371, 378, 389,
392, 408, 439-441, 514, 559,
674, 745, 828

Ծերեթելի Ակակի – (1840-1915) –
վրաց գրող, բանաստեղծ, հա-
սարակական գործիչ – 15, 310,
381

Ծուլուկիձե – 378

Կ

Կաճկաճյան Նիկողայոս – Ներսիս-
յան դպրոցի հոգաբարձու, բժիշկ
– 626

Կամսար Լեռ (Արամ Թովմադ-
յան/Տեր-Թովմադյան, 1888-
1965) – գրող, երգիծաբան – 783

Կամսարական – Արդվինի գավա-
ռապետ – 20

Կանայան Ստեփան (1860-1937) –
բանասեր, մանկավարժ – 165,
317, 371, 383, 384, 399, 402,
405, 407, 408, 470, 471, 570,
571, 573, 575, 742, 759, 775,
781, 783, 784, 808, 812

Կանայան Վահագ – 588

Կանանով – 80

Կանչելի Սանդրո (1875-1948) –
վրաց գրող, թարգմանիչ – 157,
422, 655

Կասմանյան Մ. – մանկավարժ –
798

Կավկապաձե Պ. – 495, 500

Կարա-Դարվիշ – տե՛ս Գենջյան Հա-
կոբ

Կարա-Մուրզա Ս. Գ. (1876-1942) –
դերասան, մշակութային գործիչ
– 174

Կարապետյան Բեյբութ – 727

Կարենյան Հակոբ (1813-1872) –
մանկավարժ, դրամատուրգ –
229

Կարինյան Արտաշես (1886-1982) –
գրականագետ,
հրապարակախոս – 245, 266

Կարինյան Հրեհանտ (1890-1931-ից
հետո) լրագրող, մանկավարժ –
244

Կարճիկյան <Խաչատուր> (1882-
1918) – իրավաբան, հասարա-
կական-պետական գործիչ – 567

Կեպինյան Գ<րիգոր> (1886-1966) –
քանդակագործ – 376

Կզարթմյան Էդուարդ (1895-1976) –
խմբավար, կոմպոզիտոր – 828

Կիկերոն – 646

Կիպիանի Լև/ Լևան – 665, 702, 743,
744, 748, 818

Կիպոն (Գիբբոն) Կորնել – 647, 648,
759

Կլենկսկի – 273, 276, 284

Կյուրեղյան Լևոն (1871-1950) –
ճարտարապետ, նկարիչ,
բանաստեղծ – 377

Կոլմանյան – 122

Կոմիտաս (Սողոմոնյան Սողոմոն,
1869-1935) – երգահան, բանա-
հավաք, խմբավար – 213, 375,
396, 408, 455

Կոմֆուցիոս (Ք.ա. 551 - Ք.ա. 479) –
չինացի փիլիսոփա – 686

Կոստանյան Հարություն /Костанян
Арутюн – 616

Կոստանյան Կարապետ (1849-
1920) – հայագետ, մանկավարժ
– 223, 374, 389, 393, 408, 471

Կոստանյան Հովհաննես (1861-
1943) – բանաստեղծ – 47, 104

Կովալևսկի Մաքսիմ (1851-1916) – ռուս պատմաբան, իրավաբան, ազգագրագետ – 195, 196
 Կովարկով Իվան Սոֆիա/Коварков Иван Софья – 389
 Կորնեն Բորիս – 657
 Կորոլենկո Վլադիմիր Գ. (1853-1921) – գրող, հրապարակախոս – 691, 714
 Կորոյան Արշակ – գեներալ – 798
 Կռիլով Իվան (1769-1844) – ռուս գրող, առակագիր, լրագրող – 340, 659
 Կրիտյան Արամ – 329
 Կուլեբյակին Ալեքսանդր – զինվորական – 656
 Կուսիկյան Կարապետ (1863-1915) – գրականագետ, մանկավարժ – 16, 106
 Կուրդիյան Շուշանիկ (1878-1927) – բանաստեղծուհի – 18, 319, 408

Հ

Հազարապետյան Լևոն (1881 - 1946) – նկարիչ. գրաֆիկ – 203, 376
 Հախվերդյան Արշակ (XIX դ.- 1920-ական թթ.) – գրաշար, դրամատուրգ – 758
 Հախումյան Տիգրան (1894-1973) – դրամատուրգ, գրականագետ, թարգմանիչ – 349
 Հակոբյան – 717
 Հակոբյան Հակոբ (1866-1937) – բանաստեղծ – 256, 319
 Հակոբյան Հմայակ (1871 -1939) – նկարիչ – 376, 408
 Հակոբյան Սիմոն/Սիմեոն (1880-1942) – գրականագետ, խմբագիր, մանկավարժ – 37, 374, 375, 818, 819
 Հակոբյանց-Դադիվանով Նիկոլայ Հարությունի – 553, 598

Հաճքի Ջորջ- անգլիական նպաստաբաշխ-բժշկական հանձնախմբի անդամ – 206
 Համազասպ – 66
 Համբարձումյան – 376, 516
 Համբարձումյան Կարապետ – 406
 Համբարձումյան Համազասպ (1880 -1965) – գրականագետ, թարգմանիչ, բանաստեղծ, մանկավարժ – 516, 518, 519, 521, 522, 524-526, 529, 533, 534, 536, 537, 539, 542-547, 553, 554, 562, 564, 567, 571-574, 580, 581, 585, 588, 591, 595, 596, 599, 600, 609-612, 617, 621, 624, 703, 709, 713, 750, 778, 780, 781, 789, 791, 792
 Հայազն (Էսաճանյան Լևոն, 1874-1935) – բանաստեղծ – 675
 Հայկազյան Ցուլակ – մանկավարժ – 785
 Հայնե Հայնրիխ (1797-1856) – գերմանացի բանաստեղծ – 256, 322
 Հայրդի (Խաչատուրյան Գարեգին վարդ., 1880-1951) – բանասեր, խմբագիր, պատրիարք – 277
 Հանդիսական – տե՛ս Վարանդյան Սիքայել
 Հարդուբյան Առաքել – 406
 Հարդուբյան Հեղինե – 406
 Հարությունյան Բեն. – 725
 Հարությունյան Արշակ (1869-1936) – դերասան, բանաստեղծ – 192, 197, 224, 347, 377, 378
 Հարությունյան Գուրգեն – 584
 Հարությունյան Խհրիստաֆոր (XIX-XX դդ.) – թատերական գործիչ – 381
 Հարությունյան Մարտիրոս (XIXդ.- 1930-ական թթ.) – մանկավարժ – 177, 272, 648, 766
 Հարությունյան Սամսոն (1869-1943) – հասարակական գործիչ,

լրագրող, իրավաբան – 14, 81, 113, 114, 140, 218, 247, 664
 Հացագործյան Արսեն (1882-19...) – մանկավարժ, լրագրող, բանաստեղծ – 55, 84
 Հաֆիզ – 133
 Հեղինե – ուսուցչուհի Տիգրան Տեր-Դավթյանի դպրոցում – 658, 659, 800
 Հոմերոս (Ք.ա. 9-րդ դ.-Ք. ա. 8-րդ դ.) – հույն բանաստեղծ – 392
 Հովհաննիսյան Աշոտ (1887-1972) – պատմաբան, մանկավարժ – 393, 407, 419, 420, 451, 455, 472
 Հովհաննիսյան Գաբրիել (1896-1949) – արձակագիր, բանաստեղծ, երգիչ, մանկավարժ, թարգմանիչ – 183, 653, 654
 Հովհաննիսյան Գիսակ – տե՛ս Հովհաննիսյան Գաբրիել
 Հովհաննիսյան Կարապետ – (1894-1966) – գրող – 49
 Հովհաննիսյան Հայկ – 280, 302, 393
 Հովհաննիսյան Հայրապետ – 564, 609
 Հովհաննիսյան Հովհաննես (1864-1929) – բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ – 48, 106, 124-126, 128, 149, 154, 158, 177, 183, 252, 257, 279, 307, 321, 322, 330, 338, 346, 353, 363, 364, 374, 379, 389, 396, 400, 408, 429, 439, 440, 441, 458, 463, 464, 484, 637, 639, 667, 679, 699, 711, 772, 782, 783, 795, 801, 802, 807, 810, 811, 825
 Հովհաննիսյան Սուսաննա (ծնվ. 1955) – մանկավարժ, գրականագետ – 606
 Հովհաննիսյան Տիգրան – գաղթական ուսուցիչ – 102

Հովհաննիսյան Տիգրան (1865-1921) – թարգմանիչ, գրականագետ, իրավաբան – 44, 48, 148, 150, 231, 258, 386, 463, 611, 641, 720, 724, 765, 789, 792, 794, 801, 803, 806, 824
 Հովհանջանյան/Օհանջանյան Ռուբեն (XIX -1950-ական թթ.) – բժիշկ, լրագրող – 100, 101, 109, 110
 Հովնաթան Նաղաշ (1661-1722) – աշուղ-բանաստեղծ, նկարիչ, ծաղկող – 187, 190, 210
 Հովսեփյան – գնդապետ – 476, 531, 537, 538
 Հովսեփյան Գարեգին – (1867-1952) – հոգևոր առաջնորդ, մշակութային գործիչ, բանասեր – 77, 92, 393, 408, 454, 471
 Հովվյան Սիմ. (1869-1942) – խմբագիր, մշակութային գործիչ, շախմատի տեսաբան – 705, 802
 Հոտենրոտ Ֆ. – 716
 Հուսիկ արքեպիսկոպոս/վարդապետ (Մովսիսյան/Տեր-Մովսիսյան Ենովք, 1853-1924) – հոգևոր գործիչ – 164, 446

Ղ
 Ղազանջյանց Հովհաննես – 659, 660
 Ղազարյան Արշակ – բժիշկ, խմբագիր – 14, 23, 25, 28, 39, 378
 Ղազարյան Դանիել (1883-1958) – կոմպոզիտոր – 235, 402
 Ղազարյան Կորյուն (XIXդ. -1937) – խմբագիր, իրավաբան – 611
 Ղազարյան Հ<ակոբ> (1869-1926) – մանկավարժ, մշակութային գործիչ, քրդագետ – 791, 792
 Ղազարյան Մ<եսրոպ> (1876-1921) – գրող, մանկավարժ – 824

Ղազարյան Մկրտիչ ք. (1867-1919)
– մանկավարժ – 419

Ղամբարյան – իրավագետ – 375,
601

Ղամբարյան Պ. – 376

Ղարաբեկյան Մ<իքայել> – ման-
կավարժ – 529, 531, 537, 538,
542-544, 546, 547, 552

Ղարազյոզյանց Միքայել – 548

Ղարաջյան Գ<ևորգ> (1861-1936) –
գրող, կուսակցական գործիչ –
789, 791, 792, 794, 803, 806

Ղարիբյան Հովհաննես – 217

Ղարիբջանյան Միհրան – ուսուցիչ –
328

Ղափանցյան Գրիգոր (1887-1957) –
հայ լեզվաբան-հայագետ, պրո-
ֆեսոր – 472, 779, 786

Ղևոնդյան Արսեն (1868-1944) –
իրավաբանության դոկտոր, հո-
գևորական – 104, 470, 471, 473,
701

Ղորղանյան Ստեփան (1865-1925) –
գրող, գավառապետ – 458

Ղուլյան Լ. – 409-411, 449, 451, 452,
462, 464, 466, 473

Ղուրբանյան Ավետիս (1899-1944) –
բանաստեղծ, թարգմանիչ – 250
Ղևոնդ - 89

Ռ

Ռավճավաձե Ի. /Պավստատ Պ. (1837-1907) – վրաց գրող, հա-
սարակական գործիչ – 310

Ռեբրակ (Բոգիյան Հովհաննես,
1880-ական թթ.-1940-ական թթ.)
– գրող, թարգմանիչ – 406

Ռիսթերաշվիլի – 720

Ռուդոլֆյան Բարդուղիմեոս (Գևորգ-
յան, 1848-1927) – բանասեր,
հոգևոր գործիչ – 213, 221

Ռուդոլֆյան Հ. ք. (Հարություն,
1864-1938) – գրող – 302, 307,
364, 790, 792

Ս

Ս. – տե՛ս Մայիլյան Անտոն

Սադաթանց Պետի – 768

Սադոյան Հակոբ – գաղթական
ուսուցիչ – 102

Սազմանյան Ար. – 311

Սազմանյան Թևոս – 577

Սազմանյան Համբ. – 785

Սաթևոս – 93

Սահվանյան Լևոն/Мауванян Левон
– 367

Սալիսայան Հովհաննես (1866-
1931) – գյուղագիր, մանկա-
վարժ, հասարակական գործիչ,
խմբագիր – 364, 739, 791, 792

Սալիսայան Ստեփան (1857-1947)
– հայագետ, լեզվաբան –
բանասեր, մանկավարժ – 13,
332, 374, 389, 393, 405, 408-
411, 415, 417, 419, 420, 453,
454, 471, 473, 474, 516, 526,
530, 532, 533, 535, 538, 546,
552, 553, 703, 783

Սալյանց Ղավիթ – 769

Ս. Է. – տե՛ս Եփրիկյան Միսաք

Սախոխյան Վարդան – 376

Սակինցյան Պողոս (1884-1938) –
գրականագետ, քննադատ,
պետական գործիչ – 13, 43, 70,
106, 113, 114, 116, 127, 128,
156, 159, 170, 211, 214-216,
221, 223, 226, 238, 239, 327,
378

Սահմեդ – 68

Սադաքյան Մկրտիչ – 492, 664

Սամիկոնյան Ստեփան (1858-1923)
– հասարակական գործիչ, իրա-
վաբան – 126, 166

Սամիկոնով Երվանդ – 703

Սամուրյան Մ<ատթեոս> (1830-
1901) – գրող, խմբագիր, իրա-
պարակախոս – 312

Մայիլյան Անտոն (1880-1942) –
երգահան, մանկավարժ – 409,
725, 729, 742

Մայկով Ա. Ն. – 14

Մայյա – 718

Մայսուրյան – դերասան – 375, 396

Մանալյան Ս. – 795, 812

Մանանդյան Հակոբ (1873-1952) –
պատմաբան, մանկավարժ –
394, 396, 454, 466, 471, 711

Մանդինյան Սեդրակ (Ս.Մ. 1844-
1915) – մանկավարժ, բանասեր,
հրապարակախոս – 135, 371

Մանթաշյան Ալեքսանդր – դրա-
մատեր, բարեգործ – 597

Մանվելյան Լևոն (1864-1919), գրող,
մանկավարժ, գրականության
պատմաբան – 183, 389

Մանվելյան Միքայել (1877-1944) –
գրող, դերասան – 75, 76, 389,
783, 795

Մանվելյան Ս. – 272

Մանուկյան Ազատ (1878-1958) –
երգահան, մանկավարժ – 131,
409, 432

Մանուկյան Արամ (Հովհաննիսյան
Սարգիս, 1879-1919) – ժամա-
նակին Վանի նահանգապետ, հե-
տո Հայաստանի Առաջին հան-
րապետության ներքին գործերի
նախարար – 63, 69, 82, 291,
296, 297, 308, 309, 323

Մանուկյան Հմայակ (1888-1920)
– լրագրող, խմբագիր – 270, 271

Մանուկյան Միքայել – 785

Մանուկյար (Մանուչարյան Մկրտիչ)
– թարգմանիչ, լրագրող – 201

Մառ Նիկողայոս (1864-1934) –
լեզվաբան, հայագետ – 283,
287, 345, 373, 411-418, 454,
466, 467, 779

Մատենճյան Մամբրե (1882-1920) –
գրականագետ, մանկավարժ –
148, 170, 224, 265, 269, 273,

274, 276, 277, 283, 287, 292,
307, 317, 326, 376, 378, 379,
382-384, 464, 692, 795, 812,
818, 826

Մատթեոս Եպիսկոպոս (Տեր-Մատ-
թեոսյան, 1866-1936) – հոգևոր
գործիչ – 89, 109

Մարգար – տե՛ս Ավետիսյան Մար-
գար

Մարիամ – 804

Մարկոս – վանեցի գաղթական –
111

Մարկոսյան Ի. – 405

Մարտիրոս – տե՛ս Սարյան Մար-
տիրոս

Մարտիրոսյան Գրիգոր (XIX –
XXդդ.) – «Նոր-Ղարի» թղթակից
– 516, 517, 533

Մարտիրոսյան Ռուբեն – 377

Մարտիրոսյան Հարություն – 408

Մարտիրոսյան Սահակ – ուսուցիչ –
101, 102

Մարության – 462

Մարուսյա – Մուշեղ Թումանյանի
կինը – 815

Մարքիզ Ժյուլ – տե՛ս Հովվյան
Սիմոն

Մաքսության Մեսրոպ (Հարություն)
վարդ. (1876-1918) – բանասեր,
թարգմանիչ – 393, 472

Մեթերլինգ Մորիս (1862-1949) –
բելգիացի ֆրանսալեզու գրող,
բանաստեղծ, դրամատուրգ, փի-
լիսոփա – 786

Մելիք-Բախտամյան Հակոբ (1866-
1945) – գյուղատնտես – 689,
690

Մելիք-Բեգլարյան Հովսեփ – 360

Մելիք-Հայկազյան (Բեգզադյան) Հե-
ղինե – գրքերի հեղինակ, Թու-
մանյանի մտերիմներից – 182,
186, 188, 247

Մելիք-Ղարաբյոզով/Մելիք-
Կարաբյոզյան Պևրոզ (1873-

- 1940) – խմբագիր, հրատարակիչ, մշակութային գործիչ – 710, 776
- Մելիքյան – 364
- Մելիքյան Համբարձում (1861-1932) – նավթարդյունաբերող, բարերար, «Հորիզոնի» հրատարակիչ – 13, 219, 372, 388, 473, 597
- Մելիքյան Ռոմանոս (1883-1935) – երգահան – 76, 238, 375, 409
- Մելիքյան Սպիրիդոն (1881-1933) – երաժշտագետ – 408, 464, 474, 571
- Մելիքյան <Վարվառե> (1868-1928) – դերասանուհի – 362
- Մելիքսեբեկյան Լևոն (1890-1963) – բանասեր – 393, 464, 470
- Մելոյան Ղևոնդ (1877-1967) – գրող – 305
- Մելքոնյան Աշոտ /Мелконян Ашот – 367
- Մելխակ – Թումանյանի ազգականը – 117
- Մեծբյան – գաղթականների ոգնող օրիորդ – 101, 109
- Մեհրաբյան – գյուղընկերության վարչության քարտուղար – 657
- Մեհրաբյան – 728
- Մեհրաբյան Բ. – 778
- Մեյե Անտուան (1866-1936) – ֆրանսիացի լեզվաբան, հայագետ, հասարակական գործիչ – 319
- Մենակ Վ. – տե՛ս Ահարոնյան Վարդգես
- Մենգուլոտ Վ. Է. – 444
- Մեսյան Գևորգ (1883-1937) – մանկական գրող և մանկավարժ, թարգմանիչ – 407, 829
- Մեսրոպ/Մեսրոպե եպիսկոպոս (Տեր-Մովսիսյան, 1864-1939) – բանասեր, վիրահայոց թեմի առաջնորդ – 19, 26, 93, 120, 233, 266, 268, 278, 381, 409, 411, 465-467
- Միաբան – տե՛ս Տեր-Մկրտչյան Գալուստ
- Միանսարյան Արշակ – 516, 517, 537, 569
- Միլյան Արշ. – 410, 449, 473
- Միլունով – 17, 345
- Միհրան – բանաստեղծ – 420, 510
- Մինասյան – երգիչ, դերասան – 242, 245, 568, 652, 712
- Միսաքյան Շ<ավարշ> (1884-1957) – խմբագիր, հրապարակախոս – 825
- Միրաքյան Հովհաննես – 290, 661, 662
- Միրաքյան Վահան (1868-1942) – բանաստեղծ, դրամատուրգ – 343, 829
- Միրզախանյան Համասփյուռ – որբանոցի կառավարչուհի – 774, 775
- Միրզայան Գ<րիգոր> (1876-1939) – երգահան, մանկավարժ – 375, 408
- Միրզայանց Երվանդ (1896-1966) – բանաստեղծ – 250
- Միրզոյան Ալեքսանդր (1868-1928) – նկարիչ – 376
- Միրզոյան Հովսեփ (XIXդ.-1925) – գյուղատնտես – 615, 640
- Միրզոյան Վ<արդան> (1877-1968) – դերասան, թատերական գործիչ – 708
- Միրիմանով – բանկի տնօրեն – 662
- Միրիմով Ա. – 339
- Միցկիչ Ադամ (1798-1855) – լեհ բանաստեղծ, ազգային գործիչ – 291, 733, 734
- Միքայելյան Կարեն (1885-1941) – գրող, թարգմանիչ, ԶԾԿ-ի՝ Մոսկվայի կոմիտեի նախագահ – 42, 70, 106, 136, 181, 201, 306, 314, 318, 320, 329, 333, 334, 337, 347, 379, 381, 420, 447

Միքայելյան Մարիամ – 405
 Միքայելյան Միքայել (1879-1943) –
 քանդակագործ – 348, 376, 828
 Միքենեճյան – 376
 Մխիթար Եպիսկոպոս – 320, 642,
 643, 697
 Մխիթարյան Հովհաննես (1895-
 195..) – գրականագետ, խմբա-
 գիր – 59, 774
 Մխիթարով Սերգեյ /Мхитаров
 Сергей (XIX-XX դդ.) – մտա-
 վորական – 204
 Մկրտիչ քահանա – 26
 Մկրտչյան/Գարդիշյան Նշան (189...
 -1937) – գրող – 308
 Մկրտչյան Սիմոն (1882-1980) –
 մշակութային գործիչ, եպերան-
 տագետ – 406
 Մյասնիկով Լ. – բժիշկ – 112
 Մնացականյան Լևոն – 654
 Մնդրյանց Իոսիֆ – 810
 Մոզյան Պ. – 510
 Մոժակ Ի./Можак И. – 235
 Մովսեսյան Մարգար – ուսուցիչ –
 101
 Մորոզով Ն. – 403
 Մռավյան Ասքանազ (1885-1929) –
 պետական, կուսակցական
 գործիչ – 292, 307, 427
 Մսերյան Լևոն (1867-1933) –
 բանասեր, լեզվաբան – 467, 471
 Մութաֆյան Արծվիկ – 400
 Մուստոյան Հակոբ – 93, 101
 Մուտոխան Ս. Ս. – 444
 Մուրադյան – բժիշկ – 446
 Մուրացյան – գրող – 246, 830
 Մուրթուզ Ղուկիսա – 63
 Յ
 Յազվիցյի Վալերի – 358
 Յակովլով Ս. – 376
 Յաշվիլի/Իաշվիլի Պաոլո (1895-
 1937) – վրաց բանաստեղծ, հա-
 սարակական գործիչ – 729, 730
 Յասամանյան – 663

Յարճանյան Ատոմ (Սիամանթո,
 1878-1915) – բանաստեղծ –
 158, 168, 178, 184, 274-277,
 379, 429
 Յուզբաշյան – մեծահարուստ բա-
 րեգործ – 597
 Ն
 Նազանյան Սուրեն (1885-1930-ա-
 կան թթ.) – լրագրող, մանկա-
 վարժ – 19, 243, 758
 Նազարեթյան Արամ (XIXդ.-<194.>)
 - ուսուցիչ, թատերական գործիչ,
 լրագրող – 193, 531, 658
 Նազարյան Ե. – 376
 Նազարյան Ստեփանոս (1812-1879)
 – «Հյուսիսափայլի» խմբագիրը,
 լուսավորիչ, արևելագետ, գրա-
 կանագետ – 346, 481
 Նազարյան Տիգրան (1858-1926) –
 խմբագիր-հրատարակիչ – 31,
 364, 613, 717, 720, 731, 738,
 745, 810, 816, 819
 Նալբանդյան Արփիար – 68
 Նալբանդյան Միքայել (1829-1866)
 – բանաստեղծ, հրապարակա-
 խոս – 83, 192, 196-198, 224,
 225, 228, 309, 346, 379, 429,
 435, 442, 447, 481
 Նակաշիճե Իլիա. Պ. (1866-1923) –
 վրաց գրող և հասարակական
 գործիչ – 157, 170, 295, 310,
 312, 313, 316, 379, 625
 Նավասարդյան Բագրատ (1852-
 1934) – բանասեր, բժիշկ – 735,
 738, 739
 Նավասարդյան Վահան (1886-
 1956) – խմբագիր, հրապարա-
 կախոս, քաղաքական գործիչ –
 783
 Նար-Ղոս (1867-1933) – գրող – 74,
 227, 228, 371, 374, 389, 408,
 637, 655, 656, 783, 795 801,
 802, 808, 811, 832

Նարեկացի Գրիգոր (951-1003) – միջնադարյան մեծագույն բանաստեղծ – 124, 125, 152, 156, 286, 379

Նարինյան Խաչ. – 473

Նեկ-Տար/Նեկտար – տե՛ս Աղաբար Հակոբ

Նեմիրովիչ-Դանչենկո (1858-1943) – ռուս թատերական գործիչ, ռեժիսոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ – 333

Նեյման (Ֆրանց Էռնստ, 1798-1895) – գերմանացի ֆիզիկոս, մաթեմատիկոս և հանքագետ, Պետերբուրգի ԳԱ թղթակից անդամ – 755

Ներսես եպիսկոպոս – 36

Ներսիսյան Գրիգոր (1887-1937) – բանաստեղծ, մանկավարժ – 812

Նժդեհյան Գրիգոր քահանա – 195, 302

Նիկոլան Նիկոլայ – ռուս գեներալ – 64, 65, 69

Նշանյան <Տրդատ> (1892-1964) – դերասան, խմբագիր – 376

Նորենց Վաղարշակ – տե՛ս Երիցյան Վաղարշակ

Նորերից – տե՛ս Պահարե

Նուրի փաշա – 619

Նկշեհիդյան Հակոբ (XIXդ.-1920-ական թթ.) – մանկավարժ – 183, 319

Շ

Շ. – տե՛ս Շահումյան Ստեփան

Շալապին Ֆեոդոր (1873-1938) – ռուս բաս երգիչ – 160

Շահազիզ Ամբատ (1840-1907) – բանաստեղծ, հրապարակախոս, մանկավարժ – 83, 106, 141, 166, 338, 346, 440, 763

Շահազիզյան Երվանդ (1856-1951) – բանասեր, մանկավարժ – 393, 762

Շահբազյան Դանիել – 654

Շահին Էդգար (Շահինյան, 1874-1947) – նկարիչ – 376, 396

Շահինյան – 317

Շահինյան Գ. – 637, 639

Շահինյան Սարիետա (1888-1982) – գրող, հրապարակախոս – 345, 349, 442, 443

Շահխաթունի <Արշավիր> (1885-1957) – դերասան, զինվորական – 63, 64

Շահխաթունյան/Շահխաթունի Ավետիք (1883-1918) – հրապարակախոս, խմբագիր – 234, 374, 396

Շահմազյան Արսեն – 376

Շահնազարյան <Արշակ> (1872-1942) – գրող, մանկավարժ – 246

Շահնազարյան Ասլան (1877-1955) – մանկավարժ – 393

Շահպարտյան – 533, 600, 610

Շահսուվարյան – 361

Շահվերդյան – 552, 570, 580

Շահումյան Ստեփան (1878-1918) – ազգային, գրական-քաղաքական գործիչ – 255, 256, 327, 731, 745

Շանթ Լևոն (Սեդրոսյան, 1869-1951) – գրող, դրամատուրգ – 182, 232, 245, 315, 317, 379, 388, 396, 405, 409-411, 417, 419, 453, 455, 484, 601, 637, 755, 762, 783, 818, 827

Շարբաբջյան Գրիգոր (1884-1942) – նկարիչ – 203, 376

Շեքսպիր Վիլյամ (1564-1616) – անգլիացի դրամատուրգ, բանաստեղծ – 127, 180, 189, 203, 205-210, 213, 220, 224, 229, 232, 233, 309, 379

Շիշմանյան Ռաֆայել> (1885-1959) – արվեստաբան, նկարիչ – 377

Շիրինյան Արտակ – 604

Շիրինյան Կարապետ – 180, 192, 195, 391

Շիրնազանով – 663

Շիրվան – տե՛ս Շիրվանզադե

Շիրվանզադե (Մովսիսյան Ալեքսանդր, 1858-1935) – գրող, դրամատուրգ – 74, 162, 163, 178, 203, 206, 209, 220, 274, 324, 330, 331, 366, 367, 374, 378, 387, 388, 396, 400, 405, 408, 422, 435, 455, 470, 486, 573, 598, 637, 654, 700, 719, 720, 765, 783, 795, 801, 802, 807, 811, 832

Շխոյան Բ. Ա. – 695

Շոպենհաուեր Արթուր (1788-1860) – գերմանացի փիլիսոփա, գրող – 672

Շուլց – բժիշկ – 358

Շւքրեթ բեկ – 817

Ո

Ոսկանյան Հովսեփ> (1883-1939) – դերասան, ռեժիսոր, դրամատուրգ – 558, 568, 652, 654, 804, 805

Ոսկերչյան Ա. – 122

Չ

Չալխուշյան Գրիգոր (1861-1939) – հասարակական-մշակութային գործիչ – 131, 192, 211, 213, 222, 349, 360, 374, 389, 406, 446

Չալխուշյան Զաքել – 406

Չալխուշյան Իսկուհի – 406

Չալխուշյան Լևոն – 406

Չալխուշյան Խաչատուր – 406

Չալխուշյան Շուշանիկ – 406

Չալխուշյան Ռուբեն – 406

Չալխուշյան Սերովբե (1890-1937) – տնտեսագետ – 406

Չալխուշյան Սոֆիա – 406

Չալխուշյան Ստեփան – 406

Չարենց Եղիշե (Սողոմոնյան, 1897-1937) – բանաստեղծ, թարգմանիչ, հրատարակիչ – 227, 328, 785

Չերազ Սինաս (Չերազյան, 1852-1929) – գրող, մանկավարժ, հրապարակագիր, հասարակական գործիչ – 698

Չիթունի Տիգրան (Չիթյան, 1881-1960) – բանահավաք, գրող – 282, 586, 597

Չիլինգարյան Ա. – 472

Չիլինգարյան Պետրոս – 727

Չիլինգարով Կիրակի – հույն խանութպան Կարսում – 577

Չիսլյան Դավիթ (1879-1970) – ճարտարապետ – 203

Читатель – տե՛ս Շահումյան Ստեփան

Չխենկելի Ակակի (1874-1959) – վրացի մարքսիստ քաղաքական գործիչ, հրապարակախոս – 540, 826, 827

Չոկկադե Դանիել Чоккадзе Даниел – 310

Չոպանյան Արշակ (1872-1954) – գրող, քննադատ, հրապարակախոս, բանասեր, խմբագիր – 158, 167, 190, 191, 376, 378

Չորեքյան Գևորգ վրդ. (Գևորգ ՉԿաթողիկոս Ամենայն Հայոց, 1869-1954) – հոգևոր առաջնորդ, ազգային-հասարակական գործիչ – 408

Պ

Պալասանյան Ժիրայր – 111

Պալասանյան Ռ. – 583

Պալիաշվիլի Ջ. – 717

Պալին Ջ. Պ. – կոմպոզիտոր – 735

Պահարե (Հայկ Պետրոսյան 1895-1968) – դերասան, բանաստեղծ – 115, 330, 671, 785

Պայլնով Իվան – մանկավարժ, հասարակական-մշակութային գործիչ – 137

Պապայան Գր. – 687

Պապաջանյան (Բաբաջանյան) Սիքայել – Ռուսաստանի Պետական դոմայի հայ պատգամավոր – 278, 446, 557, 759, 767

Պապիկյան Վահրդան> (1885-1918) – խմբագիր, հրապարակախոս – 305

Պապյան – 531

Պապյան Գ. – 105

Պապոյան Հր. – 690

Պապոյան Շավ. – 690

Պապովյան Ալեքսանդր (1870-ական թթ.-1920-ական թթ.) – իրավաբան, լրագրող – 28, 113, 428, 671

Պապովյանց Հովակիմ Դավթ. – 406

Պապովյանց Մելիք – 693, 694

Պատկանյան Եղիաբեթ – 377

Պատկանյան Ռաֆայել (1830-1892) – բանաստեղծ, խմբագիր – 83, 106, 124, 126, 131, 166, 213, 229, 255-257, 259, 260, 268, 321, 322, 338, 346, 353, 429, 435, 439, 440, 458, 747, 830

Պատոճյան Հ. – 462

Պարենսկիչ Ալ. – 501

Պարզյանց Տեր-Սարգսյան Ալեքսանդր – 383, 408, 421, 599

Պարթևյան Սուրեն (Պարտիզպանյան Սիսակ, 1876-1921) – արևմտահայ գրող – 699

Պարոնյան Հակոբ (1843-1891) – գրող-երգիծաբան, հրապարակախոս, լրագրող, խմբագիր – 213

Պեժմանպեկով/Բեժմանբեկով Պավել – 446

Պեկարսկի Լյուդվիգ – Թիֆլիսում լեհական գրական համայնքի նախագահ – 560, 571

Պեշիկբաշյան Սկրտիչ (1828-1868) – բանաստեղծ, դրամատուրգ, քատերական գործիչ – 125, 158, 168, 184, 469

Պետրոս – 117

Պետրոսյան – 533, 536, 537, 570

Պետրոսյան Մադաթ (1866-1944) – գրող – 790, 792, 794, 803, 806

Պիրալով /Пиралов – 610

Պյոտկոյունյան – բժիշկ – 88, 89

Պոլոնսկի – 459

Պողոսյան Հովհաննես (1895-1948) – գրական-հասարակական-մշակութային գործիչ – 710

Պոյաճյան Ջապել (1872-1957) – գրող, նկարիչ – 376

Պոյաճյան Խ. – 532

Պոպովյան Ա. – 101, 110

Պոպովյան Մարիամ – 137

Պոտոցկի – 444

Պոժնալսկի Նիկոլայ (1839-1888) – լեհական ծագումով ռուս աշխարհագրագետ – 650

Պռոշյան – 51

Պռոշյան Պերճ (1837-1907) – գրող, մանկավարժ – 134, 301, 444

Պուշկին Ալեքսանդր (1799-1837) – ռուս բանաստեղծ – 253, 256, 275, 335, 349, 440, 459, 669, 754

Ջ

Ջագիանի Նիրակո – 589

Ջանալյան Արշակ – 120, 315, 317, 340, 360, 379, 396, 476, 598, 600, 601, 610, 612, 720, 766

Ջանաշվիլի – 643

Ջավախեցի – տե՛ս Տեր-Գրիգորյան Ղազար

Ջափարիժե Վարվառա – 731, 745

Ջենն – 616

Ջիվանի (1846-1909) – 125, 128

Ջիվելե գով Ա. (Ջիվելեգյան Ալեքսեյ, 1875-1952) – գրական-թատերական գործիչ, մանկավարժ – 371

Ջրբաշյան Սողոմե (1870-1942) – ձեռագործի վարպետ – 53, 54

Ռ

Ռազիկաշվիլի Ա. – 49

Ռամիշվիլի Նոյ – վրաստանի ներքին գործերի նախարար – 525, 692, 693, 706, 707, 742, 824

Ռաշմաճյան Տիգրան (1862-1947) – մանկավարժ – 139

Ռեմարկ Էրիխ Մարիա (1898-1970) գերմանացի ականավոր գրող – 145

Ռեն (Վարդանյան Ռուբեն, 1893-1958) – գրող, խմբագիր – 783

Ռոբակիձե Գր. – 170

Ռոզանով Ն. – զնդապետ – 431

Ռուպեն – 646, 647, 651

Ռոսսի Էռնեստո (1827-1896), իտալացի դերասան – 230

Ռոստոմ (1867-1919) – թուրքմենների, ազգային-քաղաքական գործիչ, դաշնակցական – 50, 54, 58, 641, 642

Ռոստոմյան Վահան – 406

Ռուբենովիչ – 341

Ռուսթավելի Շոթա (1172-1216) – վրացի քաղաքական գործիչ, բանաստեղծ – 125

Русская – 696, 697

Ս

Ս. – տե՛ս Երզնկյան Սուրեն

Ս. Զ. – տե՛ս Ջորյան Ստեփան

Ս. Յ. – տե՛ս Յակոբյան Սիմոն

Սադաթյան Մ<անուկ> (1840-1866) – բանաստեղծ, թարգմանիչ – 195

Սաթիկ – Ռոստոմ Թումանյանի դուստրը – 446

Սալ-Ման – տե՛ս Աշոտ Աթանասյան
Սալիմյան/Սալլույմյան – տե՛ս Տեր-Գրիգորյան Ջալալ

Սահակ – 62

Սահակ վարդապետ – 85, 105

Սահակյան Ավետիք (1865-1833) – ազգային-քաղաքական գործիչ, գյուղատնտես – 557, 558, 771

Սահակյան Միսակ – 517, 569

Սահակյան Ս. – 14

Սադաթյան <Յովհաննես> (1864-1936) – իրավաբան, մանկավարժ – 533

Սադյան (Գրիգոր, 1880-1937) – հայ բժիշկ, մերժել է հաստատել Ա. Խանջյանի ինքնասպանության վարկածը և գնդակահարվել – 756

Սադյան Ս. – 48

Սամվելյան – դպրոցի տեսուչ – 363

Սամվելյան Խաչիկ (1873-1940) – պատմաբան, հնագետ, խմբագիր – 467

Սայաթ-Նովա (Յարություն Արուսթին) Սայադյան, 1712-1795) – բանաստեղծ-աշուղ – 100, 124, 125, 131-133, 136, 138, 153, 161-163, 181, 185, 187, 190, 191, 201, 210, 211, 214, 220, 221, 255, 259, 342, 350, 353, 381, 382, 408, 485, 613, 648, 649

Սառիկյան Խորեն – Յակոբ Սառիկյանի որդին – 704

Սառիկյան Յակոբ քահանա (1872-1945) – մանկավարժ, թարգմանիչ, գրող – 367, 434, 447, 469, 697, 698, 704, 771

Սառիկյան Սասունիկ – Հակոբ Սա-
ռիկյանի դուստրը – 704
Սասունի Ա. – 646
Սարգիս – 231
Սարգսյան Ալ. – Հայրենակցական
միության վարչության անդամ –
527
Սարգսյան Գարեգին – բժիշկ – 420
Սարգսյան Թոմաս – 404
Սարգսյան Նիկոլայոս> (1883-
1937-ից հետո) – բնագետ,
մանկավարժ – 384, 391, 396,
402, 407, 559, 575, 600, 601,
621, 742, 759, 775
Սարգսյան Ե. – երաժիշտ – 402
Սարիբեկյան Սինաքսար – 405
Սարկիսյան Արշակ – 406, 502, 610
Սարմեն (Սարգսյան Արմենակ,
1901-1984) – բանաստեղծ – 636
Սարյան Մարտիրոս (1880-1972) –
նկարիչ – 83, 149, 201, 203, 376,
396, 408
Սարուխան (Սարուխանյան Առաքել,
1863-1949) – պատմաբան, բա-
նասեր, գրող, հասարակական
գործիչ – 389
Սաֆո (Խանազատյան Շուշանիկ,
1874-1956) – գրական-մշակու-
թային գործիչ, մանկավարժ –
448
Սաֆրաստյան Արաքսյա – ուսուց-
չուհի – 55
Սաֆրաստյան Զարուհի – 55
Սեդրակյան Արտ. – 473
Սելիխանովիչ Ալեքսանդր – 497
Սեղբոսյան- տե՛ս Շանթ Լևոն
Սեմյոնով Յու. – 137, 261-263, 506
Սեյլանյան Արտ. – 409, 410, 449,
456, 462, 470, 473
Սեյրի – տե՛ս Գուլոյան Ավետիք
Սենկևիչ Հենրի (1846-1916) – լեհ
գրող – 290, 291, 311, 314, 316,
317, 381

Սերվանտես (1547-1616) –
իսպանացի գրող – 180, 189,
203, 205-210, 220, 224, 309, 379
Սիամանթո – տե՛ս Յարճանյան
Ատոմ
Սիբիրսկի Ֆ. – 491, 494
Սիյբելչեկովա Ե. – 205
Սինանյան Արշակ (<186.> -1952) –
գավառական թղթակից – 341
Սինանյան Միկ. – 381
Սիպիլ (Խանջյան Զապել, 1863-
1934) – գրող, մանկավարժ, հա-
սարակական գործիչ – 125
Սիջան – 824
Սիրանույշ (Գանթարճյան Մերովբե,
1857-1932) – դերասանուհի –
242, 245, 375, 396, 568, 652,
712
Սիրվանյան Վարդան – 728, 744,
745
Սիրունի (ճուլոյան Հակոբ, 1890-
1973) – հայագետ, արևելագետ,
գրող, գրականագետ, հրապա-
րակագիր, հասարակական գոր-
ծիչ – 652, 654
Սկայ - տե՛ս Կանայան Ստեփան
Սկոտլանդ Լիտել – 647
Սկվորցով – 68
Սյունի Գր. (Միրզայան Գրիգոր,
1876-1939) – երգահան, մանկա-
վարժ – 811
Սյուտճյան Ա. – 685
Սոլլոգուբ Ֆեոդոր (1863-1927) –
ռուս գրող, մանկավարժ – 123
Սոլովյան Հարություն (1891-1937) –
կուսակցական-
արհմիութենական գործիչ – 83,
183, 283, 292, 759
Սոլովյով Վլ. – 508
Սոկոլով Նիկոլայ Դմիտրիևիչ –
իրավաբան – 690-692, 714
Սոկրատ բեկ – 605
Սողոմոնյան Ս<արգիս> (1869-1929)
– նկարիչ, ցինկոգրաֆ – 685

Սոպուրյան Ա. – մանկավարժ – 695
 Սորոկին Գ. – 511
 Սոֆիա – Ավ. Իսահակյանի կինը – 827
 Սոֆոկլես (մոտ 497, 406 Ք. ա.) – հույն ողբերգակ – 205, 392
 Սպանյան Հ. – 382
 Սպենդիարյան Ալեքսանդր (1871-1928) երգահան – 193, 194, 198, 281, 304, 305, 307, 308, 310, 311, 375, 396, 408
 Սպենդիարյան Հովհաննես (1862-1932) – իրավաբան, մանկավարժ, հասարակական գործիչ – 246, 247, 371, 384, 675, 676
 Սպենդիարյան Յուլիա – 406
 Սպինոզա Բենեդիկտ (1632-1677) – հոլանդացի փիլիսոփա, աթեիստ – 672
 Ստալին – 745
 Ստեփանյան – երգչուհի – 369
 Ստեփանյան Սահակ – գյուղատնտես – 615
 Ստյուարտ – գեներալ – 644
 Սրինգ (Մեհրաբյան Արշակ, 1865-1921) – բանաստեղծ, լրագրող – 795
 Սրվանձտյանց Գարեգին (1840-1892) – բանահավաք, ազգագրագետ, հասարակական գործիչ – 168, 301, 698
 Սուլեյման – ռուս զինվորական – 194
 Սուլթանով Է. – 169
 Սունբատով – 343, 359
 Սունդուկյան Գաբրիել (1825-1912) – գրող, դրամատուրգ – 185, 237, 256, 378, 828
 Սուրգունյան – 228
 Սուրենյան Վարդգես (1860-1921) – նկարիչ, թարգմանիչ – 203, 376, 408, 816
 Սուրիկ – տե՛ս Վեսպեր (Դաբադյան Մարտիրոս)

Սուրխաթյան Հարություն (1882-1938) – գրականագետ, քննադատ – 265, 292, 293, 317, 319-321, 329, 343, 379, 389, 666
 Սուքիասյան Գեորգ – 406
 Սևակ Պարույր (1924-1971) – բանաստեղծ – 200
 Սևումյան <Հովհաննես> (1880-1920) – թատերական գործիչ – 720
 Վ
 Վ. – տե՛ս Վարանդյան Միքայել
 Վալադյան Վ. – 280, 302, 307, 328, 341, 378, 477, 783, 785, 795
 Վանցյան Գ. – ընդհանուր հայ աշակերտական միության Թիֆլիսի վարչության նախագահ – 695
 Վաշնաձե – 236
 Վաչյան Ավետիս (XIX դ.-1910-ական թթ.) – մշակութային գործիչ – 48, 255
 Վաչյան Գուրգեն – Վաչյան Ավետիսի որդին – 255
 Վարանդյան Միքայել (1870-1934) – ազգային-ազատագրական շարժման գործիչ, հրապարակախոս, փիլիսոփա, պատմաբան – 120, 131, 155, 169, 178, 184-186, 198, 199, 222, 241, 242, 261, 374
 Վարդազարյան Բաբկեն վարդապետ – 111
 Վարդազարյան Եղիսաբեթ – 405
 Վարդազարյան Փիլիպոս (1858-1935) – հրատարակիչ, մշակութային գործիչ – 4, 26, 35, 358, 372, 405, 409, 431, 437, 452, 456, 462, 464, 470, 473
 Վարդան – 117
 Վարդանյան – գեներալ – 650
 Վարդանյան Խաչատուր – 758
 Վարդանյան Մեսրոպ – 267

Վարդանյան Փիլիպոս (1842-1916) – գրական գործիչ, թարգմանիչ – 317, 371
 Վարդապետյան Լևոն – 251
 Վարդգես – տե՛ս Ահարոնյան Վարդգես
 Վարժապետյան Իրիտա – (ծնվ. 1941) – 606
 Վարսիկ – 140
 Վարուժան Դանիել (Չպուղբյարյան, 1884-1915) – բանաստեղծ, խմբագիր – 158, 168, 274, 276, 277, 429, 699, 706, 756, 776, 785, 786, 813
 Վեսելովսկի Իվան – 349
 Վեսելովգորով Մ. – 504
 Վեսելովսկի Յուրի (1872-1919) – գրականագետ, հայագետ, բանասեր, թարգմանիչ – 43, 106, 123, 174, 205, 257, 427, 429
 Վեսպեր (Դաբադյան Մարտիրոս, 1893-1977) – բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ – 72, 639, 756, 783
 Վերասկիզ Պարույր – 362
 Վերհառն Էմիլ (1855-1916) – բելգիացի ֆրանսագիր բանաստեղծ, դրամատուրգ – 335
 Վերմիշյան Քրիստափոր (1863-1931) – խմբագիր, հրապարակախոս – 609-611, 749
 Վիլիամս/ Վիլյամս Անյուրին – Լոնդոնում Լորդերի հայկական ֆոնդի նախագահ – 207, 233
 Վիգեն – Ավ. Իսահակյանի որդին – 827
 Վիլսոն Վուդրո (1850-1934) – ամերիկացի քաղաքական գործիչ, 1913-1921 թթ. ԱՄՆ պրեզիդենտ, Սևրի հայանպաստ դաշնագրի հեղինակը – 507, 609
 Վիշապելի – 720
 Վիրգիլիոս (70- 19/27 թ. ա.) – հռոմեացի բանաստեղծ – 353

Վշտունի Ազատ (Թաշճյան Կարապետ, 1892-1958) – բանաստեղծ, խմբագիր – 21, 283, 296, 297, 307, 653, 655, 678, 725, 785, 789, 795
 Վորոնցով-Դաշկով (1837-1916) – ռուս պետական գործիչ, Կովկասի փոխարքա – 65, 69, 106
 Վրացյան Սիմոն (Գրուզինյան, 1882-1959) – հրապարակախոս, պետական գործիչ – 396
 Վրույր Արամ (Մաքասյան Արամ, 1863-1924) – դերասան, խմբագիր, լուսանկարիչ – 607, 623, 759, 795, 812

Տ

Տաքիձե Տիցիան (1895-1937) – վրաց բանաստեղծ – 422, 627, 637, 640, 644, 656, 697, 718, 733
 Տալյան Շարա (1893-1965) – երգիչ – 713
 Տապաղյան Նորայր – տե՛ս Դաբադյան Նորայր
 Տարագոս (Տեր-Վարդանյան, 1878-1953) – նկարիչ – 376
 Տաքեյան Ե. – Տաքեյան Վարազդատի որդին – 293
 Տաքեյան Վարազդատ – պոլսահայ մտավորական, խմբագիր, ուսուցիչ – 294
 Տեր-Անդրեասյան Մխիթար – Թումանյանի մտերիմներից, քիմիկոս-ինժեներ, լրագրող – 48, 161, 201, 231, 255, 337, 649, 650
 Տեր-Առաքելյան – 376
 Տեր-Ավետիքյան Կ. – 394
 Տեր-Ավետիքյան Սմբատ – 265, 298, 302, 393, 411, 413, 415-417, 419, 449, 452-456, 462-466, 471, 473, 474, 536, 537, 670, 720, 783

- Տեր-Ավետիքյան Ստեփան (1868-1937) – գրող, մանկավարժ – 783
- Տեր-Բարսեղյան Ալեքսանդր/ Ալեքսան – 516, 517, 526, 533, 534, 536, 538, 543, 544, 547, 615
- Տեր-Գրիգորյան Արամ (1879-1925) – Վ. Տերյանի եղբայրը, իրավաբան, թարգմանիչ, լրագրող – 317, 515-518, 527, 529-531, 533, 534, 538, 541-545, 552, 554, 562, 569, 591, 600, 601, 610
- Տեր-Գրիգորյան Հովհաննես (1851-1931) – գրական-թատերական գործիչ – 402, 403
- Տեր-Գրիգորյան Ղազար (1874-1937) – Վ. Տերյանի եղբայրը, գյուղագիր – 246, 261, 302, 795
- Տեր-Գրիգորյան Զալալ (1866-1940) – մանկավարժ, հասարակական գործիչ, թարգմանիչ – 610, 683, 735, 738, 739
- Տեր-Գևորգյան Վահան (1884-1920) – պետական-քաղաքական գործիչ, խմբագիր, գրականագետ – 203, 402, 407, 680, 684, 685, 719-721, 723, 724, 746, 750, 782, 784, 829
- Տեր-Ղավթյան Հովսեփ – երաժշտագետ – 235, 307, 308, 364, 379, 388, 408, 409
- Տեր-Ղավթյան Տիգրան (1840-ական թթ. -1906) – մանկավարժ – 23
- Տեր-Իսրայելյան – 536, 537, 547
- Տեր-Խաչատրյան – 531, 533
- Տեր-Խաչատրյան Եղիշե – 232, 243
- Տեր-Հակոբյան Գրիգոր (1884-1969) – հոգեբույժ – 329
- Տեր-Հակոբյան Սենեքերիմ (1891-1938) – բանասեր – 393, 467
- Տեր-Հարությունյան Լևոն (XIX –XX դդ.) – բանաստեղծ – 462, 588
- Տեր-Հարությունյան Հակոբ (1888-1964) – խմբագիր, «Հորիզոնի» թղթակից – 293-295, 298, 833
- Տեր-Հովհաննիսյան – Կովկասյան հայոց խորային ընկերության վարչության նախագահ – 832, 833
- Տեր-Հովհաննիսյան Ավետիս (XIX –XX դդ.) – բժիշկ, «Հորիզոնի» թղթակից – 534, 536, 547, 816
- Տեր-Հովհաննիսյան Թեոդոս – 819
- Տեր-Հովհաննիսյան Խաչատուր (1851-1920) – գրաշար – 757, 760
- Տեր-Հովհաննիսյան Ներսես – 367
- Տեր-Ղևոնդյան Անուշավան (1887-1961) – երգահան, մանկավարժ – 408
- Տեր-Ղևոնդյան Ռուբեն – 367
- Տեր-Ղուկասով (Տեր-Ղուկասյան Արշակ, 1819-1881) – զորահրամանատար – 64
- Տեր-Մամվելյան Պետրոս – ուսուցիչ – 20, 26
- Տեր-Մանուկյան – գրող – 792
- Տեր-Մարտիրոսյան Արտաշես (1892-1937) – բանաստեղծ – 151
- Տեր-Մարտիրոսյան Եսփրեն (1895-1930-ական թթ.) – գրականագետ – 829
- Տեր-Մարության Անդրեաս (1871-1919) – քանդակագործ – 375, 376
- Տեր-Մելիքսեդեկյան Սարիբեկ (1850-1919) – գավառական թղթակից, մանկավարժ – 619, 733
- Տեր-Մինասյան Երվանդ վարդ. (1879-1974) – բանասեր, բառարանագիր – 393, 455, 467, 471, 783, 808
- Տեր-Մինասյան Ռուբեն – բժիշկ – 647, 648, 651

Տեր-Սիրաքյան Հովհաննես (1869-1938) – մանկավարժ – 234, 302, 307, 332

Տեր-Սիքալեյան Գաբրիել (1874-1949) – ճարտարապետ – 376

Տեր-Մկրտչյան Գալուստ (1860-1918) – բանասեր, լեզվաբան – 374, 389, 393, 396, 408, 454, 471, 566, 567

Տեր-Մկրտչյան Կարապետ եպիսկոպոս (1866-1915) – բանասեր – 101

Տեր-Մովսիսյան Մեսրոպ (1865-1919) – բանասեր – 287, 328, 374, 375, 393, 454, 464, 470, 471, 476

Տեր-Նիկողոսյան Հարություն – 515, 517

Տեր-Պետրոսյանց Էվիհա - 660

Տեր-Սահակյան Կարապետ ծայրագույն վարդ. (1882-1915) – բանաստեղծ, բանասեր, խմբագիր – 168

Տեր-Սարգսյան Ալլահվերդի – 525

Տեր-Սարգսյան Հ. – 251

Տեր-Սարգսյան Քրիստափոր – 376

Տերյան Վահան (Տեր-Գրիգորյան, 1885-1920) – բանաստեղծ – 18, 43, 70, 75, 84, 113, 114, 124-128, 154, 177, 205, 232, 271, 272, 285, 302, 303, 319-322, 328, 329, 338, 341, 346, 350, 358, 374, 383, 389, 396, 408, 428, 429, 439, 440, 484, 639, 640, 667

Տերտերյան Արսեն (1882-1953) – գրականագետ, մանկավարժ – 759, 783

Տիգրանյան Արմեն (1879-1950) – երգահան – 242, 245, 265, 371, 375, 409, 485, 558, 560, 568, 571, 639, 652, 696, 805

Տիգրանյան Արմենուհի (1888-1962) – բանաստեղծուհի – 18, 159, 319, 330, 408, 685, 785

Տիգրանյան Նիկողայոս (1856-1951) – երգահան, բանահավաք – 408

Տիգրանյան Սիրական (1877-1947) – իրավաբան, մանկավարժ, Հայաստանի Առաջին հանրապետության արտաքին գործերի նախարար – 372, 391, 394, 396, 410, 411, 413, 415, 417, 419, 420, 449, 453-456, 464, 466, 471, 473, 474, 767, 777

Տիգենհաուզեն – 65

Տեր-Պողոսյան Ավետիք (1880-1954) – կենսաբան. մանկավարժ – 362

Տոլստոյ Լև (1828-1910) – ռուս գրող – 507, 686

Տոլստոյ Յ. – 412

Տոմսոն – անգլիացի գեներալ – 759

Տոպուրիձե – 720

Տոտոմյան <Վահան> (1875-1964) – տնտեսագետ – 125, 375, 451

Տումանով Կ. Պ. (Տումանաշվիլի Կ.) – 121, 492, 500

Ր

Րաֆֆի (1835-1888) – գրող – 185, 229, 240, 400, 435, 613, 830

Րուխաձե – 720

ՈՒ

Ունկնդիր – տե՛ս Մռավյան Ասքանազ – 157

Փ

Փանասյան Աշոտ – 377

Փանոս – 117

Փափազյան Երվանդ – 446

Փափազյան Վահան – (1876-1973) – ազատագրական շարժման հայտնի առաջնորդներից,

բժիշկ, քաղաքական գործիչ,
լուսանկարիչ – 405, 428, 532
Փափազյան Վրթանես (1864-1920)
– գրող, մանկավարժ – 74, 83,
246, 374, 389, 408, 464, 470,
568, 765, 783, 795, 801, 802,
807, 811, 828, 832
Փեդրոս – 340
Փիրուզյան Հար. – 474, 601
Փիրունյան Տիգրան (1859-1935) -
մանկավարժ, թարգմանիչ, լրագրող – 648, 720, 783, 795, 799
Փիրունով Սեմյոն (1888-1937) –
պետական գործիչ – 654
Փշավելա Վաժա – վրաց բանաստեղծ – 48, 49, 73
Փոտատյան Օննիկ – 377
Փուշմանյան Հովսեփ (1877-1966) –
նկարիչ – 376

Ք

Քալանթար Ա. – 828
Քալանթար Լևոն (1891-1959) –
հրատարակիչ-խմբագիր,
գրական-թատերական գործիչ –
75, 720
Քալանթարյան Աշխարհբեկ (1884-
1942) – հնագետ – 393
Քալանթարյան Մկ. – 449, 456, 462,
464, 473
Քալաշյան Գառնիկ (1885-1921) –
բանաստեղծ, մանկավարժ –
216, 289, 319, 328, 384, 576,
596, 639, 785
Քալաշյան Փիրուզա – Գառնիկ
Քալաշյանի կինը – 597
Քամալյան Սարգիս (1860-1934) –
գրող, մանկավարժ – 783
Քաջազնունի Հովհաննես (1868-
1938) – քաղաքական գործիչ,
Հայաստանի Առաջին հանրապետության առաջին վարչապետ, ճարտարապետ – 65, 70,
265, 377, 396, 765, 771

Քաջունի Եղիշե – 822
Քալթարածե – 720
Քարլեյլ Թոմաս (1795-1881) – ծագումով շոտլանդացի բրիտանական պատմաբան, փիլիսոփա, էսսեիստ – 206, 207
Քափանակյան Ա<տեփան> (1877-1944) – թատերակրթական գործիչ – 70, 729
Քեոսեյան Կարապետ – 174, 175
698, 699
Քյանդարյան Օհան – 614, 670, 671
Քյոսյան Հովհ. – 517
Քոչարյան Արմեն – 728
Քոչարյան Գրիգոր – 653
Քոչարյան Հակոբ (1865-1933) –
մանկավարժ, թարգմանիչ – 110,
586, 597, 598, 794, 806, 819,
828
Քոչարյան Մելինե – 488
Քոչարյան Ն. – 803
Քուչակ Նահապետ – 124, 125, 128,
131, 132, 136, 138, 156, 168,
187, 190, 191, 210, 211, 214,
215, 220, 350, 780

Օ

Օգանեզյան Ռուբ. – 376
Օգանովսկի – ռուս զորավար – 50,
51, 63-65
Օգանյան Անդրանիկ (1865-1927) –
հայ ազգային հերոս, ազատագրական շարժման գործիչ – 3,
8, 9, 66, 67, 78, 79, 82, 194, 201,
233, 246, 247, 267, 287, 331,
338, 340, 341, 366, 367, 387,
424-426, 435, 437, 445, 446,
475-479, 504, 532, 556, 577,
582, 602, 605, 606, 617-619,
646, 648, 651, 652, 748, 752,
753, 758, 759, 822
Օզոլ – 63
Օհանյան – 425

Օհանջանյան Համո – բժիշկ, հասարակական գործիչ – 86, 111, 219, 377, 570, 589, 591
 Օհանջանյան Սաթենիկ – 116, 292
 Օնիաշվիլի – 720
 Օսեփ – տե՛ս Խունունց Հովսեփ
 Օրբելի Հովսեփ (1887-1961) – հայ արևելագետ, հնագետ, գիտության կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ առաջին պրեզիդենտ (1943-1947) – 393, 471
 Օքրոյան Դավիթ (1873-1943) – նկարիչ – 376

Ֆ
 Ֆետ Ա. Ա. (Աֆանասի 1820-1892) – ռուս բանաստեղծ, թարգմանիչ, գրող – 132, 133
 Ֆետվաճյան Արշակ – 283, 307, 370, 376, 408 470, 474
 Ֆոն-Կռեսս – գերմանացի գեներալ – 581-583
 Ֆրանգյան Երվանդ (1878-1928) – հրապարակախոս, փիլիսոփա – 50, 54, 58
 Ֆրանկելշտեյն – Ավստրիայի ներկայացուցիչը – 583

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից	3
Համառոտագրություններ	12
1915	13
1916	147
1917	326
1918	487
1919	637
Անվանացանկ	834

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ
(1915–1919)**

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր N 956

Ստորագրված է տպագրության՝ 01.08. 2019 թ.:

Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆: Թուղթ՝ N 1, օֆսեթ տպագրություն:

Ծավալը՝ 54,25 տպագր. մամուլ:

Տպաքանակը՝ 300 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երևան, Բաղրամյան 24:




1915, Թիֆլիս



Էջմիածին, 1915



1915



1919, Թիֆլիս



1917



Պյատիգորսկ, 1917



Պյատիգորսկ, 1917